Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

**Правила пользования**

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

**О программе**

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

17021 a.a. 13

Digitized by Google

N. Testament Mod. Armen

[illegible] Western Dialect

Digitized by Google

17021. aa. 13.

~~3058. a. 14.~~

Bill.
N. T.

Digitized by Google

# ՆՈՐ

# ԿՏԱԿԱՐԱՆ

# ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԳՐԱԲԱՌԻՆ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՄԲ
ԱՇԽԱՐՀԱԲԱՌԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

'Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒԼԻԵԼՄԱՅ
ԳՐԻՖՖԻԹԻ

1852

Digitized by Google

BRITISH MUSEUM

Digitized by Google

# ՑԱՆԿ


| | ԳԼՈՒԽ | ԵՐԵՍ |
|---|---|---|
| Աւետարան ըստ Մատթէոսի | 28 | 1 |
| Աւետարան ըստ Մարկոսի | 16 | 105 |
| Աւետարան ըստ Ղուկասու | 24 | 173 |
| Աւետարան ըստ Յովհաննու | 21 | 289 |
| Գործք Առաքելոց | 28 | 375 |
| Պօղոս Առաքելոյն Թուղթք | | |
| առ Հռովմայեցիս | 16 | 486 |
| առ Կորնթացիս Ա. | 16 | 533 |
| առ Կորնթացիս Բ. | 13 | 578 |
| առ Գաղատացիս | 6 | 609 |
| առ Եփեսացիս | 6 | 625 |
| առ Փիլիպպեցիս | 4 | 640 |
| առ Կողոսացիս | 4 | 651 |
| առ Թեսաղոնիկեցիս Ա. | 5 | 662 |
| առ Թեսաղոնիկեցիս Բ. | 3 | 672 |
| առ Տիմոթէոս Ա. | 6 | 678 |
| առ Տիմոթէոս Բ. | 4 | 691 |
| առ Տիտոս | 3 | 700 |
| առ Փիլիմոն | 1 | 706 |
| առ Եբրայեցիս | 13 | 709 |
| Ընդհանր. Թուղթ Յակոբու | 5 | 743 |
| Ա. Ընդ. Թուղթ Պետրոսի | 5 | 755 |
| Բ. Ընդ. Թուղթ Պետրոսի | 3 | 768 |
| Ա. Ընդ. Թուղթ Յովհաննու | 5 | 776 |
| Բ. Թուղթ Յովհաննու | 1 | 789 |
| Գ. Թուղթ Յովհաննու | 1 | 791 |
| Ընդ. Թուղթ Յուդայի | 1 | 793 |
| Յայտնութիւն Յովհաննու | 22 | 797 |


Digitized by Google

Digitized by Google

# ԱՒԵՏԱՐԱՆ
# ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

## ԳԼՈՒԽ Ա

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի
Դաւիթի որդւոյն, Աբրահամու որդւոյն:
2 Աբրահամ ծնաւ Իսահակը. Իսահակ
ծնաւ Յակոբը. Յակոբ ծնաւ Յուդան ու
3 անոր եղբայրները: Յուդա ծնաւ Փարէ-
սը ու Զարան Թամարէն. Փարէս ծնաւ
4 Եզրոնը. Եզրոն ծնաւ Արամը: Արամ
ծնաւ Ամինադաբը. Ամինադաբ ծնաւ
Նաասոնը. Նաասոն ծնաւ Սաղմոնը:
5 Սաղմոն ծնաւ Բոոսը Ռախաբէն. Բոոս
ծնաւ Ովբէդը Հռութէն. Ովբէդ ծնաւ
Յեսսէն. Յեսսէ ծնաւ Դաւիթ թագաւորը:
6 Դաւիթ թագաւոր ծնաւ Սողոմոնը Ու-
7 րիայի կնիկէն: Սողոմոն ծնաւ Ռոբովամը.
Ռոբովամ ծնաւ Աբիան. Աբիա ծնաւ
8 Ասափը. Ասափ ծնաւ Յովսափատը. Յով-
սափատ ծնաւ Յովրամը. Յովրամ ծնաւ
9 Ոզիան: Ոզիա ծնաւ Յովաթամը. Յո-
վաթամ ծնաւ Աքազը. Աքազ ծնաւ Եզե-
10 կիան: Եզեկիա ծնաւ Մանասէն. Մանա-
սէ ծնաւ Ամոնը. Ամոն ծնաւ Յովսիան:
11 Յովսիա ծնաւ Յեքոնիան ու անոր եղբ-


Digitized by Google

բայրները Բաբիլացւոց գերութեան ատե-
նը ։ Բաբիլացւոց գերութենէն ետև՝ Յե- 12
քոնիա ծնաւ Սաղաթիէլը ․ Սաղաթիէլ
ծնաւ Զօրաբաբէլը ։ Զօրաբաբէլ ծնաւ 13
Աբիուդը ․ Աբիուդ ծնաւ Եղիակիմը ․ Ե-
ղիակիմ ծնաւ Ազովրը ։ Ազովր ծնաւ Սա- 14
դովկը ։ Սադովկ ծնաւ Աքիմը ․ Աքիմ
ծնաւ Եղիուդը ․ Եղիուդ ծնաւ Եղիազարը ․ 15
Եղիազար ծնաւ Մատթանը ․ Մատթան
ծնաւ Յակոբը ։ Յակոբ ծնաւ Յովսէփը՝ 16
Մարիամին էրիկը , որուն նշանուած էր
Մարիամ կոյսը , ուրկից ծնաւ Յիսուսը ,
որ ըսուեցաւ Քրիստոս ։ Արդ՝ բոլոր ազ- 17
գերը Աբրահամէն մինչև Դաւիթ՝ տասնու-
չորս ազգ ․ և Դաւիթէն մինչև Բաբիլա-
ցւոց գերութիւնը՝ տասնուչորս ազգ ․ ու
Բաբիլացւոց գերութենէն մինչև Քրիստոս՝
տասնուչորս ազգ ։

Իսկ Յիսուսի Քրիստոսի ծնունդը աս 18
կերպովն էր ․ անոր մայրը Մարիամ Յով-
սէփին նշանուած , դեռ իրարու քով չե-
կած՝ Սուրբ Հոգիէն յղացած գտնուեցաւ ։
Իսկ Յովսէփ անոր էրիկը արդար մարդ 19
ըլլալով՝ ու չուզելով որ զանիկայ խայ-
տառակ ընէ , մտմտաց որ առանց ձայնձունի
թող տայ զանիկայ ․ Ու երբոր անիկայ 20
ասիկայ կը մտածէր , ահա՝ Տէրոջը հրեշ-
տակը երազի մէջ երևցաւ անոր ու ըսաւ ․
Յովսէփ Դաւիթի որդին՝ մի՛ վախնար քե-
զի առնելու քու Մարիամ կնիկդ , ինչու-
որ անոր ներսիդին ծնածը Սուրբ Հոգիէն ․

Digitized by Google

21 է. Որդի պիտի ծնանի, ու անոր անունը
Յիսուս դնես. քանզի անիկայ իր ժողովուր-
22 դը իրենց մեղքերէն պիտի փրկէ։ Այս
ամէն բաները եղաւ, որ կատարուի Տէ-
րոջմէն ըսուածը՝ մարգարէին ձեռ-
23 քով։ Ահա՛ կոյսը պիտի յղանայ ու որդի
պիտի ծնանի, և անոր անունը Էմմանուէլ
պիտի դնեն, որ կը թարգմանուի՝ Աստուած
24 մեզի հետ։ Եւ Յովսէփ քունէն արթըն-
նալով՝ ինչպէս որ Տէրոջը հրեշտակը իրեն
հրամայեց, այնպէս ըրաւ, ու իր կինը
25 քովն առաւ։ Եւ չէր գիտեր զանիկայ մինչև
իր անդրանիկ որդին ծնաւ, ու անոր անուա-
նը Յիսուս դրաւ։

## ԳԼ. Բ

1 Եւ երբոր Յիսուս ծնաւ Հրէաստանի
Բեթղեհէմին մէջ Հերովդէս թագաւորին օ-
2 րերը, Ահա՛ մոգերը արևելքէն Երուսաղէմ
եկան, ու ըսին. Ո՞ւր է այն որ Հրէա-
ներուն թագաւոր ծնաւ. ինչու որ մենք ա-
նոր աստղը արևելքը տեսանք՝ ու եկանք
3 անոր երկրպագութիւն ընելու։ Եւ եր-
բոր Հերովդէս թագաւորը լսեց՝ խռով-
վեալ եղաւ, ու բոլոր Երուսաղէմը իրեն
4 հետ. Եւ ժողվելով բոլոր քահանայապե-
տերը ու ժողովուրդին դպիրները, հար-
5 ցուց անոնց՝ թէ Քրիստոսը ո՞ւր պիտի ծը-
նանի։ Անոնք ալ իրեն ըսին. Հրէաս-
տանի Բեթղեհէմին մէջ. ինչու որ այսպէս
6 գրուած է մարգարէին ձեռքովը. Եւ դուն

Digitized by Google

Բեթղեհէմ Յուդայի երկիրը, Յուդայի
իշխաններուն մէջ բնաւ պզտիկ մը չես.
քանզի իշխան մը պիտի ելլէ քեզմէ, որ իմ
Իսրայէլ ժողովուրդս հովուէ։ Ան ատենը 7
Հերովդէս գաղտուկ մը մոգերը կանչեց, ու
ճշդիւ մը սորվեցաւ անոնցմէ աստղին երեւ-
ցած ատենը։ Ու զանոնք Բեթղեհէմ 8
խրկելով՝ ըսաւ. Գացէ՛ք աղէկ մը իմացէ՛ք
այն մանկանը համար, ու երբոր գտնէք՝
ինծի՛ իմացուցէք, որ ես ալ գամ անոր
երկրպագութիւն ընեմ։ Ու երբ անոնք 9
թագաւորին ասոր խօսքը լսեցին՝ գացին. և
ահա՛ այն աստղը որ տեսան արեւելքը՝ ա-
նոնց առջեւէն գնաց, մինչեւ որ եկաւ կայ-
նեցաւ մանուկին եղած տեղին վրայ։ Եր- 10
բոր տեսան աստղը, շատ մեծ ուրախութիւ-
նով ուրախացան։ Ու երբոր տունը մտան, 11
տեսան մանուկը իր Մարիամ մօրը հետ.
ու՝ ինկան երկրպագութիւն ըրին անոր. և
իրենց գանձերը բանալով՝ ընծաներ տուին
անոր՝ ոսկի ու կնդրուկ և զմուռս։ Ու 12
հրաման առնելով երազի մէջ՝ որ նորէն
Հերովդէսին չդառնան, ուրիշ ճամբով
գացին իրենց աշխարհը։

Ու երբոր անոնք գացին անկէց, ահա՛ 13
Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեւցաւ Յով-
սէփին՝ ու ըսաւ. Ելի՛ր, առ մանուկը և
իր մայրը՝ ու Եգիպտոս փախի՛ր, և հոն
կեցիր մինչեւ ես քեզի ըսեմ, ինչու որ
Հերովդէս կը փնտռէ այն մանուկը կոր-
սնցնելու համար։ Ան ալ ելաւ, ման- 14

Digitized by Google

նուկը ու անոր մայրը գիշերով առաւ՝ և
գնաց Եգիպտոս ։ ու մինչև Հերովդէսին
15 մահը հոն էր ․ Որ կատարուի Տէրոջմէն
ըսուածը մարգարէին ձեռքովը , որ կ'ըսէ ․
Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս ։
16 Ան ատենը երբոր տեսաւ Հերովդէս՝ թէ
խաբուեցաւ մոգերէն՝ սաստիկ սրդողեցաւ ,
ու խրկեց ջարդեց բոլոր Բեթլեհէմի և անոր
ամէն սահմաններուն մէջ գտնուած մանր
տղաքը երկու տարուընէն վար , ան ժա-
մանակին համեմատ՝ որ մոգերէն ստուգեց ։
17 Ան ատենը կատարուեցաւ Երեմիա մար-
18 գարէին ձեռքով ըսուածը , որ կ'ըսէ ․ Հռամա-
յի մէջ ձայն մը լսուեցաւ , ողբ , լաց
ու մեծ կոծ ․ Հռաքէլ կու լար իրեն զաւակ-
ները , ու չէր ուզեր մխիթարուիլ , ինչու
որ չկային ։
19 Իսկ երբոր Հերովդէս մեռաւ՝ ահա՝ Տէ-
րոջը հրեշտակը Եգիպտոս երազի մէջ Յովսէ-
20 փին երևցաւ , ու ըսաւ ․ Ելի՛ր , ա՛ռ
մանուկը ու անոր մայրը՝ և գնա՛ Իսրայէլի
երկիրը ․ ինչու որ մեռան անոնք , որ մա-
21 նուկին կեանքը կ'ուզէին ։ Ան ալ ելաւ ,
մանուկը ու անոր մայրը առաւ՝ և եկաւ
22 Իսրայէլի երկիրը ։ Իսկ երբոր լսեց թէ
Արքեղայոս թագաւորեց Հրէաստանի վրայ
իր հօրը Հերովդէսին տեղը , վախցաւ հոն
երթալու ․ ու երազին մէջ հրաման առ-
23 նելով՝ Գալիլեայի կողմերը գնաց ։ Իսկ ե-
կաւ Նազարէթ ըսուած քաղաքը բնակե-
ցաւ ․ որ մարգարէներուն խօսքը կատա-
րուի՝ թէ Նազովրեցի պիտի կոչուի ։

## ԳԼ. Գ

Ան օրերը Յովհաննէս մկրտիչը եկաւ 1
Հրէաստանի անապատին մէջ քարոզելու,
Ու ըսելու. Ապաշխարեցէ՛ք, ինչու որ 2
երկնից թագաւորութիւնը մօտ է։ Ասան 3
պի ամիկայ, ան է որուն համար Եսայի
մարգարէին ձեռքովը ըսուեցաւ, որ կ՚ըսէ.
Ձայն մը՝ որ անապատին մէջ կը կանչէ,
Պատրաստ ըրէք Տէրոջը ճամբան, ու
շիտկեցէ՛ք անոր շաւիղները։ Ու Յովհան- 4
նէսին հանդերձը՝ ուղտի մազէ էր, ու
իր մէջքը կաշիէ գօտի. և իր կերակուրը՝
մարախ ու վայրենի մեղր էր։ Ան ատենը 5
բոլոր Երուսաղեմացիք ու բոլոր Հրէաս-
տան և Յորդանանի բոլոր կողմերը իրեն
կ՚երթային, Ու մկրտուէին իրմէն Յորդա- 6
նան գետին մէջ, ու իրենց մեղքերը կը
խոստովանէին։ Իսկ երբոր տեսաւ Սա- 7
դուկեցւոցմէ ու Փարիսեցւոցմէ շատերը իր
մկրտութեանը եկած, ըսաւ անոնց. Իժե-
րո՛ւ ծնունդներ, ո՛վ խրատեց ձեզի՝ գա-
լու բարկութենէն փախչելու։ Արդ՝ ապա- 8
պաշխարութեան արժանաւոր պտո՛ւղ բե-
րէք։ Ու մի՛ խորհիք դուք ձեր միտքեր- 9
դին ըսել, թէ Մենք մեր հայր Աբրահա-
մը ունինք. ձեզի կ՚ըսեմ, որ Աստուած կա-
րող է աս քարերէս Աբրահամին որդիներ
հանելու։ Ու հիմա կացինը ծառերուն 10
արմատին քով կը դրուի. ամէն ծառ որ
բարի պտուղ չբերեր, կը կտրուի ու կրակը

Digitized by Google

11 կը ձգուի ։ Ես ձեզ կը մկրտեմ ջրով ա-
պաշխարութեան համար, բայց իմ ետեւէս
եկողը՝ ինձմէ զօրաւոր է, ու ես անոր կօ-
շիկները կրելու արժանի չեմ․ անիկայ ձեզ
պիտի մկրտէ Հոգւով Սրբով ու կրակով ։
12 Անոր հեծանոցը իր ձեռքն է, և իր կալը
պիտի մաքրէ, ու ցորենը իր համբարը պի-
տի ժողվէ, և յարդը անմարելի կրակով
պիտի այրէ ։
13 Ան ատենը Յիսուս Գալիլեայէն Յորդա-
նան եկաւ Յովհաննէսին, որ անկից մկրտ-
14 ուի ։ Ու Յովհաննէս արգիլեց անիկայ՝
ու ըսաւ․ Ինծի պէտք է որ քեզմէ մկրտ-
15 ուիմ, ու դուն ինծի՞ կու գաս ։ Յիսուս
պատասխան տուաւ ու ըսաւ անոր․ Թո՛ղ
տուր հիմա․ ինչու որ մեզի այսպէս կը
վայելէ որ բոլոր արդարութիւնները կա-
տարենք․ ու ետքը թող տուաւ անոր ։
16 Ու երբոր Յիսուս մկրտուեցաւ՝ շուտ մը
ջուրէն դուրս ելաւ, և ահա երկինքը ա-
նոր բացուեցաւ, ու տեսաւ Աստուծոյ Հո-
գին՝ որ աղաւնիի պէս կիջնէր, ու կու գար
17 իր վրայ ։ Ու ահա՛ երկինքէն ձայն մը ե-
կաւ՝ որ կ'ըսէր․ Ասիկայ է իմ սիրելի Որ-
դիս, որ իրեն հաճեր եմ ։

## ԳԼ․ Դ․

1 Ան ատենը Յիսուս անապատը տարուե-
ցաւ Սուրբ Հոգիէն՝ Սատանայէն փոր-
2 ձուելու համար ։ Ու քառասուն ցորեկ ու
քառասուն գիշեր ծոմ պահելէն ետքը՝ անօ-
թեցաւ ։

Digitized by Google

Ու փորձողը եկաւ՝ անոր ըսաւ․ Թէ որ 3
դուն Աստուծոյ որդին ես՝ ըսէ՛ որ աս քա-
րերը հաց ըլլան ։ Անիկայ պատասխան 4
տուաւ ու ըսաւ․ Գրուած է որ, Ոչ՛ թէ
հացով միայն մարդ կ՚ապրի, հապա՝ ան ա-
մէն խօսքովը որ Աստուծոյ բերնէն կ՚ելլէ ։
Ան ատենը Սատանան առաւ տարաւ զա- 5
նիկայ սուրբ քաղաքը, և կայնեցուց զա-
նիկայ տաճարին աշտարակին վրայ, ու
ըսաւ անոր․ Թէ որ Աստուծոյ որդին ես՝ 6
դուն քեզ աստից վար ձգէ․ ինչու որ
գրուած է, թէ Իր հրեշտակներուն պա-
տուիրեր է քեզի համար․ ու քեզ ձեռքի
վրայ պիտի կրեն, որ ընաւ քու ոտքդ
քարի չզարնես ։ Յիսուս դարձեալ ըսաւ 7
անոր․ Գրուած է թէ՝ Քու Տէր Աս-
տուածդ չփորձես ։
Սատանան նորէն առաւ հանեց զանիկայ 8
շատ բարձր լեռան մը վրայ, և ցուցուց
անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները
ու անոնց փառքը․ Ու անոր ըսաւ․ Ասոնք 9
ամէնը քեզի կու տամ, թէ որ իյնաս ինծի
երկրպագութիւն ընես ։ Ան ատենը Յիսուս 10
ըսաւ անոր․ Ետիս գնա Սատանայ․ ինչու
որ գրուած է․ Քու Տէր Աստուծոյդ երկըր-
պագութիւն ընես, ու միայն զանիկայ
պաշտես ։ Ան ատենը Սատանան զանիկայ 11
թողուց, և ահա՛ հրեշտակները եկան ու
իրեն ծառայութիւն կ՚ընէին ։
Ու երբոր լսեց Յիսուս թէ Յովհաննէս 12
մատնուեցաւ՝ ելաւ գնաց Գալիլեա․ Ու 13

Digitized by Google

ձգելով՝ Նազարէթը, եկաւ բնակեցաւ Կա-
փառնայում ծովեզերքին քով, Զաբու-
ղոնի ու Նեփթաղիմի սահմաններուն մէջը.
14 Որ կատարուի Եսայի մարգարէին ձեռքով
15 ըսուած խօսքը. «Զաբուղոնի երկիրը ու
Նեփթաղիմի երկիրը, ծովու ճամբով, Յոր-
դանանու անդին կողմը, հեթանոսներուն
16 Գալիլեան. ժողովուրդ մը՝ նստող մթու-
թեան մէջ մեծ լոյս տեսաւ, ու լոյս ծագեցաւ
անոնց վրայ որոնք մահուան երկրին ու
17 շուքին մէջ կը նստէին»։ Անկէ ետքը Յիսուս
սկսաւ քարոզել ու ըսել. Ապաշխարեցէ՛ք,
վասն զի երկնից թագաւորութիւնը մօտ է։
18 Երբոր Յիսուս Գալիլեացւոց ծովին քո-
վէն կը պտըտէր, տեսաւ երկու եղբայր-
ները՝ Սիմոնը որ Պետրոս կ'ըսուէր, և անոր
եղբայրը Անդրէասը, ծովը ուռկան ձգած.
19 ինչու որ ձկնորս էին։ Ու ըսաւ անոնց.
Իմ ետևէս եկէք, ու ձեզ մարդոց որսորդ
20 ընեմ։ Անոնք ալ շուտ մը ուռկանները
21 թողուցին՝ անոր ետևէն գացին։ Եւ ան-
կէց առաջ երթալով՝ տեսաւ ուրիշ եր-
կու եղբայրներ, Զեբեդեան Յակոբոսը ու
անոր եղբայրը Յովհաննէսը նաւին մէջ՝
իրենց հօրը Զեբեդէոսին հետ, իրենց
ուռկանները կը կարկըտէին. ու կանչեց զա-
22 նոնք։ Անոնք ալ շուտ մը նաւը ու հայ-
րերնին թողուցին՝ անոր ետևէն գացին։
23 Եւ Յիսուս բոլոր Գալիլեացւոց կողմերը
կը պտըտէր, կը սորվեցնէր անոնց ժողովա-
րաններուն մէջ, ու արքայութեան աւե-

Digitized by Google

աւետարանը կը քարոզէր, և ժողովուրդին
մէջի ամէն կերպ հիւանդութիւնները ու ամէն
մէկ կերպ ցաւերը կը բժշկէր։ Եւ իր 24
համբաւը Ասորիքին բոլոր երկիրը տա-
րածուեցաւ. ու բերին իրեն բոլոր հիւանդ-
ները որ կերպ կերպ ցաւերով ու տանջանքնե-
րով կը նեղուէին, ու դիւահարները և լուս-
նոտները ու անդամալոյծները. և բժշկեց
զանոնք։ Եւ շատ ժողովուրդ իր ետեւէն 25
կ'երթային Գալիլիայէն ու Դեկապոլիսէն,
և Երուսաղէմէն ու Հրէաստանէն, և Յոր-
դանանու անդիի կողմէն, ու բժշկեց զա-
նոնք։

## ԳԼ. Ե.

Ու Յիսուս տեսնելով այն ժողովուրդները՝ լեռը 1
ելաւ. ու երբ նստաւ, իր աշակերտ-
ները քովը գացին. Եւ իր բերանը բա- 2
նալով՝ կը սորվեցնէր անոնց, ու կ'ըսէր.
Երանի՜ հոգւով աղքատներուն, քանզի 3
որ երկնից թագաւորութիւնը անոնցն է։
Երանի՜ սգաւորներուն, քանզի որ անոնք 4
պիտի մխիթարուին։ Երանի՜ հեզերուն, 5
քանզի որ անոնք պիտի ժառանգեն երկիրը։
Երանի՜ անոնց՝ որ անօթի ու ծարաւ են 6
արդարութեան, քանզի որ անոնք պիտի
կշտանան։ Երանի՜ ողորմածներուն, քանզի 7
որ անոնք ողորմութիւն պիտի գտնեն։ Երա- 8
նի՜ անոնց՝ որ սրտով սուրբ են, քանզի
որ անոնք պիտի տեսնեն զԱստուած։ Երա- 9
նի՜ խաղաղութիւն ընողներուն, քանզի որ

Digitized by Google

անոնք Աստուծոյ զաւակներ պիտի կոչուին։
10 Երանի՜ անոնց՝ որ հալածուած են արդա-
րութեան համար, ինչու որ երկնից թա-
11 գաւորութիւնը անոնցն է։ Երանի՜ է ձե-
զի՝ երբոր կը նախատեն ձեզ և կը հալածեն,
ու սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը
12 խօսին վրանիդ՝ ինծի համար։ Ցնծացէ՛ք
և ուրա՛խ եղէք, ինչու որ ձեր վարձքը
շատ է երկինքը. քանզի աս կերպով հա-
լածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները։
13 Դուք էք երկրին աղը. հապա թէ որ
աղը համը կորսնցնէ, ինքը ինչո՞վ պիտի
աղուի. անկէ ետև բանի մը չգար, միայն
թէ դուրս ձգուելու և մարդոց ոտքին տակը
14 կոխուելու։ Դուք էք աշխարհի լոյսը.
քաղաք մը՝ որ լեռան վրայ կեցած է, չը-
15 կրնար պահուիլ։ Ու ճրագը չեն վառեր
և դներ գրուանին տակը. հապա՝ աշտանա-
կի վրայ, և լոյս կու տայ բոլոր տանը մէջ
16 եղողներուն։ Անանկ թող լուսաւորէ ձեր
լոյսը մարդոց առջին, որ տեսնեն ձեր բա-
րի գործքերը, ու փառաւորեն ձեր հայրը
որ երկինքն է։
17 Մի՛ կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ
մարգարէները աւրելու. չեկայ աւրելու,
18 հապա կատարելու։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի.
Մինչև որ երկինք և երկիր անցնին, օ-
րէնքներէն և մարգարէներէն յօդ մը՝ որ
նշանագիր մըն է, պիտի չանցնի, մինչև
19 բոլորն ալ կատարուի։ Ով որ աս պզտիկ
պատուիրանքներուն մէկը կ՚աւրէ ու մար-

Digitized by Google

մարդ անանկ կը սորվեցնէ , անիկայ պզտիկ
պիտի կոչուի երկնից Թագաւորութեան մէ-
ջը . բայց ո՛վ որ կ'ընէ և կը սորվեցնէ, ա-
նիկայ մեծ պիտի կոչուի երկնից Թագաւո-
րութեան մէջը ։ Վասն զի կ'ըսեմ ձեզի որ 20
Եթէ որ ձեր արդարութիւնը դպիրներուն
ու փարիսեցիներուն արդարութենէն աւելի
չըլլայ՝ երկնից Թագաւորութիւնը պիտի
չմտնէք ։

Լսեր էք որ առաջիններուն ըսուեցաւ , 21
Թէ Սպանութիւն մի՛ ըներ . քանզի ո՛վ
որ սպանութիւն կ'ընէ՝ դատաստանի պար-
տաւոր պիտի ըլլայ ։ Բայց ես ձեզի 22
կ'ըսեմ , Թէ Ո՛վ որ իր եղբօրը պարապ
տեղը սրդողի , դատաստանի պարտաւոր
պիտի ըլլայ . և ո՛վ որ իր եղբօրը ջի՛մար
ըսէ , ատեանի պարտաւոր պիտի ըլլայ .
և ո՛վ որ իր եղբօրը անմիտ ըսէ , գեհենի
կրակին պարտաւոր պիտի ըլլայ ։ Եթէ որ 23
քու ընծադ սեղանին վրայ կը բերես , ու
հոն միտքդ կու գայ՝ Թէ քու եղբայրդ քու
վրադ սրդողած է , Ձգէ՛ քու ընծադ սե- 24
ղա՛նին առջևը , գնա՛ առաջ եղբօրդ հետը
հաշտուէ , ու ետքը եկո՛ւր որ քու ընծադ
մատուցանես ։ Քու ոսոխիդ հետը շու- 25
տո՛վ միաբանէ , քանի որ անոր հետ ճամ-
բուն մէջն ես . չըլլայ Թէ քու ոսոխդ քեզ
դատաւորին մատնէ , և դատաւորը դահի-
ճին , և բանտը ձգուիս ։ Ճշմարիտ կ'ը- 26
սեմ քեզի , պիտի չելլես անկից , մինչև ,
որ ետքի նուաքարակիտը վճարես ։

Digitized by Google

27 Լսեր էք որ ըսուեցաւ. Չշնութիւն մի
28 ըներ: Բայց ես ձեզի կ՚ըսեմ, թէ Ով
որ կնիկ մարդու կը նայի անոր ցանկանա-
լու համար, այն անկէ ի վեր սրտին մէջը
29 շնութիւն ըրաւ անոր հետ: Ուրեմն որ աջ
աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ՛
զանիկայ՝ ու քեզմէ ձգէ՛. քանզի աղէկ
է քեզի որ անդամներուդ մէկը կորսուի,
ու քու բոլոր մարմինդ գեհենը չնետուի:
30 Եւ թէ որ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեց-
նէ, կտրէ՛ զանիկայ ու քեզմէ ձգէ՛. քան-
զի որ աղէկ է քեզի որ անդամներուդ
մէկը կորսուի, ու քու բոլոր մարմինդ
31 գեհենը չնետուի: Նաեւ ըսուեցաւ, թէ
Ով որ իր կնիկը կ՚արձակէ, թող անոր
32 արձակման գիր տայ: Բայց ես ձեզի
կ՚ըսեմ, թէ Ով որ իր կնիկը կ՚արձակէ
առանց պոռնկութեան պատճառի, ինքը
պատճառ կ՚ըլլայ անոր շնութիւն ընելուն,
եւ ով որ ան արձակուածը առնէ՝ շնութիւն
կը գործէ:
33 Դարձեալ լսեր էք որ ըսուեցաւ առաջի-
ներուն, թէ Սուտ երդում մի ըներ, հապա
34 քու երդումդ կատարէ Տէրոջը: Բայց ես
ձեզի կ՚ըսեմ. Բնաւ երդում մի ըներ.
ո՛չ երկինքին վրայ՝ որ Աստուծոյ աթոռն
35 է, Եւ ո՛չ երկրին վրայ՝ որ անոր ոտքերուն
պատուանդանն է, ու ո՛չ Երուսաղէմի
36 վրայ՝ որ մեծ թագաւորին քաղաքն է. Եւ
ո՛չ քու գլխուդ վրայ երդում ըներ, քանզի
որ չես կրնար մէկ մազ մը ճերմկցընել կամ

Digitized by Google

նեցընել։ Հապա ձեր խօսքը ըլլայ ա- 37
յոն՝ այո՛, ու չէն՝ չէ՛. և ասկից աւելին
չարէն առաջ կու գայ։

Լսեր էք որ ըսուեցաւ, Թէ Աչքի տեղ՝ 38
աչք. ու ակռայի տեղ՝ ակռայ։ Բայց ես 39
ձեզի կ'ըսեմ. Չարին հակառակ մի կենաք.
հապա թէ որ մէկը ապտակ մը զարնէ աջ
ծնօտիդ՝ դարձուր անոր միւսն ալ։ Ու 40
մէկը որ կ'ուզէ քեզի հետ դատ ըլլալ՝ ու քու
շապիկդ առնել, թող տուր անոր քու
բաճկոնդ ալ։ Ու ով որ քեզ բռնութեամբ 41
կ'ուզէ մղոն մը տանիլ, կը երթաս անոր
հետ երկու։ Խնդրողին տուր, ու 42
քենէ փոխ առնել ուզողին՝ որ կ'ուզէ, երեսդ
մի՛ դարձներ։

Լսեր էք նաև ալ՝ որ ըսուեցաւ, Մերձաւորդ 43
սիրես ու թշնամիդ ատես։ Բայց ես 44
ձեզի կ'ըսեմ, Սիրեցէք ձեր թշնամիներ-
նիդ, օրհնեցէք ձեզ նզովողները, բարի
ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն, ու աղօթք
ըրէք անոնց վրայ՝ որ ձեզ կը չարչարեն ու
կը հալածեն. Որ ձեր երկնաւոր Հօրը որ- 45
դիքը ըլլաք. Ինչու որ իր արեւը կը ծագե-
ցընէ թէ՛ չարերուն և թէ բարիներուն վը-
րայ, ու անձրեւ կը ղրկէ թէ՛ արդարներուն
ու թէ անիրաւներուն վրայ։ Վասն զի 46
թէ որ սիրէք ձեզ սիրողները միայն, ի՞նչ
վարձք ունիք. չէ՞ որ մաքսաւորներն ալ
նոյնը կ'ընեն։ Ու թէ որ ձեր բարեկամ- 47
ներուն միայն բարեւ տաք՝ ինչ աւելի
կ'ընէք ուրիշներէն. չէ՞ որ մաքսաւորները

48 ու մաքսաւորներն ալ նոյնը կ՚ընեն։ Ուրե-
մն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս որ
ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է։

## ԳԼ. Զ.

1 Զգո՛յշ եղէք որ ձեր ողորմութիւնները մար-
դոց առջեւ չընէք, երբ թէ անոնց ցուցը-
նելու համար. որ չըլլայ թէ, [illegible]
վարձք չունենաք ձեր Հօրմէն՝ որ երկինքն է։
2 Ուստի երբոր ողորմութիւն կ՚ընես՝ առջեւդ
փող մի՛ հնչեցըներ, ինչպէս որ կեղծաւորնե-
րը ժողովարաններու ու փողոցներու մէջ
կ՚ընեն, որ մարդոցմէ փառաւորուին. Ճշ-
մարտապէս կ՚ըսեմ ձեզի, Անոնց վարձքեր-
նին առեր են։ Բայց դուն երբոր ողորմու-
թիւն կ՚ընես՝ ձախ ձեռքդ թող չգիտնայ
4 աջ ձեռքիդ ինչ գործելը. Որ քու ողոր-
մութիւնդ գաղտնի ըլլայ. ու քու Հայրդ
որ գաղտնիքը կը տեսնէ՝ ինք քեզի յայտնապէս
հատուցում պիտի ընէ։
5 Ու երբոր աղօթք կ՚ընես, կեղծաւորներուն
պէս նման չըլլաս, որ կը սիրեն ժողովա-
րաններուն մէջ ու փողոցներուն անկիւնները
աղօթք ընել, որ մարդոց երեւնան. Ճշ-
մարտիւ կ՚ըսեմ ձեզի, Անոնց վարձքերնին առեր
6 է։ Բայց դուն երբոր աղօթք կ՚ընես,
մտի՛ր քու սենեակդ ու գոցէ դուռդ,
և աղօ՛թք ըրէ քու Հօրդ գաղտնի. ու
քու Հայրդ որ գաղտնիքը կը տեսնէ, քեզի
7 յայտնապէս հատուցում պիտի ընէ։ Եւ
երբոր աղօթք կ՚ընէք, հեթանոսներուն

Digitized by Google

պէս՝ շատախօսութիւն մի՛ ընէք. քանզի անոնք կը կարծեն
թէ իրենց շատ խօսելուն համար պիտի
լսուին։ Ուրեմն անոնց չնմանիք. քանզի 8
որ ձեր Հայրըդ ձեզի պէտք եղածը գիտէ՝
դուք իրմէն դեռ չխնդրած։ Ուստի ա- 9
սանկ աղօթք ըրէք դուք.
Ո՛վ Հայր մեր որ երկինքն ես, քու ա-
նունդ սուրբ ըլլայ. Քու թագաւորու- 10
թիւնդ գայ, քու կամքդ ըլլայ, ինչպէս որ
երկինքը՝ անանկ ալ՝ երկրիս վրայ։ Մեր 11
ամեն օրուան հացը՝ աս օր մեզի տուր։ Ու 12
մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս որ մենք
ալ կը ներենք մեր պարտապաններուն։ Ու 13
մեզ փորձութեան մի՛ տանիր, Հապա՝ չա-
րէն մեզ ազատէ. քանզի քուկդ է թագա-
ւորութիւնը և զօրութիւնը ու փառքը՝
յաւիտեանս։ Ամէն։ Ապա թէ որ 14
դուք ներէք մարդոց իրենց յանցանքները,
ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ.
Հապա թէ որ դուք չներէք մարդոց ի- 15
րենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի
չներեր ձեր յանցանքները։
Ու երբոր ծոմ կը պահէք՝ կեղծաւորներու 16
պէս՝ տխուր երեսով մի՛ ըլլաք. որ իրենց ե-
րեսնին կ՚աւրեն որ մարդոց երեւնան թէ ծոմ
կը պահեն։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Անոնց
վարձքերնին առին է։ Բայց դուն երբոր ծոմ կը 17
պահես՝ գլուխդ օծէ ու երեսդ լուա՛, Որ 18
մարդոց ծոմ պահողի պէս չերեւնաս, հապա
քու Հօրդ ծածուկ, ու քու Հայրդ որ
ծածուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հա-
տուցում պիտի ընէ։

19 Երկրի վրայ ձեզի գանձ մի՛ դիզեք, ուր
որ ցեցը ու ժանկը կ՚ապականեն, և ուր գո-
20 ղերը կը փորեն ու կը գողնան։ Հապա եր-
կինքը գանձ դիզեցէք ձեզի, ուր որ ո՛չ
ցեցը և ոչ ժանկը կ՚ապականէ, ու ոչ գո-
21 ղերը կը փորեն և կը գողնան։ Քանզի ձեր
գանձը ուր որ է սիրտերնիդ ալ հոն պիտի
22 ըլլայ։ Մարմինին ճրագը աչքն է. թէ
որ քու աչքդ պայծառ է, բոլոր մարմինդ
23 լուսաւոր կ՚ըլլայ։ Բայց թէ որ քու աչքդ
չար է, բոլոր մարմինդ մութ կ՚ըլլայ։
ուրեմն՝ թէ որ քու մէջդ եղած լոյսը մութ
24 է, ալ ան մութը ո՛րչափ ալ կ՚ըլլայ։ Մարդ
մը չկրնար երկու տէրոջ ծառայութիւն ը-
նել. ինչու որ կամ մէկը պիտի ատէ, և
մէկալը պիտի սիրէ. կամ մէկը պիտի պա-
տուէ, և մէկալը անարգէ. չէ՛ք կրնար
25 ծառայել Աստուծոյ ու մամոնայի։ Անոր
համար կ՚ըսեմ ձեզի. Ձեր կեանքին հա-
մար մի՛ մտմտաք, թէ ինչ պիտի ուտէք,
կամ ինչ պիտի խմէք. ո՛չ ալ ձեր մար-
միններուն համար, թէ ինչ պիտի հագնիք.
26 չէ՞ որ կեանքը կերակուրէն աւելի է, ու
մարմինը՝ հագուստէն։ Նայեցէք երկինքի
թռչուններուն, որ ո՛չ կը ցանեն և ո՛չ կը
քաղեն և ո՛չ ամբարի մէջ կը ժողվեն, ու
ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք.
27 չէ՞ որ դուք անոնցմէ աւելի լաւ էք։ Հի-
մա՝ ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ տանելովը իր
հասակին վրայ կանգուն մը աւելցնել։
28 Ու հագուստի համար ինչո՞ւ հոգ կը տա-

Digitized by Google

նին . նայեցէ՛ք դաշտի շուշաններուն՝ ինչպէս
կը մեծնայ . ո՛չ կ՚աշխատի և ո՛չ կը մանէ ։
Ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն ալ իր բոլոր փա- 29
ռաւորութեան մէջը անոնցմէ մէկին պէս
չհագուեցաւ ։ Ուստի թէ որ դաշտին խոտը 30
որ այսօր կայ՝ և վաղը փուռը կը ձգուի ,
Աստուած անանկ կը հագուեցնէ ; հապա ո՛ր-
չափ առաւել ձեզ՝ թերահաւատներ ։ Ու- 31
կէ նեղ հոգ մի՛ ըներ՝ ըսելով . Ինչ
պիտի ուտենք , կամ ինչ պիտի խմենք ;
կամ ինչ պիտի հագնինք ։ (Ինչու որ ա- 32
մէն ատ բաներուն հեթանոսները կը խնդրեն ։)
վասն զի ձեր երկնաւոր Հայրը գիտէ թէ
ամէն ատ բաներուն ձեզի պէտք են ։ Հապա 33
առաջ Աստուծոյ թագաւորութիւնը խնդրե-
ցէք և անոր արդարութիւնը , ու ամէն
ատ բաներն ալ ձեզի պիտի տրուի ։ Ա- 34
կէ նաև վաղուան համար հոգ մի՛ ըներ .
ինչու որ՝ վաղուան օրը իրեն համար հոգ պի-
տի ընէ . Հերիք է օրուան իր նեղու-
թիւնը ։

## ԳԼ. Է.

Մի՛ դատէք որ չդատուիք ։ (2) Ինչու որ՝ 1
ինչ դատաստանով դատէք , անով պի-
տի դատուիք . և ինչ չափով չափէք , ա-
նով պիտի չափուի ձեզի ։ Ինչո՞ւ կը նայիս 3
եղբօրդ աչքին մէջի շիւղին , ու քու աչքիդ
մէջի գերանը չես տեսներ ։ Կամ ի՞նչպէս 4
կ'ըսես քու եղբօրդ . Թո՛ղ տուր աչքէդ
շիւղը հանեմ , և ահա քու աչքիդ մէջը գե-

Digitized by Google

5 բան կայ։ Կեղծաւո՛ր, առաջ քու աչքէդ
հանէ գերանը, ու ետքը պիտի նայիս եղ-
բօրդ աչքէն շիւղը հանել։
6 Սուրբ բանը շուներուն մի՛ տաք, և ձեր
մարգարիտը խոզերուն առջևը մի՛ ձգէք,
որ ոտքերնուն տակը չկոխկռտեն զանոնք,
ու դառնան ձեզ՝ պատառեն։
7 Խնդրեցէք՝ և պիտի տրուի ձեզի․ փնտռե-
ցէք՝ և պիտի գտնէք․ դուռը զար-
8 կեցէք՝ և պիտի բացուի ձեզի։ Ինչու որ ա-
մէն ո՛վ որ կը խնդրէ՝ կ'առնէ, և ո՛վ որ
կը փնտռէ՝ կը գտնէ, և ո՛վ որ դուռը
9 կը զարնէ՝ պիտի բացուի անոր։ Ձեզմէ
ո՞ր մարդը կայ՝ որմէն իր որդին հաց որ ու-
10 զէ, քա՞ր կու տայ անոր։ Եւ կամ թէ որ
11 ձուկ ուզէ՝ օ՞ձ կու տայ անոր։ Արդ եթէ
դուք որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ
ընծաներ տալ գիտէք․ ո՜րչափ աւելի ձեր
Հայրը՝ որ երկինքն է, բարի բաներ պիտի
տայ անոնց՝ որ իրմէն կը խնդրեն։
12 Ամէն ինչ որ կ'ուզէք՝ թէ մարդիկ ձեզի
ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք․ ինչու
որ աս է օրէնքը ու մարգարէները։
13 Նեղ դռնէն ներս մտէք․ ինչու որ
լայն է այն դուռը՝ ու հանդարձակ այն ճամ-
բան, որ կը տանի կորուստին․ և շատուոր
14 են անոնք՝ որ անկից կը մտնեն։ Ինչու որ
նեղուցք է այն դուռը՝ ու նեղ է այն ճամ-
բան, որ դէպ'ի կեանքը կը տանի․ և քիչ-
ուոր են անոնք՝ որ զանիկայ կը գտնեն։
15 Զգո՛յշ կեցէք սուտ մարգարէներէն՝ ա-

Digitized by Google

րոնք ձեզի կու գան ոչխարի հանդերձներով,
բայց ներսէն յափշտակող գայլեր են ։ Ի- 16
րենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք .
միթէ փուշերէն խաղող կը քաղե՞ն , կամ
տատասկէն՝ թուզ ։ Նոյնպէս ալ ամէն բա- 17
րի ծառ՝ բարի պտուղ կու տայ , և չար
ծառ՝ չար պտուղ կու տայ ։ Բարի ծառը 18
չկրնար չար պտուղ տալ , ո՛չ ալ չար ծա-
ռը բարի պտուղ տալ ։ Ամէն ծառ որ բա- 19
րի պտուղ չտար՝ կը կտրուի , ու կրակին մէ-
ջը կը ձգուի ։ Ուրեմն իրենց պտուղէն զա- 20
նոնք պիտի ճանչնաք ։
Ո՛չ թէ ամէն մէկը՝ որ ինծի Տէ՛ր Տէ՛ր 21
կ'ըսէ , պիտի մտնէ երկնքին թագաւորու-
թիւնը . հապա ան՝ որ իմ երկնաւոր Հօրս
կամքը կը կատարէ ։ Շատերը ան օրը 22
ինծի պիտի ըսեն ։ Տէ՛ր Տէ՛ր՝ չէ՞ որ քու
անունովդ մարգարէութիւն ըրինք , ու քու
անունովդ դեւեր հանեցինք , ու քու անունովդ
շատ հրաշքներ ըրինք ։ Այն ատենը ա- 23
նոնց պիտի ըսեմ , թէ Ես բնաւ ձեզ չէի
ճանչնար . մէկ դի՛ գացէք քովէս ամէնքդ՝ որ
անօրէնութիւն կը գործէիք ։
Ո՛վ որ իմ աս խօսքերս կը լսէ՝ ու կը կա- 24
տարէ զանոնք , անիկայ կը նմանի խելացի
մարդու մը՝ որ իր տունը վէմի վրայ շի-
նեց . Անձրեւները իջան , ու գետերը վա- 25
զեցին . հովերը փչեցին և զարկին տանը՝ ու
չիյնար . ինչու որ վէմի վրայ հաստատուած
էր ։ Ու ո՛վ որ աս իմ խօսքերս կը լսէ ու 26
չկատարեր զանոնք , կը նմանի անխելք մար-

Digitized by Google

դուռ մը՝ որ իր տունը աւազի վրայ շինեց։
27 Ընձրեւները իջան, գետերը եկան, հովերը
փչեցին՝ զարկին տանը ու փլաւ, և խիստ
մեծ էր անոր կործանումը։
28 Ու երբոր Յիսուս լմնցուց ամէն աս
խօսքերը, ժողովուրդները կը զարմանային
29 անոր վարդապետութեանը վրայ։ Ինչու
որ՝ իշխանութիւնով մը կը սորվեցնէր, ու
չէ թէ դպիրներուն պէս։

## ԳԼՈՒԽ Ը.

1 Ու երբոր ան լեռնէն վար իջաւ՝ շատ ժո–
2 ղովուրդներ գացին անոր ետեւէն։ Ու ա–
հա՛ բորոտ մը եկաւ, երկրպագութիւն կ'ը–
նէր անոր՝ ու կ'ըսէր. Տէ՛ր՝ թէ որ ուզես,
3 կրնաս զիս մաքրել։ Յիսուս իր ձեռքը
երկնցուց ու դպցուց անոր՝ և ըսաւ. Կ'ու–
զեմ՝ մաքրուէ՛. ու շուտով մը անոր բորո–
4 տութիւնը մաքրուեցաւ։ Ու Յիսուս ը–
սաւ անոր. Զգո՛յշ կեցիր՝ մէկու մը չըսես.
հապա գնա՛ դուն քեզ քահանային ցուցո՛ւր,
ու Մովսէսին պատուիրած ընծան տո՛ւր,
իրենց վկայութիւն ըլլալու համար։
5 Ու երբոր Կափառնայում մտաւ՝ հա–
րիւրապետ մը եկաւ քովը, կ'աղաչէր ի–
6 րեն, Ու կ'ըսէր. Տէ՛ր՝ իմ ծառաս տունը
անդամալոյծ պառկած է, չարաչար կը
7 տանջուի։ Յիսուս ըսաւ անոր. Ես կու–
8 գամ և զանիկայ կը բժշկեմ։ Պատասխան
տուաւ հարիւրապետը և ըսաւ. Տէ՛ր՝
ես արժանի չեմ որ դուն իմ երդիքէս ներ–

Digitized by Google

քեզ մտնես. միայն թէ խօսքով պատուիրէ,
ու պիտի բժշկուի իմ ծառաս։ Ինչու որ 9
ես ալ հրամանք տակ մէկ մարդ մըն եմ,
իմ իշխանութեանս ներքեւ զինուորներ ու-
նիմ. ասոր կ'ըսեմ. Գնա՛, ու կ'երթայ.
և մէկալին՝ թէ Եկո՛ւր, ու կուգայ. և
ծառայիս՝ թէ Ըս բանը ըրէ՝ ու կ'ընէ։ Յիսու- 10
սուս երբոր լսեց՝ զարմացաւ, և իր ետեւէն
գացողներուն ըսաւ. Ճշմարիտ կ'ըսեմ ձե-
զի, Իսրայէլի մէջ ալ ես ասանկ հաւատք
բնաւ չգտայ։ Ու ձեզի կ'ըսեմ որ արեւել- 11
քէն ու արեւմուտքէն շատերը պիտի գան,
ու երկնից թագաւորութեան մէջ պիտի
բազմին՝ Աբրահամին, ու Իսահակին, և
Յակոբին հետը։ Ու թագաւորութեան 12
զաւակները դուրսի խաւարը պիտի ելլեն.
հո՛ն պիտի ըլլայ լալ և ակռաներու կճրը-
ցընել։ Ու Յիսուս հարիւրապետին ը- 13
սաւ. Գնա՛, և ինչպէս որ դուն հաւատա-
ցիր՝ անանկ թող ըլլայ քեզի. ու ան օրը
անոր ծառան ողջընցաւ։

Ու Յիսուս Պետրոսին տունը եկաւ, 14
տեսաւ որ անոր զոքանչը ջերմէն բռնուած
պառկած էր, Անոր ձեռքէն բռնեց, ու 15
ջերմը թող տուաւ զանիկայ. ոտքի վրայ
ելաւ՝ և ծառայութիւն կ'ընէր անոր։

Երբոր իրիկուն եղաւ՝ շատ դիւահարներ 16
բերին իրեն, ու խօսքով հանեց չար ոգի-
ները, և բոլոր հիւանդները բժշկեց. Որ 17
Եսայի մարգարէին ձեռքովը ըսուած խօս-
քը կատարուի. Անիկայ մեր հիւանդու-

Digitized by Google

թիւնները վերցուց և մեր ցաւերը կրեց։
18 Յիսուս իր բոլորտիքը շատ ժողովուրդ
տեսնելով, հրաման ըրաւ որ միւս կող-
19 մը երթան։ Ու դպիր մը եկաւ և ըսաւ
անոր. Վարդապետ՝ ես ալ քու ետևէդ
20 պիտի գամ, ո՛ւր որ երթաս։ Յիսուս ա-
նոր ըսաւ. Աղուէսները որջ ունին, ու
երկնից թռչունները բոյն. բայց Որդին
մարդոյ տեղ մը չունի, որ հոն իր գլուխը
21 դնէ։ Ու իր աշակերտներուն մէկն ա-
ըսաւ իրեն. Տէ՛ր՝ թո՛ղ ինծի հրաման տուր,
22 որ երթամ առաջ իմ հայրս թաղեմ։ Յի-
սուս ըսաւ անոր. Եկո՛ւր իմ ետևէս, ու
թո՛ղ տուր մեռելներուն որ թաղեն իրենց
մեռելները։
23 Եւ երբոր նաւը մտաւ, իր աշակերտ-
24 ները իր ետևէն գացին։ Ու ահա՛ մեծ
ալէկոծութիւն մը եղաւ ծովին մէջը, ա-
նանկ որ՝ նաւը ալիքներէն կը ծածկուէր,
25 և ինքը կը քնանար։ Ու աշակերտները
գացին արթնցուցին զանիկայ՝ և ըսին.
Տէ՛ր՝ մեզ փրկէ, ինչու որ ահա կը կոր-
26 սուինք։ Եւ ըսաւ անոնց. Թերահաւատ-
ներ՝ ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. այն ատե-
նը ելաւ հովերը ու ծովը սաստեց, և մեծ
27 խաղաղութիւն եղաւ։ Ու մարդիկը զար-
մացան՝ և կ՚ըսէին. Ինչպէս մարդ է աս՝
որ հովերը ու ծովը ալ անոր կը հնազանդին։
28 Եւ երբոր միւս կողմը Գերգեսացւոց
երկիրը անցաւ, երկու դիւահար պատա-
հեցան իրեն գերեզմաններէն ելած՝ սաստիկ

Digitized by Google

կատաղած․ որ հնար չէր մէկուն այն ճամբա-
յէն անցնիլ ։ Եւ ահա աղաղակեցին և 29
ըսին․ Յիսուս Որդի Աստուծոյ դուն մեր
հետը ի՞նչ բան ունիս․ ատենէ դուրս ե-
կա՞ր մեզ տանջելու ։ Եւ անոնցմէ քիչ 30
մը հեռու խոզերու երամակ մը կար, որ
կ'արածուէին ։ Եւ դևերը կաղաչէին իրեն 31
և կ'ըսէին․ Թէ որ մեզ ասկից կը հանես՝
հրաման ըրէ մեզի որ երթանք խոզերուն
երամակին ։ Եւ ըսաւ անոնց․ Գացէք․ 32
և անոնք ելան գացին խոզերուն երամակին․
ու բոլոր երամակը գահավէժ տեղէն ծովը
վազեցին, և ջուրերուն մէջը մեռան ։ Խոզ- 33
արածներն ալ փախան, և գացին քաղաքը
բոլորը պատմեցին, ու դիւահարներուն
պատահած բաները ։ Եւ ահա բոլոր քաղա- 34
քը Յիսուսին դէմը ելաւ․ երբոր տեսան
զանիկայ՝ աղաչեցին որ իրենց սահմաններէն
երթայ ։

## ԳԼ․ Թ․

Եւ նաւը մտաւ՝ մէկալ կողմը անցաւ, և 1
եկաւ իր քաղաքը ։ Եւ ահա՝ անդամալու- 2
ծայ մը բերին իրեն, որ մահիճին մէջը
պառկած էր․ և Յիսուս անոնց հաւատքը
տեսնելով՝ անդամալուծին ըսաւ․ Ներուի՛ն
քեզի քու մեղքերդ ։ Եւ ահա՝ դպիրներէն 3
ոմանք իրենց մտքին մէջը ըսին․ Ասիկայ
հայհոյութիւն կ'ընէ ։ Յիսուս ալ անոնց 4
խորհուրդը իմանալով՝ ըսաւ իրենց․ Ինչո՞ւ
սրտերնուդ մէջը չար բաներ կը խորհիք ։

Digitized by Google

5 Որը դիւրին է. Ներուի՛ քեզի քու մեղքերդ
6 ըսե՞լը, թէ Ելի՛ր ու քալէ՛ ըսելը։ Բայց
որպէս զի գիտնաք՝ որ Որդին մարդոյ իշ-
խանութիւն ունի երկրի վրայ մեղքերու
թողութիւն տալու. (այն ատենը անդա-
մալոյծին ըսաւ.) Ելի՛ր՝ մահիճդ ա՛ռ ու
7 տունդ գնա՛։ Եւ անիկա ելաւ իր տունը
8 գնաց։ Ժողովուրդները երբոր տեսան՝
զարմացան. ու կը փառաւորէին զԱստուած,
որ մարդոց անանկ իշխանութիւն տուեր է։
9 Եւ Յիսուս անկից անցնելով՝ մէկ մարդ
մը տեսաւ Մատթէոս անունով, որ մաքս
ընդունելու նստեր էր. ու ըսաւ անոր.
Ետեւէս եկուր. և ելաւ անոր ետեւէն գնաց։
10 Եւ եղաւ որ տունը սեղան նստած ատենը՝
ահա՛ ուրիշ շատ մաքսաւորներ և մեղաւոր-
ներ ալ եկան, ու սեղան նստած էին Յի-
11 սուսին և իր աշակերտներուն հետը։ Փարի-
սեցիները երբոր տեսան՝ ըսին անոր աշա-
կերտներուն. Ինչո՞ւ համար ձեր վարդա-
պետը մաքսաւորներուն և մեղաւորներուն
12 հետը կ'ուտէ։ Բայց Յիսուս երբոր լսեց՝
ըսաւ անոնց. Առողջներուն բժիշկ պէտք
13 չէ՛, հապա հիւանդներուն։ Գացէ՛ք սոր-
վեցէ՛ք թէ ի՞նչ է աս խօսքը՝ Ողորմութիւն
կ'ուզեմ, և չէ՛ թէ զոհ. ինչու որ ես ար-
դարները կանչելու չեկայ, հապա մեղաւոր-
ները։
14 Այն ատենը Յովհաննէսին աշակերտները
անոր եկան՝ ու ըսին. Ինչո՞ւ մենք և Փա-
րիսեցիները շատ անգամ ծոմ կը պահենք,


Digitized by Google

ու քու աշակերտներդ չեն պահեր ։ Յի- 15
սուս ըսաւ անոնց . Միթէ կարելի՞ է որ
հարսնիքին տղաքը սուգ պահեն , քանի որ
փեսան իրենց հետն է . բայց օրեր պիտի
գան՝ որ անոնց փեսան իրենցմէ վերցուի՝
ու հապա ծոմ պիտի պահեն ։ Մէկը չձգեր 16
նոր լաթի կտոր հին հագուստի վրայ . քան-
զի ան՝ որ անոր լրութեանը համար դրուած
է , կ'առնէ հանդերձէն՝ ու պատռուածքը
ալ աւելի գէշ կ'ըլլայ ։ Ո՛չ ալ նոր գի- 17
նին հին տիկերու մէջ կը դնեն . եթէ ոչ՝
տիկերը կը պատռին՝ ու գինին կը թափի , և
տիկերը կը կորնչին ։ Հապա նոր գինին
նոր տիկերու մէջ կը դնեն , և երկուքն ալ
կը պահուին ։

Երբոր անիկայ անոնց հետը աս կը խօ- 18
սէր , ահա՛ իշխան մը եկաւ , երկրպագու-
թիւն կ'ընէր իրեն՝ ու կ'ըսէր . Աղջիկս ալ
մինչև հիմա մեռած է , բայց եկո՛ւր ձեռքդ
անոր վրայ դի՛ր՝ ու պիտի ապրի ։ Ելաւ 19
Յիսուս ու գնաց անոր ետևէն աշակերտ-
ներուն հետը ։

Ու ահա՛ տասներկու տարուան արիւնա- 20
տես կին մը եկաւ ետևէն անոր հանդերձին
ծայրին դպաւ ։ Վասնզի իր միտքէն կ'ը- 21
սէր , թէ Միայն անոր լաթերուն որ
դպչիմ՝ կը բժշկիմ ։ Բայց Յիսուս երբ- 22
որ ետին դարձաւ ու տեսաւ զանիկայ ,
ըսաւ . Մի՛ վախնար աղջիկ , քու հաւատքդ
քեզ բժշկեց . և կնիկը ան ժամէն բժշ-
կուեցաւ ։

Digitized by Google

23 Երբոր Յիսուս իշխանին տունը եկաւ,
ու տեսաւ փողահարները եւ բազմութեան
24 աղմուկը, ըսաւ անոնց. Մէկդի՛ գացէք.
քանզի որ աղջիկը մեռած չէ՝ հապա կը քը-
25 նանայ. եւ ծաղր կ'ընէին անիկայ։ Եւ
երբոր բազմութիւնը դուրս ելաւ, ինք
ներս մտաւ՝ անոր ձեռքէն բռնեց, ու աղ-
26 ջիկը ելաւ կայնեցաւ։ Եւ այս լուրը բո-
լոր ան երկիրը տարածուեցաւ։
27 Ու երբոր Յիսուս անկից կ'անցնէր, եր-
կու կոյր ինկան անոր ետեւէն, կ'աղաղա-
կէին՝ ու կ'ըսէին. Ողորմէ՛ մեզի՛ Որդի՛
28 Դաւթի։ Եւ երբոր տունը եկաւ, կոյրե-
րը իրեն եկան. եւ Յիսուս անոնց ըսաւ.
Կը հաւատա՞ք, թէ կրնամ աս բանը ձե-
29 զի ընել. ըսին անոր. Այո՛ Տէր։ Ան
ատենը անոնց աչքերուն դպաւ՝ ու ըսաւ.
30 Ձեր հաւատքին պէս ըլլա՛յ ձեզի։ Ու ա-
նոնց աչքերը բացուեցան, եւ սաստիկ պա-
տուէր տուաւ Յիսուս անոնց ու ըսաւ.
31 Զգո՛յշ կեցէք, մէկը չիմանայ։ Բայց ա-
նոնք ելան բոլոր ան երկրին մէջ անոր
համբաւը տարածեցին։
32 Եւ երբոր անոնք դուրս ելան, բերին
33 իրեն համր դիւահար մարդ մը։ Ու երբ-
որ դեւը ելաւ՝ համրը խօսեցաւ, եւ ժո-
ղովուրդները զարմացան՝ ու ըսին, թէ Ա-
սանկ բան Իսրայէլացւոց մէջ բնաւ չտես-
34 նուեցաւ։ Բայց Փարիսեցիները կ'ըսէին,
թէ Ատիկայ դեւերուն իշխանին ձեռքովը
դեւերը կը հանէ։

Եւ Յիսուս կը պտըտէր բոլոր քաղաք- 35
ները ու գիւղերը, և անոնց ժողովարաննե-
րուն մէջը կը սորվեցնէր, ու կը քարոզէր
թագաւորութեան՝ աւետարանը. և կը
բժշկէր բոլոր ախտերը ու բոլոր հիւան-
դութիւնները ժողովուրդին մէջ։ Եւ ժո- 36
ղովուրդները տեսնելով՝ անոնց վրայ խըղ-
ճաց. վասն զի որ հոգնած ու ցրուած եղած
էին՝ հովիւ չունեցող ոչխարներու պէս։
Այն ատենը ըսաւ իր աշակերտներուն. 37
Հունձքը շատ է, բայց մշակները քիչ։
Ուստի հունձքին Տէրոջը աղաչեցէք, որ 38
մշակներ հանէ իր հունձքին։

## ԳԼ. Ժ.

Եւ իր քովը կանչելով իր տասներկու 1
աշակերտները, իշխանութիւն տուաւ ա-
նոնց պիղծ ոգիներուն վրայ՝ զանոնք հանելու,
և ամէն ցաւերը ու ամէն հիւանդութիւննե-
րը բժշկելու։
Ու տասներկու Առաքելոց անունները 2
ասոնք էին. առաջինը Սիմոն՝ Պետրոս
ըսուածը, և անոր եղբայրը Անդրէաս.
Յակոբոս Զեբեդեան, և անոր եղբայրը 3
Յովհաննէս. Փիլիպպոս՝ և Բարթողի-
մէոս, Թովմաս՝ և Մատթէոս մաքսաւոր.
Յակոբոս Ալփեան, և Ղեբէոս՝ որ Թադ-
դէոս ըսուեցաւ։ Սիմոն Կանանացի և 4
Յուդա Իսկարիովտացի, որ նաև մատնեց
զանիկայ։
Այս տասներկուքը Յիսուս ղրկեց, պատուի- 5

Digitized by Google

պատուիրեց անոնց՝ ու ըսաւ․ Հեթանոսներուն
ճամբան մի՛ երթաք, ու Սամարացիներու
6 քաղաքը մի՛ մտնէք։ Հապա աւելի Իս-
րայէլի տանը կորսուած ոչխարներուն գա-
7 ցէք։ Ու երթալ կ՚երթաք՝ քարոզեցէք ու
ըսէ՛ք, թէ Երկնից թագաւորութիւնը մօտ
8 է։ Հիւանդները բժշկեցէք, բորոտները
սրբեցէք, դեւերը հանեցէք, ձրի առեր էք
9 և ձրի՛ տուէք։ Մի՛ ստանաք ոսկի, և ո՛չ
արծաթ և ո՛չ պղինձ ձեր գօտիներուն մէ-
10 ջը․ Ո՛չ ճամբու համար տոպրակ, և ո՛չ
երկու հանդերձ, ո՛չ կօշիկ, ո՛չ գաւազան․
Ինչու որ մշակը իր կերակուրին արժանի է։
11 Ո՛ր քաղաք կամ գեղ մտնէք, հարցուցէք՝
թէ ո՞վ է անոր մէջը արժանաւոր, ու
12 հո՛ն կեցէք մինչև որ անկից ելլաք։ Ու
երբոր տունը կը մտնէք՝ բարև տուէ՛ք ա-
13 նոր, ու ըսէք․ Բարև այս տանը։ Եթէ
որ այն տունը արժանաւոր է, ձեր բարևը
անոր վրայ գայ․ Հապա թէ որ արժա-
14 նաւոր չէ՝ ձեր բարևը ձեզի դառնայ։ Ու
ո՛վ որ ձեզ չընդունի ու ձեր խօսքերը մը-
տիկ չընէ, երբոր այն տունէն կամ քա-
ղաքէն կ՚ելլաք, ձեր ոտքերուն փոշին թօթ-
15 վեցէք։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի․ Սոդո-
մացւոց ու Գոմորայեցւոց երկրին աւելի դիւ-
րին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան
թէ այն քաղաքին։
16 Ահա ես ձեզ կը ղրկեմ իբրև ոչխարներ
գայլերու մէջ․ ուստի օձերու պէս խորա-
գէտ եղէք, և աղաւնիներու պէս միամիտ։

Digitized by Google

Մարդոցմէն զգոյշ կեցէք. ինչու որ ձեզ 17
ատեաններու պիտի մատնեն, ու իրենց ժո-
ղովարաններուն մէջը ձեզ պիտի ծեծեն։
Եւ դատաւորներուն ու թագաւորներուն 18
առջեւ ձեզ պիտի տանին իմ համար,
վկայութիւն ըլլալու անոնց և հեթանոսա-
ներուն։ Բայց երբոր ձեզ մատնեն՝ հոգ 19
մի՛ ընէք թէ ինչպէ՛ս կամ ինչ պիտի խօ-
սիք. ինչու որ ձեզի պիտի տրուի այն ժա-
մուն, ինչ որ պիտի խօսիք։ Ինչու որ 20
չէ թէ դուք էք որ կը խօսիք, հապա՝ ձեր
Հօրը Հոգին, որ ձեր ներսի դին կը խօսի։
Եղբայր եղբայրը մահուան պիտի մատնէ, ու 21
հայրը որդին. և որդիք հօրերնուն վրայ
պիտի ելլեն ու մեռցընեն զանոնք։ Եւ 22
ամենէն ատելի պիտի ըլլաք իմ անուանս
համար. բայց ան որ մինչև վերջը կը
համբերէ, պիտի ապրի։ Եւ երբոր այս 23
քաղաքին մէջ ձեզ կը հալածեն՝ ուրիշ
քաղաք փախէք. և թէ որ անկէց կը հա-
լածեն ձեզ, միւս քաղաքը փախէք. ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզի. Իսրայէլի քաղաք-
ները պիտի չհասցընէք, մինչև Որդին մար-
դոյ գայ։ Աշակերտը իր վարդապետէն 24
աւելի չէ՝, և ո՛չ ծառան իր տիրոջմէն։
Հերիք է աշակերտին՝ թէ որ իր վարդա- 25
պետին պէս ըլլայ, ու ծառային՝ իր տի-
րոջը պէս. թէ որ տանուտէրը Բէեղզե-
բուղ կանչեցին, ո՛րչափ աւելի անոր
ընտանիքը։ Ուստի մի՛ վախնաք անոնցմէ. 26
ինչու որ բան մը չկայ ծածուկ՝ որ պիտի

Digitized by Google

յայտնուելու, և գաղտնիք՝ որ պիտի չգիտ-
27 ցուի ։ Ինչ որ ձեզի մութին մէջը կ՚ըսեմ,
անիկայ լոյսին մէջ խօսեցէք. և ինչ որ
ականջով ՚ի վար կը լսէք, տանիքներուն վրայ
28 քարոզեցէք ։ Նաև մի՛ վախնաք անոնցմէ՝
որ մարմինը կը սպաննեն, ու չեն կրնար
հոգին սպաննել. հապա աւելի անկէց վախ-
ցէք դուք, որ կրնայ հոգին ու մարմինը
29 գեհեննին մէջ կորսնցընել ։ Չէ՞ որ երկու
ճնճղուկ մէկ դանկի կը ծախուին, և ա-
նոնցմէ մէկը գետինը չիյնար առանց ձեր
30 Հօրը ։ Բայց ձեր գլխուն բոլոր մազերն
31 ալ համրուած է ։ Ուրեմն մի՛ վախնաք.
ինչու որ շատ ճնճղուկներէն լաւ էք դուք ։
32 Ով որ մարդոց առջև զիս կը դաւանի, ես
ալ անիկայ պիտի դաւանիմ իմ Հօրս առ-
33 ջևը՝ որ երկինքն է ։ Նաև ո՛վ որ մարդոց
առջև զիս կ՚ուրանայ, ես ալ անիկայ պի-
տի ուրանամ իմ Հօրս առջևը՝ որ երկինքն
34 է ։ Մի՛ կարծէք՝ թէ ես երկրի վրայ խա-
ղաղութիւն ձգելու եկայ. խաղաղութիւն
35 ձգելու չեկայ, հապա՝ թուր ։ Ինչու որ՝
եկայ մարդը իր հօրմէն զատելու, ու աղ-
ջիկը՝ իր մօրմէն, ու հարսը՝ իր կեսուրէն ։
36 Նաև մարդուն թշնամիները իր ընտանիքը
37 պիտի ըլլան ։ Ան որ հայրը ու մայրը ինծ-
մէն աւելի կը սիրէ, ինծի արժանի չէ՛. և
ան՝ որ տղան կամ աղջիկը ինծմէ աւելի
38 կը սիրէ, ինծի արժանի չէ՛ ։ Նաև ան որ
իր խաչը չառներ ու իմ ետևէս գար, ինծի
39 արժանի չէ՛ ։ Ան որ իր անձը կը գտնէ,

Digitized by Google

պիտի կորսնցընէ զանիկայ. և ան որ իր
անձը ինծի համար կը կորսնցընէ, պիտի
գտնէ զանիկայ։ Ան որ ձեզ կ'ընդունի, զիս 40
կ'ընդունի. և ան որ զիս կ'ընդունի, զիս
խրկողը կ'ընդունի։ Ան որ մարգարէ մը 41
կ'ընդունի մարգարէի անունով, մարգարէի
վարձք կ'առնէ. և ան որ արդար մը կ'ըն-
դունի արդարի անունով, արդարի վարձք
կ'առնէ։ Եւ ան որ այս պզտիկներէն մէ- 42
կուն միայն գաւաթ մը պաղ ջուր կը խմց-
ընէ աշակերտի անունով, ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի, իր վարձքը չկորսնցըներ։

## ԳԼ. ԺԱ

Եւ եղաւ որ երբ Յիսուս լմընցուց իր 1
տասնըերկու աշակերտներուն պատուէրը,
գնաց անկից անոնց քաղաքները քարոզելու
և սորվեցընելու։

Իսկ Յովհաննէս բանտին մէջը երբոր լսեց 2
Քրիստոսի գործքերը՝ իր աշակերտներուն
ձեռքովը խրկեց, ու ըսաւ անոր. Դուն ա՞ն 3
ես՝ որ գալու էիր, թէ ուրիշի մը նայինք։
Պատասխան տուաւ Յիսուս՝ և ըսաւ ա- 4
նոնց. Գացէք պատմեցէք Յովհաննէսին՝
ինչ որ տեսաք ու լսեցիք։ Կոյրերը կը 5
տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները
կը սրբուին, ու խուլերը կը լսեն, և մե-
ռելները յարութիւն կ'առնեն, ու աղքատ-
ներուն աւետարան կը քարոզուի։ Եւ ե- 6
րանի՜ է անոր, որ իմ վրաս չգայթակղիր։
Եւ երբոր անոնք գացին՝ Յիսուս սկսաւ 7

Digitized by Google

ժողովուրդներուն ըսել Յովհաննէսին համար . Ի՞նչ տեսնելու ելաք անապատին
8 մէջ . եղէ՞գ մը հովէն շարժուած ։ Հապա
ի՞նչ տեսնելու ելաք . փափուկ լաթերով
զարդարուած մա՞րդ մը . ահա՛ փափուկ լա-
թեր հագնողները թագաւորներուն տուներին
9 են ։ Հապա ի՞նչ տեսնելու ելաք . մար-
գարէ՞ . այո՛ կ'ըսեմ ձեզի . մարգարէէ մեծն
10 ալ տեսիք ։ Ինչու որ ասիկա այն է՝ որուն համար գրուած է . Ահա՛ ես իմ հրեշ-
տակս պիտի խրկեմ քու երեսիդ առջեւէն ,
որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առ-
11 ջեւդ ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . Կնոջ-
ներէն ծնածներուն մէջ Յովհաննէս մկրտի-
չէն մեծը ելած չէ՛ . սակայն երկնից թա-
գաւորութեան մէջի պզտիկը՝ անկէ
12 մեծ է ։ Ու Յովհաննէս մկրտիչին օրերէն
մինչեւ հիմա երկնից թագաւորութիւնը ու-
ժով կ'առնուի , և ուժովները կը յափշտա-
13 կեն անիկայ ։ Ինչու որ բոլոր օրէնքը ու
մարգարէները մինչեւ Յովհաննէս մարգա-
14 րէութիւն ըրին ։ Ու թէ կ'ուզէք ընդու-
նիլ , անիկայ է Եղիան՝ որ պիտի գար ։
15 Ան որ լսելու ականջ ունի , թո՛ղ լսէ ։
16 Որո՞ւ նմանցընեմ ես այս ազգը . կը նմանի
տղոց , որ շուկաները կը նստին՝ իրենց ընկ-
17 կերները կը կանչեն , Ու կ'ըսեն . Փող հնչե-
ցուցինք ձեզի՝ ու չխաղացիք , ողբ կարդա-
18 ցինք ձեզի՝ ու չլացիք ։ Յովհաննէսը եկաւ՝
ո՛չ կ'ուտէր և ո՛չ կը խմէր , ու կ'ըսեն .
19 Դեւ կայ ներսիդին ։ Որդին մարդոյ ե-



Digitized by Google

կաւ, կ'ուտէ և կը խմէ, ու կ'ըսեն. Ահա՛
ուտող և արբեցող մարդ մը՝ մաքսաւոր-
ներուն ու մեղաւորներուն բարեկամը. Եւ
իմաստութիւնը արդարացաւ իր տղոցմէն:
— Ան ատենը սկսաւ նախատել այն քաղաք- 20
ները, որոնց մէջ եղան իր շատ հրաշքները,
ու չապաշխարեցին: Վա՜յ քեզ Քորազին, 21
վա՜յ քեզ Բեթսայիդա. ինչու որ եթէ
Տիւրոսի և Սիդոնի մէջ եղած ըլլային ան
զօրութիւնները՝ որ ձեր մէջը եղան, շա-
տոնցմէ քուրձով ու մոխիրով ապաշխարած
պիտի ըլլային: Բայց ձեզի կ'ըսեմ. Տիւ- 22
րոսի երկրին և Սիդոնին աւելի դիւրին պի-
տի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ ձե-
զի: Ու դուն Կափառնայում՝ մինչև եր- 23
կինքը պիտի չբարձրանաս, հապա մինչև
դժոխքը պիտի իջնաս. ինչու որ՝ եթէ Սո-
դոմի մէջ եղած ըլլային ան զօրութիւնները՝
որ քու մէջդ եղան, հիմա որ
մինչև այս օրս դեռ պիտի մնային: Բայց 24
ձեզի կ'ըսեմ որ Սոդոմացւոց երկրին աւելի
դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը,
քան թէ քեզի:

Նոյն ժամանակին պատասխան տուաւ 25
Յիսուս ու ըսաւ. Կը գոհանամ քեզ-
մէ ո՛վ Հայր՝ Տէր երկնի և երկրի, որ ա-
սոնք ծածուկ պահեցիր իմաստուններէն և
գիտուններէն, ու տղոցը յայտնեցիր: Ա- 26
յո՛ ո՛վ Հայր. ինչու որ քու առջիդ ա-
նանկ հաճելի եղաւ: Ամեն բան ինծի տր- 27
ուեցաւ իմ Հօրմէս. ու մէկը չճանչնար

Որդին՝ բայց Հայրը . և մէկը չճանչնար
Հայրը՝ բայց Որդին . և ան՝ որուն որ Որ-
28 դին կ՚ուզէ յայտնել ։ Եկէք ինծի բոլոր
հոգնած ու բեռնաւորածներ , և ես ձեզ
29 կը հանգչեցընեմ ։ Իմ լուծս ձեր վրայ ա-
ռէք , և ինծմէ սորվեցէք որ հեզ եմ ու
սրտով խոնարհ , ու ձեր անձերուն հանգըս-
30 տութիւն պիտի գտնէք ։ Ինչու որ՝ իմ լուծս
քաղցր է , և իմ բեռս թեթև ։

## ԳԼ. ԺԲ.

1 Էն ատենը Յիսուս շաբաթ օրը գնաց ցա-
նոց արտերուն մէջէն . և իր աշակերտնե-
րը անօթեցան , ու սկսեցին ցորենի հասկ
2 փրցընել և ուտել ։ Փարիսեցիները երբոր
տեսան , ըսին անոր . Ահա՛ քու աշակերտա-
ներդ կը գործեն , ինչ որ արժան չէ շաբաթ
3 օրը գործել ։ Ան ալ անոնց ըսաւ . Չէ՞ք
կարդացեր դուք Դաւիթին ըրածը , երբոր
անօթեցաւ ինքը՝ ու անոնք որ իր հետն
4 էին . Ինչպէս մտաւ Աստուծոյ տունը , և
առաջաւորութեան հացը կերաւ . որ ո՛չ ի-
րեն օրինաւոր էր ուտել , և ո՛չ անոնց՝ որ
իր հետն էին , բայց միայն քահանաներուն ։
5 Կամ թէ՝ օրէնքին մէջը չէ՞ք կարդացեր ,
որ քահանաները շաբաթ օրերը տաճարին
մէջ շաբաթը կը պղծեն ու անմեղ են ։
6 Բայց ձեզի կ՚ըսեմ , որ աս տեղը տաճարէն
7 մեծ մէկը կայ ։ Ու թէ որ գիտնայիք ինչ
ըսել է , Ողորմութիւն կը կամիմ՝ ու չէ՝ թէ
զոհ , ան ատենը անպարտները դուք չէիք

դատապարտեք. Ինչու որ՝ Որդին մարդոյ 8
շաբաթին տէր է։

Եւ Յիսուս անկից գնաց՝ եկաւ անոնց 9
ժողովարանը։ Եւ հոն մէկ մարդ մը կար՝ 10
որ իր ձեռքը չորցած էր. հարցուցին անոր՝
ու ըսին, թէ Շաբաթ օրը բժշկել արժա՞ն
է. որ անոր վրայ ամբաստանութիւն ընեն։
Ան ալ անոնց ըսաւ. Ձեզմէ ո՞ր մարդը 11
կայ՝ որ մէկ ոչխար մը ունենայ, և անի-
կայ շաբաթ օրը փոսի մէջ իյնայ՝ պիտի
չբռնէ՞ ու վեր հանէ զանիկայ։ Արդ՝ ո՛ր- 12
չափ աւելի է մարդը ոչխարէն. ուրեմն
շաբաթ օրը բարի գործել պէտք է։ Ան 13
ատենը ըսաւ ան մարդուն. Երկընցո՛ւր
ձեռքդ. ան ալ երկընցուց, ու ողջընցաւ
մէկալին պէս։ Իսկ Փարիսեցիները դուրս 14
ելան՝ անոր վրայ խորհուրդ կ՚ընէին՝ թէ ին-
չպէ՛ս անիկայ կորսընցընեն։

Ու Յիսուս երբոր գիտցաւ, զատուեցաւ 15
անկէց. և շատ ժողովուրդներ անոր ետևէն
գացին, ու ամէնը բժշկեց։ Եւ պատուի- 16
րեց անոնց, որ մէկուն չյայտնեն իրեն հա-
մար. Որ Եսայի մարգարէին ձեռքով ը- 17
սուածը կատարուի. Ահա իմ ծառաս՝ որ 18
ընտրեցի, և իմ սիրելիս՝ որուն հաւնեցաւ
իմ անձս. իմ Հոգիս անոր վրայ պիտի
դնեմ, ու հեթանոսներուն իրաւունք պիտի
պատմէ։ Ո՛չ պիտի հակառակի, և ո՛չ 19
պիտի աղաղակէ. և ո՛չ մէկը պիտի լսէ ա-
նոր ձայնը փողոցներուն մէջ։ Ջախջա- 20
խած եղէգը պիտի չփշրէ, ու պլպլած

Digitized by Google

պատրոյգը պիտի չմարէ, մինչև որ դա-
21 տաստանը յաղթութեան հանէ: Եւ հե-
թանոսները անոր անունին պիտի յուսան:
22 Այն ատենը կոյր ու համր դիւահար մը բե-
րին իրեն, ու զանիկայ բժշկեց, այնպէս որ
23 համրը ու կոյրը խօսեցաւ և տեսաւ: Զար-
մացան բոլոր ժողովուրդները՝ ու կ'ըսէին.
Միթէ ասիկա՞յ է Քրիստոսը՝ Դաւիթին
24 որդին: Բայց Փարիսեցիները երբոր լսե-
ցին՝ ըսին. Ասիկայ ուրիշ բանով չհա-
ներ դևերը՝ բայց դևերուն Բէեղզեբուղ իշ-
25 խանովը: Երբոր Յիսուս անոնց խորհուր-
դը իմացաւ՝ ըսաւ անոնց. Ամէն թագաւո-
րութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ'աւերի.
և ամէն քաղաք կամ տուն իրեն դէմ բաժ-
26 նուած՝ չկենար: Եւ եթէ որ Սատանան՝ Սա-
տանայ կը հանէ, իրեն դէմ բաժնուեցաւ.
ուստի ինչպէ՞ս պիտի մնայ անոր թագաւո-
27 րութիւնը: Ու եթէ որ ես Բէեղզեբուղով
դևերը կը հանեմ, ձեր զաւակները ինչո՞վ
կը հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր
28 դատաւորները: Բայց եթէ որ ես Աստու-
ծոյ Հոգիովը կը հանեմ դևերը, ուրեմն
Աստուծոյ թագաւորութիւնը ձեր վրայ հաս-
29 սած է: Կամ ինչպէ՞ս կրնայ մէկը ուժով
մարդու մը տունը մտնել, և անոր կարա-
սիքը յափշտակել, եթէ որ առաջ այն ու-
ժով մարդը չկապէ, ու հապա եթէ անոր
30 տունը կողոպտէ: Ան որ ինծի հետ չէ, ին-
ծի հակառակ է. և ան որ ինծի հետ չժող-
31 վեր, ցրուեցան կ'ընէ: Անոր համար ձե-

Digitized by Google

զի կ'ըսեմ. Ամէն մեղքերը ու հայհոյու-
թիւնները պիտի ներուին մարդոց. բայց
Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւնը պիտի
չներուի։ Եւ ով որ Որդւոյ մարդոյ դէմ 32
բան մ'ըսէ՝ պիտի ներուի անոր. բայց ով
որ Հոգւոյն Սրբոյ դէմ մ'ըսէ՝ պիտի չներ-
ուի անոր, ո՛չ աս աշխարհիս մէջ, և ո՛չ
գալու աշխարհքին մէջ։ Կամ ծառը բարի 33
ըրէ՛ք, ու անոր պտուղը՝ բարի. կամ
ծառը չար ըրէ՛ք, ու անոր պտուղը՝ չար.
ինչու որ ծառը պտուղէն կը ճանչցուի։ Իժ- 34
երու ծնունդներ՝ ինչպէ՞ս կրնաք բարի
խօսիլ, որ չար էք. ինչու որ սրտին
աւելցուքէն բերանը կը խօսի։ Բարի մար- 35
դը իր սրտին բարի գանձէն բարի բաներ
կը հանէ. և չար մարդը իր սրտին չար
գանձէն չար բաներ կը հանէ։ Բայց ձեզի 36
կ'ըսեմ, թէ Ամէն դատարկ խօսքերուն հա-
մար՝ որ մարդիկ կը խօսին, դատաստանին
օրը համար պիտի տան։ Ինչու որ քու խօս- 37
քերէդ պիտի արդարանաս, և քու խօսքե-
րէդ պիտի դատապարտուիս։

Այն ատենը դպիրներէն ու փարիսեցիներէն 38
ոմանք պատասխան տուին իրեն ու ըսին.
Վարդապետ՝ կ'ուզենք որ քեզմէ մէկ նշան
մը տեսնենք։ Նա ալ պատասխան տուաւ 39
ու ըսաւ անոնց. Չար և շնացող ազգը
նշան կ'ուզէ, ու նշան պիտի չտրուի անոր,
բայց Յովնան մարգարէին նշանը։ Ինչու 40
որ՝ ինչպէս Յովնան իրեք օր իրեք գիշեր
կէտ ձուկին փորին մէջն էր, անանկ ալ

Digitized by Google

Որդին մարդոյ պիտի ըլլայ երկրիս սրտին
41 մէջը երեք օր և երեք գիշեր ։ Նինուէի
մարդիկը դատաստանին աս ազգին դէմ պի-
տի ելլեն, ու պիտի դատապարտեն զան-
կայ. վասն զի Յովնանի քարոզութենէն
զղջացան. և ահա Յովնանէն մեծ մէկը
42 կայ հոս ։ Հարաւի թագուհին՝ դատաս-
տանին աս ազգին դէմ պիտի ելլէ, ու պի-
տի դատապարտէ ասիկայ. վասն զի ինքը
երկրի ծայրերէն եկաւ, որ Սողոմոնի ի-
մաստութիւնը լսէ. և ահա՝ Սողոմոնէն մեծ
մէկը կայ հոս ։
43 Իսկ երբոր պիղծ դևը մարդէ մը կ'ելլէ՝
ջրամայ տեղուանք կը պտըտի, հանգիստ կը
44 փնտռէ՝ ու չգտներ ։ Ան ատենը կ'ըսէ.
Դառնամ նորէն իմ տունս՝ ուսկից որ ելայ.
և կու գայ զանիկայ կը գտնէ պարապ՝ մաքը-
45 րուած ու շտկուած ։ Ան ատենը կ'երթայ
և իր հետը կ'առնէ եօթը ուրիշ դևեր իր-
մէն աւելի չար, ու կը մտնեն՝ կը բնակին
հոն. և այն մարդուն վերջը՝ առջինէն գէշ
կ'ըլլայ. ասանկ պիտի ըլլայ աս չար ազգիս
ալ ։
46 Երբոր ինքը ժողովուրդին հետը կը խօ-
սէր, ահա՝ իր մայրը և իր եղբայրները
դուրսը կայներ էին ու կ'ուզէին իր հետը
47 խօսիլ ։ Ու մէկը իրեն ըսաւ. Ահա՝
քու մայրդ և եղբայրներդ դուրսը կայ-
48 ներ են, ու կ'ուզեն հետդ խօսիլ ։ Ան ալ
իրեն ըսողին պատասխան տուաւ՝ ու ը-
սաւ. Ո՞վ է իմ մայրս, կամ ո՞վ են իմ

Digitized by Google

եղբայրներս ։ Եւ իր ձեռքը դէպ 'ի իր ա- 49
շակերտներուն երկնցընելով՝ ըսաւ. Ահա՛
իմ մայրս՝ և իմ եղբայրներս ։ Վասն զի՝ 50
ո՛վ որ իմ Երկնաւոր Հօրս կամքը կը կա-
տարէ, անիկայ է իմ եղբայրս ու քոյրս և
մայրս ։

## ԳԼ. ԺԳ

Նոյն օրը Յիսուս տունէն ելաւ՝ ծովին ե- 1
զերքը նստեցաւ ։ Եւ շատ ժողովուրդներ 2
քովը ժողվուեցան, այնպէս որ ինքը նաւը
մտաւ՝ ու նստեցաւ. և բոլոր ժողովուրդը
ծովին եզերքը կայներ էր. Ու շատ բաներ 3
կը խօսէր անոնց առակներով՝ և կ՚ըսէր.
Ահա՛ սերմ ցանողը ելաւ՝ որ սերմ ցանէ. 4
ու երբոր կը ցանէր՝ ո՛րը ճամբուն քովը ին-
կաւ, և երկինքի թռչունը եկաւ՝ ու կե-
րաւ զանիկայ ։ Եւ ուրիշը ապառաժի վրայ 5
ինկաւ՝ ուր որ շատ հող չկար. ու շու-
տով մը բուսաւ, հողը թանձրութիւն չունե-
նալուն համար. Երբոր արևը ծագեցաւ՝ տապ- 6
ցաւ, ու արմատ չունենալուն համար չոր-
ցաւ ։ Եւ ուրիշը ինկաւ փուշերուն մէջը, 7
ու փուշերը ելան՝ և խեղդեցին զանիկայ ։
Եւ ուրիշը ինկաւ աղէկ հողի մէջ, ու 8
պտուղ կու տար՝ ո՛րը մէկին տեղը հարիւր,
ո՛րը վաթսուն, և ո՛րը երեսուն ։ Ան որ 9
լսելու ականջ ունի՝ թո՛ղ լսէ ։
Ու աշակերտները եկան՝ ըսին իրեն. Ին- 10
չո՞ւ համար առակներով կը խօսիս անոնց
հետ ։ Ան ալ պատասխան տուաւ՝ և ը- 11

Digitized by Google

անոնց պատասխանեց . Ձեզի Համար որ ձեզի տրուած
է գիտնալ երկնից թագաւորութեանը խոր-
12 հուրդները , ու անոնց տրուած չէ ։ Ինչ-
չու որ՝ ո՛վ որ ունի , անոր պիտի տրուի ու
պիտի աւելնայ . և ո՛վ որ չունի՝ ունեցածն
13 ալ անկէց պիտի վերցուի ։ Անոր համար
առակներով կը խօսիմ անոնց հետ . որ կը
տեսնեն՝ ու չեն տեսներ , և կը լսեն՝ ու չեն
14 լսեր , ու միտք չեն առներ ։ Ու անոնց
վրայ կը կատարուի Եսայիին մարգարէու-
թիւնը՝ որ կ'ըսէ . Լսելով պիտի լսէք՝ ու
պիտի չիմանաք . և տեսնելով պիտի տես-
15 նէք՝ ու պիտի չտեսնէք ։ Ինչու որ՝ այս ժո-
ղովուրդին սիրտը թանձրացաւ , և իրենց
ականջովը ծանր լսեցին ; ու աչքերնին գո-
ցեցին . որ չըլլայ թէ յանկարծ աչքով տեսնեն ,
և ականջով լսեն , և սրտով իմանան , ու
16 դառնան ու ես անոնք բժշկեմ ։ Բայց
երանի՝ է ձեր աչքերուն՝ որ կը տեսնեն , ու
17 ձեր ականջներուն՝ որ կը լսեն ։ Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի , որ շատ մարգարէներ և
արդարներ փափաքեցան ձեր տեսածը տես-
նելու՝ ու չտեսան , և ձեր լսածը լսելու՝ ու
չլսեցին ։

18 Հիմա դուք՝ սերմ ցանողին առակը լսե-
19 ցէք ։ Ամէն մէկը՝ որ թագաւորութեան
խօսքը կը լսէ՝ և միտքը չառներ , չարը կու-
գայ՝ ու անոր սրտին մէջ ցանուածը կը
յափշտակէ . ասիկա է՝ որ ճամբուն վրայ
20 ցանուեցաւ ։ Իսկ ապառաժին վրայ ցա-
նուածը ան է՝ որ երբ կը լսէ խօսքը , շուտ

Digitized by Google

մը ուրախութեամբ կ'ընդունին զանիկայ ։
Բայց իր մէջը արմատ չունենալուն համար 21
քիչ մը ատեն կը դիմանայ . ու երբոր այն խօսքին
համար նեղութիւն մը կամ հալածանք մը
ըլլայ՝ շուտով մը կը գայթակղի ։ Ան որ փու- 22
շերուն մէջ ցանուածն է՝ ան է որ միայն կը լսէ
խօսքը , և աշխարհիս զբաղմունքները՝ և
հարստութեան խաբեբայութիւնները ան
խօսքը կը խեղդեն , ու կ'ըլլայ անպտուղ ։
Իսկ աղէկ հողի մէջ ցանուածը՝ ան է՝ որ 23
երբ կը լսէ խօսքը , միտքը կ'առնէ , և պտուղ
կու տայ , ո՛րը հարիւր , ո՛րը վաթսուն , և
ո՛րը երեսուն ։
Ուրիշ առակ մըն ալ առաջ դրաւ ա- 24
նոնց ու ըսաւ . Երկնից թագաւորութիւ-
նը նմանեցաւ մէկ մարդու մը , որ իր արտին
մէջը աղէկ սերմ կը ցանէ ։ Իսկ երբոր մար- 25
դիկ կը քնանային՝ իր թշնամին եկաւ՝ ու
ցորենին մէջ վրայէն որոմ ցանեց , ու
գնաց ։ Եւ երբոր խոտը բուսաւ ու պտուղ 26
բերաւ , անկէ ետև որոմն ալ երևցաւ ։
Տանը տէրոջը ծառաները եկան՝ ու իրեն ը- 27
սին . Տէ՛ր , չէ՞ որ դուն քու արտիդ մէջը
աղէկ սերմ ցանեցիր . ուրեմն որոմը ուսկի՞ց
ունի ։ Իսկ ան ըսաւ անոնց . Մէկ թշնամի 28
մարդ մը ըրաւ անիկայ ։ Ծառաները իրեն
ըսին . Ու՞զես որ երթանք անիկայ մէկդի
քաղենք ։ Իսկ ան ըսաւ անոնց . Չէ՛ , որ 29
չըլլայ թէ որոմը քաղած ատեննիդ ցորենն
ալ անոր հետ փրցնէք ։ Թող տուէք 30
որ երկուքն ալ մէկտեղ մեծնան մինչև

հունձքի ատենը՝ և հնձելու ատենը հնձո-
ղներուն պիտի ըսեմ․ Առաջ որոմը քա-
ղեցէք՝ և անոնց խուրձ խուրձ կապեցէք
այրելու համար․ ու ցորենը իմ ամբարս
ժողվեցէք։
31 Ուրիշ առակ մըն ալ առաջ բերաւ ա-
նոնց՝ և ըսաւ․ Երկնից թագաւորութիւնը
մանանեխի հատի նման է, որ մէկ մարդ մը
32 առաւ՝ իր արտին մէջը ցանեց․ Որ ամէն
սերմերէն պզտիկ է, և երբոր աճի ամէն
խոտաբոյսերէն մեծ է, ու ծառ կ'ըլլայ,
անանկ որ երկնքի թռչունները կու գան,
և անոր ճիւղերուն վրայ կը հանգչին։
33 Ուրիշ առակ մըն ալ զրուցեց անոնց և
ըսաւ․ Երկնից թագաւորութիւնը խմորի
նման է, որ մէկ կնիկ մը առաւ՝ իրեք
գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչև որ ամէնն
ալ խմորեցաւ։
34 Այս ամէնը առակով խօսեցաւ Յիսուս
ժողովուրդին, ու առանց առակի բան մը
35 չէր խօսեր անոնց․ Որ մարգարէին ըսածը
կատարուի․ Առակներով պիտի բանամ իմ
բերանս, աշխարհքին սկիզբէն ծածկուած
բաները յայտնի պիտի ընեմ։
36 Այն ատենը Յիսուս ժողովուրդները թո-
ղուց, տուն եկաւ․ ու իր աշակերտները ե-
կան իրեն՝ և ըսին․ Արտին որոմներուն ա-
37 ռակը մեկնէ մեզի։ Ան ալ պատասխան
տուաւ՝ ու ըսաւ անոնց․ Բարի սերմ ցա-
38 նողը՝ Մարդու որդին է․ Եւ արտը աշ-
խարհքն է․ բարի սերմը անոնք են, որ

Digitized by Google

թագաւորութեանը որդիքն են . ու որոմը՝
չարին որդիքն են , Եւ թշնամին՝ որ անոն- 39
կայ ցանեց , Սատանան է . ու հունձքը՝
աշխարհքիս վերջն է . և հնձողները՝ հրեշտակ-
ներն են ։ Ինչպէս որ որոմը կը ժողվուի՝ 40
ու կրակի մէջ կ՚այրուի, աշխարհքիս վերջն ալ .
անանկ պիտի ըլլայ ։ Մարդու որդին իր 41
հրեշտակները պիտի խրկէ , ու պիտի ժող-
վեն անոր թագաւորութենէն ամէն գայթ-
թակղութիւնները՝ և անոնք որ անօրէնու-
թիւն կը գործեն , Ու կրակի փուռին մէջ 42
պիտի ձգեն զանոնք . հոն պիտի ըլլայ լալ
և ակռաները կրճտցնելը ։ Են ատենը՝ ար- 43
դարները արևի պէս պիտի ծագին իրենց
Թագաւորութեան մէջ . ան որ ականջ ու-
նենայ՝ մտիկ թող ընէ ։

Դարձեալ՝ երկնից թագաւորութիւնը 44
արտի մը մէջ պահուած գանձի նման է ,
որ անիկայ մէկ մարդ մը գտնելով՝ կը ծած-
կէ . և ուրախութենէն կ՚երթայ բոլոր ու-
նեցածը կը ծախէ , ու ան արտը կը գնէ ։

Դարձեալ՝ երկնից թագաւորութիւնը 45
վաճառականի մարդու մը նման է . որ գե-
ղեցիկ մարգարիտներ կը փնտռէ ։ Ու մէկ 46
պատուական մարգարիտ մը գտնելով՝ գնաց
իր բոլոր ունեցածը ծախեց , ու ան մար-
գարիտը գնեց ։

Դարձեալ՝ երկնից թագաւորութիւնը 47
ծովը ձգուած ուռկանի մը նման է , որ ա-
մէն տեսակէն կը ժողվէ . Որ երբոր լեցուի՝ 48
ցամաքը հանեցին , ու նստան աղէկները

Digitized by Google

ամաններուն մէջ ժողվեցին, և անշահը
49 դուրս ձգեցին։ Անանկ պիտի ըլլայ՝ աշ-
խարհիս վերջը. հրեշտակները պիտի ելլեն՝
ու արդարներուն մէջէն չարերը պիտի զա-
50 տեն, Եւ պիտի ձգեն զանոնք կրակի փու-
ռին մէջ. հոն պիտի ըլլայ լալ՝ ու ակռա-
ները կրճտցընել։
51 Ըսաւ անոնց Յիսուս. Հասկցա՞ք աս
ամէն բաները. ըսին անոր. Այո՛ Տէր։
52 Եւ ան ըսաւ անոնց. Անոր համար ամէն
դպիր՝ որ երկնից թագաւորութեանն աշա-
կերտած է, նման է տանուտէր մարդու մը՝
որ իր գանձէն կը հանէ նոր ու հին բաները։
53 Եւ երբոր կատարեց Յիսուս աս առակ-
54 ները՝ անկէց մեկնեցաւ։ Ու եկաւ իր գա-
ւառը, կը սորվեցնէր անոնց՝ իրենց ժողո-
վարանին մէջը. այնչափ որ կը զարմանային
անոնք՝ և կ'ըսէին. Ասիկայ ուսկի՞ց ունի
55 աս իմաստութիւնը և զօրութիւնները։ Ա-
սիկայ հիւսնին որդին չէ՞. անոր մայրը Մա-
րիամ չկոչուի՞ր, ու անոր եղբայրները՝ Յա-
կոբոս, և Յովսէս, ու Սիմոն, և Յուդա։
56 Ու անոր քոյրերը ամէնը մեր քովը չե՞ն.
ալ ինքը ուսկի՞ց աս ամէն բաները ունի։
57 Ու կը գայթակղէին անոր վրայ. և Յիսուս
ըսաւ անոնց. Մարգարէ մը անարգ չէ՝
բայց եթէ իր գաւառին ու իր տանը մէջ։
58 Եւ հոն շատ զօրութիւններ չըրաւ՝ անոնց
անհաւատութեանը համար։

## ԳԼ. ԺԴ.

Այն ժամանակը Հերովդէս չորրորդապետը 1
Յիսուսին համբաւը լսեց ։ Եւ իր ծառա- 2
ներուն ըսաւ • Ասիկայ Յովհաննէս Մկրտ-
իչն է • ինքը մեռելներէն յարութիւն ա-
ռաւ , և անոր համար հրաշքներ կ'ըլլան
անով ։

Քանզի որ Հերովդէս Յովհաննէսը բռնե- 3
լով , զանիկայ կապեց ու բանտը դրաւ՝
իր եղբօրը Փիլիպպոսին կնկանը Հերովդիա-
յին համար ։ Վասն զի Յովհաննէս իրեն 4
կ'ըսէր • Քեզի չվայլեր անիկայ առնել ։
Եւ կ'ուզէր անոր համար զանիկայ սպան- 5
նել , բայց ժողովուրդէն կը վախնար • ին-
չու որ՝ իբրև մարգարէ կ'ընդունէին զանի-
կայ ։ Եւ երբոր Հերովդեսին ծնունդքին օ- 6
րը եղաւ , Հերովդիային աղջիկը խաղաց
սեղան նստողներուն առջին , ու Հերով-
դեսին հաճելի եղաւ ։ Ուստի երդումով 7
խօսք տուաւ՝ որ տայ իրեն ինչ որ ուզելու
ըլլայ ։ Եւ ան առաջուց իր մօրմէն խը- 8
րատուած ըլլալով՝ ըսաւ • Տո՛ւր ինծի
հոս Յովհաննէս մկրտիչին գլուխը սկուտեղի
մը վրայ ։ Եւ թագաւորը տրտմեցաւ • 9
բայց երդումին համար՝ և հետը սեղան
նստողներուն համար հրաման ըրաւ որ տան
իրեն ։ Եւ մարդ ղրկեց՝ Յովհաննէսը բան- 10
տին մէջը գլխատեց ։ Եւ անոր գլուխը 11
սկուտեղով բերուեցաւ ու տրուեցաւ աղջը-
կին , ան ալ տարաւ իր մօրը ։ Եւ անոր 12

Digitized by Google

աշակերտները գացին՝ ու մարմինը՝ վերցը-
նելով թաղեցին. ու եկան Յիսուսին պատ-
մեցին։
13 Ու երբոր լսեց Յիսուս, անկից նաւով
անապատ տեղ մը գնաց առանձին. եր-
բոր լսեցին ժողովուրդները՝ քալելով անոր
ետեւէն գացին իրենց քաղաքներէն։
14 Ու երբոր դուրս ելաւ՝ շատ ժողովուրդ
տեսաւ, խղճաց անոնց վրայ, ու անոնց
հիւանդները բժշկեց։
15 Ու իրիկուան դէմ՝ աշակերտները իրեն
եկան, ու ըսին. Այս անապատ տեղ մըն է,
և օրուան ժամանակը անցաւ. արձըկէ՝
ժողովուրդները, որ երթան բոլորտիքի գե-
16 ղերը իրենց կերակուր առնեն։ Ու Յի-
սուս ըսաւ. Պէտք չէ՝ անոնց երթալ.
17 դո՛ւք տուէք անոնց ուտելիք։ Անոնք ալ
ըսին անոր. Հոս բան մը չունինք մենք,
միայն թէ հինգ նկանակ՝ և երկու ձուկ։
18 Ու ըսաւ անոնց. Բերէք հոս զանոնք։
19 Ու հրաման ըրաւ որ ժողովուրդը խոտին
վրայ նստեցնեն. ու հինգ նկանակը և եր-
կու ձուկը առաւ՝ դէպ 'ի երկինք նայեցաւ,
օրհնեց ու կոտրեց՝ և նկանակները աշա-
կերտներուն տուաւ, և աշակերտները ժո-
20 ղովուրդին։ Ամէնքը կերան և կշտացան,
ու տասներկու սակառ լեցուն՝ մնացած
21 կտորուանքները վերցուցին։ Ու անոնք
որ կերան՝ հինգ հազարի չափ մարդիկ էին
կիներէն և տղոցմէն 'ի զատ։
22 Ու աշակերտները շուտ մը ստիպեց

նաւ մը մտնել՝ և իրմէն առաջ միւս կող-
մը անցնիլ, մինչև որ ինքը ժողովուրդ-
ները արձակէ։ Եւ ժողովուրդները ար- 23
ձակելէն ետքը՝ ինքը մինակ լեռը ելաւ ա-
ղօթք ընելու. և երբոր իրիկուն եղաւ՝
հոն էր մինակ։ Ու նաւը՝ շատ ստադի- 24
ոնով ցամաքէն բացուած՝ ալեկոծութեան
մէջ էր, ինչու որ հովը դէմ էր։ Ու գի- 25
շերուան չորրորդ պահուն Յիսուս գնաց 'ի
իրենց եկաւ՝ ծովին վրայէն քալելով։ Եւ 26
աշակերտները երբոր անիկայ տեսան՝ որ ծովին
վրայ կը քալէր, խռովեցան, և ըսին թէ
աչքի երեւոյթ բան մըն է. ու վախերնուն
կանչըռտեցին. Իսկ շուտ մը Յիսուս խօ- 27
սեցաւ անոնց՝ ու ըսաւ. Սիրտ եղէք. ես
եմ, մի վախնաք։ Պետրոս պատասխան 28
տուաւ անոր՝ ու ըսաւ. Տէ՛ր, թէ որ դուն
ես, հրամմէ ինծի՝ որ քեզի գամ այս
ջուրերուն վրայէն։ Ան ալ ըսաւ. Եկ- 29
կո՛ւր. Պետրոս ալ նաւէն իջաւ, ջուրե-
րուն վրայէն քալեց, և եկաւ Յիսուսին։
Ու հովը սաստիկ տեսնելով՝ վախցաւ, և 30
երբոր սկսաւ ընկղմիլ, կանչըռտեց ու
ըսաւ. Տէ՛ր, ազատէ զիս։ Իսկ Յիսուս 31
շուտ մը իր ձեռքը երկնցուց, բռնեց զա-
նիկայ՝ ու ըսաւ. Թերահաւատ, ինչո՞ւ երկ-
բայեցար։ Եւ երբոր նաւը ելան՝ հովը 32
դադրեցաւ։ Ու անոնք որ նաւին մէջն 33
էին, եկան իրեն երկրպագութիւն ըրին՝ և
ըսին. Իրաւցնէ Աստուծոյ Որդին ես դուն։
Ու անցան՝ ցամաքը եկան Գեննեսարեթ։ 34

35 Եւ երբոր ան տեղի մարդիկը ճանչցան զա-
նիկայ, շուրջ խրկեցին բոլոր գաւառը,
36 ու բոլոր հիւանդները իրեն բերին։ Եւ
կ'աղաչէին իրեն, որ գոնէ միայն իր հան-
դերձին ծայրին դպչին. և անոնք որ դպան՝
բժշկուեցան։

## ԳԼ. ԺԵ.

1 Այն ատենը Հրէաստանէն եկան փարիսեցինե-
րը և դպիրները որ Երուսաղէմէն էին. ու
2 ըսին. Ինչո՞ւ քու աշակերտներդ ծերերուն
աւանդութիւնը զանց կ'ընեն. ինչու որ
ձեռքերնին չեն լուար, երբոր հաց կ'ուտեն։
3 Ան ալ պատասխան տուաւ՝ ու ըսաւ ա-
նոնց. Հապա դուք ինչո՞ւ Աստուծոյ պատ-
ուիրանքը զանց կ'ընէք՝ ձեր աւանդու-
4 թեան պատճառովը։ Ինչու որ Աստուած
5 ըսաւ. Քու հայրդ և մայրդ պատուէ՛. Եւ ա-
ան որ հայրը կամ մայրը կը բամբասէ, անէ-
6 ծալցա պիտի մեռնի։ Իսկ դուք կ'ըսէք.
Ով որ իր հօրը կամ իր մօրը ըսէ, Թէ Այն
բանը՝ որ ինծմէ պիտի շահիս, Աստուծոյ
պատրաստ ընծայ է. ու թէ որ իր հայրը և
մայրը չպատուէ՝ ազատ է. և դուք ձեր
աւանդութեանը համար՝ Աստուծոյ խօսքը
7 բանի տեղ չէք դներ։ Կեղծաւորներ՝ ա-
ղէկ մարգարէութիւն ըրաւ ձեր վրայ Եսա-
8 յային՝ ու ըսաւ. Այս ժողովուրդը միայն
շրթունքներովը զիս կը պատուէ. և իրենց
սիրտերը հեռացած զատուած են ինծմէ։
9 Պարապ տեղը զիս կը պաշտեն. Մարդկ


Digitized by Google

պատուիրած բաները իբրև վարդապետու-
թիւն կը սորվեցընեն ։
Ու ժողովուրդները իրեն կանչելով՝ ը- 10
սաւ անոնց . Լսեցէք և միտքերնիդ առէք .
Չէ՛ թէ ինչ որ բերանը կը մտնէ՝ կը պղծէ 11
մարդը , հապա ինչ որ բերնէն կ՚ելլէ՝ անի-
կայ կը պղծէ մարդը ։
Ան ատենը իր աշակերտները եկան՝ ըսին 12
իրեն . Գիտե՞ս որ Փարիսեցիները գայ-
թակղեցան , երբոր լսեցին այս խօսքը ։
Ան ալ պատասխան տուաւ անոնց՝ և ըսաւ . 13
Ամեն տունկ՝ որ իմ երկնաւոր Հայրս չէ
տնկեր , պիտի հանուի ։ Թո՛ղ տուէք ա- 14
նոնք . միբենէ կոյր են՝ կոյրերու առաջնորդ .
կոյրը երբոր կոյրին կ՚առաջնորդէ՝ կը սխա-
լի , ու երկուքն ալ փոսը կ՚իյնան ։ Պա- 15
տասխան տուաւ անոր Պետրոս՝ և ըսաւ .
Մեկնէ՛ մեզի այս առակը ։ Ըսաւ Յիսուս . 16
Դո՞ւք ալ տակաւին անմիտ էք . Դեռ չէ՞ք 17
հասկընար , թէ ամէն բան՝ որ բերանը
կը մտնէ , փորը կ՚երթայ՝ ու դուրս կ՚ելլէ ։
Բայց ան որ բերնէն կ՚ելլէ՝ սիրտէն առաջ 18
կու գայ , և ան կը պղծէ մարդը ։ Ինչու որ 19
սիրտէն կ՚ելլեն չար խորհուրդները , սպա-
նութիւնները , շնութիւնները , պոռնկու-
թիւնները , գողութիւնները , սուտ վկա-
յութիւնները , հայհոյութիւնները ։ Ահա 20
ասոնք են՝ որ կը պղծեն մարդը . բայց
անլուայ ձեռքով ուտելը՝ չպղծեր մարդը ։
Ու Յիսուս անկէց ելաւ՝ Տիւրոսի և 21
Սիդոնի կողմերը գնաց ։ Եւ ահա՝ Քանա- 22

Digitized by Google

Քանանացի կին մը անոնց սահմաններէն ելած՝
կ՚աղաղակէր ու կ՚ըսէր . Ողորմէ՛ ինծի Տէր՝
որդի՛ Դաւիթի , աղջիկս գէշ սատանայէ կը
23 չարչարուի : Իսկ ինքը պատասխան չտուաւ
անոր . ու իր աշակերտները եկան , կ՚աղա-
չէին իրեն՝ և կ՚ըսէին , Արձակէ՛ զանի-
կայ . ինչու որ մեր ետևէն կ՚աղաղակէ :
24 Ինքը պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Ես
ուրիշին չղրկուեցայ՝ բայց Իսրայէլի տա-
25 նը կորսուած ոչխարներուն : Իսկ ան եկաւ
երկրպագութիւն կ՚ընէր իրեն՝ ու կ՚ըսէր .
26 Տէ՛ր՝ օգնէ ինծի : Պատասխան տուաւ՝ ըսե-
լով՝ և ըսաւ . Աղէկ բան չէ՝ տղոց հացը
27 առնել , և շուներուն ձգել : Ան ալ ըսաւ
ըսաւ . Այո՛ Տէր . ինչու որ շուներն ալ
իրենց տիրոջը սեղանէն ինկած փշրանքներէն
28 կեր կը կերակրուին : Այն ատեն Յիսուս
պատասխան տուաւ անոր՝ և ըսաւ . Ո՛վ
կին՝ քու հաւատքդ մեծ է . թող ըլլայ
քեզի՝ ինչպէս որ կ՚ուզես : Ու նոյն ժա-
մէն անոր աղջիկը բժշկուեցաւ :
29 Ու Յիսուս անկից գնաց՝ Գալիլեայի
ծովեզերքը եկաւ , և լեռ մը ելաւ՝ հոն
30 նստաւ : Շատ ժողովուրդներ իրեն եկան ,
որ իրենց հետ ունէին կաղեր , կոյրեր ,
համրեր , հաշմանդամներ , և ուրիշ շատեր .
ու ձգեցին անոնք անոր ոտքը , և բժշկեց
31 անոնք : Այնպէս որ ժողովուրդները զար-
մացան , որ կը տեսնէին թէ՝ համրերը կը
խօսէին , կաղերը կը քալէին , հաշմանդամ-
ները առողջ կ՚ըլլային , կոյրերը կը տեսնէին :

Digitized by Google

ու Իսրայէլի Աստուածը կը փառաւորէին ։
Իսկ Յիսուս աշակերտները կանչեց իրեն՝ 32
ու ըսաւ . Կը խղճամ աս ժողովուրդին վը-
րայ . ինչու որ իրեք օր է հիմա որ քովս
են , և բան մը չունին ուտելու . ու անոնք
անօթի արձակել չեմ ուզեր , չըլլայ որ
ճամբան մարին ։ Աշակերտները իրեն ըսին . 33
Մենք աս անապատին մէջը ուսկի՞ց պիտի
ունենանք այնչափ հաց , որ այնչափ ժո-
ղովուրդը կշտացընենք ։ Իսկ Յիսուս ը- 34
սաւ անոնց . Քանի՞ նկանակ ունիք . ա-
նոնք ալ ըսին . Եօթը , և քանի մը ձուկ ։
Ու հրաման ըրաւ ժողովուրդին գետնին վը- 35
րայ նստիլ ։ Իսկ եօթը նկանակը ու ձու- 36
կերը առաւ , գոհութիւն տուաւ՝ և կոտրը-
տեց , ու տուաւ աշակերտներուն , անոնք
ալ՝ ժողովուրդին ։ Ամէնքն ալ կերան՝ և 37
կշտացան . ու եօթը զամբիւղ լեցուն մնա-
ցած կտորուանքներէն վերցուցին ։ Իսկ ու- 38
տողները կերան չորս հազարի չափ մարդիկ
էին , կնիկներէն և տղաքներէն 'ի զատ ։
Ետքը ժողովուրդը արձակեց՝ նաւը ե- 39
լաւ , ու Մագդաղայի կողմերը եկաւ ։

ԳԼ. ԺԶ.

Իսկ փարիսեցիները ու Սադուկեցիները 1
քովը եկան՝ փորձելով իրմէն կ'ուզէին որ
երկինքէն նշան մը ցուցընէ իրենց ։ Ինք- 2
նայ պատասխան տուաւ՝ և ըսաւ անոնց .
Երբոր իրիկուն կ'ըլլայ՝ կ'ըսէք . Պարզ-
պիտի ըլլայ , ինչու որ երկինքը կարմրած

Digitized by Google

3 է ։ Ու առտուանց՝ Այսօր մրրիկ պիտի ըլ-
լայ , ինչու որ երկինքը մթնցած կարմիր
է · ուստի երկինքին երեսը կրնաք քննել ,
բայց այս ժամանակին նշանը չէ՞ք կրնար
4 զննել ։ Չար և շնացող ազգը նշան կ'ու-
զէ · ու ուրիշ նշան պիտի չտրուի անոր ,
բայց Յովնան մարգարէին նշանը ։ ու թո-
ղուց զանոնք՝ և գնաց ։
5 Աշակերտները ալ գացին միւս կողմը ,
6 և հաց առնելու մոռցան ։ Ըսաւ անոնց
Յիսուս · Նայեցէք և զգուշացէք Սադու-
կեցիներուն ու Փարիսեցիներուն խմորէն ։
7 Անոնք մէջերնին կը մտմտային՝ ու կ'ըսէին ,
8 Թէ Հաց չառինք հետերնիս ։ Իմացաւ
Յիսուս՝ և ըսաւ · Մտքերնուդ մէջ ին-
չո՞ւ կը խորհիք թերահաւատներ , թէ հաց
9 չունինք ։ Տակաւին չէ՞ք հասկընար , և
չէ՞ք յիշեր հինգ նկանակը՝ հինգ հազարին ,
10 ու քանի՞ սակառ վերցուցիք · Ո՞չ ալ
եօթը նկանակը՝ չորս հազարին , ու քանի՞
11 զամբիւղ վերցուցիք ։ Ուրեմն ինչպէ՞ս
չէք հասկընար՝ թէ ես հացի համար չըսի
ձեզի՝ Սադուկեցիներուն և Փարիսեցինե-
12 րուն խմորէն զգոյշ կենալ ։ Ան ատենը հաս-
կցան՝ որ խմորէն զգուշանալ չըսաւ , հա-
պա Փարիսեցիներուն ու Սադուկեցիներուն
աղանդէն ։
13 Ու Յիսուս եկաւ Փիլիպպոսի Կեսարիա-
յին կողմերը · աշակերտներուն հարցուց՝ ու-
կ'ըսէր · Ինծի համար ո՞վ կ'ըսեն մարդիկ ,
14 թէ Որդին մարդոյ է ։ Ու անոնք ըսին ,

Digitized by Google

Անոնք ըսին. Ոմանք՝ Յովհաննէս մկրտիչը. ու-
րիշները Եղիան. ուրիշներ ալ՝ Երեմիան,
կամ մարգարէներէն մէկը։ Ըսաւ անոնց. 15
Դուք ալ ինծի համար ո՞վ եմ կ'ըսէք։
Սիմոն Պետրոս պատասխան տուաւ ըսե- 16
լով. Դուն ես Քրիստոսը՝ կենդանի Աս-
տուծոյ Որդին։ Յիսուս պատասխան 17
տուաւ ու ըսաւ անոր. Երանի՜ քեզի Սի-
մոն Յովնանեան որդի, ինչու որ մարմինը
և արիւնը քեզի չյայտնեց, հապա իմ
Հայրս՝ որ երկինքն է։ Ես ալ քեզի կ'ը- 18
սեմ, որ Պետրոս վէմ ես, ու այս վէմին վը-
րայ պիտի շինեմ իմ եկեղեցիս. և դժոխ-
քին դռները անոր պիտի չյաղթեն։ Ու 19
երկնից թագաւորութեան բանալիները պի-
տի տամ քեզի. և ինչ բան որ երկրի վը-
րայ կապես, երկինքին մէջ կապուած ըլ-
լայ. ու ինչ բան որ երկրի վրայ արձա-
կես, երկինքին մէջ արձակուած ըլլայ։
Այն ատենը աշակերտներուն պատուի- 20
րեց, որ մէկուն չըսեն՝ թէ ինքը Քրիս-
տոսն է։

Անկէ ետեւ սկսաւ Յիսուս աշակերտներու- 21
նը ցուցնել՝ թէ պէտք է որ ինքը Եր-
րուսաղէմ երթայ, և շատ չարչարանքներ
քաշէ՝ ու ծերերէն քահանայապետներէն,
և դպիրներէն, և ժողովուրդին ծերերէն
ու սպաննուի, և երրորդ օրը յարութիւն
առնէ։ Պետրոս ալ մէկդի առաւ զանիկա 22
կայ՝ սկսաւ հանդիմանել անոր՝ ու ըսել.
Հեռու ըլլայ քեզմէն Տէ՛ր. ասի բանը քեզի

23 քի չըլլայ : Եւ ինքը Պետրոսին դառ-
նալով՝ ըսաւ . Ետեւս գնա Սատանայ , ինծի
գայթակղութիւն ես դուն . ինչու որ Աստու-
ծոյ բաները չես մտածեր , հապա
մարդկային բաները :
24 Ան ատենը Յիսուս իր աշակերտներուն
ըսաւ . Ով է որ մէկը իմ ետեւէս գալ կ՚ու-
զէ՝ թող ինքզինքը ուրանայ , և իր խա-
25 չը առնէ՝ ու իմ ետեւէս գայ : Ինչու որ՝
ով որ կ՚ուզէ իր անձը ապրեցընել , անիկա
կորսընցընէ զան . և ո՛վ որ ինծի համար իր
26 անձը կը կորսընցընէ , անիկա գտնէ զան : Ի՞նչ
կը շահի մարդ մը՝ թէ որ բոլոր աշխարհքը
վաստըկի , և իր անձը վնասէ . կամ իր ան-
ձին համար ի՞նչ ազատչէք պիտի տայ
27 մարդ : Ինչու որ Որդին մարդոյ իր Հօ-
րը փառքովը պիտի գայ իր հրեշտակնե-
րուն հետ . և ան ատենը ամէն մէկուն իր
գործքերուն փոխարէն հատուցում պիտի
28 ընէ : Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , որ ասոնց
ներկայ եղողներէն մէկ քանին կան՝ որ մա-
հուան համը պիտի չառնեն , մինչև որ ա-
նոնք տեսնեն Որդին մարդոյ իր թագաւո-
րութիւնովը եկած :

## ԳԼ. ԺԷ.

1 Եւ վեց օրէն ետքը Յիսուս իր հետը ա-
ռաւ Պետրոսը , ու Յակոբոսը և անոր եղ-
բայրը Յովհաննէսը , ու անոնք մէկ բարձր
2 լեռ մը հանեց առանձին . Եւ այլակերպե-
ցաւ անոնց առջեւ , և իր երեսը փայլեցաւ

Digitized by Google

արեգակի պէս ․ ու իր լաթերը ճերմկցան
լուսոյ պէս ։ Եւ ահա՛ Մովսէսը ու Եղիան 3
երեւցան անոնց ․ ու իր հետը կը խօսէին ։
Պատասխան տուաւ Պետրոս՝ ու ըսաւ Յի- 4
սուսին ․ Տէ՛ր՝ աղէկ է մեզի հոս կենալ ․
թէ որ կ՚ուզես՝ իրեք խրճիթ շինենք , մէ-
կը քեզի՝ և մէկը Մովսէսին՝ ու մէկը Ե-
ղիային ։ Եւ երբոր ինքը կը խօսէր՝ ահա՛ 5
լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի ե-
ղաւ ․ ամպէն ձայն մը եկաւ՝ ու ըսաւ ․
Ասիկայ է իմ սիրելի Որդիս՝ որուն հաւներ
եմ , ասո՛ր մտիկ ըրէք ։ Աշակերտները 6
երբոր լսեցին՝ իրենց երեսնուն վրայ ինկան ,
և խիստ վախցան ։ Ու Յիսուս գնաց դպաւ 7
անոնց՝ և ըսաւ ․ Ելէ՛ք և մի՛ վախնաք ։
Աչքերնին վերցուցին՝ ու մէկը չտեսան , 8
միայն թէ Յիսուսը ։

Եւ երբոր ան լեռնէն վար կ՚իջնէին՝ Յի- 9
սուս պատուիրեց անոնց՝ ու ըսաւ ․ Այս
տեսիլքը մարդու մի՛ զրուցէք , մինչև Որ-
դին մարդոյ մեռելներէն յարութիւն առ-
նէ ։ Աշակերտները իրեն հարցուցին՝ և 10
ըսին ․ Ինչո՞ւ համար դպիրները կ՚ըսեն թէ՝
Պէտք է որ առաջ Եղիան գայ ։ Պատաս- 11
խան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոնց ․ Ե-
ղիան պիտի գայ՝ և ամէն բանը պիտի
հաստատէ ։ Բայց ձեզի կ՚ըսեմ որ Եղիան 12
արդէն եկած է ․ և անիկայ չճանչցան ,
հապա ինչ որ ուզեցին ըրին անոր ․ անանկ
ալ Որդին մարդոյ անոնցմէ պիտի չարչա-
րուի ։ Էն ատենը հասկըցան աշակերտնե- 13

Digitized by Google

ըն , որ Յովհաննէս Մկրտիչին համար ըսաւ
անոնց :
14 Իսկ երբոր ժողովուրդին քովը եկան՝
մարդ մը եկաւ , ու ծունկ չոքելով՝ կ'ըսէր .
Տէ՛ր՝ իմ տղուս ողորմէ՛ , որ կը լուսնոտի ,
և չարաչար կը հիւանդանայ . շատ հեղ կրա-
15 կի մէջ կ'իյնայ՝ ու երբեմն ջուրի մէջ : Իսկ
անիկայ քու աշակերտներուդ բերի , ու
չկրցան բժշկել : Յիսուս պատասխան
16 տուաւ՝ ու ըսաւ . Ո՛վ անհաւատ և մո-
լորեալ ազգ՝ մինչև ե՞րբ հետերնիդ պիտի
ըլլամ , մինչև ե՞րբ ձեզի պիտի համբերեմ .
17 բերէ՛ք զանիկայ : Ու Յիսուս սաստեց
անիկայ՝ և դևը անկէց ելաւ . ու բժշկուե-
18 ցաւ տղան նոյն ժամէն : Ան ատենը աշա-
կերտները առանձին քովը գացին՝ ու ըսին
Յիսուսին . Մենք ինչո՞ւ չկրցանք անիկայ
19 հանել : Իսկ ինքը ըսաւ անոնց . Ձեր թե-
րահաւատութեանը համար . ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի . թէ որ մանանեխի հատի չափ
հաւատք ունենաք՝ այս լեռանս պիտի ըսէք՝
Անկէ անդին փոխուէ՛ , և պիտի փոխուի ,
ու բան մը անկարելի պիտի չըլլայ ձեզի :
20 Այսպիսի ազգը ուրիշ բանով չելլեր ,
բայց եթէ աղօթքով ու ծոմով :
21 Իսկ երբոր Գալիլեայի մէջ կը պտըտէին
անոնք՝ ըսաւ անոնց Յիսուս . Որդին մար-
22 դոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը . Իսկ
անիկայ պիտի մեռցընեն , և երրորդ օրէն
յարութիւն պիտի առնէ . ու խիստ տրտմե-
ցան :


Digitized by Google

Երբոր անոնք Կափառնայում եկան , 23
երկդրամեան փոխ-ը առնողները Պետրո-
սին եկան՝ ու ըսին . Ձեր վարդապետը
երկդրամեանը չտա՞ր . և ինքը ըսաւ . Ա-
յո՛ կուտայ : Եւ երբոր տուն մտաւ , 24
Յիսուս անոր դէմը ելաւ՝ ու ըսաւ . Քեզի
ի՞նչպէս կ'երեւնայ Սիմոն . աշխարհուն թա-
գաւորները որմէ՞ն կ'առնեն տուրքը կամ
մաքսը . իրենց տղոցմէ՞ն , թէ օտարներէն :
Եւ երբոր ըսաւ՝ թէ Օտարներէն , ըսաւ 25
անոր Յիսուս . Ուրեմն որդիքը ազատ են :
Բայց չըլլայ որ անոնք գայթակղեցընենք , 26
գնա՛ ծովը՝ և կարթ ձգէ՛ , ու առջի ձուկը
որ կ'ելլէ՝ առ , և անոր բերանը բաց , ու
կը գտնես սատեր մը , և անիկայ առ՝ ա-
նոնց տո՛ւր , ինծի և քեզի համար :

## ԳԼ. ԺԸ.

Այն օրը աշակերտները Յիսուսին քովը 1
եկան՝ և ըսին . Մեզմէ ո՞վ մեծ է երկնից
թագաւորութեան մէջը : Եւ Յիսուս տը- 2
ղայ մը կանչեց իրեն , անիկայ անոնց մէջը
կայնեցուց , Ու ըսաւ . Ճշմարիտ կ'ըսեմ 3
ձեզի , Թէ որ դարձի չգաք՝ և տղոց պէս
չըլլաք , երկնից թագաւորութեան մէջը
պիտի չմտնէք : Ասոր ո՛վ որ իր անձը աս 4
տղին պէս կը խոնարհեցընէ , անիկայ է
մեծ երկնից թագաւորութեան մէջը : Եւ 5
ո՛վ որ ասանկ տղայ մը կ'ընդունի իմ ա-
նունովս , զիս կ'ընդունի : Եւ ո՛վ որ կը 6
գայթակղեցընէ աս պզտիկներուն մէկը՝ որ

Digitized by Google

ինծի կը հաւատան, աղէկ է անոր՝ որ իր
վիզէն իշու աղացքի քար մը կախուի ու
ծովին տակը ընկղմի ։
7 Վա՛յ աշխարհի գայթակղութիւններուն
համար. գայթակղութիւնները հարկ է որ
գան, բայց վա՛յ այն մարդուն՝ որուն ձեռ-
8 քովը գայթակղութիւն կու գայ ։ Թէ որ
քու ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակ-
ղեցրնէ, կտրէ՛ զան՝ և քեզմէ ձգէ՛. աղէկ
է քեզի մէկ ձեռքով՝ կամ կաղ՝ կեանքը
մտնել, քան թէ երկու ձեռք և երկու
ոտք ունենալ՝ ու յաւիտենական կրակին
9 մէջը իյնալ ։ Ու թէ որ աչքդ քեզ կը
գայթակղեցընէ, հանէ՛ զան՝ և քեզմէ ձգէ՛.
աղէկ է քեզի մէկ աչքով կեանքը մտնել,
քան թէ երկու աչք ունենալ, ու կրակին
գեհեանը իյնալ ։
10 Զգո՛յշ կեցիք՝ որ չանարգէք աս պզտ-
տիկներէն մէկը. ձեզի կ'ըսեմ, որ Եր-
կինքին մէջ անոնց հրեշտակները միշտ կը
տեսնեն իմ Հօրս երեսը՝ որ երկինքն է ։
11 Ինչու որ Որդին մարդոյ եկաւ՝ կորսուած-
12 ները ապրեցընելու ։ Ինչպէս կ'երեւնայ ձե-
զի. թէ որ մարդ մը հարիւր ոչխար ունե-
նայ, և անոնց մէկը մոլորի, իննսունըինը
ոչխարը լեռները չձգե՞ր, ու երթար մոլո-
13 րածը փնտռելու ։ Ու թէ որ գտնելու ըլ-
լայ զանիկայ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ
աւելի ուրախ կ'ըլլայ անոր վրայ, քան թէ
14 իննսունըիննին՝ որ մոլորած չեն ։ Նմանկ
ալ իմ երկնաւոր Հայրս չկամենար՝ որ աս
պզտիկներէն մէկը կորսուի ։

Digitized by Google

Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մե- 15
ղանչէ, գնա՛ յանդիմանէ անիկայ՝ երբոր
դուն և ան մինակ էք. թէ որ քեզի մտիկ
ընէ՝ վաստըկեցար քու եղբայրդ։ Հա- 16
պա թէ որ մտիկ չընէ քեզի, քու հետդ
մէկ ուրիշ մը կամ երկուք ալ առ, ինչու
որ երկու կամ երեք վկաներու բերնէն ա-
մէն խօսք կը հաստատուի։ Եւ թէ որ ա- 17
նոնց ալ մտիկ չընէ, եկեղեցիին ըսէ. բայց
թէ որ եկեղեցիին ալ մտիկ չընէ, հեթա-
նոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի։
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. Երկրի վրայ 18
ինչ որ կապէք՝ երկինքի մէջ կապուած
ըլլայ. և երկրի վրայ ինչ որ արձըկէք՝
երկինքի մէջ արձըկուած ըլլայ։ Դար- 19
ձեալ կ'ըսեմ ձեզի. Թէ որ ձեզմէ երկու
հոգի միաբանին երկրի վրայ՝ ամէն ինչ
բանի համար, ինչ որ խնդրեն՝ պիտի ըլ-
լայ անոնց իմ Հօրմէս՝ որ երկինքն է։
Վասնզի ուր որ երկու կամ երեք հոգի 20
ժողվուած ըլլան իմ անունովս, հոն եմ
ես անոնց մէջը։

Ան ատենը Պետրոս եկաւ իրեն՝ և ըսաւ. 21
Տէ՛ր, քանի՞ անգամ թէ որ եղբայրս ինծի
մեղանչէ՝ ներեմ անոր, մինչև եօ՞թը ան-
գամ։ Յիսուս անոր ըսաւ. Քեզի չեմ 22
ըսեր՝ թէ մինչև եօթը անգամ, հապա
մինչև եօթանասուն անգամ եօթը։ Անոր 23
համար երկնից թագաւորութիւնը կը նմանի
թագաւորի մը, որ իր ծառաներէն հաշիւ
առնել ուզեց։ Եւ երբոր սկսեց առնել, 24

Digitized by Google

տասը հազար քանքարի պարտական մը բե-
25 րուեցաւ իրեն ։ Երբոր խօսողութիւն չու-
նէր վճարելու , իր տէրը հրաման ըրաւ
ծախել զանիկայ՝ և անոր կինը՝ և որդիքը՝
և բոլոր անոր ունեցածը , ու վճարել ։
26 Ու ծառան անոր առջևը իյնալով՝ երկըր-
պագութիւն կ'ընէր ու կ'ըսէր . Համբերէ՛
27 ինծի՝ և ամէնը կը վճարեմ քեզի ։ Ան ծա-
ռային տէրը վրան խղճալով՝ արձըկեց զա-
28 նիկայ , ու պարտքը թողուց իրեն ։ Ու
նոյն ծառան ելաւ , իր ընկեր ծառաներէն
մէկը գտաւ՝ որ իրեն հարիւր դահեկան
պարտք ունէր . ու բռնեց զանիկայ՝ կը
խղդէր և կ'ըսէր . Վճարէ՛ ինծի ունեցած
29 պարտքդ ։ Ասոր ընկեր ծառան իր ոտքը
ինկաւ , կ'աղաչէր անոր՝ և կ'ըսէր . Համ-
30 բերէ՛ ինծի , ու քեզի կը վճարեմ ։ Ու
ինքը չէր ուզեր . հապա գնաց՝ բանտը
դրաւ զանիկայ , մինչև որ պարտքը վճա-
31 րէ ։ Երբոր իր ընկեր ծառաները տեսան
եղած բանը , խիստ տրտմեցան , և եկան
հասկըցուցին իրենց տիրոջը՝ բոլոր եղածը ։
32 Ան ատենը իր տէրը կանչեց զանիկայ՝ ու ը-
սաւ . Չա՛ր ծառայ՝ բոլոր այն պարտքը ես
քեզի թողուցի , ինծի աղաչելուդ համար ։
33 Ուրեմն պէտք չէ՞ր քեզի ալ քու ընկեր
ծառայիդ ողորմիլ՝ , ինչպէս որ ես քեզի
34 ողորմեցայ ։ Ու անոր տէրը բարկանա-
լով՝ դահիճներուն մատնեց զանիկայ ,
35 մինչև որ բոլոր պարտքը վճարէ ։ Ասանկ
ալ իմ երկնաւոր Հայրս պիտի ընէ ձեզի ,

Digitized by Google

թէ որ ձեր սրտերէն չէք թողուր (ամէն մէկը՝ իր եղբօրը) իրենց յանցանքները :

## ԳԼ. ԺԹ.

Ու եղաւ երբ որ աս խօսքերը լմնցուց 1
Յիսուս , Գալիլեայէն ելաւ՝ ու եկաւ
Հրէաստանին կողմերը Յորդանանու մէկալ
դին : Ու անոր ետեւէն շատ ժողովուրդ- 2
ներ գացին , և հոն բժշկեց զանոնք :
Ու փարիսեցիները իրեն եկան , անիկայ 3
կը փորձէին՝ և կ'ըսէին , թէ՝ Արժա՞ն է որ
մէկը իր կնիկը արձըկէ՝ ամէն պակսութիւ-
նի համար : Պատասխան տուաւ անոնց՝ 4
ու ըսաւ . Չէ՞ք կարդացեր , թէ ան որ
սկիզբէն ստեղծեց , արու և էգ ըրաւ ա-
նոնք՝ ու ըսաւ . Ասոր համար մարդ իր հայ- 5
րը և մայրը պիտի ձգէ , և իր կնկանը
ետեւէն երթայ , ու երկուքը մէկ մարմին
պիտի ըլլան : Ուստի ալ երկուք չեն , 6
հապա մէկ մարմին . ուրեմն ան որ Աս-
տուած միաւորեց՝ մարդ թող չզատէ : Ը- 7
սին իրեն . Հապա Մովսէս մեզի ինչո՞ւ
պատուիրեց զատուելու թուղթ տալ և ար-
ձըկել : Ըսաւ անոնց . Մովսէս ձեր սրտե- 8
րուն կարծրութեանը համար ձեզի հրաման
տուաւ կնիկներնիդ արձըկելու . բայց ըս-
կիզբէն անանկ չէղաւ : Սակայն ձեզի կ'ը- 9
սեմ . Ո՛վ որ առանց պոռնկութեան
պատճառի իր կնիկը կը ձգէ՝ և ուրիշ մը
կ'առնէ , շնութիւն կ'ընէ . և ո՛վ որ ար-
ձըկուածը առնէ՝ շնութիւն կ'ընէ : Իր ա- 10

Digitized by Google

աշակերտները ըսին իրեն. Թէ որ էրկան ու
կնկան մէջ ասանկ մնաս կայ՝ չկարգուիլը
11 աղէկ է: Նա ալ ինքը անոնց ըսաւ. Ամէնը
բաւական չեն աս բանին. հապա անոնք՝
12 որոնց տրուած է: Ինչու որ՝ կան ներքի-
նիներ, որ իրենց մօրը փորէն անանկ ծնան.
և կան ներքինիներ, որ մարդոցմէ ներքի-
նի եղան. և կան ներքինիներ՝ որ ինքզինք-
նին ներքինի ըրին երկնից թագաւորու-
թեանը համար. ո՛վ որ կրնայ տանիլ,
թո՛ղ տանի:
13 Ան ատենը մանր տղաք բերուեցան իրեն,
որ անոնց վրայ ձեռք դնէ՝ և աղօթք ընէ,
ու իր աշակերտները կը յանդիմանէին զա-
14 նոնք: Յիսուս ըսաւ. Թո՛ղ տուէք տղո-
ցը, և մի՛ արգիլէք անոնք ինծի գալու.
ինչու որ երկնից թագաւորութիւնը ասանկ-
15 ներունն է: Նա ալ անոնց վրայ ձեռք դնելէն
ետև՝ գնաց անկից:
16 Նա ահա՛ մէկը եկաւ իրեն՝ ըսաւ. Բարի՛
վարդապետ՝ ինչ բարի գործ գործեմ, որ
17 յաւիտենական կեանքը ընդունիմ: Ինքն
ալ անոր ըսաւ. Ինծի ինչո՞ւ բարիին հա-
մար կը հարցընես, բարին մէկ մըն է. Թէ
որ յաւիտենական կեանքը մտնել կ՚ուզես՝
18 պատուիրանքները պահէ՛: Ըսաւ անոր.
Որո՞նք. Յիսուս ըսաւ անոր. Մի՛ սպան-
ները, և մի՛ շնարը, և մի՛ գողնարը,
19 և մի՛ սուտ վկայերը. Քու հայրդ և մայրդ
պատուէ՛, ու քու ընկերդ քու անձիդ պէս
20 սիրէ՛: Պատանին ըսաւ անոր. Ատոնք ա-

Digitized by Google

մէնը տղայութենէս 'ի վեր պահեր եմ .
ուստի ի՞նչ բանով պակաս եմ : Ըսաւ 21
անոր Յիսուս . Եթէ որ կ'ուզես կատարեալ
ըլլալ , գնա՛ ունեցածդ ծախէ՛ , և տո՛ւր
աղքատներուն , ու դո՛ւն երկնից մէջ գանձ
պիտի ունենաս , և եկո՛ւր իմ ետևէս :
Երբոր պատանին աս խօսքը լսեց՝ տրտմած 22
գնաց . ինչու որ շատ ստացուածք ունէր :
Յիսուս ըսաւ աշակերտներուն . Ճ՛ըշ- 23
մարի՛տ կ'ըսեմ ձեզի , որ հարուստը դը-
ժուարութիւնով երկնից թագաւորութիւնը
պիտի մտնէ : Դարձեալ կ'ըսեմ ձեզի . 24
Դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի ,
քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորու-
թիւնը մտնէ : Աշակերտները երբոր լսե- 25
ցին , շատ զարմացան՝ և ըսին . Ուրեմն
ո՞վ կրնայ փրկուիլ : Յիսուս նայեցաւ 26
անոնց՝ ու ըսաւ . Ասիկայ մարդոցմէ ան-
կարելի է՝ բայց Աստուծմէ ամէն բան կա-
րելի է :

Ան ատենը Պետրոս պատասխան տուաւ՝ 27
ու ըսաւ իրեն . Ահա՛ մենք ամէն բան թո-
ղուցինք՝ և քու ետևէդ եկանք . ուստի
մեզի ի՞նչ պիտի ըլլայ : Ըսաւ անոնց Յի- 28
սուս . Ճշմարի՛տ կ'ըսեմ ձեզի , թէ դուք
որ իմ ետևէս եկաք՝ միւսանգամ գալըստ-
եան երբոր Որդին մարդոյ իր փառաց ա-
թոռը նստի , դուք ալ տասներկու աթո-
ռի վրայ պիտի նստիք՝ Իսրայէլի տասներ-
կու ցեղը դատելու : Ու ո՛վ որ թողուց 29
տուն կամ եղբայրներ , կամ քոյրեր , կամ

Digitized by Google

հայր, կամ մայր, կամ կին, կամ որ-
դիք, կամ ագարակ՝ իմ անունիս համար,
հարիւրապատիկ պիտի առնէ, և յաւի-
30 տենական կեանք պիտի ժառանգէ։ Շատ
առաջինները պիտի ըլլան յետին, և յե-
տիններ առաջին։

## ԳԼ. Ի.

1 Ինչու որ՝ երկնից թագաւորութիւնը
տանտէր մարդու մը նման է, որ առա-
ւօտանց կանուխ ելաւ՝ իր այգիին բանւոր-
2 ները բռնելու։ Եւ բանւորներուն հետ օ-
րը մէկ դահեկանի մը խօսք կապեց, և
3 անոնք խրկեց իր այգին։ Երբ ժամը երե-
քին մօտ ելաւ՝ ուրիշները տեսաւ, որ շու-
4 կաներուն մէջ պարապ կայներ էին։ Ը-
սաւ անոնց. Դուք ալ գացէք իմ այ-
գիս, և ի՛նչ որ արժան է՝ կու տամ ձեզի։
5 Անոնք ալ գացին. ու նորէն ժամը վեցին
և ժամը իննին ատեններն ելաւ՝ անանկ
6 ըրաւ։ Երբ ժամը տասնումէկին մօտ ելաւ,
ուրիշները գտաւ՝ որ պարապ կայներ էին.
ըսաւ անոնց ալ. Ինչո՞ւ հոս բոլոր օրը
7 պարապ կայներ էք։ Ըսին իրեն. Անոր
համար որ մէկը մեզ վարձքով չբռնեց.
ըսաւ անոնց. Գացէք դուք ալ այգին,
8 և ինչ որ արժան է՝ պիտի առնէք։ Երբ
իրիկուն որ եղաւ՝ այգիին տէրը իր տըն-
տեսին ըսաւ. Բանւորները կանչէ՛ և ի-
րենց վարձքը տո՛ւր, ետքիններէն սկսե-
9 լով մինչև առջինները։ Երբոր եկան՝ ա-

Անոնք որ ժամը տասնմէկերորդին գացեր էին ,
մէկ մէկ դահեկան առին . Եւ առջիններըն 10
եկան՝ կը կարծէին որ աւելի պիտի առնեն ,
ու անոնք ալ առին մէկ մէկ դահեկան ։
Երբոր առին , տանը տիրոջմէն գանգատ 11
կ'ընէին՝ ու կ'ըսէին , Թէ՝ աս ետքինները 12
մէկ ժամ մը գործեցին , և անոնք հաւա-
սար ըրիր մեզի , որ օրուան բեռը և տա-
քութիւնը քաշեցինք ։ Անիկայ պատաս- 13
խան տուաւ անոնցմէ մէկուն՝ ու ըսաւ .
Ընկեր՝ ես քեզ չեմ զրկեր . չէ՞ որ դուն
իմ հետս մէկ դահեկանի մը խօսք կապե-
ցիր ։ Քու բաժինդ՝ առ գնա՛ , կ'ուզեմ 14
որ աս ետքիններուն քեզի տալուս պէս
տամ ։ Միթէ ես իշխանութիւն չունի՞մ 15
իմ բաներուս վրայ՝ ինչ որ ուզեմ ընելու .
կամ թէ քու աչքդ չա՞ր է՝ որ ես առա-
տաձեռն եմ ։ Այսպէս՝ յետինները առա- 16
ջին պիտի ըլլան , և առաջինները յետին .
ինչու որ կանչուածները շատ են ; բայց
ընտրուածները քիչ ։

Երբոր Յիսուս Երուսաղէմ կ'ելլէր՝ տաս- 17
ներկուքը հետը առաւ առանձին , ու ճամ-
բան ըսաւ անոնց . Ահա՛ Երուսաղէմ կ'ել- 18
լենք , և Որդին մարդոյ պիտի մատնուի
քահանայապետներուն և դպիրներուն , ու
պիտի դատապարտեն զանիկայ մեռնելու ։
Եւ հեթանոսներուն պիտի մատնեն անի- 19
կայ՝ խայտառակելու և ծեծելու , և խաչը
հանելու . ու երրորդ օրը յարութիւն պի-
տի առնէ ։

Digitized by Google

20 Այն ատենը Զեբեդեոսին որդւոցը մայրը
իր տղաքը հետը բերելով անոր՝ երկրպագու-
թիւն կ'ընէր՝ ու բան մը կը խնդրէր ան-
21 կէց։ Ան ալ ըսաւ անոր. Ի՞նչ կ'ուզես։
Ըսաւ անոր. Ըսէ՛ որ աս իմ երկու որ-
դիքս մէկը ձախ կողմդ, եւ մէկալը աջ
կողմդ նստին քու թագաւորութեանդ մէջ։
22 Պատասխանեց անոնց Յիսուս ու ըսաւ.
Չէք գիտեր ինչ կը խնդրէք. կրնա՞ք խըմ-
մել այն բաժակը՝ որ ես պիտի խմեմ,
կամ այն մկրտութիւնը մկրտուիլ՝ որ ես
պիտի մկրտուիմ. ըսին իրեն. Կրնանք։
23 Ըսաւ անոնց Յիսուս. Իմ բաժակս պը-
տի խմէք՝ և այն մկրտութիւնը՝ որ ես
մկրտուելու եմ, պիտի մկրտուիք. բայց
իմ աջ կողմս և ձախ կողմս նստեցընելը
իմս չէ՝ տալը, հապա որոնց որ պատրաստած
24 է իմ Հօրմէս։ Երբ մնացած տասը ա-
շակերտները լսեցին՝ ան երկու եղբայրնե-
25 րուն վրայ բարկացան։ Յիսուս անոնք
իրեն կանչեց ու ըսաւ. Գիտէք որ ազ-
գերուն իշխանները կը տիրեն անոնց, և մե-
26 ծամեծները կ'իշխեն անոնց։ Բայց ատանկ
պիտի չըլլայ ձեր մէջը, հապա ձեզմէ ո՛վ
որ մեծ ըլլալ կ'ուզէ՝ ձեր սպասաւորը թող
27 ըլլայ։ Ու ձեզմէ ո՛վ որ կ'ուզէ առաջին
28 ըլլալ՝ ձեր ծառան թող ըլլայ։ Ինչպէս
Մարդու Որդին չեկաւ սպասաւորութիւն
ընդունելու, հապա սպասաւորութիւն ընե-
լու, և շատերուն համար իր կեանքը փըր-
կանք մը տալու։

Digitized by Google

Իսկ երբոր անոնք Երիքովէն ելան՝ շատ 29
ժողովուրդներ իր ետեւէն գացին ։ Եւ ա- 30
հա՛ ճամբուն վրայ երկու կոյր նստած էին ․
երբոր լսեցին թէ Յիսուս կ՚անցնի , ա-
ղաղակեցին ու ըսին ․ Ողորմէ՛ մեզի՝ Յի-
սուս Որդի Դաւթի ։ Իսկ բազմութիւնը 31
կը յանդիմանէր անոնք , որ լռեն ․ բայց
անոնք՝ աւելի աւելի կ՚աղաղակէին ու կ՚ըսէին ․
Ողորմէ՛ մեզի Տէր , Որդի Դաւթի ։ Յիսուս 32
կայնեցաւ , կանչեց անոնք՝ ու ըսաւ ․ Ի՞նչ
կ՚ուզէք որ ձեզի ընեմ ։ Ըսին անոր ․ Տէ՛ր , 33
որ աչքերնիս բացուին ։ Իսկ Յիսուս խղճա- 34
լով անոնց վրայ , աչքերնուն դպաւ ․ ու
շուտ մը տեսան , և անոր ետեւէն գացին ։

## ԳԼ. ԻԱ

Երբոր Երուսաղեմին մօտեցան , և ե- 1
կան Բեթփագէ Ձիթենեաց լերանը մօտ , ան
ատենը Յիսուս իր աշակերտներէն երկու-
քը խրկեց ։ Եւ ըսաւ անոնց ․ Գացէք 2
սա ձեր դիմացի գիւղը , և իսկոյն կը գտնէք
կապուած էշ մը՝ ու անոր հետ աւանակ մը ․
անոնք արձակեցէք՝ բերէք ինծի ։ Եւ թէ 3
որ մէկը ձեզի բան մը ըսէ , զրուցեցէք ,
թէ իրենց Տէրոջը պէտք են , ու շուտ մը
անոնք պիտի խրկէ ։ Բայց աս ամէն բա- 4
ները եղաւ , որ մարգարէին խօսքը կատա-
րուի՝ որ կ՚ըսէ ․ Ըսէ՛ք Սիոնի աղջկանը ․ 5
Ահա՛ քու թագաւորդ քեզի կու գայ , հեզ՝
և իշու վրայ հեծած՝ ու իշու աւանակի
վրայ ։ Աշակերտները գացին , և ինչպէս 6

Digitized by Google

որ Յիսուս իրենց հրաման ըրաւ՝ ըրին։
7 Ու բերին էշը և աւանակը, և անոնց վրայ
իրենց լաթերը ձգեցին, ու նստաւ անոնց
8 վրայ։ Եւ շատ ժողովուրդ իրենց լաթե-
րը ճամբուն վրայ փռեցին, և ուրիշները
ծառերէն ճիւղեր կը կտրէին՝ ու ճամբուն
9 վրայ կը փռէին։ Եւ ժողովուրդները որ
առջևէն ու ետևէն կ'երթային, կ'աղաղա-
կէին ու կ'ըսէին. Օրհնութիւն որդւոյ
Դաւթի, օրհնեալ է ան՝ որ Տէրոջը ա-
նունովը կու գայ, օրհնութիւն 'ի բարձունս։
10 Եւ երբոր ինքը Երուսաղէմ մտաւ՝ բո-
լոր քաղաքը շարժեցաւ, ու ըսաւ. Ո՞վ
11 է աս։ Եւ ժողովուրդները ըսին. Սա-
կայ Յիսուս մարգարէն է, Գալիլեայի
Նազարեթէն։
12 Եւ Յիսուս տաճարը մտաւ, ու դուրս
հանեց ամէն անոնք՝ որ տաճարին մէջը կը
ծախէին և կը գնէին, ու սատկի փոխողնե-
րուն սեղանները՝ և աղաւնի ծախողներուն
13 աթոռները կործանեց։ Ու ըսաւ անոնց.
Գրուած է՝ Իմ տունս աղօթքի տուն պի-
տի ըսուի, և դուք աւազակներու այր ը-
14 րիք ան։ Ու տաճարին մէջը կոյրեր և
կաղեր իրեն եկան, ու բժշկեց զանոնք։
15 Երբոր քահանայապետները և դպիրները
ըրած հրաշքները տեսան, և մանուկ տղաքը
որ տաճարին մէջը կը կանչէին ու կ'ըսէին,
Օրհնութիւն որդւոյ Դաւթի, բարկացան.
16 Ու ըսին իրեն. Կը լսե՞ս ինչ կ'ըսեն ա-
սոնք. ըսաւ անոնց Յիսուս. Այո՛. մի՞թէ

Digitized by Google

կարգադրեր, թէ Պիղծին ազգը ու հաւատքը
կերպներովը ըրբանքն [illegible] թշնամութեան կատարելեցին։
Իսկ [illegible] անմեղ՝ քաղաքէն դուրս 17
[illegible] մնաց, ու գիշերը հոն կեցաւ։
Իսկ առաւօտուն [illegible] քաղաքը 18
դարձաւ՝ անօթեցաւ։ Ու ճամբուն վրայ 19
թզենի մը տեսնելով՝ քովը գնաց, և տե-
րեւէն 'ի զատ բան մը չգտաւ վրան. ու ը-
սաւ անոր. Ասկէ ետեւ յաւիտեան քեզմէ
պտուղ չըլլայ, և նոյն ժամուն թզենին
չորցաւ. Աշակերտները աշակերտներէն 20
զարմացան ու ըսին, թէ Ինչպէս թզենին
շուտ մը չորցաւ։ Յիսուս պատասխանեց 21
անոնց՝ և ըսաւ անոնց. Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի. թէ որ հաւատք ունենաք՝ ու չերկմ-
տիք, չէ՛ թէ միայն սա թզենիին եղածը
կ'ընէք. հապա թէ և սա լերանը ըսէք՝ Ել-
ի՛ր ու ծովը ինկիր, պիտի ըլլայ։ Եւ ա- 22
մէն բան որ աղօթքի մէջ հաւատքով կը
խնդրէք՝ պիտի առնէք։
Ու երբոր տաճարը եկաւ՝ քահանայա- 23
պետները և ժողովուրդին ծերերը քովը ե-
կան երբոր կը սորվեցնէր, ու ըսին.
Դուն ի՞նչ իշխանութիւնով այս բաները
կ'ընես, և ո՞վ տուաւ քեզի այս իշխանու-
թիւնը։ Պատասխանեց ասոնց Յիսուս, ու 24
ըսաւ անոնց. Ես ալ ձեզի մէկ բան մը
հարցնեմ, թէ որ անիկայ ինծի ըսէք, ես
ալ ձեզի կ'ըսեմ թէ ի՛նչ իշխանութիւնով այս
բաները կ'ընեմ։ Յովհաննէսին մկրտու- 25
թիւնը ուսկի՞ց էր, երկինքէ՞ն թէ մար-

Digitized by Google

դոցմէ. և անոնք իրենց մէջը կը մտածէին
26 ու կ'ըսէին. Թէ որ ըսենք Երկինքէն ,
մեզի կ'ըսէ թէ՝ Հապա ինչո՞ւ չհաւատա-
ցիք անոր. և թէ որ ըսենք Մարդոցմէն,
ժողովուրդէն կը վախնանք , ինչու որ բո-
լորն ալ Յովհաննէսը մարգարէի պէս կ'ըն-
27 դունէին : Պատասխան տուին Յիսուսին
ու ըսին. Չենք գիտեր. և ինքը անոնց
ըսաւ. Ես ալ չեմ ըսեր ձեզի , թէ ինչ
իշխանութիւնով այս բաները կ'ընեմ :
28 Բայց ի՞նչ կ'երեւնայ ձեզի. Մէկ մարդ
մը երկու տղայ ունէր , ու գնաց անդրանիկին
ըսաւ. Որդեակ , գնա՛ այսօր այգիիս մէջ բան-
29 նէ՛ : Անիկայ պատասխան տուաւ ու ը-
30 սաւ. Կ'երթամ տէ՛ր , և չգնաց : Երկ-
կրորդին ալ գնաց և անանկ ըսաւ. Անիկայ
պատասխան տուաւ ու ըսաւ. Չեմ ու-
զեր , ետքը ; զղջացաւ և
31 գնաց այգին : Հիմա աս երկուքէն ո՞րը
ըր հօրը կամքը կատարեց. ըսին՝ Անդրանիկը.
ըսաւ անոնց Յիսուս. Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի , որ Մաքսաւորները և պոռնիկները
ձեզմէ առաջ պիտի երթան երկնից թա-
32 գաւորութիւնը : Ինչու որ՝ Յովհաննէս
արդարութեան ճամբայով եկաւ , ու դուք
անոր չհաւատացիք . բայց մաքսաւորները
և պոռնիկները անոր հաւատացին , ու
դուք տեսաք՝ և չզղջացիք անոր հաւատա-
լու :
33 Ուրիշ առակ մըն ալ լսեցէ՛ք . Մէկ
տանուտէր մարդ մը կար՝ որ այգի մը տնկեց

կեց․ ու ցանկով պատեց զանիկայ․ և ա-
նոր մէջը հնձան փորեց, ու աշտարակ շի-
նեց, ու բանւորներուն տուաւ ան, և
հեռու աշխարհ գնաց։ Երբոր պտուղի 34
ժամանակը մօտեցաւ՝ իր ծառաները բան-
ւորներուն խրկեց, որ անոր պտուղները
առնեն։ Իսկ բանւորները անոր ծառանե- 35
րը բռնեցին, մէկը տանջեցին՝ մէկը մեռ-
ցուցին՝ մէկալը քարկոծեցին։ Նորէն ու- 36
րիշ ծառաներ խրկեց՝ առջիններէն շատ,
և անոնց ալ անանկ ըրին։ Յետքը իր որ- 37
դին խրկեց անոնց՝ ու ըսաւ․ Գուցէ պի-
տի ամչնան աս իմ որդիէս։ Բայց բան- 38
ւորները երբոր տեսան որդին՝ իրարերնուն
մէջ ըսին․ Ասիկայ է ժառանգը, եկէք
ասիկայ մեռցընենք՝ և անոր ժառանգու-
թեանը տիրենք։ Ու առին անիկայ՝ այ- 39
գիէն դուրս հանեցին՝ և մեռցուցին։ Ուրե- 40
մն երբոր այգիին տէրը գայ՝ ի՞նչ կ՚ընէ
ան բանւորներուն։ Ըսին իրեն․ Այն չա- 41
րերը չարաչար կը կորսնցընէ, և այգին ու-
րիշ բանւորներու կու տայ, որ իրենց ժա-
մանակին պտուղը տան իրեն։ Ըսաւ ա- 42
նոնց Յիսուս․ Բնաւ չէ՞ք կարդացեր գրո-
քին մէջ, Այն քարը՝ որ շինողները անար-
գեցին, անիկայ անկիւնին գլուխ եղաւ․
ասիկայ Տէրոջմէն եղաւ՝ և մեր աչքին
առջևը զարմանալի է։ Ասոր համար կ՚ը- 43
սեմ ձեզի, որ Աստուծոյ թագաւորու-
թիւնը ձեզմէ պիտի առնուի, ու ազգի մը
պիտի տրուի՝ որ անոր պտուղները բերէ։

Digitized by Google

44 Եւ ո՛վ որ աս քարին վրայ իյնայ՝ պիտի
կոտրտի, և որուն վրայ որ իյնայ՝ պիտի փշո-
րէ զանիկայ ։
45 Երբոր քահանայապետները՝ ու դպիր-
ները և փարիսեցիները իր առակները լսե-
ցին, իմացան որ իրենց համար ըսաւ ։
46 Եւ կ'ուզէին բռնել զանիկայ, բայց ժողո-
վուրդէն վախցան. ինչու որ մարգարէի
պէս կ'ընդունէին զանիկայ ։

## ԳԼ. ԻԲ.

1 Դարձեալ պատասխան տուաւ Յիսուս՝
2 և առակներով ըսաւ անոնց. Երկնից թա-
գաւորութիւնը թագաւոր մարդու մը կը
նմանի, որ իր տղին համար հարսնիք ը-
3 րաւ ։ Եւ իր ծառաները խրկեց՝ որ կան-
չեն հարսնիքի հրաւիրուածները, և անոնք
4 չուզեցին գալ ։ Նորէն ուրիշ ծառաներ
խրկեց՝ ու ըսաւ. Ըսէ՛ք հրաւիրուածնե-
րուն. Ահա՛ իմ ճաշս պատրաստեցի,
զուարակներս ու գէր կենդանիներս մոր-
թուած են, և ամէն բան պատրաստ է.
5 եկէ՛ք հարսնիքս ։ Աւ անոնք անհոգու-
թեամբ գացին՝ մէկը իր արտը, և մէկալը
6 իր առուտուրին ։ Եւ ուրիշները անոր ծա-
ռաները բռնեցին՝ նախատեցին ու մեռցու-
7 ցին ։ Թագաւորն ալ երբոր լսեց՝ բար-
կացաւ, և իր զօրքը խրկեց՝ ու ան սպան-
նողները սատկըցուց, ու անոնց քաղաքը
8 այրեց ։ Ան ատենը իր ծառաներուն ըսաւ.
Հարսնիքս պատրաստ է՝ և հրաւիրուած-
9 ները արժանի չէին ։ Աւստի գացէ՛ք պո-

Google

ղոտաները , և ո՛վ որ գտնելու ըլլաք՝ կան-
չեցէք իմ հարսնիքս ։ Եւ ծառաները ե- 10
լան ճամբաներուն վրայ , ո՛վ որ գտան
չարն ու բարին՝ ամէնն ալ ժողվեցին , ու
հարսնիքը հարսնեւորով լեցուեցաւ ։ Ու 11
Թագաւորը երբոր մտաւ հարսնեւորները
տեսնելու՝ հոն մէկ մարդ մը տեսաւ , որ
հարսնիքի հանդերձ չէր հագած . Եւ ը- 12
սաւ իրեն . Ընկեր՝ ինչո՞ւ համար հոս մտար ,
թէ որ հարսնիքի հանդերձ չունէիր . և ա-
նիկայ պապանձեցաւ ։ Ան ատենը Թա- 13
գաւորը սպասաւորներուն ըսաւ . Կապե-
ցէք ատոր ոտքերը և ձեռքերը՝ ու հանե-
ցէք անիկայ դուրսի խաւարը . հոն պիտի
ըլլայ լալ՝ ու ակռաները կճռցընել ։ Ին- 14
չու որ կանչուածները շատ են , ու ընտ-
րուածները քիչ ։

Ան ատենը Փարիսեցիները գացին իր վրայ 15
խորհուրդ ըրին , թէ ինտո՛ր որոգայթ մը
դնեն անոր՝ խօսքով ։ Եւ իրենց աշակերտ- 16
ները Հերովդէսեաններուն հետ մէկտեղ
խրկեցին անոր՝ ու ըսին . Վարդապետ՝ գի-
տենք որ ճշմարիտ ես , և ճշմարտութեամբ
Աստուծոյ ճամբան կը սորվեցընես , ու մէկը
հոգդ չէ , և մարդու երեսպաշտութիւն չես
ըներ ։ Ուստի մեզի ըսէ՝ քեզի ինչպէս 17
կ՚երևնայ , կայսրին տուրք տալ պէ՞տք է՝
թէ չէ՝ ։ Յիսուս գիտցաւ անոնց խորա- 18
մանկութիւնը՝ ու ըսաւ . Ինչո՞ւ կը փորձէք
զիս կեղծաւորներ . Ցուցուցէք ինծի տուր- 19
քին դահեկանը . և անոնք դահեկան մը տուին

Digitized by Google

20 իրեն։ Եւ ըսաւ անոնց. Ո՞ւ է աս պատ-
21 կերը կամ գիրը։ Ըսին՝ Կայսրինը. ան-
ատենը ըսաւ իրենց. Պացէք ան որ կայսե-
րին է՝ կայսրին տուէք, և ան որ Աս-
22 տուածոյն է՝ Աստուծոյ տուէք։ Երբոր լսե-
ցին՝ զարմացան, ու թողուցին անիկայ և
գացին։

23 Նոյն օրը Սադուկեցիները եկան անոր,
որ կ'ըսէին՝ թէ Յարութիւն չկայ. Հար-
24 ցուցին անոր՝ Եւ ըսին. Վարդապետ՝
Մովսէս ըսաւ. Թէ որ մէկը առանց զաւկի
մեռնելու ըլլայ՝ անոր եղբայրը թող առնէ
անոր կնիկը, և իր եղբօրը զաւակ հանէ։
25 Արդ՝ եօթը եղբայր կային մեր մէջը. առ-
ջինը կնիկ առաւ՝ և մեռաւ, ու զաւակ
չունենալուն համար՝ իր կնիկը ձգեց իր
26 եղբօրը։ Անանկ ալ երկրորդը՝ և երրոր-
27 դը՝ մինչև եօթներորդը։ Ամենէն ետև
28 կնիկն ալ մեռաւ։ Ուրեմն յարութեան
ատենը՝ ան եօթնէն որո՞ւն կին պիտի ըլ-
լայ անիկայ. ինչու որ ամենն ալ անիկայ
29 կնիկ առին իրենց։ Յիսուս անոնց պա-
տասխան տուաւ՝ ու ըսաւ. Մոլորեալներ՝
ոչ գիրքերը գիտէք՝ և ոչ Աստուծոյ զօ-
30 րութիւնը։ Ինչու որ յարութեան ատենը
ոչ կնիկ կ'առնեն և ոչ էրիկ կ'առնեն. հա-
պա՝ երկինքի մէջ հրեշտակներու պէս են։
31 Բայց մեռելներուն յարութիւն առնելուն
համար՝ չէ՞ք կարդացեր Աստուծմէ ձեզի ը-
32 սուած խօսքը. Ես եմ Աբրահամին Աս-
տուածը, Իսահակին Աստուածը, ու Յա-

Digitized by Google

կոբին Աստուածը . և Աստուած՝ մեռելնե-
րուն Աստուած չէ, հապա՝ կենդանիներուն :
Երբոր ժողովուրդները լսեցին՝ կըզարմա- 33
նային անոր վարդապետութեանը վրայ :
Բայց Փարիսեցիները երբոր լսեցին՝ թէ 34
պապանձեցուց Սադուկեցիները, մէկտեղ
ժողվուեցան : Եւ անոնցմէ մէկը հարցուց՝ 35
զանիկայ փորձելով, ու ըսաւ . Վարդա- 36
պետ՝ ո՞ր պատուիրանքը մեծ է օրէնքին
մէջը : Եւ Յիսուս ըսաւ անոր . Քու 37
Տէր Աստուածդ պիտի սիրես քու բոլոր
սրտէդ, և քու բոլոր անձէդ, և քու բո-
լոր միտքէդ : Աս է մեծը ու առաջին պա- 38
տուիրանքը : Երկրորդը ասոր նման՝ քու 39
ընկերդ պիտի սիրես քու անձիդ պէս : Աս 40
երկու պատուիրանքէս կախուած են բոլոր
օրէնքը և մարգարէները :
Ու երբոր Փարիսեցիները ժողվուեցան, 41
Յիսուս հարցուց անոնց՝ ու ըսաւ . Ձեզի 42
ի՞նչպէս կ'երևնայ Քրիստոսին համար, ա-
նիկայ որո՞ւ որդին է : Ըսին իրեն . Դաւի-
թին : Ըսաւ անոնց Յիսուս . Հապա ին- 43
չո՞ւ Դաւիթ Հոգիովը անիկայ Տէր կ'ա-
նուանէ՝ ու կ'ըսէ . Տէրը իմ Տէրոջս ըսաւ . 44
Իմ աջ կողմս նստէ՛, մինչև որ քու թշնա-
միներդ քու ոտքիդ պատուանդան ընեմ :
Ուրեմն թէ որ Դաւիթ անիկայ Տէր կըկո- 45
չէ՝ ի՞նչպէս անոր որդին կ'ըլլայ : Եւ մէ- 46
կը չէր կրնար անոր բան մը պատասխան
տալ . ու ան օրէն ետև մէկը չէր համար-
ձակեր իրեն բան մը հարցընելու :

Digitized by Google

## ԳԼ. ԻԳ

1 Այն ատենը Յիսուս խօսեցաւ ժողովուրդ-
ներուն և իր աշակերտներուն՝ ու ըսաւ.
2 Մովսէսին աթոռը դպիրները և Փարիսե-
3 ցիները նստած են։ Ինչ որ ձեզի կ՚ըսեն՝
ըրէք ու պահեցէք, բայց անոնց գործքե-
րուն պէս մի՛ ընէք. ինչու որ կ՚ըսեն՝ ու
4 չեն ըներ։ Ծանր և տանելու դժուար
բեռներ կը կապեն ու կը դնեն մարդոց շա-
լակը, և իրենց մատովը չեն ուզեր զանոնք
5 շարժել։ Ու իրենց ամէն գործքերը՝ մար-
դոց երևնալու համար կ՚ընեն. կը լայնցը-
նեն իրենց գրապանները, ու կ՚երկընցընեն
6 իրենց հանդերձներուն ծայրերը։ Ընթրիք-
ներու մէջ առաջին նստարանները կը սիրեն,
և ժողովարաններուն մէջ՝ առաջին աթոռ-
ները, ու շուկաներուն մէջը բարևները,
7 Ու մարդոցմէ Ռաբբի՛ Ռաբբի՛ կանչուիլ։
8 Բայց դուք մէկը Վարդապետ մի՛ կանչէք.
ինչու որ ձեր ուսուցիչը մէկ մըն է, և դուք
9 ամէնքդ եղբայր էք։ Ու երկրի վրայ մէ-
կը ձեզի հայր մի՛ կանչէք. ինչու որ ձեր
10 հայրը մէկ մըն է, որ երկինքն է։ Ու
դուք Ուսուցիչներ մի՛ կանչուիք. ինչու
11 որ ձեր ուսուցիչը Քրիստոսն է։ Ու ձեր
մէջէն մեծը ձեր սպասաւորը պիտի ըլլայ։
12 Ով որ ինքզինքը կը բարձրացընէ՝ պիտի
ցածնայ. և ով որ ինքզինքը կը ցածցընէ՝
պիտի բարձրանայ։
13 Վա՜յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու Փա-

Digitized by Google

րիսեցիներ՝ որ երկնից թագաւորութիւնը
մարդոց դէմ կը գոցէք . դուք չէք մտներ ,
և անոնք որ մտնելու են՝ չէք թողուր մըտ-
նել ։ Վա՜յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու 14
Փարիսեցիներ՝ որ որբևայրիներուն տուները
կ'ուտէք , ու երևնալու համար աղօթքը
կ'երկընցընէք . անոր համար աւելի դատա-
պարտութիւն պիտի ունենաք ։ Վա՜յ ձե- 15
զի կեղծաւոր դպիրներ ու Փարիսեցիներ՝
որ ծով ու ցամաք կը պտըտիք մէկը նորա-
հաւատ ընելու . և երբոր ըլլայ՝ անիկայ
ձեզմէ երկու անգամ աւելի գեհենի որդի
կ'ընէք ։ Վա՜յ ձեզի կոյր առաջնորդներ՝ 16
որ կ'ըսէք . Ան որ տաճարին վրայ երդում
կ'ընէ , բան մը չէ . բայց ան որ տաճարին
մէջի ոսկիին վրայ երդում կ'ընէ՝ անիկայ
պարտական է ։ Ո՛վ յիմարներ ու կոյ- 17
րեր՝ ո՞րը մեծ է , ոսկի՞ն՝ եթէ տաճարը , որ
կը սրբացընէ ոսկին ։ Նաև ո՛վ որ սեղանին 18
վրայ երդում կ'ընէ՝ բան մը չէ , բայց ո՛վ
որ սեղանին վրայի պատարագին վրայ եր-
դում կ'ընէ՝ պարտական է ։ Յիմարներ 19
ու կոյրեր՝ ո՞րը մեծ է , պատարա՞գը եթէ
սեղանը , որ կը սրբացընէ պատարագը ։
Ուստի ո՛վ որ սեղանին վրայ երդում կ'ընէ , 20
երդում կ'ընէ անոր վրայ՝ և անոր վրայի
ամէն բաներուն վրայ . Նաև ո՛վ որ տա- 21
ճարին վրայ երդում կ'ընէ , երդում կ'ընէ
անոր վրայ՝ և անոր մէջի բնակողին վրայ .
Նաև ո՛վ որ երկինքին վրայ երդում կ'ընէ , 22
երդում կ'ընէ Աստուծոյ աթոռին վրայ՝ և

Digitized by Google

23 անոր վրան նստողին վրայ ։ Վա՜յ ձեզի
կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ
անանուխին ու սամիթին և չամանին տա-
սանորդը կը վճարէք, ու կը ձգէք օրէնքին
ծանր ծանր բաները՝ դատաստանը և ողոր-
մութիւնը ու հաւատքը. ասոնք պէտք էր ը-
24 նել, և ան չձգել ։ Կո՛յր առաջնորդներ՝
որ մժեղները կը քամէք, և ուղտերը կը
25 կլլէք ։ Վա՜յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու
փարիսեցիներ՝ որ գաւաթին և պնակին
դուրսի կողմը կը սրբէք, և ներսէն յափշ-
տակութիւնով և անկարգութիւնով լե-
26 ցուն են ։ Կո՛յր փարիսեցի՝ առաջ գաւա-
թին և պնակին ներսի կողմը սրբէ, որ ա-
նոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ ։
27 Վա՜յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարի-
սեցիներ, որ կը նմանիք ծեփած գերեզման-
ներու, որ դուրսի կողմէն գեղեցիկ կ'ե-
րեւնան, և ներսի կողմէն մեռելներու ոսկոր-
ներով և ամէն կերպ պղծութիւնով լեցուն
28 են ։ Դուք ալ անանկ՝ դուրսի կողմէն
մարդոց արդար կ'երեւնաք, ու ներսի կող-
մէն կեղծաւորութիւնով և անօրէնութիւ-
29 նով լեցուն էք ։ Վա՜յ ձեզի կեղծաւոր դպիր-
ներ ու փարիսեցիներ՝ որ մարգարէներուն
տապանները կը շինէք, և արդարներուն
30 գերեզմանները կը զարդարէք ։ Ու կ'ըսէք.
Թէ որ մեր հայրերուն օրերը ըլլայինք՝
մարգարէներուն արիւնին մասնակից չէինք
31 ըլլար ։ Ասով դուք ձեր վրայ կը վկա-
յէք՝ թէ անոնց զաւակներն էք, որ մար-

Digitized by Google

գարէները կը սպաննէին ։ Ուստի դուք 32
ալ ձեր հայրերուն պակաս չափը լեցուցէք ։
Օձե՛ր՝ իժերու ծնունդներ, ի՞նչպէս պի- 33
տի փախչիք գեհենի դատապարտութենէն ։
Ատոր համար՝ ահա ես մարգարէներ և ի- 34
մաստուններ ու դպիրներ կը ղրկեմ ձեզի.
և անոնցմէ պիտի մեռցնէք, ու խաչը
պիտի հանէք, և անոնցմէ ձեր ժողովա-
րաններուն մէջը պիտի ծեծէք, ու քա-
ղաքէ քաղաք հալածէք ։ Որ երկրի վրայ 35
թափուած բոլոր արդար արիւնը ձեր վրայ
գայ. արդար Աբելին արիւնէն՝ մինչև Բա-
րաքիայի տղուն Զաքարիային արիւնը,
որ տաճարին ու սեղանին մէջտեղը սպան-
նեցիք ։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի. Ան ա- 36
մէնը պիտի գայ աս ազգիս վրայ ։

Ո՛վ Երուսաղէմ՝ Երուսաղէմ, որ մար- 37
գարէները կը սպաննէիր, ու քեզի խըր-
կուածները կը քարկոծէիր, քանի՜ անգամ
քու տղաքդ ժողվել ուզեցի՝ ինչպէս որ
հաւը իր ձագերը թեւերուն տակը կը ժողվէ,
և դուք չուզեցիք ։ Ահա ձեր տունը աւե- 38
րակ պիտի մնայ ։ Բայց ձեզի կ՚ըսեմ, 39
որ ասկէ ետև ալ պիտի չտեսնէք զիս,
մինչև որ ըսէք. Օրհնեալ է ան, որ Տէ-
րոջը անունովը կու գայ ։

## ԳԼ. ԻԴ.

Եւ Յիսուս տաճարէն դուրս ելլելով՝ 1
կ՚երթար, ու աշակերտները քովը գացին
տաճարին շէնքերը իրեն ցուցնելու ։ Ան 2

Digitized by Google

ալ պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց.
Կը տեսնէ՞ք աս ամէնը. Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, Պիտի չմնայ հոս քար քարի վրայ՝
որ չքակուի։
3 Ու երբոր Ձիթենեաց լեռը նստեր էր,
աշակերտները իրեն եկան առանձին՝ ու ըսին. Ըսէ մեզի՝ երբ պիտի ըլլայ ասո-
4 նք, կամ քու գալստեանդ՝ և աշխարհիս
վերջին նշանը ի՞նչ պիտի ըլլայ։ Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոնց.
Զգո՛յշ կեցէք՝ չըլլայ որ մէկը ձեզ խաբէ։
5 Ինչու որ շատերը պիտի գան իմ անունովս, և ըսեն՝ Թէ Ես Քրիստոսն եմ.
6 ու շատերը պիտի մոլորցընեն։ Պիտի լսէք պատերազմներ՝ և պատերազմներու
համբաւներ, զգո՛յշ կեցէք որ չխռովիք. ինչու որ ան ամէն բաները պէտք է որ ըլ-
7 լան, բայց դեռ վերջը չէ։ Ազգ ազգի
վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն
թագաւորութեան վրայ, և պիտի ըլլան
սովեր ու մահտարաժամներ, և տեղ տեղ
8 երկրաշարժութիւններ։ Բայց աս ամէնը
9 ցաւերուն սկիզբն է։ Ան ատենը ձեզ նեղութիւն քաշելու պիտի մատնեն, ու պի-
տի սպաննեն ձեզ, և իմ անունիս համար
10 ամէն ազգերէն ատելի պիտի ըլլաք։ Ու
ան ատենը շատերը պիտի գայթակղին, ու
մէկզմէկ պիտի մատնեն, և իրար պիտի
11 ատեն։ Ու շատ սուտ մարգարէներ պի-
տի ելլեն, ու շատերը պիտի մոլորցընեն։
12 Ու անօրէնութիւնը շատնալուն համար

Digitized by Google

շատերուն սէրը պիտի ցամքի: Բայց ան 13
որ մինչեւ վերջը համբերէ, անիկայ պիտի
ազատի: Եւ արքայութեան աս աւետա- 14
րանը բոլորանդակ աշխարհի մէջ պիտի քա-
րոզուի՝ բոլոր հեթանոսներուն վկայութիւն
ըլլալու, եւ անկէ ետեւ վերջը պիտի գայ:
Ուստի երբոր կը տեսնէք աւերմունքին 15
պղծութիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռ-
քովը ըսուած է, որ սուրբ տեղը պիտի
կենայ. (ով որ կը կարդայ՝ թո՛ղ հաս-
կընայ.): Ան ատենը Հրէաստանի մէջ եւ- 16
ղողները՝ լեռները թո՛ղ փախչին. Եւ ան 17
որ տանիքին վրայ կայներ է՝ թո՛ղ չիջնէ
իր տունէն բան մը առնելու. Եւ ան որ 18
արտին մէջն է՝ թո՛ղ ետ չդառնայ իր լա-
թերը առնելու: Բայց վա՜յ անոնց՝ որ 19
յղի ու ծիծ տուող են ան օրերը: Աղօ՛թք 20
ըրէք, որ ձեր փախչիլը ձմեռը չըլլայ,
ո՛չ ալ շաբաթ օրը: Ինչու որ ան ատենը 21
մեծ նեղութիւն պիտի ըլլայ, անանկ որ
աշխարհին առջինուցին սկիզբէն մինչեւ հի-
մա անանկ եղած չէ, ու ալ պիտի
չըլլայ: Եւ թէ որ ան օրերը չպակսէին, 22
մէկ մարմին մը չէր կրնար ազատիլ. բայց
ընտրեալներուն համար՝ ան օրերը պիտի
պակսին. Ան ատենը թէ որ մէկը ձեզի 23
ըսէ, Ահա՛ հոս է Քրիստոսը՝ կամ հոն,
մի՛ հաւատաք: Ինչու որ սուտ քրիս- 24
տոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ել-
լեն, ու մեծամեծ նշաններ եւ հրաշքներ
պիտի ցուցընեն. անանկ որ՝ եթէ կարելի ըլ-

Digitized by Google

լար , ընտրեալներն ալ պիտի մոլորցընէին ։
25 Ահա առաջուց ձեզի ըսի ։ (26) Ասոր համար թէ
որ ըսեն ձեզի՝ թէ Ահա անապատին մէջն
է , չելլէք . և թէ՝ Ահա ծածուկ սենեակ-
27 ներուն մէջն է , մի՛ հաւատաք ։ Ինչու որ՝
ինչպէս փայլակը որ արեւելքէն կ՚ելլէ՝ ու
մինչև արեւմուտքը կ՚երևնայ , անանկ պիտի
28 ըլլայ Որդւոյ մարդոյ գալը ։ Վասնզի ուր
որ մեռած մարմին կայ , հոն արծիւները
կը ժողվուին ։
29 Շուտ մը ան նեղութեան օրերէն ետև՝
արեգակը պիտի խաւարի , և լուսինը իր
լոյսը պիտի չտայ , ու երկինքէն աստղերը
պիտի իյնան , ու երկնից զօրութիւնները
30 պիտի շարժին ։ Ու ատեն Որդւոյ մար-
դոյ նշանը պիտի երևնայ երկինքը , և ան-
ատենը բոլոր ազգերը պիտի ողբան . ու
Որդին մարդոյ պիտի տեսնեն երկինքի ամ-
պերուն վրայ եկած՝ զօրութիւնով ու շատ
31 փառքով ։ Ու իր հրեշտակները պիտի
ղրկէ մեծ փողով , ու պիտի ժողվեն իր
ընտրեալները չորս հովերէն՝ երկինքին մէկ
ծայրէն մինչև մէկալ ծայրը ։
32 Թզենիէն աս առակը սորվեցէք . որ
երբ անոր ճիւղերը կը կակուղնան , ու տե-
րևը կը ցցուի՝ գիտէք թէ ամառը մօտ է ։
33 Անոր պէս՝ դուք ալ երբոր աս ամէն բա-
ները տեսնէք՝ գիտցէք որ մօտ է դռներուն
34 քովը ։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , որ աս
ազգը պիտի չանցնի , մինչև որ աս ամէն
35 բաները ըլլայ ։ Երկինքը ու երկիրը պիտի

անցնին , ու իմ խօսքերս պիտի չանցնին ։
Բայց այն օրուանը և այն ժամին համար՝ 36
մէկը չգիտեր , ո՛չ երկնից հրեշտակները և
ո՛չ Որդին , հապա միայն Հայրը ։ Բայց 37
ինչպէս որ Նոյի օրերը էղան , Որդւոյ
մարդոյ գալը անանկ պիտի ըլլայ ։ Ինչու 38
որ՝ ինչպէս էին այն օրերը ջրհեղեղէն առաջ ,
կ'ուտէին՝ կը խմէին՝ կնիկ կ'առնէին ու էրիկ
կ'առնէին , մինչև այն օրը՝ որ Նոյ տապա-
նը մտաւ , Ու չգիտցան՝ մինչև որ ջրհե- 39
ղեղը եկաւ , ու ամէնը կորսընցուց ։ Որդւոյ
մարդոյ գալն ալ անանկ պիտի ըլլայ ։ Ան 40
ատենը թէ որ երկու հոգի արտի մը մէջ
ըլլան , մէկը պիտի առնուի՝ ու մէկալը
ձգուի ։ Ու թէ որ երկու կնիկ մէկ աղաց- 41
քի քարի վրայ աղալու ըլլան , մէկը պիտի
առնուի՝ ու մէկալը ձգուի ։

Արթո՛ւն կեցէք . ինչու որ չէք գիտեր 42
ո՛ր ժամուն ձեր Տէրը կու գայ ։ Անիկայ 43
գիտցէք , եթէ տանուտէրը գիտնար՝ թէ
գիշերուան ո՛ր ժամուն գողը կու գայ , ար-
թուն կը կենար , և թող չէր տար որ իր
տունը ծակեն ։ Անոր համար դուք ալ 44
պատրաստ կեցէք . ինչու որ անանկ ժամու
մը՝ որ դուք չէք սպասեր , Որդին մարդոյ
կու գայ ։ Ուստի ո՞վ է այն հաւատարիմ 45
ու իմաստուն ծառան՝ որ իր տէրը զանիկայ
իր ծառաներուն վրայ դրաւ , որ ատենին
անոնց կերակուր տայ ։ Երանի՛ է այն ծա- 46
ռային , որն որ իր տէրը եկած ատենը ա-
նանկ ըրած պիտի գտնէ ։ Ճշմարիտ կ'ը- 47

Digitized by Google

սեմ ձեզի, որ իր բոլոր ունեցածին վրայ
48 պիտի կեցընէ զանիկայ ։ Հապա թէ որ
չար ծառան իր սրտին մէջը ըսէ. Իմ
49 տէրս իր գալը կ'ուշացընէ. Ու սկսի իր ըն-
կեր ծառաները ծեծել, գինովներուն հե-
50 տը ուտել ու խմել, Էն ծառային տէրը
պիտի գայ անանկ մէկ օր մը՝ որ չսպասեր,
51 և անանկ մէկ ժամ մը՝ որ չգիտեր. Ու
անիկայ մէջտեղէն պիտի կտրէ, ու անոր
բաժինը կեղծաւորներուն հետը պիտի դնէ.
հոն պիտի ըլլայ լալ՝ ու ակռաները կճրը-
ցընել ։

## ԳԼ. ԻԵ

1 Էն ատենը երկնից թագաւորութիւնը պի-
տի նմանի տասը կոյսերու, որոնք իրենց
լապտերները առնելով՝ փեսային ու հարսին
2 առջևը ելլելու գացին ։ Անոնցմէ հինգը
3 յիմար էին, և հինգը իմաստուն ։ Յի-
մարները առին լապտերները, ու հետերնին
4 եղ չառին ։ Բայց իմաստունները իրենց
լապտերներուն հետ ամաններով եղ ալ ա-
5 ռին ։ Ու փեսան որ ուշացաւ, ամէնն ալ
6 թմրեցան ու քնացան ։ Ու կէս գիշերին
ձայն մը եղաւ. Ահա՛ փեսան կու գայ՝ ա-
7 նոր առջևը ելէ՛ք ։ Էն ատենը ամէն կոյ-
սերը ելան, ու լապտերնին շիտկեցին ։
8 Յիմարները ըսին իմաստուններուն. Ձեր
եղէն մեզի՛ տուէ՛ք. ինչու որ մեր լապտեր-
9 ները մարելու վրայ են ։ Պատասխան տուին
իմաստունները՝ և ըսին. Գուցէ մեզի ու

Digitized by Google

ձեզի բաւական չըլլայ․ հապա գացէք ծա-
խողներուն՝ և գնեցէք ձեզի համար․ Երբ- 10
որ անոնք գացին գնելու՝ փեսան եկաւ,
ու պատրաստ եղողները անոր հետ հարսնի-
քը մտան, և դուռը գոցուեցաւ։ Ետքը 11
միւս կոյսերը եկան՝ ու քսին․ Տէ՛ր Տէր,
բա՛ց մեզի։ Ան ալ պատասխան տուաւ՝ 12
ու ըսաւ․ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի՝ թէ Ես
ձեզ չեմ ճանչնար։ Ուրեմն արթուն կե- 13
ցէք, ինչու որ ո՛չ օրը գիտէք, և ո՛չ ժա-
մը։

Ինչպէս հեռու երկիր գացող մարդ մը՝ 14
կանչեց իր ծառաները․ և իր ունեցածը ա-
նոնց տուաւ։ Մէկուն տուաւ հինգ քան- 15
քար, ու մէկուն՝ երկուք, և մէկուն մէկ,
ամէն մէկուն իր կարողութեանը չափ, ու
գնաց։ Ան որ հինգը առաւ՝ գնաց շուտ 16
մը անիկայ բանեցուց, և ուրիշ հինգ ալ
շահեցաւ։ Նմանապէս ա՛ն որ երկուքը ա- 17
ռաւ՝ ուրիշ երկուք ալ շահեցաւ։ Իսկ 18
ան որ մէկը առաւ՝ գնաց գետինը փորեց,
ու իր տիրոջը ստակը հոն պահեց։ Շատ 19
ժամանակէ ետև ան ծառաներուն տէրը ե-
կաւ, և անոնցմէ հաշիւ ուզեց։ Ու ան 20
որ հինգ քանքար առաւ, եկաւ ուրիշ
հինգ քանքար ալ բերաւ, ու ըսաւ․ Տէ՛ր,
հինգ քանքար տուիր ինծի, ահա՛ ուրիշ
հինգ քանքար ալ անոր վրայ շահեցայ։
Ըսաւ անոր իր տէրը․ Ապրի՛ս բարի ու 21
հաւատարիմ ծառայ, դուն որ քիչ բանին․
մէջ հաւատարիմ ես՝ քեզ շատ բաներու

Digitized by Google

վրայ պիտի դնեմ․ մտի՛ր քու տիրոջդ ու-
22 րախութեանը մէջ։ Երկու քանքար առ-
նողն ալ եկաւ․ ու ըսաւ․ Տէ՛ր, երկու
քանքար տուիր ինծի, ահա՛ ուրիշ երկու
23 քանքար ալ՝ որ անոր վրայ շահեցայ։ Ը-
սաւ անոր իր տէրը․ Աղէ՛կ բարի՛ ու
հաւատարիմ ծառայ, դուն որ քիչ բանին
մէջ հաւատարիմ ես, քեզ շատ բաներու
վրայ պիտի դնեմ․ մտի՛ր քու տիրոջդ ու-
24 րախութեանը մէջ։ Մէկ քանքար առ-
նողն ալ եկաւ ու ըսաւ․ Տէ՛ր, գիտէի որ
դուն խիստ մարդ մըն ես․ չսերմանածդ
կը հնձես, ու չցանած տեղէդ կը ժողվես․
25 Ու վախցայ, գացի քու քանքարդ գետնին
մէջ պահեցի, ահա՛ քուկդ քեզի։
26 Պատասխան տուաւ տէրը՝ ու ըսաւ անոր․
Չա՛ր և ծոյլ ծառայ՝ գիտէիր որ չսերմա-
նած տեղէս կը հնձեմ, ու չցանած տեղէս
27 կը ժողվեմ․ Պէտք էր քեզի որ իմ ստակս
սեղանաւորներու տայիր, և ես կու գայի
28 շահովը կ՝առնէի զիմս։ Արդ՝ առէ՛ք ա-
նկից քանքարը, ու տասը քանքար ունե-
29 ցողին տուէ՛ք։ Ինչու որ ամէն ունեցո-
ղին՝ պիտի տրուի, ու աւելնայ․ և չու-
նեցողին՝ ունեցածն ալ անկէց պիտի առ-
30 նուի։ Եւ աս անշահ ծառան՝ դուրսի
խաւարը հանեցէ՛ք․ հոն պիտի ըլլայ լալ
ու ակռաները կրճտելը։
31 Եւ երբոր Որդին մարդոյ իր փառքովը
գայ՝ ու բոլոր հրեշտակները իր հետը, ան
ատենը իր փառաց աթոռին վրայ պիտի

Digitized by Google

նստի ։ Ու անոր առջեւը պիտի ժողվուին 32
բոլոր ազգերը՝ ու անոնք մէկզմէկէ պիտի
զատէ, ինչպէս որ հովիւ մը ոչխարները
այծերէն կը զատէ ․ Ու ոչխարները իր աջ 33
կողմը պիտի կայնեցընէ, և այծերը՝ ձախ
կողմը ։

Ան ատենը Թագաւորը աջ դին եղող- 34
ներուն պիտի ըսէ ․ Եկէք իմ Հօրս օրհնած-
ները՝ աշխարհի սկիզբէն ձեզի համար պատ-
րաստուած Թագաւորութիւնը ժառանգե-
ցէք ։ Ինչու որ անօթեցայ՝ և ինծի ու- 35
տելիք տուիք ․ ծարաւեցայ՝ ու խմցու-
ցիք ինծի ․ օտարական էի՝ և զիս ներս ա-
ռիք ․ Մերկ էի, և զիս հագուեցուցիք ․ 36
հիւանդ էի՝ ու տես եկաք ինծի ․ բանտի մէջ
էի՝ և ինծի եկաք ։ Ան ատենը արդարները 37
անոր պատասխան պիտի տան՝ ու ըսեն ․
Տէ՛ր՝ ե՞րբ քեզ անօթի տեսանք՝ ու կե-
րակրեցինք ․ կամ ծարաւի, ու խմցու-
ցինք ։ Ե՞րբ քեզ օտարական տեսանք՝ և 38
ներս առինք, կամ մերկ՝ ու հագուեցու-
ցինք ։ Ե՞րբ քեզ հիւանդ՝ կամ բանտի 39
մէջ տեսանք, ու քեզի եկանք ։ Պա- 40
տասխան պիտի տայ Թագաւորը՝ ու ըսէ
անոնց ․ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի ․ Որով-
հետեւ աս եղբայրներուս պէնտ պզտիկնե-
րէն մէկուն ըրիք՝ ինծի ըրիք ։

Ան ատենը ձախ դին եղողներուն ալ պի- 41
տի ըսէ ։ Մէկդի՛ գացէք ինծմէ անիծեալ-
ներ՝ յաւիտենական կրակին մէջը, որ պատ-
րաստուած է Սատանային՝ և իր հրեշտակնե-

Digitized by Google

42 բուն : Ինչու որ անօթեցայ՝ և ինծի ուտե-
լիք չտուիք . ծարաւեցայ՝ ու ինծի չխմցու-
43 ցիք . Օտարական էի՝ և զիս ներս չառիք .
մերկ էի՝ և զիս չհագուեցուցիք . հիւանդ
ու բանտի մէջ էի՝ և զիս տեսնելու չեկաք :
44 Ան ատենը անոնք ալ պատասխան պիտի
տան՝ ու ըսեն . Տէր՝ ե՞րբ տեսանք քեզ
անօթի կամ ծարաւի՝ կամ օտարական՝
կամ մերկ՝ կամ հիւանդ՝ կամ բանտի մէջ,
45 ու քեզի սպասաւորութիւն չըրինք : Ան
ատենը պատասխան պիտի տայ անոնց՝ ու
46 ըսէ . Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . Որովհետև
ասոնց պինտ պզտիկներէն մէկուն չըրիք ,
ինծի ալ չըրիք :
47 Ու անոնք պիտի երթան յաւիտենական
տանջանքը , ու արդարները՝ յաւիտենա-
կան կեանքը :

## ԳԼ. ԻԶ.

1 Ու երբոր Յիսուս լմնցուց աս ամէն
2 խօսքերը , ըսաւ իր աշակերտներուն . Գի-
տէ՞ք որ երկու օրէն ետև զատիկ կ՚ըլլայ ,
ու Որդին մարդոյ կը մատնուի խաչը ելլե-
լու :
3 Ան ատենը քահանայապետները՝ ու դը-
պիրները՝ և ժողովուրդին ծերերը ժող-
վուեցան քահանայապետին սրահը , որուն
4 անունը Կայիափա էր . Ու խորհուրդ ըրին՝
որ հնարքով մը բռնեն Յիսուսը՝ ու մեռցը-
5 նեն : Բայց կ՚ըսէին , թէ Ո՛չ աս տօնիս

Digitized by Google

մէջ, որ ժողովուրդին մէջը խռովութիւն
չըլլայ։

Երբոր Յիսուս Բեթանիա եկաւ բորոտ 6
Սիմոնին տունը, կնիկ մը եկաւ իրեն՝ որ 7
ունէր ծանրագին եղի շիշ մը. և թափեց
անոր գլխուն վրայ՝ սեղանը նստողներուն
առջին. Աշակերտները երբոր տեսան, 8
բարկացան՝ ու ըսին. Ինչո՞ւ այս եղը
կորսուի. Քանզի կարելի էր ատիկայ 9
սուղ գնով ծախել, և աղքատներուն
տալ։ Յիսուս հասկցաւ՝ ու ըսաւ անոնց. 10
Ինչո՞ւ անհանգիստ կ'ընէք այս կինը. ա-
տիկայ բարի գործ մը գործեց ինծի։ Աղ- 11
քատները ամէն ատեն ձեր հետը ունիք,
բայց զիս ամէն ատեն ձեր հետը չունիք։
Աստոր այս եղը իմ մարմինիս վրայ թա- 12
փելը՝ իմ թաղուելս նշանակեց։ Բայց 13
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ Բոլոր աշխար-
հի մէջ՝ ուր որ այս աւետարանս քարո-
զուի, ասոր ըրածն ալ պիտի խօսուի՝
զինքը յիշելու համար։

Ան ատենը տասներկուքին մէկը՝ որ Յու- 14
դա Իսկարիովտացի կ'ըսուէր, գնաց քա-
հանայապետներուն՝ ու ըսաւ. Ի՞նչ կը 15
կամիք ինծի տալ, ու ես մատնեմ ձեզի
անիկայ. ու անոնք երսուն կտոր արծաթ
կշռեցին իրեն։ Ու անկէ ետև պատեհու- 16
թիւն մը կը փնտռէր, որ զանիկայ մատ-
նէ անոնց։

Ու բաղարջակերաց առջի օրը աշակերտ- 17
ները Յիսուսին եկան՝ ու ըսին. Ո՞ւր կ'ու-

Digitized by Google

դիս որ քեզի պատրաստենք՝ զատիկը ու-
18 տելու համար։ Եւ անիկայ ըսաւ անոնց.
Գացէք քաղաքը այս ինչ մարդուն՝ ու ը-
սէք անոր. Վարդապետը կ'ըսէ՝ ժամա-
նակս մօտ է, աշակերտներուս հետ մէկ-
19 տեղ քու քովդ պիտի ընեմ զատիկը։ Ա-
շակերտներն ալ ըրին՝ ինչպէս որ հրաման
ըրաւ անոնց Յիսուս, ու պատրաստեցին
զատիկը։

20 Եւ երբոր իրիկուն եղաւ՝ տասներկու ա-
21 շակերտներուն հետը սեղան նստեր էր։ Ու
երբոր կ'ուտէին անոնք՝ ըսաւ. Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէկը զիս պիտի
22 մատնէ։ Ու շատ տրտմեցան, և անոնցմէ
ամէն մէկը սկսեցին ըսել անոր. Տէր՝ մի-
23 թէ ե՞ս եմ։ Անիկայ պատասխան տուաւ՝
ու ըսաւ. Ան որ իմ հետս իր ձեռքը պնա-
24 կը խոթեց, նոյնը պիտի մատնէ զիս։ Որ-
դին մարդոյ կ'երթայ՝ ինչպէս որ գրուած
է անոր համար. բայց վա՜յ ան մարդուն՝
որուն ձեռքովը Որդին մարդոյ պիտի մատ-
նուի. աղէկ էր ան մարդուն, որ ինքը
25 ծնած չըլլար։ Պատասխան տուաւ Յու-
դան՝ որ անիկայ պիտի մատնէր, ու ըսաւ.
Վարդապետ՝ միթէ ե՞ս եմ. ըսաւ անոր.
Դուն ըսիր։

26 Եւ քանի որ անոնք կ'ուտէին, Յիսուս
հաց առաւ՝ օրհնեց ու կտրեց, և տուաւ
աշակերտներուն՝ ու ըսաւ. Առէք կերէք՝
27 աս է իմ մարմինս։ Եւ գաւաթը առաւ,
գոհացաւ՝ տուաւ անոնց ու ըսաւ. Ամէնք

Digitized by Google

ալ խմեցէք ասկէց . քանզի ասիկայ է 28
իմ արիւնս նոր ուխտի , որ շատերուն հա–
մար կը թափուի մեղքերու թողութեան
համար ։ Սակայն ձեզի կ'ըսեմ . Ալ աս– 29
կէ ետեւ որթին պտուղէն պիտի չխմեմ ,
մինչեւ այն օրը՝ երբոր ձեր հետը անիկայ
նոր խմեմ իմ Հօրս թագաւորութեանը
մէջը ։

Եւ օրհնութիւն մը երգելէն ետքը՝ Ձի– 30
թենեաց լեռը ելան ։ Այն ատենը Յիսուս 31
ըսաւ անոնց . Դուք ամէնքդ այս գիշեր
ինձմէ պիտի գայթակղիք . քանզի որ գը–
րուած է թէ՝ Հովիւը պիտի զարնեմ , ու
հօտին ոչխարները պիտի ցրուին ։ Եւ 32
յարութիւն առնելէս ետեւ՝ ձեզմէ առաջ
Գալիլեա պիտի երթամ ։ Պատասխան 33
տուաւ Պետրոս՝ ու ըսաւ անոր . Թէպէտ
ամէնն ալ քեզմէ գայթակղին , բայց ես
պիտի չգայթակղիմ ։ Ըսաւ անոր Յի– 34
սուս . Ճշմարիտ կ'ըսեմ քեզի . Այս գի–
շեր դեռ հաւը չխօսած՝ երեք անգամ զիս
պիտի ուրանաս ։ Ըսաւ անոր Պետրոս . 35
Թէեւ քեզի հետ մեռնելու ալ ըլլամ՝ քեզ
չեմ ուրանար . անանկ կ'ըսէին նաեւ ամէն
աշակերտները ։

Այն ատենը Յիսուս անոնց հետ գիւղ մը 36
եկաւ , որուն անունը Գեթսեմանի էր ,
ու ըսաւ անոնց . Հոս նստեցէք՝ մինչեւ
որ ես երթամ աղօթք ընեմ ։ Եւ իր հետը 37
առնելով Պետրոսը ու Զեբեդէոսին երկու
որդիքը , սկսաւ տրտմիլ եւ հոգալ ։ Այն 38

Digitized by Google

ատենը ըսաւ անոնց. Իմ անձս մեռնելու
չափ տրտում է. հո՛ս կեցէք, և իմ հետս
39 արթուն մնացէք: Ու քիչ մը առաջ գը-
նաց՝ երեսին վրայ ինկաւ, աղօթք ըրաւ՝
և ըսաւ. Ո՛վ Հայր իմ՝ թէ որ կարելի
է, թո՛ղ աս գաւաթը ինծմէ անցնի. բայց
չէ՛ թէ ինչպէս ես կ'ուզեմ, հապա ինչպէս
40 որ դուն կ'ուզես: Ու գայ աշակերտներուն՝
ու կը գտնէ զանոնք քունի մէջ, և կ'ըսէ
Պետրոսին. Ատանկ մէկ ժամ մըն ալ
41 չկրցա՞ք ինծի հետ արթուն կենալ: Ար-
թո՛ւն կեցէք և աղօ՛թք ըրէք՝ որ փորձու-
թեան մէջ չիյնաք. հոգիս յօժար է, բայց
42 մարմինս տկար: Դարձեալ երկրորդ ան-
գամ գնաց աղօթք ըրաւ Յիսուս՝ ու ըսաւ.
Ո՛վ Հայր իմ՝ եթէ ճարաւոր է աս գաւա-
թը ինծմէ անցնիլը, հապա թէ չէ՛ կը խմեմ
43 ասիկայ. քու կամքդ թող ըլլայ: Ու
նորէն եկաւ անոնք քունի մէջ գտաւ. ին-
չու որ իրենց աչքերը ծանրացած էին:
44 Թողուց անոնք՝ ու գնաց երրորդ անգամ
աղօթք ըրաւ, և դարձեալ նոյն խօսքը
45 ըսաւ: Ան ատենը եկաւ աշակերտներուն՝
ու ըսաւ անոնց. Ասկէ ետև քնացէ՛ք՝ և
հանգչեցէ՛ք. ահա՛ ժամը հասաւ, և Որդին
մարդոյ մեղաւորներուն ձեռքը կը մատ-
46 նուի: Ելէ՛ք ասկից երթանք, ինչու որ
ահա՛ հասաւ անիկայ՝ որ զիս պիտի մատնէ:
47 Ու դեռ անիկայ աս որ կը խօսէր, ահա՛
Յուդան՝ տասներկուքէն մէկը եկաւ. և իր
հետը շատ բազմութիւն սուրերով ու բի-

Digitized by Google

բերով՝ քահանայապետներէն և ժողովուրդ-
դին ծերերէն։ Եւ ան՝ որ պիտի մատ- 48
նէր զինքը, անոնց նշան մը տուեր ու ը-
սաւ. Ո՛վ որ ես համբուրելու ըլլամ՝ ան
է, անիկայ բռնեցէք։ Եւ շուտ մը Յի- 49
սուսին մօտենալով՝ ըսաւ. Ողջ կեցիր՝
վարդապետ. ու համբուրեց զանիկայ։ Եւ 50
Յիսուս ըսաւ անոր. Ընկեր՝ ինչո՞ւ հա-
մար եկար դուն. ան ատենը եկան ձեռք
զարկին Յիսուսին՝ ու բռնեցին զանիկայ։
Եւ ահա՛ Յիսուսի հետ եղողներուն մէկը 51
ձեռքը երկընցուց, և իր սուրը հանեց՝ ու
զարկաւ քահանայապետին ծառային, և
անոր ականջը մէկդի հանեց։ Ան ատենը 52
Յիսուս ըսաւ անոր. Սուրդ իր տեղը դար-
ձուր. ինչու որ ամէն սուր առնողները
սուրով պիտի իյնան։ Կը կարծե՞ս թէ չեմ 53
կրնար իմ Հօրս աղաչել, և հիմա հոս հաս-
ցընէ ինծի տասներկու գունդէն աւելի հր-
եշտակներ։ Բայց ի՞նչպէս պիտի կատար- 54
ուին գիրքերը, թէ պէտք է ասանկ ըլ-
լալ։

Ան ատենը Յիսուս ըսաւ ան բազմու- 55
թեանը. Իբր թէ գողի վրա՞յ եկաք՝ սու-
րերով ու բիրերով զիս բռնելու. ամէն ա-
տեն տաճարին մէջը ձեզի հետ կը նստէի՝ և
կը սորվեցընէի, ու զիս չբռնեցիք։ Բայց 56
աս ամէն բաները եղաւ՝ որ կատարուին
մարգարէից գիրքերը. ան ատենը բոլոր ա-
շակերտները թողուցին անիկայ ու փախան։
Եւ անոնք բռնեցին Յիսուսը՝ Կայիափա 57

Digitized by Google

քահանայապետին տանը, ուր որ դպիր-
58 ները ու ծերերը ժողվուեր էին ։ Իսկ Պետ-
րոս հեռուէն անոր ետեւէն գնաց՝ մինչեւ
քահանայապետին բակը, ու ներս մտաւ
սպասաւորներուն հետը նստաւ, որ վերջը
59 տեսնէ ։ Ուստի քահանայապետները եւ
բոլոր ժողովքը Յիսուսի վրայ սուտ վկա-
յութիւն մը կը փնտռէին, որ զինքը
60 սպաննեն ․ Ու չէին գտներ՝ ան շատ սուտ
վկաներէն ալ որ եկած էին ․ ետքը երկու
61 սուտ վկայ եկան, Կ'ըսէին, թէ Ասիկայ
կը զրուցէր, Ես կրնամ Աստուծոյ տաճա-
րը քակել, եւ իրեք օրուան մէջ շինել ։
62 Ու քահանայապետը ոտք ելլելով՝ ըսաւ
անոր ․ Պատասխան մը չե՞ս տար ․ ի՞նչ
ամբաստանութիւն կ'ընեն ասոնք քեզի հա-
63 մար ։ Իսկ Յիսուս լուռ կեցաւ ։ Պա-
տասխան տուաւ քահանայապետը՝ ու ը-
սաւ անոր ․ Կենդանի Աստուծով քեզ
կ'երդմնցընեմ՝ որ մեզի ըսես, թէ դո՞ւն
64 ես Քրիստոս Որդի Աստուծոյ ։ Ըսաւ ա-
նոր Յիսուս ․ Դուն ըսիր ․ բայց կ'ըսեմ
ձեզի ․ Ասկէ ետեւ պիտի տեսնէք Որդին
մարդոյ՝ Զօրութեան աջ կողմը նստած,
65 եւ երկինքին ամպերովը եկած ։ Ան ատե-
նը քահանայապետը իր հանդերձները պատ-
ռեց՝ ու ըսաւ ․ Հայհոյութիւն ըրաւ ․ ալ
ի՞նչ պէտք է մեզի վկաներ ․ ահա հիմա
66 լսեցիք ատոր հայհոյութիւնը ․ Ձեզի ի՞նչ
պէս կ'երեւնայ ․ անոնք պատասխան տուին
67 ու ըսին ․ Մահապարտ է ։ Ան ատենը անոր

Digitized by Google

երեսը թուքին , ու բռունցքով ծեծեցին ա-
նիկայ . ոմանք ալ ապտակ կը զարնէին ,
և կ'ըսէին . Մարգարէացի՛ր մեզի՝ դուն 68
Քրիստոս , ո՞վ է ան՝ որ քեզի զարկաւ :
Բայց Պետրոս դուրսը գաւիթը նստեր 69
էր . մէկ աղախին մը եկաւ անոր՝ ու ը-
սաւ . Դուն ալ Գալիլեացի Յիսուսին
հետն էիր : Անիկայ ամենուն առջևը ու- 70
րացաւ՝ ու ըսաւ , թէ Չեմ գիտեր դուն
ի՛նչ կը խօսիս : Եւ երբոր դռնէն դուրս 71
ելաւ՝ ուրիշ կնիկ մը զանիկայ տեսաւ , և
հոն եղողներուն ըսաւ . Ասիկայ ալ Յի-
սուս Նազովրեցիին հետն էր : Եւ Պետ- 72
րոս նորէն երդում ընելով ուրացաւ , թէ
Ես ան մարդը չեմ ճանչնար : Ու քիչ 73
մը ատենէն ետև հոն եղողները եկան՝ և ը-
սին Պետրոսին . Ճշմարիտ դուն ալ ա-
նոնցմէ ես . ինչու որ քու զրուցուածքդ ալ
քեզ յայտնի կ'ընէ : Ան ատենը սկսեց 74
անիծել ու երդում ընել , թէ Ես ան
մարդը չեմ ճանչնար . և շուտ մը հաւը
խօսեցաւ : Եւ Պետրոս Յիսուսին ըսած 75
խօսքը միտքը բերաւ , թէ Դեռ հաւը
չխօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս .
ու դուրս ելաւ՝ դառնապէս լացաւ :

## ԳԼ . ԻԷ .

Երբոր առտու եղաւ , բոլոր քահանա- 1
յապետները ու ժողովուրդին ծերերը խոր-
հուրդ ըրին Յիսուսի համար որ զանիկայ
մեռցընեն : Կապեցին անիկայ՝ և տարին 2

Digitized by Google

տուցին · ու Պոնտացի Պիղատոս դատաւո-
րին ձեռքը տուին :
3 Էն ատենը Յուդան՝ որ զանիկայ մատ-
նեց, տեսնելով թէ դատապարտուեցաւ,
զղջի եկաւ, ու արծաթը ետ դարձուց
քահանայապետներուն՝ և ժողովուրդին ծե-
4 րերուն, Ու ըսաւ · Մեղայ, որ անմեղ
արիւն մատնեցի · և անոնք ըսին · Մեզ
5 հոգը չէ՛, դուն գիտես : Ու արծաթը տա-
ճարին մէջ ձգեց՝ ու դուրս ելաւ, և գնաց
6 ինքզինքը խղդեց : Քահանայապետներն
ալ արծաթը առնելով՝ ըսին · Արժան
չէ՛ ատիկայ կորբանին մէջ դնել, ինչու
7 որ արիւնի գին է : Խորհուրդ ընելով՝ ա-
նով բրուտին արտը ծախու առին՝ օտարա-
8 կաններուն գերեզմանի համար : Անոր համար
ան արտը՝ Արիւնի արտ ըսուեցաւ մինչև
9 այսօր : Էն ատենը կատարուեցաւ Երե-
միա մարգարէին ձեռքով ըսուածը · Ու
առին երեսուն արծաթը՝ ծախուածին գինը,
որ Իսրայէլի որդւոցմէն ոմանք գին կարեցին,
10 Ու տուին անիկայ բրուտին արտին, ինչ-
պէս որ ինծի հրաման ըրաւ Տէրը :
11 Ու Յիսուս՝ դատաւորին առջևը կայնե-
ցաւ · դատաւորը հարցուց իրեն՝ ու ըսաւ ·
Հրէաներուն թագաւորը դո՞ւն ես · և
12 Յիսուս ըսաւ · Դուն կ'ըսես : Ու քա-
հանայապետներէն և ծերերէն ամբաստանուե-
լու ատենը բան մը պատասխան չտուաւ :
13 Էն ատենը Պիղատոս ըսաւ իրեն · Չե՞ս
լսեր՝ ո՛րչափ քեզի դէմ կը վկայեն ատոնք :


Digitized by Google

Ու անոր բան մը պատասխան չտուաւ, 14
մինչեւ շատ զարմացաւ դատաւորը ։
Բայց դատաւորը սովորութիւն ունէր, 15
որ տօնին ատենը կապուած մը արձըկէր
ժողովուրդին, ո՛վ որ կ'ուզէին ։ Ան ա- 16
տենը Յեսու Բարաբբա անունով մէկ ե-
րեւելի բանտարկեալ մը ունէին ։ Երբոր 17
ժողվուեցան ըսաւ անոնց Պիղատոս . Աս
երկուքէն ո՞րը կ'ուզէք որ ձեզի արձըկեմ .
Յեսու Բարաբբա՞ն թէ Յիսուսը, որ
Քրիստոս կ'ըսուի ։ Ինչու որ գիտէր թէ 18
նախանձի համար մատնեցին զանիկայ ։
Ու երբոր ատեանը նստեր էր, իր կնիկը 19
մարդ ղրկեց իրեն ու ըսաւ . Ան արդարին
հետը դուն բան մը չունիս . ինչու որ այսօր
երազիս մէջ շատ դիպուածներ անցան
գլխէս անոր համար ։
Բայց քահանայապետները եւ ծերերը 20
ժողովուրդը համոզեցին, որ Բարաբբան
ուզեն ու Յիսուսը կորսնցընեն ։ Պա- 21
տասխան տուաւ դատաւորը ու ըսաւ ա-
նոնց . Աս երկուքէս ո՞րը կ'ուզէք որ ձե-
զի արձըկեմ . եւ անոնք ըսին՝ Բարաբ-
բան . Ըսաւ անոնց Պիղատոս . Հապա 22
ի՞նչ ընեմ Յիսուսը՝ որ Քրիստոս կ'ըսուի ։
Ամէնն ալ ըսին . Թո՛ղ խաչուի . եւ ըսաւ 23
անոնց . Ի՞նչ չար գործ ըրաւ . եւ անոնք
ևս առաւել կ'աղաղակէին ու կ'ըսէին .
Թո՛ղ խաչուի ։ Ու Պիղատոս տեսնելով 24
որ օգուտ մը չըլլար, հապա ալ աւելի
խռովութիւն կ'ըլլայ, ջուր առաւ ձեռ-

Digitized by Google

քերը լուաց ժողովուրդին առջևը՝ և ըսաւ.
Ես ասոր արդարին արիւնէն անպարտ եմ.
25 դո՛ւք մտածեցէք։ Պատասխան տուաւ
բոլոր ժողովուրդը՝ ու ըսաւ. Ասոր արիւ-
նը մեր վրայ՝ ու մեր զաւակներուն վրայ։
26 Ան ատենը Բարաբբան արձակեց անոնց.
և Յիսուսը ծեծելով՝ ձեռքերնին տուաւ որ
27 խաչուի։
Ան ատենը դատաւորին զինուորները պա-
լատին ներսը առին Յիսուսը, ու բոլոր
զինուորութեան գունդը անոր վրայ ժող-
28 վեցին։ Մերկացուցին զինքը՝ և կարմիր
29 վերարկու մը հագցուցին անոր. Ու փու-
շերէ պսակ մը ոլորելով՝ իր գլուխին դրին.
և եղէգ մը իր աջ ձեռքը. ու անոր առ-
ջևը ծունկ դնելով՝ ծաղր կ'ընէին ու
կ'ըսէին. Ողջ կեցիր Հրէից թագաւոր։
30 Ու թքնելով անոր վրայ՝ եղէգը կ'առնէին,
31 և անոր գլուխը կը ծեծէին։ Իսկ երբոր
ծաղր ըրին անիկայ՝ վերարկուն վրայէն
հանեցին, ու իր լաթերը իրեն հագցուցին,
և տարին անիկայ խաչը հանելու։
32 Իսկ դուրս ելլելով՝ Կիւրենացի մարդ մը
գտան Սիմոն անունով, անիկայ պահակ
33 բռնեցին՝ որ անոր խաչը վերցընէ։ Եւ
եկան Գողգոթա ըսուած տեղը, որ է
34 գլուխի կարելու տեղ. Եւ լեղիով խառ-
նուած գինի տուին անոր որ խմէ. և փորձե-
35 համը առնելով, խմել չէր ուզեր։ Երբոր խաչ
ը հանեցին անիկայ, անոր լաթերը
վիճակով բաժնեցին. որ մարգարէին ըսա-

սուած խօսքը կատարուի . «Իմ լաթերս
զիրենց մէջ բաժնեցին , և իմ պատմու-
ճանիս վրայ վիճակ ձգեցին» : Եւ նստեր 36
անիկայ կը պահէին : Եւ անոր գլխուն 37
վրայ իր յանցանքը գրուած՝ դրին , Թէ
Ասիկայ է Յիսուսը Հրէից Թագաւորը :
Ան ատենը անոր հետ երկու գողեր ալ խա- 38
չեցին . մէկը անոր աջ դիէն , և մէկալը
ձախ դիէն :

Եւ անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին 39
անոր , գլուխնին կը շարժէին՝ Ու կ'ըսէին . 40
«Դուն՝ որ տաճարը կը քակէիր , և երեք օ-
րը կը շինէիր զան , դուն քեզ ազատէ՛ ,
Թէ որ Որդի Աստուծոյ ես՝ խաչէ՛ն վար իջ-
իր» : Նմանապէս ալ քահանայապետները դպ- 41
պիրներուն ու ծերերուն հետ ծաղր կ'ընէին
ու կ'ըսէին . «Ուրիշները ազատեց , ինք- 42
զինքը չկրնար ազատեր . Թէ որ Իսրա-
յէլի Թագաւորն է՝ Թո՛ղ հիմա իջնէ խա-
չէն , և մենք հաւատանք : Ինք որ Աս- 43
տուծոյ յուսացեր է , հիմա Թո՛ղ փրկէ ա-
նիկայ՝ եԹէ կ'ուզէ զանիկայ . ինչու որ ը-
սաւ , Թէ Ես Որդի Աստուծոյ եմ» : Իր 44
հետը խաչուած գողերն ալ նոյնպէս կը
նախատէին զանիկայ :

Եւ օրուանը վեց ժամէն մինչև ժամը ին- 45
նը՝ բոլոր երկրին վրայ խաւար եղաւ : Եւ 46
դէպ 'ի ժամը իններորդ Յիսուս մեծ ձայնով
մը կանչեց՝ ու ըսաւ . «Էլի՛ , Էլի՛ , լամա
սաբաքթանի» . որ ըսել է՝ Աստուած իմ՝
Աստուած իմ , զիս ինչո՞ւ Թողուցիր : Ան- 47

Digitized by Google

նոնցմէ ոմանք՝ որ հոն կայներ էին, երբոր
լսեցին՝ կ'ըսէին. Ասիկայ Եղիան կը կան-
48 չէ։ Եւ շուտ մը անոնցմէ մէկը վազեց
սպունգ մը առաւ քացախով լեցուց, ու ան-
ցուց եղեգի մը՝ ու տուաւ անոր որ խմէ։
49 Ու մէկայները կ'ըսէին. Թո՛ղ՝ տեսնենք նա-
յինք թէ Եղիան կու գա՞յ զանիկայ ազա-
տելու։
50 Եւ Յիսուս պարզապէս մեծ ձայնով կան-
չեց՝ ու հոգին աւանդեց։
51 Եւ ահա տաճարին վարագոյրը վերէն
'ի վար երկուքի ճեղքուեցաւ, ու երկիրը
52 շարժեցաւ, և քարերը պատռեցան։ Եւ
գերեզմանները բացուեցան, ու շատ սուրբ
ննջեցեալներու մարմինները յարութիւն ա-
53 ռին։ Եւ գերեզմաններէն ելան անոր յա-
րութենէն ետև՝ մտան սուրբ քաղաքը,
ու շատերուն երևցան։
54 Բայց հարիւրապետը ու անոր հետ Յի-
սուսը պահողները՝ երբոր տեսան շարժմուն-
քը և եղած բաները՝ շատ վախցան, ու ը-
սին. Ճշմարիտ ասիկայ Որդի Աստուծոյ
էր։
55 Հոն տեղը շատ կնիկներ կային որ հե-
ռուէն կայներ էին և կը նայէին, որոնք Գա-
լիլեայէն Յիսուսի ետևէն եկան իրեն ծա-
56 ռայութիւն ընելու. Որոնց մէջն էր Մա-
րիամ Մագդաղենացին՝ և Մարիամ Յա-
կոբին ու Յովսէսին մայրը, և Զեբեդէո-
սի որդւոց մայրը։
57 Ու երբոր իրիկուն եղաւ, Արիմաթիա-

Digitized by Google

յէն մեկ հարուստ մարդ մը եկաւ՝ որուն
անունը Յովսէփ էր , որ ինքն ալ Յիսուսի
աշակերտ էր ։ Ասիկայ Պիղատոսին քովը 58
երթալով՝ Յիսուսին մարմինը ուզեց ․ այն
ատենը Պիղատոս հրաման ըրաւ՝ որ մար-
մինը տան ։ Եւ Յովսէփ մարմինը առաւ՝ 59
մաքուր կտաւներով պատեց , Ու դրաւ 60
նոր գերեզմանի մը մէջ՝ որ քարէ փորեր
էր ․ և գերեզմանին դուռը խոշոր՝ մեծ
քար մը գլտորցընելով գնաց ։ Հոն էր 61
Մարիամ Մագդաղենացին՝ և միւս Մա-
րիամը՝ գերեզմանին դիմացը նստած ։

Եւ հետեւեալ օրը՝ որ ուրբաթէն ետև 62
էր ․ քահանայապետները ու փարիսեցի-
ները ժողվուեցան Պիղատոսին քովը , Ու 63
ըսին ․ Տէ՛ր՝ միտքերնիս եկաւ , որ այն մո-
լորեցուցիչը իր ողջութեան ատենը կ՚ըսէր ․
թէ Երեք օրէն ետև յարութիւն կ՚առնեմ ։
Արդ հրաման ըրէ որ մինչև երեք օր գե- 64
րեզմանին զգուշութիւն ընեն ․ չըլլայ թէ
իր աշակերտները գիշերով գան՝ անիկայ
գողնան , և ժողովուրդին ըսեն , թէ Մե-
ռելներէն յարութիւն առաւ ․ ու ետքի
մոլորութիւնը առջինէն գէշ ըլլայ ։ Պի- 65
ղատոս անոնց ըսաւ ․ Դուք ունիք պահա-
պան զինուորներ ․ գացէք զգուշութի՛ւն ը-
րէք ինչպէս որ գիտէք ։ Անոնք ալ գա- 66
ցին գերեզմանին զգուշացան , և քարը կնք-
ռեցին՝ պահապան զինուորներ դնելով ։

Digitized by Google

## ԳԼ. ԻԸ.

1 Եւ շաբաթ երեկոյին՝ որ միաշաբթին
կը լուսնար, եկաւ Մարիամ Մագդաղե-
նացին ու միւս Մարիամը՝ գերեզմանը
2 տեսնելու։ Եւ ահա՝ մեծ շարժ մը եղաւ.
ինչու որ Տէրոջը հրեշտակը երկինքէն իջաւ ու
գնաց դռնէն մէկդի գլորեց քարը, ու
3 անոր վրայ նստաւ։ Եւ անոր տեսքը փայ-
լակի պէս էր, ու անոր հանդերձը ձիւնի
4 պէս ճերմակ։ Եւ անոր վախէն պահա-
պանները խռովեցան, ու մեռելի պէս ե-
5 ղան։ Պատասխան տուաւ հրեշտակը՝ ու
ըսաւ կնիկներուն. Դուք մի՛ վախնաք.
գիտեմ որ կը փնտռէք Յիսուսը՝ որ խա-
6 չուեցաւ. Հոս չէ՛, ինչու որ յա-
րութիւն առաւ, ինչպէս որ ըսաւ. եկէք
7 տեսէք այն տեղը՝ ուր որ կեցած էր։ Եւ
շուտ մը գացէք անոր աշակերտներուն ը-
սէք, թէ յարութիւն առաւ. և ահա՝
ձեզմէ առաջ Գալիլեա կ'երթայ. հոն պի-
տի տեսնէք զինքը. ահա՝ ձեզի պատմե-
8 ցի։ Ու շուտ մը գերեզմանէն ելան վախ-
ով և մեծ ուրախութիւնով՝ կը վազէին
աշակերտներուն պատմելու։
9 Եւ ահա՝ Յիսուս անոնց դէմը ելաւ ու
ըսաւ. Ողջո՛յն ձեզ։ Եւ անոնք գացին
անոր ոտքերը բռնեցին, ու երկրպագու-
10 թիւն ըրին անոր։ Ան ատեն Յիսուս ա-
նոնց ըսաւ. Մի՛ վախնաք՝ գացէք իմ
եղբայրներուս ըսէք, որ Գալիլեա երթան,
ու հոն զիս պիտի տեսնեն։

Digitized by Google

Երբոր անոնք գացին՝ ահա՛ զինուորնե- 11
րէն մէկ քանին քաղաքը եկան, ու քահա-
նայապետներուն պատմեցին բոլոր եղած
բաները: Ու անոնք ծերերուն հետ մէկ- 12
տեղ ժողվուելով՝ խորհուրդ ըրին՝ շատ
ստակ տուին զինուորներուն. Ու ըսին. 13
Ըսէք, թէ Անոր աշակերտները գիշերով
եկան անիկայ գողցան՝ երբոր մենք քնա-
ցեր էինք: Ու թէ որ աս բանը դա- 14
տաւորին ականջը հասնի՝ մենք անիկայ կը
համոզենք, և ձեզ ապահով կ'ընենք:
Անոնք ալ ստակը առին՝ ու սորվածնուն 15
պէս ըրին. և աս ձայնը Հրէաներուն մէ-
ջէն ելաւ՝ մինչև աս օրս:

Բայց տասնումէկ աշակերտները գացին 16
Գալիլեա այն լեռը, ուր որ Յիսուս իրենց
որոշեր էր: Երբոր զանիկայ տեսան՝ երկըր- 17
պագութիւն ըրին անոր, ու ոմանք տա-
րակուսեցան: Ու Յիսուս մօտենալով՝ 18
անոնց հետը խօսեցաւ ու ըսաւ. Ամէն
իշխանութիւն ինծի տրուեցաւ երկինքի ու
երկրի մէջ. ինչպէս որ Հայրը զիս ղրկեց՝
ես ալ ձեզ կը ղրկեմ: Գացէք ասկէ 19
ետև բոլոր հեթանոսները աշակերտեցէք.
մկրտեցէք անոնք յանուն Հօր և Որդւոյ
և Հոգւոյն Սրբոյ. Սորվեցուցէք անոնց 20
որ այն ամէն բաները պահեն՝ ինչ որ ես
ձեզի պատուիրեցի. և ահա՛ ամէն օր ես
ձեզի հետ եմ՝ մինչև աշխարհիս վերջը:

Digitized by Google

# ԱՒԵՏԱՐԱՆ
# ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

## ԳԼՈՒԽ Ա

1 Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի
2 աւետարանին սկիզբն է : Ինչպէս որ մար-
գարէներուն մէջը գրուած է . Ահա՛ ես իմ
հրեշտակս կը ղրկեմ քու առջեւէդ , որ քու
3 ճամբադ քու առջեւդ պատրաստէ : Մէկ
ձայն մը՝ որ անապատին մէջ կը կանչէ ,
Պատրաստ ըրէք Տէրոջը ճամբան , և շիտ-
4 կեցէք անոր շաւիղները : Ու եղաւ որ
Յովհաննէս անապատին մէջը կը մկրտէր ,
և ապաշխարութեան մկրտութիւն կը քա-
5 րոզէր՝ մեղքերու թողութեան համար : Ու
բոլոր Հրէաստանի աշխարհը՝ և ամէն Ե-
րուսաղէմացիները կ՚երթային անոր , ու
կը մկրտուէին անկից Յորդանան գետին մէջ
6 մեղքերնին խոստովանելով : Ու Յովհան-
նէս հագեր էր ուղտի մազ , և իր մէջքը
կաշիէ գօտի . ու իր կերակուրը մարախ և
7 վայրենի մեղր էր . Ու կը քարոզէր ու կ՚ը-
սէր . Իմ ետեւէս ինձմէ զօրաւորը կու գայ ,
որ ես արժանի չեմ ծռիլ՝ անոր կօշիկնե-
8 րուն կապերը արձակելու : Ես ձեզ ջու-
րով մկրտեցի , բայց անիկայ ձեզ Սուրբ
Հոգիով պիտի մկրտէ :



Digitized by Google

Ու եղաւ որ՝ այն օրերը Յիսուս Գալիլե- 9
ացւոց Նազարեթէն եկաւ, ու Յով-
հաննէսէն մկրտուեցաւ՝ Յորդանանին մէջ ։
Եւ շուտ մը ջուրէն ելնելուն պէս՝ երկինքը 10
բացուած տեսաւ, և Աստուծոյ Հոգին ա-
ղաւնիի պէս՝ որ իր վրայ կ'իջնէր ։ Ձայն 11
մը եկաւ երկինքէն՝ ու կ'ըսէր. Դո՛ւն ես
իմ սիրական Որդիս, քեզի հաճեցայ ։
Ու շուտ մը Հոգին անապատը հանեց 12
զանիկայ ։ Եւ ինքը քառասուն օր հոն էր 13
Սատանայէն փորձուած. ու գազաններու
հետ էր, և հրեշտակները իրեն սպասա-
ւորութիւն կ'ընէին ։
Եւ Յովհաննէսին մատնուելէն ետև՝ Յի- 14
սուս Գալիլեա եկաւ, Աստուծոյ աւետա-
րանը կը քարոզէր՝ ու կ'ըսէր, Թէ ժա- 15
մանակը լմնցած է, և Աստուծոյ թա-
գաւորութիւնը հասած է. ապաշխարե-
ցէք՝ ու աւետարանին հաւատացէք ։
Երբոր Գալիլեացւոց ծովեզերքէն կ'անց- 16
նէր, տեսաւ Սիմոնը՝ ու Սիմոնին եղբայ-
րը Անդրէասը, որ ծովը ուռկաններ ձգեր-
էին, ինչու որ ձուկ բռնող էին ։ Ու 17
Յիսուս ըսաւ անոնց. Իմ ետևէս եկէք,
ու ես ձեզ ընեմ որ մարդու որսորդ ըլլաք ։
Եւ շուտ մը ուռկանները թողուցին՝ անոր 18
ետևէն գացին ։ Եւ անկից քիչ մը ա- 19
ռաջ անցնելով՝ տեսաւ Զեբեդէոսեան
Յակոբոսը և անոր Յովհաննէս եղբայրը,
որ անոնք ալ նաւին մէջը ուռկանները կը
կարկըտէին. ու կանչեց անոնք ։ Եւ շուտ 20

Digitized by Google

մը իրենց հայրը Զեբեդէոսը նաւին մէջ
ձգելով վարձկաններուն հետ, անոր ետե-
էն գացին :
21 Ու մտան Կափառնայում. և իսկոյն
շաբաթ օրը ժողովարանը մտաւ, կը սոր-
22 վեցընէր անոնց : Եւ կը զարմանային ա-
նոր վարդապետութեանը վրայ, ինչու որ
իշխանութիւնով մը անոնց կը սորվեցընէր՝
23 ու չէ՝ թէ դպիրներուն պէս : Եւ անոնց
ժողովարանին մէջը մէկ մարդ մը կար,
որ պիղծ դեւ ունէր իր ներսի դին. որ ա-
24 ղաղակեց՝ ու ըսաւ. Խո՛ղ տուր, մենք
քեզի հետ ի՞նչ բան ունինք՝ Յիսուս
Նազովրեցի, որ եկար մեզ կորսընցընե-
լու. գիտենք քեզ՝ ո՛վ ես, Աստուծոյ
25 Սուրբը : Յիսուս չխեց անիկայ ու ըսաւ.
26 Պապանձէ՛ ու ել անկից : Եւ պիղծ դեւը
անիկայ սաստիկ ցնցեց, և մեծ ձայնով մը
27 աղաղակեց, ու անկէց ելաւ : Եւ ամէն-
քը զարմացան, անանկ որ՝ մէկմէկու հետ
կը փափսային ու կ՚ըսէին. Ի՞նչ նոր վար-
դապետութիւն է աս, որ իշխանութիւ-
նով պիղծ դեւերուն ալ կը հրամայէ,
28 ու անոր կը հնազանդին : Եւ իր համ-
բաւը Գալիլեացիներուն ամէն կողմերը
ելաւ :
29 Ու շուտ մը ժողովարանէն ելաւ՝ Սիմոնին
և Անդրէասին տունը եկաւ՝ Յակոբին և
30 Յովհաննէսին հետ : Ու Սիմոնին զո-
քանչը ջերմով պառկած էր, և շուտ մը
31 իրեն ըսին անոր համար : Ու մօտեցաւ

Digitized by Google

անոր ձեռքէն բռնեց՝ վերցուց անիկայ. ու ջերմը թող տուաւ անիկայ. և իրենց սպասաւորութիւն կ'ընէր։

Ու երբոր իրիկուն եղաւ՝ արեգակին 32
մտնելուն ատենը, բոլոր հիւանդները և
դիւահարները իրեն կը բերէին։ Ու բո- 33
լոր քաղաքը դուռը ժողվուեր էր։ Ու 34
շատ հիւանդներ կերպ կերպ ցաւերէն բը-
ժշկեց, և շատ դեւեր հանեց, ու դեւերուն
խօսիլ չէր տար, ինչու որ գիտէին անի-
կայ թէ Քրիստոս է։

Ու առաւօտուն լուսցածին պէս ելլե- 35
լով՝ ելաւ և գնաց անապատ տեղ մը, ու
հոն աղօթք կ'ընէր։ Ու Սիմոն և իր հե- 36
տը եղողները գացին անոր ետեւէն։ Ու 37
երբոր գտան անիկայ՝ ըսին իրեն, թէ Ա-
մէնը քեզ կը փնտռեն։ Ու ըսաւ ա- 38
նոնց. Եկէք երթանք ուրիշ մօտ գիւղա-
քաղաքները, որ հոն ալ քարոզեմ. ին-
չու որ աս բանիս համար ելեր եմ։ Ու 39
անոնց ժողովարաններուն մէջը կը քարո-
զէր բոլոր Գալիլեացւոց մէջ, ու դեւեր
կը հանէր։

Մէկ բորոտ մը եկաւ անոր՝ կ'աղաչէր, 40
ծունկ կը չոքէր՝ ու կ'ըսէր. Տէր՝ թէ որ
ուզես՝ կրնաս զիս մաքրել։ Ու Յիսուս 41
խղճալով՝ ձեռքը երկընցուց, դպաւ անոր՝
ու ըսաւ անոր. Կ'ուզեմ՝ մաքրուէ՛։ Ու 42
երբոր աս ըսաւ անոր՝ շուտ մը բորոտութիւ-
նը անկից գնաց, ու մաքրուեցաւ։ Ու սաս- 43
տելով անոր՝ շուտ մը դուրս հանեց անիկայ,

Digitized by Google

44 ու ըսաւ. Զգո՛յշ կեցիր՝ մէկուն բան մը
չըսես. հապա գնա՝ քեզ քահանային ցու-
ցո՛ւր, և տո՛ւր քու մաքրուելուդ ընծան,
որ Մովսէս հրաման ըրաւ՝ անոնց վկայու-
45 թիւն ըլլալու համար: Եւ անիկայ ելլա-
լուն պէս սկսեց աւելի քարոզել, ու բանը տարա-
ծել, անանկ որ՝ ալ ինքը չէր կրնար
յայտնի քաղաքը մտնել. հապա դուրս ա-
նապատ տեղուանք էր, և ամէն կողմե-
րէն իրեն կու գային:

## ԳԼ. Բ

1 Եւ նորէն Կափառնայում մտաւ քանի մը
2 օրէն ետև. Ու լսուեցաւ որ տուն մէջ է.
և շատերը ժողվուեցան՝ անանկ որ ալ տեղ
չկար, ո՛չ ալ դրանը քովերը. ու կը
3 խօսէր անոնց Աստուծոյ բանը: Եւ կու
գային իրեն՝ չորս մարդով վերցուած ան-
4 դամալոյծ մը կը բերէին: Ու երբոր բազ-
մութենէն չէին կրնար անոր մօտ գալու,
քակեցին տանը ծածքը ուր որ Յիսուս
էր, ու առաստաղը բանալով՝ վար իջու-
ցին մահիճը՝ որուն մէջը անդամալոյծը կը
5 կենար: Եւ Յիսուս անոնց հաւատքը
տեսնելով՝ ըսաւ անդամալոյծին. Որդեակ՝
6 քու մեղքերդ ներուին քեզի: Ու դպիր-
ներէն մէկ քանին կային՝ որ հոն նստեր
էին. և իրենց սրտին մէջ կը խորհէին,
7 Ի՞նչ է աս, որ ասիկայ հայհոյութիւններ
կը խօսի. ո՞վ կրնայ մեղքը թողուլ,
8 բայց Աստուած միայն: Եւ Յիսուս ի-

Digitized by Google

մացաւ իր հոգիին մէջ՝ որ անանկ կը խոր-
հին սրտերնուն մէջը, ու ըսաւ. Ատ ի՞նչ
կը խորհիք սրտերնուդ մէջը։ Ո՞րը դիւ- 9
րին է, անդամալոյծին ըսել՝ Քու մեղ-
քերդ ներուին քեզի, եթէ ըսել. Ելի՛ր,
մահիճդ ա՛ռ ու տունդ գնա՛։ Բայց որ- 10
պէս զի գիտնաք, թէ Որդին մարդոյ
իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերը
ներելու, (ըսաւ անդամալոյծին.) Քեզի 11
կ՚ըսեմ. Ելի՛ր մահիճդ ա՛ռ ու տունդ
գնա։ Ու ելաւ, շուտ մը իր մահիճը 12
առաւ ամենուն առջևը դուրս ելաւ, ա-
նանկ որ ամէնքը զարմացան, և փառք
տուին Աստուծոյ՝ ու ըսին, թէ Անանկ
բան ամենևին չտեսանք։

Ու ելաւ նորէն ծովեզերքը, և բոլոր ժո- 13
ղովուրդը իրեն եկաւ, ու կը սորվեցընէր
անոնց։ Ու երբոր կ՚անցնէր՝ տեսաւ Ղևի 14
Ալփէոսեանը, որ մաքս ընդունելու նըս-
տեր էր, ու ըսաւ անոր. Եկո՛ւր իմ ե-
տևէս։ ան ալ ելաւ գնաց անոր ետևէն։
Ու եղաւ երբոր սեղան նստեր էր անոր 15
տանը մէջ՝ և շատ մաքսաւորներ սեղան
նստած էին Յիսուսի հետ և անոր աշա-
կերտներուն հետ. ինչու որ շատերը կային՝
որ իր ետևէն կ՚երթային։ Բայց դպիր- 16
ները ու փարիսեցիները երբոր տեսան՝ թէ
մաքսաւորներուն և մեղաւորներուն հետ
կ՚ուտէ, ըսին իր աշակերտներուն. Ինչո՞ւ
է որ մաքսաւորներուն և մեղաւորներուն
հետ կ՚ուտէք ու կը խմէք։ Երբոր լսեց 17

Digitized by Google

Յիսուս՝ ըսաւ անոնց . Ողջերուն բժիշկ
պէտք չէ՛ , հապա հիւանդներուն . և ես
արդարները կանչելու չեկայ , հապա մե-
ղաւորները :
18 Եւ Յովհաննէսին աշակերտները ու փա-
րիսեցիները ծոմ կը պահէին . եկան ու
ըսին իրեն . Ինչո՞ւ Յովհաննէսին աշակերտ-
ները և փարիսեցիները ծոմ կը պահեն ,
ու քու աշակերտներդ ծոմ չեն պահեր :
19 Եւ Յիսուս ըսաւ անոնց . Մի՞թէ կարելի՞
է որ հարսնիքին տղաքը՝ քանի որ փեսան
իրենց հետն է , ծոմ պահեն . քանի որ
փեսան իրենց հետը ունին՝ կարելի չէ՛
20 ծոմ պահել : Բայց օրեր պիտի գան՝ որ
ատեն փեսան իրենցմէ վերցուի , ու հա-
21 պա ան օրը ծոմ պիտի պահեն : Մէկը
չձգեր նոր չմաշուած լաթի կտոր հին հա-
գուստի վրայ . թէ չէ՛ նորը իր լրութիւ-
նովը հինէն կ'առնէ , և պատռուածքը ալ
22 աւելի դէշ կ'ըլլայ : Ո՛չ ալ մէկը նոր
գինին հին տիկերուն մէջ կը դնէ . թէ չէ՛
գինին տիկերը կը պատռէ , գինին կը թա-
փի , ու տիկերը կը կորնչին . հապա՝ նոր
գինին նոր տիկերու մէջ դնելու է :
23 Ու եղաւ որ շաբաթ օրը ինքը արտե-
րուն մէջէն կ'անցնէր , և աշակերտները
որ կ'երթային՝ սկսեցին ցորենի գլուխ փըր-
24 ցընել և ուտել : Ու փարիսեցիները ը-
սին իրեն . Նայէ՛ քու աշակերտներդ ի՞նչ
25 կ'ընեն շաբաթ օրը , որ չվայլեր : Եւ Յի-
սուս ըսաւ անոնց . Դուք չէ՞ք կարդացեր

Digitized by Google

դուք Դաւիթին ըրածը՝ երբոր պէտք եղաւ ու անօթեցաւ ինքը՝ և իրեն հետ եղողները . Ինչպէս մտաւ Աստուծոյ տունը Ա- 26
բիաթար քահանայապետին օրովը , և առաջաւորութեան հացերը կերաւ , ու տուաւ անոնց ալ՝ որ իր հետն էին . որ Ջէհնա մը օրինաւոր չէր ուտել , միայն թէ քահանաներուն : Եւ ըսաւ անոնց . Շա- 27
բաթը մարդուն համար եղաւ , ու չէ՛ թէ մարդը շաբաթին համար : Ուրեմն Որդին 28
մարդոյ շաբաթին ալ տէր է :

## ԳԼ. Գ

Եւ նորէն ժողովարանը մտաւ . ու հոն 1
մարդ մը կար , որուն ձեռքը չորցած էր :
Եւ իրեն կը սպասէին՝ որ շաբաթ օրը անի- 2
կայ բժշկէ , որ չարախօսութիւն ընեն իր
վրայ . Եւ ինքը՝ ձեռքը չորցած մարդուն 3
ըսաւ : Ելի՛ր մէջտեղը կայնէ՛ . Ու ըսաւ 4
անոնց . Ի՞նչ կը վայլէ շաբաթ օրը , բարի՞ գործ գործել՝ թէ չարիք ընել . հոգի մը ազատեցընե՞լ՝ թէ կորսնցընել . բայց
անոնք լուռ կեցան : Եւ Յիսուս անոնց 5
վրայ նայելով՝ բարկութեամբ լեցուն՝ անոնց սրտերուն կուրութեանը համար տրտմած , ըսաւ այն մարդուն . Ձեռքդ երկընցո՛ւր . ան ալ երկընցուց , և իր ձեռքը
ողջացաւ : Ու փարիսեցիները Հերով- 6
դէսեաններուն հետ մէկտեղ շուտ մը դուրս ելան , խորհուրդ կ՚ընէին անոր համար՝ թէ ինչպէս կորսնցընեն անիկայ :

Digitized by Google

7 Բայց Յիսուս իր աշակերտներովը ծո-
վեզերքը գնաց, և շատ ժողովուրդ անոր
ետևէն կ'երթային Գալիլեացիներէն, ու
8 Հրէաստանէն, Եւ Երուսաղեմէն, ու
Յորդանանու մէկալ կողմէն, և անոնք
որ Տիւրոսէն ու Սիդոնէն էին, շատ ժո-
ղովուրդ երբոր կը լսէին ինչ որչափ բան կ'ը-
9 նէր, կու գային իրեն: Եւ ըսաւ իր ա-
շակերտներուն, որ նաւակ մը պատրաստ
ըլլայ իրեն համար ժողովուրդին բազմու-
թեանը պատճառաւը, որ զինքը չնեղեն:
10 Ինչու որ շատերը բժշկեց, անանկ որ ի-
կան չարքս կողմը ըրեցուցած որ ցաւ մը
11 ունեցողները իրեն դպչին: Եւ պիղծ դևե-
րը երբոր զինքը կը տեսնէին՝ կ'իյնային իր
առջևը, կը կանչէին ու կ'ըսէին,
12 Թէ Դուն ես Աստուծոյ Որդին: Եւ ինքը
սաստիկ կը հրամայէր անոնց, որ զինքը յայտ-
նի չընեն:
13 Լեռը կ'ելլէ, և իրեն կը կանչէ անոնք
14 որ ինքը ուզեց. ու գացին իրեն: Եւ
տասներկու հոգի որոշեց, որ իր հետը ըլ-
15 լան, ու որ անոնք երթան քարոզել; Եւ
իշխանութիւն ունենալ ցաւերը բժշկելու,
16 և դևերը հանելու: Եւ Սիմոնին անու-
17 նը Պետրոս դրաւ. Եւ Զեբեդէոսեան
Յակոբոսին ու Յակոբոսին եղբօրը Յով-
հաննէսին անոնց անունները Բանէրգէս
18 դրաւ, որ ըսել է Որոտման որդիք. Եւ
Անդրէասը, ու Փիլիպպոսը, և Բար-
թողիմէոսը, ու Մատթէոս մաքսաւորը,

Digitized by Google

և Թովմասը, ու Ալփէոսեան Յակոբոսը,
և Թադէոսը, ու Սիմոն Կանանացին. Եւ 19
Յուդա Իսկարիովտացին, որ նաև զինքը
մատնեց։

Տուն կու գան, և նորէն ժողովուրդը 20
կու գայ անոնց հետ, այնպէս որ՝ հաց ու-
տելու ալ ժամանակ չունէին։ Եւ երբո- 21
որ իրենները լսեցին՝ ելան որ զինքը բռ-
նեն, քանզի որ կը կարծէին թէ խելագարած
է։ Եւ այն դպիրները որ Երուսաղէմէն ի- 22
ջեր էին՝ կ'ըսէին, Թէ անոր ներսիդին
Բէեղզեբուղ կայ, և դևերուն
իշխանովը դևերը կը հանէ։ Եւ իրեն կանչե- 23
լով անոնք, առակներով կը խօսէր հե-
տերնին. Ի՞նչպէս կրնայ Սատանան Սա-
տանան հանել։ Եւ եթէ որ մէկ թա- 24
գաւորութիւն մը իրեն դէմ բաժնուի՝ այն
թագաւորութիւնը չկրնար կենալ։ Եւ 25
թէ որ տուն մը իրեն դէմ բաժնուի՝ այն
տունը չկրնար կենալ։ Եւ թէ որ Սա- 26
տանան ինքզինքին դէմ ելաւ ու բաժ-
նուած է, անիկայ չկրնար կենալ, հա-
պա վերջը հասած է։ Եւ մէկը չկրնար ու- 27
ժեղ մարդու մը կահերը՝ անոր տունը մտ-
նելով յափշտակել, թէ որ առաջ այն ու-
ժեղ մարդը չկապէ, ու հապա թէ անոր
տունը կողոպտէ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձե- 28
զի, որ ամէն մեղքերը պիտի ներուին մար-
դոց որդիներուն, և հայհոյութիւնները՝
որչափ որ հայհոյեն։ Բայց ան որ Հո- 29
գւոյն Սրբոյ դէմ կը հայհոյէ, յաւիտեան

Digitized by Google

թողութիւն պիտի չունենայ . հապա յա-
ւիտենական մեղքերուն պարտական պիտի
30 ըլլայ : Որովհետեւ կ'ըսէին , Թէ՝ Պիղծ
ոգի կայ անոր ներսը :
31 Իր եղբայրներն ու մայրը եկան , ու դուր-
սը կայնելով՝ մարդիկ ղրկեցին եւ կը կանչէին զա-
32 նիկայ : Եւ հոն ժողովուրդը իր բոլոր-
տիքը նստեր էր . եւ իրեն ըսին , թէ ,
Ահա՛ մայրդ ու եղբայրներդ դուրսը կայ-
33 ներ են՝ եւ քեզ կ'ուզեն : Պատասխան
տուաւ անոնց՝ ու ըսաւ . Ո՞վ է իմ մայրս՝
34 կամ եղբայրներս : Իր բոլորտիքը աչա-
կերտներուն նայելով՝ որ նստեր էին , ըսաւ . Ահա՛ իմ մայրս ու իմ եղբայրներս .
35 Ինչու որ ով որ Աստուծոյ կամքը կ'ընէ ,
անիկայ է իմ եղբայրս՝ ու քոյրս եւ մայրս :

## ԳԼ . Դ

1 Դարձեալ սկսաւ սորվեցնել ծովեզեր-
քին քովը . եւ շատ ժողովուրդներ չորս
կողմը ժողովուեցան , անանկ որ՝ ինքը նաւը
մտաւ , ու նստաւ ծովին վրայ . եւ բոլոր
ժողովուրդները ծովեզերքին բոլորտիքը
2 ցամաքը բռներ էին : Եւ առակներով շատ
բան կը սորվեցնէր անոնց , ու կ'ըսէր ա-
3 նոնց իր վարդապետութեանը մէջ . Լսե-
ցէք՝ ահա՛ սերմ ցանողը ելաւ որ սերմ
4 ցանէ : Եւ եղաւ որ՝ սերմանելու ատենը
մէկը ճանապարհին վրայ ինկաւ , եւ թռչու-
5 նները եկան ու կերան անիկայ : Ուրիշ մա-
սերը ինկաւ ապառաժի վրայ , ուր որ շատ

հող չկար․ ու շուտ մը բուսաւ, ինչու
որ հողը պարարտութիւն չունէր․ Եւ երբո- 6
որ արեւը ծագեցաւ՝ այրեցաւ, ու արմատ
չունենալուն համար՝ չորցաւ։ Եւ ուրիշը 7
ինկաւ փուշերու մէջ․ փուշերը ելան և
խեղդեցին անիկայ, ու պտուղ չտուաւ։
Եւ ուրիշը ինկաւ աղէկ հողի մէջ, ու ե- 8
լաւ մեծցաւ՝ պտուղ կու տար․ և կը բե-
րէր մէկուն հատը երեսուն, ու մէկուն հա-
տը վաթսուն, և մէկուն հատը հարիւր։
Ու կ'ըսէր․ Ան որ լսելու ականջ ունի, 9
թող լսէ։

Եւ երբոր առանձինն էր, անոնք որ իր 10
քովն էին տասներկուքներուն հետ մէկ-
տեղ՝ հարցուցին իրեն այն առակը։ Ու 11
ըսաւ անոնց․ Ձեզի տրուած է գիտնալ
Աստուծոյ թագաւորութեանը խորհուրդ-
ները, բայց անոնց՝ որ դուրսն են, ամէն
բան առակներով կ'ըլլայ․ Որ տեսնելով 12
պիտի տեսնեն, և պիտի չտեսնեն, ու
լսելով պիտի լսեն, և պիտի չիմանան․
որ չըլլայ թէ դարձի գան, և իրենց մե-
ղքը թողութիւն ըլլայ։ Եւ ըսաւ ա- 13
նոնց․ Այս առակը չէ՞ք գիտեր․ ուրեմն
ինչպէս ամէն առակները պիտի գիտնաք։
Սերմ ցանողը խօսքը կը ցանէ։ (15) Եւ 14
ճամբու վրայինները անոնք են՝ ուր խօսքը
կը ցանուի․ ու երբոր անիկայ կը լսեն,
Սատանան կու գայ՝ և անոնց սրտին մէջի
ցանուած խօսքը կը հանէ։ Եւ ապառաժի 16
վրայ ցանուածները անոնք են, որ երբոր

Digitized by Google

կը լսեն խօսքը՝ շուտ մը խնդալով կ'ըն-
17 դունին . Ու իրենց մէջը արմատ չունե-
նալնուն համար՝ միայն քիչ մը ատեն կը
դիմանան . ետքը երբոր նեղութիւն կամ
հալածմունք մը կու գայ խօսքին պատ-
18 ճառովը , շուտ մը կը գայթակղին : Ու
փուշերուն մէջ ցանուածները անոնք են՝ որ
19 երբ խօսքը կը լսեն , Ու աշխարհիս զբաղ-
մունքները ու հարստութեան խաբեբա-
յութիւնները մէջ կը մտնեն՝ ու խօսքը կը
20 խեղդեն , և կ'ըլլայ անպտուղ : Ու ա-
ղէկ հողի մէջ ցանուածները անոնք են ,
որ խօսքը կը լսեն և կ'ընդունին , ու
պտուղ կու տան՝ մէկուն տեղը երեսուն ,
և մէկուն տեղը վաթսուն , ու մէկուն տե-
ղը հարիւր :
21 Ու ըսաւ անոնց . Միթէ ճրագը գրուա-
նին կամ մահճին տակը՞ դնելու հա-
մար կու գայ . չէ՞ որ աշտանակին վրայ
22 դնելու համար : Քանզի ոչ ծածուկ բան
մը չկայ , որ պիտի չյայտնուի . և գաղ-
տուկ բան մը չէ եղած՝ որ երևան պիտի
23 չելլէ : Թէ որ մէկը լսելու ականջ ունի ,
թո՛ղ լսէ :
24 Ու ըսաւ անոնց . Նայեցէք ի՛նչ կը
լսէք . և ձեզի որ կը լսէք՝ պիտի աւելնայ .
ի՛նչ չափով որ դուք կը չափէք՝ նոյն չա-
25 փովը պիտի չափուի ձեզի . Ան որ ունի՝
անոր պիտի տրուի . և ան որ չունի , ու-
նեցածն ալ իրմէ պիտի առնուի :
26 Ու կ'ըսէր . Աստուծոյ թագաւորութիւ-

Digitized by Google

նը ասանկ է . որպէս թէ մէկ մարդ մը
հողին մէջը սերմ ձգէ , Ու քնանայ և 27
արթըննայ գիշեր ու ցորեկ , և սերմերը
բուսնին ու մեծնան . և ինքը չգիտեր , Վասն 28
հողը ինքիրմէն պտուղ կու տայ . առաջ
խոտը , ու ետքը հասկը , և անկէ ետև
լեցուն ցորենը հասկին մէջ ։ Բայց երբ- 29
որ պտուղ տայ՝ շուտ մը մանգաղ կը
խրկուի , ինչու որ քաղելուն ատենը հա-
սած է ։

Ու կ'ըսէր . Աստուծոյ թագաւորու- 30
թիւնը ինչ բանի նմանցընենք , կամ ինչ
առակով անիկայ ցուցընենք ։ Ինչպէս 31
մանանեխին հատը որ հողին մէջը ցանուած
ատենը հողի մէջ եղած սերմերուն ամենէն
պզտիկն է . Ու երբոր ցանուի , կը բուս- 32
նի ու ամէն խոտեղէններէն ալ մեծ կ'ըլ-
լայ , և մեծ մեծ ճիւղեր կ'արձըկէ , անանկ
որ երկինքի թռչուններուն հերիք կ'ըլլայ
անոր շուքին տակը բնակելու ։

Ու անանկ առակներով կը խօսէր ա- 33
նոնց հետ խօսքը , որ կրնային իմանալ .
Ու առանց առակի բան մը չէր խօսեր ա- 34
նոնց հետ . բայց առանձին իր աշակերտ-
ներուն կը մեկնէր ամէնը ։

Ու նոյն օրը երբոր իրիկուն կ'ըլլար , 35
ըսաւ անոնց . Եկէք ծովին մէկալ կողմը
անցնինք ։ Ժողովուրդը թողուցին , ու 36
զինքը առին ան նաւովը , և ուրիշ նաւերն
ալ՝ որ անոր հետն էին ։ Ու մեծ ալէ- 37
կոծութիւն մը եղաւ հովի , ու ալիքները

Digitized by Google

նաւին մէջը կը լեցընէր, անանկ որ գրե-
38 թէ լեցուն էր ։ Ու ինքը նաւին ետեւի
կողմը բարձի վրայ կը քնանար . արթըն-
ցուցին զինքը և կ'ըսէին . Վարդապետ
հոգ չէ՞ս ըներ, որ ահա կը կորսուի՞նք ։
39 Ան արթընցաւ սաստեց հովին, ու ծովին
ըսաւ . Դադրէ՛ լո՛ւռ կեցիր ; ու հովը
դադրեցաւ, և մեծ խաղաղութիւն եղաւ ։
40 Ու ըսաւ անոնց . Ինչո՞ւ ատանկ վախկոտ
էք, ատիկուրին հաւատք չունի՞ք . ու խիստ
վախցան, և կ'ըսէին իրարու . Արդեօք
ո՞վ է ասիկայ, որ հովը և ծովը անոր
կը հնազանդին ։

## ԳԼ. Ե

1 Եւ եկաւ ծովին մէկալ կողմը Գերգե-
2 սացւոց աշխարհը ։ Ու երբոր ինքը
նաւէն ելաւ, գերեզմաններէն մարդ մը
պատահեցաւ իրեն, որ պիղծ դեւ ունէր .
3 Որ անոր բնակած տեղը ալ գերեզմաննե-
րուն մէջն էր . ու շղթայով ալ մէկը չէր
4 կրնար անիկայ կապել . Որովհետեւ շատ
անգամ ոտնակապերով և շղթաներով
կապուած էին, ու շղթաները խզուեցան
իրմէն, և ոտնակապերը կոտրտեցան ; ու
5 մէկը չէր կրնար անիկայ յաղթել . Ինչու
որ գիշեր ու ցորեկ ամէն ատեն գերեզման-
ներուն մէջ և լեռները կը կանչըռտէր ;
6 ու ինքզինքը քարերով կը ծեծէր ։ Երբոր
հեռուանց Յիսուսը տեսաւ ; վազեց ու
7 երկրպագութիւն ըրաւ անոր . Մեծ ձայն

Digitized by Google

նով մը աղաղակեց՝ ու ըսաւ. Քու իմ
հետս ի՛նչ բան ունիս Յիսուս՝ Որդի
Աստուծոյ բարձրելոյ. քեզ Աստուծով
կ'երդմնցընեմ՝ զիս մի՛ տանջեր: (Որով- 8
հետև կ'ըսէր անոր. Պի՛ղծ դև՝ ելի՛ր այս
մարդէն:) Եւ հարցուց անոր, թէ Ա- 9
նունդ ի՛նչ է. ու ըսաւ անոր. Իմ ա-
նունս Լէգէոն է, ինչու որ մենք շատուոր
ենք: Ու շատ կ'աղաչէին իրեն, որ զի- 10
րենք այն աշխարհէն դուրս չհանէ: Եւ 11
հոն լեռանը մօտ խոզերու մեծ երամակ մը
կար՝ որ կ'արածուէին: Բոլոր դևերը ա- 12
ղաչեցին զանիկայ՝ ու ըսին. Մեզ խոզե-
րուն ղրկէ՛, որ անոնց մէջը մտնենք: Եւ 13
հրաման ըրաւ անոնց. ու երբոր պիղծ
դևերը ելան՝ խոզերուն մէջը մտան, և ե-
րամակը գահավէժ տեղէն ծովը վազեց,
(երկու հազարի չափ կային,) ու ծովին մէ-
ջը խեղդուեցան: Եւ խոզ արածողները փա- 14
խան, ու պատմեցին քաղաքը և գեղերը.
և անոնք ելան տեսնելու՝ թէ ինչ բան է
որ եղաւ: Եկան Յիսուսին, ու տեսան 15
դիւահարը՝ որ Լէգէոն ունէր, հագուած
և խելքը վրան եկած նստեր էր, ու վախ-
ցան: Եւ անոնք որ տեսեր էին, պատ- 16
մեցին անոնց՝ թէ ի՛նչ եղաւ դիւահարին,
և ի՛նչ նաև խոզերուն վրայ: Ու սկսե- 17
ցին աղաչել զինքը, որ իրենց սահման-
ներէն ելլէ: Եւ երբոր անիկայ նաւը 18
մտաւ, դիւահարը կ'աղաչէր իրեն՝ որ իր
հետը ըլլայ. Եւ Յիսուս թող չտուաւ 19

Digitized by Google

անոր . Հապա ըսաւ անոր . Գնա՛ քու
տունդ քու ընտանիքներուդ , ու պատմէ՛
անոնց ինչ որ Տէրը քեզի ըրաւ , և ողոր-
20 մեցաւ քեզի : Ու գնաց , և սկսաւ Դեկա-
պոլիսին մէջը քարոզել՝ ինչ որ Յիսուս ի-
րեն ըրաւ , և ամէնքն ալ կը զարմանա-
յին :
21 Ու Յիսուս երբոր նորէն նաւին մէկալ
կողմը անցաւ , շատ ժողովուրդ ժողվա-
եցան անոր քովը . և ինքը ծովեզերքն էր :
22 Ու ահա՛ ժողովրդապետներուն մէկը կու-
գար , որուն անունը Յայրոս էր . երբոր
Յիսուս տեսնալ՝ անոր ոտքը ինկաւ .
23 Եւ շատ կ'աղաչէր անոր՝ ու կ'ըսէր , Թէ
իմ աղջիկը մեռնելու մօտ է , որ գաս ա-
նոր վրայ ձեռք դնես , որպէս զի աղէկնա-
24 նայ ու ապրի : Ու գնաց անոր հետ .
ու շատ ժողովուրդ իր ետևէն կ'երթային՝
ու կը նեղէին զինքը :
25 Ու կին մը՝ որ տասնըերկու տարի ա-
26 րիւնի տեղատւութեան մէջ էր . Ու շատ
վշտացած էր շատ բժիշկներէն , և իր բո-
լոր ունեցածը վատներ էր , և օգուտ մը
չէր գտեր . հապա նա առաւել զայրացեր
27 էր : Երբոր Յիսուսին վրայով լսեց ,
ետևէն կողմէն եկաւ բազմութեան մէջը՝ ու
28 անոր հանդերձներուն ձեռքով դպաւ . Ինչու
որ միտքին մէջը խորհեցաւ , Թէ Միայն
անոր հանդերձներուն որ դպչիմ՝ պիտի առող-
29 ջնամ : Ու շուտ մը անոր արիւնին աղբ-
իւրը ցամքեցաւ . ու իր մարմինին մէջ

Digitized by Google

իմացաւ՝ թէ տանջանքէն բժշկուեցաւ ։
Եւ Յիսուս շուտ մը գիտցաւ իր անձին մէջ 30
այն զօրութիւնը՝ որ իրմէն ելաւ ․ դարձաւ
բազմութեանը՝ ու ըսաւ ․ Ո՞վ դպաւ իմ
հանդերձներուս ․ Իր աշակերտները ըսին իրեն ․ 31
Կը տեսնես որ բազմութիւնը քեզ կը նեղէ ․
և կ՚ըսես, թէ Ո՞վ դպաւ իմ հանդերձներուս ։
Ինք չորս կողմը կը նայէր որ տեսնէ թէ 32
ով ըրաւ ասն ։ Ու կինը վախցաւ և դողաց 33
դող՝ գիտնալով ըրած բանին համար ․ իմա-
ցաւ որ գիտէր թէ իրեն ինչ եղաւ ․ եկաւ՝
անոր առջևը ինկաւ, և բոլոր բաները
զրուցեց ճշմարտէն ճշմարտ ։ Իսկ Յիսուս ըս- 34
աւ անոր ․ Աղջիկ քու հաւատքդ քեզ
բժշկեց ․ գնա՛ խաղաղութեամբ ․ և
բժշկուած եղիր քու տանջանքէդ ։
Երբոր տակաւին ան բանը կը խօսէր՝ 35
ժողովրդապետին տունէն մարդիկ եկան՝ ու
ըսին, թէ Աղջիկդ մեռաւ ․ ալ ինչո՞ւ
վարդապետը կը յոգնեցընես ․ Բայց Յի- 36
սուս երբոր լսեց ըսուած խօսքը, ժողովր-
դապետին ըսաւ ․ Մի՛ վախնար ․ միայն
հաւատա ։ Ու մէկը թող չտուաւ 37
իր ետևէն երթալու, բայց միայն Պետրոսը
ու Յակոբոսը և Յակոբոսին եղբայրը
Յովհաննէսը ։ Ժողովրդապետին տունը 38
եկաւ, և տեսաւ շատ խառնակութիւն ու
լացողներ՝ և շատ աղաղակող ։ Ու ներս 39
մտաւ՝ ըսաւ անոնց ․ Ինչո՞ւ խռովեր էք՝
ու կու լաք ․ աղջիկը մեռած չէ, հապա
կը քնանայ ։ Ու ծաղր կ՚ընէին զինքը ․ 40

Digitized by Google

բոլորը ամէնքը դուրս հանելով , իր հետը
առաւ մանուկին հայրը ու մայրը եւ ան-
ոնք որ իր հետն էին ․ ու մտաւ հոն՝ ուր
41 որ մանուկը դրուած էր ։ Եւ մանուկին
ձեռքէն բռնելով՝ ըսաւ անոր ․ Տալիթա
կումի ․ որ կը թարգմանուի ․ Աղջիկ՝ քեզի
42 կ՚ըսեմ , ելի՛ր ։ Եւ շուտ մը աղջիկը
ելաւ եւ կը քալէր ․ քանզի որ տասներկու
տարեկան էր ․ ու զարմացան մեծ
43 զարմանքով ։ Եւ սաստիկ պատուէր տուաւ
անոնց՝ որ մէկը չգիտնայ այս բանը ․ ու
ըսաւ որ անոր ուտելիք տան ։

## ԳԼ. Զ.

1 Եւ անկէ ելլելով՝ եկաւ իր երկիրը , եւ
2 անոր աշակերտները իր ետեւէն գացին ։ Եւ
երբ որ շաբաթ օրը եկաւ՝ ժողովարանին
մէջ սորվեցնելու ․ եւ շատերը երբոր կը
լսէին՝ կը զարմանային անոր վարդապե-
տութեանը վրայ , ու կ՚ըսէին ․ Ասիկայ ուս-
կի՞ց ունի աս բաները , կամ աս ի՞նչ իմաս-
տութիւն է որ անոր տրուած է , որ
ասանկ հրաշքներ կ՚ըլլան անոր ձեռքովը ։
3 Ասիկայ հիւսին տղան չէ՞ եւ Մարիամին
որդին , Յակոբին եւ Յովսէսին ու Յուդա-
յին եւ Սիմոնին եղբայրը ․ ու անոր
քոյրերը հոս մեր քովը չե՞ն ․ եւ անոր վրայ
4 բան կը գայթակղէին ։ Եւ ըսաւ անոնց ․
Մարգարէ մը ուրիշ տեղ առանց պատիւի
չէ՝ բայց միայն իր երկիրին մէջ , ու իր
5 ազգականներուն , եւ իր տանը մէջ ։ Եւ

Digitized by Google

չէր կրնար հոն մէկ հրաշք մըն ալ ընել,
միայն թէ քանի մը հիւանդներու վրայ
ձեռք դրաւ, ու բժշկեց զանոնք։ Եւ 6
անոնց անհաւատութեանը համար կը զար-
մանար. ու կը պտըտէր ան երկիրներուն
բոլորտիքը, և կը սորվեցընէր։

Եւ իրեն կանչեց տասնեւերկուքը. և 7
սկսաւ անոնք երկու երկու խրկել, ու
իշխանութիւն տուաւ անոնց պիղծ ոգիներ-
րուն վրայ։ Եւ պատուիրեց անոնց, որ 8
ճանապարհի համար բան մը չառնեն,
բայց միայն գաւազան մը. ո՛չ տոպրակ,
ո՛չ հաց, ո՛չ ստակ գօտիներնուն մէջ։
Հապա հողաթափ հագնին. և երկու կա- 9
պայ մի՛ հագնիք՝ ըսաւ։ Ու ըսաւ ա- 10
նոնց. Ո՛ր տուն որ մտնէք՝ հոն բնակե-
ցէք, մինչև որ անկից ելլէք։ Եւ անոնք 11
որ ձեզ չեն ընդունիր՝ ու ձեզի չեն լսեր,
երբոր անկից կ'ելլէք՝ ոտքերնուդ փոշին
թօթվեցէք անոնց վկայութիւն ըլլալու հա-
մար։

Եւ անոնք ելան կը քարոզէին, որ մար- 12
դիկ ապաշխարեն։ Եւ շատ դեւեր կը հա- 13
նէին, ու շատ հիւանդներ եղով կ'օծէին,
և կը բժշկէին զանոնք։

Ու Հերովդէս թագաւորը լսեց, (քանզի 14
որ անոր անունը յայտնի եղաւ.) և կ'ը-
սէր, թէ Յովհաննէս մկրտիչը մեռելներէն
յարութիւն առեր է, ու անոր համար
հրաշքներ կ'ըլլան ասով։ Ուրիշները կ'ը- 15
սէին՝ թէ Եղիան է, և ուրիշները՝ թէ

Digitized by Google

Մարգարէ մը , կամ մարգարէներուն մէ-
16 կին պէս ։ Երբոր Հերովդէս լսեց՝ ըսաւ ·
Անիկայ Յովհաննէսն է՝ որուն գլուխը ես
կտրեցի , մեռելներէն յարութիւն առեր է ։
17 Ինչու որ Հերովդէս ինքը ղրկեց՝ Յով-
հաննէսը բռնեց ու կապեց անիկայ , և
բանտը դրաւ՝ իր Փիլիպպոս եղբօրը Հե-
րովդիա կնկանը համար , ինչու որ իրեն
18 կնիկ ըրաւ զանիկայ ։ Որովհետեւ Յով-
հաննէս Հերովդէսին կ'ըսէր , Թէ Քեզի
օրինաւոր չէ՝ քու եղբօրդ կնիկը ունենալ ։
19 Իսկ Հերովդիա ոխ ունէր անոր դէմ , ու
կ'ուզէր անիկայ մեռցնել , և չէր կրնար ։
20 Ինչու որ Հերովդէս կը վախնար Յովհան-
նէսէն , գիտնալով թէ անիկայ արդար և
սուրբ մարդ մըն է ։ և անոր բերանը կը
նայէր ու անկէց լսելով՝ շատ բան կ'ընէր
և անուշութիւնով անոր մտիկ կ'ընէր ։
21 Երբոր դիպուկ օր մը եղաւ՝ որ Հերով-
դէս իր ծննդեան օրը ընթրիք կ'ընէր իր
իշխաններուն և հազարապետներուն՝ ու
22 Գալիլեացւոց մեծամեծներուն ։ Իսկ երբոր
որ Հերովդիայեն աղջիկը մտաւ՝ ու խաղ-
ցաց , հաճելի եղաւ Հերովդէսին՝ և սե-
ղան նստողներուն ։ Թագաւորը ըսաւ աղջ-
կանը · Խնդրէ՛ ինծմէ ինչ որ կ'ուզես
23 ու պիտի տամ քեզի ։ Իսկ շատ անգամ
երդում ըրաւ անոր , Թէ Ինչ որ դուն
ինծմէ խնդրես՝ պիտի տամ քեզի , մինչեւ
24 Թագաւորութեանս կէսը ։ Անիկայ ելաւ
իր մօրը ըսաւ · Ինչ ուզեմ · ան ալ ըսաւ

Digitized by Google

[illegible] 25
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 26
[illegible]
[illegible]
[illegible] 27
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 28
[illegible]
[illegible] 29
[illegible]
[illegible]
[illegible] 30
[illegible]
[illegible] 31
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 32
[illegible] 33
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 34
[illegible]
[illegible]

Digitized by Google

էին, ու սկսաւ շատ բան սորվեցընել անոնց:
35 Եւ երբոր ատենը անցաւ, աշակերտ-
ները եկան ու ըսին. Աս տեղը անապատ
36 է, ու ժամն ալ անցեր է. Արձակէ՛ ժողո-
վուրդները, որ երթան բոլորտիքի ագա-
րակները ու գիւղերը՝ իրենց ուտելիք գը-
նեն. վասն զի ուտելու բան մը չու-
37 նին: Ան ալ պատասխանեց ըսաւ. Դուք տը-
ւէք անոնց [illegible]. Անոնք ըսին անոր. Եր-
38 թանք: Ըսին. Երթա՞նք երկու հա-
րիւր դահեկանի հաց գնենք ու տանք ա-
39 նոնց որ ուտեն: Ըսաւ անոնց. Քանի՞
նկանակ ունիք, գացէք նայեցէք. Երբոր
գիտցան՝ ըսին. Հինգ՝ եւ երկու
ձուկ: Ու հրամայեց անոնց, որ կա-
նաչ խոտին վրայ խումբ խումբ նստին:
40 Եւ նստան կարգ կարգ հարիւրական ու
41 յիսունական: Ու հինգ նկանակը եւ երկու
ձուկը առաւ, երկինք նայեցաւ, օրհնեց
ու կտրեց նկանակները ու տուաւ
աշակերտներուն, որ անոնց առջեւը դնեն.
եւ երկու ձուկն ալ բաժնեց ամենուն:
42 Ամենքն ալ կերան ու կշտացան. (43) Ու տասներկու
կողով լեցուն կտորները վերցուցին,
44 եւ ձուկերէն ալ: Եւ ուտողները հինգ
հազար մարդու չափ կային:
45 Եւ նոյն ժամուն աշակերտները ստիպեց,
որ նաւը մտնեն, եւ իրմէն առաջ
երթան միւս կողմը Բեթսայիդա, մինչեւ
46 որ ինք ժողովուրդը արձակէ: Եւ զա-
նոնք ճամբայ դնելով լեռը ելաւ աղօթք ը-

Digitized by Google

նելու։ Ու երբոր իրիկուն եղաւ, նաւը 47
ծովին մէջ տեղն էր՝ ու ինքը ցամաքը։
Եւ տեսաւ անոնք որ կը տառապէին հովէն 48
Թի քաշելու ատեննին, ինչու որ հովը ի-
րենց հակառակ էր. և գիշերուան չոր-
րորդ պահուն անոնց՝ ծովին վրայ քալե-
լով կու գայ անոնց, ու կ'ուզէր անոնցմէ
անցնիլ։ Անոնք երբոր տեսան որ ծովին 49
վրայ կը քալէր, կարծեցին թէ աչքի երե-
ւոյթ բան մըն է, ու կանչըռտեցին։
Ինչու որ ամէնն ալ անիկայ տեսան, ու 50
խռովեցան. և ինքը շուտ մը խօսեցաւ ա-
նոնց՝ ու ըսաւ. Քա՛ջ եղէք, ես եմ մի՛
վախնաք։ Եւ նաւը ելաւ անոնց քովը, 51
ու հովը դադրեցաւ, և ալ աւելի ապշե-
ցին միտքերնուն մէջ, և շատ կը զարմանա-
յին։ Վասն զի հացին վրայ բրած հրաշ- 52
քը չիմացան. ինչու որ սրտերնին թըմ-
րած էր։

Եւ երբոր անկից անցան, եկան 53
Գենեսարէթի երկիրը։ Ու երբոր նաւէն 54
ելան, այն տեղի մարդիկը իսկոյն ճանչցան
անիկայ. Եւ ասդին անդին վազեցին բո- 55
լոր գաւառը, սկսեցին մահիճներով
հիւանդները բերել՝ ուր որ կը լսէին թէ
հոն է։ Եւ ուր որ կը մտնէր՝ գեղերը կամ 56
քաղաքները կամ ագարակները, հրապա-
րակներուն մէջ կը դնէին ցաւագարները,
ու կ'աղաչէին իրեն՝ որ գոնէ իր լաթերուն
ծայրին դպչին. և անոնք որ մերձեցան
դպան՝ բժշկուեցան։

Digitized by Google

## ԳԼ. Է.

1 Երբ իր քովը ժողվուեցան փարիսեցինե-
րը ու դպիրներէն ոմանք՝ որ Երուսաղէ-
2 մէն եկած էին։ Երբ իրենք տեսան որ ա-
նոր աշակերտներէն ոմանք՝ պիղծ ձեռքով,
այսինքն՝ առանց լուացուելու հաց կ'ու-
3 տէին, մեղադրեցին։ Ինչու որ փարիսե-
ցիները ու բոլոր Հրեաները մինչև որ ա-
ղէկ մը ձեռքերնին չլուան, հաց չեն ու-
տեր. քանզի ծերերուն աւանդութիւնը
4 կը բռնեն. Երբ շուկայէն որ կու գան՝ թէ
որ առաջ չլուացուին, չեն ուտեր. և ու-
րիշ շատ բաներ կայ՝ որ կ'ընդունին բըռ-
նել, այսինքն գաւաթներու և փարչերու
ու պղնձէ ամաններու և անկողիններու
5 լուացմունքներ։ Ան ատենը փարիսեցինե-
րը ու դպիրները հարցուցին անոր, թէ
Ինչո՞ւ քու աշակերտներդ ծերերուն աւան-
դութեանը պէս չեն երթար, հապա պիղծ
6 ձեռքով հաց կ'ուտեն։ Անիկայ պատաս-
խան տուաւ՝ ու ըսաւ անոնց, թէ Աղէկ
մարգարէութիւն ըրաւ Եսայի՝ ձեզի կեղ-
ծաւորներուդ համար, ինչպէս ըսաւ. Այս
ժողովուրդը զիս շրթունքներով կը մեծա-
րէ, և իրենց սիրտերը հեռացած զատուած
7 են ինծմէ։ Պարապ տեղը զիս կը պաշ-
տեն. մարդոց պատուիրած վարդապե-
8 տութիւնները կը սորվեցընեն։ Աստու-
ծոյ պատուիրանքը թողեր էք, մարդոց
աւանդութիւնը կը բռնեք. փարչերու և

գաւաթներու լուացմունքներ, և ասոնց
նման շատ ուրիշ բաներ կ'ընէք: Ու ը- 9
սաւ անոնց. Աղէկ կ'անարգէք Աստուծոյ
պատուիրանքը, որ ձեր աւանդութիւնը
հաստատ պահէք: Ինչու որ Մովսէս կ'ը- 10
սէ. Քու հայրդ ու մայրդ պատուէ՛. և
ո՛վ որ իր հօրը կամ մօրը համար չարա-
խօսութիւն ընէ՝ մահով թող մեռնի:
Բայց դուք կ'ըսէք. Թէ որ մէկը հօրը 11
կամ մօրը ըսէ. Ան բանը որ ինծմէ պիտի
շահիս՝ Աստուծոյ տալու կորբան է, (որ
ըսել է՝ ընծայ.) ազատ կ'ըլլայ անկէ.
Ու ալ թող չէք տար անոր բան մը ընել 12
հօրը կամ մօրը: Ու Աստուծոյ խօսքը 13
կ'անարգէք ձեր աւանդութիւնովը, որ
կ'աւանդէք. և ուրիշ շատ բաներ կ'ընէք
որ ասոր նման է:

Ու բոլոր ժողովուրդը իր քովը կանչե- 14
լով՝ ըսաւ անոնց. Լսեցէ՛ք ինծի ամէնքդ
և հասկցէ՛ք: Բան մը չկայ որ դուրսէն 15
մարդուն ներսը մտնէ, ու կարող ըլլայ
զանիկայ պղծելու. հապա ան որ անկից
կ'ելլէ, անիկայ է որ մարդը կը պղծէ: Ո՛վ 16
որ լսելու ականջ ունի, թո՛ղ լսէ:

Ու երբոր ան բազմութենէն զատուե- 17
լով տուն մտաւ, աշակերտները հարցու-
ցին իրեն ան առակին համար: Ու ըսաւ 18
անոնց. Դո՞ւք ալ աստանկ անմիտ էք.
չէ՞ք իմանար թէ՝ ամէն ինչ որ դուրսէն
մարդուն ներսի դին կը մտնէ՝ չկրնար անի-
կայ պղծել. Ինչու որ չէ՛ թէ անոր սրտին 19

Digitized by Google

սիրտը կը մտնէ, հապա փորը. և դուրս
կ'ելլէ, ու բոլոր կերածները կը մաքրէ ։
20 Եւ կ'ըսէր, Թէ ինչ որ կ'ելլէ մարդուն
21 ներսէն, անիկայ մարդը կը պղծէ ։ Ին-
չու որ ներսէն մարդոց սրտէն կ'ելլեն չա-
րութեան խորհուրդները, շնութիւններ,
22 պոռնկութիւններ, Գողութիւններ, սպա-
նութիւններ, ագահութիւններ, չարու-
թիւններ, նենգութիւններ, գիջութիւն,
գէշ աչք, հայհոյութիւն, ամբարտաւա-
23 նութիւն, անզգամութիւն ։ Այս բոլոր
չար բաները ներսէն կ'ելլեն՝ և կը պղծեն
մարդը ։
24 Ու անկից ելլելով՝ եկաւ Տիւրոսի և
Սիդոնի կողմերը. և տուն մտնելով չէր
ուզեր որ մէկուն յայտնուի, բայց չկրցաւ
25 ծածկուիլ ։ Ինչու որ կնիկ մը՝ որուն
աղջիկը կը տանջուէր պիղծ դևէ, լսեց ա-
նոր վրայով. եկաւ անոր առջևը ինկաւ ։
26 Եւ այն կնիկը հեթանոս էր՝ ազգով Փիւ-
նիկ Ասորի. ու կ'աղաչէր անոր՝ որ դևը
27 իր աղջիկէն հանէ ։ Եւ Յիսուս ըսաւ ա-
նոր. Թո՛ղ տուր, առաջ տղաքը կշտա-
նան. ինչու որ աղէկ չէ տղոցը հացը
28 առնել, ու շուներուն ձգել ։ Անիկայ
պատասխան տուաւ՝ ու ըսաւ. Տէ՛ր՝ շու-
ներն ալ տղոցը սեղանին փշրանքներէն կը
29 կերակրուին ։ Ու ըսաւ անոր. Այս խօս-
քիդ համար գնա՛, քու աղջիկէդ դևը ե-
30 լաւ ։ Գնաց իր տունը, և գտաւ դևը
ելած, ու աղջիկը որ անկողինին վրայ
ինկած դրուած էր ։

Ու նորէն Տիւրոսին և Սիդոնին սահմանն- 31
ներէն ելաւ՝ ու եկաւ Գալիլիացւոց ծովե-
զերքը Դեկապոլիսի սահմաններուն մէջէն ։
Եւ մէկը բերին անոր առջին՝ խուլ ու 32
համր, և կ՚աղաչէին որ անոր վրան ձեռք
դնէ ։ Ու ժողովուրդէն մէկդի առնելով 33
անիկայ, իր մատները անոր ականջներուն
մէջը խոթեց՝ ու հոն թուքաւ, և անոր
լեզուէն բռնեց ։ Երկինքը նայեցաւ՝ հա- 34
ռաչեց ու ըսաւ անոր ։ Եփփաթա, (որ
ըսել է՝ բացուէ՛ ։) Ու նոյն ժամուն ա- 35
նոր ականջները բացուեցան, և լեզուին
կապերը քակուեցան, ու շիտակ կը խօսէր ։
Եւ պատուիրեց անոնց որ մէկու մը չըսեն ։ 36
և ո՛րչափ ինքը կը պատուիրէր անոնց, ա-
նոնք ալ աւելի կը քարոզէին ։ Ու չափէ 37
դուրս կը զարմանային՝ և կ՚ըսէին ։ Ամէն
բաները աղէկ ըրաւ անիկայ, որ խուլե-
րուն լսել կու տայ՝ և համրերուն խօսիլ ։

## ԳԼ. Ը.

Այն օրերը դարձեալ շատ ժողովուրդ 1
կար, և բան մը չունէին ուտելու ։ կանչեց
իր աշակերտները՝ ու ըսաւ անոնց ։ Կը 2
խղճամ այս ժողովուրդին վրայ ։ ինչու որ
հիմա երեք օր է՝ որ իմ քովս են, ու բան
մը չունին ուտելու ։ Եւ թէ որ անոնք 3
անօթի խրկեմ իրենց տուները՝ ճամբուն
մէջ պիտի մարին, ինչու որ ատոնցմէ ո-
մանք հեռու տեղէ եկած են ։ Պատաս- 4
խան տուին իրեն իր աշակերտները, Ա...

Digitized by Google

անապատին մէջ ուսկէ՞ց կրնայ հացով կշտա-
5 ցընել ասոնք : Իսկ հարցուց անոնց .
Քանի՞ նկանակ հաց ունիք . և անոնք ըսին .
6 Եօթը : Ու հրամայեց ժողո-
վուրդին՝ որ գետնին վրայ նստին . և ա-
ռաւ եօթը նկանակը՝ գոհացաւ , կտրեց
ու տուաւ աշակերտներուն՝ որ դնեն , և
7 դրին ժողովուրդին առջևը : Ու քիչ ձու-
կեր ունէին , և անոնք ալ օրհնեց՝ ու հրա-
8 մայեց որ դնեն : Կերան և կշտացան ,
ու մնացած կտորտանքները վերցուցին եօ-
9 թը զամբիղ : Իսկ ուտողները չորս հա-
զարի չափ կային . ու արձակեց զանոնք :
10 Իսկ շուտ մը նաւը մտնելով աշակերտնե-
րուն հետը՝ եկաւ Դաղմանութայի կող-
մերը :
11 Փարիսեցիները եկան՝ ու սկսեցին իրեն
հետ վիճաբանութիւն ընել , և անիկայ
փորձելով՝ իրմէն նշան մը կ'ուզէին երկին-
12 քէն : Ու իր հոգիին մէջ սաստիկ հառա-
չեց՝ և ըսաւ . Ի՞նչ է որ այս ազգը նշան
կ'ուզէ . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ այս
13 ազգին նշան պիտի չտրուի : Ու թողուց ա-
նոնք , նորէն նաւը մտաւ , ու գնաց ծո-
վին մէկալ կողմը :
14 Իսկ հաց առնելու մոռցան , ու նաւին
մէջը իրենց հետը միայն մէկ նկանակ մը ու-
15 նէին : Իսկ կը պատուիրէր անոնց՝ ու կ'ը-
սէր . Զգո՛յշ կեցէք փարիսեցիներուն
խմորէն , ու Հերովդէսեաններուն խմորէն :
16 Իսկ իրարու հետ կը մտմտային ու կ'ըսէին ,

թէ, Հաց չունենալնուս համար է : Գիտնա- 17
լով Յիսուս՝ ըսաւ անոնց . Ինչո՞ւ կը
մտմտաք սրտերնուդ մէջ թերահաւատներ ,
թէ հաց չունինք . տակաւին չէ՞ք իմանար՝
և չէ՞ք յիշեր , թմրութիւնը սրտերնիդ
բռներ է . Աչք ունիք՝ ու չէք տեսներ , 18
ականջ ունիք՝ ու չէք լսեր , և տակաւին
չէք իմանար ու չէք յիշեր : Երբոր հինգ 19
նկանակը հինգ հազարին մէջ կտրեցի ,
քանի՞ կողով լեցուն կտորուանք վերցու-
ցիք . ու ըսին անոր . Տասներկու : Եւ 20
երբոր եօթը նկանակը չորս հազարին մէջ
կտրեցի , քանի՞ զամբիւղ լեցուն կտո-
րուանք վերցուցիք . և անոնք ըսին . Եօ-
թը : Ու ըսաւ անոնց . Հապա ինչո՞ւ 21
չէք հասկընար :

Բեթսայիդա եկան , և անոր առջևը 22
կոյր մը բերին , ու կ'աղաչէին իրեն որ
դպչի անոր . Ու կոյրին ձեռքէն բռնեց՝ 23
գեղէն դուրս հանեց , թուքը անոր աչ-
քին՝ ու ձեռքը անոր վրան դրաւ , ու կը
հարցընէր անոր թէ բան մը կը տեսնէ՞ .
Նայեցաւ՝ և կ'ըսէր . Մարդիկներ կը 24
տեսնեմ ծառերու պէս՝ որ կը պտըտին :
Նորէն ձեռքը անոր աչքին վրայ դրաւ՝ 25
բացաւ , ու կը տեսնէր . ողջացաւ և հա-
մարձակ ամէն բան կը տեսնէր : Զանի- 26
կայ իր տունը ղրկեց ու ըսաւ . Գեղը մի՛
մտներ , հապա քու տունդ գնա՛ . ու եր-
բոր գեղը մտնես՝ գեղին մէջ մէկուն բան
չըսես :

Digitized by Google

27 Ու Յիսուս աշակերտներովը հետ մէկ-
տեղ Փիլիպպոսի Կեսարիային գեղերը ե-
լաւ . ու ճամբան կը հարցունէր աշակերտ-
ներուն՝ ու կ՚ըսէր . Ինծի համար ո՞վ կ՚ը-
28 սեն մարդիկ՝ թէ եմ : Պատասխան տուին
անոնք ու ըսին . Յովհաննէս Մկրտիչն է
կ՚ըսեն . և ուրիշները՝ Եղիան ; և ուրիշնե-
29 րը՝ Մարգարէներէն մէկը : Ըսաւ անոնց .
Բայց դուք ինծի համար ո՞վ կ՚ըսէք՝ թէ
եմ : Պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ
30 անոր . Դուն ես Քրիստոսը : Ու սաս-
տիկ պատուիրեց անոնց՝ որ իրեն համար
մէկուն չըսեն :
31 Ու սկսաւ սորվեցընել անոնց, թէ Պէտք
է որ Որդին մարդոյ շատ չարչարանքներ
ընդունի, ու երէցներէն և քահանայա-
պետներէն ու դպիրներէն անարգուի, ու
մեռնի, և երրորդ օրը յարութիւն առնէ :
32 Ու այն խօսքը յայտնի խօսեցաւ . և Պետ-
րոս մէկդի առաւ զանիկայ, սկսաւ անոր
33 դէմ զրուցել : Իսկ ինքը դարձաւ աշա-
կերտներուն նայեցաւ, չեխեց Պետրոսին՝
ու ըսաւ . Ետի՛ս գնա Սատանայ . ինչու
որ դուն Աստուծոյ բաները չես խորհիր ;
հապա մարդկային բաներ :
34 Ու ժողովուրդը աշակերտներուն հետ
մէկտեղ իրեն կանչելով՝ ըսաւ անոնց . Թէ
որ մէկը կ՚ուզէ իմ ետևէս գալ՝ թող իր
անձը ուրանայ, և իր խաչը վերցընէ՝ ու
35 իմ ետևէս գայ : Վասն զի ով որ կ՚ուզէ
իր անձը ազատելու՝ պիտի կորսնցընէ . ա-

Digitized by Google

նիկայ ։ Եւ ո՛վ որ աւետարանին համար իր
անձը կորսնցընէ՝ պիտի ազատէ զանիկայ ։
Ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհ- 36
քը վաստըկի , եւ իր անձը կորսնցընէ ։
Ինչու որ մարդ մը ի՞նչ կրնայ տալ իր ան- 37
ձին տեղը ։ Վասն զի ո՛վ որ զիս եւ իմ 38
խօսքերս ամօթ կը սեպէ այս շնացող ու
մեղաւոր ազգին մէջ , Մարդուն Որդին ալ
անիկայ ամօթ պիտի ընէ՝ երբոր իր
Հօրը եւ սուրբ հրեշտակներուն փառքովը
գայ ։ Եւ ըսաւ անոնց ․ Ճշմարիտ կ'ըսեմ 39
ձեզի ․ որ հոս ներկայ եղողներէն մէկ քա-
նիները կան , որոնք մահուան համը պիտի
չառնեն՝ մինչեւ որ տեսնեն Աստուծոյ թա-
գաւորութիւնը զօրութիւնով եկած ։

## ԳԼ ․ Թ ․

Եւ վեց օրէն ետեւ Յիսուս իր հետը ա- 1
ռաւ Պետրոսը ու Յակոբոսը եւ Յովհաննէս-
ը , ու անոնք մէկ բարձր լեռ մը հանեց
առանձին . եւ անոնց առջեւ այլակերպե-
ցաւ ։ Եւ իր լաթերը եղան փայլուն խիստ 2
ձերմակ , անանկ որ երկրի թափիչները չեն
կրնար անանկ ձերմկցընել ։ Եւ Եղիան 3
Մովսէսին հետը երեւցաւ անոնց , եւ Յիսու-
սին հետ կը խօսէին ։ Պատասխան տուաւ 4
Պետրոս՝ ու ըսաւ Յիսուսին . Ռաբբի՝
աղէ՛կ է մեզի հոս կենալ , ու իրեք խըրճիթ
շինենք . մէկը քեզի , եւ մէկը Մովսէսին ,
ու մէկը Եղիային ։ Վասն զի չէր գիտեր 5
ինչ կը խօսէր , ինչու որ զարհուրեր էին ։

Digitized by Google

6 Եւ մէկ ամպ մը հովանի եղաւ անոնց վրա-
յայ. ձայն մը եկաւ ամպէն՝ ու ըսաւ.
Ասիկայ է իմ սիրական Որդիս, ասոր
7 մտիկ ըրէք: Եւ յանկարծ ասդին անդին
որ նայեցան՝ ալ ուրիշ մէկը չտեսան, հա-
8 պա միայն Յիսուսը իրենց հետ: Եւ երբ
որ լեռնէն վար կ'իջնէին՝ պատուիրեց ա-
նոնց որ տեսածնին մէկու մը չպատմեն,
մինչև որ Որդին մարդոյ մեռելներէն յա-
9 րութիւն առնէ: Եւ անոնք ան խօսքը
միտերնին պահեցին, ու իրարու հետ կը
հարցընէին՝ թէ մեռելներէն յարութիւն
10 առնելը ի՞նչ է: Հարցուցին անոր՝ ու
ըսին. Ան ի՞նչ է որ դպիրները կ'ըսեն,
11 թէ պէտք է որ առաջ Եղիան գայ: Ա-
նիկայ պատասխան տուաւ անոնց՝ ու ը-
սաւ. Եղիան առաջ կու գայ՝ ամէն բանը
կարգի կը դնէ. բայց ինչպէս գրուած է
Որդւոյ մարդոյ համար, որ շատ բաներ
12 պիտի քաշէ՝ և անարգուի. Բայց ես ձեզի
կ'ըսեմ, որ Եղիան եկաւ, և ինչ որ ու-
զեցին՝ ըրին անոր, ինչպէս որ գրուած է
իրեն համար:

13 Ու աշակերտներուն քովը գալով՝ տեսան
շատ ժողովուրդ անոնց բոլորտիքը՝ և դպ-
պիրները, որ վիճաբանութիւն կ'ընէին ա-
14 նոնց հետ: Ու շուտ մը բոլոր ժողովուրդը
երբոր տեսան զանիկայ՝ զարմացան. և ա-
15 ռաջ վազելով՝ բարև կու տային իրեն: Ինք
հարցուց անոնց, թէ ի՞նչ վէճ կ'ընէք
16 անոնց հետ: Ժողովուրդէն մէկը պատաս-

Digitized by Google

[illegible] ընդունայն [illegible] պարտական է
[illegible] որ [illegible] [illegible] 17
[illegible] կը [illegible]
[illegible] կը [illegible]
կը [illegible] [illegible]
[illegible] [illegible] 18
[illegible] [illegible] ըսաւ. Ո՛վ ան-
հաւատ ազգ՝ մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի
ըլլամ, մինչեւ ե՞րբ ձեզի պիտի համբե-
րեմ. բերէք զանիկայ ինծի: Եւ [illegible] 19
[illegible] [illegible]
[illegible] մը [illegible]
[illegible] կը [illegible]: Եւ կը [illegible]
[illegible] ըսաւ [illegible]: Եւ [illegible] 20
[illegible]
[illegible] [illegible] 21
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] [illegible] 22
[illegible] որ [illegible]
[illegible] կը [illegible]: [illegible] 23
[illegible] մը [illegible] եւ ըսաւ: [illegible]
[illegible]
[illegible] 24
[illegible]
[illegible] կը [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Digitized by Google

26 տերը ըսին, թէ Մեռաւ: Եւ Յիսուս անոր
ձեռքէն բռնելով վերցուց զանիկայ. ու ան
27 կայնեցաւ: Եւ երբոր ինքը տուն մտաւ,
աշակերտները առանձին հարցուցին իրեն.
28 Մենք ինչո՞ւ չկրցանք հանել անիկայ: Եւ
ըսաւ անոնց. Այս տեսակը ուրիշ բանով
չելլեր, բայց միայն ծոմով ու աղօթքով:
29 Եւ ելան անկից Գալիլեայի մէջէն կ'անցնէին, ու չէր ուզեր որ մէկը գիտնայ:
30 Ինչու որ կը սորվեցընէր իր աշակերտներուն՝ ու կ'ըսէր անոնց, թէ Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը, և զանիկայ պիտի սպաննեն. ու երբոր սպաննուի՝ երրորդ օրը յարութիւն պիտի առ-
31 նէ: Եւ անոնք չէին հասկընար ան խօսքը, ու կը վախնային իրեն հարցընելու:
32 Եկաւ Կափառնայում, ու երբոր տուն մտաւ, հարցուց անոնց. Ի՞նչ վիճաբանութիւն կ'ընէիք ճամբան իրարու հետ:
33 Եւ անոնք լուռ կեցան. ինչու որ ճամբուն մէջ իրարու հետ վիճաբանութիւն կ'ընէին՝
34 թէ ով մեծ է: Ու երբոր նստաւ՝ կանչեց տասներկուքը, ու ըսաւ անոնց. Թէ որ մէկը կ'ուզէ առաջին ըլլալ, ամենուն պզտիկը պիտի ըլլայ, և ամենուն սպա-
35 սաւորը: Ու տղայ մը առաւ կայնեցուց անոնց մէջը. և իր գիրկը առնելով զա-
36 նիկայ՝ ըսաւ անոնց. Ո՛վ որ ասանկ տղոցմէն մէկը կ'ընդունի իմ անունովս՝ զիս կ'ընդունի. և ո՛վ որ զիս ընդունի, չէ թէ
37 զիս կ'ընդունի՝ հապա զիս խրկողը: Պա-

պատասխան տուաւ անոր Յովհաննէս ու ը-
սաւ. Վարդապետ՝ մէկը տեսանք՝ որ քու
անունովդ դեւեր կը հանէր, ու մեր հետեւէն
չէր գար, եւ անիկայ արգիլեցինք։ Իսկ 38
Յիսուս ըսաւ. Մի՛ արգիլէք անիկայ. ինչ-
չու որ մէկը չկայ որ իմ անունովս հրաշք-
ներ գործէ, ու կարող ըլլայ զիս հայհո-
յելու։ Քանզի ան որ մեզի հակառակ 39
չէ, մեր կողմէն է։ Իսկ ով որ ձեզի գա- 40
ւաթով մը ջուր խմցնէ իմ անունովս, թէ
դուք Քրիստոսինն էք, ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի՝ Անիկայ իր վարձքը պիտի չկորսն-
ցընէ։ Իսկ ով որ կը գայթակղեցնէ աս 41
պզտիկներէն մէկը՝ որ ինծի կը հաւատան,
շատ աղէկ էր անոր՝ որ իշու աղացքի քար
մը իր վիզէն կախուէր, ու ծովը ձգուէր։
Եւ թէ որ քու ձեռքդ քեզ կը գայթակ- 42
ղեցընէ՝ կտրէ՛ նետէ՛ զանիկա. ինչու որ
աղէկ է քեզի պակասաւոր մտնել յաւի-
տենական կեանքը, քան թէ երկու ձեռք
ունենալ՝ ու գեհէնը երթալ, չմարելու
կրակին մէջը։ Ուր որ անոնց որդը չմեռ- 43
նիր, եւ կրակը չմարիր։ Իսկ թէ որ քու 44
ոտքդ քեզ կը գայթակղեցնէ՝ կտրէ՛ նետէ՛
անիկայ քեզմէն. աղէկ է քեզի կաղ մտնել
յաւիտենական կեանքը, քան թէ երկու
ոտք ունենալ՝ ու գեհէնը իյնալ չմա-
րելու կրակին մէջը։ Ուր որ անոնց որդը 45
չմեռնիր, եւ կրակը չմարիր։ Իսկ թէ որ 46
քու աչքդ քեզ կը գայթակղեցնէ, զանիկա
հանէ՛ անիկայ. աղէ՛կ է քեզի մէկ աչքով

Աստուծոյ թագաւորութիւնը մտնել, քան
թէ երկու աչք ունենալ՝ ու գեհենը իյ-
47 նալ. Ուր որ անոնց որդը չմեռնիր, և
48 կրակը չմարիր։ Ինչու որ ամէն բան կը-
րակով պիտի աղուի, և ամէն ողջակէզ
49 աղով պիտի աղուի։ Աղը աղէկ է, բայց
թէ որ աղը անհամնայ՝ ինչո՞վ պիտի համե-
մնայ. ուրեմն դուք աղը ձեր անձին
մէջը պահեցէք, և իրարու հետ խաղա-
ղութիւն ըրէք։

## ԳԼ. Ժ.

1 Ետև անկից ելլելով Հրէաստանին կող-
մերը Յորդանանու միկալ դին եկաւ. ու
նորէն ժողովուրդը դիզուած կ'երթային ի-
րեն. և ինչպէս որ սովորութիւն ունէր՝
դարձեալ կը սորվեցընէր անոնց.
2 Ու Փարիսեցիները եկան փորձելով կը
հարցընէին անոր՝ ու կ'ըսէին, թէ Օրի-
նաւո՞ր է որ էրիկը իր կնիկը արձակէ։
3 Ինքը պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ.
4 Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց։ Իսկ ա-
նոնք ըսին. Մովսէս հրաման տուաւ զատ-
5 ուելու գիր գրել, ու արձակել։ Պա-
տասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոնց.
Ձեր սրտին կարծրութեանը համար գրեց
6 ձեզի այս պատուէրը. Բայց արարածին
սկիզբէն Աստուած անոնք արու և էգ ը-
7 րաւ, ու ըսաւ. Անոր համար մարդը իր
հայրը ու մայրը պիտի ձգէ, և իր կնկանը
8 ետևէն երթայ. Ու երկուքը մէկ մարմին

Digitized by Google

մարմին ըլլան. ու ա՛լ անոնք երկու չեն՝
հապա մէկ մարմին են։ Ուրեմն ինչ որ Աստ- 9
ուած միացուցեր, մարդ թող չզատէ։
Իսկ տունը աշակերտները նորէն նոյն բանին 10
համար հարցուցին իրեն։ Ու ըսաւ անոնց, Թէ 11
որ մէկը իր կինը արձակէ՝ ու ուրիշ մը
առնէ, շնութիւն կ'ընէ։ Ու կին մը թէ 12
որ իր էրիկէն բաժնուի ու ուրիշ էրկան մը ըլ-
լայ, շնութիւն կ'ընէ։

Իսկ մանր տղաք բերին իրեն, որ ձեռք 13
դնէ անոնց վրայ. բայց աշակերտները
կը չէխէին բերողները։ Յիսուս երբոր 14
տեսաւ, սրդողելով ըսաւ անոնց՝ ու ը-
սաւ. Թող տուէք այս մանր տղաքը, որ
ինծի գան, և մի՛ արգիլէք զանոնք. վասն
զի այսպիսիներունն է Աստուծոյ թագաւո-
րութիւնը։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. 15
Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտ-
տիկ տղու մը պէս չընդունի, անիկա անոր
մէջ չի մտներ։ Ու անոնք գիրկը առնելով 16
վրանին ձեռքը դրաւ՝ ու օրհնեց զանոնք։
Երբոր ինքը ճամբայ ելաւ՝ մէկը 17
առջև՝ ծունր դրաւ ու հարցուց. Բարի
վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտ-
ենական կեանքը ժառանգեմ։ Իսկ Յի- 18
սուս ըսաւ անոր. Ինչո՞ւ զիս բարի կ'ը-
սես. մէկէն զատ բարի չկայ, բայց մէկը՝ որ
է Աստուած։ Պատուիրանքները գիտես. 19
Մի՛ շնար, մի՛ սպաններ, մի՛ գողնար, մի՛
սուտ վկայեր, մի՛ զրկեր, հայրդ ու մայրդ պատուէ.

Digitized by Google

20 տուէ՛ ։ Անիկայ պատասխան տուաւ՝ և
ըսաւ իրեն․ Վարդապետ՝ ատոնք ամէնը
տղայութենէս 'ի վեր ըրի․ ուրիշ ալ ի՞նչ
21 պակաս ունիմ։ Եւ Յիսուս անոր նայե-
լով սիրեց զանիկայ՝ ու ըսաւ անոր․ Մէկ
բան մը քեզմէ պակաս է․ թէ որ կ'ուզես
կատարեալ ըլլալ, գնա՛ ինչ որ ունիս ծա-
խէ՛ ու աղքատներուն տո՛ւր, և երկինքը
գանձ պիտի ունենաս․ ու խաչը ա՛ռ՝ և ե-
22 կո՛ւր իմ՝ ետեւէս։ Եւ անիկայ այն խօսքին
խոժոռելով գնաց տրտմած․ ինչու որ շատ
23 ստացուածք ունէր։ Եւ Յիսուս իր բո-
լորտիքը նայելով՝ ըսաւ աշակերտներուն․
ի՞նչպէս դժուար է անոնց որ հարստու-
թիւն ունին՝ Աստուծոյ թագաւորութիւնը
24 մտնել։ Ու աշակերտները զարմացեր էին
անոր խօսքերուն վրայ․ բայց Յիսուս նո-
րէն պատասխան տուաւ իրենց՝ և ըսաւ․
Որդեակներ՝ ո՜րչափ դժուարին է իրենց
հարստութեանը յուսացողներուն Աստու-
25 ծոյ թագաւորութիւնը մտնել։ Դիւրին
է որ ուղտը ասեղին ծակէն անցնի, քան
թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւ-
26 նը մտնէ։ Եւ անոնք՝ ալ աւելի կ'ըզար-
մանային՝ ու կ'ըսէին իրարու․ Ուրեմն ո՞վ
27 կրնայ փրկուիլ։ Յիսուս անոնց նայելով
ըսաւ․ Ատիկայ մարդու կողմանէ անհնար
28 է, բայց ոչ Աստուծոյ կողմանէ։ Պետ-
րոս սկսեց ըսել անոր․ Ահա՛ մենք ամէն
բան թողուցինք՝ և քու ետեւէդ եկանք։
29 Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ․

Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Մէկը չկայ որ
թողուց տուն, կամ եղբայրներ, կամ
քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ որ-
դիք, կամ արտեր, իմին համար կամ ա-
ւետարանին համար, Որ պիտի չառնէ հա- 30
րիւրապատիկ հիմա այս ատենս՝ տուներ,
ու եղբայրներ, և քոյրեր, ու մայրեր, և
որդիներ, ու արտեր հալածանքի հետ.
և գալու աշխարհին մէջ յաւիտենական
կեանքը: Բայց շատ առաջիններ՝ պի- 31
տի ըլլան յետին, ու յետիններ՝ առաջին:
Եւ դէպ 'ի Երուսաղէմ կ'ելլէին՝ ու- 32
դեռ ճամբուն մէջ էին. ու Յիսուս ա-
նոնցմէ առաջ կ'երթար, և ետեւէն գացող-
ները կը զարմանային, ու կը վախնային:
Իսկ նորէն առաւ տասներկուքը առանձին,
սկսեց ըսել անոնց ինչ բաներ որ իրեն պի-
տի պատահէին. Ու — ըսաւ —. Ահա՛ Երուսա- 33
ղէմ կ'ելլենք. ու Որդին մարդոյ պիտի
մատնուի քահանայապետներուն և դպիր-
ներուն, ու զանիկայ մահուան պիտի դա-
տապարտեն, և հեթանոսներուն պիտի
մատնեն զանիկայ. Եւ զանիկայ ծաղր պի- 34
տի ընեն, ու ծեծեն զանիկայ, և թքնեն
անոր, ու մեռցընեն, և երրորդ օրը յա-
րութիւն պիտի առնէ:
Եւ իր քովը գացին Յակոբոս ու Յով- 35
հաննէս՝ Զեբեդեոսի որդիքը, և ըսին ի-
րեն. Վարդապետ՝ կ'ուզենք որ ինչ
որ խնդրենք՝ մեզի ընես: Իսկ ինքը ըսաւ 36
անոնց. Ինչ կ'ուզէք ինծմէ, որ ձեզի ը-

Digitized by Google

37 նեմ ։ Ու անոնք ըսին իրեն․ Շնորհէ՛
մեզի որ նստինք՝ մեզմէ մէկը աջ կողմդ,
և մէկալը՝ ձախ կողմդ քու փառքիդ մէջը։
38 Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ ա-
նոնց․ Չէք գիտեր ի՛նչ կը խնդրէք․
կրնա՞ք խմել այն գաւաթը որ ես պիտի
խմեմ, կամ այն մկրտութիւնովը մկրտուիլ՝
39 որ ես պիտի մկրտուիմ։ Ու անոնք ըսին
իրեն, Կրնանք․ ու Յիսուս ըսաւ անոնց․
Այն գաւաթը որ ես պիտի խմեմ՝ պիտի
խմէք, և այն մկրտութիւնովը որ ես մկրտ-
40 տուելու եմ՝ պիտի մկրտուիք․ Բայց իմ
աջ կողմս և ձախ՝ կողմս նստեցընելը՝ իմս
չէ տալը․ հապա անոնց պիտի տրուի,
41 որոնց որ պատրաստուած է։ Ու մէկալ
տասը ալ որ լսեցին, սկսեցին Յակոբոսին
42 ու Յովհաննէսին բարկանալ։ Ու Յի-
սուս իրեն կանչեց անոնք՝ ու ըսաւ անոնց․
Գիտէք որ հեթանոսներուն իշխան ը-
սուածները՝ անոնց՝ վրայ կը տիրեն, և ի-
43 րենց մեծամեծները վրանին կ՚իշխեն։ Բայց
ձեր մէջը անանկ պիտի չըլլայ․ հապա
ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ՚ուզէ, անիկայ
44 ձեզի սպասաւոր պիտի ըլլայ․ Ու ձեզմէ
ով որ առաջին ըլլալ կ՚ուզէ, անիկայ ձեր
45 ամենուն ծառայ պիտի ըլլայ։ Քանզի
Որդին մարդոյ ալ չեկաւ սպասաւորութիւն
ընդունելու, հապա սպասաւորութիւն ը-
նելու, ու իր կեանքը փրկանք մը տալու
շատերուն համար։
46 Ու եկան Երիքով․ ու երբոր Երիքո-


Digitized by Google

միին հետ աշակերտներովը՝ և շատ ժողո-
վուրդներով, Տիմէոսի որդին կոյր Բար-
տիմէոսը Ճամբուն վրայ մուրացկան նստեր
էր։ Երբոր լսեց՝ թէ Յիսուս Նազովրե- 47
ցին է, սկսեց աղաղակել՝ ու ըսել. Յի-
սուս որդի Դաւթի՝ ողորմէ՛ ինծի։ Ու 48
շատերը անիկայ կը չեխէին՝ որ լռէ. բայց
ան՝ ալ աւելի կ՚աղաղակէր, Որդի՛ Դաւ-
թի՝ ողորմէ՛ ինծի։ Յիսուս կայնեցաւ՝ և 49
հրաման ըրաւ որ անիկայ կանչեն. կանչե-
ցին կոյրը՝ ու ըսին անոր. Քա՛ջ եղիր՝
ելի՛ր՝ քեզ կը կանչէ։ Ու անիկայ իր 50
լաթերը ձգեց՝ ելաւ ու եկաւ Յիսուսին։
Պատասխան տուաւ անոր Յիսուս՝ ու ը- 51
սաւ. Ի՞նչ կ՚ուզես որ քեզի ընեմ. կոյ-
րը ըսաւ իրեն. Ռա՛բբունի՝ որ աչքս բա-
ցուի։ Ու Յիսուս ըսաւ իրեն. Գնա՛ 52
քու հաւատքդ քեզ բժշկեց. ու շուտ մը
բացուեցաւ, և Ճամբան անոր ետևէն կ՚եր-
թար։

## ԳԼ. ԺԱ

Ու երբոր Երուսաղեմի մօտեցան՝ Բեթ- 1
փագէ ու Բեթանիա՝ Ձիթենեաց լեռանը
մօտ, աշակերտներէն երկուքը խրկեց,
Ու ըսաւ անոնց. Գացէ՛ք դուք ատ գե- 2
ղը որ ձեր դիմացն է. ու հոն մտնելնուդ-
պէս՝ կապած աւանակ մը պիտի գտնէք,
որուն վրայ մարդ մը չնստաւ. արձըկե-
ցէք անիկայ ու բերէք։ Ու թէ որ մէ- 3
կը ըսէ ձեզի, թէ ինչո՞ւ ատ աւանակը

Digitized by Google

կ'արձըկէք, ըսէք թէ՝ Իր
և շուտ մը հոս պիտի
4 Գնացին՝ և գտան աւան
կապած դուրսը փողոցին
5 կեցին զանիկայ : Ու հո
մանք ըսին անոնց. Ի՞ն
6 կ'արձըկէք աս աւանակը
սին անոնց ինչպէս որ Յ
7 իրենց թող տուին : Ա
բերին, ու անոր վրայ
8 ցին, և նստաւ անոր վր
իրենց հանդերձները ճա
փուէին, և ուրիշները ծա
9 կտրէին՝ ու ճամբուն վրա
առջևէն ու ետևէն կաց
կէին ու կ'ըսէին. Ովսա
10 Օրհնեալ ես դուն՝ որ
կու գաս. օրհնեալ է ան
րը թագաւորութիւնը
կինքը՝ խաղաղութիւն,
ռաւորութիւն :
11 Ու Յիսուս մտաւ Երու
ճարը, և չորս կողմը
յեցաւ. և ատենը որ
Թանիա ելաւ տասներկ
տեղ :
12 Ու հետևեալ օրը եր
13 կ'ելլէին՝ անօթեցաւ :
ըևներով լեցուն թուզի
ու եկաւ որ անոր վրայ
երբոր անոր եկաւ՝ տերև

Digitized by Google

մը չգտաւ. ինչու որ դեռ թուզին ատենը
չէր։ Պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոր. 14
Մէյմըն ալ մէկը յաւիտեան քեզմէ պտուղ
չուտէ. և իր աշակերտները լսեցին։
Եկան Երուսաղէմ. ու տաճարը մտնե- 15
լով՝ սկսեց դուրս հանել ծախողները և
գնողները որ տաճարին մէջն էին. և ստակ
փոխողներուն սեղանները ցիրուցան ըրաւ,
ու աղաւնի ծախողներուն աթոռները կոր-
ծանեց. Ու թող չէր տար՝ որ մէկը տա- 16
ճարին մէջէն աման մը անցընէ։ Ու կը 17
սորվեցընէր ու կ՚ըսէր անոնց. Գրուած է
թէ՝ Իմ տունս աղօթքի տուն պիտի ըսուի
բոլոր հեթանոսներուն, ու դուք ատիկայ
աւազակներու այր ըրիք։ Քահանայա- 18
պետները ու դպիրները լսեցին, և կը
փնտռէին՝ թէ ի՛նչպէս անիկայ կորսընցը-
նեն, բայց կը վախնային իրմէն. ինչու որ
բոլոր ժողովուրդը զարմացեր էր անոր
վարդապետութեանը վրայ։ Ու երբոր 19
իրիկուն եղաւ՝ քաղաքէն դուրս ելան։
Ու առտուանց երբոր անկից կ՚անցնէին, 20
թուզին ծառը տեսան արմատէն չորցած։
Պետրոսին միտքը եկաւ՝ ու ըսաւ անոր. 21
Ռաբբի՛ ահա՛ թուզին ծառը որ անիծեցիր՝
չորցեր է։ Պատասխան տուաւ Յիսուս՝ 22
ու ըսաւ անոնց. Ուզէ որ Աստուծոյ հա-
ւատքը ունենաք, Ճշմարիտ կ՚ըսեմ ձե- 23
զի. Ո՛վ որ աս լեռանը ըսէ՝ Ելի՛ր ու
ծովը ինկիր, և իր սրտին մէջը չտարակու-
սի, հապա հաւատայ թէ ի՛նչ որ ըսէ՝

Digitized by Google

կ'ըլլայ, պիտի ըլլայ անոր՝ ինչ որ ըսէ :
24 Ասոր համար կ'ըսեմ ձեզի . Ինչ բան որ
աղօթք ընելով կը խնդրէք . և կը հաւա-
տաք թէ պիտի առնէք, պիտի ըլլայ ձե-
25 զի : Եւ երբոր աղօթքի կը կայնիք՝ նե-
րեցէք թէ որ մէկուն դէմ բան մը ունիք .
որպէս զի ձեր Հայրն ալ որ երկինքն է,
26 ներէ ձեզի ձեր յանցանքները : Բանզի
թէ որ դուք չներէք, ձեր Հայրն ալ՝ որ
երկինքն է, չներեր ձեզի ձեր յանցանք-
ները :
27 Նորէն Երուսաղէմ եկան, ու տաճա-
րին մէջ երբոր ժուռ կու գար՝ քահանա-
յապետները և դպիրները ու ծերերը ե-
28 կան իրեն, Ու ըսին իրեն . Ի՞նչ իշխա-
նութիւնով կ'ընես ատ բանը, և ո՞վ
29 տուաւ քեզի ատ իշխանութիւնը : Պա-
տասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոնց .
Ես ալ ձեզի բան մը հարցընեմ՝ ինծի
պատասխան տուէք, ու ես պիտի ըսեմ
ձեզի՝ ինչ իշխանութիւնով կ'ընեմ աս բա-
30 նը : Յովհաննէսին մկրտութիւնը երկին-
քէ՞ն էր՝ թէ մարդոցմէն, պատասխան
31 տուէք ինծի : Իրարու հետ կը մտածէին
ու կ'ըսէին . Թէ որ ըսենք՝ Երկինքէն,
կ'ըսէ մեզի . Հապա ինչո՞ւ չհաւատացիք
32 անոր . Բայց թէ որ ըսենք՝ Մարդոցմէն,
ժողովուրդէն կը վախնանք . ինչու որ ա-
մէնքը գիտէին Յովհաննէսը թէ մարգա-
33 րէ մըն էր : Պատասխան տուին՝ ու ը-
սին Յիսուսին . Չենք գիտեր . և Յիսուս

Digitized by Google

պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ. Ես ալ ձեզի չեմ ըսեր՝ ինչ իշխանութեանով կ՚ընեմ աս բաները։

## ԳԼ. ԺԲ

Եւ սկսեց առակներով խօսիլ անոնց 1
հետ՝ ու ըսել. Մէկ մարդ մը այգի տնկեց,
ու անոր բոլորտիքը ցանկ քաշեց. և խո-
րունկ հնձան փորեց՝ ու աշտարակ մը շի-
նեց. և տուաւ զանիկայ մշակներուն. ու
ինքը հեռու երկիր մը գնաց։ Եւ ատե- 2
նին ծառայ մը խրկեց մշակներուն, որ ան
մշակներէն այգիին պտուղէն առնէ։ Եւ 3
անոնք բռնեցին ծեծեցին անիկայ, ու պա-
րապ ճամբեցին։ Նորէն ուրիշ ծառայ մը 4
խրկեց անոնց. անոր ալ գլուխը վիրա-
ւորեցին՝ ու անարգուած թող տուին։ Եւ 5
նորէն ուրիշ մը խրկեց. ան ալ մեռցու-
ցին. և շատ ուրիշներ ալ, որը կը ծեծէին՝ 6
և որը կը սպաննէին։ Վերջապէս սիրելի
որդի մը ունէր, զանիկայ խրկեց անոնց
ամենէն ետքը՝ ըսելով. Կուցէ ամչնան
իմ որդիէս։ Բայց մշակները երբոր տե- 7
սան անիկայ որ կու գար, ըսին իրարու.
Ասիկայ է ժառանգը, եկէք մեռցընենք
սա, և ժառանգութիւնը մերը ըլլայ։
Ու բռնեցին անիկայ՝ մեռցուցին, և այ- 8
գիէն դուրս հանեցին։ Հիմա այգիին 9
տէրը ինչ պիտի ընէ. պիտի գայ ու
կորսնցընէ մշակները, և այգին ուրիշնե-
րուն ձեռքը պիտի տայ։ Եւ ան գիրը 10

Digitized by Google

չէ՞ք կարդացեր դուք, թէ Այն քարը՝ որ
շինողները անարգեցին, անիկայ անկիւնին
11 գլուխը եղաւ։ Ասիկայ Տէրոջմէն եղաւ,
և մեր աչքերուն զարմանալի է։
12 Ու կ՚ուզէին անիկայ բռնել, բայց ժո-
ղովուրդէն վախցան. քանզի գիտցան որ
ան առակը իրենց ըսաւ. և ձգեցին անի-
կայ ու գացին։
13 Ու փարիսեցիներէն ու Հերովդէսեան-
ներէն քանի մը հոգի ղրկեցին իրեն, որ
14 խօսքով բռնեն անիկայ։ Ու անոնք ե-
կան՝ խաբէութիւնով կը հարցնէին անոր ու
կ՚ըսէին. Վարդապետ՝ գիտենք որ ճշմարիտ
ես, և մէկու մը վրայով հոգ չէ. ինչու
որ մարդու երեսպաշտութիւն չես ըներ,
հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան
կը սորվեցընես. ուստի ըսէ՛ մեզի, Կայսե-
րին տուրք տալ օրինաւո՞ր է՝ թէ չէ՛.
15 տա՞նք՝ թէ չտանք։ Ու Յիսուս գիտ-
ցաւ անոնց կեղծաւորութիւնը, ըսաւ ա-
նոնց. Կեղծաւորներ՝ ինչո՞ւ զիս կը փոր-
ձէք, բերէք ինծի մէկ դահեկան մը որ
16 տեսնեմ։ Ու անոնք բերին. ու ըսաւ
անոնց. Որո՞ւնն է աս պատկերը՝ կամ
գիրը. և անոնք ըսին իրեն. Կայսերին։
17 Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ ա-
նոնց. Տուէք ան որ Կայսերին է՝ Կայսերին
տուէք, և ան որ Աստուծոյ է՝ Աստուծոյ
տուէք. ու զարմացան իրեն վրայ։
18 Սադուկեցիները եկան իրեն, որ կ՚ը-
սեն թէ յարութիւն չկայ. կը հարցնէին

Digitized by Google

իրեն՝ և կ՚ըսէին . Վարդապետ՝ Մովսէս 19
մեզի գրեց . Թէ որ մէկուն եղբայրը մեռ-
նի՝ ու կնիկը ձգէ , և զաւակ չձգէ , իր
եղբայրը անոր կնիկը պիտի առնէ , և իր
եղբօրը զաւակ հանէ ։ Ուստի մեր քովը 20
եօթը եղբայր կային . առջինը կնիկ ա-
ռաւ՝ ու մեռաւ , և զաւակ չձգեց . Եւ 21
երկրորդը առաւ անիկայ՝ ու մեռաւ , և
ան ալ զաւակ չձգեց . անանկ երրորդն
ալ առաւ անիկայ . Ու եօթն ալ , և 22
զաւակ չձգեցին . ամենէն ետքը կնիկն ալ
մեռաւ ։ Հիմա յարութեան ատենը՝ եր- 23
բոր յարութիւն առնեն , անոնցմէ որո՞ւն
կնիկ պիտի ըլլայ ան . ինչու որ եօթն ալ
անիկայ կնիկ ունեցան ։ Պատասխան 24
տուաւ Յիսուս՝ և ըսաւ անոնց . Ատոր
համար չէ՞ որ մոլորած էք , որ ո՛չ Գիր-
քը գիտէք , և ո՛չ Աստուծոյ զօրութիւնը ։
Քանզի երբոր մեռելներէն յարութիւն 25
առնեն , ո՛չ էրիկ մարդիկ կնիկ կ՚առնեն ,
ո՛չ ալ կնիկները էրիկ կ՚առնեն . հապա
երկինքի հրեշտակներուն պէս են ։ Բայց 26
մեռելներուն յարութեանը համար՝ թէ յա-
րութիւն կ՚առնեն , Մովսէսին գիրքին մէ-
ջը չէ՞ք կարդացեր մորենիին վրայ . ինչ-
պէս Աստուած անոր ըսաւ . Ես եմ՝ ըսաւ ,
Աբրահամին Աստուածը , ու Իսահակին
Աստուածը , և Յակոբին Աստուածը ։ Եւ 27
Անիկայ մեռելներուն Աստուած չէ՝ հապա
կենդանիներուն . ուրեմն դուք խիստ մո-
լորած էք ։

Digitized by Google

28 Ու դպիրներէն մէկը եկաւ՝ մտիկ կ՚ընէր
անոնց երբոր վիճաբանութիւն կ՚ընէին .
երբոր տեսաւ թէ աղէկ պատասխան տուաւ
անոնց , հարցուց անոր՝ ու ըսաւ . Առա-
29 ջին պատուիրանքը ո՞րն է ։ Ու Յիսուս
ըսաւ անոր . Ամենէն առաջինը աս է .
Լսէ՛ ով Իսրայէլ , մեր Տէր Աստուածը՝
30 մէկ Տէր մըն է . Ու պիտի սիրես քու Տէր
Աստուածդ քու բոլոր սրտէդ , և քու բո-
լոր անձէդ , ու քու բոլոր միտքէդ , և
քու բոլոր զօրութենէդ . ասիկայ է ա-
31 ռաջին պատուիրանքը ։ Ու երկրորդը ա-
սոր պէս . Քու ընկերդ քու անձիդ պէս
պիտի սիրես . ասոնցմէ մեծ՝ ուրիշ պա-
32 տուիրանք չկայ ։ Ու դպիրը ըսաւ իրեն .
Պինտ աղէկ Վարդապետ՝ շիտակ խօսեցար ,
թէ Աստուած մէկ է , և անկից 'ի զատ
33 ուրիշը չկայ ։ Ու բոլոր սրտէ , ու բոլոր
զօրութենէ , և բոլոր միտքէ անիկայ սի-
րելը , ու ընկերը անձին պէս սիրելը՝ ող-
34 ջակէզներէն և զոհերէն աւելի է ։ Ու
Յիսուս տեսաւ որ խելացութիւնով պա-
տասխան տուաւ , ըսաւ անոր . Աստուծոյ
թագաւորութենէն հեռու չես . և ալ ու-
րիշ մէկը չէր համարձակեր անոր բան մը
հարցընելու ։
35 Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ
երբոր տաճարին մէջ կը սորվեցընէր . Դպ-
պիրները ինչո՞ւ կ՚ըսեն , թէ Քրիստոս
36 Դաւիթի որդին է . Ու Դաւիթ ինքը
Սուրբ Հոգիով կ՚ըսէ . Տէրը իմ Տէրոջս



Digitized by Google

-ըսաւ. Նստէ՛ իմ աջ կողմս՝ մինչև որ
քու թշնամիներդ քու ոտքերուդ պատուան-
դան ընեմ ։ Ուրեմն՝ թէ որ Դաւիթ ին- 37
քը զանիկայ Տէր կ'անուանէ, ի՞նչպէս ա-
նոր որդին կ'ըլլայ. և շատ ժողովուրդ
ախորժով մտիկ կ'ընէր անոր ։

Եւ կ'ըսէր վարդապետելովը իր վարդապե- 38
տութեանը մէջ. Զգուշացէք դպիրներէն,
որոնք կ'ուզեն փառաւոր լաթերով պտը-
տիլ, ու շուկաներուն մէջ առջի բարևներ-
ըը կը փնտռեն, Եւ ժողովարաններուն 39
մէջ առաջին աթոռները, ու ընթրիքներուն
մէջ գլխաւոր տեղերը ։ Որոնք որբևայ- 40
րիներուն տուները կ'ուտեն, ու երևնալու
համար աղօթքը կ'երկընցնեն. ասոնք աւ-
ւելի դատապարտութիւն պիտի ընդու-
նին ։

Յիսուս գանձանակին դիմացը կեցած՝ 41
կը նայէր թէ ինչպէս ժողովուրդը գանձա-
նակին մէջը պղինձ փող կը ձգէ. և շատ
հարուստներ շատ բան ձգեցին ։ Մէկ աղ- 42
քատ որբի մը եկաւ՝ և երկու լումայ ձգեց, որ
մէկ նաքարակիտ մը կ'ընէ ։ Ու աշակերտ- 43
ները իրեն կանչեց՝ ըսաւ անոնց. Ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզի, որ այս խեղճ որբևայրին
գանձանակը ձգողներուն ամենէն աւելի
ձգեց ։ Վասն զի ամէնքը իրենց աւելցա- 44
ծէն ձգեցին. բայց ասիկայ իր աղքատու-
թենէն՝ ունեցածին բոլորը ձգեց՝ իր ու-
նեցած ապրուստը ։

## ԳԼ. ԺԳ

1 Ու երբոր տաճարէն դուրս ելաւ՝ իր ա-
շակերտներէն մէկը ըսաւ իրեն. Վարդա-
պետ՝ նայէ՛ ինչպէս քարեր են, և ինչ
2 կերպ շէնքեր։ Պատասխան տուաւ անոր
Յիսուս՝ ու ըսաւ. Կը տեսնե՞ս այս ամէն
շէնքերը. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ քար
մը քարի վրայ պիտի չմնայ հոն՝ որ չքա-
կուի։
3 Ու երբոր անիկայ Ձիթենեաց լեռը տա-
ճարին դիմացը նստեր էր, Պետրոսը ու
Յակոբոսը և Յովհաննէսը ու Անդրէասը
4 հարցուցին իրեն առանձին. Ըսէ՛ մեզի
ե՞րբ պիտի ըլլայ ատիկայ, և ի՞նչ նշան
պիտի ըլլայ՝ այս ամէն բաները կատարու-
5 ելու ատենին։ Պատասխան տուաւ Յի-
սուս՝ ու ըսաւ անոնց. Զգո՛յշ եղէք, մէ-
6 կը ձեզ չխաբէ. Ինչու որ շատերը պիտի
գան իմ անունովս, և ըսեն՝ թէ Ես եմ
Քրիստոսը, ու շատերը պիտի մոլորցընեն։
7 Բայց երբոր լսէք պատերազմներ և պա-
տերազմներու ձայներ, մի՛ չփոթիք, ին-
չու որ պէտք է ըլլալ. բայց տակաւին
8 վերջը չէ՛. Ինչու որ ազգ ազգի վրայ պի-
տի ելլէ, և թագաւորութիւն թագաւո-
րութեան վրայ. ու տեղ տեղ երկրաշար-
ժութիւններ պիտի ըլլան, սովեր՝ և մահ-
տարաժամներ ու խռովութիւններ. բայց
9 ան ամէնը՝ ցաւերուն սկիզբն է։ Դուք ձեզ-
ալ ատեաններու պիտի մատնեն, ու ժո-

Digitized by Google

ժողովարաններուն մէջը պիտի տանջուիք ,
ու դատաւորներու և թագաւորներու առջև
պիտի կենաք ինծի համար , անոնց վկա-
յութիւն ըլլալու , Եւ բոլոր հեթանոսնե- 10
րուն . բայց առաջ պէտք է որ աս աւե-
տարանս քարոզուի : Բայց երբոր ձեզ 11
մատնելու տանին , առաջուց հոգ մի՛ ը-
նէք՝ և մի՛ մտմըտաք , թէ ինչ պիտի
խօսիք . հապա ան ժամուն ինչ որ ձեզի
տրուի՝ անիկայ խօսեցէ՛ք . ինչու որ չէ՛ թէ
դուք էք որ կը խօսիք , հապա Հոգին
Սուրբ : Եղբայր եղբայրը մեռնելու պի- 12
տի մատնէ , ու հայրը որդին . և որ-
դիք հայրերուն վրայ պիտի ելլեն , ու պիտի
սպաննեն զանոնք : Եւ իմ անունիս հա- 13
մար ամենէն ատելի պիտի ըլլաք . բայց
ան որ մինչև վերջը կը համբերէ , պիտի
ապրի : Եւ երբոր տեսնէք աւերմունքին 14
պղծութիւնը , որ արժան չեղած տեղը կը
կենայ . (ան որ կը կարդայ՝ թող հասկը-
նայ .) ան ատենը անոնք որ Հրէաստանի
մէջն են՝ լեռները թող փախչին . Եւ ան 15
որ տանիքին վրայ է՝ թող տուն չիջնէ ,
ու չմտնէ իր տունէն բան մը վերցընե-
լու . Եւ ան որ արտն է՝ թող ետ չդառ- 16
նայ իր լաթերը առնելու : Բայց վա՜յ ծոց- 17
աւորներուն և ծիծ տուողներուն ան օրե-
րը : Աղօթք ըրէք՝ որ ձմեռը չըլլայ ա- 18
նիկայ : Ան օրերը անանկ նեղութիւն- 19
ներ պիտի ըլլայ , որ արարածոց սկիզբէն
մինչև հիմա անանկը ոչ եղաւ՝ ու ո՛չ պի-

20 պիտի ըլլայ ։ Եւ թէ որ Աստուած իր
ընտրեալներուն համար ան օրերը չկարճը-
ցընէր , մէկ մարմին մը պիտի չապրէր ․
բայց ընտրեալներուն համար՝ որոնք ընտ-
21 րեց , ան օրերը կարճըցուց ։ Ան ատենը
թէ որ մէկը ձեզի ըսէ , թէ Ահա՛ հոս է
Քրիստոսը՝ կամ ահա՛ հոն , մի՛ հաւա-
22 տաք ։ Ինչու որ սուտ քրիստոսներ և
սուտ մարգարէներ պիտի ելլեն , ու նը-
շաններ և հրաշքներ պիտի ցուցընեն , որ
եթէ կարելի է՝ ընտրեալներն ալ մոլոր-
23 ցընեն ։ Բայց դուք զգո՛յշ կեցէք , ահա՛
առաջուց ըսի ձեզի ամէնը ։
24 Բայց ան օրերը ան նեղութիւններէն
ետև՝ արևը պիտի խաւարի , և լուսինը իր
25 լոյսը պիտի չտայ ․ Ու երկինքէն աստղերը
պիտի թափթըփին , և երկինքի մէջ զօ-
26 րութիւնները պիտի շարժուին ։ Եւ ան
ատենը պիտի տեսնեն Որդին մարդոյ ամ-
պերով եկած , զօրութիւնով ու մեծ
27 փառքով ։ Եւ ան ատենը իր հրեշտակ-
ները պիտի խրկէ , ու իր ընտրեալները
պիտի ժողվէ չորս հովերէն՝ երկրի ծայրէն
28 մինչև երկինքի ծայրը ։ Ուստի դուք
թուզէն ծառէն առակ մը սորվեցէք ․ եր-
բոր անոր ճիւղերը դեռ կակուղ են՝ և
վրան տերևներ դուրս կու տայ , կը գիտ-
29 նաք որ ամառը մօտ է ․ Նոյն պէս ալ
դուք՝ երբոր կը տեսնէք աս ամէն բաները
եղած , գիտցէք որ մօտ է դռներուն քո-
30 վը ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , թէ Աս

ազգը պիտի չանցնի՝ մինչեւ ան ամէն բա-
ները ըլլայ ։ Երկինք ու երկիր պիտի 31
անցնին, և իմ խօսքերս պիտի չանցնին ։
Միայն թէ ան օրուանը ու ժամին համար 32
մէկը չգիտեր, ոչ հրեշտակները երկինքի
մէջ, և ոչ Որդին, հապա միայն Հայ-
րը ։ Զգոյշ կեցէք, արթուն մնացէք, 33
և աղօթք ըրէք. ինչու որ չէք գիտեր ա-
տենը ե՛րբ է ։ Ինչպէս հեռու աշխարհ գա- 34
ցող մարդ մը իր տունը թողու, ու իր
ծառաներուն իշխանութիւն տայ, և ամէն
մէկուն իր գործքը. ու դռնապանին ա-
պսպրէ որ արթուն կենայ ։ Ուրեմն ար- 35
թուն կեցէք. ինչու որ չէք գիտեր թէ
երբ կու գայ տունին տէրը, իրիկունը՝ թէ
կէս գիշերին՝ թէ հաւախօսին՝ թէ առ-
տուանց. Չըլլայ որ յանկարծակի գայ՝ 36
ձեզ քնանի մէջ գտնէ ։ Բայց ինչ որ 37
կ'ըսեմ ձեզի, ամենուն կ'ըսեմ, Արթուն
կեցէք ։

## ԳԼ. ԺԴ.

Եւ երկու օրէն ետեւ զատիկ ու բաղար- 1
ջակերք էր. քահանայապետները և դը-
պիրները կը փնտռէին՝ թէ ինչպէս նենգա-
քով մը անիկայ բռնեն մեռցնեն ։ Բայց 2
կ'ըսէին, Թէ Տօնին մէջ չէ՝ որ ժողո-
վուրդին մէջ խռովութիւն չըլլայ ։
Ու երբոր Բեթանիա էր բորոտ 3
Սիմոնին տունը սեղան նստած, կնիկ մը
եկաւ՝ որ շիշ մը պատուական անուշ նարդ-

Digitized by Google

զտուփ եղ ունէր , ու կոտրելով ան շիշը՝ անոր
4 գլխուն վրայ թափեց : Եւ աշակերտները
զայրացան ու կ'ըսէին . Ինչո՞ւ համար
5 ոչինչ տեղը գնաց այս եղը . Որ կրնար
հարիւր դահեկանէն աւելի կրնար ծա-
խուիլ այս եղը , ու աղքատներուն տրուիլ .
6 Եւ խիստ կը բարկանային անոր : Եւ Յիս-
ուս ըսաւ անոնց . Թո՛ղ տուէք անոր .
Ինչո՞ւ անհանգիստ կ'ընէք . ինծի որ բա-
7 րի գործ մը գործեց ատիկայ ինծի : Աղ-
քատները ամէն ատեն ձեր հետը ունիք ,
ու երբոր ուզէք՝ կրնաք բարիք ընել ա-
նոնց . բայց զիս ամէն ատեն ձեր հետը
8 չունիք : Ատիկայ ինչ որ ունէր՝ ըրաւ .
առաջուց իմ մարմինս օծեց՝ պատանքու-
9 թեան համար : Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի . Բոլոր աշխարհի մէջ՝ ուր որ այս
աւետարանը քարոզուի , ասոր ըրածն ալ
պիտի խօսուի՝ զինքը յիշելու համար :
10 Եւ Յուդա Իսկարիովտացին տասներ-
կուքէն մէկը՝ գնաց քահանայապետներուն ,
11 որ անիկայ մատնէ անոնց : Անոնք երբ-
որ լսեցին՝ խնդացին , ու իրեն ստակ տալ
խոստացան . ու կը փնտռէր՝ թէ ի՛նչպէս
պատեհութիւնով մը մատնէ զանիկայ :
12 Եւ բաղարջակերքին առջի օրը՝ որ զա-
տիկը կը մորթէին , աշակերտները ըսին ի-
րեն . Ո՞ւր կ'ուզես երթանք պատրաստենք՝
13 որ զատիկը ուտես : Եւ ինքը աշակերտա-
ներէն երկուքը խրկեց , ու ըսաւ անոնց .
Գացէք քաղաքը , ու երբոր քաղաքէն

մտնէք՝ մէկ մարդ մը պիտի պատահի ձե-
զի, որ ուսին վրայ ջուրի սափոր պիտի
ունենայ . գացէք անոր ետեւէն . Ու ո՛ր 14
տուն որ մտնէ, տանտիրոջը ըսէք .
Վարդապետը կ՚ըսէ . Ո՞ւր է հիւրանոցը՝
որ հոն աշակերտներովս զատիկը ուտեմ :
Ան ալ ձեզի զարդարուած մեծ վերնատուն 15
մը պիտի ցուցընէ . հո՛ն պատրաստեցէք 16
մեզի : Ու իր աշակերտները գացին պատ-
րաստելու . քաղաքը եկան, ու ինչպէս որ
իրենց ըսաւ՝ այնպէս գտան, և զատիկը
պատրաստեցին :

Ու երբոր իրիկուն եղաւ՝ տասներկու- 17
քին հետ մէկտեղ եկաւ : Ու երբոր նըս- 18
տան՝ և դեռ կ՚ուտէին, ըսաւ Յիսուս .
Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէ-
կը որ հիմա իմ հետս կ՚ուտէ՝ զիս պիտի
մատնէ : Ու անոնք սկսեցին տրտմիլ՝ 19
ու մէկիկ մէկիկ ըսել . Միթէ ե՞ս եմ, և
մէկալը՝ Միթէ ե՞ս եմ : Անիկայ պա- 20
տասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Ա՛ն
տասներկուքէն մէկը՝ որ ինծի հետ իր
ձեռքը պնակը թաթխեց : Իրաւ Որդին 21
մարդոյ պիտի երթայ՝ ինչպէս որ գրուած
է անոր համար . բայց վա՜յ այն մարդուն՝
որուն ձեռքովը Որդին մարդոյ պիտի մատ-
նուի . աղէկ էր անոր՝ որ ծնած ալ չըլ-
լար ան մարդը :

Ու դեռ որ կ՚ուտէին՝ Յիսուս հաց առ- 22
նելով օրհնեց ու կոտրեց՝ տուաւ անոնց,
ու ըսաւ . Առէք՝ ասիկայ է իմ մարմինս :

Digitized by Google

23 Եւ գաւաթը առաւ՝ գոհացաւ ու տուաւ
անոնց . և ամէնքն ալ անկէց խմեցին :
24 Ու ըսաւ անոնց . Ասիկայ է իմ արիւնս
նոր ուխտի, որ շատերուն համար կը թա-
25 փուի : Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, որ
Աէյմըն ալ որթին պտուղէն պիտի չխմեմ
մինչև այն օրը՝ երբոր անիկայ նոր խմեմ
Աստուծոյ թագաւորութեան մէջը :
26 Եւ գոհանալով՝ Ձիթենեաց լեռը ելան :
27 Եւ Յիսուս ըսաւ անոնց . Ամէնքդ ալ
աս գիշեր ինծմէ պիտի գայթակղիք . ին-
չու որ գրուած է, թէ Հովիւը պիտի
զարնեմ՝ ու ոչխարները ցիրուցան պիտի
28 ըլլան : Բայց յարութիւն առնելէս ետ-
քը՝ ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ :
29 Պատասխան տուաւ Պետրոս՝ և ըսաւ ա-
նոր . Թէպէտ ամէնքն ալ գայթակղին,
30 բայց ես չէ՛ : Եւ Յիսուս ըսաւ անոր .
Ճշմարիտ կ՚ըսեմ քեզի, որ Դուն ալ աս
գիշեր հաւը չխօսած, երեք հեղ պիտի ու-
31 րանաս զիս : Բայց Պետրոս աւելի կը
պնդէր՝ ու կ՚ըսէր . Թէ որ քեզի հետ
մեռնելու ալ ըլլամ՝ քեզ չեմ ուրանար .
անանկ ալ ամէնքը կ՚ըսէին :
32 Եկան այն գեղը որուն անունը Գեթ-
սեմանի էր, և ըսաւ աշակերտներուն .
Հոս նստեցէք՝ մինչև որ ես աղօթք ընեմ .
33 Եւ առաւ իր հետը Պետրոսը՝ ու Յակո-
բոսը՝ և Յովհաննէսը, ու սկսեց տրտմիլ
34 և հոգալ : Ան ատենը ըսաւ անոնց . Իմ
անձս մեռնելու չափ տրտում է . հոս կե-

Digitized by Google

մը՝ եւ արթո՛ւն մնացէք ։ Եւ քիչ մը 35
աջ գնաց, իր երեսին վրայ գետինը ին-
ւ, եւ աղօթք ըրաւ, որ եթէ կարելի
ան ժամը իրմէն անցնի ։ Ու ըսաւ ․ 36
բա՛ Հայր, ամէն բան քեզի դիւրաւոր
աս գաւաթը ինծմէ անցո՛ւր ․ բայց
թէ ինչպէս ես կ՚ուզեմ, հապա ինչպէս
դուն կը հաճիս ։ Եւ եկաւ գտաւ ա- 37
նոնք՝ որ կը քնանային, եւ ըսաւ Պետրո-
ի ․ Սի՛մոն կը քնանա՞ս, չկրցա՞ր ժամ
արթուն կենալ ։ Արթո՛ւն կեցէք՝ եւ 38
օթք ըրէք, որ փորձութեան մէջ չմտ-
ք ․ հոգին յօժար է ․ բայց մարմինը
ար ։ Ու նորէն գնաց աղօթք ըրաւ, 39
նոյն խօսքերը ըսաւ ։ Մէյմըն ալ 40
էն դարձաւ, եւ անոնք քունի մէջ գը-
ւ ․ (ինչու որ աչքերնին ծանրացած
ի) եւ չէին գիտեր թէ ի՛նչ պատասխան
ն իրեն ։ Երրորդ անգամ եկաւ, ու 41
աւ անոնց ․ Ասկէ ետեւ քնացէ՛ք ու
նգչեցէ՛ք ․ ինչու որ վերջը հասաւ, ե-
ւ ժամը, եւ ահա՛ Որդին մարդոյ մե-
ղաւորներուն ձեռքը կը մատնուի ։ Ելէ՛ք 43
թանք ․ ինչու որ՝ ահա՛ մօտեցաւ ան որ
ս պիտի մատնէ ։

Ու դեռ որ ինքը ա՛ս կը խօսէր՝ Յուդա 43
կարիովտացին՝ տասներկուքէն մէկը ե-
կաւ, ու իր հետը շատ բազմութիւն սուրե-
րով ու բիրերով քահանայապետներէն եւ
դպիրներէն ու ծերերէն ։ Մատնիչը նշան 44
տուած էր՝ ու կ՚ըսէր ․ Ո՛վ որ ես

Digitized by Google

համբուրեմ՝ ան է, բռնեցէ՛ք անիկայ և
45 զգուշութիւնով տարէ՛ք ։ Եւ շուտ մը
մօտենալով՝ անոր ըսաւ, Ռաբբի Ռաբ-
46 բի, ու համբուրեց անիկայ ։ Եւ անոնք
ձեռք ձգեցին անոր՝ ու բռնեցին զանիկայ ։
47 Եւ իր քովը կայնողներէն մէկը սուրը քա-
շեց ու զարկաւ քահանայապետին ծառա-
յին, ու անոր ականջը մէկդի ձգեց ։
48 Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ ա-
նոնց. Իբր թէ գողի՞ վրայ ելաք սուրե-
49 րով ու բիրերով զիս բռնելու ։ Ամէն
ատեն ձեր քովն էի, ու տաճարին մէջ
կը սորվեցընէի՝ և զիս չբռնեցիք. բայց որ-
պէս զի մարգարէներուն գիրքերը կատա-
50 րուին ։ Ան ատենը բոլոր աշակերտները
51 թողուցին զանիկայ ու փախան ։ Եւ մէկ
երիտասարդ մը անոր ետևէն կ'երթար՝ մերկ
մարմնին վրայ կտաւ մը առած. երիտա-
52 սարդները անիկայ բռնեցին. Ան ալ
կտաւը թողուց՝ մերկ փախաւ անոնցմէ ։
53 Ու տարին Յիսուսը Կայիափա քահա-
նայապետին. և անոր հետ կուգային բո-
լոր քահանայապետները ու դպիրները և
54 ծերերը ։ Ու Պետրոս հեռուանց անոր
ետևէն կ'երթար՝ մինչև ներսը քահանա-
յապետին գաւիթը, և սպասաւորներուն
հետ նստաւ, ու կրակին լուսովը կը տաք-
55 նար ։ Իսկ քահանայապետները ու բոլոր
ատեանը Յիսուսին դէմ վկայութիւն կը
փնտռէին որ զինքը սպաննեն, և չէին
56 գտներ. Ինչու որ շատերը սուտ վկայու-

ծիւն կը վկայէին անոր վրայ, ու վկա-
յութիւնները իրարու նման չէին : Ու- 57
րիշները ելան սուտ վկայութիւն կ'ընէին
անոր վրայ՝ ու կ'ըսէին, Թէ Մենք լսե- 58
ինք ասկից՝ որ կ'ըսէր. Ես աս ձեռա-
գործ տաճարը պիտի քակեմ, և իրեք
ւուր մէջը ուրիշ մը պիտի շինեմ առանց
ձեռագործի. Բայց անանկ ալ իրենց վը- 59
կայութիւնը նման չէր : Մէջը քահա- 60
նայապետը մէջտեղը ելաւ, կը հարցընէր
Յիսուսին, ու կ'ըսէր. Պատասխան մը
չ՞ս տար, ի՞նչ կը վկայեն ասոնք քու
վրադ : Բայց անիկայ միայն լուռ կեցեր 61
էր; և բան մը պատասխան չէր տար.
Քահանայապետը նորէն երկրորդ անգամ
կը հարցընէր անոր՝ ու կ'ըսէր. Դո՞ւն ես
Քրիստոսը՝ օրհնեալ Աստուծոյ Որդին :
Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ ա- 62
նոր. Դուն ըսիր որ ես եմ. բայց պիտի
տեսնէք Որդին մարդոյ զօրութեան աջ
կողմը նստած՝ ու երկինքի ամպերովը ե-
կած : Ու քահանայապետը շուտ մը իր 63
պատմուճանը պատռեց՝ ու ըսաւ. Ալ ի՞նչ
պէտք է մեզի վկաներ : Ահա՛ ամէնքդ ալ 64
լսեցիք հայհոյութիւնը ասոր բերնէն. ին-
չ՞ը կ'երեւնայ ձեզի. և ամէնքը դատա-
պարտեցին զանիկայ՝ թէ մահապարտ է :
Ու ոմանք սկսեցին թքնել անոր երեսը. 65
խուն վրայ լաթ ձգել՝ բռունցով ծեծել
ըսել. Մարգարէացի՛ր մեզի՝ ո՛վ Քրը-
իստոս, ո՞վ է ան որ քեզի զարկաւ. ու

ծառաները ապտակ կը զարնէին անոր ։
66 Եւ Պետրոս դեռ վարը գաւիթն էր,
քահանայապետին մէկ աղախինը եկաւ,
67 Ու տեսաւ զանիկայ որ կը տաքնար, նա-
յեցաւ անոր՝ ու ըսաւ. Դուն ալ Յիսուս
68 Նազովրեցիին հետ էիր ։ Անիկայ ուրա-
ցաւ ու ըսաւ. Չեմ ճանչնար և չեմ գի-
տեր՝ դուն ի՛նչ կը խօսիս. ու երբոր
դուրսի բակը ելաւ՝ հաւն ալ խօսեցաւ ։
69 Աղախինը նորէն տեսաւ զանիկայ՝ ու
սկսեց բոլորտիքը կայնողներուն ըսել, Թէ
70 Աս ալ անոնցմէ է. Եւ ան նորէն ուրա-
ցաւ ։

Եւ քիչ մը ատենէն ետքը՝ նորէն բոլոր-
տիքը կայնողները ըսին Պետրոսին. Ի-
րաւցընէ՝ դուն ալ անոնցմէ ես. ինչու որ
Գալիլեացի ես, և քու խօսքդ ալ նման է
71 անոնց ։ Բայց անիկայ սկսեց անէծք տալ՝
երդում ընել ու ըսել, Թէ Ես ան մարդը
չեմ գիտեր որուն համար դուք կ'ըսէք ։
72 Եւ նոյն ժամուն երկրորդ անգամ խօսե-
ցաւ հաւը. ու Պետրոս միտքը բերաւ ան
խօսքը՝ որ Յիսուս իրեն ըսաւ, Թէ Դեռ
հաւը երկու անգամ չխօսած՝ դուն իրեք
անգամ պիտի ուրանաս զիս. ու սկսեց
լալ ։

## ԳԼ. ԺԵ

1 Եւ առտուանց շուտ մը քահանայա-
պետները ծերերուն ու դպիրներուն հետ՝ և
բոլոր ժողովքին ալ խորհուրդ ըրին ; Յի-

Digitized by Google

մը կապեցին՝ ու տարին մատնեցին Պիղա-
տոսին ։ Պիղատոս հարցուց անոր՝ Ե- 2
սւ . Դո՞ւն ես Հրէաներուն թագաւո-
. անիկայ պատասխան տուաւ անոր՝ Դու-
ըս . Դուն կ՚ըսես ։ Եւ քահանայապե- 3
տները շատ զրպարտութիւն կ՚ընէին ա-
վրայ . բայց ան պատասխան մը չէր
ր ։ Եւ Պիղատոս նորէն հարցուց անոր . 4
Պատասխան մը չե՞ս տար , Նայէ՝ ո՛րչափ
վկայովք ամբաստանութիւններ կ՚ընեն ։
Յիսուս տակաւին բան մը պատասխան 5
չտուաւ , մինչեւ որ շատ զարմացաւ Պիղա-
տոս ։

Բայց տօնին ատենը կապուած մը կար- 6
ձակէր անոնց , ո՛րը որ իրենք կ՚ուզէին ։
Մէկ կար որուն անունը Բարաբբաս էր՝ 7
ապստամբներուն հետը կապուած , որոնց
խռովութեան ատենը մարդ մը սպաններ
։ Սկսեց ժողովուրդը բարձր ձայնով 8
աղաղակել ու խնդրել՝ ինչպէս որ սովո-
րութիւն կար , որ Բարաբբան թող տայ
նց ։ Պատասխան տուաւ Պիղատոս՝ 9
ըսաւ անոնց . Կ՚ուզէ՞ք որ Հրէաներուն
թագաւորը արձակեմ ձեզի ։ Ինչու որ 10
գիտէր թէ քահանայապետները նախանձի
համար մատնեցին զանիկայ ։ Անոնք ժո- 11
ղովուրդն ալ համոզեցին որ Բարաբբան
նց արձակէ ։ Նորէն Պիղատոս պա- 12
տասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Հապա
Հրէաներուն թագաւորին ի՞նչ կ՚ուզէք որ
մ ։ Եւ անոնք քահանայապետներէն 13

Digitized by Google

դրդուելով նորէն կը պոռային, Խաչը
14 հանէ անիկայ։ Պիղատոս ըսաւ անոնց.
Ի՞նչ՝ ի՞նչ չար գործ ըրած է անիկայ.
և անոնք ալ աւելի կ'աղաղակէին՝ ու կ'ը-
15 սէին. Խաչը հանէ անիկայ։ Իսկ Պի-
ղատոս երբոր ուզեց ժողովուրդին ուզածը
ընել՝ Բարաբբան արձըկեց անոնց, ու
Յիսուսը ծեծելով ձեռք տուաւ որ խա-
չուի։
16 Իսկ զինուորները ներս տարին անիկայ
ան գաւիթը, ուր որ մեծ ատեանն էր. և
17 բոլոր գունդը մէկտեղ կանչեցին. Ու
հագցուցին իրեն կարմիր վերարկու և ծի-
րանիներ, և անոր գլուխը պսակ մը դրին՝
18 փուշերէ շինուած. Ու սկսեցին բարև տալ
իրեն՝ և ըսել. Ողջ կեցիր՝ ով Թագաւոր
19 Հրէից։ Ու գլուխը եղէգով կը ծեծէին,
ու երեսը կը թքնէին, և ծունկի վրայ գա-
20 լով՝ երկրպագութիւն կ'ընէին իրեն։ Ու
երբոր ծաղր ըրին անիկայ՝ վերարկուն և
ծիրանիները վրայէն հանեցին՝ ու իր լա-
թերը հագցուցին իրեն, և դուրս հանեցին՝
որ զինքը խաչը հանեն։
21 Ու Սիմոն Կիւրենացին՝ Աղեքսանդրին
և Ռուփոսին հայրը, որ անկից կ'անցնէր
արտէն եկած, պահակ բռնեցին որ անոր
22 խաչափայտը վերցընէ։ Ու տարին անի-
կայ Գողգոթա ըսուած տեղ մը, (որ կը
23 թարգմանուի՝ Գլխու կտրելու տեղ.) Իսկ
լեղիով խառնած գինի տուին իրեն, և
ինքը չառաւ. ու խաչը հանեցին անիկայ։

Digitized by Google

Եւ իր լաթերը բաժնեցին, վրան վիճակ 24
ձգելով՝ թէ ո՛վ ինչ պիտի առնէ ։ Ժա- 25
մը իրեքն էր, ու խաչը հանեցին անիկայ ։
Եւ իր յանցանքին գիրը գրուած էր, թէ 26
Հրէաներուն թագաւորն է ։ Ու անոր 27
հետ երկու գող խաչը հանեցին. մէկը ա-
նոր աջ դին, և մէկը անոր ձախ դին ։
Եւ կատարուեցաւ ան գիրը՝ որ կ'ըսէ, 28
թէ Անօրէններուն հետ սեպուեցաւ ։ Եւ 29
անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին անոր՝
գլուխնին շարժելով, ու կ'ըսէին. Վա՜խ
որ տաճարը կը քակէիր. և իրեք օրը կը
շինէիր. Դուն քեզ ապրեցո՛ւր՝ ու ան 30
խաչէն վա՛ր իջիր ։ Նմանկ ալ քահանա- 31
յապետները դպիրներուն հետ իրենց մէջը
ծաղր ընելով կ'ըսէին. Ուրիշները ապ-
րեցուց, ինքզինքը չկրնար ապրեցընել ։
Այս Քրիստոսը Իսրայէլի թագաւորը՝ թո՛ղ 32
հիմա ատ խաչէն վա՛ր իջնէ, որ տեսնենք
ու հաւատանք անոր. և իր հետը խաչը
ելլողները կը նախատէին անիկայ ։
Ու երբոր ժամը վեց եղաւ, բոլոր եր- 33
կիր մութը պատեց մինչև ժամը ինը ։ Եւ 34
ժամը իննին Յիսուս մեծ ձայնով աղաղա-
կեց, ու ըսաւ. Էլի՛ էլի՛ լամա սաբաք-
թանի. (որ կը թարգմանուի, Աստուած
իմ՝ Աստուած իմ՝ ինչո՞ւ զիս թողուցիր.)
Եւ անոնցմէ ոմանք որ իր քովը կեցեր 35
էին, երբոր լսեցին՝ կ'ըսէին, թէ Եղիան
կը կանչէ ։ Ու մէկը վազեց սպունգ մը 36
քացախով լեցուց, ու եղէգի մը անցը-

Digitized by Google

ցած բերեն կու տար որ խմէ, և ըսաւ.
Թո՛ղ տուր տեսնենք՝ Եղիան կու գա՞յ
զանիկայ վար իջեցընելու:
37 Եւ Յիսուս մեծ ձայն մը հանեց, ու
38 հոգին տուաւ: Եւ տաճարին վարագոյրը
39 երկուք պատռեցաւ վերէն 'ի վար: Եւ
հարիւրապետը որ հոն կեցեր էր՝ տեսնե-
լով որ աղաղակեց ու հոգին տուաւ, ըսաւ.
Ճշմարի՛տ Որդի Աստուծոյ էր աս մարդը:
40 Կնիկներ ալ կային՝ որ հեռուանց կընա-
յէին. որ անոնց մէջն էր Մարիամ Մագ-
դաղենացին, և Մարիամ՝ պզտիկ Յակո-
բին ու Յովսէսին մայրը, և Սողոմէն.
41 Որոնք երբոր Յիսուս Գալիլեա էր՝ իր
հետը կը պտըտէին և իրեն սպասաւորութիւն
կ'ընէին. և ուրիշ շատ կնիկներ ալ՝ որ
իր հետը Երուսաղէմ ելեր էին:
42 Եւ երբոր իրիկուն եղաւ, ուրբաթ ըլ-
լալուն համար՝ որ շաբաթը կը մտնէր,
43 Յովսէփ Արիմաթացին պարկեշտ իշխա-
նաւոր մը որ ինքն ալ Աստուծոյ թագա-
ւորութեանը կը սպասէր, եկաւ՝ ու հա-
մարձակութիւն ընելով՝ Պիղատոսին քովը
մտաւ, և Յիսուսին մարմինը խնդրեց:
44 Եւ Պիղատոս զարմացաւ՝ որ անանկ շու-
տով մեռաւ. և հարիւրապետը իրեն կան-
չելով՝ հարցուց անոր ու ըսաւ, թէ ի-
45 րաւցընէ՛ անանկ շուտո՞վ մեռաւ: Եւ
երբոր ասոյգը իմացաւ ան հարիւրապե-
46 տէն, մարմինը Յովսէփին տուաւ: Եւ
Յովսէփ կտաւ գնեց, ու զանիկայ վար

իջեցընելով՝ կտաւովը փաթթեց, ու գը-
րաւ գերեզմանին մէջը՝ որ քարէ փորուած
էր, ու քար մը գլտորցուց գերեզմանին
դուռը: Իսկ Մարիամ Մագդաղենացին, 47
և Մարիամ՝ Յակոբին ու Յովսէփին մայ-
րը տեսան ան տեղը, ուր որ դրուեցաւ:

## ԳԼ. ԺԶ.

Ու երբոր շաբաթը անցաւ, Մարիամ 1
Մագդաղենացին՝ և Մարիամ Յակոբին
մայրը՝ և Սողոմէն գացին խունկեր պատ-
րաստեցին, որ գան օծեն զանիկայ: Եւ 2
մէկշաբթի առտուանց կանուխ արեւը որ
կը ծագէր՝ եկան գերեզմանը, Ու իրարու 3
կ'ըսէին. Մեզի ան քարը ո՞վ պիտի գլը-
տորցընէ գերեզմանին դռնէն. (Ու նայե- 4
լով տեսան որ գերեզմանէն քարը գլտո-
րուած էր,) ինչու որ շատ մեծ էր: Եւ 5
ներս գերեզմանը մտնելով՝ երիտասարդ մը
տեսան որ աջ կողմը նստեր էր ճերմակ
պատմուճան հագած, ու վախցան: Եւ 6
անիկայ անոնց ըսաւ. Մի՛ վախնաք,
Յիսուս Նազովրեցին կը փնտռէք, որ
խաչը ելաւ. անիկայ յարութիւն առաւ.
հոս չէ՛. ահա՛ ան տեղը՝ ուր որ զինքը
դրին: Բայց գացէ՛ք, ըսէ՛ք անոր աշա- 7
կերտներուն և Պետրոսին, թէ ահա՛ ձեզ-
մէ առաջ Գալիլեա կ'երթայ. հոն պիտի
տեսնէք զանիկայ՝ ինչպէս որ ձեզի ըսաւ: Ու 8
երբոր լսեցին՝ ելան ու փախան գերեզմա-
նէն, ինչու որ շատ վախցեր էին. և մար-

Digitized by Google

դու մը բան չըսին՝ վախնալնուն համար ։
9 Յիսուս. յարութիւն առած՝ առջի օրը
Մէկշաբթի առտուանց, Մարիամ Մագ-
դաղենացիին երևցաւ, որ անկէց հօթը
10 դև հաներ էր ։ Ու անիկայ գնաց ա-
նոնց պատմեց որոնք անոր հետ էին, երբ-
11 որ կուլային ու սուգ կ'ընէին ։ Անոնք երբ-
որ լսեցին թէ կենդանի է՝ և իրեն ալ
երևցաւ, չհաւատացին ։
12 Ետքը ուրիշ կերպարանքով արտը գա-
13 ցողներուն երևցաւ ։ Անոնք գացին ու-
րիշներուն պատմեցին, ու անոնց ալ չհա-
ւատացին ։
14 Վերջը երբոր տասնումէկը նստեր էին,
երևցաւ անոնց, ու երեսնին զարկաւ ի-
րենց անհաւատութիւնը և սրտերնուն
կարծրութիւնը, վասն զի որոնց որ ինքը
երևցաւ մեռելներէն յարութիւն առած,
իրենք չհաւատացին ։
15 Ու ըսաւ անոնց. Գացէ՛ք բոլոր աշ-
խարհ, և աւետարանը քարոզեցէ՛ք ամէն
16 ստեղծուածներուն ։ Ան որ հաւատայ ու
մկրտուի՝ պիտի փրկուի, և ան որ չհաւա-
17 տայ՝ պիտի դատապարտուի ։ Անոնք որ
կը հաւատան՝ աս նշանները անոնց հետ
պիտի երթան ։ Իմ անուանովս դևեր պի-
18 տի հանեն, լեզուներ պիտի խօսին. Ձեռ-
քերնին օձեր պիտի բռնեն, և թէ որ մեռ-
ցընող դեղ մը խմեն, իրենց պիտի չվնա-
սէ. հիւանդներուն վրայ ձեռք պիտի դը-
նեն՝ ու բժշկեն ։

Digitized by Google

Ու Տէր Յիսուս ինքը անոնց հետ խօ- 19
սելէն ետքը երկինքը համբարձաւ, ու
Հօրը աջ կողմը նստաւ։ Ու անոնք ե- 20
լան՝ բոլոր երկիրը կը քարոզէին Տէրոջը
օգնականութիւնովը. ու խօսքը կը հաս-
տատէին բոլոր նշաններով՝ որ իրենց հե-
տը կ'երթար։

# ԱՒԵՏԱՐԱՆ
# ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

## ԳԼՈՒԽ Ա

1 Որովհետեւ շատերը ուզեցին նորէն կար-
գի դնել այն մեր մէջը հաստատուած բա-
2 ներուն վրայով եղած պատմութիւնը. Ինչ-
պէս որ սկիզբէն աչքով տեսնողները և խօս-
քին սպասաւոր եղողները աւանդեցին մե-
3 զի: Ես ալ՝ որ սկիզբէն այն ամէն բա-
ներուն ետեւէն ճշմարտութեամբ գացեր էի,
ուզեցի կարգաւ գրել քեզի՝ ո՛վ պատուա-
4 կան Թէոփիլոս. Որ սորված բաներուդ
ճշմարտութիւնը իմանաս:
5 Հրէաստանի Հերովդէս թագաւորին օ-
րերը՝ Աբիայի դասակարգութենէն Զա-
քարիա անունով մէկ քահանայ մը կար.
ու անոր կնիկը Ահարոնի աղջիկներէն էր,
6 և անոր անունը Եղիսաբեթ: Ու երկուքն
ալ Աստուծոյ առջեւը արդար էին, Տէ-
րոջը բոլոր պատուիրանքներուն և օրինա-
դրութիւններուն մէջ անարատ կ՚երթային:
7 Ու զաւակ չունէին, ինչու որ Եղիսաբեթ
ամուլ էր. ու երկուքն ալ օրերնին ան-
8 ցուցեր էին: Ու երբոր ինքը քահանա-
յական պաշտօնը կը կատարէր Աստուծոյ
առջին իր դասակարգութեան օրերը հա-

Digitized by Google

նելուն , Քահանայութեան սովորութեանը 9
պէս իրեն ինկաւ որ Տէրոջը տաճարը մըտ-
նէ խնկարկութիւն ընէ ։ Եւ բոլոր ժո- 10
ղովուրդին բազմութիւնը դուրսը աղօթքի
կայներ էին խունկին ատենը ։ Ու երեւցաւ 11
անոր Տէրոջը հրեշտակը , որ կայներ էր
խունկի սեղանին աջ կողմը ։ Եւ Զաքա- 12
րիա երբոր տեսաւ՝ շփոթեցաւ , ու անոր
վրայ վախ մը ինկաւ ։ Տէրոջը հրեշտակը 13
ըսաւ անոր . Մի՛ վախնար Զաքարիա ,
ինչու որ քու աղօթքդ լսուեցաւ , և քու
կինդ Եղիսաբեթը քեզի որդի մը պիտի
ծնանի , և անոր անունը Յովհաննէս դը-
նես ։ Ու քեզի ուրախութիւն և ցնծու- 14
թիւն պիտի ըլլայ , և շատերը անոր ծը-
նանելուն վրայ պիտի ուրախանան ։ Ինչու 15
որ Տէրոջը առջեւը մեծ պիտի ըլլայ , ու
գինի և օղի պիտի չխմէ , ու դեռ իր մօ-
րը որովայնէն Սուրբ Հոգիով պիտի լե-
ցուի ։ Եւ Իսրայէլի որդիներէն շատերը 16
իրենց Տէր Աստուծոյն պիտի դարձընէ ։
Եւ ինքը անոր առջեւէն պիտի գայ Եղիա- 17
յին հոգիովը ու զօրութիւնովը , հայրե-
րուն սիրտը զաւկըներուն վրայ դարձընե-
լու , և անհնազանդները արդարներուն ի-
մաստութեանը , որ Տէրոջը բարեկարգ ժո-
ղովուրդ մը պատրաստէ ։ Եւ Զաքա- 18
րիա ըսաւ հրեշտակին . Ինչո՞վ գիտնամ
այս բանը . որովհետեւ ես ծեր եմ , ու իմ
կինս իր օրերը անցուցեր է ։ Պատասխան 19
տուաւ հրեշտակը ու ըսաւ անոր . Ես եմ

Digitized by Google

Գաբրիէլը՝ որ Աստուծոյ առջեւը կը կենամ,
ու խրկուեցայ քեզի զրուցելու, և աս ա-
20 ւետիսը քեզի տալու ։ Եւ ահա՛ համր
պիտի ըլլաս դուն, ու պիտի չկրնաս խօսիլ
մինչև ան օրը՝ որ աս բանը ըլլայ. անոր
համար որ իմ խօսքերուս չհաւատացիր,
որ անոնք իրենց ատենին պիտի կատա-
21 րուին ։ Ու ժողովուրդը Զաքարիային
կը սպասէր, և կը զարմանային անոր տա-
22 ճարին մէջ ուշանալուն վրայ ։ Ու երբոր
դուրս ելաւ՝ չէր կրնար խօսիլ անոնց հետ.
ու իմացան որ տաճարին մէջ տեսիլք մը
տեսած է. և ինքը նշանով կը խօսէր ա-
նոնց հետ, ու պապանձած կը կենար ։
23 Եւ եղաւ որ երբ անոր պաշտօնին օրերը
24 լմնցան՝ գնաց իր տունը ։ Եւ ան օրե-
րէն ետքը անոր կինը Եղիսաբեթ յղա-
ցաւ, ու հինգ ամիս ինքզինքը կը պահէր,
25 և կ՚ըսէր. Աս ինչ բան ըրաւ ինծի Տէրը
աս օրերս, որ իմ վրաս նայեցաւ՝ նա-
խատինքս մարդոց մէջէն վերցընելու ։
26 Ու վեցերորդ ամսուն մէջը Գաբրիէլ
հրեշտակը Աստուծմէ խրկուեցաւ Գալի-
լեացւոց մէկ քաղաքը՝ որուն անունը Նա-
27 զարէթ էր, Մէկ կոյսի մը՝ մարդու մը
նշանուած, որուն անունը Յովսէփ էր՝
Դաւիթին տունէն. և ան կոյսին անու-
28 նը Մարիամ ։ Ու եկաւ անոր ըսաւ. Ու-
րախացիր դուն շնորհքո՛վ զարդարուած,
29 Տէրը քեզ հետ է ։ Անիկայ ալ աս խօս-
քերուն վրայ շփոթուեցաւ, և ինքնիրեն

կը մտածէր՝ թէ Ի՞նչպէս բան պիտի ըլլայ
աս բարեւը ։ Եւ հրեշտակը անոր ըսաւ ․ 30
Մի՛ վախնար Մարիամ, ինչու որ Աստուծ-
մէ շնորհք գտար ․ Եւ ահա՛ պիտի յղա- 31
նաս, ու որդի պիտի ծնանիս, եւ անոր ա-
նունը Յիսուս պիտի դնես ։ Անիկայ մեծ 32
պիտի ըլլայ, ու Բարձրելոյն Որդին պիտի
ըսուի, եւ Տէր Աստուած պիտի տայ ա-
նոր՝ իր հօրը Դաւիթին աթոռը ․ ու Յա-
կոբին տանը վրայ յաւիտեան պիտի թա-
գաւորէ ․ Եւ անոր թագաւորութիւնը 33
վերջ պիտի չունենայ ։ Ու Մարիամ ըսաւ 34
հրեշտակին ․ Ի՞նչպէս պիտի ըլլայ ինծի
աս բանը, որովհետեւ ես էրիկ մարդ չեմ
գիտեր ։ Պատասխան տուաւ հրեշտակը՝ 35
եւ ըսաւ անոր ․ Հոգին Սուրբ պիտի գայ
քեզի, ու Բարձրելոյն զօրութիւնը քու
վրադ հովանի պիտի ըլլայ ․ քանզի ան որ
քեզմէ պիտի ծնանի՝ սուրբ է, ու Որդի
Աստուծոյ պիտի ըսուի ։ Եւ ահա՛ քու 36
ազգականդ Եղիսաբեթ՝ անիկայ ալ իր
պառաւութեան ատենը յղի է ․ ու աս ա-
նոր վեցերորդ ամիսն է՝ որ ամուլ ըսուած
էր ․ Ինչու որ Աստուծոյ քովը բնաւ մէկ 37
բան մը անկարելի չըլլար ։ Եւ Մարիամ 38
ըսաւ ․ Ահա՛ ես Տէրոջը աղախինն եմ,
քու ըսածիդ պէս թող ըլլայ ինծի ․ ու
հրեշտակը անոր քովէն գնաց ։

Ան օրերը ելաւ Մարիամ՝ ու արտորնօք 39
լեռանը կողմը Յուդային մէկ քաղաքը գը-
նաց ։ Եւ մտաւ Զաքարիային տունը, 40

Digitized by Google

41 ու Եղիսաբեթին բարեւ տուաւ : Եւ ե-
ղաւ որ երբ լսեց Եղիսաբեթ Մարիամին
բարեւը , իր որովայնին մէջը տղան խա-
ղաց , ու Եղիսաբեթ Սուրբ Հոգիով լե-
42 ցուեցաւ . Եւ բարձր ձայնով մը կանչեց՝
ու ըսաւ . Կիներուն մէջը օրհնեալ ես
դուն , և օրհնեալ է քու որովայնիդ պը-
43 տուղը : Եւ աս ինծի ուսկի՞ց եղաւ , որ
44 իմ Տէրոջս մայրը ինծի գայ : Վասն զի՛
ահա՛ երբոր քու բարեւիդ ձայնը ականջիս
եկաւ , մանուկս որովայնիս մէջը խաղաց
45 ուրախանալով : Եւ երանի՛ անոր որ կը
հաւատայ թէ պիտի կատարուի ան բանե-
46 րը՝ որ Տէրոջմէն ըսուեցաւ իրեն : Եւ
Մարիամ ըսաւ . Իմ անձս կը մեծցընէ
47 Տէրը . Եւ իմ հոգիս ուրախացաւ իմ
48 Փրկիչ Աստուծովս : Ինչու որ իր աղա-
խինին խոնարհութեանը նայեցաւ . որ ա-
հա՛ ասկից ետև բոլոր ազգերը ինծի ե-
49 րանութիւն պիտի տան : Վասն զի Հզօ-
րը ինծի մեծամեծ բաներ ըրաւ , ու իր
50 անունը սուրբ է : Եւ անոր ողորմու-
թիւնը իրմէն վախցողներուն վրայ է ազ-
51 գէ ազգ : Իր բազուկովը զօրութիւն ցու-
ցուց . ցիրուցան ըրաւ ամբարտաւաննե-
րը՝ իրենց սրտերուն մտածմունքներովը :
52 Աւժեղները իրենց աթոռներէն քակեց , ու
53 խոնարհները բարձրացուց : Անօթիները
բարիքներով լեցուց , և հարուստները
54 դատարկ խրկեց : Օգնութիւն ըրաւ իր
Իսրայէլ ծառային՝ իր ողորմութիւնները


Digitized by Google

միտք բերելով ։ Ինչպէս որ ինքը խօ- 55
սեցաւ մեր հայրերուն՝ Աբրահամին և ա-
նոր զաւակին յաւիտեան ։

Մարիամ անոր քովը իրեք ամիսի չափ 56
կեցաւ, և իր տունը դարձաւ ։

Եղիսաբեթին ալ ծնանելու ժամանակը 57
լեցուեցաւ, ու տղայ մը ծնաւ ։ Եւ լսե- 58
ցին անոնք որ անոր բոլորտիքն էին՝ ու
անոր ազգականները, որ Տէրը անոր վը-
րայ իր մեծ ողորմութիւնը ցուցուց. և
անոր հետը ուրախացան ։

Եւ եղաւ որ ութերորդ օրը եկան՝ տղան 59
թլփատելու, և զանիկայ իր հօրը անուա-
նովը Զաքարիա կը կանչէին ։ Պատաս- 60
խան տուաւ անոր մայրը՝ ու ըսաւ. Չէ՛,
հապա Յովհաննէս պիտի ըսուի ։ Եւ ը- 61
սին անոր՝ որ քու ազգականներուդ մէջ
մէկը չկայ, որուն անունը Յովհաննէս ը-
սուի ։ Նշան կ'ընէին անոր հօրը՝ թէ ի՞նչ 62
կ'ուզէ կանչել անոր ։ Ան ալ տախտակ 63
մը ուզեց, գրեց ու ըսաւ. Յովհաննէս է
անոր անունը. և զարմացան ամէնքը ։
Ու շուտ մը բացուեցաւ անոր բերանը և 64
անոր լեզուն, ու կը խօսէր՝ և կ'օրհնէր զԱս-
տուած ։ Եւ վախ մը ինկաւ ան ամենուն 65
վրայ՝ որոնք որ աս կը լսէին, և անոնք որ
անոնց բոլորտիքը կը բնակէին. ու Հրէաս-
տանի բոլոր լեռնակողմը ամէն աս բաները
կը զրուցուէին ։ Եւ ան ամէնքը որ կը 66
լսէին՝ իրենց սրտերուն մէջը դրին, ու
ըսին. Աս տղան ի՞նչ պիտի ըլլայ. ու
Տէրոջը ձեռքը անոր հետն էր ։

Digitized by Google

67 Եւ անոր հայրը Զաքարիան Սուրբ
Հոգիով լեցուեցաւ, մարգարէացաւ ու
68 ըսաւ. Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստ-
ուածը, որ մեզի այցելութեան եկաւ,
69 և իր ժողովուրդին փրկութիւն ըրաւ: Ու
մեզի փրկութեան եղջիւր մը հանեց իր
70 Դաւիթ ծառային տունէն, (Ինչպէս որ
սուրբերուն բերնովը խօսեցաւ, որոնք
աշխարհի սկիզբէն 'ի վեր անոր մարգա-
71 րէներն էին.) փրկութիւն մեր թշնամինե-
րէն, և բոլոր մեզ ատողներուն ձեռքէն.
72 Ողորմութիւն ընելու մեր հայրերուն վրայ,
73 և իր սուրբ ուխտը միտք բերելու, (Այն
երդումը՝ որ մեր հօրը Աբրահամին ըրաւ)
74 մեզի տալու, Որ մեր թշնամիներուն ձեռ-
քէն ազատուելով՝ առանց վախի զանիկայ
75 պաշտենք, Սրբութիւնով ու արդարու-
թիւնով անոր առջևը՝ բոլոր մեր կենացը
76 օրերուն մէջ: Եւ դուն ով մանուկ՝
Բարձրելոյն մարգարէն պիտի կոչուիս.
Ինչու որ Տէրոջը երեսին առջևէն պիտի
երթաս՝ անոր ճամբաները պատրաստելու:
77 Անոր ժողովուրդին գիտցընելու իրենց փր-
կութիւնը՝ իրենց մեղքերուն թողութիւնո-
78 վը. Մեր Աստուծոյն գթած ողորմութեա-
նը համար, որ անով վերէն արեգակը մե-
79 զի այցելութեան եկաւ. Լուսաւորելու հա-
մար անոնց՝ որ խաւարին և մահուան շու-
քին մէջը կը նստէին, մեր ոտքերը խա-
ղաղութեան ճամբուն մէջը շիտկելու:
80 Ու տղան կը մեծնար և կը զօրանար հո-

Digitized by Google

դիով, ու անապատներուն մէջն էր մինչև
ան օրը՝ որ ինքը Իսրայէլի երևցաւ։

## ԳԼ. Բ

Եւ եղաւ որ ան օրերը Օգոստոս կայսե- 1
րէն հրաման ելաւ՝ որ բոլոր աշխարհ
գրուի։ (Աս առջի աշխարհագիրը եղաւ՝ 2
Կիւրենոսին Ասորւոց վրայ դատաւորու-
թիւն ըրած ատենը։) Եւ ամէնքը կ'եր- 3
թային աշխարհագիրը մտնելու ամէն մէ-
կը իրենց քաղաքին մէջը։ Յովսէփ ալ 4
Գալիլեայէն Նազարէթ քաղաքէն ելաւ
դէպ 'ի Հրէաստան Դաւիթին քաղաքը՝
որ Բեթղեհէմ կ'ըսուի, (ինքը Դաւիթին
տունէն ու ազգատոհմէն ըլլալուն համար)
Աշխարհագիրը մտնելու Մարիամին հետ 5
մէկտեղ, որ ան իր նշանածն էր, և յղի
էր։ Ու եղաւ որ երբ անոնք ան տեղը 6
հասան, անոր ծնանելու օրերը լեցուեցան։
Եւ իր առջինեկ որդին ծնաւ, ու խան- 7
ձարուրով փաթթեց, և դրաւ անիկայ
մսուրին մէջը. ինչու որ իջած տեղերնին
իրենց տեղ չկար։

Եւ ան տեղը հովիւներ կային բացը կե- 8
ցած, որոնք իրենց հօտերուն գիշերուան
պահպանութիւնը կ'ընէին։ Ու Տէրոջը հրեշ- 9
տակը երևցաւ անոնց, և Տէրոջը փառքը
անոնց վրայ ծագեցաւ. ու խիստ շատ
վախցան։ Եւ հրեշտակը ըսաւ անոնց. 10
Մի՛ վախնաք, ինչու որ ահա՛ ես ձեզի
մեծ ուրախութեան աւետիս կու տամ, որ

Digitized by Google

11 բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ ․ Վասն
զի ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւիթին
քաղաքին մէջը , որ ինքը Օծեալ Տէր է ։
12 Եւ աս ձեզի նշան մը ըլլայ ․ մանուկ մը
պիտի գտնէք խանձարուրով փաթթուած ,
13 ու մսուրի մէջ դրուած ։ Եւ իսկոյն ան
հրեշտակին հետը երկնային զօրքերու բազ-
մութիւն մը եղաւ , որոնք զԱստուած կ'օրհ-
14 նէին՝ ու կ'ըսէին ․ Ամէնէն բարձրութեա-
նը մէջ Աստուծոյ փառք , ու երկրիս վրայ՝
խաղաղութիւն , մարդիկներուն հաճու-
15 թիւն ։ Ու եղաւ երբոր հրեշտակները ա-
նոնցմէ երկինքը վերցան , հովիւները իրարու
ըսին ․ Եկէք մինչև Բեթղեհէմ երթանք ,
և տեսնենք՝ թէ ինչ է աս եղած բանը ,
16 որն որ Տէրը մեզի ցուցուց ։ Ու եկան
արտորնօք , և գտան Մարիամը ու Յով-
սէփը և մսուրին մէջը դրուած մանուկը ։
17 Եւ իմացան ան խօսքին վրայով , որ մա-
18 նուկին համար իրենց զրուցուեցաւ ։ Եւ
ամէնքը որ կը լսէին՝ կը զարմանային ան
բաներուն վրայ , որ հովիւները իրենց կը
19 զրուցէին ։ Բայց Մարիամ աս ամէն
բաները կը պահէր , ու իր սրտին մէջը
20 կը մտածէր ։ Եւ հովիւները դարձան ,
կը փառաւորէին ու կ'օրհնէին զԱստուած
ան ամէն բաներուն համար՝ որ լսեցին ու
տեսան , ինտոր որ իրենց պատմուած էր ։
21 Եւ երբոր ութ օրերը լման եղան ա-
նիկայ թլփատելու՝ անոր անունը Յիսուս
դրուեցաւ , որ հրեշտակէն ըսուած էր՝ դեռ
ինքը մօրը որովայնին մէջ չյղացած ։

Digitized by Google

Եւ Մովսէսին օրէնքին պէս երբոր անոր 22
մաքրութեան օրերը լմնցաւ՝ Երուսաղէմ
տարին զանիկայ Տէրոջը դիմացը հանելու.
(Ինչպէս որ գրուած է Տէրոջը օրէնքին 23
մէջը, թէ Ամէն արու զաւակ որ արգանդ
կը բանայ՝ Տէրոջը սուրբ ըսուի.) Եւ 24
Տէրոջը օրէնքին մէջ ըսուածին պէս՝ ընծայ
տալու զոյգ մը տատրակ կամ աղաւնիի
երկու ձագեր։ Եւ ահա՛ Երուսաղէմին 25
մէջ մէկ մարդ մը կար, որուն անունը
Սիմէոն էր. ու ան մարդը արդար ու աս-
տուածավախ էր, և Իսրայէլի մխիթա-
րութեանը կը սպասէր. ու Սուրբ Հո-
գին անոր վրայ էր։ Եւ ինքը հրաման 26
առած էր Սուրբ Հոգիէն՝ որ մահ չտեսնէ,
մինչև որ Տէրոջը Օծեալը տեսնէ։ Եւ 27
Հոգիով տաճարը եկաւ. և երբոր ծնող-
քը բերին Յիսուս մանուկը՝ որ օրէնքին
սովորութեանը պէս անոր վրայ ընեն,
Ինքն ալ անիկայ իր գիրկը առաւ, ու 28
օրհնեց զԱստուած՝ և ըսաւ. Ալ հիմա 29
ով Տէր՝ արձըկես քու ծառադ խաղաղու-
թիւնով քու խօսքիդ պէս. Վասն զի իմ 30
աչքերս տեսան քու փրկութիւնդ, Որ բո- 31
լոր ժողովուրդներուն առջևը պատրաս-
տեցիր. Մէկ լոյս մը հեթանոսները լու- 32
սաւորելու, և փառք քու Իսրայէլ ժո-
ղովուրդիդ։ Եւ անոր հայրը ու մայրը 33
զարմացած էին ան բաներուն վրայ, որ
անոր համար կը խօսուէին։ Եւ Սիմէոն 34
օրհնեց զանոնք, և անոր մօրը Մարիամին

Digitized by Google

ըսաւ. Ահա՛ աս տղան Իսրայէլի մէջ շատ
մարդոց իյնալուն ու ելլելուն համար կե-
ցած է, ու հակառակութեան նշանակ
35 մը ըլլալու համար. (Եւ քուկին սիրտէդ
ալ թուր մը պիտի անցնի;) որ ասոնցմով
շատ սրտերէն խորհուրդները պիտի յայտ-
նուին:

36 Եւ ան տեղն էր Աննա մարգարէն Փա-
նուէլի աղջիկը՝ Ասէրի ցեղէն. ասիկայ իր
օրերը շատ անցուցեր էր՝ էրկանը հետ
եօթը տարի կենալով իր կուսութեան ժա-
37 մանակէն, Եւ որբևարի էր գրեթէ ութ-
սունուչորս տարուան. որ տաճարէն չէր
զատուէր, հապա ծոմով և աղօթքով Աս-
տուծոյ ծառայութիւն կ'ընէր գիշեր ու
38 ցորեկ: Եւ ասիկայ նոյն ժամուն ելաւ
Տէրոջը գոհութիւն կու տար, ու անոր
վրայով կը խօսէր ան ամենուն հետ, ո-
րոնք որ Երուսաղէմին փրկութեանը կը
սպասէին:

39 Եւ երբոր ամէն բան կատարեցին Տէ-
րոջը օրէնքին համեմատ, նորէն Գալի-
լեա դարձան՝ իրենց Նազարէթ քաղաքը:
40 Ու մանուկը կը մեծնար և կը զօրանար ի-
մաստութիւնով լեցուած. ու Աստուծոյ
շնորհքը անոր վրան էր:
41 Եւ անոր ծնողքը ամէն տարի զատկի
42 տօնին Երուսաղէմ կ'երթային: Ու երբ-
որ անիկայ տասներկու տարեկան եղաւ,
տօնին սովորութեանը պէս երբոր անոնք
43 Երուսաղէմ ելան, Եւ ան օրերը որ

Digitized by Google

լմնցուցին՝ ու նորէն ետ դարձան ,
Յիսուս մանուկը Երուսաղէմ մնաց . և իր
ծնողքը չէին գիտեր ։ Կը կարծէին ա— 44
նոր համար՝ թէ ճամբորդներուն հետն է .
մէկ օրուան ճամբայի չափ եկան , ու կը
փնտռէին զանիկայ դրացիներուն և ճանչ—
ւորներուն մէջը ։ Եւ երբոր չգտան՝ նո— 45
րէն Երուսաղէմ դարձան անիկայ փնտռե—
լու ։ Ու եղաւ որ երեք օրէն ետքը 46
տաճարին մէջը գտան անիկայ , որ վար—
դապետներուն հետ նստեր էր . անոնց
մտիկ կ'ընէր , և անոնց բան կը հարցընէր ։
Ամէն անոր ականջ դնողները կը զարմա— 47
նային անոր իմաստութեանը ու պատաս—
խաններուն վրայ ։ Եւ երբոր տեսան ա— 48
նիկայ՝ զարմացան . և իր մայրը ըսաւ ա—
նոր . Որդեակ՝ աս ի՞նչ բան էր որ դուն
մեզի ըրիր . ահա՛ քու հայրդ ու ես խիստ
վշտացած՝ քեզ կը փնտռէինք ։ Եւ ըսաւ 49
անոնց . Ո՜, իս ինչո՞ւ կը փնտռէիք , չէ՞ք
գիտեր թէ ինծի պէտք է որ իմ Հօրս
տունը ըլլամ . Եւ անոնք չհասկըցան ան 50
խօսքը՝ որ իրենց զրուցեց ։ Եւ իջաւ ա— 51
նոնց հետ՝ ու գնաց Նազարէթ , և անոնց
հնազանդ էր . բայց անոր մայրը աս ամէն
խօսքերը իր սրտին մէջ կը պահէր ։

Եւ Յիսուս կը զարգանար իմաստու— 52
թիւնով ու հասակով , և Աստուծմէ և
մարդոցմէ շնորհք գտնելով ։

Digitized by Google

## ԳԼ. Գ

1 Տիբերիոս կայսրին թագաւորութեանը
տասնուհինգերորդ տարին Պոնտացի Պի-
ղատոսին Հրէաստանի վրայ դատաւորու-
թիւն ըրած ատենը, ու Հերովդէսին
Գալիլեացւոց վրայ չորրորդապետութեան
ատենը, և անոր եղբօրը Փիլիպպոսին Ի-
տուրեացւոց և Տրաքոնացւոց աշխարհին վը-
րայ չորրորդապետութեան ատենը, և
Լիւսանիայի Աբիլինեցւոց վրայ չորրոր-
2 դապետութեան ատենը, Աննայի ու
Կայիափայի քահանայապետութեան ատե-
նը՝ Աստուծոյ խօսքը եկաւ Զաքարիայի
որդւոյն Յովհաննէսին վրայ՝ անապատին
3 մէջը։ Ու եկաւ Յորդանանու բոլոր
կողմերը՝ ապաշխարութեան մկրտութիւն
քարոզելու, մեղաց թողութեան համար.
4 Ինչպէս որ Եսայի մարգարէին խօսքերուն
գրքին մէջ գրուած է. «Ձէն մը
որ անապատին մէջ կը կանչէ, Պատրաս-
տեցէք Տէրոջը ճամբան, շիտկեցէք անոր
5 շաւիղները. Ամէն ձորերը պիտի լեցուին,
և ամէն լեռները ու բլուրները պիտի
ցածնան, և դժուարին տեղերը դիւրին
պիտի ըլլան, ու խորտուբորտ տեղերը
6 հարթ ճամբաներ պիտի ըլլան. Ու ամէն
մարմին Աստուծոյ փրկութիւնը պիտի տես-
նէ»։
7 Ու իրմէն մկրտուելու եկած ժողովուրդ-
ներուն կ'ըսէր. Իժերու ծնունդներ՝ ո՛վ

Digitized by Google

ցուցուց ձեզի փախչիլ ան բարկութենէն՝
որ պիտի գայ ։ Ասկէ հոս ապաշխա- 8
րութեան արժանաւոր պտուղ բերէք ու
մի՛ սկսիք ըսելու , թէ Մենք հայր ու-
նինք Աբրահամը ․ ես կ'ըսեմ ձեզի , թէ
կարող է Աստուած աս քարերէս Աբրա-
համին զաւակներ հանելու ․ Բայց հիմա՝ 9
կացինը ծառերուն արմատին քովը կեցած
է ․ ամեն ծառը՝ որ աղէկ պտուղ
չբերեր , կը կտրուի ու կրակը կը ձգուի ․
Ժողովուրդները կը հարցնէին իրեն՝ ու 10
կ'ըսէին ․ Հապա մենք ի՞նչ ընենք ․ Պատասխա- 11
խան տուաւ և ըսաւ անոնց ․ Ով որ եր-
կու հանդերձ ունի՝ մէկը թող չունեցողին
տայ , և ով որ կերակուր ունի՝ թող ա-
նանկ ընէ ։ Մաքսաւորներն ալ եկան մկրտ- 12
ուելու , ու ըսին անոր ․ Վարդապետ՝
մենք ի՞նչ ընենք ։ Ան ալ ըսաւ անոնց ․ 13
Ձեզի ինչ որ հրաման եղած է , անկէց
աւելի բան չառնէք ։ Զինուորներն ալ 14
կը հարցնէին անոր՝ ու կ'ըսէին ․ Իսկ
մենք ի՞նչ ընենք ․ ըսաւ անոնց ․ Մէկը
մի՛ նեղացնէք , և մէկուն վրայ զրպար-
տութիւն մի՛ ընէք ․ վարձքերնիդ ձեզի
հերիք ըլլայ ։

Երբոր ժողովուրդը յոյս ունէր , և 15
ամենքը իրենց սրտերնուն մէջ կը մտածէին
Յովհաննէսին համար՝ թէ ա՞ն է ար-
դեօք Քրիստոսը , Ինքը պատասխան 16
տուաւ ամենուն ու ըսաւ ․ Ես ձեզ ջրով
կը մկրտեմ ․ բայց ինձմէ աւելի զօրաւորը

կու գայ, որ անոր կօշիկները կրելու արժանի չեմ. անիկա ձեզ պիտի մկրտէ
17 Հոգւով Սրբով և կրակով. Որուն հեծանոցը իր ձեռքն է՝ իր կալը մաքրելու
համար, և ցորենը իր ամբարը ժողվելու,
և յարդը չմարելու կրակով պիտի այրէ։
18 Ասկէ զատ շատ բաներ ալ կը քարոզէր՝ ժողովուրդը յորդորելով։
19 Բայց Հերովդէս չորրորդապետը անկէ
յանդիմանուելով իր եղբօրը կնկանը Հերովդիայի պատճառովը, և բոլոր չարութիւններուն համար՝ որ Հերովդէսը
20 գործեց, Ասոնց ամենուն վրայ աս ալ աւելցուց, որ բանտը գրեց Յովհաննէսը։
21 Եւ երբոր ամէն ժողովուրդը մկրտուեցաւ, և Յիսուս ալ մկրտուեցաւ՝ ու աղօթքի կայներ էր, երկինքը բացուեցաւ.
22 Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր երևոյթով
աղաւնիի պէս անոր վրայ իջաւ, ու երկինքէն ձայն մը եկաւ՝ որ կ՚ըսէր. Դուն
ես իմ սիրելի Որդիս, քեզի հաւնեցայ։
23 Իսկ ինքը Յիսուս սկսեր էր գրեթէ երեսուն տարեկան ըլլալ, որ (ինչպէս կը
կարծուէր) ինքը Յովսէփին որդին, որ ան
Յովակիմին, որ ան Հեղիին, որ ան Մատա
24 թային, Որ ան Ղևիին, որ ան Մելքիին,
25 որ ան Յաննէին, որ ան Յովսէփին, Որ ան
Մատաթիային, որ ան Ամովսին, որ ան
Նաումին, որ ան Եսղիին, որ ան Նագ
26 գէին, Որ ան Մաաթին, որ ան Մատաթիային, որ ան Սեմէիին, որ ան

Digitized by Google

Յովսեփին , որ ան Յովդային , Որ ան 27
Յովհանանին , որ ան Ռեսային , որ ան Զօ–
րոբաբելին , որ ան Սաղաթիելին , որ
ան Ներիին , Որ ան Մելքիին , որ ան 28
Ադդիին , որ ան Կովսամին , որ ան
Եղմովդադին , որ ան Էրին ; Որ ան 29
Յեսուին , որ ան Եղիազարին , որ ան
Յովրամին , որ ան Մատաթին , որ ան
Ղեւիին ; Որ ան Շմաւոնին , որ ան Յու– 30
դային , որ ան Յովսեփին , որ ան
Յովնանին , որ ան Եղիակիմին , Որ 31
ան Մեղեային , որ ան Մեննային , որ ան
Մատաթային , որ ան Նաթանին , որ ան
Դաւիթին , Որ ան Յեսսէին , որ ան Ով– 32
բեդին , որ ան Բոոսին , որ ան Սաղմոնին ,
որ ան Նաասոնին , Որ ան Ամինադաբին , 33
որ ան Արամին , որ ան Ադմին , որ ան
Առնեին , որ ան Եսրոմին , որ ան Փա–
րեսին , որ ան Յուդային , Որ ան Յակո– 34
բին , որ ան Իսահակին , որ ան Աբրա–
համին , որ ան Թարային , որ ան Նա–
քովրին , Որ ան Սերուգին , որ ան Ռա– 35
գաւին , որ ան Փաղեկին , որ ան Եբե–
րին , որ ան Սաղային , Որ ան Կայնանին , 36
որ ան Արփաքսադին , որ ան Սեմին , որ
ան Նոյին , որ ան Ղամեքին , Որ ան 37
Մաթուսաղային , որ ան Ենովքին , որ
ան Յարեդին , որ ան Մաղաղիելին , որ
ան Կայնանին , Որ ան Ենովսին , որ ան 38
Սեթին , որ ան Ադամին , որ ան Աս–
տուծոյն ։

Digitized by Google

## ԳԼ. Դ.

1 Եւ Յիսուս Հոգւով Սրբով լեցուած՝
Յորդանանէն դարձաւ ․ ու Հոգիէն ա-
2 նապատը տարուեցաւ , Եւ քառասուն օր
Սատանայէն փորձուեցաւ ․ ու ան օրերը
ոչ կերաւ՝ ոչ ալ խմեց ․ և երբոր անոնք
լմնցան՝ անօթեցաւ ։
3 Ու Սատանան ըսաւ անոր ․ Թէ որ Աս-
տուծոյ Որդի ես , ըսէ՛ աս քարին որ հաց
4 ըլլայ ։ Պատասխան տուաւ անոր Յիսուս՝
ու ըսաւ ․ Գրուած է , Չէ՛ թէ հացով
միայն մարդ կ՚ապրի , հապա Աստուծոյ ա-
մէն խօսքերովը ։
5 Ու մէկ բարձր լեռ մը հանելով զանի-
կայ՝ աշխարհի բոլոր թագաւորութիւննե-
րը ցուցուց անոր մէկ վայրկեանի մը մէջ․
6 Եւ ըսաւ անոր Սատանան ․ Աս ամէն իշ-
խանութիւնը ու անոնց փառքը քեզի կու-
տամ , ինչու որ ինծի տրուած է ․ և ո-
7 րու որ ուզեմ՝ կու տամ անիկայ ։ Ուստի
թէ որ դուն իմ առջևս իյնաս երկրպա-
8 գութիւն ընես , ամէնը քեզի ըլլայ ։ Պա-
տասխան տուաւ անոր Յիսուս՝ ու ըսաւ ․
Գրուած է , Քու Տէր Աստուծոյդ երկըր-
պագութիւն ընես , և մինակ անիկայ
պաշտես ։
9 Ու զանիկայ տարաւ Երուսաղէմ , և
տաճարին աշտարակին վրայ կայնեցուց՝ ու
ըսաւ անոր ․ Թէ որ դուն Աստուծոյ Որ-
10 դի ես՝ քեզ ասկից վար նետէ ։ Ինչու որ

Digitized by Google

գրուած է, թէ՛ Իր հրեշտակներուն պա-
տուիրած է քեզի համար՝ որ քեզ պահեն.
Որ քեզ ձեռքերնուն վրայ պիտի վերցը- 11
նեն, որ ամենեւին ոտքդ քարի չզարնես:
Պատասխան տուաւ անոր Յիսուս՝ ու ը- 12
սաւ. Ըսուած է, որ Քու Տէր Աստուածդ
չփորձես: Ու երբոր Սատանան բոլոր 13
փորձութիւնները կատարեց, ատեն մը հեռ
կեցաւ անկից:
Ու Յիսուս Հոգիին զօրութիւնովը Գա- 14
լիլեա դարձաւ. և անոր համբաւը ան
գաւառին ամէն կողմերը տարածուեցաւ:
Ու ինքը անոնց ժողովարաններուն մէջը 15
կը սորվեցընէր, ու ամենէն կը փառաւո-
րուէր:
Ու եկաւ Նազարէթ, ուր որ ինքը 16
մեծցած էր. և իր սովորութեանը պէս շա-
բաթ օրը մտաւ ժողովարանը: Ու տուին 17
անոր Եսայի մարգարէին գիրքը, ու ելաւ
որ կարդայ. և երբոր գիրքը բացաւ,
գտաւ ան տեղը՝ ուր որ գրուած էր. Տէ- 18
րոջը Հոգին իմ վրաս է. անոր համար
զիս օծեց. աղքատներուն աւետարան քա-
րոզելու զիս խրկեց, սիրտերնին կոտրած
եղողները բժշկելու. Գերիներուն ազա- 19
տութիւն քարոզելու, և կոյրերուն տե-
սութիւն, վիրաւորուածները ազատ թող-
տալու, Տէրոջը ընդունելի տարին քարո-
զելու: Ու գիրքը գոցեց՝ տուաւ սպա- 20
սաւորին և նստաւ. ու ժողովարանը ե-
ղողներուն բոլորին աչքերը անոր կը նա-

Digitized by Google

21 յէին ։ Եւ սկսաւ անոնց ըսել ․ Այսօր
աս գիրքը ձեր ականջներուն մէջ կատարուե-
22 ցաւ ։ Եւ ամէնքը իր վրայ կը վկայէին,
ու կը զարմանային անոր բերնէն ելած
շնորհալի խօսքերուն վրայ՝ ու կ՚ըսէին ․
23 Ասիկայ Յովսէփին որդին չէ՞ ։ Ու ըսաւ
անոնց ․ Իրաւ որ դուք ինծի պիտի ըսէք
աս առակը ․ Բժիշկ՝ քու անձդ բժշկէ՝ ․
որչափ լսեցինք որ Կափառնայումի մէջ
ըրիր, հոս ալ ըրէ՝ քու գաւառիդ մէջը ։
24 Նաեւ ըսաւ ․ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, թէ
Մարգարէ մը իր քաղաքին մէջ ընդունելի
25 չէ՝ ։ Իրաւ որ կ՚ըսեմ ձեզի, թէ շատ
որբեւայրիներ կային Եղիային օրերը Իսրա-
յէլի մէջ, երբոր երեք տարի և վեց ա-
միս երկինքը գոցուեցաւ, ու մեծ սով ե-
26 ղաւ բոլոր երկրին մէջ ։ Բայց Եղիան ա-
նոնցմէ մէկուն չղրկուեցաւ, հապա միայն
Սիդոնացւոց Սարեփթայ քաղաքին մէջը
27 մէկ որբեւայրի կնկան մը ։ Նաեւ շատ բո-
րոտներ կային Իսրայէլացւոց մէջ Եղիսէ
մարգարէին ատենը ․ ու անոնցմէ մէկը
չմաքրուեցաւ, հապա միայն Նէեման Ա-
28 սորին ։ Ու ժողովարանին մէջը ամէնքն
ալ բարկութենով լեցուեցան՝ երբոր աս
29 լսեցին ․ Ու ելան անիկայ քաղաքէն դուրս
հանեցին, ու տարին անիկայ մինչեւ լեռան
ցցուած ծայրը, որուն վրայ անոնց քա-
ղաքը շինուած էր, որ բարձրէն տեղէն զա-
30 նիկայ վար ձգեն ։ Բայց ինքը անոնց մէ-
ջէն անցաւ գնաց ։

Digitized by Google

Եւ իջաւ Գալիլեացւոց Կափառնայում 31
քաղաքը . ու շաբաթ օրերը կը սորվեցը-
նէր անոնց ։ Եւ զարմանային անոր վար- 32
դապետութեանը վրայ . ինչու որ իշխա-
նութիւնով էր անոր խօսքը ։ Եւ ժողո- 33
վարանին մէջը մարդ մը կար , որ պիղծ
դևի հոգի ունէր , ու մեծ ձայնով մը պո-
ռաց՝ Ըսելով . Թո՛ղ տուր , ըսաւ մեր 34
հետը ի՞նչ բան ունիս Յիսուս Նազովրե-
ցի , եկար որ մեզ կորսնցընես . քեզ
գիտենք ով ես , Աստուծոյ Սուրբը ։
Յիսուս սաստեց անոր՝ ու ըսաւ . Պա- 35
պանձէ՛ ու ելի՛ր անկից . դևը անիկայ
հոն մէջտեղը զետինը զարկաւ , ու ելաւ
անկից , և վնաս մը չըտուաւ անոր ։ Ու 36
զարմանք եկաւ ամենուն վրայ . կը խօսէին
իրարու հետ՝ և կ'ըսէին . Աս ի՞նչ խօսք է ,
որ իշխանութիւնով և զօրութիւնով կը
սաստէ պիղծ դևերուն , ու կ'ելլեն ։ Եւ 37
անոր համբաւը տարածուեցաւ չորս կողմի
գաւառին ամէն տեղերը ։

Ու ժողովարանէն ելաւ՝ Սիմոնին տունը 38
մտաւ ։ Սիմոնին զոքանչն ալ սաստիկ 39
ջերմով կը տանջուէր , և անոր համար ա-
ղաչեցին իրեն ։ Կայնեցաւ անոր քովը 40
սաստեց ջերմին , ու ան թող տուաւ անի-
կայ . և շուտով ելաւ , ու անոնց ծառա-
յութիւն կ'ընէր ։

Եւ արևը մարը մտնելու ատենը՝ ա- 41
մէնքը որ ունէին տեսակ տեսակ ցաւերով
հիւանդներ , կը բերէին անոնք իրեն . ինքն

ալ՝ անոնցմէ ամէն մէկուն վրայ ձեռք կը
41 դնէր, ու կը բժշկէր զանոնք։ Դևեր
ալ կ'ելլէին շատերէն պոռալով ու կ'ը-
սէին, Թէ Դուն Աստուծոյ Որդին ես. Եւ
ինքը կը սաստէր ու թող չէր տար անոնց
որ խօսին. ինչու որ գիտէին թէ ինքը
Քրիստոսն է։
42 Եւ երբոր ցորեկ եղաւ, ելաւ գնաց ան-
ապատ տեղ մը, ու ժողովուրդները կը
փնտռէին զանիկա, եկան մինչև անոր ու
կը ստիպէին զանիկա որ իրենցմէ չերթայ։
43 Ան ալ ըսաւ անոնց. Պէտք է ինծի որ
ուրիշ քաղաքներուն ալ Աստուծոյ թագա-
ւորութիւնը քարոզեմ. ինչու որ անոր
44 համար խրկուեցայ։ Ու Գալիլեայի ժո-
ղովարաններուն մէջը կը քարոզէր։

## ԳԼ. Ե.

1 Եւ եղաւ որ երբ ժողովուրդը անոր բո-
լորտիքը կեցուցած՝ Աստուծոյ խօսքը
մտիկ կ'ընէին, ինքն ալ Գենեսարէթի
2 ծովակին քովը կայներ էր. Ու տեսաւ եր-
կու նաւեր որ ծովակին քովը կեցեր էին,
և ձուկ բռնողները անոնցմէ ելած՝ ուռ-
3 կաններնին կը լուային։ Անոնց նաւերուն
մէկին մէջը մտաւ՝ որ Սիմոնինն էր, և
աղաչեց անոր որ քիչ մը ցամաքէն ծովուն
մէջը տանի. նստաւ ու նաւին մէջէն ժո-
ղովուրդները կը սորվեցընէր։
4 Ու երբոր խօսելէն դադարեցաւ, ըսաւ
Սիմոնին. Առաջ տար նաւը դէպ ի խոր-

Digitized by Google

բունկը , ու գործիքնիդ ձգեցէք ձուկ որ-
սալու : Պատասխան տուաւ Սիմոն՝ ու 5
ըսաւ անոր . Վարդապետ՝ բոլոր գիշերս
աշխատեցանք , ու բան մը չբռնեցինք .
բայց քու խօսքիդ համար ձգենք գործիք-
նիս : Երբոր ասս ըրին՝ խիստ շատ ձուկեր 6
ժողվեցին մէջը , անանկ որ՝ իրենց ուռ-
կանները կը պատռուէին : Եւ աչք կ՚ը- 7
նէին մէկալ նաւին մէջ իրենց ձուկ բռնող
ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց . և
եկան . ու երկու նաւերն ալ լեցուցին .
մինչև որ ընկղմելու մօտ էին : Սիմոն 8
Պետրոս երբոր տեսաւ՝ Յիսուսի ծունկե-
րուն ինկաւ՝ ու ըսաւ . Տէր՝ իմ քովէս
մեկնէ՛ գնա , ինչու որ ես մեղաւոր մարդ
մըն եմ : Վասն զի վախը պատեց անի- 9
կայ և անոր հետը եղող ամէնը , ան ի-
րենց բռնած ձուկերուն որսին համար .
Նոյնպէս ալ Զեբեդէոսին որդիքը՝ Յակո- 10
բոսը և Յովհաննէսը , որոնք Սիմոնին որ-
սի ընկերներն էին . ու Յիսուս ըսաւ Սի-
մոնին . Մի՛ վախնար , ասկէ ետև մարդիկ
պիտի որսաս կենաց համար : Եւ նաւը 11
ցամաքը հանելով՝ ամէն բան թողուցին ,
ու անոր ետևէն գացին :

Եւ եղաւ որ երբ ինքը քաղաք մը հա- 12
սաւ , ահա՛ մէկ մարդ մը բորոտութենով
լեցուն՝ երբոր Յիսուսը տեսաւ , երեսի
վրայ ինկաւ՝ աղաչեց անոր ու ըսաւ .
Տէր՝ թէ որ ուզես , կրնաս զիս մաքրել :
Երկնցուց իր ձեռքը՝ հասցուց անոր ՝ ու 13

Digitized by Google

ըսաւ . Կ'ուզեմ՝ մաքրուէ՛ . և շուտ մը
14 բորոտութիւնը անկէց գնաց ։ Ու ինքը
պատուիրեց անոր՝ որ մէկու մը չըսէ ,
հապա ըսաւ . Գնա՛ անձդ քահանային
ցուցո՛ւր , և քու մաքրուելուդ համար ըն-
ծայ տուր , ինչպէս որ Մովսէս հրամայեց՝
15 անոնց վկայութիւն ըլլալու համար ։ Եւ
անոր վրայով խօսքը աւելի կը շատնար .
ու շատ ժողովուրդներ կը ժողվուէին մը-
տիկ ընելու , և իրենց հիւանդութիւննե-
16 րէն բժշկուելու ։ Ու ինքը անապատ տե-
ղուանք կը քաշուէր , և աղօթք կ'ընէր ։
17 Ու եղաւ որ մէկ օր մը ինքը կը սոր-
վեցրնէր , ու փարիսեցիները և օրինաց
վարդապետները նստեր էին . որոնք Գա-
լիլեացւոց ու Հրէաստանի ու Երուսա-
ղեմի բոլոր քաղաքներէն ժողվուած էին .
ու Տէրոջը զօրութիւնը կը յայտնուէր ա-
18 նոնք բժշկելու ։ Եւ ահա՛ քանի մը մար-
դիկ՝ մէկ անդամալոյծ մարդ մը մահիճովը
կը բերէին , և կ'ուզէին որ անիկայ ներս
19 խոթեն , ու դնեն անոր առջևը . Եւ երբ-
որ ամբոխին համար ճամբայ չէին գտներ՝
որ անկէց ներս խոթեն անիկայ , տանիքին
վրայ ելան , և առաստաղէն վար կախեցին
անիկայ , ու մահիճովը մէջտեղը Յիսուսի
20 առջևը իջեցուցին ։ Եւ տեսնելով անոնց
հաւատքը՝ ըսաւ անոր . Ո՛վ մարդ՝ քու
21 մեղքերդ քեզի ներուած ըլլայ ։ Դպիր-
ները ու փարիսեցիները սկսեցին մտածել ,
և ըսին . Ո՞վ է ասիկայ , որ հայհոյու-

Digitized by Google

[illegible]
[illegible]
[illegible] 22
[illegible]
[illegible] 23
[illegible]
[illegible]
[illegible] 24
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 25
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 26
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 27
[illegible]
[illegible]
[illegible] 28
[illegible]
[illegible] 29
[illegible]
[illegible]
[illegible] 30
[illegible]
[illegible]
[illegible]

Digitized by Google

րուն և մեղաւորներուն հետ կ'ուտէք ու
31 կը խմէք ։ Պատասխանի տուաւ Յիսուս՝
ու ըսաւ անոնց ․ Առողջներուն բժիշկ պէտք
32 չէ , հապա հիւանդներուն ։ Ես չեկայ արդար-
ները կանչելու՝ չեկայ , հապա մեղաւորները
ապաշխարութեան ։
33 Անոնք ալ ըսին անոր ․ Ինչո՞ւ Յով-
հաննէսին աշակերտները շատ անգամ ծոմ
կը պահեն , և աղօթք կ'ընեն , նոյնպէս
ալ Փարիսեցիներունը , այլ քուկիններդ ու-
34 տելու խմելու վրայ են ։ Ինքն ալ
ըսաւ անոնց ․ Կրնա՞ք հարսնիքին
տղաքը ծոմ պահեցնել , քանի
35 որ փեսան իրենց հետ է ։ Այլ օրեր
պիտի գան , որ երբ փեսան անոնցմէ վերց-
ուի , այն ատեն այն օրերը ծոմ պիտի
36 պահեն ։ Առակ մըն ալ ըսաւ անոնց ,
Թէ մէկը նոր լաթէն կտոր մը չկարեր
հնցած հագուստի վրայ ․ եթէ ոչ՝ ան
նորը ալ կը պատռէ , ու հնցածին հետ
չմիաբանիր այն նոր լաթէն եղած կտորը ։
37 Եւ մէկը նոր գինին հին տիկերու մէջ
չլեցըներ ․ եթէ ոչ՝ նոր գինին հին տիկե-
րը կը պատռէ , ինքը կը թափի , ու տի-
38 կերը կը կորնչին ։ Հապա նոր գինին
նոր տիկերու մէջ դնել պէտք է , ու եր-
39 կուքն ալ կը պահուին ։ Եւ մէկը հին
գինին խմելով , ու իսկոյն նորը ուզեր ․ ինչու-
նու որ կ'ըսէ , Թէ Հինը աւելի քաղցր է ։

Digitized by Google

## ԳԼ. Զ.

Եւ եղաւ որ երկրորդ առաջին շաբաթ 1
օրը՝ ինքը արտերուն մէջէն կ'անցնէր, ու
իր աշակերտները ցորենի հասկ կը փրցը-
նէին, ձեռքերնուն մէջը կը շփէին՝ ու կ'ու-
տէին։ Եւ փարիսեցիներէն ոմանք ըսին 2
անոնց. Ինչու բան կ'ընէք, որ օրի-
նաւոր չէ շաբաթ օրը։ Պատասխան 3
տուաւ անոնց Յիսուս՝ ու ըսաւ. Չէ՞ք
կարդացեր դուք Դաւիթին ըրածը, երբ-
որ անօթեցաւ ինքը՝ և իր հետը եղող-
ները. Ինչպէս անիկայ Աստուծոյ տունը 4
մտաւ, և առաջաւորութեան հացը կերաւ,
ու տուաւ անոնց ալ՝ որ իր հետն էին.
որ անիկայ ուտել օրինաւոր չէր մէկու մը,
միայն թէ քահանայապետներուն։ Եւ 5
ըսաւ անոնց, Որդին մարդոյ շաբաթին
ալ Տէր է։
Եւ եղաւ որ ուրիշ շաբաթ օրն ալ ին- 6
քը ժողովարանը մտաւ՝ ու կը սորվեցընէր.
և հոն տեղը մարդ մը կար, որ իր աջ
ձեռքը չորցած էր։ Եւ դպիրները ու 7
փարիսեցիները անոր կը սպասէին՝ որ շա-
բաթ օրը զանիկայ բժշկէ, որ չարախօ-
սութեան մը պատճառ գտնեն անոր վրայով։ Եւ 8
ինքը գիտէր անոնց մտքին մէջ եղածը,
ըսաւ այն մարդուն՝ որուն ձեռքը չորցած
էր. Ելի՛ր մէջտեղը կայնէ՛. ան ալ ելաւ
կայնեցաւ։ Յիսուս ըսաւ անոնց. Ձեզի 9
բան մը հարցընեմ. Շաբաթ օրը ի՞նչ

Digitized by Google

կը վայլէ , բարի՞ բան մը ընել՝ թէ չար
գործել , հոգի՞ մը ապրեցընել՝ թէ կորսըն-
10 ցընել : Ու բարկութեամբ չորս դին նա-
յելով ամենուն վրայ՝ ըսաւ անոր . Ձեռքդ
երկընցուր . ան ալ երկընցուց . և անոր
ձեռքը բժշկուեցաւ՝ ու մէկալին պէս ե-
11 ղաւ : Անոնք ալ կատղեցան , ու իրարու
հետ կը խօսէին՝ թէ ի՞նչ ընեն Յիսուսին :
12 Ու եղաւ որ ան օրերը լեռը ելաւ ա-
ղօթք ընելու , ու բոլոր գիշերը Աստու-
13 ծոյ աղօթք ընելով անցուց : Ու երբոր
առտու եղաւ՝ կանչեց իր աշակերտները ,
ու անոնցմէ տասներկուքը ընտրեց , որ ա-
14 նոնք առաքեալ ալ անուանեց : Սիմոնը՝
որ անիկայ Պետրոս ալ անուանեց , և ա-
նոր եղբայրը Անդրէասը , ու Յակոբոսը ,
և Յովհաննէսը , ու Փիլիպպոսը , և Բար-
15 թուղիմէոսը , Ու Մատթէոսը , և Թով-
մասը , ու Յակոբոս Ալփեանը , և Նա-
16 խանձայոյզ ըսուած Սիմոնը , Ու Յակո-
բին եղբայրը Յուդան , և Իսկարիովտացի
17 Յուդան՝ որ ինքը մատնիչ եղաւ : Ու ա-
նոնց հետը մէկ տափարակ տեղ մը իջաւ ,
ու իր աշակերտներուն ժողովը՝ ու մեծ
բազմութիւն մը ժողովուրդներու բոլոր
Հրէաստանէն , ու Երուսաղեմէն , և մէ-
կալ կողմէն , ու Տիւրոսի և Սիդոնի ծո-
18 վեզերքէն . Որ եկան անկէց լսելու , ու
իրենց հիւանդութիւններէն բժշկուելու .
ու պիղծ դևերէն նեղութիւն կրողներն ալ
19 կը բժշկուէին : Ու բոլոր ժողովուրդը

Digitized by Google

կ՚ուզէր իրեն մօտենալ․ ինչու որ շատ
զօրութիւն կ՚ելլէր իրմէն, ու ամէնը կը
բժշկէր։

Ետք ինքը իր աչքերը դէպ ի իր աշա- 20
կերտներուն վերցուց՝ ու ըսաւ․ Երանի՜
հոգւով աղքատներուդ, ինչու որ ձերն է
Աստուծոյ թագաւորութիւնը։ Երանի՜ 21
անոնց՝ որ հիմա անօթի են, ինչու որ պի-
տի կշտանան․ Երանի՜ անոնց՝ որ հիմա
կուլան, ինչու որ պիտի խնդան։ Երանի՜ 22
է ձեզի՝ երբոր մարդիկ ձեզ նախատեն,
և երբոր ձեզ իրենց ընկերութենէն զատեն՝
ու ատեն, ու ձեր վրայով գէշ անուն հա-
նեն Որդւոյ մարդոյ պատճառովը․ Ու- 23
րախ եղէք դուք այն օրը՝ ու ցնծացէք,
որ ահա՛ ձեր վարձքը շատ է երկինքը․
ատ կերպով իրենց հայրերը մարգարէնե-
րուն կ՚ընէին։ Բայց վա՜յ ձեզի հարուստ- 24
ներուդ, ինչու որ ձեր մխիթարութիւնը
առած էք։ Վա՜յ ձեզի՝ որ հիմա կուշտ 25
էք, ինչու որ պիտի անօթենաք․ վա՜յ
ձեզի՝ որ հիմա կը ծիծաղիք, ինչու որ
սուգ պիտի ընէք ու լաք։ Վա՜յ ձեզի՝ 26
երբոր ձեր վրայով աղէկ ըսեն բոլոր մար-
դիկ, ինչու որ իրենց հայրերը ատանկ կ՚ը-
նէին սուտ մարգարէներուն։

Բայց կ՚ըսեմ ձեզի, որ մտիկ կ՚ընէք․ 27
Սիրեցէք ձեր թշնամիները, ձեզ ատող-
ներուն բարի՛ ըրէք։ Ձեզ անիծողները 28
օրհնեցէք, ձեզի նեղութիւն տուողներուն
վրայ աղօթք ըրէք։ Ան որ քու ծնօտիդ 29

Digitized by Google

կը զարնէ, միւսալն ալ մօտեցուր անոր.
և ան որ քու վերարկուդ քեզմէ կը հանէ,
30 մի՛ արգիլեր անկից շապիկդ ալ : Ան ա-
մենուն որ քեզմէ կ'ուզէ՝ տուր, ու ինչ որ
մէկը քեզմէ կը հանէ՝ մի՛ պահանջեր :
31 Եւ ինչպէս կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն,
32 դուք ալ անանկ ըրէք անոնց : Եւ թէ որ
դուք ձեր սիրելիները սիրէք՝ ի՞նչ շնորհ
կ'ունենաք, ինչու որ մեղաւորներն ալ կը
33 սիրեն իրենց սիրելիները : Եւ թէ որ դուք
ձեզի բարի ընողներուն բարի ընէք, ի՞նչ
շնորհ կ'ունենաք, ինչու որ մեղաւորներն
34 ալ նոյն բանը կ'ընեն : Եւ թէ որ ա-
նանկ մարդիկներուն փոխ տաք՝ որոնցմէ
յոյս ունիք առնելու, ի՞նչ շնորհ կ'ունե-
նաք, ինչու որ մեղաւորներն ալ մեղաւոր-
ներուն փոխ կու տան, որ նոյն չափովը
35 ետ առնեն : Հապա սիրեցէք դուք ձեր
թշնամիները, ու ձեզ ատողներուն բարի՛
ըրէք. և փոխ տուէք անոր՝ ուսկից որ
առնելու յոյս չունիք. որ ձեր վարձքը
շատ ըլլայ, ու Բարձրեալին որդիքը ըլ-
լաք. ինչու որ անիկայ քաղցր է չարերուն
36 և ապերախտներուն վրայ : Ու գթած
եղիք՝ ինչպէս որ ձեր Հայրն ալ գթած է :
37 Մի՛ դատէք, և պիտի չդատուիք. մի՛
պատժէք, ու պիտի չպատժուիք. արձը-
38 կեցէք, և պիտի արձըկուիք : Տուէք՝ ու
ձեզի ալ պիտի տրուի. աղէկ չափով՝
կոխուած՝ ցնցուած՝ լեփլեցուն պիտի տրուի
ձեր ծոցը. ան չափովը՝ որով դուք կը
չափէք, ձեզի պիտի չափուի :



Digitized by Google

Առակ մըն ալ ըսաւ անոնց. Միթէ 39
կոյր կոյրին կրնա՞յ առաջնորդութիւն ը-
նել. չէ՞ որ երկուքն ալ փոսը կ՚իյնան։
Աշակերտը իր վարդապետէն աւելի չէ. 40
ամէն կատարեալը իր վարդապետին պէս
կ՚ըլլայ։
Ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շիւղը 41
կը տեսնես, և քու աչքիդ մէջի գերանը
չես նայիր։ Կամ թէ ինչպէ՞ս կրնաս ը- 42
սել քու եղբօրդ. Եղբայր, թող տուր որ
աչքիդ մէջէն շիւղը հանեմ. և դուն քու
աչքիդ մէջի գերանը չես տեսներ. կեղծ-
ւաւոր՝ առաջ քու աչքէդ գերանը հանէ՛,
ու ետքը աղէկ նայէ քու եղբօրդ աչքէն
շիւղը հանելու։ Ինչու որ չկայ աղէկ 43
ծառ մը՝ որ գէշ պտուղ բերէ. և ոչ գէշ
ծառ մը՝ որ աղէկ պտուղ բերէ. Վասն 44
զի ամէն մէկ ծառ իր պտուղէն կը ճանչ-
ցուի. ինչու որ փուշերէն թուզ չեն քաղ-
եր, ոչ ալ մորենիէն խաղող չեն ժողվեր։
Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բա- 45
րի բան կը բղխէ, և չար մարդը՝ իր սրտին
չար գանձէն չար բան կը բղխէ. ինչու որ
իր բերանը սրտին աւելցածէն կը խօսի։
Ինչո՞ւ զիս Տէ՛ր Տէ՛ր կը կանչէք, ու 46
ըսածս չէք ըներ։ Ամէն մէկը որ ինծի կու 47
գայ, և իմ խօսքերս կը լսէ ու անոնք կը
կատարէ, ձեզի ցուցնեմ որո՛ւ կը նմանի։
Անիկա տուն շինող մարդու մը կը նմանի, 48
որ փորեց ու խորունկցուց, և հիմը քարին
վրայ դրաւ. ու ջրհեղեղները զարնելով

դեռը զարկ...
զանիթկայ՝ շա...
49 քարի՝ վիմայ ...
որ ինձ խօսքե...
նի ան՝ մարդ...
հիմի տուն կ...
և շուտ մը ի...
նուամը մեծ եր...

1 Ու երրորդ...
ժողովուրդին...
2 նայում ։ Ս...
ծանր հիւանդ...
3 սիրելի էր ան...
յով լանց՝ ...
խորհեց , աղա...
4 ուան աղբերը...
սուսին՝ շատ ...
թէ։ Նիկայ...
5 շնորհը պիտի...
կը սիրէ , և
6 մեզի ։ Ու
երրոր տունէ...
պէտոր տանի...
և բանու իրե...
որ եռ աղ...
7 տանը մանեւ...
ալ արժանի...
պա՝ խօսքով...
8 բժշկումի ։ Ի...

տակդրուած մարդ մըն եմ, իմ հրամա-
նիս տակը զինուորներ ունիմ. եւ մէկուն
կ'ըսեմ՝ Գնա՛, ու ան կ'երթայ, եւ ու-
րիշին՝ Թէ Եկո՛ւր, ու կու գայ, եւ ծա-
ռայիս՝ Թէ Սա բանը ըրէ՛, ու կ'ընէ։
Եւ երբոր աս լսեց Յիսուս, զարմացաւ. 9
դարձաւ դէպ'ի ժողովուրդին որ իր ետե-
ւէն կ'երթային, ու ըսաւ. Ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի, որ Իսրայէլի մէջ ալ ես այս-
չափ հաւատք չգտայ։ Եւ պատգամաւոր- 10
ները նորէն տուն դարձան, ու հիւանդ
ծառան բժշկուած գտան։

Եւ եղաւ որ հետեւեալ օրը քաղաք մը 11
կ'երթար, որուն անունը Նային էր. եւ իր
հետը կ'երթային իր աշակերտներէն ալ,
ու շատ ժողովուրդ։ Երբոր քաղաքին 12
դրանը մօտեցաւ, ահա՛ մեռել մը դուրս
կ'ելլէր՝ իր մօրը մէկ հատիկ տղան, եւ ինք
որբեւայրի էր, ու քաղաքին շատ ժո-
ղովուրդը անոր հետն էր։ Տէրը երբոր 13
անիկայ տեսաւ՝ մեղքցաւ անոր, ու ը-
սաւ. Մի՛ լար։ Եւ գնաց դագաղին 14
մօտեցաւ, ու անոնք որ վերցուցեր էին
տանէին՝ կանգ առին. եւ ըսաւ. Ո՛վ պա-
տանի՝ քեզի կ'ըսեմ, Ելի՛ր։ Մեռելը ե- 15
լաւ նստաւ, եւ սկսաւ խօսիլ. ու տուաւ
զանիկայ իր մօրը։ Եւ բոլորն ալ վախով 16
բռնուեցան. եւ զԱստուած կը փառաւո-
րէին ու կ'ըսէին, Թէ Մեծ մարգարէ
մը ելեր է մեր մէջը. եւ Թէ Աստուած իր
ժողովուրդին այցելութիւն ըրաւ բարւա-

17 թիւնով ։ Եւ աս ձայնը իր վրայով՝ բո-
լոր Հրէաստան ելաւ , ու ան աշխարհին
բոլոր կողմերը ։
18 Եւ Յովհաննէսին պատմեցին իր աշա-
կերտները աս ամէն բաներուն վրայով ։
19 Յովհաննէս ալ իր աշակերտներէն երկու-
քը իրեն կանչեց , խրկեց առ Տէրոջը՝
ու ըսաւ . Դո՞ւն ես՝ որ գալու էիր , թէ
20 ուրիշի մը սպասենք ։ Եւ ան մարդիկը ե-
կան իրեն՝ ու ըսին . Յովհաննէս Մկրտիչ
մեզ խրկեց քեզի , ու կ՚ըսէ . Դո՞ւն ես՝
որ գալու էիր , թէ ուրիշի մը սպասենք ։
21 Եւ նոյն ժամուն մէջ շատերը բժշկեց իրենց
հիւանդութիւններէն՝ ու հարուածներէն՝
և չար դևերէն , ու շատ կոյրերուն ալ
22 տեսնելու կարողութիւնը տուաւ ։ Պա-
տասխան տուաւ անոնց Յիսուս ու ըսաւ .
Գացէք Յովհաննէսին պատմեցէք ինչ որ
տեսաք ու լսեցիք . որ կոյրերը կը տես-
նեն , կաղերը կը քալեն , բորոտները կը
մաքրուին , խուլերը կը լսեն , մեռելները
յարութիւն կ՚առնեն , աղքատներուն ա-
23 ւետարան կը քարոզուի . Եւ երանի՝ անոր՝
որ իմ վրաս չգայթակղի ։
24 Եւ երբոր Յովհաննէսին խրկած մարդի-
կը գացին , սկսաւ ժողովուրդներուն հետը
խօսիլ Յովհաննէսին համար . Ի՞նչ տես-
նելու ելաք անապատը , հովէն շարժուած
25 եղէ՞գ մը ։ Հապա ի՞նչ տեսնելու ելաք .
փափուկ հագուստներով զարդարուած
մա՞րդ մը . ահա՝ անոնք որ փափուկ հա-

Digitized by Google

զգեստներու ու փափկութեան մէջ են
թագաւորական պալատներուն մէջ : Հա- 26
պա ինչ տեսնելու ելաք . Մարգարէ՞ :
Այո՛ ձեզի կ'ըսեմ որ Մարգարէէ մըն ալ
աւելի : Ասիկա որ անիկայ է , որուն հա- 27
մար գրուած է ; թէ Ահա՛ իմ դեսպանս
քու առջեւէդ կը ղրկեմ , որ քու ճամբադ
քու առջեւէդ շինէ : Ճշմարիտ կ'ըսեմ 28
ձեզի . Կիներէն ծնածներուն մէջ Յով-
հաննէսէն մեծ մարգարէ չկայ . բայց Աս-
տուծոյ թագաւորութեան մէջի պզտիկը
անկէ մեծ է :

Եւ բոլոր ժողովուրդը երբոր լսեց ու 29
մաքսաւորներն ալ , արդարացուցին զԱս-
տուած ; որ Յովհաննէսին մկրտութիւնո-
վը մկրտուեցան : Բայց փարիսեցիները 30
և օրինականները Աստուծոյ խորհուրդը ի-
րենց անձին մէջ անարգեցին , որ անկէ
չմկրտուեցան :

Արդ որո՞ւ նմանցնեմ աս ազգին մար- 31
դիկը ; և որո՞ւ կը նմանին : Կը նմանին ան 32
տղոցը որ շուկաներու կը նստին , մէկզմէկ կը
կանչեն ու կ'ըսեն . Ձեզի փող հնչեցուցինք և
չպարեցիք . ողբացինք ու չլացիք : Յով- 33
հաննէս Մկրտիչ եկաւ՝ չէր ուտեր և չէր
խմեր , ու կ'ըսէիք . Դեւ կայ անոր ներ-
սը : Որդին մարդոյ եկաւ կ'ուտէ ու 34
կը խմէ , և կ'ըսէք . Ահա՛ ուտող և արբե-
ցող մարդ մը՝ մաքսաւորներուն ու մեղա-
ւորներուն բարեկամը : Եւ իմաստութիւ- 35
նը արդարացաւ իր որդիներէն :

Digitized by Google

36 Փարիսեցիներէն մէկը կ'աղաչէր Յիսու-
սին՝ որ իր հետը հաց ուտէ. ան ալ փա-
րիսեցիին տունը մտաւ՝ սեղան նստաւ ։
37 Ու քաղաքին մէջը մեղաւոր կնիկ մը կար.
երբոր գիտցաւ՝ թէ փարիսեցիին տունը
սեղան նստեր է, մէկ շիշ մը պատուական
38 եղ բերաւ. Ետեւի կողմէն անոր ոտքե-
րուն քովը կեցեր՝ կուլար, և արցունքովը
սկսեց անոր ոտքերը թրջել, և իր գլխուն
մազերովը կը սրբէր, և կը համբուրէր ա-
39 նոր ոտքերը, ու եղով կ'օծէր ։ Ու երբ
տեսաւ փարիսեցին՝ որ անիկայ հրաւիրեր
էր, կ'ըսէր իր միտքին մէջը. Ասիկայ
թէ որ մարգարէ մը ըլլար, ուրեմն կը
գիտնար թէ ո՞վ՝ և ի՞նչպէս կնիկ է իրեն
40 մօտեցողը. ինչու որ մեղաւոր է ։ Պա-
տասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոր.
Սիմոն՝ քեզի բան մը ունիմ ըսելու. ան
ալ ըսաւ. Ըսէ՛ վարդապետ. և ըսաւ.
41 Մէկ փոխ տուող մը երկու պարտըկան
ունէր. մէկը հինգ հարիւր դահեկան
42 պարտք ունէր, ու մէկալը՝ յիսուն ։ Ու
երբոր բան մը չունէին որ հատուցանեն,
երկուքին ալ շնորհեց. հիմա ըսէ՝ Ո՞րը
43 շատ կը սիրէ զանիկայ ։ Ըսաւ Սիմոն.
Ինծի ասանկ կ'երեւնայ, թէ որուն որ շատ
շնորհեց. ան ալ ըսաւ իրեն. Շիտակ
44 դատեցիր ։ Ու դառնալով դէպ ՚ի ան
կնիկը՝ ըսաւ Սիմոնին. Կը տեսնե՞ս աս
կնիկը. քու տունդ մտայ, դուն ոտքիս
ջուր չտուիր. բայց ասիկայ իր արցուն-

Digitized by Google

քովը ոտքերս թրջեց, և իր մազերովը
սրբեց։ Դուն ինծի համբոյր մը չտուիր. 45
ասիկայ ահա՛ հոս մտնելէս ՚ի վեր ոտքերս
համբուրելէն չդադրեցաւ։ Եղով իմ գլ- 46
լուխս չօծեցիր. ասիկայ անուշ եղով
օծեց։ Ասոր համար կ'ըսեմ քեզի. Նե- 47
րուած ըլլայ անոր իր շատ մեղքերը, ին-
չու որ շատ սիրեց. վասն զի որուն որ շատ
կը թողուի՝ շատ կը սիրէ. և որուն որ քիչ՝
քիչ։ Ու ըսաւ անոր. Քու մեղքերդ 48
քեզի ներուին։ Ու իրեն հետ սեղան 49
նստողները սկսեցին իրենց մէջէն ըսել.
Ո՞վ է աս՝ որ մեղաց թողութիւն կու տայ։
Ու ինքը ըսաւ կնկանը. Քու հաւատքդ 50
քեզ ազատեց, գնա՛ խաղաղութեամբ։

## ԳԼ. Ը.

Ու եղաւ որ անկէ ետեւ՝ ալ ինքը կը 1
պտըտէր քաղաքները ու գեղերը, կը քա-
րոզէր՝ և Աստուծոյ թագաւորութիւնը
կ'աւետարանէր. ու տասներկուքն ալ իր
հետը. Ու քանի մը կնիկներ՝ որ չար 2
դեւերէ ու հիւանդութիւններէ բժշկուեր
էին, Մարիամը՝ որ Մագդաղենացի կ'ը-
սուէր, ասկից որ եօթը դեւ ելեր էր.
Ու Յովհաննա՝ Հերովդէսին տանը վե- 3
րակացուն Քուզային կնիկը, ու Շուշանը.
և շատ ուրիշները, որոնք իրենց ստա-
ցուածքովը անոր ծառայութիւն կ'ընէին։
Ու երբոր շատ ժողովուրդներ ժողվուե- 4
ցան, ու շատ քաղաքներէն իրեն որ եկան,

Digitized by Google

5 առակով մը ըսաւ անոնց. Սերմ ցանող մը
ելաւ իր սերմերը ցանելու. ու ցանած ա-
տենը՝ մէկ քանիներ ճամբուն վրայ ինկան,
ու ոտքի կոխկռտուեցան, ու երկնքի
6 թռչունները կերան անոնք։ Ուրիշը
ապառաժի վրայ ինկաւ, ու բուսնելէն
ետքը չորցաւ՝ հողին պարարտութիւն չունե-
7 նալուն համար։ Ուրիշը փուշերու
մէջ ինկաւ, ու փուշերը անոր հետ
8 բուսնելով խեղդեցին անիկայ։ Ուրիշն ալ
աղէկ ու պարարտ հողի վրայ ինկաւ,
ու բուսնելով հարիւրապատիկ պտուղ
տուաւ. Երբոր ասոնք զրուցեց, կանչեց՝ Ով
որ լսելու ականջ ունի, թող լսէ։
9 Աշակերտները կը հարցընէին անոր, թէ
10 ի՞նչ պիտի ըլլայ այս առակը։ Ան ալ
ըսաւ. Աստուծոյ թագաւորութեան խոր-
հուրդները ձեզի տրուած է գիտնալ. բայց
ուրիշներուն առակներով. որ տեսնե-
լով ու չտեսնեն, ու լսելով ալ չի-
մանան։
11 Առակին միտքը աս է. Սերմը Աս-
12 տուծոյ խօսքն է։ Ու ճամբուն վրայի-
ները անոնք են՝ որ կը լսեն, ու ետքը Սա-
տանան կու գայ՝ անոնց սրտէն կը հանէ ան
խօսքը, որ չըլլայ թէ հաւատան՝ ու փրկ-
13 ուին։ Իսկ ապառաժին վրայինները ա-
նոնք են՝ որ երբոր կը լսեն, ուրախու-
թեամբ կ'ընդունին սա խօսքը. բայց ար-
մատ չունին, մէկ ատեն մը կը հաւատան՝
ու փորձութեան ժամանակը կը հեռանան։

Digitized by Google

Իսկ փուշերուն մէջ ինկածն ալ անոնք են՝ 14
որ երբ որ խօսքը կը լսեն, ու աշխարհքիս
հոգերովը ու մեծութիւնովը և ցանկու-
թիւնովը զբաղած ըլլալով՝ կը խեղդուին,
և անպտուղ կ'ըլլան։ Բայց պարարտ 15
հողին վրայինները անոնք են՝ որ բարի և յօ-
ժար սրտիւ լսելով ան խօսքը՝ կ'ընդունին,
ու համբերութիւնով պտուղ կու տան։

Չկայ մէկը որ ճրագը վառէ՝ ու ամանի 16
մը տակ՝ կամ մահիճին ներքևը դնէ. հա-
պա աշտանակին վրայ կը դնէ, որ ներս
մտնողները լոյս տեսնեն։ Չկայ ծածուկ 17
բան մը որ յայտնի չըլլայ. ո՛չ ալ գաղ-
տնուկ բան մը որ չգիտցուի՝ ու երևան չել-
լէ։ Ուստի նայեցէ՛ք՝ թէ ինչպէս կը 18
լսէք. քանզի ով որ ունի՝ անոր պիտի
տրուի, և ով որ չունի՝ ան ալ որ ինքը
կը կարծէ թէ ունի, անկից պիտի վեր-
ցուի։

Իր մայրը ու եղբայրները իրեն եկան, 19
և բազմութենէն չէին կրնար անոր հասնիլ։
Իմացուցին անոր՝ ու ըսին. Մայրդ ու 20
եղբայրներդ դուրսը կեցեր են, ու քեզ
տեսնել կ'ուզեն։ Իսկ ըսաւ անոնց. Իմ 21
մայրս ու իմ եղբայրներս անոնք են, որ
Աստուծոյ խօսքը կը լսեն և կը կատարեն։

Իսկ եղաւ որ մէկ օր մը ինքը նաւը մը- 22
տաւ, ու իր աշակերտներն ալ, և ըսաւ
անոնց. Եկէք աս ծովակին մէկալ կող-
մը անցնինք. ու գացին։ Իսկ երբոր նա- 23
ւով կ'երթային՝ ինքը քնացաւ, ու հողմ

Digitized by Google

փոթորիկ մը իջաւ ծովակին վրայ, և կ'ու-
ռենային, ու իրենք մեծ նեղութեան մէջ
24 էին։ Մօտեցան արթնցուցին անիկայ՝
ու ըսին. Վարդապետ, վարդապետ, աՀա
կը կորսուինք. անիկա ալ ելաւ սաստեց Հովին,
ու ջուրերուն խռովութեանը՝ և Հանդարտ-
25 ուեցան, ու խաղաղութիւն եղաւ։ Ըսաւ
անոնց. Ո՞ւր է ձեր Հաւատքը. և վախի մէջ
ինկած զարմացան, ու իրարու կ'ըսէին.
Արդեօք ասիկայ ո՞վ պիտի ըլլայ, որ Հո-
վերուն ու ջուրերուն ալ Հրաման կու տայ,
և կը Հնազանդին ասոր։
26 Ու նաւելով իջան Գերգեսացւոց երկի-
27 րը, որ Գալիլեայի դիմացն կողմն է։ Ու ի-
նքը ցամաքը ելլելուն պէս՝ ան քաղաքէն
մէկ մարդ մը եկաւ դիմացը, որուն ներսը
դևեր կային, ու շատ ատեն Հանդերձ չէր
Հագած, ոչ ալ տուն մէջ բնակած, Հապա
28 գերեզմաններու մէջ։ Իսկ Յիսուսը տես-
նելով՝ աղաղակեց, ու ինկաւ անոր առ-
ջևը, ու բարձր ձայնով ըսաւ. Ինծի ի՞նչ
Հետս ի՞նչ բան ունիս՝ Յիսուս Բարձրեալ
Աստուծոյ Որդին, կ'աղաչեմ քեզի՝ զիս
29 մի' տանջեր. (Ինչու որ Հրաման կու տար
անոր պիղծ դևին՝ որ ան մարդէն ելլէ. ո-
րովՀետև շատ ատեններ՝ որ անիկայ յափշտա-
կած էր. և շղթաներով կը կապուէր,
ու երկաթներու մէջ կը պաՀուէր. և ան
կապերը կը կտրէր, ու դևէն անապա-
30 տը կը քշուէր.) Հարցուց անոր Յիսուս՝
ու ըսաւ. Անունդ ի՞նչ է. անիկա ալ ըսաւ.

[illegible] 31
[illegible]
[illegible] 32
[illegible]
[illegible] 33
[illegible]
[illegible] 34
[illegible] 35
[illegible] 36
[illegible] 37
[illegible] 38
[illegible] 39
[illegible]
[illegible] 40

Digitized by Google

ժողովուրդը զինքը ընդունեց. ինչու որ ամէնքը
41 անոր կը սպասէին ։ Եւ ահա՛ Յայրոս ա-
նունով մարդ մը եկաւ, և ինք ժողովա-
րանին իշխանն էր. ինկաւ Յիսուսին ոտ-
քը, ու կ'աղաչէր անոր՝ որ իր տունը մտնէ.
42 Քանզի որ մէկ հատիկ աղջիկ մը ունէր գրե-
թէ տասնըերկու տարեկան, որ մեռնելու
մօտ էր. ու երբ կ'երթար, ժողովուր-
դները զինքը կը նեղէին ։
43 Եւ մէկ կնիկ մը կար, որ տասներկու
տարիէ ի վեր արիւնի տեղատուութիւն ունէր,
մէկն էր, որ իր բոլոր ապրուստը բժիշկնե-
րուն ծախսեր էր, որ անոնց մէկէն մը
44 բժշկուելու ճար մը եղած չէր. ետեւէն
մօտենալով՝ դպաւ անոր հանդերձին ծայ-
րին, ու նոյն ժամուն արիւնին վազելը
45 կեցաւ ։ Եւ ըսաւ Յիսուս. Ո՞վ է ան՝
որ ինծի դպաւ. երբոր ամէնը կ'ուրանային, ը-
սաւ Պետրոս ու իր հետ եղողները.
Վարդապետ՝ ժողովուրդները քեզ կը ճնշեն
46 ու կը նեղեն ։ Եւ Յիսուս ըսաւ. Մէկը
ինծի դպաւ, քանզի իմացայ որ ինծմէ
47 զօրութիւն մը ելաւ ։ Երբոր տեսաւ կնի-
կը՝ որ ծածկուիլ չկրցաւ, դողա-
լով եկաւ, ու ինկաւ անոր առջեւ. ու
բոլոր ժողովուրդին առջեւ պատմեց՝ թէ
ինչ բանի համար դպեր էր, եւ թէ
48 ինչպէս շուտով բժշկուեցաւ ։ Յիսուս ալ
ըսաւ. Աղջի՛կ, վստահ եղիր, քու հաւատքդ
քեզ ազատեց. գնա՛ խաղաղութեամբ ։
49 Ու երբոր ինքը կը խօսէր, մարդ

վերդ-ապետին տունէն մէկը եկաւ, և ըսաւ
անոր. Աղջիկդ մեռաւ, ալ անիկայ մի՛
յոգնեցըներ։ Բայց Յիսուս երբոր լսեց, 50
պատասխանի տուաւ անոր՝ ու ըսաւ. Մի՛
վախնար, միայն հաւատա՛ ու պիտի ապ-
րի։ Իսկ երբ տունը մտաւ՝ ուրիշ մէկը 51
թող չտուաւ որ մտնէ, բայց միայն Պետ-
րոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը, ու 52
աղջկանը հայրը և անոր մայրը։ Ամէն
ալ կ՚ուլային ու կ՚ողբային անոր վրայ. և
ինքը ըսաւ, Մի՛ լաք. ինչու որ մեռած
չէ, հապա կը քնանայ։ Իսկ անոնք ծաղր 53
կ՚ընէին անիկայ. ինչու որ գիտէին՝ թէ մեռ-
աւ։ Ու ինքը ամէնն ալ դուրս հանելով, 54
բռնեց անոր ձեռքէն, կանչեց ու ըսաւ.
Աղջիկ՝ ելի՛ր կայնէ՛։ Իսկ անոր հոգին 55
դարձաւ, ու շուտ մը կայնեցաւ. և հրա-
մեց ըսաւ որ ուտելիք տան անոր։ Ու 56
անոր ծնողքը զարմացան. և ինքը պա-
տուիրեց որ եղած բանը մէկու մը չըսու-
ցեն։

## ԳԼ. Թ.

Իսկ տասներկու առաքեալները կանչեց, 1
անոնց զօրութիւն ու իշխանութիւն տուաւ
բոլոր դևերուն վրայ, և հիւանդութիւն-
ները բժշկելու։ Իսկ անոնք ղրկեց որ 2
Աստուծոյ թագաւորութիւնը քարոզեն,
ու ցաւագարները բժշկեն։ Իսկ ըսաւ ա- 3
նոնց. Ճամբու համար բան չառնէք, ոչ
գաւազան՝ և ոչ տոպրակ, ոչ հաց՝ և

Digitized by Google

ոչ ստակ, ոչ ալ երկու հանդերձ ունե-
4 նաք։ Եւ ո՛ր տունն որ մտնէք՝ հոն մնացէք,
5 ու անկից գացէք։ Եւ անոնք որ ձեզ չեն
ընդունիր, երբոր անոր քաղաքէն կ'ելլէք,
ձեր ոտքերուն փոշին թօթուեցէք՝ իրենց
6 դէմ վկայութիւն ըլլալու։ Ու ելան քա-
ղաքները և գիւղերը կը պտըտէին, աւետա-
րանը կը քարոզէին՝ և ամէն տեղ բժշկու-
թիւն կ'ընէին։
7 Հերովդէս չորրորդապետը անոր բոլոր
գործքերը լսելով՝ կը զարմանար, որովհե-
8 տեւ ոմանք ըսած էին, թէ Յովհաննէ-
սը յարութիւն առաւ մեռելներէն. և
ոմանք՝ թէ Եղիան յայտնուեցաւ. և
ուրիշներն ալ՝ թէ Առջի մարգարէներէն
9 մէկը յարութիւն առաւ։ Հերովդէս ը-
սաւ. Յովհաննէսը ես գլխատեցի. հապա
ասիկայ ո՞վ պիտի ըլլայ, որուն համար
ասանկ բաներ կը լսեմ. ու կ'ուզէր որ
տեսնէ զանիկայ։
10 Առաքեալները դարձան, և պատմեցին
անոր՝ ամէն ինչ որ ըրին. ու առաւ զա-
նոնք՝ առանձին անապատ տեղ մը քա-
շուեցաւ քաղաքի մը քով, որուն անունը
11 Բեթսայիդա էր։ Եւ ժողովուրդները
երբոր իմացան, գացին անոր ետեւէն, ու
զանոնք ընդունելով՝ կը խօսէր անոնց հետ
Աստուծոյ թագաւորութեանը վրայով. և
անոնք որ բժշկութեան կարօտ էին՝ կը
բժշկէր։
12 Ու երբոր օրը սկսեց իրիկուան մօտե-

նալ՝ տասներկուքը եկան ու ըսին անոր ։
Արձակէ ժողովուրդները, որ աս շրջակայ
գիւղերը ու ագարակները երթան հանգստա-
նան, ու կերակուր գտնեն ։ Ինչու որ
հոս անապատ տեղ մըն ենք ։ Ըսաւ ան- 13
նոնց ։ Դուք տուէք անոնց ուտելիք ։ Ա-
նոնք ալ ըսին ։ Մենք հինգ նկանակէն
ու երկու ձուկէն աւելի բան չունինք, թէ
որ չերթանք աս ժողովուրդին համար ալ
լաւ կերակուր չգնենք ։ (Վասն զի հինգ 14
հազարի չափ մարդիկ կային ։) Ըսաւ իր
աշակերտներուն ։ Ատոնք դաս դաս յիսուն
յիսուն նստեցուցէք ։ Ու անանկ ըրին, 15
ու ամէնքը նստեցուցին ։ Ու առաւ հինգ 16
նկանակը եւ երկու ձուկը ու դէպի
'ի երկինք նայելով՝ օրհնեց, ու կտրեց
ու տուաւ աշակերտներուն, որ ժողովուր-
դին առջեւ դնեն ։ Կերան ու կշտացան 17
ամէնքն ալ, ու վերցուցին մնացորդը տասն-
երկու սակառ փշրանքներ ։

Եղաւ որ երբ ինքը առանձին աղօթք 18
կ'ընէր, իր աշակերտներն ալ իր հետ
էին, հարցուց անոնց ու ըսաւ ։ Ժողո-
վուրդները զիս համար ո՞վ կ'ըսեն թէ ե-
եմ ։ Անոնք ալ պատասխան տուին ըսին ։ 19
Յովհաննէս Մկրտիչը, ու ուրիշներ Եղիան,
ուրիշներն ալ թէ հին մարգարէներէն
մէկը յարութիւն առեր է ։ Ըսաւ 20
անոնց ։ Դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք
թէ եմ ։ Պատասխան տուաւ Պետրոս ու
ըսաւ ։ Աստուծոյ Քրիստոսը ։ Իսկ ինք 21

Digitized by Google

սաստիկ պատուիրեց անոնց, որ մէկու մը
22 չըսեն աս բանը. Ու ըսաւ, Թէ Պէտք
է որ Որդին մարդոյ շատ չարչարուի, և
քահանայապետներէն ու ծերերէն և դը-
պիրներէն անարգուի, ու սպաննուի, ու
23 երրորդ օրը յարութիւն առնէ: Ու ա-
մենուն կ'ըսէր. Ով որ մէկը կ'ուզէ իմ ե-
տևէս գալ, իր անձը թող ուրանայ՝ և շա-
րունակ իր խաչը առնէ, ու գայ իմ ետևէս:
24 Վասն զի ով որ իր անձը ապրեցընել կ'ու-
զէ, պիտի կորսնցընէ զանիկայ. և ով որ
իր անձը ինծի համար կը կորսնցընէ՝ պիտի
25 ապրեցընէ զանիկայ: Ի՞նչ շահ է մարդու
մը, թէ որ աշխարհը վաստըկի, և իր
26 անձը կորսնցընէ կամ վնասէ: Վասն զի
ով որ զիս ու իմ խօսքերս ամօթ կը սեպէ,
Որդին մարդոյ ալ զանիկայ ամօթով պի-
տի ընէ՝ երբոր գալու ըլլայ իր ու Հօրը
27 և սուրբ հրեշտակներուն փառքովը: Բայց
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ հոս կայնողնե-
րէն մէկ քանիները կան, որոնք մահուան
համը պիտի չառնեն, մինչև որ Աստուծոյ
թագաւորութիւնը տեսնեն:

28 Ու եղաւ որ աս խօսքերէն գրեթէ ութ
օր ետքը՝ Պետրոսը ու Յակոբոսը և Յով-
հաննէսը առաւ, լեռը ելաւ աղօթք ընե-
29 լու: Ու երբոր ինքը աղօթք կ'ընէր՝ իր
երեսին տեսքը ուրիշ կերպ մը եղաւ, ու
իր հագուստը փոխուեցաւ եղաւ ճերմակ
30 փայլուն: Ու ահա՛ երկու մարդիկ իր
հետը կը խօսէին, որոնք Մովսէսը ու Ե-



Digitized by Google

ղեան էին , փառքով երեւցած , և անոր 31
կենացը վախճանին վրայով կը խօսէին , որ
Երուսաղէմին մէջ պիտի կատարուէր :
Բայց Պետրոս և անոր հետ եղողները քու- 32
նով ծանրացած էին , արթընցան , տեսան
անոր փառքը , ու ան երկու մարդիկը՝ որ
անոր քովը կեցեր էին : Եւ եղաւ որ երբ 33
անոնք զատուեցան անոր քովէն , Պետրոս
ըսաւ Յիսուսին . Վարդապետ՝ աղէկ է որ
մենք հոս մնանք . ու երեք խրճիթ շինենք ,
մէկը քեզի , ու մէկը Մովսէսին , և մէկն ալ
Եղիային . ու չէր գիտեր ի՛նչ կը խօսէր :
Եւ երբոր աս ըսաւ , ամպ մը եկաւ ու 34
անոնց վրայ հովանի եղաւ ; և ամպին
տակը մտած ատեններնին վախցան : Ձայն 35
մը եղաւ ամպէն՝ ու ըսաւ . Ասիկա՛յ է
իմ ընտրեալ Որդիս , անոր մտիկ ըրէք :
Եւ ան ձայնը որ եղաւ , Յիսուս մինակ գըտ- 36
նուեցաւ : Ու իրենք ալ լուռ կեցան ,
և իրենց տեսածներէն՝ ան օրերը մէկուն
բան մը չըպատմեցին :

Եւ եղաւ որ հետևեալ օրը երբոր անոնք 37
լեռնէն վար կ'իջնէին , շատ ժողովուրդ ա-
նոր դէմը ելաւ : Եւ ահա՛ ժողովուրդին 38
մէջէն մէկ մարդ մը աղաղակեց ու ըսաւ .
Վարդապետ՝ կ'աղաչեմ քեզի՝ նայէ՝ իմ որ-
դիս , որ իմ մէկ հատիկս է . Եւ ահա՛ 39
դեւը կը բռնէ զանիկայ , ու ան յանկարծ
կը կանչուըռտէ , և զանիկայ զետինը կը
զարնէ ու կը թաւալըտորկէ , և կը փրփրեցը-
նէ , ու հազիւ կը զատուի անկէ՝ ջարդ-

Digitized by Google

40 ուրախութ ընելով զանիկայ. Եղև քու ա-
շակերտներուդ աղաչեցի որ հանեն անի-
41 կայ, ու չկրցան։ Պատասխան տուաւ
Յիսուս՝ ու ըսաւ. Ո՛վ անհաւատ ու մո-
լորեալ ազգ, մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի
ըլլամ՝ ու ձեզի համբերեմ. Հոս բեր քու
42 որդիդ։ Ու երբոր դեռ կը մօտենար,
դևը անիկայ գետինը զարկաւ՝ ու սաստ-
43 իկ ցնցեց։ Յիսուս սաստեց պիղծ դևին,
ու բժշկեց տղան՝ և զանիկայ իր հօրը
44 տուաւ։ Ու կը զարմանային ամէնը Աս-
տուծոյ մեծամեծ գործքերուն վրայ։
Ու երբոր ամէնքը կը զարմանային բո-
լոր իր ըրած բաներուն վրայ, ըսաւ իր
աշակերտներուն. Դուք աս խօսքը ձեր ա-
կանջը դրէք, որ Որդին մարդոյ պիտի
45 մատնուի մարդոց ձեռքը։ Անոնք ալ չէին
իմանար աս խօսքը, և անոնցմէ ծածկուած
էր՝ որ չհասկընան. ու կը վախնային աս
խօսքին համար իրեն հարցընելու։
46 Խորհուրդ մը մտաւ անոնց մէջը թէ
47 արդեօք իրենց մէջը ո՞վ է մեծ։ Յիսուս
երբոր իմացաւ անոնց սրտին խորհուրդը,
մանուկ մը առաւ իր քովը կայնեցուց ա-
48 նոնց մէջտեղը, Ու ըսաւ անոնց. Ո՛վ որ
աս մանուկը իմ անունովս կ՚ընդունի՝ զիս
կ՚ընդունի. և ան որ զիս կ՚ընդունի՝ ա-
նիկայ զիս ղրկողը կ՚ընդունի. վասն զի
ան որ ձեր ամենուն մէջը պզտիկ է՝ անի-
կայ մեծ պիտի ըլլայ։
49 Պատասխան տուաւ Յովհաննէս ու ը-

Digitized by Google

սաւ . Վարդապե՛տ՝ մէկը տեսանք որ քու
անուանովդ դեւեր կը հանէր, ու արգիլե-
ցինք անիկայ, ինչու որ մեր հետը չպտը-
տիր ։ Յիսուս ըսաւ անոնց . Մի՛ արգիլե- 50
լէք . որովհետեւ ան որ մեզի հակառակ չէ՝
մեր կողմն է ։

Եւ եղաւ որ երբ իր աշխարհէն վերցուե- 51
լուն օրերը կը կատարուէին, ինքն ալ հաս-
տատեց որ դէպի Երուսաղէմ երթայ ։ Ու 52
դեսպաններ խրկեց իր առջեւէն, որ երթալով
գացին՝ Սամարացւոց մէկ գեղ մը մտան
որ իրեն համար պատրաստութիւն մը ը-
նեն ։ Եւ չընդունեցին անիկայ, ինչու 53
որ ինքը երեսը դէպ՚ի Երուսաղէմ եր-
թալու վրայ էր ։ Երբոր Յակոբոս ու 54
Յովհաննէս աշակերտները տեսան՝ ըսին .
Տէ՛ր կ՚ուզե՞ս որ ըսենք, ու երկինքէն կրակ
իջնէ՝ և սպառէ զանոնք ։ Դարձաւ 55
յանդիմանեց անոնք՝ ու ըսաւ . Չէք գի-
տեր թէ ինչ հոգիի տէր էք դուք ։ Վասն 56
զի Մարդու Որդին չեկաւ մարդոց հոգի-
ները կորսնցնելու, հապա փրկելու ։ Եւ
ուրիշ գեղ մը գացին ։

Եւ երբոր անոնք ճամբան կ՚երթային, 57
մէկը ըսաւ անոր . Ես ալ քու ետեւէդ
գամ՝ ուր տեղ որ դուն երթաս ։ Յիսուս 58
ըսաւ անոր . Աղուեսները որջ ունին, ու
երկինքի թռչունները դադարելու տեղ,
բայց Մարդու Որդին տեղ մը չունի՝ որ
հոն գլուխը դնէ ։

Մէկ ուրիշի մըն ալ ըսաւ . Ետեւէս եկո՛ւ 59

Digitized by Google

ետեւէս ․ ան ալ ըսաւ ․ Տէ՛ր՝ հրաման
տուր ինծի որ առաջ երթամ իմ հայրս
60 թաղեմ ։ Յիսուս ըսաւ անոր ․ Թո՛ղ
տուր մեռելները որ իրենց մեռելները թա-
ղեն , ու դուն գնա՛ Աստուծոյ թագաւո-
րութիւնը քարոզէ՛ ։
61 Ուրիշ մըն ալ ըսաւ ․ Տէ՛ր՝ կը
քու ետեւէդ պիտի գամ ․ բայց հրաման
տուր ինծի՝ որ առաջ իմ տանեցիս հրաժա-
62 րիմ ։ Յիսուս ըսաւ անոր ․ Ո՛չ մէկը որ
ձեռքը մաճին վրայ կը դնէ՝ ու ետեւ կը
նայի , Աստուծոյ թագաւորութեանը յար-
մար է ։

## ԳԼ. Ժ

1 Ասկէ ետեւ Տէրը ուրիշ եօթանասուն-
երկուք ալ որոշեց ․ և անոնք երկու-
երկուք ղրկեց իր առջեւէն բոլոր քաղաք-
ները ու տեղերը՝ ուր ի՛նք ինքը պիտի եր-
2 թար ։ Ու ըսաւ անոնց՝ Հունձքերը շատ
են , ու բանուորները քիչ ․ ուստի հունձ-
քերուն Տէրոջը աղաչեցէք որ բանուորներ
3 հանէ իր հունձքերուն ։ Գացէք ․ ահա՛
ես ձեզ կը ղրկեմ իբրեւ գառնուկներ՝ գայլե-
4 րուն մէջը ։ Հետերնիդ քսակ մի՛ առնէք ,
ո՛չ խուրջիններ ․ ու ճամբան մէկուն բարեւ
5 մի՛ տաք ։ Ո՛ր տունը որ մտնէք՝ առաջ
6 ըսէք , Թէ Բարեւ այս տունին ։ Եթէ որ
հոն բարեւի արժանաւոր մարդ կայ , ձեր
բարեւը պիտի հանգչի անոր վրայ , հապա
7 թէ չէ՝ ձեզի պիտի դառնայ ։ Նոյն այն

Digitized by Google

տանը մէջ ։ Մնացէք ․ անոնցմէ կերէք ու
խմեցէք ․ ինչու որ բանուորը իր վարձքին
արժանաւոր է , տունէ տուն մի՛ փոխուիք ։
Ո՛ր քաղաք որ մտնէք՝ ու ձեզ ընդունին , 8
ինչ որ առջևնիդ դնելու ըլլան՝ կերէք ․
Ու բժշկեցէք անոր մէջի հիւանդները , և 9
ըսէք անոնց ․ Աստուծոյ թագաւորութիւ-
նը ձեզի մօտեցեր է ։ Բայց որ քաղաք 10
որ մտնէք , և անոնք ձեզ չընդունին , երթա-
ար անոր փողոցները կ'ելլէք՝ ըսէք ․ Ան 11
փոշիները ալ որ ձեր քաղաքէն մեր ոտքե-
րուն փակած են , ձեզի կը թօթուենք ․
միայն թէ աս գիտնաք՝ որ Աստուծոյ թա-
գաւորութիւնը մօտեցեր է ։ Ձեզի կ'ըսեմ , 12
որ ան օրը Սոդոմացւոց տառապանքը
աւելի դիւրին պիտի ըլլայ՝ քան թէ ան
քաղաքին ։ Վա՜յ քեզի Քորազին ․ վա՜յ 13
քեզի Բեթսայիդա ․ ինչու որ եթէ Տիւ-
րոսին ու Սիդոնին մէջը ըլլային ան զօրա-
ւոր գործքերը՝ որ ձեր մէջը եղան , շա-
տոնցմէ քուրձով՝ և մոխրի մէջ նստած
ապաշխարեր էին ։ Բայց դատաստանին 14
օրը Տիւրոսին և Սիդոնին աւելի դիւրին
պիտի ըլլայ՝ քան թէ ձեզի ։ Եւ դուն 15
Կափառնայում՝ որ մինչև երկինքը բարձ-
րացեր ես , մինչև դժոխքը պիտի իջնես ։
Ան որ ձեզի մտիկ կ'ընէ՝ ինծի մտիկ կ'ընէ ․ 16
և ան որ ձեզ կ'անարգէ՝ զիս կ'անարգէ ․
և ան որ զիս կ'անարգէ՝ զիս ղրկողը կ'ան-
արգէ ․ և ան որ ինծի մտիկ կ'ընէ՝ զիս
ղրկողին մտիկ կ'ընէ ։

Digitized by Google

17 Դարձան ան եօթանասուներկուքը ու-
րախութիւնով՝ ու ըսին. Տէր քու անու-
18 նովդ դեւերն ալ մեզի կը հնազանդին ։ Ինք
ըսաւ անոնց. Սատանան փայլակի պէս
19 երկինքէն վար ինկած կը տեսնէի ։ Ահա՛
ձեզի իշխանութիւն տուի օձերուն եւ կա-
րիճներուն՝ ու թշնամիին բոլոր զօրու-
թիւններուն վրայ կոխկռտելու. ու ձեզի
20 վնաս մը պիտի չտան ։ Բայց դուք անոր
վրայ մի՛ ուրախանաք որ դեւերը ձեզի կը
հնազանդին, հապա ուրախացէք՝ որ ձեր
անունները երկինքը գրուած է ։
21 Ան նոյն ժամուն Յիսուս Հոգւով Սուր-
բով ուրախացաւ՝ ու ըսաւ. Շնորհակալ
եմ քեզմէ՝ ով Հայր, երկինքի ու երկրի
Տէրը, որ աս բաները իմաստուններէն եւ
գիտուններէն ծածուկ պահեցիր, ու տղա-
յոց յայտնեցիր զանոնք. այո՛ Հայր, ին-
չու որ քու առջեւդ անանկ աղէկ երեւցաւ ։
22 Ամէն բան իմ Հօրմէս ինծի տրուեցաւ,
ու մէկը չգիտեր թէ ով է Որդին, միայն
թէ Հայրը. եւ ով է Հայրը, միայն թէ
Որդին. եւ որուն որ Որդին ուզէ յայտնել ։
23 Ու դարձաւ աշակերտներուն առանձին՝
ու ըսաւ. Երանի՛ ան աչքերուն՝ որ ձեր
24 տեսածները կը տեսնեն. Ձեզի կ՚ըսեմ,
որ շատ մարգարէներ եւ թագաւորներ ու-
զեցին ձեր տեսածը տեսնել, ու չտեսան,
եւ ձեր լսածը լսել՝ ու չլսեցին ։
25 Ու ահա՛ մէկ օրէնսգէտ մը ելաւ՝ կը
փորձէր զանիկայ ու կ՚ըսէր. Վարդապետ

Digitized by Google

ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժա-
ռանգեմ ։ Ինքն ալ ըսաւ անոր · Օ- 26
րէնքին մէջը ի՞նչ գրուած է · ինտո՞ր կը
կարդաս ։ Պատասխան տուաւ անիկայ՝ 27
ու ըսաւ · Սիրէ՛ քու Տէր Աստուածդ քու
բոլոր սրտէդ, և քու բոլոր անձէդ, ու
քու բոլոր զօրութենէդ, և քու բոլոր
միտքէդ · և քու ընկերդ ալ քու անձիդ
պէս ։ Ու ինքը ըսաւ անոր · Պատաս- 28
խանդ շիտակ տուիր · անիկայ ըրէ՛ ու
պիտի ապրիս ։ Անիկայ ուզելով ինքզինքը 29
արդարացընել, ըսաւ Յիսուսին · Բայց
իմ ընկերս ո՞վ է ։ Պատասխան տուաւ 30
Յիսուս՝ ու ըսաւ · Մէկ մարդ մը Երու-
սաղէմէն Երիքով կ'իջնէր, ու գողերուն
ձեռքը ինկաւ, որոնք մերկացուցին զանի-
կայ՝ ու վիրաւորելով կիսամեռ թողուցին
և գացին ։ Պատահեցաւ որ մէկ քահա- 31
նայ մը ան ճամբայէն կ'իջնէր, ու զանի-
կայ տեսնելով՝ անհոգութեամբ անցաւ ։
Նմանն ալ մէկ Ղևտացի մը նոյն տեղը 32
գալով տեսաւ՝ և անհոգութեամբ անցաւ ։
Բայց Սամարացի մը որ ճամբորդութիւն 33
կ'ընէր՝ հոն եկաւ անոր քովը, և երբ տե-
սաւ զանիկայ՝ մեղքցաւ · Ու մօտեցաւ 34
անոր վէրքերը փաթթեց՝ վրան ձէթ և
գինի թափելով, ու իր գրաստին վրայ
դնելով՝ տարաւ անիկայ մէկ պանդոկ մը,
և անոր հոգ տարաւ ։ Ու հետևեալ օրը 35
երբոր կ'ելլէր անկից՝ երկու դահեկան հա-
նեց պանդոկապետին տուաւ, և ըսաւ ·

Digitized by Google

Հո՛գ տար ատոր, ու ինչ որ ծախք ընես
ատոր վրայ՝ ուրիշ անգամ գալուս ես քե-
36 զի կը վճարեմ ։ Հիմա ան երեքէն ո՞րը
քեզի կ'երեւնայ ընկեր ըլլալ ան գողերուն
37 ձեռքը իյնողին ։ Անիկայ ըսաւ. Ան որ
անոր ողորմութիւն ըրաւ ։ Յիսուս ըսաւ
անոր. Գնա՝ դուն ալ անանկ ըրէ ։
38 Ու եղաւ որ երբ անոնք գացին՝ ինքն ալ
գեղ մը մտաւ. եւ մէկ կնիկ մը Մարթա
անունով՝ զանիկայ իր տունը ընդունեց ։
39 Եւ անիկայ մէկ քոյր մը ունէր, որուն ա-
նունը Մարիամ էր. որ եկաւ Տէրոջը ոտ-
քին քովը նստաւ, ու անոր խօսքերը մը-
40 տիկ կ'ընէր ։ Բայց Մարթան շատ պատ-
րաստութիւն տեսնելու մէջ զբաղած էր.
եկաւ կայնեցաւ անոր քովը՝ ու ըսաւ. Տէ՛ր՝
քու հոգդ չէ, որ իմ քոյրս զիս մինակ
թողուց սպասաւորութեան մէջ. ուստի
41 ատոր զրուցէ՛ որ ինծի օգնէ ։ Պատաս-
խան տուաւ Յիսուս՝ եւ ըսաւ. Մա՛րթա
Մա՛րթա, դուն կը հոգաս՝ ու շատ բանե-
42 րով զբաղած ես. Բայց հոս քիչ բան
պէտք է. Մարիամ ան աղէկ բաժինը ընտ-
րեց, որ իրմէն պիտի չառնուի ։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղաւ որ մէկ տեղ մը աղօթք կ'ը-
նէր. ու երբոր դադրեցաւ՝ իր աշակերտ-
ներէն մէկը ըսաւ անոր. Տէ՛ր՝ մեզի ա-
ղօթք ընել սորվեցո՛ւր, ինտոր որ Յով-
հաննէս իր աշակերտներուն սորվեցուց ։



Digitized by Google

Ըսաւ անոնց. Երբոր աղօթք կ'ընէք, ը- 2
սէք. Ո՛վ Հայր մեր՝ քու անունդ սուրբ
ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ. Մեր 3
ամէն աւուր հացը օրէ օր մեզի տուր. Եւ 4
մեր մեղքերը մեզի ներէ՛. ինչու որ մենք
ալ կը ներենք ան ամենուն՝ որ մեզի պար-
տական են. ու մեզ փորձանքի մէջ մի՛
տանիր:

Եւ ըսաւ անոնց. Ձեզմէ ո՞վ է անիկայ, 5
որ ինքը բարեկամ մը ունենայ, ու կէս
գիշերուան մէջ երթայ անոր՝ և ըսէ անոր.
Բարեկամ՝ ինծի իրեք նկանակ փոխ տուր.
Ինչու որ իմ մէկ բարեկամս ճամբայէ ինծի 6
եկաւ, ու բան մը չունիմ անոր առջևը
դնելու: Անիկայ ալ ներսէն պատասխան 7
տայ՝ և ըսէ. Զիս մի՛ հոգնեցըներ, ին-
չու որ դուռները գոցուած են, ու տղաքս
իմ քովս անկողինի մէջ են. չեմ կրնար
ելլել՝ և քեզի հաց տալ: Ձեզի կ'ըսեմ. 8
Թէ և բարեկամութեան համար չելլէ տայ
անոր, սակայն թախանձանքին համար
կ'ելլէ պէտք եղածը կու տայ անոր: Ես 9
ալ ձեզի կ'ըսեմ. Խնդրեցէք՝ ու պիտի
տրուի ձեզի, փնտռեցէք՝ ու պիտի գըտ-
նէք, դուռը զարկէք՝ ու պիտի բացուի
ձեզի: Վասն զի ամէն ով որ խնդրէ՝ 10
կ'առնէ, և ան որ կը փնտռէ՝ կը գտնէ, և
ան որ դուռը կը զարնէ՝ կը բացուի անոր:
Ձեզմէ ո՞վ է ան հայրը՝ որ եթէ իր որդին 11
իրմէն ձուկ ուզէ, միթէ ձուկին տեղը օ՞ձ
կու տայ անոր: Եւ կամ թէ հաւկիթ 12

Digitized by Google

13 ուզէ, միթէ կարի՞ճ կուտայ անոր։ Արդ՝
եթէ դուք որ չար էք, գիտէք աղէկ
պարգեւներ տալ ձեր որդւոցը, ո՞րչափ
աւելի ձեր Հայրը երկինքէն բարիքներ
կուտայ անոնց, որ իրմէն կը խնդրեն։
14 Ու համր դեւ մը կը հանէր. ու եղաւ
որ երբ դեւը ելաւ՝ ան համրը խօսեցաւ,
15 եւ բոլոր ժողովուրդները զարմացան։ Ու
անոնցմէ մէկ քանիները ըսին. Դեւերուն
Բէեղզեբուղ իշխանին միջոցովը ասիկայ
16 դեւերը կը հանէ։ Ուրիշներն ալ կը փոր-
ձէին, ու երկինքէն նշան մը կ'ուզէին ան-
17 կէց։ Բայց ինքը գիտնալով անոնց խոր-
հուրդը՝ ըսաւ անոնց. Ամէն թագաւորու-
թիւն իրեն դէմ բաժնուած՝ կ'աւրուի. եւ
տուն մը իրեն դէմ բաժնուած՝ կը կործա-
18 նի. Հապա թէ որ Սատանան ինքիրմէ
բաժնուած է՝ անոր թագաւորութիւնը
ի՞նչպէս պիտի մնայ. որովհետեւ ինծի հա-
մար կ'ըսէք թէ՝ Դեւերուն Բէեղզեբուղ
19 իշխանովը ասիկայ դեւերը կը հանէ։ Թէ
որ ես Բէեղզեբուղով դեւերը կը հանեմ,
ձեր որդիքը ինչո՞վ կը հանեն. ասոր հա-
մար անոնք ձեզի դատաւոր պիտի ըլլան։
20 Հապա թէ որ Աստուծոյ մատովը դեւերը
կը հանեմ, ուրեմն Աստուծոյ թագաւո-
21 րութիւնը ձեր վրայ հասեր է։ Երբոր
ուժով մարդ մը զէնքերը վրան առած՝ իր
տունը կը պահպանէ, անոր բաները խա-
22 ղաղութեան մէջ կը մնան։ Բայց թէ որ
անկէց աւելի ուժովը վրան գալով յաղթէ

Digitized by Google

անիկայ, անոր զէնքերը կը հանէ՝ որուն
ինքը յուսացեր էր, և անկից առած կո-
ղոպուտը կը բաժնէ։ Ան որ իմ հետս չէ՝ 23
ինծի հակառակ է. և ան որ ինծի հետ
չժողվեր՝ կը ցրուէ։

Եր ատեն պիղծ դևը մարդէ մը կ'ելլէ՝ 24
անջրդի տեղերը կը պտըտի, հանգստու-
թիւն կը փնտռէ. ու երբոր չգտներ՝ կ'ը-
սէ. Դառնամ նորէն իմ տունս, ուսկից որ
ելայ։ Ու կու գայ՝ մաքրուած ու պատ- 25
րաստուած կը գտնէ։ Ան ատենը կ'երթայ՝ 26
և իրմէն աւելի չար եօթը ուրիշ դև կ'առ-
նէ, ու կը մտնէ հոն կը բնակի. և ան
մարդուն վերջին վիճակը առջինէն գէշ
կ'ըլլայ։

Եւ եղաւ որ երբ աս բաները կը խօսէր, 27
ժողովուրդին մէջէն մէկ կնիկ մը ձայնը վեր-
ցուց՝ և ըսաւ. Երանի՝ ան որովայնին՝ որ
քեզ կրեց, և ան ծիծերուն՝ որ քեզի
կաթ տուին։ Ու ինքը ըսաւ. Մանա- 28
ւանդ թէ՝ երանի՝ անոնց որ Աստուծոյ խօս-
քը կը լսեն, ու կ'ընեն։

Եւ երբոր ժողովուրդները իր վրան կը 29
դիզուէին, սկսեց ըսել. Աս ազգը չար
ազգ մըն է. նշան կ'ուզէ. բայց երկինքէն
նշան մը պիտի չտրուի ասոր, միայն թէ
Յովնանին նշանը։ Վասն զի ինչպէս որ 30
Յովնան Նինուէացիներուն նշան եղաւ,
անանկ ալ Որդին մարդոյ աս ազգիս պիտի
ըլլայ։ Հարաւի թագուհին դատաստանին 31
օրը աս ազգին մարդոցը հետ պիտի ելլէ՝

Digitized by Google

ու պիտի դատապարտէ զանոնք. ինչու որ
երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնին իմաս-
տութիւնը լսելու. և ահա՛ Սողոմոնէն
32 աւելի մէկը կայ հոս ։ Նինուէացի մար-
դիկը դատաստանին օրը աս ազգին հետ
պիտի ելլեն՝ ու պիտի դատապարտեն ասի-
կայ. ինչու որ Յովնանին քարոզութիւնո-
վը ապաշխարեցին. և ահա՛ Յովնանէն
աւելի մէկը կայ հոս ։
33 Մէկը ճրագը չվառեր՝ ծածուկ տեղ մը
դներ, ո՛չ ալ գրիւին տակը. հապա աշ-
տանակին վրայ, որ ներս մտնողները լոյս
34 տեսնեն ։ Մարմինին ճրագը աչքն է. երբ-
որ աչքը պայծառ է, բոլոր մարմինը լու-
սաւոր կ՛ըլլայ. ու երբոր աչքը վատ է՝
35 մարմինն ալ մութ կ՛ըլլայ ։ Ուստի զգո՛յշ
կեցիր, որ չըլլայ թէ քու մէջդ եղած լոյ-
36 սը մութ ըլլայ ։ Թէ որ քու բոլոր մար-
մինդ լուսաւոր է, և մութ կտոր մը չկայ՝
բոլորն ալ լուսաւոր կ՛ըլլայ, ինչպէս երբ-
որ ճրագ մը՝ իր լուսովը քեզ կը լուսաւորէ ։
37 Եւ երբոր աս բաները կը խօսէր, փա-
րիսեցի մը կ՛աղաչէր անոր՝ որ իր քովը
ճաշ ընէ. անիկայ ալ մտաւ՝ սեղանը
38 նստեցաւ ։ Փարիսեցին երբոր տեսաւ՝
զարմացաւ, որ առաջ չլուացուեցաւ կե-
39 րակուրէն առաջ ։ Տէրը ըսաւ անոր.
Հիմա դուք փարիսեցիներ՝ գաւաթին ու
պնակին դուրսի դին կը սրբէք, և ձեր
ներսի դին յափշտակութիւնով ու չարու-
40 թիւնով լեցուն է ։ Անմիտներ՝ ան որ դուր-

Digitized by Google

սինը ըրաւ, ներսինն ալ ինքը չըրա՞ւ:
Բայց աղէ՝ ողորմութիւն տուէք ինչպէս 41
որ արժան է. և ահա՝ ամէն բան մա-
քուր կ'ըլլայ ձեզի: Բայց վա՜յ ձեզի 42
փարիսեցիներուդ, որ անանուխին ու
փեգենային և բոլոր խոտեղէններուն տա-
սանորդը կը վճարէք, ու զանց կ'ընէք
իրաւունքը և Աստուծոյ սէրը. ասոնք
պէտք էր ընել, և անոնք ալ զանց չը-
նել: Վա՜յ ձեզի փարիսեցիներուդ, որ 43
ժողովարաններուն մէջը վերի նստարան-
ները կը սիրէք, ու շուկաներուն մէջ բա-
ջի բարեները: Վա՜յ ձեզի՝ որ դուք ան- 44
յայտ գերեզմաններու նման էք, որ մար-
դիկ վրայէն կը քալեն՝ ու չեն գիտեր:
Օրինականներէն մէկը պատասխան 45
տուաւ՝ և ըսաւ անոր. Վարդապետ՝ աս
խօսքերը զրուցելով՝ մեզ ալ վար կը զար-
նես: Ան ալ ըսաւ. ձեզ ալ վա՜յ օրի- 46
նականներուդ, որ մարդոց դժուար տա-
նելու բեռներ կը բեռցընէք, ու դուք մէկ
մատովնիդ ան բեռներուն չէք մօտենար:
Վա՜յ ձեզի՝ որ մարգարէներուն գերեզմա- 47
նները կը շինէք, ու ձեր հայրերը սպան-
նեցին զանոնք: Ուրեմն կը վկայէք՝ թէ 48
ձեր հայրերուն ըրածներուն հետ կամքեր-
նիդ մէկ է. ինչու որ իրենք սպաննեցին
զանոնք, ու դուք անոնց գերեզմանները
կը շինէք: Անոր համար Աստուծոյ ի- 49
մաստութիւնը ըսաւ. Պիտի ղրկեմ ա-
նոնց մարգարէներ ու առաքեալներ. և

Digitized by Google

անոնցմէ ո՛րը պիտի սպաննեն, ու ո՛րը
50 հալածեն. Որ աշխարհի սկիզբէն հետէ
թափուած բոլոր մարգարէներուն արիւնը
51 աս ազգէն ուզուի. Աբելին արիւնէն մինչև
Զաքարիայի արիւնը, որ սեղանին ու
տաճարին մէջտեղը կորսուեցաւ. Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի, Աս ազգէն պիտի ուզուի:
52 Վա՜յ ձեզի օրինականներ, որ գիտութեան
բանալին կը պահէք. դուք չէք մտներ, և
անոնք որ պիտի մտնեն՝ կ'արգիլէք:
53 Ու երբոր աս ամէն բաները բոլոր ժո-
ղովուրդին առջևը՝ անոնց կը գրուցէր, ա-
մօթով կը մնային. ու սկսեցին դպիրները
և փարիսեցիները դժուարիլ, ու շատ
բաներու վրայով անոր հետ հակառակու-
54 թիւն ընել. Ու կը սպասէին որ անոր
բերնէն բան մը որսան, որ անոր վրայ
չարախօսութիւն ընեն:

## ԳԼ. ԺԲ

1 Ասոնցմով երբոր բիւրաւոր ժողովուրդ-
ներ ալ վրան ժողվուեցան, մինչև որ մէկըզ-
մէկ կը կոխէին, սկսեց ըսել իր աշակերտ-
ներուն. Առաջ ինքզինքնիդ զգո՛յշ
պահեցէք փարիսեցիներուն խմորէն, որ
2 ան՝ կեղծաւորութիւն է: Ինչու որ ծա-
ծուկ բան մը չկայ որ չյայտնուի, ու
3 գաղտուկ՝ որ չգիտցուի: Ասոր ինչ որ
մութ տեղը գրուցեցէք՝ անիկայ լոյս տեղը
պիտի լսուի. և ան որ ներսէ ներս տե-
ղուանք ականջին խօսեցաք, տանիքներուն

Digitized by Google

վրայ պիտի քարոզուի ։ Բայց ձեզի իմ 4
սիրականներուս կը զրուցեմ . Մի՛ վախնաք
անոնցմէ՝ որ մարմինը կը սպաննեն , ու ան-
կէ ետև աւելի բան մը չունին ընելու ։
Հապա ձեզի ցուցընեմ թէ ուսկի՛ց պիտի 5
վախնաք . Անկէց վախցէք՝ որ սպաննելէն
ետև իշխանութիւն ունի գեհեանը ձգելու .
Այո՛ւ կ՚ըսեմ ձեզի , Անկէց վախցէք ։ Չէ՞ 6
որ հինգ ճնճղուկէ հագը երկու դանկի կը
ծախուի , և անոնցմէ մէկը մոռցուած չէ՛
Աստուծոյ առջին ։ Բայց ձեր գլխուն բո- 7
լոր մազերն ալ համրուած է . ուրեմն մի՛
վախնաք , ինչու որ դուք շատ ձագերէն
աւելի աղէկ էք ։ Ձեզի կ՚ըսեմ . Ամէն 8
ով որ զիս կը դաւանի մարդոց առջևը ,
Որդին մարդոյ ալ անիկայ պիտի դաւանի
Աստուծոյ հրեշտակներուն առջևը ։ Բայց 9
ան որ զիս մարդոց առջևը կ՚ուրանայ ,
ուրացուած պիտի ըլլայ Աստուծոյ հրեշ-
տակներուն առջևը ։ Եւ ամէն ով որ Որ- 10
դւոյ մարդոյ դէմ բան կ՚ըսէ , պիտի նե-
րուի անոր . բայց ան որ Սուրբ Հոգիին
հայհոյութիւն կ՚ընէ , թողութիւն պիտի
չըլլայ անոր ։ Եւ երբոր ձեզ ժողովարան- 11
ները տանելու ըլլան՝ ու դատաւորներուն
և իշխաններուն առջևը , հոգ մի՛ ընէք՝
թէ ինչ պատասխան պիտի տաք , կամ
ինչ պիտի ըսէք ։ Վասն զի Սուրբ Հոգին 12
պիտի սորվեցընէ ձեզի նոյն ժամուն՝ ինչ
որ պէտք է խօսիլ ։

Ժողովուրդին մէջէն մէկը ըսաւ անոր . 13

Վարդապետ՝ ըսէ՛ եղբօրս, որ Թող ին-
ծի ժառանգութիւնը իմ հետս բաժնէ:
14 Ան ալ ըսաւ անոր. Մարդ՝ ո՞վ զիս ձեզի
վրայ դատաւոր կամ բաժին ընող դրաւ:
15 Եւ ըսաւ անոնց. Նայեցէք եւ զգո՛յշ
եղէք ամեն ագահութենէն. Ինչու որ
մարդուս դիզած ապրանքներէն չկախուիր
16 իր կեանքը: Անոնց մէկ առակ մը խօսե-
ցաւ, ու ըսաւ. Մէկ հարուստ մարդու մը
17 արտերը առատ բերքեր տուեր. Եւ ինքնի-
կը մտմտար ինքնիրեն՝ ու կ'ըսէր. Ի՞նչ
ընեմ, վասն զի տեղ չունիմ, որ հոն իմ
18 բերքերս լեցընեմ: Եւ ըսաւ. Ասիկա
ինչ պիտի ընեմ. իմ ամբարներս քակեմ
ու ալ աւելի մեծ շինեմ, եւ հոն ժողվեմ
19 ցորենները՝ ու իմ ամեն բարիքներս. Եւ
իմ անձիս ըսեմ. Ո՛վ անձ՝ շատ բարիք-
ներ ունիս շատ տարիներու համար ժող-
վուած. հանգչէ՛, կե՛ր, խմէ՛, եւ ուրախ
20 եղիր: Բայց Աստուած ըսաւ անոր. Ան-
միտ՝ այս գիշեր հոգիդ քեզմէ ետ պիտի ու-
զեն. ասանկ ան քու պատրաստածդ որո՞ւն
21 պիտի ըլլայ: Անոր պէս է ան ալ՝ որ իր
անձին համար կը դիզէ, ու Աստուծով
չհարստանար:

22 Ըսաւ իր աշակերտներուն. Ատոր համար
կ'ըսեմ ձեզի, հոգ մի՛ ընէք ձեր կեան-
քին համար՝ թէ ինչ պիտի ուտէք, ոչ
ալ մարմիններնուդ համար՝ թէ ինչ պիտի հագ-
23 նիք: Ինչու որ կեանքը կերակուրէն աւելի
24 է, ու մարմինը հագուստէն: Նայեցէք

Digitized by Google

ագռաւներուն, որ ո՛չ կը ցանեն և ո՛չ կը
քաղեն, որոնք ո՛չ շտեմարաններ ունին՝
ո՛չ ալ ամբարներ, ու Աստուած անոնք
կը կերակրէ. ո՜րչափ աւելի ձեզ՝ որ թռչ-
չուններէն աղէկ էք։ Ձեզմէ ո՞վ կրնայ իր 25
հոգ տանելովը իր հասակին վրայ կանգուն
մը աւելցընել։ Հապա թէ որ պզտիկ 26
բաներն կարող չէք, ուրիշ բաներուն հա-
մար ինչո՞ւ հոգ կ'ընէք։ Նայեցէք շու- 27
շաններուն վրայ. ինչպէս կը մեծնայ. ո՛չ
կ'աշխատի՝ ու ո՛չ կը մանէ. ձեզի կ'ըսեմ
որ Սողոմոն ալ իր բոլոր փառքին մէջը
անոնց մէկուն պէս չհագուեցաւ։ Ուստի 28
թէ որ խոտը՝ որ այսօր դաշտերը կեցեր
է՝ ու վաղը կրակը պիտի ձգուի, Աստուած
անանկ կը հագուեցընէ, ո՜րչափ աւելի
ձեզ՝ թերահաւատներ։ Ալ դուք մի՛ 29
փնտռէք թէ ինչ պիտի ուտէք և ինչ
պիտի խմէք. ու մի՛ շփոթիք. Վասն զի 30
աս ամէնը աշխարհքիս ազգերը կը փնտռ-
ռեն. բայց ձեր Հայրը գիտէ որ պէտք է
ձեզի աս ամէնը։ Հապա թէ դուք Աս- 31
տուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք և
աս ամէն բաները պիտի աւելցուի ձեզի։
Մի՛ վախնար պզտիկ հօտ. ինչու որ ձեր 32
Հայրը հաճեցաւ որ ձեզի թագաւորու-
թիւնը տայ։ Ծախեցէք ձեր ստացուած- 33
քը՝ և ողորմութիւն տուէք. ու ձեզի
չհիննալու քսակներ շինեցէք, ու երկինքը՝
չպակսելու գանձ մը՝ ուր ո՛չ գողը կը
մօտենայ՝ և ո՛չ ցեցը կ'ապականէ։ Վասն 34

Digitized by Google

ղի ուր որ է ձեր գանձը՝ ձեր սիրտն ալ
35 հոն պիտի ըլլայ ։ Ձեր գօտիները՝ մէջ-
քերնիդ պինտ կապուած ըլլան , ու ճրագ-
36 ները վառուած ։ Ու դուք ան մարդոց
նման՝ որ իրենց Տէրոջը կը սպասեն՝ թէ
ե՞րբ պիտի դառնայ հարսնիքէն . որ երբ
գայ և դուռը զարնէ , շուտ մը բանան ա-
37 նոր ։ Երանի՝ ան ծառաներուն , որ Տէրը
երբոր գայ՝ անոնք արթուն կը գտնէ .
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ ինքը գօտին
մէջքը պիտի կապէ՝ ու սեղան նստեցընէ
անոնք , և առաջ անցնի ծառայութիւն
38 պիտի ընէ անոնց ։ Ու թէ գիշերուան
երկրորդ կամ երրորդ պահուն գայ ու ա-
նանկ գտնէ , երանելի են ան ծառաները ։
39 Բայց աս գիտցէք , որ եթէ տանուտէրը
գիտնար թէ ո՛ր ատեն գող կու գայ , ար-
թուն կը կենար՝ ու թող չէր տար որ իր
40 տունը ծակէ ։ Դուք ալ պատրաստ ե-
ղէք . ինչու որ չկարծած ատեննիդ Որդին
մարդոյ կու գայ ։
41 Ըսաւ Պետրոս . Տէ՛ր՝ աս առակը մե-
42 զի՞ ըսիր , թէ ամենուն ալ ։ Ու ըսաւ
Տէրը . Ո՞վ է ան հաւատարիմ ու խելացի
տնտեսը , որ իր տէրը անիկայ իր գեր-
դաստանին վրայ դրաւ , որ ատենին անոնց
43 ուտելիքը տայ ։ Երանի՝ ան ծառային ,
որ իր տէրը եկած ատենը անանկ ըրած
44 պիտի գտնէ զանիկայ ։ Իրաւ կ'ըսեմ ձե-
զի , որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի
45 կեցընէ անիկայ ։ Հապա թէ որ ան

Digitized by Google

ծառան իր սրտին մէջը ըսէ , Թէ իմ տէրս
կ'ուշանայ գալու՝ ու սկսի ծառաները և
աղախինները ծեծել , ուտել ու խմել և
գինովնալ , Այն ծառային տէրը պիտի գայ 46
այնպիսի մէկ օր մը՝ որ ինքը չսպասեր , և
այնպիսի մէկ ժամու մէջ՝ որ ինքը չգիտեր ,
մէջտեղէն պիտի կտրէ զանիկայ , ու անոր
բաժինը անհաւատարմութեամբ ծառայողներուն հե-
տը պիտի դնէ ։ Իսկ այն ծառան՝ որ իր 47
տիրոջը կամքը գիտէ , ու անոր կամքին
պէս չպատրաստուիր , շատ ծեծ կ'ուտէ ։
Բայց այն որ չգիտեր ու ծեծի արժանի 48
բան մը կ'ընէ , քիչ ծեծ կ'ուտէ ։ Այն ա-
մենուն որ շատ տրուեցաւ՝ շատ պիտի ու-
զուի անկէց ։ և որուն որ աւելի յանձ-
նուեցաւ , ալ աւելի պիտի ուզուի անկէց ։
Ես կրակ ձգելու եկայ երկրիս վրայ ։ 49
ու ի՞նչ , կ'ուզեմ որ ան հիմակուընէ բոցը
առնէր ։ Բայց մէկ մկրտութիւն մը ունիմ 50
մկրտուելու ։ և ինչպէս կ'տառապիմ , մինչև
որ կատարուի ։ Կը կարծէք որ երկրի 51
վրայ խաղաղութի՞ւն տալու եկայ ։ Ձեզի
կ'ըսեմ՝ Ոչ՛ , հապա բաժանմունք ։ Ին- 52
չու որ ասկէ ետև մէկ տանը մէջ հինգը
հոգին բաժնուած պիտի ըլլան ։ Երեքը
երկուքին , և երկուքը երեքին ։ Հայրը 53
պիտի բաժնուի որդիէն , և որդին հօրմէն ,
մայրը աղջիկէն՝ ու աղջիկը մօրմէն , կե-
սուրը հարսէն՝ ու հարսը իր կեսուրէն ։
Եւ ըսաւ ժողովուրդներուն , Երբոր 54
արևմուտքին կողմէն ամպ մը ելած կը

Digitized by Google

տեսնէք, շուտ մը կ'ըսէք, թէ Անձրև
55 պիտի գայ, և անանկ կ'ըլլայ։ Ու երբոր
հարաւային հովը կը փչէ՝ կ'ըսէք, թէ Տաք
56 պիտի ըլլայ, և անանկ կ'ըլլայ։ Կեղ–
ծաւորներ՝ երկինքի ու երկրի երեսը գի–
տէք քննել, հապա այս ժամանակը ինչո՞ւ
57 չէք քններ։ Ինչո՞ւ դուք ձեզմէ չէք ընտ–
58 րեր իրաւունքը։ Երբոր դուն քու ո–
սոխիդ հետ դատաւորին երթալու ըլլաս,
ճամբուն մէջը տո՛ւր աշխատանք՝ անկէց ա–
զատուելու համար, որ չըլլայ թէ քեզ դա–
տաւորին առջևը քաշէ, ու դատաւորը
դահիճին ձեռքը տայ, ու դահիճն ալ
59 բանտը դնէ։ Քեզի կ'ըսեմ. Անկից
պիտի չելլես, մինչև որ վերջին լուման վճա–
րես։

## ԳԼ. ԺԳ.

1 Նոյն ատենը մէկ քանիներ եկան, ու
պատմեցին իրեն Գալիլեացւոց վրայով,
որոնց արիւնը Պիղատոս իրենց զոհերուն
2 հետը խառնեց։ Պատասխան տալով Յի–
սուս ըսաւ անոնց. Կը կարծէ՞ք որ այն
Գալիլեացիները բոլոր Գալիլեացիներէն
աւելի մեղաւոր էին, որ ասանկ բաներ
3 քաշեցին։ Ձեզի կ'ըսեմ՝ Ոչ. հապա թէ
որ չապաշխարէք՝ ամէնքդ ալ անանկ պի–
4 տի կորսուիք։ Կամ թէ այն տասնըութը՝
որոնց վրայ Սիլովամին մէջի աշտարակը
ինկաւ, և զանոնք մեռցուց. կը կարծէ՞ք
որ անոնք Երուսաղեմի մէջը բնակող բո–

Digitized by Google

լոր՝ մարդիկներէն աւելի պարտաւոր էին ։
Չէ՛ կ'ըսեմ՝ ձեզ ․ Հապա թէ որ չա- 5
պաշխարէք՝ ամէնքդ ալ անանկ պիտի
կորսուիք ։
Ու առակն ալ ըսաւ ․ Մէկը իր այգիին 6
մէջ թուզի ծառ մը տնկեր էր ․ ու եկաւ՝
անկէց պտուղ փնտռելու , և չգտաւ ։
Ըսաւ այգեպանին ․ Ահա՛ երեք տարի է 7
քանի որ կու գամ այս թուզի ծառին վը-
րայ պտուղ փնտռելու՝ ու չեմ գտներ ․
ուստի կտրէ՛ զանիկայ ․ ինչո՞ւ համար գե-
տինը խափանէ ։ Անիկայ պատասխան- 8
տուաւ՝ և ըսաւ ․ Տէ՛ր՝ աս տարի ալ ա-
նիկայ թո՛ղ տուր , մինչև որ անոր բո-
լորտիքը փորեմ ու թրիք դնեմ , Կարելի 9
է որ պտուղ տայ ․ Հապա թէ չէ՝ գալ
տարի կտրէ՛ զանիկայ ։
Ու Յիսուս ան ժողովարաններուն մէկուն 10
մէջ շաբաթ օրը կը սորվեցնէր ։ Ու ա- 11
հա՛ մէկ կնիկ մը հոն որ հիւանդութեան
դև մը անիկայ բռներ էր տասնութը տա-
րի ․ ու կծկըռած էր , և ամենեւին վեր
չէր կրնար նայիլ ։ Ու Յիսուս զանիկայ 12
տեսնելով՝ իրեն կանչեց՝ և ըսաւ անոր ․
Կնի՛կ՝ դուն քու հիւանդութենէդ արձը-
կուած ես ։ Ու ձեռքը անոր վրայ դրաւ , 13
ու շուտ մը շտկուեցաւ , և փառք կու տար
Աստուծոյ ։ Ժողովարանին իշխանը պա- 14
տասխան տուաւ՝ բարկանալով՝ որ Յիսուս
շաբաթ օրը բժշկեց , և ըսաւ ժողովուրդ-
դին ․ Վեց օր կայ՝ որ ան ատենը կը վայլէ

Digitized by Google

քան բանիլ, ան օրերը եկէք բժշկուեցէք,
15 ու չէ՛ թէ շաբաթ օրը ։ Տէրը պատաս-
խան տուաւ անոր և ըսաւ. Կեղծաւոր-
ներ՝ ձեզմէ ամէն մէկը շաբաթ օրը իր ե-
զը կամ էշը մսուրէն չա՞րձըկիր՝ որ տա-
16 նի ջուր տայ ։ Հապա ասիկայ որ Աբ-
րահամի աղջիկ էր, որ ահա՛ տասնըութը-
թը տարի է Սատանան զանիկայ կապեց,
չէ՞ր վայլեր շաբաթ օրը ան կապէն ար-
17 ձըկել ։ Իսկ աս բանը որ ըսաւ՝ անոր հա-
կառակ կեցողները ամէնքն ալ ամօթով
մնացին. ու բոլոր ժողովուրդը կ'ուրա-
խանար ան ամէն փառաւոր գործքերուն
վրայ՝ որ իրմէն կ'ըլլար ։
18 Իսկ ըսաւ. Աստուծոյ թագաւորութիւ-
նը ի՞նչ բանի կը նմանի ; ու ի՞նչ նմանու-
19 թիւնի նմանցընեմ անիկայ ։ Մանանեխին
հատին նման է, որ մէկ մարդ մը առաւ
իր պարտէզը ձգեց, մեծցաւ և եղաւ ծառ.
ու երկինքի թռչունները անոր ճիւղերուն
վրայ բնակեցան ։
20 Իսկ դարձեալ ըսաւ. Աստուծոյ թա-
գաւորութիւնը ի՞նչ բանի նմանցընեմ ։
21 խմորի նման է, որ մէկ կնիկ մը առաւ
իրեք գրիւ ալիւրի մէջ ծածկեց, մինչև
որ բոլորը խմորեցաւ ։
22 Իսկ քաղաքները ու գեղերը պտըտելով՝
կը սորվեցընէր, ու երթալը դէպ՚ի Երու-
23 սաղէմ ճամբայ կ'ընէր, Մէկը ըսաւ իրեն.
Տէ՛ր՝ քիչո՞ւր են անոնք որ պիտի փրկ-
24 կուին. Անիկայ ալ ըսաւ անոնց ։ Ջանք

Digitized by Google

ըրէք որ նեղ դռնէն մտնէք. Ձեզի կ'ըսեմ,
որ շատերը մտնել պիտի ուզեն, և պի-
տի չկրնան: Անկէ ետև որ երբ տանուտէ- 25
տէրը՝ ներս կը մտնէ, դուռը կը գոցէ, և
դուք կը սկսիք դուրսը կենալ ու դուռը
զարնել և ըսել. Տէր Տէր՝ բաց մեզի.
ան ալ պատասխան տալով պիտի ըսէ ձե-
զի. Ձեզ չեմ ճանչնար ուսկից էք: Ան 26
ատենը պիտի սկսիք ըսել. Մենք քու
առջեւդ կերանք ու խմեցինք, և դուն մեր
փողոցներուն մէջը սորվեցուցիր: Իսկ ա- 27
նիկայ պիտի ըսէ. Ձեզի կ'ըսեմ. Չեմ
ճանչնար ձեզ ուսկից էք, մեկդի՛ կեցէք
ինծմէ՝ բոլոր անիրաւութիւն գործողներդ:
Հոն պիտի ըլլայ լալ ու ակռաները կրճտ- 28
ցնել, երբոր տեսնէք Աբրահամը ու Ի-
սահակը և Յակոբը՝ ու ամէն մարգարէնե-
րը Աստուծոյ թագաւորութեանը մէջ, ու
ձեզ դուրս, հանած: Ու պիտի գան 29
արեւելքէն ու արեւմուտքէն, հիւսիսէն և
հարաւէն, ու պիտի բազմին Աստուծոյ
թագաւորութեանը մէջ: Ու ահա՛ կան 30
յետիններ՝ որ առաջիններ պիտի ըլլան, ու
կան առաջիններ՝ որ յետիններ պիտի ըլ-
լան:

Նոյն օրը մէկ քանի փարիսեցիներ ե- 31
կան՝ և ըսին անոր. Ելի՛ր ու գնա՛ ասկէց,
ինչու որ Հերովդէս քեզ սպաննել կ'ուզէ:
Ու ինքը ըսաւ անոնց. Գացէք ան ա- 32
ղուեսին ըսէք. Ահա՛ ես դեւեր կը հանեմ
ու բժշկութիւններ կը կատարեմ այսօր և

Digitized by Google

վաղը, ու երրորդ օրը պիտի կատարուիմ։
33 Միայն թէ պէտք է որ այսօր ու վաղը և
մէկալ օրը պտըտիմ. վասն զի կարելի չէ
որ մարգարէ մը Երուսաղեմէն դուրս կոր-
34 սուի։ Ո՛վ Երուսաղէմ՝ Երուսաղէմ, որ
մարգարէները կը սպաննէիր, ու քեզի
խրկուածները կը քարկոծէիր. քանի՜ ան-
գամ ուզեցի քու զաւկըներդ ժողվել,
ինչպէս որ հաւը իր ձագերը թևերուն տա-
35 կը կը ժողվէ, ու դուք չուզեցիք։ Ահա՛
ձեր տունը ձեզի աւերակ թողուի. սա-
կայն ձեզի կ՚ըսեմ որ՝ Ալ զի՜ս պիտի չտես-
նէք, մինչև որ ըսէք, Օրհնեա՜լ է Տէ-
րոջը անունովը եկողը։

## ԳԼ. ԺԴ

1 Եւ եղաւ որ երբ ինքը շաբաթ օր մը
փարիսեցւոց գլխաւորներուն մէկուն տու-
նը մտաւ հաց ուտելու, ու անոնք անոր
2 կը սպասէին։ Եւ ահա՛ հոն ջրգողեալ
3 մարդ մը կար իր առջևը։ Պատասխան
տուաւ Յիսուս՝ ու ըսաւ օրէնականներուն
և փարիսեցիներուն, թէ Արժա՞ն է շա-
4 բաթ օրը բժշկութիւն ընել։ Անոնք ալ
լուռ կեցան. և ինքը բռնեց անիկայ՝
5 բժշկեց ան՝ ու ճամբեց. Եւ ըսաւ ա-
նոնց. Ձեզմէ որո՞ւն էշը կամ եզը հորը
իյնալու ըլլայ, ու շուտ մը չհանէր անի-
6 կայ շաբաթ օրը։ Եւ ասոր բանին չկըցան
անոր պատասխան տալ։
7 Առակ մը զրուցեց ան հրաւիրուած մար-



Digitized by Google

գոց ալ, երբոր տեսաւ թէ ինչպէս առջի
տեղերը կ'ընտրէին, ըսաւ անոնց. Երբոր 8
մէկը քեզ հրաւիրէ հարսնիքի կամ հաց-
կերոյթի, առջի բարձին վրայ մի՛ նստիր.
չըլլայ որ քեզմէ աւելի պատուաւոր մէկն
ալ կանչուած ըլլայ անկէ. Ու ան որ քեզ 9
ու անիկայ կանչեց, գայ զրուցէ քեզի.
Ասոր տեղ տուր. և անկէ ետև սկսիս ա-
մօթով ետքի տեղը բռնել: Հապա երբ- 10
որ կանչուիս՝ գնա՛ յետին տեղը նստէ՛.
որ երբ քեզ կանչողը գայ, քեզի ըսէ.
Բարեկամ՝ վե՛ր հրամմէ. ան ատենը քու
հետդ նստողներուն առջևը քեզի փառք
կ'ըլլայ: Վասն զի ո՛վ որ ինքզինքը կը 11
բարձրացընէ՝ պիտի խոնարհի. և ան որ
ինքզինքը կը խոնարհեցընէ՝ պիտի բարձրա-
նայ:

Ու հացկերոյթի տիրոջն ալ ըսաւ. Երբ- 12
որ ճաշ կամ ընթրիք կ'ընես, մի՛ կան-
չեր քու բարեկամներդ, ո՛չ ալ քու եղ-
բայրներդ, և ո՛չ քու ազգականներդ, ու
ո՛չ քու դրացիներդ, և ո՛չ հարուստները,
որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէնը քեզ
կանչեն, ու քեզի հատուցում մը ըլլայ:
Հապա երբոր հացկերոյթ մը կ'ընես՝ աղ- 13
քատները և պակասաւորները, կաղերը ու
կոյրերը կանչէ՛. Ու երանելի պիտի ըլ- 14
լաս. ինչու որ անոնք չեն կրնար փոխա-
րէնը քեզի հատուցանել. ու արդարնե-
րուն յարութիւն առած ատենը՝ փոխարէնը
քեզի պիտի հատուցուի:

Digitized by Google

15 Ան սեղան նստողներէն մէկը երբոր լսեց
աս խօսքը՝ ըսաւ անոր . Երանի՛ անոր՝ որ
Աստուծոյ թագաւորութեանը մէջ հաց
16 պիտի ուտէ ։ Եւ ինքը ըսաւ . Մէկ մարդ
մը ընթրիք ըրաւ , ու շատ մարդիկ հրա-
17 ւիրեց ։ Եւ ընթրիքին ատենը ղրկեց իր
ծառան , որ ան հրաւիրուածները կան-
չէ , ըսելով թէ՝ Եկէք , ինչու որ ահա՛
18 ամէն բան պատրաստ է ։ Եւ ամէնն ալ
սկսեցին մէկիկ մէկիկ ետ քաշուիլ . առջի-
նը ըսաւ . Ես արտ ծախու առի , ու
պէտք է որ ելլեմ տեսնեմ անիկայ . կ'ա-
ղաչեմ քեզի որ զիս հրաժարուած սեպես ։
19 Եւ մէկալը ըսաւ . Հինգ զոյգ եզ ծախու
առի , ու կ'երթամ որ անոնք փորձեմ .
կ'աղաչեմ քեզի՝ որ զիս հրաժարուած սե-
20 պես ։ Եւ մէկալը ըսաւ . Կնիկ առի , ու
21 անոր համար չեմ կրնար գալ ։ Եւ ծա-
ռան եկաւ՝ իր տիրոջը պատմեց . ան ա-
տենը բարկացաւ տանուտէրը , ու ըսաւ
իր ծառային . Շուտով քաղաքին հրա-
պարակները ու փողոցները ելի՛ր , և աղ-
քատները ու պակասաւորները , և կաղե-
22 րը ու կոյրերը բե՛ր մտցուր հոս ։ Ծա-
ռան ալ ըսաւ . Տէր՝ եղաւ ինչ որ հրամա-
23 յեցիր , ու տակաւին տեղ կայ . Եւ Տէրը
ըսաւ ծառային . Ելի՛ր ճամբաներու ու
ցանկերու մէջ , և զօռով հո՛ս մտցուր՝ որ
24 տունս լեցուի ։ Քեզի կ'ըսեմ , որ ան
կանչուածներէն մէկն ալ իմ ընթրիքես
համը պիտի չառնէ ։

Digitized by Google

Իսկ իր հետը շատ ժողովուրդներ կ՚եր- 25
թային . դարձաւ ու ըսաւ անոնց . Եթէ 26
որ մէկը ինծի կու գայ , ու չատեր իր հայ-
րը և մայրը , ու կինը և զաւակները ,
ու եղբայրները և քոյրերը , նաև իր անձն
ալ , չկրնար իմ աշակերտս ըլլալ : Ա՛ման 27
գէ ով որ իր խաչը չվերցըներ և իմ
ետևէս գար , չկրնար իմ աշակերտս ըլլալ :
Ձեր մէջէն ո՞վ աշտարակ մը շինել ուզէ , 28
ու առաջ չնստի ու հաշիւ ընէ ծախքը ,
թէ անիկայ լմնցընելու կարողութիւն ու-
նի՞ . Որ չըլլայ թէ երբ հիմը ձգէ , ու 29
չկրնայ լմնցընել , բոլոր տեսնողները սկը-
սին անիկայ ծաղր ընել , Ու ըսել , Թէ 30
Այս մարդը սկսեց շինել , ու չկրցաւ լմնցը-
նել : Կամ թէ ո՞ր թագաւոր կ՚երթայ 31
պատերազմ կ՚ընէ ուրիշ թագաւորի մը
հետ , և առաջ չնստիր մտածեր , թէ ար-
դեօք տասը հազարով կրնա՞յ դէմ կենալ
անոր՝ որ քսան հազարով իր վրան կու
գայ : Հապա թէ չէ՝ քանի՛ որ անիկայ 32
հեռու է , դեսպան խրկելով՝ խաղաղու-
թիւն կը խնդրէ : Ահա՛ ասանկ ալ ձեր 33
մէջէն ամէն մէկը՝ թէ որ իր բոլոր ստա-
ցուածքէն ետ չկենայ , չկրնար իմ աշա-
կերտս ըլլալ : Աղը աղէկ բան է . բայց 34
թէ որ աղը համը կորսնցընէ , ինչո՞վ պի-
տի համմնայ : Ո՛չ հողի ու ո՛չ թրիքի 35
տեղ օգտակար կ՚ըլլայ , հապա անիկայ
դուրս նետելու է : Ան որ լսելու ականջ
ունի՝ թող լսէ :

Digitized by Google

## ԳԼ. ԺԵ

1 Եւ բոլոր մաքսաւորները ու մեղաւոր-
ները անոր կը մօտենային իրմէն լսելու
2 համար։ Փարիսեցիները ու դպիրները
տրտունջ կ'ընէին՝ և կ'ըսէին. Ինչո՞ւ ա-
սիկայ մեղաւորները կ'ընդունի, ու անոնց
հետ կ'ուտէ։
3 Նա առակը ըսաւ անոնց. (4) Ձեզմէ ո՞վ է
այն մարդը՝ որ հարիւր ոչխար ունենայ, և
անոնցմէ մէկը որ կորսընցընէ, իննսունինու-
նը չձգե՞ր անապատին մէջը՝ ու այն կոր-
սուածին ետեւէն երթար, մինչև որ գտնելի-
5 կայ գտնէ։ Եւ երբոր կը գտնէ՝ ուրա-
խանալով իր ուսերուն վրայ կը դնէ տա-
6 նելկայ, Եւ տուն կ'երթայ, կը կանչէ բա-
րեկամները ու դրացիները՝ և անոնց կ'ը-
սէ. Ուրախ եղէք ինծի հետ, ինչու որ
7 իմ կորսուած ոչխարս գտայ։ Ձեզի կ'ը-
սեմ՝ որ ատանկ ուրախութիւն պիտի ըլ-
լայ երկինքը մէկ մեղաւորի մը համար որ
ապաշխարէ, քան թէ իննսունինըին ար-
դարներուն համար՝ որ անոնց ապաշխա-
8 րութիւն պէտք չէ։ Կամ թէ ո՞վ է այն
կնիկը՝ որ տասը դրամ ունենայ. ու թէ
որ դրամ մը կորսընցընէ, ճրագը չվառե՞ր,
ու տանը մէջը աւել զարնելը, և զգու-
շութեամբ փնտռեր, մինչև որ գտնէ։
9 Եւ երբոր կը գտնէ՝ կը կանչէ բարեկամները
ու դրացիները և կ'ըսէ. Ուրախ եղէք ին-
ծի հետ, ինչու որ իմ կորսընցուցած

Digitized by Google

դրամս գտայ ։ Ասանկ ալ՝ ձեզի կ՚ըսեմ, 10
Ուրախութիւն կ՚ըլլայ Աստուծոյ հրեշ-
տակներուն առջեւը՝ մէկ մեղաւորի մը հա-
մար որ կ՚ապաշխարէ ։

Եւ ըսաւ . Մէկ մարդ մը երկու որդի 11
ունէր . Անոնցմէ պզտիկը հօրը ըսաւ . 12
Հայր՝ քու ստացուածքէդ ինծի ինկած
բաժինը տուր ինծի . ան ալ բաժնեց ա-
նոնց իր ունեցածը ։ Ու քիչ օրերէն ետ- 13
քը պզտիկ տղան բոլոր բաները ժողվեց ,
հեռու երկիր մը գնաց , և հոն իր ունեցա-
ծը փճացուց . ինչու որ անառակութեամբ
կեանք կը վարէր ։ Եւ երբոր ամէնը հատ- 14
ցուց , ան երկրին մէջը սաստիկ սով մը
եղաւ , ու ինքը սկսաւ չքաւոր ըլլալ ։ Եւ 15
գնաց ան երկրին քաղաքացիներէն մէկուն
քովը մնաց . ան ալ իր արտը խրկեց զա-
նիկայ խոզեր արածելու համար ։ Եւ կը 16
փափաքէր խոզերուն կերած եղջիւրէն իր
փորը լեցընելու , ու մէկը չէր տար անոր ։
Եւ ինքզինքին գալով՝ ըսաւ . Քանի՛ 17
բանւորներ կան իմ հօրս տունը հացով լե-
ցուած , ու ես հոս սովէ կը մեռնիմ կը
կորսուիմ ։ Ելլեմ երթամ իմ հօրս , և 18
ըսեմ անոր . Հայր՝ մեղանչեցի երկինքին
դէմ և քու առջեւդ , Եւ ալ արժանի չեմ 19
քու որդիդ ըսուելու . զիս քու վարձկան-
ներուդ մէկուն պէս ըրէ՛ ։ Ու ելաւ իր 20
հօրը եկաւ . և դեռ որ ինքը շատ հեռու
էր , հայրը տեսաւ զանիկայ ու գութը շար-
ժեցաւ , ելաւ և առջեւը վազեց . անոր

Digitized by Google

21 վիզը ինկաւ ու համբուրեց զանիկայ ։ Որ-
դին ալ անոր ըսաւ․ Հայր՝ մեղանչեցի
երկինքին դէմ և քու առջեդ , ու ալ ար-
22 ժանի չեմ քու որդիդ ըսուելու ։ Հայրը
ըսաւ իր ծառաներուն․ Շուտ մը հա-
նեցէք առաջին պատմուճանը ու հագցու-
ցէք անոր , և մատնի դրէք իր ձեռքը ,
23 ու կօշիկներ իր ոտքերը․ Եւ պարարտ ե-
զը բերէք մորթեցէք , ուտենք և ուրախ
24 ըլլանք , Ինչու որ աս իմ որդիս մեռած
էր՝ ու ողջ ընցաւ․ կորսուած էր՝ ու գըտ-
25 նուեցաւ․ և սկսեցին ուրախ ըլլալ ։ Ու-
անոր մեծ որդին արտն էր․ և երբոր կու-
գար՝ ու տունին մօտեցաւ , երգերուն և
26 պարերուն ձայնը լսեց ։ Ու ծառաներէն
մէկը իրեն կանչելով՝ կը հարցընէր , թէ
27 Ի՞նչ է ան ։ Անիկայ ալ ըսաւ անոր , թէ
Եղբայրդ եկաւ , ու հայրդ պարարտ ե-
զը մորթեց․ պատճառն որ՝ ողջ առողջ
28 ձեռք ձգեց զանիկայ․ Բարկացաւ՝ ու չէր
ուզեր ներս մտնել․ հայրն ալ ելաւ
29 դուրս՝ կ՚աղաչէր անոր ։ Պատասխան
տուաւ՝ և ըսաւ հօրը․ Ա՛ս քանի՞ տարի է՝
որ քեզի կը ծառայեմ , ու բնաւ քու խօս-
քէդ դուրս չելայ․ մէկ ուլ մը ինծի եր-
բեք չտուիր , որ իմ բարեկամներուս հետ
30 ուրախութիւն ընէի ։ Բայց երբոր եկաւ
աս քու որդիդ՝ որ քու ստացուածքդ բո-
զերուն հետ կերաւ , անոր մորթեցիր
31 պարարտ եզը ։ Եւ ան ըսաւ անոր․ Որ-
դեակ՝ դուն միշտ իմ հետս ես․ ու բոլոր

Digitized by Google

իմ ունեցածս քուկդ է. Սակայն թէ պէտք 32
էր ուրախ ըլլալ և խնդալ. ինչու որ աս
քու եղբայրդ մեռած էր ու ողջ ընցաւ,
կորսուած էր ու գտնուեցաւ։

## ԳԼ. ԺԶ.

Ու ըսաւ աշակերտներուն. Մէկ հա- 1
րուստ մարդ մը կար, որ տնտես մը ունէր.
ու անոր վրայով գանգատ եղաւ, որպէս
թէ իր ունեցածը կը փճացընէ։ Կանչեց 2
ու ըսաւ անոր. Ինչ է աս որ քեզի հա-
մար կը լսեմ. քու տնտեսութեանդ հա-
շիւը տուր, ինչու որ ալ չես կրնար տըն-
տես ըլլալ։ Տնտեսը իր մտքին մէջը ը- 3
սաւ. Ինչ ընեմ, որովհետև տէրս իմ
տնտեսութիւնս ինծմէ կ'առնէ. չեմ կրնար
փորել, մուրալու կ'ամչնամ։ Գիտեմ 4
ինչ պիտի ընեմ՝ որպէս զի երբոր իմ տըն-
տեսութենէս մերժուիմ, զիս իրենց տունը
ընդունին։ Ու իր տիրոջը պարտականնե- 5
րը մէկիկ մէկիկ իրեն կանչելով՝ ըսաւ առա-
ջինին. Դուն իմ տիրոջս ո՞րչափ պարտք
ունիս։ Ան ալ ըսաւ. Հարիւր մար ձէթ. 6
ըսաւ անոր. Գիրդ առ՝ ու շուտով նստէ՝
յիսուն գրէ։ Ետքը մէկալին ըսաւ. 7
Դուն ո՞րչափ պարտք ունիս. ան ալ ը-
սաւ. Հարիւր քոռ ցորեն. ու ըսաւ ա-
նոր. Գիրդ առ՝ և նստէ՝ ութսուն գրէ։
Ու տէրը անիրաւ տնտեսը գովեց, որ խե- 8
լացութենով ըրաւ. վասն զի աս աշ-
խարհիս որդիքը իրենց ցեղին մէջ՝ լուսոյ

Digitized by Google

9 որդիներէն աւելի խելացի են ։ Ես ալ
ձեզի կ՚ըսեմ . Անիրաւ մամոնայէն ձեզի
բարեկամներ ըրէք , որ երբ անիկայ պակ-
սի՝ ձեզ յաւիտենական բնակարաններուն
10 մէջ ընդունին ։ Ան որ քիչ բանի մէջ
հաւատարիմ է , շատին մէջ ալ հաւատա-
րիմ է . և ան որ քիչին մէջ անիրաւ է ,
11 շատին մէջ ալ անիրաւ է ։ Ուստի թէ որ
անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չե-
ղաք , ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի
12 հաւատայ ձեզի ։ Եւ թէ որ օտարին բա-
նին մէջ հաւատարիմ չեղաք , ձերը ո՞վ
13 պիտի տայ ձեզի ։ Մէկ ծառայ մը չկրնար
երկու տէրերու ծառայութիւն ընել . ինչ-
չու որ կամ մէկը պիտի ատէ և մէկալը
սիրէ , կամ մէկը պիտի մեծարէ և մէկալը
արհամարհէ . չէք կրնար Աստուծոյ ծա-
ռայել ու մամոնային .
14 Փարիսեցիները երբոր աս ամէնը կը
լսէին՝ որովհետև իրենք արծաթասէր էին ,
15 կը քամահրէին զանիկայ ։ Իսկ ըսաւ ա-
նոնց . Դուք էք որ մարդոց առջեւ ինք-
զինքնիդ կ՚արդարացնէք . բայց Աստուած
գիտէ ձեր սիրտերը . ինչու որ մարդոց
առջեւ բարձր եղողը՝ Աստուծոյ առջեւ
16 պիղծ է ։ Օրէնքը ու մարգարէները մինչեւ
Յովհաննէս էին . անկէ ետև Աստուծոյ
թագաւորութիւնը կը քարոզուի , և ամէն
17 մէկը անիկայ ուժով ձեռք կը ձգէ ։ Դիւ-
րին է որ երկինքը ու երկիրը անցնին , քան
թէ օրէնքէն մէկ նշանագիր մը իյնայ ։



Digitized by Google

Ո՛վ որ կնիկը կ՚արձակէ՝ ու ուրիշ մը կ՚առ- 18
նէ, շնութիւն կ՚ընէ. և ան որ արձը-
կուածը կ՚առնէ՝ շնութիւն կ՚ընէ:

Մէկ հարուստ մարդ մը կար, որ՝ բե- 19
հեզ ու ծիրանի կը հագնէր, և ամէն օր
մեծ ուրախութիւն կ՚ընէր: Ու մէկ աղ- 20
քատ մը Ղազարոս անունով՝ անոր դրանը
առջին վիրաւոր ինկած դրուած էր. Ու 21
կը փափաքէր որ մեծատունին սեղանէն ինկ-
կած փշրանքներէն իր փորը լեցընէ. նաև
շուները ալ կու գային՝ և անոր վէրքերը
կը լզէին: Ու եղաւ որ ան աղքատը մե- 22
ռաւ, ու հրեշտակները Աբրահամին գոգը
տարին անիկայ. մեծատունն ալ մեռաւ
ու թաղուեցաւ: Ու դժոխքին մէջը երբ- 23
որ տանջանքի մէջ էր, իր աչքերը վեր-
ցուց և հեռուէն տեսաւ Աբրահամը, ու
Ղազարոսը անոր գոգը հանգիստ նստած:
Ու ինքը աղաղակեց ու ըսաւ. Հայր Աբ- 24
րահամ՝ ողորմէ՛ ինծի, ու ղրկէ՛ Ղազարո-
սը, որ իր մատին ծայրը ջուրը թաթխէ,
ու զովացընէ իմ լեզուս. ինչու որ աս
տատանին տաքէն կը պապակիմ: Աբրահամ 25
ալ ըսաւ անոր. Որդեակ՝ մի՛տքդ բեր, որ
դուն անդին քու կեանքիդ ատենը քու
բարիքներդ առիր. նոյնպէս ալ Ղազարոս՝
չարչարանքը. հիմա անիկայ հոս կը մխի-
թարուի, և դուն հոս կը պապակիս: Ու 26
աս ամէն բաներուն վրայ՝ մեր և ձեր մէջտեղը
մեծ անդունդ կայ. թէ որ ասկից ձեզի
անցնիլ ուզեն՝ չեն կրնար, ո՛չ ալ անկից

Digitized by Google

27 մէկը մեզի անցնիլ ։ Ան ալ ըսաւ ։ Ու-
րեմն կ'աղաչեմ քեզի հայր , որ անիկայ իմ
28 հօրս տունը խրկես . Քանի ես հինգ եղ-
բայր ունիմ , որ երթայ անոնց վկայու-
թիւն տայ , որ չըլլայ թէ անոնք ալ աս
29 չարչարանքին տեղը գան ։ Եւ ըսաւ Աբ-
րահամ . Անոնք Մովսէսը ու մարգարէնե-
30 րը ունին , անոնց թող մտիկ ընեն ։ Ան
ալ ըսաւ . Չէ՛ հայր Աբրահամ , հապա
թէ որ մեռելներէն մէկը անոնց երթայ՝ ալ
31 կ'ապաշխարեն ։ Ինք ալ ըսաւ անոր . Թէ
որ Մովսէսին ու մարգարէներուն չեն լսեր ,
ոչ ալ թէ որ մեռելներէն մէկը յարու-
թիւն առնելու ըլլայ՝ պիտի համոզուին ։

## ԳԼ. ԺԷ.

1 Իր աշակերտներուն ալ ըսաւ . Կարելի
չէ՛ որ գայթակղութիւն չգայ . բայց վա՜յ
անոր , որուն ձեռքովը կու գայ գայթակ-
2 ղութիւնը ։ Աղէկ էր անոր , որ իր
վիզէն աղացքի քար մը կախուէր , ու ծո-
վը իյնար , քան թէ աս պզտիկներէն մէ-
3 կը գայթակղեցընէ ։ Զգուշացէք ձեր ան-
ձերուն ։

Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ ,
յանդիմանէ՛ զանիկայ , ու թէ որ ապաշ-
4 խարէ՝ ներէ՛ անոր ։ Եւ թէ որ եօթն ան-
գամ քեզի դէմ մեղանչէ՝ ու եօթն անգամ
դառնայ քեզի և ըսէ , Կ'ապաշխարեմ ,
ներէ՛ անոր ։

5 Եւ առաքեալները ըսին Տէրոջը . Մեր

հաւատքը աւելցո՛ւր ։ Իսկ Տէրը ըսաւ․ 6
Եթէ որ մանանեխին հատին չափ հաւատք
ունենայք, և այս թթենիին ըսէք, Տեղէդ
փրթի՛ր ու ծովին մէջը տնկուէ՛, ան ալ
պիտի հնազանդի ձեզի ։

Բայց ձեզմէ ո՞վ է ան մարդը՝ որ ունե- 7
նայ մէկ երկրագործ կամ հովիւ ծառայ մը,
որ անիկայ երբոր ագարակէն դառնայ մտնէ,
շուտով մը զրուցէ անոր, թէ Անցի՛ր սե-
ղան նստէ՛․ Հապա չըսե՞ր անոր՝ թէ 8
Պատրաստէ՛ ինչ որ իրիկուան պիտի ու-
տեմ, ու գօտիդ կապած ինծի ծառայու-
թիւն ըրէ, մինչև որ ես ուտեմ և խմեմ,
ու ետքը դուն ալ կեր ու խմէ՛ ։ Միթէ 9
շնորհակա՞լ կ՚ըլլայ ան ծառային, որ իր
ամէն հրամայածները կատարեց ։ Անանկ 10
ալ դուք երբոր բոլոր ձեզի հրամայուած
բաները ընէք՝ ըսէք թէ՝ Մենք անպիտան
ծառաներ ենք․ ան որ պարտական էինք
ընելու՝ ըրինք ։

Իսկ եղաւ որ երբ ինքը Երուսաղէմ կ՚եր- 11
թար, Սամարիայի և Գալիլեացւոց մէջ-
տեղէն կ՚անցնէր ։ Ու երբոր մէկ գեղ մը 12
պիտի մտնէր՝ տասը բորոտ մարդիկ հան-
դիպեցան անոր, որոնք հեռուէն կայնած՝
ձայներնին վերցուցին ու ըսին․ Յիսո՛ւս 13
վարդապետ, ողորմէ՛ մեզի ։ Իսկ երբոր 14
տեսաւ անոնք՝ ըսաւ իրենց․ Գացէք դուք
ձեզ քահանաներուն ցուցուցէք․ ու եղաւ
որ երբ գացին իսկոյն սրբուեցան ։ Ա- 15
նոնցմէ մէկը երբոր տեսաւ թէ բժշկուե-

Digitized by Google

ցաւ, ետ դարձաւ մեծ ձայնով մը փառք
16 կու տար Աստուծոյ. Ու անոր ոտքը ինկաւ
երեսին վրայ՝ ու շնորհակալ կ'ըլլար ան-
17 կից. Եւ ինքը Սամարացի էր։ Պատասխա-
նան տուաւ Յիսուս ու ըսաւ. Չէ՞ որ
անոնք տասն ալ սրբուեցան. իսկ ան ինը
18 ո՞ւր են. Ու հոս չեն գտնուիր՝ դառնա-
լու Աստուծոյ փառք տալու, բայց միայն
19 աս օտարազգին։ Ու ըսաւ անոր. Ելի՛ր
գնա՛. ինչու որ քու հաւատքդ քեզ
բժշկեց։

20 Փարիսեցիները երբոր հարցուցին՝ թէ
Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի
գայ, պատասխան տուաւ անոնց ու ըսաւ.
Աստուծոյ թագաւորութիւնը դիտելով
21 երեւցած բաներով չգար. Ու չըսեն թէ
ահա՛ հոս է կամ հոն. ինչու որ ահա
Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսի-
դին է։

22 Աշակերտներուն ալ ըսաւ. Օրեր պիտի
գան՝ որ դուք Որդւոյ մարդոյն մէկ օրը
տեսնելու պիտի փափագիք, եւ պիտի չը-
23 տեսնէք։ Ու թէ որ ըսեն ձեզի, թէ
Ահա՛ հոս է կամ հոն, մի՛ երթաք ետեւէն։
24 Վասն զի ինչպէս որ փայլակը երկինքի
տակէն փայլատակելով՝ մինչեւ միւս դի՛
երկինքին տակը լոյս կու տայ, այնպէս ալ
Որդին մարդոյ իր գալուստին օրը պիտի ը-
25 լլայ։ Միայն թէ պէտք է որ ինքը ա-
ռաջ շատ չարչարանք քաշէ՝ ու անարգուի
26 աս ազգէն։ Եւ ինչպէս որ Նոյի օրե-

եղաւ, անանկ պիտի ըլլայ Որդւոյ մար-
դոյ օրերն ալ: Կ'ուտէին կը խմէին՝ կնիկ 27
կ'առնէին ու էրիկ կ'առնէին՝ մինչև ան օրը,
որ Նոյ տապանը մտաւ, ու ջրհեղեղը ե-
կաւ և բոլորն ալ կորսնցուց: Նմանա- 28
պէս՝ ինչպէս որ Ղովտին օրերը եղաւ, կ'ու-
տէին կը խմէին՝ ծախու կ'առնէին կը ծա-
խէին՝ կը տնկէին կը շինէին. Իսկ ան օրը 29
որ Ղովտը Սոդոմէն ելաւ՝ երկինքէն կրակ
ու ծծումբ թափեցաւ, և բոլորն ալ կոր-
սնցուց: Աս օրինակին պէս պիտի ըլ- 30
լայ ան օրը որ պիտի յայտնուի Որդին
մարդոյ: Ան օրը՝ ան որ տանիքին վրայ 31
է և իր բաները տանը մէջը, թո՛ղ վար
չիջնէ զանոնք առնելու. և ան որ արտին
մէջն է՝ թո՛ղ ետ չդառնայ: Միտքերնի՛դ 32
բերէք Ղովտին կնիկը: Ան որ իր կեանքը 33
կ'ուզէ ապրեցընել՝ պիտի կորսնցընէ զա-
նիկայ. և ան որ կը կորսնցընէ՝ պիտի
ապրեցընէ զանիկայ: Ձեզի կ'ըսեմ. Ան 34
գիշերը թէ որ երկու մարդ մէկ անկողինի
մէջ ըլլան, մէկը պիտի առնուի՝ և մէկալը
պիտի ձգուի: Ու թէ որ երկու կնիկ մէկ- 35
տեղ աղալու ըլլան, մէկը պիտի առնուի՝
և մէկալը ձգուի. ու թէ որ երկու հոգի
արտին մէջը ըլլան, մէկը պիտի առնուի՝
և մէկալը ձգուի: Պատասխան տուին ու 36
ըսին անոր. Տէ՛ր՝ ո՞ւր տեղ պիտի ըլլայ
աս բանը: Ան ալ ըսաւ անոնց. Ո՛ւր որ 37
մարմին կայ՝ արծիւներն ալ հոն կը ժողո-
վուին:

Digitized by Google

## ԳԼ. ԺԸ.

1 Անոնց մէկ առակ մըն ալ ըսաւ անոր
վրայով՝ թէ իրենց պէտք է ամէն ատեն
2 աղօթք ընել ու չձանձրանալ. Ըսաւ.
Մէկ դատաւոր մը կար քաղաքի մը մէջ.
Աստուծմէ չէր վախնար ու մարդոցմէ չէր
3 ամչնար։ Եւ մէկ որբեւարի մը կար ան
քաղաքին մէջ, կու գար անոր ու կ'ըսէր.
Դատաստան ըրէ ինծի ու ազատէ՛ զիս իմ
4 ոսոխէս։ Եւ շատ ժամանակ ինքը չէր
ուզեր. անկէ ետքը ըսաւ իր մտքին մէջ.
Թէեւ Աստուծմէ չեմ վախնար, ու մար-
5 դոցմէ չեմ ամչնար, Գոնէ որբեւարիին
զիս ձանձրացընելուն համար իր դատաստա-
նը տեսնեմ, որ չգայ ամէն ատեն զիս
6 թախանձէ։ Ու ըսաւ Տէրը. Լսեցէք՝ ան-
իրաւ դատաւորը ի՛նչ կ'ըսէր։ Հապա
7 Աստուած իր ծառաներուն համար վրէժ-
խնդիր չը՞լլար, որ ցորեկ ու գիշեր իրեն
կ'աղաղակեն, թէեւ երկայնամիտ ալ ըլ-
8 լայ անոնց վրայ։ Իրաւ կ'ըսեմ ձեզի, որ
շուտով անոնց վրէժխնդրութիւնը պիտի
ընէ. բայց Որդին մարդոյ երբոր գայ՝
արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վը-
րայ։

9 Եւ մէկ քանիներուն դէմ՝ որ ինքնի-
րեննին կը պարծենային թէ արդար են,
ու շատերը վար կը զարնէին, աս առակը
10 ըսաւ. Երկու մարդ ելան տաճարը ա-
ղօթք ընելու. մէկը փարիսեցի եւ մէկա-

Digitized by Google

ալ մաքսաւոր ։ Փարիսեցին զատ կայներ 11
էր, ու առանձին աս աղօթքը կ'ընէր.
Աստուած իմ՝ շնորհակալ եմ քեզմէ, որ
ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող՝
անիրաւ՝ շնացող, կամ թէ աս մաքսաւո-
րին պէս ։ Շաբաթը երկու ան- 12
գամ ծոմ կը պահեմ, և բոլոր ստացուած-
քիս տասանորդը կու տամ ։ Ու մաք- 13
սաւորը զատ կայներ էր, ու չէր ուզեր
աչքն ալ երկինքը վերցընել. հապա իր
կուրծքը կը ծեծէր և կ'ըսէր. Աստուած՝
ների՛ ինծի մեղաւորիս. Ձեզի կ'ըսեմ. 14
Ասիկայ ան միւսէն աւելի արդարացած
իր տունը իջաւ. վասն զի ո՛վ որ ինքզին-
քը կը բարձրացընէ, անիկայ պիտի խո-
նարհի. և ո՛վ որ ինքզինքը կը խոնարհե-
ցընէ, անիկայ պիտի բարձրանայ ։
Մանր տղաքներ ալ կը բերէին անոր՝ որ 15
անոնց դպչի. աշակերտները երբոր տեսան՝
կը յանդիմանէին զանոնք ։ Բայց Յիսուս 16
անոնք իրեն կանչելով՝ ըսաւ. Թո՛ղ
տուէք աս տղոցը որ ինծի գան, ու մի՛
արգիլէք զանոնք. ինչու որ Աստուծոյ թա-
գաւորութիւնը ասանկներուն է ։ Ճըշ- 17
մարիտ կ'ըսեմ ձեզի. Ո՛վ որ Աստուծոյ
թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս
չընդունի՝ պիտի չմտնէ անոր մէջը ։
Ու մէկ իշխան մը հարցուց իրեն և ը- 18
սաւ. Բարի՛ վարդապետ՝ ինչ գործ
գործեմ որ յաւիտենական կեանքը ժա-
ռանգեմ ։ Յիսուս ըսաւ անոր. Ինչո՞ւ 19

Digitized by Google

զիս բարի կ'անուանես. մէկէն 'ի զատ բա-
20 րի չկայ, որ է Աստուած : Պատուիրանք-
ները գիտես. շնութիւն մի՛ ընէր, սպա-
նութիւն մի՛ ընէր, գողութիւն մի՛ ընէր,
սուտ վկայութիւն մի՛ ընէր, քու հայրդ ու
21 մայրդ պատուէ՛ : Ան ալ ըսաւ. Ատ ամէնը
22 տղայութենէս 'ի վեր պահեցի : Երբոր
Յիսուս լսեց ան՝ ըսաւ անոր. Մէկ բան
մըն ալ պակաս է քեզի. քու բոլոր ու-
նեցածդ ծախէ՛ աղքատներուն տո՛ւր, ու
երկինքը գանձ պիտի ունենաս, և եկո՛ւր
23 իմ ետևէս : Անիկայ երբոր աս բաները
լսեց՝ տրտմեցաւ, ինչու որ շատ հարուստ
24 էր : Յիսուս երբոր անիկայ տրտմած տե-
սաւ՝ ըսաւ. Անոնք որ ստացուածք ունին՝
ինչպէս դժուարութենով պիտի մտնեն
25 Աստուծոյ թագաւորութիւնը : Շատ դիւ-
րին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի,
քան թէ հարուստը Աստուծոյ թագաւո-
26 րութիւնը մտնէ : Ու անոնք որ լսեցին՝
27 կ'ըսէին. Ալ ո՞վ կրնայ փրկուիլ : Ու
ինքը ըսաւ. Մարդոցմէ անկար բաները
28 Աստուծմէ կարելի են : Ու Պետրոս ը-
սաւ. Ահա՛ մենք մեր ամէն բաները թո-
29 ղուցինք, և քու ետևէդ եկանք : Ու ա-
նիկայ ըսաւ անոնց. Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, թէ Մարդ մը չկայ՝ որ իր տուները,
կամ ծնողքը, կամ եղբայրները, կամ
կնիկը, կամ զաւակները Աստուծոյ թա-
30 գաւորութեանը համար ձգեց, Ու ինքը
շատ աւելի՛ չառնէ հիմակու ատենիս մէջը՝

Digitized by Google

և ան գալու աշխարհին մէջն ալ՝ յաւիտե-
նական կեանքը ժառանգէ ։

Ու առաւ տասներկուքը առանձին՝ ը- 31
սաւ անոնց. Ահա՛ մենք Երուսաղէմ կ'ել-
լենք, և մարգարէներուն ձեռքովը Որ-
դւոյ մարդոյ համար բոլոր գրուածները
պիտի կատարուին ։ Ինչու որ հեթանոս- 32
ներուն պիտի մատնուի, ու ծաղր պիտի
ըլլայ, Ու պիտի ծեծեն և սպաննեն անի- 33
կայ, ու երրորդ օրը յարութիւն պիտի
առնէ ։ Բայց անոնք բան մը չհասկըցան 34
աս բաներէն. և ան խօսքը անոնցմէ ծած-
կուած էր, և ըսածները չէին հասկընար ։

Ու եղաւ որ երբ ինքը Երիքովին կը 35
մօտենար, մէկ կոյր մարդ մը ճամբուն
վրայ նստեր էր մուրալու ։ Երբոր լսեց 36
ժողովուրդին անցնիլը, հարցուց՝ թէ
ի՞նչ է ան ։ Եւ իրեն ըսին, թէ Յիսուս 37
Նազովրեցին կ'անցնի ։ Աղաղակեց ու ը- 38
սաւ. Յի՛սուս՝ Դաւիթի Որդին՝ ողորմէ՛
ինծի ։ Եւ անոնք որ առջևէն կ'երթային՝ 39
կը յանդիմանէին անիկայ որ ձայնը կտրէ.
ու անիկայ՝ ալ աւելի կ'աղաղակէր, Դա-
ւիթի՛ Որդին՝ ողորմէ՛ ինծի ։ Կանգ ա- 40
ռաւ Յիսուս, և հրաման ըրաւ որ անիկայ
իրեն բերեն. ու երբոր մօտեցաւ իրեն՝
հարցուց անոր՝ և ըսաւ. Ի՞նչ կ'ուզես
դուն որ քեզի ընեմ ։ Անիկայ ալ ըսաւ. 41
Տէ՛ր՝ որ աչքերս բացուին, ու տեսնեմ ։
Յիսուս ալ ըսաւ անոր. Թո՛ղ բա- 42
ցուին, քու հաւատքդ քեզ բժշկեց ։ Եւ 43

Digitized by Google

իսկոյն տեսաւ , ու անոր ետեւէն կ'երթար
և փառք կու տար Աստուծոյ . բոլոր ժո-
ղովուրդն ալ տեսնելով՝ Աստուծոյ օրհ-
նութիւն կու տային :

## ԳԼ. ԺԹ.

1 Ու մտաւ Երիքովին մէջը կը պտըտէր .
2 Ու ահա՛ մէկ մարդ մը անունը Զաքէոս
ըսուած , որ ինքը մաքսապետ էր՝ ու հա-
3 րուստ մէկ մըն էր . Ու կ'ուզէր տեսնել
թէ ո՛վ է Յիսուսը ; ու բազմութենէն չէր
կրնար , ինչու որ հասակով կարճ էր .
4 Ու առաջ վազեց ժանտաթզենիին վրայ
ելաւ , որ զանիկայ տեսնէ . ինչու որ անի-
5 կէց պիտի անցնէր : Երբոր ան տեղը ե-
կաւ , վեր նայեցաւ Յիսուս՝ և ըսաւ ա-
նոր . Զա՛քէ՝ շո՛ւտ ըրէ աւկից վա՛ր իջիր
ինչու որ այսօր քու տունդ կը վայլէ ինծի
6 կենալ : Աճապարեց ու վար իջաւ՝ և ուրա-
7 խութիւնով անիկայ ընդունեց : Երբոր
ամէնն ալ տեսան՝ կը տրտնջէին ու կ'ըսէին
թէ Մեղաւոր մարդու քով մտաւ իջեւան
8 ընելու : Եկաւ կայնեցաւ Զաքէոսը՝ և
ըսաւ Տէրոջը . Տէ՛ր՝ ահա՛ իմ ունեցածին
կէսը աղքատներուն կու տամ . ու թէ
որ մէկուն զրկանք ըրի՝ չորեքպատիկ կը
9 վճարեմ անոր : Յիսուս ալ անոր ըսաւ
Այսօր աս տանը փրկութիւն եղաւ . ինչու
10 որ անիկայ ալ Աբրահամու որդի է : Վասն
զի Որդին մարդոյ եկաւ որ կորսուածը
փնտռէ ու փրկէ :

Digitized by Google

Եւ երբոր անոնք այս բաները կը լսէին՝ 11
առակ մըն ալ ըսաւ. իր Երուսաղէմ մօ-
տենալուն վրայով , և անոնց անանկ կար-
ծելուն համար՝ թէ շուտ մը Աստուծոյ
թագաւորութիւնը պիտի յայտնուի : Ը- 12
սաւ . Մէկ ազնուական մարդ մը հեռու
երկիր գնաց՝ իրեն թագաւորութիւն առ-
նելու և դառնալու . Եւ իր ծառաները 13
կանչեց , տասը մնաս տուաւ անոնց , ու
ըսաւ անոնց . Բանեցուցէք ատիկայ՝
մինչեւ որ ես գամ : Իսկ իր քաղաքացինե- 14
րը զինքը կ՚ատէին . դեսպաններ խրկեցին
անոր ետեւէն՝ ու ըսին թէ Չենք ուզեր որ
ասիկայ մեր վրայ թագաւորութիւն ընէ :
Ու երբոր որ թագաւորութիւնը առնելով 15
ետ դարձաւ անիկայ , ու կանչեց ծառա-
ները՝ որոնց որ ստակը տուեր էր , որ
գիտնայ թէ ո՛վ ինչ շահ ըրաւ : Առջինը 16
եկաւ ու ըսաւ . Տէ՛ր քու մնասդ տասը
մնաս շահ ըրաւ : Ու ըսաւ անոր . Աղէ՛կ , 17
բարի՛ ծառայ . որովհետեւ քիչ բանին մէջ
հաւատարիմ եղար , տասը քաղաքի վրայ
իշխանութիւն ունեցի՛ր : Երկրորդը ե- 18
կաւ ու ըսաւ . Քու մնասդ հինգ մնաս
շահ ըրաւ : Ըսաւ անոր . Դուն ալ հինգ 19
քաղաքի վրայ եղի՛ր : Եկաւ ուրիշ մը ու 20
ըսաւ . Տէ՛ր՝ ահա՛ քու մնասդ՝ որ թաշկի-
նակի մէջ ծրարած կը պահէի . Կը վախ- 21
նայի քեզմէ , ինչու որ դուն մէկ խիստ
մարդ մըն ես . չդրած բանդ կը վերցնես ,
ու չսերմանածդ կը հնձես : Իսկ անիկայ ը- 22

Digitized by Google

սաւ անոր . Քու բերնէդ քեզ պիտի դա.
տեմ ո՛վ անհաւատարիմ ծառայ . գիտէիր
որ ես խիստ մարդ մըն եմ . չդրած բան
կը վերցընեմ , ու չցանած տեղէս կը հնձեմ
23 Եւ ինչո՞ւ համար իմ ստակս սեղանաւոր.
ներուն չտուիր , որ ես եկածատենս շա.
24 հովը ետ ուզէի : Եւ սպասաւորներուն ը.
սաւ . Առէ՛ք անկից ան մնասը , ու տա.
րէ՛ք տուէք անոր՝ որ տասը մնաս ունի
25 (Եւ ըսին իրեն . Տէ՛ր՝ անիկայ տասը մը.
26 նաս ունի .) Ձեզի կ՚ըսեմ , թէ Ամէ
ունեցողին պիտի տրուի , և չունեցողին
27 ունեցածն ալ անկից պիտի առնուի : Բայց
ան իմ թշնամիներս՝ որոնք չէին ուզեր ո
իրենց վրայ թագաւոր ըլլամ , հո՛ս բերէք
28 ու իմ առջևս սպաննեցէք : Եւ երբոր ա
խօսեցաւ , առաջ գնաց Երուսաղէմ ե
լելու :

29 Ու եղաւ որ երբ Բեթփագէին , ո
Բեթանիային մօտեցաւ՝ ան լեռանը մօտ
որ Ձիթենեաց լեռ կ՚ըսուի , իր աշակերտ
30 ներէն երկուքը խրկեց և ըսաւ . Գնացէ.
գուք մեր դիմացը եղած գեղը , որուն մէ
ջը երբոր մտնէք՝ պիտի գտնէք մէկ կա
պուած աւանակ մը , որ անոր վրայ բնա
մարդ մը նստած չէ . անիկայ արձակեցէ.
31 ու բերէք : Եւ թէ որ մէկը ձեզի հարցը
նէ՝ թէ ինչո՞ւ կ՚արձկէք , ասանկ ըսէք ա
32 նոր , թէ Իր Տէրոջը պէտք է : Երթա
ցին անոնք որ խրկուեցան , ինչպէս ։
իրենց զրուցեց՝ գտան , աւանակը կը կ

Digitized by Google

նար ։ Ու երբոր աւանակը կ'արձրկէին՝ 33
անոր տէրերը իրենց ըսին . Ինչո՞ւ կ'արձը-
կէք աս աւանակը ։ Անոնք ալ ըսին . 34
Իր Տէրոջը պէտք է . Ու զանիկայ Յի- 35
սուսին բերին , ու անոր վրան հան-
դերձներ ձգեցին , և Յիսուսը հեծուցին ։
Ու երբոր կ'երթար՝ իրենց հանդերձները 36
ճամբուն վրայ կը փռէին ։ Ու երբոր ալ 37
մօտեցաւ Ձիթենեաց լեռնէն դէպ'ի վար
իջնելու , աշակերտներուն բոլոր բազմու-
թիւնը սկսեցաւ ուրախութեամբ զԱստուած
օրհնել բարձր ձայնով այն ամէն եղած
հրաշքներուն համար՝ որ տեսեր էին . Ու 38
կ'ըսէին . Օրհնեալ է աս թագաւորը որ
Տէրոջը անուանովը կու գայ . երկինքի մէջ
խաղաղութիւն , ու փառք՝ բարձրութեա-
նը մէջ ։ Ու այն բազմութեանը մէջէն 39
փարիսեցիներուն մէկ քանիները ըսին ա-
նոր . Վարդապետ՝ աս քու աշակերտներդ
յանդիմանէ՛ ։ Պատասխան տուաւ ու ը- 40
սաւ . Ձեզի կ'ըսեմ , թէ որ ասոնք լռու-
կենան , քարերը պիտի աղաղակեն ։
Ու երբոր մօտեցաւ , քաղաքը տեսնելով՝ 41
լացաւ անոր վրայ՝ և ըսաւ , Գոնէ աս օ- 42
րերս գիտնայիր դուն քու խաղաղութիւնդ .
բայց հիմա գոցուեցաւ քու աչքերդ առջևէն ։
Ինչու որ օրեր պիտի գան քու վրադ , որ 43
թշնամիներդ քու բոլորտիքդ պատնէշ պի-
տի քաշեն , ու քեզ պիտի պաշարեն , և
ամէն կողմէն քեզ նեղը պիտի ձգեն . Ու 44
հիմնայատակ պիտի ընեն քեզ՝ և քուկին .

Digitized by Google

մէջդ եղած զաւակներդ . և քար մը քարի
վրայ ամենևին պիտի չթողուն քու մէջդ .
անոր համար որ չճանչցար քու այցելու-
թեան ժամանակդ ։
45 Ու մտաւ տաճարը՝ սկսեց դուրս հանել
աղաւնի ծախողները և գնողները , ու
ստակ փոխողներուն սեղանները ցրուեց ։
46 Եւ ըսաւ անոնց . Գրուած է՝ որ Իմ
տունս աղօթքի տուն ըլլայ , և դուք ա-
տիկայ գողերու այր ըրիք ։
47 Եւ միշտ տաճարին մէջը կը սորվեցընէր
անոնց . բայց քահանայապետները ու
դպիրները և ժողովուրդին գլխաւորները
48 կը ջանային զանիկայ կորսընցընելու , Ու
բան մը չէին կրնար գտնել՝ թէ ինչ ը-
նեն . ինչու որ բոլոր ժողովուրդը անոր
կապուեր էին մտիկ ընելու ։

## ԳԼ. Ի

1 Եւ եղաւ որ ան օրերուն մէկը՝ երբոր
տաճարին մէջը ժողովուրդին կը սորվեցը-
նէր ու աւետարանը կը քարոզէր , քահա-
նայապետները ու դպիրները ծերերուն
2 հետ մէկտեղ վրայ հասան , Եւ ըսին ա-
նոր . Զրուցէ՝ մեզի՝ ի՞նչ իշխանութիւ-
նով դուն աս բանը կ՚ընես , կամ ո՞վ է
որ աս իշխանութիւնը քեզի տուաւ ։
3 Պատասխան տուաւ ու ըսաւ անոնց .
Ես ալ մէկ բան մը հարցընեմ ձեզի , և
4 ըսէք ինծի ։ Յովհաննէսին մկրտութիւնը
5 երկինքէ՞ն էր , թէ մարդոցմէ ։ Անոնք ալ

Digitized by Google

միաբերնուն մէջ խորհեցան՝ ու ըսին.
Թէ որ ըսենք՝ Երկինքէն, պիտի ըսէ. 6
Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր. ու թէ
որ ըսենք՝ Մարդոցմէ, բոլոր ժողովուրդը
մեզ կը քարկոծեն. ինչու որ միաբերնին
հաստատ դրեր են Յովհաննէսին համար՝
թէ մարգարէ էր: Եւ պատասխան տուին՝ 7
թէ չեն գիտեր ուսկից էր: Եւ Յիսուս 8
ըսաւ անոնց. Ո՛չ ալ ես ձեզի կ՚ըսեմ
ի՛նչ իշխանութիւնով կ՚ընեմ ասիկայ:
Սկսեց աս առակը զրուցել ժողովուր- 9
դին. Մէկ մարդ մը այգի մը տնկեց, ու
զանիկայ բանուորներուն տուաւ. և ինքը
շատ ժամանակ ճամբայ գնաց: Ու ատե- 10
նին ան բանուորներուն ծառայ մը խրկեց,
որ այգիին պտուղէն անոր տան, և բան-
ուորները ծեծեցին անիկայ, ու պարապ
ճամբեցին: Եւ նորէն ուրիշ ծառայ մըն 11
ալ խրկեց. անոնք զանիկայ ալ ծեծեցին,
անարգեցին՝ ու պարապ ճամբեցին: Եւ 12
նորէն երրորդ մըն ալ խրկեց. անոնք ա-
նիկայ ալ վիրաւորեցին՝ ու դուրս հանե-
ցին: Այգիին տէրը ըսաւ: Ի՞նչ ընեմ. 13
իմ սիրական զաւակս խրկեմ, գուցէ ան-
կէ ամչնան: Բանուորները երբոր տեսան 14
անիկայ՝ իրարու հետ խորհուրդ ըրին ու
ըսին. Ասիկայ է ժառանգը. աս սպան-
նենք՝ որ ժառանգութիւնը մերը ըլլայ:
Եւ զանիկայ այգիէն դուրս հանեցին ու 15
սպաննեցին. ուստի այգիին տէրը ի՞նչ
պիտի ընէ անոնց. Չէ՞ որ պիտի գայ՝ ու 16

Digitized by Google

կորսնցընէ այն բանուորները, և այգին ու-
րիշներուն տայ ։ Երբոր աս լսեցին՝ ըսին .
17 Քաւ լիցի ։ Իսկ ինքը անոնց նայելով ը-
սաւ . Հապա ի՞նչ է այս գրուածը, թէ
Այն քարը որ շինողները անարգեցին, ա-
18 նիկայ անկիւնին գլուխը եղաւ ։ Ամէն ո՛վ
որ աս քարին զարնուի՝ ջախջախուած պիտի
ըլլայ, և որո՛ւն վրայ որ իյնայ՝ պիտի
19 փոշիէ զանիկայ ։ Ու կ՚ուզէին դպիրները
ու քահանայապետները նոյն ժամուն ձեռք
զարնել անոր, բայց ժողովուրդէն վախ-
ցան . ինչու որ իմացան՝ թէ այն առակը
իրենց վրայ զրուցեց ։
20 Ու երբոր յարմար առիթի սպասելով՝
խրկեցին քանի մը խաբեբայ մարդիկ՝ ո-
րոնք կեղծաւորութեամբ իրենք զիրենք ար-
դար կը ձեւացընէին, որ անիկայ խօսքով
բռնեն՝ տէրութեան ու դատաւորին իշ-
21 խանութեանը զինքը մատնելու ։ Հարցու-
ցին իրեն և ըսին . Վարդապետ՝ գիտենք
որ ուղիղ կը խօսիս ու կը սորվեցընես,
և աչառութիւն չես ըներ . հապա ճշմար-
տութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվե-
22 ցընես ։ Արդեօք արժա՞ն է Կայսրին տուրք
23 տալ՝ թէ չէ՛ ։ Իսկ անոնց խորամանկու-
24 թիւնը նայելով՝ ըսաւ անոնց . Ինծի դա-
հեկանը ցուցուցէք . անոնք ալ ցուցուցին .
և ըսաւ . Ասո՞ր պատկերը ու գիրը որո՞ւնն
է . Պատասխան տուին և ըսին՝ Կայսրինը ։
25 Ու ինքը ըսաւ անոնց . Ուրեմն տուէք
Կայսրինը Կայսրին տուէք, ու Աստուծոյինը



Digitized by Google

Աստուծոյ ։ Եւ չկրցան անիկայ խօս- 26
քով մը բռնել ժողովուրդին առջեւ . ու
զարմանալով անոր պատասխանին վրայ՝
լուռ կեցան ։

Սադուկեցիներէն ոմանք եկան , (որոնք 27
հակառակութիւն կ'ընէին թէ յարութիւն
չկայ ,) հարցուցին իրեն՝ Եւ ըսին . Վար- 28
դապետ՝ Մովսէս մեզի գրեց , թէ որ մէ-
կուն եղբայրը կնիկ ունենալով՝ առանց
զաւակի մեռնելու ըլլայ , անոր եղբայրը
թո՛ղ առնէ ան կնիկը , և իր եղբօրը զա-
ւակ հանէ ։ Ուստի եօթը եղբայրներ կա- 29
յին . ու առջինը կնիկ մը առնելով՝ զա-
ւակ չունեցած մեռաւ ։ Երկրորդն ալ ա- 30
ռաւ զանիկայ , և ինքն ալ մեռաւ առանց
զաւակի ։ Երրորդն ալ առաւ զանիկայ . 31
նմանապէս եօթն ալ , ու զաւակ չձգեցին ։
(32) Կնիկն ալ վերջը մեռաւ ։ Հիմա՝ յա- 33
րութեան ատենը անոնցմէ որո՞ւն կնիկ պի-
տի ըլլայ . ինչու որ եօթն ալ զանիկայ
կնիկ առին ։ Յիսուս պատասխան տուաւ 34
անոնց ու ըսաւ . Այս աշխարհիս զաւակ-
ները կնիկ կ'առնեն ու էրիկ կ'առնեն ։
Բայց անոնք որ արժանի պիտի ըլլան 35
մէկալ աշխարհին հասնելու , ու մեռելնե-
րէն յարութիւն առնելուն ; ո՛չ կնիկ կ'առ-
նեն և ո՛չ էրիկ կ'առնեն ։ Որովհետեւ ալ
չեն կրնար մեռնիլ . ինչու որ հրեշտակնե- 36
րուն հաւասար են՝ ու Աստուծոյ զաւակ-
ները , քանզի յարութեան որդիք են ։
Բայց մեռելներուն յարութիւն առնելը 37

Digitized by Google

Մովսէսն ալ իմացուց մորենիին պատմու-
թեանը մէջ, երբոր կ'ըսէ Տէրոջը համար՝
Աբրահամին Աստուածը, ու Իսահակին
38 Աստուածը, և Յակոբին Աստուածը։ Ու
Աստուած մեռելներուն Աստուածը չէ՛,
հապա կենդանիներուն. ինչու որ ամէնը
39 անոր կենդանի են։ Դպիրներէն մէկ քա-
նին պատասխան տուին և ըսին. Վարդա-
40 պետ՝ աղէկ ըսիր։ Ու ալ մէկը համար-
ձակութիւն չէր ըներ անոր բան մը հար-
ցընելու։
41 Իսկ ըսաւ անոնց. Ի՞նչպէս կ'ըսեն Քրի-
ստոսին համար՝ թէ Դաւիթին որդին է.
42 Իսկ ինքը Դաւիթ Սաղմոսներուն գրքին
մէջը կ'ըսէ. Տէրը իմ Տէրոջս ըսաւ. Իմ
43 աջ կողմս նստէ՛, Մինչև որ քու թշնա-
միներդ քու ոտքիդ պատուանդան ընեմ։
44 Ուստի թէ որ Դաւիթ զանիկայ Տէր կ'ա-
նուանէ, ի՞նչպէս անոր որդին կ'ըլլայ։
45 Իսկ բոլոր ժողովուրդին առջևը ըսաւ իր
46 աշակերտներուն. Զգո՛յշ կեցէք ան
դպիրներէն, որ կ'ուզեն պտըտիլ փառաւոր
հանդերձներով, ու շուկաներուն մէջը
բարևներ կը սիրեն, և ժողովարաններուն
մէջը առջի աթոռները, ու ընթրիքներու
47 մէջ գլխաւոր տեղերը. Որոնք որբևայրի-
ներուն տուները կ'ուտեն, ու երևնալու
համար աղօթքը կ'երկընցընեն. անոնք ա-
ւելի դատապարտութիւն պիտի ընդունին։

Digitized by Google

## Գլ. ԻԱ

Ու նայեցաւ՝ տեսաւ հարուստները որ ի- 1
րենց տուրքը գանձանակը կը ձգէին ։ Մէկ 2
որբեւարի աղքատ կնիկ մըն ալ տեսաւ ,
որ հոն երկու լումայ ձգեց ։ Ու ըսաւ ․ 3
Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , Որ այն աղքատ
որբեւարին ամենէն աւելի ձգեց ։ Անոնք ա- 4
մէնը իրենց դիզածներէն Աստուծոյ ընծա-
յին ձգեցին ․ բայց ասիկայ իր չքաւո-
րութենէն բոլոր իր ունեցած ապրուստը
ձգեց ։

Ու երբոր մէկ քանիները տաճարին հա- 5
մար կ՚ըսէին , թէ գեղեցիկ քարերով ու
աշտարակներով զարդարուած է ․ ըսաւ ․
Աս ամէնը որ կը տեսնէք , օրեր պիտի 6
գան՝ որ ան ատենը քար մը քարի վրայ
պիտի չմնայ հոս որ չքանուի ։ Հարցու- 7
ցին իրեն և ըսին ․ Վարդապետ՝ ե՞րբ պի-
տի ըլլայ ասիկայ , և ի՞նչ է նշանը երբ-
որ ասիկայ պիտի ըլլայ ։ Ան ալ ըսաւ ․ 8
Զգո՛յշ կեցէք՝ չխաբուիք ․ ինչու որ շա-
տերը պիտի գան իմ անունովս՝ ու ըսեն ,
թէ Ես եմ Քրիստոսը ․ ու ժամանակը
մօտեցաւ ․ անոնց ետեւէն չերթաք ։ Բայց 9
երբոր լսելու ըլլաք պատերազմներ և խառ-
վութիւններ՝ մի՛ վախնաք , ինչու որ պէտք
է առաջ աս բաները ըլլան , բայց վախ-
ճանը իսկոյն չէ՛ ։ Ան ատենը ըսաւ անոնց ․ 10
Ազգ ազգի վրայ պիտի ելլէ , ու թա-
գաւորութիւն թագաւորութեան վրայ ․

Digitized by Google

11 [illegible]
[illegible]
[illegible]
12 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
13 [illegible]
14 [illegible]
[illegible]
[illegible]
15 [illegible]
[illegible]
[illegible]
16 [illegible]
[illegible]
[illegible]
17 [illegible]
18 [illegible]
[illegible]
19 [illegible]
[illegible]
20 [illegible]
[illegible]
21 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
22 [illegible]

Digitized by Google

թեան օրեր են, որ բոլոր գրուածները կա-
տարուին ։ Բայց վայ է ան օրերը յղի ե- 23
ղողներուն ու ծիծ տուողներուն. ինչու որ
մեծ նեղութիւն պիտի ըլլայ երկրի վրայ,
ու բարկութիւն [illegible] ան ժողովուր-
դին վրայ ։ Եւ սուրի բերնով պիտի իյ- 24
նան, և բոլոր Հեթանոսներուն գերի պի-
տի ըլլան. ու Երուսաղէմ օտար ազգերուն
ոտքին կոխան պիտի ըլլայ, մինչև որ Հե-
թանոսներուն ժամանակները լմըննան ։
Ու արեգակին և լուսինին ու աստղերուն 25
վրայ նշաններ պիտի ըլլան. ու երկրի
վրայ Հեթանոսներուն սրտադողը՝ ան ա-
Հարկու ձայնէն ծովի և ալեկոծութեան
պէս, Մարդոց սրտամաշուքէն՝ իրենց վա- 26
խէն և աշխարհի վրայ գալու բաներուն
կարծիքներէն. ինչու որ երկինքի զօրու-
թիւնները պիտի շարժին ։ Եւ ան ատենը 27
պիտի տեսնեն Որդին մարդոյ՝ ամպերու
վրայ, զօրութիւնով ու մեծ փառքով ե-
կած ։ Եւ երբոր աս բաները սկսին ըլլալ՝ 28
ելէք ու գլուխնիդ բարձրացուցէք. ինչու
որ ձեր փրկութիւնը մօտ է ։

Եւ առակ մը ըսաւ անոնց. Տեսէք 29
թզենին ու ամէն ծառերը. Երբոր իրենց 30
պտուղը կը ցուցընեն, կը տեսնէք՝ ու ա-
նոնցմէ կը ճանչնաք թէ ամառը մօտ է ։
Անոր պէս դուք ալ երբոր տեսնէք աս 31
ամէնը եղած՝ գիտցէք որ Աստուծոյ թա-
գաւորութիւնը մօտ է ։ Ճշմարիտ կըսեմ 32
ձեզի՝ թէ Աս ազգը պիտի չանցնի, մինչև

33 որ աս ամէնը կատարուի ։ Երկինք ու
երկիր պիտի անցնին , բայց իմ խօսքերս
34 դարտը պիտի չանցնին ։ Զգուշացէք
ձեր անձերուն , չըլլայ որ սիրտերնիդ կերու-
ուխումով ու գինովութիւնով և աշխար-
հային զբաղմունքներով ծանրանայ , ու
յանկարծակի ան օրը ձեր վրայ հասնի ․
35 Վասն զի բոլոր երկրին երեսը բնակողնե-
րուն ամենուն վրայ որոգայթի մը պէս պի-
36 տի հասնի ։ Ուստի ալ արթո՛ւն կեցէք՝
ամէն ատեն աղօթք ըրէք , որ արժանի
ըլլաք ան բոլոր ըլլալու բաներէն ազա-
տուելու , և Որդւոյ մարդոյ առջևը կայ-
նելու ։
37 Ու ցորեկը տաճարին մէջը կը սորվեցը-
նէր , և գիշերները կ՚ելլէր Ձիթենեաց ը-
38 սուած լեռը կը հանար ։ Ու բոլոր ժո-
ղովուրդը առտուանց կանուխ իրեն կ՚եր-
թային տաճարը՝ անոր խօսքը մտիկ ընելու ։

## ԳԼ. ԻԲ

1 Բաղարջակերաց տօնը , մօտեցաւ՝ որ
2 Զատիկ կ՚ըսուէր ։ Ու քահանայապետները
և դպիրները կը փնտռէին թէ ինչպէս զա-
նիկայ սպաննեն , միայն թէ ժողովուրդէն
կը վախնային ։
3 Եւ Սատանան Իսկարիովտացի ը-
սուած Յուդային մէջը մտաւ , որ ան
4 տասներկուքին համրանքէն էր ։ Գնաց
քահանայապետներուն և դպիրներուն ու
ժողովուրդին գլխաւորներուն հետ խօսք

Digitized by Google

ըրաւ՝ որ զանիկայ անոնց ձեռքը մատնէ :
Անոնք ալ ուրախացան, և խոստացան 5
անոր ստակ տալու : Ու ինքը յանձն ա- 6
ռաւ, և պատեհութիւն մը կը փնտռէր որ
անիկայ ժողովուրդէն զատ տեղ մը իրենց
ձեռքը մատնէ :

Բաղարջակերաց օրը եկաւ, որ այն օրը 7
սովորութիւն կար զատիկը մորթելու :
Ու ղրկեց Պետրոսը և Յովհաննէսը ու ը- 8
սաւ . Գացէք պատրաստեցէք մեզի զա-
տիկը որ ուտենք : Անոնք ալ ըսին . Ու՞ր 9
կ՚ուզես որ պատրաստենք : Ինք ըսաւ ա- 10
նոնց . Ահա՛ երբոր քաղաքը մտնէք՝ ձեզի
մարդ մը պիտի պատահի ջուրի սափոր մը
վերցուցած . անոր ետեւէն գացէք այն տու-
նը՝ ուր որ ինքը կը մտնէ . Ու այն տունին 11
տիրոջը ըսէք . Վարդապետը կ՚ըսէ քեզի .
Իմ օթեվանս ու՞ր է, որ հոն աշակերտա-
ներուս հետ միասին զատիկը ուտեմ :
Ան ալ ձեզի մէկ մեծ վերնատուն մը պիտի 12
ցուցընէ զարդարուած, ու հոն պատրաս-
տեցէք : Ու գացին գտան ինչպէս որ ի- 13
րենց ըսաւ, ու զատիկը պատրաստեցին :

Ու երբոր ատենը եկաւ՝ նստաւ սեղան . 14
ու տասներկու առաքեալները իր հետը :
Ու ըսաւ անոնց . Փափաքելով փափաքե- 15
ցայ որ այս զատիկը ձեզի հետ ուտեմ իմ
չարչարուելէս առաջ : Բայց կ՚ըսեմ ձեզի 16
որ ալ ասկից ետքը չուտեմ՝ մինչեւ որ Աս-
տուծոյ թագաւորութեան մէջը կատարու-
ուի : Ու գաւաթը առաւ՝ գոհացաւ ու 17

Digitized by Google

ըսաւ . Առէ՛ք ասիկա՝ ու բ
18 մէջը . Ձեզի կ՚ըսեմ , որ
թէն բերքէն պիտի չխմեմ՝
տուծոյ թագաւորութիւնը գ
19 Ու հացը առաւ՝ գոհացա
տուաւ անոնց՝ ու ըսաւ . Ա
մինս , որ շատերուն հա
է . ասիկայ ըրէք զիս յիշ
20 Նոյնպէս ալ գաւաթը առ
նելէ՝ ու ըսաւ . Այս գաւաթ
է իմ արիւնովս , որ ձեզի հա
փուի :
21 Բայց ահա՛ զիս մատնողին
22 հետ աս սեղանին է : Եւ
մարդոյ կ՚երթայ՝ ինչպէս որ
է , բայց վա՜յ այն մարդուն՝
23 քովը պիտի մատնուի : Եւ
ցին իրարու մէջ փնտռել ,
ո՛վ է՝ որ այն բանը պիտի ըն
24 Հակառակութիւն մըն ալ
մէջը՝ թէ իրենցմէ ո՛վ մեծ պ
25 Ինքն ալ ըսաւ անոնց . Ա
գաւորները անոնց վրայ կը
նողները որ կ՚իշխեն անոնց վ
26 կ՚ըսուին . Բայց դուք անս
լաք . հապա ան որ ձեր
պզտիկին պէս թող ըլլայ ,
27 սպասաւորին պէս : Ո՞վ է
նստո՞ղը՝ թէ սպասաւորը .
նստողը . սակայն ես ձեր մէ
28 մը պէս եմ : Եւ դուք անոն

ինծի հետ կը կենայիք իմ փորձութիւննե-
րուս մէջը. Ես ալ ձեզի թագաւորութիւն 29
մը ուխտ կ'ընեմ, ինչպէս որ իմ Հայրս ալ
ինծի թագաւորութիւն մը ուխտ ըրաւ.
Որ դուք իմ սեղանէս ուտէք ու խմէք իմ 30
թագաւորութեանս մէջ, և տասներկու
աթոռներու վրայ նստիք, Իսրայէլի տաս-
ներկու ցեղին դատաստանը տեսնելու:

Եւ ըսաւ Տէրը. Սիմո՛ն Սիմո՛ն, ահա՛ 31
Սատանան ուզեց ցորենի պէս ձեզ մաղելու.
Բայց ես քեզի համար աղօթեցի՝ որ քու 32
հաւատքդ չպակսի. և դուն երբոր դառ-
նաս՝ քու եղբայրներդ ալ հաստատէ՛:
Ինքն ալ ըսաւ անոր. Տէ՛ր, ես պատրաստ 33
եմ քեզի հետ բանտը երթալու ալ, մեռ-
նելու ալ: Ան ալ ըսաւ անոր. Պետ- 34
րո՛ս, քեզի կ'ըսեմ որ այսօր դեռ հաւը
չխօսած՝ դուն երեք անգամ զիս ուրանաս
ըսելով որ զիս չես ճանչնար:

Եւ ըսաւ անոնց. Երբ որ ձեզ ղրկեցի 35
առանց քսակի ու պարկի և կօշիկներու,
բանի մը կարօտ եղա՞ք: Անոնք ալ ը- 36
սին. Բանի մըն ալ չէ՛. Ետքը ըսաւ.
Բայց հիմա ան որ քսակ ունի՝ թո՛ղ հետը
առնէ, նմանապէս ալ պարկը. և ան որ թուր
չունի՝ թո՛ղ իր լաթերը ծախէ, ու իրեն
թուր մը ծախու առնէ. Բայց ձեզի կ'ը- 37
սեմ, որ աս գրուած բանը ալ պէտք է որ
իմ վրաս կատարուի, թէ Անօրէններուն
հետը սեպուեցաւ. քանզի ի՛նչ որ ինծի
համար որոշուած է, կատարուելու վրայ

38 է ։ Անոնք ալ ըսին . Տէ՛ր՝ ահա՛ հոս
երկու թուր կայ . ան ալ ըսաւ անոնց ,
Հերիք են ։
39 Ու ելաւ իր սովորութեանը պէս Ձի-
թենեաց լեռը գնաց . աշակերտներն ալ
40 իր ետեւէն գացին ։ Երբոր ան տեղը հա-
սաւ՝ ըսաւ անոնց . Աղօթք ըրէք որ փոր-
41 ձութեան մէջ չմտնէք ։ Ու ինքը անոնցմէ
զատուեցաւ քարընկեցի մը չափ , ծունկի
42 գալով եկաւ՝ աղօթք կ՚ընէր , Ու կ՚ըսէր .
Հա՛յր՝ թէ որ կ՚ուզես , աս գաւաթը ինծ-
մէ անցո՛ւր . բայց չէ՛ թէ իմ կամքս՝ հա-
43 պա քու կա՛մքդ թո՛ղ ըլլայ ։ Ու երկինքէն
հրեշտակ մը երեւցաւ անոր և կը զօրացը-
նէր զանիկայ . ու սաստիկ նեղութեան
մէջ ըլլալով՝ աւելի ջերմեռանդութեամբ
44 աղօթք կ՚ընէր ։ Ու իր քրտինքը կը վա-
զէր արիւնի կաթիլներու պէս , կլոր կլոր
45 գետինը թափելով ։ Ու աղօթքէն ելաւ
աշակերտներուն քովը եկաւ , ու գտաւ ա-
46 նոնք տրտմութենէն քնացած . Ու ըսաւ
անոնց . Ինչո՞ւ կը քնանաք . ելէք աղօթք
ըրէք՝ որ փորձութեան մէջ չմտնէք ։
47 Ու երբոր դեռ կը խօսէր՝ ահա՛ մէկ
բազմութիւն մը , և ան Յուդա ըսուածն
ալ՝ տասներկուքէն մէկը անոնց առջևէն էր
ինկած . երբոր մօտեցաւ Յիսուսին՝ համ-
բուրելու զանիկայ . ինչու որ անիկայ աս
նշանը տուած էր անոնց , ըսելով թէ Ո՛վ
որ ես համբուրեմ , ան է անիկայ բռնե-
48 ցէք ։ Յիսուս ըսաւ անոր . Յո՛ւդա՛

Digitized by Google

համբուրելո՞վ կը մատնես Որդին մարդոյ ։
Երբոր ան եղած բանը տեսան քովը եղող- 49
ները՝ ըսին անոր . Տէ՛ր՝ թուրով զարնենք
անոնք ։ Եւ անոնցմէ մէկը՝ քահանա- 50
յապետին ծառային զարկաւ , ու մէկդի
հանեց անոր աջ ականջը ։ Պատասխան 51
տուաւ Յիսուս՝ և ըսաւ . Թո՛ղ տուէք
մինչև աս տեղը . ու դպաւ ականջին
բժշկեց զանիկայ ։ Եւ ըսաւ ան իր վրայ 52
եկողներուն՝ քահանայապետներուն ու տա-
ճարին իշխաններուն ու ծերերուն . Իբր
թէ գողի՞ վրայ ելաք սուրերով ու բի-
բերով ։ Ամէն օր ձեզի հետ էի տաճարին 53
մէջը , և ինծի ձեռք չզարկիք . բայց աս
է ձեր ատենը՝ ու խաւարին իշխանութիւ-
նը ։ Եւ զանիկայ բռնեցին տարին՝ ու 54
քահանայապետին տունը մտցուցին ։

Պետրոս ալ հեռուանց անոր ետևէն կ'եր-
թար ։ Երբոր կրակ վառեցին գաւիթին 55
մէջը ու նստան բոլորտիքը՝ Պետրոս ալ
նստաւ անոնց մէջը ։ Մէկ աղախին մը 56
տեսաւ անիկայ՝ որ կրակին լոյսին քովը
նստեր էր , նայեցաւ անոր ու ըսաւ . Ա-
սիկայ ալ անոնցմէ է՝ որ անոր հետ էին ։
Բայց Պետրոս ուրացաւ և ըսաւ . Կնի՛կ՝ 57
ես անիկայ չեմ ճանչնար . Ու քիչ մը ետ- 58
քը մէկ ուրիշ մը տեսաւ անիկայ՝ և ը-
սաւ . Դուն ալ անոնցմէ ես . և Պետրոս
ըսաւ . Մա՛րդ՝ ես անոնցմէ չեմ ։ Եւ երբ- 59
որ ժամ մը վրան անցաւ , ուրիշ մէն ալ
կը պնդէր ու կ'ըսէր . Իրաւցընէ ասիկայ

Digitized by Google

ալ անոր՝ Հեման
60 ըսացի է ։ Ը
գիտեր փ՛նչ կ
ժամուն որ զ
61 Հաւը խօսեցաւ
բոսին նայեցաւ
քաւ Տէրոջը խ
ծէ ՝ Հաւը դեռ
ոք ուրանաս զ
62 Ու դուրս ելա
63 Ու ան մար
ծառը կ՛ընէին
64 Եր ծածկէին ա
ու կը հարցնէ
գարնեցի՞ր՝ ո՞
65 Ու ուրիշ շա
հայհոյելով ։
66 Ու երբոր
Տերակոյտը ,
պիրները ժողվ
անիկայ իրենց
67 Քրիստոսը դո
նոնց ։ Թէ որ
68 Հաւատաք ։ Ե
ցընեմ՝ ինծի
69 Ա՛ն ալ ետև. Թ
ասկէ ետև. Ու
70 րութեանը աջ
մէնքը ըսին ։
դին ես ։ Ինք
71 Կ՛ըսէք թէ ե

Ու ի՞նչ պէտք է մեզի վկայութիւն, ին-
չու որ մենք մեզմէ ատոր բերնէն լսեցինք։

## ԳԼ. ԻԳ

Եւ անոնց բոլոր բազմութիւնը ոտք ել- 1
լելով՝ տարին անիկայ Պիղատոսին. Ու 2
սկսեցին անոր վրայ չարախօսութիւն ընել
և ըսել. Ասիկայ գտանք՝ որ մեր ազգը կը
մոլորեցնէր, ու կ՚արգիլէր կայսրին հարկ
տալէն, և իրեն համար կ՚ըսէր, թէ ինքը
Քրիստոս ու թագաւոր է։ Իսկ Պիղա- 3
տոս հարցուց անոր՝ ու ըսաւ. Հրէանե-
րուն թագաւորը դո՞ւն ես. անիկայ ալ
պատասխան տուաւ անոր՝ և ըսաւ. Դուն
ըսիր։ Պիղատոս քահանայապետներուն 4
ու ժողովուրդներուն ըսաւ. Ես աս մար-
դուն վրայ մէկ յանցանք մը չեմ գտներ։
Բայց անոնք ոտք կը կոխէին ու կ՚ըսէին, 5
թէ ժողովուրդը իրար կ՚անցընէ, բոլոր
Հրէաստանի մէջ կը սորվեցընէ՝ Գալիլեա-
յէն սկսած մինչև աս տեղս։ Ու Պիղատոս 6
երբոր լսեց Գալիլեայի համար՝ հարցուց
թէ աս մարդը Գալիլեացի՞ է։ Ու երբոր 7
իմացաւ՝ թէ Հերովդէսի իշխանութեան
տակէն էր. անիկայ Հերովդէսին տանել
տուաւ, քանզի ան ալ ան օրերը Երուսա-
ղէմ էր։

Ու Հերովդէս երբոր Յիսուսը տեսաւ՝ 8
շատ ուրախացաւ. վասն զի ինքը շատոնց-
մէ կը փափաքէր անիկայ տեսնելու. ո-
րովհետև շատ անցած անոր վրայովը լսեր

Digitized by Google

էր, և կը յուսար որ անկէց հրաշք նշան մը
9 տեսնէ ։ Շատ խօսքերով իրեն հարցու-
փորձ կ՚ընէր . բայց անիկայ բնաւ իրեն
10 պատասխան մը չտուաւ ։ Քահանայա-
պետներն ու դպիրներն ալ հոն էին՝ և
սաստիկ չարախօսութիւն կ՚ընէին
11 անոր վրայ ։ Հերովդէս ալ անարգեց զա-
նիկայ իր զօրականներուն հետ , ու ծաղր
ընելով՝ ճերմակ հանդերձներ հագցուց ա-
նոր՝ և նորէն Պիղատոսին տանիլ տուաւ ։
12 Ու այն օրը Պիղատոս և Հերովդէս բա-
րեկամ եղան . որովհետև առաջ իրարու
թշնամի էին ։

13 Պիղատոս՝ քահանայապետներն ու իշ-
14 խաններն և ժողովուրդը կանչեց ։ Ու ը-
սաւ անոնց . Այս մարդը բերիք առջևս
հանեցիք՝ ժողովուրդը մոլորեցնողի մը
պէս . և ահա՛ ձեր առջևը դատաստանը
տեսայ , ու ասոր համար ձեր բռած չա-
րախօսութիւններէն՝ յանցանք մը չգտայ
15 այս մարդուն վրայ . Ո՛չ ալ Հերովդէսը ,
ինչու որ անիկայ անոր տանիլ տուի . ու ա-
հա անիկայ մեռնելու արժանի բան մը ը-
16 րած չէ՛ . Պատիժ մը տամ ասոր ու ար-
17 ձակեմ . (Ինչու որ ամէն մէկ տօնին պէտք
18 էր մէկը արձակել իրենց .) Ու անոնք
բոլոր բազմութեամբ հետ կը պոռային ու
կ՚ըսէին . Մեռցո՛ւր զանիկայ՝ ու Բարաբ-
19 բան մեզի արձակէ՛ . (Որ ան քաղաքին
մէջ եղած խռովութեան մը և մարդասպա-
նութեան համար բանտը դրած էր .)

Նորէն Պիղատոս սկսեց խօսիլ, ինչու որ 20
ինքը կ'ուզէր Յիսուսը արձակել ։ Բայց 21
անոնք նորէն կ'աղաղակէին ու կ'ըսէին .
Խաչը հանէ զանիկայ ։ Ու ինքը երրորդ 22
անգամ ըսաւ անոնց . Ինչ չարութիւն
գործեց ասիկայ . ես անոր վրայ մահուան
արժանի յանցանք մը չգտայ . պատիժ մը
տամ ասոր ու թող տամ ։ Անոնք ալ 23
ձայներնին ձգած ուժ կը կոխէին, ու կ'ու-
զէին անիկայ խաչը հանել . ու անոնց և
քահանայապետներուն ձայները զօրաւոր
եղան ։ Ու Պիղատոս հաւանութիւն տուաւ 24
անոնց ուզածը ընելու ։ Բարաբբան ար- 25
ձակեց անոնց, ան որ խռովութեան և
մարդասպանութեան համար բանտը դը-
րուած էր, որ անիկայ կ'ուզէին . և Յի-
սուսը իրենց կամացը յանձնեց ։

Երբոր տարին գացին անիկայ, Սիմոն 26
Կիւրենացի ըսուած մէկը բռնեցին՝ որ
արտէն կու գար, խաչը անոր վրայ դրին՝
որ Յիսուսի ետևէն բերէ ։ Ու անոր 27
ետևէն կ'երթային բազմաթիւ ժողովուրդ
և կնիկներ ալ, որոնք կ'ողբային ու կո-
ծային անոր համար ։ Դարձաւ Յիսուս՝ 28
և ըսաւ անոնց . Երուսաղէմի աղջիկները՛
իմ վրաս մի՛ լաք . հապա դուք ձեր անձ-
ձերուն վրայ ու ձեր զաւակներուն վրայ
լացէք ։ Ինչու որ օրեր պիտի գան՝ որ 29
ան ատենը ըսեն, Թէ Երանի՛ ամուլներուն
և որովայններուն՝ որ չծնան, և ան ծիծե-
րուն՝ որ կաթ չտուին ։ Ան ատենը պիտի 30

Digitized by Google

սկսին ըսել լեռներուն , Թէ Մեր վրայ
ինկէք , ու բլուրներուն , Թէ Մեզ ծած-
31 կեցէք : Վասն զի Թէ որ կանանչ փայտին
ասանկ կ'ընեն , հապա չորին ի՞նչ պիտի
ըլլայ :
32 Ուրիշ երկու չարագործներ ալ բերին
33 անոր հետը սպաննելու : Երբոր Գագաթ-
ըսուած տեղը գացին՝ հոն խաչը հանեցին
անիկայ . և ան չարագործներն ալ մէկը
աջ կողմէն՝ ու մէկը ձախ կողմէն խաչեցին :
34 Իսկ ըսաւ Յիսուս . Հա՛յր՝ Թողութի՛ւն
տուր ատոնց , ինչու որ չեն գիտեր ի՛նչ
կ'ընեն : Իսկ անոր հանդերձները բաժնե-
35 լու ատենը վիճակ ձգեցին : Ու ժողո-
վուրդը կայներ կը նայէր . իշխաններն ալ
անոնց հետ կը նախատէին զինքը՝ և կ'ը-
սէին . Ուրիշները ազատեց , Թող ինք-
զինքն ալ ազատէ՝ Թէ որ ատիկայ է Քրի-
ստոսը Աստուծոյ ընտրեալ Որդին :
36 Ծաղր կ'ընէին անիկայ զինուորներն ալ ,
առջևը կու գային՝ քացախ կու տային անոր ,
37 Իսկ կ'ըսէին . Թէ որ դուն ես Հրէանե-
րուն Թագաւորը՝ քու անձդ ազատէ՛ :
38 Ու գիր մը գրուած էր անոր վրան՝ Յու-
նարէն ու Լատիներէն և Եբրայեցերէն գի-
րով , Թէ Ասիկայ է Հրէից Թագաւորը :
39 Բայց ան կախուած չարագործներուն մէ-
կը հայհոյութիւն կ'ընէր անոր՝ և կ'ըսէր .
Դուն Քրիստոսը չե՞ս , ազատէ՛ քու անձդ
40 ու մեզ ալ : Պատասխան տուաւ ընկերը
անիկայ չեխելով , և ըսաւ . Դուն Աս-

Digitized by Google

տուեց՝ չե՞ս վախնար, որովհետեւ նոյն
պատիժին մէջն ես։ Ու մենք իրաւամբ 41
քով, քանզի առ՝ մեր ըրածներուն արժա-
ժանաւոր վարձքը կ'առնենք. բայց ասի-
կայ մէկ գէշ բան մը չըրաւ։ Ու ըսաւ 42
Յիսուսին. Տէ՛ր՝ զիս միտքդ բեր՝ երբոր
քու թագաւորութիւնովդ գաս։ Յիսուս 43
ալ ըսաւ անոր. Ճշմարիտ կ'ըսեմ քեզի.
Դուն այսօր իմ հետս դրախտին մէջը պի-
տի ըլլաս։

Ու ժամը վեցին ատեններն էր, և բո- 44
լոր երկրին վրայ խաւար եղաւ մինչեւ ին-
ներորդ ժամը. արեւը խաւարեցաւ, Ու 45
տաճարին վարագոյրը մէջտեղէն պատռե-
ցաւ. Ու Յիսուս բարձր ձայնով մը կան- 46
չեց ու ըսաւ. Հա՛յր՝ քու ձեռքդ կ'աւան-
դեմ իմ հոգիս. երբոր աս ըսաւ՝ հոգին
տուաւ։

Ու հարիւրապետը աս եղած բանը տես- 47
նելով՝ Աստուծոյ փառք տուաւ և ըսաւ.
Իրաւցընէ աս մարդը արդար էր։ Ու 48
բոլոր ժողովուրդները որ եկեր էին՝ ու
կը տեսնէին աս տեսարանը և եղած բանե-
րը՝ կուրծքերնին կը զարնէին ու ետ կը
դառնային։ Ամէն իր ծանօթներն ալ 49
հեռուն կայներ էին, և այն կնիկները՝ որ
իր հետէն եկեր էին Գալիլեայէն, կը
տեսնէին աս բաները։

Ու ահա՛ մէկ մարդ մը Յովսէփ անուա- 50
նով, որ ինքը նախարար էր՝ բարեգործ
ու արդար մարդ մը. (Ասիկայ անոնց 51

Digitized by Google

խորհուրդին ու գործքերուն հետ միաբա-
նած չէր ,) Հրէաներուն Արիմաթեա քա-
ղաքէն , որ ինքն ալ Աստուծոյ թագա-
52 ւորութեանը կը սպասէր : Ասիկայ Պի-
ղատոսին գնաց , Յիսուսին մարմինը ու-
53 զեց : Եւ զանիկայ խաչէն իջեցընելով՝
կտաւով փաթթեց , ու քարէ փորուած
գերեզմանի մը մէջ դրաւ , որ հոն բնաւ
54 մէկը դրուած չէր : Օրն ալ ուրբաթ էր ,
ու շաբաթ պիտի լուսնար :
55 Եւ անոր ետեւէն կ'երթային այն կիներ-
ը՝ որ իրեն հետ Գալիլեայէն եկած էին , ու
տեսան գերեզմանը՝ և թէ ինչպէս անոր
56 մարմինը հոն դրուեցաւ : Դարձան ու
պատրաստեցին խունկեր ու եղեր , և շա-
բաթ օրը հանգստացան պատուիրանքին
համար :

## ԳԼ. ԻԴ.

1 Բայց մէկշաբթի օրը առտուանց կա-
նուխ գերեզմանը եկան , բերին այն խուն-
կերը որ պատրաստեցին . և ուրիշ կնիկ-
2 ներ ալ իրենց հետը : Ու քարը գերեզ-
մանէն մէկդի գլտորուած գտան :
3 Ու ներս մտնելով՝ Տէր Յիսուսին մար-
4 մինը հոն չգտան : Եւ եղաւ որ երբ ա-
նոնք անոր համար կը զարմանային՝ և ա-
հա՛ երկու մարդիկ լուսաւոր հագուստով
5 իրենց հասան : Եւ երբոր վախով լե-
ցուած՝ երեսնին դէպ 'ի գետինը ծռեցին ,
անոնք ըսին իրենց . Ինչո՞ւ համար ող-

Digitized by Google

[illegible] 6
[illegible]
[illegible]
[illegible] 7
[illegible]
[illegible]
[illegible] 8
[illegible] 9
[illegible]
[illegible]
[illegible] 10
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 11
[illegible]
[illegible] 12
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible] 13
[illegible]
[illegible]
[illegible] 14
[illegible]
[illegible] 15
[illegible]
[illegible]
[illegible] 16
[illegible] 17

Digitized by Google

նոնց . Ի՞նչ է սա խօսքերնիդ, որուն
համար իրարու հետ կը վիճաբանիք՝ երբոր
18 կը քալէք, ու տրտմած ալ էք: Պատաս-
խան տուաւ անոնցմէ մէկը՝ որուն անունը
Կղէովպաս էր, և ըսաւ իրեն. Դո՞ւն
միայն Երուսաղէմի մէջ կը կենաս, որ չես
19 գիտեր թէ ինչ եղաւ հոն այս օրերս: Իրե-
նէ ըսաւ անոնց. Ի՞նչ. անոնք ալ ը-
սին, Նազովրեցի Յիսուսին համար, ան
որ մարգարէ մըն էր եղաւ՝ զօրաւոր
գործքերով ու խօսքերով Աստուծոյ և
20 բոլոր ժողովուրդին առջևը. Ինչպէս
մեր քահանայապետները ու իշխանները
մահուան դատաստանի մատնեցին անիկայ՝
21 և խաչը հանեցին: Մենք յոյս ունէինք՝
թէ անիկայ է որ Իսրայէլը պիտի փըր-
կէ. և այս ամենուն վրայ՝ այս երրորդ օրն
22 է՝ քանի որ ան բաները եղան: Նաև մեր
մէջէն մէկ քանի կիներ ալ մեզ զարմա-
ցուցին, որոնք առտուանց կանուխ գե-
23 րեզմանը գացին, Ու անոր մարմինը չգտ-
նան. եկան ու ըսին, թէ հրեշտակներու
տեսիլք ալ տեսան, որոնք ըսեր են անոր
24 համար՝ թէ ողջ է: Ու մեզմէ մէկ քա-
նիներն ալ գերեզմանը գացին՝ ու անանկ
գտան, ինչպէս որ ան կիները զրուցե-
25 ցին. միայն թէ զինքը չտեսան: Ան ալ
անոնց ըսաւ. Ո՛վ անխելքներ ու սրտով
թմբածներ հաւատալու ան բոլոր բանե-
26 րուն՝ որ մարգարէները խօսեցան: Չէ՞ որ
ան բաները պէտք էր Քրիստոս չար-

Digitized by Google

չարչարուիլ և իր փառքը մտնել ։ Ու սկսաւ 27
Մովսէսէն և բոլոր մարգարէներէն կը
մեկնէր անոնց, ինչ որ իրեն համար բո-
լոր գիրքերուն մէջ գրուած էր ։ Երբոր 28
մօտիկցան այն գեղին ուր որ կ'երթային ,
ինքն ալ կը ցուցընէր որպէս թէ աւելի
հեռու տեղ մը պիտի երթայ ։ Բայց ստի- 29
պեցին զինքը՝ և ըսին . Մեր քովը կեցիր ,
ինչու որ իրիկուն է , և ժամանակը ուշ է .
ու հոն մտաւ անոնց հետ կենալու ։ Ու ե- 30
ղաւ որ երբ ինքը անոնց հետ սեղան նստա-
ւաւ , հացը առաւ՝ օրհնեց , կոտրեց ու
տուաւ անոնց ։ Ու անոնց աչքերը բա- 31
ցուեցան , ու զինքը ճանչցան . և ինքը
անոնցմէ աներևոյթ եղաւ ։ Ու մէկզմէ- 32
կու կ'ըսէին . Չէ՞ որ մեր սիրտերն ալ
ներսերնիս կը ճմլուէին , երբոր մեր հետը
կը խօսէր ճամբուն մէջ , և գիրքերը կը
մեկնէր մեզի ։

Ու ելան նոյն ժամուն Երուսաղէմ դար- 33
ձան , և տասնումէկը ու անոնց հետ ե-
ղողները մէկտեղ ժողվուած գտան . Ու 34
ըսին , թէ Իրաւցընէ Տէրը յարութիւն
առաւ , ու Սիմոնին երևցաւ ։ Ու իրենք 35
պատմեցին ինչ որ ճամբուն վրայ եղաւ ,
և թէ ինչպէս ինքզինքը իրենց ճանչցուց
հացը կոտրելու ատենը ։

Երբոր ան կը խօսէին , Յիսուս ինքը 36
կայնեցաւ անոնց մէջը ու ըսաւ իրենց .
Խաղաղութիւն ձեզի ; ես եմ մի վախնաք ։
Բայց անոնք զարհուրելով կը վախնային , 37

Digitized by Google

ու կը կարծէին թէ մէկ ոգի մը կը տեսնեն ։
38 Ան ըսաւ անոնց . Ինչո՞ւ տակնուվրայ
եղած էք , և ինչո՞ւ սրտերնուդ մէջը
39 խորհուրդներ կ'ելլեն ։ Տեսէք ձեռքերս
ու ոտքերս , որ ես նոյն եմ . շօշափեցէք
զիս՝ ու նայեցէք . վասն զի ոգին միս
և ոսկորներ չունենար , ինչպէս որ զիս
40 կը տեսնէք որ ունիմ ։ Ան ասանկ ըսելով
ձեռքերը ու ոտքերը ցուցուց անոնց ։
41 Ան երբոր տակաւին իրենց ուրախութենէն
չէին հաւատար՝ ու զարմանքի մէջ էին ,
ըսաւ անոնց . Ուտելիք մը ունի՞ք հոս ։
42 Անոնք ալ իրեն կտոր մը խորոված ձուկ՝
43 ու մեղրախորիսխ տուին ։ Ան առաւ կե-
րաւ անոնց առջևը , ու մնացորդը անոնց
44 տուաւ ։ Ան ըսաւ անոնց . Ասոնք են ան
խօսքերը՝ որ ձեզի խօսեցայ երբոր ձեր
հետն էի , թէ պէտք է որ կատարուի ան
ամէնը՝ որ Մովսէսի օրէնքին մէջը՝ ու
մարգարէներուն մէջ՝ և սաղմոսներուն մէջ՝
45 ինծի համար գրուած են ։ Ան ատենը ա-
նոնց միտքը բացաւ՝ որ գիրքերը հասկը-
46 նան ։ Ան ըսաւ անոնց , թէ Ասանկ պէտք
էր Քրիստոսին չարչարուիլ , ու երրորդ
47 օրը մեռելներէն յարութիւն առնել . Ան
անոր անունովը մեղաց ապաշխարութիւն
ու թողութիւն քարոզուիլ բոլոր ազգերու
48 մէջ՝ Երուսաղեմէն սկսած ։ Ու դուք էք
49 աս բաներուս վկաները ։ Ահա՛ ես իմ
Հօրս խոստմունքը ձեզի կը ղրկեմ . բայց
դուք Երուսաղէմ քաղաքին մէջը նստե-

Digitized by Google

չէք , մինչև որ վերէն զօրութիւն առնէք
վրանիդ :

Զանոնք մինչև Բեթանիա հանեց , և իր 50
ձեռքերը վեր վերցուց՝ օրհնեց անոնք : Ու 51
եղաւ որ երբ անոնք կ'օրհնէր , զատուեցաւ
անոնցմէ , ու վեր կ'ելլէր երկինքը : Ա- 52
նոնք ալ երկրպագութիւն ընելով անոր՝
մեծ ուրախութեամբ Երուսաղէմ դարձան :
Ու ամէն ատեն տաճարին մէջ էին , կը 53
գովէին ու կ'օրհնէին զԱստուած :

# ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

## ԳԼՈՒԽ Ա

1 Սկիզբէն էր Բանը, ու Բանը Աստուա-
ծոյ քովն էր, և այն Բանը Աստուած
2 էր։ Անիկայ սկիզբէն Աստուծոյ քովն էր։
3 Ամէն բան անով եղաւ, և առանց անոր
4 բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ։ Կեանքը
անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր.
5 Եւ լոյսը այն խաւարին մէջ կը լուսաւո-
րէր. ու խաւարը անիկայ չհասկցաւ։
6 Աստուծմէ մէկ մարդ մը խրկուեցաւ,
7 որուն անունը Յովհաննէս էր։ Անիկայ
եկաւ վկայելու համար՝ որ այն Լոյսին հա-
մար վկայէ, որ ամէնն ալ անոր միջոցո-
8 վը հաւատան։ Ինքը այն Լոյսը չէր,
հապա եկաւ որ Լոյսին համար վկայութիւն
տայ։
9 Ճշմարիտ Լոյսը այն էր, որ աշխարհ
10 գալով բոլոր մարդիկը կը լուսաւորէ։ Ին-
քը աշխարհին մէջն էր, և աշխարհս ա-
նով եղաւ, ու աշխարհս անիկայ չճանչ-
11 ցաւ։ Իրեններուն եկաւ, և իրենները
12 զինքը չընդունեցին։ Բայց անոնք որ
զինքը ընդունեցին, անոնց իշխանութիւն



Digitized by Google

տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք
որ կը հաւատան իր անունին․ Որ անոնք 13
ո՛չ արիւնէ և ո՛չ մարմնին կամքէն՝ ո՛չ
ալ մարդու կամքէն, հապա Աստուծմէ
ծնան։ Եւ Բանը մարմին եղաւ, ու մեր 14
մէջը բնակեցաւ, (և անոր փառքը տե-
սանք, Հօրմէն մէկ հատիկի փառքին
պէս,) շնորհքով և ճշմարտութիւնով լե-
ցուն։

Յովհաննէս վկայեց անոր համար, ա- 15
ղաղակեց ու ըսաւ․ Ասիկայ է՝ որուն հա-
մար կը զրուցէի․ Ան որ իմ ետևէս պիտի
գայ՝ ինծմէ առաջ եղաւ․ ինչու որ ինծմէ
առաջ էր։ Եւ անոր լեցունութենէն մենք 16
ամէնքս շնորհք առինք՝ շնորհքի տեղ։
Ինչու որ օրէնքը Մովսէսին ձեռքովը տը- 17
րուեցաւ, բայց շնորհքը ու ճշմարտու-
թիւնը Յիսուս Քրիստոսի ձեռքովը եղան։
Բնաւ մէկը չտեսաւ զԱստուած, բայց 18
միածին Որդին՝ որ Հօրը ծոցն է, անի-
կայ պատմեց։

Ու Յովհաննէսին վկայութիւնը աս է, 19
երբոր Հրեաները Երուսաղեմէն քահա-
նաներ ու Ղևտացիներ խրկեցին իրեն՝ որ
հարցընեն անոր, Թէ դուն ո՞վ ես․ Եւ 20
ան խոստովանեցաւ ու չուրացաւ․ խոս-
տովանեցաւ՝ թէ Ես Քրիստոսը չեմ։
Ու հարցուցին իրեն․ Հապա դուն ո՞վ 21
ես, Եղիա՞ն ես․ և ըսաւ, Չեմ․ Հապա
դուն մարգարէ՞ն ես․ պատասխան տուաւ՝
թէ Չէ՛։ Ուրեմն ըսէ՛ մեզի՝ դուն ո՞վ 22

Digitized by Google

նք , որ պատասխան տանինք անոնց որ
մեզ խրկեցին . դուն ի՞նչ կ'ըսես քեզի
23 համար ։ Ըսաւ . Ես մէկ ձայն մըն եմ՝
որ անապատին մէջ կը կանչէ . Շիտկեցէք
Տէրոջը ճամբան , ինչպէս որ Եսայի մար-
24 գարէն ըսաւ ։ Եւ ան խրկուածները փա-
25 րիսեցիներէն էին ։ Հարցուցին իրեն ու
ըսին . Հապա ինչո՞ւ մկրտութիւն կ'ընես ,
թէ որ դուն Քրիստոսը չես , ու ո՛չ Ե-
26 ղիան , և ո՛չ մարգարէն ։ Պատասխան
տուաւ անոնց Յովհաննէս՝ ու ըսաւ . Ես
ձեզ ջուրով կը մկրտեմ . Բայց ձեր մէջը
27 Մէկը կայ՝ որ դուք ան չէք ճանչնար . Ան
ան իմ ետևէս պիտի գայ , որ ես արժանի
չեմ անոր կօշիկներուն կապերը քակելու ։
28 Աս բանը Բեթաբարայի մէջ եղաւ Յորդա-
նանու մէկալ դին , ուր տեղ որ Յով-
հաննէսը կը կենար՝ և կը մկրտէր ։
29 Հետևեալ օրը Յովհաննէս տեսաւ Յի-
սուսը որ իրեն կու գար , և ըսաւ . Ահա՛
Աստուծոյ Գառը՝ որ աշխարհի մեղքը կը
30 վերցընէ ։ Ասիկայ է՝ որուն համար ես կը
զրուցէի . Իմ ետևէս մարդ մը կու գայ՝ որ
ինքը ինծմէ առաջ եղաւ , ինչու որ անի-
31 կայ ինծմէ առաջ էր ։ Ու ես զինքը չէի
ճանչնար , բայց անոր համար ես եկայ
ջուրով մկրտելու , որ անիկայ Իսրայէլա-
32 ցւոց յայտնի ըլլայ ։ Յովհաննէս վկա-
յութիւն տուաւ և ըսաւ , թէ Ես տեսնէի
Հոգին՝ որ աղաւնիի պէս երկինքէն կ'իջ-
33 նէր , ու անոր վրայ կը հանգչէր ։ Ու ես

Digitized by Google

զինքը չէի ճանչնար, բայց ան որ զիս
խրկեց ջուրով մկրտելու՝ ինքը ըսաւ ինծի.
Որուն վրայ կը տեսնես Հոգին, որ կ'իջնէ
ու կը հանգչի անոր վրայ, անիկայ է՝ որ
Սուրբ Հոգիով կը մկրտէ։ Ես ալ տեսայ, 34
ու վկայեցի թէ Անիկայ է Աստուծոյ Որ-
դին։

Հետեւեալ օրը Յովհաննէս կայներ էր՝ 35
և իր աշակերտներէն երկուքը։ Ու նա- 36
յելով Յիսուսին վրայ՝ որ կը պտըտէր,
ըսաւ. Ահա Քրիստոս՝ Աստուծոյ Գառը։
Լսեցին անկից երկու աշակերտները՝ որ կը 37
խօսէր, ու գացին Յիսուսին ետեւէն։
Յիսուս երբոր դարձաւ՝ և տեսաւ անոնք
որ իր ետեւէն կ'երթային, ըսաւ անոնց. 38
Ի՞նչ կ'ուզէք. անոնք ըսին իրեն. Ռաբ-
բի, (որ թարգմանուելով՝ վարդապետ
ըսել է,) ո՞ւր է քու բնակարանդ։ Ըսաւ 39
անոնց, Եկէք ու տեսէք. եկան ու տե-
սան ուր տեղ որ էր իր բնակարանը. և
ան օրը անոր քովը կեցան, ինչու որ ժա-
մը գրեթէ տասն էր։ Ան երկուքէն մէկը՝ 40
[illegible] Սիմոնին եղբայրը Անդրէասն
էր, որ լսեցին Յովհաննէսէն, և անոր
ետեւէն գացին։ Անիկայ պինտ առաջ 41
իր Սիմոն եղբայրը կը գտնէ՝ և կ'ըսէ ա-
նոր. Գտանք Մեսիան՝ որ Քրիստոս կը
թարգմանուի։ Անիկայ տարաւ զանիկայ 42
Յիսուսին քովը. Յիսուս անոր նայելով՝
ըսաւ. Դուն ես Սիմոնը Յովնանին որ-
դին. դուն Կեփաս պիտի ըսուիս, որ
Պետրոս կը թարգմանուի։

Google

43 Հետեւեալ օրը՝ Յիսուս Գալիլեա եր-
թալ ուզեց, գտաւ Փիլիպպոսը՝ եւ ըսաւ
44 անոր. Եկո՛ւր իմ ետեւէս։ Եւ Փիլիպ-
պոսը Բեթսայիդայի մէջէն էր՝ Անդրէա-
45 սին ու Պետրոսին քաղաքէն։ Փիլիպպոս
Նաթանայէլը կը գտնէ՝ եւ կ'ըսէ իրեն.
Ան՝ որուն համար Մովսէս օրինաց մէջ
գրեց, եւ մարգարէներն ալ, զանիկայ գը-
տանք, այսինքն Յիսուս Նազովրեցին
46 Յովսէփին որդին։ Նաթանայէլ ըսաւ
անոր. Նազարէթէն կարելի՞ է որ աղէկ
բան մը ըլլայ. ըսաւ անոր Փիլիպպոս.
47 Եկո՛ւր ու տե՛ս։ Յիսուս երբոր տեսաւ
Նաթանայէլը՝ որ դէպ՚ի իրեն կու գար,
ըսաւ անոր համար. Ահա՛ իրաւցընէ Իս-
րայէլացի մը, որ իր ներսը խաբեբայու-
48 թիւն չկայ։ Նաթանայէլ ըսաւ իրեն.
Ուսկի՞ց կը ճանչնաս զիս. պատասխան
տուաւ Յիսուս, եւ ըսաւ անոր. Փիլիպ-
պոսը դեռ քեզ չկանչած, դուն որ թզե-
49 նիին տակն էիր՝ ես տեսայ քեզ։ Պա-
տասխան տուաւ իրեն Նաթանայէլ՝ ու
ըսաւ. Ռա՛բբի՝ դուն ես Աստուծոյ Որդին,
50 դուն ես Իսրայէլի Թագաւորը։ Յիսուս
պատասխան տուաւ անոր եւ ըսաւ. Որով-
հետեւ քեզի ըսի, թէ թզենիին տակը
տեսայ՝ կը հաւատաս. ասկէց աւելի մեծ
51 բաներ պիտի տեսնես։ Եւ ըսաւ անոր.
Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. ասկէ
ետեւ պիտի տեսնէք երկինքը բացուած, եւ
Աստուծոյ հրեշտակները՝ որ կ'ելլեն ու կ'իջ-
նեն Որդւոյ մարդոյ վրայ։

Digitized by Google

## ԳԼ. Բ.

Ու երրորդ օրը հարսնիք մը կար Գա- 1
լիլեայի Կանա քաղաքը, ու Յիսուսի մայ-
րը հոն էր ։ Յիսուս ալ կանչուեցաւ ան 2
հարսնիքը՝ ու իր աշակերտներն ալ ։ Ու 3
երբոր գինին պակսեցաւ, մայրը ըսաւ
Յիսուսին. Գինի չունին ։ Յիսուս ալ
ըսաւ անոր. Ո՛վ կին՝ դուն իմ հետս ի՞նչ
բան ունիս. իմ ատենս դեռ հասած չէ՛ ։
Իր մայրը սպասաւորներուն ըսաւ. Ինչ որ 5
ձեզի գրուցէ՝ ըրէք ։ Հոն վեց հատ քա- 6
րէ կարասներ կային Հրէաներուն մաք-
րուելու սովորութեանը համեմատ, որ ա-
նոնց ամէն մէկը երկու կամ իրեք մարքան
կ՚առնէր ։ Յիսուս ըսաւ անոնց. Լեցու- 7
ցէք ատ կարասները ջուրով. ու լեցուցին
անոնք մինչև բերանը ։ Ու ըսաւ անոնց. 8
Հիմա առէք ու տանտէսին բերէք. անոնք
ալ բերին ։ Ու տանտէսը երբոր գինի ե- 9
ղած ջուրին համը առաւ, և չէր գիտեր
ուսկից ըլլալը. (բայց սպասաւորները
գիտէին որ ջուրը լեցուցին.) փեսային
հետը կը խօսի տանտէսը, Ու կ՚ըսէ. Ամէն 10
մարդ աղէկ գինին առաջ կը բաժնէ. ու
երբոր խմած կ՚ըլլան, ան ատենը գէշը.
դուն աղէկ գինիդ մինչև հիմա պահեցիր ։
Յիսուս հրաշքներուն սկիզբը աս ըրաւ 11
Գալիլեայի Կանա քաղաքին մէջ, և իր
փառքը յայտնեց. ու իր աշակերտները
հաւատացին իրեն ։

Digitized by Google

12 Անկէ ետև Յիսուս Կափառնայում ի-
ջաւ, ինքը՝ և իր մայրը՝ ու իր եղբայր-
ները. և շատ օրեր հոն չկեցան։
13 Ու Հրէից զատիկը մօտ էր, և Յիսուս
14 Երուսաղէմ ելաւ. Ու գտաւ որ տաճա-
րին մէջը արջառներ ու ոչխարներ և ա-
ղաւնիներ կը ծախէին. ու սատակ փոխող-
15 ներն ալ՝ որ նստեր էին. Եւ չուանէ
խարազան մը շինեց, ու ամէնը տաճարէն
դուրս հանեց, ոչխարները ու արջառները.
և սատակ փոխողներուն պղինձները ցիրու-
ցան ըրաւ, ու սեղանները կործանեց։
16 Եւ անոնք որ աղաւնի կը ծախէին՝ ըսաւ
անոնց. Ասկից վերցուցէք ասոնք, ու իմ
Հօրս տունը առուտուրի տուն մի՛ ընէք։
17 Եւ անոր իր աշակերտները միտքերնին բե-
րին որ գրուած է. Քու տանդ նախան-
ձը զիս պիտի ուտէ։
18 Պատասխան տուին Հրէաները և ըսին
իրեն. Ի՞նչ նշան կը ցուցընես դուն մեզի՝
19 որ ասոնք կ'ընես։ Պատասխան տուաւ Յի-
սուս՝ ու ըսաւ անոնց. Քակեցէք աս
տաճարը, ու իրեք օրուան մէջ ատիկայ կը
20 կանգնեմ։ Հրէաները ըսին իրեն. Քառա-
սունըվեց տարին շինուեցաւ աս տաճարը,
և դուն իրեք օրուան մէջ պիտի կանգնե՞ս
21 ատիկայ։ Բայց ինքը իր մարմնոյն տա-
22 ճարին համար կ'ըսէր։ Եւ երբ ինքը մե-
ռելներէն յարութիւն առաւ, իր աշա-
կերտները միտքերնին բերին, թէ ասիկայ
է եղեր որ ինքը ըսաւ. ու հաւատացին
գիրքին՝ և Յիսուսի ըսած խօսքին։

Digitized by Google

Եւ երբոր զատկի տօնին ատենը Երու- 23
սաղէմ էր, շատերը հաւատացին անոր
անունին. ինչու որ անոր ըրած հրաշքները
կը տեսնէին։ Բայց ինքը Յիսուս իր ան- 24
ձը անոնց չէր հաւատար, ինչու որ ինքը
գիտէր ամէն մարդ. Եւ պէտք չէր որ մէ- 25
կը մարդու համար վկայութիւն տայ.
ինչու որ ինքը գիտէր թէ ինչ կայ մար-
դուն ներսի դին։

## ԳԼ. Գ

Եւ փարիսեցիներուն մէջ մէկ մարդ մը 1
կար՝ Նիկոդեմոս անունով, որ հրէից
իշխան էր։ Ասիկայ գիշերով անոր քովը 2
եկաւ, և ըսաւ անոր. Ռաբբի՝ գիտենք
որ դուն Աստուծմէ վարդապետ եկած ես.
ինչու որ մէկը չկրնար ընել աս հրաշքնե-
րը՝ որ դուն կ'ընես, թէ որ Աստուած իր
հետը չըլլայ։ Պատասխան տուաւ Յիսուս՝ 3
և ըսաւ անոր. Ճշմարիտ ճշմարիտ կ'ը-
սեմ քեզի, Թէ որ մէկ մարդ մը նորէն
չծնի՝ չկրնար Աստուծոյ թագաւորութիւ-
նը տեսնել։ Նիկոդեմոս ըսաւ իրեն. 4
Ինտո՞ր կրնայ մէկ մարդ մը ծնանիլ, ան
որ ծեր է. Կարաւո՞ր բան է որ մէյմըն
ալ նորէն իր մօրը որովայնը մտնէ ու ծնի։
Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ. 5
Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Թէ որ
մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չծնանի,
չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտ-
նել։ Ինչու որ մարմինէն ծնածը մարմին 6

Digitized by Google

7 է, ու Հոգիէն ծնածը՝ հոգի է։ Դուն մի՛
զարմանար որ քեզի ըսի, Պէտք է ձեզի
8 նորէն ծնանիլ. Ինչու որ հովը ուր որ
ուզէ՝ կը փչէ, և անոր ձայնը կը լսես,
բայց չես գիտեր ուսկի՛ց կու գայ՝ կամ ո՛ւր
կ՚երթայ. ասանկ ալ ան ամէնը՝ որ Հո-
9 գիէն կը ծնի։ Պատասխան տուաւ Նիկո-
դեմոս և ըսաւ իրեն. Ասո՞նք ինչպէս կըր-
10 նան ըլլալ։ Պատասխան տուաւ Յիսուս
ու ըսաւ անոր. Դուն Իսրայէլացւոց
վարդապետ մըն ես, և ասոնք չե՞ս գի-
11 տեր։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, թէ ինչ
որ գիտենք՝ կը խօսինք, և ինչ որ տե-
սանք՝ կը վկայենք, ու մեր վկայութիւնը
12 չէք ընդունիր։ Աստի թէ որ երկրաւոր
բաները ձեզի պատմեցի՝ ու չէք հաւատար,
ի՞նչպէս պիտի հաւատաք՝ թէ որ երկնաւոր
13 բաները պատմեմ։ Ու մէկը երկինքը չե-
լաւ, բայց անիկայ միայն՝ որ երկինքէն
իջաւ Որդին մարդոյ, ան որ երկինքն է։
14 Ու ինչպէս որ Մովսէս անապատին մէջ
օձը բարձրացուց, անանկ ալ պէտք է որ
15 Որդին մարդոյ բարձրանայ։ Որ ամէն ով
որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յա-
16 ւիտենական կեանքը ընդունի։ Ինչու որ
Աստուած անանկ սիրեց աշխարհը, մինչև
որ իր միածին Որդին տուաւ. որ ամէն
ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա
17 յաւիտենական կեանքը ընդունի։ Վասն
զի Աստուած իր Որդին չղրկեց աշխարհ,
որ աշխարհը դատէ, հապա՝ որ աշխարհս


Digitized by Google

անով փրկուի ։ Ան որ կը հաւատայ անոր՝ 18
չդատապարտուիր ․ և ան որ չհաւատար
անոր , անիկայ արդէն դատապարտուած
է ․ ինչու որ Աստուծոյ մէկ հատիկ ծնած
Որդւոյն անունին չհաւատաց ։ Աս ալ է 19
դատապարտութիւնը՝ որ լոյսը աշխարհ ե-
կաւ , ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի
սիրեցին ․ ինչու որ իրենց գործքերը չար
էին ․ Վասն զի ամէն ով որ չար կը գործէ՝ 20
անիկայ լոյսը կ'ատէ , և լոյսին քովը չգար՝
որ իր գործքերը չյանդիմանուին ։ Բայց 21
ան որ ճշմարտութիւն կը գործէ՝ լոյսին
քովը կու գայ , որ իր գործքերը յայտնի
ըլլան թէ Աստուծով գործուեցան ։
Աս բաներէն ետքը եկաւ Յիսուս և իր 22
աշակերտները Հրէաստանի երկիրը , և
հոն կը պտըտէր անոնց հետ մէկտեղ ու
մկրտութիւն կ'ընէր ։ Յովհաննէսն ալ 23
Աենոնի մէջ Սաղիմի մօտ կը մկրտէր ․ ու-
րովհետև հոն շատ ջուր կար , ու կու
գային և կը մկրտուէին ։ Ինչու որ Յով- 24
հաննէս տակաւին բանտը դրուած չէր ։
Ու վիճաբանութիւն մը եղաւ Յովհան- 25
նէսին աշակերտներէն Հրէաներուն հետ
մաքրութեան վրայ ։ Եկան Յովհաննէսին՝ 26
և անոր ըսին ․ Ռաբբի՝ անիկայ որ քեզի
հետ Յորդանանին մէկդի կողմն էր , որուն
համար դուն վկայութիւն տուիր , ահա՛
ինքը կը մկրտէ ․ և ամէնը անոր կու գան ։
Պատասխան տուաւ Յովհաննէս՝ և ըսաւ ․ 27
Մարդ ինքիրմէն բան մըն ալ չկրնար ընել ,

Digitized by Google

թէ որ վերէն երկինքէն տրուած չըլլայ
28 անոր ։ Դուք ձեզմէն կը վկայէք ինծի ,
որ ձեզի ըսի , թէ Ես Քրիստոսը չեմ ,
29 հապա անոր առջեւէն խրկուած եմ ։ Ան
որ հարսը ունի՝ փեսան անիկայ է ․ բայց
փեսային բարեկամը՝ որ կը կենայ ու կը
լսէ անոր , մեծապէս կ'ուրախանայ փեսա-
յին ձայնին համար ․ ուստի աս իմ ու-
30 րախութիւնս լցուած է ։ Ան անիկայ պէտք
31 է որ մեծնայ , բայց ես պզտիկնամ ։ Ան
որ վերէն կու գայ՝ ամենէն վեր է ․ ան որ
աս երկրէս է՝ երկրաւոր է , ու երկրէն
32 կը խօսի ։ Ան որ երկինքէն կու գայ ,
ինչ որ տեսաւ և ինչ որ լսեց՝ կը վկայէ ,
ու անոր վկայութիւնը մէկը չընդունիր ։
33 Ան որ անոր վկայութիւնը կ'ընդունի ,
34 կնքեց՝ թէ Աստուած ճշմարիտ է ։ Վասն
զի ան որ Աստուած խրկեց՝ Աստուծոյ խօս-
քերը կը խօսի ․ ինչու որ Աստուած անոր
35 չափով չտար Հոգին ։ Հայրը Որդին կը
սիրէ , և ամէն բան անոր ձեռքը տուաւ ։
36 Ան որ Որդիին կը հաւատայ , յաւիտենա-
կան կեանքը կ'ընդունի ․ և ան որ Որդիին
չհնազանդիր , անիկայ կեանք չտեսներ ․
հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ
կը մնայ ։

## ԳԼ. Դ.

1 Երբոր Յիսուս իմացաւ որ փարիսեցի-
ները լսեցին՝ թէ Յիսուս Յովհաննէսէն
աւելի աշակերտներ կ'ընէ և կը մկրտէ ․

Digitized by Google

( Թէպէտ չէ՛ թէ Յիսուս ինքը կը մկրը- 2
տէր, հապա իր աշակերտները .) Թողուց 3
Հրէաստան երկիրը, ու նորէն Գալիլեա
եկաւ : Ու ինքը Սամարիայի մէջէն պիտի 4
անցնէր : Եկաւ Սամարացւոց մէկ քա- 5
ղաքը՝ որուն անունը Սուքար էր, այն
գեղին մօտ՝ որն որ Յակոբ իր տղին
Յովսեփին տուաւ : Ու հոն Յակոբին մէկ 6
աղբիւրը կար . Յիսուս ալ ճամբայէն
յոգնած ըլլալով՝ այն աղբիւրին վրայ նըս-
տաւ . ժամն ալ վեցին ատենները էր :

Սամարիայէն կնիկ մը եկաւ ջուր հա- 7
նելու . Յիսուս ըսաւ անոր . Ինծի ջո՛ւր
տուր խմելու . (Ինչու որ իր աշակերտ- 8
ները քաղաքը գացեր էին, որ ուտելիք
առնեն :) Սամարացի կնիկը ըսաւ իրեն . 9
Դուն որ Հրէայ ես՝ ի՞նչպէս կ'ուզես ջո՛ւր
խմել ինծմէ՝ մէկ Սամարացի կնիկէ մը .
(վասն զի Հրէաները՝ բնաւ Սամարացի-
ներուն հետ չեն խառնուիր :) Յիսուս 10
պատասխան տուաւ անոր ու ըսաւ . Թէ
որ դուն գիտնայիր Աստուծոյ պարգևը,
և ո՛վ է այն որ քեզի կ'ըսէ, Թէ Ինծի
ջո՛ւր տուր խմելու, դուն անկից կ'ուզէիր,
և ինքը քեզի կենդանի ջուր կու տար :
Կնիկը ըսաւ իրեն . Տէ՛ր՝ դուն ջրհան ալ 11
չունիս, ու աս հորը խորունկ է, ուրեմն
ուսկի՞ց պիտի ունենաս այն կենդանի ջու-
րը : Միթէ դուն մեր Յակոբ հօրմէն 12
աւելի մե՞ծ մըն ես, որ աս հորը մեզի
տուաւ, և ինքը ասկից խմեց՝ ու իր զա-

Digitized by Google

13 ւանները , և իր անասունները : Պատաս-
խան տուաւ անոր Յիսուս և ըսաւ · Ամէն
մէկ որ աս ջուրէն խմէ՝ նորէն կը ծարաւի ·
բայց ո՛վ որ խմէ այն ջուրէն՝ որ ես անոր
14 կու տամ , յաւիտեան չծարաւիր · Հա-
պա այն ջուրը՝ որ ես անոր պիտի տամ ,
պիտի ըլլայ իրեն ջրի աղբիւր մը՝ որ
յաւիտենական կենաց մէջը կը բղխէ :
15 Կնիկը ըսաւ անոր · Տէր՝ տո՛ւր ինծի այն
ջուրը , որ չծարաւիմ՝ և հոս չգամ ջուր
հանելու : Յիսուս ըսաւ անոր · Գնա՛
16 քու էրիկդ կանչէ՛ , և հա՛ս եկուր : Կնիկը
17 պատասխան տուաւ իրեն ու ըսաւ · Ես
էրիկ չունիմ · Յիսուս ըսաւ անոր · Աղէկ
18 ըսիր , թէ էրիկ չունիմ : Ինչու որ դուն
հինգ էրիկ փոխեր ես , և այն որ հիմա ու-
նիս , քու էրիկդ չէ · ասիկայ շիտակ
19 զրուցեցիր : Ըսաւ կնիկը իրեն · Տէր՝ ին-
ծի կ'երևնայ որ դուն մարգարէ մըն ես :
20 Մեր հայրերը աս լեռանս վրայ երկրպա-
գութիւն ըրին · և դուք կ'ըսէք , թէ
Միայն Երուսաղէմն է տեղը , ուր պէտք է
21 երկրպագութիւն ընել : Յիսուս ըսաւ ա-
նոր · Կնի՛կ՝ հաւատա ինծի՝ որ ժամանակ
պիտի գայ , որ այն ատենը ո՛չ աս լեռանը
վրայ՝ ու ո՛չ Երուսաղէմ երկրպագութիւն
22 պիտի ընեն Հօր : Դուք անոր երկրպա-
գութիւն կ'ընէք , որ անիկայ չէք ճանչ-
նար · մենք անոր երկրպագութիւն կ'ը-
նենք՝ որ այն կը ճանչնանք · ինչու որ փըր-
23 կութիւնը Հրէաներէն է : Միայն թէ

Digitized by Google

ատեն պիտի գայ, ու հիմա ալ է, որ
ճշմարիտ երկրպագողները երկրպագու-
թիւն պիտի ընեն Հօրը՝ հոգիով ու
ճշմարտութիւնով. ինչու որ Հայրը իրեն
անանկ երկրպագողներ կ'ուզէ։ Աստուած 24
Հոգի է. և իրեն երկրպագողներուն ալ
պէտք է որ հոգիով ու ճշմարտութիւնով
երկրպագութիւն ընեն։ Կինը ըսաւ իրեն. 25
Գիտեմ որ Մեսիան պիտի գայ՝ (Քրիս-
տոս ըսուածը,) երբոր գայ՝ ինքը պիտի
սորվեցնէ մեզի բոլոր բաները. Յիսուս ը- 26
սաւ անոր. Ես եմ՝ որ քեզի հետ կը
խօսիմ։ Եւ աս խօսքին վրայ իր աշա- 27
կերտները եկան, ու զարմացան որ ան
կնկան հետ կը խօսէր. բայց անոնցմէ
մէկը չըսաւ՝ թէ ի՞նչ կ'ուզես, կամ ի՞նչ
կը խօսիս անոր հետը։ Կինը ձգեց իր 28
սափորը, ու քաղաքը գնաց՝ և ըսաւ մար-
դիկներուն. Եկէք տեսէք մէկ մարդ մը՝ 29
որ ըսաւ ինծի՝ ամէն ինչ որ գործեր եմ.
արդեօք անիկա՞յ է Քրիստոսը։ Քաղա- 30
քէն ելան՝ և իրեն կու գային։
Ու դեռ անոնք չեկած՝ աշակերտները 31
իրեն կ'աղաչէին և կ'ըսէին. Ռաբբի՝ հաց
կեր։ Անիկայ ըսաւ անոնց. Ես կերա- 32
կուր ունիմ ուտելու՝ որ դուք չէք գիտեր։
Աշակերտները կ'ըսէին իրարու. Արդեօք 33
մէկը անոր ուտելու բան մը բերա՞ւ։ Յի- 34
սուս անոնց ըսաւ. Իմ կերակուրս ան է՝
որ ես զիս ղրկողին կամքը ընեմ, և անոր
գործքը կատարեմ։ Չէ՞ որ դուք կ'ըսէք. 35

Digitized by Google

Թէ Տակաւին չորս ամիս կայ՝ որ հունձքին
ատենը գայ. ահա՛ ես ձեզի կ՚ըսեմ, Աչ-
քերնիդ վերցուցէք ու արտերը նայեցէք,
որ ճերմըկցեր են՝ և հնձելու համար են։
36 Ու ան որ կը հնձէ՝ վարձք կ՚առնէ, ու
յաւիտենական կեանքին համար պտուղ
կը ժողվէ, որ ցանողը ու հնձողը մէկտեղ
37 ուրախանան։ Ասով ան խօսքը ճշմարիտ
է, Թէ Ուրիշը կը ցանէ, և ուրիշը կը
38 հնձէ։ Ես ձեզ խրկեցի հնձելու ան որ դուք
չաշխատեցաք. ուրիշները աշխատեցան,
և դուք անոնց աշխատանքին մէջ մտաք։
39 Ու Սամարացւոց ան քաղաքէն շատե-
րը իրեն հաւատացին ան կնկանը խօսքին
համար որ վկայեց՝ Թէ ինչ որ ես գործեր
40 էի, բոլորը ինծի ըսաւ։ Ու երբոր Սա-
մարացիները իրեն եկան, կ՚աղաչէին անոր
որ իրենց քովը մնայ, ու երկու օր հոն
41 կեցաւ։ Ու աւ շատերը իրեն հաւատա-
ցին՝ իր խօսքին համար։ Ու կ՚ըսէին
42 կնկանը. Ասկէ ետև չէ՛ թէ քու խօսքիդ
համար կը հաւատանք. ինչու որ մենք
մեզմէն լսեցինք անկից, և գիտենք որ ա-
նիկայ է ճշմարտապէս աշխարհի Փրկիչը։
43 Ու երկու օրէն ետքը ելաւ անկից, և
44 Գալիլեա գնաց։ Ինչու որ Յիսուս ինքը
վկայեց, Թէ Մարգարէն իր գաւառին մէ-
45 ջը պատիւ չունի։ Բայց երբոր ինքը
Գալիլեա եկաւ՝ Գալիլեացիները անիկայ
ընդունեցին. ինչու որ տեսած էին ան
բոլոր նշանները՝ որ ինքը ըրաւ Երուսա-

Digitized by Google

ըրածը մէջ տօնին ատենը · վասն զի իրենք
ալ այն տօնին եկեր էին ։

Նորէն եկաւ Գալիլեացւոց Կանայ քա- 46
ղաքը՝ ուր որ ջուրը գինի ըրեր էր · և հոն
թագաւորի ցեղէ մէկը կար , որ իր որդին
հիւանդ էր Կափառնայումի մէջ ։ Երբոր 47
անիկայ լսեց՝ թէ Յիսուս Հրէաստանէն
Գալիլեա եկեր է , եկաւ անոր՝ ու կ'աղա-
չէր , որ իջնէ և իր որդին բժշկէ · քանզի
որ մեռնելու մօտ էր ։ Յիսուս ըսաւ ա- 48
նոր · Թէ որ նշաններ ու հրաշքներ չտես-
նէք՝ չէք հաւատար ։ Թագաւորի ցեղէ 49
մարդը ըսաւ իրեն · Տէր՝ իջի՛ր քանի որ
իմ տղաս մեռած չէ ։ Յիսուս ըսաւ անոր · 50
Գնա՛ , քու որդիդ ողջ է · մարդն ալ հա-
ւատաց այն խօսքին որ Յիսուս իրեն ը-
սաւ , ու գնաց ։ Եւ երբոր կ'իջնէր , ա- 51
նոր դիմացը ելան իր ծառաները · աւե-
տիս տուին ու ըսին , թէ քու տղան ողջ է ։
Ան հարցուց անոնց անոր բժշկուած ժա- 52
մը · և ըսին իրեն · Երէկ ժամը եօթնին
տենդը թող տուաւ անիկայ ։ Գիտցաւ 53
անոր հայրը՝ թէ այն ժամն էր , որ Յիսուս
իրեն ըսաւ , թէ Քու տղադ ողջ է · ու
հաւատաց ինքը և իր բոլոր տունն ալ ։
Աս նորէն երկրորդ հրաշքն է որ Յիսուս 54
ըրաւ , երբոր Հրէաստանէն Գալիլեա ե-
կաւ ։

## ԳԼ. Ե

Ասկէ ետև Հրէաներուն տօն էր · և 1
Յիսուս Երուսաղէմ ելաւ ։ Ու Երուսա- 2

Digitized by Google

Երուսաղէմի մէջ ոչխարներուն աւազանը՝ որ
Եբրայեցերէն Բեթհեզդա կ՚ըսուէր, հինգ
3 սրահ կար, Անոնց մէջ խիստ շատ հիւանդ-
ներ դրուած կային, կոյրեր՝ կաղեր՝ չոր-
ցածներ, որոնք կը սպասէին ջուրին խառ-
4 նուելուն։ Վասն զի Տէրոջը հրեշտակը
ժամանակին աւազանը կ՚իջնէր, ու ջուրե-
րը կը խառնէր. և ով որ ամենէն առաջ ան
ջուրին խառնուելուն ատեն մէջը կ՚իջնէր,
կը բժշկուէր՝ հիւանդութեան նշան մը
5 չմնալով։ Իսկ հոն մէկ մարդ մը կար, որ
երեսունըութը տարիէ 'ի վեր իր հիւան-
6 դութեան մէջն էր։ Յիսուս երբոր տե-
սաւ անիկայ՝ որ ինկած դրուած էր,
ու գիտցաւ որ շատ ժամանակէ 'ի վեր է,
7 ըսաւ անոր. Կ՚ուզե՞ս ողջ ըլլալ։ Հիւան-
դը պատասխան տուաւ իրեն. Տէ՛ր, մէկը
չունիմ, որ երբ ջուրերը խառնուին՝ զիս
աւազանը ձգէ. հապա քանի որ ես ծանր
կը շարժիմ, ինծմէ առաջ ուրիշ մը կ՚իջնէ։
8 Կ՚ըսէ անոր Յիսուս. Ելի՛ր քու մահիճդ
9 առ ու գնա՛։ Եւ ողջացաւ մարդը, ու
ելաւ՝ առաւ իր մահիճը և կը պտըտէր.
10 ու այն օրն ալ շաբաթ էր։ Հրեաները
ան բժշկուածին ըսին. Շաբաթ է, և
11 քեզի չվայլեր որ մահիճդ վերցընես։ Պա-
տասխան տուաւ անոնց ու ըսաւ. Ան որ
զիս բժշկեց՝ ինքը ինծի ըսաւ, Ա՛ռ մա-
12 հիճդ ու գնա՛։ Հարցուցին անոր և ը-
սին. Ո՞վ է ան մարդը որ քեզի ըսաւ,
13 Մահիճդ առ ու պտըտէ՛։ Իսկ բժշկուա-

Digitized by Google

ղը չէր գիտեր թէ ով է ան . քանզի որ Յիսուս ան տեղէն մէկդի քաշուեցաւ բազմութեանը համար ։ Անկից ետքը Յիսուս 14
անիկայ տաճարին մէջը կը գտնէ ու կ'ըսէ անոր . Ահա՛ բժշկուեցար , ալ մեղք մի՛ գործեր՝ որ ալ աւելի չար բան մը չպատահի քեզի ։ Գնաց մարդը , ու Հրէա- 15
ներուն պատմեց , թէ Յիսուսն էր որ զիս բժշկեց ։

Ասոր համար Հրէաները կը հալա- 16
ծէին Յիսուսը , որ ան բանը շաբաթ օրը կ'ընէր ։ Իսկ Յիսուս պատասխան տուաւ 17
անոնց . Իմ Հայրս մինչեւ հիմա կը գործէ , ես ալ կը գործեմ ։ Ասոր համար՝ ալ աւե- 18
լի կ'ուզէին Հրէաները որ անիկայ սպաննեն . ինչու որ չէ՛ թէ միայն շաբաթ օրերը չէր պահեր , հապա նաեւ Աստուած իր Հայրը կ'անուանէր՝ ու ինքզինքը Աստուծոյ հաւասար կ'ընէր ։ Պատասխան 19
տուաւ Յիսուս եւ ըսաւ անոնց . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Որդին մարդայ ինքնիրմէն բան մըն ալ չկրնար ընել , միայն թէ ինչ որ տեսնէ՝ որ Հայրը կ'ընէ . վասն զի ինչ որ անիկայ կ'ընէ՝ նոյն բանը Որդին ալ կ'ընէ անոր նման ։ Ինչու 20
որ Հայրը կը սիրէ Որդին . եւ ամէն բանը կը ցուցընէ անոր՝ ինչ որ ինքը կ'ընէ . եւ ասոնցմէ ալ աւելի մեծ գործքեր պիտի ցուցընէ անոր , որ անոր վրայ դուք զարմանաք ։ Վասն զի ինչպէս որ Հայրը 21
մեռելները կը յարուցանէ՝ ու կենդանի-

Digitized by Google

կ'ընէ, մանաւանդ ալ Որդին՝ որոնք որ կ'ու-
22 զէ կը կենդանացընէ։ Չէ՝ Հայրը մէկը
չդատեր, հապա ամէն դատաստանը իր
23 Որդիին տուաւ. Որ ամէնք պատուեն
Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն.
ան որ Որդին չպատուեր, զանիկայ ղրկող
24 Հայրը չպատուեր։ Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի, թէ Ան որ իմ խօսքս մտիկ
կ'ընէ, և կը հաւատայ անոր՝ որ զիս ղրկեց,
յաւիտենական կեանք կ'ընդունի, ու դա-
տապարտութեան տակ չիյնար, հապա
25 մահէն դէպ'ի կեանքը անցաւ։ Ճշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ժամանակ պի-
տի գայ՝ և ալ հիմա է, որ անատենը մե-
ռելները պիտի լսեն Աստուծոյ Որդիին
ձայնը. և անոնք որ կը լսեն՝ պիտի ապրին։
26 Վասն զի ինչպէս որ Հայրը իր անձին մէ-
ջը կեանք ունի, անանկ ալ Որդիին
տուաւ որ իր անձին մէջը կեանք ունենայ.
27 Նաև իշխանութիւն տուաւ անոր դատաս-
տան ընելու, որովհետև ինքը Որդի մար-
28 դոյ է։ Ասոր վրայ ի՞նչ կը զարմանաք.
ինչու որ ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր
գերեզմանի մէջ եղողները անոր ձայնը
29 պիտի լսեն, Ու դուրս պիտի գան. անոնք
որ բարեգործութիւն ըրեր են՝ կենաց յա-
րութեան համար, և անոնք որ չարագոր-
ծութիւն ըրեր են՝ դատապարտութեան
30 յարութեան համար։ Ես ինքնիրմէս բան
մը չեմ կրնար ընել, հապա ինչոր կը լսեմ,
անանկ կը դատեմ, և իմ դատաստանս ճշ-

Digitized by Google

տալ է . ինչու որ ես իմ կամքս չեմ
փնտռեր , հապա անոր կամքը՝ որ զիս
ղրկեց ։ Թէեւ որ ես ինծի համար վկայեմ՝ 31
իմ վկայութիւնս ճշմարիտ չէ ։ Ուրիշ 32
մըն է որ ինծի համար կը վկայէ , և դուք
գիտէք որ ճշմարիտ է անոր վկայութիւնը՝
որ ինքը ինծի համար վկայեց ։ Դուք 33
Յովհաննէսին ղրկեցիք , և ինքը ճշմար-
տութեանը վկայեց ։ Բայց ես չէ՛ թէ 34
մարդուցմէ վկայութիւն կ՚առնեմ . հապա
աս կ՚ըսեմ որ դուք փրկուիք ։ Անիկայ 35
ճրագ մըն էր՝ որ կը վառուէր ու լոյս կու-
տար . և դուք քիչ մը ատեն ուզեցիք ա-
նոր լուսովը ուրախանալ ։ Բայց ես Յով- 36
հաննէսին վկայութենէն աւելի մեծ վկայու-
թիւն ունիմ , ան գործքերը որ Հայրը
ինծի տուաւ՝ որ անոնք կատարեմ , ան
նոյն գործքերը որ կը գործեմ՝ ինծի հա-
մար կը վկայեն թէ Հայրը զիս ղրկեց ։
Ու Հայրը որ զիս ղրկեց , ինքը վկայեց ին- 37
ծի համար . դուք ոչ անոր ձայնը բնաւ
լսեցիք , և ոչ անոր կերպարանքը տեսաք .
Ո՛չ ալ անոր խօսքը ձեր մէջը բնակած ու- 38
նիք . ինչու որ՝ ան որ ինքը ղրկեց դուք
անոր չէք հաւատար ։ Գիրքերը քննեցէք , 39
ինչու որ դուք անոնցմով կը սեպէք յա-
ւիտենական կեանքը ունենալ . և բուն
անոնք են որ ինծի համար կը վկայեն ,
որոնցմով կը սեպէք կեանք ունենալ . Եւ 40
դուք չէք ուզեր ինծի գալ , որ կեանքը
ունենաք ։ Ես մարդոցմէ փառք չեմ 41

Digitized by Google

42 առներ։ Բայց գիտեմ ձեզ որ Աստուծոյ
43 սէրը մէջերնիդ չունիք։ Ես իմ Հօրս ա-
նունովը եկայ, ու զիս չէք ընդունիր. թէ
որ ուրիշ մէկը իր անունովը գայ՝ անիկայ
44 կ'ընդունիք։ Դուք ինտո՞ր կրնաք հա-
ւատալ, որ իրարմէ փառք կ'առնէք, և
այն փառքը որ մէկ Աստուծմէն է, չէք
45 փնտռեր։ Մի՛ կարծէք թէ ես ձեզի հա-
մար Հօրը քով ամբաստանութիւն պիտի
ընեմ. կայ մէկը որ ձեզի համար ամբաս-
տանութիւն կ'ընէ, Մովսէսը՝ որուն դուք
46 յուսացեր էք։ Վասն զի թէ որ դուք
Մովսէսին հաւատայիք, ինծի ալ կը հա-
ւատայիք. ինչու որ անիկայ ինծի համար
47 գրեց։ Բայց թէ որ անոր գրածներուն
չէք հաւատար, իմ խօսքերուս ինտո՞ր
պիտի հաւատաք։

## ԳԼ. Զ.

1 Ասոնքէն ետքը Յիսուս Գալիլեա-
ցւոց Տիբերիայի ծովուն միւս կողմը գը-
2 նաց. Ու անոր ետևէն շատ ժողովուրդ
կ'երթար. ինչու որ կը տեսնէին անոր հրաշք-
ները՝ որ հիւանդներուն վրայ կ'ընէր։
3 Յիսուս լեռ մը ելաւ, և հոն նստաւ ա-
4 շակերտներուն հետ մէկտեղ։ Ու Հրէա-
ներուն զատկի տօնը մօտ էր։
5 Յիսուս երբոր իր աչքը վեր վերցուց,
ու տեսաւ որ շատ ժողովուրդ կու գար ի-
րեն, ըսաւ Փիլիպպոսին. Ուսկի՞ց հաց ծա-
6 խու առնենք որ ասոնք ուտեն։ Աս կ'ըսէր

Digitized by Google

զանիկայ փորձելու համար . բայց ինք
գիտէր ինչ պիտի ընէր ։ Փիլիպպոս պա- 7
տասխան տուաւ անոր . Երկու հարիւր
դահեկանի հաց առնենք հերիք չէ , թէև
ամէն մէկը քիչ մը առնէ ։ Իր աշակերտ- 8
ներէն մէկը՝ Սիմոն Պետրոսին եղ-
բայրը Անդրէաս՝ ըսաւ իրեն . Հոս մէկ 9
պատանի մը կայ , որ հինգ հատ գարիէ
հաց ու երկու ձուկ ունի . բայց անիկայ
ի՞նչ պիտի ըլլայ այդչափ մարդոցը ։ Յի- 10
սուս ըսաւ . Նստեցուցէք այս մարդիկը . և
այն տեղը շատ խոտ կար . ու մարդիկը
նստան համրանքով հինգ հազարի չափ ։
Իսկ Յիսուս հացը առաւ ու գոհացաւ , և 11
ան նստողներուն բաժնեց . անանկ ալ
ձուկերէն՝ որչափ որ ուզեցին ։ Ու երբոր 12
կշտացան , ըսաւ աշակերտներուն . Ժող-
վեցէք այն մնացած կտորուանքները՝ որ
բան մը չկորսուի ։ Ժողվեցին , ու տաս- 13
ներկու սակառ լեցուցին այն հինգ գարիէ
հացէն մնացած կտորուանքը , որ ուտող-
ներէն աւելցաւ ։ Իսկ մարդիկը երբոր 14
այն ըրած հրաշքը տեսան՝ կ՚ըսէին , Թէ
Ասիկայ է ճշմարտապէս այն մարգարէն՝ որ
աշխարհ պիտի գար ։ Յիսուս երբոր իմա- 15
ցաւ որ պիտի գան զինքը յափշտակեն՝ որ
զինքը թագաւոր ընեն , նորէն մինակ լեռը
գնաց ։ Ու երբոր իրիկուն եղաւ , իր ա- 16
շակերտները ծովեզերքը իջան ։ Ու նաւը 17
մտնելով՝ ծովին մէկալ կողմը Կափառնա-
ցում կ՚երթային . և երբոր մութը կոխեց ,

Digitized by Google

18 ու Քրիստոս դեռ իրենց չէր եկած, Յուդէա-
ալ Հռոմին սաստիկ փչելէն տակնուվրայ
19 կ՚ըլլար ։ Ու քսանուհինգ կամ երսուն
տապարէզի չափ առաջ որ գացին, տեսան
որ Քրիստոս ծովին վրայէն կու գար՝ և
նաւերն մօտիկցեր էր, սաստիկ վախցան ։
20 Բայց ինքը ըսաւ անոնց. Ես եմ՝ մի՛
21 վախնաք ։ Ու կ՚ուզէին անիկայ նաւը
առնել. ու շուտով մը նաւը ան երկիրը
հասաւ՝ ուր որ կ՚երթային ։
22 Հետևեալ օրը՝ ժողովուրդը որ ծովին
մէկալ դին էր, տեսաւ որ ուրիշ նաւ չկար
հոն ան մէկէն ՚ի զատ՝ որուն մէջը Քրիստո-
սի աշակերտները մտան. և որ Քրիստոս ա-
շակերտներուն հետ նաւը մտած չէր, հա-
պա մինակ իր աշակերտները գացին,
23 (Բայց Տիբերիայէն ուրիշ նաւեր եկան
24 ան տեղին մօտ՝ ուր որ հացը կերան.) Ըն
տանը ժողովուրդը տեսնելով թէ ոչ
Քրիստոսը հոն է և ոչ իր աշակերտները,
անոնք ալ նաւերը առին՝ ու եկան Կա-
25 փառնայում Քրիստոսը փնտռելու ։ Ու
երբոր անիկայ ծովին մէկալ դին գտան՝
ըսին իրեն. Ռա՛բբի՝ ե՞րբ եկար դուն հոս ։
26 Քրիստոս պատասխան տուաւ անոնց և ը-
սաւ. Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի.
Դուք զիս կը փնտռէք չէ՛ թէ անոր հա-
մար որ նշաններ տեսաք, հապա անոր
համար որ ան հացէն կերաք ու կշտացաք ։
27 Գացէք գործեցէք չէ՛ թէ կորստական կե-
րակուրին համար, հապա ան կերակուրին

Digitized by Google

համար՝ որ յաւիտենական կեանքին մէջ կը մնայ, որ անիկայ Որդին մարդոյ ձեզի պիտի տայ. ինչու որ Հայր Աստուած զանիկայ կնքեց: Ըսին իրեն. Ի՞նչ ընենք՝ 28
որ Աստուծոյ գործքերը գործենք: Պա- 29
տասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց. Աս է Աստուծոյ գործը, որ անոր խրկա-
ծին հաւատաք: Ըսին իրեն. Ի՞նչ նշան 30
կ՚ընես՝ որ տեսնենք ու հաւատանք, ի՞նչ
կը գործես: Մեր հայրերը անապատին 31
մէջը մանանան կերան. ինչպէս որ գրուած է. Երկինքէն հաց տուաւ անոնց որ ու-
տեն: Յիսուս ըսաւ անոնց. Ճշմարիտ 32
ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, թէ Մովսէս չտուաւ ձեզի երկնաւոր հացը, բայց իմ Հայրս կու տայ ձեզի ան ճշմարիտ երկնա-
ւոր հացը: Ինչու որ Աստուծմէ տրուած 33
հացը ան է որ երկինքէն կ՚իջնէ, ու աշ-
խարհիս կեանք կու տայ: Ըսին իրեն. Տէ՛ր 34
ամէն ատեն ան հացը մեզի՝ տուր: Յի- 35
սուս ըսաւ անոնց. Ես եմ կենաց հացը. ան որ ինծի կու գայ՝ չանօթենար. և ան որ ինծի կը հաւատայ՝ ամենևին չծարաւ-
նար: Բայց ես ձեզի ըսի, որ դուք զիս 36
տեսաք՝ ու չէք հաւատար: Ան ամէնը որ 37
Հայրը ինծի կու տայ, ինծի պիտի գայ. և ան որ ինծի կու գայ, դուրս չեմ հա-
ներ: Ինչու որ ես երկինքէն իջայ՝ չէ թէ 38
իմ կամքս ընելու, հապա անոր կամքը՝ որ
զիս խրկեց: Աս է իմ Հօրս կամքը՝ որ 39
զիս խրկեց, որ ան ամէնը որ Հայրը ին-

Digitized by Google

ծի տուաւ՝ չկորսնցնեմ անկից. հապա
յարութիւն տանել տամ անոր յետին օրը։
40 Ըս է իմ հօրս կամքը, որ ան ամէնը որ
կը տեսնէ Որդին և կը հաւատայ անոր,
յաւիտենական կեանքը ընդունի. ես ալ
յարութիւն տանել տամ անոր յետին օրը։
41 Հրէաները տրտունջ կ'ընէին իրեն հա-
մար, ինչու որ ըսաւ, թէ Ես եմ երկին-
42 քէն իջած հացը. Եւ կ'ըսէին. Ասիկայ
Յովսէփին որդին Յիսուսը չէ՞, որուն
հայրը ու մայրը մենք կը ճանչնանք. ու-
րեմն ի՞նչպէս կ'ըսէ, թէ Ես երկինքէն ի-
43 ջայ։ Պատասխան տուաւ Յիսուս և ը-
սաւ անոնց. Իրարու հետ մի՛ մռմռաք։
44 Մէկը չկրնար ինծի գալ, թէ որ զիս
ղրկող հայրը անիկայ չքաշէ. ու ես ա-
նոր յարութիւն տանել կու տամ յետին օ-
45 րը։ Մարգարէներուն մէջը գրուած է. Ու
ամէնքն ալ Աստուծմէ սորված ըլլան. ան
ամէնը որ հօրմէն կը լսէ ու կը սորվի՝
46 ինծի կու գայ։ Ոչ՛ թէ մէկը հայրը
տեսած է, հապա ան՝ որ Աստուծմէն է,
47 անիկայ հայրը տեսաւ։ Ճշմարիտ ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզի, թէ ան որ ինծի կը
հաւատայ յաւիտենական կեանքը կ'ընդու-
48 նի. Ես եմ կենաց հացը։ (49) Ձեր հայ-
րերը անապատին մէջ մանանան կերան՝ ու
50 մեռան։ Ըս է ան հացը՝ որ երկինքէն ի-
ջած է, որ եթէ մէկը անկից ուտէ՝ չմեռ-
51 նի։ Ես եմ կենդանի հացը՝ որ եր-
52 կինքէն իջայ։ Եթէ որ մէկը աս հացէն

ուտէ՝ յաւիտեան պիտի ապրի. և այն հա-
ցը որ ես պիտի տամ՝ իմ մարմինս է, որ
ես պիտի տամ աշխարհի կեանքին համար:
Հրէաները իրարու հետ կը կռուէին ու 53
կ'ըսէին. Ինչպէ՞ս կրնայ ասիկայ իր մար-
մինը մեզի տալ ուտելու: Յիսուս ըսաւ 54
անոնց. Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձե-
զի, Թէ որ Որդւոյ մարդոյ մարմինը չու-
տէք, և անոր արիւնը չխմէք, ձեր անձե-
րուն մէջը կեանք չէք ունենար: Ան որ 55
իմ մարմինս ուտէ՝ և իմ արիւնս խմէ,
յաւիտենական կեանք ունի. ու ես անոր
յարութիւն պիտի տամ վերջի օրը:
Ինչու որ իմ մարմինս ճշմարիտ կերակուր 56
է, և իմ արիւնս ճշմարիտ ըմպելիք է:
Ան որ իմ մարմինս կ'ուտէ, և իմ ա- 57
րիւնս կը խմէ, անիկայ իմ ներսս կը
բնակի՝ ու ես անոր ներսիդին: Ինչպէս 58
որ կենդանի Հայրը զիս ղրկեց, ու ես
կենդանի եմ Հօրս ձեռքովը, այնպէս ալ
ան որ զիս կ'ուտէ, ինքն ալ իմ ձեռքովս
կենդանի կը մնայ: Աս է այն հացը, որ 59
երկինքէն իջած է, չէ՛ թէ ինչպէս որ հայ-
րերնիդ մանանան կերան՝ ու մեռան. ան
որ աս հացը կ'ուտէ՝ յաւիտեան պիտի
ապրի:
Աս բանը զրուցեց ժողովարանին մէջը՝ 60
երբոր Կափառնայումի մէջ կը սորվեցը-
նէր:
Ու աշակերտներէն շատերը երբոր լսե- 61
ցին՝ ըսին. Խիստ է աս խօսքը, ո՞վ

Digitized by Google

62 կրնայ ատոր մտիկ ընել . Յիսուս երբոր
ինքնիրենը հասկցաւ՝ որ իր աշակերտները
ան բանին համար տրտմելով կ'ըսեն , ըսաւ
անոնց . Ասիկա ձեզ կը գայթակղեցընէ՞ :
63 Հապա ինչ պիտի խորհիք՝ թէ որ տեսնէք
Որդին մարդոյ՝ որ ելլէ՝ ուր տեղ որ ա-
64 ռաջ էր : Հոգին է կենդանացնողը ,
մարմինը՝ շահ մը չըներ . Այն խօսքը որ ես
65 ձեզի խօսեցայ ՝ հոգի ու կեանք է : Բայց
ձեր մէջէն կան ոմանք որ չեն հաւատար .
ինչու որ Յիսուս սկիզբէն գիտէր՝ թէ ով
են անոնք որ չեն հաւատար ; և ով է ան
66 որ զինքը պիտի մատնէ . Ու կ'ըսէր . Ա-
տոր համար ձեզի ըսի ; որ մէկը չկրնար ին-
ծի գալ ; թէ որ իմ Հօրմէս տրուած չըլ-
լայ անոր :
67 Աս պատճառով իր աշակերտներէն շա-
տերը ետ գացին , և ալ իր հետը չէին
68 պտըտեր : Յիսուս տասներկու աշակերտա-
ներուն ըսաւ . Դուք ալ կ'ուզէ՞ք երթալ :
69 Սիմոն Պետրոս պատասխան տուաւ անոր .
Տէ՛ր՝ որո՞ւն պիտի երթանք ; դուն յաւի-
70 տենական կեանքի խօսքեր ունիս : Ու
մենք հաւատացինք ու ճանչցանք՝ թէ դուն
71 ես Քրիստոսը Աստուծոյ որդին : Յիսուս
պատասխան տուաւ անոնց . Ես ձեզ
տասներկուքդ չընտրեցի՞ , ու ձեզմէ մէ-
72 մէկը սատանայ է : Ու կ'ըսէր Իսկարիով-
տացի Սիմոնեան Յուդային համար . ին-
չու որ անիկայ էր որ զինքը պիտի մատ-
նէր ; ու տասներկուքէն մէկն էր :

Digitized by Google

## ԳԼ. Է

Եւ ասկէ ետեւ Յիսուս Գալիլեայի մէջ 1
կը պտըտէր. վասն զի չէր ուզեր Հրէաստա-
նի մէջը պտըտիլ, վասն զի Հրեաները
զինքը մեռցընել կ'ուզէին:
Եւ Հրեաներուն տաղաւարահարաց տօ- 2
նը մօտ էր: Իր եղբայրները ըսին իրեն. 3
Ելի՛ր ասկէց՝ ու Հրէաստան գնա՛, որ
քու աշակերտներդ ալ տեսնեն քու գործ-
քերդ որ կ'ընես: Վասն զի մէկը չկայ որ 4
ծածուկ բան մը ընէ, եւ ինքը յայտնի
ըլլալ ուզէ. թէ որ դուն ասանկ բաներ կ'ը-
նես, զքեզ աշխարհքին յայտնէ՛:
Քանզի եղբայրներն ալ իրեն հաւատա- 5
ցած չէին: Յիսուս ըսաւ անոնց. Իմ ա- 6
տենս դեռ եկած չէ. բայց ձեր ատենը
միշտ պատրաստ է: Աշխարհքը ձեզ չկըր- 7
նար՝ ատել. բայց զիս կ'ատէ, վասն զի
ես անոր վրայով կը վկայեմ՝ թէ իր գործ-
քերը չար են: Դուք գացէք այս տօնին. 8
ես դեռ չեմ երթար այս տօնին, վասն զի
իմ ժամանակս լրացած չէ: Ասիկա ըսե- 9
լով, ինքը հոն Գալիլեա մնաց: Երբոր 10
իր եղբայրները ելան, այն ատեն ինքն ալ
ելաւ տօնին. ոչ՝ թէ յայտնի՝ հապա
գաղտուկ կերպով մը:
Եւ Հրէաները այն տօնին ատենը զինք 11
փնտռեցին՝ ու կ'ըսէին. Ո՞ւր է ա-
նիկայ: Ու ժողովուրդին մէջը շշուկ մը 12
կար անոր վրայով. ոմանք կ'ըսէին,

Digitized by Google

թէ Բարի մարդ է · ուրիշները կ'ըսէին՝
Չէ՛, հապա ժողովուրդը կը մոլորեցնէ ։
13 Եւ մէկը համարձակութեամբ չէր կրնար խօսիլ ա-
նոր համար՝ Հրեաներուն վախէն ։
14 Տօնը երբոր կէս եղաւ, Յիսուս տաճա-
15 րը ելաւ՝ ու կը սորվեցնէր · Հրեաները
կը զարմանային և կ'ըսէին · Ինչպէ՞ս ա-
սիկայ գիրքերը գիտէ, որ բնաւ սորված
16 չէ ։ Յիսուս պատասխան տուաւ անոնց
և ըսաւ · Իմ վարդապետութիւնս իմս չէ,
17 հապա զիս ղրկողինն է ։ Թէ որ մէկը
կ'ուզէ անոր կամքը ընել, պիտի գիտնայ
այս վարդապետութեան համար՝ թէ աստ-
ւծոյ Աստուծմէ՞ է, թէ ես ինքնիրմէս
18 կը խօսիմ ։ Ան որ ինքնիրմէն կը խօսի՝ իր
անձին փառքը կը փնտռէ · բայց, ան որ
զինքը ղրկողին փառքը կը փնտռէ՝ անի-
կայ ճշմարիտ է, և անոր մէջը անիրա-
19 ւութիւն չկայ ։ Մովսէս չտուա՞ւ ձեզի օ-
րէնքը, ու ձեզմէ մէկն ալ չպահեր օրէն-
20 քը ։ Ինչո՞ւ կը փնտռէք զիս սպաննել ։
պատասխան տուաւ ժողովուրդը և ըսաւ ·
Դեւ կայ քու ներսդ · ո՞վ քեզ կը փնտռէ
21 սպաննել ։ Պատասխան տուաւ անոնց
Յիսուս և ըսաւ ։ Մէկ գործ մը գործե-
22 ցի՝ ու ամէնքդ ալ զարմանալու էք ։ Ասոր
Մովսէս ձեզի թլփատութիւնը տուաւ ·
(ոչ թէ Մովսէսէն է, հապա նախա-
հայրերէն ։) ու շաբաթ օրը մարդ կը
23 թլփատէք ։ Արդ թէ որ շաբաթ օրը
մարդ թլփատութիւն կ'առնէ՝ որ Մովսէ-

Digitized by Google

մէկ օրէնքը չաւրուի․ ինծի բարկացած
էք որ ես շաբաթ օրը ամբողջ մարդ մը
բժշկեցի։ Երեսի նայելով դատաս- 24
տան մի՛ ընէք, հապա ճշմարիտ դատաստան
ըրէք։

Երուսաղեմացիներէն ոմանք կ'ըսէին․ 25
Ասիկայ ան չէ՞, որ զինքը կը փնտռէին
մեռցնելու․ Բայց ահա՛ յայտնի կը խօսի, 26
և բան մը չեն ըսեր անոր․ չըլլա՞յ որ իշ-
խաններն ալ գիտցան թէ ասիկայ է Քրի-
ստոսը։ Սակայն մենք ասիկայ գիտենք 27
ուսկից է․ բայց Քրիստոսը երբոր գայ՝
մէկը չգիտեր ուսկից է։ Յիսուս ալ 28
գոչեց տաճարին մէջը կը սորվեցնէր ու
կ'ըսէր․ Զիս ալ գիտէք, և ուսկից ըլլալս
գիտէք, ու ինքնիրմէս եկած չեմ․ հապա
ան որ զիս ղրկեց՝ ճշմարիտ է, որ դուք
դուք չէք գիտեր։ Ես գիտեմ զանիկայ, 29
ինչու որ ես անկէ եմ, և ինք զիս
ղրկեց։ Կ'ուզէին որ զինքը բռնեն, բայց 30
անոնց մէկն ալ իրեն
ձեռք չզարկաւ, ինչու որ իր ատենը դեռ
հասած չէր։ Ու ժողովուրդէն շատերը 31
հաւատացին իրեն, և կ'ըսէին․ Քրիստո-
սը որ գալու ըլլայ, աւելի՞ նշաններ պիտի
ընէ, որչափ որ ասիկայ կ'ընէ։

Փարիսեցիներն ալ լսեցին ժողովուրդին 32
տրտունջը անոր վրայով․ ու քահանայա-
պետները և Փարիսեցիները սպասաւորներ
ղրկեցին, որ բռնեն զանիկայ։ Ըսաւ Յի- 33
սուս․ Քիչ մը ժամանակ ալ ձեզի հետ

Digitized by Google

եմ , ու կ'երթամ անոր որ զիս ղրկեց ։
34 Դուք պիտի փնտռէք՝ ու պիտի չգտնէք . եւ
ուր որ ես կ'երթամ , դուք չէք կրնար
35 գալ ։ Հրեաները ըսին իրարու . Բայց
ո՞ւր պիտի երթայ ասիկայ , որ մենք զին-
քը պիտի չգտնենք . միթէ Հեթանոսներուն
մէջ ցրուած եղածներո՞ւն պիտի երթայ ,
36 եւ Հեթանոսները պիտի սորվեցնէ ։ Ի՞նչ
է այն խօսքը՝ որ ըսաւ . Դուք պիտի
փնտռէք ու չկրնաք գտնել , եւ ուր որ ես
կ'երթամ՝ դուք չէք կրնար գալ ։
37 Տօնին վերջին մեծ օրը Յիսուս կայներ
էր , կ'աղաղակէր ու կ'ըսէր . Թէ որ մէ-
կը ծարաւ է , ինծի թող գայ՝ ու խմէ ։
38 Ան որ ինծի կը հաւատայ՝ ինչպէս որ գիր-
քերը կ'ըսեն , Անոր փորէն կենդանութիւն
տուող ջուրերու գետեր պիտի բղխեն ։
39 Ասիկա կը խօսէր Հոգիին համար որ իրեն
հաւատացողները պիտի առնէին . վասն զի
Հոգին դեռ տրուած չէր տակաւին , ինչու որ
40 Յիսուս դեռ փառաւորուած չէր ։ Ժողո-
վուրդէն ոմանք աս խօսքը որ լսեցին՝ կ'ը-
սէին . Ասիկայ է ճշմարիտ մարգարէն ։
41 Ուրիշները կ'ըսէին . Ասիկայ է Քրիստոսը .
բայց կէսերնին կ'ըսէին . Միթէ Քրիստոս
42 Գալիլեայէ՞ն պիտի գայ ։ Չէ՞ որ գիր-
քերը կ'ըսեն , թէ Դաւիթի ցեղէն ու
Բեթլեհէմ գեղէն՝ ուր տեղ որ Դաւիթն
43 էր , անկէց պիտի գայ Քրիստոսը ։ Ուր
ժողովուրդին մէջ երկպառակութիւն մը
44 եղաւ անոր համար ։ Ու անոնցմէ ոմանք

Digitized by Google

ուզեցին բռնել անիկայ. բայց մէկը ձեռք
չդպցուց իրեն ։
Ու սպասաւորները նորէն եկան քահանա- 45
նայապետներուն և փարիսեցիներուն. ու
անոնք ըսին անոնց. Ինչո՞ւ անիկայ հոս
չբերիք ։ Պատասխան տուին սպասաւոր- 46
ները և ըսին. Երբեք մէկ մարդ մը աս
նանկ խօսած չէ, ինչպէս որ աս մարդը ։
Պատասխան տուին փարիսեցիները, և ը- 47
սին. Դո՞ւք ալ մոլորեցաք ։ Իշխաններէն 48
թէն կամ փարիսեցիներէն մէկը հաւատա՞ց
անոր. Միայն թէ աս խառնիճաղանճ 49
բազմութիւնը՝ որ օրէնք չեն գիտեր, ա-
նզոված են ։ Նիկոդեմոս ըսաւ անոնց, 50
որ առաջուց գիշեր ատեն իրեն եկեր
էր, և անոնցմէ մէկն էր. Մեր օ- 51
րէնքը մարդ կը դատէ՞, թէ որ առաջ ան-
կից բան մը չլսէ, կամ չգիտնայ թէ ինչ ըրեր
է ։ Պատասխան տուին անոր և ըսին. 52
Դո՞ւն ալ արդեօք Գալիլեացի ես. քննէ՝
ու նայէ՝ որ Գալիլեայէն մարգարէ չելլեր ։
Ու ամէն մէկը իրենց տուները գացին ։ 53

## ԳԼ. Ը

Ու Յիսուս Ձիթենեաց լեռը գնաց ։ 1
Ու առտուանց նորէն տաճարը եկաւ, և 2
բոլոր ժողովուրդը իրեն կու գար, ու ինքը
նստեր կը սորվեցընէր անոնց ։ Դպիրները 3
ու քահանայապետները և փարիսեցիները
մէկ կնիկ մը բերին անոր՝ շնութեան մէջ
բռնուած. ու կայնեցընելով անիկայ մէջ-

Digitized by Google

4 ցեր՝ Ըսին իրեն․ Վարդապետ, աս բռ-
նուած կնիկը՝ ինքը յայտնի շնութիւն ը-
5 րած է․ Ու օրինաց մէջը Մովսէս մեզի
պատուիրեց ասանկները քարկոծել․ հիմա
6 դուն ի՞նչ կ՚ըսես ասոր համար։ Աս կ՚ը-
սէին՝ անիկայ փորձելով, որ անոր վրայ
ամբաստանութիւն մը ունենան․ բայց
Յիսուս դէպ՚ի վար նայելով՝ մատովը
7 գետնին վրայ կը գրէր։ Սակայն երբոր
վրան ինկան հարցընելով իրեն, վեր նա-
յելով ըսաւ անոնց․ Ձեզմէ անմեղ եղողը՝
առաջ անիկայ թող քար ձգէ ասոր վրայ։
8 Ու նորէն դէպ՚ի վար նայելով՝ գետնին
9 վրայ կը գրէր։ Ու աս որ լսեցին՝ մէկիկ
մէկիկ դուրս կ՚ելլէին՝ առջիններէն սկսած
մինչև ետքինները․ և Յիսուս մինակ
մնաց, ու կնիկն ալ առջին կայներ էր։
10 Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ ա-
նոր․ Կնի՛կ՝ ո՞ւր են․ մէկը քեզ չդատա-
11 պարտե՞ց։ Ու անիկայ ըսաւ․ Չէ՛ Տէր․
ու ըսաւ Յիսուս․ Ես ալ չեմ դատապար-
տեր քեզ, գնա՛ ասկէ ետև մեղք մի՛
գործեր։
12 Յիսուս նորէն խօսեցաւ անոնց հետ և
ըսաւ․ Ես եմ աշխարհի լոյսը․ ան որ իմ
ետևէս կու գայ մութի մէջ չքալեր, հապա
13 կենաց լոյսը կ՚առնէ։ Փարիսեցիները ըսին
իրեն․ Դուն քու անձիդ համար կը վկա-
յես, և քու վկայութիւնդ ճշմարիտ չէ։
14 Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ ա-
նոնց․ Թէպէտև ես իմ անձիս համար

Digitized by Google

վկայեմ, բայց իմ վկայութիւնս ճշմարիտ
է, ինչու որ գիտեմ ուրկից եկայ, և ուր
կ՚երթամ. բայց դուք չէք գիտեր, ուր-
կից կու գամ՝ կամ ուր կ՚երթամ։ Դուք 15
մարմնին նայելով դատաստան կ՚ընէք. ես
բնաւ մէկը չեմ դատեր։ Ու թէպէտև 16
մէկը դատելու ալ ըլլամ, իմ դատաս-
տանս ճշմարիտ է. ինչու որ ես մինակ չեմ.
հապա ես՝ և Հայրը, որ զիս խրկեց։ Ու 17
ձեր օրէնքին մէջն ալ գրուած է, թէ երկու-
կու մարդու վկայութիւնը ճշմարիտ է։
Ես եմ որ ինծի համար կը վկայեմ, ու 18
կը վկայէ ինծի համար Հայրը՝ որ զիս
խրկեց։ Ըսէին իրեն. Ո՞ւր է քու 19
Հայրդ։ պատասխան տուաւ Յիսուս ու
ըսաւ անոնց. Ոչ զիս գիտէք՝ և ոչ իմ
Հայրս. թէ որ զիս գիտնայիք, իմ Հայրս
ալ պիտի գիտնայիք։

Այս խօսքը խօսեցաւ անոնց՝ գանձատա- 20
նը, երբոր հոն տաճարին մէջ կը սորվեցը-
նէր. ու մէկը չբռնեց զինքը, ինչու որ
դեռ իր ատենը չէր հասած։

Յիսուս նորէն ըսաւ անոնց. Ես կ՚եր- 21
թամ՝ ու զիս պիտի փնտռէք. և ձեր մեղ-
քերուն մէջ պիտի մեռնիք. ինչու որ ուր որ
ես կ՚երթամ դուք չէք կրնար գալ։ Հրէա- 22
ները կ՚ըսէին. Ինքզինքը պիտի մեռցընէ՞.
որ կ՚ըսէ թէ Ուր որ ես կ՚երթամ, դուք
չէք կրնար գալ։ Եւ ըսաւ անոնց. Դուք 23
ասկից վարէն էք, ու ես անկից վերէն եմ.
դուք աս աշխարհէս էք, ես աս աշխար-

Digitized by Google

24 հէս չեմ ։ Անոր ձեզի ըսի, թէ Ձեր
մեղքերուն մէջը պիտի մեռնիք ։ Ինչու որ
եթէ չհաւատաք թէ ես եմ, ձեր մեղ-
25 քերուն մէջը պիտի մեռնիք ։ Բայց իրեն՝
Կ'ըսէն ո՞վ ես ։ Ըսաւ անոնց Յիսուս ։ Ինչ
26 որ առաջուընէ կը խօսիմ ձեզի հետ ։ Շատ
բաներ ունիմ ձեզի համար խօսելու՝ և դատ-
տելու ։ Բայց ան որ զիս խրկեց՝ ճշմարիտ
է, ես ալ ան բանը որ իրմէն լսեցի, աս-
27 նիկայ կը խօսիմ աշխարհիս մէջ ։ Իսկ ան-
նոնք չիմացան որ Հօրը համար կը զրու-
ցէր իրենց ։
28 Անոր համար Յիսուս ըսաւ անոնց ։ Երբոր
որ Որդին մարդոյ բարձրացընէք, ան ա-
տենը պիտի գիտնաք որ ես եմ, ու ինք-
նիրմէս բան մը չեմ ըներ, Հապա ինչ
Հայրս ինծի սորվեցուց, անանկ կը
29 խօսիմ ։ Իսկ ան որ զիս խրկեց՝ ինծի հետ
է, զիս մինակ թող չտուաւ, ինչու որ ես
միշտ անոր հաճոյքը կ'ընեմ ։
30 Երբոր ասիկայ խօսեցաւ, շատերը իրեն
31 հաւատացին ։ Իսկ կ'ըսէր Յիսուս հաւա-
տացեալ Հրէաներուն ։ Թէ որ դուք իմ
խօսքիս մէջ կենաք, իմ ճշմարիտ աշա-
32 կերտներս էք ։ Եւ ճշմարտութիւնը պիտի
գիտնաք, ու ան ճշմարտութիւնը ձեզ
33 պիտի ազատէ ։ Պատասխան տուին իրեն
և ըսին ։ Մենք Աբրահամին զաւակներն
ենք, ու ամենեւին մէկու մը չծառայեցինք ։
ինչպէ՞ս կ'ըսես թէ ազատ պիտի ըլլաք ։
34 Յիսուս պատասխան տուաւ անոնց՝ և ըս-

Digitized by Google

դուն. Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
թէ Ամէն ո՛վ որ մեղք կը գործէ, անիկայ
մեղքի ծառայ է։ Եւ ծառան տունին 35
մէջ յաւիտեան չմնար, բայց որդին յաւ-
իտեան կը մնայ։ Ուստի թէ որ Որդին 36
ձեզ ազատ ընէ, ճշմարտապէս ազատ
կ'ըլլաք։ Գիտեմ որ Աբրահամի զաւակ 37
էք, բայց զիս մեռցնել կ'ուզէք, ինչու
որ իմ խօսքս ձեր ներսի դին տեղ չունի։
Ես ինչ որ տեսայ իմ Հօրս քովը՝ ան 38
կը խօսիմ. եւ դուք ձեր հօրմէն ինչ որ
լսեցիք՝ ան կ'ընէք։ Պատասխան տուին 39
իրեն եւ ըսին. Մեր հայրը Աբրահամն է.
ըսաւ անոնց Յիսուս. Թէ որ Աբրահամի
որդիքը ըլլայիք, Աբրահամի գործերը
կը գործէիք։ Բայց հիմա կ'ուզէք դուք որ 40
զիս սպաննէք, անանկ մէկ մարդ մը՝ որ
ձեզի ճշմարտութիւն խօսեցայ, ան որ իմ
Հօրմէս լսեցի. Աբրահամ ատ բանը չը-
րաւ։ Դուք ձեր հօրը գործքը կ'ընէք. 41
ըսին իրեն. Մենք պոռնկութենէ չենք՝
ծնած. մենք մէկ Հայր մը ունինք՝ որ է
Աստուած։ Յիսուս ըսաւ անոնց. Թէ որ 42
Աստուած ձեր Հայրը ըլլար, կը սիրէիք
զիս. ինչու որ ես Աստուծմէ ելայ՝ ու ե-
կայ. եւ չէ թէ ինքիրմէս եկայ, հապա
անիկայ զիս ղրկեց։ Ինչո՞ւ դուք իմ 43
խօսքերս չէք հասկընար. անոր համար որ
չէք կրնար իմ լսածս մտիկ ընել։ Դուք 44
ձեր հօրմէն Սատանայէն էք, ու ձեր հօ-
րը բաղձանքը կ'ուզէք ընել. ինչու որ ան.

Digitized by Google

որ սկիզբէն հէնց մարդասպան էր, և
ճշմարտութեան մէջ չկեցաւ, ինչու որ ա-
նոր ներսը ալ ճշմարտութիւն չկայ. երբ-
որ անիկայ սուտ մը խօսի, բուն իրեններ-
քէն կը խօսի. վասնզի որ ինքը սուտ է
45 և անոր հայրը։ Բայց ես որ ճշմարտու-
թիւն կը խօսիմ, ինծի չէք հաւատար։
46 Ձեզմէ ո՞վ կրնայ զիս յանդիմանել մեղքի
համար. թէ որ ճշմարիտը կը խօսիմ, ին-
47 չո՞ւ ինծի չէք հաւատար։ Ան որ Աստուծ-
մէն է, Աստուծոյ խօսքերը մտիկ կ'ընէ.
և դուք անոր համար մտիկ չէք ըներ, որ
48 Աստուծմէ չէք։ Պատասխան տուին Հրեայ-
ները՝ և ըսին իրեն. Աղէկ չե՞նք ըսեր
մենք, թէ դուն Սամարացի ես՝ ու դև
49 կայ քու ներսդ։ Յիսուս պատասխան
տուաւ՝ և ըսաւ. Իմ ներսս դև չկայ,
հապա ես իմ Հայրս կը պատուեմ, և
50 դուք զիս կը նախատէք։ Ես իմ փառքս
չեմ փնտռեր. կայ մէկը՝ որ կը փնտռէ
51 ու դատաստան կ'ընէ։ Ճշմարիտ ճշ-
մարիտ կ'ըսեմ ձեզի, թէ որ մէկը իմ
խօսքս պահէ, յաւիտեան մահ պիտի չտես-
52 նէ։ Հրեաները իրեն ըսին. Հիմա հաս-
կըցանք թէ քու ներսդ դև կայ. Աբրա-
համ մեռաւ՝ ու մարգարէները. և դուն
կ'ըսես՝ թէ որ մէկը իմ խօսքս պահէ,
յաւիտեան մահուան համը պիտի չառնէ։
53 Միթէ դուն աւելի՞ մեծ ես մեր հայր Աբ-
րահամէն՝ որ մեռաւ, ու մարգարէները
մեռան. դուն քեզ ո՞վ կ'ընես։ Յիսուս

Digitized by Google

պատասխանի տուաւ. Թէ որ ես ինքզինքս
փառաւորեմ, իմ փառքս բան մը չէ. իմ
Հայրս է՝ որ զիս կը փառաւորէ, որուն
համար դուք կ'ըսէք՝ Թէ Մեր Աստուածն
է. Եւ անիկայ չէք ճանչնար, բայց ես 55
գիտեմ անիկայ. ու թէ որ ըսեմ՝ թէ չեմ ա-
նիկայ գիտեր, ձեզի պէս սուտ կ'ըլ-
լամ. հապա ես գիտեմ անիկայ, եւ ա-
նոր խօսքը կը պահեմ։ Ձեր Աբրահամ 56
հայրը ցանկացաւ իմ օրս տեսնելու, տե-
սաւ եւ ուրախացաւ։ Հրեաները ըսին 57
իրեն. Դուն տակաւին յիսուն տարեկան
չես, ու Աբրահամն ալ տեսար. Յիսուս 58
ըսաւ անոնց. Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, Աբրահամին ըլլալէն առաջ եմ ես։
Քարեր վերցուցին՝ որ անոր վրայ նետեն. 59
բայց Յիսուս մէկդի քաշուեցաւ, ու ելաւ
գնաց տաճարէն։

ԳԼ. Թ.

Եւ երբոր կ'անցնէր, մէկ մարդ մը տե- 1
սաւ կոյր ծնած. Եւ իր աշակերտները 2
հարցուցին իրեն, ու ըսին. Վարդապետ, ո՞վ
գործեց մեղքը, ասի՞կա թէ իր հօրը ու
մօրը, որ կոյր ծնաւ։ Պատասխան տուաւ 3
Յիսուս. Ո՛չ ասիկա մեղք ըրաւ, ոչ ալ իր
հօրը ու մօրը. հապա որ Աստուծոյ գործե-
րը ասոր վրայ յայտնուին ըլլայ։ Ինծի 4
պէտք է որ զիս ղրկողին գործերը գործեմ, ցա-
տեն որ ցորեկ է. գիշերը կու գայ, որ
ան ատենը մէկը չկրնար գործել։ Քանի 5

Digitized by Google

որ աշխարհքի մէջն եմ, աշխարհքի լոյսն եմ։
6 Երբոր աս ըսաւ, թքաւ գետինը՝ և
թուքովը կաւ շինեց, ու անով կաւը կոյրին
7 աչքերուն վրայ ծեփեց. Ու ըսաւ անոր.
Գնա՛ լուա՛ Սիլովամի աւազանին մէջը,
(որ Ղրկուած կը թարգմանուի.) գնաց
8 լուացուեցաւ, եկաւ ու կը տեսնէր։ Դրա-
ցիները՝ և անոնք որ առաջուց անի-
կայ տեսած էին որ մուրացկան էր, կ'ը-
սէին. Ասիկայ չէ՞ որ կը նստէր և կը մու-
9 րար. Կէսերնին կ'ըսէին՝ Անիկայ է։ Ու-
րիշները կ'ըսէին՝ Չէ՛. հապա՝ անոր նմանն
10 է. և ինքը կ'ըսէր, Թէ Ես եմ։ Ըսին
իրեն. Հապա ինչպէ՞ս քու աչքերդ բա-
11 ցուեցան։ Ինքը պատասխան տուաւ.
Մէկ մարդ մը՝ որ անոր Յիսուս կ'ըսեն,
կաւ շինեց ու աչքերս ծեփեց, և ըսաւ
ինծի. Գնա՛ Սիլովամ ու լուա՛. գացի
12 լուացուեցայ ու կը տեսնեմ։ Ըսին իրեն.
Ո՞ւր է անիկայ. ըսաւ անոնց. Չեմ գի-
տեր։
13 Փարիսեցիներուն տարին զանիկայ՝ որ
14 առաջուց կոյր էր։ Ու շաբաթ օր էր՝ երբոր
որ Յիսուս կաւը շինեց ու կոյրին աչ-
15 քերը բացաւ։ Դարձեալ Փարիսեցիներն ալ
կը հարցնէին իրեն, թէ ինչպէ՞ս կը տես-
նես. անիկայ ալ ըսաւ անոնց. Կաւ
դրաւ աչքերուս վրայ, ու լուացուեցայ և
16 կը տեսնեմ։ Փարիսեցիներէն ոմանք կ'ը-
սէին. Այն մարդը Աստուծմէ չէ, ինչու որ
շաբաթ օրերը չպահեր. կէսերնին կ'ըսէին.

Digitized by Google

Հապա ինտո՞ր կրնայ մեղաւոր մարդ այ-
սանկ հրաշքներ ընել . և մէջերնին երկ-
պառակութիւն կար ։ Նորէն ըսին կոյ- 17
րին . Դուն ինչ կ'ըսես անոր համար՝ որ
քու աչքերդ բացաւ . ան ալ ըսաւ , թէ
Մարգարէ մըն է ։ Ու Հրեաները չէին 18
հաւատար անոր համար՝ թէ կոյր էր ու
բացուեցաւ , մինչև որ անոր աչքը բացուա-
ծին ծնողքը կանչեցին ։ Հարցուցին ա- 19
նոնց և ըսին . Ա՞ս է ձեր որդին , որուն
համար դուք կ'ըսէիք թէ կոյր ծնաւ .
Հապա հիմա ինտո՞ր կը տեսնէ ։ Պատասխա- 20
խան տուին իր ծնողքը ու ըսին . Գիտենք
որ ասիկայ է մեր որդին , և որ ինքը կոյր
ծնաւ . Բայց հիմա ինտո՞ր կը տեսնէ՝ չենք 21
գիտեր , կամ թէ ո՛վ բացաւ անոր աչ-
քը , մենք չենք գիտեր . իրեն հարցուցէք ,
ինքը չափահաս է . թո՛ղ ինքը խօսի ի-
րեն համար ։ Ասանկ ըսին անոր ծնող- 22
քը , որովհետև կը վախնային Հրեաներէն .
քանզի Հրեաները ուխտ ըրած էին , որ
եթէ մէկը անիկայ Քրիստոս դաւանի՝
ժողովարանէն դուրս հանայ ։ Ասոր համար 23
անոր ծնողքը ըսին , թէ Ինքը չափահաս
է , իրեն հարցուցէք ։ Անոնք նորէն կանչ- 24
եցին ան մարդը որ կոյր էր , ու ըսին ի-
րեն . Աստուծոյ փառք տուր , մենք գի-
տենք որ ան մարդը մեղաւոր է ։ Անիկայ 25
ալ ըսաւ . Եթէ որ մեղաւոր է՝ ես չեմ գի-
տեր , միայն աս գիտեմ որ կոյր էի , և
հիմա կը տեսնեմ ։ Նորէն ըսին իրեն . 26

Digitized by Google

Ի՞նչ ըրաւ քեզի . քու աչքերդ ինչպէ՞ս
27 բացաւ ։ Պատասխան տուաւ անոնց .
Հիմա ըսի ձեզի՝ ու չլսեցիք . ինչո՞ւ նորէն
մէյ մըն ալ կ՚ուզէք լսել . միթէ դո՞ւք ալ
28 կ՚ուզէք անոր աշակերտ ըլլալ ։ Անոնք կը
հայհոյէին անոր , և կ՚ըսէին . Դուն եղիր
անոր աշակերտը . մենք Մովսէսի աշակերտ-
29 ներն ենք ։ Մենք գիտենք որ Աստուած
Մովսէսին հետ խօսեցաւ . ասիկայ չենք
30 գիտեր ուրկի՞ց է ։ Պատասխան տուաւ
մարդը և ըսաւ անոնց . Ասիկայ է զար-
մանալու բանը՝ որ դուք չէք գիտեր ան-
կէ՞ց է , և անիկայ իմ աչքերս բացաւ ։
31 Գիտենք որ Աստուած մեղաւորներուն
մտիկ չըներ . բայց թէ որ մէկը աստուա-
ծապաշտ ըլլայ , ու անոր կամքը կատարէ ,
32 անոր մտիկ կ՚ընէ ։ Աշխարհքս ակիզբէն ի
վեր մէկը լսած չէ՝ թէ մէկ մարդ մը մօրէն
33 կոյր ծնածի մը աչքերը բացաւ ։ Թէ որ
Աստուծմէ չըլլար ան մարդը՝ բան մը չէր
34 կրնար ընել ։ Պատասխան տուին և ըսին
իրեն . Ամբողջովին մեղքի մէջ ծնած ես ,
ու դուն մեզի վարդապետ կ՚ըլլաս . և
դուրս ըրին անիկայ ։
35 Յիսուս լսեց որ զանիկայ դուրս ըրին ,
ու երբոր գտաւ զանիկայ՝ ըսաւ անոր .
Դուն կը հաւատա՞ս Աստուծոյ Որդիին .
36 Անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ .
37 Տէր ո՞վ է՝ որ հաւատամ անոր ։ Յիսուս
ըսաւ անոր . Տեսար ալ անիկայ , և քեզի
38 հետ խօսողը ան է ։ Անիկայ ալ ըսաւ .

Digitized by Google

Ալ. Հաւատամ Տէր . և անոր երկրպագու-
թիւն ըրաւ : Նա ըսաւ Յիսուս . Ես 39
դատաստանի ընելու եկայ այս աշխարհս ,
որ անոնք որ չեն տեսներ՝ տեսնեն , և ա-
նոնք որ կը տեսնեն՝ կուրնան :
Իր հետը եղող Փարիսեցիներէն ոմանք 40
լսեցին , ու ըսին իրեն . Միթէ մե՞նք ալ
կոյր ենք : Յիսուս ըսաւ անոնց . Թէ որ 41
կոյր ըլլայիք՝ դուք մեղք չէիք ունենար .
բայց հիմա կ'ըսէք թէ Կը տեսնենք , ա-
նոր ձեր մեղքերը ձեր վրայ հաստատ կը
մնայ :

## ԳԼ. Ժ.

Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . Ան 1
որ դռնէն չմտներ ոչխարներուն բակը ,
հապա ուրիշ տեղէն կ'ելլէ , անիկայ
գող ու աւազակ է : Բայց ան որ դըռ- 2
նէն կը մտնէ , անիկայ ոչխարներուն հո-
վիւն է : Դռնապանը կը բանայ անոր՝ 3
և ոչխարները անոր ձայնին կը լսեն , ու
իր ոչխարները անուանովը կը կանչէ , և
դուրս կը հանէ անոնք : Ու երբոր բոլոր 4
իրենները կը հանէ , անոնց առջևէն կ'եր-
թայ , ու ոչխարները իր ետևէն կ'երթան .
ինչու որ անոր ձայնը կը ճանչնան : Օտա- 5
րին ետևէն չեն երթար . հապա անկէ
կը փախչին , ինչու որ օտարներուն
ձայնը չեն ճանչնար :
Յիսուս այս առակը անոնց ըսաւ . բայց 6
անոնք չէին իմանար՝ թէ ի՛նչ էր որ կ'ըսէր.

Digitized by Google

7 հետը կը խօսէր։ Նորէն Յիսուս ըսա-
ւ անոնց. Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձե-
զի, որ ես եմ ոչխարներուն դուռը։
8 Ամէն անոնք որ ինծմէ առաջ եկան, գող
ու աւազակ էին. բայց անոնց չլսեցին
9 ոչխարները։ Ես եմ դուռը. թէ որ մէ-
կը ինծմէն ներս մտնէ՝ կ'ապրի, կը մտնէ ու
10 կ'ելլէ, և արօտ կը գտնէ։ Գողը չգար,
միայն թէ գողնալու և սպաննելու ու կորսն-
ցնելու համար. ես եկայ որ կեանք ունե-
11 նան, և ալ աւելի ունենան։ Ես եմ բարի
հովիւը. բարի հովիւը իր կեանքը ոչխար-
12 ներուն համար կը դնէ։ Բայց վարձկանը որ
հովիւ չէ, որ ոչխարները իրը չեն, երբո-
որ կը տեսնէ գայլը որ կու գայ, կը թո-
ղու ոչխարները և կը փախչի. գայլն ալ
13 կը յափշտակէ անոնք ու կը ցրուէ։ Ինչու
որ իրեն վարձկան է, և իր հոգը չէ ոչ-
14 խարներուն համար։ Ես եմ բարի հո-
վիւը, ու կը ճանչնամ իմիններս, և կը
15 ճանչցուիմ իմիններէս։ Ինչպէս որ Հայրը
զիս կը ճանչնայ, անանկ ալ ես Հայրը
կը ճանչնամ, ու իմ կեանքս ոչխարներուն
16 համար կը դնեմ։ Ես ուրիշ ոչխարներ ալ
ունիմ, որոնք աս բակէն չեն. անոնք ալ
պէտք է ինծի որ հաւաքեմ, ու իմ ձայ-
նիս մտիկ ընեն. և միայն մէկ հօտ
17 ու մէկ հովիւ։ Անոր համար իմ Հայրս
զիս կը սիրէ, որ ես իմ կեանքս կը դնեմ,
18 որ նորէն առնեմ անիկայ։ Մէկը չառներ
անիկայ ինծմէն, հապա ես կը դնեմ ա-

զանիկայ ինքնիրմէս · իշխանութիւն ունիմ
զանիկայ դնելու , եւ իշխանութիւն ունիմ
զանիկայ նորէն առնելու · այս պատուէրը
իմ Հօրմէս առի :
Նորէն երկպառակութիւն մ՚ըլլար Հրեա- 19
ներուն մէջը այս խօսքերուն համար : Իրե- 20
նոնցմէ շատերը կ՚ըսէին , Դեւ կայ ա-
սոր մէջը ու խենթեցած է , ինչո՞ւ ա-
նոր մտիկ կ՚ընէք : Ուրիշները կ՚ըսէին 21
Ասանկ խօսքերը դիւահարի խօսք չեն ·
միթէ դեւը կրնա՞յ կոյրին աչքերը բանալ :
Ան ատենը Երուսաղէմի նաւակատիքին 22
տօնը եղաւ , ու ձմեռ էր : Եւ Յիսուս 23
կը պտըտէր տաճարին մէջ Սողոմոնին սրա-
հը : Հրեաները անոր չորս կողմը առին 24
ու ըսին · Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հա-
նես , թէ որ Քրիստոսը դուն ես , մեզի
համարձակ ըսէ : Յիսուս պատասխանեց 25
անոնց ու ըսաւ · Ձեզի ըսի ու ին-
ծի չէք հաւատար · այն գործքերը որ ես
իմ Հօրս անունովը կը գործեմ , անոնք
կը վկայեն ինծի համար : Բայց դուք չէք 26
հաւատար , ինչու որ դուք իմ ոչխարներէս
չէք : Իմ ոչխարներս իմ ձայնս կը լսեն , 27
ես ալ անոնք կը ճանչնամ , ու իմ ետեւէս
կու գան : Ու ես ալ անոնց յաւիտենական 28
կեանքը կու տամ , որ յաւիտեան պիտի
չկորսուին , ու մէկը անոնք իմ ձեռքէս
պիտի չյափշտակէ : Իմ Հայրս որ ա- 29
նոնք ինծի տուաւ , ամենէն մեծ է , ու
մէկը չկրնար իմ Հօրս ձեռքէն փրցնել :
Ես ու իմ Հայրս մէկ ենք : 30

Digitized by Google

31 Հրեաները քարեր վերցուցին, որ զա-
32 նիկայ քարկոծեն։ Յիսուս պատասխան
տուաւ անոնց. Շատ բարի գործեր ցու-
ցուցի ձեզի իմ Հօրմէս, անոնցմէ ո՞ր
գործին համար զիս կը քարկոծէք։
33 Հրեաները պատասխան տուին իրեն. Բարի
գործի համար քեզ չենք քարկոծեր,
հապա հայհոյութեան համար. և զի դուն
մարդ մըն ես, ու զքեզ Աստուած
34 կ'ընես։ Յիսուս պատասխան տուաւ ա-
նոնց. Չէ՞ որ ձեր օրէնքին մէջը գրուած
է. Ես ըսի թէ դուք աստուածներ էք։
35 Անոնց թէ որ աստուածներ կ'ըսէ,
որոնց որ Աստուծոյ խօսքը եղաւ. (ու
կարելի չէ որ ան գրուածը աւրուի.)
36 Զանիկա ան որ Հայրը սրբեց, և աշխարհք
խրկեց, դուք անոր կ'ըսէք թէ հայհոյու-
թիւն կ'ընես՝ Աստուծոյ Որդի եմ ըսելուս
37 համար։ Եթէ որ իմ Հօրս գործերը չեմ
38 գործեր, ինծի մի՛ հաւատաք։ Հապա
թէ որ կը գործեմ՝ թէև ինծի չէք հաւատ-
ար, գոնէ գործերուն հաւատացէք.
որ գիտնաք ու հաւատաք՝ թէ Հայրը իմ
մէջս է, և ես Հօրը մէջ։
39 Դարձեալ կ'ուզէին զինքը բռնել, և ա-
40 նոնց ձեռքէն ելաւ։ Ու նորէն գնաց
Յորդանանու միւս կողմը, ան տեղը,
ուր որ Յովհաննէս առաջուընէ կը կենար ու
41 կը մկրտէր, և հոն կեցաւ։ Շատերը ե-
կան իրեն՝ և ըսին, որ Յովհաննէս նշան
42 հրաշք մը չըրաւ։ Բայց ինչ որ Յով-

Digitized by Google

Յովհաննէս ըսաւ անոր համար՝ ամէնը ճշմարիտ էր ։ Եւ շատերը հոն անոր հաւատացին ։

## ԳԼ. ԺԱ.

Ու Ղազարոս անունով մէկ հիւանդ մը 1
կար Բեթանիայի մէջ՝ Մարիամին և անոր
քրոջը Մարթային գեղէն ։ Մարիամ այն 2
Մարիամն էր , որ Տէրը եղով օծեց , ու
անոր ոտքերը իր մազերովը սրբեց , որուն
եղբայրը Ղազարոս հիւանդ էր ։ Իր քոյ- 3
րերը մարդ խրկեցին անոր և ըսին . Տէ՛ր
ահա՛ անիկայ՝ որ դուն կը սիրէիր , հիւանդ
է ։ Յիսուս երբոր լսեց՝ ըսաւ . Այն 4
մահուան հիւանդութիւն չէ , հապա Աս-
տուծոյ փառքին համար է , որ Աստուծոյ
Որդին անով փառաւորուի ։ Ու Յիսուս 5
կը սիրէր Մարթան՝ և անոր քոյրը Մա-
րիամը՝ ու Ղազարոսը ։ Երբոր լսեց թէ 6
հիւանդ է , եղած տեղը երկու օր ալ կե-
ցաւ ։ Ետ անկէ ետքը ըսաւ , անոնց . 7
Եկէք նորէն Հրէաստան երթանք ։ Ա- 8
շակերտները իրեն ըսին . Ռա՛բբի՝ Հրէա-
ները հիմա քեզ կը փնտռէին քարկոծե-
լու , և նորէն հո՞ն կ'երթաս ։ Պատասխա- 9
խան տուաւ Յիսուս . Չէ՞ որ օրը տաս-
ներկու ժամ է . թէ որ մէկը ցորեկը քալէ՝
չգլորիր . ինչու որ այս աշխարհիս լոյսը կը
տեսնէ ։ Բայց թէ որ մէկը գիշերը քալէ՝ 10
կը գլորի ; ինչու որ իր մէջը լոյս չկայ ։
Ասիկա ըսաւ՝ անկէ ետքը ըսաւ անոնց . 11
Ղազարոս մեր բարեկամը քնացաւ . բայց

12 կ'երթամ` որ անիկայ արթընցընեմ : Աշ-
շակերտները ըսին իրեն . Տէ՛ր , թէ որ
13 քնացաւ` ողջնալ կ'ապրի : Բայց Յիսուս
անոր մեռնելուն համար կ'ըսէր . իրենց
անանկ կ'երեւնար` թէ քունի քնանալուն հա-
14 մար կ'ըսէր : Ան ատենը Յիսուս յայտնա-
պէս ըսաւ անոնց . Ղազարոս մեռաւ :
15 Եւ ես ուրախ եմ ձեզի համար` որ հոն չէի ,
որ դուք հաւատաք . բայց հիմա եկէք
16 երթանք անոր : Թովմասը` որ Երկուո-
րեակ կ'ըսուէր , ըսաւ իր աշակերտակից-
ներուն . Եկէք մենք ալ երթանք` որ իր
հետը մեռնինք :
17 Յիսուս եկաւ` զանիկայ չորս օրուան
18 գերեզմանը դրուած գտաւ : Եւ Բեթանիա
Երուսաղեմին մօտ էր` տասնըհինգ աս-
19 պարէզի չափ : Հրէաներէն շատերը Մար-
թային եւ Մարիամին եկած էին որ մխի-
թարեն զանոնք իրենց եղբօրը համար :
20 Մարթա երբոր լսեց թէ Յիսուս կու գայ ,
զանիկայ դիմաւորելու գնաց . բայց Մա-
21 րիամ հոն տանը մէջ նստեր էր : Մարթան
ըսաւ Յիսուսին . Տէ՛ր , թէ որ հոս եղած
22 ըլլայիր` իմ եղբայրս չէր մեռներ . Բայց
գիտեմ որ հիմա ալ դուն ինչ որ խնդրես
Աստուծմէ` Աստուած կու տայ քեզի :
23 Յիսուս ըսաւ անոր . Քու եղբայրդ յա-
24 րութիւն պիտի առնէ : Մարթան ըսաւ
անոր . Գիտեմ որ յարութեան վերջին օ-
25 րը յարութիւն պիտի առնէ : Յիսուս ըսաւ
անոր . Ես եմ յարութիւնն եւ կեանքը . ան

Digitized by Google

որ ինծի կը հաւատայ, թէեւ մեռնի՝ պիտի
ապրի. Եւ ան ամէնը որ կենդանի է՝ ու 26
ինծի կը հաւատայ, յաւիտեան պիտի
չմեռնի. դուն կը հաւատա՞ս ասոր: Ըսաւ 27
անոր. Այո՛ Տէր՝ ես հաւատացի՝ որ դուն
ես Քրիստոսը Աստուծոյ Որդին, որ աշ-
խարհք գալու էր: Եւ երբոր աս ըսաւ, 28
գնաց իր Մարիամ քոյրը գաղտուկ մը
կանչեց ու ըսաւ. Վարդապետը եկեր է՝
ու քեզ կը կանչէ: Անիկայ լսածին պէս 29
շուտ մը ելաւ ու եկաւ անոր: Յիսուս 30
դեռ գիւղը եկած չէր, հապա ան տեղն էր,
ուր որ Մարթա զանիկայ դիմաւորեց:
Իսկ Հրեաները որ իր հետը հոն տանը 31
մէջն էին՝ ու կը մխիթարէին անիկայ, երբո-
որ տեսան որ Մարիամ շուտով մը ելաւ ու
գնաց, անոնք ալ անոր ետեւէն գացին. ու
կը կարծէին թէ գերեզմանը կ'երթայ՝ որ
հոն մտիկը լայ: Իսկ Մարիամ երբոր 32
Յիսուսին եղած տեղը եկաւ՝ ու զանիկայ
տեսաւ, անոր ոտքը ինկաւ ու ըսաւ. Տէ՛ր՝
թէ որ հոս եղած ըլլայիր, իմ եղբայրս
մեռած չէր ըլլար: Յիսուս երբոր տեսաւ 33
զանիկայ որ կու լայ, եւ անոր հետը եկող
Հրեաներն ալ որ կու լային, իր հոգւոյն մէջ
տրտմութեամբ լեցուեցաւ խռովութեամբ մը ալ. Եւ 34
ըսաւ. Ո՞ւր դրիք զանիկայ. ըսին իրեն.
Տէ՛ր՝ եկուր ու տե՛ս: Եւ Յիսուս լացաւ: 35
Հրեաները կ'ըսէին. Տեսէ՛ք ինչպէս կը 36
սիրէր զանիկայ: Անոնցմէ ոմանք կ'ըսէին. 37
Ասիկայ որ կոյրին աչքը բացաւ, չէ՞ր

Digitized by Google

38 Կրկնակի ըսել՝ որ ասոնք չհաւատալնէր : Յիսուս
նորէն իր սրտին մէջը վշտացած՝ գերեզմա-
նին կու գայ . ու հոն մէկ քարայր մը կար ,
39 և անոր վրայ քար մը դրուած : Ըսաւ
Յիսուս . Վերցուցէք այս քարը . մե-
ռելին քոյրը Մարթան ըսաւ իրեն . Տէր՝
հիմա հոտած է . քանզի որ չորս օրուան է :
40 Ըսաւ անոր Յիսուս . Չըսի՞ քեզ որ եթէ
հաւատաս , Աստուծոյ փառքը պիտի տես-
41 նես : Ու երբոր վեր առին քարը՝ Յի-
սուս իր աչքերը վեր վերցուց և ըսաւ .
Հայր՝ շնորհակալ եմ քեզմէ , որ ինծի
42 լսեցիր : Ես ալ գիտէի որ միշտ ասանկ
ինծի կը լսես . բայց այս շուրջս կեցող
ժողովուրդին համար կ'ըսեմ , որ հաւա-
43 տան թէ դուն ղրկեցիր զիս : Երբոր ասոնք
ըսաւ , բարձր ձայնով մը կանչեց ու ըսաւ .
44 Ղազարոս՝ ելի՛ր դուրս եկուր : Մեռե-
ալը ելաւ ոտքերը ձեռքերը կապուած ու
լաթերով փաթթուած՝ և երեսը վարշամա-
կով մը կապուած . ու Յիսուս ըսաւ անոնց .
Արձակեցէք զանիկա՝ և թողէք որ երթայ :
45 Հրեաներէն շատերը՝ որ Մարիամին ե-
կեր էին , երբոր Յիսուսին ըրածը տեսան՝
46 հաւատացին իրեն : Իսկ անոնցմէ ոմանք
ալ գացին Փարիսեցիներուն , ու Յի-
սուսին ըրածը անոնց պատմեցին :
47 Քահանայապետները և Փարիսեցիները
մէկտեղ ժողովք ըրին ու ըսին . Ի՞նչ ը-
նենք , զի այս մարդը շատ հրաշքներ կ'ը-
48 նէ : Եթէ զանիկա այսպէս թողունք՝ ամէն մարդ

Digitized by Google

ամէնքն ալ անոր կը հաւատան , ու Հռովմայե-
ցիները՝ պիտի գան՝ և մեր ազգը ու տեղը
պիտի վերցնեն ։ Անոնցմէ մէկը Կայիափա 49
անունով՝ որ այն տարւոյն քահանայապետն
էր , ըսաւ անոնց ․ Դուք բան մը չէք գի-
տեր ․ Ու ամենեւին չէք ալ մտածեր՝ , որ 50
աղէկ է մեզի՝ թէ մէկ մարդ մը ժողովուր-
դին համար մեռնի , ու ոչ բոլոր ազգը
չկորսուի ։ Աս բանը չէ թէ ինքիրմէն 51
զրուցեց , հապա այն տարւոյն քահանա-
յապետը ըլլալով՝ մարգարէութիւն ըրաւ՝
թէ Յիսուս ազգին համար պիտի մեռնի ․
Ու չէ թէ միմիայն ազգին համար , հապա 52
որ Աստուծոյ ցիրուցան եղած որդիներն
ալ մէկտեղ ժողվէ ։

Ալ այն օրէն ետեւ խորհուրդ ըրին որ 53
սպաննեն զինքը ։ Ու Յիսուս անկէ ետքը 54
չէ՛ թէ համարձակ կը պտըտեր Հրէաներ-
րուն մէջը , հապա անկէց անապատին մօտ
մէկ երկիր մը գնաց , մէկ քաղաք մը՝ ո-
րուն անունը Եփրայիմ էր ․ և աշակերտա-
ներուն հետ մէկտեղ հոն կը կենար ։

Ու Հրէաներուն զատիկը մօտ էր , և 55
շատերը գաւառէն առաջ այն զատկէն Եր-
ուսաղէմ ելան , որ իրենց անձերնին
մաքրեն ։ Ու փնտռէին Յիսուսը , և մէկ- 56
զմէկու կ'ըսէին երբոր տաճարին մէջն էին ․
Ձեզի ինչպէս կ'երեւնայ ; թէ աս տօնին
հոս պիտի չգա՞յ ․ Քահանայապետները ու
Փարիսեցիները պատուէր տուեր էին , որ
եթէ մէկը գիտնայ ուր ըլլալը , իմա-
ցնէ անոր համար որ անիկայ բռնեն ։

## ԳԼ. ԺԲ.

1 Իսկ Յիսուս զատկէն վեց օր առաջ
Բեթանիա եկաւ, ուր էր Ղազարոս՝ մե-
ռեալը, որ Յիսուս մեռելներէն յարուց։
2 Այս հոն [illegible] անոր հացկերոյթ մը ըրին.
ու Մարթան սպասաւորութիւն կ'ընէր. և
Ղազարոսը անոր հետ սեղան նստողներուն
3 մէկն էր։ Իսկ Մարիամ մէկ լիտր նար-
դոսի ազնուական մեծագին իւղ առաւ,
Յիսուսին ոտքերը օծեց, ու իր մազերովը
անոր ոտքերը սրբեց. և տունը իւղին
4 հոտովը լեցուեցաւ։ Աշակերտներուն մէկը
Յուդա Իսկարիովտացին, որ զինքը մատնե-
5 լու էր, ըսաւ. Ինչո՞ւ համար այս
իւղը չծախուեցաւ երեք հարիւր դահեկանի,
6 որ աղքատներուն տրուէր։ Ասիկա ըսաւ, ոչ
թէ աղքատներուն համար իր հոգն էր,
հապա անոր համար որ գող էր, ու քսակը
կը պահէր, և ինչ որ ձգուէր՝ ինքը կը
7 վերցնէր։ Յիսուս ըսաւ. Թո՛ղ զանիկա, ա-
սոր, որ այս բանը իմ պատանքուելուս
8 օրուանը պահէ։ Աղքատները ամէն ատեն
ձեր հետ ունիք, բայց զիս ամէն ատեն ձեր
հետ չունիք։
9 Իսկ Հրեաներէն շատ ժողովուրդ ի-
մացաւ որ հոն է անիկա, ու եկան, ոչ թէ միայն Յի-
սուսին համար, հապա որ Ղազարոսն ալ
տեսնեն, որ մեռելներէն յարուցեր էր։
10 Քահանայապետները խորհուրդ ըրին որ
11 Ղազարոսն ալ մեռցնեն։ Ինչու որ

Digitized by Google

Հրեաներէն շատերը կ'երթային ու կը հա-
ւատային Յիսուսին ։
Հետեւեալ օրը շատ ժողովուրդ՝ որ տօ- 12
նին եկած էին, երբոր լսեցին թէ Յիսուս
Երուսաղէմ կու գայ, Արմաւենիներու ոստեր 13
առին ու զանիկա դիմաւորելու, կ'աղաղա-
կէին ու կ'ըսէին. Ովսաննա՛, օրհնեալ
է ան որ կու գայ Իսրայէլի թագաւորը՝ որ Տէ-
րոջը անունովը կու գայ ։ Յիսուս ալ 14
էշի մը քուռակ մը գտնելով անոր վրայ նստաւ,
ինչպէս որ գրուած է . Մի՛ վախնար Սիոնի 15
աղջիկ . ահա քու թագաւորդ կու
գայ էշու մը քուռակին վրայ նստած ։ Ասոնք իր 16
աշակերտները առաջ չհասկցան, բայց
երբոր Յիսուս փառաւորուեցաւ,
[illegible]
թէ ասոնք էր՝ որ գրուած էր անոր համար,
ու իրեն ասոնք ըրին անոր ։ Իսկ վկա- 17
յութիւն կու տար ժողովուրդը որ իրեն հետ էր,
երբ՝ Ղազարոս գերեզմանէն
դուրս կանչեց, ու մեռելներէն յարուց
զանիկա ։ Ասոր համար ժողովուրդը 18
դիմաւորեց անոր, վասն զի լսեցին թէ
[illegible] ։ Փարիսեցի- 19
ները իրենց մէջ կ'ըսէին . կը տեսնէ՞ք
թէ բան մը ընել չէք կրնար . ահա
աշխարհ բոլոր անոր ետեւէն գնաց ։
Կային ալ քանի մը Հելլէններ այն մարդոց 20
մէջէն որ երկրպագելու տօնին ելեր էին . Ասոնք
եկան Փիլիպպոսին, որ Գալիլեայի 21
Բեթսայիդայէն էր ։

[illegible]

22 [illegible]

23 [illegible]

24 [illegible]

25 [illegible]

26 [illegible]

27 [illegible]

28 [illegible]

29 [illegible]

30 [illegible]

31 [illegible]

Digitized by Google

[illegible] 32
[illegible]
[illegible] 33
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 35
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 36
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 37
[illegible]
[illegible] 38
[illegible]
[illegible]
[illegible] 9
[illegible]
[illegible] 40
[illegible]
[illegible]
[illegible] 41
[illegible]
[illegible]

Digitized by Google

42 Սակայն ամենայնիւ իշխաններէն շատերը
իրեն հաւատացին. բայց Փարիսեցիներուն
համար չէին յայտներ, որ ժողովարանէն
43 դուրս չելլեն. Ինչու որ մարդոց փառքը
Աստուծոյ փառքէն աւելի սիրեցին։
44 Իսկ Յիսուս կ'աղաղակէր և կ'ըսէր.
Ան որ ինծի կը հաւատայ՝ ինծի չհաւա-
45 տար, հապա անոր՝ որ զիս խրկեց։ Եւ
ան որ զիս կը տեսնէ, կը տեսնէ ան՝ որ
46 զիս խրկեց։ Ես աշխարհիս լոյս եկայ,
որ ամէն ով որ ինծի հաւատայ, մութին
47 մէջ չմնայ։ Եւ թէ որ մէկը իմ խօսքերս
լսէ ու չպահէ, ես անիկայ չեմ դատեր.
քանզի ես չեկայ որ աշխարհը դատեմ,
48 հապա որ աշխարհը փրկեմ։ Ան որ զիս
կ'անարգէ, և իմ խօսքերս չընդունիր, կայ
մէկը որ զանիկայ կը դատէ. ան խօսքը որ
ես խօսեցայ, անիկայ կը դատէ զանիկայ վերջին
49 օրը։ Ինչու որ ես ինքնիրմէս չխօսեցայ.
հապա Հայրը՝ որ զիս խրկեց, ինքը ինծի
պատուիրեց ինչ որ պիտի ըսեմ՝ և ինչ որ
50 պիտի խօսիմ։ Եւ գիտեմ՝ որ անոր
պատուիրանքը յաւիտենական կեանք է.
ուստի ինչ որ ես կը խօսիմ, ինչպէս որ
Հայրը ինծի ըսաւ, անանկ կը խօսիմ։

## ԳԼ. ԺԳ.

1 Զատկի տօնէն առաջ՝ Յիսուս գիտ-
նալով որ իր ժամանակը հասեր է որ աս
աշխարհէս ելլէ Հօրը քովը, իրեններըը որ
աշխարհի մէջ էին՝ սիրեց. մինչև վերջ-
ալ սիրեց զանոնք։

Եւ ընթրիքը որ կ'ըլլար (Սատանան ալ 2
Իսկարիովտացի Սիմոնեան Յուդային սըր-
տին մէջը դրեր էր, որ անիկայ մատնէ :)
Յիսուս գիտնալով՝ որ Հայրը ամէն բան իր 3
ձեռքը տուեր, և որ Աստուծմէ ելեր՝ ու
Աստուծոյ քովը կ'երթայ, Ընթրիքէն ե- 4
լաւ, և լաթերը մէկդի դրաւ՝ ու ղենջակ
մը առաւ փաթթուեցաւ. Ետքը ջուր 5
առաւ կոնքին մէջը լեցուց, ու սկսաւ ա-
շակերտներուն ոտքերը լուանալ, և ան
իր փաթթուած ղենջակովը կը սրբէր :
Եկաւ Սիմոն Պետրոսին, ան ալ ըսաւ ի- 6
րեն. Տէ՛ր՝ դո՞ւն իմ ոտքերս պիտի լուաս :
Յիսուս պատասխան տուաւ անոր և ըսաւ. 7
Ինչ բան որ կ'ընեմ՝ դուն հիմա չես իմա-
նար, հապա ետքը պիտի իմանաս : Պետ- 8
րոս ըսաւ անոր. Բնաւ դուն իմ ոտքս
պիտի չլուաս. պատասխան տուաւ անոր
Յիսուս. Եթէ որ քեզ չլուամ, դուն
ինծի հետ բաժին չունիս : Սիմոն Պետ- 9
րոս ըսաւ անոր. Տէ՛ր, չէ՛ թէ միայն
ոտքերս, հապա նաև ձեռքերս ու գլուխս :
Յիսուս ըսաւ անոր. Լուացուածին բան 10
պէտք չէ, միայն թէ ոտքերը լուանալ.
ինչու որ բոլորովին մաքուր է. և դուք
ալ մաքրուած էք, բայց չէ՛ թէ ամէնքդ :
Վասն զի գիտէր զանիկայ որ զինքը պիտի 11
մատնէր. անոր համար ըսաւ՝ Չէ թէ ա-
մէնքդ մաքուր էք : Եւ երբոր անոնց ոտ- 12
քերը լուաց, իր լաթերը առաւ՝ ու նո-
րէն սեղան նստաւ, և ըսաւ անոնց. Գի-

Digitized by Google

13 տէ՞ք ինչ ըրի ես ձեզի։ Դուք ինծի վար-
դապետ ու Տէր կը կանչէք, և աղէկ կ'ըսէ-
14 ք. ինչու որ այն եմ։ Ուրեմն
թէ որ ես Տէրս ու վարդապետս ձեր ոտ-
քերը լուացի, պէտք է որ դուք ալ մէկզ-
15 մէկու ոտքերը լուանաք։ Վասն զի ձեզի
մէկ օրինակ մը տուի, որ ինչպէս ես ձեզի
16 ըրի՝ դուք ալ ընէք։ Ճշմարիտ ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզի. Ծառան իր տիրոջմէն
մեծ չէ, ոչ ալ խրկուածը զինքը խրկո-
17 ղէն մեծ է։ Թէ որ ասիկայ գիտէք,
երանի կ'ըլլաք եթէ որ ասիկայ ընէք։
18 Ոչ թէ ձեր ամենուդ համար կ'ըսեմ.
վասն զի ես կը ճանչնամ անոնք որ ես
ընտրեցի, հապա որ այն գրուածը կատա-
րուի՝ Թէ Ան որ ինծի հետ հաց կ'ուտէր,
19 ինծի խաբէութիւն ըրաւ։ Հիմակուընէ
կ'ըսեմ ձեզի՝ քանի որ չէ եղեր, որ երբոր
20 ըլլայ՝ հաւատաք թէ ես ան եմ։ Ճշմա-
րիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. Ան որ կ'ըն-
դունի անիկայ որ ես կը խրկեմ, զիս կ'ըն-
դունի. և ով որ զիս կ'ընդունի, զիս խրկո-
ղը կ'ընդունի։
21 Յիսուս երբոր ասանկ ըսաւ, իր հոգիին
մէջ խռովեցաւ, վկայեց և ըսաւ. Ճշմա-
րիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ձեր
22 մէջէն մէկը զիս պիտի մատնէ։ Աշակերտ-
ները տարակուսած մէկզմէկու կը նայէին,
23 թէ որու համար կը խօսի։ Եւ աշա-
կերտներէն մէկը կար Յիսուսին քովը
24 նստած, որն որ Յիսուս կը սիրէր։ Անոր

Digitized by Google

Պետրոս անոր նշան կ'ընէր՝ հարցընելու՝
Թէ ո՞վ է այն որ ըսածը անիկայ՝ որուն համար
կը զրուցէ ։ Ան ալ Յիսուսին կուրծքին 25
վրայ իյնալով՝ ըսաւ անոր . Տէ՛ր , ո՞վ է
ան ։ Յիսուս պատասխան տուաւ եւ ըսաւ . 26
Անիկայ է՝ որուն որ ես պատառը կը
Թըթխեմ ու կուտամ . եւ Թըթխեց պատառը
Իսկարիովտացի Յուդային տուաւ ։ Եւ 27
պատառէն ետքը Սատանան անոր ներսը
մտաւ ։ Եւ Յիսուս ըսաւ անոր . Ինչ-
ան ինչ որ պիտի ընես՝ շուտով ըրէ ։
Բայց սա բանը սեղան նստողներէն մէկը 28
չիմացաւ , Թէ ի՞նչ բանի համար ըսաւ ա-
նոր ։ Վասն զի ոմանք կը խորհէին՝ Թէ 29
որովհետեւ գանձանակը Յուդային կը պահէր ,
Յիսուս անոր ըսաւ . Ծախու ա՛ռ ինչ որ
մեզի տօնին պէտք է , կամ Թէ որ
աղքատներուն բան մը տայ ։ Անիկայ ալ 30
պատառը առածին պէս շուտ մը դուրս ե-
լաւ , ու գիշեր էր ։
Երբ որ դուրս ելաւ՝ Յիսուս ըսաւ . 31
Հիմա փառաւորուեցաւ Որդին մարդոյ ,
ու Աստուած փառաւորուեցաւ անով ։ Եթէ 32
որ Աստուած անով փառաւորուեցաւ ,
Աստուած ալ անիկայ իր անձովը պիտի
փառաւորէ , եւ շուտով պիտի փառաւորէ
անիկայ ։ Իմ որդեակներս՝ քիչ մը ատեն 33
ալ ձեզի հետ եմ . զիս պիտի փնտռէք ,
եւ ինչպէս որ Հրէաներուն ըսի՝ Թէ Ուր
որ ես կ'երթամ՝ դուք չէք կրնար գալ ,
հիմա ալ ձեզի կ'ըսեմ ։ Նոր պատուիրան 34

Digitized by Google

րան մը կու տամ ձեզի՝ որ մէկզմէկ սիրէք ,
ինչպէս որ ես ձեզ սիրեցի՝ որ դուք ալ
35 մէկզմէկ սիրէք ։ Ասով ամէնը պիտի
գիտնան՝ թէ իմ աշակերտներս էք , թէ
36 որ մէկզմէկ սիրէք ։ Սիմոն Պետրոս ըսաւ
անոր . Տէր՝ ո՞ւր կ'երթաս ։ Յիսուս պատա-
սխանեց անոր . Ուր որ ես կ'երթամ ,
դուն հիմա չես կրնար իմ ետևէս գալ ,
37 բայց ետքը պիտի գաս իմ ետևէս ։ Պետ-
րոս ըսաւ անոր . Տէր՝ ինչո՞ւ հիմա չեմ կրնար
քու ետևէդ գալ . քու համար հոգիս պիտի դնեմ ։ Եւ Յիսուս պատասխանեց
38 իմ համար հոգիդ պիտի դնե՞ս ։ Ճշմար-
տապէս կ'ըսեմ քեզի . Աքաղաղը չխօսած
առջի գիշերը դուն ինծի երեք անգամ
ուրացած պիտի ըլլաս ։

ԳԼ. ԺԴ.

1 Սիրտերնիդ տակնուվրայ թող չըլլայ
հաւատացէք Աստուծոյ , ինծի ալ
2 հաւատացէք ։ Իմ Հօրս տունը շատ
բնակարաններ կան . Հապա թէ չէ՝ ես
ձեզի կ'ըսէի , թէ կ'երթամ ու ձեզի տեղ
3 կը պատրաստեմ ։ Եւ թէ որ երթամ
ու ձեզի տեղ պատրաստեմ , նորէն կու
գամ և ձեզ քովս կ'առնեմ . որ ուր որ
4 ես ըլլամ՝ դուք ալ հոն ըլլաք ։ Եւ
ուր որ կ'երթամ՝ գիտէք , ու ճամբան
ալ գիտէք ։
5 Թովմաս ըսաւ անոր . Տէր չենք գիտեր
ուր կ'երթաս , և ի՞նչպէս ճամբան կրնանք

Digitized by Google

գիտնալ ։ Յիսուս ըսաւ անոր . Ես եմ 6
ճամբան ու ճշմարտութիւնը ու կեանքը ։
Մէկը Հօրը քով չգար , եթէ ոչ ինձմով ։
Եթէ որ զիս գիտնայիք՝ իմ Հայրս ալ կը 7
գիտնայիք , և ասկէ ետև գիտէք անիկայ
և տեսաք անիկայ ։
Փիլիպպոս ըսաւ անոր . Տէ՛ր , Հայրը 8
մեզի ցուցուր , ու հերիք է մեզի ։ Ըսաւ 9
անոր Յիսուս . Այսչափ ժամանակ ձեզի
հետ եմ , և զիս չճանչցար Փիլիպպոս . ան
որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ , և դուն
ինչո՞ւ կ'ըսես՝ թէ Հայրը մեզի ցուցուր ։
Չե՞ս հաւատար , թէ ես Հօրը մէջն եմ , 10
ու Հայրը իմ մէջս է ։ Այն խօսքերը որ ես
ձեզի հետ կը խօսիմ՝ չէ՛ թէ ինքիրմէս կը
խօսիմ , հապա Հայրը որ իմ մէջս բնակած
է , անիկայ կը գործէ այն գործքերը ։ Խըն- 11
դիր կը հաւատա՞ք , թէ ես Հօրը մէջն եմ
ու Հայրը իմ մէջս է ։ Հապա թէ չէ՝ 12
գոնէ գործքերուն համար ինծի հաւատա-
ցէք ։ Ճշմարի՛տ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի ,
թէ Ան որ ինծի կը հաւատայ , այն գործ-
քերը որ ես կը գործեմ , ինքն ալ պիտի
գործէ ; և անոնցմէ աւելի մեծ մեծ գործեր
պիտի գործէ . ինչու որ ես Հօրը քով
կ'երթամ ։ Ու իմ անունովս ինչ որ խնդ- 13
րէք՝ կը կատարեմ անիկայ , որ Հայրը
Որդիովը փառաւորուի . Ինչ որ ինծմէ 14
խնդրէք՝ անիկայ պիտի կատարեմ ։ Եթէ 15
որ զիս կը սիրէք , իմ պատուիրանքներս
պահեցէք ։ Ես ալ Հօրը պիտի աղաչեմ՝ 16

Digitized by Google

և ուրիշ մխիթարիչ մը պիտի տայ ձե-
զի, որ յաւիտեան ձեզի հետ բնակի.
17 Ճշմարտութեան Հոգին. որ աս աշխարհքս
անիկայ չկրնար ընդունիլ, ինչու որ
չտեսներ զանիկայ՝ ու չճանչնար զանիկայ.
բայց դուք կը ճանչնաք զանիկայ, ինչու որ
ձեր քովը պիտի բնակի, և ձեր հետը պի-
18 տի ըլլայ: Ձեզ որբ չեմ թողուր, կու-
19 գամ ձեզի: Քիչ մը ատենէն ետև՝ աշ-
խարհս զիս չտեսներ. բայց դուք պիտի
տեսնէք զիս. ինչու որ ես կենդանի եմ,
20 և դուք կենդանի պիտի ըլլաք: Նոյն օրը
պիտի գիտնաք՝ որ ես իմ Հօրս մէջն եմ,
21 և դուք իմ մէջս, ու ես ձեր մէջը: Ան
որ իմ պատուէրներս կը բռնէ՝ ու կը պահէ
անոնք, անիկայ է զիս սիրողը. և ան որ
զիս կը սիրէ՝ իմ Հօրմէս պիտի սիրուի,
ու ես անիկայ պիտի սիրեմ. և ինքզինքս
անոր պիտի յայտնեմ:
22 Ըսաւ իրեն Յուդան (ոչ Իսկարիովտա-
ցին). Տէ՛ր ի՞նչ եղաւ որ դուն ինքզինքդ
մեզի պիտի յայտնես, ու չէ թէ աշ-
23 խարհքին: Յիսուս պատասխան տուաւ և
ըսաւ անոր. Թէ որ մէկը զիս կը սիրէ՝
իմ խօսքս կը պահէ. ու իմ Հայրս անի-
կայ կը սիրէ. և անոր կու գանք, ու
24 անոր քովը օթեւան կ՚ընենք: Ան
որ զիս չսիրեր, իմ խօսքերս չպահեր.
ու իմ խօսքս որ կը լսէք՝ իմս չէ, հապա
25 Հօրը՝ որ զիս ղրկեց: Աս բաները ձեզի
26 հետ խօսեցայ՝ քանի որ ձեր քովն եմ: Բայց

Digitized by Google

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 27
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 28
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 29
[illegible]
[illegible] 30
[illegible]
[illegible] 31
[illegible]
[illegible]
[illegible]

## ԳԼ. Ժ.

[illegible] 1
[illegible] 2
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 3
[illegible] 4
[illegible]
[illegible]

Digitized by Google

վերայ Հաստատուած։ չարչրկ ․ Նոյնպէս ալ
դառնայ՝ թէ որ իմ վերջին ժամանակաւ չար-
5 չար ։ Ինչ որթէ իմ՝ ու դառն Ճիրանց ․ ան-
որ իմ վերջին Հաստատուած է ․ և նա ․ ա-
Նոյն վերայ ․ անիծեալ չար պատուղ ․ կը ցնծէք ․
ինչպէս որ առաջիկայ քիչ մի ժամանակ մը ․ ցաւ կը տրտմի
6 ընկեր ։ Ինչպէս մէկը իմ վերայ Հաստատուած
չէ՝ անիծեալ Ճիւղին մը ․ ուրիշ դառնա ․ ինկա-
ծ զարմանքներու ․ և կը ժողվէն անիծեալ ․ ․
7 կրակին կը մնան ․ ու ․ կ'ապրի ․ ․ թէ որ
դուք իմ մէջս կենաք՝ և իմ խօսքերս ալ
ձեր մէջը կենան ․ ինչ որ կ'ուզէք խնդրէ-
8 ցէք՝ ու պիտի ըլլայ ձեզի ։ Ասով իմ
Հայրը փառաւորուեցաւ ․ որ դուք շատ
պտուղ բերէք ․ ու իմ աշակերտներս ըլ-
լաք ։
9 Ինչպէս որ Հայրը զիս սիրեց ․ ես ալ
ձեզ սիրեցի ․ իմ սիրոյս մէջը Հաստատ
10 կեցէք ։ Թէ որ իմ պատուիրանքս պա-
հէք՝ իմ սիրոյս մէջը պիտի կենաք ․ ինչ-
պէս որ ես իմ Հօրս պատուիրանքը պա-
հեցի ․ և անոր սիրոյն մէջը կեցայ ․ ․
11 Ասոնք խօսեցայ ձեզի ․ որ իմ ու-
րախութիւնս ձեր մէջը մնայ ․ ու ձեր ու-
12 րախութիւնը լեցուն ըլլայ ։ Աս է իմ պատ-
ուիրանքս՝ որ մէկզմէկ սիրէք ․ ինչպէս որ ես
13 ձեզ սիրեցի ։ Ասկէ աւելի մեծ սէր մէկը
չունի՝ անիկա ․ որ իր կեանքը բարե-
14 կամներուն համար դնէ ։ Դուք իմ բա-
րեկամներս էք ․ թէ որ ինչ որ պատուիրեմ
15 որ ես ձեզի կը պատուիրեմ ։ Ասկէ ետեւ

ձեզ ծառայ չեմ անուաներ , ինչու որ ծառա-
ուան չգիտեր իր Տէրը ինչ կ՚ընէ ։ Հապա
ես ձեզ բարեկամ անուանեցի . ինչու որ
ան ամէն բաները որ իմ Հօրմէս լսեցի
ձեզի իմացուցի ։ Չէ՛ թէ դուք զիս ընտ- 16
րեցիք , հապա ես ձեզ ընտրեցի , ու դրի
ձեզ , որ դուք երթաք և պտուղ բե-
րէք , ու ձեր պտուղը մնայ . և իմ ա-
նունովս ինչ որ իմ Հօրմէս ուզէք , ձեզի
տայ ։ Աս կը պատուիրեմ որ մէկզմէկ սի- 17
րէք ։

Թէ որ աշխարհ ձեզ կ՚ատէ , գիտնաք 18
որ առաջ զիս ատեց ։ Թէ որ աշ- 19
խարհէն եղած ըլլայիք՝ աշխարհ իրենները
կը սիրեր . բայց որովհետև աշխարհէն չէք՝
հապա ես ձեզ աշխարհէն ընտրեցի , անոր
համար աշխարհ ձեզ կ՚ատէ ։ Միտքերնիդ 20
բերէք ան խօսքը որ ձեզի ըսի , թէ Ծառա-
ուան իր տէրոջմէն մեծ չէ . Թէ որ զիս
հալածեցին , ուրեմն ձեզ ալ պիտի հալա-
ծեն . Թէ որ իմ խօսքս պահեցին , ուրեմն
ձերն ալ պիտի պահեն ։ Բայց ան բանե- 21
րը պիտի ընեն ձեզի իմ անուանս համար ,
ինչու որ չճանչցան անիկայ որ զիս ղրկեց ։
Թէ որ ես եկած և անոնց հետ խօսած 22
չըլլայի , անոնք մեղք մը չէին ունենար .
բայց ալ հիմա իրենց մեղքերուն պատճա-
ռանք մը չունին ։ Ան որ զիս կ՚ատէ , իմ 23
Հայրս ալ կ՚ատէ ։ Թէ որ ան գործքերը 24
իրենց մէջը ըրած չըլլայի , որոնք ուրիշ
մէկը չէ ըրած , անոնք մեղք մը չէին ու-

Digitized by Google

նենար. բայց հիմա տեսան ալ ու ատեցին
25 զիս ալ իմ Հայրս ալ։ Բայց այս եղաւ
որ կատարուի այն խօսքը՝ որ իրենց օրի-
նաց մէջը գրուած է, Թէ Զուր տեղը
26 զիս ատեցին։ Բայց երբոր Մխիթարիչը
գայ՝ որ ես Հօրմէն ձեզի պիտի ղրկեմ,
այն Ճշմարտութեան Հոգին՝ որ Հօրմէն
կ'ելլէ, անիկայ ինծի համար պիտի վկայէ։
27 Դուք ալ կը վկայէք, ինչու որ սկիզբէն
'ի վեր ինծի հետ էք։

## ԳԼ. ԺԶ.

1 Ասոնքը ձեզի խօսեցայ որ չգայթակ-
2 ղիք։ Իրենց ժողովարաններէն ձեզ դուրս
պիտի հանեն, ու ժամանակ ալ պիտի
գայ՝ որ ամէն ով որ ձեզ մեռցընէ, անանկ
պիտի սեպէ որ Աստուծոյ պաշտօն կը մա-
3 տուցանէ։ Ու ասոնք ձեզի պիտի ը-
նեն՝ անոր համար որ ոչ Հայրը ճանչցան
4 ու ոչ զիս։ Բայց այս ձեզի խօսեցայ, որ
երբ ատենը գայ՝ միտքերնիդ բերէք թէ
ես ըսի ձեզի. այս խօսքը առաջուընէ չըսի
ձեզի, ինչու որ ես հետերնիդ էի։
5 Բայց հիմա ես կ'երթամ զիս ղրկողին
քովը, ու ձեր մէջէն մէկն ալ չհարցըներ
6 ինծի՝ Թէ Ո՞ւր կ'երթաս։ Բայց ըսելուս
այս բաները ձեզի խօսելուս, ձեր սիրտերը
7 տրտմութիւնով լեցուեցաւ։ Բայց ես ճշմարի-
տը կ'ըսեմ ձեզի. աղէկ է ձեզի թէ որ ես
երթամ. քանզի թէ որ ես չերթամ,
Մխիթարիչը ձեզի չգար. հապա թէ որ

Digitized by Google

երթամ՝ անիկայ ձեզի կը խրկեմ ։ Ու 8
ինքը երբոր գայ՝ աշխարհը պիտի յան-
դիմանէ մեղքի համար, և արդարութեան
համար, ու դատաստանի համար ։ Մեղ- 9
քի համար՝ որ ինծի չեն հաւատար ։ Ար- 10
դարութեան համար՝ որ ես իմ Հօրս քով
կ'երթամ, ու դուք ալ չէք տեսներ ։ Դա- 11
տաստանի համար՝ որ աս աշխարհիս իշ-
խանը դատապարտուած է ։ Դեռ ձեզի ըսե- 12
լիք շատ բաներ ունիմ ըսելու, բայց
հիմա չէք կրնար տանիլ ։ Երբոր ինքը՝ 13
ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճշ-
մարտութեամբ կ'առաջնորդէ ձեզի ։ Ինչու
որ չէ՝ թէ ինքիրմէն բան մը պիտի խօսի,
հապա ինչ որ լսէ պիտի խօսի, ու գալիք-
ները ձեզի պիտի պատմէ ։ Անիկայ զիս 14
պիտի փառաւորէ, ինչու որ իմէս իմինէս
պիտի առնէ ու ձեզի պատմէ ։ Ինչ ամէն 15
բաները որ Հայրը ունի՝ իմս է . անոր
համար ձեզի ըսի՝ թէ իմինէս պիտի առնէ,
և ձեզի պատմէ ։ Քիչ մը ատենէն՝ ալ 16
զիս պիտի չտեսնէք, ու դարձեալ քիչ մը
ատենէն զիս պիտի տեսնէք, և ես Հօրս
կ'երթամ ։

Աշակերտներէն ոմանք մէկզմէկու կ'ըս- 17
էին . Ինչ է աս որ մեզի կ'ըսէ՝ թէ Քիչ
մը ատենէն՝ ալ զիս պիտի չտեսնէք, և
նորէն քիչ մըն ալ զիս պիտի տեսնէք ,
և թէ ես Հօրս կ'երթամ ։ Ու կ'ըսէին . 18
Ինչ պիտի ըլլայ ան Քիչ մըն ալը . չենք
գիտեր ինչ կը զրուցէ ։ Յիսուս իմացաւ 19

Digitized by Google

որ կ'ուզէին իրեն հարցնել, և ըսաւ ա-
նոնց ։ Ասոր համար իրարմէ կը հարցը-
նէք, որ ըսի թէ Քիչ մը ատենէն ալ զիս
պիտի չտեսնէք, և նորէն քիչ մըն ալ
20 պիտի տեսնէք զիս ։ Ճշմարի՛տ ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզի, որ դուք պիտի լաք ու
ողբաք, բայց աշխարհս պիտի խնդայ ։
դուք պիտի տրտմիք ։ սակայն ձեր տրտմու-
թիւնը ուրախութեան պիտի փոխուի ։
21 Կնիկ մը երբոր ծննդական ցաւի է՝ ինքը
տրտմութիւն կ'ունենայ, ինչու որ իր ժամա-
նակը հասեր է ։ բայց երբոր տղան ծնի,
ալ նեղութիւնը միտք չբերեր ուրախու-
22 թենէն՝ որ աշխարհս մարդ մը ծնաւ ։ Դուք
ալ հիմա տրտմութիւն ունիք ։ բայց ես
ձեզ նորէն պիտի տեսնեմ, և ձեր սիրտե-
րը ուրախ պիտի ըլլայ ։ ու ձեր ուրախու-
23 թիւնը մէկը ձեզմէ պիտի չհանէ ։ Եւ
այն օրը ինծի բան մը պիտի չհարցնէք ։
Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ինչ
անունովս ինչ որ ուզէք իմ Հօրմէս՝ պիտի
24 տայ ձեզի ։ Մինչև հիմա իմ անունովս
բան մը չուզեցիք ։ ուզեցէք ու պիտի
առնէք, որ ձեր ուրախութիւնը լման
25 ըլլայ ։ Այս բաները առակներով խօսեցայ
ձեզի ։ Բայց ժամանակ պիտի գայ, որ ան
ատենը ձեզի հետ առակներով պիտի չխօ-
սիմ, հապա յայտնապէս Հօրը վրայով
26 պիտի պատմեմ ձեզի ։ Այն օրը իմ անու-
նովս պիտի խնդրէք ։ և չեմ ըսեր ձեզի
թէ ես ձեզի համար պիտի աղաչեմ Հօրը ։

Digitized by Google

[illegible] 27
[illegible]
[illegible] 28
[illegible]
[illegible]
[illegible] 29
[illegible]
[illegible] 30
[illegible]
[illegible]
[illegible] 31
[illegible]
[illegible] 32
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 33
[illegible]

## ԳԼ. Ժ.

1 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 2
[illegible]
[illegible]

Digitized by Google

3 ամենուն՝ որ իրեն տուեր ես : Ու այս է յաւ-
իտենական կեանքը որ ճանչնան քեզ միա-
նակ ճշմարիտ Աստուած , ու Յիսուս Քրի-
4 ստոսը՝ որ անիկայ դուն ղրկեցիր : Ես
քեզ երկրիս վրայ փառաւորեցի , ու
գործը որ ինծի տուիր ընելու՝ լմնցուցի :
5 Եւ հիմա դուն Հայր՝ զիս փառաւորէ քու
քովդ , այն փառքովը՝ որ աշխարհքի չեղածէն
6 առաջ քովդ ունէի : Ես անունդ յայտ-
նեցի այն մարդիկներուն՝ որոնք որ աշ-
խարհքէն ինծի տուիր . քուկդ էին ու
ինծի տուիր զանոնք . և քու խօսքդ պահ-
7 պեցին : Հիմա գիտցան՝ թէ ամեն ինչ
բաները որ ինծի տուիր , քեզմէ են .
8 Ինչու որ , այն խօսքերը որ ինծի տուիր .
ես անոնց տուի , անոնք ալ ընդունեցին ,
և ճշմարտութեամբ գիտցան՝ որ ես քեզ-
մէն ելայ , ու հաւատացին՝ թէ դուն
9 ղրկեցիր զիս : Ես անոնց համար
կ'աղօթեմ , ու ոչ թէ աշխարհքի համար կ'ա-
ղօթեմ , հապա անոնց համար՝ որոնք դուն
ինծի տուիր , ինչու որ քուկդ են անոնք :
10 Եւ իմս ամէն ալ քուկդ է , ու քուկդ է .
և իմս որ քուկդ է , իմս է : ու կը
11 փառաւորուիմ անոնցմով : Ես ալ
ա՛լ աշխարհքի մէջ չեմ , բայց անոնք աշ-
խարհքի մէջն են . ու ես քեզի կու գամ :
Սուրբ Հայր՝ քու անունովդ պահէ՝ ա-
նոնք՝ որ ինծի տուիր , որ անոնք ալ
մէկ ըլլան , ինչպէս որ մենք մէկ ենք :
12 Ինչ ատեն որ աշխարհքի մէջ անոնց հետ էի .

Digitized by Google

ես կը պահէի անոնք քու անունովդ, որ
անոնք դուն ինծի տուիր, ու պահեցի.
և անոնցմէ մէկը չկորսուեցաւ, միայն թէ
այն կորստեան որդին, որ գրուածքը կա-
տարուի։ Բայց հիմա քեզի կու գամ. ու 13
աշխարհի մէջ աս բաները կը խօսիմ, որ
իմ ուրախութիւնս իրենց անձերուն մէջ
կատարեալ ըլլայ։ Ես քու խօսքդ 14
անոնց տուի, ու աշխարհս անոնք ատեց,
ինչու որ աշխարհէն չեն, ինչպէս որ ես ալ
աշխարհէն չեմ։ Չեմ աղաչեր որ 15
անոնք աշխարհէն վերցընես, հապա որ
անոնք չարէն պահես։ Ասոնք աշխարհէն չեն, 16
ինչպէս որ ես ալ աշխարհէն չեմ։ Սրբէ 17
անոնք քու ճշմարտութիւնովդ, որ քու
խօսքդ ճշմարտութիւն է։ Ինչպէս որ դուն 18
զիս աշխարհք խրկեցիր, ես ալ անոնք
աշխարհք խրկեցի։ Եւ անոնց համար ես 19
իմ անձս կը սրբեմ, որ իրենք ալ ճշմարտ-
ութիւնով սրբուած ըլլան։ Բայց չէ 20
թէ միայն անոնց համար կ'աղաչեմ, հապա
ասոնց անոնց խօսքովը բոլոր ինծի հաւատացող-
ներուն համար ալ։ Որ ամէնն ալ մէկ 21
ըլլան, ինչպէս որ դուն իմ Հայր՝ իմ մէջս,
ու ես ալ քու մէջդ, որ անոնք ալ մեր
մէջը ըլլան. որ աշխարհս ալ հաւատայ
թէ դուն խրկեցիր զիս։ Եւ աս փառքը 22
որ դուն ինծի տուիր՝ ես անոնց տուի, որ
մէկ ըլլան՝ ինչպէս որ մենք մէկ ենք.
(Ես անոնց մէջ՝ և դուն իմ մէջս,) որ 23
իրենք կատարեալ ըլլան միութեան մէջ.

Digitized by Google

ու աշխարհս ալ գիտնայ որ դուն խրկեցիր
զիս, ու սիրեցիր անոնք՝ ինչպէս որ դուն
24 զիս սիրեցիր ։ Ո՜վ Հայր՝ անոնք որ դուն
ինծի տուեր, կ'ուզեմ որ ուր որ ես եմ,
անոնք ալ իմ հետս ըլլան. որ տեսնեն իմ
փառքս՝ որն որ ինծի տուեր. ինչու որ
դուն զիս սիրեցիր աշխարհէն ըլլալէն ա-
25 ռաջ ։ Ո՜վ արդար Հայր՝ աշխարհս քեզ
չճանչցաւ, բայց ես քեզ ճանչցայ, և ա-
նոնք ալ ճանչցան, թէ դուն զիս խրկե-
26 ցիր ։ Եւ ես քու անունդ անոնց ճանչցուցի,
ու պիտի ճանչցընեմ, որ այն սէրը որով
դուն զիս սիրեցիր, անոնց մէջը ըլլայ,
ու ես ալ անոնց մէջ ։

## ԳԼ. ԺԸ.

1 Յիսուս երբոր աս խօսքը ըսաւ, ելաւ
աշակերտներուն հետ մէկտեղ Կեդրոնի ձո-
րին մէկալ կողմը անցաւ, ուր որ պարտէզ մը կար, որուն մէջը մտաւ ինքը և
2 իր աշակերտները ։ Յուդան ալ որ զա-
նիկայ պիտի մատնէր, այն տեղը գիտէր.
ինչու որ Յիսուս շատ անգամ իր աշա-
կերտներուն հետ մէկտեղ հոն ժողվուած
3 էր ։ Ուստի Յուդան զինուորներուն
գունդը ու քահանայապետներէն և փա-
րիսեցիներէն սպասաւորները իր հետը առ-
նելով, հոն եկաւ ջահերով ու լապտե-
4 րներով և զէնքերով ։ Բայց Յիսուս
երբոր տեսաւ ան ամէնը իր վրայ եկած,
5 ելաւ և ըսաւ անոնց . Ո՞վ կը փնտռէք ։

Digitized by Google

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 6
[illegible]
[illegible] 7
[illegible]
[illegible] 8
[illegible]
[illegible]
[illegible] 9
[illegible]
[illegible] 10
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 11
[illegible]
[illegible]
[illegible] 12
[illegible]
[illegible] 13
[illegible]
[illegible]
[illegible] 14
[illegible]
[illegible]
[illegible] 15
[illegible]
[illegible]

Digitized by Google

[illegible]
16 [illegible]
17 [illegible]
18 [illegible]
19 [illegible]
20 [illegible]
21 [illegible]
22 [illegible]
23 [illegible]
24 [illegible]

փա Քահանայապետին ղրկեց : Սիմոն Պետ- 25
րոսն ալ հոն կայներ էր, ու կը տաքնար .
ըսին իրեն . Միթէ դո՞ւն ալ անոր աշա-
կերտներէն ես . անիկայ ուրացաւ և ըսաւ .
Թէ Չեմ : Քահանայապետին ծառաներէն 26
մէկն ալ, ան մարդուն ազգականը՝ որուն
ականջը Պետրոս կտրեր էր, ըսաւ . Չէ՞
որ ես քեզ տեսայ պարտէզին մէջը անոր
հետ : Պետրոս նորէն ուրացաւ, և շուտով 27
մը հաւը խօսեցաւ :

Ու Յիսուսը Կայիափայի տունէն դատա- 28
ւորին պալատը տարին . և առտու էր,
ու իրենք պալատը չմտան՝ որ չպղծուին,
հապա որ զատիկը ուտեն : Պիղատոս դուրս 29
ելաւ անոնց և ըսաւ . Ի՞նչ ամբաստանու-
թիւն կը ներկայացընէք աս մարդուն վրա-
յով : Պատասխան տուին և ըսին իրեն . Թէ 30
որ աս մարդը չարագործ մը չըլլար, անիկայ
քեզի չէինք մատներ : Պիղատոս ըսաւ 31
անոնց . Դուք առէք անիկայ, ու ձեր
օրէնքին համեմատ դատաստան ըրէք :
Հրեաները իրեն ըսին . Մեզի չըլլար
մարդ մը մեռցընել : Որ կատարուի Յի- 32
սուսի խօսքը, որ ըսաւ, իմացընելով
թէ ի՛նչ մահով պիտի մեռնէր : Պի- 33
ղատոս նորէն պալատը մտաւ, կանչեց
Յիսուսը ու ըսաւ իրեն . Հրեաներուն
թագաւորը դո՞ւն ես : Յիսուս պատաս- 34
խան տուաւ . Անիկայ դուն քեզմէ՞ կ'ը-
սես, թէ ինծի համար ուրիշները քեզի ը-
սին : Պատասխանէ տուաւ Պիղատոս . 35

Digitized by Google

Միթէ ե՞ս ալ Հրեայ եմ . քու ազգդ և
քահանայապետները քեզ ինծի մատնեցին .
36 ի՞նչ բան ըրեր ես դուն : Յիսուս պատաս-
խան տուաւ . իմ թագաւորութիւնս աս
աշխարհէս չէ ; թէ որ աս աշխարհէս ըլ-
լար իմ թագաւորութիւնս , իմ սպասա-
ւորներս կը կռուէին՝ որ ես Հրեաներուն
ձեռքը չմատնուիմ . հիմա իմ թագաւո-
37 րութիւնս ասկից չէ : Պիղատոս ըսաւ
իրեն . Ապա թէ որ աստանկ է , դուն մէկ
թագաւոր մըն ես . պատասխան տուաւ
Յիսուս . Դուն կ՚ըսես թէ թագաւոր եմ .
բայց ես աս բանին համար ծնած եմ , և
անոր համար աշխարհք եկած , որ ճշմար-
տութեան համար վկայեմ . ան ամէնը՝ որ
ճշմարտութենէն է , իմ խօսքիս ականջ
38 կը դնէ : Պիղատոս ըսաւ իրեն . Ի՞նչ է
ճշմարտութիւնը . աս որ ըսաւ , նորէն
դուրս ելաւ Հրեաներուն , և ըսաւ ա-
նոնց . Ես մէկ յանցանք մը չեմ գտներ
39 անոր վրայ . Բայց ձեր սովորութիւնն է
որ մէկ մարդ մը արձակեմ ձեզի զատկիս .
Հիմա կ՚ուզէ՞ք որ Հրեաներուն թագաւո-
40 րը արձակեմ ձեզի . Ամէնն ալ աղաղա-
կեցին ըսելով . Ասի՛ [illegible] ատիկայ ,
հապա Բարաբբան . ու ան Բարաբբան
աւազակ մըն էր :

## ԳԼ. ԺԹ.

1 Ան ատենը Պիղատոս առաւ Յիսուսը՝ ու
2 ծեծեց : Զինուորներն ալ փուշերէ պսակ

Digitized by Google

հիւսելով՝ անոր գլուխը դրին, և կարմիր
ծիրանի հանդերձ մը հագցուցին ։ Ու կու- 3
գային անոր և կ'ըսէին ։ Ողջ եղիր՝ Հրէից
թագաւոր ։ և ապտակներ կը զարնէին ի-
րեն ։ Պիղատոս նորէն դուրս ելաւ՝ ու 4
ըսաւ անոնց ։ Ահա՝ անիկայ դուրս կը
բերեմ ձեզի, որ գիտնաք թէ ես անոր
վրայ յանցանք մը չեմ գտներ ։ (Յիսուս 5
դուրս ելաւ, և ուղեր փշեղէն պսակ ու
ծիրանի հագուստ ։) և ըսաւ անոնց ։
Ահա՝ աս մարդը ձեզի ։ Քահանայապետ- 6
ները ու սպասաւորները երբոր տեսան՝ կա-
նչեցին, ձայնելով՝ ու ըսին ։
Խաչը հանէ՝ խաչը հանէ անիկայ ։ Պիղ-
ղատոս ըսաւ անոնց ։ Դուք՝ առէք զա-
նիկայ, ու դուք խաչը հանեցէք ։ Քանզի
ես անոր վրայ յանցանք մը չեմ գտներ ։
Հրեաները պատասխան տուին իրեն ։ 7
Մենք օրէնք ունինք, և մեր օրէնքին հա-
մեմատ պէտք է որ մեռնի ։ Քանզի որ զինք-
զինքը Աստուծոյ Որդի ըրաւ ։ Պիղատոս 8
աս խօսքերը լսեց՝ ալ աւելի
վախցաւ ։ Դարձեալ մէյմըն ալ ապարանքը 9
մտաւ, և ըսաւ Յիսուսին ։ Ուսկի՞ց ես
դուն ։ Ու Յիսուս պատասխան չտուաւ
անոր ։ Ըսաւ անոր Պիղատոս ։ Ինծի հետ 10
չե՞ս խօսիր ։ չե՞ս գիտեր որ ես իշխանու-
թիւն ունիմ քեզ խաչը հանելու, ու իշ-
խանութիւն ունիմ քեզ արձակելու ։ Յի- 11
սուս պատասխան տուաւ ։ Կրնալ չէիր
մէկ իշխանութիւն մը ալ իմ վրաս ունենալ,

թէ՛ որ քեզի վերէն տրուած չըլլար . անոր
համար՝ ան որ զիս քեզի մատնեց , անոր
12 մեղքը աւելի մեծ է : Ասկէ ետքը Պի-
ղատոս կ'ուզէր որ զանիկայ թող տայ .
բայց Հրեաները կ'աղաղակէին ու կ'ըսէին .
Թէ որ ասիկայ արձակես , Կայսերին բա-
րեկամը չես . ամէն ով որ ինքզինքը Թա-
գաւոր կ'անուանէ , անիկայ Կայսերին հա-
13 կառակ է : Իսկ Պիղատոս ալ երբոր աս
խօսքերը լսեց , դուրս հանեց Յիսուսը .
ու ատեան բեմին վրայ ան տեղը՝ որ Քա-
րայատակ կ'ըսուէր , և Եբրայեցերէն
14 Կապպաթա . ( Զատիկին ուրբաթ օրն
էր , ու ժամը վեցերորդին էր . ) Եւ
Հրեաներուն ըսաւ . Ահա՛ ձեր Թագաւո-
15 րը ձեզի : Իսկ անոնք կ'աղաղակէին . Վերց-
ո՛ւր մեր մէջէն , վերցո՛ւր մեր մէջէն , ու
խաչը հանէ զանիկայ . Պիղատոս ըսաւ ա-
նոնց . Ձեր Թագաւորը խա՞չը պիտի
հանեմ . քահանայապետները պատասխան
տուին . Մենք Կայսրէն ՚ի զատ Թագաւոր
16 չունինք : Ան ատենը անիկայ իրենց ձեռ-
քը տուաւ , որ խաչը ելլէ .
17 Անոնք ալ առին զՅիսուսը կը տանէին , ու
խաչափայտը ինքը վերցուցեր էր , և ա-
նոնց կ'ելլէր Գագաթ ըսուած տեղը , որ
18 Եբրայեցերէն Գողգոթա կ'ըսուէր . Հոն
զինքը խաչը հանեցին . և անոր հետ ու-
րիշ երկուք ալ մէկ դիհէն ու մէկալ դիհէն ,
19 և մէջտեղը Յիսուսը . Տախտակ մըն ալ
գրեց Պիղատոս՝ և դրաւ խաչին վրայ .

Digitized by Google

ու գրուած էր՝ ՅԻՍՈՒՍ ՆԱ-
ԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷ-
ԱՅՑ: Այն տախտակը Հրէաներէն 20
շատերը կարդացին, որովհետեւ քաղաքին
մօտ էր այն տեղը ուր որ Յիսուս խա-
չուեցաւ. ու գրուած էր Եբրայեցերէն
Լատիներէն եւ Յունարէն: Հրէաներուն 21
քահանայապետները Պիղատոսին ըսին.
Մի՛ գրեր՝ Թագաւոր Հրէից, հապա թէ՝
Ինքը ըսաւ՝ Թագաւոր եմ Հրէից: Պի- 22
ղատոս պատասխան տուաւ. Ինչ որ գրե-
ցի՝ գրեցի:

Բայց զինուորները երբոր Յիսուսը խա- 23
չը հանեցին, անոր լաթերը առին, ու
չորս բաժին ըրին ամէն մէկ զինուորին
բաժին մը. նաեւ պատմուճանը՝ որովհետեւ
առանց կարի էր վերէն ի վեր բոլորը
հիւսուած, Ըսին իրարու. Անիկայ չպատռե- 24
ռենք, հապա վիճակ ձգենք տեսնենք վրան
որուն որ ելլէ. որ կատարուի այն գրուածը
որ կ'ըսէ. Իմ լաթերս իրենց մէջը բաժնե-
ցին, եւ իմ պատմուճանիս վրայ վիճակ
ձգեցին. զինուորները ասանկ ըրին:
Եւ Յիսուսին խաչին քովը կայներ էին իր 25
մայրը, եւ իր մօրը քոյրը Մարիամ՝ Կղէովա-
պայի կինը, ու Մարիամ Մագդաղենա-
ցին: Յիսուս երբոր տեսաւ իր մայրը, 26
եւ այն աշակերտը որ կը սիրէր, որ մօտը
կայներ էր, ըսաւ մօրը. Ո՛վ կին, ահա
քու որդիդ: Յետոյ ըսաւ աշակերտին. 27
Ահա քու մայրդ. եւ այն ժամանակէն աշա-
կերտը անիկայ իր քովը առաւ:

Digitized by Google

28 Անկէ ետեւ երբոր գիտցաւ Յիսուս թէ
ահա՛ ամէն բան կատարուեցաւ է, որ ան
գրուածն ալ կատարուի, ըսաւ. Ծարաւ
29 եմ։ Ու հոն քացախով լեցուն աման
մը կար. անոնք ալ լեղիի հետ խառ-
նուած քացախով սպունգ մը լեցնելով՝
զոպայի մէջտեղին վրայ փաթթած, դէպ ՚ի
30 իր բերանը երկնցուցին։ Յիսուս երբոր
քացախը լեղիին հետ առաւ, ըսաւ. Ամէն
բան կատարուեցաւ. ու գլուխը ծռելով՝
հոգին աւանդեց։

31 Իսկ Հրեաները՝ որովհետեւ ուրբաթ օր
էր, որ չըլլայ թէ անոնց մարմինները խաչին
վրայ մնան մինչեւ շաբաթ օրը, (ինչու որ
այն շաբաթը մեծ օր էր,) Պիղատոսին ա-
ղաչեցին որ անոնց ծունկերը կոտրեն,
32 ու վերցուին. Զինուորները եկան՝ եւ առա-
ջինին ծունկերը կոտրեցին. անանկ ալ
մէկալինը, որ անոր հետ խաչը ելած էր։
33 Բայց երբոր Յիսուսին եկան՝ ու տեսան որ
արդէն մեռած էր, անոր ծունկերը չկոտրե-
34 ցին. Հապա զինուորներէն մէկը գե-
ղարդով անոր կողը խոցեց, եւ շուտ մը ա-
35 րիւն ու ջուր ելաւ։ Ու ան որ տեսաւ ա-
սոնքը՝ վկայեց, ու անոր վկայութիւնը
ճշմարիտ է, եւ ինքը գիտէ որ ճշմարիտ
36 կ՚ըսէ, որ դուք ալ հաւատաք։ Աս բանս
եղաւ որ կատարուի ան գրուածը, թէ
37 Անոր ոսկորը պիտի չփշրուի։ Ու մէյ մըն
ալ ուրիշ գրուած մը կ՚ըսէ, թէ Պիտի
նային անոր՝ որ խոցեցին։

Digitized by Google

Անկէ ետև Յովսէփը՝ որ Արիմաթիայէն 38
էր, (Յիսուսի գաղտուկ աշակերտ եղած
Հրէաներուն վախէն,) աղաչեց Պիղատո-
սին, որ Յիսուսի մարմինը վերցընէ. Պի-
ղատոսն ալ հրաման տուաւ. եկաւ ու
վերցուց անիկայ. Նիկոդեմոսն ալ եկաւ, 39
(որ ինքը առաջուց գիշերով Յիսուսին ե-
կեր էր,) ու բերաւ հարիւր լիտրի չափ
զմուռ՝ հալուէի հետ խառնուած։ Առին 40
Յիսուսին մարմինը տարին՝ և կտաւներով
ու խունկերով փաթթեցին, ինչպես որ
Հրէաներուն սովորութիւն էր թաղելը։
Իսկ այն տեղը՝ ուր որ խաչուեցաւ, պար- 41
տէզ մը կար, ու այն պարտէզին մէջը նոր
գերեզման մը, որուն մէջը ամենևին մարդ-
դրուած չէր։ Հրէաներուն ուրբաթին 42
համար հոն դրին Յիսուսը, ինչու որ գե-
րեզմանը մօտ էր։

## ԳԼ. Ի

Եւ միաշաբաթի օրը Մարիամ Մագդա- 1
ղենացին առտուանց մթնշաղին գերեզ-
մանը կու գայ, ու կը տեսնէ որ քարը գե-
րեզմանին դռնէն վերցուած է։ Ուրեմն կը 2
վազէ կու գայ Սիմոն Պետրոսին և մէկալ
աշակերտին՝ որն որ Յիսուս կը սիրէր, և
կ՚ըսէ անոնց. Տէրը գերեզմանէն վեր-
ցուցին, ու չենք գիտեր ո՛ւր դրին ան-
կայ։ Ելաւ Պետրոս և մէկալ աշակերտը՝ 3
ու դէպ՚ի գերեզմանը կու գային։ Եր- 4
կուքն ալ մէկտեղ կը վազէին. և մէկալ

Digitized by Google

աշակերտը վազեց շուտ մը Պետրոսէն ա-
ռաջ անցաւ, ու առաջ գերեզմանը ե-
5 կաւ: Ու ծռելով ներս նայեցաւ, տեսաւ
որ կտաւները հոն կը կենային, բայց ինքը
6 ներս չմտաւ: Սիմոն Պետրոսն ալ հետե-
ւեալ, որ անոր ետեւէն կու գար, ու գե-
րեզմանը մտաւ, և տեսաւ կտաւները որ
7 հոն կը կենային. Ու վարշամակը որ ա-
նոր գլուխն էր, ուրիշ կտաւներուն հետ
չէր, հապա ծալլուած զատ մէկ կողմը դը-
8 րուած էր: Ան ատենը ներս մտաւ միւս
աշակերտն ալ, որ առաջուց գերեզմանը ե-
9 կեր էր, տեսաւ ու հաւատաց: Քանզի որ
դեռ գիրքերը չէին գիտեր, թէ պէտք է
որ անիկայ մեռելներէն յարութիւն առնէ:
10 Աշակերտները նորէն իրենցներուն քով
գացին:
11 Բայց Մարիամ գերեզմանին դուրսը
կայներ էր, և կու լար. ու երբոր կու լար,
12 դէպ'ի գերեզմանը ծռեցաւ նայեցաւ, Ու
տեսաւ երկու հրեշտակներ ճերմակ հան-
դերձներով, որ նստեր էին ուր որ Յիսու-
սի մարմինը դրուած էր, մէկը գլխուն
13 կողմէն և մէկալը ոտքին կողմէն: Ա-
նոնք իրեն ըսին. Կի՛ն ինչո՞ւ կու լաս.
ըսաւ անոնց. Անոր համար որ իմ Տէրս
գերեզմանէն վերցուցին, ու չեմ գիտեր
14 ուր դրին զանիկայ. Անիկայ որ ըսաւ, ե-
տին դարձաւ և տեսաւ Յիսուսը որ կայ-
ներ էր, ու չէր գիտեր թէ Յիսուսն է:
15 Յիսուս անոր ըսաւ. Կի՛ն ինչո՞ւ կու

կան, ո՞վ կը փնտռես։ Ինքը կարծելով
թէ պարտիզպանն է, ըսաւ անոր. Տէ՛ր՝
թէ որ դուն վերցուցիր անիկայ, ըսէ՛ ին-
ծի՝ ո՞ւր դրիր զանիկա, որ ես անիկայ առնեմ։
Յիսուս ըսաւ անոր. Մարիա՛մ. ան ալ 16
դարձաւ ու Եբրայեցերէն ըսաւ անոր.
Ռաբբունի. որ Վարդապետ կը թարգմա-
նուի։ Ըսաւ անոր Յիսուս. Ինծի մի՛ 17
դպչիր, վասն զի դեռ Հօրս քովը ելած
չեմ. հապա գնա՛ եղբայրներուս, ու ըսէ՛
անոնց. Ես կ՚ելլեմ իմ Հօրս քովը ու ձեր
Հօրը քովը, և իմ Աստուծոյս քովը ու
ձեր Աստուծոյն քովը։ Մարիամ Մագդա- 18
ղենացին եկաւ՝ ու աշակերտներուն
պատմեց թէ ինքը Տէրը տեսաւ, և անի-
կայ այս բաները իրեն ըսաւ։
Իսկ միաշաբաթի օրը իրիկուն էր՝ ու դռնե- 19
ները ալ գոց, ուր որ աշակերտները
Հրեաներէն վախնալով միաբան ժողվուած
էին, Յիսուս եկաւ և անոնց մէջտեղը կայ-
նեցաւ, ու ըսաւ անոնց. Խաղաղութիւն ձեզի։
Ու որ ըսաւ՝ իր ձեռքերը և կողը ցուցուց 20
անոնց, աշակերտները ալ ուրախացան՝
երբոր Տէրը տեսան։ Նորէն ըսաւ անոնց. 21
Խաղաղութիւն ձեզի. ինչպէս որ իմ Հայրս զիս
խրկեց, ես ալ ձեզ կը խրկեմ։ Եւ աս 22
որ ըսաւ՝ փչեց անոնց, ու ըսաւ. Առէք
Հոգին Սուրբը. Թէ որ մէկուն մեղքը 23
թողուք՝ թողուած ըլլայ անոնց. թէ որ
մէկունը բռնէք՝ բռնուած ըլլայ։
Բայց Թովմաս տասնըերկուքէն մէկը՝ 24
Երկուորեակ ըսուածը, անոնց հետ չէր՝

Digitized by Google

25 ներքևը Յիսուս եկաւ ։ Միւսոյն աշակերտ-
ները կ'ըսէին իրեն՝ թէ Տէրը տեսանք ․
ան ալ ըսաւ անոնց ․ Թէ որ իր ձեռքե-
րուն վրայ բևեռներուն նշանը չտեսնեմ ,
ու մատըս բևեռներուն տեղը չդնեմ ,
և իմ ձեռքս անոր կողը չդնեմ ; չեմ
հաւատար ։

26 Ութ օրէն ետև դարձեալ աշակերտ-
ները ներսն էին , Թովմասն ալ անոնց
հետ ․ եկաւ Յիսուս դռները գոց ըլլալով ,
ու կայնեցաւ անոնց մէջտեղը՝ և ըսաւ ։
27 Ողջոյն ձեզի ։ Ետքը ըսաւ Թովմասին ․
Բեր մատդ ու դիր հոս ; և նայէ՝ իմ
ձեռքերս ; ու բեր քու ձեռքդ՝ և խոթէ
իմ կողս , ու մի՛ ըլլար անհաւատ , հա-
28 ւատացեալ եղիր ։ Պատասխան տուաւ
Թովմաս և ըսաւ անոր ․ Իմ Տէրս և իմ
29 Աստուածս ։ Յիսուս ըսաւ անոր ․ Թովմա՛ս
քանի որ զիս տեսար ու հաւատացիր ;
երանի՛ անոնց որ տեսած չեն՝ ու կը
հաւատան ։

30 Յիսուս շատ ուրիշ նշաններ ալ ըրաւ
իր աշակերտներուն առջին , որ աս գրքին
31 մէջ գրուած չէ ։ Հապա աս՝ ասոնց-
քան գրուեցաւ , որ հաւատաք թէ Յիսուս
ոք Քրիստոս է Աստուծոյ Որդին ․ և որ
հաւատալով յաւիտենական կեանքը ըն-
դունիք անոր անունովը ։

ԳԼ. ԻԱ

1 Ասկէ ետև Յիսուս նորէն յայտնեց իր
աշակերտներուն յայտնեց Տիբերիայի ծո-

ծովին եզերքը . և ասանկ յայտնեց ։ Մէկ- 2
տեղ էին Սիմոն Պետրոս , ու Թովմաս՝
Երկուորեակ ըսուածը , և Նաթանայէլ՝
որ Գալիլեացւոց Կանա քաղաքէն էր , ու
Զեբեդէոսի որդիքը՝ և աշակերտներէն
ուրիշ երկուքն ալ ։ Սիմոն Պետրոս ըսաւ 3
անոնց . Ես ձուկ բռնելու կ'երթամ ։ Ը-
սին անոր . Մենք ալ կու գանք քեզի
հետ . գացին ու մտան նաւը , և այն գի-
շերը բան մը չբռնեցին ։ Երբոր առտու 4
եղաւ՝ Յիսուս ծովին եզերքը կայներ էր ,
բայց աշակերտները չճանչցան թէ Յի-
սուսն է ։ Յիսուս ըսաւ անոնց . Տղա՛ք՝ 5
ուտելու բան մը ունի՞ք . պատասխան
տուին և ըսին իրեն . Ոչ՛ ։ Ըսաւ անոնց . 6
Ուռկաննիդ նաւուն աջ կողմը ձգեցէք ու
պիտի գտնէք . ձգեցին , և ձուկերուն շա-
տութենէն չէին կրնար քաշել ։ Ան աշա- 7
կերտը՝ որ զանիկայ Յիսուս կը սիրէր ,
ըսաւ Պետրոսին . Անիկայ Տէրն է . Սի-
մոն Պետրոս երբոր լսեց թէ Տէրն է ,
զենջակը վրան առաւ , ինչու որ մերկ էր ,
և ինքզինք ծովը նետեց ։ Ու միւս աշա- 8
կերտները նաւովը կու գային . ( ինչու որ
ցամաքէն հեռու չէին , միայն թէ երկու
հարիւր կանգունի չափ , ) ու ուռկանը
ձուկերովը կը քաշէին ։ Երբոր ցամաքը 9
ելան՝ հոն տեղը մէկ վառած կրակ մը տե-
սան , ու վրան ձուկ մը և հաց ։ Յիսուս 10
ըսաւ անոնց . Բերէք այս ձուկերէն որ
դուք հիմա բռնեցիք ։ Սիմոն Պետրոս 11
մտաւ , և ուռկանը ցամաքը կը քաշէր

Digitized by Google

հարիւր յիսունուերեք խոշոր ձուկերով
լեցուն․ և այնչափ բան կար, ու չպատա-
12 ռեցաւ ուռկանը։ Յիսուս ըսաւ անոնց․
Եկէք ճաշ ըրէք․ ու աշակերտներէն մէկն
ալ չէր համարձակեր հարցընելու՝ թէ
Դուն ո՞վ ես․ քանզի որ գիտէին թէ Տէրն
13 է։ Յիսուս եկաւ՝ ու առաւ հացը և անոնց
14 տուաւ, անանկ ալ ձուկը։ Աս երրորդ
անգամն է որ Յիսուս աշակերտներուն
երեւցաւ՝ մեռելներէն յարութիւն առնելէն
ետքը։

15 Ու երբոր ճաշը ըրին, Յիսուս ըսաւ
Սիմոն Պետրոսին․ Սիմո՛ն Յովնանեան որ-
դին՝ զիս ասոնցմէ աւելի կը սիրե՞ս․ ա-
նիկայ ըսաւ անոր․ Այո՛ Տէր, դուն ալ
գիտես որ քեզ կը սիրեմ․ ըսաւ անոր․
16 Արածէ՛ իմ գառնուկներս։ Նորէն ըսաւ
անոր․ Սիմո՛ն Յովնանեան որդին՝ զիս կը
սիրե՞ս․ ըսաւ անոր․ Այո՛ Տէր, դուն
ալ գիտես որ քեզ կը սիրեմ․ ըսաւ ա-
17 նոր․ Արածէ՛ իմ ոչխարներս։ Ըսաւ ա-
նոր երրորդ անգամ․ Սիմո՛ն Յովնանեան
որդին՝ զիս կը սիրե՞ս․ Պետրոս տրտմեցաւ
որ իրեք հեղ իրեն ըսաւ՝ թէ Զիս կը
սիրե՞ս․ և ըսաւ անոր․ Տէր՝ դուն ամէն
բան գիտես, և ամէն բան կը ճանչնաս, և
որ ես քեզ կը սիրեմ․ ըսաւ անոր Յի-
18 սուս․ Արածէ՛ իմ ոչխարներս։ Ճշմարի՛տ
ճշմարիտ կ՚ըսեմ քեզի, որ երբ դուն տղայ
էիր, ինքիրմէդ գօտի կը կապէիր, ու
կ՚երթայիր ուր որ ուզէիր․ բայց երբոր
ծերանաս՝ ձեռքերդ վեր պիտի բռնես, և

Digitized by Google

ու ուրիշները քեզի գօտի պիտի կապեն, ու
պիտի տանին ուր որ չես ուզեր : Աս ըսա- 19
ծը ըսաւ՝ ցուցընելով թէ ինչ մահով
պիտի փառաւորէր զԱստուած. եւ երբոր աս
խօսեցաւ՝ ըսաւ անոր . Իմ ետեւէս եկուր :
Պետրոս դառնալով՝ ու տեսաւ այն աշակերտ- 20
ը՝ որուն որ Յիսուս կը սիրէր, որ հետեւեր
կ'երթար, (որ ընթրիքին ատենը անոր կուրծ-
քը ինկեր եւ ըսեր էր, Տէր ո՞վ է որ քեզ
պիտի մատնէ :) Պետրոս զանիկայ տես- 21
նելով, ըսաւ Յիսուսին. Տէր՝ հապա աս-
անիկայ ի՞նչ պիտի ընէ : Յիսուս ըսաւ ի- 22
րեն. Եթէ որ ես ուզեմ՝ որ ասիկայ կե-
նայ մինչեւ որ ես գամ, քեզի ի՞նչ հոգ է.
դուն իմ ետեւէս եկուր : Ալ աս խօսքը ե- 23
լաւ եղբայրներուն մէջը՝ ու կարծեցին
թէ ան աշակերտը պիտի չմեռնի. սակայն
Յիսուս չըսաւ անոր՝ թէ պիտի չմեռնիս,
հապա թէ որ ես ուզեմ՝ որ ասիկայ կե-
նայ մինչեւ որ ես գամ :

Ասիկայ ան աշակերտն է, որ կը վկայէ 24
աս բաներուս համար, որ գրեց ալ աս
բաները. ու գիտենք որ անոր վկայութիւ-
նը ճշմարիտ է : Բայց ուրիշ շատ բա- 25
ներ ալ կան, որ Յիսուս ըրաւ, որ եթէ
անոնք մէկիկ մէկիկ գրուած ըլլար, կար-
ծեմ թէ աշխարհս ալ հերիք չէր պարու-
նակելու ան գիրքերը որ գրուած ըլլային.

Digitized by Google

# ԳՈՐԾՔ
# ԱՌԱՔԵԼՈՑ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Առաջի պատմութիւնը որ ըրի՝ ով Թէո-
փիլոս, ան ամէն բաներուն վրայ՝ որ Յի-
2 սուս սկսաւ ընել և սորվեցնել, Մինչև
ան օրը՝ որ Հոգւոյն Սրբոյ ձեռքովը պա-
տուէր տուաւ առաքեալներուն, որոնք որ
3 ընտրեր էր, ու համբարձաւ: Որ անոնց
ինքզինքը ցուցուց կենդանի իր չարչա-
րանքներէն ետև՝ շատ հրաշքներով, քառա-
սուն օր անոնց երևնալով, ու Աստուծոյ
4 Թագաւորութեանը վրայ խօսելով: Ու
անոնց հետ մէկտեղ հաց կերած ատենը՝
կ'ապսպրէր անոնց որ Երուսաղէմէն չզա-
տուին, հապա սպասեն Հօրը խոստումին-
5 քին՝ որ ան ինծմէ լսեցիք՝ կ'ըսէր: Ինչու
որ Յովհաննէս ջուրով մկրտեց,
բայց դուք ասկից շատ օրեր չանցած՝
6 Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք: Անոնք
ալ եկան կը հարցընէին իրեն՝ ու կ'ըսէին.
7 Տէր՝ Իսրայէլի Թագաւորութիւնը հիմա
աս ժամանակի՞ս մէջը պիտի հաստատես:
Ըսաւ անոնց. Ձեզի չվերաբերիր ժամե-
րը և ժամանակները գիտնալը, որն որ

Digitized by Google

Հայրը իր իշխանութեան մէջը դրաւ․
Միայն թէ Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ ե- 8
կած ատենը զօրութիւն պիտի առնէք , ու
ինծի համար վկաներ պիտի ըլլաք Երու-
սաղէմին մէջը՝ և բոլոր Հրէաստանի ու
Սամարիայի մէջը՝ և մինչև երկրի ծայ-
րերը ։ Ու աս բաները որ ըսաւ՝ երբոր 9
անոնք կը նայէին , համբարձաւ , ու մէկ
ամպ մը զանիկայ անոնց աչքէն բռնեց ։
Ու երբոր դեռ աչքերնին տնկած դէպ ի 10
երկինքը կը նայէին անոր երթալուն՝ վրայ՝
ահա՛ երկու մարդ երեւցան իրենց՝ ճերմակ
հանդերձներով , Որոնք նաև ըսին․ Ո՛վ 11
Գալիլիացի մարդիկ՝ ինչո՞ւ կայներ դէպ ի
երկինքը կը նայիք․ աս Յիսուսը՝ որ ձեզ-
մէ երկինքը համբարձաւ , անանկ պիտի
գայ՝ ինչպէս , որ տեսաք անոր երկինք եր-
թալը ։ Ան ատենը Ձիթենեաց ըսուած 12
լեռնէն Երուսաղէմ դարձան , որ շաբաթ
օրուան ճամբու չափ մօտ է Երուսաղէմին ։
Ու երբոր ներսը մտան , ելան վերնա- 13
տունը , ուր որ կեցեր բնակարաննին էր․
Պետրոս և Յակոբոս , Յովհաննէս և Անդ-
րէաս , Փիլիպպոս և Թովմաս , Բար-
թուղիմէոս և Մատթէոս , Յակոբոս Ալ-
փէոսեանը ու Շմաւոն Նախանձայոյզը՝
և Յուդա Յակոբեանը ։ Ասոնք ամէնը 14
միաբանութեամբ միշտ աղօթք կ'ընէին
կնիկներուն հետ , ու Յիսուսի մայրը Մա-
րիամին՝ և անոր եղբայրներուն հետ մէկ-
տեղ ։

Digitized by Google

15 Այն օրերը Պետրոս եղբայրներուն
մէջը ելաւ՝ ու ըսաւ. (և հոն հարիւր
քսան հոգիի չափ բազմութիւն կար.)
16 Մարդի՛կ եղբայրներ՝ պէտք էր որ կատա-
րուէր գրուածը, որն որ առաջուց Հոգին
Սուրբ Դաւիթին բերնովը ըսաւ Յուդա-
յին համար՝ որ Յիսուսը բռնողներուն առ-
17 առաջնորդ եղաւ. Ինչու որ անիկայ մեզի
հետ էր մեր համրանքին մէջը, և աս պաշ-
18 տօնէն ալ բաժին ունէր. Ասիկայ ան-
իրաւութեան վարձքովը արտ մը ստացաւ,
և տապալած՝ մէջտեղէն ճեղքուեցաւ, ու իր
19 ամէն փորոտիքը թափեցաւ. Աս
Երուսաղէմ բնակողներուն ամենուն յայտ-
նի եղաւ. մինչև որ իրենց լեզուովը անոր
գեղին անունը Ակեղդամա դրին, որ ըսել
20 է՝ Արեան գեղ. Ինչու որ գրուած է
Սաղմոսաց գրքին մէջը. Անոր բնակա-
րանը աւերակ թող ըլլայ, ու անոր մէջը
բնակող մը չըլլայ, և անոր պաշտօնը ու-
21 րիշը թող առնէ. Արդ պէտք է որ աս
մարդիկներէն՝ որ մեզի հետ եղան ամէն ժա-
մանակը, որ Տէր Յիսուս մեզի մէջ մտ-
22 աւ ու ելաւ, Յովհաննէսին մկրտութ-
ենէն սկսած՝ մինչև այն օրը որ մեզմէն համ-
բարձաւ, անոնցմէ մէկը մեզի հետ վկայ
23 ըլլայ անոր յարութեանը. Եւ երկու հո-
գի կայնեցուցին. Յովսէփը՝ որուն Բար-
սաբայ կը կանչէին, որ Յուստոս ալ կ՚ը-
24 սէր, ու Մատաթիան. Եւ աղօթք ըն-
ելով՝ ըսին. Դուն ո՛վ Տէր՝ որ ամենուն

Digitized by Google

սիրտը գիտես, աս երկուքէն մէկը՝ որն որ
ընտրեցիր, ցուցուր յայտնէ։ Որ աս պաշ- 25
տօնին և առաքելութեան վիճակը առնէ,
որ անկէ Յուդան ինկաւ իր տեղը եր-
թալու։ Եւ անոնց համար վիճակ նետե- 26
ցին, ու վիճակը Մատաթիային ելաւ. և
ան տասնումէկ առաքելոց հետը համրուե-
ցաւ։

## ԳԼ. Բ

Եւ Պենտեկոստէին օրերը լմննալու 1
ատենը՝ ամէնն ալ միաբան մէկտեղ էին։
Ու յանկարծակի երկինքէն ձայն մը եկաւ՝ 2
սաստիկ հովի մը պէս եկած, ու բոլոր
տունը լեցուց՝ ուր որ նստեր էին։ Եւ 3
բաժնուած լեզուներ երևցան իրենց՝ որ-
պէս թէ կրակէ, ու ամէն մէկուն վրայ
նստաւ։ Եւ ամէնն ալ Հոգւով Սրբով 4
լեցուեցան, ու սկսեցին ուրիշ լեզունե-
րով խօսիլ, ինչպէս որ Հոգին իրենց խօ-
սել կու տար։ Ու Երուսաղէմի մէջ բնա- 5
կած Հրեաներ կային՝ աստուածավախ
մարդիկ երկինքին տակը եղած բոլոր ազ-
գերէն ժողվուած։ Եւ երբոր աս ձայնը 6
եղաւ, բազմութիւնը մէկտեղ եկաւ ու
դժուարեցաւ, ինչու որ կը լսէին որ անոնք
իրենց ամէն մէկուն լեզուովը կը խօսէին։
Ամէնքն ալ կը սքանչանային ու կը զար- 7
մանային՝ և մէկզմէկու կ՚ըսէին. Չէ՞ որ
ահա ասոնք ամէնն ալ որ կը խօսին՝ Գալի-
լիեացիներ են. Եւ ի՞նչպէս կը լսենք մենք 8

Digitized by Google

մեր ամէն մէկս լեզուովը՝ որ անոր մէջը
9 ծնած ենք. Պարթեւք ու Մարք և Ելա-
մացիք, և անոնք որ Միջագետք կը բնա-
կին, Հրէաստանի մէջ, և Գամիրքի մէջ,
10 Պոնտոսի մէջ, և Ասիայի մէջ, Փռիւգիայի
մէջ, և Պամփիլիայի մէջ, Եգիպտոսի մէջ,
և Լիբէացիներուն կողմերը, Կիւրենացինե-
րուն հետ՝ և Հռովմայեցի պանդուխտներ,
11 (Հրէաներ ու անոնց դարձածները,)
Կրետացիներ և Արաբացիներ՝ կը լսենք
անոնց խօսքերը որ մեր լեզուներով կը-
12 խօսին Աստուծոյ մեծամեծ բաները։ Ու
սքանչանալովին ամէնն ալ զարմանալով՝ և
իրարու կ'ըսէին. Ի՞նչ պիտի ըլլայ աս։
13 Ու ոմանք ծաղր ընելով կ'ըսէին, թէ Ա-
նոնք նոր գինիով լեցուեր են։
14 Ելաւ Պետրոս տասնումէկներուն հետ
մէկտեղ, ձայնը վերցուց՝ ու խօսեցաւ ա-
նոնց. Ով Հրէաստանցի մարդիկ՝ և
դուք ամէնդ որ Երուսաղէմ կը բնակիք,
աս ձեզի յայտնի՝ ըլլայ, ու ականջ դը-
15 րէք իմ խօսքերուս։ Չէ՛ թէ ինչպէս որ
դուք կը կարծէք, ասոնք գինովցած են.
16 ինչու որ դեռ օրուան իրեք ժամն է. Հա-
պա աս ան բանն է, որ Յովէլ մարգա-
17 րէին ձեռքովը ըսուեցաւ. Եւ պիտի ըլ-
լայ որ ասկէ ետև վերջին օրերը՝ կ'ըսէ
Աստուած, իմ Հոգիէս ամէն մարմինի
վրայ պիտի թափեմ, ու ձեր տղաքը և
ձեր աղջիկները պիտի մարգարէանան, ու
ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի

Digitized by Google

տեսնեն, և ձեր ծերերը երազներ պիտի
տեսնեն. Նաև իմ ծառաներուս վրայ ու 18
իմ աղախիններուս վրայ այն օրերը իմ
Հոգիէս պիտի թափեմ, և պիտի մարգարէ-
րանան։ Ու վերը երկինքը նշաններ 19
պիտի ցուցնեմ, ու վարը երկիրը նշան-
ներ՝ արիւն ու կրակ և մուխի փոթորիկ.
Արեւը խաւար պիտի դառնայ, և լուսինը 20
արիւն, Տէրոջը մեծ ու երեւելի օրը դեռ
չեկած։ Ու պիտի ըլլայ որ ամէն ով որ 21
Տէրոջը անունը կանչէ, պիտի փրկուի։
Ով Իսրայէլացի մարդիկ՝ լսեցէք այս խօս- 22
քերը. Յիսուս Նազովրեցին՝ Աստուծմէ
ձեզի ցուցուած մարդ մը զօրութիւններով ու
նշաններով և հրաշքներով, որ Աստուած
անոր ձեռքովը ըրաւ ձեր մէջը, ինչպէս որ
դուք ալ գիտէք. Զանիկայ Աստուծոյ խոր- 23
հուրդովը և առաջուց գիտնալովը առհա-
մանուած ըլլալով, անօրէններուն ձեռքո-
վը մատնուած փայտի վրայ զամելով
սպաննեցիք. Որ զանիկայ Աստուած յա- 24
րոյց՝ մահուան ցաւերը քակելով. որովհե-
տեւ անկար էր որ ինքը անկէց բռնուի։
Դաւիթ ալ անոր համար կ՚ըսէ. Առաջուց 25
ամէն ատեն Տէրը կը տեսնէի իմ առջեւս,
որ իմ աջ կողմս է, որ չսասանիմ.
Անոր համար ուրախ եղաւ իմ սիրտս՝ և 26
իմ լեզուս ցնծաց, ու իմ մարմինս ալ
յուսով հանգչելու պիտի մնայ։ Ինչու որ 27
իմ անձս դժոխքին մէջը պիտի չթողուս,
և քու Սուրբիդ ապականութիւն տեսնել

Digitized by Google

28 ապականիլ չտաս։ Կենդանութեան ճամբաները ին-
ծի ճանչցուցիր. քու երեսիդ ուրախու-
29 թիւնովը զիս լեցուցիր։ Մարդի՛կ եղ-
բայրներ՝ այնպէս է որ համարձակ զրուցեմ
ձեզի Դաւիթ նահապետին համար, որ
մեռաւ ու թաղուեցաւ. և անոր գերեզ-
30 մանը մինչև այս օրս մեր մէջն է։ Ինչու որ
մարգարէ էր և գիտէր՝ թէ Աստուած հաւա-
տալով երդում ըրաւ իրեն, որ իր որովայ-
31 նին պտուղէն իր աթոռը նստեցընէ. Ին-
քը առաջուց գիտնալով խօսեցաւ Քրիս-
տոսի յարութեանը համար, թէ անոր
հոգին դժոխքը չմնաց, և անոր մարմինը
32 ապականութիւն չտեսաւ։ Այս Յիսուսը
Աստուած յարուց, որ անոր մենք ամենքս
33 ալ վկայ ենք։ Աստուծոյ աջ ձեռքովը
բարձրանալով, ու Հոգւոյն Սրբոյ խոստ-
մունքը Հօրմէն առնելով՝ թափեց աս
ասիկայ, որ դուք հիմա կը տեսնէք և կը լսէք։
34 Ինչու որ Դաւիթ երկինքը չելաւ, բայց
ինքը կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս ըսաւ. Իմ
35 աջ կողմս նստէ՝, մինչև որ քու թշնամի-
ները քու ոտքիդ պատուանդան դնեմ։
36 Ուստի բոլոր Իսրայէլի տունը ճշմարտա-
պէս թող գիտնայ, որ Աստուած անիկայ
Տէր ալ ըրաւ՝ Օծեալ ալ, աս Յիսուսը՝
որ դուք խաչեցիք։
37 Ու ասոնք որ լսեցին՝ իրենց սրտերնուն
մէջը զղջացին, և ըսին Պետրոսին ու մէկա-
լ առաքեալներուն. Մարդի՛կ եղբայր-
38 ներ՝ ինչ ընենք։ Ըսաւ անոնց Պետրոս.

Digitized by Google

Ապաշխարեցէք, ու ձեզմէ ամէն մէկը թող
մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունո-
վը՝ մեղաց թողութեան համար, և Հո-
գւոյն Սրբոյ պարգեւը պիտի ընդունիք։
Քանզի որ այս խոստմունքը ձեզի է, ու ձեր 39
որդւոցը, և ամէն հեռու եղողներուն՝ ո-
րոնք որ մեր Տէր Աստուածը պիտի կան-
չէ։ Դեռ ուրիշ շատ խօսքերով վկայու- 40
թիւն կու բերէր, ու կը յորդորէր զանոնք
և կ'ըսէր. Այս ծուռ ազգէն ինքզինքերնիդ
ազատեցէք։ Անոնք սրտանց ընդունելո- 41
վ անոր խօսքերը՝ մկրտուեցան, և ան
օրը իրեք հազար հոգիի չափ աւելցան։
Եւ միշտ առաքելոց վարդապետութեանը 42
եռանդ էին, և միաբանութեանը, ու հաց
կտրելուն, և աղօթքին։
Եւ ամէն մարդու վրայ վախ ու դող ե- 43
կաւ. և շատ նշաններ ու հրաշքներ առա-
քելոց ձեռքովը կը գործուէին։ Բոլոր 44
հաւատացեալները մէկտեղ էին, և ամէն
բաներնին հասարակաց էր։ Ու ստա- 45
ցուածքնին և ունեցած բաներնին կը ծա-
խէին՝ ու կը բաժնէին անոնց ամենուն,
որուն որ բան մը պէտք ըլլար։ Ամէն օր 46
կանուխ տաճարը կ'երթային միաբանու-
թեամբ, և տուները հացը կը կոտրէին, ու
կերակուրնին կ'ուտէին ուրախութեամբ
և միամիտ սրտով. Աստուած կ'օրհնէին, և 47
բոլոր ժողովուրդին առջևն ալ հաճելի
էին. ու Տէրը օրէ օր կ'աւելցընէր անոնց
փրկուածներուն վրայ։

Digitized by Google

## ԳԼ. Գ.

1 Պետրոս ու Յովհաննէս իններորդ ժա-
մուն աղօթքի ատենը տաճարը կ'ելլէին ։
2 Եւ իր մօրը որովայնէն կաղ ծնած մարդ մը
կար, որ անիկայ ամէն օր կը վերցընէին
տաճարին դրանը քով կը դնէին՝ որ Գե-
ղեցիկ դուռ կ'ըսուէր, տաճարը մտնողնե-
3 րէն ողորմութիւն ուզելու համար ։ Անի-
կայ տեսնելով Պետրոսը և Յովհաննէսը՝
որ տաճարը կը մտնէին, կ'աղաչէր որ ո-
4 ղորմութիւն առնէ ։ Պետրոս Յովհաննէ-
սին հետ մէկտեղ անոր նայեցաւ՝ և ըսաւ.
5 Մեզի՛ նայէ. Ան ալ դէպ'ի անոնց դար-
ձաւ, ու կը յուսար անոնցմէ բան մը առ-
6 նելու ։ Պետրոս ալ ըսաւ. Արծաթ և
ոսկի չունիմ, հապա ի՛նչ որ ունիմ՝ ան
քեզի տամ. Նազովրեցի Յիսուս Քրիս-
7 տոսին անունովը ելի՛ր ու քալէ՛ ։ Եւ անոր
աջ ձեռքէն բռնեց՝ վերցուց զանիկայ, և
շուտ մը անոր ծունկերը ու ոտնաքները
8 զօրացան ։ Եւ վեր ցատկեց ու սկսաւ քա-
լել, և անոնց հետ տաճարը մտաւ. կը
քալէր ու կը ցատկռտէր, և կ'օրհնէր զԱս-
9 տուած ։ Ու բոլոր ժողովուրդը տեսաւ
զանիկայ, որ կը քալէր և կ'օրհնէր զԱս-
10 տուած. Եւ կը ճանչնային թէ անիկայ
էր, որ ողորմութեան համար տաճարին
Գեղեցիկ ըսուած դրանը քով կը նստէր.
ու զարմանքով լեցան ան եղած հրաշքին
վրայ ։

Digitized by Google

Եւ անիկայ որ դեռ Պետրոսը ու Յով- 11
հաննէսը բռներ էր, բոլոր ժողովուրդը
զարմացած վազեցին անոնց քովը այն սրա-
հին մէջը՝ որ Սողոմոնինը կ՚ըսուէր։ Պետ- 12
րոս երբոր տեսաւ, պատասխան տուաւ
ժողովուրդին. Ո՛վ Իսրայէլացի մարդիկ՝
ինչո՞ւ զարմացեր էք ասոր վրայ, կամ
ինչո՞ւ ասանկ կը նայիք մեզի, որպէս թէ
մենք մեր անձին զօրութիւնովը կամ բարե-
պաշտութիւնովը ասոր քալել տուած ըլլանք։
Աբրահամին Աստուածը ու Իսահակին Աս- 13
տուածը և Յակոբին Աստուածը՝ մեր հայ-
րերուն Աստուածը իր Որդին Յիսուսը փա-
ռաւորեց. որ դուք անիկայ մատնեցիք, և
ուրացաք Պիղատոսին առջևը՝ երբոր ինքը
կ՚ուզէր որ թող տայ։ Բայց դուք այն 14
Սուրբը և Արդարը ուրացաք, ու խնդրե-
ցիք որ մարդասպան մարդ մը ձեզի
շնորհէ։ Եւ կենաց Առաջնորդը սպան- 15
նեցիք. որ զանիկայ Աստուած մեռելնե-
րէն յարուց, որուն մենք վկայ ենք։ Եւ 16
անոր անուանը հաւատքովը, անոր անունը
հաստատեց զանիկայ՝ որն որ դուք կը տես-
նէք ու կը ճանչնաք. և այն հաւատքը որ ա-
նով է՝ ասոր առողջութիւնը ասոր տուաւ
ձեր ամենուն առջևը։ Եւ հիմա եղբայր- 17
ներ՝ գիտեմ որ տգիտութեամբ ըրիք, ինչպէս
որ ձեր իշխաններն ալ։ Բայց Աստուած՝ 18
ինչպէս որ առաջուընէ բոլոր մարգարէներուն
բերանովը պատմեց իր Քրիստոսին չարչա-
րանքը, այնպէս ալ կատարեց։ Ուստի 19

Digitized by Google

զղջացէք ու դարձի՛ եկէք, որ մեղքերնիդ
20 ջնջուի. Որ հանգստանալու ատենները
գան Տէրոջը երեսէն, և յառաջմանէ ձեզի
համար սահմանուած Յիսուս Քրիստոսը
21 ղրկէ։ Որ զանիկայ պէտք է որ երկին-
քը ընդունի մինչև ան ատենները՝ որ ամէն
բան հաստատուի. որոնց համար Աստուած
իր սուրբ մարգարէներուն բերնովը խօ-
22 սեցաւ։ Մովսէս մեր հայրերուն ըսաւ,
Թէ Ձեր Տէր Աստուածը ձեզի պէս մար-
գարէ մը պիտի հանէ ձեզի՝ ձեր եղբայր-
ներէն, անոր մտիկ ըրէք ամէն կերպով
23 ինչ որ ձեզի խօսի. Ու պիտի ըլլայ որ
ամէն ո՛վ որ ան մարգարէին մտիկ չընէ,
24 ժողովուրդին մէջէն պիտի կորսուի։ Ու
բոլոր մարգարէները՝ որ Սամուէլէն մինչև
հիմա եկան, խօսեցան և պատմեցին աս
25 օրերուս համար։ Դո՛ւք էք ան մարգա-
րէներուն որդիքը՝ և ան ուխտին, որ
Աստուած մեր հայրերուն հետ ուխտ ըրաւ,
և ըսաւ Աբրահամին. Քու սերունդովդ
պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը։
26 Աստուած իր Որդին առաջ ձեզի համար
յարուց, ու ղրկեց զանիկայ ձեզ օրհնելու,
որ դուք ամէնքդ ձեր չարութիւններէն
դառնաք։

## ԳԼ. Դ.

1 Ու երբոր անոնք ժողովուրդին հետը
կը խօսէին, քահանայապետները ու տա-
ճարին իշխանները՝ և Սադուկեցիները ա-



Digitized by Google

նոնց վրայ հասան , Բարկանալով՝ որ ա- 2
նոնք ժողովուրդը կը սորվեցնէին , և
Յիսուսի միջոցովը մեռելներուն յարու-
թիւնը կը քարոզէին : Ձեռքերնին զար- 3
կին անոնց , ու բանտը դրին զանոնք
մինչև հետևեալ օրը . ինչու որ իրիկուն
էր : Բայց ան խօսքը լսողներէն շատերը 4
հաւատացին , ու մարդոց համրանքը հինգ
հազարի չափ եղաւ :

Եւ եղաւ որ հետևեալ օրը անոնք մէկ- 5
տեղ ժողվեցին իշխանները ու ծերերը և
դպիրները Երուսաղէմի մէջ . Եւ Աննա 6
քահանայապետը՝ և Կայիափան՝ ու Յով-
հաննէսը՝ և Աղեքսանդրոսը , և ան ամէնը
որ քահանայապետի ցեղէ էին : Եւ ա- 7
նոնք մէջերնին կայնեցուցած՝ կը հարցը-
նէին . Ի՞նչ զօրութիւնով կամ ի՞նչ ա-
նունով ըրիք դուք աս բանը : Ան ատենը 8
Պետրոս Հոգւով Սրբով լեցուած՝ ըսաւ
անոնց . Ո՛վ ժողովուրդին իշխանները և
Իսրայէլի ծերերը . Թէ որ արժան է 9
մեզ դատել այսօր տկար մարդու մը եղած
բարիքին համար , որ անով ասիկայ բժըշ-
կուեցաւ , Յայտնի ըլլայ ձեզի ամենուդ , 10
ու բոլոր Իսրայէլի ժողովուրդին , որ
Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունովը՝
որ անիկայ դուք խաչեցիք , որ Աստուած
անիկայ մեռելներէն յարուց , ահա՛ անով
ասիկայ ձեր առջևը բժշկուած կեցեր է :
Անիկայ է ան քարը ձեզմէ շինողներէդ ան- 11
արգուած , որ անկիւնի գլուխ եղաւ :

Digitized by Google

12 Ու ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ ․
ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը
չկայ երկինքին տակը մարդուս տրուած ,
որ անով կարող ըլլանք փրկուելու ։
13 Պետրոսին ու Յովհաննէսին համարձա-
կութիւնը նայելով , և իմանալով որ
տգէտ ու տառանց ուսման մարդիկ են , կը
զարմանային ․ որովհետև կը ճանչնային
14 զանոնք՝ թէ Յիսուսի հետ էին ․ Ու ան
բժշկուած մարդն ալ կը տեսնէին որ անոնց
հետ կայներ էր , ու բան մը չէին կրնար
15 պատասխանել ։ Ու հրամայելով անոնց
որ ատեանէն դուրս ելլեն , իրարու հետ
16 խորհուրդ ըրին , Ու ըսին ․ Ի՞նչ ընենք
աս մարդոցը , ինչու որ ասոնց ձեռքովը
մեծ հրաշք մը եղաւ , որ Երուսաղեմի
մէջ բնակողներուն բոլորին յայտնի է , և
17 մենք չենք կրնար ուրանալ ։ Միայն թէ
ժողովուրդին մէջը ալ աւելի չտարածուե-
լու համար՝ վախ տանք անոնց , որ ան
անունովը մէկմին ալ չըլլայ որ մարդու
18 բան խօսին ։ Ու կանչելով զանոնք՝ պա-
տուէր տուին որ ամենևին չխօսին և չսոր-
19 վեցընեն Յիսուսի անունովը ։ Բայց Պետ-
րոս ու Յովհաննէս պատասխան տուին՝ ու
ըսին անոնց ․ Թէ որ Աստուծոյ առջևը
ուղիղ է որ Աստուծմէ աւելի ձեզի մտիկ
20 ընենք , դուք դատեցէք ։ Բայց մենք ան
որ տեսանք ու լսեցինք՝ չենք կրնար չխօ-
21 սիլ ։ Անոնք վախ տալով թող տուին
զանոնք , ու բան մը չգտնելով թէ ինչ-

Digitized by Google

պէս պատժելնին գտնելով ժողովուրդին հա-
մար. ինչու որ ամէնքն ալ Աստուած կը
փառաւորէին եղած բանին համար։ Վասն 22
զի այն մարդը քառասուն տարիէն աւելի
էր, որուն վրայ այս բժշկութեան հրաշքը
եղաւ։

Եւ անոնք արձակուելով՝ իրենցիններուն 23
քովը եկան, ու պատմեցին ինչ որ քահա-
նայապետները և ծերերը իրենց ըսին։
Անոնք ալ երբոր լսեցին՝ ձայներնին Աս- 24
տուծոյ վերցուցին՝ և ըսին. Ո՜վ մեծ
Տէր Աստուած՝ որ երկինքը ու երկիրը և
ծովը ու բոլոր անոնց մէջի եղածները
ստեղծեցիր, Եւ քու ծառայիդ մեր հօրը 25
Դաւթի բերնովը Սուրբ Հոգիով խօ-
սեցար. Ինչո՞ւ հեթանոսները ամբոխուեցան
եղան, ու ժողովուրդները փուճ բաներ
մտածեցին. Երկրի թագաւորները դէմ 26
կեցան, և իշխանները միաբան ժողվուե-
ցան Տէրոջը հակառակ՝ և իր Օծեալին հա-
կառակ։ Արդարեւ այս քաղաքին մէջը ժող- 27
վուեցան քու սուրբ Որդւոյդ Յիսուսին
վրայ՝ որուն որ դուն օծեցիր, Հերովդէս՝
և Պոնտացի Պիղատոսը ազգերուն հետ՝ ու
Իսրայէլի ժողովուրդներուն հետ, Ընել՝ 28
ինչ որ քու ձեռքդ և կամքդ առաջուընէ
սահմանեց որ ըլլայ։ Եւ հիմա ո՛վ Տէր 29
նայէ՛ անոնց սպառնալիքներուն, ու շնոր-
հէ՛ քու ծառաներուդ որ բոլոր համարձա-
կութիւնով քու խօսքդ խօսին, Ձեռքդ 30
երկնցնելովդ բժշկելու, և քու

սուրբ Որդւոյդ Յիսուսին անուանովը նը-
31 շաններ ու հրաշքներ ըլլալու ։ Եւ երբ-
որ անոնք աղօթք կ՚ընէին՝ շարժեցաւ այն
տեղը՝ ուր որ ժողվուած էին , և ամէնը
Հոգւով Սրբով լեցուեցան , ու Աստուծոյ
խօսքը համարձակ կը խօսէին ։
32 Եւ հաւատացեալներուն բազմութեանը
մէկ սիրտ ու մէկ անձ ունէին , և անոնց-
մէ մէկը չէր ըսեր իր ունեցածին համար
թէ իրն է , հապա բոլոր անոնց բաները
33 հասարակաց էր ։ Եւ շատ զօրութեամբ
առաքեալները վկայութիւն կու տային Տէր
Յիսուս Քրիստոսի յարութեանը համար ,
և անոնց ամենուն վրայ մեծամեծ շնորհքներ
34 կային ։ Եւ անոնցմէ մէկը կարօտութիւն
չունէր ․ վասն զի անոնք որ գեղերու ու
տուներու տէր էին , կը ծախէին՝ և ծա-
35 խուածներուն գինը կը բերէին , Առա-
քեալներուն ոտքը կը դնէին , և ամէն
մարդու կը բաժնէին՝ ինչ որ մէկուն պէտք
36 ըլլար ․ Յովսէփ՝ որ առաքեալներէն
Բառնաբաս ըսուեցաւ , ( որ կը թարգմա-
նուի՝ Մխիթարութեան որդի , ) Ղևտացի
37 էր , ազգով Կիպրացի ․ Ասիկայ մէկ գեղ
մը ունէր , ծախեց ու գինը բերաւ առա-
քեալներուն ոտքը դրաւ ։

## ԳԼ. Ե

1 Բայց մէկ մարդ մը Անանիա անունով ,
իր կնկանը Սափիրայի հետ մէկտեղ՝ ա-
2 գարակ մը ծախեց ։ Եւ անոր գինէն

Digitized by Google

ծածկեց , որ կնիկն ալ գիտէր , ու մէկ
բաժինը բերաւ առաքեալներուն ոտքը
դրաւ ։ Բայց Պետրոս . Անանիա՛ , ինչո՞ւ 3
Սատանան քու սիրտդ լեցուց , որ դուն
Հոգւոյն Սրբոյ սուտ խօսիս , ու գեղին
գինէն խոտես ։ Չէ՞ որ քուկդ էր ան՝ 4
քանի որ կեցեր էր , ու ծախուած ալ
քու իշխանութեանդ տակն էր ։ Ան ի՞նչ
է որ քու սրտիդ մէջ աս բանը դրիր ։ Չէ՛
թէ մարդու՝ հապա Աստուծոյ սուտ խօ-
սեցար ։ Եւ Անանիա աս խօսքերը լսելով՝ 5
ինկաւ , ու հոգին հանեց , և մեծ վախ
ինկաւ ամենուն վրայ՝ որ ասի լսեցին ։ Եւ 6
երիտասարդները ոտքի ելան , ու
պատանեցին անիկայ , և տարին թաղեցին ։
Եւ երեք ժամի չափ վրան անցաւ , 7
ու անոր կնիկը չգիտնալով ինչ որ եղեր
էր՝ ներս մտաւ , Պատասխան տուաւ ա- 8
նոր Պետրոս և ըսաւ . Ըսէ՛ դուն ինծի ,
ան գեղը ա՞յնչափի գինով ծախեցիք ։ Ան
ալ ըսաւ . Այո՛ այնչափի ։ Ու Պետրոս 9
ըսաւ անոր . Ա՛ս ինչ է՝ որ դուք միա-
բանեցաք Տէրոջը Հոգին փորձելու . ա-
հա՛ ան ոտքերը որ քու էրիկդ թաղեցին՝
դրանը քովն են , քեզ ալ դուրս պիտի
հանեն ։ Եւ նոյն կէտին ինկաւ անոր 10
ոտքը , ու հոգին հանեց . երիտասարդնե-
րը ներս մտան՝ անիկայ մեռած գտան ,
ու հանեցին իր էրկանը քովը թաղեցին ։
Եւ մեծ վախ մը ինկաւ բոլոր եկեղեցիին 11
վրայ և ամենուն վրայ՝ որ աս լսեցին ։

Digitized by Google

12 Իսկ առաքեալներուն ձեռքովը շատ
նշաններ ու հրաշքներ կ'ըլլային ժողո-
վուրդին մէջը. և ամէնը միակամ Սողոմո-
13 նի սրահին մէջն էին։ Ու մնացածներէն
մէկը չէր համարձակեր անոնց մօտենալու.
հապա ժողովուրդը կը մեծարէր զանոնք.
14 Իսկ Տէրոջը հաւատացողները ալ աւելի
կը շատնային, բազմութիւն էրիկ մարդոց
15 ու կնիկներու. Անանկ որ՝ հիւանդները
հրապարակները կը հանէին և իրենց պատ-
գարակներովը ու մահիճներովը կը դնէին,
որ Պետրոսին անցնելու ատենը՝ գոնէ ա-
16 նոր շուքը անոնց մէկուն վրայ հասնի։ Ու
քովի քաղաքներէն բազմութիւնը Երու-
սաղէմ կը ժողվուէր. հիւանդները և պիղծ
դևերէն նեղութիւն կրողները կը բերէին,
որոնք ամէնն ալ կը բժշկուէին։
17 Սակայն քահանայապետը և բոլոր իր
հետը եղողները, ու Սադուկեցւոց աղան-
18 դաւորները՝ նախանձով լեցուած. Ու ա-
ռաքեալներուն ձեռք զարկին, և հրապա-
19 րակաւ բանտը դրին զանոնք։ Իսկ Տէ-
րոջը հրեշտակը գիշերով բանտին դռները
բացաւ, ու դուրս հանելով անոնք՝ ըսաւ.
20 Գացէք՝ ու տաճարին մէջը կայնելով՝ ժո-
ղովուրդին խօսեցէք աս կենաց բոլոր խօս-
21 քերը։ Ու երբոր աս լսեցին, տաճարը
մտան առտուանց, ու կը սորվեցընէին.
քահանայապետը եկաւ ու իր հետը եղող-
ները՝ ժողովքը միասեղ կանչեցին, ու
Իսրայէլի որդւոցը բոլոր ծերակոյտը. և

ձեռք խրկեցին բանտը՝ որ զանոնք բերեն ։
Ու երբոր սպասաւորները եկան , զանոնք 22
բանտին մէջ չգտնելով՝ ետ դարձան պատ-
մեցին , Ու ըսին , Թէ Բանտը ամէն 23
զգուշութիւնով գոց գտանք , ու պահա-
պանները որ դրանը քովը կեցեր էին ,
բացինք՝ և ներսը մէկը չգտանք ։ Երբոր 24
այս բաները լսեցին տաճարին իշխանները
ու քահանայապետները՝ կը զարմանային
անոնց համար՝ թէ ինչ պիտի ըլլայ ասի ։
Ու մէկը եկաւ պատմեց անոնց , Թէ Ա- 25
հա՛ այն մարդիկը որ բանտը դրիք , տա-
ճարը կեցեր են և ժողովուրդը կը սորվեց-
նեն ։ Այն ատենը իշխանը սպասաւոր- 26
ներովը մէկտեղ գնաց զանոնք բերաւ , առ-
անց բռնութեան . քանզի որ ժողովուրդէն
կը վախնային որ չքարկոծուին ։ Ու բերին 27
զանոնք ատեանը կայնեցուցին . քահանա-
յապետը անոնց հարցուց , Ու ըսաւ . 28
Չէ՞ որ պատուիրել պատուիրեցինք ձեզի , որ
այն անունովը չսորվեցնէք . և ահա՛ Եր-
ուսաղէմը ձեր ուսմունքովը լեցուցիք , և
այն մարդուն արիւնը մեր վրայ կ'ուզէք
ձգել ։
Պատասխան տուաւ Պետրոս և ուրիշ 29
առաքեալները՝ ու ըսին . Աստու-
ծոյ հնազանդիլ պէտք է քան թէ
մարդոց ։ Մեր հայրերուն Աստուածը 30
Յիսուսը յարոյց , որ անիկայ դուք փայ-
տէն կախելով սպաննեցիք ։ Զանիկայ Աս- 31
տուած իր աջ ձեռքովը Առաջնորդ ու

Digitized by Google

Փրկիչ ըլլալու բարձրացուց, Իսրայէ-
լին ապաշխարութիւն և մեղաց թողու-
32 թիւն տալու ։ Իսկ մենք ասոր բաներուն
համար վկաներն ենք, ու Սուրբ Հոգին՝
որն որ Աստուած իրեն հնազանդողնե-
33 րուն տուաւ ։ Անոնք ալ երբոր լսեցին՝
խիստ կատղեցան, ու կը խորհէին որ զա-
նոնք մեռցընեն ։
34 Բայց ատեանին մէջ փարիսեցի մը ոտքի
վրայ ելլալով՝ որուն անունը Գամաղիէլ էր,
օրինաց վարդապետ մը՝ բոլոր ժողովուր-
դին առջեւ պատուաւոր մէկը . Հրամայեց
ըսաւ որ քիչ մը ան մարդիկը դուրս տա-
35 նին ։ Ու ըսաւ անոնց . Իսրայէլացի՛
մարդիկ՝ դուք ձեզի զգուշացէք, այս մար-
դոցը վրայով թէ ինչ պիտի ընէք ։
36 Ու օրերէս առաջ Թեւդասը ելաւ, իրեն
համար ըսելով՝ թէ ինքը երեւելի մէկ մըն
է, ու հաւանեցաւ չորս հարիւրի չափ
մարդիկ իրեն յարեցան . որ ինքը սպան-
նուեցաւ, և ան ամէնն ալ որ իրեն հետ
միաբաններ էին՝ քակուեցան, ու ոչինչ
37 եղան ։ Անոր ետեւէն Յուդա Գալիլեա-
ցին ելաւ աշխարհագիր եղած օրերը, և
շատ ժողովուրդ իր կողմը ձգեց . ան ալ
կորսուեցաւ, և ամէնն ալ որ իրեն հնա-
38 զանդեր էին՝ ցիրուցան եղան ։ Իսկ հիմա
ձեզի կ'ըսեմ . Այս մարդոցմէն մեկդի՛ կե-
ցէք, ու թող տուէք զանոնք, քանզի որ
եթէ այս խորհուրդը կամ գործը մարդոցմէ
39 է՝ կը քակուի . Հապա թէ որ Աստուծ-

Digitized by Google

մէ՛ երբեք չէք կրնար աւրել զանիկա. չըլլայ թէ Աստուծոյ դէմ կռուող գտնուիք: Համաձայնութիւն տուին անոր. ու առաքեալ- 40
ները կանչելով՝ ծեծեցին, և պատուիրեցին որ մէյ մըն ալ Յիսուսի անունովը չխօսին, ու զանոնք թող տուին. Անոնք ալ ատեանին դիմացէն խնդալով 41
գացին. ինչու որ Տէրոջը անուանը համար անարգանք կրելու արժանաւոր եղան: Իսկ ամէն 42
օր տաճարը ու տուներուն մէջ չէին դադրեր Յիսուս Քրիստոսը քարոզելէն և սորվեցընելէն:

## ԳԼ. Զ.

Իսկ այն օրերը աշակերտները որ շատցան՝ 1
Յոյներուն կողմէն տրտունջ մը ելաւ Եբրայեցիներուն վրայ. ինչու որ իրենց որբևայրիները ամէն օրուան կերակրի ծառայութեան մէջ կ'անարգուէին: Տասն- 2
ներկուքը կանչեցին աշակերտներուն բազմութիւնը՝ և ըսին. Աղէկ բան չէ որ մենք Աստուծոյ խօսքը ձգենք, ու սեղաններուն ծառայենք: Ե՛ղբայրներ՝ ձեզմէ 3
եօթը հոգի ընտրեցէք՝ բարի վկայուած, Հոգւով Սրբով և իմաստութիւնով լեցուն, որ անոնք այս գործին վրայ դնենք:
Իսկ մենք աղօթքի և պաշտօնի ու Աստու- 4
ծոյ խօսքին պարապինք: Այս խօսքը 5
բոլոր բազմութեան առջևը աղէկ երևցաւ. ու ընտրեցին Ստեփանոսը՝ հաւատքով և Հոգւով Սրբով լեցուն մարդ մը, ու

Digitized by Google

Փիլիպպոսը, և Պրոխորոնը, ու Նիկա-
նորը, և Տիմոնը, ու Պարմենասը, և
6 Նիկողայոս նորադարձ Անտիոքացին։ Ա-
սոնք առաքեալներուն առջևը կայնեցու-
ցին, և աղօթք ընելով՝ ձեռքերնին ա-
7 նոնց վրայ դրին։ Ու Աստուծոյ խօսքը
կ'աճէր, և աշակերտներուն համրանքը խիստ
կը շատնար Երուսաղէմին մէջ. ու բազ-
մաթիւ քահանաներ հաւատքին կը հնա-
զանդէին։

8 Ստեփաննոս՝ որ շնորհքով ու զօրու-
թիւնով լեցուած մարդ մըն էր, մեծ
հրաշքներ և նշաններ կ'ընէր ժողովուրդին
9 մէջ։ Անոնք ան ժողովարանէն՝ որ Լի-
բերտացւոց ժողովարան կ'ըսուէր, ու Կիւ-
րենացւոց՝ ու Աղեքսանդրացւոց, և անոնք
որ Կիլիկիայէն ու Ասիայէն էին, ելան
Ստեփաննոսին հետը վիճաբանութիւն ը-
10 նելու. Բայց չէին կրնար դէմ դնել անոր
իմաստութեանը ու Հոգիին, որով կը խօ-
11 սէր։ Այն ատենը քանի մը մարդ դրդե-
ցին՝ որ ըսեն, Թէ Մենք լսեցինք որ
անիկայ հայհոյական խօսքեր կը խօսի
12 Մովսէսին ու Աստուծոյ դէմ։ Նա գրգ-
ռեցին ժողովուրդը՝ ու ծերերը՝ և դպիր-
ները, ու վրան հասան զինքը բռնեցին՝ և
13 ատեանը տարին։ Նաև սուտ վկաներ կայ-
նեցուցին՝ որ կ'ըսէին. Այս մարդը չդա-
դարիր հայհոյական բաներ խօսելէն սուրբ
14 տեղին և օրէնքին դէմ։ Լսեցինք անկէց
որ կ'ըսէր, Թէ Յիսուս Նազովրեցին ինքը

Digitized by Google

աս տեղը պիտի քակէ, ու պիտի փոխէ
Մովսէսին մեզի տուած օրէնքը։ Եւ ա- 15
տեանին նստողներուն ամէնը, երբոր անոր
նայեցան՝ անոր երեսը հրեշտակի երեսի
պէս տեսան։

## ԳԼ. Է

Քահանայապետը ըսաւ, Թէ իրաւցընէ՞ 1
աս ասանկ է։ Ան ալ ըսաւ. Մարդիկ 2
եղբայրներ ու հայրեր՝ մտիկ ըրէք.
Փառաց Աստուածը մեր հօրը Աբրահամին
երեւցաւ, քանի որ Միջագետք մէջ էր,
դեռ առաջ Խառանի մէջ չբնակեցուցած.
Եւ ըսաւ անոր. Ելի՛ր քու երկրէդ ու քու 3
ազգէդ, ու եկո՛ւր այն երկիրը՝ որ ես քե-
զի պիտի ցուցընեմ։ Ան ատենը Քաղդէ- 4
ացւոց երկրէն ելաւ՝ Խառան բնակե-
ցաւ. և անոր հօրը մեռնելէն ետեւ՝ ան-
կէց փոխադրեց, ու ատոր բնակելուն պէս աս
երկիրը բնակեցուց զանիկայ, ուր որ
դուք հիմա բնակեր էք։ Եւ անոր մէջ՝ 5
ժառանգութիւն չտուաւ անոր, ո՛չ ալ
ոտքի քայլ մը տեղ, բայց խոստացաւ
որ անիկայ իրեն տայ բնակելու, և իրմէ
ետեւ իր սերունդին, երբոր դեռ ինքը որ-
դի չունէր։ Ասանկ խօսեցաւ Աստուած՝ 6
Թէ Անոր սերունդը օտար երկրի մէջ
պանդուխտ պիտի ըլլայ, ու պիտի ծա-
ռայեցընեն անիկայ՝ և չարչարեն չորս հա-
րիւր տարի։ Եւ ան ազգը՝ որուն որ պի- 7
տի ծառայեն, ես պիտի դատեմ, ըսաւ

Digitized by Google

Եղանակած է և անիկէ անոր պիտի կռուի՝ ու
8 անոր տեղը զինաւորութեան։ Եւ անոնց Թէրթա-
ամիջներն ու խոր տուրա. ու նաև Եգիպտո-
սոսի Խոսհանքը ձևա, և Թլփատուց զա-
նիկայ ուխտերարը օրը. Խոտահանքն. այլ
Թագաւորը ձեռա, Թագաւորն այլ տարաներկրա
9 նաահատարակաները։ Եւ նահատակակաները Թագա-
ւորներին փրկայ նախատածեկով՝ Եգիպտոսա զոր-
քավորելու ծառայեցին. բայց Աստուած անոր
10 ձեռն էր։ Եւ որդեկց պատերազմ իր ամէն
եկեղեցութեանցին, և անոր զօրքերը ու իր
մատուցածութեան տուաւ Եգիպտացւոց փառ-
քաւոր թագաւորութեան տեղերը. ան այլ զօր-
ութեան իրենց դրան Եգիպտացւոց՝ և իր
11 բոլոր տանը վրայ։ Եւ սով մը եկաւ
Եգիպտոսի բոլոր երկիրը՝ ու Քանանու
մէջ, ու մեծ նեղութիւն, և մեր հայրե-
12 րը ուտելիք չէին գտներ։ Եւ Յակոբ
երբոր լսեց՝ թէ Եգիպտոս ուտելիք կը
գտնուի, առջի անգամին մեր հայրերը
13 խրկեց։ Եւ երկրորդ անգամին Յովսէփ
իր եղբայրներուն ճանչցուեցաւ, ու
իր ազգը Փարաւոնին յայտնի եղաւ։
14 Յովսէփ խրկեց ու կանչեց իր հայրը
Յակոբը՝ և բոլոր ազգականները, եօթա-
15 նասուն և հինգ հոգի։ Եւ Յակոբ Եգի-
պտոս իջաւ՝ և մեռաւ, ինքը և մեր
16 հայրերը։ Եւ Սիւքեմ տարուեցան՝ ան
այրին մէջը դրուեցան, որն որ Աբրահամ
արծաթի գնով առեր էր Եմմորի զաւակ-
17 ներէն՝ Սիւքեմի մէջ։ Երբոր մօտեցաւ

Digitized by Google

խոստմունքին ատենը, որ Աստուած խոստ-
ացեր էր Աբրահամին, ժողովուրդը ա-
ճեցաւ և խիստ շատցաւ Եգիպտոսի մէջ.
Մինչև որ Եգիպտոսի մէջ ուրիշ թա- 18
գաւոր մը ելաւ՝ որ Յովսէփը չէր ճանչ-
նար։ Անիկայ հնարք բանեցուց մեր 19
ազգին դէմ ու չարչարեց մեր հայրերը՝
անոնց տղաքը դուրս ձգել տալով որ չապ-
րին։ Այն ժամանակը Մովսէս ալ ծնաւ, 20
և Աստուծոյ առջևը գեղեցիկ էր, որ իր
հօրը տունը մեծցաւ երեք ամիս։ Եւ երբ 21
որ անիկայ ձգեցին՝ Փարաւոնին աղջիկը
անիկայ վերցուց, և իրեն իբրև որդեգիր
մեծցուց։ Ու Մովսէս՝ Եգիպտացւոց 22
բոլոր իմաստութիւնովը վարժուեցաւ, և
ինքը զօրաւոր էր իր խօսքերովը ու գործ-
քերովը։ Երբոր իր քառասուն տարեկան 23
ժամանակը լեցուեցաւ, իր սիրտը ինկաւ
իր եղբայրներուն՝ Իսրայէլի որդիներուն
քովը պտըտիլ։ Ու Իսրայէլացիներէն 24
մէկը զրկուած տեսնելով՝ դատը ելաւ,
և զրկուածին վրէժը առաւ՝ այն Եգիպտա-
ցին զարնելով։ Կը կարծէր թէ իր 25
եղբայրները պիտի իմանային՝ որ Աստուած
իր ձեռքովը իրենց ազատութիւն տալու
էր, բայց անոնք չիմացան։ Եւ հետևեալ 26
օրը անոնց դիմացը ելաւ՝ երբոր կը
կռուէին. ու խաղաղութեան ընելու յոր-
դորեց անոնք, ըսելով. Մարդիկ՝ դուք
եղբայրներ էք, ինչո՞ւ մէկզմէկ կը զրկէք։
Բայց ան որ ընկերը կը զրկէր, մերժեց 27

Digitized by Google

զանիկայ՝ և ըսաւ. Ո՞վ քեզ մեր վրայ
28 իշխան ու դատաւոր դրաւ։ Զի՞ս ալ
սպաննել կ՚ուզես, ինչպէս որ երէկ Եգիպտա-
29 ցին սպաննեցիր։ Իսկ Մովսէս այս
խօսքէն փախաւ, ու Մադիամու երկրին
մէջ օտարական եղաւ, ուր որ երկու որ-
30 դի ծնաւ։ Եւ երբոր քառասուն
տարի անցաւ՝ Տէրոջը հրեշտակը Սինայ
լերան անապատին մէջ մորենիին կրակին
31 բոցին երևցաւ իրեն։ Մովսէս ալ երբոր
տեսաւ՝ զարմացաւ այն տեսիլքին վրայ.
ու երբոր մօտեցաւ զննելու, Տէրոջը ձայ-
32 նը եկաւ, որ կ՚ըսէր. Ես եմ քու հայ-
րերուդ Աստուածը, Աբրահամին ու Իս-
սահակին և Յակոբին Աստուածը. Մով-
սէս ալ դողալով բռնուած՝ չէր համարձակեր
33 նայելու։ Ու Տէրը ըսաւ անոր. Հանէ՛
ոտքիդ կօշիկները, վասն զի այն տեղը՝ որ
34 դուն կայներ ես, սուրբ երկիր է։ Ի՛րա-
ւցնէ տեսայ իմ ժողովուրդիս թշուառ չար-
չարանքը Եգիպտոսի մէջ, ու լսեցի ա-
նոնց հառաչանքը, և իջայ զանոնք ազա-
տելու. ուստի եկուր քեզ Եգիպտոս
35 ղրկեմ։ Այն Մովսէսը որ ուրացան և կ՚ը-
սէին. Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դա-
տաւոր դրաւ, Աստուած անիկայ իշխան
ու փրկիչ ղրկեց այն հրեշտակին ձեռքովը՝
36 որ մորենիին մէջը իրեն երևցաւ։ Անի-
կայ հանեց զանոնք՝ նշաններ և հրաշքներ
ընելով Եգիպտացւոց երկիրը ու Կարմիր
ծովը, և անապատին մէջ քառասուն տա-

Digitized by Google

րին։ Ան Մովսէսն է՝ որ ըսաւ Իսրայէլի 37
որդւոցը. Ձեր Տէր Աստուածը ձեր եղ-
բայրներէն իմ պէս մարգարէ մը պիտի
հանէ ձեզի, անոր մտիկ ըրէք։ Ասիկայ 38
ան է որ անապատը ժողովքին մէջն եր
հրեշտակին հետը, որ Սինա լերան վրայ
խօսակցեցաւ անոր հետ՝ ու մեր հայրերուն
հետ. որ կենդանի պատգամները առաւ
մեզի տալու։ Որուն մեր հայրերը չուզե- 39
ցին մտիկ ընել, հապա մերժեցին,
և իրենց սրտերովը Եգիպտոս դարձան.
Եւ ըսին Ահարոնին. Մեզի աստուածներ 40
շինէ որ մեր առջևէն երթան. քանզի որ
ան Մովսէսը՝ որ մեզ Եգիպտոսէն երկ-
րէն հանեց, չենք գիտեր ինչ եղաւ ի-
րեն։ Եւ այն օրերը որթ մը շինեցին, 41
ու կուռքերուն զոհ մատուցին, և կ՚ուրա-
խանային իրենց ձեռացը գործքերուն վը-
րայ։ Աստուած ալ երես դարձուց, ու 42
թողուց իրենք որ երկինքի զօրութեանը
պաշտեն. ինչպէս որ գրուած է մարգա-
րէներուն գիրքին մէջ. Միթէ անա-
պատին մէջը քառասուն տարի զոհեր ու
պատարագնե՞ր մատուցիք ինծի՝ ո՛վ Իս-
րայէլի տունը։ Եւ Մողոքին վրանը ա- 43
ռիք, և ձեր Հռեմփա աստուածին աստ-
ղը, այն պատկերները որ շինեցիք անոնց
երկրպագութիւն ընելու. ու ես ալ ձեզ
Բաբելոնէն անդին պիտի տանիմ։ Վկա- 44
յութեան խորանը անապատին մէջ մեր
հայրերուն հետն էր, ինչպէս որ Մովսէ-

Digitized by Google

45 սին հետ խօսողը հրաման ըրաւ՝ որ տեսած
օրինակին պէս շինէ զանիկայ։ Ու մեր
Հայրերն ալ Յեսուին հետը առին, բերին
զանիկայ ան ազգերուն տեղուանքը, որ-
րոնք Աստուած վռնտեց մեր Հայրերուն
46 առջեւէն՝ մինչեւ Դաւիթին օրերը. Որ
Աստուծոյ առջեւը շնորհք գտաւ, և ու-
զեց որ Յակոբին Աստուծոյն բնակարան
47 մը գտնէ։ Ու Սողոմոն անոր տուն մը
48 շինեց։ Սակայն չէ՝ թէ Բարձրեալը ձեռ-
քով շինուած տաճարներու մէջ կը բնակի.
49 հապա ինչպէս որ մարգարէն կ'ըսէ. Երկ-
կինքը իմ աթոռս է, ու երկիրը՝ իմ ոտ-
քիս պատուանդանը. ինծի ի՞նչ տուն շինե-
լու էք, կ'ըսէ Տէրը. կամ՝ ի՞նչ տեղ
50 պատրաստէք ինծի հանգչելու. Չէ՞ որ
51 այս ամէնը իմ ձեռքս շիներ է։ Ո՛վ խիստ
պարանոցներ՝ ու սրտով և ականջով անթլփա-
տուածներ, դուք ամէն ատեն Հոգւոյն
Սրբոյ հակառակ կը կենաք, ինչպէս որ
52 ձեր Հայրերը՝ անանկ ալ դուք։ Մար-
գարէներէն ո՞րը չհալածեցին ձեր Հայրերը,
ու սպաննեցին զանոնք՝ որ առաջուց պատ-
մեցին ան Արդարին գալուն համար. որ
դուք հիմա անոր մատնողները և սպան-
53 նողները եղաք. Դուք որ, օրէնք առիք
հրեշտակներուն ձեռքով տրուած հրամա-
նովը ու չպահեցիք։
54 Ու երբոր այս բաները լսեցին՝ սրտեր-
նուն մէջ կը կատղէին, ու ակռանին
55 անոր վրայ կը կրճտցնէին. Իսկ ինքը

Digitized by Google

Հոգւով Սրբով լեցուած՝ երկինքը նայե-
ցաւ, եւ տեսաւ Աստուծոյ փառքը՝ ու
Յիսուսն ալ, որ Աստուծոյ աջ կողմը
կայներ էր, եւ ըսաւ. Ահա՛ կը տեսնեմ
երկինքը բացուած, ու Որդին մարդոյ
որ Աստուծոյ աջ կողմը կը կենայ։ Մեծ 56
ձայնով կանչըռտելով ականջներնին գո-
ցեցին, եւ ամէնքը մէկէն վազեցին անոր
վրայ։ Ու քաղաքէն դուրս հանելով 57
կը քարկոծէին զանիկայ. եւ վկաները իրենց
լաթերը պահ կը դնէին երիտասարդի մը
ոտքին քովը, որ Սաւուղ կ՚ըսուէր։ Ու 58
կը քարկոծէին Ստեփանոսը, որ աղօթք
կ՚ընէր ու կ՚ըսէր. Տէր Յիսուս ընդունէ
իմ հոգիս։ Ծունկի վրայ եկաւ եւ բարձր 59
ձայնով աղաղակեց. Տէր՝ ասոնց մեղքը մի՛
սեպեր անոնց. ու երբոր աս ըսաւ, ննջեց։
Սօղոս ալ կամակից էր անոր սպաննուե-
լուն։

## ԳԼ. Ը.

Իսկ ան օրը մեծ հալածում եղաւ եկեղե- 1
ցիին վրայ Երուսաղէմի մէջ, եւ առաք-
եալներէն ՚ի զատ ամէնն ալ ցրուեցան
եղան Հրէաստանի գիւղերը ու Սամարիա-
յի մէջ։ Ու աստուածավախ մարդիկ 2
Ստեփանոսը վերցուցին, եւ անոր վրայ
մեծ ողբ ըրին։ Բայց Սօղոս եկեղեցիին 3
շատ վնաս կու տար, տուները կը մտնէր.
էրիկ մարդ ու կնիկ մարդ կը քաշէր
բանտը դնել կու տար։

Digitized by Google

4 Իսկ այն ցիրուցան եղածները կը պտը-
5 տէին ու խօսքը կը քարոզէին։ Փիլիպ-
պոս ալ Սամարացւոց քաղաքը իջնելով
6 Քրիստոսը կը քարոզէր անոնց։ Ժո-
ղովուրդները ամէնքը մէկէն Փիլիպպոսի ը-
սածներուն ականջ կը դնէին, անոր ըրած
7 նշանները լսելով և տեսնելով։ Վասն զի
շատերը որ պիղծ դևերէն բռնուած էին,
մեծ ձայնով կը կանչուըտէին դևերը ու
8 կ'ելլէին։ Ու շատ անդամալոյծներ և
կաղեր կը բժշկուէին. ու մեծ ուրախու-
9 թիւն եղաւ այն քաղաքին մէջը։ Բայց
Սիմոն անունով մարդ մը՝ որ առաջուց այն
քաղաքին մէջն էր, մոգութիւն կ'ընէր՝ ու
Սամարացւոց ազգը կը զարմացընէր, ա-
նանկ ըսելով իրեն համար թէ մեծ մէկ
10 մըն է։ Որ անոր կը նայէին ամէնն ալ
պզտիկէն մինչև մեծերը, և կ'ըսէին. Ա-
սիկայ Աստուծոյ մեծ ըսուած զօրութիւնն
11 է։ Շատ ժամանակէ 'ի վեր կախար-
դութիւններով անոնք զարմացընելուն
12 համար՝ իրեն կը նայէին։ Բայց երբոր
Փիլիպպոսին հաւատացին՝ որ Աստուծոյ
թագաւորութեանը ու Յիսուս Քրիստոսի
անուանը վրայօք կը քարոզէր, կը մկըր-
տուէին ամէնն ալ էրիկ մարդիկ ու կնիկ
13 մարդիկ։ Իսկ Սիմոն ինքն ալ հաւատաց,
ու մկրտուելով միշտ Փիլիպպոսին հետն
էր. ու տեսնելով այն նշանները և մեծ
զօրութիւնները որ կ'ըլլային, կը զարմա-
14 նար։ Առաքեալք Երուսաղէմի մէջ եղող

Digitized by Google

առաքեալները՝ երբոր լսեցին թէ Սամա-
րիա ալ Աստուծոյ խօսքը ընդունեցեր ,
Պետրոսը ու Յովհաննէսը անոնց ղրկե-
ցին ։ Անոնք իջան՝ աղօթք ըրին անոնց 15
վրայ , որ Սուրբ Հոգին առնեն ։ (Ինչու 16
որ մինչեւ այն ատենը դեռ անոնց մէկուն
վրայ իջած չէր , հապա միայն Տէր Յի-
սուսի անունովը մկրտուած էին ։) Այն ա- 17
տենը ձեռքերնին դրին անոնց , վրայ ու
Սուրբ Հոգին կ'առնէին ։ Երբոր տեսաւ 18
Սիմոն՝ թէ առաքեալները անոնց վրայ
ձեռք դնելով՝ Սուրբ Հոգին կը տրուի ,
անոնց ստակ բերաւ և ըսաւ ։ Ինծի՝ ալ 19
աս իշխանութիւնը տուէք՝ որպէս զի որու
վրայ ձեռք դնեմ՝ անիկայ Սուրբ Հոգին
առնէ ։ Բայց Պետրոս ըսաւ անոր ։ Քու 20
արծաթդ քեզի հետ թող կորսուի ։ Ինչու
որ Աստուծոյ պարգեւը կարծեցիր թէ ստա-
կով պիտի առնես ։ Դուն աս բանին մէ- 21
ջը մասն ու բաժին չունիս ։ Ինչու որ քու
սիրտդ Աստուծոյ առջեւը շիտակ չէ ։ Դուն 22
աս քու չարութենէդ ապաշխարէ՝ եկուր , ու
Տէրոջը աղաչէ՝ ։ Թերեւս ներուի քեզի՝ քու
սրտիդ չար խորհուրդները ։ Ինչու որ կը 23
քեզ մաղձի դառնութեան մէջ , և անի-
րաւութեան կապերու մէջ կը տեսնեմ ։
Սիմոն պատասխան տուաւ և ըսաւ ։ 24
Դուք ինծի համար աղաչեցէք Տէ-
րոջը , որ աս ձեր ըսածներէն իմ վրաս
բան մը չգայ ։ Անոնք ալ վկայութիւն 25
տալով՝ Աստուծոյ խօսքը խօսեցան , ու

Digitized by Google

դարձան Երուսաղէմ . և Սամարացւոց
շատ գիւղերուն մէջը աւետարանը կը քա-
րոզէին ։
26 Տէրոջը հրեշտակը Փիլիպպոսին խօսե-
ցաւ և ըսաւ . Ելի՛ր ու գնա՛ դուն հա-
րաւային կողմը, այն ճամբան՝ որ Երու-
սաղէմէն դէպ 'ի Գազա կ'իջնէ, որ անա-
27 պատ տեղ մըն է ։ Ան ալ ելաւ գնաց .
և ահա՛ Եթէովպացի ներքինի մարդ մը՝
Եթէովպացւոց Կանդակա անուն թա-
գուհիին մեծ զօրաւորը, որ ինքը անոր
բոլոր գանձերուն վրայ էր . որ Երուսա-
ղէմ եկեր էր երկրպագութիւն ընելու .
28 Ու անկէ ետ դարձած ու իր կառքը նըս-
տած՝ Եսայի մարգարէին գիրքը կը կար-
29 դար ։ Հոգին Սուրբ ըսաւ Փիլիպպոսին .
Առաջ գնա, և այս կառքին մօտեցիր ։
30 Փիլիպպոս ալ առաջ վազելով՝ մտիկ կ'ը-
նէր որ Եսայի մարգարէին գիրքը կը կար-
դայ, և ըսաւ . Կարդացածդ կը հասկը-
31 նա՞ս արդեօք ։ Ան ալ ըսաւ . Ինչո՞ր
կրնամ հասկընալ, թէ որ մէկը ինծի չա-
ռաջնորդէ . ու աղաչեց Փիլիպպոսին՝ որ
32 ելլէ, իր քովը նստի ։ Ու ան գրքին
մէջը կարդացած գլուխը աս էր . Ոչխարի
պէս մորթուելու տարուեցաւ, ու իր
խուզողին առջևը մունջ եղող գառնուկի
33 պէս՝ անանկ իր բերանը չբացաւ . Իր
խոնարհութեանը մէջ իր դատաստանը
վերցուեցաւ . և անոր ազգատոհմը ո՞վ
պիտի պատմէ . ինչու որ անոր կեանքը

Digitized by Google

երկրէն կը վերցուի ։ Ներքինին պատաս- 34
խան տուաւ Փիլիպպոսին և ըսաւ. Կ՚ա-
ղաչեմ քեզի, մարգարէն որո՞ւ համար կ՚ը-
սէ աս. իրե՞ն համար, թէ մէկ ուրիշի
մը համար ։ Փիլիպպոս իր բերանը բա- 35
ցաւ, և աս գրքէս սկսելով Յիսուսը
քարոզեց անոր ։ Երբոր իրենց ճամբան 36
կ՚երթային, ջուրի մը քով եկան. ու ը-
սաւ ներքինին. Ահա՛ ջուր, ալ ի՞նչ բան
զիս կ՚արգիլէ մկրտուելէն ։ Եւ անիկայ 37
ըսաւ անոր. Թէ որ քու բոլոր սրտովդ
կը հաւատաս, կարելի՛ է. անիկայ պա-
տասխան տուաւ՝ և ըսաւ. Կը հաւատամ
որ Յիսուս Քրիստոսը Որդի Աստուծոյ է ։
Ու հրաման ըրաւ որ կառքը կայնեցրնեն. 38
և երկուքն ալ ջուրը իջան՝ Փիլիպպոսը և
ներքինին, ու մկրտեց զանիկայ ։ Եւ 39
երբոր ջուրէն դուրս ելան՝ Հոգին Սուրբ
ներքինիին վրայ եկաւ. ու Տէրոջը հրեշ-
տակը Փիլիպպոսը անկէց վերցուց, և ալ
ներքինին անիկայ չտեսաւ. ու իր ճամբան
կ՚երթար ուրախութենով ։ Բայց Փիլիպ- 40
պոս Ազովտոսին մէջը գտնուեցաւ. ու
պտըտելով բոլոր քաղաքներուն աւետա-
րան կը քարոզէր, մինչև որ ինքը Կեսարիա
եկաւ ։

## ԳԼ. Թ.

Բայց Սօղոս տակաւին սպառնալիքով և 1
Տէրոջը աշակերտները սպաննելու մտքով
լեցուած, քահանայապետին գնաց. Անկէց 2

Digitized by Google

թուղթեր ուզեց Դամասկոս ժողովարան-
ները տանելու, որ եթէ այն Ճամբուն
հետեւող մէկ մը գտնելու ըլլայ՝ երիկ
մարդ կամ կնիկ մարդ, կապած Երուսա-
3 ղէմ բերէ ։ Ու երթալու ատենը Դամաս-
կոսին որ մօտիկցաւ՝ յանկարծ իր բոլոր-
4 տիքը երկինքէն լոյս մը փայլատակեց. Եւ
ինքը գետինը ինկաւ. մէկ ձայն մը լսեց՝
որ կ՚ըսէր իրեն. Սաւո՛ւղ Սաւո՛ւղ՝ ինչո՞ւ
5 զիս կը հալածես ։ Եւ ան ըսաւ. Ո՞վ ես
դուն Տէր. ան ալ ըսաւ. Ես եմ Յիսու-
սը՝ որ դուն կը հալածես. դժուար բան է
6 քեզի խթանի դէմ կից զարնել ։ Ու
դողդղալով և շուարած ըսաւ. Տէ՛ր
7 ի՞նչ կ՚ուզես որ ընեմ ։ Եւ Տէրը ըսաւ
անոր. Հապա ոտքի վրայ կայնէ, ու քա-
ղաքը մտի՛ր, և քեզի պիտի՝ զրուցուի ինչ
որ պէտք է քեզի ընել. բայց այն մարդիկը
որ իր հետը կ՚երթային, անձայն կեցեր
էին. ձայնը միայն կը լսէին՝ բայց բան մը
8 չէին տեսներ ։ Եւ Սօղոս գետինէն,
ու բաց աչքերով մէկը չէր տեսներ. ա-
նոր ձեռքէն բռնեցին՝ Դամասկոս մտցու-
9 ցին ։ Եւ հոն իրեք օր կեցաւ՝ ու չէր
տեսներ. և ո՛չ կերաւ ո՛չ ալ խմեց ։
10 Եւ Անանիա անունով մէկ աշակերտ մը
կար Դամասկոսի մէջ. Տէրը տեսիլքի մէջ
անոր ըսաւ. Անանիա. ան ալ ըսաւ.
11 Տէր՝ ահա՛ հոս եմ ։ Տէրն ալ ըսաւ ա-
նոր. Ոտքի վրայ կայնէ՝ ու գնա՛ այն
փողոցը՝ որ Ուղիղ կ՚ըսուի. և հոն Յու-

Digitized by Google

դայի տանը մէջ փնտռէ՝ Սօղոս անունով
Տարսոնացի մը, որ ինքը դեռ աղօթք կ'ը-
նէ։ Ու տեսիլքին մէջ մէկ մարդ մը տե-
սաւ Անանիա անունով՝ ներս մտած, և
ձեռքը իր վրան դրած, որ տեսնէ։ Ա- 13
նանիան ալ պատասխան տուաւ. Տէ՛ր, շա-
տերէն լսեցի այս մարդուն համար, որչափ
չարիքներ ըրաւ քու սուրբերուդ Երու-
սաղէմի մէջ. Ու հոս ալ քահանայապետա- 14
ներէն իշխանութիւն ունի կապելու այն ամ-
մէնը, որ քու անունդ կը կարդան։ Տէ- 15
րը իրեն ըսաւ. Գնա՛ դուն, ինչու որ
անիկայ ինծի ընտիր աման մըն է, իմ ա-
նունս կրելու հեթանոսներուն ու թա-
գաւորներուն և Իսրայէլի որդւոցը առջևը.
Որովհետև ես իրեն պիտի ցուցընեմ որչափ 16
պէտք է իրեն՝ իմ անունիս համար նեղու-
թիւն քաշել։ Անանիան ալ գնաց և այն 17
տունը մտաւ. ու ձեռքը անոր վրայ դը-
նելով ըսաւ. Սաւուղ եղբայր՝ վեր նա-
յէ. զիս Տէրը խրկեց, այն Յիսուսը՝ որ
ճամբան քեզի երևցաւ երբոր կու գայիր,
որ դուն տեսնես՝ ու Հոգւով Սրբով լե-
ցուիս։ Ու շուտ մը իրեն աչքերէն կճեպ- 18
ներու պէս բաներ ինկան. տեսաւ՝ ու
ելաւ մկրտուեցաւ. Ու կերակուր առնե- 19
լով ուժը վրան եկաւ. ու քանի մը օր
Դամասկոսի մէջ աշակերտներուն հետը
կեցաւ։

Ու շուտ մը ժողովարաններուն մէջ քա- 20
րոզեց Յիսուսը, թէ անիկայ է Աստուա-

Digitized by Google

21 ծոյ Որդին : Ամէնն ալ որ կը լսէին՝ զար-
մացեր էին , և կ'ըսէին . Միթէ ան
չէ՞ , որ Երուսաղէմի մէջ կը կործանէր ա-
նոնք՝ որ Յիսուսի անուանը կը կանչէին .
և հոս ալ ան բանին համար եկած է , որ
զանոնք կապած՝ քահանայապետներուն տա-
22 նի : Սաւուղ ալ աւելի կը զօրանար
և կը յաղթէր այն Հրեաները , որ Դա-
մասկոսի մէջ կը բնակէին , ու կը հաստա-
23 տէր՝ թէ Քրիստոսը աս է : Եւ
շատ օրեր անցնելէն ետքը՝ Հրեաները
խորհուրդ ըրին որ անիկայ սպաննեն :
24 Սաւուղ իմացաւ անոնց նենգութիւնը . բայ-
ց անոնք ցորեկ ու գիշեր դռները կը պահէ-
25 ին , որ անիկայ սպաննեն : Եւ աշա-
կերտները գիշերով առին զանիկայ՝ պատէն
կախած զամբիւղով վար իջեցուցին :
26 Երբոր Սաւուղ Երուսաղէմ եկաւ , կը
ջանար աշակերտներուն յարելու . բայց
ամէնն ալ կը վախնային անկէ , չէին
27 հաւատար թէ ինքը աշակերտ էր : Բայց
Բառնաբաս զանիկայ առաւ՝ առաքեալնե-
րուն տարաւ , ու պատմեց անոնց՝ թէ
ինչպէս ճամբուն վրայ Տէրը տեսաւ , և
թէ անոր հետը խօսեցաւ , և թէ Դա-
մասկոսին մէջը համարձակ քարոզեց Յի-
28 սուսին անունովը : Եւ Երուսաղէմի մէջ
անոնց հետ կը մտնէր ու կ'ելլէր , Տէրոջը
29 անունովը համարձակ խօսելով : Յոյնե-
րուն դէմ կը խօսէր՝ և վիճաբանութիւն
կ'ընէր . անոնք ալ կը խորհէին որ անիկայ



Digitized by Google

սպաննեն։ Ու եղբայրները իմանալով՝ 30
զանիկայ Կեսարիա իջուցին, և զանիկայ
Տարսոն խրկեցին։

Ու եկեղեցին բոլոր Հրէաստանի և Սա- 31
մարիայի ու Գալիլեայի մէջ խաղաղութիւն
ունէին, շինուելով ու Տէրոջը
երկիւղին ետևէն երթալով. ու Հո-
գւոյն Սրբոյ մխիթարութիւնովը կ'աճէր։

Ու երբոր Պետրոս ամէն տեղ կը պտը- 32
տէր, Լիւդիա բնակող սուրբերուն քովն
ալ իջաւ։ Հոն մէկ մարդ մը գտաւ, 33
որուն անունը Էնեաս էր, ութը տարիէ 'ի
վեր անդամալոյծ մահճիճը դրուած էր։
Ու Պետրոս անոր ըսաւ. Էնեա՛, Յիսուս 34
Քրիստոս Տէրը քեզ կը բժշկէ. ելի՛ր, և
դուն ինքիրմէդ քու անկողինդ թօթվէ՛։
Ան ալ շուտ մը ելաւ։ Ու Լիւդիայի և 35
Սարոնայի մէջ բնակողներուն ամէնքը զա-
նիկայ տեսան, ու Տէրոջը դարձան։ Իսկ 36
Յոպպէի մէջ աշակերտ եղած կնիկ մը կար՝
անունը Տաբիթա, (որ թարգմանուելով
Այծեամնիկ կ'ըսուի.) ասիկայ լեցուած էր
բարի գործքերով ու ողորմութիւններով,
որ ինքը կ'ընէր։ Իսկ եղաւ որ ան օրերը 37
ինքը հիւանդցաւ ու մեռաւ. լուացին զա-
նիկայ՝ և վերի սենեակը դրին։ Ու Լիւ- 38
դիա Յոպպէին մօտ էր. աշակերտները
լսելով թէ Պետրոս հոն է, անոր երկու
մարդ խրկեցին, աղաչելով որ չուշանայ
իրենց գալու։ Պետրոս ալ ելաւ անոնց 39
հետը եկաւ. երբոր եկաւ՝ վերի սենեակը

Digitized by Google

հանեցին անիկայ ։ Եւ բոլոր որբևայրիները
անոր բոլորտիքը կայնեցան լալով , կու լային ,
ու կը ցուցնէին բոլոր այն լաթերը և հան-
դերձները՝ որչափ որ իրենց կ'ընէր Այ-
40 ծեմնիկը ։ Պետրոս ալ ամէնքը դուրս հա-
նելով՝ ծունկի վրայ եկաւ աղօթք ըրաւ ,
ու դէպ 'ի մարմինը դարձաւ՝ և ըսաւ .
Տաբիթա՝ Տէր Յիսուս Քրիստոսի ա-
նունովը ելի՛ր կայնէ՛ . ան ալ իր աչքերը
բացաւ , ու Պետրոսը որ տեսաւ՝ ելաւ
41 շիտակ նստաւ ։ Ինքն ալ ձեռքը անոր
տուաւ՝ և վերցուց զանիկայ . կանչելով
սուրբերը ու որբևայրիները , անոնց ողջ
42 կայնեցուց զանիկայ ։ Այս բոլոր Յոպ-
պէին մէջ իմացուեցաւ , ու շատերը Տէ-
43 րոջը հաւատացին ։ Եւ եղաւ որ ինքը
շատ օրեր Յոպպէ կեցաւ՝ Սիմոն անունով
կաշի բանողի մը քով ։

## ԳԼ. Ժ.

1 Կեսարիայի մէջ մէկ մարդ մը կար՝
Կոռնելիոս անունով , հարիւրապետ՝ Իտա-
2 լիայի ըսուած գունդէն . Բարեպաշտ և
աստուածավախ էր բոլոր տունովը . ժո-
ղովուրդին շատ ողորմութիւններ կու տար՝
և ամէն ատեն Աստուծոյ աղօթք կ'ընէր ։
3 Մէյ մը օրուան ժամը իննին ատենը տե-
սիլքի մէջ Աստուծոյ հրեշտակը յայտնի
տեսաւ՝ որ իր քովը մտաւ՝ և իրեն կ'ը-
4 սէր . Կոռնելիոս . Ան ալ անոր նայելով
խիստ վախցաւ ու ըսաւ . Ի՞նչ է Տէր .

Digitized by Google

ան ալ անոր ըսաւ . Քու աղօթքդ և ո-
ղորմութիւններդ Աստուծոյ առջեւ ելան
յիշուեցան ։ Հիմա Յոպպէ մարդիկ 5
խրկէ՛ ու կանչէ Սիմոն անունով մէկը՛
որ Պետրոս կ'ըսուի . Ինքը մէկ Սիմոն 6
անունով կաշի բանողի մը քով մնած է ,
որ անոր տունը ծովին մօտ է ։ Ու երբ 7
որ գնաց ան Հրեշտակը՛ որ իր հետը կը
խօսէր , իր ծառաներէն երկուքը կանչեց ,
ու իր սպասաւորներէն ալ մէկ բարեպա-
շտ զինուոր մը , Ու բոլորը անոնց 8
պատմելով՛ Յոպպէ խրկեց զանոնք ։
Ու հետեւեալ օրը երբոր անոնք ճամբայ 9
երթալով քաղաքին մօտեցան , Պետրոս
ժամը վեցին տանիքը ելաւ ա-
ղօթք ընելու ։ Անօթեցաւ՛ և կ'ուզէր 10
ճաշ ընել . Ու որ անոնք կը
պատրաստէին՛ իր վրայ մտքի յափշտա-
կութիւն մը եկաւ . Ու տեսաւ երկինքը 11
բացուած՛ ու չորս ծայրէն կախուած մէկ
ամանի մը մեծ կտաւի մը պէս , որ [illegible]
գետնին վրայ ։ Անոր մէջը կար 12
բոլոր չորքոտանիները և երկրի սողուննե-
րը , ու երկինքի թռչունները ։ Եւ եր- 13
կինքէն ձայն մը եկաւ իրեն . Ելի՛ր Պետրո-
ս՛ մորթէ՛ ու կե՛ր ։ Պետրոս ալ ըսաւ . 14
Քա՛ւ լիցի՛ Տէ՛ր . Ինչու որ ես ամենեւին
խառնուած ու անմաքուր բան մը կերած չեմ ։
Դարձեալ մէկ մ'ալ ձայն եկաւ իրեն . Ինչ 15
որ Աստուած մաքրեց՛ դուն անմաքուր մի՛
սեպեր ։ Ասիկայ երեք հեղ եղաւ , և ա- 16

17 Անոնք երկինքը վերցուեցաւ։ Եւ Պետրոս երբ-
որ իր միտքին մէջը կը զարմանար՝ թէ ի՛նչ
պիտի ըլլայ այն իր տեսած տեսիլքը, ա-
հա՛ Կոռնելիոսէն խրկուած մարդիկը Սի-
մոնին տունը հարցուցին, ու դրանը
18 առջեւը կայնեցան. Ու կանչեցին և կը հար-
ցընեին, թէ Սիմոնը՝ որ Պետրոս կ'ըսուի,
19 հոս մնա՞ծ է։ Ու երբոր Պետրոս այն
տեսիլքին վրայով կը մտածէր, Հոգին
Աստուծոյ ըսաւ անոր. Ահա՛ քանի մը մար-
20 դիկ քեզ կը փնտռեն. Արդ ելի՛ր իջի՛ր,
և անոնց հետը գնա՛ առանց
խղճմտանք ընելու, վասն զի ես խրկեցի
21 անոնք։ Պետրոս ալ երթալով անոնց իջաւ,
ըսաւ. Ահա՛ ես եմ որ դուք կը փնտռէք,
ի՞նչ բան է որ անոր համար դուք եկաք։
22 Անոնք ալ ըսին. Կոռնելիոս հարիւրա-
պետը՝ արդար և աստուածավախ մարդ,
բոլոր Հրէից ազգէն վկայուած՝ սուրբ
հրեշտակէ մը հրաման առաւ, որ քեզ իր
23 տունը կանչէ և քու խօսքերդ լսէ։ Ներս
կանչեց անոնք՝ և իր քովը մնալ դրաւ։
Ու հետեւեալ օրը Պետրոս ելաւ՝ անոնց
հետը գնաց, և քանի մըն ալ այն եղբայր-
ներէն որ Յոպպէ էին՝ իր հետը եկան։
24 Ու հետեւեալ օրը Կեսարիա մտան. Կոռ-
նելիոս ալ իր ազգականները և մտերիմ
բարեկամները կանչած՝ անոնց կը սպասէր։
25 Ու եղաւ որ երբ Պետրոս ներս մտաւ,
Կոռնելիոս անոր դիմացը ելաւ, ու անոր
ոտքը ինկալով՝ երկրպագութիւն կ'ըներ։

Digitized by Google

Պետրոս ալ անիկայ կանգնեցուց՝ ու ը- 26
սաւ. Ելի՛ր կայնէ. ես ալ մէկ մարդ-
մըն եմ։ Եւ անոր հետը խօսելով ներս 27
մտաւ, ու հոն շատերը ժողվուած գտաւ։
Եւ ըսաւ անոնց. Դուք ձեզմէ գիտէք 28
թէ ի՛նչպէս անվայելուչ է որ մէկ Հրեայ
մարդ մը այլազգիի մը քով երթայ կամ
մօտենայ. բայց Աստուած ինծի ցուցուց
որ մարդերէն մէկը խառնակ կամ ան-
մաքուր չըսեմ։ Անոր համար ես ալ որ 29
կանչուեցայ՝ առանց դէմ խօսելու եկայ.
բայց հիմա կը հարցընեմ, Ի՞նչ բանի
համար զիս կանչեցիք։ Կոռնելիոս ալ 30
ըսաւ, Չորս օր առաջ՝ երբոր աս ատենս
ժամը իններին իմ տանս մէջ աղօթք կ'ընէի,
ահա՛ ճերմակ լաթերով մարդ մը եկաւ
կայնեցաւ առջեւս, և ըսաւ. Կոռնելիոս՝ 31
քու աղօթքդ լսուեցաւ, և քու ողորմու-
թիւններդ Աստուծոյ առջեւը յիշուեցան։
Ասոր համար ղրկէ Յոպպէ, ու կանչէ՛ 32
Սիմոնը՝ որ Պետրոս կ'ըսուի, որ անիկայ
ծովին մօտ Սիմոն անունով կաշի բանողի
մը տունը մտած է. որ գայ ու խօսի քու
հետդ։ Ես ալ արտորնոք քեզի ղրկեցի. 33
աղէկ ըրիր դուն որ եկար. հիմա մենք ա-
մէնքս Աստուծոյ առջեւը կեցեր ենք լսելու
այն ամէնը, որ Տէրոջմէ հրամայուած է
քեզի։

Պետրոս ալ բերանը բացաւ և ըսաւ. 34
Ճշմարտութեամբ կը հասկընամ՝ որ Աս-
տուծոյ քովը աչառութիւն չկայ. Հապա 35

Digitized by Google

ամէն ազգի մէջ՝ ան որ անկէ կը վախ-
նայ ու արդարութիւն կը գործէ, ինքը
36 կ'ընդունուի անկից։ Այն խօսքը որ Իսրա-
յէլի որդւոցը ղրկեց Աստուած՝ խաղա-
ղութիւն քարոզելու Յիսուս Քրիստոսի
ձեռքովը, (անիկայ է ամենուն Տէրը.)
37 Դուք ալ աղէկ գիտէք այն բանը, որ
բոլոր Հրէաստանի մէջը եղաւ Գալիլիա-
ցիէն սկսած այն մկրտութենէն ետեւ՝ որ
38 Յովհաննէս քարոզեց. Յիսուսը որ Նա-
զարէթէն էր՝ որ Աստուած անիկայ օծեց
Սուրբ Հոգիով և զօրութիւնով, որ
պտըտեցաւ բարիք ընելու, ու Սատանա-
յէն բոլոր բռնուածները բժշկելու. որով-
39 հետև Աստուած իր հետն էր։ Ու մենք
վկայ ենք այն ամէն բաներուն՝ որ ըրաւ
Հրէաստանի երկրին մէջ ու Երուսաղէմի
մէջ. որն որ փայտէն կախած սպաննեցին
40 ալ։ Աստուած անիկայ երրորդ օրը յա-
41 րուց, և յայտնի ըրաւ զանիկայ. Ո՛չ
թէ բոլոր ժողովուրդին, հապա մեզի՝ ա-
ռաջուց Աստուծմէ վկայ ըլլալու ընտ-
րուածներուս, որ մենք իրեն հետ կե-
րանք և խմեցինք ալ՝ անոր մեռելներէն
42 յարութիւն առնելէն ետքը։ Ու ինքը
պատուիրեց մեզի՝ որ ժողովուրդին քա-
րոզենք ու վկայութիւն տանք, թէ Անի-
կայ է Աստուծոյ սահմանած կենդանիներ-
43 րուն և մեռելներուն դատաւորը։ Անոր՝
բոլոր մարգարէները կը վկայեն՝ թէ ամէն
իրեն հաւատացողները իր անունովը մեղաց
թողութիւն կ'առնեն։

Մինչդեռ Պետրոս այս խօսքերը կը խօ- 44
սէր՝ Հոգին Սուրբ հանգչեցաւ ամենուն
վրայ, որոնք որ այն խօսքը կը լսէին։
Թլփատութենէն եղող հաւատացեալ- 45
ները՝ որոնք Պետրոսին հետը եկած էին,
զարմացան՝ որ հեթանոսներուն վրայ ալ
Հոգւոյն Սրբոյ պարգեւները կը թափուէին։
Քանզի ալ կը լսէին անոնցմէ որ օտար լե- 46
զուներով կը խօսէին, եւ Աստուած կը
փառաւորէին։ Այն ատենը Պետրոս պա- 47
տասխանեց ըսաւ. Արդեօք մէկը ջուրը
արգիլել մը՞ր ասոնք չմկրտուելու, որոնք
Հոգին Սուրբն ալ ընդունեցին՝ մեզի
պէս։ Ու հրաման ըրաւ անոնց՝ որ Յի- 48
սուս Քրիստոսի անունովը մկրտուին։ Այն
ատենը խնդրեցին որ քանի մը օր
հոն մնայ։

## ԳԼ. ԺԱ.

Առաքեալները ու եղբայրները որ Հրէ- 1
աստանի կողմերն էին, լսեցին՝ թէ
հեթանոսներուն մէջն ալ Աստուծոյ խօս-
քը ընդուներ են։ Ուստի երբոր Պետրոս 2
Երուսաղէմ ելաւ, թլփատութեններէն
եղող հաւատացեալները իրմէն կը կղձահա-
րէին։ Ու կ'ըսէին, թէ Անթլփատ մար- 3
դոց քովը մտար՝ եւ անոնց հետ հաց կե-
րար։ Պետրոս ալ սկսաւ կարգով 4
պատմել անոնց, ու ըսաւ. Ես Յոպպէ 5
քաղաքը աղօթք կ'ընէի, ու մտքով յափշտա-
կուած տեսիլք մը տեսայ. մէկ աման

մը մեծ կտաւի պէս՝ չորս ծայրերէն եր-
կինքէն կախուած իջաւ, ու մինչեւ ինծի
6 հասաւ։ Անոր վրայ աչքս տնկեր կը դիտէի.
ու տեսայ երկրի չորքոտանիները, և գա-
զանները, ու սողունները, և երկնից
7 թռչունները։ Նաև ձայն մը լսեցի որ
կ՚ըսէր ինծի. Ելի՛ր Պետրոս՝ մորթէ՛
8 ու կե՛ր։ Բայց ես ըսի. Քա՛ւ լիցի
Տէ՛ր. ինչու որ խառնակ կամ անմա-
քուր բան մը ամենեւին մտած չէ իմ բե-
9 րանս։ Պատասխան տուաւ ինծի երկ-
րորդ անգամ այն ձայնը երկինքէն. Ինչ որ
Աստուած մաքրեց՝ դուն խառնակ մի՛ ըսեր։
10 Ասիկա երեք անգամ եղաւ, ու նո-
11 րէն բոլորը երկինք վերցուեցաւ։ Նաև յանկարծ
իսկոյն երեք հոգի Կեսարիայէն ինծի ղրկը-
ւած՝ եկան իմ եղած տանը առջևը կե-
12 ցան։ Հոգին ալ ինծի ըսաւ որ անոնց
հետը երթամ և ամենեւին խղճմտանք չը-
նեմ. ասոնք վեց եղբայրներն ալ ինծի հետ
եկան, ու մտանք այն մարդուն տունը։
13 Նաև անիկա մեզի պատմեց՝ ինչպէս իր տանը
մէջ հրեշտակը տեսաւ, որ կայներ էր ու
իրեն կ՚ըսէր. Մա՛րդ ղրկէ Յոպպէ ու
14 կանչէ՛ Սիմոնը՝ որ Պետրոս կ՚ըսուի. Անի-
կա քեզի խօսքեր պիտի խօսի, որոնցմով
15 փրկուիս դուն՝ և քու բոլոր տունդ։ Եւ
երբոր սկսեցի խօսիլ, Հոգին Սուրբը ա-
նոնց վրայ եկաւ, ինչպէս որ առաջուց մեզի
16 վրայ։ Միտքս բերի Տէրոջը խօսքը՝ որ
կ՚ըսէր. Յովհաննէս ջրով մկրտեց,



Digitized by Google

բայց դուք Սուրբ Հոգիով պիտի մկրտ-
ուիք ։ Ուստի թէ որ ան հաւասարապէս 17
շնորհքը Աստուած անոնց տուաւ՝ ինչպէս
որ մեզի, երբոր Տէր Յիսուս Քրիստոսի
հաւատացինք, ես ո՞վ էի կրնայի Աստուծոյ
դէմ դնել ։ Ասոնք լսելնին՝ ձայներնին 18
կտրեցին, ու կը փառաւորէին զԱստուած
ըսելով ։ Ուրեմն Աստուած հեթանոս-
ներուն ալ կենաց համար ապաշխարու-
թիւն տուաւ ։
Իսկ Ստեփանոսին ժամանակը վրայ եկած 19
նեղութենէն ցրուածները մինչեւ
Փիւնիկէ ու Կիպրոս և Անտիոք հաս-
ան ու մէկու մը Աստուծոյ խօսքը չէին
խօսեր, միայն թէ Հրեաներուն ։ Ան- 20
ոնցմէ մէկ քանիներն էին Կիպրացի և Կիւ-
րենացի մարդիկ՝ որոնք երբոր Անտիոք
մտան, Յոյներուն հետ կը խօսէին՝ Տէր
Յիսուսը քարոզելով ։ Ու Տէրոջը ձեռքը 21
անոնց հետ էր, և բազմութիւն մարդիկ
հաւատալով՝ Տէրոջը դարձան ։ Ասոր համբաւը 22
անոնց վրայով Երուսաղէմի եկեղեցին
ականջը հասաւ ։ ու Բառնաբասը մինչեւ
Անտիոք խրկեցին ։ Ան երբոր եկաւ և 23
Աստուծոյ շնորհքը տեսաւ, ուրախացաւ ։
ու կը յորդորէր ամէնն ալ որ յօժար
սրտով Տէրոջը հետ կենան մնան ։ Ան 24
բարեհամբաւ [illegible] մարդ մըն էր ու
Սուրբ Հոգիով և հաւատքով լեցուն ։
ու Տէրոջը շատ ժողովուրդ աւելցաւ ։
Յետոյ Բառնաբաս Տարսոն ելաւ՝ Սօղոսը 25

Digitized by Google

փնտռելու, և զանիկայ գտնելով՝ Անտիոք
26 բերաւ։ Եւ եղաւ որ անոնք բոլոր տարի
մը եկեղեցիին հետը ժողվուեցան, և շատ
ժողովուրդ սորվեցուցին. ու ալինա առաջ
Անտիոքի մէջ աշակերտները Քրիստոնեայ
անուանեցան։
27 Այն օրերը Երուսաղեմէն մարգարէներ
28 իջան Անտիոք։ Անոնցմէ մէկը Ագաբոս
անունով ելլելով իմացուց Հոգիին զօրու-
թիւնովը՝ թէ մէկ մեծ սով մը պիտի ըլ-
լայ բոլոր աշխարհ, որ Կղօդիոսին ատենը
29 եղաւ։ Ուստի աշակերտները որոշեցին որ
իւրաքանչիւր ամէն մէկը որչափ որ կրնայ,
Հրէաստանի մէջ բնակող եղբայրներուն
30 օգնութիւն խրկեն. Ու ըրին ալ, երէց-
ներուն խրկելով Բառնաբասին և Սօղոսին
ձեռքովը։

## ԳԼ. ԺԲ.

1 Այն ատեններն Հերովդէս թագաւորը
ձեռք զարկաւ եկեղեցիէն մէկ քանիները
2 չարչարելու։ Եւ Յակոբոսը Յովհաննէ-
3 սին եղբայրը սրով սպաննեց։ Եւ տեսնելով
որ Հրէաներուն հաճելի է, անոր վրայ
Պետրոսն ալ բռնեց. ու Բաղարջակերաց
4 օրերն էին։ Զանիկայ երբոր բռնեց՝
բանտը դրաւ, և չորս խումբ չորսական
զինուորներու ձեռքը տուաւ որ պահեն.
և կ'ուզէր զատիկէն ետև ժողովուրդին հա-
5 նել զանիկայ։ Ուստի Պետրոս բանտին
մէջը պահուած էր, բայց եկեղեցին ան-

Digitized by Google

զանդադար աղօթք կ՚ընէր Աստուծոյ անոր
համար ։ Երբոր Հերովդէս ուզեց անիկա 6
հանել բերել, այն գիշերը Պետրոս երկու
զինուորներուն մէջ կը քնանար՝ կրկին
շղթաներով կապուած, ու պահապանները
ալ դրանը առջեւ բանտը կը պահպանէին ։
Ու ահա՛ Տէրոջը հրեշտակը եկաւ վրան 7
կայնեցաւ, ու տանը մէջ լոյս մը ծագեցաւ ։
ու Պետրոսին կողը զարնելով՝ արթնցուց
զանիկայ, և ըսաւ. Շուտով ելի՛ր. ու
շղթաները իր ձեռքերէն վար ինկան ։
Ու հրեշտակը ըսաւ անոր. Գօտիդ կա- 8
պէ՛, ու հողաթափներդ ոտքդ հագիր ։
Ան ալ անանկ ըրաւ, և ըսաւ իրեն. Վա-
թերդ վրադ առ՝ ու եկուր իմ ետեւէս ։
Ան ալ ելաւ ետեւէն կ՚երթար, և չէր գի- 9
տեր՝ թէ ան հրեշտակէն եղած բանը իրաւ
է. ինչու որ կը կարծէր թէ երազ կը
տեսնէ ։ Ու երբոր անցան առաջին ու 10
երկրորդ դիշերապահներէն անցան, եկան
այն երկաթի դուռը, որ քաղաքին մէ-
ջը կը հանէր, որ ան ինքիրմէ բացուեցաւ
անոնց, և անկէց ելլելով՝ մէկ փողոց մը
անցան. հրեշտակն ալ իսկոյն իրմէն զա-
տուեցաւ ։ Ու Պետրոս ինքզինքին գա- 11
լով՝ ըսաւ. Հիմա ճշմարիտ գիտեմ, որ
Տէրը իր հրեշտակը ղրկեց՝ և ազատեց
զիս Հերովդէսին ձեռքէն, ու Հրեից ժո-
ղովուրդին բոլոր ակնկալութենէն ։ Ու 12
մտածելով՝ եկաւ Մարկոս կոչուած Յով-
հաննէսին մօրը Մարիամին տունը. ուր որ

շատերը ժողվուած էին և աղօթք կ'ընե-
13 ին։ Ու տանը դուրսի դուռը որ զար-
կաւ՝ մէկ աղախին մը գնաց ականջ դնե-
14 լու, որ անունը Հռոդէ էր։ Ու
երբոր Պետրոսին ձայնը ճանչցաւ, ու-
րախութենէն դուռը չբացաւ, հապա վա-
զեց պատմեց, թէ Պետրոս դրանը առջևը
15 կայներ է։ Անոնք ալ ըսին անոր, Խեն-
դեցար. բայց ինքը կը պնդէր թէ անանկ
է. անոնք ալ կ'ըսէին, Անոր հրեշտակը
16 պիտոր ըլլայ։ Բայց Պետրոս անդադար
կը զարնէր. երբոր բացին զինքը տեսան,
17 ու զարմացան։ Բայց անիկայ ձեռքովը
կը ցուցընէր անոնց որ լռեն. ու
պատմեց ինչպէս որ Տէրը զինքը բանտէն
հանեց, և ըսաւ. Ասիկայ Յակոբին և
եղբայրներուն պատմեցէք. ու ելաւ ուրիշ
18 տեղ գնաց։ Եւ երբոր առտու եղաւ,
մեծ խռովութիւն մը կար զինուորներուն
մէջը՝ թէ արդեօք ինչ եղաւ Պետրոսը։
19 Հերովդէս ալ երբոր ուզեց անիկայ և
չգտաւ, պահապաններուն հարցուփորձ ը-
նելով հրամայեց ըսաւ որ սպաննուին. ու
ինքը Հրէաստանէն Կեսարիա իջաւ, և
հոն կը կենար։
20 Ու Հերովդէս խիստ բարկացած էր
Տիւրացիներուն և Սիդոնացիներուն. ա-
նոնք ալ բոլորը միաբան իրեն եկան, ու
թագաւորին Բղաստոս սենեկապետը հաւ-
նեցնելով՝ հաշտութիւն կ'ուզէին. ինչու որ
իրենց երկիրը անոր տէրութենէն ապրուստ

Digitized by Google

կ'առնէր ։ Աէկ եղեւ որ մեր հետ ժողովուեցան 21
Թագաւորութեան. հանդերձ հացերը ու շա-
ղեղները խառներ էր ։ և անոնց առաքելութեան
նաւթերուն կ'ընէր ։ Յովհաննու ալ կ'ա- 22
ռաջադիէր ։ Թէ Յովհաննէս մկրտեց ճշմա-
րիտ ։ Թէ մարդու ։ Եւ ընտրեցին եր- 23
կուքը Յովսէփը զոր Բարսաբա կոչէին
հանուր որ Յուստոս կոչուեցաւ ։ և
Մատաթիան ըսելով՝ աղօթեցին ։
Ու Տէրուն խօսքը կ'աճէր և կը շատա- 24
նար ։ Բառնաբաս ու Սողոս երբոր իւ- 25
րենց յանձնուած պաշտօնը կատարեցին՝ Երու-
սաղէմէն դարձան ։ Մարկոս բառուած
Յովհաննէսն ալ հետերնին առնելով ։

ԳԼ. Բ.

Երբ Պենտեկոստէի օրը հասաւ մը 1
առաքեալները և կանայաքանեցք հոյին ։
Բառնաբաս ու Շմաւոն որ նիգեր
կ'ըսուէր ։ և Ղուկիոս Կիւրենացին ։ ու
Մանայեն՝ Հերովդէս չորրորդապետին
մեծցածը ։ և Սողոս ։ Երբոր անոնք 2
Տէրոջը պաշտօնին մէջն էին և ծոմ կը
պահէին ։ Հոգին Սուրբ ըսաւ ։ Զատե-
ցէք ինծի Բառնաբասը և Սողոսը այն
գործին համար ։ որուն համար կանչեր եմ զա-
նոնք ։ Ու անոնք ծոմ պահելով և ա- 3
ղօթք ընելով՝ ձեռք դնելով անոնց վրայ ու
խրկեցին ։
Անոնք ալ Սուրբ Հոգիէն խրկուած՝ 4
Սելեւկիա գացին, ու անկէ նաւով Կիպրոս

5 [illegible] : Իսկ Մովսէս [illegible]
[illegible]
[illegible] ու [illegible]
6 [illegible]
[illegible]
[illegible]
7 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] կ'ըսէ [illegible]
8 [illegible]
[illegible]
որ [illegible]
9 [illegible] ( որ [illegible]
[illegible] )
10 [illegible]
[illegible] ու [illegible]
[illegible]
[illegible]
[illegible] :
11 [illegible] :
[illegible]
[illegible] :
12 ու [illegible] : [illegible]
[illegible] :
[illegible]
[illegible]
[illegible] :
13 [illegible]
[illegible]

Digitized by Google

[illegible] 14
[illegible] 15
[illegible] 16
[illegible] 17
[illegible] 18
[illegible] 19
[illegible] 20
[illegible] 21
[illegible] 22
[illegible]

մարդ մը, որ իմ բոլոր կամքս պիտի կատա-
23 րէ։ Ասոր սերունդէն Աստուած իր խոստ-
մունքին պէս Իսրայէլին՝ Փրկիչ Յիսուսը
24 հանեց. Իրեն գալէն առաջ Յովհաննէս
Իսրայէլի բոլոր ժողովուրդին ապաշխա-
րութեան մկրտութիւնը քարոզեց, անի-
25 կայ իր պաշտօնը սկսելէն առաջ։ Եւ
երբոր Յովհաննէս իր ընթացքը լմնցուց,
ըսաւ. Ո՞վ կը կարծէք զիս. հանիկա
որ ըլլամ. ես անիկայ չեմ. հապա ահա
կու գայ իմ ետեւէս մէկը, որ ես արժա-
նի չեմ անոր ոտքին կօշիկները քակե-
26 լու։ Մարդիկ եղբայրներ, Աբրահամի
տոհմին որդիները, ու անոնք որ ձեր մէջ
աստուածավախ են, ձեզի փրկութեան խօս-
27 քը ղրկուեցաւ։ Վասն զի Երուսաղէմ
բնակիչները՝ եւ անոնց իշխանները չճանչ-
նալով զանիկայ, ու կատարեցին մարգարէ-
ներուն գիրքերը, որ ամեն շաբաթ
օրերը կը կարդացուէին, զինքը դատա-
28 պարտելով։ Եւ մահու պատճառ
մը չգտնելով՝ Պիղատոսէն ուզեցին
29 սպաննել զանիկայ։ Եւ երբոր անոր հա-
մար բոլոր գրուած բաները լմնցուցին,
փայտէն վար իջուցին՝ գերեզմանը դրին։
30 Բայց Աստուած անիկայ յարոյց մեռել-
ներէն. ու ինքը շատ օրեր երեւցաւ ա-
31 նոնց, որ իր հետ Գալիլեայէն Երուսա-
ղէմ ելեր էին. որոնք հիմա անոր վկա-
32 ներն են ժողովուրդին առջեւ։ Մենք
ալ ձեզի կը քարոզենք այն խոստմունքը՝

Digitized by Google

որ հայրենական երկրէն էր . Արդ [illegible] Նա- 33
տուած կատարելով մեզի՝ որ անոնց զ[illegible],
նորին ինք , Յիմաստը յարմարագոյն[illegible]
ընտրէ որ երկիրը Եգիպտոսին մէջն [illegible] .
գլխաւոր է . Կուտի իմ Աստուծոյ [illegible] այսօր
քեզ ծնայ ։ Իբր որ զանձինքդ [illegible] 34
յարուց ; [illegible] յիշին ալ [illegible]թեան ;
[illegible] չանէ , [illegible] կ'[illegible] , թէ Ձեզի
[illegible] տուած Գիտութեան [illegible] [illegible]
[illegible]րը ։ Արդ [illegible] ուրիշ [illegible] 35
մէջն ալ կ'ըսէ . [illegible] թող [illegible] որ [illegible]
Աստուծոյ [illegible]թեան [illegible] . [illegible] 36
Փարաւոն իր [illegible] մէջը [illegible]թիւն [illegible]
[illegible] , և Աստուծոյ կամքովը [illegible] , [illegible]
իր հայրենական [illegible] [illegible] , և [illegible]
[illegible]թեան [illegible] ։ [illegible] այն որ Նա- 37
տուած յարուց՝ [illegible]թեան [illegible] ։
Յայսմհետէ՝ ըլլայ [illegible] [illegible] [illegible] 38
որ աստուծ [illegible] [illegible] թագաւորութեան կը [illegible]
[illegible] . . . Իբր այն [illegible] [illegible]՝ որ 39
Աստուծոյ [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] որ հաւատոյ , կ'[illegible]
[illegible] . . . Դուն [illegible] , որ [illegible] թէ ձեր 40
[illegible] [illegible] այն որ [illegible] մէջ ը-
[illegible] է . [illegible] [illegible]՝ և 41
[illegible] , և [illegible] . [illegible] որ [illegible]
մը [illegible] ըսեմ ձեր [illegible] , [illegible] մէջ՝ որ
[illegible] [illegible] [illegible] , թէ որ [illegible] ձեռ-
քէ [illegible] ։

Եւ երբոր [illegible] [illegible] [illegible] , կ'[illegible] 42
[illegible] որ [illegible] [illegible] ալ այն [illegible] [illegible]

Digitized by Google

43 քերը , իրենց խօսքին ։ Իսկ ժողովուրդը
, երբոր արձակեցաւ , ան Հրէաներէն ու
Նորահաւատ բարեպաշտներէն շատերը Պօ-
ղոսին և Բառնաբասին ետևէն կ'երթային .
որոնք կը խօսէին անոնց հետ ու կը յոր-
դորէին զանոնք , որ միշտ Աստուծոյ
44 շնորհքին մէջը հաստատ կենան ։ Իսկ մե-
կալ շաբաթը որ եկաւ , գրեթէ բոլոր
քաղաքը ժողվուեցաւ Աստուծոյ խօսքը
45 լսելու ։ Հրէաները երբոր տեսան այն
բազմութիւնը , նախանձով լեցուեցան ,
ու Պօղոսի ըսուածներուն դէմ կը դնէին՝
46 հայհոյութիւն ընելով ։ Այն ատենը Պօ-
ղոս և Բառնաբաս համարձակեցան ու ը-
սին . Պէտք էր որ առաջ ձեզի խօսուի
Աստուծոյ խօսքը , բայց որովհետև դուք
անիկայ կը մերժէք , ու զինքզինքնիդ յա-
ւիտենական կենացը արժանի չէք սեպեր ,
ահա՛ մենք հեթանոսներուն կը դառնանք ։
47 Ինչու որ այսպէս պատուիրեց մեզի Տէրը .
Քեզ հեթանոսներուն լոյս դրի , որ դուն
փրկութեան պատճառ ըլլաս մինչև երկրի
48 ծայրերը ։ Աս որ լսեցին հեթանոսները՝
ուրախ կ'ըլլային , և Աստուծոյ խօսքը կը
փառաւորէին . ու հաւատացին անոնք որ
յաւիտենական կենաց սահմանուած էին ։
49 Իսկ Աստուծոյ խօսքը բոլոր գաւառը կը
50 տարածուէր ։ Բայց Հրէաները գրգռե-
ցին բարեպաշտ և ազնիւ կնիկները՝ ու
քաղաքին մեծերը , և Պօղոսին ու Բառ-
նաբասին վրայ հալածանք հանելով՝ զա-

Digitized by Google

Նոյնք իրենց անհամեմատելի զօրքն ըրին ։
Իրենք ալ ապահովութեամբ փոխին ամենայն վրայ 51
Թշնամիներէն Յովնաթանին եկան ։ Ու աշակերտաց 52
նորը արտասուելով և Հրդեհով Իսրա-
յէլ կը լացուէին ։

## ԳԼ. ԺԳ

Երբ լսեց որ Տրիփոնին մէջ զօրքը մեկ- 1
տեղ Հրէաստանին ժողովուրդը մտան ու
ու անոնց խռովեցան, որ խիստ շատ Հրէա-
ներ և Յոյներ հաւատացին ։ Բայց անոր 2
համար Հրէաները ուր հանեցին ու շատ
բարեկամն զօրքերին Հիմնաստեղծութեան սիրո-
ար Երուսաղէմին դէմ ։ Հաւա անոր 3
պատրաստելով համարձակ կը խօսէին , ու
բարեկամ Տէրը իր եղբօրը խօսքին կը
մէկայեր , ու նշաններ և Հրաշքներ ըներ
կուտար անոնց ձեռքովը ։ Ու քաղաքին 4
բազմութեան մէջ երկպառակութիւն մը
եղաւ . ոմանք Հրէաներուն կողմը եղան ,
ոմանք ալ առաքեալներուն ։ Երբոր հե- 5
թանոսները և Հրէաները իրենց իշխան-
ներովը հրամանին վազեցին՝ զանոնք նախա-
տելու ու քարկոծելու ; Իրենք իմանալով 6
Լիկայոնացւոց քաղաքները փախան՝ Լիւստ-
րա ու Դերբէ՝ և անոնց շրջակայ
տեղուանքը , ու հոն աւետարանը կը քա-
րոզէին ։
Լիւ. մէկ Լիւստրացի մարդ մը նստեր էր՝ 7
ոտքերովը անկար , իր մօրը որովայնէն կաղ
ծնած , որ բնաւ քալած չէր ։ Ասիկայ 8

Digitized by Google

Աթօռոյին խօսքերը մեզի կ'ընէր․ որ ինչպէս
այդ նախկին օրէնք՝ և ստուերով թէ
9 բժշկութեան հրաշքը ունէր, Բայց նոյնով
մը բան․ Մեր Տէր Յիսուս Քրիստոսի
անուանովը կ'ըսէ քեզի՝ Ելի՛ր կայնէ՛ շի-
տակ տարտիդ վրայ․ ան ալ կենդանացած ըլլէր
10 ու կ'ելլար։ Իսկ ժողովուրդները Պօ-
ղոսին քարոզը տեսնելով՝ հրաշքներին վե-
րացին ու [illegible] ըսին․ [illegible]
[illegible]
11 [illegible]
և Պօղոսին [illegible]
12 [illegible] Իսկ [illegible]
[illegible]
[illegible]
13 [illegible]
[illegible] ու Պօղոս [illegible]
[illegible]
[illegible]
14 [illegible] Աստուծոյ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
15 [illegible]
[illegible]
16 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Digitized by Google

տալով, կերակուրներով ու ուրախութիւ-
նով ձեր սիրտերը լեցընելով։ Ասոնք 17
ըսելով հազիւ կրցան ժողովուրդները արգի-
լեցին, որ իրենց զոհ չընեն, հապա
ամէն մէկը երթան տեղերնին։
Իսկ իրենց պատրաստ. ու սորվեցուցած 18
ատենը, Անտիոքէն և Իկոնիոնէն եկած
հրեաները. ու երբոր անոնց հետ հա-
մաձայն միաբանութիւն կ՚ընէին, ժողո-
վուրդները համոզեցին անոնցմէ մէկը, որ
կ՚ըսէին. ու կ՚ըսէին, թէ Պօղոսը մէկ
Աստուծոյ բան մը չէին ըներ, հապա ժողով
դրուցանծնի տուած է. և Պօղոսը քար-
կոծելով քաղաքէն դուրս քաշեցին, ու
կը կարծէին թէ անիկա մեռած է։ Իսկ 19
աշակերտները երբոր իր բոլորտիքը պա-
տեցին, ելաւ քաղաքը մտաւ. ու հետեւեալ
օրը Բառնաբասին հետ մեկնեցաւ Դերբէ
երթալ։ Ան քաղաքին մէջը աւետարանը 20
քարոզելով, և շատերը աշակերտելով՝ ընկերով
Լիւստրա ու Իկոնիոն և Անտիոքիա դար-
ձան, Աշակերտներուն սիրտը հաստատելով 21
լով և յորդորելով՝ որ հաւատքին մէջ
հաստատ մնան. և կ՚ըսէին թէ շատ նե-
ղութիւններով պէտք է մտնենք Աստուծոյ
թագաւորութիւնը մտնել։ Անոնց ամէն 22
մէկ եկեղեցիին երէցներ ձեռնադրե-
ցին ... աղօթք ընելով ու ծոմ պահելով
զանոնք յանձնեցին Տէրոջը՝ որուն հաւա-
տացեր էին։ Իսկ Պիսիդիայէն անցնելով 23
պտըտելով՝ եկան Պամփիլիա ։ Պերգէի 24

Digitized by Google

մէջն ալ Տէրոջը խօսքը խօսելէն ետքը՝ Ա-
25 տալիա իջան ։ Անկէց ալ նաւով Ան-
տիոք գացին, ուսկից որ Աստուծոյ շնորհ-
քին յանձնուած էին այն գործին համար՝
26 որ կատարեցին ։ Երբոր եկան՝ եկեղեցին
մէկտեղ ժողվեցին, պատմեցին ինչ որ
Աստուած ըրեր էր իրենց . և որ հեթանոս-
27 ներուն հաւատքի դուռը բացեր էր ։ Ա-
հոն շատ ժամանակ աշակերտներուն հետը
կեցան ։

## ԳԼ. ԺԵ

1 Իսկ մէկ քանիները Հրէաստանէն իջած՝
եղբայրներուն կը սորվեցընէին՝ որ Եթէ
Մովսէսի օրինացը համեմատ չթլփատուիք,
2 չէք կրնար փրկուիլ ։ Ասոր Պօղոս և
Բառնաբաս անոնց դէմ շատ մը հակառա-
կութիւն ու վէճ ընելէն ետքը, վճռեցին
որ Պօղոսը ու Բառնաբասը և մէկքանիս-
ներն ալ անոնցմէ՝ Երուսաղէմ ելլեն առ-
աքեալներուն ու երէցներուն՝ այս վէճին
3 համար ։ Անոնք ալ եկեղեցիէն ճամբայ
դրուած՝ կը պտըտէին Փիւնիկէ և Սամա-
րիա, հեթանոսներուն դարձը գալը կը
պատմէին, և մեծ ուրախութիւն կու տա-
4 յին բոլոր եղբայրներուն ։ Ու երբոր Երու-
սաղէմ հասան՝ եկեղեցիէն ու առա-
քեալներէն և երէցներէն ընդունուեցան,
և պատմեցին որչափ բան որ Աստուած ի-
5 րենց հետը ըրած էր ։ Փարիսեցւոց ա-
ղանդէն հաւատացեալներէն ոմանք ելան

Digitized by Google

ու կ'ըսէին, թէ պէտք է թլփատել ա-
նոնք, և պատուիրել որ Մովսէսի օրէն-
քը պահեն :
Այս ժողովուեցան առաքեալները ու ե- 6
րէցները այս բանիս վրայով խորհելու :
Այս շատ վիճաբանութիւն ըլլալէն ետև՝ 7
Պետրոս ոտքի վրայ ելաւ, ու ըսաւ ա-
նոնց . Մարդիկ եղբայրներ՝ դուք գիտէք
որ առջի օրերէն 'ի վեր ձեր մէջէն
Աստուած զիս ընտրեց, որ իմ բերնովս
հեթանոսները աւետարանի խօսքին լսեն՝ 8
և հաւատան : Այս սրտագէտ Աստուածը
վկայեց անոնց՝ Հոգին Սուրբը տալով ա-
նոնց, ինչպէս որ մեզի ալ : Այս մէկ տար- 9
բերութիւն մը չըրաւ անոնց և մեր մէջը,
հաւատքով մաքրելով անոնց սիրտը :
Արդ ինչո՞ւ Աստուած կը փորձէք, ա- 10
շակերտներուն պարանոցին վրայ անանկ
լուծ մը դնելով, որ անիկայ ոչ մեր հայ-
րերը՝ ոչ ալ մենք կրցանք վերցնել :
Բայց Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը 11
կը հաւատանք որ կը փրկուինք, ինչպէս որ
անոնք ալ :
Բոլոր ժողովուրդը լուռ կեցաւ, և 12
մտիկ կ'ընէին Բառնաբասին ու Պօղոսին
պատմածներուն, թէ Աստուած ինչ նշան-
ներ ու հրաշքներ ըրեր է հեթանոսներուն
մէջ անոնց ձեռքովը : Այս անոնք խօս- 13
քերնին կմնցնելէն ետև՝ Յակոբոս պատաս-
խան տուաւ՝ ու ըսաւ . Մարդիկ եղբայր-
ներ՝ ինծի մտիկ ըրէք . Շմաւոն պատմ- 14

մէջ ․ թէ ինչպէս առաջուց Աստուած այ-
ցելութիւն ըրաւ ․ որ հեթանոսներէն ժո-
15 ղովուրդ առնէ իր անունին համար ։ Եւ
ասոր մարգարէներուն խօսքերն ալ
կը միաբանին ․ ինչպէս որ գրուած է ․
16 Ասկէ ետեւ պիտի դառնամ , ու Դաւիթին
ինկած բնակարանը պիտի շինեմ , և անոր
կործանուած փլատակները նորէն պիտի շի-
17 նեմ , և կանգնեցընեմ զանիկայ ․ Որ մնացած
մարդիկը Տէրը փնտռեն , և բոլոր հե-
թանոսները որոնց վրայ որ իմ անունս
դրուած է , կ՚ըսէ Տէրը ․ որ ինքը աս ա-
18 մէն բաները կ՚ընէ ։ Յայտնի է Տէրոջը
իր գործքերը աշխարհիս սկիզբէն հետէ ։
19 Անոր համար ես ալ իրաւունք կը սեպեմ
նեղութիւն չտալ անոնց՝ որ հեթանոսնե-
20 րէն Աստուծոյ կը դառնան ․ Հապա
թուղթ մը տալ անոնց որ ետ քաշուին
կուռքի պղծութիւններէն և պոռնկութե-
նէն՝ ու խեղդուած բաներէն և արիւնէն ։
21 Ինչու որ Մովսէս առջի ազգերէն հետէ ա-
մէն քաղաքի մէջ զինքը քարոզողները ու-
նի և ժողովարաններուն մէջ ամէն շա-
բաթ օրերը կը կարդացուի ։
22 Ան ատենը առաքեալներուն և երէցնե-
րուն բոլոր եկեղեցիին հետ աղէկ երեւցաւ
որ իրենցմէ քանի մը ընտրուած մարդիկ
Անտիոք խրկեն Պօղոսին ու Բառնաբասին
հետ , Բարսաբա ըսուած Յուդան , և
23 Շիղան գլխաւոր մարդիկը ․ Առաքեալնե-
րուն աս բանը գրելով անոնց ձեռքովը ։

Digitized by Google

Առաքեալներն ու երէցները եւ եղբայրները
Անտիոքի ու Ասորիքի եւ Կիլիկիոյ մէջի
հեթանոսներէն եղած եղբայրներուդ ող-
ջոյն ։ Որովհետեւ լսեցինք՝ որ ոմանք իբր 24
թէ մեր կողմանէ ձեզ խռովեցուցեր են
խօսքերով՝ ձեր անձերը խախտելով հա-
մար, ու կ'ըսեն՝ Թէ պէտք է թլփատուիլ
ու օրէնքը պահել, որ անոնց մենք տուած
հրաման չէինք ։ Անոր՝ միաբանութեամբ 25
ժողովուածներուս աղէկ երեւցաւ, որ
ընտրուած մարդիկ ղրկենք ձեզի՝ Բառ-
նաբաս եւ Պօղոս մեր սիրելիներուն հետ ։
Անանկ մարդիկ՝ որոնք մեր Տէր Յիսուս 26
Քրիստոսի անուանը համար իրենց անձեր-
նին մատնեցին ։ Ասոր ղրկեցինք Յու- 27
դան եւ Շիղան, որ իրենք ալ բերնով
նոյն բաները ձեզի զրուցեն ։ Ինչու որ աղէկ 28
երեւցաւ Սուրբ Հոգիին ու մեզի ալ ձեր
վրայ աւելի բեռ չդնել, միայն թէ այս
հարկաւորներէս 'ի զատ ; Որ ետ կենաք 29
կուռքերուն զոհուածէն եւ արիւնէն՝ ու
խեղդուածէն, եւ պոռնկութենէն ընդնէն.
որ այս բաներէն ինքզինքնիդ պահելով՝
աղէկ պիտի ընէք ։ Ողջ եղէք ։

Անոնք ալ ճամբայ դրուելով՝ Անտիոք 30
իջան, եւ ժողովուրդը մէկտեղ ժողվելով՝
թուղթը տուին ։ Ու երբոր կարդացին՝ 31
ուրախացան անոր մխիթարութեանը վրայ ։
Յուդան ու Շիղան՝ որ իրենք մարգարէ 32
ալ էին, շատ խօսքերով մխիթարեցին
եղբայրները՝ եւ հաստատեցին ։ Իսկ ա- 33

Digitized by Google

տէն մը հոն կենալէն ետեւ՝ եղբայրներէն
խաղաղութեամբ ճամբու դրուեցան առա-
34 քեալներուն դառնալու։ Բայց Շիղային
35 աղէկ երեւցաւ հոն մնալ։ Պօղոս ու
Բառնաբաս, և ուրիշ շատեր ալ Ան-
տիոքին մէջը կը պատուէին Տէրոջը խօս-
քը սորվեցնելով ու քարոզելով։
36 Եւ քանի մը օրերէն ետքը Պօղոս
Բառնաբասին ըսաւ. Դառնանք և նորէն
պտըտինք եղբայրներուն քովը՝ ամէն մէկ
քաղաքներու, ուր որ Տէրոջը խօսքը քա-
րոզեցինք, տեսնենք թէ ինչ որ բաներ են։
37 Բառնաբաս կ'ուզէր որ Յովհաննէսն ալ
38 առնեն, որ Մարկոս կ'ըսուէր։ Բայց
Պօղոս կ'աղաչէր որ Պամփիւլիայի մէջ ի-
րենցմէ զատուողը՝ ու իրենց հետ գործի
39 չեկողը հետերնին չառնեն։ Եւ վէճերնին
անմիաբանութիւն մը եղաւ՝ մինչև որ ա-
նոնք մէկզմէկէ զատուեցան. Բառնաբաս
Մարկոսը առաւ՝ նաւով Կիպրոս գնաց։
40 Պօղոսն ալ Շիղան ընտրեց՝ ելաւ, եղ-
բայրներէն Աստուծոյ շնորհքը յանձնուե-
41 լով։ Եւ Ասորիներուն ու Կիլիկեցիներուն
կողմերը կը պտըտէր, ու եկեղեցիները կը
հաստատէր։

## ԳԼ. ԺԶ.

1 Եկաւ Դերբէ ու Լիւստրա հասաւ. և
ահա՛ հոն աշակերտ մը կար Տիմոթէոս ա-
նուն, որ հաւատացեալ Հրեայ կնկան մը
2 զաւակ էր, և հայրը Հելլէն. Ան

Digitized by Google

Լիւստրացի ու Իկոնիացի եղբայրներէն ալ
բարի վկայուած էր : Պօղոս ուզեց անիկայ 3
իր հետը տանիլ, և առաւ թլփատեց զա-
նիկայ այն տեղուանքը եղած Հրեաներուն
համար. վասն զի ամէնն ալ գիտէին թէ
անոր հայրը Հելլէն էր : Երբոր քա- 4
ղաքներէն կ'անցնէին, Երուսաղէմ եղած
առաքեալներէն ու երէցներէն սահմանուած
հրամանները կ'աւանդէին անոնց՝ որ պա-
հեն : Եկեղեցիներն ալ հաւատքի մէջ 5
կը հաստատուէին, և օրէ օր անոնց թիւը
կ'աւելնար :

Եւ Փռիւգիոյ ու Գաղատացւոց կողմե- 6
րը պտըտեցան՝ Սուրբ Հոգիէն արգիլուե-
լով որ Աստուծոյ խօսքը Ասիայի մէջ չը-
խօսին : Եւ Միւսիայի քովերը որ եկան 7
կը ջանային դէպ ի Բիւթանիա եր-
թալ. և Յիսուսի Հոգին թող չտուաւ
իրենց : Եւ Միւսիայէն անցնելով Տրո- 8
վադա իջան : Եւ հոն գիշերը Պօղոսին 9
տեսիլք մը երեւցաւ. Մակեդոնացի մարդ
մը կայներ կ'աղաչէր զինք ու կ'ըսէր.
Մակեդոնիա անցիր, մեզի օգնէ : Եւ 10
երբոր այն տեսիլքը տեսաւ, շուտ մը ու-
զեցինք Մակեդոնիա ելլել, հաստատելով
որ Տէրը մեզ կը հրաւիրէ՝ անոնց աւետա-
րանը քարոզելու :

Եւ Տրովադայէն ելանք՝ շիտակ Սա- 11
մոթրակէ գացինք, ու հետեւեալ օրը Նէա-
պոլիս : Եւ անկից ալ Փիլիպպէ, որ 12
է Մակեդոնացւոց առաջին վիճակին՝ Կոլո-

Digitized by Google

ղօմնիա ըսուած քաղաքը. և մենք ան
քաղաքին մէջ քանի մը օր կենալով,
13 Շաբաթ օրը քաղաքէն դուրս ելանք՝
գետեզերքին քովը, ուր որ սովորութիւն
ունէին աղօթք ընելու. ու նստանք
ժողվուած կնիկներուն հետ կը խօսէինք։
14 Եւ Լիդիա անուն կնիկ մը ծիրանավաճառ՝
Թիւատիր քաղաքէն, Աստուծմէ վախցող
մէկ մը, մտիկ կ'ընէր. որուն սիրտը Տէրը
բացաւ Պօղոսին ըսածներուն ուշադրու-
15 թիւն ընելու։ Եւ երբոր մկրտուեցաւ
ինքը և իր տունը, կ'աղաչէր ու կ'ըսէր.
Թէ որ զիս Տէրոջը հաւատարմացեալ կը սե-
պէք՝ իմ տունս մտէք բնակեցէք. և
ստիպելով տարաւ մեզ։
16 Եւ եղաւ որ երբ մենք աղօթքի կ'եր-
թայինք, մեզի մէկ աղախին մը պատա-
հեցաւ, որ հարցուկ դեւը պահելով բռո-
ներ էր. որ յիմարական գուշակութիւ-
նովը իր տէրերուն շատ վաստակ կը բե-
17 րէր։ Ասիկայ Պօղոսին և մեր ետեւէն
իյնալով կը պոռար՝ ու կ'ըսէր. Աս մար-
դիկը Բարձրեալ Աստուծոյ ծառաներն
են, որ ձեզի փրկութեան ճամբան կը քա-
18 րոզեն։ Եւ աս բանը շատ օրեր կ'ընէր.
Պօղոս բարկանալով՝ դարձաւ ու ըսաւ
ան դեւին. Յիսուս Քրիստոսի անունովը
հրաման կ'ընեմ քեզի, Ելի՛ր ասկից. և
19 նոյն ժամուն ելաւ գնաց։ Երբոր տեսան
անոր տէրերը՝ որ իրենց վաստակին յոյսը
կտրեցաւ, Պօղոսը ու Շիղան առին՝ ա-

Digitized by Google

տարան քաշեցին իշխաններուն առջևը ։
Եւ տարին զանոնք զօրագլուխներուն քո- 20
վը՝ ու ըսին ։ Այս մարդիկները մեր քա-
ղաքը իրար կ'անցընեն . իրենք Հրեայ
են , Եւ մեզի օրէնքներ կը սորվեցընեն՝ որ 21
արժան չէ մեզի ընդունել , ոչ ալ ընել .
ինչու որ Հռովմայեցի ենք ։ Եւ բազ- 22
մութիւնը անոնց վրայ դիզուեցաւ . զօ-
րագլուխներն ալ իրենց հանդերձները
պատռեցին , և հրաման ըրին որ զանոնք
ծեծեն ։ Եւ շատ վէրքեր տալով անոնց 23
բանտը դրին , պատուիրելով բանտապե-
տին որ զգուշութեամբ պահէ անոնք ։
Ան ալ այսպէս հրաման առնելով՝ անոնք 24
ներսի բանտը դրաւ , և ոտքերնին ալ
կոճղի մէջ ամրացուց ։
Երբ կէս գիշերին Պօղոս ու Շիղա ա- 25
ղօթք կ'ընէին և զԱստուած կ'օրհնէին , ու
բանտարկեալներն ալ մտիկ կ'ընէին իրենց ։
Եւ յանկարծակի մեծ շարժ մը եղաւ , ա- 26
նանկ որ բանտին հիմերը թնդացին . և
անմիջապէս ամէն դուռները բացուեցան , ու
ամենուն կապերը արձակեցան ։ Բան- 27
տապետը երբոր արթնցաւ՝ և բանտին
դուռները բացուած տեսաւ , թուրը քաշեց
և կ'ուզէր ինքզինքը սպաննել , կարծելով
որ կապուածները փախեր են ։ Պօղոս ալ 28
բարձր ձայնով կանչեց ու ըսաւ . Դուն
քու անձիդ վնաս մը մի՛ ըներ . ինչու որ
ամէնքս ալ հոս ենք ։ Ճրագ մը ուզեց 29
և ներս վազեց , ու զարհուրելով Պօղո-

30 սին և Շիղայի առջևը ինկաւ․ Ու ա-
նոնք դուրս բերելով՝ ըսաւ․ Տէրեր՝ ին-
31 չ պէտք է ընել որ փրկուիմ։ Ա-
նոնք ալ ըսին․ Հաւատա՛ Տէր Յիսուս
Քրիստոսին, ու պիտի փրկուիս դուն և
32 քու բոլոր տունդ։ Ու Տէրոջը խօսքը խօ-
սեցան անոր, ու ան ամենուն որ իր տա-
33 նը մէջն էին։ Ու առաւ անոնք գիշերուան
նոյն ժամուն՝ անոնց վէրքերը լուաց,
և շուտ մը մկրտուեցաւ ինքը ու բոլոր
34 իրեններըը։ Ու զանոնք իր տունը տարաւ,
անոնց առջևը սեղան դրաւ, և բոլոր տու-
նովը ուրախ եղաւ Աստուծոյ հաւատալով։
35 Ու երբոր առտու եղաւ, զօրագլուխները
խրկեցին սպասաւորները ու ըսին․ Արձա-
36 կէ՛ այն մարդիկը։ Բանտապետն ալ ան
խօսքերը Պօղոսին պատմեց, թէ զօրա-
գլուխները խրկեցին որ արձակուիք․ ուս-
տի ելէք և խաղաղութեամբ գացէք։
37 Բայց Պօղոս ըսաւ անոնց․ Մեզ յայտ-
նապէս ծեծելով՝ որ Հռովմայեցի անմեղ
մարդիկ ենք, բանտը դրին, ու հիմա
գաղտո՞ւկ կը հանեն մեզ․ ատանկ չէ՛, հա-
38 պա թող իրենք գան մեզ հանեն։ Ու
սպասաւորները պատմեցին զօրագլուխնե-
րուն ան խօսքերը․ երբոր լսեցին թէ
Հռովմայեցի են, խիստ վախցան, ու ե-
39 կան աղաչեցին անոնց։ Ու երբոր դուրս
հանեցին՝ աղաչեցին որ ան քաղաքէն ել-
40 լան։ Անոնք ալ բանտէն ելլելով՝ Լի-
դիայի տունը մտան, ու եղբայրները
տեսան՝ մխիթարեցին զանոնք, և գացին։

ԳԼ. ԺԷ.

Եւ Ամփիպոլիսէն ու Ապողոնիայէն 1
պտըտելով՝ Թեսաղոնիկէ եկան, ուր որ
Հրեաները ժողովարան մը ունէին: Պօ- 2
ղոս ալ իր սովորութեանը պէս անոնց
քովը մտաւ, և երեք շաբաթ օր խօսեցաւ
անոնց հետ գիրքերէն: Կը բանար և 3
առջևնին կը դնէր, թէ Պէտք էր Քրիս-
տոսի չարչարուիլ ու մեռելներէն յարու-
թիւն առնել, և թէ՝ այն Յիսուսը որ ես
ձեզի կը քարոզեմ, Քրիստոսն է: Եւ 4
անոնցմէ ոմանք հաւատացին, ու Պօ-
ղոսին և Շիղային հետ միացան. բայց
բարեպաշտ Հեթանոսներէն խիստ շատ
կար, ու երևելի կիներէն ալ հաւատա-
ցողները քիչ չէին: Բայց Հրեաները 5
նախանձեցան, և քանի մը դատարկա-
պորտ անօրէն մարդիկ առնելով՝ բազ-
մութեամբ քաղաքը տակնուվրայ ըրին.
և Յասոնին տանը առջևը դիզուելով՝
կ'ուզէին զանոնք ատեանը տանիլ: Եւ 6
երբոր զանոնք չգտան՝ Յասոնը ու մէկ
քանի եղբայրները քաղաքապետներուն
առջևը տարին, կանչուըռտելով՝ թէ ա-
նոնք որ աշխարհը տակնուվրայ ըրին՝ հոս
ալ հասան: Ասոնք Յասոնը ընդուներ 7
է, և ասոնք ամէնը կայսրին հրամանին
դէմ կը գործեն, Յիսուսը մէկ թագաւոր
մըն է կ'ըսեն: Եւ խռովեցուցին ժողո- 8
վուրդը ու քաղաքապետները, որ աս

Digitized by Google

9 քանները կը լսէին։ Բայց երբոր Յա-
սոնէն և ուրիշներէն երաշխաւոր առին՝
10 թող տուին զանոնք որ երթան։ Սակայն
եղբայրները շուտ մը գիշերով Պօղոսը և
Շիղան Բերիա խրկեցին. անոնք երբոր
հոն հասան, Հրէից ժողովարանը գացին։
11 Ասոնք որ առաջ Թեսաղոնիկէին մէջ ե-
ղողներէն շատ ազնիւ մարդիկ էին, որ
Աստուծոյ խօսքը կատարեալ յօժարու-
թեամբ ընդունեցին. ամէն օր Գիրքերը
կը քննէին՝ թէ այս բաները անանկ է։
12 Եւ անոնցմէ շատերը ալ հաւատացին. և
Յունաց պարկեշտ կիներէն ու մարդիկ-
ներէն հասարակութիւններէն ալ քիչ չէին։
13 Բայց երբոր իմացան Թեսաղոնիկէ եղող
Հրէաները, թէ Բերիայի մէջ ալ Աս-
տուծոյ խօսքը քարոզուեցաւ Պօղոսէն՝ հոն
ալ եկան ժողովուրդը դրդելու ու խռով
14 ընելու։ Նոյն ատենը եղբայրները շուտ
մը Պօղոսը խրկեցին որ մինչև ծովեզերքը
երթայ. և Շիղան ու Տիմոթէոսը հոն
15 մնացին։ Եւ անոնք որ Պօղոսը կ՚առ-
նէին՝ մինչև Աթէնք բերին անիկայ. և
կրկին հրաման առին Շիղային ու Տիմո-
թէոսին՝ որ շուտով իրեն գան. և գա-
ցին։

16 Եւ Պօղոս Աթէնքի մէջ անոնց սպասե-
լով՝ իր հոգին կը տանջուէր ներսի դին,
որովհետև քաղաքը կռապաշտութեան մէջ
17 կը տեսնէր։ Եւ ժողովարաններին մէջը
Հրէաներուն կը խօսէր ու բարեպաշտ


Digitized by Google

մարդոց, և ամէն օր հրապարակներուն
մէջը անոնց որ պատահէր: Եպիկուրեան 18
և Ստոյիկեան փիլիսոփաներէն մէկ քանի-
ները իրեն դէմ հակաճառութիւն կ'ը-
նէին. և ոմանք ալ կ'ըսէին, Ի՞նչ սեր-
մնաքաղը ի՞նչ ըսել կ'ուզէ. ուրիշ-
ներն ալ կ'ըսէին թէ՝ Կ'երեւնայ որ օտա-
րի մը օտար աստուածներու քարոզիչ է.
ինչու որ Յիսուսը ու յարութիւնը կ'աւե-
տարանէր: Եւ առին անիկայ Արիոսպա- 19
գոսը տարին, և կ'ըսէին. Կրնա՞նք ի-
մանալ թէ ինչ է սա նոր վարդապետու-
թիւնը՝ որ դուն կը քարոզես. Մեր ա- 20
կանջին օտար բաներ կը բերես. կ'ուզենք
գիտնալ թէ ինչ պիտի ըլլայ աս. (Աթենա- 21
ցի Աթենացիները ամէնն ալ, ու հոն կե-
ցող օտարականները ուրիշ բանի չէին
պարապէր, միայն թէ նոր բան մը խօսե-
լու կամ լսելու.) Պօղոս Արիոպագոսին 22
մէջը կայնեցաւ՝ ու ըսաւ. Ով Աթենացի
մարդիկ՝ ամէն կողմանէ կերպն կրօնասէր կը
տեսնեմ ձեզ: Որովհետև ես պտըտելով 23
ու ձեր պաշտամունքը տեսնելով՝ մէկ սե-
ղան մը գտայ, որուն վրայ գրուած էր՝
Անծանօթ Աստուծոյն. ասոր անգիտակ որ
դուք չճանչնալով կը պաշտէք, ես նոյնը
ձեզի կը քարոզեմ. Աստուած որ աս աշ- 24
խարհը ստեղծեց և անոր մէջի բոլոր բա-
ները, անիկայ երկինքի և երկրի Տէրն
է. ոչ ձեռագործ տաճարներու մէջ կը
բնակի, Ոչ ալ մարդոց ձեռքովը կը 25

Digitized by Google

պաշտուի՝ բանի մը կարօտի պէս ․ Ինքը
կու տայ ամենուն կեանք ու շունչ՝ և ամէն
26 բան ․ Ու բոլոր մարդոց ազգերը մէկ արիւնէ մը
ըրաւ՝ որ բոլոր երկրի երեսին վրայ բնա-
կին ․ որոշուած ժամանակները հաստատեց՝
և անոնց բնակութեան սահմանները , զԱս-
27 տուած փնտռելու ․ Որ ըլլայ թէ զինքը
շօշափեն ու գտնեն ․ Թէպէտև մեր ամէն մէ-
28 կէն ալ հեռու չէ ։ Ինչու որ անով կ'ապ-
րինք և կը շարժինք ու կանք , ինչպէս որ
ձեր բանաստեղծներէն մէկ քանիները ալ
ըսին ; Թէ Անոր ցեղէն ալ ենք ։
29 Ուստի՝ որովհետև Աստուծոյ ցեղէն ենք՝
միտք չէ որ անանկ սեպենք , թէ Աստ-
ուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ
արծաթի կամ քարի , որ մարդու ճար-
տարութիւնովը և խորհուրդովը փորուած ըլ-
30 լալու է ։ Արդ Աստուած տգիտութեան
ժամանակներուն անտես ընելով , հիմա ամէն կը
պատուիրէ մարդիկներուն՝ որ ամէն մէկը
31 ապաշխարեն ։ Ինչու որ օր մը որո-
շեց ; որ անով աշխարհս արդա-
րութիւնով դատէ այն մարդովը
ձեռքովը , որուն ինքը սահմանեց՝ ամենուն
հաւատացընելու համար զանիկա մեռե-
լներէն յարուցանելով ։
32 Երբոր մեռելներէն յարութիւնը լսեցին՝
ոմանք ծաղր կ'ընէին ։ Ուրիշները ալ կ'ըսէին ․
Աս բանին համար նորէն անգամ մըն ալ
33 մտիկ ընենք քեզի ։ Ու Պօղոս ան-
34 նոնց մէջէն ելաւ ։ Իսկ քանի մը

Digitized by Google

մարդիկ ալ իրեն յարելով հաւատացին. որոնց մէջն էր Դիոնեսիոս Արիսպագացին, և Դամարիս անունով կին մը, ուրիշ անոնց հետ ուրիշներ ալ։

## ԳԼ. ԺԸ.

Ասկէ ետև Պօղոս Աթենքէն զատուե- 1
լով՝ Կորնթոս եկաւ, Հոն մէկ Հրէայ 2
մը գտաւ Ակիւղաս անունով՝ ազգաւ Պոն-
տացի, որ նոր եկեր էր Իտալիայէն՝ և
անոր Պրիսկիղա կնիկը, (Կղօդիոսին
հրամանին համար՝ որ բոլոր Հրէաները
Հռովմէն դուրս հանեց։) ու անոնց
քովը գնաց։ Եւ որովհետև նոյն արհեստէն 3
արհեստակից էր՝ անոնց քովը կեցաւ, և կը
բանէր. քանզի անոնք արհեստով վրանագործ
էին։ Եւ ամէն շաբաթ օրերը ժողովա- 4
րանին մէջ կը խօսէր, և Հրէաները ու
հեթանոսները կը համոզէր։ Երբոր Շիղա- 5
յն և Տիմոթէոս Մակեդոնիայէն եկան՝
Պօղոս հոգին խիստ պաշարուած, Հրէաներուն
վկայութիւնով կը հաստա-
տէր՝ թէ Յիսուս Քրիստոսն է։ Անոնք 6
ալ երբոր դէմ կեցան ու կը հայհոյէին,
իրենց լաթերը թօթուելով՝ և ըսաւ անոնց.
Ձեր արիւնը ձեր գլխուն, ես անպարտ
եմ, ասկէ ետև հեթանոսներուն կ'երթամ։
Եւ անկից գնաց մտաւ մէկու մը տունը, 7
որուն անունը Տիտոս Յուստոս էր՝ Աս-
տուածապաշտ մարդ մը. որուն տու-
նը ժողովարանին մօտ էր։ Կրիսպոս՝ ան 8

Digitized by Google

ժողովարանին մեծը բոլոր իր տունովը հա-
ւատաց Տէրոջը. և Կորնթացիներէն շա-
տերը, լսելով՝ հաւատացին ու մկրտուե-
9 ցան։ Այս գիշերը տեսիլքի մէջ Տէրը ըսաւ
Պօղոսին. Մի՛ վախնար՝ հապա խօսէ՛, և
10 մի՛ դադարիր. Ինչու որ ես քեզի հետ
եմ, և մէկը քեզի դէմ պիտի չելլէ՝ քեզի
նեղութիւն տալու. քանզի այս քաղա-
քիս մէջը ես շատ ժողովուրդ ունիմ։
11 Այս հոն տարի մը ու վեց ամիս նստաւ.
ու Աստուծոյ խօսքը անոնց կը սորվեցը-
նէր։

12 Աքայեցւոց Գաղլիոն փոխանորդ եղե-
լուն ժամանակը Հրեաները միաբանելով՝
Պօղոսին դէմ ելան, և զինքը դատաստա-
13 նը քաշեցին. Այս կ՚ըսէին, Թէ Ասիկայ
կը խրատէ մարդիկը օրէնքէն դուրս Աս-
14 տուծոյ պաշտելու։ Երբոր Պօղոս
իր բերանը բանալու պատրաստ էր, Գաղ-
լիոն ըսաւ Հրեաներուն. Թէ որ մէկ
անիրաւութիւն մը կամ չար գործք մը հա-
մար ըլլար՝ ով Հրեաներ, իրաւամբ կը հա-
15 ճէի որ ձեզի մտիկ ընէի. Բայց թէ որ
կռիւներնիդ խօսքի ու անուններու՝ և ձեր
օրէնքին համար է, դուք ձեզմէ տեսէք.
ինչու որ ես ասանկ բաներու դատաւոր
16 ըլլալ չեմ ուզեր։ Այս դուրս ըրաւ ա-
17 նոնք ատեանէն։ Ան ատենը բոլոր Յոյ-
ները Սոսթենէս ժողովարանապետը առին՝
հոն ատեանին առջեւը կը ծեծէին. և աս
բաներս վրայով Գաղլիոն բնաւ հոգ չէր ը-
ներ։

Digitized by Google

[illegible] 18
[illegible]
[illegible] 19
[illegible]
[illegible] 20
[illegible]
[illegible] 21
[illegible]
[illegible] 22
[illegible]
[illegible] 23
[illegible]
[illegible] 24
[illegible]
[illegible] 25
[illegible]
[illegible] 26
[illegible]
[illegible] 27

որ անիկայ՝ ուզեց Աքայիա երթալ, եղ-
բայրները յորդորելով գիր գրեցին աշա-
կերտներուն՝ որ զանիկայ ըն-
դունին. որ հոն հասնելով՝ շատ օգտակար
եղաւ շնորհքով հաւատացեալներուն.
28 Վասնզի հրապարակաւ սաստիկ կը յանդիմա-
նէր Հրեաները, սուրբ գիրքերէն
ցուցնելով թէ Յիսուսը Քրիստոս է։

## ԳԼ. ԺԹ.

1 Եւ մինչ որ Ապողոս Կորնթոսի մէջ էր,
Պօղոս վերի կողմերը պտըտելով՝ ու Եփե-
սոս եկաւ. եւ քանի մը աշակերտներ
2 գտնելով, ըսաւ անոնց. Արդեօք, հաւա-
տացիք՝ Սուրբ Հոգին առի՞ք. անոնք .
անոնք ալ ըսին իրեն. Ոչ, մենք լսած
3 ալ չենք՝ թէ Սուրբ Հոգի կայ։ Եւ ըսաւ
անոնց. Հապա ինչո՞վ մկրտուեցաք. Ա-
նոնք ալ ըսին. Յովհաննէսին մկրտու-
4 թիւնովը։ Պօղոս ալ ըսաւ. Յովհաննէս
ապաշխարութեան մկրտութիւն մկրտեց
ըսելով ժողովուրդին, եւ իրմէ ետքը որ
պիտի գայ՝ անոր հաւատան. այսինքն
5 Յիսուս Քրիստոսին։ Եւ երբ
որ լսեցին, Տէր Յիսուսին անունովը մկր-
6 տուեցան։ Եւ Պօղոս անոնց վրայ
ձեռք դնելով՝ Սուրբ Հոգին անոնց վրայ
եկաւ. լեզուներով կը խօսէին ու կը մարգարէա-
7 նային։ Եւ ան մարդիկը բոլոր
8 տասներկու հոգի էին։ Եւ ժողովարանը
մտնելով՝ երեք ամիս համարձակութեամբ

Աստուծոյ թագաւորութեանը վրայով կը
խօսէր ։ ու կը համոզէր ։ Երբոր մէկ- 9
քանիները կը խստանային ու դէմ կը դնէին
բազմութեան առջեւը այն ճամբան բամբասե-
լով, անոնցմէ զատուեցաւ, ու աշա-
կերտները որոշեց. ամէն օր Տիւրանոս անուն
մէկու մը դպրոցանոցը մէջ կը խօսէր ։ Եւ 10
աս երկու տարի քաշեց՝ մինչեւ որ բոլոր Ա-
սիայի մէջ բնակող Հրեաները եւ հեթանոս-
ները Տէրոջը խօսքը լսեցին ։ Եւ շատ 11
հրաշքներ կ'ընէր Աստուած Պօղոսին ձեռ-
քովը ։ Այնպէս որ անոր քրտինքէն թաշ- 12
կինակները ու գօտիները կը տանէին հիւանդ-
ներուն, եւ իրենց ցաւերէն կը բժշկուէին,
եւ չար դեւերը կ'ելլէին ։ Նաեւ ոմանք 13
պտըտող Հրեաներէն մէկ քանիները որ
երդմնեցուցիչ էին, յանդգնեցան Տէր
Յիսուսին անունը կանչել անոնց վրայ՝ ու-
րոնք չար դեւեր ունէին. եւ կ'ըսէին, Ձեզ
կ'երդմնցընենք Յիսուսով, որ Պօղոսը կը
քարոզէ ։ Սկեւա ըսուած մէկ Հրեայ 14
քահանայի մը եօթը որդիներն էին՝ որ աս
բանը կ'ընէին ։ Պատասխան տուաւ չար 15
դեւը՝ եւ ըսաւ անոնց. Յիսուսը գիտեմ՝
ու Պօղոսը կը ճանչնամ, բայց դուք ո՞վ
էք ։ Եւ այն մարդը որ իր մէջը չար դեւը 16
ունէր՝ վազեց՝ երկուքին ալ բռնեց. անոնք
ատաւ զանոնք, մինչեւ որ մերկ ու վի-
րաւորուած՝ տունէն դուրս փախան ։ Եւ 17
աս բանը յայտնի եղաւ բոլոր Հրեանե-
րուն եւ հեթանոսներուն՝ որ Եփեսոսի մէջ

Digitized by Google

կը բնակէին․ և անոնց ամենուն վրայ
վախ մը ինկաւ, և Տէր Յիսուսի անունը
18 կը մեծնար։ Եւ այն հաւատացեալներէն
շատերը կու գային ու կը խոստովանէին՝ և
19 իրենց ըրածները կը պատմէին։ Եւ կա-
խարդական բանի հետևողներուն շատերը
դիրքերնին կը բերէին՝ ամենուն առջին
կ'այրէին․ և անոնց գինը հաշուեցին՝ և
յիսուն հազար արծաթ դահեկան գտան։
20 Եւ այսպէս՝ Տեառնմէ խօսքը կ'աճէր և ուժ
կ'առնէր։

21 Եւ երբոր աս բաները լմնցան՝ Պօղոս
միտքը դրաւ որ Մակեդոնիայէն ու Աքա-
յիայէն պտըտելով Երուսաղէմ գայ․
կ'ըսէր՝ Թէ հոն երթալէս ետքը պէտք է
22 ինծի որ Հռովմ ալ տեսնեմ։ Եւ իրեն
սպասաւորութիւն ընողներէն երկուքը՝ Տի-
մոթէոսը ու Երաստոսը ղրկեց Մակեդո-
նիա․ և ինքը ատեն մը ալ Ասիայի մէջ
կեցաւ։

23 Եւ այն ատենները շատ խռովութիւն
24 եղաւ Տեառնմէ ճամբուն համար։ Եւ
Դեմետրիոս անունով արծաթագործ մը՝
Արտեմիս կուռքին փոքրիկ տաճարներ կը
շինէր արծաթէ, ու քիչ շահ չէր ըներ
25 վարպետներուն․ Ասոնք ինքը բոլոր այն ար-
հեստին բանուորներովը մէկտեղ ժողվեց՝ ու
ըսաւ․ Մարդիկ՝ դուք ձեզմէ գիտէք որ
26 աս գործքէս է մեր վաստակը․ Եւ կը
տեսնէք ու կը լսէք որ չէ՛ թէ միայն Ե-
փեսացւոց, հապա գրեթէ բոլոր Ասիա-

Digitized by Google

ցուց շատ ժողովուրդները՝ այս Պօղոսը համոզելով մտքերնին դարձուց, ըսելով թէ ձեռքով շինուած բաները աստուած չեն ։ Իսկ այս բանը չէ թէ միայն մեր 27
կողմը նախատուելու վտանգին մէջ կը ձգէ, հապա Արտեմիս մեծ աստուածոյն տաճարն ալ ոչինչ մը կը սեպուի. մանաւանդ որ անոր մեծութիւնը պիտի խափանուի, զոր որ բոլոր Ասիա ու աշխարհք կը պաշտեն ։ Իսկ երբոր այս լսեցին 28
բարկութիւնով լեցուած կը կանչուըռտէին ու կ՚ըսէին ։ Մեծ է Եփեսացիներուն Արտեմիսը ։ Իսկ քաղաքը խռովութիւ- 29
նով լեցուեցաւ. ամէնը մէկէն թէատրոնը վազեցին, և յափշտակեցին Գայիոս ու Արիստարքոս Մակեդոնացիները՝ Պօղոսին ճամբայարհորդակիցները ։ Իսկ Պօղոս 30
երբոր ուզեց այն բազմութեան մէջը մըտնել՝ աշակերտները թող չտուին զինքը ։ Ասիապետներէն ալ ոմանք՝ որ իր բարե- 31
կամները էին, մարդ կը խրկէին իրեն և կ՚աղաչէին՝ որ չհամարձակի թէատրոնը երթալու ։ Մէկը մէկ կերպ՝ մէկալը ու- 32
րիշ կերպ բան մը կը կանչուըռտէին ։ ինչու որ իրենց ժողովքը շփոթութեան մէջ էր, և անոնցմէ շատերը չէին գիտեր՝ թէ ինչ բանի համար ժողվուած են ։ Իսկ 33
այն խռոված բազմութեանը մէջէն Աղեքսանդրոսը առաջ քշեցին. և երբոր Հրեաները առաջ բերին անիկայ, Աղեքսանդրոս ձեռքը շարժեց՝ և ուզեց որ պաշ-

Digitized by Google

34 մուլթեանը պատասխանեց ասոր ։ Երբոր
գիտցան թէ մարդը Հրեայ է, ամէնքը
մէկ բերան եղած՝ երկու ժամի չափ կը
կանչըռտէին, Թէ Մեծ է Եփեսացիներ-
35 րուն Արտեմիսը ։ Ատենադպիրը ան ժո-
ղովուրդը հանդարտեցնելով ու ըսաւ. Ո՛վ
Եփեսացի մարդիկ՝ ո՞ր մարդն է որ չգիտ-
նայ աս Եփեսացւոց քաղաքը՝ մեծ Արտե-
միս և Դիոպետէս կուռքերուն տաճար-
36 ները պահողը ։ Արդեն աս որ անանկ
է անուրանալի՝ պէտք է ձեզի հանդարտ կենալ,
37 Եւ յանդգնութեամբ բան մը չընել ։ Դուք
աս մարդիկը հոս բերիք, որոնք ոչ տա-
ճարները կողոպտեր են՝ ոչ ալ ձեր Աստ-
38 ուածուհին հայհոյեր են ։ Արդ
թէ որ Դեմետրիոս և իր հետը եղած վար-
պետները մէկու մը հետ բան մը ունին՝
ատեանը թող երթան, ուր տեղ դատա-
ւորներ կան, և մէկզմէկու վրայով ամ-
39 բաստանութիւն ընեն ։ Հապա թէ որ
ուրիշ բանի համար է վէճը, օրինաւոր
40 ժողովքի մէջ թող որոշուի ։ Ինչու որ
մենք ալ վտանգի մէջ ենք աս օրուան աղ-
մուկին համար, որովհետև առանց պատ-
ճառի եղաւ, անանկ որ պիտի չկրնանք աս
ժողովքին համար պատասխան տալ ։ Աս-
անանկ ըսելով ժողովքը արձակեց ։

ԳԼ. Ի

1 Աս աղմուկը դադարելէն ետև՝ Պօղոս
աշակերտները կանչեց և մխիթարեց ․ Ետքը

Digitized by Google

բարեւով ըսաւ՝ ու ելաւ Մակեդոնիա գնաց ։
Ան կողմերը պտըտելով, ու շատ խօսքերով 2
անոնք մխիթարելէն ետեւ Յունաստան եկաւ ։
Հոն իրեք ամիս կենալէն ետքը , Հրեա- 3
ները իրեն դէմ դաւաճանութիւն խոր-
հուրդ ըրին՝ երբոր կ'ուզէր Ասորիք երթալ ․
անոր համար որոշեց Մակեդոնիայի վրայէն
դառնալ ։ Իսկ մինչեւ Ասիա իրեն հետը կ'եր- 4
թար Բերիացի Պիւռոսի որդին Սոսիպատ-
րոսը , և Թեսաղոնիկեցիներէն Արիստար-
քոսը և Սեկունդոսը՝ և Դերբեցի Գայոսը
ու Տիմոթէոսը , ու Ասիացի Տիւքիկոսը
և Տրոփիմոսը ։ Ասոնք առաջ գացին Տրով- 5
վադայի մէջ մեզի կը սպասէին ։ Մենք 6
ալ բաղարջակերաց օրերէն ետեւ Փիլիպ-
պոյէն նաւեցինք , և հինգ օրուան մէջ
Տրովադա եկանք անոնց քովը ․ հոն եօ-
թը օր կեցանք ։

Իսկ շաբաթ օրը երբոր ժողվուեր էինք 7
հաց կտրելու , Պօղոս անոնց կը քարոզէր ,
ինչու որ հետեւեալ օրը պիտի երթար ․ և
խօսքը երկընցուց մինչեւ կէս գիշեր ։ Շատ 8
լապտերներ կային այն վերի սենեակը՝ ուր
որ մենք ժողվուած էինք ։ Իսկ մէկ երի- 9
տասարդ մը Եւտիքոս անունով պատուհանին
վրայ նստած՝ խորունկ կը քնանար ․ երբ-
որ Պօղոս խօսքը երկընցուց՝ խորունկ
քնով բռնուած՝ երրորդ դստիկոնէն վար
ինկաւ , և անիկայ մեռած վերցուցին ։
Իսկ Պօղոս վար իջաւ անոր վրայ ինկաւ , 10
և գրկեց զանիկայ՝ ու կ'ըսէր ․ Մի՛ խռո-

Digitized by Google

11 [illegible] ինչու որ [illegible] Հոգին իր մէջն է։ Իսկ
եղաւ [illegible] կարելի ու կենդանի․ եւ մինչեւ առա-
ջուր չէր մէկն ալ խօսեցաւ, ու ետքը [illegible]
12 [illegible] գնաց։ Իսկ [illegible] պատասխանին ողջ բեր-
13 րին, եւ շատ [illegible]։ Մենք
ալ [illegible] [illegible] Աստուծոյ, յոյս [illegible]
[illegible] որ անոնցմէ [illegible] [illegible]
[illegible] որ անանկ [illegible] էր [illegible]
14 [illegible] [illegible] [illegible]․ Իսկ [illegible]
որ [illegible] մէջը [illegible] [illegible] [illegible]
15 [illegible] [illegible] [illegible] [illegible]
ալ [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible]․ եւ [illegible] օրը [illegible]
[illegible] [illegible] եւ [illegible] օրը [illegible]
16 [illegible] [illegible] որ [illegible] [illegible] [illegible]
որ [illegible] [illegible] [illegible] [illegible] որ
[illegible] [illegible] մը [illegible] մէջը [illegible]
[illegible] [illegible] որ [illegible] [illegible] եւ
[illegible] [illegible] օրը [illegible]
[illegible]
17 Իսկ [illegible] [illegible] [illegible] [illegible]
18 կենդանիները [illegible] [illegible]․ Իսկ! [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] որ [illegible] [illegible] [illegible] [illegible] որ [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
19 [illegible] [illegible]․ [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] ու [illegible], որ
[illegible] [illegible] [illegible]
20 [illegible]։ [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

Digitized by Google

ձեզի հրապարակաւ և տուն մէջ սորվեցը-
նելէն : Վկայութիւն տալով Հրէանե- 21
րուն ու հեթանոսներուն . առ-ջինը՝ դէպ 'ի
Աստուած ապաշխարութեան համար , և
մեր Տէր Յիսուս Քրիստոսին հաւատալու
համար : Եւ հիմա՝ ահա՝ ես հոգւով կա- 22
պուած՝ Երուսաղէմ կ'երթամ . և հոն
ինչ որ պիտի պատահի ինծի՝ չեմ գիտեր .
Միայն թէ Հոգին Սուրբ ամէն քաղաքի 23
մէջ ինծի կը վկայէ՝ ու կ'ըսէ թէ՝ կապեր
և նեղութիւններ քեզի կը սպասեն : Բայց 24
ես իմ անձս մէ՛կ բանով մը պատուական
չեմ սեպեր , միայն թէ իմ ընթացքս ու-
րախութեամբ լմնցընեմ և այն պաշտօնը ,
որ Տէր Յիսուսէն առի՝ Աստուծոյ շնորհա-
ցը աւետարանին վկայ ըլլալու : Եւ հի- 25
մա ահա ես գիտեմ որ ալ իմ երեսս պիտի
չտեսնէք դուք ամէնքդ , որ մէջերնիդ
պտըտեցայ Աստուծոյ թագաւորութիւնը
քարոզելու : Աստի աս օրս կը վկայեմ 26
ձեզի , որ ես անպարտ եմ ամենուն արիւ-
նէն : Ինչու որ՝ ես չքաշուեցայ Աստուծոյ բո- 27
լոր կամքը ձեզի պատմելէն : Զգուշա- 28
ցէք ձեր անձերուն և բոլոր հօտին , որ
Հոգին Սուրբ ձեզ անոնց վրայ տեսուչ
դրաւ՝ Տէրոջը ժողովուրդը հովուելու , որ
իր արիւնովը ստացաւ : Ինչու որ գիտեմ 29
ես՝ որ իմ գացուելէս ետքը ձեր մէջը յա-
փըշտակող գայլեր պիտի գան , որ պիտի
չխնայեն հօտին : Եւ ձեզմէ ալ ոմանք 30
մարդիկ պիտի ելլեն՝ որ ծռուռութեամբ բա-

նէր, պիղծ խօսքեր, աշակերտները իրենց
31 ետևէն քաշելու ։ Անոր համար արթուն
կեցէք, և միտքերնիդ բերէք՝ որ երկու
տարի գիշեր ու ցորեկ չդադրեցայ ամէն
32 մէկը արցունքով խրատելու ։ Ու հիմա
ձեզ Աստուծոյ կը յանձնեմ և անոր շնոր-
հացը խօսքին, որ անիկայ կարող է շինե-
լու՝ ու բոլոր սուրբերուն հետ ձեզի ժա-
33 ռանգութիւն տալու ։ Չեմ մէկուն ար-
ծաթին՝ կամ ոսկիին՝ կամ հանդերձին
34 ցանկացայ ։ Դուք ձեզմէ գիտէք՝ որ ին-
ծի պէտք եղածը և անոնց որ ինծի հետ
35 էին՝ աս ձեռքերս հոգացին ։ Ու ամէն
բան ձեզի ցուցուցի, որ ասանկ պէտք է
աշխատիլ, ու հիւանդներուն հոգ տանիլ,
և միտք բերել Տէր Յիսուսին խօսքը, որ
ինքը ըսաւ. Աւելի երանելի է տալը քան
36 թէ առնելը ։ Ու աս որ ըսաւ՝ ամենուն
հետը ծունկի վրայ գալով աղօթք ըրաւ ։
37 Ամէնքն ալ սաստիկ կու լային, և Պօղո-
սին պարանոցին վրայ ինկնալով զանիկայ
38 կը համբուրէին ։ Ամենէն աւելի կը
ցաւէր անոր խօսքին վրայ, որ կ'ըսէր՝ թէ
ալ պիտի չտեսնեն իր երեսը ։ Եւ զանիկայ
ճամբայ դրին նաւը երթալու ։

## ԳԼ. ԻԱ

1 Ու եղաւ որ երբոր մենք ելանք ու ա-
նոնցմէ զատուեցանք՝ դէպ 'ի դիմացի
կողմը երթալով Կոս եկանք. և միւս օ-
2 րը Հռոդոս, ու անկից Պատարա ։ Ու

Digitized by Google

նաւ մը գտանք որ Փիւնիկէ կ'երթայ , և
անոր մէջը մտնելով գացինք : Եւ Կիպ- 3
րոսն որ երևցաւ անիկայ ձախ կողմերնիս
թողուցինք , դէպ ի Սիւրիա նաւեցինք ,
և Տիւրոս իջանք . քանզի որ նաւը հոն ապ-
րանքը թափելու էր : Եւ աշակերտները 4
գտնելով՝ հոն եօթն օր կեցանք . որոնք
Հոգւով Պօղոսին կ'ըսէին Երուսաղէմ
չելլէ : Եւ երբոր այն օ- 5
րերը լմնցուցինք՝ ելանք գացինք , ամէնն
ալ կիներով ու տղաքներով մինչև քա-
ղաքէն դուրս մեզ ճամբայ դրին . և ծո-
վին եզերքը ծունր դնելով աղօթք
ըրինք : Ու իրարմէ բաժանուելով մենք 6
նաւը ելանք , անոնք ալ տուներնին դար-
ձան : Եւ մենք նաւը Տիւրոսէն առաջ 7
քշելով Պտղոմայիդա հասանք , և եղ-
բայրները բարևելով մէկ օր մը քովերնին
կեցանք : Եւ հետևեալ օրը անկից ե- 8
լանք Կեսարիա եկանք . և Փիլիպպոս
աւետարանիչին տունը մտանք , որ եօթը
եօթնէն մէկն էր , անոր քովը կեցանք :
Անիկայ չորս հատ կոյս աղջիկ ունէր , որ 9
մարգարէ էին : Եւ հոն շատ օրեր որ կե- 10
ցանք՝ Հրէաստանէն մէկ մարգարէ մը ի-
ջաւ Ագաբոս անունով . Եւ երբոր մեզի 11
եկաւ , Պօղոսին գօտին առաւ իր ձեռքե-
րը և ոտքերը կապեց , ու ըսաւ . Ասանկ
կ'ըսէ Հոգին Սուրբը , Էն մարդը որ աս
գօտին իրենն է , ասանկ պիտի կապեն
Հրէաները Երուսաղէմի մէջը , ու հե-

Digitized by Google

12 Թանտոններուն ձեռքը պիտի մատնեն ։ Ու
երբոր ասոր լսեցինք , մենք ալ և հոն ե-
ղողներն ալ աղաչեցինք իրեն որ Երուս-
13 աղէմ չելլէ ։ Ան ատեն Պօղոս պա-
տասխան տուաւ . Ի՞նչ կ'ընէք , ինչո՞ւ
կու լաք և իմ սիրտս կը ճմլէք , ինչու որ
ես չէ՛ թէ միայն կապուելու՝ հապա Տէր
Յիսուս Քրիստոսի անունին համար Ե-
րուսաղէմի մէջ մեռնելու ալ պատրաստ
14 եմ ։ Ու երբ ինքը որ միտք չըրաւ՝ լռեց կե-
ցանք , ու ըսինք՝ Տէրոջը կամքը թող
ըլլայ ։
15 Ու ան օրերէն ետև պատրաստուելով
16 Երուսաղէմ ելանք ։ Կեսարիայի աշա-
կերտներէն ալ մեզի+ոմանք մեր հետը ե-
կան , և մեզ տարին Կիպրացի Մնասոն
մը՝ առջի աշակերտներէն մէկը , որուն քով
17 մը պիտի կենայինք ։ Ու երբոր մենք Ե-
րուսաղէմ մտանք՝ եղբայրները ուրախու-
18 թիւնով մեզ ընդունեցին ։ Ու հետևեալ
օրը Պօղոս մեզի հետ Յակոբոսին քովը
գնաց , ու բոլոր երէցներն ալ եկան ։
19 Ու զանոնք բարևելով՝ մի ըստ միոջէ կը
պատմէր՝ ինչ որ Աստուած հեթանոսներուն
20 մէջը ըրաւ իր ծառայութիւնովը ։ Անոնք
ալ լսելով՝ փառք կու տային Աստուծոյ ։
և ըսին իրեն . Կը տեսնե՞ս եղբայր՝ քանի՛
բիւրաւոր հաւատացեալ Հրէաներ կան ։
ու ամէնն ալ օրէնքին նախանձաւոր են ։
21 Եւ այս քու վրայովդ իմացան՝ որ դուն բո-
լոր հեթանոսներուն մէջ եղած Հրէաներէ

Digitized by Google

բոլոր Մովսէսէն ապստամբիլ կը սորվեցը-
նես , ըսելով որ տղաքներնին չթլփատեն , և
կրօնական սովորութիւններուն համեմատ
չվարուին : Արդ ի՞նչ պիտի ըլլայ , 22
ինչու որ պիտի լսեն թէ եկեր ես : Ասոր 23
աս բանը ըրէ՝ որ քեզի կ՛ըսենք . Մեր
քովը չորս մարդ կայ , որոնք իրենց վրայ
ուխտ դրած են . Ասոնք առ՝ իրենց հետ 24
մաքրուէ՝ , և ան ծախքն ալ ըրէ՝ որ ի-
րենց գլուխը ածիլեն . որ ամէնն ալ գիտ-
նան թէ քու վրայովդ խօսուած բաներնին
սուտ է . հապա դուն ալ միաբան ես օ-
րէնքը պահելով : Իսկ հաւատքի եկող 25
հեթանոսներուն համար մենք խորհեցինք՝
ինչպէս որ սահմանեցինք , որ անոնք ա-
նանկ բաներ չպահեն . միայն թէ կուռ-
քերուն զոհուածէն ետ կենան՝ ու արիւ-
նէն , և խեղդուածէն , ու պոռնկութիւ-
նէն : Ան ատենը Պօղոս ան մարդիկը ա- 26
ռաւ՝ ու հետևեալ օրը անոնց հետ մաք-
րուած՝ տաճարը մտաւ , մաքրութեան օ-
րերը լմննալը ցուցընելու համար . մինչև
որ անոնց ամէն մէկուն համար պատարագ
եղաւ :

Եւ երբոր եօթը օրերը լմննալու վրայ 27
էր , Ասիացի հրէաները զանիկայ տաճա-
րին մէջը տեսնելով՝ բոլոր բազմութիւնը
վրան խռովեցին , և անոր ձեռք զարկին՝
կը կանչուըռտէին . Իսրայելացի՛ մարդիկ՝ 28
օգնութիւն հասէք . աս ան մարդն է՝ որ
ժողովուրդին , և օրէնքին , ու աս տե-

Digitized by Google

ղէն , ամենայն ապերն առեց . Համբարձման բայց
կը յայտնեցին . մինչև որ , տաճարին մէջը
Հեթանոսներ ալ միացուց , ու սուրբ տեղը
29 պղծեց . ( Ինչպէս որ առաջուց Եփեսացի
Տրոփիմոսը իրենց հետ քաղաքին մէջը տես-
եր էին , և կը կարծէին թէ Պօղոս ա-
30 նիկայ տաճարը մտցուց . ) Բոլոր քաղա-
քը շարժեցաւ , և ժողովուրդը դիմեցաւ՝
ու բռնեցին Պօղոսը տաճարէն դուրս քա-
շեցին . և շուտ մը դռները գոցուեցան .
31 Երբ կ'ուզէին անիկայ սպաննել . լուր հա-
սաւ գունդին հազարապետին՝ թէ բոլոր
32 Երուսաղէմը խռով անցեր է : Ան ալ
շուտ մը զինուորներ , և հարիւրապետներ
առաւ՝ անոնց վրայ վազեց . անոնք ալ
հազարապետը ու զինուորները տեսնելով
33 Պօղոսը ծեծելէն դադրեցան : Ու ատենը
հազարապետը գնաց բռնեց զանիկայ , և
հրաման ըրաւ որ կրկին շղթայով կա-
պեն . և կը հարցընէր՝ թէ անիկայ ո՞վ է ,
34 ու ի՞նչ ըրեր է : Ամբոխութեան մէջէն
ոմանք մէկ կերպ՝ մէկալներ ուրիշ կերպ կանչ-
ելը կը պոռչտուքին . երբոր չկրցաւ ան
շփոթութենէն ստոյգը գիտնալ , հրաման
35 ըրաւ որ զանիկայ բերդը տանին : Եւ
երբոր աստիճանաց հասաւ՝ անանկ պատա-
հեցաւ որ զինուորները զինք վերցընեն տա-
նին , ու անանկ բերեն . ժողովուրդին
36 սաստկութեանը համար . Քանզի որ ժո-
ղովուրդին բազմութիւնը ետևէն կ'երթար՝
37 ու կ'ըսէին . Մեռցուր զանիկայ : Երբոր

Digitized by Google

Պօղոս բերդը մտնելու վրայ էր՝, հազա-
րապետին ըսաւ. Արդեօք կարելի՞ է ին-
ծի՝ որ քու հետդ խօսիմ։ Ան ալ ըսաւ.
Յունարէն գիտե՞ս. Չըլլա՞յ որ դուն ան 38
Եգիպտացին ըլլաս, որ աս օրերէս առաջ
չորս հազար սրիկայ մարդիկ ապստամբե-
ցուցիր, ու անապատը հանեցիր։ Պօղոս 39
ալ ըսաւ. Ես Հրէայ մարդ մըն եմ՝ Կի-
լիկեցւոց Տարսոնէն, չէ՛ թէ մէկ պզտիկ
քաղաքի մը քաղաքացի. կ'աղաչեմ քեզի՝
ինծի հրաման տուր որ աս ժողովուրդին
խօսիմ։

Անիկայ երբոր հրաման տուաւ, Պօղոս 40
աստիճաններուն վրայ կայնելով՝ ձեռքը շարժեց
ժողովուրդին. երբոր աղէկ մը լռութիւն
ըրին՝ սկսեց Եբրայեցւոց լեզուովը խօսիլ,
ու ըսաւ.

## ԳԼ. ԻԲ.

Մարդիկ եղբայրներ և հայրեր՝ ինծի՛ 1
մտիկ ըրէք որ հիմա ձեզի պատասխան կու
տամ. (Երբոր լսեցին թէ Եբրայեցւոց 2
լեզուովը զրուցեց իրենց, ալ աւելի դադ-
րեցան լուռ կեցան, Ու անիկայ ըսաւ.) 3
Ես մէկ Հրէայ մարդ մըն եմ. Կիլիկիայի
Տարսոնին մէջը ծնած՝ աս քաղաքիս մէջը
մեծցած Գամաղիէլին ոտքը, ու մեր հայ-
րենի օրէնքին ճշմարտութեանը պէս խրատ-
ուած, նախանձաւոր էի Աստուծոյ ինչ-
պէս որ այսօր դուք ամէնքդ էք։ Ու ես 4
աս ճամբան հալածեցի մինչև մահուըներու,

Digitized by Google

կապելու, և բանտերը մտնելու երկու
5 մարդիկ ու կնիկ մարդիկ. Ինչպէս որ
քահանայապետն ալ կը վկայէ ինծի համար՝
և բոլոր ծերակոյտը. որ իրենցմէ թուղթ
ալ առնելով եղբայրներուն՝ Դամասկոս
կ՚երթայի, անոնք ալ կապուածներ բերե-
6 լու Երուսաղէմ, որ պատժուին։ Եւ ե-
ղաւ որ երբ կ՚երթայի՝ ու Դամասկոսին
մօտեցայ, կէսօրուան զէմ յանկարծակի
երկինքէն մեծ լոյս մը չորս կողմս փայլա-
7 տակեց. Եւ գետինը ինկայ, ու ձայն մը
լսեցի՝ որ ինծի կ՚ըսէր. Սաւուղ՝ Սաւուղ,
8 զիս ինչո՞ւ կը հալածես։ Ես ալ պատաս-
խան տուի՝ Թէ դուն ո՞վ ես Տէր. ան
ալ ինծի ըսաւ. Ես Յիսուս Նազովրեցին
9 եմ, որ դուն կը հալածես։ Բայց անոնք
որ ինծի հետ էին՝ լոյսը տեսան, սակայն
անոր ձայնը որ ինծի հետ կը խօսէր՝ չէին
10 լսեր։ Ես ալ ըսի, Ի՞նչ ընեմ Տէր. և Տէ-
րը ըսաւ ինծի. Ելի՛ր գնա՛ Դամասկոս.
և հոն քեզի կը պատմուի այն ամէն բաներուն
համար, որ քեզի հրամայուած է ընելու։
11 Երբոր չէի տեսներ այն լոյսին փառքէն,
հետս եղողներուն ձեռքէն բռնուած՝ Դամասկոս
12 մտայ։ Անանիա անուն մարդ մը՝ աս-
տուածավախ օրէնքին համեմատ, ու Դա-
մասկոս բնակող բոլոր Հրեաներէն քովէն
13 վկայուած, Եկաւ կայնեցաւ քովս ու
14 ըսաւ. Սաւո՛ւղ եղբայր, վեր նայէ։ Ես
ալ նոյն ժամուն վեր նայեցայ իրեն. և
անիկայ ըսաւ ինծի. Մեր հայրերուն Աս-

Digitized by Google

Աստուածը առաջուց քեզ ընտրեց, որ իր
կամքը ճանչնաս, ու այն Արդարը տեսնես,
և անոր բերնէն ձայն լսես։ Որ բոլոր 15
մարդոց առջևը անոր վկայ ըլլաս՝ այն բա-
ներուն համար, որ տեսար ու լսեցիր։
Իսկ հիմա ալ ի՞նչ կ'ուշանաս, ելի՛ր մկրտուէ 16
ու քու մեղքերդ լուա՝ անոր անունը կանչե-
լով։ Եւ եղաւ որ երբոր Երուսաղէմ 17
դարձայ՝ ու տաճարին մէջը աղօթք կ'ընէի,
մարքի յափշտակութեան մը մէջ էի, Եւ 18
զինքը տեսայ՝ որ ինծի կ'ըսէր. Աճապա-
րէ շուտով Երուսաղէմէն ելի՛ր. քանզի որ
քու ինծի համար ըրած վկայութիւնդ չպի-
տի ընդունին։ Ես ալ ըսի. Տէ՛ր, իրենք 19
աղէկ գիտեն թէ ես էի՝ որ քեզի հաւա-
տացողները բանտը կու տայի, և ժողո-
վարաններուն մէջը կը ծեծէի։ Ու երբոր 20
քու Ստեփանոս վկայիդ արիւնը կը թա-
փուէր, ես էի որ ներկայ էի, և հաւանեցայ
էի անոր սպաննութեանը. և անիկայ սպաննո-
ղներուն լաթերը ես կը պահէի։ Ան ալ 21
ըսաւ ինծի. Գնա՛, ինչու որ ես քեզ
հեռաւոր հեթանոսներուն պիտի խրկեմ։
Իսկ անոնք մինչև այս խօսքը մտիկ 22
ըրին իրեն. ետքը ձայներնին վերցուցին
ու ըսին. Վերցո՛ւր աշխարհէն ասանկ
մարդը։ Ինչու որ չվայլեր ասանկին ողջ
կենալ։ Իսկ երբոր կը կանչռտէին ու 28
լաթերնին կը նետէին, և փոշին դէպ՚ի
օդը կը ցանէին, Հազարապետը հրաման 24
ըրաւ՝ որ զանիկայ բերդը մտցնեն. կը

Digitized by Google

Հրամայեր ձեռնով հարցընել անոր, որ
գիտնայ թէ՝ ինչ յանցանքի համար անոր
25 դէմ անանկ կը կանչըռտէին։ Եւ երբոր
կաշի կապերով զինքը կապեցին՝ Պօղոս
վերակացու հարիւրապետին ըսաւ, Թէ
Հռովմայեցի ու անպարտ մարդ մը ծեծե-
26 լը արտօ՞ն է որ ծեծէք։ Հարիւրապետը
երբոր ասոր լսեց՝ գնաց հազարապետին
պատմեց ու ըսաւ, Ի՞նչ կ'ուզես ընել,
ինչու որ այս մարդը Հռովմայեցի է։
27 Հազարապետն ալ գնաց՝ ըսաւ անոր. Ը-
սէ՛ ինծի, դուն Հռովմայեցի՞ ես, ան
28 ալ ըսաւ, Այո՛։ Հազարապետը պատաս-
խան տուաւ, Ես շատ ստակով ձեռք բե-
րի այս քաղաքացիութիւնը. Պօղոս ըսաւ.
29 Ես բուն ազատ մէջը ծնած եմ։ Եւ անոնք
որ զինքը պիտի ծեծէին, շուտ մը ետ կե-
ցան իրմէն. և հազարապետն ալ վախ-
ցաւ, երբոր գիտցաւ թէ Հռովմայեցի է,
և որովհետեւ զանիկայ կապեր էր ալ։
30 Եւ հետեւեալ օրը կ'ուզէր որ ճշտակը
գիտնայ՝ թէ ինչ է Հրեաներուն ըրած
ամբաստանութիւնը, արձակեց անիկայ, և
հրաման ըրաւ որ քահանայապետները ու
բոլոր ժողովքը կանչեն. և Պօղոսը իջե-
ցնելով՝ անոնց մէջը կայնեցուց։

## ԳԼ. ԻԳ.

1 Եւ Պօղոս դէպ'ի ատեանը նայելով ը-
սաւ. Մարդիկ եղբայրներ, ես բոլորո-
վին շիտակ խղճմտանքով կեանքս վարեր

Digitized by Google

եմ Աստուծոյ առջեւը՝ մինչեւ աս օրս։ Ա- 2
նանիա քահանայապետն ալ հրամայեց ըրա-
սպասաւորներուն՝ որ անոր բերնին զար-
նեն։ Ան ատենը Պօղոս ըսաւ անոր. 3
Աստուած քեզի՛ պիտի զարնէ ծեփած պատ,
որ դուն նստեր ես օրէնքին համեմատ զիս
դատելու, և օրէնքէն դուրս հրաման կ'ըն-
նես որ ինծի զարնեն։ Իսկ բոլորտիքը կայ- 4
նողները ըսին. Աստուծոյ քահանայապե-
տը կը նախատես։ Պօղոս ալ ըսաւ. 5
Եղբայրներ՝ չէի գիտեր որ քահանայապետ
է. ինչու որ գրուած է, Քու ժողովուր-
դին իշխանը մի նախատեր։ Իսկ Պօղոս 6
գիտնալով որ մէկ կողմը Սադուկեցիներ
են, և մէկալը Փարիսեցիներ, կ'աղաղա-
կէր ատեանին մէջը. Մարդիկ եղբայր-
ներ, ես Փարիսեցի եմ Փարիսեցիի որ-
դի, մեռելներուն յարութեանը յուսոյն
համար ահա ես կը դատուիմ։ Իսկ երբոր 7
աս ըսաւ՝ Փարիսեցիներուն, և Սադուկե-
ցիներուն մէջը երկպառակութիւն ինկաւ,
և բազմութիւնը բաժնուեցաւ։ Որով- 8
հետեւ Սադուկեցիք կ'ըսեն թէ յարութիւն
չկայ, և ոչ հրեշտակ, ոչ ալ հոգի. բայց
Փարիսեցիները երկուքն ալ կը դաւանին։
Իսկ մեծ աղաղակ մը եղաւ. Փարիսե- 9
ցիներուն կողմանէ դպիրներէն ոմանք ոտ-
քի վրայ ելան՝ դէմ կը կենային ու կ'ը-
սէին. Մենք աս մարդուն վրայ մէկ գէ-
շութիւն մը չենք գտներ. Հապա որ հոգի
մը կամ հրեշտակ մը անոր մէջը խօսեցաւ։

10 Եւ երբոր աղմուկը շատցաւ, հազարա-
պետը վախնալով որ չըլլայ թէ Պօղոս
անոնցմէ փրցուի, զինուորներուն հրա-
ման ըրաւ որ իջնեն զանիկայ անոնց մէջէն
յափշտակեն ու բերդը բերեն։ Եւ
11 հետեւեալ գիշերը Տէրը անոր քովը կայնե-
լով ըսաւ. Քաջասիրտ եղիր Պօղոս,
վասն զի ինչպէս որ Երուսաղէմի մէջ իմ
ծիս համար վկայեցիր, անանկ պէտք է
քեզի որ Հռոմայ մէջ ալ վկայես։
12 Եւ երբոր առտու եղաւ Հրեաները
մէկտեղ ժողվուեցան ինքզինքնին անէծքի
տակ դրին, որ չուտեն եւ չխմեն մինչեւ որ
13 Պօղոսը սպաննեն։ Եւ քառասունէն ա-
ւելի էին որ աս երդումը իրարու հետ ը-
14 րին։ Ասոնք քահանայապետներուն եւ
ծերերուն գացին ու ըսին. Անէծքով ա-
նիծեցինք ինքզինքնիս որ բան մը չուտենք
15 մինչեւ որ Պօղոսը սպաննենք։ Արդ
դուք ատեանովքին հետ մէկտեղ հազարապե-
տին իմացուցէք որ զանիկայ վաղը իջեցը-
նէ, որպէս թէ դուք աւելի ճիշդ բան մը
հասկընալ կ'ուզէք անոր վրայով. եւ մենք
անոր մօտ գալէն առաջ պատրաստ ենք
16 զինքը սպաննելու։ Եւ Պօղոսին քրոջ
որդին երբոր աս դաւաճանութիւնը լսեց,
եկաւ բերդը մտաւ Պօղոսին պատմեց։
17 Պօղոս ալ հարիւրապետներուն մէկը իրեն
կանչելով ըսաւ. Աս պատանին հազարա-
պետին տար, ինչու որ անոր զրուցելիք
18 ունի։ Ան ալ առաւ զանիկայ տարաւ


Digitized by Google

Հազարապետին՝ ու ըսաւ. Բանտարկեալ
Պօղոսը զիս կանչեց, և աղաչեց որ այս
պատանին քեզի բերեմ, քեզի խօսելիք
ունի։ Հազարապետը անոր ձեռքէն բռնե- 19
լով մէկդի գնաց, հարցուց թէ. Ի՞նչ է,
ունիս ինծի խօսելու։ Ան ալ ըսաւ. 20
Հրեաները միաբանեցան քեզի աղաչելու՝
որ վաղը Պօղոսը ատեան իջեցնես, որպէս
թէ կ'ուզեն աւելի ճիշդ քննութիւն մը ը-
նել անոր վրայ. Բայց դուն անոնց մտիկ 21
մի՛ ըներ. ինչու որ անոնք որոգայթ լա-
րեցին անոր՝ քառասուն մարդէն աւելի, որ
խնքզինքնին անէծքի տակ ըրին՝ որ չուտեն
ու չխմեն, մինչև որ անիկայ սպաննեն.
ու հիմա պատրաստ են՝ և քու հրամանիդ
կը սպասեն։ Ան ատենը Հազարապետը 22
պատանին ճամբեց, պատուիրելով՝ թէ
Մէկու մը մի՛ ըսեր՝ որ այս բանը ինծի ի-
մացուցիր։
Ու Հարիւրապետներէն երկուքը կանչեց՝ 23
ու ըսաւ. Երկու հարիւր զինուոր պատ-
րաստեցէք, և եօթանասուն ձիաւոր, և
երկու հարիւր գեղարդաւոր, որ մինչև
Կեսարիա պիտի երթան գիշերուան ժամը
երրորդին. Ու գրաստներ պատրաստեցէք, 24
որ Պօղոսը՝ Փելիքս դատաւորին իջեցընեն
ազատեն։ Ու թուղթ մը գրեց այս օ- 25
րինակին պէս. Կղօդիոս Լիւսիաս՝ զօրա- 26
ւորական Փելիքս դատաւորին՝ ողջոյն։
Այս մարդը Հրեաներէն բռնուեր էր, և 27
քիչ մնացեր էր անոնցմէ պիտի սպաննուէր.

Digitized by Google

եւ զինուորներով վրայ հասած՝ ազատեցի ,
28 իմանալով որ Հռովմայեցի է ։ Ուզեցի
յանցանքը գիտնալ՝ որուն համար անոր
վրայ ամբաստանութիւն կ'ընէին . իջեցու-
29 ցի ատեկայ անոնց ատեանը . Որ գտայ
ամբաստանուած իրենց օրէնքին վերաբե-
րեալ խնդիրի մը համար . և մեռնելու
կամ կապուելու արժանի յանցանք մը
30 չունէր ։ Երբոր իմացայ որ անոնք աս
մարդուն համար որոգայթ լարեր են , քե-
զի խրկեցի , հրաման ընելով ամբաս-
տանողներուն ալ՝ որ քու առջեւդ խօսին
անոր վրայով . Ողջ եղիր ։
31 Զինուորներն ալ անոր հրամանին հա-
մեմատ առին Պօղոսը գիշերով Անտիպատ-
32 րոս տարին ։ Ու հետեւեալ օրը ձիաւորները
արձակելով անոր հետը երթալու , իրենք
33 բերդը դարձան ։ Անոնք Կեսարիա մտան ,
ու թուղթը դատաւորին տուին , Պօղոսն
34 ալ անոր առջեւը կայնեցուցին ։ Երբոր
կարդաց՝ հարցուց թէ որ գաւառէն է .
և իմանալով որ Կիլիկիայէն է՝ ըսաւ .
35 Պիտի լսեմ քեզի երբոր քու ամբաստա-
նողներդ ալ գան . և հրաման ըրաւ՝ որ
զանիկայ Հերովդէսին պալատը պահեն ։

## ԳԼ. ԻԴ

1 Եւ հինգ օրէն ետքը Անանիա քահա-
նայապետը քանի մը ծերերու հետ՝ և մէկ
Տերտիւղոս անուն ճարտասանի մը հետ ի-
ջաւ . և անոնք դատաւորին իմացուցին

Պօղոսին վրայով : Ու երբոր կանչեցին 2
անիկայ Տերտիւղոս սկսեց ամբաստանու-
թիւն ընել՝ ու ըսել . Որովհետև քու
ձեռքովդ շատ խաղաղութիւն , ու քու
խնամքովդ աս ազգին բաներուն աղէկ
կարգադրութիւնը գտեր ենք , Ամէն կեր- 3
պով և ամէն տեղ բոլորովին գոհ ըլլալով
շնորհակալ ենք՝ ով պատուական Փելիքս :
Բայց չըլլայ որ աւելի նեղութիւն 4
տամ քեզի . կ՚աղաչեմ որ քու քաղցրու-
թիւնովդ մեզի ականջ դնես , որ համառօ-
տաբար ըսեմ խօսքերս : Ինչու որ մենք 5
աս մարդը գտանք ապականիչ և խռովա-
րար բոլոր Հրէաներուն որ աշխարհիս մէջ
են , և Նազովրեցիներուն աղանդին առ-
աջնորդ . Որ տաճարն ալ ուզեց պղծել . 6
որն որ բռնեցինք , և մեր օրէնքին համե-
մատ ուզեցինք դատաստանը ընել : Բայց 7
Լիւսիաս հազարապետը եկաւ մեծ բռնու-
թիւնով մեր ձեռքէն հանեց . Հրաման ը- 8
րաւ՝ որ անոր վրայ ամբաստանողները ալ
քեզի գան , որ նորէն դատաստան ընելով
դուն ալ կարող ըլլաս ամէն բանը հասկը-
նալու , որոնցմով մենք ամբաստանութիւն
կ՚ընենք անոր վրայ : Հրէաներն ալ ամէ- 9
նը մէկ եղած՝ ըսին . Այնպէս է :

Պատասխան տուաւ Պօղոս՝ (երբոր կու- 10
սակալը անոր աչք ըրաւ որ խօսի . )
Գիտնալովս որ շատ տարիներէ հետէ դուն
աս ազգին դատաւորն ես , յօժար սրտով
ինծի վերաբերեալ բաներուն համար պա-

11 տասխան կու տամ․ Որովհետեւ կրնաս
գիտնալ որ ես տասներկու օրէն աւելի չէ,
քանի որ Երուսաղէմ ելայ երկրպագու-
12 թիւն ընելու ։ Եւ ոչ հոն տաճարին մէ-
ջը գտան զիս մէկու մը հետ խօսած կամ
ժողովուրդը մէկտեղ ժողված, ոչ ժողովա-
13 րաններուն մէջ, Ո՛չ ալ քաղաքին
մէջ․ ոչ ալ կրնան քու դիմացդ ցու-
ցընել, ինչ բանի համար որ հիմա ամ-
14 բաստանութիւն կ'ընեն իմ վրայովս ։ Բայց
աս կը խոստովանիմ քեզի՝ թէ ան ճամբուն
համեմատ՝ որ հերձուած կ'ըսեն, ես ա-
նանկ կը պաշտեմ իմ հայրենի Աստուածս,
հաւատալով ան ամէն բաներուն՝ որ օրէ-
15 նաց և մարգարէից մէջ գրուած է ։ Յոյս
ունիմ Աստուծոյ՝ որ անոր՝ ատոնք ալ
կը յուսան, թէ արդարներուն և մե-
16 ղաւորներուն յարութիւն ըլլալ պիտի
ըլլայ ։ Ասոր համար ես ալ ամէն
ատեն կը ջանամ մաքուր խղճմտանք ու-
նենալ Աստուծոյ առջեւ ու մարդոց
17 առջեւը ։ Շատ տարիներէն ետեւ եկայ
իմ ազգիս ողորմութիւն ընելու, և ընծա-
18 ներ տալու․ Ասանկով զիս տաճարին մէջը
մաքրուած գտան, ոչ բազմութիւնով,
19 ոչ ալ աղմուկով ։ Բայց Ասիայի Հրեաներէն
մէկ քանին, որ անոնց պէտք էր առջեւդ
գալ՝ ու ամբաստանութիւն ընել, թէ որ
20 իմ վրայովս բան մը ունէին․ Կամ թէ
ասոնք իրենք թող ըսեն՝ ինչ անիրաւու-
թիւն գտան իմ վրաս, երբոր ատեանը
Digitized by Google
21 կայներ էի․ Միայն թէ աս մէկ խօսքիս

համար՝ որ երբ մեջերնին կայինք եմ՝ կանչեցի, թէ Մեռելներուն յարութեանը համար ես այսօր ձեզմէ կը դատուիմ։ Իսկ 22
Փելիքս ուրիշ անգամի թողուց անոնք. քանզի որ աղէկ գիտէր այն Ճանապարհին վրայով. ու ըսաւ, Երբոր Լիւսիաս հազարապետը հոս իջնէ, պիտի քննեմ ձեր գործը։ Հարիւրապետին հրաման ըրաւ 23
որ զանիկայ պահէ, և ընդարձակութիւն տայ, և իրեններէն մէկը չարգիլէ անոր սպասաւորութիւն ընելէն։

Եւ քանի մը օրէն ետև Փելիքս եկաւ 24
իր Դրուսիղա կնկանը հետ՝ որ Հրէայ էր, Պօղոսը կանչեց, և լսեց անկից այն հաւատքին համար՝ որ Յիսուս Քրիստոսի վրայ է։ Եւ անիկայ երբոր արդարու- 25
թեան ու ժուժկալութեան՝ և գալու դատաստանին վրայով կը խօսէր, Փելիքս զարհուրելով պատասխան տուաւ. Հիմա գնա՝, և երբոր ատեն ըլլայ՝ քեզ կը կանչեմ։ Նաև յոյս ունէր՝ որ 26
Պօղոս իրեն բան մը տայ. անոր համար շատ անգամ կը կանչէր զանիկայ՝ ու հետը կը խօսէր։ Բայց երկու տարին որ լմնց- 27
ցաւ՝ Փելիքսին տեղը Փեստոս Պորկիոսը եկաւ. Փելիքս ալ Հրէաներուն շնորհք մը ընել ուզելով, Պօղոսը կապուած թողուց։

ԳԼ. ԻԵ

Փեստոս երբոր իր իշխանութեանը գա- 1

Digitized by Google

գաւառը հասաւ՝ երեք օրէն ետև Կեսարիա-
2 յէն Երուսաղէմ ելաւ ։ Իսկ քահանա-
յապետները ու Հրէաներուն գլխաւորնե-
րը Պօղոսին վրայով իրեն իմացուցին ,
3 Եւ կ'աղաչէին՝ շնորհք կը խնդրէին իրմէն ,
որ զանիկայ Երուսաղէմ կանչէ . որոն-
գայթ դնելով ճամբուն մէջ զանիկայ
4 սպաննելու ։ Բայց Փեստոս պատասխան
տուաւ , որ անիկայ Կեսարիա պահեն . որ
ինքն ալ շատ չանցած հոն պիտի երթայ ։
5 Եւ ձեզմէ որոնք որ կրնան՝ ըսաւ , իմ
հետս թող իջնեն , և թէ որ այն մարդուն
վրայ յանցանք մը կայ՝ ամբաստանութիւն
6 թող ընեն անոր վրայ ։ Եւ հոն ութը
կամ տասը օրէն աւելի չկենալով՝ ելաւ
Կեսարիա իջաւ . և հետևեալ օրը ատեա-
նը նստելով՝ հրաման ըրաւ որ Պօղոսը
7 բերեն ։ Եւ երբոր եկաւ , Երուսաղէմէն
իջնող Հրէաները անոր բոլորտիքը կայնե-
ցան , շատ ու ծանր յանցանքներ կը
դնէին վրան , որ չէին կրնար փաստերով
8 ցուցընել . Մինչդեռ որ Պօղոս պատասխան
կու տար , թէ ես ոչ Հրէաներուն օ-
րէնքին՝ և ոչ տաճարին՝ ոչ ալ Կայսրին
9 դէմ բան մը ըրեր եմ ։ Բայց Փեստոս
ուզելով որ Հրէաներուն շնորհք ընէ՝
պատասխան տուաւ Պօղոսին ու ըսաւ .
Մ'ուզե՞ս Երուսաղէմ ելլել , և հոն ատ բա-
10 ներուն վրայով իմ առջևս դատուիլ ։ Պօ-
ղոս ալ ըսաւ . Կայսրին ատեանը եկեր կայ-
ներ եմ , ուր որ պէտք է ինծի դատուիլ .

Digitized by Google

Հրէաներուն գէշութիւն մը ըրած չեմ,
ինչպէս որ դուն ալ աղէկ գիտես։ Հապա 11
թէ որ գէշութիւն մը ըրեր եմ և մահուան
արժանի բան մը ըրի, ես մեռնելէն
չեմ փախնար. բայց թէ որ ոչինչ բան
մըն է որ ասոնք իմ վրաս ամբաստանու-
թիւն կ'ընեն, մէկը չկրնար զիս անոնց
ձեռքը տալ. Կայսրին կը բողոքեմ։
Այն ատենը Փեստոս խորհրդականներուն հետը 12
խօսելով պատասխան տուաւ, Թէ Կայսե-
րին բողոքեցիր, Կայսրին պիտի երթաս։
Քանի մը օրեր անցնելէն ետեւ Ագրիպ- 13
պաս թագաւորը և Բերենիկէն Կեսարիա
եկան Փեստոսը բարեւելու։ Եւ շատ օ- 14
րեր որ հոն անցուցին, Փեստոս Պօղոսին
համար թագաւորին իմացուց ու ըսաւ.
Հոս մէկ մարդ մը մնացեր է Փելիքսէն
կապուած. Որուն վրայով երբոր Երու- 15
սաղէմ գացի, քահանայապետները ու
Հրէից գլխաւորները իմացուցին ինծի. և
կ'ուզէին որ ես անոր պատիժ մը տամ։
Որոնց պատասխան տուի թէ Հռոմայե- 16
ցիներուն սովորութիւն չէ որ մէկը մեռցը-
նի մը ձեռք տրուի, մինչեւ որ ամբաստա-
նուածը ամբաստանողները դիմացը չունե-
նայ, ու ան ամբաստանութեանը պատասխա-
խան տալու պատեհութիւն ունենայ։ Եւ 17
երբոր հոս եկան, ամենեւին չուշացուցի,
հապա հետեւեալ օրը ատեան նստայ հրա-
ման ըրի որ մարդը բերեն։ Երբոր վրայով 18
ամբաստանողներն ալ եկան, մէկ գէշ

Digitized by Google

յանցանք մըն ալ չէին կրնար ցուցընել
19 ինչ որ ես կը կարծէի. Հապա մէկ խըն-
դիր մը ունէին անոր հետ իրենց կրօնքին
վրայ, և մէկ Յիսուս անունով մեռածի
մը վրայ, որուն համար Պօղոս կ'ըսէր թէ
20 կենդանի է։ Ես որ տարակուսանքի մէջ
մնալս այսպիսի բաները քննելու համար, ը-
սի թէ՝ Կ'ուզե՞ս Երուսաղէմ երթալ, և
հոն այն բաներուն համար դատուիլ։
21 Բայց Պօղոս երբոր բողոքեց՝ որ պահուի
Սեբաստոս Կայսրին դիմացը ելլելու, հրա-
ման ըրի որ զինքը պահեն՝ մինչև որ Կայս-
22 րին տանիլ տամ։ Ագրիպպաս ըսաւ
Փեստոսին. Ես ալ կ'ուզէի այն մարդը
մտիկ ընել. ան ալ ըսաւ. Վաղը մտիկ
կ'ընես։
23 Իսկ հետևեալ օրը երբոր Ագրիպպասը ու
Բերենիկէն մեծ և փառաւոր հանդէսով ե-
կան՝ ու ատեան մտան հազարապետներով,
և քաղաքին պատուաւոր մարդիկներովը
մէկտեղ, Փեստոս ալ հրաման ընելով
24 բերին Պօղոսը։ Եւ ըսաւ Փեստոս. Ագ-
րիպպաս արքայ և դուք ալ բոլոր մար-
դիկ որ մեր հետ էք, անիկայ կը տեսնէ՞ք.
ասոր վրայով Հրեաներուն բոլոր ժողո-
վուրդը ամբաստանութիւն ըրին ինծի Եր-
րուսաղէմ, և հոս ալ կ'աղաղակէին թէ
25 պէտք չէ որ անիկայ ողջ մնայ։ Բայց
ես հասկըցայ որ մեռնելու արժանի բան մը
ըրած չէ. և ինքը Սեբաստոս Կայսրին որ
26 բողոքեց, մտածեցի որ խրկեմ. Անոր

Համար մէկ հաստատուն բան մը չունիմ գրե-
լու իմ տէրոջը · ուստի զանիկայ ձեր առ-
ջևը բերի , և մանաւանդ քու առջևդ՝
ով Ագրիպպաս արքայ , որ զինքը քննելով
կարող ըլլամ բան մը գրելու ։ Խնչու որ 27
ինծի անմիտ կ'երևնայ՝ որ մէկ բանտար-
կեալ մը ղրկեմ , և անոր վրայով մէկ
յանցանքներ մը չցուցնեմ ։

## ԳԼ. ԻԶ.

Ու Ագրիպպաս ըսաւ Պօղոսին · Հրա- 1
ման է քեզի՝ որ դուն քու քեզի Համար խօսիս ·
ան ատենը Պօղոս ձեռքը երկնցընելով՝
պատասխան տուաւ · Հրեաներուն իմ 2
վրայ ըրած բոլոր ամբաստանութիւններուն
Համար ով Ագրիպպաս արքայ՝ ես զիս եր-
ջանիկ կը սեպեմ , որ այսօր քու առջևդ
պատասխան պիտի տամ ։ Մանաւանդ որ 3
դուն Հրեաներուն բոլոր կրօնքի բաները
և վիճաբանութիւնները աղէկ գիտես · անոր Հա-
մար կ'աղաչեմ որ Համբերութեամբ ինծի
մտիկ ընես ։ Խնչու որ տղայութենէս ՚ի 4
վեր իմ ինչպէս ապրելուս՝ սկիզբէն Երու-
սաղէմ իմ ազգիս մէջը ըլլալովս , բոլոր
Հրեաները գիտեն ։ Անոնք առաջուընէ 5
գիտեն՝ շատ ժամանակէ ՚ի վեր ( թէ որ
ուզեն վկայելու , ) որ մեր օրէնքին պինդ
աղանդին Համեմատ ալ՝ Փարիսեցի ապ-
րեր եմ ։ Եւ Հիմա ատեանը կեցեր եմ 6
դատուելու՝ Աստուծմէ մեր Հայրերուն եղած
խոստմունքին յուսոյն Համար · Որ մեր 7

Digitized by Google

տասներկուքնիս ցեղը անդադար գիշեր ու
ցերեկ պաշտելով՝ կը յուսան անոր հաս-
նելու . ու այս յուսոյն համար հրէաներէն
8 կ'ամբաստանուիմ՝ ո՛վ թագաւոր : Ինչ ,
չհաւատալո՞ւ բան կ'երևնայ ձեզի՝ թէ
9 Աստուած մեռելները կը յարուցանէ : Ես
ինքս ալ արժան կը սեպէի Յիսուս Նա-
զովրեցիին անուանը դէմ շատ բաներ ը-
10 նել : Ու ըրի ալ Երուսաղէմի մէջ . և
սուրբերէն շատերը բանտը դնել կու տայի՝
քահանայապետներէն իշխանութիւն ա-
ռած . ու անոնց սպաննուածներուն համ-
11 րանքը կը բերէի : Եւ բոլոր ժողովարան-
ներուն մէջը շատ անգամ զանոնք պատ-
ժելով՝ կը բռնադատէի որ հայհոյեն . և
անոնց վրայ սաստիկ կատղած՝ մինչև օ-
12 տար քաղաքները կը հալածէի : Ասանկով
երբոր Դամասկոս կ'երթայի՝ քահանայա-
պետներուն իշխանութիւնովը ու հրաման-
13 ովը . Կէսօրուան ատենը ճամբուն վրայ՝
ո՛վ թագաւոր , երկինքէն լոյս մը տեսայ
արևին լուսաւորութենէն աւելի՝ բոլոր-
տիքս ծագած , ինծի ու անոնց բոլորտիքը՝
14 որ իմ հետս կ'երթային : Եւ երբոր մենք
ամէնքս գետինը ինկանք՝ ձայն մը լսեցի
որ Եբրայեցւոց լեզուովը ինծի կ'ըսէր .
Սաւո՛ւղ , Սաւո՛ւղ , ինչո՞ւ զիս կը հալածես .
դժուար բան է քեզի՝ խթաններուն դէմ կից
15 զարնել : Ես ալ ըսի . Դո՛ւն ո՛վ ես Տէր .
և Տէրը ըսաւ . Ես եմ Յիսուսը՝ որ դուն
16 կը հալածես . Բայց ելի՛ր ու ոտքիդ վրայ

Digitized by Google

կայնէ՛ . ինչու որ անոր համար քեզի երևե-
ցայ , որ քեզ ձեռք առնեմ պաշտօնեայ և
վկայ ըլլալու այն բաներուն՝ որ տեսար ,
ու այն բաներուն՝ որոնցմով պիտի երևնամ
քեզի . Քեզ ազատելով սա ժողովուր- 17
դէն ու հեթանոսներէն . որ ես անոնց պի-
տի խրկեմ քեզ . Անոնց աչքերը բանա- 18
լու , խաւարէն լոյսի դարձընելու , և
Սատանայի իշխանութենէն Աստուծոյ , որ
անոնք մեղաց թողութիւն առնեն , և
սուրբերուն հետ մասնակից ըլլան՝ ինծի
հաւատալով : Ուստի Ագրիպպա արքայ՝ 19
ան երկնային տեսիլքին անհնազանդ չեղայ
ես . Հապա առաջ Դամասկոս և Երուսա- 20
ղէմ եղողներուն , և բոլոր Հրէաստանի
գաւառներուն ու հեթանոսներուն քարոզեցի
որ զղջան ու կենդանի Աստուծոյ դառ-
նան , ապաշխարութեան արժանաւոր գործ-
քեր գործեն : Ասոր պատճառով Հրէանե- 21
րը զիս տաճարին մէջը բռնեցին՝ կ'ուզէին
որ սպաննեն : Աստուծմէ օգնութիւն հան- 22
նելով մինչև աս օրս տոկացի , պզտի-
կին ու մեծին վկայութիւն տալով . բան
մը չըրուցելով այն բաներէն դուրս՝ որ
մարգարէները և Մովսէս խօսեցան ըլլալիք
բաներուն վրայ . Թէ Քրիստոս պիտի 23
չարչարուի , թէ անիկայ պիտի առաջ մե-
ռելներէն յարութիւն առած՝ լոյս պիտի
քարոզէ ժողովուրդին և հեթանոսներուն :
Երբ ասանկ որ ինքը պատասխան կու- 24
տար , Փեստոս բարձր ձայնով մը ըսաւ .

Որ խելագարիս Պօղոս ․ շատ կարդացո-
25 ղութիւնդ քեզ կը յիմարեցընէ ։ Պօղոս
ալ՝ ըսաւ ․ Ես յիմար չեմ՝ ո՛վ պատուա-
կան Փեստոս, հապա զգաստութեան և
26 ճշմարտութեան խօսքեր կը զրուցեմ ։ Աս
բաները Թագաւորը գիտէ, որուն դիմացը
համարձակ կը խօսիմ ․ ինչու որ չեմ կար-
ծեր թէ ասոնցմէ մէկ բան մը քեզմէ ծած-
կուած ըլլայ ․ վասն զի աս բաները մէկ
27 անկիւնի մը՝ մէջ եղած չէ ․ Մարգարէ-
ներուն կը հաւատա՞ս Ագրիպպաս արքայ ․
28 գիտեմ որ կը հաւատաս ։ Իսկ Ագրիպ-
պաս ըսաւ Պօղոսին ․ Քիչ մնաց որ զիս
29 համոզես քրիստոնեայ ըլլալու ։ Պօղոս ալ
ըսաւ ․ Աստուծմէ կը խնդրէի որ թէ՛ քի-
չով և թէ՛ շատով՝ չէ թէ մինակ դուն,
հապա ամէնն ալ՝ որ այսօր ինծի կը լսեն,
անանկ ըլլան ինչպէս որ ես եմ, աս կապե-
րէս ՝ի զատ ։
30 Անոր վրայ ելաւ Թագաւորը և դա-
տաւորը՝ և Բերենիկէն, ու անոնք ալ՝ որ
31 իրենց հետը նստեր էին ։ Իսկ երբոր կ'եր-
թային՝ իրարու հետ կը խօսէին ու կ'ը-
սէին, Թէ Աս մարդը մեռնելու կամ կա-
32 պուելու արժանի բան մը չըներ ։ Ագրիպ-
պաս ալ Փեստոսին ըսաւ ․ Աս մարդը կա-
րելի էր թող տալ, թէ որ Կայսերին բո-
ղոքած չըլլար ։

## ԳԼ. ԻԷ.

1 Երբոր մեզի հրաման եղաւ նաւով Իտա

Digitized by Google

[illegible] երկնային, Պօղոսը և [illegible] քանզի
մը կանչուածներ ասոնք հայրենաւորեալ մը
որպէս առաքեալ Յուլիոս էր, Միջամտութեան
գունդերէն: Իսկ մէկ Ընդհանրութեան նա 2
մէջ եկանք՝ գացինք, որ Կ՚սփոփոյ կողմե-
րէն այսօր երթալ: Առաքելութեան Միաբան-
դամ [illegible] ալ մեր հետ երե:
Իսկ Հռովմէական որը Սիրիոյ երկիրը. ու Յու- 3
դայի մարդկութեան ցուցընելով Պօ-
ղոսին հրաման ըրաւ որ քարոզչութեան
երթայ, ու դարձան գացին: Անկից ալ 4
եկանք՝ Սելեւկիոյ ծովէն կողմէն նաւարկեցին
Կիպրոս դէմ ըլլալով Հանդոս: Ու անկէ 5
Սալամինայ ու Պամփիւլիոյ ծովէն մեծա-
ամբողջէն նաւելով [illegible] Սամոսայ
քաղաքը իջանք: Իսկ հայրենակցաց հետ 6
մէկ Եղէքասանդրացի նաւ մը գտան՝ որ իւ-
րեանց կ՚երթար, մեզ հետ մնացուց: Իր- 7
շատ օրեր կամաց կամաց նաւելով հանդի-
պեցանք քաղաքը հասանք: Եւ հոն մեզի
դէմ ըլլալով Կրետացի մարդ կողմէն Սա-
ղամինայի քովէն նաւեցինք: Կապելով՝ [illegible] 8
[illegible] ալ անցնելով մէկ տեղ մը եկանք,
որ Գեղեցիկ Նաւահանգիստ կ՚ըսուէր. որ-
ուն մօտ էր Լասեա քաղաքը:
Իսկ երկար ժամանակ անցնելէն ետև 9
նաւին վտանգաւոր ըլլալը ալ [illegible] էր,
ծոմին ատենն ալ արդէն անցած ըլլալով,
Պօղոս խրատ կու տար, Եւ կ՚ըսէր ա- 10
նոնց. Մարդիկ՝ ես կը տեսնեմ որ աս
նաւուն վտանգաւոր ըլլալը [illegible], ու

Digitized by Google

շատ կենդանով պղծութեան ըղձանօք ։ չէ՛ թէ միայն
իշխանութիւն ու տէրութիւն՝ հայհոյեն մեր անձնահաճու
11 ալ ։ Ինչպէս հրեշտակապետները՝ [illegible]
և կարողութեամբ աւելի մեծ կ'ըլլան , բայց
12 թէ Աստուծոյն խօսքերուն ։ Այս սրբութեան
անհնազանդ անձնասիրութեան յարմար չեն երկնային
ձեռքը հոն անցընելու , չարութեան խորհրդոց
անկից ելլալ , որ զգուշէ կարող ըլլան
մինչեւ հասնելու , կորստականութեան [illegible]
հաստատութեան ձեռքը կենդանութ , որ դէպ 'ի Հայր
13 ըստ ու գործերը կը նայէր ։ Այս երբոր
Հարուստ մէջերը , կարծելով որ երբեմն [illegible]
[illegible] կը Հաւատան , և [illegible]
14 Աչքերնին լեցուած կ'անցնէին ։ Այս չար
[illegible] չմնացած՝ մեղք [illegible] հոգի մը [illegible]
[illegible] դէմ , որ Աստուծոյ կ'ըլլար ։
15 Ուղիղ ճամբան [illegible] , և հետեւեցան
[illegible] [illegible] , [illegible]
16 [illegible] ու իր զայրոյթը ։ Որովհետեւ 'ի մէկ
կենդանի մը չխօսելով որ մարդու կ'ըլլար ։
17 Ասոնք կ'ըլլան [illegible] , [illegible] որ
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] ։ [illegible] որ [illegible]
[illegible] [illegible] , [illegible] [illegible]
[illegible] [illegible] ու իր զայրոյթ ։
18 Այս [illegible] [illegible] մեծ որ [illegible] ,
[illegible] [illegible] [illegible] [illegible]
19 [illegible] [illegible] որը [illegible] [illegible] [illegible]
20 [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible]
[illegible] [illegible] ու [illegible] [illegible]
[illegible] , և [illegible] [illegible] [illegible]

Digitized by Google

ճողոպրելնիս մեր ազատուելու յոյսը վերցուաւ։
Իսկ որովհետեւ շատ օրերէն ՝ի վեր անօթի 21
կեցին, այն ատենը Պօղոս անոնց մէջը կայ-
նելով ըսաւ. Ո՛վ մարդիկ, պէտք էր
ձեզի որ ինծի մտիկ ընէիք, և Կրետէէն
չելլէիք, ու աս տառապանքները և վնասը
չքաշէիք։ Իսկ հիմա ձեզ կը յորդորեմ որ 22
սիրտ առնէք, որ ձեզմէ մէկուն անձին
վնաս մը պիտի չըլլայ՝ բայց միայն նաւին.
Ինչու որ՝ աս գիշեր երեւցաւ ինծի Աստուա- 23
ծոյ հրեշտակը, որ ես անորն եմ՝ ու զա-
նիկայ կը պաշտեմ. Ու ըսաւ. Մի՛ վախ- 24
նար Պօղոս՝ Կայսրին դիմացն ալ պէտք է
որ ելլես դուն. և ահա՛ Աստուած քեզի
շնորհեց ան ամէնը՝ որ քու հետդ նաւուն
մէջն են։ Ասոր համար՝ քաջալերու- 25
թիւն ունեցէք. ինչու որ ես կը հաւատամ
Աստուծոյ, որ ասանկ պիտի ըլլայ, ինչպէս
որ անիկայ իմ հետս խօսեցաւ. Միայն թէ 26
մէկ կղզի մը պիտի իյնանք։ Երբոր 27
տասնըչորսերորդ գիշերն էր որ Ադրիական
ծովին անդունդին մէջը կը ծփծփայինք.
կէս գիշերին նաւաստիները կը կարծէին՝
թէ մէկ երկիր մը մօտեցեր են։ Ու 28
գնդակը ձգեցին՝ քսան գրկաչափ գտան.
ու քիչ մըն ալ կեցան՝ նորէն ձգեցին,
և տասնըհինգ գրկաչափ գտան։ Վախ- 29
նալով որ չըլլայ թէ քարոտ տեղերն
իյնան, ետեւի կողմէն չորս երկաթ ձգե-
ցին, ու առաւօտ ըլլալուն կը փափաքէին.
Նոյնը նաւաստիները նաւէն փախչելու կ'ու- 30

Digitized by Google

զէնք, ու պատրի մակոյկը ծովը իջեցուցին,
պատճառելով որպէս թէ առջեւի կողմէն
31 ալ երկաթներ պիտի ձգեն ։ Պօղոս ըսաւ
հարիւրապետին ու զինուորներուն . Եթէ
ասոնք նաւուն մէջը չկենան, դուք չէք
32 կրնար ողջ մնալ ։ Այն ատենը զինուորնե–
րը մակոյկին չուանները կտրեցին՝ և դուրս
33 ձգեցին ։ Եւ երբոր առտու ըլլալու վրայ
էր, Պօղոս կ'աղաչէր ամենուն որ կերա–
կուր ուտեն . կ'ըսէր, Այս տասնըչորս օր
է՝ որ դուք սպասելով անօթի մնացեր էք
34 ու բան մը չէք կերած ։ Ասոր կ'աղաչեմ
ձեզի որ կերակուր ուտէք . ինչու որ աս
ալ ձեր ազատութեանը՝ համար է, որ
ձեզմէ մէկուն գլխէն մազ մը չկորսուի ։
35 Եւ աս որ ըսաւ՝ հացը առաւ ամենուն
առջեւը Աստուծմէ գոհացաւ, կտրեց, ու
36 սկսեց ուտել ։ Եւ ամենն ալ սիրտ ա–
37 ռին, իրենք ալ կերակուր կերան ։ Եւ
նաւուն մէջը ամէնքս երկու հարիւր եօ–
38 թանասունըվեց հոգի էինք ։ Երբոր
կշտացան կերակուրով՝ նաւը թեթեւցու–
ցին՝ ցորենը ծովը թափելով ։

39 Եւ երբոր պայծառ եղաւ՝ ցամաքը չէին
ճանչնար, միայն թէ մէկ ծոց մը կը տես–
նէին ծովեզերքի մը պէս, կը խորհէին որ
40 եթէ կարելի է նաւը հոն մտցնեն ։ Եւ
խարիսխները կտրելով, ծովը ձգեցին, ղե–
կերուն կապերը թուլցուցին ու առա–
գաստը մէկդի առին, ու տուին հովին
41 դէպ ի յան ծովեզերքը ։ Բայց անանկ



Digitized by Google

տեղ մը իյնալով որ երկու կողմը ծով էր,
նաւը ծռեցին. և նաւին առջևի կողմը
խրելով անշարժ մնաց, և ետևի կողմը
ալիքներուն սաստկութենէն կը քակուէր։
Զինուորներն ալ խորհուրդ կ'ընէին որ 42
կապուածները սպաննեն, որ չըլլայ թէ
մէկը լողայ՝ ու փախչի։ Բայց հարիւրա- 43
պետը որ Պօղոսը ազատել կ'ուզէր, ար-
գիլեց զանոնք այն խորհուրդէն, հրաման
ըրաւ՝ թէ Ո՛վ որ կրնայ լողալ, թո՛ղ ա-
նոնք առաջ նետուին ու ցամաքը ելլեն.
Եւ ուրիշները՝ ոմը տախտակներով, և 44
ոմը նաւուն ուրիշ բաներովը. և այսպէս
ամէնը ազատեցան՝ ցամաքը ելան։

## ԳԼ. ԻԸ.

Եւ երբոր ազատեցանք՝ գիտցանք որ 1
այն կղզիին անունը Մելիտոնէ էր. բայց
բարբարոսները քիչ մարդասիրութիւն չը-
ցուցուցին մեզի. Ինչու որ կրակ վառե- 2
ցին, և մեզ ամէնս ալ ընդունեցին ան-
անձրևին համար՝ որ մեզ կը նեղէր, ու
ցուրտին համար։ Եւ երբոր Պօղոս շատ 3
մը խռիւ ժողվեց, և կրակին վրայ դրաւ,
տաքութենէն մէկ իժ մը ելաւ՝ անոր ձեռ-
քը բռնեց։ Բարբարոսներն ալ երբոր այն 4
գազանը տեսան անոր ձեռքէն կախուած՝
իրարու կ'ըսէին. Անշուշտ այս մար-
դասպան մըն է, որ թէպէտ ծովէն ազա-
տեցաւ՝ բայց իրաւունքը թող չտուաւ որ
ապրի։ Եւ անիկայ գազանը կրակին մէ- 5

Digitized by Google

ըը թօթվելով իրեն մէկ վնաս մը չեղաւ ։
6 Բայց անոնք կը սպասէին որ անիկայ ուռե-
նայ՝ կամ իյնայ և յանկարծակի մեռնի.
Երկար շատ մը սպասելէն՝ և տեսնան որ մէկ
վնաս մը չեղաւ իրեն, դարձեն խորհուրդնին
փոխելով, կ'ըսէին՝ թէ Աստուած մըն
7 է ։ Իսկ այն տեղին բոլորտիքը՝ կղզիին
գլխաւոր մարդուն գեղերը կային, որուն
անունը Պոպղիոս էր. որ ինքը մեզ երեք
օր իր քովը առաւ, և սիրով ընդունեց ։
8 Այս եղաւ որ Պոպղիոսին հայրը ջերմով և
թանչապատուութիւնով հիւանդացաւ. Պօղոս
անոր քովը մտաւ՝ և աղօթք ընելով,
ձեռքը վրան դրաւ և բժշկեց զանիկայ ։
9 Ասոր եղաւ, ուրիշ հիւանդներն որ այն
կղզին էին՝ մէկտեղ եկեր, կու գային ու կը
10 բժշկուէին. Անոնք շատ պատուով մեզ
պատուեցին, և երթալու ատեննիս ալ՝
պէտք եղածները տուին ։
11 Այս իրեք ամիսէն ետեւ մէկ Աղեքսան-
դրիայի նաւ մը ելանք, որ ձմեռը այն կղզի-
ին անցուցեր էր, Դիոսկուրեանց նշանը
12 ունէր ։ Այս Սիրակուսա իջանք՝ երեք օր
13 հոն կեցանք ։ Անկից ալ դարձինք Հռե-
գիոն հասանք. և մէկ օրէն ետեւ երկրորդ
հարաւ փչեց, երկրորդ օրը մենք Պուտէո-
14 լոս եկանք ։ Հոն եղբայրներ գտանք.
որոնք աղաչեցին որ եօթը օր հոն մնանք.
15 ու երթքը Հռոմ եկանք ։ Այն անկից
եղբայրները երբոր մեր վրայով լսեցին՝ մեզ
դիմաւորելու մինչեւ Ապփիոսի փողոցա-

Digitized by Google

նոցա՝ և Տերեբ խոստմունքներն ։ Վկայեց որ
անոնք ունայնա, զանձնութիւն տուան ։ Եղ-
ատըմբ, և սիրտ առաւ ։
Ահա երբոր Աստուծ մեծաւ ։ Թողուցին 16
Աստուծոյ երկայն, որ իր պատուիրանքը [illegible]
Տեառ զատ կենդան ։ Եւ Նորա, որ իրենք ըս- 17
քին նուև անփոխոյ Հրէաներուն զկիսուոր-
ները կանգնեց ։ ու երբոր եկան զուա ։ պա-
շտելով ։ Մարդիկ եղբայրներ, եւ ժողովուր-
դին կամ Հայրենականն կռոցին զէմ։ բայց
մը չըլլալով ։ [illegible] կատարած Հարժ-
մայնեցիններուն, ձեռքը [illegible] ։ Ա- 18
րինք երբոր զիս փառեցին՝ ուղեցին ։ որ
թող տան ։ Ինչու որ վերար [illegible]
ցանք մը չըլլան ։ Եւ այս երբոր Հրէաներ- 19
ըր Հակառակ կեցան՝ պէտք եղաւ որ Աստու-
ծին [illegible], չէ թէ ես իմ . աղօթք վրայ ։
չարութիւնն, մէջ իրին, ըսէք ։ Եւ 20
պատճառին Համար [illegible] որ . [illegible] աս-
տուած և [illegible] ինչու որ [illegible] ։
Հասնիր եւ [illegible] թագաւորութեան մէջն են ։ Եւ- 21
անոնք ալ բանն կրեն ։ Մէկը [illegible] ըլլայով
Հրէաստանն ոչ թագաւորն մը պակսեր [illegible] ։
և ոչ եկող եղբայրներէն մէկը ։ բու. վրա-
յանդն զգուշութեան մէկ պատմելը կամ խօ-
սեցաւ ։ Ինչ յայտագրեալ որ [illegible] 22
թէ զոսն ինչ [illegible] վրայ եւ ։ Ինչու որ
[illegible] Հաւատքը [illegible] աղէկ իմացեր
էինք ։ որ [illegible] Հակառակութեան կը ։
[illegible] ։ Եւ [illegible] մը . [illegible] 23
[illegible]

Digitized by Google

րոնց Աստուծոյ թագաւորութիւնը կը
պատմէր վկայութիւնով ։ և կը համոզէր
զանոնք Յիսուսի համար Մովսէսի օրէն-
քէն ու մարգարէներէն՝ առտուընէ մինչև
24 իրիկուն ։ Եւ ոմանք կը հաւատային ը-
սածներուն , և ոմանք չէին հաւատար ։
25 Եւ իրարու հետ չմիաբանած գացին՝ երբ-
որ Պօղոս մէկ խօսք մը ըսաւ , թէ Հո-
գին Սուրբ աղէկ խօսեցաւ մեր հայրերուն՝
26 Եսայի մարգարէին ձեռքովը , Եւ ըսաւ .
Գնա՛ այն ժողովուրդին՝ ու ըսէ՛ . Լսելով
պիտի լսէք՝ ու չիմանաք . և տեսնելով պի-
27 տի տեսնէք ու չտեսնէք ։ Ինչու որ այն
ժողովուրդին սիրտը թանձրացաւ , և ա-
կանջներին ծանր լսեցին , ու աչքերնին գո-
ցեցին՝ որ չըլլայ թէ իրենց աչքերովը
տեսնեն , և ականջներովը լսեն , և սրտե-
րովը իմանան , ու դարձի գան , և ես
28 բժշկեմ զանոնք ։ Ուստի յայտնի ըլլայ
ձեզի՝ որ Աստուծոյ փրկութիւնը հեթա-
նոսներուն խրկուեցաւ , և անոնք պիտի
29 լսեն ։ [Եւ երբոր աս զրուցեց՝ Հրէա-
ները իր քովէն դուրս գացին , որոնք շատ
վիճաբանութիւն ունէին մէջերնին ։]
30 Եւ լման երկու տարի իր վարձքով
31 բռնած տունը կեցաւ . Եւ իր քովը ե-
32 կողներուն ամէնը կ'ընդունէր . Եւ քա-
րոզէր Աստուծոյ թագաւորութիւնը , և
Տէր Յիսուս Քրիստոսի վրայով առանց
արգիլուելու կը սորվեցնէր բոլոր համար-
ձակութիւնով ։

Digitized by Google

# ՊՕՂՈՍ
# ԱՌԱՔԵԱԼԻՆ ԹՈՒՂԹԸ
## ԱՌ
# ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա

Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ ա- 1
ռաքեալ ըլլալու կանչուած, Աստուծոյ
աւետարանին համար ընտրուած (Ան որ 2
առաջուց իր մարգարէներուն ձեռքովը
սուրբ գիրքերով խոստացաւ՝) Իր Որդւոյն 3
մեր Տէր Յիսուս Քրիստոսին վրայով՝ որ
մարմնոյ կողմանէ Դաւիթի ցեղէն եղաւ.
Ան որ սրբութեան հոգիին կողմանէ Որդի 4
Աստուծոյ յայտնուեցաւ զօրութեամբ,
մեռելներէն յարութիւն առնելով. Որով 5
շնորհք և առաքելութիւն առինք՝ հաւատա-
քի հնազանդութեան համար բոլոր ազգե-
րուն մէջ, անոր անունին համար. Որ ա- 6
նոնց մէջը դուք ալ Յիսուս Քրիստոսի
կանչուած էք. Ձեր ամենուն որ Հռով- 7
մայ մէջ էք՝ Աստուծոյ սիրելիներուդ,
սուրբ ըլլալու կանչուածներուդ՝ Շնորհք
և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր
Հօրմէն՝ ու Տէր Յիսուս Քրիստոսէն։
Նախ առաջ՝ կը գոհանամ իմ Աս- 8

Digitized by Google

տուածմէս Յիսուս Քրիստոսի ձեռքովը ձեր
ամենուն համար, որ ձեր հաւատքը բոլոր
9 աշխարհս քարոզուած է։ Վկայ է ինծի
Աստուած, որ ես կը պաշտեմ իմ հո-
գիովս անոր Որդւոյն աւետարանին մէջը,
10 թէ ինչպէս ձեզ կը յիշեմ, ամէն ատեն
իմ աղօթքիս մէջ, խնդրելով որ գուցէ
անգամ մը Աստուծոյ կամքովը ինծի յա-
11 ջողութիւն մը ըլլայ ձեզի գալու։ Ինչու
որ շատ փափաքիմ ձեզ տեսնելու, որ
ձեր վրայ մէկ հոգեւոր շնորհք մը դարձը-
12 նեմ՝ ձեզ հաստատելու համար. Այսինքն
է՝ ձեր հետը ես ալ մխիթարակից ըլլամ
իմ ու ձեր փոխադարձ հաւատքին համար։
13 Չեմ ուզեր որ չգիտնաք ըլլաք եղբայրներ՝
որ շատ անգամ ուզեցի գալ ձեզի՝ (և
մինչև հիմա արգիլուեցայ.) որ ձեր մէջն
ալ քիչ մը պտուղ գտնեմ, ինչպէս որ ու-
14 րիշ հեթանոսներուն մէջը։ Ինչու որ Յոյ-
ներուն և Բարբարոսներուն, իմաստուն-
ներուն և անմիտներուն պարտական եմ.
15 Անանկ՝ որչափ որ ձեռքէս կու գայ յօժա-
րութիւնով ձեզի ալ որ Հռովմայ մէջ էք՝
16 աւետարանը քարոզելու։ Ինչու որ ես
պմօթ չեմ սեպեր աւետարանը. վասն զի
Աստուծոյ զօրութիւնն է ան՝ ամէն հա-
ւատացեալներուն փրկութեանը համար,
առաջ Հրէային ու ետքը Հեթանոսին։
17 Ինչու որ անով Աստուծոյ արդարութիւնը
որ և հաւատքէն՝ յայտնի կ՚ըլլայ հաւատ-
քին. ինչպէս որ գրուած է, Թէ Արդարը
հաւատքէն պիտի ապրի։

Digitized by Google

Ինչու որ Աստուծոյ բարկութիւնը երկ- 18
կինքէն այժմ յայտնուի մարդոց բոլոր
ամբարշտութեանը և անիրաւութեանը վը-
րայ, որոնք որ ճշմարտութիւնը անիրաւ-
ութեամբ բռներ են: Վասնզի Աստու- 19
ծոյ վրայով գիտնալու բանը իրենց մէջը
յայտնի է, որովհետև Աստուած ալ ա-
նոնց յայտնեց: Ինչու որ անոր աչքի 20
չերևցած բաները աշխարհքի սկիզբէն ա-
ստեղծուածներովը կ'իմացուին կը տես-
նուին, այսինքն է իր մշտնջենաւոր կըլլա-
լը, և զօրութիւնը, ու Աստուածութիւ-
նը. որպէս զի բնաւ մէկ պատասխան մը
չգտնին տալու: Ինչու որ իրենք Աստուած 21
ճանչցան, և Աստուծոյ պէս չփառաւո-
րեցին, կամ շնորհակալ չեղան, հապա
իրենց ըրած խորհուրդներուն մէջ ունայ-
նացան, և միտքերնին անմտութիւնով
խաւարեցաւ: Ինքզինքերնին իմաստունացնելու 22
բուն կարծը դրեր էին, յիմարեցան: Եւ 23
չաւրուելու Աստուծոյ փառքը փոխեցին
նմանցընելով աւրուելու մարդու, և
թռչուններու, ու չորքոտանիներու, ու
սողուններու պատկերին: Անոր համար 24
Աստուած ալ պղծութեան մատնեց զա-
նոնք իրենց սրտերուն ցանկութիւններուն,
իրենց մարմինները իրենց մէջերնին
խայտառակելու: Անոնք Աստուծոյ ճշմարտ- 25
ութիւնը սուտի հետ փոխեցին, ու պաշ-
տեցին ու երկրպագութիւն ըրին ստեղ-
ծուածներուն և ոչ թէ Ստեղծողին, որ.

Digitized by Google

26 որ յաւիտեան օրհնեալ է . ամէն : Անոր
համար Աստուած զանոնք անարգ կիրքե-
րու մատնեց , որ իրենց էգերը անգամ
բնականին պէտքը բնութեան դէմ եղող
27 պէտքի հետ փոխեցին . Նոյնպէս ալ այ-
րերը կնկան բնական պէտքը թողլով՝
իրենց ցանկութիւնովը միմեանց հետ վառ-
ուեցան . արուները արուներու հետ
խայտառակութիւն կը գործէին , և իրենց
անառակութեան վայլած հատուցումը ի-
28 րենց վրայ կ'ընդունէին : Եւ որովհետև
չուզեցին զԱստուած իրենց գիտութեանը
մէջ պահել , Աստուած ալ զանոնք յած
մտածմունքներու մատնեց անվայել բաներ
29 ընելու . Անոնք որ լեցուած էին ամէն
կերպ անիրաւութիւնով , պոռնկութիւ-
նով , անզգամութիւնով , ագահութիւնով ,
չարութիւնով , նախանձով լեցուն , մար-
դասպանութիւնով , հակառակութիւնով ,
խաբէբայութիւնով , չարասրտութիւնով .
30 և էին քսուներ , Չարախօսներ , Աստուած
ատողներ , թշնամութիւն ընողներ ,
հպարտներ , գոռոզներ , չար բաներ հնա-
31 րողներ , ծնողքնին անհնազանդներ , Ան-
միտներ , ուխտ չպահողներ , անգութ-
32 ներ , տմարդիներ , անողորմներ . Անոնք
հասկցեր էին Աստուծոյ դատաստանը ,
թէ անոնք որ այսպիսի բաներ կ'ընեն՝ մահ-
ուան արժանի են . և չէ' թէ միայն ան
ընողները , հապա անոնք ալ որ ան ընող-
ներուն հետ կամքերնին մէկ է :


Digitized by Google

[illegible]

1 [illegible]

2 [illegible]

3 [illegible]

4 [illegible]

5 [illegible]

6 [illegible]

7 [illegible]

8 [illegible]

9 [illegible]

Digitized by Google

ռամպանք ամէն մարդու վրայ՝ որ չար կը
գործէ, նախ Հրէային ու ետքը Հե-
10 թանոսին. Բայց փառք ու պատիւ եւ խաղա-
ղութիւն ամէն անոնց որ բարի կը գործեն,
նախ Հրէային ու ետքը Հեթանոսին.
11 Վասնզի որ Աստուծոյ քովը աչառութիւն:
12 Քանզի Անոնք որ առանց օրէնքի մեղք
գործեցին՝ առանց օրէնքի պիտի կորսուին.
եւ անոնք որ օրէնքի տակ մեղք գործեցին՝
13 օրէնքովը պիտի դատուին. Վասնզի ոչ՝
թէ օրէնքը լսողները Աստուծոյ առջեւը
արդար են, հապա օրէնքը կատարողները
14 պիտի արդարանան: Ուստի հեթանոսնե-
րը որ օրէնք չունին՝ երբոր բնականապէս
օրէնքին գործքերը կը գործեն, անոնք որ
օրէնք չունին իրենց անձերնուն օրէնք
15 յայտնի իրենք են. Որ օրէնքին գործքերը
իրենց սրտին մէջը գրուած ըլլալը ցուցնեն
իրենց խղճմտանքին վկայութեամբը, եւ
իրենց խորհուրդներովը իրար յանդիմա-
16 նելով կամ թէ իրաւունք տալով, Այն
օրը որ Աստուած մարդոց ծածուկ բանե-
րը պիտի դատէ Յիսուս Քրիստոսի ձեռ-
քովը իմ քարոզած աւետարանիս պէս:
17 Ահա դուն որ Հրէայ կոչուեր ես, ու
օրէնքին կռթներ ես, ու Աստուծով կը
18 պարծենաս, Եւ անոր կամքը գիտես, ու
ան որ աղէկ է՝ կ'ընտրես, ու օրէնքէն
19 խրատուած ես. Ու անձիդ վստահ ես
կոյրերուն առաջնորդ ըլլալու, խաւա-
20 րածներուն լոյս, Անզգամներուն խրատ

Digitized by Google

տղայոց, տղայոց վարժապետ, գիտու-
թեան ու ճշմարտութեան կերպարանքը
օրէնքին ունենալով : Իսկ դուն՝ որ 21
ուրիշները կը սորվեցնես, քու անձդ չես
սորվեցներ, որ կը քարոզես չգողնալ,
կը գողնաս, Որ կ'ըսես շնութիւն 22
չընել, շնութիւն կ'ընես, որ կը զզուիս
կռապաշտութենէն, սրբապղծութիւն կ'ընես.
Որ օրէնքովը կը պարծենաս, օրէնքին 23
զանց ընելով՝ զԱստուած կ'անարգես :
Ինչու որ Աստուծոյ անունը ձեր պատճառաւ 24
հեթանոսաց մէջ կը հայհոյուի, ինչպէս
որ գրուած է :

Թլփատութիւնը շատ կ'օգնէ՝ թէ որ 25
օրէնքը պահես, իսկ թէ որ օրէնքին զանց
ընողը ըլլաս՝ քու թլփատութիւնդ ան-
թլփատութիւն եղաւ : Ուստի թէ որ 26
անթլփատութիւնը օրէնքին իրաւունքները
պահէ, չէ՞ որ անոր անթլփատութիւնը
թլփատութիւն կը սեպուի . Եւ բնութենէն 27
եղած անթլփատութիւնը, օրէնքը
կատարելով՝ քեզ պիտի դատապարտէ,
որ գրով և թլփատութիւնով օրէնքին
զանցառու ես : Ինչու որ Հրեայ չէ ան՝ 28
որ յայտնապէս է, և թլփատութիւն չէ ան՝
որ յայտնապէս մարմնին է . Հապա Հրեայ 29
ան է՝ որ ներքուստ է, և թլփատութիւն
սրտինը՝ Հոգիով, ոչ թէ գիրով . որ-
ուն գովութիւնը չէ մարդոցմէ, այլ
Աստուծմէ :

Digitized by Google

[illegible]

1 [illegible] ի՞նչ [illegible]
2 [illegible] ի՞նչ [illegible] Ըստ [illegible]
[illegible]
[illegible]
3 [illegible] [illegible] էր որ [illegible]
[illegible] [illegible] կը [illegible]
4 [illegible] [illegible] [illegible] և [illegible]
[illegible] որ [illegible] է [illegible]
[illegible] և [illegible]
5 [illegible] [illegible]
էր որ [illegible] [illegible]
[illegible] [illegible] ի՞նչ
[illegible] [illegible] է [illegible]
[illegible] կը [illegible]
6 ( [illegible] կ'ըսեմ . ) [illegible]
[illegible] էր [illegible] [illegible] կը [illegible]
7 [illegible] [illegible] որ [illegible]
[illegible] [illegible] կ'[illegible]
[illegible] [illegible] [illegible]
[illegible] կը [illegible]
8 [illegible] էր [illegible] ( [illegible] որ
[illegible] կը [illegible] , և [illegible]
[illegible] կ'[illegible] որ կ'[illegible] էր )
[illegible] որ [illegible]
[illegible] է :
9 [illegible] ու ի՞նչ բանով [illegible] էիք [illegible]
[illegible] . բայց որ [illegible] բանով [illegible]

Digitized by Google

ալ չէ. ինչու որ առաջուց մեղադրեցինք
Հրեաները և Հեթանոսները՝ թէ ամէնքը
մեղաց տակ են. ինչպէս որ գրուած է, 10
Թէ Արդար մը չկայ, մէկ մը հատ մը:
Եւ մէկը չկայ որ հասկընայ, և մէկը չկայ 11
որ Աստուած փնտռէ: Ամէնքը մոլորե- 12
ցան, մէկտեղ անպիտան եղան. մէկը չկայ
որ բարիք ընէ, և ոչ մէկ հատ
մը ալ չկայ: Անոնց կոկորդը բաց գե- 13
րեզման է. իրենց լեզուներովը նենգութիւն
կ՚ընեն. իժերու թոյնը անոնց շրթունքներ-
ուն տակն է. Անոնց բերաննին անէծքով 14
ու դառնութիւնով լեցուած են: Անոնց 15
ոտքերը շուտ են արիւն թափելու: Կոր- 16
ծանում և թշուառութիւն կայ իրենց
ճամբաներուն մէջ. Եւ խաղաղութեան 17
ճամբան չճանչցան: Աստուծոյ վախը անոնց 18
աչքերուն առջևը չէ: Գիտենք որ 19
ինչ որ օրէնքը ինչ բան որ կ՚ըսէ, ան-
նոնց կ՚ըսէ՝ որ օրէնքին տակն են. որպէս
զի ամէն բերան գոցուի, և բոլոր աշխարհք
դատապարտուած ըլլայ Աստուծոյ առջևը:
Ինչու որ անոր առջևը մէկ մարմին ալ պիտի 20
ոչ արդարանայ օրէնքին գործքերովը.
քանզի օրէնքով է մեղքը ճանչնալը:
Բայց հիմա առանց օրէնքի Աստուծոյ 21
արդարութիւնը յայտնուած է, օրէնքէն
և մարգարէներէն վկայուած ըլլալով.
Այսինքն Աստուծոյ արդարութիւնը Յիսուս 22
Քրիստոսի հաւատքովը բոլոր հաւատա-
ցողներուն վրայ է. ու չկայ զանազանու-

23 Թէպէտ և ինչու որ ամէնքը մեղք գործեցին,
24 Եւ Աստուծոյ փառքէն պակսած են․ ․․ ու
անոր շնորհքովը ձրի կ'արդարանան Յիսուս
25 Քրիստոսով եղած փրկութիւնովը․ Զինք
որ առաջուընէ յանձնեց Աստուած՝ հաւատո-
քով քաւութիւն ըլլալ անոր արիւնովը․
Աստուծոյ երկայնմտութեան առաջները
առաջուց գործուած մեղքերուն թողու-
թեանը համար իր արդարութիւնը ցուցը-
26 նելու համար․ Եւ հիմակ իր արդարու-
թիւնը այս ժամանակիս մէջ ցուցնելու
համար, որ ինքը արդար ըլլայ․ և արդա-
րացընէ Յիսուսին հաւատացողը․
27 Արդ ո՞ւր մնաց պարծենալը․ խափանու-
եցաւ․ ո՞ր օրէնքին զօրութիւնովը․ գոր-
ծերունո՞վ․ Չէ՝ հապա հաւատքի օրէնքով․
28 Ինչու որ կը սեպենք թէ մարդը հաւատ-
քով կ'արդարանայ առանց օրէնքին գործե-
29 րուն․ Միթէ Աստուած միայն Հրեա-
ներո՞ւնն է, և հեթանոսներունը չէ՞․
30 այո՛, հեթանոսներունն ալ․ Վասն զի
մէկ Աստուած մէկ է՝ որ թլփատութիւնը
հաւատքէն կ'արդարացընէ, անոնց ալ
անթլփատութիւնը նոյն հաւատքով․
31 Ուրեմն մենք ան օրէնքը հաւատքով կը
խափանե՞նք․ քա՛ւ լիցի․ հապա օրէնքը
կը հաստատենք։

Դ.

1 Ուրեմն ինչ գտաւ ըսենք թէ գտաւ
Աբրահամ մեր նախահայրը մարմնոյ կողմա-

Digitized by Google

նէ ։ Ինչու որ եթէ Աբրահամ գործքով 2
արդարացած ըլլար, իր պարծենալիք պատճառը
կ'ունենար, բայց չէ՛ թէ Աստուծոյ առջեւ ։
Հապա Գիրքը ի՞նչ կ'ըսէ . Աբրահամ 3
Աստուծոյ հաւատաց, և անիկա անոր արդա-
րութիւն սեպուեցաւ ։ Իսկ անոր որ 4
գործք մը կ'ընէ, վարձքը՝ շնորհքէ եղած
չսեպուիր անոր, հապա պարտքէ ։ Իսկ 5
ան որ գործք մը չըներ, բայց կը հաւա-
տայ անոր՝ որ ամբարիշտները կ'արդարացը-
նէ, անոր հաւատքը իրեն արդարու-
թիւն կը սեպուի ։ Ինչպէս որ 6
Դաւիթ ալ կ'երանէ այն մարդուն երա-
նութիւնը, որ Աստուած անոր արդա-
րութիւն կը սեպէ առանց գործքերու ։
Երանի՜ անոնց՝ որոնց անօրէնու- 7
թիւնները ներուեցան, և անոնց՝ որոնց
մեղքերը ծածկուեցան ։ Երանի՜ է այն 8
մարդուն, որուն մեղքերը Տէրը անոր
մեղք չսեպէ ։ Արդ այս երանութիւնը 9
թլփատութեա՞ն վրայ է, թէ անթլփատու-
թեան վրայ . քանզի կ'ըսենք՝ թէ
հաւատքը Աբրահամին արդարութիւն սե-
պուեցաւ ։ Արդ ինչպէ՞ս սեպուեցաւ . 10
թլփատութեա՞ն մէջ եղած ատենը, թէ
անթլփատութեան մէջ . չէ՛ թէ թլփա-
տութեան մէջ, հապա անթլփատութեան ։
Եւ թլփատութիւնը իբրեւ նշան առաւ՝ 11
անթլփատութեան ատենը ունեցած հա-
ւատքին արդարութեանը մէջ կնիք մը ,
որ ինքը հայր ըլլայ այն բոլոր հաւատա-

ցողներուն որոնք անթլփատութենէ են ,
( անոնց ալ արդարութիւն սեպուելու
12 համար ։ ) Եւ հայր թլփատութեան ՝ չէ
թէ միայն թլփատութենէ եղողներուն ,
հապա անոնց ալ որ մեր Աբրահամ հօրը
անթլփատութեան ատենի հաւատքին ճամ-
13 բայովը կ'երթան ։ Ինչու որ Աբրահամին
և անոր սերունդին աշխարհի ժառանգե-
լու համար տրուած խոստմունքը չէ թէ
օրէնքովը եղաւ , հապա հաւատքին ար-
14 դարութիւնովը ։ Ինչու որ եթէ օրէնքէն
եղողները ժառանգ պիտի ըլլային , ունայն
փուճ էր հաւատքը , և պարապ խոստու-
15 մունքը ։ Որովհետև օրէնքը բարկութիւն
կը գործէ . բայց ուր որ օրէնք չկայ ՝ հոն
16 մեղք ալ չկայ ։ Անոր համար ժառանգ
ըլլալը հաւատքէն է , որ շնորհքով մը ե-
ղած կ'ըլլայ խոստմունքը հաստատուն ըլ-
լալու համար ամէն զաւկին . չէ՛ թէ
միայն անոր ՝ որ օրէնքէն է , հապա անոր
ալ ՝ որ Աբրահամի հաւատքէն է . որն
17 որ մեր ամենուն հայրն է , ( Ինչպէս որ
գրուած է , Թէ Քեզ շատ ազգերու հայր
պիտի ընեմ , ) Աստուծոյ առջևը . որուն
հաւատաց ՝ թէ մեռելները կ'ողջըցընէ ,
և չեղած բաները եղածի պէս կը կանչէ ։
18 Ու չյուսալու բանին յուսով հաւատաց
թէ ինքը շատ ազգերու հայր պիտի ըլլայ ,
( ինչպէս որ ալ ըսուեցաւ , Թէ Անանկ
19 պիտի ըլլայ քու զաւակդ . ) Եւ ինքը
հաւատքէն չտարակուսեցաւ : Թէպէտև անո-

Digitized by Google

կէ եւս իր մարմինին՝ մեռածի մը պէս նայեցաւ ; (որովհետեւ ինքը հարիւր տարեկանի մը չափ էր .) և Սառային՝ արգանդին մեռած ըլլալուն ալ ։ Այլ ան- 20
հաւատութիւնով չտարակուսեցաւ խոստմունքէն . հապա հաւատքով ուժովցաւ Աստուծոյ փառք տալով . Եւ իր միտքին 21
մէջ հաստատ պահեց՝ թէ ան որ խոսք տուաւ , ինքը կարող է ընելու ։ Անոր 22
համար իրեն արդարութիւն սեպուեցաւ ։

Բայց չէ թէ միայն անոր համար գը- 23
րուեցաւ՝ որ ան իրեն սեպուեցաւ . Հա- 24
պա նաև մեզի համար ալ՝ որոնց պիտի սեպուի , մենք որ հաւատանք անոր՝ որ մեռելներէն յարուց մեր Տէր Յիսուսը .
Ան որ մեր յանցանքը համար մատնուե- 25
ցաւ , և մեզ արդարացընելու համար՝ յարութիւն առաւ ։

## ԳԼ. Ե

Ասկէ ետև ան հաւատքովը արդարացած 1
ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով . Անով ընդունեցինք հաւատքով աս 2
շնորհքիս մտնելն ալ . որուն մէջը կեցեր ենք , և Աստուծոյ փառաց յուսովը կը պարծինք ։ Եւ չէ թէ միայն այսքան , 3
հապա նաև մեր նեղութիւններուն մէջը կը պարծինք . ինչու որ գիտենք՝ թէ նեղութիւնները համբերութիւն կը գործեն ,
Համբերութիւնը՝ փորձառութիւն , փորձ- 4

Digitized by Google

5 տոկունութիւնը՝ յոյս ։ Յոյսը բնաւ ամօ-
թով չընէր ։ Ինչու որ Աստուծոյ սէրը մեր
սրտերուն մէջը տարածուած է Հոգւոյն
Սրբոյ ձեռքովը ։ որ մեզի տրուեցաւ ։
6 Վասն զի երբ մենք տկար էինք ։ յարմար
ժամանակին Քրիստոս մեզի համար ամ-
7 բարիշտներուս վրայ մեռաւ ։ Ինչու որ
արդարի մը համար հազիւ կ՚ըլլայ որ մէկը
մեռնի ։ բայց մէկ բարի մարդու մը հա-
մար՝ կարելի՛ է որ մէկը համարձակի մեռ-
8 նելու ։ Բայց Աստուած իր սէրը որ մեր
վրայ ունի՝ յայտնեց ։ որ երբ մենք մե-
9 ղաւոր էինք՝ Քրիստոս մեզի համար մե-
ռաւ ։ ուրեմն հիմա որ իր արիւնովը ար-
դարացանք ։ որչափ աւելի իրմով պիտի
10 ազատինք ան բարկութենէն ։ Վասն զի
թէ որ թշնամի եղած ատեննիս Աստուծոյ
հետը հաշտուեցանք իր Որդւոյն մահովը ։
ո՞րչափ աւելի մեր հաշտուած ատենը պի-
11 տի ազատինք անոր կենդանովը ։ Ու չէ՛ թէ
միայն ատ ։ հապա Աստուծմով ալ կը
պարծենանք մեր Տէրոջը Յիսուս Քրիս-
տոսին ձեռքովը ։ որով ան հաշտութիւնն
ալ ընդունեցինք ։
12 Ասոր պէս ինչպէս որ մէկ մարդէ մը
մեղքը աշխարհք մտաւ ։ և ան մեղքէն
մահը ։ և այնպէս ամէն մարդոց վրայ
տարածուեցաւ մահը ։ որ անով ամէնքը
13 մեղանչեցին ։ (Մովսէսէն մինչև օրէնքին
ատենը աշխարհքի մէջ մեղքը կար ։ բայց
մեղքը չսեպուիր՝ ուր որ օրէնք չկայ ։

Digitized by Google

Բայց մահը Ադամէն մինչեւ Մովսէսը թա- 14
գաւորեց, նաև Ադամին մեղքը նման
չմեղանչողներուն վրայ ալ՝ որ ան օրինակ
էր անոր՝ որ տրուելու պիտի գար։ Բայց 15
չէ թէ ինչպէս յանցանքը՝ անանկ ալ շնորհքը
է. ինչու որ եթէ մէկուն յանցանքովը
շատերը մեռան, ալ աւելի Աստուծոյ
շնորհքը և պարգեւը Յիսուս Քրիս-
տոսին մէկ մարդուն շնորհքովը շատերուն
վրայ աւելցաւ։ Եւ չէ թէ ան պարգեւը 16
անանկ է ինչպէս մէկէ մը որ մեղանչեց.
ինչու որ դատաստանը մէկ մեղքէն դա-
տապարտութեան մէջ ինկաւ. բայց շնորհքը
շատ մեղքերէն արդարութիւն տուաւ։
Վասն զի թէ որ մէկ մարդուն մեղքովը 17
մահը թագաւորեց անով մէկովը, որչափ
աւելի անոնք որ շնորհքի ու արդարու-
թեան պարգեւին առատութիւնը կ'առնեն,
կեանքով պիտի թագաւորեն մէկ Յիսուս
Քրիստոսին ձեռքովը։) Ուրեմն ինչպէս 18
որ մէկուն մեղքովը բոլոր մարդոց դատա-
պարտութիւն եղաւ, անանկ ալ մէկուն
արդարութիւնովը բոլոր մարդոց կենաց
արդարութիւն եղաւ։ Վասն զի ինչպէս 19
որ մէկ մարդուն անհնազանդութիւնովը
շատերը մեղաւոր եղան, անանկ ալ մէ-
կուն հնազանդութիւնովը շատերը արդար
կ'ըլլան։ Սակայն օրէնքը մէջտեղը ե- 20
կաւ՝ որ մեղքերը շատնան. որ ուր աւելի
եղաւ մեղքը, հոն ալ աւելի եղաւ շնորհ-
քը։ Որ ինչպէս մեղքը թագաւորեց մա- 21

Digitized by Google

հասամբ, ու անանկ ալ շնորհքը պիտի թագաւորէ արդարութեամբ մինչեւ յաւիտենական կեանքը մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը ։

## ԳԼ. Զ.

1 Եւ հիմա ի՞նչ պիտի ըսենք. մեղքերու
մէջ մնա՞նք, արդեօք, որ շնորհքը շատ-
2 նայ ։ Քա՛ւ լիցի. մենք որ մեղքին մե-
ռանք, ի՞նչպէս դեռ անոր մէջը կենանք ։
3 Չէ՞ք գիտեր, թէ մենք որ Յիսուս Քրի-
ստոսով մկրտուեցանք, անոր մահուանը
4 մկրտուեցանք ։ Ուրեմն հետ թաղուեցանք
մկրտութիւնով մահուան համար. որ
ինչպէս Քրիստոս՝ Հօրը փառքովը յա-
րութիւն առաւ մեռելներէն, անանկ ալ
մենք կենաց նորոգութեան մէջ պտըտինք ։
5 Ինչու որ եթէ մենք անոր մահուանը նմա-
նութիւնովը իրեն հետ տնկակից եղանք,
նաեւ անոր յարութեանը նմանութիւնովը
6 ալ պիտի ըլլանք ։ Ու գիտենք
որ մեր հին մարդը անոր հետ խաչուեցաւ,
որ մեղաց մարմինը փճանայ, որ ասկէ
7 ետեւ մեղքի չծառայենք ։ Վասն զի ան
որ [illegible] կը մեռնի՝ մեղքէն արդարացած
8 է ։ Երբ թէ որ մենք Քրիստոսի հետ
մեռանք, կը հաւատանք որ անոր հետ
9 ալ պիտի ապրինք ։ Գիտենք որ Քրիս-
տոս մեռելներէն յարութիւն առած է.
ասկէ ետեւ չմեռնիր, եւ մահը անոր վրայ
10 տէրութիւն չունի ։ Վասն զի ան որ մե-

Digitized by Google

ռաւ՝ մեղքին մեռաւ մէկ անգամ. և որ
կենդանի է՝ Աստուծոյ է կենդանի: Ա- 11
նանկ ալ դուք ձեր անձը մեղքին մեռած
սեպեցէք, ու Աստուծոյ կենդանի՝ Քրիս-
տոս Յիսուս մեր Տէրոջը ձեռքովը: Ու- 12
րեմն ալ մեղքը չթագաւորէ ձեր մահկանա-
ցու մարմիններին վրայ, որ անոր ցանկու-
թիւններուն հնազանդիք: Ու ձեր ան- 13
դամները անիրաւութեան գործիք մի՝
պատրաստէք մեղքի, հապա ձեր անձերը
Աստուծոյ պատրաստեցէք՝ որպէս թէ մե-
ռելներէն ողջ ըլլալ. և ձեր անդամները
արդարութեան գործիքներ՝ Աստուծոյ:
Վասնզի մեղքը վրանիդ պիտի չիշխէ. 14
քանզի որ օրէնքին տակը չէք, հապա
շնորհաց տակը:

Արդ ինչպէս. մեղք գործենք՝ որ 15
օրէնքին տակը չենք, հապա շնորհ-
քին տակը. քաւ լիցի: Չէ՞ք գի- 16
տեր՝ թէ որունն որ անձերնիդ ծառայ կը
պատրաստէք հնազանդելու, ծառայ էք
անոր՝ որունն որ կը հնազանդիք, թէ մեղ-
քի՝ որ մահուան կը տանի, և թէ հնա-
զանդելու՝ որ արդարութեան: Բայց 17
գոհութիւն Աստուծոյ, որ դուք մեղաց
ծառայ էիք, սակայն սրտանց հնազանդե-
ցաք այն կերպ վարդապետութեան՝ որ ա-
նոր յանձնուեցաք: Ուստի դուք մեղ- 18
քերէն ազատ ըլլալով՝ արդարութեան ծա-
ռայ եղաք. (Մարդու սովորութեան պէս 19
կ՚ըսեմ՝ ձեր մարմնին տկարութեանը հա-

մար .) Ինչու որ ինչպէս ձեր անդամները
անօրէնութեան պատրաստեցիք՝ պղծու-
թեան և անօրէնութեան ծառաներ ըլ-
լալու, անանկ ալ հիմա ձեր անդամները
սրբութեան պատրաստեցէք արդարութեան
20 ծառաներ ըլլալու ։ Ինչու որ երբոր
դուք մեղաց ծառաներ էիք՝ արդարութե-
21 նէն ազատ էիք ։ Ուրեմն ան ժամանակը
ի՞նչ պտուղ ունէիք ան բաներովը՝ որոնց-
մով հիմա կ'ամչնաք ․ ինչու որ ան բանե-
22 րուն վերջը՝ մահ է ։ Բայց հիմա մեղքե-
րէն ազատուած՝ և Աստուծոյ ծառաներ ե-
ղած ; ձեր պտուղը ունիք սրբութիւնով ․
և անոր վերջն ալ յաւիտենական կեանք ։
23 Վասնզի մեղաց վարձքը մահ է ․ բայց Աս-
տուծոյ շնորհքը յաւիտենական կեանք՝
Յիսուս Քրիստոս մեր Տէրոջը ձեռքովը ։

## ԳԼ. Է.

1 Չէ՞ք գիտեր եղբայրներ, (քանզի ես
օրէնքը գիտցողներուն հետը կը խօսիմ,)
որ օրէնքը մարդուն վրայ կ'իշխէ՝ որչափ
2 ատեն որ ողջ է ։ Ինչու որ էրիկ ունեցող
կնիկը իր ողջ էրկանը հետ օրէնքով կա-
պուած է ․ բայց թէ որ էրիկը մեռնի՝ ար-
3 ձակուած է էրկանը օրէնքէն ։ Ուրեմն
քանի՛ որ էրիկը ողջ է, շուն կ'ըսուի՝ թէ
որ ուրիշ էրկան մը ըլլայ ․ բայց թէ որ
էրիկը մեռնի՝ ան օրէնքէն ազատ կ'ըլլայ,
և շուն չսեպուիր՝ թէ որ ուրիշ էրիկ մը
4 առնէ ։ Ասկէ ետև դուք ալ եղբայրներ՝

Digitized by Google

Քրիստոսի մարմինովը օրէնքին մեռաք ,
որ ուրիշի մը ըլլաք , ան որ մեռելներէն
յարութիւն առեր է , որ Աստուծոյ պտուղ
բերել ըլլանք ։ Քանզի քանի որ մենք 5
մարմնաւոր էինք՝ մեղաց կիրքերը որ օ-
րէնքով կ'ըլլային , մեր անդամներուն մէ-
ջը կ'ուժովնային , որ մենք մահուան
պտուղ բերենք ։ Բայց հիմա ան օրէն- 6
քէն արձակուեցանք . ինչու որ մեռանք
անոր՝ որով բռնուած էինք , որ մենք ծա-
ռայենք հոգիին նորոգութիւնովը , և չէ՛
թէ գրոյն հնութեամբը ։
Արդեմն ինչ ըսենք . օրէնքը մե՞ղք է . 7
քաւ լիցի . բայց ես մեղքը չէի գիտեր ,
թէ չէ օրէնքով . և ցանկութիւնը չէի
ճանչնար՝ թէ որ օրէնքը ըսած չըլլար ,
Մի՛ ցանկար ։ Մեղքը պատուիրանքովը 8
պատճառ առաւ , և իմ մէջս բոլոր ցան-
կութիւնները գործեց ․ ինչու որ առանց
օրէնքին մեղքը մեռած էր ։ Ես ալ առանց 9
օրէնքի ատեն մը կենդանի էի . բայց
երբոր պատուիրանքը վրաս հասաւ , մեղ-
քը ողջընցաւ . Ու ես մեռայ . ու ան 10
պատուիրանքը որ կենաց համար էր՝ նոյնը
ինծի մահուան համար եղաւ ։ Ինչու որ 11
մեղքը պատուիրանքէն առիթ առնելով
զիս խաբեց , ու անով մեռցուց ։ Ուստի 12
օրէնքը սուրբ է , ու պատուիրանքը սուրբ՝
և արդար ու բարերար ։
Արդեմն բարին ինծի մա՞հ եղաւ . քաւ 13
լիցի . հապա մեղքը . որպէս զի երևնայ

Digitized by Google

մեղքը որ ան բարի բանովը ինծի մահ
գործեց, որ մեղքը պատուիրանքով աւելի
14 մեղաւոր ըլլայ։ Գիտենք որ օրէնքը հոգե-
ւոր է, բայց ես մարմնաւոր եմ՝ մեղքի-
15 րուն տակը ծախուած։ Վասնզի ինչ որ
կ'ընեմ՝ չեմ ճանչնար. չէ՛ թէ ինչ որ
կ'ուզեմ ան կ'ընեմ, հապա ինչ որ կ'ատեմ՝
16 ան կ'ընեմ։ Հապա թէ որ չուզածս կ'ընեմ,
օրէնքին համար կը վկայեմ՝ որ ան բարի
17 է։ Արդէն չէ՛ թէ ես կ'ընեմ անիկայ,
հապա մեղքը՝ որ իմ ներսիդիս կը բնակի։
18 Գիտեմ որ իմ ներսիդիս, այսինքն իմ
մարմնիս մէջ մէկ բարի բան մը բնակուած
չէ. ինչու որ կամեցողութիւնը կայ քովս,
19 բայց բարին ընելը չկայ։ Ինչու որ չէ՛
թէ բարին որ կ'ուզեմ՝ կ'ընեմ, հապա
20 չարը որ չեմ ուզեր՝ ան կ'ընեմ։ Իսկ թէ
որ չուզած բանս կ'ընեմ՝ ալ չէ՛ թէ ես
կ'ընեմ անիկայ, հապա մեղքը՝ որ իմ
21 ներսիդիս բնակուած է։ Ասոր ես կը
գտնեմ անոր օրէնքը՝ որ իմ ներսիդիս
բարին ընելու կը կամենայ, ու չարը իմ
22 քովս է։ Ներսի մարդովը Աստուծոյ օ-
23 րէնքին կը հաւնիմ. Բայց ուրիշ օրէնք մը
կը տեսնեմ իմ անդամներուս մէջը՝ իմ
մտքիս օրէնքին դէմ զէնք վերցուցած՝ ու
զիս գերի բռնած մեղքին օրէնքովը որ իմ
24 անդամներուս մէջն է։ Այս մէկ խղճալի
մարդ մըն եմ. ո՞վ զիս պիտի ազատէ աս
25 մահկանացու մարմինէն։ Բայց գոհու-
թիւն Աստուծոյ մեր Տէրոջը Յիսուս Քրի-

Digitized by Google

Քրիստոսի ձեռօքը : ուրեմն ես ինքնիրմէս
միտքովս Աստուծոյ օրէնքին կը ծառա-
յեմ , ու մարմնովս մեղաց օրէնքին :

Թէ որ անանկ է , դատապարտութիւն 1
չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն , ո-
րոնք մարմնաւոր կերպով չեն վարուիր :
Ինչու որ Քրիստոս Յիսուսով կենաց Հո- 2
գիին օրէնքը զիս ազատեց մեղաց ու մա-
հուան օրէնքէն : Վասն զի ան որ ան- 3
կարելի էր օրէնքին՝ որովհետեւ տկար էր
մարմնով , Աստուած իր Որդին ղրկեց
մեղանչական մարմնի նմանութեամբ , ու
մեղքի համար , և դատապարտեց մեղքը
ան մարմնին մէջ : Որ օրէնքին ար- 4
դարութիւնը կատարուի մեր մէջը , որ
մարմնաւորապէս չերթանք հապա հոգևո-
րապէս : Ինչու որ մարմնաւոր եղողները 5
մարմնին բաները կը մտմտան , ու հոգևոր
եղողները՝ հոգիին բաները : Վասն զի 6
մարմնաւոր խորհուրդը մահ է , և հոգևոր
խորհուրդը՝ կեանք ու խաղաղութիւն :
Քանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ 7
դէմ թշնամութիւն է : ինչու որ Աստուծոյ
օրէնքին չհպատակիր , մանաւանդ չկրնար
ալ : Վասն զի մարմինով եղողները , չեն 8
կրնար Աստուծոյ հաճոյ ըլլալ : Բայց 9
դուք մարմինով չէք , հապա հոգիով , թէ
որ Աստուծոյ Հոգին ձեր մէջը բնակած է :
իսկ թէ որ մէկը Քրիստոսի Հոգին չունի ,



Digitized by Google

10 անիկայ անորը չէ : Եւ թէ որ Քրիստոս
ձեր մէջն է, ալ մարմինը մեռած է մեղ-
քի համար, ու հոգին ողջ է արդարու-
11 թեան համար : Եթէ որ Յիսուսը մեռել-
ներէն յարուցանողին հոգին ձեր մէջը
բնակած է, այն որ Յիսուս Քրի-
ստոսը մեռելներէն յարոյց, պիտի կեն-
դանացընէ ձեր մահկանացու մարմինները
իր հոգիովը որ ձեր մէջը կը բնակի :
12 Ապա ուրեմն եղբայրներ՝ պարտական
ենք, չէ՛ թէ մարմինին մարմնաւորապէս
13 ապրելու : Ինչու որ եթէ մարմնաւորա-
պէս ապրելու ըլլաք՝ պիտի մեռնիք. բայց
թէ որ հոգիով մարմինին գործերը
14 սպաննէք, պիտի ապրիք : Վասն զի ո-
րոնք որ Աստուծոյ հոգիովը կ'առաջնորդ-
15 ուին, Աստուծոյ որդիքն են անոնք : Ո-
րովհետեւ դուք ծառայութեան հոգին չառ-
իք կրկին վախնալու, հապա որդեգիր
ըլլալու հոգին առիք, որ անով կը կանչ-
16 չենք Աբբա՛ հայր : Նոյն ինքն հոգին
վկայութիւն կու տայ մեր հոգիին, որ
17 մենք Աստուծոյ որդիքն ենք . Եւ թէ
որ որդիք, ուրեմն ժառանգներ, Աստու-
ծոյ ժառանգներ ու Քրիստոսի ժառանգա-
կիցներ . թէ որ իր չարչարանացը կցորդ
ըլլանք, անոր փառացն ալ հաղորդ պիտի
ըլլանք :
18 Ինծի սեպանք կ'երեւնայ որ այս ժամանա-
կիս չարչարանքները բան մը չեն, զանց-
փառքերուն քովը, որ մեզի պիտի յայտ-

Digitized by Google

նուքին ։ Ինչու որ ստեղծուածներուն յոյ- 19
սը Աստուծոյ Որդւոյն յայտնուելուն կը
սպասէ ։ Ինչու որ փուճ բաներուն հպա- 20
զանդեցան՝ ստեղծուածները (չէ՛ թէ ի-
րենց կամքովը, հապա անոր համար՝ որ
հպազանդեցուց յուսով .) Որ իրենք՝ ան 21
ստեղծուածներն ալ ապականութեան ծա-
ռայութենէն ազատին՝ Աստուծոյ Որդւոյն
փառաւոր ազատութիւնովը ։ Քանզի գի- 22
տենք թէ ամէն ստեղծուածները մինչև հի-
մա կը հառաչեն՝ ու ծննդական ցաւ կը
քաշեն ։ Ու չէ՛ թէ միայն այսքան, 23
հապա մենք ալ՝ որ Հոգիին պտուղը ու-
նինք, մենք մեզի մեր անձերուն մէջ կը
հառաչենք որդեգիր ըլլալու սպասելով՝
մեր մարմինին ազատուելովը ։ Ինչու որ 24
յուսով փրկուեցանք . բայց յոյսը որ կը
տեսնուի՝ յոյս չէ . վասն զի ան բանը որ
կը տեսնէ մէկը՝ ալ ինչո՞ւ պիտի յուսայ ։
Հապա թէ որ չտեսած բաներնուս կը 25
յուսանք, ալ համբերութիւնով կը սպա-
սենք անոր ։ Նոյնպէս ալ Հոգին օգնու- 26
թիւն կը հասնի մեր տկարութեանը . ին-
չու որ ինչ բանի համար աղօթելու ենք,
ըստ արժանւոյն չենք գիտեր . բայց ինքը
Հոգին բարեխօս կ'ըլլայ մեզի անբարբառ
հառաչանքներով ։ Բայց սրտերը քննո- 27
ղը գիտէ Հոգիին ինչ խորհիլը . քանզի
Աստուծոյ կամքին համեմատ բարեխօսու-
թիւն կ'ընէ սուրբերուն համար ։

Բայց գիտենք որ ամէն բանի մէջ գոր- 28

Digitized by Google

ծակից կ'ըլլայ բարի բաներու անոնց՝ որ
Աստուած կը սիրեն, որոնք անոր հրաւի-
29 րելովը կանչուած են։ Վասն զի անոնք
որ առաջ կը ճանչնար՝ առաջուց ալ հրա-
ւիրեց իր Որդւոյն պատկերին կերպարա-
նակից ըլլալու, որ անիկայ անդրանիկ
30 ըլլայ շատ եղբայրներուն մէջը։ Եւ որոնք
որ առաջուց հրաւիրեց, նաև կանչեց զա-
նոնք. և որոնք որ կանչեց՝ նաև արդա-
րացուց զանոնք. և որոնք որ արդարա-
31 ցուց՝ նաև փառաւորեց զանոնք։ Արդեմն
ի՞նչ ըսենք աս բանին. թէ որ Աստուած
մեր կողմն է՝ ո՞վ պիտի ըլլայ մեզի հակա-
32 ռակ։ Ան որ իր Որդւոյն չխնայեց, հա-
պա մեր ամենուն համար մատնեց զանի-
կայ, ալ ի՞նչպէս անոր հետը ամէն բանե-
33 րը մեզի չպարգևեր։ Ո՞վ է որ Աստուծոյ
ընտրածներուն դէմ մեղադիր ըլլայ. Աս-
34 տուած է որ կ'արդարացընէ. Արդեմն ո՞վ
է որ կը դատապարտէ. Քրիստոս Յիսուսն
է որ մեռաւ, մանաւանդ թէ յարութիւն
ալ առաւ, ու Աստուծոյ աջ կողմն է. որ
35 նաև մեզի համար բարեխօս է ինքը։ Աս-
տի ո՞վ պիտի հեռացընէ մեզ Քրիստոսի
սիրէն. նեղութի՞ւնը, սրտմաշո՞ւքը,
հալածա՞նքը, սո՞վը, մերկութի՞ւնը, վը՞-
36 տանգը, սո՞ւրը. (Ինչպէս որ գրուած է. ա-
մէն օր քեզի համար կը մեռնինք, մոր-
թուելու ոչխարի պէս սեպուեցանք։)
37 Հապա աս ամէն բաներուն մէջ ալ աւելի
38 կը յաղթենք անով որ մեզ սիրեց։ Ին-

Digitized by Google

Վասն զի ես հաստատած գիտեմ՝ թէ ոչ մահը, ու ոչ կեանքը, ու ոչ հրեշտակները, և ոչ իշխանութիւնները, ու ոչ ներկայ բաները, և ոչ գալու բաները, ու ոչ զօրութիւնները, Եւ ոչ բարձրութիւնը, 39 ու ոչ խորութիւնը, և ոչ մէկ ու- րիշ արարած մը կրնայ մեզ բաժնել Աս- տուծոյ սէրէն, որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով է :

ԳԼ. Թ.

1 Ստոյգը կ'ըսեմ Քրիստոսով, ու չեմ
ստեր. (իմ միտքս ալ ինծի կը վկայէ
Հոգւովը Սրբով,) Որ մեծ տրտմութիւն 2
է ինծի, ու իմ սրտիս անդադար ցաւ :
Ինչու որ ուխտով կը խնդրէի ես ինքս 3
նզովուած ըլլալ Քրիստոսէն՝ իմ մարմնոյ
կողմանէ եղբայրներուս և ազգականներուս
համար ; Որոնք Իսրայէլացիներ են . որ 4
իրենցն է որդեգիր ըլլալը, ու փառքը, և
ուխտերը, ու օրէնսդրութիւնը, և
պաշտօնը, ու խոստումները . Որոնցն են 5
նահապետները, իրենցմէ՝ եղաւ Քրիստոս
ալ մարմնոյ կողմանէ . որ ինքն է ամե-
նուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեան.
ամէն : Սակայն չէ որ Աստուծոյ խօսքը 6
պակսեր է, ինչու որ չէ թէ ամեն
Իսրայէլէն եղողները, Իսրայէլացի են .
Ու չէ թէ Աբրահամին ցեղը եղողները ա- 7
մէնը որդիքն են . հապա Իսահակով քեզի
ցեղ պիտի ըսուի : Այսինքն՝ չէ թէ մա- 8

Digitized by Google

նոնք որ մարմինի որդիք են, Աստուծոյ
որդիք ալ են. հապա խոստմունքի որդի-
9 քը ցեղ կը սեպուին: Ինչու որ աւետ-
մունքի խօսք մըն է աս, թէ Աս ատեն
պիտի գամ, ու Սառան որդի պիտի ու-
10 նենայ: Ու չէ՛ թէ միայն այսքան, հա-
պա Ռեբեկայէն ալ յայտնի է՝ որ յղա-
ցաւ մէկէ մը, այսինքն մեր Իսահակ հօր-
11 մէն. Ինչու որ դեռ տղաքը չծնած, և
դեռ մէկ աղէկ կամ գէշ բան մը չգործած,
(որ Աստուծոյ նախասահմանութիւնը հաս-
12 տատ մնայ ընտրութեանը պէս՝ Ոչ՛ թէ
գործքերէն, հապա անկից որ կանչեց՝) ի-
13 րեն ըսուեցաւ Թէ մեծը պզտիկին պիտի
ծառայէ. ինչպէս որ գրուած է, թէ Յա-
կոբը սիրեցի, ու Եսաւը ատեցի:
14 Ուրեմն ի՞նչ ըսենք. միթէ Աստուծոյ
քովը անիրաւութի՞ւն կայ. քաւ լիցի:
15 Ինչու որ Մովսէսին կ'ըսէ. Որուն որ պի-
տի ողորմիմ՝ կ'ողորմիմ, ու որուն ալ
16 որ պիտի գթամ՝ կը գթամ: Ուրեմն ո՛չ
անկից է որ կը կամի, ու ո՛չ անկից որ
կը վազէ, հապա Աստուծմէն որ կ'ողորմի:
17 Ինչու որ գիրքը Փարաւոնին կ'ըսէ, թէ
անոր համար քեզ դրդեցի, որ քու վրադ
իմ զօրութիւնս ցուցընեմ, ու իմ անունս
18 ամէն երկիր զրուցուի: Ուրեմն որուն որ
կ'ուզէ՝ կ'ողորմի, և որուն որ կ'ուզէ՝ կը
19 խստանայ: Ուրեմն պիտի ըսես, թէ ալ
ինչո՞ւ մեղադիր կ'ըլլայ. վասն զի անոր
20 կամքին մէկը հակառակ չկենար: Բայց

Digitized by Google

դուն ո՞վ ես մարդ՝ որ Աստուծոյ պատասխա-
խան կու տաս . միթէ ստեղծուածը իր
Ստեղծողին կրնա՞յ ըսել , թէ զիս ինչո՞ւ
ատանկ շինեցիր ։ Բրուտը իշխանութիւն 21
չունի՞ կաւին վրայ՝ նոյն շաղուածքէն ա-
ման շինելու , մէկը պատուոյ , ու մէկալը
անարգանքի ։ Հապա ի՞նչ ըսելիք ունինք 22
մենք թէ որ ուզէր Աստուած բարկութիւնը
ցուցընել՝ ու իր զօրութիւնը յայտնել ,
ան որ շատ երկայնմտութեամբ համբերեց
կորսուելու պատրաստուած բարկութեան
ամաններուն վրայ ։ Ու՝ հոն որ իր փառ- 23
քին մեծութիւնը յայտնի ընէ ողորմելու
ամաններուն վրայ , որոնք որ փառքի հա-
մար պատրաստեց . Այսինքն մեզ որ կան- 24
չեց , չէ՛ թէ միայն Հրեաներէն , հապա
հեթանոսներէն ալ . Ինչպէս Ովսէէին 25
մէջ ալ կ'ըսէ . Իմ ժողովուրդս չեղողնե-
րը իմ ժողովուրդ պիտի կանչեմ , ու
սիրելի չեղածները՝ սիրելի . Ու պիտի 26
ըլլայ ուր տեղ որ իրենց ըսուեցաւ՝ թէ
Դուք իմ ժողովուրդս չէք , հոն տեղ ա-
նոնք կենդանի Աստուծոյ որդիքը պիտի
ըսուին ։ Եսայի ալ Իսրայէլին համար 27
կը կանչէ . Թէ և Իսրայէլի որդւոցը համ-
րանքը ծովու աւազին պէս ըլլայ , միայն
քիչ մնացորդ մը պիտի մնայ ։ Ինչու որ 28
մէկ բան մը կարճ և համառօտ արդարու-
թիւնով Տէրը կարճ բան մը պիտի ընէ
երկրի վրայ ։ Ու ինչպէս որ Եսային կ'ը- 29
սէ . Թէ որ զօրութեանց Տէրը մեզի

զաւակ թողուցած չըլլար՝ Սոդոմին պէս
կ'ըլլայինք ու Գոմորին կը նմանէինք ։
30 Ուրեմն ի՞նչ ըսենք. թէ հեթանոս-
ները որ արդարութեան չէին հետևեր՝
արդարութիւն հասան. ան արդարու-
31 թիւնը՝ որ հաւատքէն է. Բայց Իսրա-
յէլը արդարութեան օրէնքին ետևէն էր,
ու արդարութեան օրէնքին չհասաւ ։
32 Ինչո՞ւ համար. վասն զի չէ՝ թէ հաւատ-
քէն, հապա որպէս թէ օրինաց գործքերէն
ուզէց արդարանալ. ինչու որ գայթակ-
33 ղութեան վէմին վրայ գլորեցան. Ինչպէս
որ գրուած է. Ահա՛ Սիօնին մէջը գայ-
թակղութեան քար մը կը դնեմ, ու
գլորելու վէմ մը. և ամէն ով որ անոր
հաւատայ՝ պիտի չամչնայ ։

## ԳԼ. Ժ.

1 Եղբայրներ՝ իմ սրտիս փափաքը ու
աղօթքը առ Աստուած անոնց փրկուելուն
2 համար է ։ Ինչու որ ես կը վկայեմ ա-
նոնց համար. որ Աստուծոյ նախանձաւո-
րութիւնը ունին. բայց չէ թէ գիտնալով ։
3 Վասն զի Աստուծոյ արդարութիւնը չէին
գիտեր, ու իրենցը կ'ուզեն հաստատել.
ինչու որ Աստուծոյ արդարութեանը չհնա-
4 զանդեցան ։ Քանզի օրէնքին վախճանը
Քրիստոս է՝ ամէն հաւատացողներուն ար-
դարութեանը համար ։
5 Մովսէս օրէնքէն եղած արդարութիւնը
կը ստորագրէ. Թէ որ մարդ անիկայ կա-

Digitized by Google

ընողը՝ անոնցմով պիտի ապրի ․ Բայց հաւատ- 6
քին արդարութիւնը այսպէս կ'ըսէ ․
Մի՛ ըսեր քու սրտիդ մէջը , Ո՞վ պիտի
ելլէ երկինքը , (այսինքն՝ Քրիստոսը իջ-
ցընելու ․) Կամ թէ Ո՞վ պիտի իջնէ 7
անդունդը , (այսինքն՝ Քրիստոսը մե-
ռելներէն հանելու ․) Հապա ի՞նչ 8
կ'ըսէ ․ Խօսքը մօտ է քու բերնիդ մէջը ,
և քու սրտիդ մէջն է , այսինքն՝ հաւատ-
քին խօսքը որ մենք կը քարոզենք ․ Ինչու- 9
որ եթէ քու բերնովդ Յիսուս Տէր խոստ-
վանիս , և քու սրտիդ մէջը հաւատաս ,
թէ Աստուած անիկայ մեռելներէն յարոյց ,
պիտի փրկուիս ․ (Վասն զի սրտով կը 10
հաւատանք արդարանալու , և բերնով կը
խոստովանինք փրկուելու ․) Քանզի գիր- 11
քը կ'ըսէ ․ Ամէն ով որ անոր հաւատայ՝
պիտի չամչնայ ․ Ինչու որ տարբերութիւն 12
չկայ՝ Հրէային ու Հեթանոսին մէջը ․
վասն զի ամենուն Տէրը նոյնն է , ճոխա-
ցած ամենուն՝ որ անոր կը կանչեն ․ Վասն 13
զի ով որ Տէրոջը անունը կանչէ՝ պիտի
փրկուի ։

Արդ ինչպէս պիտի կանչեն անոր՝ ան- 14
րուն որ չհաւատացին ․ Կամ ինչպէս պի-
տի հաւատան անոր՝ որուն վրայով չլսե-
ցին ․ Կամ ինչպէ՞ս պիտի լսեն առանց մէ-
կուն քարոզելուն ․ Կամ ինչպէս պիտի 15
քարոզեն՝ թէ որ չղրկուին ․ Ինչպէս որ
գրուած է ․ Ինչպէս գեղեցիկ են խաղա-
ղութիւն աւետարանողներուն՝ ․ և բարիք

Digitized by Google

բարիներու աւետիս աւետարանողներուն ոտքերը ։
16 Բայց ամէնքը հնազանդ չեղան աւետարա-
նին ։ Եսային կ'ըսէ . Տէ՛ր, ո՞վ հաւատաց
17 մեր քարոզին ։ Ուրեմն հաւատքը
լսելէն է ; ու լսելը Քրիստոսի խօսքէն ։
18 Բայց կ'ըսեմ . Միթէ չլսեցի՞ն . ամենեւին
որ Բոլոր երկրին անոնց ձայնը ելաւ ;
ու անոնց խօսքը մինչեւ աշխարհի ծայրե-
19 րը ։ Բայց կ'ըսեմ . Միթէ Իսրայէլ
չգիտցա՞ւ . առաջ Մովսէս կ'ըսէ . Ես ձեզ
նախանձեցնել տալ պիտի ձեզ մէկ ոչինչ ժո-
ղովուրդով մը ; ու անմիտներէ ազգով մը
20 ձեզ պիտի բարկացընեմ ։ Բայց Եսայի
կը համարձակի , ու կ'ըսէ . Ես անոնց
գտնուեցայ՝ որ զիս չէին փնտռեր , յայտ-
նի եղայ անոնց որ զիս չէին հարցըներ ։
21 Սակայն Իսրայէլին կ'ըսէ . Բոլոր օրը ձեռքս
երկնցուցի անհնազանդ ու հակառակող
ժողովուրդին վրայ ։

## ԳԼ. ԺԱ

1 Ուրեմն կ'ըսեմ , Որ Աստուած իր
ժողովուրդը մերժե՞ց . քաւ լիցի . քանզի
ես ալ Իսրայէլացի եմ , Աբրահամին
2 զաւակէն՝ Բենիամինին ցեղէն ։ Չմերժեց
Աստուած իր ժողովուրդը՝ որն որ ինքը
առաջուց ճանչցաւ . Միթէ չէ՞ք գիտեր
Եղիային պատմութեանը մէջ գիրքը
ինչ կ'ըսէ . ինչպէս անիկայ ամբաստանու-
թիւն կ'ընէ Աստուծոյ Իսրայէլին դէմ
3 ըսելով . Տէ՛ր , քու մարգարէներդ մեռցու-

Digitized by Google

ցին, ու քու սեղաններդ կործանեցին։
Մինակ ես մնացի, և իմ անձս կը փնտռե-
ռեն։ Բայց ի՞նչ կ'ըսէ անոր Աստուա- 4
ծային պատասխանը. Ինծի թողուցի՝ կ'ը-
սէ, եօթը հազար մարդիկ, որոնք Բահա-
ղին ծնրադրութիւն չըրին։ Նմանակ ալ 5
այս ատենս ալ մնացածներ՝ որ շնորհքին
ընտրութեամբը եղան. Իսկ թէ որ շնորհ- 6
քով, ուրեմն ալ գործքերէն չէ՛. Հապա
թէ չէ՝ շնորհքը ալ շնորհք չ'ըլլար։ Ու- 7
րեմն ի՞նչ. Իսրայէլը չհասաւ ան բանին որ
կը փնտռէր, բայց ընտրուածներուն հա-
սաւ. ու միւսերնին կուրցան. ինչպէս 8
որ գրուած է. Աստուած անոնց թմրու-
թեան հոգի տուաւ. աչքեր՝ որ անոնցմով
պիտի չտեսնեն, ու ականջներ՝ որ անոնց-
մով պիտի չլսեն, մինչև այս օրուան օրս։
Իսկ Դաւիթ կ'ըսէ. Անոնց սեղանները որո- 9
գայթ թող ըլլայ, ու որս և գայթակ-
ղութիւն, ու իրենց հատուցում. Աչ- 10
քերնին խաւարին՝ որ չտեսնեն, ու անոնց
կռնակը միշտ վա՛ր ծռէ։ Ուրեմն կ'ըսեմ. 11
Միթէ անո՞ր համար անոնք յանցանք ը-
րին, որ կործանին, քա՛ւ լիցի. Հապա
իրենց յանցանքն ընելովը՝ հեթանոսաց
փրկութիւն եղաւ. որ զիրենք նախանձի
մէջ ձգէ։ Ուստի թէ որ անոնց յանցան- 12
քը՝ աշխարհքի մեծութիւն եղաւ, ու անոնց
պակասութիւնը՝ հեթանոսներուն մեծութիւն.
ալ ո՞րքան աւելի անոնց լրութիւնը։
Բայց ձեզի կ'ըսեմ հեթանոսներուդ. 13

Digitized by Google

Ո՛րչափ ժամանակ որ հեթանոսներուն առա-
քեալ եմ՝ իմ պաշտօնս կը փառաւորեմ.
14 Որ դուցէ իմ մարմինովս նախանձի մէջ
ձգեմ, անոնցմէ ու անոնցմէ մէկ քանին
15 ազատեմ։ Վասն զի թէ որ անոնց
մերժուիլը աշխարհին հաշտութիւն է,
հապա անոնց ընդունուիլը ի՞նչ պիտի
ըլլայ, բայց եթէ՝ մեռելներէն կենդանի
16 ըլլալ։ Եւ թէ որ երախայրիքը սուրբ
է, նաև զանգուածը, և եթէ որ արմատը՝
17 սուրբ է՝ ճիւղերն ալ։ Եւ եթէ որ ան ճիւղե-
րէն մէկ քանին կոտրեցան, ու դուն որ
վայրենի ձիթենի էիր՝ անոնց մէջ պա-
տուաստեցար, ու ձիթենիին արմատին և
18 պարարտութեանը հաղորդ եղար. Ճիւ-
ղերուն դէմ մի՛ պարծենար. Հապա թէ
որ պարծենաս՝ չէ՛ թէ դուն արմատը կը
19 բռնես, բայց արմատը քեզ։ Ու-
րեմն պիտի ըսես. Ճիւղերը կոտրեցան՝
20 որ ես պատուաստուիմ։ Աղէ՛կ է, անոնք
անհաւատութիւնով կոտրեցան, ու դուն
հաւատքով հաստատուեցար, մի՛ հպար-
21 տանար, հապա վախցի՛ր. Քանզի որ եթէ
Աստուած բուն ճիւղերուն չխնայեց, դու-
22 զի քեզ ալ չխնայէ։ Ուստի նայէ՛ Աս-
տուծոյ անողորմութիւնը, ու խստութիւնը.
կործանուածներուն վրայ խստութիւնը, և
քու վրադ Աստուծոյ անուշութիւնը, թէ
որ ան անուշութեան մէջ կենաս. հապա
23 թէ չէ՝ դուն ալ պիտի կոտրուիս։ Նաև
անոնք՝ թէ որ նոյն անհաւատութեանը

Digitized by Google

...ջնջեալս կը պատուաստանին ։ Քանզի մի
կարող է Աստուած անոնք · նոյնպէս պա-
տուաստելու ։ Քանզի որ եթէ դուն ի բնէ 24
բնական եղող վայրենի ձիթենիէն կտրուե-
ցար , ու ձեն ազնիւ ձիթենիին վրայ որ
բնէ չէր՝ պատուաստուեցար , ալ
որչափ աւելի անոնք որ բնական ճիւղե-
րն են կը պատուաստուին իրենց ձիթենիին վը-
րայ ։ Չեմ ուզեր եղբայրներ՝ որ չգիտ- 25
նաք այդ խորհուրդը , ( որ ինքզ-
զինքնիդ իմաստուն չսեպէք ․) որ ըստ
մասին կուրութիւն եղաւ Իսրայէլին ,
մինչև որ հեթանոսներուն լրութիւնը մըտ-
նէ ։ Եւ անանկ բոլոր Իսրայէլ պիտի 26
փրկուի , ինչպէս որ գրուած է ։ Սիոնէն
պիտի գայ Փրկիչը , ու Յակոբէն ամբա-
րըշտութիւնները պիտի վերցը-
նէ և Ասիկա է իմ ուխտս անոնց ; երբ որ 27
անոնց մեղքերը վերցնեմ ։ Աւետարանի- 28
նին նայելով անոնք Թշնամիներ-
ներն են ձեր պատճառովը ․ ընտրութեանը
նայելով սիրելի են հայրերուն համար ։
Քանզի որ Աստուծոյ շնորհքը ու կոչումը 29
առանց զղջանալու է ։ Վասն զի ինչպէս 30
որ դուք ալ մէկ ատեն մը Աստուծոյ
անհնազանդ էիք , ու հիմա ողորմութիւն
գտաք անոնց անհնազանդութեանը համար ․
Նոյնպէս ալ անոնք հիմա անհնազանդ եղան , 31
ձեր ողորմութեանը համար , որ անոնք
ալ ողորմութիւն գտնեն ։ Քանզի որ Աս- 32
տուած ամենքն ալ անհնազանդութեան մէջ
արգիլեց , որ ամենուն ողորմի ։

Digitized by Google

33 Ո՛վ Աստուծոյ մեծութեան ու իմաստու-
թեան ու գիտութեան խորունկութիւնը .
որչափ անքննելի են իր դատաստանները ,
ու չհասկցուելու են իր ճամբաները :
34 Վասն զի ո՞վ գիտցաւ Տէրոջը միտքը :
35 կամ ո՞վ անոր խորհրդականը եղաւ : Կամ
ո՞վ անոր առջի տուաւ , ու փոխարէնը առնե-
36 լիք ունի . Քանզի ամեն բաները անկէ են , որ անով բաներէն
առնողին ու անով ; և անոր համար են :
Իրեն փառք յաւիտեանս : ամէն :

## ԳԼ. ԺԲ

1 Ուրեմն կ'աղաչեմ ձեզի եղբայրներ Աստուծոյ
ողորմութեամբը , որ ձեր մարմինները
մատուցանէք կենդանի զոհ մը սուրբ ;
2 Աստուծոյ հաճելի , որ է ձեր բանաւոր
պաշտօնը . Ու մի՛ կերպարանիք աս աշ-
խարհքին կերպարանքովը ; հապա ձեր միտ-
քին նորոգութեամբը նորոգուեցէք . որ
դուք լաւը քննէք , և ի՛նչ է Աստու-
ծոյ կամքը՝ ան որ բարի ու հաճելի և կատա-
3 րեալ է : Քանզի շնորհաց Աստուծոյ
շնորհքովը ան կ'ըսեմ ձեր ամէն մէկին ո-
րո՛ւն որ , չմտածէք աւելի մտածելա-
լէն աւելին քան չմտածէք . հապա զգաստ
կերպով մտածեցէք , ինչպէս որ Աստուած
ամէն մէկուն բաժներ հաւատքին չափը :
4 Ինչպէս որ մէկ մարմնի մէջ շատ ան-
դամներ ունինք , ու ան ամէն անդամները
5 մի ու նոյն գործը չունին . Նոյնպէս ալ մենք
շատերնիս մէկ մարմին մըն ենք Քրիս-

Digitized by Google

տոսով, բայց ամէն մէկերնիս իրարու ան-
դամներ ենք։ Ուստի մենք կերպ կերպ 6
պարգեւներ ունինք՝ ան շնորհքովը որ մեզի
տրուած է. թէ որ մարգարէութիւն՝
հաւատքին չափովը գործածենք, Թէ որ 7
ծառայութիւն՝ ծառայութեան չափովը,
թէ ան որ կը սորվեցընէ՝ վարդապետու-
թեան չափովը, Թէ ան որ կը մխիթարէ՝ 8
մխիթարութեան չափովը. ան որ տուող
է՝ ուրախութեամբ. ան որ վերակացու է՝
ջանքով. ան որ կ'ողորմի՝ յօժար սրտով։
Սէրը՝ առանց կեղծաւորութեան ըլլայ. 9
չարը ատելով բարիին ետեւէն երթալով.
Եղբայրսիրութեան մէջ մէկզմէկու վրայ 10
գթած եղէք. պատուելու մէջ մէկզմէկէ
անցէք. Ջանքի մէջ թուլասիրտ չըլլաք, 11
հոգիով բորբոքեցէք. Տէրոջը ծառայե-
ցէք. յուսով ուրախ եղէք. Նեղութեան 12
համբերեցէք. աղօթքի ստէպ կեցէք.
Սուրբերուն պիտոյքը հաղորդեցէք. Հիւ- 13
րասիրութեան ետեւէ եղէք։ Ձեզ հալա- 14
ծողները օրհնեցէք. օրհնեցէք ու մի' անի-
ծէք։ Խնդացողներուն հետ խնդացէք. լա- 15
ցողներուն հետ լացէք։ Իրարու վրայ մի եւ 16
նոյն խորհուրդը ունեցէք. ամբարտաւա-
նութիւն մի' ընէք, հապա խոնարհներուն
հետ խոնարհեցէք. Ինքզինքնիդ իմաս-
տունի տեղ մի' դնէք։ Գէշութեան փո- 17
խարէն մէկուն գէշութիւն մի' ընէք. ա-
մէն մարդոց առջեւ՝ բարի բաներ մտմտա-
ցէք։ Թէ որ կարելի է ձեզի ամէն մար- 18

Digitized by Google

19 դոց հետ խաղաղութիւն ընեցէք : Սի՛-
րելիք՝ վրէժխնդրութիւն մի՛ ընէք ձեր
անձերուդ համար, հապա բարկութեան
տեղի տուէք, ինչու որ գրուած է :
Վրէժխնդրութիւնը իմս է, ու ես պիտի
20 հատուցանեմ՝ կ՚ըսէ Տէրը : Հապա թէ
որ քու թշնամիդ անօթեցեր է, հաց տուր
անոր, ու թէ որ ծարւած է՝ ջուր տուր ա-
նոր. ասանկ ընելով՝ կրակի կայծեր անոր
21 գլխուն վրայ կը դիզես : Չարէն մի՛
յաղթուիր, հապա բարիով յաղթէ՛ չա-
րին :

## ԳԼ. ԺԳ.

1 Ամէն մարդ որ իշխանութեան տակ է՝
հնազանդութեան մէջ թող կենայ. ինչու
որ իշխանութիւնը մէկ տեղէ մը չէ՛, միայն
թէ Աստուծմէ. եւ անոնք որ կան՝ Աստ-
2 ուծմէ կարգուած են. Ուրեմն ո՛վ որ
իշխանութեան դէմ կը կենայ՝ Աստուծոյ
հրամանին դէմ կը կենայ. եւ անոնք որ
դէմ կը կենան՝ անձերնուն դատապար-
3 տութիւն կ՚ընդունին : Ասանկ որ իշխան-
ները բարի գործերուն վախ տուող չեն,
հապա չարերուն. կ՚ուզե՞ս չվախնալ ան
իշխանութենէն, բարի՛ գործէ, ու անկէց
4 գովութիւն պիտի ընդունիս. ինչու որ
անիկայ Աստուծոյ սպասաւորն է քեզի
բարիի համար. բայց թէ որ դուն չար
կը գործես՝ վախցի՛ր. ինչու որ դատարկ
տեղը մէջքը թուր չէ կապեր. Աստուծոյ

Digitized by Google

սպասաւորն է՝ վրէժխնդրող՝ բարկանալու
անոր վրայ՝ որ չար կը գործէ : Ասոր հա- 5
մար պէտք է հնազանդ ըլլալ , չէ թէ
միայն բարկութեանը համար՝ հապա
խղճմտանքին համար ալ : Ասոր համար 6
է որ տուրք ալ կու տաք . ինչու որ Աս-
տուծոյ սպասաւորներն են անոնք նոյն բանին
հոգ տանելու : Ուստի հատուցէք պէտք 7
եղածը ամենուն . որուն որ տուրքը վճարե-
լու է՝ տուրքը . որուն որ մաքս՝ մաքսը .
որուն որ վախ՝ վախնալը՝ որուն որ պա-
տիւ՝ պատիւը :

Ոչ մէկուն պարտական մի՛ գտնուիք , 8
միայն թէ մէկզմէկ սիրելու . վասն զի ո՛վ
որ ընկերը կը սիրէ , օրէնքը կը կատարէ .
ինչու որ այն՝ մի՛ շնար , ու մի՛ սպաննա- 9
ներ , մի՛ գողնար , ու սուտ վկայու-
թիւն մի՛ ըներ , և մի՛ ցանկար , և
թէ որ ուրիշ պատուէր մըն ալ կայ՝ բո-
լորը այս խօսքին մէջ կը բովանդակուին ,
թէ Սիրէ ընկերդ քու անձիդ պէս սիրես :
Սէրը իր ընկերին գէշութիւն չըներ . ու- 10
րեմն օրէնքին բովանդակութիւնը սէրն է :
Ու ասիկայ գիտցէք այս ժամանակս հա- 11
մար , որ հիմա ժամանակ է մեր քունէն
արթննալու : ինչու որ հիմա մօտ է մեզի
մեր փրկութիւնը քան թէ այն ատենը որ
հաւատացինք : Գիշերը մէկդի գնաց , 12
ու ցորեկը մօտեցաւ : ուրեմն մէկդի
ընենք խաւարին գործքերը , ու [illegible]
հագնինք լուսոյ զէնքերը : Պարկեշտ թէ 13

ցորեկին ատենը զգաստութեամբ պարկեշտաբար.
չէ թէ անառակութիւններով, ու գինո-
վութիւններով, և չէ թէ խառնակ պո-
ռնկութիւններով, ու գիջութիւններով, և չէ
թէ նախանձով ու հակառակութիւնով։
14 Հապա դուք հագէք Տէր Յիսուս Քրիս-
տոսը, ու մարմնոյ խնամքը մի՛ ընէք
ցանկութեան համար։

## ԳԼ. ԺԴ.

1 Բայց հաւատքին մէջը տկար եղողը
ընդունեցէք՝ չէ թէ տարակուսանքներու վի-
2 ճաբանութիւններով։ Մէկը կը հաւատայ որ
ամէն բան կրնայ ուտել. և ան որ տկար
3 է՝ կանանչեղէն կ'ուտէ։ Ան որ կ'ուտէ՝
չուտողը թող չանարգէ, ու ան որ չու-
տեր՝ ուտողը թող չդատէ. քանզի որ Աս-
4 տուած անիկայ ընդունեց։ Դուն ո՞վ ես
որ ուրիշին ծառան կը դատես. իր Տէրո-
ջը կը կենայ կամ կ'իյնայ. բայց պիտի
կենայ, քանզի Տէրը կարող է զանիկայ
5 հաստատելու։ Մէկը մէկ օրը մէկալ օ-
րէն աւելի կը սեպէ, ու մէկալը ամէն օրը
մէկ կը սեպէ. թող ամէն մարդ իր միտքը
6 հաստատէ։ Ան որ կը յարգէ օրը, Տէրո-
ջը կը յարգէ, և ան որ չյարգեր օրը, Տէ-
րոջը չյարգեր. ու ան որ կ'ուտէ, Տէրոջը
կ'ուտէ, ու Աստուծոյ կը գոհանայ. և ան
որ չուտեր՝ Տէրոջը չուտեր, ու Աստուծոյ
7 կը գոհանայ։ Քանզի մեր մէջէն մէկը իր-
ենքին համար չապրիր, ու ինքնիրեն

Digitized by Google

համար չմեռնիր ։ Ձի եթէ որ ապրինք՝ Տէ- 8
րոջը համար կ'ապրինք, և եթէ որ մեռնինք՝
Տէրոջը համար կը մեռնինք ․ ուրեմն եթէ
որ ապրինք և եթէ որ մեռնինք՝ մենք
Տէրոջն ենք ։ Քանզի Քրիստոս ալ ա- 9
նոր համար մեռաւ ու ապրեցաւ, որ պա-
հատարակ մեռելներուն ու կենդանիներուն
իշխէ ։ Դուն ինչո՞ւ քու եղբայրդ կը 10
դատես, կամ ինչո՞ւ քու եղբայրդ կը
քամահրես ․ վասն զի ամէնքս ալ Քրիս-
տոսի ատեանին առջևը պիտի կայնինք ։
Ինչպէս որ գրուած է ․ Ես կենդանի եմ՝ 11
կ'ըսէ Տէրը, որ ամէն ծունկ ինծի պիտի
ծռի, և ամէն լեզու Աստուծոյ պիտի
խոստովանի ։ Ուրեմն մեզմէ ամէն մէկը 12
Աստուծոյ հաշիւ պիտի տայ իր անձին հա-
մար ։ Ասկէ ետև մէկզմէկ չդատենք ․ հապա 13
աւելի աս միտքերնիդ դրէք՝ գայթակղու-
թիւն չդնել եղբօրը ։ Ես գիտեմ՝ ու 14
հաստատուած եմ Յիսուս Քրիստոսով,
որ մէկ բան մը ինքիրմէ պիղծ չէ, բայց
ան որ պիղծ կը սեպէ մէկ բան մը, անոր
պիղծ է ան ։ Քանզի եթէ որ կերակուրի 15
համար քու եղբայրդ տրտմի, [illegible]
սիրով [illegible] ․ քու կերակուրովդ մի՛
[illegible], որուն համար որ
Քրիստոս մեռաւ ։ Ուրեմն ձեր աղէկ բանը 16
չըլլայ որ հայհոյուի ։ Վասն զի Աստուծոյ 17
թագաւորութիւնը կերակուր ու խմելիք չէ,
հապա արդարութիւն ու խաղաղութիւն և
ուրախութիւն Հոգւով Սրբով ։ Քանզի 18

Digitized by Google

թէ որ մէկը աս բաներս մէջ Քրիստոսի կը
ծառայէ, անիկայ Աստուծոյ հաճելի է՝ ու
19 մարդիկներուն գովելի ։ Ուրեմն ասկէ
ետեւ խաղաղութեան՝ ու մէկզմէկու օգտին
20 ետեւէն երթանք ։ Չըլլայ որ կերակուրին
պատճառովը Աստուծոյ գործը քակես ։
ամէն բան սուրբ է ։ միայն թէ ան մար-
21 դուն է գէշ՝ որ խղճմտանքով կ՚ուտէ ։ Ա-
ղէկ է միս չուտել, և գինի չխմել, ու
ո՛չ բան մը ընել որ անով քու եղբայրդ
կը գայթակղի՝ կամ կը գլորի կամ կը տկա-
22 րանայ ։ Դուն հաւատք ունի՞ս ։ առան-
ձին Աստուծոյ առջևը բռնէ՛ ։ Երանի՛ ա-
նոր՝ որ իր անձը չդատապարտեր անով ո-
23 րով ընկերը կը փորձէ ։ Բայց ան որ
խղճմտանք կ՚ընէ՝ թէ որ ուտէ կը դատա-
պարտուի ։ քանզի չէ թէ հաւատքով
կ՚ուտէ ։ քանզի ի՛նչ բան որ հաւատքով
24 չէ՛ մեղք է ։ Բայց անոր՝ որ կարող է ձեզ
հաստատել իմ աւետարանիս պէս, ու
Յիսուս Քրիստոսի քարոզութեանը պէս,
ան խորհուրդին յայտնուելուն պէս, որ
յաւիտենական ատեններէն ՚ի վեր ծած-
25 կուած էր, Իսկ հիմա յայտնուեցաւ մար-
գարէական գիրքերով, յաւիտենական Աս-
տուծոյ հրամանովը՝ ամէն հեթանոսնե-
րուն ճանչցուեցաւ հաւատքի հնազանդելու
26 համար ։ Մի միայն իմաստուն Աստուծոյն՝
Յիսուս Քրիստոսի ձեռքովը փառք յա-
ւիտեանս, ամէն ։

Digitized by Google

## ԳԼ. ԺԵ.

Պէտք է մեզի որ կարող ենք, տկար- 1
ներուն տկարութիւնը վերցընել. և չէ
թէ միայն մեր անձին հաճոյ ըլլալ. Հա- 2
պա մեզմէ ամէն մէկերնիս թող ընկերին
հաճոյ ըլլայ բարի բաներու մէջ անոր օգ-
տին համար ։ Քանզի Քրիստոս ալ չէ 3
թէ իր անձին հաճոյ եղաւ, հապա ինչ-
պէս որ գրուած է. Քեզ նախատողներուն
նախատինքը իմ վրաս ինկաւ ։ Սակայն 4
ինչ որ գրուեցաւ մեր սորվելուն համար
գրուեցաւ, որ համբերութիւնով ու Գիր-
քերուն մխիթարելովը յոյս ունենանք ։
Բայց համբերութեան և բոլոր մխիթա- 5
րութեան Աստուածը, տայ ձեզի իրարու
հետ մէ և նոյն խորհուրդը ունենալ Յի-
սուս Քրիստոսի [illegible] պէս. Որ միա- 6
բանութեամբ մէկ բերան փառաւորէք
զԱստուած ու մեր Տէրոջը Յիսուս Քր-
իստոսի Հայրը ։ Անոր համար մէկզմէկ 7
ընդունեցէք, ինչպէս որ Քրիստոս ալ
ձեզ ընդունեց Աստուծոյ փառքին համար ։
Բայց կ'ըսեմ թէ Քրիստոսի թլփա- 8
տութեան պաշտօնեայ ըլլալը Աստուծոյ
ճշմարտութեանը համար էր, որ նախա-
հայրերուն տրուած խոստմունքը հաստա-
տէ ։ Սակայն հեթանոսները ողորմու- 9
թեան համար զԱստուած փառաւորեն,
ինչպէս որ գրուած է. Անոր համար քեզ-
մէ պիտի գոհանամ հեթանոսներուն մէջ,

Digitized by Google

ու քու անունիդ սաղմոս պիտի երգեմ :
10 Ու դարձեալ կ՚ըսէ՝ Թէ Ուրախ եղէք
հեթանոսներ անոր ժողովրդեանը հետ :
11 Ու դարձեալ՝ Թէ Տէրը օրհնեցէք բոլոր
հեթանոսներ , ու գովեցէք անիկայ ա-
12 մէ՛ն ժողովուրդներ : Ու դարձեալ Ե-
սային կ՚ըսէ . Յեսսէէն արմատ մը պիտի
ելլէ , ու ան որ հեթանոսներուն իշխան
պիտի կայնի , հեթանոսները անոր պիտի
13 յուսան : Բայց յուսոյ Աստուածը ձեզ լե-
ցընէ բոլոր ուրախութիւնով ու խաղաղու-
թիւնով , որ առատանաք յուսով Հոգւոյն
Սրբոյ զօրութեամբը :
14 Ես ալ ինքնիրենս հաստատուած եմ
ձեզի համար՝ իմ եղբայրներս , որ դուք
լեցուն էք բարութիւնով , լեցուն էք ա-
մէն գիտութիւնով , և կրնաք մէկզմէկ
15 խրատել : Սակայն համարձակաբար գրե-
ցի ձեզի իմ եղբայրներս՝ շատէն քիչը ,
որպէս թէ միտքերնիդ ձգեմ ան շնորհքին
համար՝ որ Աստուծմէ ինծի տրուած է .
16 Յիսուս Քրիստոսի սպասաւոր ըլլալուս
հեթանոսներուն մէջը Աստուծոյ աւետա-
րանը փափաքելի ընելուս , որ հեթանոս-
ներուն ընծան ընդունելի ըլլայ՝ Հոգւովն
17 Սրբով սրբուելով : Ասկէ ետև Աստուծոյ
քովը պարծանք ունիմ Քրիստոս Յիսու-
18 սով : Ինչու որ չեմ համարձակիր խօսե-
լու Քրիստոսի իմ ձեռքովս չգործած բա-
ները հեթանոսները հնազանդեցընելու հա-
19 մար՝ խօսքով ու գործքով , Նշաններու

Digitized by Google

ու հրաշքներու զօրութիւնով, Հոգւոյն Սրբոյ զօրութիւնովը, անանկ որ ես Երուսաղէմէն սկսած և շրջան ընելով մինչև Իլիւրիկեցւոց կողմերը Քրիստոսի աւետարանը լեցուցի:
20 Ըսանկ ջանացի աւետարանը քարոզելու. չէ՛ թէ ուր որ Քրիստոսի անունը լսուեցաւ, որ չըլլայ թէ ուրիշ մէկ ուրիշէ դրած հիմի վրայ շինեմ. հապա ինչպէս որ գրուած է.
21 Անոնք որոնց որ չպատմուեցաւ անոր համար՝ պիտի տեսնեն. ու որոնք որ չլսեցին՝ պիտի իմանան:
22 Ասոր համար շատ խափանուեցայ ձեզի գալու:
23 Բայց հիմա աս կողմերը ինծի ալ տեղ չկայ. ու շատ տարիներէ ՚ի վեր խիստ կը փափաքիմ ձեզի գալու.
24 Երբոր դէպ՚ի Սպանիա անցնիմ, կը յուսամ որ անոնց երթալու ատենս ձեզ տեսնեմ, ու ձեզմէ հոն խրկուիմ, թէ որ առաջուց քիչ մը ձեզմով լեցուիմ:
25 Բայց հիմա Երուսաղէմ կ՚երթամ սուրբերուն սպասաւորելու:
26 Վասն զի Մակեդոնացիները ու Աքայեցիները յօժարեցան՝ որ Երուսաղէմի մէջ եղած աղքատ սուրբերուն քիչ մը հաղորդութիւն ընեն.
27 Յօժարեցան, ինչու որ անոնց պարտական ալ են. Վասն զի թէ որ անոնց հոգևոր բաներուն հաղորդ եղան հեթանոսները, կը պարտաւորին որ հաղորդութիւն ընեն անոնց մարմնաւոր բաներուն ալ:
28 Արդ ասիկայ կատարելով՝ ու կնքելով անոնց պտուղը, ձեզմէ Սպանիա կ՚անցնիմ:
29 [illegible]

Digitized by Google

գիտեմ որ իմ ձեզի գալուս ատենը՝ Քրիս-
տոսի աւետարանին լեցուն օրհնութիւնովը
պիտի գամ ։
30 Չեզի կ'աղաչեմ եղբայրներ՝ մեր Տէր
Յիսուս Քրիստոսի ձեռքովը, ու Հոգւոյն
սիրովը, որ ինծի հետ պատերազմակից
ըլլաք ինծի աղօթքներուն մէջ առ Աստուած
31 ինծի համար ։ Որ Հրէաստանի մէջ եղող
անհնազանդներէն ազատուիմ, ու իմ Ե-
րուսաղէմը ընելու պաշտօնատարութիւնս
32 սուրբերուն ընդունելի ըլլայ, Որ ուրա-
խութիւնով Աստուծոյ կամքովը ձեզի գա-
33 լով հանգչիմ ձեզի հետ ։ Եւ խաղա-
ղութեան Աստուածը ձեր ամենուդ հետ
ըլլայ ։ ամէն ։

## ԳԼ. ԺԶ.

1 Չեզի կը յանձնեմ մեր Փիբէ քոյրը,
որ Կենքրէացւոց եկեղեցիին սպասաւորն է.
2 Որ ընդունիք զանիկայ Տէրոջմով ինչպէս որ
սուրբերուն արժան է, և անոր խնդրե-
լուածքը ինչ հարկաւոր բանի համար որ
ձեզի կարօտի, ինչու որ անիկայ ալ շա-
տերուն խնամքը տարաւ, ու ինծի ալ
3 բարերարեցին ։ Բարեւ ըրէք Պրիսկիղլին ու
Ակիւղասին Քրիստոս Յիսուսով իմ գոր-
4 ծակիցներուս. (Որոնք իմ կեանքիս հա-
մար իրենց պարանոցնին տուին, որ ա-
նոնց միայն ես չեմ շնորհակալ կ'ըլ-
լամ, հապա հեթանոսներուն բոլոր եկե-
5 ղեցիներն ալ ։) Եւ անոնց տանը մէջի

Digitized by Google

եկեղեցիին ալ ։ բարեւ ըրէք Եպենետոս
իմ սիրելիիս, որ Ասիայեան առջի պտուղն
է Քրիստոսով ։ Բարեւ ըրէք Մարիամին, 6
որ ձեր վրայ շատ աշխատեցաւ ։ Բարեւ 7
ըրէք Անդրոնիկոսին ու Յունիային՝ իմ
ազգականներուս, և հետս գերի եղողնե-
րուն, անոնք որ առաքեալներուն մէջը
երեւելիներն են. ինծմէ ալ առաջ
Քրիստոսի եղան ։ Բարեւ ըրէք Ամպղիա 8
իմ սիրելիիս՝ Տէրոջմով ։ Բարեւ ըրէք 9
Ուրբանոսս, իմ գործակցիս՝ Տէրոջմով,
ու Ստաքէս իմ սիրելիիս ։ Բարեւ ըրէք 10
Ապեղեսին՝ որ ընտրեալ է Տէրոջմով ։
Բարեւ ըրէք անոնց որ Արիստաբուղոսի 11
տունէն են. բարեւ ըրէք Հերովդիոն իմ
ազգականիս. բարեւ ըրէք անոնց՝ որ Նար-
կէսին տունէն Տէրոջմով են ։ Բարեւ ը- 12
րէք Տրիփոնէսին ու Տրիփոսէին՝ Տէրոջմով
աշխատողներուն. բարեւ ըրէք Պերսիդէ
սիրելիին, որ շատ աշխատեցաւ Տէրոջ-
մով ։ Բարեւ ըրէք Ռուփոսին՝ Տէրոջմով 13
ընտրուածին, ու անոր մօրը՝ և իմին ։
Բարեւ ըրէք Ասինկրիտէսին, Փղեգոնտին, 14
Երմասին, Պատրոբասին, Երմէսին, ու
անոնց հետ եղող եղբայրներուն ։ Բարեւ 15
ըրէք Փիղողոգոսին, ու Յուլիային, Նե-
րէոսին, ու անոր քրոջը, և Ողիմպիասին,
ու անոնց հետ եղող բոլոր սուրբերուն ։
Բարեւ ըրէք իրարու՝ սրբութեան համբոյ- 16
րով. բարեւ կուտան ձեզի Քրիստոսի բո-
լոր եկեղեցիները ։

Digitized by Google

17 Կ'աղաչեմ ձեզի՝ եղբայրներ, որ գիտնաք
անանկները՝ որ ձեր սորված վարդապե-
տութենէն դուրս հերձուածողութիւններ
ու գայթակղութիւններ կ'ընեն. և անոնց-
18 մէ ետ կեցէք. Ինչու որ անանկները մեր
Տէր Քրիստոսին չեն ծառայեր, հապա ի-
րենց որովայնին. ու անուշ խօսքերով և
գովութիւնով անմեղներուն սիրտերը կը
19 խաբեն: Որովհետև ձեր հնազանդութիւ-
նը ամենուն հասած է. ուստի ձեր վրայ
ուրախ եմ. բայց կ'ուզեմ որ դուք ի-
մաստուն ըլլաք բարիին, ու անմեղ՝ չա-
20 րին: Ու խաղաղութեան Աստուածը ջար-
դուբուրդ ընէ Սատանան շուտով ձեր ոտ-
քին տակը. մեր Տէր Յիսուս Քրիստոսին
շնորհքը ձեր հետը ըլլայ:
21 Բարև կ'ընէ ձեզի Տիմոթէոս եղբայրը՝
ու իմ գործակիցս, և Ղուկիոս՝ ու Յա-
սոն՝ և Սոսիպատրոս իմ ազգականներս:
22 (Բարև կ'ընեմ ձեզի ես ալ Տերտիոս, որ
23 աս թուղթը գրեցի՝ Տէրոջմով:) Բարև
կ'ընէ ձեզի Գայիոս՝ իմ ու բոլոր եկեղե-
ցիին վանատուրը. բարև կ'ընէ ձեզի Ե-
րաստոս՝ քաղաքին գանձապետը, ու
24 Կուարտոս եղբայրը: Մեր Տէր Յիսուս
Քրիստոսին շնորհքը ձեր ամենուդ հետը
ըլլայ. ամէն:
25 Բայց անոր՝ որ կարող է ձեզ հաստա-
տել իմ աւետարանիս պէս, ու Յիսուս
Քրիստոսին քարոզութեանը պէս, ան
խորհուրդին յայտնուելուն պէս, որ յա-

Digitized by Google

աւիտենական ժամանակներէն ՚ի վեր ծածկուած
էր, Ու հիմա յայտնուեցաւ մարգարէա- 26
կան գիրքերով, յաւիտենական Աստուծոյ
հրամանովը՝ ամէն հեթանոսներուն ծանու-
ցուեցաւ հաւատքի հնազանդելու համար,
Մի միայն իմաստուն Աստուծոյն՝ Յիսուս 27
Քրիստոսի ձեռքովը, փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

# ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻՆ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Աստուծոյ կամքովը Յիսուս
Քրիստոսի առաքեալ ըլլալու կանչուած,
2 ու Սոսթենէս եղբայրը, Կորնթոսի մէջ
եղած Աստուծոյ եկեղեցիին՝ Քրիստոս Յի-
սուսով ընծայուածներուն՝ սուրբեր ըլլալու
կանչուածներուն, ու ամէնուն հետ՝ որ
ամէն տեղ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
անունը կը կանչեն, իրենցը ու մերը․
3 Ձեզի շնորհք՝ և խաղաղութիւն Աստուծմէ
մեր Հօրմէն՝ ու Տէր Յիսուս Քրիստոսէն։
4 Ամէն ատեն իմ Աստուծմէս ձեզի հա-
մար կը գոհանամ՝ Աստուծոյ այն շնորհք-
ներուն վրայ, որ ձեզի տրուած են Քրի-
5 ստոս Յիսուսով․ (Որ դուք անով ա-
մէն բանի մէջ հարստացաք ամէն խօս-
6 քով,) ու ամէն գիտութիւնով․ Ինչպէս
Աստուծոյ վկայութիւնն ալ ձեր մէջ
7 հաստատուն եղաւ։ Որ դուք բնաւ մէկ

շնորհքով մըն ալ չնուազիք՝ մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի յայտնուելուն սպասելով.
Որ նաև ձեզ պիտի հաստատէ մինչև վեր- 8
ջը՝ անարատ ըլլալու մեր Տէր Յիսուս
Քրիստոսի օրը։ Հաւատարիմ է Աս- 9
տուած, որ դուք իրմով կանչուեցաք
հաղորդ ըլլալու իր Որդւոյն՝ մեր Տէր
Յիսուս Քրիստոսին։
Ձեզի կ'աղաչեմ եղբայրներ՝ մեր Տէր 10
Յիսուս Քրիստոսի անունովը, որ մի և
նոյն խօսքը ունենաք ամէնքդ, և բաժան-
մունք չըլլայ ձեր մէջը. հապա որ դուք
մէկ մտքի ու մէկ խորհուրդի վրայ հաս-
տատուած ըլլաք։ Ձեզի համար ինծի լուր 11
հասաւ եղբայրներս Քղոյեաններէն,
թէ ձեր մէջը հակառակութիւններ կան։ Ի- 12
մա՝ ես կը դրուցեմ, որ ձեզմէ ամէն մէ-
կերնիդ կ'ըսէ եղեր՝ թէ Ես Պօղոսեան եմ,
ու մէկալը՝ թէ Ես Ապողոսեան, և ու-
րիշը՝ թէ Ես Կեփասեան, ու մէկալը՝ թէ
Ես Քրիստոսեան։ Իսկ արդ՝ Քրիստոս 13
բաժանուա՞ծ է. միթէ Պօղո՞ս խաչը ե-
լաւ ձեզի համար. կամ թէ Պօղոսի՞ ա-
նունովը մկրտուեցաք։ Գոհութիւն իմ 14
Աստուծոյս, որ ձեզմէ մէկը չմկրտեցի,
միայն՝ թէ Կրիսպոսը ու Գայիոսը. որ
մէկը չըսէ, թէ իմ անունովս մկրտուե- 15
ցաք։ Նաև Ստեփանոսին ընտանիքն ալ 16
մկրտեցի. ալ ուրիշ մէկը չեմ գիտեր, որ-
մանէկ թէ մկրտեցի։
Ինչու որ Քրիստոս զիս մկրտելու չղրկեց- 17

Digitized by Google

կեց, հապա՛ աւետարանը քարոզելու.
չէ՛ թէ խօսքերու ճարտարութեամբ, որ
18 Քրիստոսի խաչը ոչինչ չըլլայ ։ Ինչու որ
խաչին քարոզութիւնը կորսուածներուն
յիմարութիւն է. բայց մեզի փրկուածնե-
19 րուս Աստուծոյ զօրութիւնն է ։ Վասն
զի գրուած է. Իմաստուններուն իմաս-
տութիւնը պիտի կորսնցընեմ, ու խորհըր-
դականներուն խորհուրդը պիտի արհա-
20 մարհեմ ։ Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր է
դպիրը, ո՞ւր է աս աշխարհիս քննողը.
չէ՞ որ Աստուած յիմարեցուց աս աշխար-
21 հիս իմաստութիւնը ։ Վասն զի որովհետեւ
Աստուծոյ իմաստութիւնովը աշխարհ չը-
ճանչցաւ զԱստուած իմաստութիւնով,
Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմա-
րութիւնովը հաւատացեալները ապրեցը-
22 նելու ։ Իսկ որովհետեւ Հրեաները նշան
կ՚ուզեն, ու Հեթանոսները իմաստութիւն
23 կը փնտռեն. Մենք կը քարոզենք խաչեալ
Քրիստոսը՝ Հրեաներուն գայթակղու-
թիւն, ու Հեթանոսներուն յիմարու-
24 թիւն. Բայց անոնց՝ որ կանչուած են,
թէ՛ Հրեաներուն ու թէ Հեթանոսնե-
րուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւն,
25 և Աստուծոյ իմաստութիւն. Ինչու որ
Աստուծոյ յիմարը մարդիկներէն աւելի
իմաստուն է, և Աստուծոյ տկարը մար-
26 դիկներէն աւելի զօրաւոր է ։ Եղբայրք
դուք ձեր կոչումը տեսէք, եղբայրներ, որ
չէ՛ թէ մարմնոյ կողմանէ շատ իմաստուն-

Digitized by Google

ներ ; և չէ՛ թէ շատ զօրաւորներ , և չէ՛
թէ շատ ազնուականներ կանչուեցան ։
Բայց Աստուած աշխարհքիս յիմարները 27
ընտրեց , որ ամօթով ընէ իմաստունները ։
ու աշխարհքիս տկարները ընտրեց Աստ-
ուած , որ ամօթով ընէ զօրաւորները ։
Նաև աշխարհքիս ցածաղգիները ու անարգնե- 28
րը ընտրեց Աստուած՝ և ոչինչները , որ
բան մը եղողները խափանէ ։ Որ մէկ 29
մարմին մը չպարծի Աստուծոյ առջևը ։
Իսկ դուք անկից էք Քրիստոս Յիսու- 30
սով , որ մեզի Աստուծմէ իմաս-
տութիւն՝ արդարութիւն՝ ու սրբութիւն՝
և փրկութիւն եղաւ ։ Որ ինչպէս գրուած 31
է , թէ Ան որ կը պարծենայ՝ Տէրոջմով
թող պարծենայ ։

## Գլ. Բ

Ու ես եղբայրներ՝ որ ձեզի եկայ , չէ՛ 1
թէ իմաստութեան խօսքերու առաւելութիւնով
մը Աստուծոյ վկայութիւնը ձեզի պատմե-
լու եկայ ։ Վասն զի ես միտքս դրի 2
ձեր մէջը ուրիշ բան մը չգիտնալ , միայն
թէ Յիսուս Քրիստոսը , ու անի՛ խաչը ե-
լած ։ Ու ես տկարութիւնով՝ ու վախով՝ 3
և շատ դողալով ձեր քովը կեցայ ։ Ու իմ 4
խօսքս և քարոզութիւնս չէ՛ թէ մարդկա-
յին իմաստութեան խաբէական խօսքերով
էր , հապա Հոգիին գործքերովը ու զօ-
րութիւնովը ։ Որ ձեր հաւատքը մարդոց 5
իմաստութիւնովը չըլլայ , հապա Աստու-

Digitized by Google

6 ծոյ զօրութիւնովը : Բայց կատարեալ-
ներուն հետ իմաստութիւն կը խօսինք .
չէ թէ աս աշխարհքիս իմաստութիւնը , և
ոչ ալ աս աշխարհքիս ոչնչանալու իշխաննե-
7 րուն . Բայց Աստուծոյ ծածուկ իմաս-
տութիւնը կը խօսինք խորհուրդով , որ
աշխարհքէն առաջ սահմանեց Աստուած մեր
8 փառքին համար . Որ զանիկայ աս աշխար-
հիս իշխաններէն մէկը չճանչցաւ . որ եթէ
ճանչցած ըլլային՝ ալ փառաց Տէրը խա-
9 չը չէին հաներ : Հապա ինչպէս որ գրուած
է . Ան բաները որ աչք չէ տեսեր , և ա-
կանջ չէ լսեր , ու մարդու սրտին մէջ չէ
իյներ , Աստուած իր սիրելիներուն պատ-
10 րաստեց : Բայց մեզի Աստուած յայտնի
ըրաւ իր Հոգիովը , ինչու որ Հոգին ամէն
բան կը քննէ , Աստուծոյ խորունկ բա-
11 ներն ալ : Վասն զի մարդիկներէն ո՞վ
գիտէ մարդուն բաները , միայն թէ մար-
դուն հոգին որ իր մէջն է . անանկ ալ
Աստուծոյ բաները մէկը չգիտեր , միայն
12 թէ Աստուծոյ Հոգին : Բայց մենք չէ՛
թէ աս աշխարհքիս հոգին առինք , հապա
ան հոգին որ Աստուծմէն է . որ մենք
ճանչնանք ան որ Աստուծմէ արուեցաւ
13 մեզի : Զան ալ կը խօսինք՝ չէ՛ թէ մար-
դու սորվեցուցած ճարտար խօսքերովը ,
հապա Հոգիին վարդապետութիւնովը
հոգևոր բաները հոգևորին հետ կը յար-
14 մարենք : Վասն զի մարմնաւոր շնչ-
աւորեալ մարդը Աստուծոյ Հոգիին բանե-

Digitized by Google

ըը չընդունիր ․ ինչու որ ան իրեն յիմա-
րութիւն մըն է ․ ու չկրնար ալ գիտնալ՝
որ հոգեւոր կերպով կը քննուի ։ Բայց 15
ան որ հոգեւոր է՝ ամէն բան կը քննէ , ու
ինքը մէկէ մը չքննուիր ։ Ուստի՝ ո՞վ 16
գիտցաւ Տէրոջը միտքը , որ անոր խրատ
տուող ալ ըլլայ ․ բայց մենք Քրիստոսի
միտքը ունինք ։

## ԳԼ. Գ

Ու ես եղբայրներ՝ չկրցայ խօսիլ ձեր 1
հետը որպէս թէ հոգեւորներու հետ , հա-
պա որպէս թէ մարմնաւորներու հետ ։
Որպէս թէ Քրիստոսով տղայոց՝ ձեզի 2
կաթ կերցուցի , և չէ՝ թէ կերակուր ․
ինչու որ դեռ կարող չէիք ․ ու հիմա ալ
տակաւին կարող չէք ․ վասն զի դեռ
մարմնաւոր էք ։ Որովհետև տակաւին 3
ձեր մէջը կռիւ ու նախանձ կայ ․ չէ՞ որ
մարմնաւոր էք , ու մարդ-կօրէն կ՚երթաք ։
Երբոր ձեզմէ մէկը կ՚ըսէ ․ Ես Պօղոսեան 4
եմ , և մէկալը թէ Ես Ապողոսեան ․ չէ՞
որ մարդիկ էք ։ Ուրեմն ո՞վ է Պօղոսը՝
կամ ո՞վ է Ապողոսը ․ Պաշտօնեաներ են , 5
որոնցմով հաւատացիք ․ և ինչպէս որ Տէ-
րը տուաւ անոնց ամէն մէկուն ։ Ես 6
տնկեցի , Ապողոսը ջուր տուաւ , բայց
Աստուած աճեցուց ։ Ուստի ոչ ան տնկո- 7
ղը մէկ բան մըն է , ու ոչ ան ջուր տուո-
ղը , հապա Աստուած՝ որ աճեցուց ։ Տըն- 8
կողը ու ջուր տուողը մէկ են ․ բայց ամէն

Digitized by Google

մեկը իր վարձքը պիտի առնէ իր աշխա-
9 տութեանը չափովը ։ Վասն զի մենք Աս-
տուծոյ գործակիցներ ենք , դուք Աստուծոյ
արդիւնք էք , Աստուծոյ շինուածքն էք ։
10 Աստուծոյ ինծի տուած շնորհքացը չափովը՝
իմաստուն ճարտարապետի մը պէս հիմ
դրի . բայց շինողը ուրիշ է . միայն թէ
ամէն մէկը թող զգուշանայ՝ թէ ինչպէս կը
11 շինէ ։ Վասն զի մէկը՝ ալ ուրիշ հիմ
չկրնար դնել դրուածէն ՚ի զատ , որ է
12 Յիսուս Քրիստոս ։ Իսկ եթէ մէկը այս հի-
մին վրայ կը շինէ ոսկի , արծաթ , պա-
տուական քարեր , փայտ , խոտ , եղէգ ,
13 Ամէն մէկուն գործը յայտնի պիտի ըլլայ .
ինչու որ օրը պիտի ընտրէ , ինչու որ կը-
րակով պիտի յայտնուի . և ամէն մէկուն
գործը ինչպէս որ ըլլայ՝ կրակը պիտի փոր-
14 ձէ ։ Թէ որ մէկուն շինած գործը մնայուն
15 ըլլայ , ինքը վարձք պիտի առնէ . Իսկ
թէ որ մէկուն շինածը այրելու ըլլայ՝ ա-
նիկայ վնաս պիտի քաշէ , բայց ինքը պի-
տի ազատի . սակայն անանկ՝ իբր թէ կրա-
16 կի մէջէն ։ Չէ՞ք գիտեր դուք՝ որ Աս-
տուծոյ տաճար էք՝ ու Աստուծոյ Հոգին
17 ձեր մէջը բնակած է ։ Եթէ որ մէկը Աս-
տուծոյ տաճարը կ՚ապականէ , Աստուած
անիկայ պիտի ապականէ . ինչու որ Աս-
տուծոյ տաճարը սուրբ է որ դուք էք ։
18 Չըլլայ որ մէկը ինքզինքը խաբէ . Թէ
որ կ՚ուզէ ձեզմէ մէկը այս աշխարհիս մէջ
իմաստուն ըլլալ , թող յիմար ըլլայ՝ որ

Digitized by Google

իմաստուն ըլլայ ։ Վասն զի այս աշխար- 19
հիս իմաստութիւնը Աստուծոյ առջև յի-
մարութիւն է ․ վասն զի գրուած է , «Թէ
Անիկայ իմաստունները իրենց խորամանկ-
ութեանը մէջ կը բռնէ ։ Ու դարձեալ՝» 20
«Թէ Տէրը կը ճանչնայ իմաստուններուն
խորհուրդները , որ պարապ են ։» Ուրեմն 21
մէկը թող չպարծենայ մարդոցմով ․ Ին- 22
չու որ ամէն բան ձերն է ․ թէ՛ Պօղոսը , թէ
Ապողոսը , թէ Կեփասը , թէ աշխարհքը , թէ
կեանքը , թէ մահը , թէ ներկայ բաները ,
և թէ գալիքները՝ ամէն բան ձերն է ․
Դուք Քրիստոսինն , Քրիստոս՝ Աստուծոյ ։ 23

ԳԼ. Դ.

Այնպէս մարդիկ մեզ թող սեպեն՝ որ- 1
պէս թէ Քրիստոսի սպասաւորները , ու
Աստուծոյ խորհուրդներուն տնտեսները ։
Ուստի՝ տնտեսներուն մէջը կը փնտռուի , 2
որ մէկը հաւատարիմ գտնուի ։ Բայց 3
ինծի շատ պզտիկ բան մըն է , որ ձեզմէ
դատուիմ՝ կամ թէ բնաւ մէկ մարդէ մը ,
մանաւանդ որ ես ալ իմ անձս չեմ քններ ։
(Վասն զի ես իմ անձիս վրայով փոր- 4
ձանք մը չեմ գիտեր ․ բայց չէ՛ թէ ասով
ես կ՚արդարանամ ․) Ինչու որ զիս քննողը
Տէրն է ։ Ուրեմն ժամանակէն առաջ 5
դատողութիւն մի՛ ընէք , մինչև որ գայ
Տէրը՝ որ խաւարին գաղտնի բաները լու-
սաւորէ ․ ու սրտերուն խորհուրդները
յայտնի ընէ ․ և ան ատենը ամէն մէկուն

Digitized by Google

գովութիւնը Աստուծմէ պիտի ըլլայ։
6 Ասիկայ օրինակ բերի եղբայրներ՝ իմ
վրաս ու Ապողոսին վրայ ձեզի համար,
որ դուք մեզմէ սորվիք ծանօթոց ձեռա-
յով գրուածէն աւելի բան մը չմտածել,
որ չըլլայ թէ ամէն մէկերնիդ հպարտա-
նաք մէկ ընկերին վրայ միւսոյ ընկերին
7 դէմ։ Ասոր համար ո՞վ է՞ որ քեզ կ'ընտրէ.
ի՞նչ ունիս որ չես առեր դուն. և թէ որ
առիր՝ ինչո՞ւ չառածի պէս կը պարծենաս։
8 Հիմակուընէ կշտացաք, ու հիմակուը-
նէ հարստացաք, առանց մեզի թագաւո-
րեցիք. և երանի՛ թէ թագաւորէիք, որ
մենք ալ ձեր հետը թագաւորութիւն ը-
9 նէինք։ Ինծի այսպէս կ'երևնայ՝ որ Աս-
տուած մեզ առաքեալներս յետինները ը-
րաւ՝ մահապարտներու նման. ինչու որ
տեսարան եղանք աշխարհքի, և հրեշտակ-
10 ներուն ու մարդիկներուն։ Մենք յի-
մարներ Քրիստոսի համար, և դուք ի-
մաստուններ Քրիստոսով. մենք տկար և
դուք զօրաւոր. դուք փառաւորեալ՝
11 ու մենք անարգեալ։ Մինչև աս օրուան
տենը՝ անօթեցանք ալ, ծարաւեցանք ալ,
մերկ ալ պտըտեցանք, ծեծուեցանք ալ,
12 անհանգիստ ալ եղանք. Ու մեր ձեռ-
քովը աշխատեցանք. մեզ կը բամբասէին՝
կ'օրհնէինք. կը հալածէին՝ յանձնառու կ'ըլ-
13 լայինք. Կ'ըսէ կը խօսէին՝ կ'աղաչէինք.
խոտիք ու խայտառակի պէս եղանք բոլոր
աշխարհքի, ամենուն ջնջոցը ըլլալով մինչև

Digitized by Google

հիմա ։ Ասիկայ կը գրեմ՝ չէ՛ թէ ձեզ 14
ամչցընելու համար, հապա կը խրատեմ
իբր սիրելի որդիներուս պէս ։ Թէպէտեւ 15
դուք տասը հազար վարժապետներ ունե-
նաք Քրիստոսով, բայց չէ՛ թէ շատ հայ-
րեր ունիք. ինչու որ Քրիստոս Յիսուսով
ես ձեզ ծնայ աւետարանովը ։ Ուրեմն 16
կ'աղաչեմ ձեզի՝ ինծի նման եղէք, ինչպէս
որ ես ալ Քրիստոսի ։ Ասոր համար ձեզի 17
խրկեցի Տիմոթէոսը, որ իմ սիրելի որ-
դիս է՝ ու Տէրոջմով հաւատարիմ. որ ա-
նիկայ ձեր միտքը պիտի ձգէ՝ Քրիստոս
Յիսուսով իմ բռնած ճամբաներս, ինչպէս
որ ամէն տեղ ամէն եկեղեցիներուն մէ-
ջը կը սորվեցընեմ ։ Մէկ քանիները հպար- 18
տացան, որպէս թէ ես պիտի չգամ ձեզի.
Բայց շուտով կու գամ՝ թէ որ Տէրը կա- 19
մենայ, և պիտի հասկընամ՝ չէ՛ թէ
հպարտացողներուն խօսքերը, հապա զօ-
րութիւնը ։ Վասն զի Աստուծոյ թա- 20
գաւորութիւնը չէ՛ թէ խօսքով է,
հապա զօրութիւնով ։ Ուստի ի՞նչպէս 21
կ'ուզէք. գաւազանո՞վ գամ ձեզի, թէ
հեզութեան և քաղցրութեան ու խոնար-
հութեան հոգիին սիրովը ։

## ԳԼ․ Ե

Ինչո՞ւ ատ հասարակ կը պատմուի, պոռ- 1
նկութիւն ըլլալ ձեր մէջը, և անանկ
պոռնկութիւն՝ որ հեթանոսներուն մէջ ալ
չկայ. որպէս թէ իր հօրը կինը ունենայ.

Digitized by Google

2 Եւ դուք հպարտացեր էք, ու ո՛չ մա-
նաւանդ սուգ ըրիք, որ ձեր մէջէն վեր-
3 ցուի այն բանը ընողը։ Ինչու որ թէպէտ
ես մարմինով հեռու եմ, բայց հոգիով
մօտ եմ. ուստի հիմա այս՝ որպէս թէ մօ-
4 տէն որոշեցի, որ այն բանը ընողը՝ Մեր
Տէր Յիսուս Քրիստոսի անուանովը մէկ-
տեղ ժողվուէիք դուք, ու իմ հոգիովս՝
մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութեանո-
5 վը, Անանկը Սատանայի մատնեք մար-
մինը սատկուելու համար, որ հոգին
փրկուի մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը։
6 Ձեր պարծանքը աղէկ չէ՛. չէ՞ք գի-
տեր որ քիչ մը խմորը բոլոր զանգուածը
7 կը խմորէ։ Մաքրեցէք այն հին խմորը
մէկդի, որ ըլլաք նոր զանգուած, ինչպէս
որ անխմոր էք. ինչու որ Քրիստոս մեր
8 զատիկը մորթուեցաւ։ Ասկէ ետեւ տօն
կատարենք՝ չէ՛ թէ հին խմորով, և չէ՛
թէ չարութեան ու անզգամութեան խմո-
րովը, հապա հաւատարմութեան ու ճշ-
9 մարտութեան չխմորած հացովը։ Գրեցի
ձեզի այս թուղթին մէջ, որ պոռնիկներուն
10 հետ չխառնուիք։ Եւ գրածս չէ՛ թէ աս
աշխարհիս պոռնիկներուն հետ, կամ ա-
գահներուն հետ, կամ յափշտակողներուն
հետ, կամ կռապաշտներուն հետ. հապա
թէ չէ՝ պէտք էր որ դուք աշխարհէս
11 դուրս ելլէիք։ Այլ այն թէ ձեզի գրեցի
չխառնուիլ, այսինքն՝ թէ որ մէկը եղ-
բայր ըսուած՝ կամ պոռնիկ ըլլայ, կամ

Digitized by Google

կռապաշտ, կամ ագահ, կամ բամբասող, կամ գինով, կամ յափշտակող, անանկներուն հետ հաց ալ չուտել ։ Վասն զի ի՞նչ 12
պէտք է ինծի դուրսիններուն ալ դատել .
չէ՞ որ դուք ներսինները կը դատէք ։ Ու 13
դուրսինները Աստուած կը դատէ ։ ուստի այն չարը ձեր մէջէն վերցուցէք ։

## ԳԼ. Զ.

1 Ձեզմէ մէկը կը համարձակի՞ թէ որ մէկ դատ մը ունենայ իր ընկերին հետ, անիրաւներուն առջեւ դատաստանի կայնել,
ու չէ՝ թէ սուրբերուն առջեւ ։ Չէ՞ք 2
գիտեր որ սուրբերը աշխարհ կը դատեն . ու թէ որ աշխարհս ձեզմով կը դատուի, ուրեմն արժանի չէք դուք անարգ ատեաններու ։ Չէ՞ք գիտեր որ մենք հրեշտակ- 3
ները կը դատենք, ո՞ւր մնաց հապա աս երկրաւորները ։ Արդ թէ որ ձեր մէջը 4
երկրաւոր դատաստաններ ունենաք, եկեղեցիին անարգները ձեզի դատաւոր դրէք ։
Ձեզ ամչցընելու համար կը զրուցեմ . այն- 5
չափ եղաւ որ ձեր մէջը մէկ իմաստուն մը չկայ, որ կարող ըլլայ իր եղբայրները որոշել
իր եղբօրը մէջ ։ Հապա եղբայր եղբօրը 6
հետ դատի կը մտնէ, ան ալ անհաւատներուն դիմացը ։ Արդարեւ բոլորովին պակա- 7
սութիւն մըն ալ ան է ձեր մէջը, որ դատաստաններ կան մէջերնիդ . Ինչո՞ւ մանաւանդ դուք զրկանք չէք քաշեր, ու ինչո՞ւ տուժանուածը դուք ձեզ չէք սեպեր ։ Հապա 8

դուք զրկանք կ'ընէք՝ ու կը նեղէք և ան՝
9 ձեր եղբայրներուն ալ ։ Չէ՞ք գիտեր , որ
անիրաւները Աստուծոյ արքայութիւնը
չեն ժառանգեր . մի՛ խաբուիք , ո՛չ
պոռնիկները , ո՛չ կռապաշտները՝ ո՛չ շնա-
10 ցողները , Ո՛չ իգացեալները՝ ո՛չ արուա-
գէտները՝ ո՛չ գողերը՝ ո՛չ ագահները՝ ո՛չ գի-
նովները՝ ո՛չ բամբասողները ու ո՛չ յափշտա-
կողները՝ Աստուծոյ թագաւորութիւնը
11 չեն ժառանգեր ։ Ու դուք մէկ քանիներդ
անանկներ էիք . բայց լուացուեցաք , բայց
սրբուեցաք , բայց արդարացուեցաք մեր Տէր
Յիսուս Քրիստոսի անունովը , ու մեր
Աստուծոյ Հոգիովը ։
12 Ամէն բան ինծի օրինաւոր է , բայց չէ՛
թէ ամէն բան օգտակար . ամէն բան ին-
ծի օրինաւոր է , բայց ես մէկ բանի մը
13 իշխանութեան տակ պիտի չըլլամ ։ Կե-
րակուրը փորին համար է , փորն ալ կե-
րակուրին . բայց Աստուած սա ալ՝ ա-
նոնք ալ պիտի վերցնէ ։ Իսկ մարմինը
պոռնկութեան չէ՛ , հապա Տէրոջը , ու
14 Տէրը՝ մարմինին ։ Ու Աստուած որ Տէրը
յարոյց , մեզ ալ պիտի յարուցանէ իր
15 զօրութիւնովը ։ Չէ՞ք գիտեր որ ձեր մար-
մինները Քրիստոսի անդամներն են . ուրե-
մն Քրիստոսի անդամները առնեմ՝ պոռ-
նիկի անդամնե՞ր ընեմ . քա՛ւ լիցի ։
16 Չէ՞ք գիտեր թէ ան որ պոռնիկի հետ մը-
տենայ՝ անոր հետ մէկ մարմին կ'ըլլայ .
Վասն զի ըսուած՝ կ'ըսէ , Երկուքը մէկ

Digitized by Google

մարմին ։ Իսկ ան որ Տէրոջը կը միաբանուի՝ 17
անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ ։ Պոռնկութենէն 18
հեռու փախէք ։ Ամէն մեղք որ մարդ կը գործէ՝
իր մարմինէն դուրս է . բայց ան որ կը
պոռնկի՝ իր մարմինին դէմ կը մեղանչէ ։
Չէ՞ք գիտեր՝ որ ձեր մարմինները տաճար 19
են Սուրբ Հոգիին որ ձեր մէջն է , որ ա-
նիկայ Աստուծմէ ունիք . ու դուք ձեր
անձին տէրը չէք . Քանզի գնով ծախու 20
առնուեցաք . փառաւորեցէ՛ք Աստուած
ձեր մարմիններուն , ու հոգիներուն մէջը ,
որ Աստուծմէ է ։

## ԳԼ. Է.

Բայց ան բաներուն համար որ դուք ինծի 1
գրեցիք , աղէկ է մարդուս՝ որ կնկան
չմօտենայ ։ Բայց պոռնկութիւններէ զգու- 2
շալու համար ամէն մէկը թո՛ղ իր կինը
ունենայ , ու ամէն կնիկ իր էրիկը թող
ունենայ ։ Կնկանը՝ իր էրիկը թող պարտա- 3
քը վճարէ . նոյնպէս կինն ալ՝ իր էրկա-
նը ։ Ինչու որ կինը իր մարմինին չիշ- 4
խեր , հապա էրիկը . նմանապէս ալ էրիկը իր
մարմինին չիշխեր , հապա կինը ։ Մէկ- 5
մէկ մի՛ զրկեք . միայն թէ միաբանու-
թեամբ քիչ մը ատեն պաշտամունքի հետ
ըլլալու համար , ու նորէն իրարու գա-
ձէք . որ Սատանան ձեզ չփորձէ ձեր ան-
ժուժկալութեանը համար ։ Ասի կը զրուցեմ 6
դեռ թող տալով , և չէ՛ թէ հրամայելով ։
Քանզի կ'ուզեմ որ ամէն մարդ ինծի պէս 7

Digitized by Google

ըլլար․ բայց ամէն մէկը իր պարգեւը ունի
Աստուծմէ․ մէկը ասանկ՝ ու մէկալը ա-
8 նանկ ։ Բայց չամուսնացածներուն ու այ-
րիներուն կ'ըսեմ․ Աղէկ է անոնց՝ թէ
9 որ իմ պէս կենան․ Հապա թէ որ
համբերութիւն չունին՝ թո՛ղ կարգուին․
ինչու որ աղէկ է կարգուիլը քան թէ բոր-
10 բոքիլը ։ Բայց կարգուածներուն կը պա-
տուիրեմ՝ ոչ՛ թէ ես, հապա Տէրը, որ
11 կնիկը էրիկէն չզատուի, (Բայց թէ որ
զատուի՝ առանց էրկան մնայ, կամ նորէն
իր էրկանը հետ հաշտուի,) ու էրիկը իր
12 կնիկը թո՛ղ չձգէ ։ Բայց ուրիշներուն ես
կը պատուիրեմ՝ ոչ՛ թէ Տէրը․ Թէ որ մէկ
եղբայր մը անհաւատ կնիկ ունենայ, ու
անոր հաճելի ըլլայ իրեն հետ բնակիլը՝
13 թո՛ղ չձգէ անիկայ․ Նաեւ կնիկ մը որ ան-
հաւատ էրիկ ունենայ, ու անոր հաճելի
ըլլայ իրեն հետ բնակիլը՝ թո՛ղ չձգէ էրի-
14 կը ։ Ինչու որ անհաւատ էրիկը սրբուած
է կնիկովը․ եւ անհաւատ կնիկը սրբուած
է էրիկովը․ հապա թէ ոչ՛ ձեր որդիքը
15 պիղծ են․ բայց հիմա սուրբ են ։ Իսկ
թէ որ անհաւատը զատուի՝ թո՛ղ զա-
տուի․ ինչու որ հարկ մը չկայ եղբօրը
կամ քրոջը անանկ բաներու մէջ․ վասն
զի Աստուած խաղաղութեան կանչեց մեզ ։
16 Դուն ի՞նչ գիտես կնիկ՝ գուցէ քու էրիկդ
պիտի ազատեցընես․ կամ դուն ի՞նչ գիտես
էրիկ՝ գուցէ քու կնիկդ պիտի ազատեցընես ։
17 Միայն թէ ամէն մէկուն ինչպէս որ Տէրը

Digitized by Google

բաժնեց, ամէն մէկին ինչպէս որ Աստուած
կանչեց, անանկ թող երթայ, ու ամէն
եկեղեցիներուն ես ասանկ պատուէր կու
տամ։
Մէկ որ թլփատուած մէկը հաւատացած 18
կանչուեցաւ, թո՛ղ չդառնայ անթլփա-
տութեան․ չթլփատուածներէն մէկը
կանչուեցաւ, թո՛ղ չթլփատուի։ Ինչու 19
որ թլփատութիւնը բան մը չէ, ու ան-
թլփատութիւնը բան մը չէ․ հապա Աս-
տուծոյ պատուիրանքներուն պահպանու-
թիւնը պէտք է։ Ուստի ամէն մէկը ի՛նչ 20
կոչումի մէջ որ կանչուեցաւ, թո՛ղ անոր
մէջը կենայ․ Ծառա՞յ կանչուեցար, հոգ 21
չըլլայ քեզի․ բայց թէ որ կրնաս ազատ
ըլլալ, քեզի անանկը աղէկ է․ Վասն զի 22
ան ծառան որ Տէրոջմով կանչուած է՝
Տէրոջը ազատ է անիկայ․ անանկ ալ ան
ազատը որ կանչուած է՝ Քրիստոսի ծա-
ռան է։ Գնով գնուած ծախու առնուե- 23
ցաք, մարդիկներու ծառայ մի՛ ըլլաք։
Եղբայրներ՝ ամէն մէկը ի՛նչ կոչումի մէջ 24
որ կանչուեցաւ, թո՛ղ անոր մէջը կենայ
Աստուծոյ առջևը։
Բայց կոյսերուն համար Տէրոջմէն մէկ 25
հրաման մը չունիմ, միայն թէ հաւատա-
րիմ ըլլալու Տէրոջմէն ողորմութիւն գտա-
ծի մը պէս խրատ կու տամ։ Ես կը սեպեմ 26
որ ասանկ կենալը աղէկ է․ բայց ներկայ
դարուն վտանգին համար աղէկ է մարդուս
որ ասանկ ըլլայ։ Կապուած ես կնկան, 27

մի՛ փնտռեր արձակուիլ. արձակուած ես
28 կնիկէ, մի՛ փնտռեր կնիկ. Թէեւ որ կար-
գուիս՝ չմեղանչեցիր. և թէ որ կոյսը
կարգուի՝ չմեղանչեց. բայց անանկները
մարմնոյ նեղութիւն կ'ունենան. սակայն
29 ես ձեզի կը խնայեմ։ Բայց ասա կ'ըսեմ
եղբայրներ, որ ասկէ ետեւ ժամանակը
կարճցած է. անոնք որ կնիկ ունին՝ այն-
30 պէս թէ չունին. Եւ անոնք որ կուլան՝
այնպէս թէ չեն լար, ու անոնք որ կը
խնդան՝ այնպէս թէ չեն խնդար. և անոնք
որ ծախու կ'առնեն՝ այնպէս թէ բան մը
31 չունին. Եւ անոնք որ աշխարհս կը գործ-
ածեն՝ այնպէս թէ չվայելեն անոնցմով. ինչ-
չու որ աս աշխարհիս վայելչութիւնը անց-
32 նած է. Բայց ես կ'ուզեմ որ դուք ան-
հոգ ըլլաք. վասն զի ան որ չկարգուած
է՝ Տէրոջը բաները կը հոգայ, որ ինչպէս
33 Տէրոջը հաճելի ըլլայ. Եւ ան որ կար-
գուած է՝ աշխարհիս բաները կը հոգայ,
թէ ինչո՞վ իր կնկանը հաճելի ըլլայ։
34 Եւ ասա՝ կարգուած կնիկը ու կոյսը կը
տարբերին մէկզմէկէ. ինչու որ կոյսը Տէ-
րոջը բաները կը հոգայ, որ ինքը սուրբ
ըլլայ հոգւով ու մարմնով. ու կարգուած
կնիկը աշխարհիս բաները կը հոգայ, որ
35 ինչպէս իր էրկանը հաճելի ըլլայ։ Բայց
ասա բանը ձեր օգտութեան համար կը զրուցեմ.
չէ՛ թէ ձեր վզոյ խեղդ մը կը ձգեմ,
հապա պարկեշտութեան համար՝ ու առանց
զբաղմունք Տէրոջը ծառայելու համար։

Digitized by Google

Հապա թէ որ մէկը անմօթ կը սեպէ իր 36
կոյսին համար՝ որ չափը անցեր է, ու թէ
այս անանկ բան մը պէտք է ըլլալ․ ինչ
որ կ'ուզէ՝ թող ընէ, մեղք չգործեր, թող
կարգուին։ Բայց ան որ իր սրտին մէջ 37
հաստատուն է, ու ասոր մէկ վտանգ մըն
ալ չկայ, իր կամքին վրայ իշխանութիւն
ունի․ ու անանկ ընտրեց իր սրտին մէջ
որ իր կոյսը պահէ, աղէկ կ'ընէ։ Ալ ա- 38
նոր համար ան որ իր կոյսը կը կարգէ՝ ա-
ղէկ կ'ընէ․ ու ան որ չկարգեր, աւելի
աղէկ կ'ընէ։ Կնիկը կապուած է՝ օրէնքով 39
ժամանակ որ իր էրիկը ողջ է․ հապա թէ
որ իր էրիկը մեռնի՝ ազատ է կարգուելու
որուն որ ուզէ, միայն թէ Տէրոջմով։
Բայց իմ խորհուրդս նայելով աւելի երա- 40
նելի է՝ թէ որ անանկ կենայ․ ես ալ անանկ
կը սեպեմ, որ ալ Աստուծոյ Հոգին իմ
հետս ունիմ։

## ԳԼ. Ը.

Բայց կռոց զոհերուն վրայով գիտենք 1
որ ամէնքս ալ գիտութիւն ունինք․ գի-
տութիւնը կը հպարտացընէ, բայց սէրը
կը շինէ։ Թէ որ մէկը կը կարծէ թէ բան 2
մը գիտէ, դեռ չգիտեր՝ ինչպէս որ պէտք
է գիտնալ։ Հապա ան որ զԱստուած 3
կը սիրէ, ինքը անկէց ճանչցուած է։ Բայց 4
ան կուռքերուն զոհուած կերակուրներուն
համար, գիտենք որ կուռքը բան մը չէ
աշխարհքիս մէջ․ ու գիտենք որ մէկէն

Digitized by Google

5 զատ չկայ ուրիշ Աստուած մը։ Որ թէ-
պէտ ըլլան ալ անունով աստուածներ՝ թէ
երկինքը, ու թէ երկրիս վրայ, (ինչպէս
որ կան շատ աստուածներ, ու շատ տէ-
6 րեր.) Բայց մենք մէկ Աստուած ունինք
Հայրը, ուսկից են ամէն բաները, և
մենք ալ անով. ու մէկ Տէր Յիսուս Քրի-
ստոս, որ անով են ամէն բաները, ու
7 մենք ալ անով։ Բայց ամենուն քով գի-
տութիւն չկայ. ոմանք կուռքերուն վրայով
խղճմտանք ունենալով՝ մինչև հիմա կ'ու-
տեն կուռքերուն զոհուածի պէս. և իրենց
խղճմտանքը որովհետև տկար է՝ կը պղծուի։
8 Սակայն կերակուրը մեզ Աստուծոյ առջևը
չկեցըներ. չէ՛ թէ որ չուտենք՝ կը պակ-
սինք, և չէ՛ թէ որ ուտենք՝ կ'աւելնանք։
9 Բայց զգո՛յշ կեցէք, որ չըլլայ թէ ատ
ձեր իշխանութիւնը տկարներուն գայթակ-
10 ղութիւն ըլլայ։ Եթէ մէկը քեզ տեսնէ՝
որ գիտութիւն ունիս, կուռատունին մէջ
սեղան նստած, չէ՞ որ անոր խղճմտանքը
որ տկարութեամբ ախտացեր է, նորէն կը
հաստատուի կուռքերուն զոհուածը ու-
11 տելու. Ու ան տկար եղբայրը կը կորսուի
քու գիտութեամբդ, որուն համար որ Քրի-
12 ստոս մեռաւ։ Եւ ասանկ եղբայրներուն
դէմ յանցանք ընելով, ու տկարներուն
խղճմտանքը վիրաւորելով, Քրիստոսի
13 դէմ մեղք կը գործէք։ Ասոր թէ որ կե-
րակուրը կը գայթակղեցընէ իմ եղբայրս,
միս չեմ ուտեր յաւիտեան, որ իմ եղ-
բայրս չգայթակղեցընեմ։

Digitized by Google

## ԳԼ. Թ.

Չէ՞ որ ես ազատ եմ, չէ՞ որ ես առա- 1
քեալ եմ, չէ՞ որ մեր Տէր Յիսուս Քրի-
ստոսը իմ աչքովս տեսայ. չէ՞ որ դուք
էք իմ գործս Տէրոջմով: Թէպէտ ու- 2
րիշներուն առաքեալ չըլլամ ալ, բայց
ձեզի եմ. քանզի որ իմ առաքելութեանս
կնիքը դուք էք Տէրոջմով: Իմ պատասխա- 3
նատուս անոնց որ զիս կը հարցնեն՝ այս է.
Միթէ մենք իշխանութիւն չունի՞նք ուտե- 4
լու և խմելու: Միթէ մենք իշխանու- 5
թիւն չունի՞նք քոյրեր՝ կիներ մեր հետը
պտըտցնելու, ինչպէս որ ուրիշ առա-
քեալները, ու Տէրոջը եղբայրները, ու
Կեփասը կ'ընեն: Միթէ ես ու Բառնա- 6
բա՞սը միայն իշխանութիւն չունինք
չաշխատելու: Ո՞վ իր ապրուստովը զինուո- 7
րութիւն կ'ընէ. ո՞վ այգի կը տնկէ, ու
անոր պտուղէն չուտեր. ո՞վ ոչխարներ
կ'արածէ, ու ոչխարներուն կաթէն չուտեր:
Միթէ մարդկօրէ՞ն ասոնք կը զրուցեմ, կամ 8
չէ՞ որ օրէնքն ալ նոյնը կը զրուցէ: Մով- 9
սէսին օրէնքին մէջն ալ գրուած է, Կալին
մէջը աշխատող եզին դունչը չկապես:
Միթէ եզերո՞ւն համար Աստուծոյ հոգն
էր: Չէ՞ որ մանաւանդ մեզի համար կ'ը- 10
սէ. վասն զի մեզի համար գրուեցաւ. ա-
նոր համար որ ան որ կը սերմանէ՝ պէտք է որ
յուսով սերմանէ, և ան որ ցորենը կը
հանէ՝ ինքն ալ իր յուսովը վայելէ: Եթէ 11

Digitized by Google

որ մենք ձեզի հոգեւոր բաները ցանեցինք,
մեծ բա՞ն մըն է՝ թէ որ ձեզմէ մարմնաւոր
12 բաները հնձենք։ Եթէ որ ուրիշները ձեր
վրայ այս իշխանութենէն ունին, չէ՞ որ
մենք ալ աւելի. բայց մենք այս իշխա-
նութիւնը չգործածեցինք. հապա ամէն
բանի կը համբերենք, որ Քրիստոսի աւե-
13 տարանին արգելք մը չըլլանք։ Չէ՞ք
գիտեր, որ տաճարին մէջ աշխատողները
տաճարէն կ՚ուտեն. ու անոնք որ սեղանին
պաշտօնեաներն են, ան սեղանէն կը վա-
14 յելեն։ Նմանկ ալ Տէրը հրաման տուաւ,
որ աւետարանը քարոզողները աւետարանէն
15 ապրին։ Բայց ես աս բաներուն մէկը չգործա-
ծեցի, ոչ ալ աս բաները գրեցի՝ որ
ինծի ատանկ ըլլայ. ալ աւելի աղէկ է
ինծի որ մեռնիմ, և ոչ թէ մէկը իմ
16 պարծանքս պարապ ընէ։ Վասն զի թէ
որ ես աւետարանը քարոզեմ, ինծի մէկ
պարծանք մը չըլլայ. ինչու որ իմ վրաս
հարկ մըն է. մանաւանդ վայ է ինծի՝ թէ
17 որ աւետարանը չքարոզեմ։ Եթէ որ ա-
նիկայ կամաւ ընեմ, վարձք կ՚ունենամ.
և թէ որ ակամայ՝ ան իմ վրաս յանձ-
18 նուած տնտեսութիւն մըն է։ Ուրեմն
ի՞նչ վարձք կ՚ըլլայ ինծի. որ քարոզելու
ատենս՝ աւետարանը ձրի տամ, որ չըլլայ
թէ աւետարանին մէջ իմ իշխանութիւնս
19 գէշ կերպով վարեմ։ Ինչու որ ես ամե-
նէն ազատ էի, ու ամենուն իմ անձս ծա-
ռայութեան մէջ կեցուցի, որ շատերը շա-


Digitized by Google

Հրէ[illegible] ։ Հրէաներուն հետ Հրէայի պէս 20
եղայ՝ որ Հրէաները շահիմ ։ Օրէնքի 21
տակ եղողներուն հետ՝ իբրեւ պէս օրէնքի
տակ եղայ (չէ՝ թէ որ ես օրէնքի տակն
էի ,) հապա որ օրէնքի տակ եղողները շա-
հիմ ։ օրէնքի տակ չեղողներուն հետ
օրէնքի տակ չեղողի պէս եղայ , (չէ՝ թէ
ես Աստուծոյ օրէնք չունիմ , հապա Քրի-
ստոսի օրէնքին տակն եմ ։) որ անօ-
րէնք չունեցողներն ալ շահիմ ։ Տկարներու 22
հետ տկարի պէս եղայ որ տկարները
շահիմ ։ Ամենուն հետ ամէն բան եղայ ,
որ ինչպէս թէ մէկ քանին ազատեմ ։
Ասիկա աւետարանին համար կ'ընեմ , 23
որ անոր հաղորդ ըլլամ ես ։ Չէ՞ք գիտեր 24
որ ասպարէզին մէջ վազողներն ամէն կը
վազեն ամէնը , բայց մէկը կ'առնէ յաղ-
թանակ [illegible] ։ անանկ վազեցէք որ
հասնիք ։ Ամէն ով որ կը մարզուի՝ ամէն 25
բանի մէջ ժուժկալ կ'ըլլայ ։ անոնք եղ-
ծանելի պսակը առնելու համար , ու մենք՝
անեղծանելին ։ Ուստի ես ալ անանկ 26
կը վազեմ , չէ՝ թէ իբրեւ անստուգու-
թեամբ ։ Ես անանկ կը կռուիմ , չէ՝ թէ
որպէս թէ հովերը ծեծելով ։ Բայց իմ 27
մարմինս կը ճնշեմ ու կը ծառայեցնեմ ,
որ չըլլայ թէ ես որ ուրիշներուն քարո-
զեցի , ինքս անպիտան գտնուիմ ։

## ԳԼ. Ժ.

Չեմ ուզեր որ անգէտ ըլլաք եղբայր- 1

Digitized by Google

նոր, որ մեր հայրերը ամէնն ալ ամպին
2 տակն էին. Եւ ամէնն ալ ծովէն անցան)
և ամէնն ալ Մովսէսով մկրտուեցան ամ-
3 պին ու ծովին մէջը. Եւ ամէնն ալ նոյն
4 հոգևոր կերակուրը կերան. Եւ ամէնն ալ
նոյն հոգևոր խմելիքը խմեցին. (ինչու որ
կը խմէին այն հոգևոր վէմէն որ անոնց
հետը կ'երթար. ու այն վէմը Քրիստոս
5 ինքն էր.) Բայց չէ թէ անոնցմէ շա-
տերուն հաճեցաւ Աստուած. ինչու որ
6 անապատին մէջ փռուած ինկան: Եւ
այն բաները օրինակով մեզի համար եղե-
լան, որ չար բաներու ցանկացող չըլ-
7 լանք, ինտոր որ անոնք ցանկացան. Ո՛չ
ալ կռապաշտ ըլլանք, ինչպէս որ անոնց-
մէ մէկ քանին, ինտոր որ գրուած է.
Ժողովուրդը նստաւ ուտելու ու խմելու, և
8 ելան խաղալու: Ու պոռնկութիւն չը-
նենք, ինտոր որ անոնցմէ մէկ քանին
պոռնկեցան, ու մէկ օրուան մէջ քսա-
9 նուչորս հազար հոգի ինկան: Ու Տէրը
չփորձենք, ինչպէս որ անոնցմէ մէկ քա-
նիները փորձեցին ու օձերէն սատկեցան:
10 Ու տրտունջ չընենք, ինտոր որ անոնցմէ
մէկ քանիները տրտունջ ըրին, ու սա-
11 տակիչէն կորսուեցան: Բայց այն ամէնը
օրինակով կը պատահէր անոնց. ինչ մե-
զի որոնց դարերուն վերջը հասաւ, խրատ
12 ըլլալու համար գրուեցաւ: Աստի ան որ
կը սեպէ թէ հաստատուն կեցած է, թող
13 զգուշանայ, որ չըլլայ թէ իյնայ: Ձեր

Digitized by Google

վրայ մարդոյ կարգէն փորձութենէն՝ ի զատ ուրիշ
բան չէ պատահած. բայց Աստուած հաւա-
տարիմ է, որ ձեզ փորձութեան մէջ
չձգեր ձեր կարողութենէն աւելի. հապա
ան փորձութեան հետ ելքն ալ կ'ընէ,
որ կարող ըլլաք համբերելու:
Ասոր համար, սիրելիներս, կռապաշտու- 14
թենէն փախէք: Իբրեւ թէ իմաստուն- 15
ներու կ'ըսեմ. դուք դատեցէք ձեզի ըսա-
ծերս ինչ որ կը խօսիմ: Օրհնութեան 16
բաժակը որ մենք կ'օրհնենք, չէ՞ որ Քրիստո-
սի արեան հաղորդութիւնն է. հացը
որ մենք կը կտրենք՝ չէ՞ որ Քրիստոսի մարմ-
նոյն հաղորդութիւնն է: Քանզի որ մենք 17
շատերնիս՝ մէկ հաց, մէկ մարմին ենք.
վասն զի ամէնքս ալ մէկ հացէն կը
վայելենք: Նայեցէք մարմնաւոր Իսրա- 18
յէլը. չէ՞ որ ան զոհուածները ուտող-
ները սեղանին հաղորդ են: Արդ ի՞նչ 19
կ'ըսեմ, թէ զոհուածը բա՞ն մըն է. կամ
թէ կուռքերը բա՞ն մըն են: Հապա որ 20
կ'ըսեմ՝ թէ ինչ բաները որ հեթանոսները
զոհ կ'ընեն՝ դեւերուն կը զոհեն, ու չէ՛ թէ
Աստուծոյ. չեմ ուզեր որ դուք դեւերուն
հետ հաղորդութիւն ունենաք: Դուք որ
չէք կրնար դուք խմել Տէրոջը բաժակը
ու դեւերուն բաժակը: Դուք չէք կրնար 21
վայելել Տէրոջը սեղանէն ու դեւերուն
սեղանէն: Նախանձեցնե՞նք Տէրը, 22
միթէ մենք անկէց զօրաւո՞ր ենք: Ամէն 23
բան ինծի օրինաւոր է, բայց չէ՛ թէ ամէն

Digitized by Google

[illegible]
[illegible]
24 [illegible]
[illegible]
25 [illegible]
[illegible]
26 [illegible]
27 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
28 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
29 [illegible]
[illegible]
[illegible]
30 [illegible]
[illegible]
[illegible]
31 [illegible]
[illegible]
32 [illegible]
[illegible]
[illegible]
33 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Digitized by Google

[illegible] ԳԼ. ԺԱ. [illegible]

[illegible]

Ինծի՛ նմանող եղէք, ինչպէս որ ես ալ 1
Քրիստոսի։ Ձեզ կը գովեմ, որ իմ ա- 2
մէն բաներս կը յիշէք, ու աւանդութիւնները
կը բռնէք՝ ինչպէս որ ես ձեզի աւանդեցի։
Կ'ուզեմ որ դուք գիտնաք, թէ ամէն 3
մարդուն գլուխը Քրիստոս է, ու կնկանը
գլուխը՝ էրիկ մարդը. և Քրիստոսի գը-
լուխը Աստուած։ Ամէն էրիկ մարդ երբ- 4
որ աղօթքի կը կայնի, կամ մարգա-
րէութիւն կ'ընէ, ու գլուխը ծածկած կը
պահէ, անպատուութիւն կ'ընէ իր գլուխը։ Ու 5
ամէն կնիկ երբոր աղօթքի կը կայնի, կամ
մարգարէութիւն կ'ընէ բաց գլխով, ա-
մօթով կ'ընէ իր գլուխը. ինչու որ անանկ
կը սեպուի, որպէս թէ ածիլուած է։
Վասն զի թէ որ կնիկը չծածկուի՝ թո՛ղ 6
իր մազերը կտրէ. հապա թէ որ ամօթալի
է կնկան մազերը կտրել, կամ ածիլուիլ,
թո՛ղ ծածկուի։ Էրիկ մարդու պէտք չէ 7
իր գլուխը ծածկել, ինչու որ Աստուծոյ
պատկերը ու փառքն է. բայց կնիկը էր-
կանը փառքն է։ Ինչու որ չէ թէ էր- 8
րիկ մարդը կնիկէն է, հապա կնիկը էրիկ
մարդէն։ Պատճառ որ էրիկ մարդը 9
չստեղծուեցաւ կնկան համար, հապա
կնիկը էրիկ մարդուն համար։ Անոր հա- 10
մար պէտք է որ կնիկը շուք դնէ իր գլու-
խուն՝ հրեշտակներուն համար։ Բայց ո՛չ 11
կնիկը առանց էրիկ մարդու է, ու ո՛չ է-

Digitized by Google

[illegible] ։
12 [illegible]
[illegible]
13 [illegible] Աստուծոյ [illegible]
[illegible]
[illegible] Աստուծոյ
14 [illegible]
[illegible]
15 [illegible]
[illegible]
[illegible]
16 [illegible]
[illegible]
[illegible] Աստուծոյ
եկեղեցիներ [illegible]
17 [illegible]
[illegible]
18 [illegible]
[illegible] եկեղեցիին [illegible]
[illegible]
19 [illegible]
[illegible]
20 [illegible]
[illegible]
[illegible]
21 [illegible]
[illegible]
22 [illegible]
[illegible]
[illegible] Աստուծոյ եկեղեցիին [illegible]
[illegible]

Digitized by Google

[illegible] ձեզ [illegible] . [illegible]
[illegible] : [illegible] Տէրոջմէն [illegible] 23
[illegible] Տէր
Յիսուս իր մատնուած գիշերը, հաց առ-
աւ և գոհութիւն ընելով կոտրեց ու ըսաւ. Առէ՛ք, 24
կերէ՛ք . ասիկա է իմ մարմինս որ
ձեզի համար կը բաշխուի . ասիկա ըրէք զիս
յիշելու համար : Նոյնպէս ալ գաւաթը 25
ընթրիքէն ետքը առաւ ու ըսաւ . Այս
գաւաթը նոր ուխտն է իմ արիւնովս . ա-
սիկա ըրէք քանի անգամ որ խմէք զիս
յիշելու համար : Քանզի քանի անգամ 26
որ այս հացը ուտէք, ու այս գաւաթը
խմէք, Տէրոջը մահը կը պատմէք, մինչև
որ ինքը գայ : Ասոր համար ով 27
որ ուտէ կամ Տէրոջը գաւաթը խմէ անար-
ժանութեամբ, պարտական պիտի ըլլայ
Տէրոջը մարմինին ու արիւնին : Իսկ 28
մարդ իր անձը թող փորձէ ու այնպէս այն հացէն
թող ուտէ, և այն գաւաթէն թող խմէ :
Վասն զի ան որ անարժանութեամբ կ'ուտէ 29
ու կը խմէ, իր անձին դատապարտու-
թիւն կ'ուտէ ու կը խմէ, չզատելով Տէրո-
ջը մարմինը : Ասոր համար ձեր 30
մէջը շատ հիւանդներ ու տկարներ
կան, և շատեր ալ կը ննջեն [illegible]
[illegible] : Եթէ որ [illegible] 31
[illegible]
Իսկ թէ որ դատուինք, Տէրոջմէն կը խրատուինք 32
[illegible] որ աշխարհին հետ չդատապարտուինք
[illegible] Ասոր համար, եղբայրներս, [illegible] 33

Digitized by Google

[illegible]
34 [illegible]
[illegible]
[illegible]
35 [illegible]
[illegible]

[illegible]

1 [illegible]
[illegible]
2 [illegible]
[illegible]
3 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
4 [illegible]
5 [illegible]
[illegible]
6 [illegible]
[illegible]
[illegible]
7 [illegible]
[illegible]
8 [illegible]
[illegible]
[illegible]
9 [illegible]
[illegible]
10 [illegible]


Digitized by Google

զօրութիւններ. ուրիշին՝ մարգարէութիւն.
ուրիշին՝ հոգւոց խտրութիւն. ուրիշին՝
զանազան լեզուներ. ուրիշին՝ լեզուներու
թարգմանութիւն։ Բայց այս ամէնը մէկ 11
ու նոյն Հոգին կը ներգործէ, և ամէն
մէկուն կը բաժնէ՝ ինչպէս որ կ'ուզէ։
Ինչպէս որ մարմինը մէկ է՝ ու շատ ան- 12
դամներ ունի, և այն մարմինին ամէն շատ
անդամները մէկ մարմին են. անանկ ալ
Քրիստոսը։ Ինչու որ մենք ամէնքս մէկ 13
Հոգիով մէկ մարմին ըլլալու մկրտուե-
ցանք. թէ Հրեաներ, թէ Հեթանոս-
ներ, թէ ծառաներ, թէ ազատներ, ու ա-
մէնքս ալ մէկ Հոգիէն խմցուեցանք։ Ինչու 14
որ մարմինը մէկ անդամ մը չէ, հապա
շատ։ Եթէ որ ոտքը ըսէ. Որովհետեւ ես 15
ձեռք չեմ՝ այն մարմինէն չեմ. չէ թէ ա-
նոր համար մարմինէն չէ։ Ու թէ որ ականջը 16
ըսէ. Որովհետեւ ես աչք չեմ՝ այն մար-
մինէն չեմ. չէ թէ անոր համար մարմինէն
չէ։ Եթէ որ բոլոր մարմինը աչք ըլլար, 17
ականջը ո՞ւր պիտի ըլլար. և թէ որ բո-
լորը ականջներ ըլլային, ո՞ւր պիտի ըլ-
լար հոտոտելիքը։ Բայց հիմա Աստուած 18
այն անդամները դրաւ՝ անոնցմէ ամէն մէ-
կը մարմինին մէջ, ինչպէս որ ինքը ու-
զեց։ Հապա թէ որ ամէնը մէկ անդամ 19
ըլլար, մարմինը ո՞ւր պիտի ըլլար։ Բայց 20
հիմա՝ անդամները շատ են, ու մարմինը
մէկ։ Աչքը չկրնար ըսել ձեռքին. Թէ 21
Պէտք չունիմ քեզի. և ոչ գլուխը ոտքերուն.

ղմուխը ոտքերուն ըսել, թէ ձեզի պէտք
22 չէք ։ Բայց մարմնին այն անդամները՝ որ
շատ տկար կ'երեւնան, աւելի հարկաւոր
23 են . Ու մարմնին այն անդամները՝ որոնք
կը թուին թէ շատ անպատիւ են, անոնց
աւելի պատիւ կ'ընենք . ու մանաւանդ մեր
ամօթները շատ աւելի պարկեշտութիւն
24 ունին ։ Ու մեր պարկեշտ անդամներուն
բան մը պէտք չէ . ինչու որ Աստուած
մարմինը բարեխառնեց, ու ցածին շատ
25 աւելի պատիւ տուաւ, Որ այն մարմնին
մէջ երկպառակութիւն չըլլայ, հապա
նոյն անդամները իրարու վրայ մէկ հոգ
26 ունենան ։ Թէ որ մէկ անդամը նեղու-
թիւն քաշէ, ամէն անդամները կը նեղին
անոր հետը . եւ թէ որ փառաւորի մէկ
անդամը, ամէն անդամները կ'ուրախանան
27 անոր հետը ։ Բայց դուք Քրիստոսի
մարմինն էք, ու անոր անդամներէն ան-
28 դամներ ։ Եւ անոնք որ Աստուած եկե-
ղեցիին մէջը դրաւ՝ ասոնք են . նախ՝ ա-
ռաքեալներ ; երկրորդ՝ մարգարէներ, եր-
րորդ՝ վարդապետներ . ետքը հրաշքներ,
ետքը բժշկութիւններու պարգեւներ, օգ-
նութիւններ ; կառավարողներ, լեզու-
ներու տեսակներ ; լեզուներու թարգմա-
29 նութիւններ ։ Միթէ ամէնը առաքեա՞լ
են . միթէ ամէնը մարգարէ՞ են . միթէ
ամէնը վարդապե՞տ են . միթէ ամէնը
30 հրաշագործներ են ։ Միթէ ամէնը բժշկու-
թեան շնորհք ունի՞ն . միթէ ամէնը լե-

Digitized by Google

լեզուներ կը խօսի՞ն. միթէ ամէնքը թարգ-
մանութիւն կ'ընե՞ն :

Բայց դուք նախանձաւոր եղէք աւելի 31
շնորհքներուն՝ որ լաւագոյն են. բայց ես
ալ աւելի աղէկ ճանապարհ մը ցուցնեմ
ձեզի :

## ԳԼ. ԺԳ

1 Թէ որ մարդոց ու հրեշտակներուն լե-
զուները խօսիմ՝ և սէր չունենամ, ես
ձայն տուող պղինձի պէս եղայ, կամ
փնչեցող ծնծղաներուն պէս : Ու թէ որ 2
մարգարէութիւն ունենամ, ու հասկընամ
ամէն խորհուրդները՝ ու ամէն գիտու-
թիւն. և թէ որ ունենամ ամէն հաւատ-
քը՝ մինչև լեռները փոխփոխելու, ու սէր
չունենամ, ոչինչ եմ : Ու թէ որ իմ 3
ամէն ստացուածքս աղքատներուն կերցը-
նեմ, ու իմ մարմինս այրելու տամ, և
սէր չունենամ, օգուտ մը չեմ ունենար :
Սէրը՝ համբերող է, կը քաղցրանայ. սէ- 4
րը չնախանձիր, չգոռոզանար, չհպարտա-
նար. Չյանդգնիր, իրենը չփնտռեր, 5
չբարկանար, գէշ չխորհիր. Անիրաւու- 6
թեան վրայ չխնդար, հապա ճշմարտու-
թեան վրայ կը խնդայ. Ամէն բանի կը 7
դիմանայ. ամէն բանի կը հաւատայ.
բոլորովին կը յուսայ. ամէն բանի կը
համբերէ : Սէրը բնաւ չիյնար. Թէ որ 8
մարգարէութիւններ ըլլան՝ կը խափանին.
թէ որ լեզուներ՝ լռել կ'ըլլան. թէ որ

Digitized by Google

9 գիտութիւնն կը խափանուի։ Ինչու որ շա-
տէն քիչը գիտենք՝ ու շատէն քիչը կը
10 մարգարէանանք. Բայց երբոր կատարեա-
լը գայ, այս շատէն քիչը պիտի խափա-
11 նուի։ Երբոր տղայ էի՝ տղայի պէս կը
խօսէի, տղայի պէս կը խորհէի, տղայի
պէս համարում ունէի. բայց երբոր այր
եղայ, տղայութեան բաները մէկդի ձգե-
12 ցի։ Մենք հիմա կը տեսնենք որպէս թէ
հայելիին մէջը՝ օրինակով, բայց այն ատե-
նը դիմացէ դիմաց. հիմա շատէն քիչ մը
տեղեակ եմ, բայց այն ատենը անանկ պի-
տի գիտնամ՝ ինչպէս որ անիկայ ալ զիս
13 ճանչցաւ։ Արդ հիմա կը մնայ հաւատք՝
յոյս՝ սէր, այս երեքը. ու ասոնցմէ աւե-
լի մեծը՝ սէրն է։

## ԳԼ. ԺԴ.

1 Սիրոյ ետևէն գացէք, ու հոգևոր
պարգևներուն նախանձաւոր եղէք, մա-
2 նաւանդ մարգարէութիւն ընելու։ Վասն
զի՝ ան որ օտար լեզուով կը խօսի՝ չէ՝ թէ
մարդոց հետ կը խօսի. հապա Աստուծոյ
հետ. ինչու որ մէկը չկայ որ իմանայ,
բայց անիկայ հոգիովը խորհուրդներ կը
3 խօսի։ Սակայն ան որ կը մարգարէանայ՝
մարդիկներուն կը խօսի օգուտ ու մխի-
թարութիւն և քաղցրութիւն տալու։
4 Ան որ օտար լեզուներով կը խօսի՝ իր ան-
ձին օգուտ կ'ընէ. ու ան որ կը մարգա-
5 րէանայ՝ եկեղեցիին օգուտ կ'ընէ։ Կ'ու-

Digitized by Google

զեմ որ դուք ամենքդ լեզուներ խօսիք ։
բայց մանաւանդ որ մարգարէութիւն ը-
նէք ։ ինչու որ ալ աղէկ է ան որ կը
մարգարէանայ, քան թէ ան որ լեզուներ
կը խօսի ։ միայն թէ թարգմանելու ըլլայ,
որ եկեղեցին ալ օգուտ առնէ ։
Բայց հիմա եղբայրներ թէ որ ես ձեզի 6
գամ լեզուներ խօսելով, ի՞նչ օգուտ
պիտի ընեմ ձեզի, թէ որ չխօսիմ կամ
յայտնութիւնով, կամ գիտութիւնով,
կամ մարգարէութիւնով, կամ վարդա-
պետութիւնով ։ Նմանի ինչպէս որ ան- 7
շունչ բաները ձայն կու տան, թէ փող
և թէ քնար ։ քանզի թէ որ ան ձայներին
մէկ զանազանութիւն մը չընեն, ինչպէս
պիտի ճանչցուի փողին փչուիլը, կամ
քնարին ձայն հանելը ։ Ինչու որ եթէ 8
փողը խառնուկ ձայնով փչուելու ըլլայ,
ո՞վ պիտի պատրաստուի պատերազմի ։
Նմանէ ալ դուք թէ որ լեզուներով յայտ- 9
նի չընէք խօսուածը, ինչպէ՞ս պիտի իմա-
ցուի ան խօսքը ։ ինչու որ ալ դուք օդին
խօսողներու պէս պիտի ըլլաք ։ Այսան զի 10
այնքան տեսակ ձայներ կան աշխարհի
մէջ ։ և առանց ձայնի բան մը չկայ ։
Աստի թէ որ ես ան ձայներին զօրութիւնը 11
չգիտնամ, ինծի հետ խօսողին մէջ բարբա-
րոս մը պիտի ըլլամ, ու ինծի հետ խօ-
սողն ալ ինծի բարբարոս մը պիտի ըլլայ ։
Նմանի ալ դուք, որովհետև հոգևոր 12
պարգևներու նախանձաւոր էք, եկեղեցի

Digitized by Google

ցիին օգտութեան համար կը խնդրէք որ ա-
13 ւելնաք նոյն պարգեւներով ։ Անոր համար
ան որ օտար լեզուներով կը խօսի, ա-
ղօթք թող ընէ, որ թարգմանէ ալ ։
14 Ինչու որ եթէ աղօթք ընեմ օտար լեզուով՝
իմ հոգիս աղօթք կ'ընէ, բայց միտքս
15 անպտուղ է ։ Ուրեմն ինչ է . Աղօթք
ընեմ հոգիով, աղօթք ընեմ միտքով
ալ . սաղմոս երգեմ հոգիով, սաղ-
16 մոս երգեմ միտքով ալ ։ Ապա թէ
չէ՝ թէ որ դուն հոգիով օրհնութիւն ընես,
անիկայ որ տգէտի տեղ կայներ է՝ ինչպէ՞ս
Ամէն պիտի ըսէ քու գոհութիւն տալուդ
վրան . ինչու որ ան քու զրուցածդ չի-
17 մանար ։ Որ թէպէտ դուն աղէկ գոհ-
ութիւն կ'ընես, բայց ընկերը չշինուիր ։
18 Աստուծմէ կը գոհանամ, որ ձեր ամէնուն
համար աւելի լեզուներով կը խօսիմ ։
19 Բայց եկեղեցիին մէջ կ'ուզեմ հինգ խօսք
միտքով խօսիլ, որ ուրիշներն ալ խրա-
տեմ, քան թէ շատ խօսքեր օտար լե-
զուով ։

20 Եղբայրներ՝ միտքով տղայ մի ըլլաք,
հապա չարութիւններու դէմ տղայ ե-
21 ղէք, ու միտքով կատարեալ եղէք ։ Օ-
րէնքին մէջն ալ գրուած է,
թէ Օտար լեզուներով ու օտար շրթունք-
ներով այս ժողովուրդին հետ պիտի խօ-
սիմ, բայց անով ալ պիտի չլսեն ինծի,
22 կ'ըսէ Տէրը ։ Ուրեմն լեզուները նշան են
համար — ոչ թէ հաւատացեալներուն,

Digitized by Google

հասակաւ անչափահասներուն , բայց միտքով
ըմբռնութիւնը չէ՛ թէ անչափահասներուն , հաս-
ակա հասուաստացեալներուն : Հապա թէ որ 23
բոլոր եկեղեցին մէկտեղ գայ , ու ամենքն
ալ օտար լեզուներով խօսելու ըլլան , և
հոն մտնեն ազէտներ կամ անհաւատներ ,
չե՞ն ըսեր՝ թէ դուք ի՞նչ կը խենթենաք :
Իսկ թէ որ ամենքն ալ մարգարէանան , ու 24
հոն մէկ անհաւատ մը կամ ազէտ մը
մտնէ ամէնէն ալ կը յանդիմանուի , ու
ամենէն ալ կը քննուի . Եւ անոր սրտին 25
ծածուկ բաները յայտնի կ'ըլլան . ու երե-
սը իրեն վրայ ինկած՝ Աստուծոյ երկրպա-
գութիւն կ'ընէ , ու կը խոստովանի՝ թէ
իրաւցնէ Աստուած ձեր մէջն է :
Ուստի ի՞նչ պիտի ըլլայ եղբայրներ . 26
երբոր դուք մէկտեղ կը ժողվուիք , ձեզմէ
ամէն մէկը թէ՝ սաղմոս ունենայ , թէ
վարդապետութիւն ունենայ , թէ յայտ-
նութիւն ունենայ , թէ լեզուներ ունենայ ,
թէ թարգմանութիւն ունենայ , ամէնքը
օգուտի համար թող ըլլայ : Եթէ որ մէ- 27
կը օտար լեզուներ կը խօսի՝ երկու հոգի ,
և թէ շատ ուզէ՝ երեք հոգի ըլլան , և ան
ալ մէկիկ մէկիկ . ու մէկը թող թարգ-
մանէ : Բայց թէ որ թարգմանող չըլլայ՝ 28
եկեղեցիին մէջ՝ լուռ թող կենայ . իրեն
իր միտքին մէջ ու Աստուծոյ հետ թո՛ղ
խօսի : Բայց մարգարէները երկուքը 29
կամ իրեքը թող խօսին , ու միւսները
թող զննութիւն ընեն : Հապա թէ որ 30

ան, նստողներէն ուրիշի մէկուն ալ բան
մը յայտնուի՝ առաջինը թող
31 լռէ ։ Վասն զի կրնաք ամէնքդ ալ
մէկիկ մէկիկ մարգարէանալ, որ ամէնքն
ալ սորվին, որ ամէնքն ալ մխիթարուին ։
32 Ու մարգարէներուն հոգիները ալ
33 մարգարէներուն հնազանդ են ։ Վասն զի
չէ որ Աստուած խռովութեան Աստուած
չէ, հապա խաղաղութեան, ինչպէս
որ սուրբերուն բոլոր եկեղեցիներուն
մէջ ։
34 Կիներնիդ ամէն եկեղեցիներու մէջ լուռ
կենան ։ խօսելու որ անոնց հրաման չկայ խօ-
սելու, հապա հնազանդ ըլլալու ։ ինչպէս
35 որ օրէնքն ալ կ'ըսէ ։ Բայց թէ որ բան
մը սորվիլ կ'ուզեն, տունը իրենց էրիկնե-
րուն թող հարցնեն ։ վասն զի կնիկ
մարդու անվայել է եկեղեցւոյ մէջ խօսի-
36 լը ։ Միթէ Աստուծոյ խօսքը ձեզմէ՞ ե-
լաւ, կամ թէ միայն ձեզի՞ հասաւ ։
37 Բայց թէ որ մէկը կը կարծէ մարգարէ
ըլլալ, կամ հոգեւոր, թող ճանչնայ թէ
ինչ որ ձեզի գրեցի՝ Տէրոջը պատուիրանքներն
38 են ։ Բայց թէ որ մէկը անգէտ է, թող
39 անգէտ ըլլայ ։ Ուստի, եղբայրնե՛ր, մարգարէ-
ութիւն ընելու նախանձաւոր եղէք ու
40 լեզուներով խօսիլն ալ մի՛ արգիլէք ։ Ամէն
բան վայելչութեամբ ու կարգաւ
թող ըլլայ ։

Digitized by Google

[illegible]

## ԳԼՈՒԽ ԺԵ

1 [illegible]

2 [illegible]

3 [illegible]

4 [illegible]

5 [illegible]

6 [illegible]

7 [illegible]

8 [illegible]

9 [illegible]

10 [illegible]

11 [illegible]

Digitized by Google

քարոզենք, ու այսպէս հաւատացիք։
12 Արդ՝ թէ որ Քրիստոս կը քարոզուի՝ որ
մեռելներէն յարութիւն առած է, ի՞նչպէս
ոմանք ձեզմէ կ'ըսեն, թէ Մե-
13 ռելներուն յարութիւն չկայ։ Թէ որ
մեռելներուն յարութիւն չկայ, ուրեմն
Քրիստոս ալ յարութիւն առած չէ։
14 Եւ թէ որ Քրիստոս յարութիւն առած
չէ, մեր քարոզութիւնը պարապ է, ու
15 ձեր հաւատքն ալ պարապ է։ Ու մենք
ալ Աստուծոյ սուտ վկաներ գտնուած
կ'ըլլանք, որովհետեւ Աստուծոյ համար
վկայութիւն տուինք, թէ ինքը յարու-
ցուց Քրիստոսը, որ իրաւ չյարուց
անիկայ, թէ որ մեռելները յարութիւն
16 չառնեն։ Ինչու թէ որ մեռելները յարութիւն
չառնեն, ուրեմն Քրիստոս ալ յարութիւն
17 առած չէ։ Եւ թէ որ Քրիստոս յարու-
թիւն առած չէ, ձեր հաւատքը պարապ է,
18 դեռ ալ ձեր մեղքերուն մէջն էք։ Ու-
րեմն անոնք որ Քրիստոսով ննջեցին,
19 կորսուեցան։ Թէ որ միայն այս կենդանիս
համար Քրիստոսի յուսացած ենք՝ ուրեմն
մենք բոլոր մարդերէն աւելի խղճալի
ենք։
20 Նոյն հիմա Քրիստոս մեռելներէն յա-
րութիւն առած է՝ ննջեցեալներուն առջի
21 պտուղը։ Ինչու որ մարդով եղաւ մահը,
ու մարդով ալ մեռելներուն յարութիւնը։
22 Ինչպէս որ Ադամով ամէնը կը մեռնին,
անանկ ալ Քրիստոսով ամէնը կենդանի

գովեմ ըզձեզ . Բայց ամէն մէկը իր կարգովը . 23
առաջ Քրիստոս , ետքը Քրիստոսինները
իր գալուն ատենը : Ետքը վախճանն է , 24
երբ թագաւորութիւնը Աստուծոյ ու Հօրը
տայ Աստուծոյ ու Հօրը :
Երբոր ալ խափանէ ամէն իշխանու-
թիւնները , և ամէն պետութիւնը ու զօ-
րութիւնը : Վասն զի պէտք է որ թա- 25
գաւորութիւն ընէ , մինչև որ բոլոր
թշնամիները իր ոտքերուն տակը դնէ :
Վերջին թշնամին որ պիտի խափանուի 26
մահն է : Եւ ... : Ամէն բան ա-
նոր ոտքերուն տակը հնազանդեցուց :
Բայց երբոր կ'ըսէ , թէ ամէն բան անոր 27
հնազանդեցաւ է ; յայտնի է թէ բաց ի անո-
կէն որ ամէնը անոր հնազանդեցուց : Երբ 28
երբոր ամէնը անոր հնազանդի ըլլայ , այն
ատենը ինքը Որդին ալ անոր հնազանդի
անոր , որ իրեն ամէնը հնազանդեցուց ,
որ Աստուած ըլլայ ամէնը ամէն բանի
մէջ : Հապա թէ ոչ , ինչ պիտի ընեն 29
անոնք՝ որ մեռելներուն համար կը մկրը-
տուին . Թէ որ իրաւցընէ մեռելները
յարութիւն չառնեն : Ինչո՞ւ ուրեմն անոնց
համար կը մկրտուին . Ինչո՞ւ համար մենք 30
ալ նեղութիւն կը քաշենք ամէն ժամ ;
Ես միշտ կը մեռնիմ . եղբարք , կ'երդնում 31
ձեզի ձեր պարծանքովը որ ես ունիմ
մեր Տէրոջը Յիսուսի Քրիստոսի վրայ ։
Թէ որ մարդավար գազաններու հետ Եփեսոսի
մէջ , գազաններու հետ կռուեցայ , ինծի ինչ օգուտ ,

Ի՞նչ օգուտ կայ ինծի․ թէ որ մեռելները
յարութիւն չառնեն․ ուտենք խմենք,
33 վասն զի վաղը կը մեռնինք։ Մի՛ խաբ-
ուիք․ գէշ խօսքերը աղէկ բարքը կ՚ա-
34 պականեն։ Արդարութեամբ արթնցէք,
ու մեղք մի՛ գործէք, վասն զի ոմանք Աս-
տուծոյ գիտութիւն չունին․ ձեր
ամօթին համար կը խօսիմ։
35 Բայց մէկը պիտի ըսէ․ Թէ ինչպէ՞ս
մեռելները յարութիւն կ՚առնեն, կամ թէ
36 ի՞նչ մարմնով կու գան․ Ո՛վ անմիտ, դուն
ինչ որ կը ցանես, թէ որ չմեռնի՝
37 չկենդանանար։ Ու ան որ կը ցանես, ոչ՛
թէ ան մարմինը որ պիտի ծնանի՝ կը ցա-
նես, այլ հատիկ մը հատ մը՝ թէ ցորենի
38 ըլլայ, եւ թէ ուրիշ սերմերու։ Ու Աստ-
ուած անոր մարմին կու տայ ինչպէս որ
կ՚ուզէ, ու ամէն մէկ սերմերուն իր յատուկ
39 մարմինը։ Ամէն մարմին՝ մէկ մարմին չէ․ ա-
հա մարդու մարմինը ուրիշ է, ու
անասուններուն մարմինը ուրիշ․ թռչուն-
ներուն մարմինը ուրիշ, ու ձուկերուն
40 մարմինը ուրիշ։ Երկնային մարմիններ
ալ կան, ու երկրաւոր մարմիններ․ այլ
բայց երկնաւորներուն փառքը ուրիշ
է, ու երկրաւորներուն փառքը ուրիշ։
41 Արեւին փառքը ուրիշ է, ու լուսնինը
փառքը ուրիշ, ու աստղերուն փառքը ու-
րիշ․ ու մէկ աստղը միւս աստղէն տար-
42 բեր է փառքով։ Նոյնպէս ալ է մեռելնե-
րուն յարութիւնը․ ապականութեամբ

Digitized by Google

կը ցանուի, ու անապականութեամբ
յարութիւն կ'առնէ ։ Անարգութեամբ 43
կը ցանուի, ու փառքով յարութիւն
կ'առնէ ։ Տկարութեամբ կը ցանուի,
ու զօրութեամբ յարութիւն կ'առնէ ։ 44
Կը ցանուի շնչաւոր մարմին, և յարու-
թիւն կ'առնէ հոգևոր մարմին ։ Թէ որ
շնչաւոր մարմին կայ, հոգևոր ալ կայ ։
Ինչպէս որ գրուած է ։ Առջի մարդը Ա- 45
դամ կենդանի շունչ եղաւ, վերջինը
Ադամը կենդանի ընող հոգի ։ Բայց 46
չէ թէ առաջ հոգևորը, հապա շնչաւորը
ու ետքը հոգևորը ։ Առջի մարդը երկրէն 47
է՝ հողեղէն ։ Բայց երկրորդ մարդը Տէրն է
երկնքէն ։ Ինչպէս էր հողեղէնը, անանկ 48
ալ հողեղէնները ։ Ու ինչպէս երկնաւորը,
անանկ ալ երկնաւորները ։ Ու ինչպէս որ 49
հողեղէնին կերպարանքը հագեր ենք, երկ-
նաւորին կերպարանքն ալ պիտի հագնինք ։
Բայց աս կ'ըսեմ եղբայրներ, որ մարմին 50
ու արիւն Աստուծոյ թագաւորութիւնը
չեն կրնար ժառանգել, ոչ ալ ապակա-
նութիւնը կը ժառանգէ անապականութիւ-
նը ։ Ահա խորհուրդ մը կը յայտնեմ ձեզի ։ 51
Ամէնքս պիտի մեռնինք, բայց ամէնքս ալ
պիտի փոխուինք, յանկարծակի աչքի 52
գոցուելու բացուելու մէջ, վերջին փողին հնչելուն
ատեն ։ որովհետև փողը պիտի հնչէ,
ու մեռելները յարութիւն պիտի առնեն
անեղծ անապականութեամբ ։ Եւ մենք ալ
պիտի փոխուինք ։ Վասն զի պէտք է որ 53

Digitized by Google

ու այս ապականացուն՝ մարմինը անապական–
նութիւն հագնի, ու այս մահկանացուն
54 անմահութիւն հագնի։ Բայց երբոր այս
մահկանացուս մարմինը անմահութիւն հագ–
նի, և այս ապականացուս անապականու–
թիւնը հագնի, այն ատեն պիտի ըլլայ այն
խօսքը որ գրուեցաւ, թէ Մահը յաղթու–
55 թեան մէջ ընկղմեցաւ։ Ո՞ւր է ով մահ
քու յաղթութիւնդ. ո՞ւր է ով գերեզ–
56 ման՝ քու խայթոցդ։ Մահուան խայթոցը
մեղքն է, ու մեղքին ուժը՝ օրէնքը։
57 Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեզի
յաղթութիւն տուաւ մեր Տէր Յիսուս
58 Քրիստոսի ձեռքով։ Ուստի իմ սիրելի
եղբայրներս՝ հաստատուն եղէք, անշարժ կե–
ցէք, ամէն ատեն աւելցէք Տէրոջը գոր–
ծին մէջ. գիտնալով որ ձեր աշխատութիւ–
նը պարապ չէ Տէրոջը առջև։

## ԳԼ. ԺԶ.

1 Բայց սուրբերուն համար հանգանակութեան
ժողովուրդին վրայոք, ինչպէս որ պատուէր
տուի Գաղատիացւոց եկեղեցիներուն, դուք
ալ անանկ ըրէք։ Ամէն մէկշաբթի ձե–
2 րէքը ձեզմէ ամէն մէկը իր քովը թող դի–
3 նէ ինչ որ կը յաջողի, որ չըլլայ թէ երբ–
որ գամ՝ այն ատենը ըլլայ ժողովուրդը։
Հասած երբոր գամ՝ որոնք որ դուք ընտ–
րեր էք ձեր թուղթովը, ես զանոնք կը
ղրկեմ՝ ձեր պարգևները Երուսաղէմ տա–
4 նելու։ Բայց թէ որ իմ ալ երթալս ըլլայ

Digitized by Google

երթալս , այլ Տէրոջ Թողութեամբը . Անիկայ 5
են ձեզի պիտի գամ՝ երբոր Մակեդոնիա-
յէն անցնիմ . Հապա երբոր Մակեդոնիայէն
կ'անցնիմ [illegible] որ [illegible] . Կարելի է 6
որ ձեր քովը մնամ , կամ ձմեռը անցընեմ ,
որ դուք զիս ճամբայ դնէք . ուր որ եր-
թամ երթամ ։ Ինչու որ չեմ ուզեր ձեզ 7
հիմա հանդիպմամբ մը տեսնել . յոյս ունիմ
որ ատեն մը ձեր քովը կենամ , թէ որ
Տէրը հրաման ընէ ։ Սակայն հիմա կը 8
Եփեսոս պիտի մնամ մինչեւ Պենտեկոստէ .
Ինչու որ ինծի մեծ ու ազդու դուռ մը 9
բացուեր է , ու շատ հակառակորդներ
կան ։
Թէ որ Տիմոթէոս գայ , նայեցէք 10
որ ձեր քովը առանց վախի ըլլայ ,
ինչու որ անիկայ Տէրոջը գործը կը գործէ ,
ինչպէս ես ալ ։ Ուստի ոչ մէկը անիկայ 11
արհամարհէ . ու խաղաղութեամբ անիկայ
ճամբայ դրէք , որ ինծի գայ . ինչու որ
անոր կը սպասեմ եղբայրներուն հետ ։
Բայց Ապողոս եղբօր համար շատ ա- 12
ղաչեցի անոր՝ որ ձեզի գայ եղբայրներուն
հետ մէկտեղ . ու բնաւ կամք չունեցաւ
որ հիմա գայ . բայց պիտի գայ երբոր
պարապ ըլլայ ։ Արթուն կեցէք . Հա- 13
ւատքի մէջ հաստատ կեցէք , մարդ եղէք ,
զօրացէք ։ Ձեր ամէն բանը սիրով ըլ- 14
լայ ։
Կ'աղաչեմ ձեզ եղբայրներ . գիտէք Ստե- 15
փաննեսին ու Փորտունատոսին տունը , որ

Digitized by Google

ընտանիք որ՝ Աքայիայուն առաջին պտուղն են,
ու իրենք զիրենք սուրբերուն սպասաւորու-
16 թեանը մէջ դրին. Որ դուք ալ հնազանդ
ըլլաք անանկներուն, ու ամենուն՝ որ մեզի
հետ միասին կը գործէ ու կ՚աշխատի։
17 Ուրախացայ ես Ստեփանանին ու Փորտու-
նատոսին ու Աքայիկոսին գալուն հա-
մար. որ ձեր պակասութիւնը անոնք լե-
18 ցուցին. Վասն զի հանգիստ պատճառեցին իմ
հոգիիս ու ձերինը. ուստի անանկները ըն-
դունեցէք դուք։
19 Բարեւ կ՚ընեն ձեզի Ասիայի եկեղեցի-
ները. շատ բարեւ կ՚ընեն ձեզի Տէրոջմով
Ակիւղասը ու Պրիսկիղան՝ իրենց տանը մէ-
20 ջի եկեղեցիովը մէկտեղ։ Բարեւ կ՚ընեն
ձեզի ամէն եղբայրները. բարեւ տուէք
մէկզմէկու սուրբ համբուրով։
21 Այս բարեւը իմ ձեռքիս՝ Պօղոսինն է։
22 Ով որ մեր Տէր Յիսուսը չսիրեր, նզո-
23 վեալ ըլլայ՝ երբ մեր Տէրը գայ։ Մեր Տէր
24 Յիսուս Քրիստոսին շնորհքը ձեր հետը. Իմ
սէրս ձեր ամենուդ հետը ըլլայ՝ Քրիս-
տոս Յիսուսով. ամէն։

Digitized by Google

# ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի 1
Աստուծոյ կամքովը, ու Տիմոթէոս մեր
եղբայրը. Կորնթոսի մէջ եղած Աստու-
ծոյ եկեղեցիին, Աքայեցւոց ամէն կող-
մերը եղող բոլոր սուրբերուն միասին։
Շնորհք և խաղաղութիւն ձեզի՝ Աստուծ- 2
մէ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիս-
տոսէն։
Օրհնեալ է Աստուած ու մեր Տէր Յի- 3
սուս Քրիստոսի Հայրը, գթութիւններուն
Հայրը՝ և ամէն մխիթարութեան Աս-
տուածը. Ան որ մեզ կը մխիթարէ մեր 4
ամէն նեղութիւններուն մէջը. որ մենք
կարող ըլլանք մխիթարել զանոնք՝ որ ա-
մէն նեղութիւններու մէջ են, ան մխի-
թարութիւնովը, որով մենք Աստուծմէ
կը մխիթարուինք։ Ինչու որ ինչպէս Քր- 5

Digitized by Google

Քրիստոսի չարչարանքները մեր վրայ շատ
կ'ըլլան, անանկ ալ Քրիստոսի ձեռքով
մեր մխիթարութիւնն ալ շատ կ'ըլլայ։
6 Ասոն գի թէ որ նեղութիւն կը քաշենք՝
ձեր մխիթարութեանը ու փրկութեանը
համար է. և թէ որ կը մխիթարուինք՝
ձեր մխիթարութեանը ու փրկութեանը
համար է, որ կը յաջողուի համբերելով
այն չարչարանքներուն՝ որոնցմով մենք ալ
7 կը չարչարուինք։ Ու մեր յոյսը հաստա-
տուն է ձեզի համար. ինչու որ գիտենք՝
թէ ինտոր որ չարչարանքներուն հաղորդ-
ենք, անանկ ալ մխիթարութեանը պիտի
8 ըլլանք։ Ինչու որ չենք ուզեր եղբայրներ՝
որ չգիտցող ըլլաք դուք մեր նեղութիւնը,
որ Ասիայի մէջ եղաւ. որ մեր կարողու-
թենէն աւելի ծանրացանք, մինչև որ
9 կենդանութենէս ալ անյոյս եղանք։ Բայց
մահուան վճիռը մենք մեր մէջ առինք. որ
ինքզինքներնուս չվստահինք, հապա Աս-
10 տուծոյ՝ որ մեռելները կը յարուցանէ. Որ
ինքը անանկ մահուանէն մեզ փրկեց, ու
11 պիտի փրկէ. Ինչու որ յոյս ունինք թէ
տակաւին պիտի փրկէ, մեզի համար ձեր
ըրած աղօթքին օգնականութիւնովը. որ
մեր վրայ եղած զանազան շնորհքներուն
վրայով շատերէն գոհութիւն տրուի մեզի
համար։

12 Ինչու որ մեր պարծանքը ան է. մեր
խղճմտանքին վկայութիւնը, որ մենք
սրբութիւնով ու Աստուծոյ ճշմարտու-

Digitized by Google

թիւնովը, և չէ՛ թէ մարմնաւոր իմաս-
տութիւնով մը, հապա Աստուծոյ շնորհ-
քովը աշխարհի մէջ վարուեցանք, բայց
աւելի դէպ' ի ձեզի: Որովհետեւ ուրիշ 13
բան չենք գրեր ձեզի, հապա ան որ դուք
կը կարդաք' ու կը ճանչնաք. ես կը յու-
սամ' թէ մինչև վերջը պիտի ճանչնաք.
Ինչպէս որ քիչ շատ ճանչցաք մեզ, որ 14
ձեր պարծանքն ենք. ինչպէս որ դուք ալ
մերը, մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը:
Եւ այսոր ապաւինելովս կ'ուզէի առաջ 15
ձեզի գալ, որ դուք կրկին շնորհք ընդու-
նիք. Եւ ձեզմէ երթալ դէպ' ի Մակե- 16
դոնիա. ու նորէն Մակեդոնիայէն ձեզի
գալ. ու ձեզմէ ճամբայ դրուիլ դէպ' ի
Հրէաստան: Ուստի աս որ ես մտածեցի' 17
միթէ թեթեւութիւնո՞վ շարժեցայ, կամ
թէ' ան որ ես կը մտածիմ, մարմնաւորի
մը պէս կը մտածեմ. չէ'. հապա որ իմ
կողմանէս, այոն' այո' ըլլայ, ու չէն' չէ':
Հաւատարիմ է Աստուած, թէ մեր խօսքը 18
ձեզի որ հասաւ' այո' և ո՛չ չէ: Ինչու որ 19
Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսը' որ
մեզմով ձեզի քարոզուեցաւ, (ինծմով և
Սիղուանոսով ու Տիմոթէոսով,) ան այո'
ու ո՛չ չեղաւ. հապա իր մէջը եղաւ այոն.
Քանզի որչափ որ Աստուծոյ խոստումնե- 20
ները կան, իր մէջը Այո են: անոր հա-
մար ալ անով Ամէն կ'ըլլայ Աստուծոյ
փառքին մեր ձեռքովը: Բայց ան որ մեզ 21
ձեզմով մէկտեղ' Քրիստոսով հաստատեց,

Digitized by Google

22 ու մեզ օծեց, Աստուած է. Որ մեզ
կնքեց ալ, և Հոգւոյն գրաւը մեր սրտե-
23 րուն մէջը տուաւ։ Բայց ես զԱստուած
վկայ կը կանչեմ իմ անձիս, որ ձեզ
խնայելուս համար տակաւին Կորնթոս չե-
24 կայ. Վասնզի չէ՛ թէ կը տիրապետենք
ձեր վրայ հաւատքով, հապա գործակից
ենք ձեր շնորհացը. ինչու որ դուք հաւատ-
քով հաստատուած էք։

## ԳԼ. Բ

1 Սակայն ես աս ընտրեցի, որ նորէն
2 տրտմութիւնով չգամ ձեզի։ Ինչու որ ե-
թէ ես ձեզ տրտմեցընեմ, ալ ո՞վ է որ
զիս ուրախ պիտի ընէ, թէ չէ ան որ
3 ինծմէ տրտմեցաւ։ Ու աս գրեցի, որ
չըլլայ թէ երբոր գամ՝ տրտմութիւն մը
քաշեմ անոնցմէ, ուսկից որ պէտք է ինծի
ուրախ ըլլալ. ձեր ամենուն վրայ յոյս
ունիմ, որ իմ ուրախութիւնս ձեր ամե-
4 նուն է։ Ինչու որ շատ ցաւերէս և սրտիս
նեղութիւնէն ես ձեզի գրեցի շատ արցունք-
քով. չէ՛ թէ որ դուք տրտմիք, հապա
որ իմ սէրս գիտնաք՝ որ ես ունիմ աւելի
ձեր վրայ։
5 Հապա թէ որ մէկը տրտմեցուց՝ չէ՛ թէ
զիս տրտմեցուց, հապա շատէն քիչը, որ
ծանրութիւնը ձեր ամենուն վրայ չձգեմ։
6 Հերիք է անանկ մարդուն ան պատիժը,
7 որ շատերէն կ'ըլլայ։ Այնպէս եւս անոր
հակառակը՝ աւելի դուք ներեցէք անոր,

Digitized by Google

ու մխիթարեցէք, որ չըլլայ թէ ա-
նիկա աւելի տրտմութենէն ընկղմի ։
Ասոր կ'աղաչեմ ձեզ, որ անոր վրայ ձեր 8
սէրը հաստատէք. (Ասոր համար ալ գրե- 9
ցի ձեզի, որ ձեզ փորձեմ թէ ամէն բանի
մէջ հնազանդ կ'ըլլա՞ք ։ Իսկ որ դուք 10
մէկուն կը ներէք, ես ալ կը ներեմ. ինչու
որ թէ ես ալ ներեմ, որուն ինչ որ ներե-
ցեմ՝ ձեզի համար է Քրիստոսի կողմանէ.)
Որ չըլլայ թէ զրկանք մը կրենք Սատա- 11
նայէն. որովհետեւ անոր խորհուրդները
անգիտցող մը չենք ։
Բայց երբոր եկայ Տրովադա Քրիս- 12
տոսին աւետարանը քարոզելու, և ինծի
դուռ մը բաց էր Տէրոջմով, իմ հոգիս 13
հանգիստ չունեցաւ. ինչու որ իմ Տիտոս եղբայ-
րս չգտայ ։ հապա անոնցմէ հրա-
ժարեցայ Մակեդոնիա գացի ։
Բայց շնորհակալութիւն Աստուծոյ, որ ամէն 14
բանի մէջ մեզ յաղթական կ'ընէ Քրիստոսով
Յիսուսով, և իրեն ճանաչողութեան հոտը
մեզմով յայտնի կ'ընէ ամէն տեղ. Վասնզի 15
Աստուծոյ Քրիստոսին անու-
շահոտութիւնն ենք՝ փրկուողներուն մէջ և
կորսուողներուն մէջ. Ասոնց մահուան 16
հոտ մը մահէն ի մահ, և մէկալներուն կենդանու-
թեան հոտ մը կեանքէն ի կեանք. Եւ ասոնց ո՞վ է
բաւական ըլլայ ։ Վասնզի մենք չենք 17
անոնց պէս շատերուն, որ Աստուծոյ խօսքը
կը խանգարեն, հապա ինչպէս թէ մաք-
րութենէ, հապա ինչպէս թէ Աստ-

Digitized by Google

[illegible] Աստուծոյ առջեւ Քրիստոսով կը խօսինք [illegible]

ԳԼՈՒԽ Զ.

1 [illegible] կը [illegible] նոքին [illegible] ըն-
ծայեն. Թէ պէտք է [illegible] պէտք
չըլլայ մեր [illegible] թշնամութիւն
2 [illegible] կամ [illegible] Արդ մեր Թող-
Թեր [illegible] են [illegible] մէջը քը-
րիստոն [illegible] կարդացուած [illegible]
3 մէն [illegible] Յիսուսի [illegible] որ
գոյք Քրիստոսի Թուղթերն են [illegible]
[illegible] չէ Թէ [illegible]
[illegible] Նոյնպէս [illegible] Աստուծոյ [illegible]
գիտցէք. չէ Թէ [illegible]
[illegible] Հապա [illegible]
4 [illegible] Աստուծոյ [illegible]
Աստուծոյ [illegible] Քրիստոսի [illegible]
5 Չէ [illegible] քաղաքական [illegible]
[illegible] Թէ [illegible] Հա-
պա [illegible] Աստուծոյ [illegible]
6 [illegible] չէ Թէ գը-
րով, Հապա հոգւով [illegible] գիրը կը
[illegible] հոգին [illegible] Արդ
7 զի Թէ որ [illegible] փառ-
[illegible] որ [illegible] կարող
[illegible] Մովսէսին [illegible]
[illegible] Հանգը [illegible] փա-
8 [illegible] Աստուծոյ [illegible] Հոգիին [illegible]

Digitized by Google

նը փառքով պէտք է ըլլալ։ Ինչու որ 9
եթէ դատապարտութեան պաշտօնը փառ-
քով էր, ո՜րքան աւելի արդարութեան
պաշտօնը փառքով պիտի ըլլայ։ Վասն 10
զի ան որ փառաւոր էր՝ աս մասին փա-
ռաւոր չէ՛, փառքին առաւելութեանը
պատճառովը։ Ինչու որ եթէ ան որ պի- 11
տի խափանուէր՝ փառքով էր, ո՜րքան ա-
ւելի ան որ կը կենայ՝ փառքով պիտի
ըլլայ։ Ուստի ասանկ յոյս որ ունինք, 12
շատ համարձակութեամբ վարուինք մեր
խօսքին մէջը. Ու չէ՛ թէ ինչպէս որ Մով- 13
սէսը իր երեսին վրայ ծածկոց կը դնէր,
որ Իսրայէլին որդիքը չնային ան խափա-
նուելու բաներուն վախճանին։ Հապա 14
անոնց միտքերը կուրցան, ինչու որ մինչև
այսօրուան ատենս նոյն ծածկոցը դրուած է,
Հին կտակարանին կարդացմունքին վրայ,
ու չյայտնուիր, (ինչու որ Քրիստոսով պի-
տի խափանուի.) Հապա մինչև այսօր 15
երբոր Մովսէսին գիրքը կը կարդան, նոյն
վարագոյրը անոնց սրտին վրայ կեցած է։
Սակայն երբոր Տէրոջը դառնան, ան ա- 16
տենը պիտի վերնայ ան ծածկոցը. Վասն 17
զի Տէրը Հոգին է. ուր որ Տէրոջը Հոգին
կայ, ան տեղ ազատութիւն կայ։ Բայց 18
մենք ամէնքս բաց երեսով Տէրոջը փառ-
քը որպէս թէ հայելիի մէջ տեսնելով,
նոյն պատկերին կը նորոգուինք, փառքէն ի
փառք, որպէս թէ Տէրոջը Հոգիէն։

Digitized by Google

ԳԼՈՒԽ Դ.

1 Ուստի աս պաշտօնը ունինք, ինչպէս որ
ողորմութիւն գտանք, ու չենք ձանձրա-
2 նար. հապա մերժի կեցանք ամօթալի
ծածուկ բաներէն, որ խորամանկութիւնով
չվարուինք, և խարդախութիւն չընենք
Աստուծոյ խօսքին մէջ, բայց ճշմարտու-
թիւնը յայտնելով՝ անձերնիս մարդոց ամէն
միտքերուն ընծայենք Աստուծոյ առջևը։
3 Իսկ թէ որ մեր աւետարանը ծածկուած
ալ է՝ կորսուածներուն մէջը ծածկուած
4 է. Որ աս աշխարհիս աստուածը ան
անհաւատներուն միտքերը կուրցուց, որ
Քրիստոսի փառաւորեալ աւետարանին
լոյսը անոնց վրայ չծագէ. որ ինքն է ան-
5 երևոյթ Աստուծոյ պատկերը։ Ինչու որ
չէ՛ թէ անձերնիս կը քարոզենք, հապա
Քրիստոս Յիսուս Տէրը, ու մեզ՝ ձեր
6 ծառաները Քրիստոսի համար։ Վասն զի
Աստուած է՝ որ հրաման ըրաւ խաւարէն
լոյս ծագել. որ ծագեց ալ մեր սրտին
մէջ՝ Աստուծոյ փառքին գիտութեան լոյսը
7 տալու Յիսուս Քրիստոսի ձեռքով։ Նոյն
մենք աս գանձը հողէ ամաններու մէջ ու-
նինք. որ ան զօրութեանը շատութիւնը
8 Աստուծմէ ըլլայ, ու չէ՛ թէ մեզմէ։ Ամ-
մէն կողմանէ նեղուեր ենք, բայց տկա-
րացած չենք, կարօտեալ ենք, բայց
9 տարակուսած չենք. հալածուած ենք,
բայց երբեք ձգուած չենք. չարչարուած



Digitized by Google

ենք, բայց ընկճուած չենք։ Ամէն ա- 10
տեն Յիսուսի մահը մեր մարմիններուն
մէջը կը կրենք, որ Յիսուսի կեանքն ալ
մեր մարմիններուն մէջը յայտնուի։ Վասն 11
զի մենք որ կենդանի ենք՝ Յիսուսի հա-
մար միշտ մահուան կը մատնուինք, որ
Յիսուսի կեանքն ալ մեր մահկանացու
մարմիններուն մէջը յայտնի ըլլայ։ Ու- 12
տի մահը մեր մէջը կը զօրանայ, և
կեանքը ձեր մէջը։ Բայց հաւատքին 13
նոյն հոգին ունինք, ինչպէս որ գրուած
է. Հաւատացի, անոր համար ալ խօ-
սեցայ. մենք ալ կը հաւատանք, անոր
համար ալ կը խօսինք։ Ու գիտնա- 14
լով՝ թէ ան որ Յիսուսը յարուց, մեզ
ալ Յիսուսին հետը պիտի յարուցանէ,
ու անոր առջևը պիտի կայնեցընէ ձեզմով
մէկտեղ։ Ինչու որ ամէն բան ձեզի հա- 15
մար է, որ ան առատ շնորհքը շատերուն
գոհութեան ընելէն աւելնայ Աստուծոյ
փառքին համար։

Ասոր համար չենք ձանձրանար. բայց 16
թէպէտ ու մեր դուրսի մարդը կ'ապակա-
նի, սակայն մեր ներսի մարդը օրէ օր կը
նորոգուի։ Ինչու որ այս մեր թեթև 17
նեղութեանը ժամանակաւոր չափաւորութիւ-
նը յաւիտենական առաւելութեամբ մեզ
փառքին ծանրութիւնը կը գործէ, մեր վը-
րայ։ Վասն զի մենք աս երևցած բա- 18
ներուն չենք նայիր, հապա չերևցածնե-
րուն. ինչու որ աս երևցած բաները ժա-

Digitized by Google

ժամանակաւոր են ; ու չերեւցածները՝ յաւ-
իտենական են ։

ԳԼ. Ե

1 Վասն զի գիտենք՝ թէ որ մեր աս երկ-
րաւոր շինուածքնուս տունը քակուի , մէկ
շինուած մը ունինք Աստուծմէ՝ անձեռա-
գործ տուն մը յաւիտենական՝ երկինքի մէջ ։
2 Եւ աս շինուածոյն մէջը կը հառաչենք .
որովհետեւ երկինքի բնակութիւնը կ՚ու-
3 զենք հագնիլ . Միայն թէ երբոր ան հագ-
4 նելու ըլլանք , մերկ չգտնուինք ։ Վասն
զի մենք որ աս շինուածքին տակն ենք՝
կը հառաչենք ծանրութիւն քաշելով , ին-
չու որ չենք ուզեր վրանիերնուս հանել .
հապա անիկայ տալը վրայ հագնիլ , որ աս
մահկանացութիւնը ընկղմի ան կեանքէն ։
5 Եւայց ան որ մեզի յաջողութիւն կու տայ
աս բանիս մէջ՝ Աստուած է . որ մեզի
6 տուաւ Հոգիին գրաւը ։ Ասոր ապահով
ենք ամէն ատեն , և գիտենք՝ թէ որչափ
աս մարմնոյս մէջ ուշանալու որ ըլլանք ,
7 Տէրոջմէն օտար կ՚ըլլանք . (Ինչու որ
հաւատքով կ՚երթանք մենք , ու չէ՝ թէ
8 կարծիքով .) Ասոր կը համարձակինք՝ և
ալ աւելի կ՚ուզենք աս մարմինէն ելլել ,
9 ու Աստուծոյ քով մնալ ։ Ասոր համար
կը ջանանք ալ , որ թէ ուշանալու ըլլանք ,
և թէ ելլելու ըլլանք , միայն թէ անոր
10 հաճոյ ըլլանք ։ Վասն զի մենք ամէնքս
ալ Քրիստոսի ատեանին առջևը պիտի

կայնինք , որ ամէն մէկը պտնէ իր մար-
մնովը ինչ որ առաջուց գործեց , թէ՛ բա-
րի և թէ չար :
Ասոր Տէրոջը վախը գիտնալով՝ մար- 11
դոց միտքը կը հաւնեցընենք · սակայն մենք
Աստուծոյ առջեւը յայտնուելու ենք ·
բայց ես կը յուսամ որ ձեր խղճմտանքին
մէջն ալ յայտնի ենք : Չէ որ իրր թէ 12
նորէն անձերնիս ձեզի կ՚ընծայենք , հապա
պատճառ մը կու տանք ձեզի՝ մեր վրայով
պարծենալու · որ բան մը ունենաք պա-
տասխանելու անոնց՝ որ աչքի երեւցածովը
կը պարծենան , ու չէ՛ թէ սրտով : Ինչու 13
որ եթէ խելքէ դուրս եղանք՝ ան Աստու-
ծոյ համար է · և թէ որ զգաստ եղանք՝
ան ձեզի համար է · Ասան զի Քրիստոսի 14
սէրը մեզ կը ստիպէ աս բանը քննե-
լու , որ եթէ մէկը ամենուն տեղը մեռաւ ,
ուրեմն ամէնն ալ մեռած էին · Եւ ամե- 15
նուն վրայ մեռաւ , որ կենդանի եղողները՝
ալ իրենց անձերուն կենդանի չըլլան ,
հապա անոր՝ որ ինքը անոնց վրայ մեռաւ ,
ու յարութիւն առաւ : Ասկէ՛ ետեւ մենք 16
մէկ մը մարմինով չենք ճանչնար · որ
թէպէտ և ճանչնայինք Քրիստոսը մարմի-
նով , բայց հիմա՝ ա՛լ անանկ չենք գի-
տեր : Ասոր թէ որ մէկը Քրիստոսի 17
մէջ է , անիկայ նոր ստեղծուած մըն է ·
ինչու որ հինը անցաւ , ու հիմա ամէն
բան նոր եղաւ : Սակայն ամէն բան Աս- 18
տուածմէ է · ան որ մեզ իրեն հետ հաշ-

Digitized by Google

ունեցուց Քրիստոսի ձեռքովը, ու տուաւ
19 մեզի հաշտութեան պաշտօնը։ Ինչ ո-
րովհետեւ Աստուած էր, որ Քրիստոսին
ձեռքովը աշխարհս իրեն հետ հաշտեցուց,
և անոնց մեղքերը իրենց չսեպեց, ու հաշ-
20 տութեան խօսքը մեր մէջը դրաւ։ Ու-
րեմն Քրիստոսի կողմանէ դեսպանութիւն
կ'ընենք, իբրև թէ Աստուած կը բարեխօ-
սէր մեզմով. կ'աղաչենք ձեզի Քրիստոսի
կողմանէ, հաշտուեցէք Աստուծոյ հետ։
21 Այն զի Աստուած անիկայ՝ որ մեղք չէր
գիտեր, մեզի համար մեղաւոր սեպեց.
որ մենք անոր ձեռքովը Աստուծոյ արդար-
ները եղած ըլլանք։

## ԳԼ. Զ.

1 Ձեր հետը գործակից ենք, ու կ'աղա-
չենք, որ Աստուծոյ շնորհքը պարապ տե-
2 ղը ընդունած չըլլաք։ Ինչու որ՝ Ընդու-
նելի ժամանակի մը մէջ լսեցի քեզի՝ կ'ը-
սէ, և փրկութեան օրը օգնութիւն ըրի
քեզի. ահա՛ ընդունելի ժամանակ, ահա՛
3 փրկութեան օր։ Ըլլայոր մէկ բանով
մը գայթակղութեան պատճառ տաք, որ
4 մեր պաշտօնը արատաւորի. Բայց ամէն
բանի մէջ ձեր անձը ընծայեցէք Աստուծոյ
պաշտօնեաներու պէս՝ շատ համբերութի-
նով՝ նեղութիւններու մէջ, տառապանքի,
5 չարչարանքի, Ծեծուելու, բանտերու,
խռովութիւններու, աշխատութիւններու,
հսկումներու, ծոմապահութիւններու մէջ,

Digitized by Google

Սրբութեամբ, գիտութեամբ, երկայնա- 6
մտութեամբ, անուշութեամբ, Սուրբ
Հոգիով, անկեղծ սիրով, Ճշմարտու- 7
թեան խօսքովը, Աստուծոյ զօրութեամբ
արդարութեան զէնքերով՝ որ աջ կողմէն
ու ձախ կողմէն է. Փառքով ու անար- 8
գութեամբ, գովութեամբ և պարսաւ-
անքով, մոլորեցնողներու պէս՝ և ճշմա-
րիտներ, Չճանչցուածներու պէս՝ ու 9
ճանչցուածներ. Մեռնողներու պէս՝
և ահա կենդանի ենք. պատժուածներու
պէս, ու չսպաննուածներ. Տրտմածներու 10
պէս՝ ու միշտ ուրախ ենք. աղքատներու
պէս՝ ու շատերը կը հարստացընենք. որ-
պէս թէ բան մը չունինք, և ամէն բան
ունինք: Մեր բերաններս ձեզի բացուած 11
են՝ Կորնթացիներ, և մեր սիրտերը լայն-
ցած: Դուք մեզմէ չէք նեղուիր, միայն 12
թէ ձեր անձերնուդ սիրոյն մէջ կը նեղուիք.
Ասոր անոր հատուցումը ըրէք — համար 13
(իբրև իմ զաւկըներս կը սեպեմ Ձեզ,)
դուք ալ ձեռք՝ի ինծի լայնցէք:

Ու անհաւատներուն հետ լուծի ընկեր 14
մի՛ ըլլաք. ինչու որ ի՞նչ հաղորդութիւն
ունի արդարութիւնը անօրէնութեան հետ.
կամ թէ ի՞նչ հաւասարութիւն ունի լոյ-
սը՝ խաւարին հետ. Իսկ կամ ի՞նչ 15
միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարին
հետ. կամ թէ ի՞նչ բաժին ունի հաւատա-
ցեալը անհաւատին հետ. Կամ թէ ի՞նչ 16
նմանութիւն ունի Աստուծոյ տաճարը

կռապաշտութիւններուն հետ . իրաւցընէ՝ դուք
կենդանի Աստուծոյ տաճարն էք . ինչպէս
որ Աստուած ըսաւ , Թէ անոնց մէջը պի-
տի բնակիմ , ու անոնց մէջը պիտի քալեմ,
և անոնց Աստուած պիտի ըլլամ , ու
անոնք իմ ժողովուրդս պիտի ըլլան ։
17 Անոր համար ելէք անոնց մէջէն , ու
զատուեցէք , կ՚ըսէ Տէրը , և պիղծե-
18 րուն մի՛ մօտենաք . Ու ես ձեզ պի-
տի ընդունիմ , և ես ձեզի Հայր պիտի
ըլլամ , ու դուք ինծի տղաքներ ու աղ-
ջիկներ պիտի ըլլաք՝ կ՚ըսէ Ամենակալ
Տէրը ։

## ԳԼ. Է.

1 Ասոր սիրելիք՝ որովհետև մենք աս
խոստմունքը ունինք , մեր անձերը մար-
մնի ու հոգիի ամէն ինչ պղծութենէն
մաքրենք ; սրբութիւն գործենք Աստուծոյ
վախովը ։
2 Համբերեցէք մեզի . ինչու որ մենք
մէկու մը վնաս չտուինք , ու մէկը չպըղ-
3 տորեցինք , և մէկը չզրկեցինք ։ Չէ՛ թէ
ձեզ դատապարտելու համար աս կը զրու-
ցեմ . որովհետև ես առաջուց ըսեր եմ ,
որ դուք մեր սրտերնուն մէջն էք՝ մեռնե-
4 լու ու ապրելու ձեզի հետ ։ Շատ է իմ
համարձակութիւնս ձեր վրայ . շատ է իմ
պարծանքս ձեզի համար . լեցուն եմ մխի-
թարութիւնով , առատցած եմ ուրախու-
թիւնով մեր ամէն նեղութիւններուն մէ-

Digitized by Google

ջը ։ Վասն զի երբոր մենք Մակեդոնիա 5
հասանք՝ մէկ կերպով մը մեր մարմիննե-
րուն հանգստութիւն չեղաւ . հապա ամէն
կողմանէ նեղութիւն կը քաշէինք . ինչու որ
դուրսէն պատերազմներ կային, ու ներսէն
վախեր ։ Բայց Աստուած որ խոնարհ- 6
ները կը մխիթարէ, մեզ մխիթարեց Տի-
տոսի գալովը ։ Ոչ՛ թէ միայն անոր 7
գալովը, հապա՛ այն մխիթարութիւնովն
ալ՝ որով ինքը մխիթարուեր էր ձեզմով,
երբոր մեզի պատմեց ձեր բաղձանքը, ձեր
ողբը, ձեր ինծի համար ունեցած բորբո-
քը, այնքան որ շատ ուրախ եղայ ես ։
Ինչու որ եթէ ձեզ տրտմեցուցի ան 8
թուղթովը՝ չեմ զղջար . (թէպէտ զղ-
ջացեր էի .) ինչու որ կը տեսնեմ՝ թէ ան
թուղթը ձեզ տրտմեցուց թէ և քիչ մը
ատեն . Արդ՝ ուրախ եմ, չէ՛ թէ որ 9
տրտմեցաք, հապա որ ապաշխարութեան
համար տրտմեցաք . որովհետև դուք Աս-
տուծոյ ուզածին պէս տրտմեցաք, անանկ
որ մէկ բանով մը մեզմէ զրկանք չքաշէք ։
Ինչու որ Աստուծոյ ուզածին պէս եղած 10
տրտմութիւնը՝ ապաշխարութիւն կը գոր-
ծէ փրկութեան համար՝ որ զղջանալու
բան չէ . բայց աշխարհքի տրտմութիւնը
մահ կը պատճառէ ։ Ասոր նոյն բանը որ 11
դուք Աստուծոյ ուզածին պէս տրտմեցաք,
ձեր մէջը ո՛րչափ ջանք գործեց, կամ չըք-
մեղութիւն, կամ յանդիմանութիւն,
կամ վախ, կամ բաղձանք, կամ նա-

Digitized by Google

խանձաւորութիւն, կամ վրէժխնդրու-
թիւն. որ ամէն կերպով ինքզինքնիդ
յուցուցիք՝ որ այս բանին մէջ մաքուր
12 էք: Ուրեմն ան որ ես ձեզի գրեցի, չէ՛
թէ անոր համար՝ որ զրկանքը ըրաւ, և
չէ՛ թէ անոր համար՝ որ զրկանքը քաշեց,
հապա որ մեր վրայ ձեր ունեցած հոգը
յայտնի՝ ըլլայ ձեզի Աստուծոյ առջևը:
13 Ասոր ան մեր մխիթարութեանը վրայ
մենք մխիթարուեցանք. շատ աւելի ալ
խնդացինք Տիտոսի խնդութեանը համար.
ինչու որ անոր հոգին ձեր ամէնէն հանդըր-
14 տութիւն գտեր էր: Վասն զի ինչ որ
ես անոր առջևը ձեզի համար պարծեցայ՝
ամօթով չեղայ. հապա ինչպէս որ ամէն
բան ճշմարտութիւնով խօսեցանք ձեզի,
անանկ ալ մեր պարծենալը Տիտոսին առ-
15 ջևը ճշմարիտ եղաւ: Նաև անոր սէրը
աւելի է ձեր վրայ. ինչու որ ինքը մեր
միտքը կը բերէր ձեր ամենուն հնազանդու-
թիւնը, թէ ինչպէս վախով ու դողով
16 անիկայ ընդունեցեր էք: Ասոր ալ ես ու-
րախ եմ, որ ամէն բանի մէջ ձեր վրայ
վստահութիւն ունիմ:

## ԳԼ. Ը.

1 Եղբայրներ՝ ձեզի կը յուցընեմ Աստու-
ծոյ շնորհքները, որ Մակեդոնացւոց ե-
2 կեղեցիներուն տրուած է. Որ նեղութեան
մեծ փորձին մէջը՝ իրենց ուրախութեանը
առատութիւնը եղեցաւ. և անոնց.

Digitized by Google

[illegible] ապստամբութիւնը [illegible] մեղքի մարդը
[illegible] կորստեան որդին. [illegible] 3
[illegible]
[illegible] 4
[illegible]
[illegible]
[illegible]
Չէ՞ք յիշեր որ [illegible] 5
[illegible]
Հիմա ալ գիտէք [illegible]
[illegible] 6
[illegible]
[illegible]
[illegible] 7
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] Ան ատեն 8
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 9
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 10
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 11
[illegible]

Digitized by Google

է. առանց ալ ընծայը ընդունելութեան չա-
12 փովը ըլլայ ։ Վասն զի թէ որ առաջ
յօժարութիւնը ըլլայ՝ մարդս ունեցածին
չափովը ընդունելի է, ու ոչ թէ չունեցա-
13 ծին չափովը ։ Ինչու որ չէ՝ թէ ես ու-
րիշներուն հանգստութիւն կ՚ուզեմ, ու
14 ձեզի նեղութիւն ․ Հապա հաւասարու-
թիւնով հիմակուան ատենս ձեր առա-
տութիւնը անոնց պակասութեանը թող ըլլայ,
որ անոնցմէ առատին ալ օր մը ձեզի
ըլլայ ձեր պակասութեանը ․ որ հաւասա-
րութիւն ըլլայ ․ ինչպէս որ գրուած է ․
15 Ան՝ որ շատ առաւ, չաւելցաւ ․
ու ան որ քիչ առաւ, չպակսեցաւ ․
16 Բայց գոհութիւն Աստուծոյ, որ նոյն
հոգը ձեր վրայ Տիտոսին սրտին տուեր է ․
17 Որ ան ալ մեր աղաչանքը ընդունեցաւ, և
յօժարութեամբ առաջուընէ եկաւ ձեզի
18 գնաց ։ Ու անոր հետ խրկեցինք ան
եղբայրը, որուն գովութիւնը աւետարա-
նին մէջն է բոլոր եկեղեցիներուն մէջ ։
19 Եւ ասիկայ՝ թէ միայն այնպէս չէ, հապա
եկեղեցիներէն ձեռնադրուեցաւ՝ ճամբոր-
դակից ըլլալու մեզի աս առատութեան
շնորհքին, որ մեր ձեռքով կը մատակարարուի՝ Տէրոջը
փառքին համար ու ձեր յօժարութեան ։
20 Զգուշանալով ․ որ չըլլայ թէ մէկը մեզի
մեղադրէ ․ որ չըլլայ թէ մէկը մեր
ձեռքէն աս հաւասարութեան համար, որ մեր ձեռքով
21 կը մատակարարուի ։ Նախախնամենք բարիք
ոչ միայն Տէրոջը առջեւ, հապա մարդոց առջեւ ալ։

Digitized by Google

հապա մարդոց առջին ալ ։ Եւ անոնց հե- 22
տը մեր եղբայրը ղրկեցինք, որ անիկայ
շատ բանի մէջ ընտրած ենք մենք, շատ
անգամ ժիր գտնելով. ու աւելի ալ հի-
մա ջանացող է ան մեծ վստահութենովը
որ ձեր վրայ ունի ։ Բայց թէ որ Տիտո- 23
սին համար խօսք մը ըլլայ՝ անիկայ ինծի
հետ հաւասար է, եւ ձեր գործակիցը. եւ
թէ որ միւս եղբայրները կը հարցընէք՝ ա-
նոնք եկեղեցիին առաքեալներն են, ու
Քրիստոսի փառքը ։ Ուստի ձեր սիրոյն՝ 24
և մեր ձեր վրայովը պարծենալուն փորձը,
անոնց վրայ ցուցուցէք բոլոր եկեղեցի-
ներուն առջեւը ։

## Գլ. Թ.

Բայց սուրբերուն ըլլալու պաշտօնին 1
վրայով ինծի աւելորդ է ձեզի գրել ։
Ինչու որ գիտեմ ես ձեր յօժարութիւնը՝ 2
որուն վրայով պարծեցեր եմ ձեզի համար
Մակեդոնացիներուն մէջը, թէ Աքայե-
ցիները անցած տարուընէ հետէ պատրաստ
են. ու ձեր բարի նախանձը շատերը յոր-
դորեց ։ Ես ալ՝ եղբայրները ղրկե- 3
ցինք, որ մեր ձեզի համար պարծենալը՝
աս մասին մէջ պարապ չըլլայ. հապա
պատրաստուած գտնուիք՝ ինչպէս որ ըսի. Մի 4
չըլլայ թէ եթէ Մակեդոնացիները միասին
հետս գան՝ ու ձեզ անպատրաստ գտնեն,
ալ մենք (որ չըսենք թէ դուք,) ամօթով
մնանք այս պարծանքին մէջը ։ Ուստի 5

Digitized by Google

Հարկաւոր սեպեցի եղբայրներուն աղաչել ,
որ առաջուց ձեզի գան , ու առաջուց
կարգի դնեն ան ձեր առաջուց խոստա-
ցած ընծանիդ , որ պատրաստ ունենաք ,
անանկ որ պարգեւի պէս ըլլայ , ու չէ
6 թէ ագահութեան պէս : Աստ զի ան
որ խնայելով կը ցանէ՝ խնայելով կը հնձէ .
ու ան որ առատութիւնով կը ցանէ՝ ա-
7 ռատութիւնով կը հնձէ : Ամէն մէկը ինչ-
պէս որ իր սրտովը կը յօժարի , Թո՛ղ
այնպէս տայ . չէ՛ թէ հարկաւ և տրտմու-
թիւնով . ինչու որ Աստուած ուրա-
8 խառատ տուրքը կը սիրէ : Բայց կա-
րող է Աստուած բոլոր շնորհքները ձեզի
առատ տալու , որ ամէն բանի մէջ ամէն
ատեն բոլոր պէտք եղածնիդ ունենալով ,
ամէն բարի գործքերով առատանաք .
9 Ինչպէս որ գրուած է . Տարածեց՝ ու աղ-
քատներուն տուաւ . անոր արդարութիւ-
10 նը յաւիտեան կը մնայ : Բայց անիկայ
որ սերմ ցանողներուն սերմ կը պարգեւէ ,
և կերակուրի համար հաց , ինքը պարգեւէ
ու աւելցընէ ձեր սերմանքը , ու ձեր ար-
դարութեան պտուղները աւելի շատցընէ .
11 Որ ամէն բանի մէջ հարստանաք ամէն
կերպ առատութիւնով , որ մեր ձեռքովը
կը պատճառէ գոհութիւն Աստուծոյ .
12 Ինչու որ աս սպասին պաշտօնը չէ՛ թէ
միայն սուրբերուն պակասութիւնը լեցընե-
լու համար է , հապա աւելի շատցընելու
13 Աստուծոյ գոհութիւն տալը . Որ [illegible]

ու ձեր պաշտօնին փորձովը կը փառաւորեն
զԱստուած՝ Քրիստոսի աւետարանը խոս-
տովանելնուդ հնազանդութեանը համար,
և առատաձեռնութիւններդ անոնց ու ա-
մենուն հաղորդելնուդ համար. Եւ անոնց 14
աղօթքը ձեզի համար է որ կը փափաքին
ձեզի Աստուծոյ աւելի շնորհքներուն հա-
մար, որ ձեր մէջն է։ Եւ գոհութիւն Աս- 15
տուծոյ՝ անոր չպատմուելու պարգևներուն
համար։

ԳԼ. Ժ.

Բայց ես Պօղոս ձեզի կ'աղաչեմ Քը- 1
րիստոսի հեզութիւնովը ու հանդարտու-
թիւնովը, որ ձեր առջևը խեղճի մը պէս
եմ ձեր մէջը. բայց հեռուէն կը համար-
ձակիմ ձեզի։ Կ'աղաչեմ՝ որ չըլլայ թէ 2
մօտէն ալ վստահ համարձակութիւն մը
ունենամ. կամ անանկ սեպուիմ որ ես
ալ կը յանդգնիմ մէկ-քանիներուն վրայ,
որոնք մեր վրայով անանկ կը կարծեն՝ թէ
մարմնաւորապէս կը վարուինք։ Քանզի 3
թէպէտ մարմինի մէջ ենք, բայց ոչ՝ թէ
մարմնաւորի պէս զէնք կը բանեցնենք.
Ինչու որ մեր պատերազմութեան զէնքը 4
մարմնաւոր չէ. հապա Աստուծմէ զօրու-
թեան տուած՝ ամրոցները քակելու. մենք
խորհուրդները կը քակենք. Եւ Աս- 5
տուծոյ գիտութեանը դէմ բարձր հպար-
տացած բարձր բաները, ու ամէն միտքե-
րը Քրիստոսի հնազանդութեանը կը ծա-

Digitized by Google

6 համբերենք . Եւ պատրաստ ունինք մե-
րեւ յուսերը ձեզի անխախտութեամբ ,
երբոր ձեր չարչարանքներուն , ու կարա-
7 րեալ ըլլալ ։ Ամէն մէկուն զուրցի ե-
րեւութիւնն ունիք . թէ որ մէկը վրան ըլ-
լայ իր անձին վրայ՝ որ ինքը Քրիստոսինն
է , ասոր նորէն թող իր միտքը մէջ խորհի՝
որ ինչպէս ինքը Քրիստոսինն է , անանկ
8 ալ մենք ։ Որ թէ աւելի ալ պարծենա-
լու ըլլամ աս մեր իշխանութեանը համար՝,
որ Տէրը մեզի տուաւ շինելու , ու չէ՛ թէ
9 քակելու ձեզ , ինծի չեմ ամչնար ։ Որ
անանկ չերեւնամ՝ որպէս թէ ես թուղ-
10 թերովս ձեզի վախ մը կը ձգեմ . Պիտի
ըսէ՞ք որ աս թուղթերը ծանր ու զօրա-
ւոր են , բայց իր մարմինին երեւոյթը
11 տկար է , ու խօսքն ալ անարգ . Անանկ
ծարքը թող աս մտածայ , որ մենք հե-
ռուէն ինչպէս որ ենք թուղթերուն խօս-
քովը , ներկայ ալ անանկ ենք գործքերովը ։
12 Ինչու որ մենք չենք համարձակիր մեր ան-
ձը միջանգի դնել ու համեմատել անոնց ,
որ իրենք անձերնին ձեզի կը գովեն . բայց
անոնք իրենցմով իրենց անձերը կը չափեն ,
ու իրենք զիրենք իրարու դնելով չեն
13 հասկընար ։ Բայց մենք չափէն դուրս չենք
պարծենար , հապա աս կանոնին չափովը ,
որ բաժնեց մեզի Աստուած՝ մինչեւ
14 ձեզի հասնելու ։ Չէ՛ թէ որպէս թէ մենք
ձեզի հասած չենք , ու ինքզինքնիս կ՚եր-
կընցընենք . ինչու որ Քրիստոսի աւետա-

Digitized by Google

քանը տարողելով՝ մինչև ձեզի հասանք մենք։
Ու չէ՛ թէ չափէ դուրս կը պարծենանք 15
ուրիշին աշխատանքովը. բայց յոյս մը
ունինք ձեր հաւատքը աճելովը, որ
մենք ալ մեր կանոնին չափովը՝ ձեզմով
մեծնանք աւելի, Չեզմէ անդին գա— 16
ներու մէջ աւետարանը քարոզելու, ու
չէ՛ թէ ուրիշին կանոնովը պատրաստուած-
ներուն վրայ պարծենալով։ Ինչու որ ան 17
որ կը պարծենայ, թող Տէրոջմով պար-
ծենայ։ Վասն զի չէ՛ թէ ան որ իր ան- 18
ձը կը գովէ, անիկայ է ընտրուածը, հա-
պա ան որ Տէրը զանիկայ կը գովէ։

## ԳԼ. ԺԱ.

Երանի՛ թէ քիչ մը ներէիք իմ անմը- 1
տութեանս. և իրաւցընէ համբերեցէք
ինծի։ Զի ձեր վրայ նախանձաւոր եմ Աս- 2
տուծոյ նախանձովը. ինչու որ ես ձեզ մէկ
մարդու մը նշանեցի՝ մաքուր կոյսի մը
պէս Քրիստոսի ընծայելու համար։
Բայց կը վախնամ՝ չըլլայ թէ ինչ- 3
պէս որ օձը Եւան խաբեց իր խորամանկու-
թեամբը, անանկ ալ ձեր միտքերնիդ ապա-
կանին Քրիստոսի վրայ եղած միամտու-
թենէն։ Վասն զի թէ որ մէկը գալով 4
ուրիշ Յիսուս մը քարոզէ՝ որ մենք չքա-
րոզեցինք, կամ ուրիշ հոգի մը առ-
նէք՝ որ չառիք, կամ ուրիշ աւետարան
մը՝ որ չէք ընդունած, աղէկ կը
կը համբերէիք։ Վասն զի ես կարծեմ որ մէկ 5

Digitized by Google

[illegible]
6 [illegible]
[illegible]
[illegible]
7 [illegible]
8 [illegible]
[illegible]
[illegible]
8 [illegible]
[illegible]
9 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
9 [illegible]
[illegible]
10 [illegible]
[illegible]
[illegible]
11 [illegible]
12 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
13 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
14 [illegible]
[illegible]

Digitized by Google

հրեշտակի կերպարանքին վրան կ'առնէ ։ Ուստի 15
մեծ բան մը չէ, որ անոր պաշտօնեաներն
ալ՝ արդարութեան պաշտօնեաներու նը-
ման կերպարանք կ'առնեն․ որոնց վերջը
իրենց գործքերուն համեմատ պիտի ըլլայ ։
Նորէն կ'ըսեմ․ Չըլլայ որ մէկը զիս ան- 16
միտ սեպէ․ հապա թէ չէ՝ գոնէ անմիտի
մը պէս զիս ընդունեցէք, որ ես ալ քիչ
մը պարծենամ ։ Այն ինչ որ ես կը խօ- 17
սիմ չէ՝ թէ Տէրոջը խօսքը պէս կը խօ-
սիմ, հապա որպէս թէ անմտութիւնով
մը այս պարծենալուն կարգովը ։ Այն որ 18
բազմութիւն շատերը մարմնոյ կողմանէ կը
պարծենան, ես ալ անոնց պէս պարծենամ․
Յօժարութիւնով մը կը համբերէք անմի- 19
տներուն ձեր իմաստութիւնովը ։ Ինչու 20
չէ որ կը համբերէք, թէ որ մէկը ձեզ-
խաբէ, թէ որ մէկը ձեզ ծառայեցնէ,
թէ որ մէկը ձեր բանը ուտէ, թէ որ մէ-
կը ձեզի բան մը առնէ, թէ որ մէկը
ձեր երեսին հպարտանայ, թէ որ մէկը ձեզ
ապտակէ ։ Անարգանքին համար կ'ըսեմ 21
կը խօսիմ, իբր թէ մենք տկար եղանք․
բայց ինչ բանի որ մէկը կը համարձակի
(անմտութեամբ կը խօսիմ,) ես ալ կը
համարձակիմ ։ Եբրայեցի՞ են, ես ալ ։ 22
Իսրայելացի՞ են, ես ալ ։ Աբրահամի
զաւա՞կն են, ես ալ ։ Քրիստոսի պաշ- 23
տօնեանե՞րն են, յանդգնութեամբ կը
խօսիմ որ աւելի ես ․ թէ որ աշխա-
տանքով աւելի, թէ որ ծեծով ալ աւե-

Digitized by Google

անգամ , թէ որ՝ բանտարկուելու առաւելապէս աւելի ,
թէ որ՝ մահուան նեղութիւններով շատ
24 անգամ ։ Հրէաներէն հինգ անգամ՝ քառա-
25 սունէն մէկ մը պակաս ծեծ կերայ ։ Երեք
հեղ գաւազանով ծեծուեցայ ։ Մէկ հեղ քար-
կոծուեցայ ։ Երեք անգամ նաւաբեկու-
թեան հանդիպեցայ ։ Գիշեր ու ցորեկ
ծովուն խորունկութեանը մէջ նեղութիւն
26 քաշեցի ։ Շատ անգամ ճամբորդութեան
մէջ շարժուող-ներով , գետերէն նեղութիւն-
ներ ։ աւազակներէն նեղութիւններ ։ իմ
ազգէս նեղութիւններ ։ հեթանոսներէն
նեղութիւններ ։ քաղաքի մէջ նեղութիւն-
ներ ։ անապատի մէջ նեղութիւններ ։
ծովու վրայ նեղութիւններ ։ սուտ եղբայր-
27 ներէն նեղութիւններ ։ Ջանքի ու աշ-
խատանքի մէջ ։ Շատ անգամ քնահատու-
թեան մէջ ։ անօթութեան ու ծարաւու-
թեան մէջ ։ Շատ անգամ ծոմապահութեան
28 մէջ ։ ցուրտի ու մերկութեան մէջ ։ Զգէ՛
ուրիշ նեղութիւնները , որ ամէն ատեն
զբաղմունքներ վրաս կը դիզուէր , և բո-
29 լոր եկեղեցիներուն հոգը ։ Ո՞վ կը
հիւանդանայ , ու ես չեմ հիւանդանար ։
Ո՞վ կը գայթակղի , ու իմ սիրտս չայրիր ։
30 Թէ որ պարծենալու պէտք ըլլայ՝ տկա-
րութեանս բաներովը պիտի պարծենամ ։
31 Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսին
Հայրը , ան որ յաւիտեան օրհնեալ է ,
32 գիտէ որ սուտ չեմ խօսիր ։ Դամասկո-
սի մէջ Արետա թագաւորին ազգապետը

Դամասկացւոց քաղաքը պահապաններ դը-
րեր էր՝ զիս բռնելու համար. Ես ալ պատ- 33
տուհանէն մէջէն զամբիւղով պարսպէն վար
կախուեցայ, ու անոր ձեռքէն փախայ.

ԳԼ. ԺԲ.

Անանկ պարծենալ պէտք չըլլայ ու, 1
բայց շահ մը չունի. միայն թէ Տէրոջը
տեսիլքներուն ու յայտնութիւններուն
գամ։ Մարդ մը գիտեմ Քրիստոսով 2
տասնըչորս տարի առաջ, եթէ մարմնով
էր՝ չեմ գիտեր, և թէ որ առանց մար-
մնի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ. ա-
նանկը յափշտակուեցաւ մինչեւ երրորդ
երկինքը։ Ու գիտեմ անանկ մարդ մը. 3
եթէ մարմնով ու թէ առանց մարմնի,
չեմ գիտեր, Աստուած գիտէ. Որ դրախ- 4
տը յափշտակուեցաւ ու լսեց չըպատմուե-
լու խօսքեր, որ մարդու արժան չէ խօ-
սիլ։ Անանկին համար պարծենամ ես. 5
բայց իմ անձիս համար պիտի չպարծենամ,
հապա միայն տկարութեանս վրայ։ Որ 6
եթէ պարծենալ ալ ուզեմ՝ անմիտ պիտի
չըլլամ. որովհետեւ ճշմարիտը կը զրուցեմ.
բայց կը խնայեմ խօսքս՝ որ չըլլայ թէ
մէկը իմ վրաս աւելի համարում ունենայ,
քան որչափ որ իմ վրաս կը տեսնէ, կամ
ինծմէ կը լսէ։ Ու որ չըլլայ թէ ես 7
հպարտանամ այնքան աւելի յայտնու-
թիւններուն վրայ, ինծի մարմնիս խայ-
թոց մը տրուեցաւ՝ Սատանան հրեշտակ մը

զիս նեղելու համար, որ չափազանց թէ ես
8 հպարտանամ։ Ես ասոր համար երեք
անգամ աղաչեցի Տէրոջը, որ մեկնի ինծ-
9 մէ։ Եւ ըսաւ ինծի. Իմ շնորհքս հերիք
է քեզի. ինչու որ իմ զօրութիւնս տկա-
րութեան մէջ կը կատարուի։ Ուստի
շատ աւելի է ինծի տկարութեանս վրայ պար-
ծենալ, որ Քրիստոսի զօրութիւնը
10 իմ մէջս բնակի։ Անոր համար հաւնեց-
եմ ես տկարութիւններու, նախատինքնե-
րու, տառապանքներու, հալածանքնե-
րու, ու նեղութիւններու Քրիստոսի համա-
մար. ինչու որ երբոր կը տկարանամ, այն
11 ատենը կը զօրանամ։ Ես անմիտ եղայ
պարծենալով, որ դուք ստիպեցիք զիս.
վասն զի ինծի պէտք էր ձեզմէ վկայութիւն
առնել, թէ ես երեւելի առաքեալներէն
բանով մը պակաս չմնացի. որ թէեւ
12 ոչինչ եմ ալ։ Ճիշդ առաքեալին նշա-
նները գործուեցան ձեր մէջը ամէն համբե-
րութիւնով, նշաններով, եւ սքանչելի-
13 քներով ու զօրութիւններով։ Ուստի
ա՛լ ի՞նչ կայ, որ անով պակասեցա-
ցաք ուրիշ եկեղեցիներէն, բայց միայն թէ ես
նով որ ես ձեզի ծանրութիւն չեղայ. շնորհք ըրէք
ներեցէք ինծի այս յանցանքը։
14 Ահա այս երրորդ անգամն է, որ պատրաս-
տուած եմ ձեզի գալու, ու ձեզի ծանր
չեմ ըլլար, վասն զի ձեր ունեցածը չէ որ կը փնտռեմ, հապա
ձեզ. ինչու որ զաւակները պարտաւոր չեն ծնողաց
համար գանձ դիզելու, հապա ծնողները զաւակներուն համար։

Digitized by Google

Մեր բան զինքեր, հաղա հայրերեն որոշիս
ներքուն հասնար ու կ'ըլլայ ես առեղծի յօժարու 15
թիւնով ծառայք կ'ըսեմ, ու ծառայք պիտի
ըլլան ալ ձեր անձերուն հասնար։ Թէպէտ
և ձեզ անեղծի արդեօք յետոյ քէշ սիրտիս
[illegible]
Ասկայն թող ըլլայ որ ես ձեզի անմտանաց 16
թիւթիւն մը չառնեմ, բայց որով հանդերձ
խօսքէս եմ խօսքով ձեզ բանեցի։ Ինչ որ 17
որ կը խօսիմ, կը խօսիմ անմտութեամբ
ձեզի բան մը պարծենալու։ Ինչպէս որ շատեր 18
չեն կ'ու անոր Տէրոջ ամ ըստ մարմնոյ կը պարծենան
մի։ Ինչպէս ձեր մէկ բանը պարծենալ մեր
նոյն հաղթով չկարծէք․ ․ ․ պարծենալ
[illegible]
Կ'ընծէր կը կարծէք որ ես կրնամ խօսիլ 19
քերով ձեզի աղեքանուց կ'ըսեմ։ Ասկայն
ծով ամէն Քրիստոսով կը խօսինք, որ
ամէն բան որ կ'ըլլայ ձեր օգտին համար է։
Բայց կը վախնամ որ չըլլայ թէ երբոր 20
գամ, ու գտնեմ ձեզ չուզածիս պէս, և ես
ալ ձեզի ձեր չուզածին պէս գտնուիմ,
չըլլայ թէ նորէն գտնուի յեր մէջը վէճեր,
նախանձ, բարկութիւններ, հեռացու
թիւններ, չարախօսութիւններ, բամբասա
կութիւններ, հպարտութիւններ, խառ
նակութիւններ, խռովութիւններ։
Չըլլայ թէ երբոր նորէն գամ, իմ Աստուածս 21
խոնարհեցնէ զիս ձեզի մէջ, և լամ շատ
մեղք գործողներուն համար որ ապաշխարեցին մեղքե
գործեցին իրենց պոռնկութիւնները և անառակութեանցը։

Digitized by Google

ծած պղծութեանը՝ և պոռնկութեանը ու գիջութեանը վրայ :

## ԳԼ. ԺԳ.

1 Աս իրեք անգամ է որ ձեզի կու գամ.
որ երկու ու իրեք վկաներուն բերնէն կը
2 հաստատուի ամէն բան : Առաջ ըսեր
եմ՝ և նորէն առաջ կը զրուցեմ (առջևս
1 ըլլալով երկրորդ անգամ՝ ձեր դիմացը՝ թէ և
հիմա հեռուէն կը գրեմ) առջի մեղանչող-
ներուն՝ և ուրիշ ամենուն, որ եթէ նորէն
3 գամ՝ պիտի չխնայեմ. Ինչ է որ Քրիստո-
սին նշանը կ'ուզէք՝ թէ ինքը ինծմով ձեզի
հետ կը խօսի, ան որ ձեր վրայ զօրացած
4 է, ու չէ թէ տկարացած : Որ թէպէտ
խաչը խաչուեցաւ մեր տկարութիւնովը,
բայց կենդանի է Աստուծոյ զօրութեամբը.
մենք ալ թէպէտև կը տկարանանք անոր
համար, բայց կենդանի կ'ըլլանք անոր
5 հետ Աստուծոյ զօրութեամբը : Փորձե-
ցէք ձեր անձերը թէ նոյն հաւատքին մէջն
էք. քննեցէք անձերնիդ. չէ՞ք գիտեր
ինքզինքերնիդ, որ Քրիստոս Յիսուս ձեր
մէջն է. միայն թէ խոտելի որ չըլլաք :
6 Բայց կը յուսամ որ գիտէք թէ մենք խո-
7 տելի չենք : Աղօթք կը խնդրենք Աստուծ-
մէ որ մէկ վնաս մը չընէք ձեզի. չէ՛ թէ որ
մենք ընտիր երևինք, հապա որ դուք
բարի գործէք, ու մենք թող խոտելի ըլ-
8 լանք : Ինչու որ մենք չենք կրնար ճշմար-
տութեան դէմ կենալ. հապա ճշմարտու-

Digitized by Google

կու ձեր կատարելութեան ։ Ուրախ ենք՝ 9
երբոր մենք կը տկարանանք, ու դուք զօ-
րաւոր կ'ըլլաք, և մենք ալ ատ ձեր հաս-
տատութեանը՝ համար կ'աղօթենք ։ Ասոր 10
համար կը գրեմ ձեզի հեռուէն, որ չըլլայ թէ
երբոր գամ՝ սաստկութեամբ վարուիմ
իշխանութիւնովս, որ Տէրը ինծի տուաւ
շինելու՝ ու չէ՝ թէ քակելու համար ։
Ալ մնաք բարով եղբայրներ՝ ողջ եղէք, 11
համաձայն կեցէք ու մխիթարուեցէք, միա-
բան եղէք, խաղաղութիւն ըրէք ։ Ու խա-
ղաղութեան և սիրոյ Աստուածը ձեր հե-
տը ըլլայ ։ Բարեւ ըրէք մեկզմեկու 12
սրբութեան համբուրով ։ Բարեւ կ'ընեն
ձեզի ամէն սուրբերը ։ Մեր Տէր Յիսուս 13
Քրիստոսի շնորհքը և Աստուծոյ սէրը՝ ու
Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը ձեր ամե-
նուն հետ ըլլայ ։ ամէն ։

# ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻՆ ԹՈՒՂԹԸ
## ԱՌ
# ԳԱՂԱՏԱՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս՝ առաքեալ եղած՝ ոչ՛ թէ մար-
դիկներէն, ու ոչ՛ թէ մարդու ձեռքով,
հապա Յիսուս Քրիստոսի ձեռքովը, և
Հօր Աստուծոյ՝ որ յարոյց զանիկայ մե-
2 ռելներէն. Ու բոլոր եղբայրները որ ինծի
հետ են, Գաղատացւոց եկեղեցիներուն.
3 Շնորհք և խաղաղութիւն ձեզի Հօր Աս-
տուծմէն ու մեր Տէր Յիսուս Քրիստոսէն.
4 Ան որ իր անձը տուաւ մեր մեղքերուն հա-
մար, որ մեզ փրկէ աս չար աշխարհէն՝ Աս-
5 տուծոյ ու մեր Հօրը կամքին պէս. Որուն
փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։
6 Կը զարմանամ՝ որ այսպէս շուտով մը
ուրիշ աւետարանի կը փոխուիք անկէց՝ որ
ինքը՝ ձեզ Քրիստոսի շնորհացը կանչեց.
7 Որ չկայ ուրիշ՝ աւետարան. միայն թէ
կան ոմանք՝ որ ձեզ կը խռովեցընեն. ու
կ՚ուզեն Քրիստոսի աւետարանը խանգարե-
8 լու։ Բայց թէ որ մենք կամ երկինքէն



Digitized by Google

Հրեշտակ մը գայ աւետարանէ ձեզ անկէց
աւելի՝ որ մենք աւետարանեցինք ձեզի ,
նզովեալ ըլլայ ։ Ինչպէս որ առաջ ը- 9
սինք , հիմա ալ նորէն կը գրուցեմ . Ինչ է
որ մէկը ձեր առածէն աւելի՝ աւետարան
քարոզելու ըլլայ ձեզի , նզովեալ ըլլայ ։
Հիմա մարդիկներո՞ւն հաճելի ըլլամ՝ թէ 10
Աստուծոյ . կամ մարդիկներո՞ւն հաճելի
ըլլալ փնտռեմ . Թէ որ ես տակաւին
մարդոց հաճելի ըլլայի , ալ Քրիստոսի
ծառայ չէի ըլլար ։
Կը ցուցընեմ ձեզի եղբայրներ այն աւե- 11
տարանը՝ որ ինծմէ քարոզուեցաւ , թէ ա-
նիկայ մարդու բան չէ . Որովհետեւ ես ալ 12
մարդէ չառի անիկայ , եւ մէկէ մըն ալ
չսորվեցայ . հապա Յիսուս Քրիստոսի
յայտնութենէն ։ Որովհետեւ լսեր էք 13
դուք իմ վարմունքս՝ որ առաջուց Հրէ-
ութեան մէջն էր , ինտո՞ր չափէ դուրս
կը հալածէի Աստուծոյ եկեղեցին , ու կը
կողոպտէի զանիկայ ։ Ու Հրէութեան մէ- 14
ջը ես յառաջադէմ էի՝ իմ ազգիս մէջ ե-
ղած շատ հասակակիցներէս աւելի՝ խիստ
նախանձաւոր էի իմ հայրենի աւանդու-
թիւններուս ։ Բայց երբոր Աստուած ու- 15
զեց՝ ( որ որոշեց զիս իմ մօրս փորէն , եւ
իր շնորհքովը զիս կանչեց , ) Ինծմով իր 16
Որդին յայտնի ընել , որ անիկայ ես Հե-
թանոսներուն մէջ քարոզեմ , մէկէն՝ ի մէկ
մարմնի ու արիւնի բան մը չհարցուցի ։
Ո՛չ ալ Երուսաղեմ ելայ՝ ինծմէ առաջ եղ. 17

ղող առաքեալներուն քովը. Հապա Արա-
բիա գացի, ու նորէն Դամասկոս դարձայ։
18 Անկէ ետքը երեք տարիէն ետև Երուսաղէմ ե-
լայ՝ Պետրոսը տեսնելու. և տասնըհինգ
19 օր անոր քովը կեցայ։ Առաքեալներէն
ուրիշ մէկը չտեսայ, միայն Յակոբոս՝
20 Տէրոջը եղբայրը։ Բայց ասոնք որ կը գրեմ
ձեզի՝ ահա Աստուծոյ առջևը, որ սուտ
21 չեմ զրուցեր։ Անկէ ետքը եկայ Ասորի-
22 քիներուն ու Կիլիկեցիներուն կողմերը։ Ու Հրէ-
-աստանի [illegible] եկե-
-ղեցիներուն՝ որ Քրիստոսով [illegible] էին, երեսով ան-
23 ծանօթ էի։ Միայն թէ անանկ լսած էին,
թէ ան որ առաջ մեզ կը հալածէր, հի-
մա իրեն ան հաւատքը կը քարոզէ որ ա-
24 ռաջ մը կը քանդէր։ Ու իմ մէջս զԱս-
տուած կը փառաւորէին։

## ԳԼ. Բ

1 Երբոր տասնուչորս տարիէն ետև՝ նորէն
Երուսաղէմ ելայ Բառնաբասին հետ,
2 Տիտոսն ալ հետս առնելով։ Ու ելայ
յայտնութիւնով, և անոնց իմացուցի ան
աւետարանը՝ որ ես հեթանոսներուն մէջը
կը քարոզէի, (բայց առանձին անոնց՝ որ
երևելիներն էին,) որ չըլլայ թէ պարապ
3 տեղը վազած ըլլամ՝ կամ վազեմ։ Բայց
չէ՝ թէ Տիտոսն ալ՝ որ ինծի հետ էր,
հեթանոսներէն ըլլալով պարտաւորեցաւ
4 թլփատուելու. Հապա ան ներս մտած
սուտ եղբայրներուն համար՝ որոնք որ

Digitized by Google

սպրդուեցան ներս մտան մեր Քրիստոս
Յիսուսով ունեցած ազատութիւնը լրտե-
սելու համար, որ մեզ ծառայեցնեն։
Որ անոնց քիչ մը ատեն ալ մենք չզիջանք 5
հպատակելու, որ աւետարանին ճշմար-
տութիւնը հաստատապէս ձեր մէջը ։ Բայց 6
անոնք որ կը կարծուէին բան մը ըլլալ,
(առոնք ինչ որ էին՝ ան ինծի հոգ չէ ; Աս-
տուած որ՝ Աստուած մարդոց աչառութիւն չը-
ներ .) վասն զի անոնք կարծուածները
բան մը չաւելցուցին ինծի. Հապա ը- 7
նդհակառակը՝ երբոր տեսան որ անթլփա-
տներուն աւետարանը ինծի յանձնուած
է, ինչպէս Պետրոսին ալ թլփատուած-
ներունը. (Վասն զի ան որ Պետրոսին 8
յաջողեց թլփատուածներուն առաքելու-
թիւն ընելու, ինծի ալ յաջողեց հեթա-
նոսներունը.) Երբոր ինծի տրուած շը- 9
նորհքները գիտցան, Յակոբոս ու Կե-
փաս և Յովհաննէս՝ որոնք որ սիւներ
սեպուած էին, հաղորդութեան ձեռք տուին
ինծի ու Բառնաբասին, որ մենք հե-
թանոսներուն մէջը երթանք, և անոնք՝
թլփատուածներուն. Միայն թէ կը խնդրէին 10
որ աղքատները յիշենք. որ ես ալ յօ-
ժարեցայ ան բանը ընելու ։ Բայց երբ- 11
որ Կեփաս Անտիոք եկաւ՝ ես անոր դէմ
կեցայ. որովհետև ինքը իր թէ մեղա-
դրուելու էր ։ Քանզի որ դեռ Յակոբին 12
քովէն մէկ քանին չեկած, ինքը հեթա-
նոսներուն հետը անխտրաբար կ'ուտէր.

բայց երբոր եկան՝ կը զատուէր, ու ինք-
զինքը մէկդի կը քաշէր, վախնալով ա-
13 նոնցմէ՝ որ թլփատուածներէն էին։ Ա-
անոր հետ կեղծաւորեցան մէկտեղ Հրեա-
ները ալ, այնպէս որ Բառնաբասն ալ ա-
14 նոնց կեղծաւորութեանը տարուեցաւ։ Բայց
ես երբոր տեսայ՝ որ աւետարանին ճշմար-
տութեանը մէջ շիտակ չեն երթար, ա-
մենուն առջին Կեփասին ըսի. Եթէ
դուն որ Հրեայ ես, հեթանոսի պէս՝ ու
չէ՝ թէ Հրեայի պէս կը վարուիս, ի՞նչպէս
հեթանոսներուն կը ստիպես Հրեայի պէս
15 ըլլալ։ Մենք որ՝ մենք բուն Հրեայ ենք,
և չէ՝ թէ հեթանոսներէն մեղաւորներ։
16 Ու գիտենք՝ որ մարդ օրէնքին գործքերէն
չարդարանար, միայն թէ Յիսուս
Քրիստոսի հաւատքէն, մենք ալ Յիսուս
Քրիստոսի հաւատացինք՝ որ արդարանանք
Քրիստոսի հաւատքէն, և չէ՝ թէ օրէնքին
գործքերէն. վասն զի օրէնքին գործքե-
րէն մէկ մարմին մը պիտի չարդարանայ։
17 Հապա թէ որ երբ խնդրելով ըլլանք Քրիս-
տոսով արդարանալ, ալ մեղաւոր գըտ-
նուինք, ուրեմն Քրիստոս մեղքի պաշ-
18 տօնեա՞յ եղաւ։ քաւ լիցի։ Վասն զի թէ
որ ես իմ քակած բաներս նորէն շինելու
ըլլամ, ուրեմն ես ինքզինքս իմ անձս
19 յանցաւոր կը ցուցնեմ։ Քանզի ես օրէն-
քով մեռայ՝ ես օրէնքին, որ Աստուծոյ
ապրիմ։ ու Քրիստոսի հետ խաչը ելայ։
20 Ու ալ ասկէ ետև կենդանի եմ, չէ՝ թէ

Digitized by Google

եմ՝ հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս.
բայց ինչ որ հիմա մարմնով կ'ապրիմ՝
Աստուծոյ Որդւոյն հաւատքովը կ'ապրիմ,
ան որ զիս սիրեց, ու իր անձը ինծի հա-
մար մատնեց։ Ես Աստուծոյ շնորհքը 21
չեմ անարգեր. ինչու որ եթէ արդարու-
թիւնը օրէնքէն է, ուրեմն Քրիստոս
պարապ տեղը մեռաւ։

## ԳԼ. Գ

Ո՛վ անմիտ Գաղատացիներ, ո՞վ ձեզ 1
հմայեց ճշմարտութեանը չհնազան-
դելու, որ գրեթէ ձեր աչքին առջևը
Յիսուս Քրիստոսը խաչը ելած յայտնա-
պէս գրուեցաւ։ Միայն սա կ'ուզեմ 2
ձեզմէ սորվիլ. Օրէնքի՞ն գործքերովը
Հոգին առիք՝ թէ հաւատքին լուրը
լսելով։ Այդչափ անմի՞տ էք. Հոգիով 3
սկսեցիք, ու հիմա մարմնո՞վ կը լմըն-
ցնէք։ Այնչափ չարչարանքները պա- 4
րա՞պ տեղը ձեր կրեցիք, (թէ
որ պարապ ըլլայ ալ)։ Ուրեմն ան որ 5
ձեզի Հոգին բաշխեց, և ձեր մէջ զօ-
րութիւններ գործեց, օրէնքի՞ն գործքերով
էր՝ թէ հաւատքին լսելովը։ Ինչպէս որ 6
Աբրահամ Աստուծոյ հաւատաց՝ ու անոր
արդարութիւն սեպուեցաւ։ Ուրեմն գիտ- 7
ցէք՝ թէ անոնք որ հաւատքէն են, անոնք
են Աբրահամի որդիքը։ Գիրքը՝ առաջ- 8
ուց տեսնելով՝ թէ Աստուած հեթանոս-
ները հաւատքով կ'արդարացնէ, յառա-

ըսեց խօսք տալով Աբրահամին , թէ
Քեզմով պիտի օրհնուին բոլոր ազգերը :
9 Ուստի անոնք որ հաւատքէն են՝ կ'օրհնուին
10 հաւատացեալ Աբրահամին հետ : Վասն
զի անոնք որ օրէնքին գործքերէն են՝ ա-
նէծքի տակ են . որովհետեւ գրուած է՝
թէ Անիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէն-
քին գրքին գրուածներուն ամենուն մէջ
11 չի մնար՝ զանոնք կատարելու : Իսկ թէ
օրէնքով մէկը չկրնար արդարանալ Ա-
ստուծոյ առջեւ , ան յայտնի է . ինչու
որ գիրքը կ'ըսէ՝ թէ Արդարը հաւատքէն
12 պիտի ապրի : Իսկ օրէնքը հաւատքէն
չէ . հապա ան որ կը կատարէ անոնք՝
13 անոնցմով պիտի ապրի : Քրիստոս մեզ
ծախու առաւ օրէնքին անէծքէն՝ մեզի
համար անէծք ըլլալով . (ինչու որ գը-
րուած է՝ թէ Անիծեալ է ամէն մարդ՝ որ
14 փայտէն կը կախուի .) Որ Աբրահամին
օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ
Քրիստոս Յիսուսով . որ մենք ալ Հո-
գւոյն Սրբոյ խոստումները առնենք հաւատ-
15 քով : Մարդկային սովորութեան՝ ըսեմ կը
զրուցեմ . իրաւ որ մարդու մը
հաստատուած կտակը մէկը չկրնար անար-
գել , եւ ուրիշ հրաման մըն ալ անոր վրայ
16 չկրնար դնել : Իսկ խոստումները Աբ-
րահամին ու անոր զաւակին եղան . ու
չըսեր թէ Զաւակներուն՝ որպէս թէ շա-
տերուն , հապա՝ որպէս թէ մէկի մը ,
Թէ քու զաւակիդ , որ ան Քրիստոսն

[illegible] 17
[illegible]
[illegible] 18
[illegible]
[illegible] 19
[illegible]
[illegible] 20
[illegible]
[illegible] 21
[illegible]
[illegible] 22
[illegible]
[illegible] 23
[illegible]
[illegible] 24
[illegible] 25
[illegible]

26 [illegible]

27 [illegible]

28 [illegible]

29 [illegible]

## ԳԼ. Գ.

1 [illegible]

2 [illegible]

3 [illegible]

4 [illegible]

5 [illegible]

6 [illegible]

Digitized by Google

ասանկէ ետեւ ծառայ չես, հապա որդի ։ Ու ե-
-թէ որ որդի՝ ալ Աստուծոյ ժառանգորդ ես ։
Բայց այն ատենը երբոր չէիք գիտեր զԱս- 8
-տուած, կը ծառայէիք անոնց որոնք բը-
-նութեամբ Աստուածներ չէին ։ Հիմակ 9
-ճանչնալով զԱստուած, մանաւանդ Աստուծմէ
-ճանչցուելով, ինչպէս կը դառնաք
-նորէն կը դառնաք այն տկար ու աղքատ
տարրերուն, որոնց նորէն կ'ուզէք
-ծառայել ։ — Օրերը կը պա- 10
-հէք ու ամիսները, և ժամանակ-
-ները ու տարիները ։ Կը վախնամ ձեզմէ, 11
որ զուցէ պարապ տեղը ձեր վրայ աշխատ-
-ած ըլլամ ։

Ինծի՛ պէս եղէք . քանզի ես ալ ձե- 12
-զի պէս էի ։ Եղբայրներ, ձեզի կ'աղաչեմ ,
ինծի բնաւ վնաս մը չհասուցիք ։ Գիտէ- 13
-ք թէ ինչպէս մարմնոյ տկարութեամբ
ձեզի առաջին անգամ աւետարանը քարոզե-
-ցի ։ Ու իմ մարմնոյս վրայ եղած փոր-
-ձութիւնը չանարգեցիք ու չարհամարհե- 14
-ցիք ։ Հապա Աստուծոյ հրեշտակի մը պէս
-զիս ընդունեցիք, Քրիստոս Յիսուսի պէս ։
Արդ ո՞ւր է ան ձեր երանութիւնը . քա- 15
-նզի կը վկայեմ ձեզի, թէ որ կարելի ըլլար ձեր
աչքերը կը հանէիք ու ինծի կու տայիք ։
Ուրեմն ձեր թշնամին եղայ ճշմարտութիւնը ըսե- 16
-լուս համար ։ Անոնք ձեզի նախանձոտ կը 17
ըլլան, բայց ոչ բարիի համար ։ Հապա ձեզ
դուրս ձգել կ'ուզեն, որ դուք անոնց նախանձոտ
ըլլաք ։ Աղէկ է բարիին նախանձոտ ըլլալ 18

Digitized by Google

առջեւնին ներկայանալուս ըլլալ ։ ու չէ՛ թէ
19 միայն երբոր ձեր մէջը ըլլամ ։ Ո՛վ որ-
դիներս, որ ձեզի համար նորէն երկունքի
ցաւ կը քաշեմ, մինչեւ որ Քրիստոս ձեր
20 մէջը նկարուի ։ Կ'ուզէի հիմա ձեզի գալ
ու փոխել իմ ձայնս ։ ինչու որ ես ձեր
վրայով տարակուսած եմ ։
21 Ըսէք ինծի, դուք որ օրէնքին տակը
կ'ուզէք ըլլալ, դուք չէ՞ք կարդացեր օ-
22 րէնքը ։ Որ գրուած է, թէ Աբրահամը
երկու որդի ունէր ։ մէկը աղախինէն, ու
23 մէկալը ազատ կնիկէն ։ Բայց ան որ
աղախինէն էր, մարմնոյ կերպովը ծնած
էր, ու ան որ ազատ կնիկէն, խոստմուն-
24 քին համեմատ ։ Որ օրինակի նմանութիւն
մըն է ։ ինչու որ ասոնք են երկու ուխտ-
կարանները, մէկը Սինայ լեռնէն, որ
ծառայութեան համար կը ծնանի, որ է
25 Հագարը, (ինչու որ Հագարը Արաբիա-
յի մէջ Սինայ լեռն է,) համաձայն է աս
Երուսաղեմին, որ իր զաւկըներովը մէկտեղ
26 կը ծառայէ ։ Բայց վերի Երուսաղէմը
27 ազատ է, որ մեր ամենուն մայրն է ։ Ին-
չու որ գրուած է ։ Ուրախ եղիր ամուլ
որ չէիր ծնաներ ։ պոռչէ՛ ու աղաղակէ՛ որ
երկունքի ցաւ չէիր քաշեր ։ Վասն զի
ձգուածին զաւակները էրիկ ունեցողէն ա-
28 ւելի են ։ Ուստի մենք եղ-
բայրներ, Իսահակին պէս խոստմունքին
29 որդիները ենք ։ Բայց ինչպէս որ ան
ատենը մարմնոյ կերպովը ծնածը կը հա-

լածէր, զանիկայ որ Հոգիին կարգաւ ծնած էր ,
այնպէս ալ հիմա ։ Սակայն գիրքը ի՞նչ 30
կ՚ըսէ ։ Մէկդի՛ հանէ այդ աղախինը ու
անոր տղան՝ որ չըլլայ թէ աղախինին
զաւակը ժառանգութիւն ունենայ ազատ
կնոջանը զաւկին հետ ։ Ուստի եղբայր- 31
ներ՝ մենք աղախինին զաւակները չենք ,
հապա ազատին , այն ազատութիւնովը ,
որով Քրիստոս մեզ ազատեց ։

## ԳԼ. Ե

ԴՈւրեմն ալ ամուր կեցէք ու նորէն ծա- 1
ռայութեան լուծին տակը մի՛ մտնէք ։
Ահա՛ ես Պօղոս կը զրուցեմ ձեզի , որ ե- 2
թէ թլփատուիք՝ Քրիստոս ձեզի օգուտ
մը չըներ ։ Ասկէն զատ կը վկայեմ , 3
թէ որ թլփատուած մարդ , պարտական
է բոլոր օրէնքը կատարելու ։ Խափանած 4
էք դուք Քրիստոսէն , որ օրէնքով ար-
դարանալ կ՚ուզէք , ու շնորհքէն ինկած
էք ։ Ինչու որ մենք Հոգիով կը սպա- 5
սենք՝ արդարութեան յոյսին հաւատքո-
վը ։ Վասն զի Քրիստոս Յիսուսի քով ո՛չ 6
թլփատութիւնը բան մը կրնայ , ո՛չ ալ
անթլփատութիւնը , հապա հաւատքը՝ որ
սիրով կը յաջողի ։ Դուք աղէկ կ՚երթա- 7
յիք . ո՞վ ձեզ խափանեց՝ որ ճշմարտու-
թեան չհնազանդիք ։ Ինչու որ այս զբօ- 8
սանքը անկէ չէ՝ որ ձեզ կանչեց ։ Քիչ 9
մը խմորը ամէն շաղուած զանգուածը կը խմո-
րէ ։ Ես ալ յոյս ունիմ՝ ձեր վրայ Տէ- 10

Digitized by Google

ընդունիլ ։ որ դուք ուրիշ կերպ բան մը
չէք մտածեր ։ և ան որ ձեզ կը խռովե-
ցընէ, ինքը դատապարտութիւն պիտի
11 կրէ՝ ով որ ըլլայ ։ Միայն թէ եղբայրներ՝
թէ որ ես տակաւին թլփատութիւն քա-
րոզեմ, ալ ինչո՞ւ կը հալածուիմ ։ ուրեմն
խաչին գայթակղութիւնը վերցուած է ։
12 Երանի՛ թէ բոլորովին կտրուէին անոնք՝ որ
ձեզ կը խռովեցընեն ։
13 Վասն զի դուք ազատութեան կանչուած
էք՝ եղբայրներ ։ միայն թէ ձեր ազատու-
թիւնը մարմնի ցանկութեանը առիթ
ձեռ. ըլլայ, հապա սիրով մէկզմէկու ծառա-
14 յութիւն ըրէք ։ Ինչու որ բոլոր օ-
րէնքը մէկ խօսքի մէջ կը կատարուի ։ Թէ
Սիրես ընկերդ՝ սիրես քու անձիդ պէս ։
15 Հապա թէ որ մէկզմէկ խածնէք ու ուտէ-
տէք ։ զգո՛յշ կեցէք՝ որ չըլլայ թէ մէկզմէ-
16 կէ սպառիք ։ Միայն թէ աս կը զրուցեմ.
Հոգիով գացէք, ու մարմինին ցանկու-
17 թիւնը մի՛ կատարէք ։ Ինչու որ մար-
մինը կը ցանկայ Հոգիին հակառակ, ու
Հոգին մարմինին հակառակ ։ և ասոնք որ
մէկզմէկու հակառակ են, չըլլայ թէ ինչ
18 որ կ'ուզէք՝ ան ընէք ։ Բայց թէ որ Հո-
գիով կը վարուիք՝ ալ օրէնքին տակը չէք ։
19 Ինչու որ մարմինին գործքերը յայտնի են,
որ ասոնք են ։ շնութիւն, պոռնկութիւն,
20 պղծութիւն, գիճութիւն, կռապաշտու-
թիւն, կախարդութիւն, թշնամութիւն,
կռիւ, նախանձ, բարկութիւն, հակառա-

ոխակալութիւններ, երկպառակութիւններ,
բաժանումներ, Չար նախանձներ, 21
սպաննութիւններ, գինովութիւններ, ա-
նառակութիւններ, ու ինչ որ ասոնց նը-
մաններ են. որ հիմակուց ես ձեզի կը զգու-
ցեմ, ինչպէս առաջուց ալ կը զգուշէի, որ
ասանկ բաներ գործողները Աստուծոյ ար-
քայութիւնը չեն ժառանգեր: Բայց հո- 22
գիին պտուղը աս է. սէր, խնդութիւն,
խաղաղութիւն, երկայնմտութիւն, Քաղ- 23
ցրութիւն, բարութիւն, հաւատար-
մութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն.
ասանկ բաներուն օրէնքը հակառակ չէ:
Եւ անոնք որ Քրիստոսինները են՝ իրենց 24
մարմինը խաչը հանեցին բոլոր կիրքերով
ու ցանկութիւններով մէկտեղ: Եթէ որ 25
հոգիով կ'ապրինք՝ հոգիին հետն ալ միա-
բան երթանք: Եւ սնապարծ չըլլանք՝ 26
մէկզմէկ գրգռելով, ու իրարու վրայ նա-
խանձելով:

## ԳԼ. Զ.

Եղբայրներ՝ թէ որ ձեզմէ մէկը պատահա- 1
մամբ ինչ և իցէ յանցանքով բռնուելու
ըլլայ, դուք որ հոգևոր էք՝ անանկը հե-
զութեան հոգիով հաստատեցէք. զգուշա-
ցէք ձեր անձերնուդ որ չըլլայ թէ դուն ալ
փորձութեան մէջ իյնաս: Մէկզմէկու բեռը 2
վերցուցէք, ու անանկ Քրիստոսի օրէնքը
կատարեցէք: Եթէ որ մէկը ինքզինքը բան 3
մը ըլլալ կը սեպէ՝ ու չէ, ինքզինքը իր ան-

Digitized by Google

4 ձը կը խաբէ ։ Ամէն մարդ իր գործը թող
կշռէ, եւ անոր մէջ մինակ իր անձին պարծանք
5 ունենայ ու ոչ թէ ընկերին նայելով ։ Վասն
զի ամէն մէկը իր բեռը պիտի վերցը֊
նէ ։

6 Աշակերտը վարդապետին թող հաղորդէ
7 ամէն բարիքներու մէջ ։ Մի՛ խաբուիք՝
8 Աստուած ծաղր չըլլար ։ Վասն զի ինչ
որ մէկ մարդ մը կը ցանէ՝ նոյնը պիտի
հնձէ ։ Ան որ իր մարմինին կը ցանէ՝ ան
մարմինէն ապականութիւն պիտի հնձէ ․ ու
ան որ Հոգիին կը ցանէ, ան Հոգիէն
9 յաւիտենական կեանք պիտի հնձէ ։ Բայց
բարի գործելէն ետ չկենանք մենք, որ իր
10 ժամանակին չթուլնալով հնձենք ։ Ուս֊
տի քանի որ ժամանակը ձեռքերնիս է,
աղէկութիւն ընենք ամենուն՝ մանաւանդ
հաւատքին ընտանիներուն ․

11 Նայեցէք՝ ինչպէս գիրով ձեզի գրեցի
12 իմ ձեռքովս ։ Ան ամէնը որ մարդու սի֊
րելի ըլլալ կ՚ուզեն մարմինով, անոնք ձեզ
կը ստիպեն որ թլփատուիք ․ միայն թէ
13 Քրիստոսի խաչին ետեւէն չերթան ։ Վասնզի
անոնք ալ որ թլփատուած են, իրենք
օրէնքը չեն պահեր ․ հապա կ՚ուզեն որ
դուք թլփատուիք, որ իրենք ձեր մար֊
14 մինովը պարծենան ։ Բայց ես՝ քաւ լիցի
որ պարծենամ, հապա միայն մեր Տէր
Յիսուս Քրիստոսի խաչովը, որ անով
աշխարհ ինծի խաչը ելած է, ես ալ աշ֊
15 խարհին ։ Ինչու որ Քրիստոս Յիսուսով

Digitized by Google

ոչ թլփատութիւնը բան մըն է, ոչ ալ
անթլփատութիւնը, հապա նոր ստեղ-
ծուած ըլլալն է ։ Եւ [illegible] կանոնովը 16
[illegible] կը միաբանին, խաղաղու-
թիւն ու ողորմութիւն անոնց վրայ ու
Աստուծոյ Իսրայէլին վրայ ։ Ասկէ ետքը 17
մէկը զիս թող չնեղացնէ. որովհետեւ
Քրիստոսին չարչարանքը իմ մարմնիս
մէջ կը կրեմ ։ Եղբայրներ, մեր Տէր 18
Յիսուս Քրիստոսին շնորհքը ձեր հոգիին
հետ ըլլայ, ամէն ։ [illegible]

[illegible]

# ՊՕՂՈՍ
# ԱՌԱՔԵԱԼԻՆ ԹՈՒՂԹԸ
## ԱՌ
# ԵՓԵՍԱՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը
Աստուծոյ կամքովը, Եփեսոսի մէջ եղած
սուրբերուն՝ ու Քրիստոսի Յիսուսի հա-
2 ւատացողներուն։ Շնորհք և խաղաղու-
թիւն ձեզի՝ Աստուծմէ մեր Հօրմէն՝ ու
Տէր Յիսուս Քրիստոսէն։
3 Օրհնեալ է Աստուած՝ և մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի Հայրը. ան որ մեզ
օրհնեց ամէն հոգևոր օրհնութիւններով
երկնաւորներուն մէջ Քրիստոսի ձեռքովը,
4 Ինչպէս որ մեզ անոր ձեռքովը աշխարհը
ըլլալէն առաջ ընտրեց, որ մենք սուրբ
ու անարատ ըլլանք անոր առջևը սիրով.
5 Առաջուց ինքը մեզ սահմանեց իրեն որ-
դեգիր ըլլալու Յիսուս Քրիստոսի ձեռ-
6 քովը իր կամքին հաճութեանը պէս, Իր
շնորհաց փառքին գովութեանը համար,
որով մեզ ուրախացուց սիրելիին ձեռքո-
7 վը. Որով փրկութիւն ունինք մենք իր


Digitized by Google

արիւնին միջնորդութիւնովը , մեղաց թո-
ղութիւնը՝ իր շնորհքին մեծութեանը հա-
փովը · Որ մեր վրայ աւելի եղաւ բոլոր 8
իմաստութեամբ ու գիտութեամբ , Մեզի 9
ցուցուց իր կամքին խորհուրդը իր հաճու-
թեանը պէս , որն իր առաջուց դրաւ ա-
նոր ձեռքովը · Որ ժամանակին սահմա- 10
նադրութիւնը լմննալուն՝ ամէն բան բա-
վանդակուի Քրիստոսով ինչ որ երկինքը
ու ինչ որ երկրի վրայ կայ , անով Ո- 11
րով մենք ալ ժառանգութիւն առինք՝ ա-
ռաջուց հրաւիրուած ըլլալով Աստուծոյ
նախասահմանութիւնովը · ան որ ամէն
բան իր կամքին խորհրդովը կը յաջողէ ·
Որ մենք անոր փառքին գովութիւն ըլ- 12
լանք՝ առաջուց Քրիստոսի վրայ յուսա-
ցողներս · Որով դուք ալ ( երբոր լսեցիք 13
ճշմարտութեան խօսքը՝ ձեր փրկութեան
աւետարանը , ) որով ալ հաւատալով խոս-
տացեալ Սուրբ Հոգիին շնորհքովը կնքուե-
ցաք · Որ ան՝ մեր ժառանգ ըլլալուն 14
գրաւն է՝ մինչև ստացուածքին փրկու-
թիւնը , որ իր փառքին գովութիւն ըլ-
լայ ։

Ասոր համար ես ալ երբոր լսեցի Տէր 15
Յիսուսին վրայ ունեցած հաւատքնիդ ,
ու բոլոր սուրբերուն վրայ ձեր ունեցած
սէրը , Ես չեմ կենար ձեզի համար գո- 16
հութիւն ընելէն՝ աղօթքիս մէջը ձեզ յի-
շելով · Որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի 17
Աստուածը՝ փառաց Հայրը տայ ձեզի ի-

Digitized by Google

իմաստութեան ու յայտնութեան Հոգին իր
18 գիտութիւնովը. Սրտերնուդ աչքը լու-
սաւոր ըլլալը համար, որ գիտնաք թէ
ի՛նչ է անոր մէջ կանչելուն յոյսը. ու ի՛նչ
է անոր ժառանգութեան փառքին մեծու-
19 թիւնը սուրբերուն մէջ. Եւ ի՛նչ է իր
զօրութեանը առաւել մեծութիւնը հաւա-
տացեալներուս մէջ՝ իր կարող զօրութեա-
20 նը յաջողութեամբը, Որ Քրիստոսով
յաջողեց. որ անիկայ մեռելներէն յա-
րուց, ու նստեցուց իր աջ կողմը երկին-
21 քին մէջ, Բոլոր իշխանութեան ու պե-
տութեան՝ և զօրութեան ու տէրութեան
վրայ՝ և ամէն անուանի վրայ որ կ՚անուանի,
չէ՛ թէ միայն աս աշխարհիս մէջ, հապա
22 գալիքին մէջն ալ. Եւ ամէն բան անոր
ոտքին տակը հնազանդեցուց. և զանիկայ
ամէն բանի վրայ՝ եկեղեցիին գլուխ ը-
23 րաւ, Որ ան անոր մարմինն է, անոր կա-
տարելութիւնը, որ ամէն բան բոլորովին
կը լեցընէ:

## ԳԼ. Բ

1 Եւ դուք որ ձեր մեղքերուն և յան-
ցանքներուն մէջ մեռած էիք՝ ինքը ձեզ
2 կենդանացուց. Որոնց մէջը ատենօք կը
քալէիք աս աշխարհիս բռնած ճամբովը,
աս օդուս իշխանութեանը իշխանին ու-
զածին պէս, ան չար հոգիին՝ որ հիմա
ապստամբ որդւոցը ներսի դին մտեր է.
3 Որ անոնցմով մենք ամէնքս ալ ան ատեն-

Digitized by Google

բուն մէջը կը պտըտէինք մեր մարմինին
ցանկութիւններովը, ու մարմինին և
միտքին ուզածը կը կատարէինք. ու բը-
նութեամբ բարկութեան որդիք էինք՝ ինչ-
պէս ուրիշները: Բայց Աստուած որ մեծ 4
է ողորմութիւնով՝ իր առատ սիրոյն հա-
մար՝ որով մեզ սիրեց. Երբոր մեր մեղ- 5
քերուն մէջը մեռած էինք. կենդանացուց
մեզ Քրիստոսով. (ինչու որ մենք շնորհ-
քով ազատեցանք,) Անոր հետ մեզ յարուց, 6
ու անոր հետ նստեցուց երկնաւորներուն
մէջ Քրիստոս Յիսուսով, Որ գալու դա- 7
րերուն մէջը ցուցընէ իր շնորհքին աւելի
մեծութիւնը՝ Քրիստոս Յիսուսով մեզի
ըրած անուշութիւնովը: Վասն զի անոր 8
շնորհքովը փրկուած էք դուք հաւատքով.
և ատ չէ՝ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ
պարգևն է. Չէ՝ թէ գործքերէն, որ մէ- 9
կը չպարծի: Ինչու որ անոր ստեղծուածն 10
ենք. Քրիստոս Յիսուսով հաստատուած
բարի գործքերու համար՝ որոնց Աստուած
առաջուց պատրաստեց մեզ, որ անոնց մէ-
ջը քալենք:

Ասոր համար մտքերնիդ բերէք, 11
որ ատեն մը մարմինով հեթանոսներ էիք.
(որոնք որ չթլփատուած կ'ըսուին անոնց-
մէ՝ որ թլփատութիւն կ'ըսուին մարմինի
մէջ ձեռքով եղած.) Որ ան ատենը դուք 12
առանց Քրիստոսի էիք, ու օտարացած
էիք Իսրայէլի քաղաքակցութենէն, և
դուրս ձգուած ան խոստմունքին ուխտե-

Digitized by Google

րէն , ու յոյս մըն ալ չունէիք , և աշխար-
13 հի մէջ անաստուած էիք ։ Բայց հիմա
Յիսուս Քրիստոսի ձեռքովը՝ դուք՝ որ ա-
տեն մը հեռաւոր էիք , մերձաւոր եղաք
14 Քրիստոսի արիւնովը ։ Անոր կի անիկայ
է մեր խաղաղութիւնը , որ երկուքը մէկ
ըրաւ , ու մէջտեղի բաժանող պատը՝
այսինքն՝ [illegible] եղած թշնամու-
15 թիւնը իր մարմինովը քակեց . Նաև հրա-
մաններով եղած պատուիրանքներուն օրէն-
քը խափանեց ։ որ իրմով ան երկուքը
մէկ նոր մարդ մը հաստատէ , ու անանկով
16 խաղաղութիւն ընէ ։ Նաև երկուքն ալ մէկ
մարմին եղած հաշտեցընէ Աստուծոյ հետ
իր խաչովը . ինչու որ թշնամութիւնը
17 սպաննեց իր անձին մէջ . Նաև եկաւ խա-
ղաղութիւն քարոզեց ձեզի՝ որ հեռուն
էիք , ու խաղաղութիւն անոնց՝ որ մօտ
18 էին ։ Որ անոր ձեռքովը մենք երկուք-
նիս ալ մէկ Հոգիով Հօր Աստուծոյ քո-
19 վը մօտենանք ։ Ուրեմն ալ ասկէ ետև
դուք օտար ու պանդուխտ չէք , հապա
սուրբերուն քաղաքակիցներ , և Աստուծոյ
20 ընտանիքը . Առաքեալներուն ու մար-
գարէներուն հիմին վրայ շինուած . որ ա-
նոր անկիւնին գլուխը Յիսուս Քրիստոսն
21 է . Որով բոլոր շինուածքը մէկտեղ կազ-
մուած ու յարմարցուած՝ կ'աճի սուրբ տա-
22 ճար մը կ'ըլլայ Տէրոջմով ։ Որ անով
դուք ալ մէկտեղ կը շինուիք՝ Աստուծոյ
բնակարան ըլլալու Հոգւով Որբով ։

Digitized by Google

## ԳԼ. Գ

Ասոր ես Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի 1
կապուածը, ձեզի հեթանոսներուդ համա-
մար. Գուցէ լսած էք դուք Աստուծոյ 2
շնորհքին մատակարարութիւնը, որ ինծի
տրուած է ձեր վրայով. Թէ ինծի ան 3
խորհուրդը յայտնութիւնով եղեւ.
(Ինչպէս առաջուց ալ ձեզի քիչ մը գը- 4
րեցի, որ կարող ըլլաք կարդալու ու-
միտք առնելու իմ տեղեակ ըլլալս Քրիս-
տոսի խորհուրդին վրայովը.) Որ ուրիշ 5
դարերուն մէջ մարդոց զաւկըներուն չերե-
ցաւ, ինչպէս որ հիմա Հոգւով Սրբով
յայտնուեցաւ իր սուրբ առաքեալներուն
ու մարգարէներուն. Որ հեթանոսները 6
Քրիստոս Յիսուսով ժառանգորդ ու մարմ-
նակից և անոր խոստմունքին հաղորդ ըլ-
լան աւետարանով. Որուն ես սպասաւոր 7
եղայ՝ Աստուծոյ շնորհքին պարգևներովը,
որ ինծի տրուեցան՝ իր զօրութեանը յա-
ջողութիւնովը, (Ինծի՝ որ ամէն սուր- 8
բերուն պզտիկն եմ, աս շնորհքը տրուե-
ցաւ,) հեթանոսներուն մէջ Քրիստոսի
անքննելի մեծութիւնը քարոզելու. Ու 9
ամէնը լուսաւորելու, որ գիտնան թէ ինչ
է ան խորհուրդին տնօրէնութիւնը, որ
բոլոր դարերէն 'ի վեր ծածկուած էր Աս-
տուծոյ քով, ան որ ամէն բանը ստեղ-
ծեց. Որ հիմա Աստուծոյ բազմատեսակ 10
իմաստութիւնը յայտնի ըլլայ երկինքը և-

Digitized by Google

ղող իշխանութիւններուն և պետութիւննե-
11 րուն՝ եկեղեցիին ձեռքովը ։ Իր յաւիտենա-
կան նախասահմանութեանը համեմատ , որ
ըրաւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքո-
12 վը ։ Որով մենք ալ համարձակութիւն ու
հաստատակութիւն ունինք յուսով իրեն հա-
13 ւատալով ։ Ասոր կ՚աղաչեմ որ չձանձրա-
նաք մեր նեղութեանը վրայ , որ ձեզի հա-
14 մար է ․ ան որ ձեզի փառք է ։ Ասոր
համար ծունկի վրայ գալով մեր Տէր Յի-
15 սուս Քրիստոսի Հօրը , Ասկից որ բոլոր
նահապետութիւնը երկինքի մէջ ու երկրի
16 վրայ անունը կ՚առնէ , Կ՚աղաչեմ որ այս
ձեզի իր փառքին մեծութեանը չափովը՝
զօրութիւնով հաստատուիլ իր Հոգիովը
17 ներքին մարդուն մէջ ։ Որ Քրիստոս հա-
ւատքով ձեր սրտին մէջը բնակի՝ սիրով
18 արմատ կապած ու հաստատուած ։ Որ
կարող ըլլաք հասկընալու ամէն սուրբե-
րուն հետ մէկտեղ , Թէ ի՛նչ է լայնութիւնը
և երկայնութիւնը՝ ու բարձրութիւնը և
19 խորութիւնը ։ Ու [illegible] ճանչնալ Քրիս-
տոսի սիրոյն գիտութեանը առաւելութիւ-
նը ․ որ լեցուիք Աստուծոյ ամէն լրութիւ-
20 նովը ։ Իսկ անոր՝ որ կարող է առատու-
թեամբ ընել ամէն բաներէն աւելի՝ որ
մենք կը խնդրենք ու կ՚իմանանք , ան զօ-
րութիւնովը որ մեր մէջը յաջողուած է ․
21 Իրեն փառք եկեղեցիին մէջ՝ Քրիստոս Յի-
սուսով , բոլոր դարերուն մէջ յաւիտենից
յաւիտեանս ․ ամէն ։

Digitized by Google

## ԳԼ. Դ.

1 Ուստի կ՚աղաչեմ ձեզի՝ ես որ Տէրոջը
համար կապուած եմ, որ դուք երթաք՝
ինչպէս որ կը վայլէ այն կոչումին՝ որով
2 կանչուեցաք. Բոլոր խոնարհութիւնով ու
հեզութիւնով՝ և երկայնմտութիւնով՝ սի-
3 րով մէկզմէկու տանիլ ընելով. Ջանալով
Հոգւոյն Սրբոյ միաբանութիւնը խաղա-
4 ղութեան կապովը պահել. Մէկ մարմին
ու մէկ հոգի, ինչպէս որ կանչուեցաք ալ
5 ձեր կոչումին մէկ յոյսովը. Տէրը մէկ է,
6 հաւատքը մէկ, մկրտութիւնը մէկ. Մէկ
Աստուած, և ամենուն Հայրը, որ ամե-
նուն վրայ ու ամենուն հետ, և մեր ամե-
7 նուն մէջն է։ Բայց մեր ամէն մէկուն ալ
շնորհք տրուած է Քրիստոսի պարգևնե-
8 րուն չափովը։ (Անոր համար կ՚ըսէ, Թէ
Բարձրը ելաւ, գերութիւնը գերի բռնեց,
9 ու մարդոց պարգևներ տուաւ։ Ան ե-
լաւ ըսելը ի՞նչ է, միայն թէ՝ որ ինքը
10 առաջ երկրին վարի կողմը իջաւ։ Ան որ
իջաւ՝ նոյն ինքն է, որ ալ բոլոր երկինք-
ներէն վեր ելաւ, որ ամէն բան լեցընէ։)
11 Եւ ինքը մէկ քանին տուաւ առաքեալներ
ըլլալու, մէկ քանին մարգարէներ, մէկ
քանին աւետարանիչներ, մէկ քանին հո-
12 վիւներ ու վարդապետներ. Սուրբերուն
հաստատութեանը համար, պաշտօնին
գործքին համար, Քրիստոսի մարմնին
13 շինութեանը համար. Մինչև որ ամէնքս

Digitized by Google

ալ հասնինք հաւատքին միաբանութեանը՝
ու Աստուծոյ Որդիին ճանչնալուն. կատա-
րեալ մարդ ըլլալու՝ Քրիստոսի լման հա-
14 սակին չափը ունենալու. Որ ալ ասկէ
ետեւ տղայ չըլլանք պղտորուած ու վար-
դապետութեան ամէն հովերէն ասդին ան-
դին տարուած՝ մարդոց խաբէութիւններովը,
15 որ նենգով կը խաբեն մոլորցընելու. Հա-
պա սիրով ճշմարտութեան հետեւելով ա-
մէն բան անով աճեցընենք՝ որ գլուխ է՝
16 այսինքն Քրիստոս. Որ անկից բոլոր մար-
մինը մէկտեղ կցուած՝ և ամէն խաղերը
մէկմէկու հաղորդուելով յարմարած՝ ամէն
մէկ մասին չափով ներգործելով ան մար-
մինին աճում կու տայ՝ իրեն շինութեանը
համար սիրով:
17 Ուստի աս կ'ըսեմ ու Տէրոջմով դաշինք
կը դնեմ, որ դուք մէյմըն ալ ան կեր-
պով չերթաք, ինչպէս որ մէկալ հեթա-
նոսները կ'երթան՝ իրենց փուճ մտած-
18 մունքներովը. Որոնց սրտերը խաւարած
է, ու օտարացած են Աստուծոյ կեանքէն,
իրենց մէջը եղած տգիտութեան պատճա-
ռովը՝ իրենց սրտին կուրութեանը համար.
19 Որոնք իրենց անձին յոյսը կտրեցին, և
ինքզինքնին անառակութեան տուին, ա-
մէն կերպ պղծութիւն գործելու՝ ագահու-
20 թիւնով: Բայց դուք ասանկ չսորվեցաք
21 Քրիստոսը. Թէ որ անոր վրայով լսեցիք՝
ու անկից սորված էք, թէ ինչպէս է
22 Յիսուսի ճշմարտութիւնը. Որ ձեր վեր-

Digitized by Google

վրէն մէկդի հանէք՝ այն ձեր առջի վար-
մունքին պէս եղած հին մարդը՝ խաբէբայ
ցանկութիւնով ապականուածը ․ Եւ ձեր 23
միտքին հոգիովը նորոգուիք , Եւ նոր 24
մարդը վրանիդ հագնիք , այն որ Աստուա-
ծոյ պատկերին պէս ստեղծուած է , ար-
դարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով ։
Ուստի ստութիւնը մէկդի ձգեցէք ․ Ճըշ- 25
մարտութիւն խօսեցէք ամէն մէկերնիդ իր
ընկերին հետ ․ ինչու որ մենք մէկզմէկու
անդամներ ենք ։ Եթէ որ բարկանաք՝ 26
մեղք մի՛ գործէք ․ արեւը ձեր բարկու-
թեանը վրայ մարը չմտնէ՛ ․ Ու Սատա- 27
նային տեղ մի՛ տաք ։ Ան որ գողութիւն 28
կ'ընէր , ալ թող չգողնայ ․ այլ մանաւանդ
թող աշխատի իր ձեռքովը աղէկ բաներ
գործելու , որ կարող ըլլայ տալ կարօտ
եղողին ։ Ամենեւին տգեղ խօսք մը ձեր 29
բերնէն չելլէ ․ հապա ինչ որ աղէկ է՝
պէտք եղած շինութեանը համար , որ
լսողներուն շնորհք տայ ։ Եւ Աստուծոյ 30
Սուրբ Հոգին մի՛ տրտմեցընէք , որով
դուք կնքուեցաք փրկութեան օրը ։ Ամէն 31
լեղիութիւն եւ բարկութիւն՝ ու սրտմտու-
թիւն՝ եւ աղաղակ՝ ու հայհոյութիւն վեր-
ցուի ձեզմէ ամէն չարութիւններով մէկ-
տեղ ։ Մէկզմէկու հետ անուշ եղէք , 32
գթած , ներելով մէկզմէկու , ինչպէս որ
Աստուած՝ Քրիստոսով ներեց մեզի ։

## ԳԼ․ Ե

Աստուծոյ նմանող եղէք՝ սիրելի զաւկը- 1

Digitized by Google

2 ներու պէս. Եւ սիրով վարուեցէք՝ ինչ-
պէս որ Քրիստոս ալ մեզ սիրեց, ու իր
անձը մեզի համար մատնեց, անուշահոտ
պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ։
3 Բայց պոռնկութեան և ամէն կերպ պղը-
ծութեան՝ կամ ագահութեան անունը ան-
գամ չըսուի ձեր մէջը, (ինչպէս որ կը
4 վայլէ սուրբերուն,) Եւ գարշելի բաներ՝
կամ խենթումենթ խօսքեր՝ կամ խեղկա-
տակութիւն, որ չվայլեր. այլ մանաւանդ
5 գոհութիւն. Աս իմանալով գիտնաք, որ
ամէն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ագահ՝ որ
կռապաշտ է, Քրիստոսին ու Աստուծոյ
թագաւորութեանը մէջ ժառանգութիւն
6 չունի։ Զըլլայ որ մէկը ձեզ խաբէ փուճ
խօսքերով. ինչու որ ասոր համար Աս-
տուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդ
7 մարդոց վրայ։ Ասոնց հաղորդ մի՛
8 ըլլաք։ Որ թէպէտ ատեն մը դուք խա-
ւար էիք, բայց հիմա լոյս էք Տէրոջմով.
9 լուսոյ որդիներուն պէս քալեցէք, ինչու
որ լուսոյ պտուղը ամէն կերպ բարութիւ-
նով, և արդարութիւնով և ճշմարտու-
10 թիւնով է։ Քննեցէք՝ ինչ է Տէրոջը
11 հաճելին. Եւ կցորդ մի՛ ըլլաք խաւարին
անպտուղ գործքերուն, մանաւանդ թէ
12 զանոնք յանդիմանեցէք։ Ինչու որ անոնց
մէջը գաղտուկ գործուած բանը խօսիլն ալ
13 ամօթ է։ Բայց ամէն բան լոյսէն յան-
դիմանուած յայտնի կ՚ըլլայ. ինչու որ ա-
14 մէն բան որ յայտնի կ՚ըլլայ՝ լոյս է։ Ա-

Digitized by Google

նոր համար կ'ըսէ. Արթնցիր դուն՝ որ կը
քնանաս, եւ կանգնէ՛ մեռելներէն, ու
Քրիստոս քեզի լոյս պիտի տայ:
Նայեցէք ինչպէս շիտակ պիտի երթաք, 15
չէ թէ անմիտներու պէս, հապա իմաս- 16
տուններու պէս. ու ժամանակը ծախու
առէք, ինչու որ օրերս չար են: Անոր 17
համար անմիտ մի՛ ըլլաք, հապա իմացէք՝
թէ ինչ է Տէրոջը կամքը: Ու մի՛ գի- 18
նովնաք գինիով, որուն մէջ որ անառա-
կութիւն կայ. հապա մանաւանդ հոգիով
լեցուեցէք. Իրարերնուդ մէջ սաղմոսներ 19
ու օրհնութիւններ, եւ հոգեւոր երգեր խօ-
սելով. երգելով ու սաղմոս ըսելով Տէ-
րոջը՝ ձեր սրտերուն մէջ: Ամէն ատեն ա- 20
մէն բանի համար գոհութի՛ւն տուէք Հօ-
րը ու Աստուծոյ՝ մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի անունովը:

Իրարու հնազանդ եղէք Քրիստոսի վա- 21
խովը: Կնիկները իրենց էրիկներուն հնա- 22
զանդ ըլլան՝ որպէս թէ Տէրոջը. Ինչու 23
որ էրիկը կնկանը գլուխն է, ինչպէս որ
Քրիստոս եկեղեցիին գլուխն է, ու ինքը
մարմինին փրկիչն է: Ասոր ինչպէս որ 24
եկեղեցին հնազանդ կ'ըլլայ Քրիստոսին,
անանկ ալ կնիկները ամէն բանի մէջ ի-
րենց էրիկներուն: Էրիկներ՝ սիրեցէք 25
ձեր կնիկները. ինչպէս որ Քրիստոս սիրեց
եկեղեցին, ու իր անձը մատնեց անոր հա-
մար. Որ զանիկայ սուրբ ընէ աւազանին 26
մաքրութեամբը՝ խօսքով. Որ ինքը իր 27

Digitized by Google

դիմացը փառաւոր կեցընէ եկեղեցին, որ
մէկ արատ մը կամ աղտեղութիւն կամ
ուրիշ ասոր պէս բաներ չունենայ. հապա
28 որ սուրբ ու անարատ ըլլայ։ Անանկ ալ
պէտք է որ էրիկները իրենց կնիկները սի-
րեն՝ իրենց մարմիններուն պէս. ան որ
29 իր կինը կը սիրէ՝ իր անձը կը սիրէ. Ին-
չու որ մէկը բնաւ իր անձը չատեր, հա-
պա կը կերակրէ՝ ու կը հոգայ զանիկայ,
30 ինչպէս Քրիստոս ալ եկեղեցին. Վասն զի
մենք անոր մարմնին անդամներն ենք,
անոր մարմնէն ու անոր ոսկորներէն։
31 Ասոր համար էրիկ մարդը իր հայրը ու
մայրը պիտի ձգէ, և իր կնկանը հետ պի-
տի երթայ, ու երկուքը մէկ մարմին պի-
32 տի ըլլան։ Աս խորհուրդը մեծ է. բայց
ես կը զրուցեմ Քրիստոսի ու եկեղեցիին
33 վրայ։ Ուստի դուք ալ անանկ ըրէք
ամէնքդ. որ ամէն մէկը իր կնիկը անանկ
պիտի սիրէ՝ որպէս թէ իր անձը. ու կնի-
կը իր էրիկէն թող վախնայ։

## ԳԼ. Զ.

1 Որդիք՝ ձեր ծնողացը հնազանդ եղէք
2 Տէրոջմով, որ ան է արժանը։ Պա-
տուէ՝ քու հայրդ ու մայրդ, (որ առջի
3 պատուիրանքն է խոստմունքով,) Որ քե-
զի աղէկ ըլլայ, ու երկան կեանք ունենաս
4 երկրի վրայ։ Հայրեր՝ ձեր զաւակները
մի՛ բարկացընէք. հապա անոնք մեծցու-
ցէք Տէրոջը խրատովը՝ ու վարժութիւնո-

Digitized by Google

վը ։ Ծառաներ՝ հնազանդ եղէք ձեր 5
մարմնաւոր տէրերուն, ահով ու դողով
և ձեր սրտին միամտութիւնովը՝ որպէս
թէ Քրիստոսին ։ Ոչ՝ թէ մարդահաճոյի 6
պէս աչքի առջև ծառայելով, հապա Քրի-
ստոսի ծառաներու պէս՝ Աստուծոյ կամ-
քը ընելով ․ Սրտանց ծառայելով՝ որպէս 7
թէ Տէրոջը ․ ու չէ՝ թէ մարդոց ։ Գիտ- 8
նաք որ՝ ամէն մէկը ինչ բարիք որ ընէ,
նոյնը Տէրոջմէն պիտի ընդունի՝ թէ՝ ծառայ
ըլլայ՝ և թէ ազատ ։ Դուք ալ տէրեր՝ 9
նոյնը ըրէք անոնց, յանդիմանութիւնը
չափաւորութեամբ ընելով ․ գիտցէք որ՝
անոնց ալ ձեր ալ Տէրը երկինքն է ․ ու
անոր առջևը աչառութիւն չկայ ։

Ալ ասկէ ետև զօրացէք Տէրոջմով ․ ու 10
անոր զօրութեան կարողութիւնովը ։ Ու 11
վրանի՛դ հագէք Աստուծոյ զէնքերը, որ
կարող ըլլաք Սատանային հնարքներուն
դէմ դնել ։ Ինչու որ մեր պատերազմը 12
մարմինի ու արիւնի հետ չէ ․ հապա իշ-
խանութիւններու ու պետութիւններու
հետ, և աս խաւար աշխարհիս իշ-
խաններուն հետ, երկինքին տակը եղող
չար հոգիներուն հետ ։ Անոր համար ա- 13
ռէք Աստուծոյ զէնքերը, որ կարող ըլ-
լաք չարին դէմ դնելու չարութեան օրը ։
Ու երբոր ամէն բանը կը կատարէք, հաս- 14
տատուն կեցէք, ձեր տեղը կայնեցէք, մէջ-
քերնիդ ամուրցուցէք ճշմարտութիւնով
ու արդարութեան զրահը հագնելով ․ Ու 15

Digitized by Google

ոտքերնիդ հագցընելով խաղաղութեան
15 աւետարանին պատրաստութիւնովը ։ Ու
ամէն բանին վրայ հաւատքին վահանը ա-
ռէք, որ անով կարող ըլլաք չարին ամէն
17 կրակոտ նետերը մարելու ։ Ու փրկու-
թեան սաղաւարտը առէք, ու Հոգիին
18 սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է. Ամէն
աղօթքով ու խնդրուածքով ամէն ա-
տեն աղօթք ըրէք Հոգիով. ու ան բա-
նին վրայ հսկեցէք բոլորովին համբերու-
թիւնով ու աղաչանքով ամէն սուրբերուն
19 համար, Ինծի համար ալ. որ ինծի խօսք
տրուի երբոր բերանս բանամ, համարձակ
20 ցուցընեմ աւետարանին խորհուրդը. Ո-
րուն համար ես դեսպանութիւն կ'ընեմ
կապանքովս, որ անով համարձակութիւն
մը ունենամ խօսելու՝ ինչպէս որ պէտք է ։
21 Բայց որ դուք ալ գիտնաք իմ վրա-
յովս՝ թէ ինչ կ'ընեմ ես, ամէն բանը
պիտի ցուցընէ ձեզի Տիւքիկոս սիրելի եղ-
բայրը ու հաւատարիմ պաշտօնեան Տէ-
22 րոջմով. Որն որ աս բանին համար ձեզի
խրկեցի, որ գիտնաք դուք մեր վրայով,
ու ինքը ձեր սիրտերը մխիթարէ ։
23 Խաղաղութիւն եղբայրներուն՝ և սէր
հաւատքով մէկտեղ Հօր Աստուծմէն, ու
24 Տէր Յիսուս Քրիստոսէն ։ Շնորհք ամե-
նուն վրայ՝ որոնք որ մեր Տէր Յիսուս
Քրիստոսը անեղծութեամբ կը սիրեն.
ամէն ։

Digitized by Google

# ՊՕՂՈՍ
# ԱՌԱՔԵԱԼԻՆ ԹՈՒՂԹԸ
## ԱՌ
# ՓԻԼԻՊԵՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա

Պօղոս և Տիմոթէոս՝ Յիսուս Քրիստոսի 1
ծառաները, Քրիստոս Յիսուսով բոլոր
սուրբերուն՝ որ Փիլիպեցւոց կողմերն են՝
եպիսկոպոսներով ու սարկաւագներով ։
Շնորհք ու խաղաղութիւն ձեզի Աստուծ- 2
մէ մեր Հօրմէն՝ ու Տէր Յիսուս Քրիս-
տոսէն ։

Իմ Աստուծմէս կը գոհանամ ամէն ան- 3
գամ՝ որ ձեզ կը յիշեմ, (Ամէն ատեն իմ 4
ամէն խնդրուածքիս մէջ՝ ձեր ամենուն
համար ուրախութեամբ աղօթք կ'ընեմ,)
Ձեր՝ աւետարանին հաղորդ ըլլալուն հա- 5
մար, առջի օրուընէ մինչև հիմա ։ Աս 6
բանին վրայ յոյս ունիմ՝ թէ ան որ ձեր
մէջը բարի գործքերը սկսեց, մինչև Յի-
սուս Քրիստոսի օրը կը կատարէ ։ Ինչպէս 7
ինծի ալ իրաւ կ'երևնայ ձեր ամենուն
վրայ աս բանը խորհիլ՝ ձեզ իմ սրտիս մէ-
ջը ունենալուս համար իմ կապերուս մէջ,

Digitized by Google

և իմ պատասխան տալուս , ու աւետա-
րանը հաստատելու մէջ , և ամէնքդ ինծի
ըրած շնորհքներուն հաղորդ ըլլալնուդ հա-
8 մար : Վկայ է ինծի Աստուած , որ ինչ-
պէս փափաք ունիմ ձեր ամենուն վրայ
9 Քրիստոս Յիսուսի գթովը : Եւ աս
աղօթքը կ՚ընեմ , որ ձեր սէրը հետզհետէ
աւելի շատնայ գիտութիւնով ու բոլոր ի-
10 մաստութիւնով , Որ դուք լաւը ընտրէք ,
որ մինչև Քրիստոսի օրը առանց գայթակ-
11 ղութեան հաստատուն ըլլաք . Արդարու-
թեան պտուղներով լեցուած Յիսուս Քրի-
ստոսի ձեռքովը , Աստուծոյ փառքին ու
գովեստին համար :
12 Կ՚ուզեմ որ գիտնաք եղբայրներ , թէ
ինչ որ ինծի պատահեցաւ՝ այլ աւելի ա-
ւետարանին յառաջադիմութեանը պատ-
13 ճառ եղաւ . Այնչափ որ իմ կապերս՝ որ
Քրիստոսի համար են , բոլոր պալատին
մէջը՝ ու ուրիշ ամենուն ալ յայտնի ե-
14 ղան . Նաև շատ եղբայրներուն Տէրոջմով .
որոնք սիրտ առին իմ կապերովս՝ այլ ա-
ւելի համարձակիլ Աստուծոյ խօսքը խօսե-
15 լու առանց վախի : Ոմանք նախանձու ու
հակառակութեան համար , ոմանք ալ յօ-
ժար կամքով Քրիստոսը կը քարոզեն .
16 Ոմանք ալ սիրոյ համար , ինչու որ գիտեն
թէ ես աւետարանին համար պատասխան
17 տալու կեցեր եմ . Ոմանք ալ հակառա-
կութեան համար Քրիստոսը կը պատմեն ,
բայց ոչ՝ թէ անկեղծութիւնով . որ կը

Digitized by Google

կարծեն նեղութիւններ բերել իմ կապե-
րուս վրայ ։ Բայց ի՞նչ է ասոր կեր- 18
պով որ ըլլայ՝ թէ՛ պատճառանքով մը՝ և
թէ ճշմարտութիւնով՝ Քրիստոս կը պատ-
մուի. և ասոր վրայ կը խնդամ, ու ու-
րախ ալ պիտի ըլլամ ։ Ինչու որ գիտեմ 19
թէ ասիկայ իմ փրկութիւնս պիտի ըլլայ
ձեր խնդրուածքովը, ու Յիսուս Քրիստոսի
Հոգիին պարգևովը, իմ ակնկալութեանս 20
ու յուսոյս պէս, որ բանով մը ամօթ չըլ-
լամ ես. Հապա բոլորովին համարձակու-
թիւնով՝ ինչպէս որ ամէն ատեն անանկ հի-
մա ալ Քրիստոս իմ մարմինիս մէջ պիտի
փառաւորուի՝ թէ՛ ապրելովս և թէ՛ մեռ-
նելովս ։ Ինչու որ ինծի կեանք Քրիս- 21
տոսն է, ու մեռնիլը օգուտ ։ Հապա 22
թէ որ մարմինիս ապրիլը իմ գործոյս պը-
տուղ կըբերէ, ալ չեմ գիտեր՝ ո՛րը ընտ-
րեմ ։ Երկուն կողմանէ ալ նեղութիւն 23
ունիմ. ելլելու ու Քրիստոսի հետ ըլլա-
լու փափաքիլը աւելի աղէկ կըսեպեմ.
Իսկ աս մարմինիս մէջ կենալը՝ ձեզի 24
համար շատ հարկաւոր ։ Ու աս բանին 25
յուսալով գիտեմ՝ որ ես ձեր ամենուն հե-
տը պիտի կենամ ու մնամ, որ դուք զար-
գանաք և ուրախ ըլլաք հաւատքով ։ Որ 26
ձեր պարծանքը իմ վրայովս աւելի ըլլայ
Քրիստոս Յիսուսով, երբոր ես նորէն ձե-
զի գամ ։

Միայն թէ Քրիստոսի աւետարանին 27
ինչպէս որ կը վայլէ՝ անանկ վարուեցէք.

Digitized by Google

որ եթէ գամ ու ձեզ տեսնեմ, և կամ-
հեռու ըլլամ, ձեր վրայովը լսեմ, որ
դուք հաստատուն կը կենաք մէկ հոգիով
ու մէկ շունչով կը պատերազմիք աւետա-
28 րանին հաւատքին համար. Եւ մէկ բա-
նով մըն ալ մի՛ վախնաք ան հակառա-
կորդներէն, որ անոնց կորստեան ապա-
29 ցոյց մըն է, ու ձեզի՝ փրկութեան. Եւ
աս ալ Աստուծմէն է, որ ձեզի տրուեցաւ
Քրիստոսի համար՝ չէ՛ թէ միայն անոր
հաւատալ, հապա անոր համար չարչա-
30 րուիլ ալ. Նոյն պատերազմը ունենալով
որ իմ վրաս տեսաք, ու հիմա ինծմէ կը
լսէք:

## ԳԼ. Բ

1 Արդ թէ որ Քրիստոսով մխիթարու-
թիւն մը կայ. թէ՝ սիրոյ սփոփանք մը,
թէ Հոգիի հաղորդութիւն, թէ գթու-
2 թիւն և ողորմութիւն. Իմ ուրախու-
թիւնս դուք լեցուցէք. նո՛յնը խորհեցէք,
մի և նոյն սէրը մէջերնիդ ունենալով, մէկ
3 շունչ, մէկ մտածմունք. Բան մը գըր-
գռութիւնով ու բան մը սնապարծութիւնով
մի՛ ընէք. հապա խոնարհութիւնով մէկզմէկ
4 ձեր անձէն լաւ սեպեցէք. Միայն անձեր-
նուդ շահը մի՛ նայիք, հապա ամէն մէկը
5 իր ընկերինն ալ: Ձեզմէ ամէն մէկը
նոյն միտքը թող ունենայ, որ Քրիս-
6 տոս Յիսուսի մէջն էր. Որ Աստուծոյ
կերպարանքը ունենալով, յափշտակելու

Digitized by Google

բան մը չսեպեց Աստուծոյ հաւասար ըլլա-
լը։ Հապա անձը ունայնացուց՝ ծառայի 7
կերպարանք առնելով, մարդոց նման ըլ-
լալով, և կերպարանքով մարդու պէս
գտնուելով, ինքզինքը խոնարհեցուց՝ 8
մինչև մահուան հնազանդ եղաւ, ու այն
ալ խաչին մահուանը։ Անոր համար Աս- 9
տուած ալ անիկայ խիստ բարձրացուց,
ու անոր անուն մը տուաւ՝ որ ամէն ա-
նուններէն վեր է։ Որ Յիսուսի Քրիստոսի 10
անուանը ամէն ծունկ չոքի, երկնաւորնե-
րուն ու երկրաւորներուն, և սանդարամե-
տականներուն։ Ու ամէն լեզու դաւանի 11
թէ՝ Յիսուս Քրիստոս Տէր է՝ Հօր
Աստուծոյ փառքին համար։ Ալ ասկէ 12
ետև իմ սիրելիներս՝ ինչպէս ամէն կեր-
պով հնազանդ եղաք՝ ոչ թէ միայն իմ
եկած ատենս, հապա ալ աւելի հիմա երբ
որ ձեզմէ հեռու եմ, ահով ու դողով ձեր
անձերնուդ փրկութիւնը գործեցէք։ Ինչու 13
որ Աստուած է՝ որ ձեր մէջը կը յաջողէ
կամենալը ու ընելը, իր հաճութեանը հա-
մար։ Ամէն բան առանց տրտունջելու ու 14
մտմտալու ըրէք։ Որ ըլլաք անբիծ ու 15
անարատ՝ Աստուծոյ որդիները, առանց
մեղադրանքի կամակոր ու մոլորեալ ազգին
մէջ. որոնց մէջը դուք լուսաւորներու
պէս երևնաք աշխարհիս մէջը։ Կենաց 16
խօսքը վրանին ունենալով ինծի պարծանք
ըլլալու համար Քրիստոսի օրը, որ պա-
րապ տեղը չվազեցի, և փուճ տեղը չաշխ-

17 խառնեցայ։ Բայց թէպէտ և ձեր հաւ-
տատքին պատարագին ու պաշտօնին վը-
րայ ընծայուիմ, կը խնդամ և ուրախ
18 եմ ձեր ամենուն հետը. Անանկ ալ
դուք խնդացէք ու իմ հետս ուրախ ե-
ղէք։
19 Արդ՝ կը յուսամ ես Տէր Յիսուսով, որ
Տիմոթէոսը շուտով ձեզի խրկեմ. որ իմ
սիրտս ալ հանգչի, երբոր ձեր վրայով բան
20 մը իմանալու ըլլամ։ Ինչու որ անոր նը-
ման սրտակից մէկը չունիմ, որ ընտանե-
21 բար ձեզի համար հոգ տանի։ Ինչու որ
ամէնը իրենցը կը փնտռեն, ու չէ՛ թէ
22 Յիսուս Քրիստոսինը։ Բայց անոր փոր-
ձը դուք ալ գիտէք, որ ինչպէս տղայ
մը հօրը՝ անա՛նկ ինծի հետ ծառայութիւն
23 ըրաւ աւետարանին մէջ։ Ասոր կը յու-
սամ ասիկայ խրկել, շուտ մը իմ ինչպէս
24 ըլլալս տեսնելուս պէս։ Բայց յոյս ու-
նիմ Տէրոջմէն որ ես ալ քիչ ատենէն
25 պիտի գամ։ Սակայն թէ աղէկ սեպեցի
հիմա ձեզի խրկել Եպափրոդիտոս եղբայրը՝
և գործի ընկերը ու զինուորակիցս՝ ձեր
խրկածը ու իմ պէտքս եղածին ծառայողը։
26 Որովհետև ինքն ալ շատ փափաք ունի
ձեր ամէնն ալ տեսնելու. ու հոգ կ՚ընէր,
որ դուք լսած էիք թէ ինքը հիւանդացաւ։
27 Ու յիրաւի ինքը հիւանդացաւ մահուան
մօտ, բայց Աստուած ողորմեցաւ անոր.
չէ՛ թէ միայն անոր՝ հապա ինծի ալ, որ
տրտմութիւն տրտմութեան վրայ չքաշեմ։

Digitized by Google

Ասոր համար շուտով խրկեցի՝ որ դուք զանիկայ 28
տեսնելով նորէն ուրախ ըլլաք, ու ես ալ ա-
ւանց տրտմութեան ըլլամ: Ընդունեցէ՛ք 29
զանիկայ Տէրոջմով ամէն խնդութիւնով,
ու անանկները պատուականներու կարգը
բռնեցէ՛ք. Որ Տէրոջը գործքին համար 30
մինչև մահուան մօտեցաւ՝ ոգւով չափ ան-
խնայելով. որ ձեր ինծի ծառայելու պա-
կասութիւնը ինքը լեցնէ:

## ԳԼ. Գ.

Ուստի ի՛մ եղբայրներս՝ ուրախ եղէք 1
Տէրոջմով. ան նոյն բաները ձեզի գրել
ինծի ձանձրութիւն չէ՛, ու ձեզի շատ ա-
պահովութիւն է: Զգուշացէ՛ք ան շու- 2
ներէն. զգուշացէ՛ք ան չար մշակներէն.
զգուշացէ՛ք ան կրճատութենէն: Ինչու 3
որ թլփատութիւնը մենք ենք, որ հո-
գիով Աստուած կը պաշտենք, ու կը պար-
ծենանք Քրիստոս Յիսուսով, և մարմնոյ
վրայ չէ՛ պարծանքնիս: Թէպէտ ես ալ 4
նոյն վստահութիւնը ունիմ մարմնիս վը-
րայ. թէ որ մէկը սեպէ թէ ուրիշ կերպ
վստահութիւն ունենայ իր մարմնին վրայ,
ալ աւելի ես. Ութ օրուան թլփատուած, 5
Իսրայէլի ազգէն, Բենիամինի ցեղէն,
Եբրայեցի Եբրայեցիներէ, օրէնքին նայե-
լով փարիսեցի. Նախանձաւոր ըլլալու 6
կողմանէ՝ եկեղեցին կը հալածէի, օրէնքին
արդարութեանը կողմանէ անարատ՝ էի:
Բայց ինչ որ ինծի շահ էր՝ անիկայ Քրիս- 7

Digitized by Google

8 քրիստոսի համար վնաս կը սեպեմ ։ Նաև
բոլոր բաները ալ վնաս կը սեպեմ՝ Յիսուս
Քրիստոսի իմ Տէրոջս գերազանց գիտու-
թեանը համար . որուն համար ամէն բա-
ներէն զրկուեցայ , և աղտեղութիւն կը սե-
9 պեմ , որ Քրիստոսը շահիմ , Ու իր մէջը
գտնուիմ . չէ թէ օրէնքէն եղած իմ ար-
դարութիւնս ունենամ , հապա Քրիստո-
սի հաւատքովը եղած ան արդարութիւնը՝
10 որ Աստուծմէ է . Հաւատքով ճանչնալու
զանիկայ՝ և անոր յարութեան զօրութիւնը՝
ու անոր չարչարանքին հաղորդ ըլլալը ,
անոր մահուան կերպարանքը առնելու .
11 Որ ըլլայ թէ մեռելներուն յարութեանը
12 հասնիմ ։ Ոչ չէ թէ ես արդէն առեր եմ ,
կամ արդէն կատարեալ եղեր եմ , հապա
ետևէ ինկած եմ որ հասնիմ . մանաւանդ
թէ Քրիստոս Յիսուսէն ալ բռնուած ըլ-
13 լամ ։ Եղբայրներ՝ ես իմ անձս չեմ
սեպեր որ հասեր եմ . բայց մէկ բան մը
կայ , որ ետևի եղածները մոռցած եմ , ու
14 առջևի եղածներուն կը դիմեմ . Միտքս
դնելով կը վազեմ դէպ'ի Աստուծոյ կոչման
կէտին հասնելու Քրիստոս Յիսուսով ։
15 Ասոր դուք ամէնքդ՝ որ կատարեալ էք ,
ասիկայ մտածեցէք , և թէ որ ուրիշ մէկ
բան մը խորհելու ըլլաք՝ անիկայ ալ ձե-
16 զի պիտի յայտնէ Աստուած ։ Միայն թէ՝
որ բանի որ մենք հասանք՝ անիկայ մտա-
17 ծենք , ու ան կանոնին միաբանինք ։ Ին-
ծի՝ նմանող եղէք՝ եղբայրներ , ու նայեցէք

Digitized by Google

անանկներուն՝ որ այն ճամբովը կը քալեն ,
ինչպէս որ մեզ ձեզի օրինակ ունիք ։ Ինչ- 18
չու որ շատերը կը քալեն , որոնց համար
շատ անգամ ձեզի կ'ըսէի , և հիմա լալով
ալ կը զրուցեմ , այսինքն Քրիստոսի խա-
չին թշնամիներուն համար ։ Որ անոնց 19
վերջը կորուստ է . որոնց աստուածը՝ ի-
րենց փորն է , ու անոնց փառքը՝ իրենց
ամօթն է . որոնք միայն երկրաւոր բանե-
րը կը մտածեն ։ Բայց մեր կենցաղավա- 20
րութիւնը երկինքն է . ուսկից Փրկիչը
կը սպասենք՝ Տէր Յիսուս Քրիստոսը . Որ 21
պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր
փառաւոր մարմնին կերպարանքին պէս
ըլլալու , այն զօրութիւնովը՝ որ կարող է
ամէնը իր տակը հնազանդեցընելու ։

## ԳԼ. Դ

Ուստի իմ սիրելի ու բաղձալի եղբայր- 1
ներս , իմ ուրախութիւնս ու պսակս . ա-
սանկ հաստատո՛ւն կեցէք Տէրոջմով սի-
րելիներս ։
Եւոդիային կ'աղաչեմ , ու Սիւնտիքէին 2
կ'աղաչեմ՝ որ խորհուրդնին մէկ ըլլայ Տէ-
րոջմով ։ Նաև քեզի ալ կ'աղաչեմ՝ իմ 3
միաբանս և լծակիցս , դուն ալ օգնական
եղիր անոնց՝ որոնք որ իմ հետս աշխատե-
ցան աւետարանին մէջ Կղեմէսին՝ և իմ
ուրիշ գործակիցներուս հետ , որոնց ա-
նունները կենաց գրքին մէջն է ։ Ուրախ 4
եղէք Տէրոջմով ամէն ատեն , նորէն կ'ը-

Digitized by Google

5 սեմ՝ Ուրախ եղէք։ Ձեր հեզութիւնը
ամէն մարդոց թող յայտնի ըլլայ. Տէրը
6 մօտ է։ Բան մը մի՛ հոգաք. հապա ա-
մէն աղօթքով ու խնդրուածքով, գո-
հութիւնով ձեր խնդրուածքը Աստուծոյ
7 յայտնի ըլլայ։ Եւ Աստուծոյ խաղաղու-
թիւնը որ ամէն միտքէն վեր է՝ ձեր սիր-
տերը ու միտքը Քրիստոս Յիսուսով պահ-
8 պանէ։ Ասկէ ետեւ եղբայրներ՝ ի՛նչ որ ճշմար-
տութիւնով է, ի՛նչ որ պարկեշտութիւ-
նով, ի՛նչ որ արդարութիւնով, ի՛նչ որ
սրբութիւնով, ի՛նչ որ սիրով, ի՛նչ որ բա-
րի համբաւով, ի՛նչ որ քաջութիւնով, ի՛նչ
որ գովութիւնով, անոնց վրայ խորհեցէք։
9 Ի՛նչ որ սորվեցաք ու առիք՝ և լսեցիք ու
տեսաք իմ վրաս, ա՛ն ըրէք. և խաղա-
ղութեան Աստուածը ձեր հետը ըլլայ։
10 Շատ ուրախ եղայ ես Տէրոջմով, որ
դուք ալ մտածեցիք ինծի համար հոգ քա-
շելու, ինչպէս որ կը հոգայիք ալ. միայն
11 թէ պատեհութիւն չունէիք։ Ոչ՝ թէ
կարօտութեան համար կ'ըսեմ. ինչու որ
ես սորվեցայ գոհ ըլլալ անով որ կրնամ
12 ունենալ։ Գիտեմ պակասութիւն քաշել.
գիտեմ շատը ունենալ. ամէն բանի մէջ
ամէն կերպով աղէկ սորվեր եմ՝ թէ կշտա-
նալը, թէ անօթենալը, թէ շատ ու-
նենալը, և թէ պակասութիւն քաշելը։
13 Ամէն բանի կարող եմ անով որ զիս զօ-
14 րացուց։ Բայց աղէկ ըրիք, որ իմ նե-
15 ղութեանս մէջ ինծի հաղորդ եղաք։ Դուք

ալ գիտէք Փիլիպպեցիներ, որ աւետարա-
նին սկիզբը երբոր ես Մակեդոնիայէն ե-
լայ, մէկ եկեղեցի մըն ալ հետս հաղոր-
դութիւն չըրաւ տալու ու առնելու հա-
մար. հապա միայն դուք։ Որ Թեսաղո- 16
նիկէի մէջ ալ մէկ երկու հեղ ինծի պէտք
եղածը բերել տուիք։ Չէ՛ թէ ես տուրք 17
կը փնտռեմ, հապա պտուղը կը փնտռ-
եմ՝ որ ձեր հաշիւին վրայ աւելնայ։
Բայց ես ամէն բան առած եմ, ու առա- 18
տօրէն ունիմ. ընդունեցի ձեր ղրկածները
Եպափրոդիտոսին ձեռքովը՝ ու լեցուեցայ.
որ ձեզմէ անուշ հոտ մըն է, ընդունելի
պատարագ՝ Աստուծոյ հաճելի։ Իսկ իմ 19
Աստուածս ձեր ամէն պիտոյքը լեցնէ՝ իր
մեծութեան չափովը՝ փառքով, Քրիստոս
Յիսուսի ձեռքովը։ Եւ Աստուծոյ ու մեր 20
Հօրը փառք յաւիտեանս յաւիտենից. ա-
մէն։

Բարեւ տուէք ամէն սուրբերուն՝ Քրիս- 21
տոս Յիսուսով։ Ձեզի բարեւ կ՚ընեն իմ 22
հետս եղող եղբայրները։ Ձեզի բարեւ 23
կ՚ընեն բոլոր սուրբերը. մանաւանդ ա-
նոնք՝ որ կայսրին տունէն են։ Տէր Յի- 24
սուս Քրիստոսին շնորհքը ձեր հոգիին հետ
ըլլայ. ամէն։

# ՊՕՂՈՍ
# ԱՌԱՔԵԱԼԻՆ ԹՈՒՂԹԸ
## ԱՌ
# ԿՈՂՈՍԱՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը
Աստուծոյ կամքով, և Տիմոթէոս եղբայ-
2 րը․ Կողոսացի սուրբ ու հաւատացեալ
3 եղբայրներուն Քրիստոսով․ Շնորհք և
խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօր-
մէն՝ և Տէր Յիսուս Քրիստոսէն ։

Կը գոհանանք Աստուծմէ ու մեր Տէր
Յիսուս Քրիստոսին Հօրմէն ամէն ատեն
4 ձեզի համար աղօթք ընելով․ Երբոր
լսեցինք ձեր հաւատքը որ Քրիստոս Յի-
սուս մեր Տէրոջը վրայ, և ան սէրը՝ որ
5 դէպ ՚ի ամէն սուրբերուն ունիք․ Ան յոյ-
սին համար՝ որ երկինքը կը պահուի ձեզի․
որուն վրայով լսեցիք աւետարանին ճըշ-
6 մարտութեան խօսքովը, Որ ձեզի հասաւ․
ինչպէս որ բոլոր աշխարհի մէջ կ՚աճի ու
պտուղաբեր կ՚ըլլայ, ինտոր ձեր մէջն ալ․
ան օրուընէ որ դուք լսեցիք ու ճանչցաք
Աստուծոյ շնորհքը ճշմարտութիւնով․

Digitized by Google

Ինչպէս որ սորվեցաք Եպափրասէ սիրելիէն՝ 7
մեր ծառայակիցէն, որ ձեզի համար հա-
ւատարիմ պաշտօնեայ մըն է Քրիստոսի. Որ 8
ինքն ալ մեզի պատմեց ձեր սէրը Հոգիով։
Անոր համար մենք ալ այն օրուընէն որ 9
լսեցինք՝ չենք դադարիր ձեզի համար ա-
ղօթք ընելէն ու խնդրուածք մատուցանե-
լէն, որ կատարեալ ըլլաք անոր կամքին
գիտութեամբը՝ բոլոր իմաստութիւնով ու
հոգևոր հանճարով։ Որ դուք Տէրոջը 10
արժանի ճամբով մը քալէք՝ ամէն բանի
մէջ զինք հաճեցընելով, ամէն բարի
գործքերու մէջ պտղաբերելով, ու Աստուծոյ
Աստուծոյ գիտութիւնովը։ Ամէն ուժով 11
ուժովցած՝ իր փառաւոր ոյժին զօրութիւնովը,
ուրախութեամբ ամէն բանի համբերելու
ու երկայնամտութեան ըլլալու։ Գոհանալով 12
Հօր Աստուծմէն, որ մեզ կանչեց լոյսին
մէջ բնակող սուրբերուն վիճակին մասնա-
կից ըլլալու։ Որ մեզ ազատեց խաւարին 13
իշխանութենէն, ու մեզ իր սիրելի Որ-
դւոյն թագաւորութեանը փոխադրեց։
Որ անով մենք փրկութիւն ունինք իր ա- 14
րիւնովը, ու մեղաց թողութիւն իր մա-
հովը։ Որ ինքը աներևոյթ Աստուծոյ 15
պատկերն է՝ բոլոր արարածներուն առա-
ջինեկը։ Ինչու որ անով ամէն բան 16
հաստատուեցաւ, ինչ որ երկինքը ու ինչ
որ երկրի վրայ. անոնք որ կ'երևնան՝ և
անոնք որ չեն երևնար, թէ՛ աթոռները՝
թէ տէրութիւնները՝ թէ պետութիւնները՝

Digitized by Google

թէ իշխանութիւնները, բոլոր բաները ա-
17 նով ու անոր համար ստեղծուեցան. Ու
ինքը ամէն բանէն առաջ է, և ամէն
18 բան անով կեցեր է լման. Ու ինքն
է մարմնոյն այսինքն եկեղեցիին գլուխը,
որ ինքը սկիզբն է՝ մեռելներէն առջինեկը,
որ ինքը ըլլայ ամէն բանի մէջ նախապա-
19 տիւ. Վասն զի Հայրը հաճեցաւ որ Աս-
տուածութեան բոլոր լեցունութիւնը անոր
20 մէջը բնակի. Ու անով ամէնը հաշտեցը-
նէ իրեն հետ, խաղաղութիւն ընելով իր
խաչին արեան միջոցաւ անով, անոնց որ
երկրի վրայ են՝ ու անոնց որ երկինքն են։
21 Ու ձեզ ալ՝ որ ատեն մը օտարացած
էիք, ու չար գործքերով թշնամիներ ձեր
22 խորհուրդներովը. Հիմա ալ հաշտեցուց
իր մարմինին անդամներովը՝ իր մահուամ-
բը, որ ձեզ անոր դիմացը սուրբ ու ան-
23 բիծ և անարատ կայնեցընէ. Թէ որ կե-
նաք հաւատքին մէջը արմատ կապած՝ ու
հաստատուած և անդին խախտելու աւե-
տարանին յոյսէն՝ որ լսեցիք, որ երկինքին
տակը եղած բոլոր ստեղծուածներուն քա-
րոզուեցաւ. որուն ես Պօղոսս սպասաւոր
24 եղայ։ Ու ալ հիմա ուրախ եմ՝ իմ ձե-
զի համար քաշած չարչարանքներուս վրայ,
ու Քրիստոսի քաշած նեղութիւններուն
պակասութիւնը իմ մարմինիս մէջը կը լե-
ցընեմ՝ անոր մարմինին համար, որ եկե-
25 ղեցին է. Որուն ես Պօղոսս սպասաւոր ե-
ղայ Աստուծոյ տնտեսութիւնովը՝ որ ինծի

Digitized by Google

տրուեցաւ ձեզի համար Աստուծոյ խօսքը
լման քարոզելու. Այն խորհուրդը որ ծածուկ 26
կեցած էր յաւիտենական դարերէն ու
ազգերէն հիմա, որ հիմա իր սուրբերուն
յայտնուեցաւ. Որոնց ուզեց Աստուած 27
ցուցընել, թէ ինչ է անոր խորհուրդին
աներեւոյթ փառքին մեծութիւնը հեթա-
նոսներուն մէջ. որ ան Քրիստոս է, ձեր
մէջը՝ փառքին յոյսը. Որ անիկայ մենք 28
կը քարոզենք, ու ամէն մարդիկ կը խրատ-
ենք, և կը սորվեցընենք ամէն մարդիկ
բոլոր հոգևոր իմաստութիւնով, որ ամէն
մարդ կատարեալ ներկայացնենք Քրիստոս
Յիսուսով. Որուն համար կ'աշխատիմ ես 29
պատերազմ ընելով իր յաջողութիւնովը՝
որ զօրութիւնով իմ մէջս կը յաջողցնէ։

## ԳԼ. Բ

Կ'ուզեմ որ գիտնաք դուք՝ թէ ինչպէս 1
մեծ հոգ ունիմ վրաս ձեզի համար ու Լաւ-
ոդիկեցւոց համար, ու անոնց համար՝
որ իմ երեսս մարմնով չեն տեսեր. Որ 2
անոնց սիրտերը միխիթարուին՝ սիրով միա-
ղեկանալով, ու կատարեալ իմաստութեան
բոլոր մեծութիւնովը՝ որ Աստուծոյ խոր-
հուրդը գիտնալու Քրիստոս Յիսուսով։
Որուն մէջը իմաստութեան ու գիտութեան 3
բոլոր գանձերը պահուած են։ Ասիկա 4
կ'ըսեմ, որ չըլլայ թէ մէկը խաբէական
խօսքերով ձեզ մոլորցընէ։ Որ թէպէտ 5
մարմնով հեռու եմ, բայց հոգւով ձեզի

Digitized by Google

ռու եմ․ [illegible] ուրախանալով կը տեսնեմ ձեր բարեկարգութիւնը [illegible] , ու ձեր հաւատքին հաստատութիւնը Քրիստոսի [illegible]
6 սուրբ փառք ։ Ասոր ինչպէս որ ընդունեցիք Քրիստոս Յիսուս Տէրը, անոր դէմ
7 ցէք ։ Արմատ կապած ու անոր վրայ շինուած և հաւատքին մէջ հաստատուած ինչպէս որ սորվեցաք , անոր մէջը առաւելցէք
8 գոհութիւնով ։ Զգուշացէք՝ չըլլայ որ մէկը ձեզ կողոպտէ՝ փիլիսոփայութիւնով ու փուճ խաբէութիւնով , որ մարդոց աւանդութեանը պէս է ու աշխարհիս սկզբունքներուն պէս , և չէ թէ Քրիստոսի [illegible]
9 պէս ։ Վասն զի անոր մէջը կը բնակի Աստուածութեանը բոլոր լիութիւնը
10 մարմնապէս ։ Ու դուք ալ անով լցուած էք , որ ինքը գլուխն է բոլոր իշխանութեան
11 ու պետութեան ։ Ու անով թլփատուեցաք անձեռագործ թլփատութիւնով , մարմնոյ մեղքերուն մարմինը մերկացնելով , Քրիստոսի թլփատութիւնովը ։
12 Խառնուելով անոր հետ մկրտութեամբ , որով հետ ալ յարութիւն առիք Աստուծոյ զօրութեանը հաւատալովը , որ զինքը
13 զանիկայ մեռելներէն յարոյց ։ Ու ձեզ որ մեռած էիք մեղքերու մէջ ու ձեր մարմնին անթլփատութեանը մէջ , անոր հետ կենդանացուց [illegible] մեր բոլոր յանցանքները
14 [illegible] ջնջելով մեր դէմ եղած ձեռագիրը , [illegible]

որ մեզի հակառակ կեցեր էր՝ ջնջեց, զա-
նիկայ մէջ տեղէն վերցուց՝ ու խաչափայ-
տին վրայ գամեց։ Իշխանութիւնները ու 15
պետութիւնները մերկացուց. յայտնապէս
խայտառակեց յաղթելով անոնց իր ան-
ձովը՝ իր յարութիւն առնելովը։ Ասոր 16
համար մէկը ձեզ թող չդատէ ուտելու կամ
խմելու՝ կամ տօներու բաժանմունքներու,
կամ՝ ամսագլուխներու կամ շաբաթներու
պատճառաւ. Որ գալու բաներուն շուքերն 17
են. բայց մարմինը Քրիստոսինն է։
Չըլլայ որ մէկը ձեզ խաբէ. որ ուզէ 18
խոնարհութիւնով ու հրեշտակներու կրօն-
քով՝ չտեսած բաներուն ներսէն ըլլալ
զուր տեղը, իր մարմնին միտքովը փուճ
տեղը հպարտանալով. Եւ չբռնէ այն 19
գլուխը այսինքն Քրիստոսը, ուսկից որ
բոլոր մարմինը յօդուածներով ու խառ-
նելով բաղնուած ու մէկ կապուած Աս-
տուծոյ աճումովը կ'աճի։ Ուրեմն որ դուք 20
Քրիստոսի հետ ան աշխարհիս սկզբունք-
ներէն մեռաք, ալ ինչու համար աշխար-
հիս մէջ ապրողներու պէս անոնց կը հնազանդիք,
ըսելով. Մի՛ մօտեցիր, համը մի՛ առ- 21
ներ, մի՛ դպչիր. (Որոնց ամէնը ապա- 22
կանութեան համար են;) մարդոց պատ-
ուիրանքներուն ու վարդապետութիւններուն համեմատ։
Որ մէկ իմաստութիւն մը կը ցուցնէ իր 23
կամքովը հնարուած կրօնքովը, ու խոնարհ-
հութիւնովը, և մարմինին չխնայելովը,
ու չէ թէ պատուոյ մը համար մարմինին
պէտք եղածը լեցնելու։

## Գլ. Գ.

1 Ուստի որ Քրիստոսի հետ յարութիւն առիք՝ ուրեմն վերի բաները փնտռեցէք, ուր որ Քրիստոս կը նստի Աստուծոյ աջ
2 կողմը։ Վերի բաները մտածեցէք, ոչ՝
3 թէ ան որ աս երկրիս վրայ է։ Ինչու որ դուք մեռաք, ու ձեր կեանքը պահուած է
4 Աստուծոյ քովը Քրիստոսի հետ։ Երբոր Քրիստոս՝ մեր կեանքը յայտնուի, ան ատենը դուք ալ անոր հետ փառքով պիտի յայտնուիք։
5 Ուստի ձեր երկրաւոր անդամները մեռցուցէք. մեկդի՝ ձգեցէք պոռնկութիւնը, պղծութիւնը, աղտեղութիւնը, չար բաներու ցանկութիւնը, ու ագահութիւնը՝
6 որ կռապաշտութիւն է. Որոնց համար Աստուծոյ բարկութիւնը անհնազանդութեան
7 որդիներուն վրայ կու գայ. Որ ատենն մը դուք ալ անոնցմով կ'երթայիք, երբոր
8 անոնց մէջը կ'ապրէիք։ Ուստի մեկդի՝ թօթուեցէք դուք ալ ան ամէնը. բարկութիւնը, սրտմտութիւնը, չարութիւնը, հայհոյութիւնը, խեղկատակութիւնը ձեր
9 բերաններէն։ Իրարու սուտ մի՛ զրուցէք. հին մարդը իր գործքերովը ձեր վրայէն
10 հանեցէք. Ու հագէք ան նորը գիտութեամբ նորոգուած՝ իր Ստեղծողին
11 պատկերին պէս. Ուր ոչ Հրեայ կայ, ոչ ալ հեթանոս, ո՛չ թլփատութիւն, եւ ո՛չ անթլփատութիւն, ո՛չ Բարբարոս,


Digitized by Google

[illegible]
[illegible]
[illegible] 12
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 13
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 14
[illegible]
[illegible] 15
[illegible]
[illegible]
[illegible] 16
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 17
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 18
[illegible]
[illegible] 19
[illegible] 20
[illegible]
[illegible]

Digitized by Google

21 [illegible]
22 [illegible]
[illegible]
23 [illegible]
24 [illegible]
25 [illegible]
[illegible]

[illegible]

1 [illegible]
2 [illegible]
3 [illegible]
4 [illegible]
5 [illegible]
6 [illegible]

Digitized by Google

[illegible]
[illegible]
[illegible] 7
[illegible] ձեզի Տիւքիկոս [illegible]
[illegible] եւ հաւատարիմ պաշտօնեան ու ծա-
ռայակիցը Տէրոջմով [illegible] 8
համար ձեզի ղրկեցի , որ ձեր վիճակը
գիտնայ ու ձեր սրտերը մխիթարէ , Ո- 9
նեսիմոսին հաւատարիմ ու սիրելի եղբօրը
հետ՝ որ ձեզմէ է . անոնք [illegible] ա-
մէն բաները ձեզի պիտի իմացնեն որ
հոս կայ : Բարեւ կ՚ընէ ձեզի Արիստար- 10
քոս՝ իմ գերութեան ընկերս , եւ Մարկոս՝
Բառնաբասին եղբօրորդին , ( որուն հա-
մար պատուէր առիք . թէ որ ձեզի գա-
լու ըլլայ , ընդունեցէք անիկայ . ) Եւ 11
Յիսուսը՝ որ Յուստոս կոչուած է , ասոնք
թլփատութեններէն են . որ անոնք միայն
ինծի գործակից եղան Աստուծոյ թագա-
ւորութեանը մէջ , որոնք ինծի մխիթա-
րութիւն ալ եղան : Բարեւ կ՚ընէ ձեզի 12
Եպափրաս՝ Յիսուս Քրիստոսի ծառան ,
որ ձեզմէ մէկն է . անիկա ամէն ատեն աղօթքի
մէջ ձեզի համար կռիւ ըներով , որ դուք
կատարեալ ու լման ըլլաք Աստուծոյ բո-
լոր կամքին մէջ : Իրեն համար ես կը 13
վկայեմ , թէ շատ նախանձ ունի ձեզի համար՝
ու Լաւոդիկեցւոց համար՝ եւ անոնց հա-
մար՝ որ Յերապոլիս են : Բարեւ կ՚ընէ 14
ձեզի սիրելի Ղուկաս բժիշկն ալ , ու Դե-
մաս : Բարեւ տուէք եղբայրներուն՝ որ 15

Digitized by Google

[illegible]
16 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
Ց17 [illegible]
[illegible]
Ձ [illegible]
18 [illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

---

[illegible]

# ՊՕՂՈՍ
# ԱՌԱՔԵԼՈՅՆ
# ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ
## ԱՌ
# ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս՝ 1
Թեսաղոնիկեցւոց եկեղեցիին՝ մեր Հայր
Աստուծմով ու Տէր Յիսուս Քրիստոսով.
Շնորհք և խաղաղութիւն ձեզի ։ 2
Ու գոհանանք Աստուծմէ ամէն ատեն
ձեր ամենուն համար՝ անդադար յիշե-
լով մեր աղօթքներուն մէջը . Յիշելով ձեր 3
հաւատքին գործը ու սիրոյ աշխատութիւ-
նը և մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայ եղած
համբերութիւնը , Աստուծոյ ու մեր Հօրը
առջևը ։ Գիտէք Աստուծմէ սիրուած եղ- 4
բայրներ՝ ձեր ընտրութիւնը . Որ մեր ա- 5
ւետարանը չէ՛ թէ միմիայն խօսքով եղաւ
ձեզի , հապա զօրութիւնով ալ՝ և Հո-
գւով Սրբով , ու շատ կատարելութիւ-
նով ; ինչպէս որ գիտէք ալ , թէ ինտոր
կեցանք ձեր մէջը ձեզի համար ։ Դուք 6

Digitized by Google

այլ մեծ ու շատ նեղութեան մէջ ընդունեցիք խօսքը
սուրբ Հոգւոյն ուրախութեամբ, մեզ ու Տէրոջը
7 Որպէս ուրախութեամբ, Մակեդոնիա, որ ըստ
օրինակ եղաք բոլոր հաւատացեալներուն՝
որոնք Մակեդոնիայի ու Աքայիայի մէջ
8 էին։ Քանզի ձեզմէ հռչակուեցաւ Տէրոջը
խօսքը. ոչ թէ միայն Մակեդոնիայի ու
Աքայիայի մէջ, հապա ամէն տեղ. ձեր
հաւատքը, որ դէպ ի Աստուած է՝ տարա-
ծուեցաւ, այնպէս որ այլ պէտք չէ մեզի
9 բան մը խօսիլ։ Իրենք անոնք կը պատմա-
ռեն մեզի համար, թէ ինչպէս եղաւ մեր
ձեր քով մտնելը, եւ ինչպէս դարձաք ան
կուռքերէն Աստուծոյ դարձաք՝ կենդանի
10 ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու. Եւ
սպասելու անոր Որդւոյն՝ երկինքէն. որ
մեռելներէն յարոյց զանիկայ՝ այսինքն
Յիսուսը, որ ազատէ մեզ գալու
բարկութենէն։

Գ Լ. Բ.

1 Դուք գիտէք, եղբայրներ, ձեր
մէջ մտնելնիս՝ որ պարապ եղած չէ-
2 ղաւ։ Հապա առաջուց չարչարուելով ու
նախատուելով՝ ինչպէս որ դուք
ալ գիտէք՝ Փիլիպպեցիներուն մէջ, համ-
արձակութիւն ըրինք մեր Աստուծոյն
ձեզի պատմելու Աստուծոյ աւետարանը
3 շատ պատերազմով։ Քանզի մեր յոր-
դորակը ոչ մոլորութենէ է, ու ոչ
պղծութենէ, եւ ոչ խարդախութեամբ։

Digitized by Google

Հապա ինչպէս որ մենք Աստուծմէ ընտ- 4
րուեցանք մեզի աւետարանը հաւատացուելու,
այնպէս ալ կը խօսինք, չէ՛ թէ մարդոց
հաճոյ ըլլալու համար, հապա Աստուծոյ՝
որ մեր սրտերը կը քննէ, ինչու որ մենք 5
բնաւ շողոքորթութեան խօսքեր չգործա-
ծեցինք ձեզի, ինչպէս դուք ալ գիտէք,
և չէ՛ թէ ագահութեան պատճառով. ինչ-
պէս որ Աստուած ալ կը վկայէ, Ոչ մար- 6
դոցմէ փառք չխնդրեցինք, ո՛չ ձեզմէ, ո՛չ
ալ ուրիշներէն ։ Կրնայինք՝ իբրև Քրիստոս- 7
ին առաքեալներ ծանրութիւն տալ, բայց
մենք հեզ եղանք ձեր մէջը, ինչպէս մէկ
դայեակ մը՝ որ երախաներ կը մեծցընէ,
Նոյնպէս ալ մենք ձեր վրայ կը գթայինք. 8
Աղէկ կ'երևնար մեզի՝ չէ՛ թէ միայն Աս-
տուծոյ աւետարանը ձեզի տալ, հապա
մեր անձերն ալ. ինչու որ դուք մեր սի-
րելիները եղաք ։ Յիշեցէք եղբայրներ՝ 9
մեր աշխատութիւնը ու ջանքը. որ գի-
շեր ու ցորեկ կը գործէինք՝ ձեզմէ մէկու
մը ծանրութիւն չտալու համար, և ձեզի
Աստուծոյ աւետարանը կը քարոզէինք ։
Դուք ինքերնիդ կը վկայէք, Աստուած 10
ալ կը վկայէ թէ ինչպէս սրբութեամբ ու
արդարութեամբ և անարատութեամբ
վարուեցանք ձեզի հետ՝ որ հաւատացիք.
Ինչպէս գիտէք ալ, որ ձեզմէ ամէն մէկը՝ 11
[illegible] հայր մը իր զաւակները՝ նման կը 12
յորդորէինք ու կը մխիթարէինք. և վկա-
յութիւն կը դնէինք որ դուք Աստուծոյ

Digitized by Google

վայելածին պէս քալէք, որ իրեն ձեզ իր
թագաւորութեանը ու փառքին կանչեց։
13 Ասոր համար մենք ալ Աստուծմէ կը գո-
հանանք անդադար, որ մեզմէ Աստուծոյ
խօսքը լսելով ընդունեցիք, ոչ թէ մար-
դոց խօսքին պէս. հապա իրաւ ճշմարտա-
պէս Աստուծոյ խօսք, որ յաջողուած ալ
14 է ձեր մէջը որ հաւատացիք։ Ինչու որ
դուք եղբայրներ՝ նմանող եղաք Աստուծոյ
եկեղեցիներուն՝ որ Հրէաստանի մէջ են
Քրիստոս Յիսուսով. Ինչու որ դուք ալ
չարչարուեցաք նոյն չարչարանքներովը ձեր
ազգակիցներէն, ինչպէս որ անոնք ալ
15 Հրեաներէն. Որոնք որ Տէր Յիսուսն ալ
մեռցուցին՝ մարգարէներն ալ, և մեզ
հալածեցին, ու Աստուծոյ աչքէն ելան.
16 ու բոլոր մարդոց հակառակ եղան. Մե-
մեզ կ'արգիլեն հեթանոսներուն խօսելու՝
որ փրկուին. որ իրենց մեղքերը կատարեն
ամէն ատեն. Բայց հիմա բարկութիւնը
անոնց վրայ հասաւ է մինչև վերջը։
17 Իսկ մենք եղբայրներ՝ քիչ մը
ատեն ձեզմէ որբ մնացինք երեսով, ու ոչ
թէ սրտով. ալ աւելի ջանացինք ձեր երե-
18 սը տեսնելու մեծ փափաքով։ Անոր հա-
մար ես Պօղոս մէկ երկու անգամ ուզե-
ցինք ձեզի գալ, բայց Սատանան մեզ արգիլ-
19 եց։ Ինչու որ ո՞վ է մեր յոյսը, կամ
ուրախութիւնը՝ կամ մեր պարծանքին
պսակը, եթէ ոչ դուք Տէրոջմէն մեր
Տէր Յիսուս Քրիստոսին առջևը՝ անոր

Digitized by Google

գալուստին ատենը ։ Վասն զի դուք էք մեր 20
փառքերնիս ու ուրախութիւննիս ։

[illegible]

Ասոր համար ալ չկրնալով համբերելով՝ ա- 1
ղէկ երեւցաւ մեզի մինակ Աթենքը մնալ ։
Ու Տիմոթէոսը մեր եղբայրը ու Աստուծոյ 2
և Քրիստոսի աւետարանին գործակի-
ցը ղրկեցինք ձեզ հաստատելու ու մխի-
թարելու ձեր հաւատքին համար ։ Որ 3
մէկը նեղութիւններուն մէջ չխախտի ։
ինչու որ դուք ինքնիրնիդ գիտէք որ
մենք ասոր համար կեցեր ենք ։ Վա- 4
սն զի երբ որ ձեր քով էինք՝ ա-
ռաջուց ձեզի կը պատմէինք՝ թէ նեղու-
թիւններ պիտի քաշենք ։ Ինչ-
պէս որ եղաւ ալ ու գիտէք ։ Ասոր 5
համար ես ալ որ չէի կրնար համբերել՝
ղրկեցի ձեր հաւատքը գիտնալու, որ
չըլլայ թէ աս փորձողը ձեզ փորձած
ըլլայ, ու մեր աշխատութիւնը պարապ
ըլլայ ։ Բայց հիմա Տիմոթէոս 6
ձեզմէ մեզի եկաւ ու ձեր հաւատքին
և սիրոյն աւետիսը մեզի տուաւ, որ ա-
մեն ժամանակ մեր բարի յիշատակը միտ-
քերնիդ ունիք ։ կը փափաքիք մեզ տես-
նելու՝ ինչպէս որ մենք ալ ձեզ ։ Ասոր 7
համար եղբայրներ՝ ձեր վրայ մխիթարուե-
ցանք բոլոր մեր վիշտերուն ու նեղու-
թիւններուն մէջ ձեր հաւատքովը ։ Ինչ- 8
չու որ հիմա կ'ապրինք մենք, թէ որ

Digitized by Google

դրած ... հաստատուն կենանք Տէրոջմով.
9 Ինչ գոհութիւն կրնանք մատուցանել Աստուծոյ ձեր վրայով՝ այն ամէն ուրախութեան համար՝ որ կ'ուրախանանք ձեզի
10 համար մեր Աստուծոյ առջեւը. Գիշեր ու ցորեկ խիստ շատ կ'աղաչենք ձեր երեսը տեսնելու, ու ձեր հաւատքին պակասութիւնը
11 լեցնելու։ Բայց ինքը Աստուած ու մեր Հայրը, եւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս մեր ճամբանիս դէպ ի
12 ձեզի յաջողէ. Եւ ձեզի Տէրը աճեցնէ ու առաւելցնէ ձեր սէրը մէկզմէկու վրայ ու ամէնուն վրայ, ինչպէս որ մենք ալ ձեզի
13 վրայ ունինք. Հաստատելու ձեր սրտերը անարատ սրբութեամբ մեր Աստուծոյ ու մեր Հօրը առջեւը, մեր Տէրոջը Յիսուսի Քրիստոսի գալուստին՝ իր բոլոր սուրբերուն հետ մէկտեղ։

ԳԼ. Դ.

1 Այսուհետեւ, եղբայրներ, ձեզի կ'աղաչենք ու կը յորդորենք Քրիստոս Յիսուսով, որ ինչպէս մեզմէ առիք՝ թէ ինչպէս պէտք է ձեզի քալել ու Աստուծոյ հաճոյ ըլլալ, ինչպէս որ կը քալէք ալ, նոյնպէս աւելի
2 առատ մէջը շատնաք։ Դուք գիտէք թէ ինչ պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսով.
3 Վասն զի ասիկա է Աստուծոյ կամքը սուրբ ըլլալը, որ մեկնիք
4 պոռնկութենէն. Ու ձեզմէ ամէն մէկը գիտնայ իր անօթը սրբու-

սրբութեամբ ու պատուով ստանալ . Չէ՛ թէ 5
ցանկութեան ախտովը . ինչպէս ուրիշ
հեթանոսները՝ որոնք Աստուած չեն ճանչ-
նար ։ Ոչ ըլլայ որ այս բանին մէջը՝ չափէն 6
անցնի մէկը՝ ու իր եղբայրը զրկէ . ինչու
որ Տէրը այս բոլոր բաներուն վրայ վրէժ-
խնդիր է . ինչպէս առաջուց ըսինք ձեզի
ու վկայութիւն տուինք ։ Ինչու որ Աս- 7
տուած մեզ՝ պղծութեան չկանչեց , հապա
սրբութեան ըլլալու ։ Անոր համար որ կ'անարգէ՝ 8
չէ՛ թէ անիկայ մարդ մը կ'անարգէ , հապա
այն Աստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ
մեզի տուաւ ։

Իսկ եղբայրսիրութեան համար պէտք 9
չէ՛ ձեզի բան գրել . ինչու որ դուք ինք-
նիրնիդ Աստուծմէ սորված էք մէկզմէկ
սիրել . Արդէն ասոր բանը կ'ընէք բոլոր 10
բոլոր եղբայրներուն՝ որոնք որ Մակեդո-
նիայի ամէն կողմերն են ։ Կ'աղաչենք
ձեզի եղբայրներ՝ որ ալ աւելի ու առա-
ւելն ընէք . խաղաղ կենաք , ու ամէն 11
մէկը իր գործը գործէ , ու ձեր ձեռքերով
բանը գործէք . ինչպէս որ ձեզի պատուիրե-
ցինք . որ դուրսիններուն հետ պար-
կեշտութեամբ վարուիք . ու մէկ բանի մը
կարօտութիւն չունենաք ։

Չենք ուզեր եղբայրներ՝ որ անգէտ ըլ- 12
լաք ննջեցեալներուն վրայով . որ չտրտմիք
ինչպէս ուրիշները՝ որոնք որ յոյս չունին ։
Քանի որ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ 13
ու յարութիւն առաւ , նոյնպէս ալ Աս-

Digitized by Google

տուած Յիսուսով ննջեցեալները պիտի
14 բերէ անոր հետ ։ Բայց աս կը զրուցենք
Տէրոջը խօսքովը, թէ մենք որ ողջ մնա-
ցած ենք՝ Տէրոջը գալուն, անոնք ննջե-
15 ցեալներուն չենք հասնիր ։ Ինչու որ ին-
քը Տէրը հրամանով հրեշտակապետին ձայ-
նովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պի-
տի իջնէ, և Քրիստոսով մեռածները ա-
16 ռաջ յարութիւն պիտի առնեն ։ Ետքը
մենք ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով
մէկտեղ պիտի յափշտակուինք ամպերով
Տէրոջը առջևը օդին մէջը. և անանկ յա-
ւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք ։
17 Ասոր մէկզմէկ մխիթարեցէք աս խօսքե-
րով ։

## ԳԼ. Ե

1 Բայց ան ժամերուն ու ժամանակնե-
րուն համար եղբայրներ, պէտք չէ՛ բան
2 մը գրել ձեզի. Քանզի դուք ինքնիրեննիդ
աղէկ գիտէք՝ թէ Տէրոջը օրը գիշերուան
3 գողի պէս անանկ կը հասնի ։ Երբոր ըսե-
լու ըլլան՝ թէ խաղաղութիւն ու ապա-
հովութիւն է, ան ատենը կորուստը յան-
կարծակի անոնց վրայ պիտի հասնի՝ յղիին
4 ցաւին պէս, ու պիտի չազատին ։ Բայց
դուք եղբայրներ՝ խաւարի մէջ չէք, որ
ան օրը գողի մը պէս ձեր վրայ հասնի.
5 Ինչու որ դուք ամէնքդ լուսոյ որդիք էք,
ու ցորեկուան որդիք. գիշերուան չենք,
6 խաւարինը չենք ։ Ուրեմն չքնանանք ինչ-

Digitized by Google

պէս որ ուրիշները, հապա արթուն ու
զուարթուն ըլլանք ։ Վասնզի անոնք որ 7
կը քնանան՝ գիշերը կը քնանան. և անոնք
որ կ՚արբենան՝ գիշերը կ՚արբենան ։ Բայց 8
մենք որովհետև ցորեկուան ենք՝ արթուն
ըլլանք, և հաւատքին ու սիրոյն զրահը-
րը վրանիս հագնինք, ու փրկութեան
յուսոյն սաղաւարտը գլուխնիս դնենք ։
Ինչու որ Աստուած մեզ բարկութեան հա- 9
մար չդրաւ, հապա կենդանութեամբ
փրկուելու մեր Տէր Յիսուս Քրիստոսի
ձեռքովը. Որ ինքը մեզի համար մեռաւ. 10
որ թէ՝ արթուն ըլլանք և թէ քնանանք,
իր հետը մէկտեղ ապրինք ։ Անոր համար 11
մէկզմէկ մխիթարեցէք, ու մէկզմէկ շի-
նեցէք, ինչպէս որ կ՚ընէք ալ ։
Կ՚աղաչենք ձեզի եղբայրներ, որ ճանչ- 12
նաք ձեր աշխատաւորները ու վերակացու-
ները Տէրոջմով, ու ձեզի խրատ տուող-
ները. Եւ անոնք աւելի սիրելու արժանի 13
սեպեցէք՝ իրենց գործքին համար. իրարու
հետ խաղաղութիւն ըրէք ։ Կ՚աղաչենք 14
ձեզի եղբայրներ՝ անառակները խրատե-
ցէք, վատասիրտները մխիթարեցէք, տը-
կարներուն պաշտպան եղիք, ամենուն ալ
համբերո՛ղ եղիք ։ Զգո՛յշ եղիք՝ չըլլայ 15
որ մէկը չարին փոխարէն չարիք հատու-
ցանէ. հապա ամէն ատեն բարի բաներուն
ետևէն եղիք մէկմէկու հետ, ու ամենուն
հետ ։ (16) Ամէն ատեն ուրախ եղիք ։ Ան- 17
դադար աղօթք ըրէք ։ Ամէն բանի մէջ 18

Digitized by Google

գոհութիւն տուէք. ինչու որ աս է
Աստուծոյ կամքը Քրիստոս Յիսուսով
19 ձեր վրայ: Սուրբ Հոգին մի՛ մա-
20 րէք: Մարգարէութիւնները մի՛ անարգէք:
21 Ամէն բան փորձեցէք, աղէկը բռնեցէք.
22 Ամէն գէշ բաներէն ետ կեցէք: (23) Եւ
ինքը խաղաղութեան Աստուածը ձեզ բոլո-
րովին սուրբ ընէ, ու ձեր բոլոր հոգին
և շունչը ու մարմինը անարատ պահուի
մինչև մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալու-
24 ստեանը: Հաւատարիմ է ան՝ որ ձեզ
կանչեց. որ ինքը պիտի ընէ ալ անիկայ:
25 Եղբայրներ՝ աղօթք ըրէք մեր վրայ
26 ալ: Ողջոյն տուէք բոլոր եղբայրներուն
27 սուրբ համբուրով: Կ'երդմնցընեմ ձեզ
Տէրոջմով, որ աս թուղթը բոլոր սուրբ
28 եղբայրներուն առջևը կարդաք: Մեր Տէր
Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հետը
ըլլայ. ամէն:

Digitized by Google

# ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա

Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս՝ 1
Թեսաղոնիկեցւոց եկեղեցիին՝ մեր Հօրը
Աստուծմով ու Տէր Յիսուս Քրիստոսով.
Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ 2
մեր Հօրմէն՝ ու Տէր Յիսուս Քրիստո-
սէն ։

Պէտք է որ ամէն ատեն Աստուծմէ գո- 3
հանանք ձեզի համար՝ եղբայրներ, ինտոր
որ կը վայլէ ալ. ինչու որ ձեր հաւատքը
շատ աճելու վրայ է, և ձեր ամէն մէկուն
սէրը իրարու վրայ կը շատնայ. Անանկ որ 4
մենք ալ ձեզմով կը պարծենանք Աստու-
ծոյ եկեղեցիներուն մէջը՝ ձեր համբերու-
թեանը ու հաւատքին համար բոլոր ձեր
հալածանքներուն ու նեղութիւններուն
մէջ, որոնց որ դուք կը համբերէք. Որ է 5
Աստուծոյ արդար դատաստանին օրինակը.

Digitized by Google

որ դուք արժանի ըլլաք Աստուծոյ թա-
գաւորութեանը, որուն համար ալ
6 նեղութիւնը կը քաշէք։ Որ Աստուծոյ
առջեւ իրաւունք է, ձեզի նեղութիւն
տուողներուն նեղութիւն հատուցանել.
7 Եւ ձեզի՝ նեղութիւն քաշողներուդ՝ մեզի
հետ հանգիստ, մեր Տէր Յիսուսին եր-
կինքէն յայտնուելու ատենը իր զօրաւոր
8 հրեշտակներովը. Բոցեղէն կրակով վրէժ
առնելու անոնցմէ՝ որոնք Աստուած չեն
ճանչնար, և որ մեր Տէր Յիսուս Քրիս-
9 տոսի աւետարանին չեն հնազանդիր. Ա-
րոնք պիտի պատժուին յաւիտենական սա-
տակումով՝ Տէրոջը երեսէն ու անոր զօրու-
10 թեանը փառքէն. Երբոր ինքը գայ փա-
ռաւորուելու իր սուրբերուն մէջը, և հիա-
նալի ըլլալու բոլոր հաւատացեալներուն
մէջը, (ինչու որ մեր վկայութիւնը հա-
ւատարիմ եղաւ ձեր վրայ) այն օրը։
11 Աս պատճառովս ալ ամէն ատեն ձեզի հա-
մար աղօթք կ՚ընենք, որ մեր Աստուածը
ձեզ արժանի ընէ ձեր կոչումին, մինչև որ
իր բարութեան բոլոր հաճութիւնը կա-
տարէ, և հաւատքին գործքերը զօրու-
12 թիւնով. Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին
անունը փառաւորուի ձեր մէջ, և դուք
ալ անոր մէջ՝ մեր Աստուծոյն ու Տէր Յի-
սուս Քրիստոսին շնորհքովը։

## ԳԼ. Բ

1 Աղաչեմ ձեզի եղբայրներ՝ մեր Տէր

Digitized by Google

Յիսուս Քրիստոսին գալստեանը՝ ու մեր
անոր քովը՝ ժողովուելնուս համար, Չըլլայ 2
որ դուք շուտ մը խախտիք ձեր միտքէն,
ու չըլլայ որ վրդովուիք՝ ոչ հոգիով ու
ոչ խօսքով, ոչ ալ թուղթերով իբր թէ
մեզմէ գրուած. որպէս թէ Տէրոջը օրը ե-
կած հասած ըլլայ։ Չըլլայ որ մէկը ձեզ 3
խաբէ մէկ կերպով մը. Քանզի որ այն օրը պի-
տի չգայ՝ թէ որ ապստամբութիւնը առաջ
չգայ, ու յայտնուի անօրէնութեան Մար-
դը՝ կորստեան Որդին, Ան՝ հակառակորդը 4
հպարտացած ամենուն վրայ՝ որ աստուած
կ'ըսուի՝ կամ կը պաշտուի, մինչեւ անիկայ
Աստուծոյ տաճարին մէջ պիտի նստի, և
ինքզինքը ցուցընէ թէ Աստուած է։ Չէ՞ք 5
յիշեր՝ որ երբ ձեր քովն էի՝ ասիկայ կ'ըսէի։
Ու հիմա դուք ինքիրեններդ գիտէք ի՛նչ է 6
ան որ կ'արգիլէ, որ ինքը իր ատենին
յայտնուի։ Ինչու որ անօրէնութեան խոր- 7
հուրդը հիմակուընէ կը զօրանայ. բայց
ան որ հիմա կ'արգիլէ, պէտք վերցուի մինչեւ
ան ատենը որ մէջտեղէն վերնայ։ Ու 8
ետքը պիտի յայտնուի ան անօրէնը, որ
Տէր Յիսուս իր բերնին հոգիովը պիտի
սատկեցընէ զանիկայ, ու իր գալուն
յայտնութեամբը պիտի փճացընէ. Անոր 9
գալը Սատանային ազդեցութիւնովն է՝ բո-
լոր զօրութիւնով ու նշաններով ու սուտ
հրաշքներով. Ու կորուսեալներուն վրայ 10
անիրաւութեան բոլոր խաբէութիւններո-
վը. որովհետեւ անոնք ճշմարտութեան սէ-

Digitized by Google

րը չընդունեցին՝ որ ապրին, անոր համար
պիտի խրկէ անոնց Աստուած ուժով մո-
լորութիւն մը՝ որ ստութեան հաւատան։
11 Որ դատապարտուին ամէն անոնք՝ որ չը-
հաւատացին ճշմարտութեան, հապա անօ-
րէնութեան յօժարեցան։
12 Բայց մեզի պէտք է միշտ Աստուծմէ
գոհանալ ձեզի համար՝ Տէրոջմէն սիրուած
եղբայրներ. ինչու որ Աստուած առաջուց
մեզ ընտրեց փրկուելու Հոգիին սրբելո-
13 վը՝ ու ճշմարտութեան հաւատքովը. Ա-
րուն ձեզ կանչեց մեր աւետարանելովը՝
մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառքը ստա-
նալով փրկուելու։
14 Ուստի եղբայրներ՝ հաստատ կեցէք, ու
պինդ բռնեցէք այն աւանդութիւնները որ
սորվեցաք՝ թէ՝ խօսքով ու թէ մեր թուղ-
15 թովը. Բայց ինքը մեր Տէր Յիսուս
Քրիստոսը՝ ու մեր Հայրը Աստուած, որ
մեզ սիրեց՝ ու յաւիտենական մխիթարու-
թիւն տուաւ մեզի՝ և բարի յոյս շնորհ-
16 քով, Ձեր սիրտերը մխիթարէ՝ ու հաս-
տատէ ամէն բարի խօսքերու և գործքերու
մէջ։

## ԳԼ. Գ

1 Ուստի եղբայրներ՝ աղօթք ըրէք մեր
վրայ, որ Տէրոջը խօսքը յառաջանայ,
և ամէն տեղ փառաւոր ըլլայ, ինչպէս որ
2 ձեր մէջը. Որ անօրէն ու անզգամ մար-
դիկներէն ազատինք. ինչու որ ամէնք

Digitized by Google

հաւատք չունին ։ Բայց Տէրը հաւատա- 3
րիմ է , որ ձեզ պիտի հաստատէ՝ ու չա-
րէն ալ պահէ ։ Ձեր վրայ յոյս ունինք 4
Տէրոջմով , թէ ինչ որ ձեզի պատուիրե-
ցինք կ'ընէք՝ ու պիտի ընէք ալ ։ Եւ 5
Տէրը շիտկէ ձեր սիրտերը դէպ ի Աստու-
ծոյ սիրոյն ու Քրիստոսի համբերութեանը ։

Արդ պատուիրեմ ձեզի եղբայրներ՝ մեր 6
Տէր Յիսուս Քրիստոսի անունովը , որ ետ
քաշուիք ան ամէն եղբայրներէն՝ որոնք
անկարգութեամբ կը վարուին , ու ոչ թէ
այն աւանդութեանը պէս՝ որ մեզմէ առիք ։
Ինչու որ դուք ինքերնիդ գիտէք թէ 7
ձեզի ինչպէս պէտք է մեզի նման ըլլալ ,
ինչու որ մենք բնաւ ձեր հետը անկար-
գութեամբ չվարուեցանք ։ Ո՛չ ալ մէ- 8
կուն հացը ձրի կերանք ։ Հապա ջանքով
և աշխատանքով գիշեր ու ցորեկ կը գոր-
ծէինք՝ ձեզմէ մէկուն մը ծանրութիւն չը-
տալու համար ։ Ձէ՛ թէ որ մենք իշխա- 9
նութիւն չունէինք , հապա որ անձերնիս
ձեզի օրինակ ընենք՝ մեզի նման ըլլալու ։
Վասն զի երբոր մենք ձեր քովը էինք , 10
աս ձեզի կը պատուիրէինք , թէ ան որ
չուզեր գործ գործել , հաց ալ թող չու-
տէ ։ Բայց հիմա կը լսենք ձեզմէ մէկ 11
քանիներուն համար՝ որ անկարգութեամբ
կը վարուին ։ գործ մը չեն գործեր , հապա
ծուլացած՝ հետաքրքիր կը պտըտին ։ Ա- 12
նանկներուն պատուէր կու տանք՝ ու կ'ա-
ղաչենք Տէր Յիսուս Քրիստոսով , որ

Digitized by Google

հանդարտութեամբ գործեն, և իրենց հա-
13 ցը ուտեն ։ Բայց դուք՝ եղբայրներ՝ մի՛
14 ձանձրանաք բարիք գործելէն ։ Իսկ թէ որ
մէկը չհնազանդիր մեր խօսքին աս թուղ-
թովը, դուք նշանակեցէք՝ անիկայ . ու
անոր հետը մի՛ խառնուիք, որ ամչնայ ։
15 Բայց չըլլայ թէ թշնամիի պէս սեպէք
անիկայ . հապա եղբօր պէս խրատեցէք ։
16 Եւ ինքը խաղաղութեան Տէրը՝ ձեզի խա-
ղաղութիւն տայ՝ ամէն ատեն՝ ամէն բա-
ներու մէջ . Տէրը ձեր ամենուն հետը ըլ-
լայ ։
17 Աս ողջոյնը իմ՝ ձեռքիս՝ Պօղոսինն
է, որ ամէն թղթերուն մէջ նշան է .
18 ասանկ կը գրեմ ։ Մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսին շնորհքը ձեր ամենուդ հետը . ա-
մէն ։

# ՊՕՂՈՍ
# ԱՌԱՔԵԱԼԻՆ
# ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ
## ԱՌ
# ՏԻՄՈԹԷՈՍ

## ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը 1
մեր փրկիչ Աստուծոյ հրամանովը՝ ու Յի-
սուս Քրիստոսի՝ որ է մեր յոյսը․ Տիմո- 2
թէոսի՝ իմ սիրելի որդիիս հաւատքով․ շնոր-
հք՝ ողորմութիւն՝ ու խաղաղութիւն
Հօր Աստուծմէն և մեր Տէր Յիսուս Քրի-
ստոսէն ։

Ինչպէս որ քեզի աղաչեցի Եփեսոս մնա- 3
լու, երբոր ես Մակեդոնիա կ՚երթայի․ որ
պատուիրես մէկ քանիներուն օտար ուսու-
մունք չսորվեցընել, Եւ չնայիլ առաս- 4
պելներու, ու ցեղահամարներու՝ որ չափ
չունին․ որոնք աւելի վէճեր կը հանեն,
ու չէ՝ թէ Աստուծոյ մատակարարութիւնը՝
որ կ՚ըլլայ հաւատքով ։ Ինչու որ պա- 5
տուիրանքին գլուխը սէրն է՝ սուրբ սրտով
ու բարի մտքով և անկեղծ հաւատքով․
Որոնցմէ մէկ քանիները մոլորեցան՝ փուճ 6

Digitized by Google

7 բանսերու եւ ելան գացին․ Օրէնքի վարդա-
պետ ըլլալ կ'ուզեն․ բայց իրենք չեն
հասկընար ինչ որ կը խօսին, ո՛չ ալ այն
բաները՝ որոնց համար ոտք կը կոխեն։
8 Գիտենք որ օրէնքը աղէկ է, թէ որ մէ-
կը անիկայ օրինաւոր կերպով գործածե-
9 լու ըլլայ։ Բայց ասանկ գիտնալով՝ որ
արդարներուն համար չէ օրէնքը․ հապա
անօրէններուն՝ ու անհնազանդներուն հա-
մար, ամբարիշտներուն եւ մեղաւորնե-
րուն, անմաքուրներուն եւ պիղծերուն,
հայր՝ ու մայր անարգողներուն, մարդա-
10 սպաններուն, պոռնիկներուն, արուա-
գէտներուն, մարդ-գողցողներուն, ստա-
խօսներուն, սուտ երդում ընողներուն,
եւ թէ ուրիշ ինչ որ հակառակ է ողջամիտ
11 վարդապետութեանը, Որ երանելի Աս-
տուծոյ փառաւոր աւետարանին պէս է․
12 որն որ ինծի յանձնուեցաւ։ Շնորհա-
կալ եմ անոր՝ որ զիս զօրացուց, այ-
սինքն մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ
հաւատարիմ սեպեց զիս՝ աս ծառայու-
13 թեանը դնելու․ Որ առաջուց հայհոյիչ
էի՝ ու հալածող, ու նախատող․ բայց
ողորմութիւն գտայ, ինչու որ անիկայ չը-
գիտնալով ու անհաւատութեան մէջ կ'ը-
14 նէի։ Իսկ մեր Տէրոջը շնորհքը խիստ շատ
եղաւ ինծի հաւատքով ու սիրով որ Քրի-
15 ստոսով Յիսուսով է։ Աս խօսքը ճշմա-
րիտ է՝ ու բոլորովին ընդունելութեան
արժանի․ որ Քրիստոս Յիսուս աշխարհք

Digitized by Google

եկաւ մեղաւորները փրկելու, որոնց առա-
ջինը ես եմ։ Բայց անոր համար ող- 16
որմութիւն գտայ, որ առաջնապէս Յի-
սուս Քրիստոս իմ վրաս ցուցնէ բոլոր
համբերութիւնը՝ օրինակ ըլլալու անոնց
որ պիտի հաւատային իրեն՝ յաւիտենա-
կան կեանքին համար։ Բայց յաւի- 17
տենական Թագաւորին՝ որ անեղծ ու ան-
երեւոյթ է, ու մէկ Աստուծոյն փառք
ու պատիւ յաւիտեանս յաւիտենից. ա-
մէն։

Այս պատուէրը կու տամ քեզի, իմ որ- 18
դեակս Տիմոթէոս, քու վրադ առա-
ջուց եղած մարգարէութիւններուն պէս,
որ դուն անոնցմով պատերազմիս այն գե-
ղեցիկ պատերազմը, Ու հաւատք ունենաս 19
մաքուր խղճմտանքով. որ մէկ քանին ան
հաւատքը իրենցմէ մերժելով՝ նաւա-
կոծութիւն քաշեցին հաւատքին մէջ. Ա- 20
նոնց համրանքէն են Յիմենէոսը ու Ա-
ղեքսանդրոսը, որոնք ես Սատանային
մատնեցի, որ սորվին հայհոյութիւն չը-
նել։

## Գլ. Բ.

Ուստի կ'աղաչեմ ամէն բանէն առաջ՝ 1
աղօթք ընել, խնդրուածք, աղաչանք,
գոհութիւն՝ ամէն մարդոց համար. Մա- 2
նաւանդ թագաւորներուն և բոլոր իշխան-
ներուն համար. որ խաղաղութենով ու
հանդարտութենով վարենք մեր կեանքը՝

Digitized by Google

բոլորովին աստուածպաշտութենով ու
3 սրբութենով։ Ինչու՝ որ աս է աղէկը ու
ընդունելին մեր Փրկչին Աստուծոյն առջեւ.
4 Որ կ'ուզէ թէ ամէն մարդիկ փրկուին՝ ու
5 ճշմարտութիւնը ճանչնալու գան։ Ինչու
որ մէկ Աստուած մը կայ, ու մէկ միջնորդ
մը Աստուծոյ ու մարդոց մէջը՝ Յիսուս
6 Քրիստոս մարդը. Որ իր անձը ամենուն
տեղը ազատուչէք տուաւ՝ իր ատենին վկա–
7 յութիւն ըլլալու։ Որ ես անոր քարո–
զիչ ու առաքեալ դրուեցայ. ճշմարիտ
կ'ըսեմ Քրիստոսով և սուտ չեմ խօսիր,
հեթանոսներուն վարդապետ եղայ հա–
8 ւատքով ու ճշմարտութենով։ Կ'ուզեմ
որ էրիկ մարդիկ ամէն տեղ աղօթք ընեն,
սուրբ ձեռքերնին վեր վերցնելով առանց
9 բարկութեան ու երկմտութեան։ Նոյնպէս
ալ կնիկները խոնարհութեան զարդով,
ամօթխածութենով ու պարկեշտութե–
նով ինքզինքնին զարդարեն. ո՛չ թէ ոս–
կիէ մանուած՝ մարգարիտով շարուած
հիւսուածքներով կամ զարդարուած հան–
10 դերձներով. Հապա բարի գործքերով
ինչպէս որ կը վայլէ աստուածպաշտութեան
11 յանձնառու եղող կնիկներուն։ Կնիկ
մարդը թո՛ղ սորվի հանդարտութենով
12 ամէն հպատակութենով. Բայց կնիկ
մարդու հրաման չեմ տար սորվեցնելու,
ո՛չ ալ էրիկ մարդէն աւելի խօսքի տէր
13 ըլլալու, հապա լուռ կենալու. Վասնզի
որ՝ առաջ Ադամը ստեղծուեցաւ, ու ետ–

Digitized by Google

քը Եւան ։ Իսկ Ադամը չխաբուեցաւ , 14
Հապա կինը խաբուեցաւ՝ ու մեղք գործեց ։
Սակայն թէ պիտի ազատի անիկայ որդե- 15
ծնութեամբը , թէ որ կենան հաւատքի և
սիրոյ ու սրբութեան մէջ պարկեշտութիւ-
նով ։

## ԳԼ · Գ

Այս խօսքը ճշմարիտ է , թէ որ մէկը ե- 1
պիսկոպոսութեան կը ցանկայ՝ աղէկ գործի
կը ցանկայ ։ Ասոր պէտք է եպիսկոպո- 2
սին անարատ ըլլալ , մէկ կնկան մը էրիկ ,
հեզ , խոհեմ , պարկեշտ , օտարասէր ,
սորվեցընող ։ Ո՛չ նախատող , ո՛չ զար- 3
նող , հապա հանդարտ ։ ո՛չ կռուող , ո՛չ
արծաթասէր ։ Որ իր տանը աղէկ վե- 4
րակացու եղած ըլլայ ։ որ զաւակները ու-
նենայ՝ հնազանդութեան մէջ կեցած ամէն
կերպ պարկեշտութիւնով ։ ( Հապա թէ 5
որ մէկը իր տանը վերակացու ըլլալը չգի-
տնայ՝ ի՞նչպէս Աստուծոյ եկեղեցիին հո-
գաբարձու պիտի ըլլայ ։ ) Նորահաւատ 6
չըլլայ ։ որ չըլլայ թէ հպարտանալով
Սատանային դատապարտութեանը մէջ
իյնայ ։ Հապա պէտք է անոր դուրսէն 7
եղողներէն ալ բարի վկայութիւն ունենալ ,
որ չըլլայ թէ նախատինքի մէջ ու Սատա-
նային որոգայթին մէջը իյնայ ։
Նմանապէս ալ սարկաւագները պէտք ըլլան 8
պարկեշտ , ո՛չ երկու բերնէ խօսող , ո՛չ
գինեմոլ , ո՛չ ագահութեամբ անարգ շահ-

9 մըղ. Հաւատքին խորհուրդը ու-
10 նենան մաքուր խղճմտանքով։ Եւ ասոնք
առաջ թող փորձուին, և ետքը՝ որ ան-
11 արատ են, ան պաշտօնին մտնեն։ Ա-
սանկ ալ անոնց կիները՝ պարկեշտ, ոչ
չարախօս. հեզահոգի, ամէն բանի մէջ
12 հաւատարիմ։ Սարկաւագները մէկ կնկան
մը էրիկ ըլլան. որ իրենց զաւկըներուն ու
իրենց տանը աղէկ վերակացու եղած ըլ-
13 լան։ Վասն զի ան սարկաւագները, որ ի-
րենց պաշտօնը աղէկ կը կատարեն, բարի
աստիճան մը իրենց կը շահին, ու Քրի-
ստոս Յիսուսի վրայ եղած հաւատքին
մէջն ալ շատ համարձակութիւն։
14 Աս կը գրեմ քեզի, որ կը յուսամ մօ-
15 տերս գալ. Բայց թէ որ ուշանալու ըլ-
լամ՝ որ գիտնաս թէ ինչպէս պէտք է քե-
զի Աստուծոյ տանը մէջ պտըտիլ. որ կեն-
դանի Աստուծոյ եկեղեցին է, ճշմարտու-
16 թեան սիւնը ու հաստատութիւնը։ Ու-
յայտնապէս մեծ է աստուածպաշտութեան
խորհուրդը. որ Աստուած մարմնով
երեւցաւ, Հոգիով արդարացաւ, հրեշ-
տակներուն յայտնուեցաւ, հեթանոսնե-
րուն մէջը քարոզուեցաւ, աշխարհի մէջ
հաւատացուեցաւ, ու փառքով վեր ե-
լաւ։

## ԳԼՈՒԽ Դ.

1 Բայց Հոգին Սուրբ յայտնի կ'ըսէ, որ
ետքի ատեններըը մէկ քանիները հաւատքէ

Digitized by Google

պիտի ըլլան, ու պիտի նայրին մոլորե-
ցուցիչ ոգիներու, և դևերուն ուսմունք-
ներուն, կեղծաւորութիւնով սուտ խօ- 2
սողներ, իրենց խղճմտանքովը խանձուած.
Անոնք որ ամուսնանալէն պիտի արգիլեն, 3
ու եր պիտի պահեն կերակուրներէն՝ որ
Աստուած հաստատեր է որ հաւատացեալ-
ները և ճշմարտութիւնը ճանչցողները վա-
յելեն։ Ինչու որ Աստուծոյ բոլոր ստեղ- 4
ծուածները բարի են՝ ու եր ձգելու բան
չկայ. մանաւանդ թէ որ գոհանալով ըն-
դունուին. Ինչու որ Աստուծոյ խօսքովը 5
ու աղօթքով կը սրբուի։ Ասանկ խրատ 6
տալով եղբայրներուն՝ Քրիստոս Յիսուսի
աղէկ պաշտօնեայ մը կ'ըլլաս. կը սնանիս
հաւատքին խօսքերովը և ան աղէկ վար-
դապետութիւնովը, որուն հետևող ե-
ղար։ Նայց պիղծ խօսքերէն՝ ու պա- 7
ռաւներուն առասպելներէն եր կեցիր.
հապա քու անձդ աստուածպաշտութեան
վարժեցուր. Ինչու որ մարմինին վար- 8
ժութիւնը քիչ բանի օգտակար է, բայց
աստուածպաշտութիւնը ամէն բանի օգ-
տակար է, և կենաց խոստմունքը ունի՝
հիմակուանին ու գալիքին։ Աս խօսքը 9
ճշմարիտ է՝ և բոլորովին ընդունելու
արժանի է։ Ինչու որ բուն ասոր համար 10
կ'աշխատինք՝ ու նախատանաց կը համբե-
րենք. վասն զի կենդանի Աստուծոյ յու-
սացեր ենք, որ ամէն մարդոց փրկիչն է,
մանաւանդ հաւատացեալներուն։ Աս բա- 11

Digitized by Google

12 Նէկը պատուիրէ ու սորվեցո՛ւր. Որ մէկը
քու մանկութիւնդ չանարգէ. Հապա դուն
օրինակ եղիր հաւատացեալներուն՝ խօս-
քով, վարմունքով, սիրով, հաւատքով,
13 ու մաքրութեամբ: Մինչև որ ես գամ՝
մի՛տք դիր կարդալու, յորդորելու, սոր-
14 վեցնելու: Անհոգ մի՛ ըլլար քու վրադ
եղած շնորհքներուն վրայով, որ մարգա-
րէութիւնով քեզի տրուեցան՝ երէցներէն
15 որ ձեռնադրուեցար: Ատոնց վրայ խոր-
հէ, ու ատոնց մէջը պարապէ, որ քու յա-
ռաջադիմութիւնդ ամենուն յայտնի ըլ-
16 լայ: Զգո՛յշ կեցիր քու անձիդ ու
վարդապետութեանդ՝ ու միշտ ատոնց մէ-
ջը կեցի՛ր. Թէ որ ատանկ ընես՝ քու անձդ
ալ կ'ազատցընես. ու անոնք ալ՝ որ քեզի
մտիկ կ'ընեն:

## ԳԼ. Ե

1 Ծերը սաստիկ մի՛ յանդիմաներ. Հա-
պա հօր պէս յորդորէ՛ անիկայ. երիտա-
2 սարդները՝ եղբօր պէս. Պառաւները՝ մօր
պէս. դեռահասակ կնիկները՝ քրոջ պէս
3 ամէն կերպ մաքրութիւնով: Որբևայրի-
ները՝ պատուէ՛, անոնք որ ստոյգ որբևայրի
4 են: Հապա թէ որ մէկ որբևայրի մը զա-
ւակներ ու թոռներ ունենայ, թո՛ղ ա-
ռաջ սորվին իրենց տանը բարի ընել, ու
փոխարէնը հատուցանել իրենց ծնողացը.
ինչու որ անիկայ է աղէկը՝ ու Աստուծոյ
5 առջև ընդունելին: Ուստի ան որ ստոյգ

Digitized by Google

որբևայրի է՝ ու առանձնացած՝ Աստուծոյ
վրայ յոյս դրած է, և գիշեր ցորեկ ա-
ղօթքի ու աղաչանքի հետ է. Բայց 6
փափկասէր որբևայրին՝ կենդանւոյն մեռած
է: Աս պատուիրէ՝ որ անարատ ըլլան: 7
Բայց թէ որ մէկը իրեններուն՝ ու մա- 8
նաւանդ իր ընտանեացը հոգ չտանիր՝ ա-
նիկայ հաւատքէն ուրացած է, ու ան-
հաւատներէն ալ գէշ է: Որբևայրին՝ որբ- 9
ևայրիներուն կարգը թո՛ղ սեպուի, որ
վաթսուն տարուընէ պակաս չէ, մէկ էր-
կան մը կնիկ եղած: Նաև բարի գործքե- 10
րով վկայուած. որ զաւկըներ մեծցուցած
ըլլայ, որ հիւրեր ընդունած ըլլայ, որ
սուրբերուն ոտքերը լուացած ըլլայ, որ
նեղեալներուն օգնութիւն ըրած ըլլայ,
որ բոլոր բարի գործքերու ետևէ գացած
ըլլայ: Բայց դեռահասակ որբևայրինե- 11
րէն ետ կեցիր. որ երբ Քրիստոսի դէմ
կը յանդգնին, ամուսնանալ կ՚ուզեն.
Բայց դատապարտութիւն կ՚ընդունին. 12
ինչու որ առջի հաւատքնին մէկդի ձգե-
ցին: Նաև ծոյլ ըլլալ կը սորվին, տու- 13
նէ տուն պտըտողներ. և չէ թէ միայն
ծոյլ, հապա շատախօսներ, ու հետաքըր-
քիրներ. և ան բանը կը խօսին՝ որ պէտք
չէ: Կ՚ուզեմ որ ատ դեռահասակ կնիկնե- 14
րը կարգուին, զաւկըներ ծնանին, տնա-
չէն ըլլան, ու մէկ պատճառ մը չտան
հակառակորդին՝ հայհոյելու համար: Ին- 15
չու որ հիմակուընէ մէկ քանիները Սատա-

Digitized by Google

16 նային կողմը դարձան։ Եթէ որ մէկ հա-
ւատացեալ մը որբեւայրիներ ունենայ՝ թո՛ղ
օգնութիւն ընէ անոնց, և եկեղեցիին
բեռ չըլլայ, որ ճշմարիտ որբեւայրիներուն
օգնութիւն ընէ։
17 Այն երէցները որ աղէկ վերակացու կ՚ըլ-
լան, կրկին պատիւի արժանի թող ըլլան.
մանաւանդ անոնք որ կ՚աշխատին խօսքով
18 ու վարդապետութիւն ընելով։ Ինչու որ
գիրքը կ՚ըսէ. Կալին մէջը աշխատող ե-
զին դունչը չկապես. և բանուորը իր
19 վարձքին արժանի է։ Երէցի վրայով
ամբաստանութիւն մի՛ ընդունիր, միայն
20 թէ երկու ու իրեք վկաներով։ Բայց ա-
նոնք որ մեղք կը գործեն՝ ամենուն առջեւը
յանդիմանէ՝ որ ուրիշներն ալ վախնան։
21 Վկայութիւն կը դնեմ Աստուծոյ առջեւը՝
և Յիսուս Քրիստոսի, ու ընտրեալ
հրեշտակներուն, որ աս բաները պահես
առանց մէկուն միտքը հաճեցընելու, բան
22 մը աչառութեամբ չընելով։ Շուտով
մէկուն վրայ ձեռք չդնե՛ս, ու ուրիշներուն
մեղացը հաղորդ չըլլաս, դուն քեզ մա-
23 քո՛ւր պահէ։ Ասկէ ետեւ լոկ ջուր չխըմ-
մես. հապա քիչ մըն ալ գինի խառնէ՝
քու ստամոքսիդ ու յաճախ հիւանդու-
24 թիւններուդ համար։ Կան մարդիկ որ
իրենց մեղքը յայտնի է, ու առաջուց
դատաստանի հասած. և կան որ իրենց
25 ետեւէն կ՚երթան։ Անանկ ալ ոմանց բա-
րի գործքերը յայտնի են. ու անոնք որ

Digitized by Google

ուրիշ կերպ բան մըն են՝ չեն կրնար պա-
հուիլ :

## ԳԼ. Զ.

Ան ամէնը որ ծառայութեան լուծի տակ 1
են, ամէն մէկը իրենց տէրերը պատուի
արժանի սեպեն. որ Աստուծոյ անունը ու
վարդապետութիւնը չհայհոյուի : Իսկ ա- 2
նոնք որ հաւատացեալ տէրեր ունին՝ թո՛ղ
չանարգեն, եղբայրներ ըլլալնուն պատ-
ճառաւը. հապա աւելի ծառայութիւն ը-
նեն, ինչու որ հաւատացեալ են ու սի-
րելի, որոնք բարերարութիւն ընելու հոգ
կը տանին : Աս բաները սորվեցո՛ւր ու
յորդորէ՛ : Բայց թէ որ մէկը ուրիշ կերպ 3
բան մը սորվեցընէ, ու մօտիկ չընէ մեր
Տէր Յիսուս Քրիստոսին ողջամիտ խօս-
քերուն, և ան վարդապետութեանը՝ որ
աստուածպաշտութեան համեմատ է. Ա- 4
նանկը հպարտացած է՝ ու բան մը չգիտեր,
հապա վէճերու մէջ ու հակառակութեան
մէջ կը բորբոքի. ասկից որ կ'ըլլայ նա-
խանձ, կռիւ, հայհոյութիւններ, գէշ
կարծիքներ. Խարդախ բաներ մարդոց ա- 5
պականեալ մտքովը՝ ու ճշմարտութենէն
հեռացողներուն. որոնք որ աստուածպաշ-
տութիւնը շահաւոր վաճառ մը կը սեպեն.
բայց դուն անանկներէն մէկդի՛ կեցիր :
Սակայն աստուածպաշտութիւնը բաւա- 6
կանութիւնով մէկտեղ՝ մեծ շահաւոր վա-
ճառ մըն է : Ինչու որ բան մը չբերինք 7

Digitized by Google

աշխարհ , ու բան մը չենք կրնար տանիլ .
8 Հապա ունինք կերակուր ու հանդերձ ,
9 և անով բաւականանանք ։ Բայց անոնք
որ մեծնալ կ'ուզեն , կ'իյնան փորձութեան
ու որոգայթի՝ և շատ անմիտ ու վնասա-
կար ցանկութիւններու մէջ . որոնք սա-
տակումի ու կորուստեան մէջ կ'ընկղմեն
10 մարդիկը ։ Ինչու որ ամէն չարիքներուն
արմատը արծաթսիրութիւն է . որ ատոր փա-
փաքելով մէկ քանիները՝ հաւատքէն մո-
լորեցան , ու իրենքզինքնին շատ ցաւերու
մէջ ձգեցին ,
11 Բայց դուն ո՛վ մարդ Աստուծոյ , փա-
խի՛ր անոնցմէ , ու գնա՝ արդարութեան՝
աստուածպաշտութեան՝ հաւատքի՝ սիրոյ՝
համբերութեան՝ ու հեզութեան ետևէն .
12 Նահատակէ՛ հաւատքին աղէկ պատե-
րազմովը . ու ձեռք զարկ յաւիտենական
կեանքին՝ որուն որ կանչուեցար , և դա-
ւանեցար ան աղէկ դաւանութիւնը շատ
13 վկաներու առջև ։ Կը պատուիրեմ քեզի
Աստուծոյ առջևը՝ որ կենդանի կ'ընէ բո-
լորը , ու Յիսուս Քրիստոսի առջևը՝ որ
14 Պոնտացի Պիղատոսին առջևը վկայեց ան
աղէկ դաւանութիւնը . Որ դուն ան պա-
տուիրանը ամբիծ անարատ պահես , մինչև
մեր Տէր Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը .
15 Որ անիկայ իր ատենին պիտի ցուցընէ՝ Ե-
րանելին ու մի միայն Հզօրը՝ Թագաւոր-
ներուն Թագաւորը ու տէրերուն Տէրը .
16 Որ ինքը միայն ունի անմահութիւն՝ ան-

Digitized by Google

մտրձնաւլը լըյսի մէջ բնութեան . որոն որ
մարդիկներէն մէկը չուխաւու . ո՞չ այլ տեսա-
նելու կարող է ; որուն պատիւ ու զօրու-
թիւն յաւիտեանս . ամէն ։

Ես աշխարհիս մէջ եղած հարուստներուն 17
պատուէր տուր՝ որ չհպարտանան , և յուսն
մեծութեան վրայ յայտնիներ չընեն ։ Հապա
Աստուծոյ վրայ՝ որ ամէն բանը մեզի առ-
ատօրէն կու տայ վայելելու , Բարիք 18
գործեն ; բարի գործքերով հարուստան ;
առատ ; տրուող , առիթէ պախտաւորական
հաղորդ ըլլան . Բարի հիմ գանձեն ան- 19
ձերնուն հանդերձեալին համար , որ ճշմ-
մարիտ կեանքը ձեռք ձգեն ։

Ով Տիմոթէոս՝ քեզի յանձնուած աւանդը 20
պահէ , փախչելով պիղծ ու նորաձայն
խօսքերէն , և հակառակութենէ ; և սուտ-
անուն գիտութենէ , Որն որ մէկ քա- 21
նիները վրանին առնելով հաւատքէն մո-
լորեցան ։ Շնորհքը քու հետդ ըլլայ .
ամէն ։

# ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը
Աստուծոյ կամքովը՝ կենաց խոստմունքին
2 պէս, որ Քրիստոս Յիսուսով է. Տիմո-
թէոս իմ սիրելի որդիիս՝ շնորհք, ողոր-
մութիւն և խաղաղութիւն՝ Հօր Աստուծ-
մէն, ու Քրիստոս Յիսուս մեր Տէրոջ-
մէն։

3 Շնորհակալ եմ Աստուծոյ՝ զոր որ կը
պաշտեմ իմ նախնիքներէս մաքուր խղճ-
մտանքով, երբոր անդադար քեզ իմ ա-
ղօթքներս մէջ կը յիշեմ գիշեր ու ցորեկ.
4 Կը ցանկամ քեզ տեսնելու՝ միտքս բերելով
քու արցունքներդ, որ ուրախութիւնով
5 լեցուիմ. Մտածելով այն զուտ հաւատքը որ
քուկդ ունիս, որ առաջ քու Լոիդա մեծ-
մօրդ վրայ բնակեցաւ՝ ու քու Եւնիկէ
մօրդ. համոզուած գիտեմ որ քու վրայ ալ

Digitized by Google

ալ կայ ։ Անոր համար քու միտքդ կը 6
ձգեմ որ Աստուծոյ շնորհքը արծարծես, որ
քու վրադ է իմ ձեռք դնելէս ։ Ինչու 7
որ Աստուած մեզի վախնալու հոգի չտուաւ,
հապա զօրութեան ու սիրոյ ու զգաս-
տութեան ։ Ուստի ամօթ մի՛ սեպեր մեր 8
Տէրոջը վկայութիւնը, ոչ ալ զիս՝ անոր
համար կապուածս. հապա մասնակից ե-
ղիր աւետարանին չարչարանքներուն՝ Աս-
տուծոյ զօրութեանը համեմատ ։ Որ մեզ 9
փրկեց, ու սուրբ կոչումով մը կանչեց՝
չէ թէ մեր գործքերուն նայելով, հապա
իր դիտաւորութեանը ու շնորհքին նա-
յելով. որ Քրիստոս Յիսուսով մեզի տր-
ուեցաւ յաւիտենական ժամանակներէն առաջ.
Իսկ հիմա յայտնուեցաւ մեր Փրկչին 10
Յիսուս Քրիստոսին երեւնալովը. որ մա-
հը խափանեց, ու լոյսին հանեց կեանքը
ու անմահութիւնը՝ աւետարանին
ձեռքովը ։ Որ ես անոր քարոզիչ ու ա- 11
ռաքեալ դրուեցայ՝ ու հեթանոսներուն
վարդապետ ։ Անոր համար այս չարչա- 12
րանքները ալ կը քաշեմ, բայց ամօթ մը
չեմ սեպեր. վասն զի գիտեմ թէ որո՛ւն
եմ հաւատացեր, ու համոզուած եմ
որ իմ քովս աւանդածս կրնայ պա-
հել մինչեւ ան օրը ։ Առնո՛ւր քեզի ան ող- 13
ջամիտ խօսքերուն օրինակը՝ որ ինձմէ
լսեցիր, հաւատքով ու սիրով, որ Քրիս-
տոս Յիսուսով է ։
Ան աղէկ աւանդքը պահէ՛ Հոգւոյն Սրբ 14

բոյ ձեռքովը՝ որ մեր մէջը բնակած է ։
15 Սա գիտնաս՝ որ ինծմէ զատուեցան ամէն ա-
մէնը՝ որ Ասիա էին, որոնց համրանքէն
16 են Փիգեղոսը ու Հերմոգինէսը ։ Աս-
տուած ողորմութիւն տայ Ոնեսիփորոսին
տանը, որ շատ անգամ զիս հանգստա-
ցուց, ու իմ կապերս ամօթ չսեպեց.
17 Հապա երբոր Հռոմ եկաւ, շատ ջան-
18 քով փնտռեց զիս՝ ու գտաւ ։ (Տէրը ի-
րեն տայ՝ որ այն օրը Տէրոջմէն ողորմութիւն
գտնէ ։) Եւ Եփեսոսի մէջ ալ ո՛րչափ որ
սպասաւորութիւն ըրաւ ինծի՝ անիկայ դուն
քեզմէ աղէկ գիտես ։

## ԳԼ. Բ.

1 Բայց դուն, իմ որդեակս, զօրացի՛ր այն
շնորհքովը՝ որ Քրիստոս Յիսուսով է ։
2 Եւ ան որ ինծմէ լսեցիր շատ վկաներով
անիկայ հաւատարիմ մարդոց յանձնէ՛,
որոնք կարող ըլլան ուրիշներուն ալ սոր-
3 վեցնելու ։ Նեղութիւններու կցո՛րդ ե-
ղիր՝ Քրիստոս Յիսուսի աղէկ զինուորի
4 մը պէս ։ Մէկ զինուորեալ մը աշ-
խարհիս կեանքին բաներովը չզբաղիր, որ
5 զօրավարին հաճոյ ըլլայ ։ Նաեւ թէ որ
ըմբշամարտ մէկը ըլլայ՝ չպսակուիր՝ թէ
որ ըստ օրինի ըմբշամարտութիւն չընէ ։
6 Ու աշխատող հողագործին ալ պէտք է
7 առաջ պտուղէն վայելել ։ Իմացի՛ր ինչ
որ կ'ըսեմ ։ Տէրը քեզի իմաստութիւն
8 տայ ամէն բանի մէջ ։ Միտքդ բեր Յի-

Digitized by Google

սուս Քրիստոսը մեռելներէն յարութիւն
առած Դաւիթին ցեղէն իմ քարոզած աւ-
ետարանիս համեմատ. Որուն մէջը չա- 9
րագործի մը պէս կը չարչարուիմ մինչև
անգամ կապերով. բայց չէ թէ Աստուծոյ
խօսքը կապուած է: Ասոր համար ամէն բանի 10
կը համբերեմ ընտրեալներուն համար, որ
անոնք ալ հասնին այն փրկութեանը, որ
Քրիստոս Յիսուսով է երկնաւոր փառա-
քով: Այս խօսքը ճշմարիտ է. վասն զի 11
թէ որ անոր հետ մեռանք՝ անոր հետ
ալ պիտի ապրինք. Թէ որ համբերենք՝ 12
անոր հետ ալ պիտի թագաւորենք. ու
թէ որ զինքը ուրանանք՝ անիկայ ալ մեզ
կ'ուրանայ. Իսկ թէ որ չհաւատանք՝ ին- 13
քը հաւատարիմ կը մնայ. իր անձը չկըր-
նար ուրանալ: Աս բանը անոնց միտքը 14
ձգէ՝ Աստուծոյ առջևը վկայութիւն դնե-
լով, անօգուտ խօսքերու վրայ վիճաբանու-
թիւն չընել՝ լսողներուն կործանումին հա-
մար: Ջանք ըրէ քու անձդ ընտիր ցու- 15
ցընելու Աստուծոյ առջևը, մէկ բանուոր
մը ըլլալով առանց ամչնալու, ճշմարտու-
թեան խօսքը շիտակ բացատրելով: Բայց 16
պիղծ ու փուճ խօսքերէն մէկդի՛ կեցիր.
որ անոնք աւելի առաջ կ'երթան ամբարշ-
տութիւններու մէջ. Իսկ անոնց խօսքերը 17
քաղցկեղի պէս կ'ուտեն. որոնց կարգէն են
Հիմենէոսը՝ ու Փիղետոսը. Որոնք ճշմար- 18
տութենէն մոլորեցան, ու կ'ըսեն թէ՝
Մեռելներուն յարութիւնը արդէն եղած

Digitized by Google

է, և կը կործանեն մէկ քանիներուն հա-
19 ւատքը ։ Բայց Աստուծոյ հիմը հաստա-
տուն կը կենայ՝ ու աս կնիքը ունի, որ
Տէրը կը ճանչնայ անոնք որ իրենն են. և
անիրաւութենէն մեկնի՝ թող-կենայ ան
ամէնը՝ որ Տէրոջը անունը կ՚անուանէ ։
20 Բայց մէկ մեծ տան մը մէջ չէ՝ թէ միայն
ոսկիէ ու արծաթէ ամաններ կան, հապա
փայտէ ու հողէ ամաններ ալ կան. անոնք
պատուոյ համար են, ու անոնք անար-
21 գութեան համար ։ Ուստի որ մէկը իր ան-
ձը անոնցմէ մաքրէ՝ անիկայ մէկ պա-
տուական անօթ մը պիտի ըլլայ՝ սրբուած
ու իր Տէրոջը պիտանի՝ ամէն բարի գործ-
22 քերու համար պատրաստուած ։ Երիտա-
սարդական ցանկութիւններէն ալ փախ-
չի՛ր, ու գնա՛ արդարութեան՝ հաւատքի՝
սիրոյ՝ խաղաղութեան՝ ու սրբութեան
ետևէն, անոնց հետ՝ որ Տէրոջը անունը
23 կը կանչեն մաքուր սրտով ։ Բայց յիմար
ու անիմաստ վէճերէն մեկնէ՛ քաշուէ,
գիտցի՛ր որ անկէց կռիւներ կը ծնանին ։
24 Ու Տէրոջը ծառային պէտք չէ՝ կռիւ ը-
նել. հապա հեզահոգի ըլլալ ամենուն,
25 սորվեցընող, ոխ չպահող. հանդարտու-
թիւնով խրատել հակառակ կեցողները.
որ ըլլայ թէ Աստուած ապաշխարութիւն
անոնց տայ՝ ճշմարտութիւնը ճանչնալու
26 համար. Ու Սատանայի որոգայթներէն
զգաստանան, որ անկէց բռնուած են իր
կամքին ծառայելու ։

Digitized by Google

## ԳԼ. Գ

Ես գիտցի՛ր որ, վերջի օրերը չար ժա- 1
մանակներ պիտի գան , Ինչու որ մար- 2
դիկ պիտի ըլլան անձնասէր , արծաթասէր ,
հպարտ , ամբարտաւան , հայհոյիչ , ծնո-
ղաց անհնազանդ , ապերախտ , պիղծ ,
Տմարդի , անգութ , բանսարկու , ան- 3
համբեր , դաժանաբարոյ , բարին չսիրող ,
Մատնիչ , յանդուգն , գոռոզ , աւելի 4
ցանկութիւն սիրող՝ քան թէ Աստուած
սիրող : Որոնք աստուածպաշտութեան 5
կերպարանքը պիտի ունենան , ու անոր
զօրութիւնը ուրացած են , և դուն անոնց-
մէ մեկնէ՛ կեցիր : Ինչու որ անոնցմէ են 6
որ տուներէ տուն կը մտնեն , ու գերի կ'ընեն
մեղքով բեռնաւորուած կնիկները՝ զանազան
ցանկութիւններով վարուած , Որ միշտ 7
կը սորվին , ու բնաւ ճշմարտութիւնը
ճանչնալու չեն հասնիր : Ինչպէս 8
Յանէսը ու Յամբրէսը Մովսէսին հակառակ
կեցան , անանկ ալ ասոնք ճշմարտութեա-
նը հակառակ կը կենան , ապականած
միտքով մարդիկներ , հաւատքի մէջ ան-
պիտաններ : Բայց բնաւ աւելի բանի մէջ 9
առաջ պիտի չերթան , ինչու որ ասոնց
անմտութիւնը ամենուն յայտնի պիտի ըլ-
լայ , ինչպէս որ անոնցը եղաւ : Բայց 10
դուն հետևող եղար իմ վարդապետու-
թեանս , առաջնորդութեանս , յօժարու-
թեանս , հաւատքիս , երկայնմտութեանս ,

Digitized by Google

11 սէրըս , համբերութիւնս , հալածանքնե-
րուս , չարչարանքներուս , ինչպէս որ ին-
ծի եղան Անտիոքի՝ և Իկոնիոնի՝ ու Լիւստ-
րայի մէջ , ինչպէս հալածանքներու համ-
բերեցի , ու ամենէն զիս ազատեց Տէրը ։
12 Եւ ամէն անոնք՝ որ կ՚ուզեն աստուածա-
պաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսու-
13 սով՝ հալածանքի մէջ պիտի կենան ։ Բայց
չար ու կախարդ մարդիկները չարութեան
մէջ պիտի յառաջանան . մոլորեցնողներ են,
14 ու կը մոլորեցնեն ։ Բայց դուն հաստա-
տո՛ւն կեցիր ան բաներուն մէջ՝ որ սոր-
վեցար ու հաւատացիր . գիտնալով ուսկից
15 սորվեցար . Ինչու որ դուն մանկութենէ
՚ի վեր սուրբ գիրքերը գիտես ։ որոնք
կրնան իմաստուն ընել քեզ փրկութեան՝
Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատ-
16 քովը ։ Ամէն գիրքերը Աստուծոյ շունչն
են , և շահաւոր են սորվեցնելու , յան-
դիմանելու , շտկելու , ու արդարութեան
17 խրատելու համար . Որ Աստուծոյ մարդը
կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործքերու
մէջ հաստատուած ։

ԳԼՈՒԽ Դ.

1 Ես վկայութիւն կու տամ Աստուծոյ
առջեւը և Յիսուս Քրիստոսի , որ պիտի
դատէ կենդանիները ու մեռելները իր
յայտնուելովը ու թագաւորութիւնովը ա-
2 ռնելով . Դուն ալ խօսքը քարոզէ . ժամա-
նակութեամբ կեցիր , պարապին՝ ատենին՝



Digitized by Google

ու անժամանակ պնդէ՝ յանդիմանէ՝ յորդորէ՝
մխիթարէ՝ ամէն կերպով համբերութիւնով
ու վարդապետութիւնով ։ Վասն զի ժամա- 3
նակ պիտի գայ՝ որ ողջամիտ վարդա-
պետութեանը մտիկ պիտի չընեն ։ Հապա
ամէն մէկուն ցանկութիւններուն համեմա-
տին իրենց վարդապետներ պիտի դիզեն
ականջներնին քերելու համար ։ Եւ ճշմար- 4
տութենէն ականջներնին պիտի դար-
ձնեն ՝ ու առասպելներու ետեւէն պի-
տի իյնան ։ Բայց դուն ամէն բանի մէջ 5
արթուն կեցիր ՝ չարչարանքի համբերէ ՝ աւետարանիչի
գործը գործէ ․ քու պաշտօնդ կատարեալ
ըրէ ։ Քանզի ես ահա զոհ ըլլալու 6
պատրաստուած եմ ՝ ու իմ դառնալուս
ժամանակը հասած է ։ Բարի պատերազմը 7
պատերազմեցայ ՝ ընթացքը կատարեցի ՝
հաւատքը պահեցի ։ Ասկէ ետքը ինծի կը 8
պահուի արդարութեան պսակը ՝ որ
Տէրը արդար Դատաւորը ինծի պիտի հատու-
ցանէ այն օրը ․ ու չէ թէ միայն ինծի ՝
հապա անոնց ամենուն ալ ՝ որ անոր
յայտնութիւնը սիրեցին ։

Ջանա՛ որ շուտով ինծի գաս ․ Քանզի 9
Դեմասը զիս թողուց ՝ ու այս աշխարհը սիրեց ՝
ու Թեսաղոնիկէ գնաց ․ Կրեսկէսը Գաղա- 10
տիա ՝ Տիտոսը Դաղմատիա ․ Միայն 11
Ղուկասը ինծի հետ է ․ Մարկոսը առնելով
քեզի հետ բեր ․ քանզի անիկա ինծի պիտանի
է պաշտօնատարութեան համար ։ Տիւքիկոսը 12
Եփեսոս ղրկեցի ։ Այն վերարկուն ՝ որ Տրով- 13

Digitized by Google

վադա թողուցի Կարպոսին քովը, երբոր
գաս՝ բեր, գիրքերն ալ, մանաւանդ մա-
14 գաղաթները ։ Պղնձագործն Աղեքսանդրոսը շատ
նեղութիւն տուաւ ինծի. Տէրը անոր հա-
15 տուցանէ իր գործքերուն համեմատ ։ Ա-
նկից դուն ալ ինքզինքդ պահէ. ինչու որ
16 մեր խօսքերուն շատ դէմ կեցաւ ։ Առջի
պատասխանիս ատենը մէկը ինծի օգնական չե-
ղաւ. հապա ամէնն ալ զիս թողուցին.
կը խնդրեմ Աստուծմէ որ ան իրենց յան-
17 ցանք չսեպուի ։ Բայց Տէրը ինծի օգնեց՝
ու զիս զօրացուց, որ ինծմով քարոզու-
թիւնը կատարուի, ու բոլոր հեթանոսնե-
ները լսեն. և ես առիւծին բերնէն
18 ազատեցայ ։ Տէրը զիս պիտի ազատէ ա-
մէն չար գործքերէն, ու զիս պիտի փրկէ
իր թագաւորութեանը մէջ՝ որ երկնքին է.
փառք յաւիտեանս յաւիտենից. Ա-
մէն ։

19 Բարեւ տուր Պրիսկղին և Ակիւղասին, ու
20 Ոնեսիփորոսին տանը ։ Երաստոս Կորն-
թոս մնաց ։ Տրոփիմոսը Միլետոս մէջ
21 թողուցի հիւանդացած ։ Ջանա՛ որ ձմե-
ռէն առաջ գաս ։ Բարեւ կ՚ընեն քեզի
Եւբուղոս ու Պուդէս և Լինոս ու Կղա-
22 ւդիա ու բոլոր եղբայրները ։ Տէր
Յիսուս Քրիստոս քու հոգւոյդ հետ ըլ-
լայ ։ Շնորհքը ձեզի հետ ըլլայ. ամէն ։

Digitized by Google

# ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻՆ ԹՈՒՂԹԸ

## ԱՌ

# ՏԻՏՈՍ

## ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս Աստուծոյ ծառայ, և Յիսուս 1
Քրիստոսի առաքեալ, Աստուծոյ ընտ-
րեալներուն հաւատքին ու աստուածպաշ-
տութեան յետ եղած ճշմարտութիւնին
գիտութեանը համեմատ, Յաւիտենական 2
կեանքին յուսովը, որ ինքը անսուտ Աս-
տուածը խոստացաւ յաւիտենական դա-
րերէն առաջ, Բայց իր ժամանակներու- 3
մը իր խօսքը յայտնեց քարոզութիւնով,
որ ինծի յանձնուեցաւ մեր Փրկչին Աս-
տուծոյ հրամանովը. Տիտոսին իմ սիրելի 4
որդիիս հասարակաց հաւատքովը. Շնորհք
և խաղաղութիւն Հօր Աստուծմէն ու
Քրիստոս Յիսուս մեր Փրկչէն։
Անոր համար քեզ Կրետէ թողուցի, 5
որ ինչ պակաս բան որ կայ շտկես, ու
ամէն մէկ քաղաքներուն համար երէցներ
կարգես. ինչպէս որ ես քեզի պատուիրե-
ցի. Եթէ որ մէկը անարատ ըլլայ՝ մէկ 6
կնկան մը էրիկ, հաւատացեալ զաւակներ

Digitized by Google

ունենայ, որ անառակութեան համար ամ-
բաստանուած կամ անհնազանդ չըլլան։
7 Ինչու որ եպիսկոպոսին՝ պէտք է անարատ
ըլլալ՝ Աստուծոյ տնտեսին պէս, ո՛չ
յանդուգն, ո՛չ բարկացող, ո՛չ նա-
խատող, ո՛չ զարնող, ո՛չ ագահու-
8 թեամբ ստակ ժողվող, հապա օտա-
րասէր, բարիին սիրող, խոհեմ, ար-
9 դար, սուրբ, ժուժկալ, Ներքակացու-
ըլլալով վարդապետութեան հաւատարիմ
խօսքին. որ կարող ըլլայ ողջամիտ վար-
դապետութիւնով յորդորել. և հակա-
10 ռակ կեցողները յանդիմանել։ Որովհետև
շատ են անհնազանդները, պարապ խօսող-
ները, ու միտք խաբողները. մանաւանդ
11 անոնք որ թլփատութենէն են. Որոնք
պէտք է պապանձեցընել, որ ամբողջ տու-
ները կը կործանեն, ու կը սորվեցընեն ան
բաները որ պէտք չէ, ագահութեամբ
12 ստակ ժողվելու համար։ Անոնցմէ մէկը
զրուցեց որ իրենց բուն մարգարէն էր.
Կրետացիները միշտ սուտասուն են, չար
13 գազաններ, դատարկապորտներ։ Այս աս
վկայութիւնը շիտակ է. անոր համար
սաստիկ յանդիմանէ՝ անոնք, որ առողջա-
14 նան հաւատքին մէջ. Ու չնային Հրէա-
կան առասպելներուն, և ճշմարտութենէ
դարձող մարդոց պատուէրներուն։
15 Ամէն բան մաքուր է մաքուրներուն, բայց
պղծեներուն ու անհաւատներուն մէկ բան
մը մաքուր չէ. հապա անոնց միտքն ալ ու-

խղճմտանքնին ալ պղծուած են ։ Անոնք խոստ- 16
ովանին որ զԱստուած կը ճանչնան , և ի-
րենց գործքովը կ'ուրանան . պիղծ են ու
անհնազանդներ են , և խոտելի՝ բոլոր
բարի գործքերու մէջ ։

## Գլ. Բ.

Բայց դուն խօսէ՛ ինչ որ կը վայլէ ող- 1
ջամիտ վարդապետութեանը , Ծերերուն 2
զգաստ ըլլալ , պարկեշտ , խոնարհ , ող-
ջամիտ հաւատքով , սիրով , համբերու-
թիւնով , ժուժկալութիւնով . Անանկ 3
ալ պառաւներուն զգաստութեան մէջ ըլ-
լալ՝ ինչպէս որ սրբութեան կը վայլէ .
ոչ բանսարկու , ոչ գինեմոլ . հապա բա-
րի խրատ տուող ։ Որ խրատեն մատղաշ 4
կնիկներուն՝ էրիկնին սիրել , զաւակնին սի-
րել ըլլալ , խոնարհ , սուրբ , տնաշէն , 5
բարեգործ , իրենց էրիկներուն հնազանդ .
որ չըլլայ թէ Աստուծոյ խօսքը ու վար-
դապետութիւնը հայհոյուի ։ Անանկ ալ 6
երիտասարդներուն աղաչէ՝ խոնարհ ըլլալ .
Ամենուն բարի գործքերու օրինակ ըլլալով 7
քու անձդ , վարդապետութեանդ անեղ-
ծութիւն ունենալ , մաքրութիւն , պար-
կեշտութիւն , Ողջամիտ խօսք՝ անմեղադ- 8
րելի ըլլալով . որ հակառակ կեցողը
ամչնայ , ու մեր վրայօք պէտք բան մը
չունենայ ըսելու ։ Ծառաներուն աղա- 9
չէ՛ – որ իրենց տէրերուն հնազանդ ըլլան ,
և ամէն բանի մէջ հաճելի . ոչ հակա-

Digitized by Google

10 հակառակախօսներ. Մի՛ խորդալով, հապա ամէն
հաւատարմութիւն ցուցընելով. ճշմարտութեան
ցուցընելու որ մեր Փրկչին Աստուծոյ վար-
դապետութիւնը ամէն բանի մէջ զարդա-
11 րեն։ Վասն զի Աստուծոյ շնորհքը որ
12 փրկութիւն է, բոլոր մարդոց երեւցաւ. Ան
մեզ կը սորվեցնէ որ ամբարշտութիւնը
ու աշխարհային ցանկութիւնները ուրա-
նալով, ողջամտութեամբ ու արդարութեամ-
բով ու աստուածպաշտութեամբ ապրինք
13 աշխարհիս մէջ. Սպասելով այն երա-
նելի յոյսին, ու մեծ Աստուծոյ ու մեր
Փրկչին Յիսուս Քրիստոսի փառքին յայտ-
14 նուելուն. Որ ինքզինքը մեզի համար
տուաւ, որ մեզ բոլոր անօրէնութենէն
փրկէ, ու մաքրէ իրեն սեփական
ժողովուրդ մը՝ բարի գործերու նա-
15 խանձաւոր։ Ասոնք խօսէ՝ ու յոր-
դորէ՝ ու յանդիմանէ՝ ամենայն հրա-
մանով. ու ոչ մէկը քեզ ար-
համարհէ։

ԳԼ. Գ.

1 Յիշեցուր անոնց որ իշխանութիւն-
ներուն ու պետութիւններուն հնազանդին,
ըլլան ու հնազանդ ըլլան, ու ամէն բարի
2 գործի պատրաստ ըլլան. Մէ-
կու մը հայհոյութիւն չընեն, կռուարար
չըլլան, հեզ ըլլան ամէն կերպ խոնարհ-
3 ութիւն ցուցընելով բոլոր մարդոց. Վասն
զի մենք ալ ժամանակով մը անմիտ էինք, անհնա-

հնազանդ, մոլորեալ. ցանկութիւններու
ու զանազան անառակութիւններու կը ծա-
ռայէինք. չարութիւնով ու նախանձով
կը վարուէինք, ատելի էինք, և մէկզմէկ
կ'ատէինք. Բայց երբոր մեր Փրկիչ Աս- 4
տուծոյն քաղցրութիւնը ու մարդասիրու-
թիւնը յայտնուեցաւ, Ոչ թէ արդա- 5
րութեան գործքերէն՝ որ մենք ըրինք,
հապա իր ողորմութիւնովը մեզ փրկեց նո-
րէն ծնանելու աւազանին ձեռքովը՝ ու
Սուրբ Հոգիին նորոգելովը. Որ մեր վը- 6
րայ լեցուց առատօրէն Յիսուս Քրիստոս
մեր Փրկիչին ձեռքովը. Որ անոր շնորհ- 7
քովը արդարացած՝ յաւիտենական կեան-
քին ժառանգ ըլլանք յուսով: Այս խօսքը 8
հաւատարիմ է. և ասոր մէջը կ'ուզեմ որ
դուն հաստատուն ըլլաս, որ Աստուծոյ
հաւատացողները ջանք ընեն բարի գործ-
քեր ընելու վրայ ըլլալ. որ ան է բարին
ու օգտակարը մարդոց: Բայց դուն ան 9
յիմարական վէճերը ու ծիւղահամարու-
թիւնները ու հակառակութիւնները՝ և օ-
րէնքի վրայ կռիւները մէկդի՛ ձգէ. ին-
չու որ անօգուտ են ու ունայն: Հեր- 10
ձուածող մարդէն՝ մէկ երկու անգամ
խրատելէն ետև ետ քաշուէ. Գիտցի՛ր որ 11
անանկը ծռած է, և մեղք կը գործէ
ինքզինքը դատապարտելով:
Ու երբոր Արտեմասը կամ Տիւքիկոսը 12
քեզի ղրկեմ, ջանք ըրէ ինծի գալու Նի-
կոպօլիս. ինչու որ ձմեռն ալ ձմեռեմ հոն

Digitized by Google

13 ձմերելու ։ Դու Զենոն օրինական դպի-
րը ու Ապողոսը փութով ճամբայ դիր ,
14 որ անոնց բան մը չպակսի ։ Դու մերին-
ները ալ թող սորվին բարի գործքեր ընե-
լու վրայ ըլլալ՝ հարկաւոր պարագաներու
15 մէջ , որ անպտուղ չըլլան ։ Բարեւ կ'ը-
նեն քեզի ամէնն ալ որ իմ հետս են .
բարեւ տուր մեր սիրելիներուն հաւատքով .
շնորհքը ձեր ամենուն հետը ըլլայ . ա-
մէն ։

# ՊՕՂՈՍ
# ԱՌԱՔԵԱԼԻՆ ԹՈՒՂԹԸ
## ԱՌ
# ՓԻԼԻՄՈՆ

Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի կապեալը՝ 1
և Տիմոթէոս եղբայրը, Փիլիմոն սիրելիին
ու մեր գործակիցին, Եւ Ապփիա մեր քրո- 2
ջը, ու Արքիպպոս մեր զինուորակիցին, ու
քու տանդ եկեղեցիին, Շնորհք և խա- 3
ղաղութիւն ձեզի՝ Աստուծմէ մեր Հօրմէն
և Տէր Յիսուս Քրիստոսէն։

Կը գոհանամ միշտ իմ Աստուծմէս, քե- 4
զի համար յիշելով աղօթքիս մէջը. Երբ 5
որ կը լսեմ քու հաւատքդ ու սէրդ՝ որ
Տէր Յիսուսին վրայ ունիս՝ և բոլոր
սուրբերուն վրայ. Որ քու հաւատքիդ 6
հաղորդակցութիւնը պտղաբեր ըլլայ բոլոր
բարիներուն ճանաչմունքովը, որ ձեր վը-
րայ է Քրիստոս Յիսուսով։ Շատ ու- 7
րախութիւն և մխիթարութիւն ունեցայ
քու սիրոյդ վրայ, որ սուրբերուն սիրտը
քեզմով հանգստացած են՝ եղբայր։

Ասոր համար շատ համարձակութիւն ու- 8
նիմ ես Քրիստոսով հրաման ընելու քեզի

Digitized by Google

9 վայլածը. Սիրոյ համար՝ մանաւանդ քեզ
կ'աղաչեմ, անանկ ըլլալ իննօր որ ես Պօ-
ղոս ծերացած, ու հիմա ալ կապուած
10 Յիսուս Քրիստոսի: Կ'աղաչեմ քեզի իմ
որդիիս Ոնեսիմոսին համար՝ որ ես իմ
11 կապանքներուս մէջը ծնայ. Որ ան մէկ ա-
տեն մը անպիտան էր քեզի, բայց հիմա
12 քեզի ալ ինծի ալ պիտանի է. Զանիկայ
քեզի խրկեցի. ալ ընդունէ՛ զանիկայ՝ որ
13 է իմ աղիքս: Զանիկայ կ'ուզէի ես իմ քովս
պահել, որ քու տեղդ ինծի սպասաւորու-
թիւն ընէ աւետարանին կապանքներուն
14 մէջը: Բայց առանց քու կամքիդ չուզեցի
բան մը ընել, որ քու բարիքդ 'ի հարկէ ե-
15 ղած չըլլայ, հապա կամաւոր: Եւ կարելի
է, որ անոր համար անիկայ քիչ մը ատեն
զատուեցաւ, որ զանիկայ յաւիտեան ու-
16 նենաս. Ոչ որ ալ ծառայի մը պէս,
հապա ծառայէն վեր՝ սիրելի եղբօր պէս.
թէ որ ինծի սաստիկ, ո՛րչափ աւելի քե-
զի՝ թէ մարմինի կողմանէ ու թէ Տէրոջը:
17 Եթէ որ զիս քու հետդ մէկ կը սեպես, ըն-
18 դունէ՛ անիկայ՝ որպէս թէ զիս: Եւ թէ
որ յանցանք մը ըրած է՝ կամ պարտք մը
19 ունի, ան իմ վրաս սեպէ: Ես Պօղոս
իմ ձեռքովս գրեցի. ես կը վճարեմ, որ
չըսեմ քեզի՝ թէ դուն ալ քու անձդ ին-
20 ծի պարտական ես: Այո՛ եղբայր՝ ես քու
տեղդ պիտի ըլլամ Տէրոջմով. հանգչեցուր
21 իմ աղիքս Քրիստոսով: Քու հնազան-
դութեանդ վստահանալով քեզի գրեցի.

Digitized by Google

յանձնած գիտեմ որ ըսածէս ալ աւելի կ՚ը-
նես ։

Նաև՝ ի դաւն ինծի բնակարան մըն ալ 22
պատրաստէ՛ . ինչու որ կը յուսամ թէ
ձեր աղօթքովը ձեզի պիտի տրուիմ ։
Բարև կ՚ընէ ձեզի Եպափրաս՝ իմ գերու- 23
թեան ընկերս Քրիստոս Յիսուսով ․ Նաև 24
Մարկոսը , ու Արիստարքոսը՝ և Դեմասը
ու Ղուկասը՝ իմ գործակիցներս ։ Մեր 25
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը՝ ձեր հո-
գիին հետը ըլլայ ․ ամէն ։

# ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻՆ ԹՈՒՂԹԸ

ԱՌ

# ԵԲՐԱՅԵՑԻՍ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Շատ կերպերով ու շատ օրինակներով
առաջուց խօսեցաւ Աստուած մեր հայրե-
2 րուն հետ մարգարէներով. Այս վերջի օ-
րերս իր Որդիովը խօսեցաւ մեր հետը, որ
զանիկայ ամէն բանի ժառանգ դրաւ. որ
3 անով աշխարհքըն ալ ստեղծեց. Որ անի-
կայ իր փառացը լոյսն է, և իր էութեա-
նը բուն պատկերը. ան որ իր զօրութեան
խօսքովը ամէն բան կը բռնէ. ինքը մեր
մեղքերը սրբելով՝ վերը Աստուծոյ մեծու-
4 թեանը աջ կողմը նստաւ։ Այնչափ ա-
ւելի եղաւ հրեշտակներէն, որչափ որ ա-
նոնցմէ աւելի աղէկ անուն ժառանգեց։
Ինչու որ հրեշտակներէն որո՞ւն ըսաւ եր-
5 բեք. Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ
ծնայ. և դարձեալ՝ Թէ Ես անոր Հայր
պիտի ըլլամ, ու անիկայ ինծի որդի պի-
6 տի ըլլայ։ Իսկ երբոր ան անդրանիկը աշ-
խարհք կը մտցնէ, կ'ըսէ. Աստուծոյ բո-

Digitized by Google

լոր հրեշտակները անոր երկրպագութիւն
թող ընեն : Բայց հրեշտակներուն վրա- 7
յով կ'ըսէ . Որ իր հրեշտակները հոգիներ
ըրաւ , ու իր պաշտօնեաները կրակի բոց :
Բայց Որդիին կ'ըսէ . Քու աթոռդ 8
ո՛վ Աստուած՝ յաւիտեանս յաւիտենից է .
քու թագաւորութեան գաւազանդ՝ ուղ-
ղութեան գաւազան է : Արդարութիւնը 9
սիրեցիր՝ ու անօրէնութիւնը ատեցիր .
անոր համար ո՛վ Աստուած քու Աստուածդ
ուրախութեան եղով օծեց քեզ՝ քու ըն-
կերներէդ աւելի : Եւ դուն ո՛վ Տէր՝ 10
սկիզբէն երկիրը հաստատեցիր , ու երկին-
քը քու ձեռքերուդ գործն է : Անոնք կը 11
կորսուին՝ և դուն կը կենաս ու կը մնաս .
ամէնը լաթերու պէս պիտի մաշին , Ու 12
վերարկուի պէս , հանդերձի մը պէս պի-
տի գալարես զանոնք՝ և պիտի փոխուին .
բայց դուն նոյն ինքն ես , ու քու տարի-
ները պիտի չպակսին : Հրեշտակներէն 13
որո՞ւն ըսաւ երբեք . Դուն աջ կողմս նըս-
տէ՛ , մինչև որ քու թշնամիներդ քու ոտ-
քերուդ պատուանդան դնեմ : Չէ՞ որ անոնք 14
ամէնը պաշտօնական հոգիներ են , որոնք
սպասաւորութեան կը ղրկուին անոնց հա-
մար՝ որ փրկութիւն պիտի ժառանգեն :

ԳԼ. Բ.

Անոր համար պէտք է մեզի աւելի՝ 1
ականջ դնել մեր լսածներուն , որ
չըլլայ թէ ընթացքէն վրիպինք . Վասն զի թէ 2

Digitized by Google

որ անոր խօսքը՝ որ հրեշտակներուն ձեռքովը
ըսուեցաւ, հաստատուն եղաւ, և ա-
մէն յանցաւորութիւն ու անհնազանդու-
3 թիւն պատշաճ պատուհաս առաւ, Հապա
մենք ի՞նչպէս պիտի ազատինք՝ թէ որ անա-
հոգ ըլլանք անանկ փրկութենէն, որ խօ-
սելուն սկիզբը Տէրոջմէն առաւ, ու լսող-
ներուն ձեռքովը մեզի հաստատուեցաւ։
4 Աստուած ալ վկայեց նշաններով ու հրաշք-
ներով և զանազան զօրութիւններով՝ ու
Սուրբ Հոգիին պարգևներովը՝ ինչպէս որ
ինքը կամեցաւ։
5 Ինչու որ չէ թէ հրեշտակներուն հպատակե-
ցուց այն գալու աշխարհը, որուն համար
6 որ մենք կը խօսինք. Հապա մէկը տեղ մը
վկայեց՝ ու ըսաւ. Մարդը ի՞նչ է՝ որ զա-
նիկայ կը յիշես, կամ մարդու որդին՝ որ
7 անոր այցելութիւն կ'ընես։ Անոյն Քի-
չիկ մը վար ըրիր զանիկայ հրեշտակնե-
րէն. փառքով ու պատիւով պսակեցիր
զանիկայ, և քու ձեռքերուդ գործքերուն վե-
8 րայ դրիր զանիկայ։ Ամէն բան անոր ոտ-
քերուն տակը հնազանդ ըրիր. ուստի ամէ-
նը որ հնազանդեցուց՝ մէկ բան մը անհնա-
զանդ չձգեց անոր. բայց հիմա՝ դեռ չենք
9 տեսներ ամէնը անոր հնազանդած։ Հա-
պա Յիսուսը փառքով ու պատիւով պսա-
կուած կը տեսնենք՝ որ հրեշտակներէն քիչ
մը վար եղած էր՝ մահուան չարչարանքին
համար, որ Աստուծոյ շնորհքովը ամէնուն
10 համար մահ ճաշակէ։ Վասն զի անոր վայ-

լէր Անոր, (որուն համար ամէնքը և ա-
նով ամէն բաները են;) շատ որդիներ
փառքին մէջ մտցընելու՝ անոնց փրկու-
թեան Առաջնորդին ալ չարչարանքով կատա-
րել ։

Վասն զի սուրբ ընողը ու անոնք որ կը 11
սրբուին, ամէնքն ալ մէկէ մըն են. անոր
համար ամօթ չսեպեր եղբայր կանչե-
լու զանոնք՝ ու ըսել. Պիտի պատմեմ քու 12
եղբայրներուս անունդ, ու եկեղե-
ցիին մէջը քեզ պիտի օրհնեմ ։ Ու դար- 13
ձեալ թէ՝ Ես անոր պիտի յուսամ ։ ու
դարձեալ՝ Ահա՛ ես ու իմ զաւակներս,
որ Աստուած ինծի տուաւ ։ Ուստի որ- 14
ովհետև զաւակները արիւնի ու մարմի-
նի հաղորդ եղան, ինքն ալ միանման-
թեամբ անոնց հետ կցուեցաւ. որ իր
մահովը փճացընէ անիկայ՝ որ մահուան իշ-
խանութիւնը ունէր, այսինքն է՝ Սատա-
նան. Ու ազատէ զանոնք որ մահուան 15
վախովը միշտ ծառայութեան մէջ կ'ապ-
րէին ։ Վասն զի բնաւ հրեշտակներուն 16
ձեռք չառներ, հապա Աբրահամին սերուն-
դին ձեռք կը բռնէ ։ Անոր համար ալ 17
պէտք էր անոր ամէն բանով եղբայրներուն
նման ըլլալ, որ ինքը ողորմած ըլլայ՝ ու
հաւատարիմ քահանայապետ Աստուծոյ
կողմէն, ժողովուրդին մեղքերը քաւելու
համար ։ Վասն զի ինչ չափով որ ինքը 18
չարչարուեցաւ՝ փորձուելով, կրնայ
փորձանաւորներուն ալ օգնական ըլլալ ։

Digitized by Google

ԳԼ. Գ.

1 Ուստի սուրբ եղբայրներ՝ երկնային կո-
չումին մասնակիցներ, նայեցէք մեր դա-
ւանութեանը Առաքեալին ու Քահանա-
2 յապետին՝ Յիսուս Քրիստոսին։ Որ հա-
ւատարիմ է անոր՝ որ զինքը դրաւ, ինչ-
պէս որ Մովսէս ալ անոր բոլոր տանը մէջ։
3 Ինչու որ ասիկա Մովսէսէն աւելի փառքի
արժանի եղաւ. ո՛րչափ որ աւելի պատիւ
կ'ունենայ տանը շինողը քան թէ տունը։
4 Որովհետեւ ամէն տուն մէկէ մը կը
շինուի. բայց ան որ ամէն բաները
5 շինեց՝ Աստուած է։ Մովսէս անոր բոլոր
տանը մէջ հաւատարիմ է մէկ ծառայի մը
պէս՝ զրուցուելու խօսքերուն վկայ ըլլա-
6 լու համար, Բայց Քրիստոս որդի մը
պէս իր տանը վրայ. որ անոր տունը
մենք ենք. միայն թէ մեր համարձակու-
թիւնը ու յոյսին պարծանքը մինչեւ վերջը
հաստատ բռնենք։
7 Անոր համար ասանկ կ'ըսէ Հոգին
Սուրբը. Այսօր թէ որ անոր ձայնին մտի-
8 տիկ ընէք, Ձեր սիրտերը մի՛ խստացնէք
ան բարկացնելու ատենին պէս անապատին
9 մէջ փորձութեան օրը. Ուր որ ձեր հայ-
րերը զիս փորձեցին. քննեցին զիս՝ թէ-
պէտեւ քառասուն տարի իմ գործքերս տե-
10 սան։ Անոր համար զզուեցայ այն ազգէն,
ու ըսի. Միշտ մոլորած են սրտերնին,
11 Եւ իմ ճամբաներս չճանչցան անոնք. ինչպէս

Digitized by Google

[illegible]
[illegible]
[illegible] 12
[illegible]
[illegible]
[illegible] 13
[illegible]
[illegible]
[illegible] 14
[illegible]
[illegible]
[illegible] 15
[illegible]
[illegible]
[illegible] 16
[illegible]
[illegible]
[illegible] 17
[illegible]
[illegible]
[illegible] 18
[illegible]
[illegible] 19
[illegible]
[illegible]

[illegible]

[illegible] 1
[illegible]
[illegible]
[illegible] 2

Digitized by Google

ինչպէս որ, անոնց. բայց անոնց շահ մը
չըրաւ այն խօսքը լսելը՝ որ, հաւատքին
3 խառնուած չըլլալուն։ Բայց մենք՝ որ
հաւատացինք, ան հանգիստը կը մտնենք.
ինչպէս որ ըսաւ՝ թէ Ինչպէս որ երդում
ըրի իմ բարկութեանս ատենը, թէ իմ
հանգստեանս պիտի չմտնեն. թէ և ան-
գործքերը աշխարհի սկիզբէն եղած էին։
4 Ինչու որ Գիրքը ասանկ կ'ըսէ մէկ տեղ մը
եօթներորդին համար. Եւ Աստ-
ուած եօթներորդ օրը հանգչեցաւ իր
5 ամէն գործքերէն. Ու հոս նորէն կ'ըսէ՝
6 Թէ իմ հանգստեանս պիտի չմտնեն։ Ուրեմն
որովհետեւ ոմանք պէտք է հոն մտնե-
լու, և անոնք որ առաջուց խոստմանը
առնող եղան՝ անհնազանդութեան համար չմ-
7 տան. Դարձեալ ուրիշ օր մը կը սահմանէ, այ-
սօր կ'ըսէ Դաւիթին բերանովը այսքան
ժամանակէն ետքը. ինչպէս առաջուց
ըսաւ. Այսօր թէ որ անոր ձայնին պիտի
8 լսէք՝ սրտերնիդ մի՛ խստացնէք։ Ինչու
որ եթէ Յեսուն հանգչեցուցած ըլլար զա-
նոնք, ալ անկէ ետքը ուրիշ օրուան համ-
9 մար չէր զրուցեր։ Ուրեմն Աստուծոյ
ժողովուրդին դեռ պակաս կը մնայ հանգ-
10 գիստը։ Վասն զի ան որ անոր հանգիստը
մտաւ, ալ ինքը հանգչեցաւ իր գործ-
քերէն, ինչպէս որ Աստուած ալ իրենի-
11 ներէն։ Ուրեմն ջանանք ան հանգստեանը
մտնելու. որ չըլլայ թէ մէկը նոյն ան-
հնազանդութեան օրինակին պէս իյնայ։

Digitized by Google

Քանզի որ Աստուծոյ խօսքը կենդանի է ու 12
զօրեղ՝ և ամէն երկու բերնով սուրէ
կտրուկ, որ կ'անցնի մինչև շունչը ու ոգին՝
և յօդուածները ու ըղեղը բաժնելու.
և կը քննէ միտքը ու սրտին խորհուրդնե-
րը. Եւ չկայ մէկ արարած մը անոր դի- 13
մացը չերևցած. Հապա ամէն բան բաց
ու յայտնի է անոր աչքերուն առջևը, որուն
վրայով որ մենք կը խօսինք:
Արդ ունինք մենք այն մեծ Քահանայա- 14
պետը՝ երկինքը անցած, Յիսուսը՝ Աս-
տուծոյ որդին, ամուր բռնենք
մեր դաւանութիւնը: Քանզի որ չէ՝ թէ 15
քահանայապետ մը ունինք՝ որ կարող չըլ-
լայ մեր տկարութեանը կարեկից ըլլա-
լու. Հապա ինքը ամէն կերպով փորձը
առած է մեզի նման, բայց առանց մեղքի:
Արդ ալ համարձակութիւնով մօտենանք 16
անոր շնորհացը աթոռին առջևը. որ ո-
ղորմութիւն ընդունինք՝ ու շնորհք գտնենք
պէտք եղած ատենը օգնելու:

## ԳԼ. Ե.

Քանզի որ ամէն քահանայապետ մարդոց 1
մէջէն առնուած՝ մարդիկներուն համար
կը կենայ Աստուծոյ կողմը, որ պատարա-
րագներ ու զոհեր մատուցանէ մեղքերու
համար. Չափով կրնայ կարեկից ըլլալ 2
անոնց՝ որ տգէտ ու մոլորեալ են. Քանզի
որ ինքն ալ տկարութիւնով պաշարուած
է. Անոր համար պարտք է ինչպէս որ ժո- 3

Digitized by Google

ղովուրդին համար՝ անանկ ալ իր անձին
համար մեղքի պատարագը մատուցանէ։
4 Ու չէ՝ թէ մէկը ինքիրմէ այս պատիւը
կ'առնէ, հապա ան որ Աստուծմէ կան-
5 չուած է՝ ինչպէս որ Ահարոնը։ Անանկ
ալ Քրիստոս՝ չէ թէ իր անձը մեծարեց
քահանայապետ ըլլալու, հապա ան՝ որ
զրուցեց անոր՝ թէ Դուն իմ Որդիս ես,
6 ես այսօր քեզ ծնայ. Ինչպէս ուրիշ տեղ
մըն ալ կ'ըսէ. Դուն յաւիտեան քահա-
7 նայ ես Մելքիսեդեկի կարգին պէս. Որ
իր մարմինին օրերը սաստիկ գոչումով ու
արցունքով աղօթք և աղաչանք կը մա-
տուցանէր անոր՝ որ կարող էր զինքը մա-
հուանէ ազատելու, ու կը լսուէր իր ա-
8 ղէկութեանը համար. Թէպէտ ինքը Որ-
դի է, բայց ան չարչարանքներէն հնա-
9 զանդութիւն սորվեցաւ. Ու երբոր կա-
տարելացաւ՝ բոլոր իրեն հնազանդողներուն
յաւիտենական փրկութեանը պատճառ ե-
10 ղաւ. Ու Աստուծմէ յաւիտենական Քա-
հանայապետ ըսուեցաւ՝ Մելքիսեդեկին
կարգին պէս։
11 Որուն վրայով շատ խօսքեր ունինք, ու
դժուարին մեկնելու. ինչու որ դուք ա-
12 կանջներովնիդ ըթամիտ եղաք։ Որ պէտք
էր ձեզի ժամանակին նայելով սորվեցը-
նող ըլլալ. Բայց նորէն պէտք է ձեզի
սորվիլ՝ թէ ինչ են Աստուծոյ պատ-
գամներուն առջի սկզբունքները. ու դուք
կաթի կարօտ եղաք, և չէ՝ թէ հաստա-

Digitized by Google

տունն կերակուրի ։ Վասն զի ան ամէնը որ 13
կաթնկեր է՝ արդարութեան խօսքին անփորձ
է, որովհետեւ տղայ է ։ Բայց հաստատուն 14
տունն կերակուրը կատարեալներունն է ։ որ
անոնց չափահասն ըլլալուն համար, ուսմու-
նով զգայարանքնին սորված է աղէկը ու
գէշը ընտրելու ։

ԳԼ. Զ

Ուստի Քրիստոսի վրայով առջի սոր- 1
վելիքները թողլով՝ կատարելային գանք.
առանց նորէն հիմ ձգելու մեռած գործքե-
րէն ապաշխարելու՝ ու դէպ ի Աստուծոյ
հաւատք ունենալու, Նաև մկրտութիւննե- 2
րուն վարդապետութեանը, ու ձեռք դնե-
լուն, և մեռելներուն յարութեանը, ու
յաւիտենական դատաստանին ։ Ասոր ա- 3
նենք պիտի ընենք, Թէ որ Աստուած
հրամայէ ։ Ինչու որ անկարելի է մէկ անգամ 4
լուսաւորուածներուն՝ որ երկնաւոր պարգեւ-
ներուն համը առին, ու Հոգւոյն Սրբոյ
հաղորդ եղան, Նաև Աստուծոյ գեղեցիկ 5
խօսքին համը առին՝ ու գալու աշխարհին
զօրութիւնները, Եւ որ իյնան, նորէն 6
ապաշխարութեամբ նորոգուելու. որով-
հետեւ կրկին Աստուծոյ Որդին խաչը կը
հանեն իրենց անձին, ու նորէն կը խայտա-
ռակեն ։ Ինչու որ այն երկիրը որ իր 7
վրայ շատ հեղ եկած անձրեւը կը խմէ, և
յաճախ պտուղներ կը բերէ անոնց՝ որոնց
համար որ գործեցին, Աստուծմէ օրհնու-

8 Բայց որ փուշ ու տատասկ կը բերէ՝ անպիտան է, ու անէծքի
մօտ [illegible] որուն վերջը այրուիլ է ։
9 Բայց ձեզի համար, սիրելիներ՝ աւելի
աղէկ բաներ, [illegible] փրկութեան [illegible]
կը խօսինք ։
10 Չէ՛ թէ Աստուած անիրաւ
է, որ ձեր գործքերը մոռնայ՝ ու ան սէրը,
որ իր անուանը համար ցուցուցիք, որ
սուրբերուն ծառայեցիք՝ ու կը ծառայէք ։
11 Ամէնք ալ կը բաղձանք որ ձեզմէ ա-
մէն մէկը նոյն ջանքը ցուցընէ յոյսին
12 հաստատութեանը՝ մինչև վերջը ։ Որ դուք
[illegible] չըլլաք ։ Հապա նմանող ե-
ղէք անոնց՝ որ հաւատքով ու համբերու-
թիւնով ան խոստմունքները ժառանգե-
13 ցին ։ Ինչու որ երբոր Աստուած Աբրա-
համին ան խոստմունքը տուաւ, որովհետև
ուրիշ մէկ մը մեծ մը չունէր որ անոր վրայ
14 երդում ընէր, իր անձին վրայ երդում
ըրաւ ու ըսաւ ։ Այո՛ օրհնելով պիտի օրհ-
նեմ քեզ, ու շատցնելով պիտի շատց-
15 նեմ քեզ ։ Ու ասանկ երկայնամտութեամբ սպա-
16 սելով ան խոստմունքին հասաւ ։ Մարդիկ
որ մարդէն մեծ [illegible] որ իրենցմէ մեծ է՝ ա-
նոր վրայ երդում կ'ընեն, ու անոնց բո-
լոր հակառակութեանը հաստատութեան վերջը
17 երդումն է ։ Ասոր համար Աստուած
ալ խոստման ժառանգորդներուն իր [illegible] ա-
[illegible] անփոփոխութիւնը աւելի ցու-
ցընելու [illegible] երդումով միջնորդեց ։

Որ այն երկու անփոփոխելի բաներովը՝ որ- 18
ոնցմով անկարելի է Աստուծոյ սուտ խօս-
իլ, հաստատուն մխիթարութիւն
ունենանք մենք՝ որ ապաւինեցանք այն հան-
դերձեալ յոյսը ամուր բռնելու ։ Որ այն 19
յոյսը ունենանք իբրև մէկ հաստատ ու
անշարժ խարիսխ մը մեր անձին, որ վա-
րագոյրին ներսի կողմն ալ կը մտնէ ։ Ուր 20
որ մեր Առաջնորդը Յիսուս մեզի համար
մտաւ՝ յաւիտենական Քահանայապետ ե-
ղած՝ Մելքիսեդեկի կարգին պէս ։

## ԳԼ. Է.

Արդ՝ այս Մելքիսեդեկը, Սաղիմի 1
թագաւորն էր՝ Բարձրեալ Աստուծոյ քա-
հանան. որ Աբրահամը դիմաւորեց՝
երբոր անիկայ թագաւորներուն կոտորա-
ծէն դառնալով կու գար, ու օրհնեց զա-
նիկայ . Որ անոր՝ Աբրահամն ալ տասա- 2
նորդ տուաւ բոլոր բաներէն . առաջ՝ ար-
դարութեան թագաւոր կը թարգմանուի,
ետքը Սաղիմի թագաւոր՝ որ է խաղաղու-
թեան թագաւոր . Առանց հօր՝ առանց 3
մօր՝ ազգահամար չունեցող, որ ո՛չ անոր
օրերուն սկիզբը կայ՝ ո՛չ ալ կեանքին վեր-
ջը . Աստուծոյ Որդիին նման ըլլալով՝ կը
կենայ ու կը մնայ միշտ քահանայ ։
Արդ նայեցէք՝ թէ ինչո՛ր մարդ մըն 4
էր ասիկայ, որ անոր Աբրահամ նահա-
պետն ալ տասանորդ տուաւ կողոպուտէն ։
Եւ Ղեւիին որդիներէն քահանաները որ քա- 5

Digitized by Google

հանայութիւն կ'առնեն, պատուէր ունին
որ ժողովուրդէն տասանորդ առնեն՝ օրէն-
քին պէս, այսինքն է՝ իրենց եղբայրնե-
րէն. թէպէտ և Աբրահամին երանքէն ե-
6 լեր են. Բայց ան որ անոնցմէ ազգահամար
չունէր, Աբրահամէն տասանորդ առաւ.
ու օրհնեց զանիկայ՝ որ խոստմունքը առած
7 էր: Ինչու որ առանց մէկ հակառակու-
թեանի մը պզտիկը լաւէն կ'օրհնուի:
8 Եւ հոս մահկանացու մարդիկ տասանորդ
կ'առնեն. բայց հոն վկայուեցաւ թէ տա-
սանորդ առնողը կենդանի է: Եւ ինչ-
9 պէս խօսքին կարգն է ըսել, Լեւի
ալ՝ որ ինքը տասանորդ կ'առնէր, Աբրա-
10 համին ձեռքովը տասանորդ տուաւ. Ին-
չու որ տակաւին իր հօրը երանքն էր՝
երբոր Մելքիսեդեկ զանիկայ դիմաւորեց:
11 Ուստի թէ որ կատարումը Ղեւտացւոց
քահանայութեան ձեռքովն էր, (որով-
հետև ժողովուրդը անոր ատենը օրէնքին
տակը դրուեցաւ,) Ինչ պէտք էր որ
Մելքիսեդեկին կարգին պէս ուրիշ քա-
հանայ մը ելլէ, ու չըսուի թէ Ահարոնին
12 կարգին պէս: Արդ՝ քահանայութիւնը
փոխուելուն պէս, հարկ էր որ օրէնքին
13 ալ փոփոխութիւն ըլլայ: Եւ իրաւ փո-
խուեցաւ, ինչու որ ան՝ որուն համար
ասանկ կ'ըսուի, ուրիշ ցեղի հաղորդու-
թիւն ունեցաւ. որ ան ցեղէն մէկը բնաւ
14 սեղանին հաղորդ չեղաւ. Որովհետև յայտ-
նի է թէ Յուդային ցեղէն առաջ եկաւ


Digitized by Google

մեր Տէրը, որ անոր ցեղին վրայով Մովսէս
բան մը չզրուցեց քահանայից համար:
Եւ ալ աւելի յայտնի է որ փոխուեցաւ, թէ 15
որ Մելքիսեդեկին նման ուրիշ քահանայ
մը ելլելու ըլլայ, Որ ան չէ՛ թէ մարմնա- 16
ւոր պատուէրին պէս եղաւ, հապա ան-
վախճան կենաց զօրութեանը պէս: Ին- 17
չու որ վկայուեցաւ թէ՝ Դուն յաւիտեան
քահանայ ես Մելքիսեդեկին կարգին պէս:
Անարգութիւն կ'ըլլայ առջի պատուէրին 18
իր տկարութեանը ու անշահութեանը հա-
մար. (Ինչու որ օրէնքը մէկ բան մը կա- 19
տարելու չերաւ,) և մէկ աղէկ յոյսի
մը մտնելը՝ որ անով Աստուծոյ կը մօ-
տիկնանք:

Եւ այնքան որ՝ չէ՛ թէ առանց երդումի 20
քահանայ եղաւ, (ինչու որ կան անանկներ
որ առանց երդումի քահանայ եղած են.
Բայց ասիկայ երդումով անոր ձեռքովը, 21
որ իրեն ըսաւ. Տէրը երդում ըրաւ, ու
ալ պիտի չզղջայ. դուն յաւիտեանս քա-
հանայ ես.) Եւ այնքան աւելի աղէկ 22
ուխտի մը երաշխաւոր եղաւ Յիսուս:

Եւ եղած քահանաները շատ են, ինչու 23
միշտ մեռնելուն՝ մահը արգելք ըլլալուն հա-
մար. Բայց ասիկայ յաւիտեան կենալու 24
համար անանցանելի ունի քահանայութիւ-
նը. Ասոր բոլորովին կարող է կենդա- 25
նի ալ ընելու անոնք՝ որ իրմով Աստուծոյ
կու գան. որովհետև ինքը միշտ կենդանի
է անոնց համար բարեխօս ըլլալու:

Digitized by Google

26 Վասն զի մեզի ճիշդ ասանկ մէկ քահանա-
յապետ մը կը վայլէր , սուրբ՝ անմեղ՝ ան-
արատ՝ մեղաւորներէն զատուած՝ ու եր-
27 կինքէն ալ բարձրացած ․ Որ անոր ամէն
ատեն հարկ չէ՛ ինչպէս ուրիշ քահանա-
ներուն՝ առաջ իրենց մեղքերուն համար պա-
տարագ մատուցանել , ու ետքը ժողո-
վուրդին համար ․ հապա ասիկայ մէկ ան-
գամ մը ըրաւ ան , իր անձը պատարագ
28 մատուցանելով ։ Օրէնքը տկարութիւնով
պաշարուած մարդիկը քահանայապետ կը
կարգէ , բայց երդումին խօսքը որ օրէն-
քէն ետև էր , Որդին՝ որ յաւիտեան կա-
տարեալ է ։

## ԳԼ. Ը.

1 Նա գլխաւոր խօսքերուս բովանդակու-
թիւնը աս է ․ ասանկ քահանայապետ մը
ունինք մենք՝ որ ինքը երկինքը Աստուծոյ
մեծութեանը աթոռին աջ կողմը նստաւ ․
2 Սրբարանին պաշտօնեայ , ու ճշմարիտ
խորանին՝ որ Տէրը կանգնեց , և ոչ՛ թէ
3 մարդ ։ Որովհետև ամէն քահանայապետ
զոհեր ու պատարագներ մատուցանելու
համար կը կենայ ․ ուստի հարկ է անոր ալ
4 բան մը ունենալ՝ որ մատուցանէ ։ Որ
թէ երկրիս ըլլար , ալ ինքը քահանայ
չէր ըլլար ․ ինչու որ կային քահանաներ
որ պատարագ կը մատուցանէին օրէնքին
5 համեմատ ․ (Որ անոնք երկնային բանե-
րուն նմանութիւնովը ու օրինակովը կը

ծառայէին, ինչպէս որ Մովսէսին պատուի-
րուեցաւ՝ երբոր խորանը պիտի շինէր.
«Նայէ՛ ըսաւ, ամէնը ան օրինակին պէս
ընես՝ որ լեռը ցուցուեցաւ քեզի։) Սակայն 6
Յիսուս՝ ալ աւելի գերազանց պաշտօնի մը
հասաւ, որչափ որ աւելի աղէկ դաշինքի
մը միջնորդ է. որ գերազանց խոստումնե-
քով հաստատուեցաւ։
Ինչու որ եթէ առաջինը անարատ ըլ- 7
լար՝, ուրեմն երկրորդին տեղ չէր փընտռ-
ուեր։ Որովհետեւ կը յանդիմանէ ա- 8
նոնք ու կ'ըսէ. Ահա՛ օրեր պիտի գան՝
կ'ըսէ Տէրը. և ես Իսրայէլի տանը, հետ
ու Յուդայի տանը հետ նոր դաշինք մը
պիտի ընեմ. Ոչ՛ թէ ան դաշինքին պէս՝ 9
որ անոնց հայրերուն հետ ըրի ան օրը՝
երբոր ձեռքերնուն բռնեցի՝ Եգիպտա-
ցւոց երկրէն զանոնք հանելու, և ո-
րովհետեւ անոնք իմ դաշինքիս մէջը չը-
կեցան, ես ալ անհոգ եղայ անոնց վրա-
յով կ'ըսէ Աստուած Տէրը։ Բայց աս 10
է ան դաշինքը՝ որ Իսրայէլի տանը հետ
պիտի ընեմ ան օրերէն ետքը՝ կ'ըսէ Տէրը.
Իմ օրէնքներս անոնց միտքին մէջը պիտի
դնեմ, և զանոնք իրենց սրտին մէջը պի-
տի գրեմ. ու ես անոնց Աստուած պիտի
ըլլամ, անոնք ալ ինծի ժողովուրդ պիտի
ըլլան։ Ու ալ պիտի չսորվեցընեն ամէն 11
մէկը իր քաղաքացին, ու ամէն մէկը իր
եղբայրը, ու ըսեն՝ թէ Ճանչցի՛ր Տէրը.
ինչու որ ամէնն ալ զիս պիտի ճանչնան՝

Digitized by Google

12 անոնց պզտիկներէն մինչեւ մեծերը : Վասն
զի ես անոնց անիրաւութիւններուն նե-
րող պիտի ըլլամ, եւ անոնց մեղքերը ու
անօրէնութիւնները ալ պիտի չյիշեմ :
13 Ուստի նոր ըսելովը՝ առաջինը հինցուց .
ու ան որ կը հիննայ եւ կը ծերանայ՝ ալ
մօտ է աներեւութանալու :

## ԳԼ. Թ.

1 Արդ առաջին խորանն ալ ունէր
պաշտամունքի արարողութիւնները, ու
այն տեղը՝ աշխարհային սուրբ տեղը :
2 Ինչու որ առաջին խորանը որ Սրբութիւն
կ՚ըսուէր, ատանկ պատրաստուեցաւ . ու-
րուն մէջն էր աշտանակը ու սեղանը՝ եւ
3 առաջաւորութեան հացը : Իսկ երկրորդ
վարագոյրին ետին այն խորանը՝ որ Սըր-
4 բութիւն սրբութեանց կ՚ըսուէր . Որուն
մէջն էր ոսկի բուրվառը, ու կտակարանին
տապանակը՝ ներսէն ու դուրսէն
ոսկիով պատած . որուն մէջն էր ոսկիէ
սափորը մանանայով լեցուն, եւ Ահարոնին
գաւազանը՝ որ ծաղկեցաւ, եւ ուխտին
5 տախտակները . Իսկ անոր վրայ փառաց
քերովբէները՝ որ քաւութեան վրայ շուք
կ՚ընէին . որոնց համար պէտք չէ հիմա
մէկիկ մէկիկ զրուցել :
6 Իսկ ան ասոնք ասանկ պատրաստուած
ըլլալով, առջի խորանը ամէն ատեն կը
մտնէին քահանաները՝ պաշտամունքը կա-
7 տարելու . Բայց երկրորդը՝ տարին մէկ

Digitized by Google

անգամ մը՝ միայն քահանայապետը՝ կը
մտնէր . ան ալ չէ՝ թէ առանց արիւնի ,
որ իրեն համար՝ ու ժողովուրդին սխալ-
մունքներուն համար կը մատուցանէր : Հո- 8
գին Սուրբը ասով ցուցընելով , քանի որ
սրբութեանց ճանապարհը յայտնի եղած
չէր . քանզի տակաւին այն առջի խորանը
հաստատուն կեցեր էր . Որ այն օրինակ 9
մըն էր այն ժամանակին՝ որ պատարագներ
և զոհեր կը մատուցուէին . որոնք խղճմ-
տանքին կողմանէ չէին կրնար կատարելա-
պէս մաքրել պաշտօնեաները . Հապա
միայն կերակուրներով ու խմելիքներով ,
Ու կերպ կերպ լուացումներով մարմինի 10
արդարութիւններ էին , որոնք մինչև ուղ-
ղութեան ատենը կը կենային : Իսկ 11
Քրիստոս որ եկաւ՝ գալու բարիքներուն
Քահանայապետը՝ մեծ ու կատարեալ և
անձեռագործ խորանովը , այսինքն՝ ան որ
աս ստեղծուածներէն չէ . Ոչ ալ նո- 12
խազներուն ու զուարակներուն արիւնովը ,
հապա իր արիւնովը , մէկ անգամ մը
սուրբ տեղերը մտաւ՝ յաւիտենական փըր-
կութիւն գտնելով : Վասն զի թէ որ 13
ցուլերուն ու նոխազներուն արիւնը՝ և
երինջներուն մոխիրը ցանուելով պղծեալ-
ները կը սրբէր մարմինի մաքրութեան կող-
մանէ . Ալ ո՛րչափ աւելի Քրիստոսի ա- 14
րիւնը՝ որ յաւիտենական Հոգիին ձեռ-
քովը իր անձը անարատ պատարագ մա-
տուց Աստուծոյ . կը սրբէ ձեր խղճմտանքը

Digitized by Google

ան մեռած գործքերէն՝ կենդանի Աստուա-
ծը պաշտելու ։
15 Եւ անոր համար ինքը այս նոր դաշին-
քին միջնորդն է ․ որ իր մահը առջի դա-
շինքին յանցանքներուն քաւութեանը հա-
մար եղած ըլլալով , յաւիտենական ժա-
ռանգութեան հրաւիրուածները անոր խոստ-
16 մունքը առնեն ։ Վասնզի ուր որ կտակ մը
ըլլայ՝ հարկաւոր է որ անոր կտակը գրողին
17 մեռած ըլլալը ցուցուի ․ Քանզի որ կտակը
մեռնելէն ետև հաստատ է ․ հապա թէ չէ՝
ի՞նչպէս հաստատ կ՚ըլլայ՝ քանի որ կտակը
18 գրողը ողջ է ։ Անոր համար առջի դա-
շինքն ալ առանց արիւնի չէր հաստա-
19 տուեր ։ Վասն զի երբոր օրէնքին ամեն
պատուէրները Մովսէս ժողովուրդին պատ-
մեց , զուարակներուն ու նոխազներուն արիւնը
առնելով ջուրով ու բոսորով , կարմիրով
և զոպայով բուն կտակարաններուն և
20 բոլոր ժողովուրդին վրայ սրսկեց , Եւ ը-
սաւ ․ Ասիկայ է ան կտակին արիւնը , որ
21 Աստուած ձեզի պատուիրեց ։ Եւ խորա-
նին վրայ , ու սպասին բոլոր գործիքներ-
22 ուն վրայ նոյնպէս սրսկեց արիւնը ։ Եւ
գրեթէ ամէն բան արիւնով կը մաքրուէր
օրէնքին նայելով , ու արիւն չթափուե-
լով թողութիւն չէր ըլլար ։
23 Ասոր համար էր որ օրէնքով եղած բա-
ները անանկ պատարագներով սրբուէին ,
բայց բուն երկնաւորները անոնցմէ աւելի
24 աղէկ պատարագներով ։ Որովհետև Քրի-

Digitized by Google

րիստոս չէ՛ թէ ձեռքով շինուած սուրբ
տեղերը մտաւ, որ ճշմարիտին օրինակ-
ներ էին. հապա բուն երկինքը՝ մեզի հա-
մար Աստուծոյ երեսին առջեւը երեւելու.
Ոչ՛ թէ որ շատ անգամ իր անձը պատա- 25
րագ մատուցանէ, ինչպէս քահանայապե-
տը՝ որ ամէն տարի սրբութիւն սրբու-
թեանցը կը մտնէր օտար արիւնով. Հա- 26
պա թէ չէ՛ պէտք էր իրեն աշխարհի
սկիզբէն հետէ շատ անգամ չարչարուիլ.
բայց ահա՛ հիմա մէկ անգամ մը դարե-
րուն վերջը իր անձին պատարագովը յայտ-
նուեցաւ՝ մեղքը մէկդի ձգելու համար:
Ու ինչպէս որ մարդոց սահմանուած է 27
մէկ անգամ մը մեռնիլ, ու անկէ ետքը
դատաստան. Նմանկ ալ Քրիստոս մէկ 28
անգամ մը պատարագ մատուցուեցաւ՝
շատերուն մեղքերը վերցնելու համար.
բայց երկրորդ անգամին առանց մեղքի
պիտի յայտնուի՝ փրկութեան համար ա-
նոնց՝ որոնք հաւատքով անոր կը սպասեն:

ԳԼ. Ժ.

Քանզի օրէնքը գալու բարիքներուն 1
շուքը ունէր, ու չէ՛ թէ անոնց բաներուն
բուն կերպարանքը. ամէն տարի նոյն պա-
տարագներովը միշտ կը մատուցանեն, որոնք
կարող չեն անոնց մօտեցողները կատա-
րեալ ընելու: Հապա թէ չէ՛ կը դադ- 2
րէին մատուցանելէն, մէկ անգամ մաքր-
րուած պաշտօնեաները ալ անկէ ետք

Digitized by Google

[illegible]
3 [illegible]
4 [illegible]
[illegible]
5 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
6 [illegible]
7 [illegible]
[illegible]
[illegible]
8 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
9 [illegible]
[illegible]
[illegible]
10 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
11 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
12 [illegible]
[illegible]
13 [illegible]
[illegible]

Digitized by Google

նամիները իր ոտքին տակը դրուին ։ Ինչու- 14
զի որ մէկ պատարագով մը մշտնջենաւո-
րապէս կատարեց սրբուածները ։
Նաեւ Հոգին Սուրբը ալ կը վկայէ մե- 15
զի , առաջուց ըսելէն ետեւ , Թէ Սա է 16
ան ուխտը՝ որ ես անոնց հայրերուն հետ
պիտի ընեմ ան օրերէն ետքը , ( կ՚ըսէ
Տէրը , ) իմ օրէնքներս անոնց սրտին մէ-
ջը պիտի դնեմ , ու անոնց միտքին մէջը
պիտի գրեմ զանոնք ։ Ետքը կ՚ըսէ , Թէ 17
Անոնց մեղքերը եւ անօրէնութիւն-
ները ալ պիտի չյիշեմ ։ Արդ ուր որ 18
թողութիւն կայ , ալ մեղքի համար պա-
տարագ պէտք չէ ։
Ուրեմն եղբայրներ՝ համարձակութիւն 19
ունինք սուրբ տեղը մտնելու (Յիսուսի ա-
րիւնովը , Այն նոր ու կենդանի ճամբովը 20
որ բացաւ մեզի վարագոյրին ձեռքովը
այսինքն իր մարմինովը ։ Եւ մեծ քահա- 21
նայ մը ունենալով Աստուծոյ տանը վրայ ,
Մօտենանք ճշմարիտ սրտով լեցուն հա- 22
ւատքով , սրտերնիս չար խղճմտանքէն լուա-
նալով , ու մարմիննիս մաքուր ջուրով
լուացուելով ։ Մենք բռնենք ան յոյսին 23
դաւանութիւնը առանց շարժելու ։ Ինչու
որ հաւատարիմ է ինքը՝ որ խոստում տուաւ ։
Եւ մէկզմէկու հոգ տանինք՝ սիրելու ու 24
բարի գործքեր ընելու յորդորելով ։ Եւ 25
մէկտեղ ժողվուիլը չթողունք , ինչպէս մէկ
քանիներուն սովորութիւն ունին ։ Հապա
մէկզմէկ յորդորենք , ու ասիկա աւելի
որչափ որ ան օրը մօտեցած կը տեսնէք ։

Digitized by Google

26 Վասն զի թէ որ ճշմարտութեան գիտու-
թիւնը ընդունելէն ետեւ՝ ուզելով մեղք
գործելու ըլլանք, այլ անկէ ետեւ մեղ-
քերու համար պատարագ պէտք չէ՛.
27 Հապա մէկ զարհուրելի սպասել մը դա-
տաստանին, ու կրակին բարկութեանը,
28 որ պիտի լափէ հակառակորդները։ Մէ-
կը թէ որ Մովսէսին օրէնքը անարգէր,
առանց ողորմութեան երկու կամ երեք
29 վկաներով կը մեռնէր. Նա ո՞րչափ սաս-
տիկ պատիժի արժանի կը սեպէք անիկայ,
որ Աստուծոյ Որդին ոտքի տակ առաւ,
ու նոր ուխտին արիւնը խառնակ սեպեց,
որ անով ինքը սրբուեցաւ, և շնորհաց
30 Հոգին անարգեց։ Վասն զի գիտենք անի-
կայ որ ըսաւ. Ինծի է վրէժխնդրութիւնը,
ու ես պիտի հատուցանեմ՝ կ՚ըսէ Տէրը.
և դարձեալ՝ Թէ Տէրը կը դատէ իր ժո-
31 ղովուրդը։ Խիստ վախնալու բան է
կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը։
32 Սակայն միտք բերէք այն առջի օրերը՝
երբոր լուսաւորուած՝ շատ մեծերու ու
33 չարչարանքներու համբերեցիք. Երբեմն
նախատինքներով ու նեղութիւններով
խայտառակուած, երբեմն ալ անանկ աշ-
խատութիւն քաշողներուն կցորդ ըլլալով.
34 Ինչու որ կապուածներուս հետը չարչա-
րուեցաք, ու ձեր ստացուածքին կողոպ-
տուիլը ուրախութեամբ ընդունեցիք. ու-
րովհետև գիտէիք որ ալ աւելի աղէկ
ստացուածք մը ունիք ձեզի երկինքը, որ

Digitized by Google

կը կենայ ու կը մնայ ։ Ուստի ձեզմէ մի՛ 35
ձգէք այն ձեր վստահութիւնը, որ շատ
մեծ վարձքի հատուցում ունի ։ Պէտք է 36
ձեզի համբերութիւն, որ Աստուծոյ կամ-
քը ընելով խոստմունքին հասնիք ։ Քանզի 37
որ ալ անկից քիչ մը ատենէն ան որ գալո-
լու է պիտի գայ, ու պիտի չուշանայ ։
Արդարն ալ որ իմ առջևս հաւատքէն պի- 38
տի ապրի ։ Եւ թէ որ մէկը ետ կենայ իմ
անձս անոր չհաճիր ։ Բայց մենք չենք 39
թէ ետկենալութեամբ կորսուողներէն ենք ։
հապա հաւատքով հոգինիս փրկողնե-
րուն ։

ԳԼ. ԺԱ.

Հաւատքը ինչ է, եթէ ոչ յուսա- 1
ցուած բաներուն հաստատութիւնը, ու
չերևցած բաներուն ապացոյցը ։ Վասն 2
զի անով առջինները վկայութիւն առեցան ։
Հաւատքով կիմանանք թէ աշխարհ- 3
քը Աստուծոյ խօսքովը հաստատուեցաւ,
ու անտեսանելի բաներէն աս երևցածնե-
րը եղան ։
Հաւատքով Աբէլը Կայէնէն աղէկ պատա- 4
րագ մը մատուցանելով Աստուծոյ, անով
արդար ըլլալուն վկայութիւն առաւ, Աստուած
որ իր պատարագներուն վրայ Աստուած
վկայութիւն ըրաւ ։ ու թէպէտ մե-
ռաւ՝ անով, բայց անով կը
խօսի ։
Հաւատքով Ենովքը փոխադրուեցաւ 5
որ մահը չտեսնէ ։

ու մէկ անեղ մը չէր գտնուեր, ինչու որ
Աստուած փոխադրեց զանիկայ։ Եւ անոր
փոխադրութենէն առաջ՝ վկայուեցաւ, թէ
6 Աստուծոյ հաճոյ է։ Բայց առանց հաւա-
տքի անկարելի բան է Աստուծոյ հաճոյ
ըլլալ. Հապա ան որ Աստուծոյ կը մօտե-
նալ կ'ուզէ՝ պէտք է որ հաւատայ՝ թէ Աս-
տուած կայ, ու պարգեւ կը հատուցանէ
անոնց՝ որ զինքը կը փնտռեն։
7 Հաւատքով՝ Նոյ հրաման մը առնելով
Աստուծմէն՝ դեռ չերեւցած բաներուն համար
մեծ երկիւղածութեամբ տապանը կը շինէր՝ իր
տանը փրկութեան համար. որով աշխարհն
դատապարտեց, եւ ժառանգորդ եղաւ
այն արդարութեանը՝ որ հաւատքովը կ'ըլ-
լայ։
8 Հաւատքով՝ երբոր Աբրահամը կան-
չուեցաւ՝ մտիկ ըրաւ ան տեղը ելլելու՝
որ ժառանգութեան պիտի առնէր. ելաւ
գնաց, ու չէր գիտեր թէ ո՛ւր կ'երթայ։
9 Հաւատքով պանդխտութիւն ըրաւ խոստման
երկիրին մէջ՝ իբրեւ թէ օտարութեան մէջ,
վրաններու տակ բնակելով Իսահակին ու Յա-
կոբին հետ, որ իր հետ ժառան-
10 գորդ էին նոյն խոստմանը։ Ինչու
որ ինքը կը սպասէր այն հիմերով հաստատ-
ուած քաղաքին, որուն ճարտարապետը
ու արարիչը Աստուած է։
11 Հաւատքով ինքը Սառան ալ, որ ա-
մուլ էր, սերմնաւորութեան սերմը առնելու
զօրութիւն ընդունեցաւ, եւ տարիքը անցած
հասակին մէջ զաւակ ծնաւ. ինչու որ հաւա-

Digitized by Google

ապատարքին՝ սեպեց պատժեմ՝ որ լինին փառք
ոսկւոյ ։ Մարդս ան մէկ հատուկն կը ծածկ- 12
նէն , ( ան ալ Ոփիրի ոսկիէն աւելի պատուական , )
երկինքը պատուհասին պէտք շարժ , ու ծածկե-
րերը երկրի տեղէն պէտք շարժին Տեառ-
նածի ։
Ամենք անձերն ալ Հարուածով մեռան ։ 13
Եւ զօրաւոր խոնարհեցուցի զաւակ ։ Հալածեալ
Տեառն տեսուն զօրանք ու ամբարտաւան ,
և խոնարհեցուցանեմ թէ օտարները ու պատե-
րազմողները են երկրի վրայ ։ Ոչխարի ու- 14
նոխազ որ առանց հովիւի կը խուսին՝ յայտնի
կ'ըլլան թէ մէկ զայրոյթ մը կը փնտռեն ։
Որ մեծ է, անիծեալ յետևին՝ ուրիշ որ եղան , 15
ծակուածներ , կամ Հոն դառնալու ։ Անոնց 16
մէկ տղաքն զարնուած մը կը փախչեն ,
այսինքն երկիրներէն ։ Ուստի անոնց չպի-
տեր Բաբելոն՝ անոնց Ասորեստանը բաժնե-
լու ։ Իրենց որ ծնունդ անոնց քաղաքը մը
պատերազմենց ։
Հաւաքեցի Մարաստան իր կործանելու 17
այժմէն իրենց Հալածակը պատերազմող մեծամեծ են ։ Եւ
անոնց որ խոնարհեցնել առանց որ իր մէկ Հատ-
ուածք զօրաւոր կը մեռուցանեն ։ Ամեն ու 18
տանգեամ թէ խորտակեալ բոլ զերդ այբերն ու
կանգնած ։ Իր մեղքին մեղքը դըլեր , Թէ 19
Բաբելոն մեծութեներն ալ կարող է յար-
քութեանն ։ ուսկից օրինակով մը զեղու-
նեց զանիկայ ։
Հանապազօր զայրը բանեցուն Հաւաքր 20
Մորքայից կանգնած՝ խաւարակ օրերց Ալա-
Digitized by Google

21 կոբը ու Եսաւը։ Հաւատքով Յակոբ
իր մեռնելու ատենը՝ Յովսէփին որդինե-
րէն ամէն մէկը օրհնեց, եւ երկրպագու-
թիւն ըրաւ իր գաւազանին գլխուն վրայ։
22 Հաւատքով Յովսէփ իր վախճանելու ա-
տենը յիշեց Իսրայէլի որդւոցը Եգիպտո-
սէն ելլելը, ու իր ոսկորներուն համար
պատուէր տուաւ։
23 Հաւատքով երբոր ծնաւ Մովսէս, իր
ծնողքներուն ձեռքովը երեք ամիս գաղ-
տուկ պահուեցաւ. ինչու որ տղան գե-
ղեցիկ տեսան, ու չվախցան թագաւորին
24 հրամանէն։ Հաւատքով Մովսէս երբոր
մեծցաւ՝ չընդունեց Փարաւոնի աղջկանը
25 որդի ըսուիլ. Աղէկ սեպեց Աստուծոյ
ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ
մէկ ժամանակ մը մեղքի մէջ քաղցր վա-
26 յելել. Մեծը մեծ սեպեց Քրիստոսին
նախատինքները, քան թէ Եգիպտացւոց
գանձերուն մեծութիւնը, ինչու որ վար-
ձատրութեան կը սպասէր վարձքերուն հատուցման
27 մտիկ կ՚ընէր։ Հաւատքով Եգիպտացւոց եր-
կիրը թողուց, ու չէր վախնար թագաւո-
րին բարկութենէն. ինչու որ համբե-
րութիւնով աներեւոյթը կարծես տեսնէր
28 պէս տեսնելով։ Հաւատքով ըրաւ զատիկը
եւ արեան սրսկելը, որ անդրանիկները
սատկեցընողը իրենց չմօտենայ։
29 Հաւատքով Կարմիր ծովէն անցան՝ որ-
պէս թէ ցամաք երկիրէ մը. որ անոր փոր-
ձը ընելով Եգիպտացիները ընկղմեցան։
30 Հաւատքով Երիքովին պարիսպները ին-

Digitized by Google

[illegible]

[illegible] 31

[illegible] 32

[illegible] 33

[illegible] 34

[illegible] 35

[illegible] 36

[illegible] 37

[illegible] 38

[illegible] 39

40 դնէ ան խոստումները չառին ։ Աստուած
աւելի աղէկ սեպեց մեզի համար, որ ա-
նոնք առանց մեզի չկատարուին ։

ԳԼ. ԺԲ.

1 Ուստի մենք ալ՝ որ այսքան վկաներուն
բազմութիւնը մեր բոլորտիքը պատած
ունինք, բոլոր հպարտութիւնները մէկդի
ձգենք՝ և դիւր կցորդ եղած մեղքը. համ-
բերութիւնով վազենք մեր առջևը եղած
2 ասպարէզին. Յիսուսի նայինք՝ մեր հա-
ւատքին առաջնորդին ու կատարողին. որ
ինքը ան ուրախութեանը համար՝ որ իր
առջևը կեցած էր՝ խաչը յանձն առաւ,
ամօթը արհամարհեց, ու Աստուծոյ ա-
թոռին աջ կողմը նստաւ ։
3 Ուրեմն մի՛տք բերէք անիկայ, որ ա-
սանկ համբերեց մեղաւորներուն իրէն դէմ
հակառակ կենալուն. որ չըլլայ թէ ձեր
4 անձերը յոգնին ու թուլնան. Որ տա-
կաւին արիւն թափելու չափ պատերազ-
5 մելով հակառակ չկեցաք մեղքին. Ու
մոռցաք ան յորդորանքը որ ձեր հետը՝
որպէս թէ զաւկըներու հետ կը խօսի,
Ո՛վ տղաս՝ Տէրոջը պատիժէն մի՛ թուլ-
նար, ու անկից յանդիմանուելով վատա-
6 սիրտ մի՛ ըլլար ։ Ինչու որ Տէրը իր
սիրածը կը պատժէ. կը ծեծէ ամէն որ-
7 դին՝ որ ինքը կ՚ընդունի ։ Պատիժին մէ-
ջը համբերութիւնով որ կենաք, Աստուած
ձեզի հետ՝ որպէս թէ որդիներու հետ կը
վարուի. Ո՞ր որդին է ան որ հայրը չը-

Digitized by Google

պատժէ՝ անիկայ։ Որ եթէ դուք պա- 8
տանց պատիժի ըլլաք, որուն ամէնը
մասնակից եղան. ուրեմն խորթ էք դուք՝
ու չէ՛ թէ որդիներ։ Աստն զի թէ որ 9
մեր մարմնաւոր հայրերէն՝ որոնք մեզի
պատժող ունէինք, կ'ամչնանք, ալ ո՞ր-
չափ աւելի հոգիներուն Հօրը պէտք հնա-
զանդինք ու ապրինք։ Ինչու որ անոնք 10
քիչ մը ժամանակ իրենց կամքին պէս
կը պատժեն մեզ. բայց անիկայ մեր օգու-
տին համար՝ որ անոր սրբութեանը հաղորդ
ըլլանք։ Եւ խրատ՝ ամէն պատիժ նոյն 11
ատենը ուրախարար չթուիր, հապա
տրտմական. բայց ետքը արդարութիւ-
նով խաղաղութեան պտուղ կը հատուցա-
նէ անով վարժուողներուն։

Ուստի թուլցած ձեռքերը ու տկար 12
ծունկերը հաստատեցէք։ Եւ շիտակ 13
ճամբաներ ըրէք ձեր ոտքերուն. որ չըլ-
լայ թէ ան որ կաղ է՝ գլորի, այլ մա-
նաւանդ բժշկուի։ Խաղաղութեան կանէ՛ 14
եղէք ամենուն հետ՝ և սրբութեան. որ
առանց անոր՝ մէկը չկրնար Տէրը տեսնել։
Զգո՛յշ եղէք. չըլլայ որ մէկը Աստուծոյ 15
շնորհքէն ետ մնայ. չըլլայ որ մէկ լեղի
արմատ մը վեր բուսնելով ձեզ նեղէ, ու
անով շատերը պղծուին։ Չըլլայ որ մէ- 16
կը պոռնիկ ըլլայ՝ ու անսուրբ՝ Եսաւին
պէս. որ կերակուրի մը համար անդրան-
կութիւնը ծախեց։ Գիտէք որ թէպէտ 17
ետքը ուզեց օրհնութիւնը ժառանգել,
բայց անարգուեցաւ. ինչու որ ապաշխա-

րութեան տեղ չգտաւ, հօրը քով , թէ-
պէտև արտասուքով խնդրեց զանիկայ ։
18 Ինչու որ դուք շօշափելի լեռը չէք ե-
կեր , որ կրակով կը վառէր , ու մէգով և
մառախուղով ու խաւարով և մրրկով
19 պատած էր , Ու այն տեղ որ փողը կը
փչուէր , ու խօսքերուն ձայնը կը լսուէր ․
որ անիկայ լսողները եա կեցան , որ մէյ-
20 մըն ալ ան խօսքը չըսուի իրենց ․ Ինչու
որ չէին կրնար դիմանալ ան հրամանքին ․
որ թէ և գազան մըն ալ մօտիկնար լեռ-
21 ւանը՝ կը քարկոծուէր ․ Ու անանկ ա-
հաւորին էր՝ ան երեւոյթը՝ որ Մովսէս ալ
կ'ըսէր թէ՝ Վախեր կը վախնամ ու կը
22 դողամ ․ Հապա դուք Սիոն լեռը եկեր
էք՝ ու կենդանի Աստուծոյ քաղաքը՝ Երկ-
նային Երուսաղէմը , և հրեշտակներուն
23 բիւրաւոր ժողովքին , Ու երկինքը գրուած
անդրանիկներուն ժողովքին , և Աստուծոյ՝
որ ամենուն Դատաւորն է , ու արդարնե-
24 րուն հոգիներուն՝ որ կատարուեր են , Ու
Յիսուսի՝ որ նոր դաշինքին միջնորդն է ,
ու անոր արիւնին թափուելուն՝ որ Աբէ-
լին արիւնէն աւելի աղէկ կը խօսի ։
25 Զգո՛յշ եղէք՝ չըլլայ որ եա քաշուիք
անկէց որ ձեզի հետ կը խօսի ․ Ինչու որ եթէ
անոնք չփրցան ազատիլ եա կենալով ան-
կէց՝ որ երկրի վրայ հրաման կու տար ․
ալ ո՞րչափ աւելի մենք՝ թէ որ երկնաւո-
26 րին կռնակ դարձնենք ․ Որ անոր ձայնը
ան ատենը երկիրը շարժեց ․ և հիմա խոստ-
ացեր է ու կ'ըսէ ․ Դարձեալ մէյմըն շարժեմ

Digitized by Google

չէ՝ թէ միայն երկիրը՝ հապա նաեւ երկին-
քը ։ Այս ան "Նորէն" խօսքը կը ցուցնէ 27
շարժուած բաներուն փոփոխումը՝ իբրեւ
բաներուն պէս, որ անշարժ բաները հաս-
տատուն կենան ։ Ուստի շարժելու թագա- 28
ւորութիւնը առած ըլլալով՝ ունե-
նանք ան շնորհքը, որ անով Աստուծոյ
կը պաշտենք հաճոյ ըլլալու վախով ու-
դողով ։ Ինչու որ մեր Աստուածը մաշող 29
կրակ է ։

## ԳԼ. ԺԳ.

Եղբայրսիրութիւնը ձեր մէջը հաստատ 1
մնայ ։ Օտարասիրութիւնը մի մոռնաք. 2
Ինչու որ անով ոմանք հրեշտակներ ընդ-
ունեցին չգիտնալով ։ Միտքերնիդ ըլ- 3
լան կապուածները, որպէս թէ անոնց
հետ դուք ալ կապուած էք ։ Եւ չարչար-
ուածները, որպէս թէ դուք ալ մարմին
ունեցող էք ։ Ամուսնութիւնը բոլորովին 4
պատուական է, ու անկողինը սուրբ է ։
Բայց շնացողները ու պոռնիկները կը դա-
տէ Աստուած ։ Բարքերնիդ արծաթա- 5
սէր չըլլայ, բաւականացէք ունեցած
բանով որ ձեռքերնիդ կայ ։ Ինչու որ ինքը
ըսաւ' թէ Քեզ պիտի չթողում, ու
երբեք պիտի չձգեմ ։ Անանկ որ համարձա- 6
կակ ըլլանք ըսելու. Տէրը իմ օգնականս
է' ու ես պիտի չվախնամ, մարդը ինծի
ի՞նչ պիտի ընէ ։ Յիշեցէք ձեր առաջ- 7
նորդները' որ Աստուծոյ խօսքը ձեզի խօ-
սեցան. անոնց վարքին վերջը նայե-

Digitized by Google

րով՝ իրենց հաւատքին նմանող եղէք ։
8 Յիսուս Քրիստոս նոյն է երէկ ու այսօր,
և յաւիտեան ։
9 Այլեւայլ կերպ և օտարաձայն ուսմունքնե-
րով մի՛ մոլորիք. ինչու որ աղէկ է շնորհ-
քով հաստատել սիրտը՝ և ոչ թէ կերա-
կուրներով. որ անոնցմով օգուտ մը չու-
10 նեցան անոնք՝ որ անանկ գացին ։ Սե-
ղան մը ունինք մենք՝ ուսկից իշխանու-
թիւն չունին ուտելու անոնք՝ որ խորանին
11 ծառայութիւն կ'ընեն ։ Քանզի որ ան-
ասուններուն արիւնը որ սուրբ տեղին
մէջը կը մատուցուէր մեղաց համար քա-
հանայապետին ձեռքովը, անոնց մարմին-
12 ները բանակէն դուրս կ'այրուէին ։ Անոր
համար Յիսուս ալ՝ որ իր արիւնովը ժո-
ղովուրդը պիտի սրբէր, դռնէն դուրս չար-
13 չարուեցաւ ։ Աստի եկէք իրեն ելլենք
բանակէն դուրս, վրանիս առնելով անոր
14 նախատինքը ։ Ինչու որ մենք հոս մնա-
լու քաղաք չունինք, հապա հանդերձեալը
15 կը փնտռենք ։ Աստի անոր ձեռքովը ա-
մէն ատեն Աստուծոյ օրհնութեան պա-
տարագ մատուցանենք, այսինքն՝ մեր շըր-
թունքներուն պտուղը՝ որ իր անունը կը
16 դաւանեն ։ Բարերարութիւնը, ու աղ-
քատներուն պէտք եղածին հաղորդ ըլլա-
լը մի՛ մոռնաք. ինչու որ Աստուած ա-
17 նանկ պատարագներուն կը հաւնի ։ Ձեր
առաջնորդներուն մտիկ ըրէք, ու անոնց
հպատակ կեցէք. ինչու որ անոնք ձեր
հոգիներուն համար կը հսկեն, որպէս թէ

Digitized by Google

իրենք ձեզի համար հաշիւ պիտի տան. որ
խնդութիւնով ընեն ան գործը, և ոչ՝ թէ
հառաչելով, որ ան ձեզի օգտակար չէ:
Մեզի համար աղօթք ըրէք. ինչու որ մենք 18
հաստատ գիտենք՝ թէ աղէկ խղճմտանք
ունինք. ամէն բանի մէջ կ՚ուզենք աղէկ
վարմունք ցուցընել: Այս մանաւանդ կ՚ա- 19
ղաչեմ՝ որ այնպէս ընէք, որ աւելի շու-
տով ձեզի դառնամ:

Այս խաղաղութեան Աստուածը՝ որ մե- 20
ռելներէն հանեց ոչխարներուն մեծ Հովիւը՝
մեր Տէր Յիսուսը յաւիտենական ուխտին
արիւնովը, Ձեզ բարի գործքերու մէջ 21
հաստատէ՝ իր կամքը ընելու. և մեր մէջը
իր առջևը հաճոյ եղածը ընէ Յիսուս Քրի-
ստոսի ձեռքովը. որուն փառք յաւի-
տեանս. ամէն:

Կ՚աղաչեմ ձեզի եղբայրներ՝ ան յորդո- 22
րական խօսքիս համբերել. ինչու որ ես
քիչ գրեցի ձեզի: Այս կը ճանչնաք ձեզի 23
արձկուած ան մեր Տիմոթէոս եղբայրը,
որուն հետ՝ թէ որ շուտով գայ՝ պիտի
տեսնեմ ձեզ: Բարև ըրէք ձեր բոլոր 24
առաջնորդներուն, ու բոլոր սուրբերուն.
բարև կու տան ձեզի անոնք որ Իտալա-
ցւոց կողմերն են: Շնորհքը ձեր ամենուն 25
հետը ըլլայ. ամէն:

Digitized by Google

# ՅԱԿՈԲԱՅ
# ԱՌԱՔԵԱԼԻՆ
# ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Յակոբոս՝ Աստուծոյ ու Տէր Յիսուս
Քրիստոսի ծառան, տասներկու ցեղերուդ՝
որ ամէն կողմ ցրուած էք, ողջո՛յն ։
2 Ո՛վ եղբայրներս՝ բոլորովին ուրախ ըլլալու
արժանի բան սեպեցէք, երբոր կերպ կերպ
3 փորձանքներու մէջ կ՚իյնաք ։ Գիտնալով որ
ձեր հաւատքին փորձառութիւնը աղէկ
կարգի դրուած՝ համբերութիւն կը գործէ ։
4 Բայց համբերութիւնը կատարեալ գործ
թո՛ղ ունենայ, որ ամբողջ ու կատարեալ
ըլլաք, ու բանի մը պակսութիւն չունենաք ։

5 Հապա թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ պակսած ըլլայ, թո՛ղ խնդրէ Աստուծմէ՝ որ ամենուն առատապէս կու տայ ու չնախատեր, և անոր պիտի տրուի ։
6 Միայն թէ հաւատքով թո՛ղ խնդրէ ու
չերկմտի. վասն զի ան որ երկմիտ է՝ ծովին
հողմակոծեալ ու տատանեալ ալիքներ-
7 րուն նման է ։ Ան մարդը թո՛ղ յոյս
չունենայ Աստուծմէ բան մը առնելու.

Digitized by Google

Ինչու որ երկմիտ մարդը անհաստատ է՛ իր 8
բոլոր ճամբաներուն մէջը ։
Խոնարհ եղբայրը իր բարձրութեանը 9
վրայ թո՛ղ պարծենայ , Նաեւ ան որ հա- 10
րուստ է՝ իր խոնարհութեանը վրայ . ին-
չու որ անիկայ խոտի ծաղիկի մը պէս պի-
տի անցնի . Քանզի արեւը տաքուկ տա- 11
քութիւնով մը կը ծագէ՝ ու կը ցամքեցը-
նէ խոտը , և անոր ծաղիկը կը թափի , ու
իր երեւոյթին գեղեցկութիւնն ալ կը կոր-
սուի . անանկ ալ հարուստը իր վաստը-
կածներովը պիտի թառամի ։
Երանելի է այն մարդը որ փորձութիւն- 12
ներու կը համբերէ . ինչու որ եթէ անով
փորձուած ընտիր գտնուի՝ կենաց պսակը
պիտի առնէ , որն որ Տէրը իր սիրելի-
ներուն խոստացաւ ։ Չըլլայ որ մէկը որ 13
փորձութեան մէջ է՝ ըսէ , թէ Աստուծմէ
կը փորձուիմ . ինչու որ Աստուած չար
բաներով չփորձուիր . ո՛չ ալ ինքը մէ-
կը կը փորձէ ։ Ամէն մէկը կը փորձուի՝ 14
իր ցանկութիւններէն քաշուած ու խա-
բուած . Անկէ ետեւ ցանկութիւնը յղա- 15
նալով մեղք կը ծնանի . և մեղքը որ կա-
տարուի՝ մահ կը ծնանի ։ Մի՛ խաբուիք 16
իմ սիրելի՛ եղբայրներս . Ինչու որ բո- 17
լոր բարի տուրքերը՝ ու բոլոր կատարեալ
պարգեւները վերէն են , լուսոյ Հօրմէն
կ'իջնեն . որ անոր մէջ բնաւ փոփոխու-
թիւն՝ և կամ դառնալու շուք մը չկայ ։
Իր ուզելովը մեզ ծնաւ ճշմարտութեան 18

Digitized by Google

խօսքովը՝ որ մենք իր ստացուածքներուն
19 առաջին պտուղ մը ըլլանք ։ Գիտցէ՛ք իմ
սիրելի եղբայրներս, ամէն մարդ թող
շո՛ւտ ըլլայ լսելու, ու ծանր՝ խօսելու,
20 և ծանր՝ բարկանալու ․ Ինչու որ մարդուն
բարկութիւնը՝ Աստուծոյ արդարութիւնը
21 չգործեր ։ Ուստի բոլոր աղտոտութիւնը
ու չարութիւններուն յաւելուածները մէկ-
դի ձգելով հեզութիւնով ընդունեցէք ան
ձեր մէջը ցանուած խօսքը, որ կրնայ ձեր
հոգիները փրկել ։
22 Ան խօսքը ընողներ եղէք, և չէ՛ թէ
23 միայն լսողներ սխալէք ձեր անձերը ։ Ին-
չու որ եթէ մէկը միայն լսող ըլլայ խօս-
քին՝ ու կատարող չըլլայ, անիկայ նման
է մարդու մը՝ որ աչքը տնկած իր երեսը
24 նայի՝ որ հայլիին մէջը կ՚երևնայ ․ Ինչու
որ նայելով տեսաւ ինքզինքը՝ ու անցաւ
գնաց, և շուտ մը մոռցաւ՝ թէ ինտոր
25 մէկ մըն էր ։ Բայց ան որ ազատութեան
կատարեալ օրէնքին աչք տնկելով նայի,
և անոր մէջը որ կենայ՝ անիկայ խօսքը
լսող ու մոռցող չըլլար, հապա գործքը
ընող ․ որ ինքը ան ընելով երանելի կ՚ըլ-
26 լայ ։ Թէ որ մէկը ուզէ կրօնաւոր ըլլալ
ու իր լեզուին սանձ չդնէ, հապա իր սիր-
տը զբաղմունքներու տայ, անանկին կրօ-
27 նաւորութիւնը փուճ է ։ Սուրբ ու ան-
արատ կրօնաւորութիւնը Աստուծմէ ու
Հօրմէն աս է ․ Որբերուն ու որբևարի-
ներուն տես երթալ իրենց նեղութեանը

Digitized by Google

մէջ ․ ու անձը անարատ պահել աշխար-
հէն ։

## ԳԼ․ Բ

1 Իմ եղբայրներս՝ չըլլայ որ աչառու-
թեամբ բռնէք մեր Տէր Յիսուս Քրիստո-
սի հաւատքը, որ ինքը փառաց Տէրն է ։
2 Եթէ որ ձեր ժողովքին մէջ մէկ մարդ մը
մտնելու ըլլայ՝ որ ունենայ ոսկի մատանի,
և փառաւոր լաթեր, հոն մէկ աղքատ
մըն ալ մտնելու ըլլայ աղտոտ լաթերով․
3 Նայիք անոր վրայ որ փառաւոր լաթեր
ունի, ու ըսէք՝ Թէ Դուն հոս նստէ պա-
տուով, և ան աղքատին ըսէք՝ Թէ Դուն
հոն ոտքի վրայ կայնէ, կամ թէ Եկուր
4 նստէ՝ պատուանդանիս քովը ․ Ձեր
խղճմտանքը ձեզ չը՞յանդիմաներ, ու չար
խորհուրդներու դատաւոր չէ՞ք ըլլար ։
5 Ինծի՛ մտիկ ըրէք՝ սիրելի՛ եղբայրներս ․
չէ՞ որ Աստուած աշխարհիս աղքատները
ընտրեց, որոնք որ հաւատքով հարուստ
են, ու ժառանգաւոր արքայութեանը՝ որ
6 իր սիրելիներուն խոստացաւ ։ Դուք
աղքատները կ'անարգէք ․ հարուստները
չե՞ն որ ձեզ կը նեղեն, ու անոնք ձեզ
7 դատաստանի կը քաշեն ։ Անոնք չե՞ն որ
կը հայհոյեն ան բարի անունը՝ որ ձեր վը-
8 րայ կանչուած է ։ Ուստի թէ որ դուք
թագաւորական օրէնքը կատարէք գրքին ը-
ստծին պէս՝ Թէ Քու ընկերդ սիրես քու
9 անձիդ պէս, աղէկ կ'ընէք ․ Բայց թէ որ

Digitized by Google

աչառութիւն ընէք՝ մեղք կը գործէք, ու
օրէնքէն կը յանդիմանուիք օրինազանցի
10 պէս։ Ո՛վ որ բոլոր օրէնքը պահէ, ու
մէկ բանով մը ծռի, անիկայ բոլոր օրէնք-
11 ներուն պարտական կ՚ըլլայ։ Վասն զի ան
որ ըսաւ թէ՝ Մի՛ շնանար, ըսաւ ալ
թէ՝ Շնութիւն մի՛ ըներ. ուստի թէ որ
սպանութիւն չընես՝ բայց շնութիւն ընես,
12 օրէնքին դէմ գործող եղար։ Անանկ
խօսեցէք՝ և անանկ ըրէք, որպէս թէ ա-
զատութեան օրէնքովը պիտի դատուիք։
13 Վասն զի անողորմ դատաստան պիտի ըլ-
լայ անոր, որ ողորմութիւն չըներ. ինչու
որ ողորմութիւնը բարձրապարծելով կը պար-
ծենայ դատաստանին դիմացը։
14 Ի՞նչ օգուտ է՝ եղբայրներս, թէ որ
մէկը ըսէ՝ թէ հաւատք ունիմ, ու գործք
չունենայ. միթէ հաւատքը կրնա՞յ փրկել
15 զանիկայ։ Թէ որ մէկ եղբայր մը կամ
քոյր մը մերկ ըլլայ՝ կամ օրուան կերա-
16 կուրէն կարօտ, Ու ձեզմէ մէկը անոնց ը-
սէ, Գնացէք խաղաղութեամբ՝ տաքցէք ու
կշտացէք, և մարմինին պէտք եղածը ա-
17 նոնց չտաք, ի՞նչ օգուտ է։ Անանկ ալ
հաւատքը՝ թէ որ հետը գործք չունենայ,
18 ինքը մինակ մեռած է։ Կրնայ մէ-
կը ըսել՝ թէ Դուն հաւատք ունիս, ես
ալ գործք ունիմ. ցուցուր քու հաւատքդ
ցուցո՛ւր ինծի առանց գործքերուդ, ու
ես քեզի ցուցընեմ իմ հաւատքս իմ գործքե-
19 րէս։ Դուն կը հաւատաս որ Աստուած

Digitized by Google

մէկ է, աղէկ կ'ընես. դեւերն ալ կը հաւա-
տան՝ ու կը սարսափին։ Կ'ուզե՞ս գիտ- 20
նալ դուն՝ ո՛վ սնոտի մարդ, որ հաւատ-
քը առանց գործքերու մեռած է։ Աբ- 21
րահամ մեր հայրը գործքերովը չարդարա-
ցա՞ւ՝ երբոր իր որդին Իսահակը սեղանը
հանեց զոհ ընելու։ Կը տեսնե՞ս որ հա- 22
ւատքը անոր գործքերուն հետ մէկտեղ
գործեց. ու անոր գործքերովը հաւատքը
կատարեալ եղաւ։ Ու գիրքին խօսքը 23
կատարուեցաւ՝ որ կ'ըսէ. Աբրահամ Աս-
տուծոյ հաւատաց, ու անոր իրեն արդարու-
թիւն սեպուեցաւ. ու Աստուծոյ բա-
րեկամ ըսուեցաւ։ Կը տեսնէ՞ք՝ որ մարդ 24
գործքերովը կ'արդարանայ, ու չէ՛ թէ
մինակ հաւատքովը։ Նոյնպէս ալ Ռախաբ 25
պոռնիկը՝ չէ՞ որ գործքերով արդարացաւ,
երբոր այն լրտեսները քովը առաւ, ու ու-
րիշ ճամբայով արձակեց զանոնք։ Ինչպէս 26
պէս որ մարմինը առանց հոգիի մեռած է,
նոյնպէս ալ հաւատքը առանց գործքերու
մեռած է։

ԳԼ. Գ.

Եղբայրներս՝ շատ վարդապետներ մի՛ 1
ըլլաք. գիտնալով որ մեծ դատաստան պի-
տի ըլլայ վրանիս. Ինչու որ շատ սխալ- 2
մունքներ կ'ընենք ամէնքս ալ. Թէ որ
մէկը խօսքով սխալմունք չունի՝ անիկայ
կատարեալ մարդ է, որ կարող է իր բո-
լոր մարմինը սանձի տակ դնել։ Տե՛ս որ 3

Digitized by Google

Ձիերուն բերանը սանձ կը դնենք՝ որ ա-
նոնք մեզի հնազանդին, ու անոնց բոլոր
4 մարմինը կը նուաճենք. Ահա՛ նաւերն ալ
ինչպէս բանձր են, և սաստիկ հովերէն
տարուած կը տարուին. բայց ան պզտիկ ղե-
կովը կը դառնան՝ կառավարողին միտքը
5 ուր կողմը որ ուզէ։ Ասանկ ալ լեզուն
մէկ պզտիկ անդամ մըն է՝ ու մեծ բաներ
կը խօսի. ահա՛ քիչ մը կրակը ինչ որ ան-
6 տառները բոցի կու տայ։ Լեզուն ալ
կրակ մըն է՝ անիրաւութեան զարդ. լե-
զուն ասանկ մեր անդամներուն մէջ դը-
րուած է, որ բոլոր մարմինը կ'ապակա-
նէ, և բնութեան շրջանը կրակով կը վա-
ռէ, ու գեհենին մէջը բորբոքած կ'այ-
7 րի։ Բոլոր գազաններուն ու թռչուննե-
րուն և սողացող կենդանիներուն ու ծո-
վի մէջ եղածներուն բնութիւնը հնազան-
դած է՝ և կը հնազանդի մարդկային բը-
8 նութեան. Բայց մարդոց լեզուն մէ-
կը չկրնար հնազանդեցընել՝ ան չարը ու
անկարգը՝ և մահաբեր թոյնով լեցու-
9 նը։ Ասով կ'օրհնենք Տէրը ու Հայ-
րը, և անով կ'անիծենք մարդիկ՝ որոնք
որ Աստուծոյ նմանութեանը պէս ստեղ-
10 ծուած են։ Ան նոյն բերնէն կ'ելլեն
օրհնութիւն ու անէծք. եղբայրներս՝ պէտք
11 չէ որ ասիկայ ասանկ ըլլայ։ Միթէ
աղբիւր մը մի և նոյն բերնէն անուշ ու
12 լեղի կը բղխէ՞։ Միթէ կարելի՞ է եղ-
բայրներս՝ որ թզենին ծառը ձէթ բերէ,

Digitized by Google

կամ որթը՝ թուզ ․ ո՛չ ալ աղի գետինը
անուշ ջուր կու տայ ։ Ձեր մէջ իմաս- 13
տուն ու խելացի ո՞վ կայ ․ թո՛ղ անիկայ
ցուցնէ վարքովը ցուցընէ իր գործքերը ի-
մաստութեան հեզութեամբ ։ Բայց թէ որ 14
նախանձ ու դառնութիւն և հակառակա-
թիւն ունենաք սրտերնուդ մէջը, մի՛ պար-
ծենաք՝ ու ճշմարտութիւնը սուտ հանէք ։
Այս իմաստութիւնը վերէն իջած չէ՛ ․ հա- 15
պա երկրաւոր՝ շնչաւոր և դիւական է ․
Վասն զի ուր որ կռիւ ու նախանձ կայ, 16
հոն է անկարգութիւնը՝ և ամէն չար բա-
ներ ։ Բայց վերին իմաստութիւնը՝ 17
նախ որ սուրբ է, ու երկրորդ՝ խաղաղա-
րար, հեզ, դիւրահաւան, ողորմութիւ-
նով ու բարի պտուղներով լեցուն, ան-
խիղճ, ու առանց կեղծաւորութեան ։
Արդարութեան պտուղը խաղաղութիւնով 18
կը ցանուի անոնց՝ որոնք որ խաղաղութիւն
կ'ընեն ։

## ԳԼ. Դ.

Ուսկի՞ց են պատերազմները, և ուսկի՞ց 1
կռիւները ձեր մէջը ․ չէ՞ որ ձեր ատանկ
ցանկութիւններէն, որ ձեր անդամներուն
մէջը զօրացեր են ։ Կը ցանկաք՝ ու չու- 2
նիք ․ կը սպաննէք ու կը նախանձիք՝ և
չէք կրնար ձեր ուզածին հասնիլ ․ կը պա-
տերազմիք՝ կը կռուիք, ու չունիք ․ ինչու
որ չէք խնդրեր ․ Կը խնդրէք՝ ու չէք 3
առներ ․ ինչու որ չարաչար կը խնդրէք,

Digitized by Google

որ ձեր ցանկութիւններուն բանեցը-
4 նէք ։ Շնացողներ՝ չէ՞ք գիտեր որ աս
աշխարհիս սէրը Աստուծոյ դէմ թշնամու-
թիւն է․ ուստի ան որ կ՚ուզէ աշխարհը
սիրել՝ ինքզինքը Աստուծոյ թշնամի կ՚ընէ ։
5 Կամ թէ պարա՞պ կը սեպէք ան որ գիր-
քը կ՚ըսէ, ան նախանձին վրայով որուն
մեր մէջը բնակած Հոգին կը փափաքի,
6 Իսկ աւելի շնորհք պիտի տայ․ անոր հա-
մար կ՚ըսէ․ Տէրը ամբարտաւաններուն
հակառակ կը կենայ․ խոնարհներուն շնորհք
7 կու տայ ։ Ուստի հնազանդեցէք Աստու-
ծոյ, ու չարախօսին հակառակ կեցէք․
8 և անիկայ ձեր մէջէն կը փախչի ։ Աս-
տուծոյ մօտեցէք, ու ան ձեզի կը մօտե-
նայ․ սրբեցէք ձեռքերնիդ՝ մե՛ղաւորներ,
և մաքուր ըրէք սրտերնիդ՝ երկմիտներ ։
9 Տառապանք քաշեցէք, սուգ ըրէք ու լա-
ցէք․ ձեր խնդումը սուգի դառնայ, ու
10 ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան ։ Տէ-
րոջը առջևը խոնարհեցէք, ու ան ձեզ
կը բարձրացընէ ։
11 Մէկզմէկ մի՛ բամբասէք՝ եղբայրներ․ ան
որ իր եղբայրը կը բամբասէ՝ կամ իր եղ-
բայրը կը դատէ, օրէնքը կը բամբասէ՝ ու
օրէնքը կը դատէ․ հապա թէ որ օրէնքը
դատես, ալ դուն օրէնքը կատարող չես՝
12 հապա դատաւոր ։ Միայն մէկ օրէնսդիր
ու դատաւոր մը կայ, որ ինքը կարող է
փրկելու ու կորսնցընելու․ դուն ո՞վ ես
որ ընկերդ կը դատես ։

Digitized by Google

Ըհա՛ կան ոմանք որ կ'ըսեն . Այսօր, ու 13
վաղը երթանք աս անուն քաղաքը , ան
տեղը տարի մը կենանք . առուտուր ը-
նենք՝ ու վաստըկինք ։ (Դուք որ վաղը 14
չէք գիտեր՝ Ինտո՞ր բան է ձեր կեանքը . 15
ինչու որ շոգիի նման էք , որ քիչ մը ա-
տեն կ'երեւնայ՝ և կ'ոչնչանայ .) անոր տե-
ղը ըսելու էիք . Թէ որ Տէրը կամենայ՝
պիտի ապրինք ու ընենք աս կամ ան
բանը ։ Բայց հիմա ձեր ամբարտաւա- 16
նութեանը մէջ կը պարծենաք . բոլոր ա-
նանկ պարծանքները չարութիւն են ։ Ով 17
որ բարին գիտնայ՝ ու չընէ , ան մեղք է
անոր ։

## ԳԼ. Ե

Ուստի հիմա եկէք հարուստներ՝ լացէք 1
և ողբացէք ան թշուառութիւններուն համ-
մար՝ որ ձեր վրայ պիտի գան ։ Ինչու որ 2
ատ ձեր հարստութիւնը ոչինչ է , ու ձեր
հանդերձները ցեցի կերակուր ։ Ձեր ար- 3
ծաթը ու ոսկին ժանգոտ է . և անոնց
ժանգը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ , ու
ձեր մարմինը պիտի ուտէ . կրակի պէս
գանձեր ետքի օրերուն համար դիզեցիք ։
Ահա՛ բանւորներուն վարձքը՝ որ ձեր ար- 4
տերը հնձեցան , ձեր քովն են . ձեզմէ
զրկուածը կ'աղաղակէ , ու հնձողներուն
բողոքը զօրութեանց Տէրոջը ականջներուն
հասաւ ։ Երկրի վրայ փափուկ ապրեցաք՝ 5
և զուարճացաք . սրտերնիդ սնուցիք՝ ո-

Digitized by Google

պէս թէ մորթուելու օրուան համար ։
6 Զրկեցիք՝ սպաննեցիք արդարը, որ ձեզի
հակառակ չէր կենար ։
7 Համբերող եղէք եղբայրներս՝ մինչև
Տէրոջը գալը . ահա՛ երկրագործը համբե-
րութիւն ընելով կը սպասէ երկրի պա-
տուական պտուղին, մինչև որ կանուխ և
8 ուշ անձրևը առնէ ։ Դուք ալ համբե-
րութիւն ըրէք, սրտերնիդ հաստատ բռնե-
ցէք . ինչու որ Տէրոջը գալը մօտ է ։
9 Մէկզմէկ մի՛ տրտմեցընէք եղբայրներ, որ
չդատապարտուիք . ահա՛ դատաւորը դը-
10 րանը քովը կայներ է ։ Եղբայրներ՝ չար-
չարանքներու ու համբերութեան օրինակ
առէք մարգարէները, որոնք Տէրոջը ա-
11 նունովը խօսեցան ։ Ահա՛ համբերողնե-
րուն երանի կու տանք . Յոբին համբերու-
թիւնը լսեցիք դուք, և Տէրոջը անոր
ըրած վախճանը տեսաք . որ Տէրը բազ-
մագութ ու ողորմած է ։
12 Ամէն բանէն առաջ եղբայրներս՝ երդում
չընէք, ո՛չ երկինքի վրայ՝ ո՛չ երկրի վը-
րայ, ո՛չ մէկ ուրիշ երդում մը . հապա
ձեր այոն՝ այո՛ ըլլայ, և ոչը՝ ո՛չ . որ
չըլլայ թէ կեղծաւորութեան մէջ իյնաք ։
13 Ձեզմէ մէկը որ նեղութիւն քաշէ, ա-
ղօթք թող ընէ . մէկը որ ուրախութիւն
14 ունենայ՝ սաղմո՛ս թող երգէ ։ Ձեզմէ
մէկը որ հիւանդանայ՝ եկեղեցիին երէցնե-
րը թ՛ող կանչէ, ու անոր վրայ աղօթք
ընեն, Տէրոջը անունովը եղով թո՛ղ օծեն .

Digitized by Google

Իսկ հաւատքով. եղած աղօթքը պիտի 15
փրկէ հիւանդը, ու Տէրը անիկայ ոտք
պիտի հանէ. և թէ որ մեղք ալ գործեր
է՝ պիտի ներուի անոր։ Մեղքերնիդ մէկ- 16
ընդմէկու խոստովանեցէք, ու աղօթք ըրէք
մէկզմէկու վրայ՝ որ բժշկուիք. ինչու որ
արդարներուն աղօթքը շատ զօրաւոր է
օգնական ըլլալու։ Եղիան մեզի պէս 17
կրից ենթակայ մարդ մըն էր. ու աղօթք
ըրաւ, և իրեք տարի ու վեց ամիս երկրի
վրայ անձրև չեկաւ. Իսկ նորէն աղօթք 18
ըրաւ՝ ու երկինքը անձրև տուաւ, և եր-
կիրը իր պտուղը բուսցուց։
Իմ եղբայրներս՝ թէ որ ձեզմէ մէկը 19
ճշմարտութեան ճամբայէն մոլորի, ու մէ-
կը անիկայ դարձնի բերէ՝ Գիտցած ըլլայ, 20
թէ ան որ մեղաւորը իր մոլորութեան
ճամբայէն կը դարձնէ՝ անոր հոգին մեռ-
նելէն կ'ազատէ, ու մեղաց շատութիւնը
կը ծածկէ։

Digitized by Google

# ՊԵՏՐՈՍ
# ԱՌԱՔԵԱԼԻՆ
# ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
# ԹՈՒՂԹԸ

## ԳԼՈՒԽ Ա

1 Պետրոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը,
օտարականներուդ որ ցրուած էք Պոնտա-
ցւոց, Գաղատացւոց, ու Կապադովկա-
ցւոց, և Ասիացւոց, ու Բիւթանացւոց
2 մէջ, ընտրուած՝ Հօր Աստուծոյ կանխա-
գիտութիւնովը, Հոգիին սրբացընելովը՝
Յիսուս Քրիստոսի հնազանդելովը՝ ու յէր,
ձեռոյ իր արիւնը թափելովը, շնորհք, և
խաղաղութիւն ձեր վրայ շատնայ:
3 Օրհնեալ է Աստուած՝ ու մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ո-
ղորմութիւնովը մեզ նորէն ծնաւ ան կեն-
դանի յոյսին համար՝ Յիսուս Քրիստոսի
4 մեռելներէն յարութիւն առնելովը, Ան-
եղծ ու անարատ և անթառամ ժառան-
գութեանը համար՝ որ երկինքը ձեզի պա-
5 հուած է. Որ Աստուծոյ զօրութիւնովը
պահուած էք հաւատքով ան փրկութեանը
համար՝ որ պատրաստուած է՝ ետքի ժա-

Digitized by Google

ժամանակները յայտնուելու ։ Որ անով ու- 6
րախ պիտի ըլլաք, որ հիմա քիչ մը
(ինչպէս որ պէտք կը բերէ,) տրտմած էք
զանազան փորձութիւններով ։ Որպէս զի 7
ձեր հաւատքին փորձառութիւնը կորստա-
կան ոսկիէն աւելի պատուական է, որ
կրակով փորձուած՝ կը գտնուի գովես-
տութիւնով ու փառքով և պատիւով Յիսուս
Քրիստոսի յայտնուելու ատենը ։ Ան որ 8
դուք չտեսաք՝ ու սիրեցիք ։ որ անիկայ
հիմա չէք տեսներ, բայց հաւատացիք, և
ուրախ էք անճառելի ու փառաւորեալ
խնդութիւնով ։ Ձեր հաւատքին վախճա- 9
նը ընդունելով, այսինքն հոգիներնուդ
փրկութիւնը ։ Որ այն փրկութեանը հա- 10
մար մարգարէները փնտռեցին ու քննե-
ցին ։ որոնք մարգարէացան ձեզի ըլլալու
շնորհքին համար ։ Ու կը քննէին երբ կամ 11
ինտո՞ր ատեն որ կ՚իմացընէր իրենց մէջը
եղած Քրիստոսի Հոգին՝ որ առաջ կը
վկայէր Քրիստոսի չարչարուիլը, ու անկէ
ետև փառաւորութիւնը ։ Որոնց յայտնուե- 12
ցաւ ալ որ չէ թէ իրենց՝ հապա մեզի
մատակարարեցին այն բաները, որոնք հի-
մա պատմուեցան անոնց ձեռքովը՝ որ ա-
ւետարանը քարոզեցին ձեզի Հոգւով
Սրբով որ երկինքէն խրկուեցաւ ։ որ զան
բաները հրեշտակները կը ցանկային զանէ
շուքի մը պէս տեսնելու ։

Ասոր ձեր միտքերուն մէջքը պինտ կա- 13
պած՝ արթուն կեցած, կատարելապէս

Digitized by Google

սպասեցէ՛ք այն ձեր վրայ հասնելու շնորհա-
քը՝ Յիսուս Քրիստոսի յայտնուելու ա-
14 տենը, հնազանդ զաւակներու պէս. չէ՛
թէ ձեր տգիտութեան ատենին առջի
15 ցանկութիւններուն կերպարանելով. հապա
ձեզ կանչողը Սուրբին պէս, դուք ալ
սո՛ւրբ եղէք բոլոր ձեր վարմունքներուն
16 մէջ. Ինչու որ գրուած է թէ՝ Սո՛ւրբ ե-
17 ղէք, քանզի ես սուրբ եմ։ Եւ թէ որ
Հայր կը կոչէք անիկայ՝ որ առանց աչա-
ռութեան կը դատէ ամէն մէկուն գործքին
համեմատ, ուրեմն Աստուծոյ վախովը ձեր
պանդխտութեան ատենը անցուցէ՛ք։
18 Գիտնալով որ դուք չէ՛ թէ ապականացու
արծաթով կամ ոսկիով փրկուեցաք ձեր
հայրերէն աւանդուած ունայն վարքէն ճամբա-
19 ներէն. Հապա Քրիստոսի պատուական
արիւնովը՝ որպէս թէ անբիծ ու անարատ
20 գառին. Որ առաջուց ճանչցուած էր
աշխարհիս սկիզբէն առաջ. ու ետքի ա-
21 տեններս երեւցաւ ձեզի համար, որ անով
Աստուծոյ հաւատացիք, որ զանիկայ մե-
ռելներէն յարոյց, և անոր փառաւորու-
թիւն տուաւ, որ ձեր հաւատքը ու
22 յոյսը Աստուծոյ վրայ ըլլայ։ Ձեր ան-
ձերը մաքրելով՝ ճշմարտութեանը հնա-
զանդելով, եղբայրսիրութեան մէջ կեղ-
ծաւորութիւն չունենալով, ջանացէ՛ք
23 սուրբ սրտով մէկզմէկ աղէկ սիրել. Նո-
րէն ծնած ըլլալով չէ՛ թէ ապականացու
սերմէն, հապա անապականացուէն Աս-

Digitized by Google

տուծոյ կենդանի ու յաւիտենական խօս-
քովը ։ Վասն զի ամէն մարմին խոտի պէս 24
է, և մարդուն բոլոր փառաւորութիւնը
խոտի ծաղիկին պէս ։ Խոտը կը չորնայ, ու
ծաղիկը կը թափթփի ։ Բայց Տէրոջը 25
խօսքը յաւիտեան կը մնայ ։ Այսինքն՝ այն
խօսքը՝ որ աւետարանութեամբը ձեզի քարոզուե-
ցաւ ։

## ԳԼ. Բ.

Ուրեմն մէկդի ձգելով ամէն չարու- 1
թիւնը ու ամէն խաբէութիւնը՝ ու կեղ-
ծաւորութիւնները, և նախանձը ու ամէն
չարախօսութիւնը, Նոր ծնած երախաներ- 2
րու պէս՝ բանական ու անխարդախ կա-
թին փափաքեցէք, (որ անով մեծնաք
մինչև փրկութիւնը ։) Թէ որ Տէրոջը ա- 3
նուշ ըլլալուն համը առեր էք ։ Անոր մօ- 4
տեցէք եկէք դուք ալ կենդանի վէմին, որ
թէպէտ մարդիկներէն անարգուած է,
բայց Աստուծմէ ընտրուած ու պատուական
է ։ Դուք ալ կենդանի քարերու պէս 5
կը շինուիք հոգևոր տաճար մը, սուրբ
քահանայութիւն, Յիսուս Քրիստոսի
ձեռքովը Աստուծոյ հաճոյ հոգևոր պա-
տարագներ մատուցանելու ։ Անոր համար 6
գիրքին մէջն ալ կայ՝ Թէ Ահա Սիոնի
մէջ վէմ մը կը դնեմ ընտիր, անկիւնի
գլուխ պատուական ։ ու ով որ անոր
հաւատայ՝ պիտի չամչնայ ։ Ուստի ձեզի 7
հաւատացեալներուդ պատուական վէմ մըն

Digitized by Google

է անի. բայց անհաւատներուն՝ այն քարը
որուն որ շինողները անարգեցին, անիկայ
8 անկիւնին գլուխ եղաւ. Նաեւ գլորման քար
ու գայթակղութեան քար անոնց՝ որ առա-
կամբելով՝ ան խօսքին կը գայթակղին՝
9 որուն ալ սահմանուած էին։ Բայց դուք
մէկ ընտիր ցեղ մըն էք, թագաւորա-
թիւն, քահանայութիւն, սուրբ ազգ,
սեփհական ժողովուրդ մը, որ ձեր առա-
քինութիւնները անոր ընծայեցիք, որ ձեզ
խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց.
10 Որ ատեն մը ժողովուրդ չէիք, բայց հի-
մա Աստուծոյ ժողովուրդն էք. որ ա-
ռանց ողորմութեան էիք, հիմա ողորմու-
թիւն գտաք։
11 Սիրելիներ կ'աղաչեմ, պանդուխտներու
ու օտարականներու պէս մէկդի՝ կեցէք
մարմնաւոր ցանկութիւններէն, որ հոգի-
12 ներուն դէմ կը պատերազմին. Ձեր
վարքը հեթանոսներուն մէջը պարկեշ-
տութեամբ ցուցընելով, որ ինչ բանով որ ձեզ չա-
րագործներու պէս բամբասեցին, ձեր
բարի գործքերը տեսնելով՝ փառաւորեն
13 զԱստուած այցելութեան օրը։ Հնազանդ
եղէք ամէն մարդկային ստեղծուածներու՝
Տէրոջը համար. թէ թագաւորին՝ մեծ
14 մէկու մը պէս. թէ դատաւորներու՝ ա-
նոր կողմէն խրկուածներու պէս՝ չարա-
գործները պատժելու, ու բարեգործները
15 գովելու համար։ Ինչու որ Աստուծոյ
կամքը այսպէս է, որ բարեգործ ըլլալով

Digitized by Google

անմիտներուն մարդոց տգիտութիւնը գոցա-
ձեցընէք ։ Ազատի պէս ըլլալով , և ոչ 16
թէ չէք ազատութիւնը չարութեան ծած-
կոյթ մը պէտ ունենաք ։ Հապա Աստուծոյ
ծառաներու պէս ։ Ամէնը պատուեցէք 17
եղբայրութիւնը սիրեցէք ։ Աստուծմէ
վախցէք ։ Թագաւորները պատուեցէք ։
Ծառաներդ ամէն բանի մէջ վախով 18
հնազանդ ըլլան ձեր տէրերուն . չէ թէ
միայն բարերարներուն ու հեզերուն , հա-
պա խոժոռներուն ալ ։ Որ ան ալ Աս- 19
տուծմէ շնորհք մըն է , թէ որ մէկը բարի
միտքով անիրաւ տեղը կրած նեղութիւն-
ներուն համբերելու ըլլայ ։ Ասանկ զի ի՞նչ 20
բարիք կ՚ըլլայ , թէ որ մեղք գործելով
ապտակուելնուդ համբերէք ։ Հապա թէ որ
բարիք գործելու ըլլայք , չարչարուիք ու
համբերէք նէ , ան Աստուծմէ շնորհք մըն է ։
Քանզի դուք ատ բանիս համար կանչուե- 21
ցաք . որ Քրիստոս ալ ձեզի համար մե-
ռաւ , ու ձեզի օրինակ թողուց՝ որ անոր
շաւիղներուն հետևէք ։ Ան իրեն մեղք մը 22
չգործեց , ու անոր բերանը խաբեբայու-
թիւն մը չգտնուեցաւ ։ Որ կը բամբա- 23
սուէր , և փոխարէնը չէր բամբասեր ։ Կը
չարչարուէր , ու սպառնալիք չէր ըներ ։
Հապա իրաւունք տնօրինողին՝ դատաւորին
կը յանձնուէր ։ Որ մեր մեղքերը իր մարմ- 24
նովը խաչափայտին վրայ վերցուց ։ որ
մեղքէն ան մեռցընելէն ազատինք , ու արդա-
րութեան հետը ապրինք ։ որուն վէրքերո-

Digitized by Google

25 վը. Մինչ բժշկուեցաք. Քանզի որ դուք մոլորեալ ոչխարներու պէս էիք, բայց հիմա ձեր հոգիներուն Հովիւին ու Տեսուչին դարձաք։

## ԳԼ. Գ

1 Ըսանք ալ կնիկները հնազանդ ըլլան իրենց երիկներուն. որ թէ անոնց խօսքին հնազանդ չըլլան, ալ առանց խօսքի ըս-
2 հուլին կնիկներուն վարմունքովը շահուին, տեսնելով ձեր երկիւղած պարկեշտ վարքը։
3 Որ իրենց զարդարանքը չըլլայ, գլուխնին մազերու հիւսուածքներով և ոսկիէ մանուած մատանիներով կամ զարդարուած
4 հագուստներով. հապա սրտին ծածուկ մարդը անեղծութիւնով հանդարտ ու հանդարտ հոգիին զարդը, որ Աստուծոյ առջեւը խիստ պատուական է։
5 Վասն զի ասանկ առաջուան սուրբ կնիկները որ իրենց յոյսը Աստուծոյ վրայ դրած էին, անձերնին կը զարդարէին իրենց երիկ-
6 ներուն հնազանդ ըլլալով. (Ինչպէս Սառան ալ որ Աբրահամին հնազանդ էր, և զանիկայ իրեն տէր կը կանչէր. որ դուք անոր աղջիկները եղաք.) բարեգործ էիք, ու չէիք վախնար և ոչ մէկ երկիւղէ մը։
7 Ըսանք ալ երիկ մարդիկ խոհեմութիւնով անոնց հետը բնակին. տկար ամանի պէս պատիւ ընեն կնիկներուն, և որպէս թէ կենաց շնորհքին ժառանգորդներու. որ ձեր աղօթքներուն առջեւը չըլլան։

Digitized by Google

Իսկ ամենքդ ալ՝ որ մէկ մտքի վրայ 8
ըլլաք, կարեկից, եղբայրասէր, քաղցրա-
սիրտ ու խոնարհ: Չըլլայ որ չարին 9
տեղը չար հատուցանէք, կամ բամբա-
սանքին դէմ՝ բամբասանք. հապա անոր
ներհակը օրհնեցէք. ինչու որ ասանկ բանի
համար կանչուեցաք դուք, որ օրհնութիւն
ժառանգէք: Վասն զի ան որ կ'ուզէ 10
կեանքը սիրել ու աղէկութեան օրեր
տեսնել, իր լեզուն թո՛ղ դադրեցընէ
չարութենէն, ու իր շրթունքները խա-
բեբայութիւն խօսելէն. Չարէն ետ քա- 11
շուի՛ ու բարին ընէ. խաղաղութիւն
փնտռէ, ու անոր ետեւէն երթայ: Ինչու 12
որ Տէրոջը աչքը արդարներուն վրայ է,
ու իր ականջները անոնց աղօթքին. Տէ-
րոջը երեսը չարագործներուն վրայ է:
Եւ ո՞վ է ան որ ձեզի պիտի չարչարէ՝ թէ 13
որ դուք բարիին նախանձաւոր ըլլաք:
Բայց թէ արդարութեան համար չարչա- 14
րուիք ալ՝ երանելի էք, և անոնց ահէն
մի՛ վախնաք՝ ու մի՛ խռովիք. Հապա 15
ձեր Տէրը Քրիստոսը սրտերնուդ մէջը
սո՛ւրբ պահեցէք:
Պատրաստ եղէք պատասխան տալու ա-
մենուն, որ ձեր ունեցած յոյսին պատճա-
ռը կը հարցընեն: Բայց հեզութեամբ 16
ու երկիւղածութեամբ անոյշ վարք ու-
նենաք; որ ինչ բանով որ ձեր վրայ չա-
րախօսութիւն կ'ընեն՝ ամօթով մնան ա-
նոնք՝ որ Քրիստոսով եղած ձեր բարի

Digitized by Google

17 [illegible]
[illegible]
[illegible]
18 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
19 [illegible]
[illegible]
20 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
21 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
22 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

1 [illegible]
[illegible]
[illegible]
2 [illegible]
[illegible]

Digitized by Google

համար Աստուծոյ կամքին պէս ապրի մնա-
ցած ժամանակը ։ Վասն զի անցած ժամա- 3
նակը բաւական է մեզի հեթանոսներուն
ըրած կամքերնին ըլլալու . որոնք որ
պղծութիւններով, ցանկութիւններով, գի-
նեմոլութիւններով, անառակութիւններով,
արբեցութիւններով ու անօրէն կռապաշտու-
թիւններով կը պտըտէին . Ասոր համար 4
զարմանք կու գայ անոնց, որ դուք անոնց
հետ չէք վազեր անառակութեան ու հայհոյութիւն
կ'ընեն . Անոնք պատասխան պիտի տան 5
անոր՝ որ պատրաստ է դատելու կեն-
դանիները ու մեռելները ։ Ասոր համար 6
մեռելներուն ալ աւետարանուեցաւ, որ
դատուին մարմնով մարդոց պէս, ու
կենդանի ըլլան հոգիով Աստուծոյ կամքին հա-
մեմատ ։

Ամէն բանին վախճանը մօտեցեր է . 7
ուստի խոհեմ եղէք, զգաստ կեցէ՛ք ու
աղօթքի մէջ արթո՛ւն եղէք ։ Ամէն բա- 8
նէն առաջ մէկզմէկու հետ ջերմեռանդ սէր
ունեցէք . ինչու որ սէրը մեղքերուն շա-
տութիւնը կը ծածկէ ։ Իրարու հիւրա- 9
սիրութիւն ցուցուցէք առանց տրտունջ
ընելու ։ Ամէն մէկը ինչ կերպ շնորհք 10
որ առաւ՝ անիկայ մէկզմէկու մատակարա-
րեցէք Աստուծոյ կերպ կերպ շնորհքներուն
աղէկ տնտեսներուն պէս . Թէ որ մէկը 11
խօսի՝ Աստուծոյ պատգամներուն պէս թո՛ղ
խօսի . Թէ որ մէկը սպասաւորութիւն
ընէ՝ որպէս թէ Աստուծոյ շնորհած զօրու-

Digitized by Google

թենէն Բա՛ղ ըսէ․ որ ամէն բանի մէջ
Աստուած փառաւորուի Յիսուս Քրիստո-
սի ձեռքովը․ որուն փառք և զօրութիւն
յաւիտեանս․ ամէն ։
12 Սիրելինե՛ր, օտար բան մի սեպէք ան
ներգործութիւնն բորբոքը, որ ձեր փորձու-
թեան համար կ՚ըլլայ, որպէս թէ օտար բան
13 մը ձեզի հանդիպած է․ Հապա՝ ուրախ
եղէք՝ Քրիստոսի չարչարանքներուն հա-
ղորդ եղածներնուդ պէս, որ անոր փառքին
յայտնութեան ատենն ալ ցնծութիւնով
14 ուրախանաք ։ Եւ թէ որ Քրիստոսի ա-
նուանին համար նախատուիք ալ՝ երանելի
էք․ որ փառքին ու զօրութեան անունը
ու Աստուծոյ Հոգին ձեր վրայ հանգչած
15 է ։ Չըլլայ որ ձեզմէ մէկը չարչարուի
իբրև մարդասպան կամ իբրև գող կամ
իբրև չարագործ, կամ իբրև ուրիշին բա-
16 նին խառնուող․ Բայց թէ որ տանջուի
իբրև քրիստոնեայ՝ թող չամչնայ․ հապա
աս անունով թո՛ղ Աստուծոյ փառք տայ ։
17 Քանզի ժամանակ է որ դատաստանը Աս-
տուծոյ տունէն սկսի․ և թէ որ առաջ
մեզմէ նէ սկսի, հապա անոնց վերջը ի՞նչ
պիտի ըլլայ՝ որոնք Աստուծոյ աւետարա-
18 նին չհնազանդեցան ։ Եւ թէ որ արդարը
դժուարաւ պիտի փրկուի, հապա ամբա-
րիշտը ու մեղաւորը ո՞ւր պիտի երեւնայ ։
19 Ասոր համար որ Աստուծոյ կամքին պէս
կը չարչարուին, իրենց հոգիները հաւա-
տարիմ Արարչին թո՛ղ յանձնեն բարիք
գործելով ։

Digitized by Google

## ԳԼ. Ե

Ուստի ալ երէցներուն կ'աղաչեմ՝ ես ալ 1
անոնց պէս երէց ըլլալով ու Քրիստոսի
չարչարանքին վկայ , ու յայտնուելիք
հանդերձեալ փառքին մասնակից . Աս- 2
տուծոյ հօտը որ ձեր մէջն է՝ արածեցէք .
վերակացու ըլլալով ոչ՝ թէ ակամայ՝ հա-
պա կամաւ Աստուծոյ ուզածին պէս . ոչ՝
թէ պիղծ շահախնդրութեամբ , հապա
յօժարութեամբ . Ոչ՝ թէ վիճակներուն 3
վրայ տիրելով , հապա հօտին օրինակ
ըլլալով . Որ՝ հովուապետին երեւնալ ա- 4
տենը անթառամ փառքին պսակը ընդու-
նիք .

Նմանապէս ալ դուք երիտասարդներ՝ հպա- 5
տակ եղէք ծերերուն , ամէնքդ ալ մէկ-
զմէկու հետ խոնարհութիւն ունեցէք . Ին-
չու որ Աստուած ամբարտաւաններուն դէմ
կը կենայ , խոնարհներուն շնորհք կու տայ :
Աստուծոյ հզօր ձեռքին տակը խոնարհե- 6
ցէք , որ ձեզ ժամանակին բարձրացնէ :
Ձեր ամէն հոգը անոր ձգեցէք , վասն զի 7
անիկայ է որ ձեզի համար կը հոգայ :

Արթո՛ւն կեցէք , հսկեցէք , ինչու որ 8
ձեր հակառակորդը՝ Սատանան , առիւծի
պէս կը մռնչէ , կը պտըտի ու կը փնտռէ
թէ ո՛վ պիտի կլլէ . Անոր դէմ կեցէք 9
հաստատուն հաւատքով . գիտնալով որ
ձեր եղբայրներուն ալ աշխարհքի մէջ նոյն
չարչարանքները կը քաշեն :

Digitized by Google

10 Բայց ամէն շնորհքներուն Աստուածը՝
որ ձեզ իր յաւիտենական փառքին կան-
չեց Քրիստոս Յիսուսի ձեռքովը, որուն
չարչարանքներուն քիչ մը կցորդ եղաք,
ինքը յետոյ ուժ տայ՝ կատարելութիւն տայ՝
11 ու հիմներնիդ հաստատ ընէ։ Անոր իշ-
խանութիւն և փառք՝ յաւիտեանս. ա-
մէն։

12 Սիղուանոս հաւատարիմ եղբօրը ձեռ-
քովը՝ ինչպէս ես կը կարծեմ, համառօտ
մը ձեզի գրեցի, մխիթարելով ու աս
բանիս վրայ վկայելով, թէ աս այն Աս-
տուծոյ ճշմարիտ շնորհքն է, որուն մէջը
13 հաստատ կեցեր էք։ Բարև կու տայ ձե-
զի՝ Բաբելոնը եղած եկեղեցին, որ ձեզի
հետ ընտրուած է. ու Մարկոս իմ որդիս
14 ալ։ Բարև տուէք մէկզմէկու սուրբ
համբուրով. խաղաղութիւն ձեր ամենուն
հետ՝ որ Քրիստոս Յիսուսի մէջ էք. ա-
մէն։

# ՊԵՏՐՈՍ
# ԱՌԱՔԵԱԼԻՆ
# ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
# ԹՈՒՂԹԸ

## ԳԼՈՒԽ Ա.

Շմաւոն Պետրոս Յիսուս Քրիստոսի 1
ծառայ եւ առաքեալ . Ձեզի որ մեր հետ
նոյն պատուական հաւատքին հասաք մեր
Աստուծոյն ու Յիսուս Քրիստոս Փրկչին
արդարութիւնովը . Շնորհք եւ խաղա- 2
ղութիւն ձեր վրայ աւելնայ՝ Աստուծոյ ու
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութիւ-
նովը ։

Ինչպէս որ իր աստուածային զօրու- 3
թիւնովը կենաց եւ աստուածպաշտութեան
վերաբերեալ ամէն բաները մեզի տուաւ
անոր գիտութիւնովը՝ որ մեզ իր փառքին
ու վայելչութեանը հրաւիրեց . Որ անով 4
մեծ ու պատուական խոստմունքներ տր-
րուած են մեզի , որ անոնցմով աստուա-
ծային բնութեանը հաղորդ ըլլանք՝ աշ-
խարհի ցանկութիւններէն ու ապականու-
թիւններէն փախչելով ։ Եւ աս բանիս 5
վրայ բոլոր ջանքերնիդ դրած՝ ձեր հա-

Digitized by Google

հաւատքին վրայ՝ առաքինութիւն աւելցուցէք ․ ու առաքինութեանը վրայ՝ գիտու-
6 թիւն , Եւ գիտութեանը վրայ՝ ժուժկալութիւն , ու ժուժկալութեանը վրայ՝ համբերութիւն , Եւ համբերութեանը վրայ՝
7 աստուածպաշտութիւն , Եւ աստուածպաշտութեանը վրայ՝ եղբայրսիրութիւն ,
8 Եւ եղբայրսիրութեանը վրայ՝ սէր ։ Այս բաները ձեզմէ ունենալով , ու աճելը մէջը միշտ ըլլալով , պարապ ու անպտուղ չեն ըներ ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսին ճանչնալուն մէջը ։
9 Իսկ որուն քով որ այս բաները չկայ , կոյր է ու աչքերը աղօտ ․ որ մոռցեր
10 է իր առջի մեղքերէն մաքրուիլը ։ Ասոր համար եղբայրներ՝ աւելի ջանք ըրէք՝ որ բարի գործքերով ձեր կոչումը ու ընտրութիւնը հաստատ ընէք ․ ասոնք որ ընէք՝
11 բնաւ յանցանք մը չէք գործեր ․ Ինչու որ առատ ձեզի տրուելու պիտի շնորհուի մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսին յաւիտենական թագաւորութիւնը մտնելը ։
12 Ասոր ես միշտ պատրաստ եմ այս բաներուն վրայով միտքերնիդ ձգելու ․ Թէեւ ասոնք գիտէք՝ և հաստատուած էք այս ներ-
13 կայ ճշմարտութեանը վրայ ։ Ինչու որ իրաւունք կը սեպեմ , քանի որ այս մարմինիս մէջն եմ՝ միտքերնիդ ձգելով
14 ձեզ արթնցնելու ․ Գիտեմ որ ես շուտով այս մարմինս պիտի մերկանամ ,

Digitized by Google

խօսքէս որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը
-ցուցուց ինծի ։ Ասոր կը ջանամ, կ'ըսք- 15
տարուած միշտ ձեր յիշատակելու, որ իմ
աշխարհէն ելլելէս ետքը աս բաները միտք
բերէք ։ Ինչու որ չէ թէ մենք վարպետ- 16
ութեամբ շինուած առասպելներու հետե-
ւելով մեր Տէր Յիսուս Քրիստոսին
զօրութիւնը ու գալուստը ձեզի ցուցու-
ցինք ։ Հապա թէ մեր աչքերով տեսնելով
անոր մեծութիւնը ։ Վասն զի ինքը Հօր 17
Աստուծմէն փառք ու պատիւ առաւ, ու
մեծ վայելչութեան փառքէն, այսպիսի ձայն
մը գալով ։ Թէ Ասիկայ է իմ սիրելի
Որդիս՝ որուն ես հաւնեցայ ։ Եւ աս 18
երկինքէն եկած ձայնը մենք լսեցինք, որ
անոր հետ էինք այն սուրբ լերանը վրայ ։
Եւ աւելի հաստատուն ունինք մարգարէ- 19
ական խօսքն ալ, որ աղէկ կ'ընէք
թէ որ անոր մտադրութիւն ընէք, որպէս
թէ մութ տեղը լոյս տուող ճրագի մը,
մինչեւ որ ցորեկը լուսնայ ու արուսեակը
ձեր սրտերնիդ մէջը ծագէ ։ Նախ զասիկա 20
ալ գիտնաք, որ ամէն մարգարէութիւն
իր գրուածքին մեկնութիւնը չունի ։ Վասն- 21
զի որ չէ թէ բնաւ մարգարէութիւնը
մարդոց կամքէն ելաւ առնուեցաւ ։ Հապա
Սուրբ Հոգիէն շարժուելով Աստուծմէ
ղրկուած մարդիկը խօսեցան ։

ԳԼ. Բ.

Բայց մարգարէներ ալ կ'ըլլային ան 1

ժողովուրդին մէջը, ինչպէս որ հիմա ալ
ձեր մէջը սուտ վարդապետներ պիտի ըլ-
լան. որ գաղտուկ պիտի մտցնեն կորըս-
տական հերձուածողութիւնները. ու զիրենք
ծախու առնող Տէրը ուրանալով իրենց
վրայ կը բերեն շուտով հասնելու կորըս-
2 տը. Եւ շատերը ալ անոնց անառակու-
թեանցը հետևեն, ինչած պիտի երթան.
որ անոնց համար ճշմարտութեան ճամբան
3 պիտի հայհոյուի. Եւ ագահութիւնով
մտքէ շինուած խօսքերով ձեզ գերի պի-
տի ընեն. որոնց դատապարտութիւնը
բնաւ պարապ չկենար. ու անոնց կո-
րուստը չմրափեր:
4 Վասն զի թէ որ Աստուած յանցանք
գործող հրեշտակներուն չխնայեց, հապա
խաւարի կապերով տարտարոսը ձգած դա-
5 տաստանի պահել տուաւ. Ու առջի աշ-
խարհին ալ չխնայեց. միայն թէ Նոյ
ութերորդ անձը արդարութեան քարոզի-
չը պահեց ջրհեղեղէն, որ ամբարիշտնե-
6 րուն աշխարհին վրայ բերուեցաւ. Եւ
Սոդոմացիներուն ու Գոմորացիներուն քա-
ղաքները մոխիր դարձնելով դատեց,
ետքէն ամբարշտութիւն ընելու մարդոցը
7 օրինակ ընելով զանոնք. Եւ ազատեց ար-
դար Ղովտը որ անոնց անիրաւ պղծալից
8 վարմունքներէն ձանձրացեր էր. (Ինչու
որ այն արդարը անոնց մէջը կենալով աչ-
քովը տեսնելով ու ականջովը լսելով, օրէ
օր իր մաքուր հոգին կը տանջէր անոնց
9 անօրէն վարմունքովը.) Տէրը գիտէ աստ-

Տէրն աստուածպաշտները փորձութենէ ազատելը , և անօրէնները տանջանքի համար դատաստանին օրուան պահելը ։

Մանաւանդ անոնք որ մարմնոյ պղծու- 10
թեան ցանկութիւններուն ետեւէն կ'երթան ,
տէրութիւնը կ'անարգեն , դիմահարձակ ու
յանդուգն են , չեն վախնար փառաւորու-
թիւններուն դէմ հայհոյելու ։ Երբոր հրեշ- 11
տակները՝ որ անոնցմէ շատ մեծ են զօրու-
թիւնով ու կարողութիւնով , հայհոյու-
թեան դատապարտութիւնը Տէրոջմէն ա-
նոնց վրայ չեն բերեր ։ Բայց ասոնք ան- 12
խօս անասուններու պէս (որ բնականա-
պէս որսուելու ու ապականուելու համար
ծնած են ,) չգիտցած բաներնուն դէմ կը
հայհոյեն , և իրենց ապականութիւնովը
պիտի ապականին ; Անիրաւութեան վարձ- 13
քերնին առնելով . որ օրուան մէջ
ցանկութիւնը զուարճութիւն կը սեպեն .
աղտոտ ու արատաւոր են , իրենց խաբէ-
բայութիւններովը զուարճանալով , ձեզի
հետ կերուխումի ընկեր ըլլալով ։ Աչուր- 14
նին լեցուն շնութեան աչք ունին , որ մեղքէ
չեն դադարիր . անհաստատ անձերուն միտքը
կը խաբեն . որոնք ագահութեան սովոր են
սրտերնին , անիծեալ զաւակներ են .
Շիտակ ճամբան ձգելով մոլորեցան ։ 15
Բէովրեան Բաղաամին ճամբուն հետեւե-
լով՝ անիրաւութեան վարձքերը սիրեցին .
Որ իր անօրէնութեանը յանդիմանող ու- 16
նեցաւ անխօս էշը . մարդկային ձայնով
խօսելով՝ մարգարէին անօրէնութիւնը .

Digitized by Google

17 արգիլէց ։ Ասանկները ջուր չունեցող
աղբիւրներ են, ու փոթորիկէ տարուած
մէգեր, որ իրենց համար ան թանձր
18 խաւարը պահուած է յաւիտեան ։ Քան-
զի ունայնութեան հպարտ խօսքեր ըսելով՝
գէջութիւններով մարմինին անառակ ցան-
կութիւններովը կը խաբեն անոնք՝ որ ի-
րաւցընէ կը փախչէին անոնցմէ՝ որ մոլորու-
19 թեան մէջ կը պտըտին ։ Անոնց ազատու-
թիւն կը խոստանան, և իրենք ապակա-
նութեան ծառաներ են ։ վասն զի ինչ
բանով որ մէկը յաղթուի, ինքը անոր
20 ծառայ կ՚ըլլայ ։ Ինչու որ եթէ աշխար-
հիս պղծութիւններէն ետ կեցած էին՝ մեր
Տէր ու փրկիչ Յիսուս Քրիստոսը ճանչ-
նալով, և նորէն անոնց բաներուն հետը շա-
ղուած փաթթուին՝ անոնց վերջը առջինէն
21 գէշ կ՚ըլլայ ։ Ինչու որ աղէկ էր անոնց՝
որ բնաւ արդարութեան ճամբան ճանչցած
չըլլային, քան թէ ճանչցած՝ ու ետ կե-
ցած ըլլան սուրբ պատուիրանքէն՝ որ իրենց
22 յանձնուեցաւ ։ Անոնց յարմար կու գայ
այն ճշմարիտ իմաստուն առակը, թէ՝
Շունը նորէն իր փսխածին կը դառնայ,
ու լուացուած խոզը ցեխին մէջ կը թա-
ւալտըկի ։

ԳԼ. Գ.

1 Սիրելիներ՝ աս երկրորդ թուղթը ձեզի
կը գրեմ, որով ձեր հաստատ միտքը
2 կ՚արթընցընեմ յիշելու. Որ միտքերնիդ
բերէք սուրբ մարգարէներէն, ու ձեր ա-

առաքեալներէն առաջուց ըսուած խօսքերը՝
Տէրոջը ու փրկչին պատուէրները։ Նախ 3
առաջ աս գիտնանք, որ վերջի օրերը ար-
համարհողներ և ծաղր ընողներ պիտի
գան, որ իրենց ցանկութիւններուն պիտի
վարուին. և պիտի ըսեն. Ո՞ւր է անոր 4
գալուն խոստումը. վասն զի քանի որ
հայրերը քնացան, ամէն բան անանկ կայ
կը մնայ ստեղծուածներուն սկիզբէն հետէ։
Ու անոնք (որ իրենց ուզածը աս է) աս 5
բանը մոռցեր են, թէ երկինքը առաջուց
եղան. ու երկիրը ջուրերէն, ջուրերն ալ
հաստատուն կեցեր են Աստուծոյ խօսքովը։
Ասոր համար աշխարհը ջրհեղեղով ապականուած 6
կորսուեցաւ։ Իսկ հիմակուան երկինքը ու 7
երկիրը նոյն խօսքովը պահուած են
մինչև դատաստանին օրը, որուն համար
պահուած, ու ամբարիշտ մարդոց կոր-
սուելուն։ Իսկ անիկայ ալ ձեզմէ ծա- 8
ծուկ չմնայ սիրելիներ, որ Տէրոջը մէկ
օրը հազար տարուան պէս է, ու հազար
տարին մէկ օրուան պէս։ Տէրը չուշա- 9
ցըներ իր խոստումները, ինչպէս որ ոմանք
ուշ կը սեպեն, հապա ձեզի երկայնամիտ
կ'ըլլայ. ինչու որ չուզեր որ մէկը կորսուի,
հապա որ ամէնքը ապաշխարութեան գան։
Միայն թէ Տէրոջը օրը գողի պէս կու գայ. 10
որ անոր ատենը երկինքը սաստիկ շարժումով
պիտի անցնին, ու տարերքները կրակով
այրուած պիտի հալին, երկիրն ալ ու
ինչ գործեր որ անոր մէջը կը գտնուին։
Իսկ աս ամէն բաները աւրուելի որ պիտի 11

Digitized by Google

քակուին՝ ձեզի ի՛նչպէս պէտք է որ ըլլա-
նայիք․ միայն թէ սուրբ ու աստուածա-
12 պաշտ վարքով սպասել․ Եւ ջանք ընել
հասնելու Տէրոջը օրուանը գալուն․ որ
ան ատենը երկինքը կրակով այրուած պի-
տի քակուի․ ու տարերքները բռնկուած
13 պիտի հալին։ Բայց նոր երկինքի մը ու
նոր երկրի մը՝ իր խոստումներուն համեմատ
կը նայինք կը սպասենք, ուր տեղ որ
արդարութիւն կը բնակի։
14 Ուստի սիրելիներ՝ ասոնց սպասելով
ջանացէք, որ ան ձեզ անբիծ ու անարատ
15 գտնէ խաղաղութիւնով․ Եւ Տէրոջը եր-
կայնմտութիւնը փրկութիւն սեպեցէք․
ինչպէս որ մեր սիրելի եղբայրը Պօղոս ալ
իրեն տրուած իմաստութիւնովը գրեց ձե-
16 զի․ Ինչպէս որ ամէն թուղթերուն մէջ
ալ աս բաներուն համար կը խօսի․ որոնց
մէջ քանի մը դժուարիմաց բաներ կը
գտնուին, որ զանոնք տգէտները ու ան-
հաստատները ծուռ կողմը կը դարձընեն,
ինչպէս բոլոր գիրքերն ալ՝ իրենց անձին
17 կորսնցմանը համար։ Ուրեմն դուք սի-
րելիներ՝ առաջուց գիտցողներու պէս ըզ-
գո՛յշ եղէք, որ չըլլայ թէ անօրէններու մո-
լորութիւնով բռնուած ձեր հաստատութե-
18 նէն իյնաք։ Աճեցէք մեր Տէր և Փրկիչ
Յիսուս Քրիստոսի շնորհքովը ու գիտու-
թիւնովը․ անոր փառք հիմա ալ, ու
մինչև յաւիտենական օրն ալ․ ամէն։

Digitized by Google

# ՅՈՎՀԱՆՆԷՍ
# ԱՌԱՔԵԼՈՅՆ
# ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
# ԹՈՒՂԹԸ

## ԳԼՈՒԽ Ա

Կենաց Բանին վրայով, որ սկիզբէն էր՝ 1
որուն համար լսեցինք, որ մեր աչ-
քերովը տեսանք, որուն նայեցանք,
ու մեր ձեռքերը շօշափեցին. (Եւ կեան- 2
քը յայտնուեցաւ, ու տեսանք, և կը
վկայենք, ու ձեզի կը պատմենք այն յաւ-
իտենական կեանքը, որ Հօրը քովն էր՝
ու մեզի երեւցաւ.) Ան որ տեսանք ու 3
լսեցինք՝ ձեզի ալ կը պատմենք, որ դուք
ալ մեր հետը հաղորդութիւն ունենաք.
և մեր հաղորդութիւնը Հօրը հետ ըլլայ՝
ու իր Որդւոյն Յիսուս Քրիստոսին հետ։
Ասիկա ալ կը գրենք ձեզի, որ ձեր ուրախու- 4
թիւնը կատարեալ ըլլայ։

Ու ասիկայ է ան խոստմունքը, որ իրմէն 5
լսեցինք՝ ու ձեզի կը պատմենք. որ Աս-
տուած լոյս է, ու անոր մէջ բնաւ խաւ-
ար չկայ։ Թէ որ ըսենք թէ՝ Անոր հե- 6
տը հաղորդութիւն ունինք, ու խաւարի

Digitized by Google

մէջ պտըտինք , սուտ կը խօսինք՝ և ճշ-
7 մարտութիւնը չենք ըներ : Հապա թէ
որ լոյսի մէջ քալենք , ինչպէս որ անիկայ
լոյսի մէջ է , մէկզմէկու հետ հաղորդակցու-
թիւն կ'ունենանք . ու անոր Որդւոյն
Յիսուսին արիւնը մեզ ամէն մեղքերէն
8 կը սրբէ : Եթէ որ ըսենք՝ թէ Մենք մեղք
մը չունինք , ինքզինքնիս կը խաբենք , ու
9 մեր մէջը ճշմարտութիւն չկայ : Հապա
թէ որ խոստովանինք մեղքերնիս , հաւա-
տարիմ ու արդար է անիկայ մեր մեղ-
քերուն թողութիւն տալու , և մեզ բո-
10 լոր անիրաւութենէ սրբելու : Իսկ թէ որ
ըսենք՝ թէ Մեղք մը չգործեցինք , սուտա-
խօսող կ'ընենք անիկայ , ու անոր խօսքը
մեր մէջը չէ՛ :

## ԳԼ. Բ

1 Իմ որդեակներս՝ ասոնք ձեզի կը գրեմ որ
մեղք չգործէք . և թէ որ մէկը մեղք գոր-
ծելու ըլլայ , Աստուծոյ քովը Բարեխօս
ունինք Յիսուս Քրիստոս արդարը ու
2 անարատը . Իսկ անիկայ մեր մեղքերուն
քաւութիւնն է . և ոչ՛ թէ միայն մերին-
ներուն , հապա բոլոր աշխարհքի :
3 Ու ասով գիտենք՝ թէ անիկայ ճանչ-
ցանք , թէ որ անոր պատուիրանքները
4 պահենք : Ան որ կ'ըսէ՝ թէ Ես անիկայ
ճանչցայ , ու անոր պատուիրանքները
չպահեր , սուտ է , և անոր մէջը ճշմար-
5 տութիւն չկայ : Իսկ ան որ անոր խօս-


Digitized by Google

քը կը պահէ՝ իրաւցընէ իր մէջը կատարեալ
է Աստուծոյ սէրը. ասով կը ճանչնանք՝
թէ անոր մէջն ենք: Ան որ կ'ըսէ թէ 6
անոր մէջը կը բնակի, անանկ պէտք է
երթայ՝ ինչպէս որ ան գնաց:
Սիրելիներ՝ չէ՝ թէ մէկ նոր պատուի- 7
րանք մը ձեզի կը գրեմ, հապա այն հին
պատուիրանքը որ առաջուց ունէիք. և
հին պատուիրանքը այն խօսքն է՝ որ դուք
լսեցիք: Դարձեալ նոր պատուիրանք 8
կը գրեմ ձեզի, ան որ ճշմարիտ է անոր մէ-
ջը ու ձեր մէջը. ինչու որ խաւարը անցաւ,
ու ճշմարիտ լոյսը արդէն կ'երևնայ: Ան որ 9
կ'ըսէ՝ թէ Լոյսին մէջն է, ու իր եղբայրը
կ'ատէ, սուտ է. և անիկայ տակաւին
խաւարին մէջն է: Ան որ իր եղբայրը կը 10
սիրէ, լոյսի մէջ կը բնակի. ու անոր մէ-
ջը գայթակղութիւն չկայ: Բայց ան որ 11
իր եղբայրը կ'ատէ, խաւարի մէջ է.
ու խաւարի մէջ կը պտըտի, և չգիտեր
ուր կ'երթայ, ինչու որ խաւարը անոր
աչքը կուրցուցեր է: Կը գրեմ ձեզի 12
որդեակներ, ինչու որ ձեր մեղքերը ձեզի
թողուած են անոր անունին համար: Կը 13
գրեմ ձեզի հայրեր, ինչու որ դուք ճանչ-
ցաք անիկայ որ սկիզբէն է. կը գրեմ
ձեզի երիտասարդներ, ինչու որ դուք չա-
րին յաղթեցիք: Գրեցի ձեզի տղաքներ, 14
որովհետև դուք ճանչցաք Հայրը. գրեցի
ձեզի հայրեր, ինչու որ դուք ճանչցաք
անիկայ՝ որ սկիզբէն է. գրեցի ձեզի ե-

Digitized by Google

երիտասարդներ , որ զօրաւոր էք , և
Աստուծոյ խօսքը ձեր մէջ կը բնակի , ու
15 դուք չարին յաղթեցիք ։ Մի՛ սիրէք աշ-
խարհս , ո՛չ ալ ինչ որ աշխարհիս մէջ է ։
16 Եթէ որ մէկը աշխարհը կը սիրէ , անոր
-ներսիդին Հօրը սէրը չկայ . ինչու որ ան
ամէն բաները որ աշխարհի մէջ է՝ մարմնոյ
ցանկութիւն է , ու աչքի ցանկութիւն է ,
և ասս կեանքին ամբարտաւանութիւնը ,
որ ան՝ Հօրմէն չէ , հապա աս աշխարհէս
17 է ։ Աշխարհս ալ կ՚անցնի անոր ցանկու-
թիւնն ալ . բայց ան որ Աստուծոյ կամ-
քը կ՚ընէ՝ յաւիտեան կը մնայ ։
18 Որդեակներս՝ վերջին ժամանակն է .
ու ինչպէս լսեցիք՝ թէ Նեռը պիտի գայ ,
և հիմակուընէ ալ շատ նեռեր ելեր են .
որ անով կընանք իմանալ թէ վերջին ժա-
19 մանակ է ։ Մեզմէ ելան անոնք , բայց
մեզմէ չէին . ինչու որ եթէ մեզմէ ըլլային՝
մեր քովը պիտի մնային . հապա մեզմէ ե-
լան որ յայտնի ըլլան՝ թէ անոնք ամէնը
20 մեզմէ չէին ։ Բայց դուք օծութիւն ու-
նիք Սուրբէն , ու ամէնքդ գիտէք ։
21 Չգրեցի ձեզի՝ իբր թէ ճշմարտութիւնը
չէք գիտեր , հապա թէ գիտէք անիկայ ,
ու նաև՝ թէ բոլոր սուտութիւնը ճշմար-
22 տութենէ չէ՛ ։ Բայց ո՞վ է սուտ , եթէ
ո՛չ՝ ան որ կ՚ուրանայ թէ Յիսուսը Քրիս-
տոս չէ . անիկայ է բուն Նեռը որ կ՚ու-
23 րանայ Հայրը ու Որդին ։ Ամէն ով որ
կ՚ուրանայ Որդին , անիկայ Հայրն ալ

Digitized by Google

ընդունիր. բայց ան որ կը խոստովանի
Որդին, անիկայ Հայրն ալ կ'ընդունի։
Ան որ դուք սկիզբէն լսեցիք, թո՛ղ ձեր 24
մէջը բնակի. որ եթէ ան սկիզբէն լսած-
նիդ ձեր մէջը բնակի՝ դուք ալ Որդիին ու
Հօրը մէջը պիտի բնակիք։ Եւ ասիկայ 25
է ան խոստմունքը, որ ինքը մեզի խոս-
տացաւ, այսինքն՝ յաւիտենական կեանքը։
Ասիկայ ձեզի գրեցի՝ որ մէկը ձեզ մոլո- 26
րեցնէ։ Եւ այն օծութիւնը՝ որ դուք 27
իրմէն ընդունեցիք, ձեր մէջը մնայ, ու
պէտք չէ որ մէկը ձեզի սորվեցնէ. հա-
պա ինչպէս որ անոր օծութիւնը ձեզի կը
սորվեցնէ ամէն բանի վրայով, և ճշմա-
րիտ է ու սուտ չէ՛. և ինչպէս որ ա-
նիկայ ձեզի սորվեցուց, անոր մէջը կե-
ցէք։

Ու հիմա ո՛րդեակներս՝ անոր մէջը կե- 28
ցէք. որ երբ յայտնուելու ըլլայ, մենք
համարձակութիւն ունենանք, ու անկից
չամչնանք իր գալուն ատենը։ Ապան ե- 29
թէ որ գիտէք թէ անիկայ արդար է, կ'ի-
մանաք թէ՝ ամէն ո՛վ որ արդարութիւն
կը գործէ, անկից ծնած է։

ԳԼ. Գ.

Տեսէք՝ Հայրը ինչպիսի՛ սէր շնորհեց մեզի, 1
որ մենք Աստուծոյ որդիք ըսուինք. ա-
սոր համար աշխարհ մեզ չճանչնար, ո-
րովհետև զանիկայ ալ չճանչցաւ։ Սի- 2
րելիներ՝ հիմա մենք Աստուծոյ որդիքն

Digitized by Google

ենք, եւ տակաւին յայտնի չէ՝ թէ ինչ
պիտի ըլլանք. գիտենք որ երբ անիկայ
յայտնուի, անոր պէս պիտի ըլլանք.
վասն զի անիկայ պիտի տեսնենք՝ ինչպէս
որ է։
3 Ու ամէն ո՛վ որ այս յոյսը իր անոր
մէջը ունի՝ իր անձը կը մաքրէ՝ ինչպէս որ
4 անիկայ մաքուր է։ Ամէն ո՛վ որ մեղք
կը գործէ, անիկայ անօրէնութիւն ալ
կ՚ընէ. ու բուն մեղքը ալ անօրէնութիւն
5 է։ Ու գիտենք որ անիկայ անոր համար
յայտնուեցաւ, որ մեր մեղքերը վերցնէ,
6 ու իր մէջը մեղք չկայ։ Ամէն ո՛վ որ ա-
նոր վրայ հաստատուած է՝ մեղք չըգործեր.
եւ ամէն ո՛վ որ մեղք կը գործէ՝ չտեսաւ
7 զանիկայ, ու չճանչցաւ զանիկայ։ Տղա՛ք
մէկը ձեզ չխաբէ. ան որ արդարու-
թիւն կը գործէ՝ արդար է, ինչպէս որ
8 Անիկայ արդար է։ Ան որ մեղք
կը գործէ՝ Սատանայէն է. ինչու որ Սա-
տանան սկիզբէն հետէ կը մեղանչէ. աս-
որ համար Աստուծոյ Որդին յայտնուե-
9 ցաւ, որ Սատանային գործը քակէ։ Ա-
մէն ո՛վ որ Աստուծմէ ծնած է՝ մեղք չը-
գործեր. ինչու որ անոր սերմը իր մէջը
կը մնայ, ու չկրնար մեղք գործել.
10 վասն զի Աստուծմէ ծնած է։ Ասով
յայտնի են մէկզմէկէ Աստուծոյ որդիքը
ու Սատանայի որդիքը։

Ամէն ո՛վ որ արդարութիւն չգործեր,
անիկայ Աստուծմէ չէ. եւ ան ալ որ իր

Digitized by Google

եղբայրը չսիրեր ։ Ինչու որ ասիկայ այն 11 Ի
պատուիրանքն է՝ որ դուք սկիզբէն լսե-
ցիք, որ մէկզմէկ սիրենք ։ Կայէնին պէս 12
չէ՝ որ ինքը չարէն էր, ու իր եղբայրը
սպաննեց․ և ինչու համար զանիկայ
սպաննեց, անոր համար որ իր գործքերը
չար էին, ու եղբօրը գործքերը բարի
էին․ մի՝ զարմանաք եղբայրներ՝ թէ որ 13
աշխարհը ձեզ ատէ ։ Մենք գիտենք որ 14
մահուընէ կեանքի փոխուեցանք․ ինչու որ
եղբայրները կը սիրենք․ բայց ան որ չսի-
րեր, մահուան մէջը կը մնայ ։ Ամէն ո՛վ 15
որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան է․
ու գիտէք որ ամէն մարդասպան իր մէջը
յաւիտենական կեանք հաստատուած չու-
նի ։ Անով գիտցանք Աստուծոյ սէրը․ 16
որ անիկայ իր անձը մեզի համար դրաւ․
մենք ալ պարտաւոր ենք մեր եղբայրնե-
րուն համար դնել մեր անձերը ։ Ան որ 17
աս աշխարհիս բարիքը ունի, և իր եղ-
բայրը բանով մը կարօտ կը տեսնէ, ու իր
գութը անկից կը գոցէ, ինչպէ՞ս Աստուծոյ
սէրը անոր մէջը բնակած կ'ըլլայ ։ Որդ- 18
եակներս՝ չէ՝ թէ խօսքով ու լեզուով
սիրենք, հապա գործքով ու ճշմարտու-
թիւնով ։

Իսկ անով ճանչցուցինք թէ ճշմարտու- 19
թենէն ենք․ ու մեր սրտերուն համար-
ձակութիւնովը անոր առջեւը երեւանք ։
Վասնզի թէ որ մեր սրտերը մեզ կը մե- 20
ղադրեն՝ հապա Աստուած մեր սրտերէն

Digitized by Google

21 մեծ է՝ և ամէն բան գիտէ ։ Սիրելիներ՝
եթէ որ մեր սիրտերը մեզ չդատապարտեն ,
համարձակութիւն կ'ունենանք Աստուծոյ
22 առջևը ։ Եւ ինչ որ խնդրենք՝ կ'առնենք
անկէց . ինչու որ իր պատուիրանքները
կը պահենք , ու իր առջին հաճոյ եղած
23 բաները կ'ընենք ։ Եւ ասիկայ է անոր
պատուիրանքը , որ իր Որդւոյն Յիսուս
Քրիստոսի անունին հաւատանք՝ ու մէկ-
զմէկ սիրենք , ինչպէս որ մեզի պատ-
24 ուէր տուաւ ։ Եւ ան որ անոր պատ-
ուիրանքները կը պահէ՝ անոր մէջը հաս-
տատուած կ'ըլլայ . ու անիկայ ալ անոր
մէջ . և ասկից գիտենք որ մեր մէջը
կը բնակի՝ այսինքն ան Հոգիէն որ մեզի
տուաւ ։

## ԳԼ. Դ

1 Սիրելիներ՝ ամէն հոգիի մի՛ հաւատաք .
հապա հոգիները փորձեցէք թէ արդեօք
Աստուծմէ՛ են . ինչու որ աշխարհիս մէջ
2 շատ սուտ մարգարէներ ելած են ։ Ա-
մենք ասով կը ճանչնանք Աստուծոյ Հո-
գին . ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը
մարմինով եկած կը խոստովանի , անիկայ
3 Աստուծմէն է . Եւ ամէն հոգի որ Յիսուս
Քրիստոսը մարմինով եկած չխոստովանիր ,
անիկայ Աստուծմէ չէ . ու ասիկայ Նեռ-
ին հոգին է , որուն համար լսեցիք՝ թէ
պիտի գայ . ու հիմակուընէ ալ աշխարհիս
4 մէջն է ։ Դուք Աստուծմէ էք՝ որդեակներ

Digitized by Google

նեք ։ ու անոնց յաղթեցիք · ինչու ո-
մեծ է անիկայ որ ձեր մէջն է, քան թէ
ան՝ որ աշխարհքին մէջն է ։ Անոնք աշ- 5
խարհէն են · անոր համար աշխարհին վրա-
յով կը խօսին, և աշխարհքն կը լսէ անոնց ։
Մենք Աստուծմէ ենք, ան որ զԱստուած կը 6
ճանչնայ՝ մեզի կը լսէ. ու ան որ Աստուծ-
մէ չէ՝ մեզի չլսեր . ասով կը ճանչնանք
ճշմարտութեան Հոգին ու մոլորութեան
Հոգին ։
Սիրելինե՛ր՝ մեկզմեկ սիրենք . ինչու որ 7
սէրը Աստուծմէ է . ու ամէն ո՛վ որ կը
սիրէ, Աստուծմէ ծնած է, ու կը ճանչնայ
զԱստուած ։ Իսկ ան որ չսիրեր, զԱս- 8
տուած չճանչնար . ինչու որ Աստուած սէր
է ։ Իսկ աս բանիս մէջ Աստուծոյ սէրը 9
մեր վրայ երեւցաւ, որ Աստուած իր միա-
ծին Որդին աշխարհք ղրկեց, որ անով
կենդանի ըլլանք ։ Սա բանիս մէջն է 10
սէրը . որ չէ՛ թէ մենք սիրեցինք զԱս-
տուած, հապա որ անիկայ մեզ սիրեց,
ու իր Որդին ղրկեց մեր մեղքերուն քա-
ւութեանը համար ։ Սիրելինե՛ր՝ թէ որ 11
Աստուած մեզ ասանկ սիրեց, ուրեմն մենք
ալ կը պարտաւորինք մեկզմեկ սիրել ։
Մէկը բնաւ Աստուած տեսած չէ . թէ 12
որ մեկզմեկ սիրենք՝ Աստուած մեր մէ-
ջը կը բնակի, ու անոր սէրը մեր մէջը
կատարեալ է ։ Ասով գիտենք թէ մենք 13
անոր մէջը բնակած ենք, ու անիկայ մեր
մէջը՝ որ իր Հոգիէն մեզի տուաւ ։ Իսկ 14

Digitized by Google

մենք տեսանք. ու կը վկայենք՝ որ Հայ-
րը իր Որդին խրկեց աշխարհքի փրկի-
15 չը ըլլալու ։ Ան որ կը խոստովանի
թէ Յիսուսը Որդի Աստուծոյ է, Աս-
տուած անոր մէջը կը բնակի, ան ալ
16 Աստուծոյ մէջը ։ Եւ մենք հաւատացինք
ու ճանչցանք Աստուծոյ սէրը՝ որ մեր
վրայ ունի ։ Աստուած սէր է ։ և ան որ
սիրոյ մէջ կը կենայ՝ Աստուծոյ մէջ բնա-
կած է, ու Աստուած անոր մէջը կը բնա-
17 կի ։ Աս բանին մէջ անոր սէրը մեր վրա-
յայ կատարեալ է, որ համարձակութիւն
ունենանք դատաստանին օրը ։ վասն զի
ինչպէս է ինքը, անանկ ալ մենք ենք
18 աս աշխարհքիս մէջ ։ Սիրոյ մէջը վախ
չկայ, հապա կատարեալ սէրը վախը մէկ-
դի կը ձգէ ։ ինչու որ վախը տանջանքին
տակն է, ուստի ան որ կը վախնայ՝ սի-
19 րոյ մէջ կատարեալ չէ ։ Մենք Աստուած
սիրենք ։ ինչու որ առաջ անիկայ մեզ
20 սիրեց ։ Եթէ մէկը ըսէ՝ Թէ ես Աս-
տուած կը սիրեմ, ու իր եղբայրը ատէ,
անիկայ սուտ է ։ ան որ իր եղբայրը չսի-
րեր՝ որ կը տեսնէ, զԱստուած որ չտեսա-
21 ներ՝ ինչպէ՞ս կրնայ սիրել ։ Եւ աս պատ-
ուէրը անկէց ունինք, թէ ան որ զԱս-
տուած կը սիրէ, անիկայ իր եղբայրն ալ
սիրէ ։

## ԳԼ. Ե

1 Ամէն ո՛վ որ կը հաւատայ՝ թէ Յիսուսը

Digitized by Google

Քրիստոսն է, Աստուծմէ ծնած է. և ամ
էն ով որ ծնողը կը սիրէ, անկէց ծնածն
ալ կը սիրէ։ Ասով կը ճանչնանք որ Աս 2
տուծոյ Որդին կը սիրենք, երբոր Աս
տուած սիրենք, ու անոր պատուիրանք
ները պահենք։ Ինչու որ ասիկայ է Աս 3
տուծոյ սէրը, որ իր պատուիրանքները
պահենք. և անոր պատուիրանքները
ծանր բան չեն։ Վասն զի ամէն ինչ որ 4
Աստուծմէ ծնած է՝ աշխարհքին կը յաղթէ.
և ասիկայ է յաղթութիւնը որ աշխարհքին
կը յաղթէ, այսինքն մեր հաւատքը։ Ո՞ 5
վ է որ աշխարհքին կը յաղթէ, եթէ ոչ
անիկայ որ կը հաւատայ թէ Յիսուսը
Որդին Աստուծոյ է։
Ասիկայ է որ եկաւ ջուրով ու հոգիով 6
և արիւնով այսինքն Յիսուս Քրիստոս.
ոչ թէ միայն ջուրով, հապա արիւնով
ու ջուրով. և Հոգին է որ կը վկայէ.
Ինչու որ Հոգին ճշմարտութիւն է։ Վասն 7
զի երեք են որ [երկինքի մէջ կը վկայեն,
Հայրը, Բանը ու Սուրբ Հոգին. և աս
երեքը մէկ են։ Ու երեք են որ երկրի 8
վրայ] կը վկայեն, Հոգին ջուրը ու ա
րիւնը. և երեքը մէկ են։ Եթէ որ մար 9
դոց վկայութիւնը կ'ընդունինք, Աստու
ծոյ վկայութիւնը աւելի մեծ է. ասի
կայ է Աստուծոյ վկայութիւնը, որ իր
Որդւոյն վրայ վկայեց։ Ան որ Աստու 10
ծոյ Որդին կը հաւատայ, աս վկայու
թիւնը իր վրան ունի. ան որ Աստուծոյ

Digitized by Google

Որդիին չհաւատար՝ ստախօս կ՚ընէ անոր-
կայ . ինչու որ չհաւատար այն վկայու-
թեանը՝ որ Աստուած իր Որդւոյն վը-
11 րայ վկայեց : Այս՝ ասիկայ է այն վկայու-
թիւնը , որ Աստուած մեզի յաւիտենա-
կան կեանք տուաւ . ու աս այն կեանքն
12 է՝ որ իր Որդւոյն մէջն է : Ան որ Որ-
դին կ՚ընդունի , կեանքն ալ կ՚ընդունի .
և ան որ Աստուծոյ Որդին չընդունիր ,
կեանքն ալ չընդունիր :
13 Աս գրեցի ձեզի՝ որ գիտնաք թէ յա-
ւիտենական կեանք ունիք . և որ Աս-
14 տուծոյ Որդւոյն անուանին հաւատաք : Այս
ան համարձակութիւնը որ մենք անոր քո-
վը ունինք՝ աս է , որ ինչ բան որ խնդրե-
լու ըլլանք իր կամքին համեմատ՝ կը լսէ
15 մեզի : Այս թէ որ գիտենանք թէ մեր խըն-
դիրքներուն կը լսէ , ուրեմն կը գիտնանք՝
թէ կ՚առնենք խնդիրքներս , որ կը խնդրենք
իրմէն :
16 Թէ որ մէկը տեսնէ՝ որ իր եղբայրը
մեղք մը գործեց՝ չէ՛ թէ մահացու , թո՛ղ
խնդրէ՝ ու Աստուած անոր կեանք պիտի
տայ ան մահացու չեղած մեղքը գործողին .
մեղք կայ որ մահացու է , անոր համար
17 չեմ ըսեր որ խնդրես : Ամէն անիրա-
ւութիւն մեղք է . և մեղք կայ որ մա-
հացու է :
18 Գիտենք որ ան ամէնը որ Աստուծմէ
ծնած է , մեղք չգործեր . հապա ան որ
Աստուծմէ ծնած է՝ իր անձը կը պահէ ,

Digitized by Google

ու չարը իրեն չմօտենար : Գիտենք որ 19
մենք Աստուծմէ ենք , ու բոլոր աշ-
խարհքը չարին մէջ է : Նաև գիտենք որ 20
Աստուծոյ Որդին եկաւ , ու մեզի միտք
տուաւ , որ ճշմարիտը ճանչնանք . և
ան ճշմարիտին մէջն ենք՝ իր Որդւոյն
Յիսուս Քրիստոսի մէջը . ինչու որ ա-
նիկայ ճշմարիտ Աստուած է՝ ու յաւի-
տենական կեանք : Որդեակներ՝ ինքզինք- 21
նիդ կռապաշտութենէ պահեցէք :

# ՅՈՎՀԱՆՆՈՒ
## ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

1 Երէցէն ընտրեալ Կիւրիային ու իր
որդիներուն, որ ես ճշմարտութեամբ կը
սիրեմ, (և չէ՛ թէ միայն ես, հապա ա-
մենքն ալ՝ որ ճշմարտութիւնը կը ճանչնան,)
2 Այն ճշմարտութեանը համար՝ որ մեր մէջը
հաստատուած է, որ ձեր հետն ալ ըլլայ ·
ու դուք յաւիտեան մեր հետը ըլլաք ։
3 Շնորհք՝ ողորմութիւն՝ խաղաղութիւն
Հօր Աստուծմէն, և Տէր Յիսուս Քրիս-
տոսէն Հօրը Որդիէն՝ ձեր հետը ըլլայ ճշ-
մարտութեամբ ու սիրով ։
4 Շատ ուրախ եղայ ես, որ քու որդի-
ներէդ գտայ՝ որ ճշմարտութեամբ կ'եր-
թան այն պատուիրանքին համեմատ, որ
5 Հօրմէն առինք ։ Եւ հիմա քեզի կ'աղա-
չեմ Կիւրիա . չէ՛ թէ մէկ նոր պատուի-
րանք մը քեզի կը գրեմ, հապա այն որ
առաջուց ունէինք, որ մէկզմէկ սիրենք ։
6 Եւ սէրը աս է՝ որ անոր պատուիրանքին
համեմատ քալենք . ու պատուիրանքը աս
է՝ որ ինչպէս առաջուց լսեցիք՝ անոր հա-

Digitized by Google

մնմանք քալէք ։ Ինչու որ շատ մոլորե- 7
ցուցիչներ ելան աշխարհիս մէջ․ ո՛վ որ
Յիսուս Քրիստոսը մարմինով եկած չխոս-
տովանիր՝ անիկայ է մոլորեցուցիչը ու
Նեռը ։ Զգուշացէք ձեր անձերուն որ 8
ըրած աշխատանքնիս չկորսնցնէք․ հա-
պա որ լման վարձք առնէք ։ Ամէն ո՛վ 9
որ յանցանք կ՚ընէ՝ ու Քրիստոսի վար-
դապետութեանը մէջ չկենար, զԱստուած
չճանչնար ․ ան որ վարդապետութեանը
մէջ կը կենայ, անիկայ Հայրն ալ կ՚ըն-
դունի, Որդին ալ ։ Եթէ որ մէկը ձեզի 10
գայ, ու այս վարդապետութիւնը չբերէ-
նէ, անիկայ տուներնիդ մի ընդունիք,
ողջունել ալ մի՛ տաք ։ Անիկա որ անոր 11
բարև կ՚ուտայ, անոր չար գործքերուն հա-
ղորդ կ՚ըլլայ ։
Շատ բան ունէի ձեզի գրելու, բայց 12
չուզեցի թղթով ու մելանով գրել․ ինչու
որ յոյս ունիմ որ ես ձեզի գամ,
ու բերան առ բերան խօսիմ, որ մեր ու-
րախութիւնը կատարեալ ըլլայ ։ Քուրև 13
կու տայ քեզի ընտրեալ քրոջդ տղա-
քները ․ Շնորհքը ձեր հետ ըլլայ ։

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

1 Երէցէն՝ Գայոս սիրելիին, որ ես կը
2 սիրեմ ճշմարտութեամբ։ Սիրելի՛, քու
անձին բոլորովին յաջողութեանը ու ա-
ռողջութեանը համար աղօթք կ'ընեմ.
ինչպէս որ քու անձդ ալ յաջողութեան
3 մէջ է։ Շատ ուրախ եղայ՝ երբոր եղ-
բայրները եկան, ու քու ճշմարտութեանդ
վրայով վկայեցին, ինչպէս որ դուն ճշ-
4 մարտութեամբ կը քալես։ Ասկէ մեծ
ուրախութիւն մը չունիմ, որ կը լսեմ
թէ իմ զաւակներս ճշմարտութեան մէջ
5 կը քալեն։ Սիրելի՛ դուն հաւատարմա-
բար կ'ընես ինչ որ կ'ընես եղբայրներուն,
6 նաեւ օտարներուն ալ. Անոնք եկեղե-
ցիին առջեւ վկայեցին քու սիրոյդ հա-
մար. որ Աստուծոյ ընդունելի եղած
կերպովը անոնց բարի ընելով ճամբու կը
7 դնես։ Ինչու որ Աստուծոյ անունին
համար ելան, ու հեթանոսներուն մէ-
8 կէն բան մը չեն առներ։ Ուստի մենք
պարտաւոր ենք անանկները ընդունելու

Digitized by Google

որ ճշմարտութեանը գործակից ըլլանք ։
Եկեղեցիին բան մը գրեցի․ բայց 9
Դիոտրեփէսը՝ որ անոնց մէջ առաջին ըլլալ
կ'ուզէ, մեզ չընդունիր ։ Անոր համար 10
թէ որ գամ՝ անոր գործքերը պիտի յի-
շեմ որ կ'ընէ, մեզ կը հոգնեցընէ չար-
խօսութեամբ չար խօսքերով․ և ասոնցմով
ալ գոհ չըլլալով՝ ինքը չընդունիր եղբայր-
ները, ու անոնք որ կ'ընդունին՝ թող
չտար, ու եկեղեցիէն ալ կը հանէ ։ Սի- 11
րելի՛ չարին նմանող մի՛ ըլլար, հապա
բարիին ։ Ան որ բարին կ'ընէ՝
Աստուծմէ է ։ Եւ ան որ չարիք կը գործէ՝
անիկայ բնաւ զԱստուած չտեսաւ ։ Դեմե- 12
տրիոսին համար ամէնքն ալ կը վկայեն,
եկեղեցին ալ, ճշմարտութիւնն ալ ։ Մենք
ալ կը վկայենք․ և դուն գիտես թէ մեր
վկայութիւնը ճշմարիտ է ։
Շատ բան ունէի քեզի գրելու․ բայց 13
չեմ ուզեր թղթով ու մելանով գրել ։
Յոյս ունիմ որ շուտ մը քեզ տեսնեմ, 14
ու բերան բերնի խօսինք ։
Խաղաղութիւն քեզի․ բարեկամները քեզ 15
կ'ողջունեն․ բարեւ ըրէ՛ մեր սիրելի-
ներուն՝ ամէն մէկուն անունովը ։

# ՅՈՒԴԱ
## ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ

1 Յուդա՝ Յիսուս Քրիստոսի ծառայ ու
Յակոբոսին եղբայրը, հեթանոսներուն՝
որ Հօր Աստուծմէն սիրուած էք, և Յիսու-
սուս Քրիստոսին պահուած ու ընտրուած։
2 Ողորմութիւնը ու խաղաղութիւնը և սէրը
ձեր վրայ շատնայ։
3 Սիրելիներ՝ բոլոր ջանքը վրաս առնե-
լով ձեզի գրելու՝ մեր հասարակութեան
փրկութեանը համար, իմ անձիս հարկ
սեպեցի ձեզի գրել, ու աղաչել, որ
ջանք դրած կենաք այն հաւատքին վրայ
որ անգամ մը սուրբերուն տրուեցաւ։
4 Որովհետև մէկ քանիները գաղտուկ մտան,
անոնք որ առաջուց այս դատապարտու-
թեանը համար գրուած էին. ամբա-
րիշտներ, որ մեր Աստուծոյ շնորհքը ան-
կարգութեան դարձուցին. և այն մի միայն
իշխանը՝ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսը
5 ուրացան։ Ուստի կ՚ուզեմ միտքերնիդ
բերել, թէպէտ աս բան գիտէք, թէ
Աստուած որ անգամ մը ժողովուրդը Ե-
գիպտոսէն ազատեց, երկրորդ անգամ

Digitized by Google

անհաւատները կորսընցուց ։ Եւ հրեշ- 6
տակները՝ որ իրենց իշխանութիւնը չպա-
հեցին . հապա իրենց բնակութիւնը ձգե-
ցին, մշտնջենաւոր կապերով խաւարի մէջ
պահեց՝ մեծ օրուան դատաստանին ։
Ինչպէս Սոդոմ ու Գոմոր՝ և անոնց բո- 7
լորտիքը եղած քաղաքները՝ որոնք նոյն
օրինակին պէս պոռնկեցան՝ ընկերներուն
մարմիններուն հետ, առջևնիս օրինակ կե-
ցեր են՝ յաւիտենական կրակին դատա-
պարտութիւնը ընդունելով ։ Նոյնպէս 8
ասոնք ալ՝ քնանով ցնորածի պէս՝ մար-
մինը կը պղծեն, տէրութիւնները կը
քամահրեն, փառաւորութիւններուն դէմ կը
հայհոյեն ։ Երբոր Միքայէլ հրեշտակապե- 9
տը՝ բանսարկուին Սատանային հետ վէճ
ընելով՝ պատասխանեց կռուելով Մովսէսին
մարմինին համար, չհամարձակեցաւ անոր
հայհոյութեան դատապարտութիւնը բե-
րել . հապա ըսաւ՝ Տէրը յանդիմա-
նէ զքեզ ։ Բայց ասոնք՝ ինչ բանե- 10
րու որ չեն հասկընար, զէշ կը խօսին,
և ինչ բաներն ալ՝ որ բնութեամբ
անբան անասուններու պէս գիտեն, ա-
նոնց մէջ կ'ապականին ։ Վայ է անոնց՝ որ 11
Կայէնին ճամբովը գացին, ու Բաղաամին
մոլորութեանը պէս ցանկութեամբ վարձ-
քի եկան գացին, և Կորխին հակառակե-
լուն պէս կորսուեցան ։ Ասոնք սէրերնուն 12
բամբասողներ են, իրենց ցանկութեանը
հետևելով երթալով, իրենց անձերը խնճոյքներու-

բան մէջ խաբերայութեամբ ձեզի հետ
ուրախակից կ'ըլլան, ու աներկիւղ իրենց
անձը կը կերակրեն. անջուր ամպեր հովե-
րէն քշուած. պտուղնին կորսնցուցած
ծառեր, երբեք չունեցող, երկու անգամ
13 մեռած, արմատէն խլած. Ծովուն կատա-
ղած ալիքներ, որ իրենց անձերուն ամօ-
թը միշտ կը փրփուրցընեն. մոլորական
աստղեր, որոնց պահուած է յաւիտենա-
կան խաւարին անդունդը :
14 Ասոնց համար մարգարէացաւ Ենովքն
ալ՝ որ եօթներորդ էր Ադամէն, ու ըսաւ.
Ահա՛ Տէրը բիւրաւոր սուրբ հրեշտակնե-
15 րովն եկաւ. Ամենուն դատաստանը ընելու,
ու բոլոր ամբարիշտները յանդիմանելու
իրենց գործքերուն համար՝ որոնցմով
ամբարշտութիւն ըրին, և բոլոր խիստ
խօսքերուն համար՝ որ մեղաւորները ու
ամբարիշտները անոր համար խօսեցան :
16 Ասոնք տրտնջողներ ու բամբասողներ են՝
իրենց անձերուն ցանկութեանը պէս եր-
թալով. և իրենց բերանները ամբար-
տաւան խօսքեր կը զրուցեն, երեսպաշ-
17 տութիւն կ'ընեն շահի համար : Բայց
դուք սի՛րելիներ՝ մի՛տք բերէք այն առա-
ջուց զրուցուած խօսքերը մեր Տէր Յիսուս
18 Քրիստոսի առաքեալներէն. Որ ձեզի կը
զրուցէին թէ՝ Ետքի ատենները արհա-
մարհող մարդիկ պիտի ըլլան՝ իրենց ամ-
բարիշտ ցանկութիւններուն պէս երթա-
լով :

Digitized by Google

Ասոնք ինքզինքնին խայտառակող շըն- 19
չաւորներ են, որ Հոգին չունին։ Բայց 20
մենք, սիրելիներ՝ անձերնիս շինենք սուրբ
հաւատքի վրայ Հոգւով Սրբով. աղօթք
ընենք, Անձերնիս պահելով Աստուծոյ սի- 21
րովը, մեր Տէր Յիսուս Քրիստոսին ո-
ղորմութեանը սպասելով յաւիտենական
կենաց համար։ Եւ ոմանք որ դատա- 22
պարտուած են, յանդիմանեցէք. Եւ 23
ոմանք ալ ազատեցէք կրակէն դուրս քա-
շելով, և ոմանց վրայ գո՛ւթ ունեցէք
վախով դատելով, մարմինէն աղտոտուած
հանդերձն ալ ատելով։

Եւ անոր՝ որ կարող է ձեզ անարատ 24
ու անբիծ պահել, և իր փառքին առջևը
աներկբայ ցնծութիւնով հաստատել,
Մի միայն Աստուծոյ մեր Փրկչին՝ մեր Տէր 25
Յիսուս Քրիստոսին՝ փառք, մեծութիւն,
զօրութիւն ու իշխանութիւն բոլոր դարե-
րէն առաջ, և հիմա ու բոլոր դարերու
մէջ. ամէն։

Digitized by Google

# ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ԵՒ
## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՉԻՆ

### ԳԼՈՒԽ Ա

1 Յիսուս Քրիստոսին յայտնութիւնը,
որ Աստուած անոր ձեռքը տուաւ՝ իր ծա-
ռաներուն ցուցընելու ինչ որ շուտով պի-
տի ըլլայ. եւ իր հրեշտակին ձեռքովը
ղրկելով՝ իր Յովհաննէս ծառային իմաց-
ցուց, Որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը
2 ըրաւ, ու Յիսուս Քրիստոսի վկայու-
թիւնը, որ տեսաւ, եւ որ եղաւ, եւ որ
3 անկէ ետեւ պիտի ըլլար։ Երանի՝ անոր
որ կը կարդայ կամ կը լսէ աս մարգարէ-
ութեան խօսքերը, եւ կը պահէ ինչ որ ա-
նոր մէջը գրուած է. ինչու որ ժամանա-
կը մօտ է։
4 Յովհաննէսէն եօթը եկեղեցիներուն՝ որ
Ասիայի մէջն են, շնորհք եւ խաղաղութիւն
ձեր հետը Աստուծմէ՝ Էէն՝ եւ ան որ է,
եւ ան որ պիտի գայ. ու Հոգիին եօթը
զօրութիւններէն՝ որ իր աթոռին առջեւն
5 են. Եւ Յիսուս Քրիստոս հաւատարիմ

Digitized by Google

վկայէն , որ մեռելներուն մէջէն անդրանիկն
է , և երկրի թագաւորութիւններուն իշ-
խանը . որ մեզ սիրեց , ու մեր մեղքե-
րուն կապերը արձըկեց իր արիւնովը . Եւ 6
մեզ թագաւորներ ու քահանաներ ըրաւ
Աստուծոյ ու իր Հօրը , որուն փառք և
զօրութիւն հիմա ու միշտ , և յաւիտեանս
յաւիտենից . ամէն :
Ահա՛ ամպերով պիտի գայ . ու ամէն 7
աչք պիտի տեսնէ անիկայ , և անոնք որ
զանիկայ խոցեցին . և անոր վրայ պիտի
ողբան երկրի ամէն ազգերը . այո՛ , ամէն :
Ես եմ այբ , ու ես եմ քէ՛ կ'ըսէ Տէր 8
Աստուած , որ էր՛ ու որ է , և անոր որ պի-
տի գայ Ամենակալը :
Ես Յովհաննէս ձեր եղբայրը՛ և նե- 9
ղութեան , ու թագաւորութեան , և Քրիս-
տոս Յիսուսի համար համբերութեան հետ-
տեղիքը ըլլալով , Պատմոս ըսուած կղզին
էի , Աստուծոյ խօսքին համար՝ ու Յիսուս
Քրիստոսի վկայութեանը համար : Եւ 10
կիրակի օրը Հոգին իմ վրաս եկաւ , ու
ետևէս մեծ ձայն մը լսեցի փողի ձայնի
պէս , որ ինծի կ'ըսէր . Ես եմ այբն ու
քով , առաջինն և վերջինն . Ինչ որ կը 11
տեսնես գրքի մէջ գրէ՛ , ու ղրկէ՛ եօթը
եկեղեցիներուն , որ Եփեսոսի , Զմիւռ-
նիայի , Պերգամոնի ու Թիւատիրի , և
Սարդիկէի ու Փիլադելփիայի և Լաւ-
ոդիկեայի մէջն են : Եւ դարձայ ան 12
ձայնը տեսնելու՝ որ ինծի կը խօսէր . ու

Digitized by Google

Երբոր դարձայ՝ եօթը ոսկիէ աշտանակներ
13 տեսայ . Ու եօթը աշտանակներուն մէջ
մէկը՝ Որդւոյ մարդոյ նման , պճղնաւոր
պատմուճան մը հագած , ու կուրծքին
14 վրայէն ոսկի գօտի մը կապած . Ու իր
գլուխը ու մազերը՝ բուրդի պէս ճերմակ՝
ու ձիւնի պէս , ու իր աչքերը կրակի
15 բոցի պէս . Ու իր ոտքերը ազնիւ պղին-
ձի նման՝ որպէս թէ փուռին մէջը կրակ
դարձած , ու իր ձայնը շատ ջուրերու
16 ձայնի պէս . Ու իր աջ ձեռքին մէջ եօ-
թը աստղ ունէր ; ու իր բերնէն երկու-
բերնեայ սուր մը կ'ելլէր , և իր երեսը
17 արևի պէս ճառագայթած կ'երևնար : Ու
երբոր տեսայ զանիկայ՝ իր ոտքը ինկայ մե-
ռելի պէս . ու իր աջ ձեռքը իմ վրաս
դրաւ , ու ըսաւ ինծի . Մի՛ վախնար . ես
18 եմ առաջինը ու ես եմ ետքինը . Ու ես
եմ կեանք , ու ես ան եմ որ մեռայ . և
ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտե-
նից . և ես ունիմ մահուան ու դժոխքին
19 բանալիները : Գրէ՛ ինչ որ կը տեսնես՝
ան որ կայ , ու ան որ պատրաստ է ետքը
20 ըլլալու . Եօթը աստղերուն խորհուրդը՝ որ
իմ աջ ձեռքիս մէջը տեսար , և եօթը ոսկիէ
աշտանակները . ան եօթը աստղերը եօթը
եկեղեցիներուն հրեշտակներն են . և եօթը
աշտանակները եօթը եկեղեցիներն են :

Գլ. Բ.

1 Եփեսացւոց եկեղեցիին հրեշտակին գրէ .

Digitized by Google

Ասանկ կ'ըսէ ան, որ իր աջ ձեռքին մէ-
ջը եօթը աստղեր ունի, ու եօթը ոսկիէ
աշտանակներուն մէջը կը պտըտի. Գի- 2
տեմ քու գործքերդ, և քու աշխատու-
թիւններդ, ու քու համբերութիւնդ. և
որ չարերուն չես համբերեր, ու փորձեցիր
անոնք որ կ'ըսեն՝ Թէ իրենք առաքեալներ
են, ու չեն, և գտար թէ սուտ կը
զրուցեն. Ու համբերեցիր, և իմ անուա- 3
նիս համար նեղութիւն քաշեցիր, ու աշ-
խատեցար: Բայց քեզի կ'ըսեմ, որ քու 4
առջի սէրդ ձգեցիր: Մի՛տքդ բեր հիմա 5
ուսկից որ ինկար, ու ապաշխարէ՛, և
քու առջի գործքերդ ըրէ՛. եթէ ոչ՝ շու-
տով կու գամ, ու քու աշտանակդ իր
տեղէն պիտի շարժեմ՝ թէ որ չապաշխա-
րես: Աւստի ասիկայ ըրէ, որ Նիկողա- 6
յոսին գործքերը ատես, որ ես ալ կ'ա-
տեմ: Ան որ լսելու ականջ ունի՝ թո՛ղ 7
լսէ թէ Հոգին Սուրբ ի՛նչ կ'ըսէ եկեղե-
ցիներուն. Ան որ կը յաղթէ՝ կենաց ծա-
ռէն ուտել պիտի տամ անոր, որ Աս-
տուծոյ դրախտին մէջն է:

Ու Զմիւռնացւոց եկեղեցիին հրեշտա- 8
կին գրէ. Ասանկ կ'ըսէ Սկիզբը ու
Անվախճանը, որ մեռաւ՝ ու ողջցաւ.
Տեսայ քու գործքերդ ու նեղութիւնդ՝ և 9
աղքատութիւնդ. բայց քու աղքատու-
թիւնդ հարստութիւն պիտի ըլլայ. ու
գիտեմ անոնց հայհոյութիւնը՝ որ կ'ըսէին,
թէ իրենք Հրեայ են, ու չեն, հապա

Digitized by Google

10 Սատանային ժողովքն են։ Մի՛ վախնար ան
բաներէն, զորս որ պիտի չարչարուիս.
ահա՛ բանսարկուն ձեզմէ ոմանք բանտերը
ըսկսելու նետելու վրայ է, որ փորձուիք, և
տասն օր նեղութիւն պիտի ունենաք.
մինչև 'ի մահ հաւատարիմ եղիր, ու քե-
11 զի կենաց պսակը պիտի տամ։ Ան որ
լսելու ականջ ունի՛ թող լսէ թէ Հոգին
Սուրբ ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն. Ան որ
կը յաղթէ՛ երկրորդ մահուանէն վնաս չպի-
տի կրէ։
12 Եւ Պերգամոնի եկեղեցւոյն հրեշտակին
գրէ. Այսպէս կ'ըսէ ան որ երկբե-
13 րանի սրած սուրը ունի. և Գիտեմ գործերդ
ու բնակած տեղդ, և որ հոն Սատանային աթոռն է. ուր Սա-
տանային աթոռն է, և որ իմ անունս ամուր
կը բռնես, և իմ հաւատքս չուրացար, այն
օրը, Անթիպաս իմ վկաս հաւատարիմ
սպաննուեցաւ, ինչու որ Սատանային աթոռին
իմ հաւատարիմ վկաս եղաւ, որ ձեր մէջ
սպաննուեցաւ, ուր Սատանան կը բնակի։ Բայց
14 Սակայն կը յանդիմանեմ քանի մը բանի դէմ
քեզ. մի քանի անձ ունիս, որ Բաղա-
ղամին վարդապետութիւնը կայ, որ
Բաղակին սորվեցուց Իսրայէլի որդւոցը
առջևը գայթակղութիւն դնել, որ կռքե-
րուն զոհուածները զոհուած ուտեն, ու
15 պոռնկութիւն ընեն. Նոյնպէս ալ դուն
Նիկողայոսեաններուն վարդապետութիւնը
բռնողներ ունիս, որ ատելի են ինծի։
16 Ապաշխարէ, եթէ ոչ՝ շուտով

Digitized by Google

[illegible]
[illegible] Հետ : [illegible] որ [illegible] 17
[illegible] թող լսէ թէ [illegible]
կ'ըսէ [illegible] : [illegible] որ կը յաղթէ
[illegible]
[illegible] ու [illegible]
[illegible] , և [illegible] մէջ [illegible] մէջ
[illegible] ; որ [illegible] թէ
[illegible] կ'[illegible] :
—[illegible] 18
[illegible] . [illegible] կ'ըսէ [illegible] ; որ
[illegible] , ու իր [illegible]
[illegible] : [illegible] 19
[illegible] , [illegible] ու [illegible]
ու [illegible]
[illegible] որ [illegible]
[illegible] : [illegible] 20
[illegible] , որ [illegible]
[illegible] , որ [illegible] կ'ըսէր ,
ու [illegible] կը [illegible]
[illegible] , որ [illegible] եւ
[illegible] : Եւ [illegible] 21
[illegible]
[illegible] , ու [illegible]
[illegible] : [illegible] 22
[illegible] , ու իր [illegible]
[illegible] , մեծ մեծ [illegible]
[illegible] մէջ , թէ որ [illegible]
[illegible] : Եւ [illegible] 23
[illegible] , և [illegible]
[illegible] թէ [illegible]

որ երիկամունքներն ու սրտերը կը քննեմ․
և ձեզի ամէն մէկերնուդ իրենց գործքե-
24 րուն պէս կը հատուցանեմ ։ Բայց ձեզի
կ՚ըսեմ որ Թիւատիրիոյ մէջն էք, ու աս
վարդապետութիւնը չունիք․ որ չճանչ-
ցաք Սատանային խորունկ բաները՝ (որ
կ՚ըսեն․) ձեր վրայ ուրիշ ծանրութիւն
25 չեմ դներ․ Հապա ան որ ունիք՝ պահե-
26 ցէք մինչև որ ես գամ ։ Ու ան որ կը
յաղթէ՝ ու իմ գործքերս մինչև վերջը
կը պահէ, անոր իշխանութիւն պիտի տամ
27 ազգերուն վրայ․ Ու պիտի հովուէ ա-
նոնք երկաթէ գաւազանով, ու անոնք
28 պիտի փշրէ բրուտի ամաններ պէս, Ինչպէս
որ ես ալ իմ Հօրմէս առի․ ու անոր
29 պիտի տամ առաւօտեան աստղը ։ Ան որ
լսելու ականջ ունի՝ թող լսէ թէ Հոգին
ինչ կ՚ըսէ եկեղեցիներուն ։

ԳԼ. Գ.

1 Ու Սարդիկեցւոց եկեղեցիին հրեշտա-
կին գրէ․ Ասանկ կ՚ըսէ ան որ ունի Աս-
տուծոյ եօթը Հոգին ու եօթը աստղերը․
Քու գործքերդ գիտեմ՝ որ անուն կենդա-
2 նիի ունիս՝ ու մեռած ես ։ Արթուն
կեցիր՝ և հաստատէ՝ մնացածները՝ որ մեռ-
նելու վրայ են․ Ինչու որ քու գործքերդ
Աստուծոյ առջևը կատարեալ չգտայ ։
3 Հիմա միտքդ բեր թէ ինչպէս լսեցիր, ու
պահէ՝, և ապաշխարէ՝ ․ բայց թէ որ արթ-
թուն չըլլաս՝ գողի պէս կու գամ ,

Digitized by Google

ու մէկը չիմանար իմ քեզի գալս : Բա- 4
նի մը անձինք ունիս Սարդիսի մէջ,
որոնք իրենց հանդերձները չաղտոտեցին.
և ճերմակներով կը պտըտին, որովհետև ար-
ժանի են : Ան որ կը յաղթէ՝ ա- 5
սանկ ճերմակներ պիտի հագնի, ու ա-
նոր անունը կենաց գիրքէն պիտի չջն-
ջեմ. և անոր անունը պիտի խոստո-
վանիմ իմ Հօրս առջեւը ու հրեշտակ-
ներուն առջեւը : Ան որ լսելու ականջ 6
ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ ե-
կեղեցիներուն :

Ու Փիլադելփիացւոց եկեղեցիին հրեշ- 7
տակին գրէ. Ասանկ կ'ըսէ ան Սուրբը՝
ան Ճշմարիտը՝ որ Դաւիթի բանալիները
ունի. կը բանայ՝ ու մէկը չկայ որ գոցէ.
և կը գոցէ՝ ու մէկը չկայ որ բանայ. Քու 8
գործքերդ գիտեմ. ահա՛ քու դիմացդ
բացուած դուռ մը դրի, որ մէկը չկրնար
գոցել. քանզի որ պզտի քիչ մը կարողու-
թիւն ունիս, և իմ խօսքս պահեցիր, ու
իմ անունս չուրացար : Ահա՛ ես քեզի 9
կու տամ ան Սատանային ժողովքը՝ ո-
րոնք կ'ըսեն թէ իրենք Հրեայ են, ու
չեն, հապա սուտ կ'ըսեն. ահա՛ պիտի
ստիպեմ անոնք՝ որ գան ու երկրպագու-
թիւն ընեն քու ոտքիդ առջեւ, և ճանչ-
նան՝ որ ես քեզ սիրեցի : Քանզի որ իմ 10
համբերութեան խօսքս պահեցիր. ես ալ
քեզ պիտի պահեմ քու փորձութեանց
ատենը, որ պատրաստուած է գալու բոլոր

Digitized by Google

[illegible]
11 [illegible]
[illegible]
12 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
13 [illegible]
[illegible]
[illegible]
14 [illegible]
[illegible]
[illegible]
15 [illegible]
[illegible]
[illegible]
16 [illegible]
[illegible]
17 [illegible]
[illegible]
[illegible]
18 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
19 [illegible]

Digitized by Google

նեմ ու կը խրատեմ . ուստի նախանձաւոր եղիր ու
ապաշխարէ ։ Ահա ես դուռը կայներ եմ 20
ու կը զարնեմ . թէ որ մէկը իմ ձայնս
լսէ , ու դուռը բանայ , անոր քովը կը
մտնեմ , և անոր հետ ընթրիք կ'ընեմ ,
ան ալ իմ հետս ։ Ան որ կը յաղթէ՝ իմ 21
աթոռիս վրայ կու տամ անոր իմ հետս
նստիլ , ինչպէս որ ես ալ յաղթեցի՝ ու իմ Հօրս
աթոռը նստայ ։ Ան որ ականջ ունի՝ 22
թող մտիկ ընէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցի-
ներուն ։

## ԳԼ. Դ.

Իսկ ասոնցմէն ետքը տեսայ , և ահա՛ 1
երկինքին դռները բացուեր էին , ու առա-
ջի փողին ձայնը որ լսեցի՝ կը խօսէր ինծի
ու կ'ըսէր . Հո՛ս ելիր՝ և քեզի ցուցընեմ
ինչ որ ասկէ ետքը պիտի ըլլայ ։
Եւ Հոգիին մէջ էի հանկարծ . ու աթոռ մը 2
դրուած՝ որ երկինքը կեցեր էր ։ Եւ ան 3
աթոռին վրայ մէկը նստեր էր , յասպիս
ու սարդիոն քարերուն երևոյթին նման ։
Եւ ան աթոռին բոլորտիքը ծիածանները՝ 4
զմրուխտի երևոյթի նման . ու աթոռին
չորս կողմը քսանուչորս աթոռներ , և անի
աթոռներուն վրայ քսանուչորս երէցներ
նստեր էին՝ ճերմակ հանդերձներ հագած ,
ու իրենց գլուխը ոսկիէ թագեր ունէին ։
Եւ ան աթոռէն փայլակներ ու ձայներ 5
և որոտումներ կ'ելլէին , ու եօթը հատ
բորբոքած կրակի ճրագարաններ կային առ-

թոռին առջեւ, որ Աստուծոյ եօթը հոգի-
6 ներն են։ Եւ ան աթոռին առջեւը ապա-
կիէ ծով մը՝ սառին նմանութեամբը նը-
մանը ; ու աթոռին մէջը , ու աթոռին բո-
լորտիքը չորս կենդանիներ , որ աչքերով
7 լեցուն էին առջեւէն ու ետեւէն ։ Եւ առա-
ջի կենդանին նման էր առիւծի ; ու երկ-
րորդ կենդանին՝ զուարակի , եւ երրորդ
կենդանին՝ մարդու երես ունէր ; ու
չորրորդ կենդանին՝ թռչող արծիւի նման ։
8 Եւ չորս կենդանիներուն ամէն մէկը չորս-
ջանակի վեց թեւ ունէր . ու ասկէն
աչքերով լեցուն էին . ու չէին հանգ-
չեր՝ ոչ՝ ցորեկը՝ ոչ ալ՝ գիշերը՝ ըսե-
լով . Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ՝ Տէր Ա-
ստուած Ամենակալ , որ էր , եւ որ է ,
9 եւ որ պիտի գայ ։ Եւ երբոր այն կեն-
դանիները փառք ու պատիւ եւ գոհու-
թիւն կու տային աթոռին վրայ նստողին՝
որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից ,
10 Քսանըչորս երէցները անոր աթոռին վրայ
նստողին առջեւ կ'իյնային ու երկրպա-
գութիւն կ'ընէին յաւիտեանս յաւիտե-
նից կենդանիին , եւ իրենց թագերը ա-
11 թոռին առջեւը կը դնէին ըսելով . Ար-
ժանի ես դուն Տէր Աստուածը՝ փառք
ու պատիւ եւ զօրութիւն առնելու . Քանզի
դուն ամէն բան դուն ստեղծեցիր , ու քու
ուզելովդ ստեղծուեցան , եւ հաստատուած
եղեր են ։

Digitized by Google

## ԳԼ. Ե

Եւ աթոռին վրայ նստողին աջ ձեռքը 1
մէկ գիրք մը տեսայ՝ ներսէն ու դուրսէն
գրուած, և եօթը կնիքով կնքուած։ Եւ 2
մէկ զօրաւոր հրեշտակ մը տեսայ՝ որ մեծ
ձայնով կը կանչէր. Ո՞վ արժանի է այս
գիրքը բանալու, ու անոր կնիքը քակե-
լու։ Եւ մէկը չէր կրնար այն գիրքը 3
բանալ, ո՛չ երկինքը՝ ո՛չ երկրիս վրայ,
ու ո՛չ երկրիս տակը, ո՛չ ալ անոր նայե-
լու։ Ես ալ սաստիկ կու լայի՝ որ մէկը 4
կը արժանի չգտնուեցաւ այն գիրքը բա-
նալու, ու ո՛չ ալ անոր նայելու։ Եւ 5
երէցներէն մէկը ըսաւ ինծի. Մի՛ լար.
ահա՛ այն առիւծը որ Յուդայի ցեղէն՝
Դաւիթի արմատէն է, յաղթեց այն գիր-
քը բանալու՝ ու անոր եօթը կնիքները
քակելու։ Եւ տեսայ որ այն աթոռին 6
մէջտեղը՝ ու չորս կենդանիներուն, և այն
երէցներուն մէջը Գառնուկ մը կայ որ կեցեր
է մորթուած, որ եօթը եղջիւր ու եօ-
թը աչք ունէր, որոնք Աստուծոյ եօթը
հոգիներն են՝ որ բոլոր երկիրը խրկուած
են։ Եւ անիկայ եկաւ՝ աթոռին վրայ 7
նստողին աջ ձեռքէն գիրքը առաւ։ Եւ 8
երբոր գիրքը առաւ՝ չորս կենդանիները
ու քսանըչորս երէցները գառնուկին առջևը
ինկան, և ամէն մէկը քնար ունէին, ու
ոսկի բուրվառ խունկով լեցուն, որ սուր-
բերուն աղօթքն է։ Եւ նոր երգեր կ'եր- 9

գէին՝ ու կ'ըսէին. Արժանի ես դուն սա
գիրքը առնելու՝ ու անոր կնիքը բանա-
լու. ինչու որ մորթուեցար, ու մեզ
ծախու առիր Աստուծոյ քու արիւնովդ
բոլոր ազգերէն և լեզուներէն ու հեթա-
10 նոսներուն ժողովուրդներէն, Եւ ասոնք
մեր Աստուծոյ թագաւորները ու քահա-
նաները ըրիր՝ երկրի վրայ թագաւորու-
11 թիւն ընելու։ Ու նայեցայ՝ և շատ հրեշ-
տակներու ձայն լսեցի, որոնք այն աթո-
ռին՝ ու չորս կենդանիներուն և քահանա-
ներուն բոլորտիքը կեցեր էին. ու անոնց
թիւն էր բիւրք բիւրուց՝ և հազարք հա-
12 զարաց. Որոնք մեծ ձայնով մը կ'ըսէին.
Այն մորթուած Գառնուկը արժանի է մե-
ծութիւն առնելու՝ և իմաստութիւն՝ և
զօրութիւն՝ ու պատիւ և փառք ու օրհ-
13 նութիւն։ Եւ բոլոր արարածները՝ որ
երկինքը ու երկրիս վրայ են, և ծովու
մէջ, ու ինչ որ անոնց մէջը կայ՝ լսեցի
որ կ'ըսէին. Ան որ աթոռը նստած է՝
և այն Գառնուկը՝ օրհնեալ, բարձրացեալ
ու փառաւորեալ ըլլայ յաւիտեանս յա-
14 ւիտենից։ Եւ չորս կենդանիները կ'ը-
սէին՝ Ամէն. ու երէցները անոր առ-
ջևը կ'իյնային՝ և երկրպագութիւն կ'ը-
նէին.

## ԳԼ. Զ.

1 Եւ տեսայ որ Գառնուկը այն կնիքնե-
րուն մէկը բացաւ, ու չորս կենդանինե-

Digitized by Google

բանէն մէկէն որոտումի պէս ձայն մը լսեցի՝
որ կ'ըսէր Թէ գամ ։ Ու նայեցայ՝ և ահա 2
մէկ ճերմակ ձի մը տեսայ . և անոր վրայ
հեծնողը աղեղ մը ունէր ; ու Թագ մը
տրուեցաւ անոր . և ան յաղԹողը ելաւ
որ յաղԹէ ։

Եւ երբոր երկրորդ կնիքը բացաւ , երկ- 3
րորդ կենդանիէն լսեցի՝ որ կ'ըսէր Թէ՝
գամ ։ Եւ ուրիշ ձի մը ելաւ կարմիր , 4
ու անոր վրայ հեծնողին իշխանուԹիւն
տրուեցաւ որ երկրէս խաղաղուԹիւնը առ-
նէ , որ մէկզմէկ մորԹեն . ու անոր մէկ
մեծ սուր մը տրուեցաւ ։

Եւ երբոր երրորդ կնիքը բացաւ , երր- 5
րորդ կենդանիէն լսեցի՝ որ կ'ըսէր Թէ
գամ . ու տեսայ՝ և ահա մէկ սև ձի մը ,
և անոր վրայ հեծնողը իր ձեռքը կշիռ մը
ունէր ։ Ու ան չորս կենդանիներուն մէ- 6
ջէն ձայն մը լսեցի . Ցորենի մը քոռենը
մէկ դենարի ; ու երեք կապիճ գարին մէկ
դենարի . և ձէԹին ու գինիին վնաս չընես ։

Եւ երբոր չորրորդ կնիքը բացաւ , չոր- 7
րորդ կենդանիէն ձայն մը լսեցի՝ որ կ'ըսէր
Թէ գամ ։ Ու տեսայ՝ և ահա դեղին ձի 8
մը , ու անոր վրայ հեծնողը Մահ անուն
ունէր ; և Դժոխքը անոր ետևէն կ'երԹար .
ու անոր իշխանուԹիւն տրուեցաւ աշխար-
հի չորրորդ մասին վրայ , որ սուրով ու
սովով և մահով՝ ու երկրի գազաններով
սպաննեցընէ ։

Եւ երբոր հինգերորդ կնիքը բացաւ , 9

Digitized by Google

սեղանին տակը տեսայ ան ամէն մարդոց
հոգիները, որ զենուած էին Աստուծոյ
խօսքին համար, ու անոր վկայութեանը
10 համար՝ որ ունէին. Անոնք մեծ
ձայնով կ'ըսէին. Ո՛վ սուրբ ու ճշմարիտ
Տէր՝ մինչեւ ե՞րբ չես դատեր, ու մեր ա-
րիւնին վրէժը երկրի բնակիչներէն պա-
11 հանջեր։ Եւ ճերմակ հանդերձներ տրուե-
ցաւ անոնց, ու ըսուեցաւ անոնց՝ որ քիչ
մը ատեն հանգչին, մինչեւ անոնց ծառա-
յակիցները ու անոնց եղբայրները լմնա-
ըլլան, որոնք որ իրենց պէս կատարուե-
լու վրայ էին։
12 Եւ տեսայ որ երբ վեցերորդ կնիքը
բացաւ՝ մէկ մեծ շարժում մը եղաւ, ու
արեւը սեւցաւ՝ այծու մազէ կապերտի մը
պէս, ու լուսինը բոլորովին արիւնի պէս
13 եղաւ։ Եւ երկինքին աստղերը գետին
թափթփեցան թզենիի տերեւի պէս՝ որ հո-
14 վէն սաստիկ կը շարժուի։ Եւ երկինքը մա-
գաղաթէ գիրքի պէս կ'ոլորուէր. ու բոլոր
լեռները և կղզիները իրենց տեղէն շար-
15 ժեցան։ Եւ երկրի թագաւորները և
իշխանները՝ ու հազարապետները ու մե-
ծատունները և զօրաւորները՝ ու բոլոր ծա-
ռաները և բոլոր ազատները այրերուն ու
քարերուն խոռոչներուն մէջ պահուեցան։
16 Եւ լեռներուն կ'ըսէին թէ՝ Մեզի վրայ ին-
կէք, ու բլուրներուն թէ՝ Մեզ ծածկե-
17 ցէք։ Ինչու որ անոր բարկութեան մեծ
օրը եկաւ. ու ո՞վ կրնայ անոր առջեւը
կենալ։

Digitized by Google

## ԳԼ. Է.

Ասկէ ետքը տեսայ չորս հրեշտակներ՝ 1
որ երկրի չորս անկիւնը կեցեր էին, ու
երկրի չորս հովերը բռներ էին, որ երկրի
վրայ հով չփչէ, ու ոչ ծովուն վրայ, ու ոչ
ալ ծառերուն վրայ։ Ու ուրիշ 2
հրեշտակ մը տեսայ՝ որ արեւելքէն ելաւ,
ու կենդանի Աստուծոյն կնիքը ունէր. եւ
մեծ ձայնով մը աղաղակեց այն չորս հրեշտա-
կներուն, որոնց իշխանութիւն տր-
ուեր էր երկրին ու ծովուն ապականելու,
Ու կ՚ըսէր. Երկրին վնաս մի՛ ընէք, ո՛չ 3
ծովուն, ո՛չ ծառերուն, մինչեւ որ
մեր Աստուծոյն ծառաներուն ճակատները
կնքենք։ Եւ կնքուածներուն համարը լսե- 4
ցի՝ որ էր հարիւր քառասունչորս հազար
Իսրայէլի որդւոց ցեղէն կնքուած։ Յու- 5
դայի ցեղէն տասներկու հազար կնքուած,
Ռուբէնի ցեղէն տասներկու հազար կնք-
ուած, Գադի ցեղէն տասներկու հազ-
ար կնքուած, Ասերի ցեղէն տասներկու 6
հազար կնքուած, Նեփթաղիմի ցեղէն
տասներկու հազար կնքուած, Մանասէի
ցեղէն տասներկու հազար կնքուած,
Շմաւոնի ցեղէն տասներկու հազար կնք- 7
ուած, Ղեւիի ցեղէն տասներկու հազար
կնքուած, Իսաքարի ցեղէն տասներկու
հազար կնքուած, Զաբուղոնի ցեղէն տաս- 8
ներկու հազար կնքուած, Յովսէփի ցե-
ղէն տասներկու հազար կնքուած, Բենիա-
մինի ցեղէն տասներկու հազար կնքուած։

Digitized by Google

9 Ասոր տակէ ետքը տեսայ՝ և ահա՛ շատ ժո-
ղովուրդներ՝ որոնց համրանքը չկար, բո-
լոր հեթանոսներէն ու բոլոր ազգերէն և
բոլոր լեզուներէն ու բոլոր ժողովուրդնե-
րէն՝ որոնք աթոռին առջևը ու Գառնու-
կին առջևը կեցեր էին՝ վրանին ճերմակ
հանդերձներ հագած, և ձեռքերնին ար-
10 մաւենիներ. Ու մեծ ձայնով կ'աղաղակէին
ու կ'ըսէին. Փրկութիւնը մեր Աստուծոյ՝
որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնու-
11 կին։ Եւ բոլոր հրեշտակները աթոռին
ու երէցներուն և չորս կենդանիներուն
բոլորտիքը կեցեր էին, և երեսնուն վրայ
աթոռին առջևը կ'իյնային՝ ու Աստուծոյ
12 երկրպագութիւն կ'ընէին, ըսելով. Ա-
մէն. օրհնութիւն ու փառք և իմաստու-
թիւն ու գոհութիւն և պատիւ ու զօ-
րութիւն և շնորհակալութիւն մեր Տէր
Աստուծոյն՝ յաւիտեանս յաւիտենից. ա-
13 մէն։ Եւ ան երէցներէն մէկը ինծի ը-
սաւ. Ասոնք որ ճերմակ հանդերձներ հա-
գած են՝ ո՞վ են, կամ ուսկի՞ց կու գան։
14 Ես ալ ըսի անոր. Տէր՝ դուն գիտես.
ու ըսաւ ինծի. Ասոնք անոնք են՝ որ մեծ
նեղութիւններէն կու գան, որ իրենց հան-
դերձները լուացին՝ ու Գառնուկին արիւ-
15 նովը ճերմկցուցին. Անոր համար Աստու-
ծոյ աթոռին առջևն են, և իրեն կը ծա-
ռայեն ցորեկ ու գիշեր իր տաճարին մէ-
ջը. և աթոռին վրայ նստողը անոնց մէջը
16 կը բնակի։ Ա՛լ պիտի անօթենան ու

Digitized by Google

ո՛չ ալ ծարաւին, եւ վերը պիտի չզարնէ
անոնց ։ ո՛չ արեւը՝ ո՛չ տաքը ։ Զի՛ 17
Գառնուկը որ աթոռին մէջտեղն է պիտի հո-
վուէ անոնք, ու կենդանի ջուրերու կենաց
աղբիւրը պիտի առաջնորդէ անոնք. ո-
րովհետեւ Աստուած բոլոր արցունքները ա-
նոնց աչքերէն սրբեց։

## ԳԼ. Ը.

Ու երբոր եօթներորդ կնիքը բացաւ՝ 1
լռութիւն եղաւ երկինքը կէս ժամի չափ։
Ու եօթը հրեշտակ տեսայ, որ Աս- 2
տուծոյ առջեւը կեցեր էին. ու անոնց
եօթը փող տրուեցաւ։ Ուրիշ հրեշ- 3
տակ մը եկաւ, սեղանին առջեւը կայնեցաւ,
ու ոսկիէ խնկաման մը ունէր. եւ իրեն
շատ խունկ տրուեցաւ, որ բոլոր սրբոց
աղօթքը ոսկեղէն սեղանին վրայ մատու-
ցանէ՝ աթոռին առջեւը։ Ու խունկերուն 4
ծուխը՝ այսինքն սուրբերուն աղօթքը
հրեշտակներուն ձեռքէն Աստուծոյ առջեւը
ելաւ։ Ու հրեշտակը խնկամանը սեղանին 5
կրակէն լեցուց, եւ թափեց զանիկայ
երկրին վրայ, ու եղաւ որոտում եւ ձայ-
ներ ու փայլակներ եւ մեծ շարժում։ Ու 6
եօթը հրեշտակները որ եօթը փողերը ու-
նէին՝ պատրաստուեցան որ փչեն։
Ու առջի հրեշտակը փողը փչեց, ու 7
եղաւ կարկուտ ու կրակ արիւնով խառ-
նուած, ու երկրի վրայ թափաւ, ու երկ-
րի երրորդ մասը այրեց, եւ ծառերուն

Digitized by Google

երրորդ մասը այրեցաւ , ու բոլոր կանանչ
խոտերը այրեցաւ :
8 Ու երկրորդ հրեշտակը փողը փչեցուց ,
ու որպէս թէ մեծ լեռ մը կրակով
վառուած՝ ծովը ինկաւ , ու ծովին երրորդ
9 մասը արիւն եղաւ : Ու լողացող կենդա-
նիներուն երրորդ մասը սատկեցաւ : և
ան որ կենդանի շունչ ունէր , ապակա-
նեցաւ , ու նաւերուն երրորդ մասը ընկըղ-
մեցաւ :
10 Ու երրորդ հրեշտակը փողը փչեցուց ,
ու երկինքէն մեծ աստղ մը ինկաւ
ղամբարի պէս բորբոքած , և ինկաւ գե-
տերուն ու աղբիւրներուն երրորդ մասին
11 վրայ : Ու ան աստղին անունը Կսթընդու-
թիւն էր . ու ջուրերը մեծապէս լեղիացան
դառնութենէն :
12 Ու չորրորդ հրեշտակը փողը փչեցուց ,
ու արևին երրորդ մասը ու լուսինին եր-
րորդ մասը , և աստղերուն երրորդ մասը
զարնուեցաւ , ու անոնց երրորդ մասը
խաւարեցաւ , և օրուան երրորդ մասը չէր
լուսաւորեր , նմանապէս ալ գիշերուանը :
13 Ու նայեցայ՝ ու երկինքին մէջը թռչող
հրեշտակի մը ձայնը լսեցի , որ մեծ ձայնով
կ'ըսէր , Վա՜յ վա՜յ վա՜յ երկրի վրայ բնա-
կողներուն՝ երեք մէկալ հրեշտակաց փողերուն
ձայնը լսելով , որ հրեշտակները պիտի փչե-
ցունեն :

Digitized by Google

## Գլ. Թ.

Ու հինգերորդ հրեշտակը փողը հնչեցուց․ 1
ու տեսայ՝ որ երկինքէն աստղ մը ինկաւ,
և անդունդին գուբին բանալին անոր տր-
ուեցաւ․ Ու անդունդին գուբը բացաւ, 2
ու ան գուբէն ծուխ կ'ելլէր հնոցի մը ծու-
խի պէս․ ու խաւարեցաւ արեւը ու օդը ։
Ու ան գուբէն մարախ կ'ելլէր երկրին 3
վրայ․ ու անոնց զօրութիւն տրուեցաւ
կարիճի խայթոցին զօրութեանը պէս․ Ու 4
անոնց ըսուեցաւ՝ որ չվնասեն երկրի խո-
տին, ոչ ալ մէկ ծառի մը․ հապա միայն
երկրաւոր մարդոց, որ իրենց ճակատին
վրայ կնիք չունին ։ Ու հրաման տրուե- 5
ցաւ անոնց, որ չսպաննեն զանոնք, հա-
պա չարչարեն զանոնք հինգ ամիս․ ու ա-
նոնց չարչարանքը կարիճի խայթոցներուն
պէս էր՝ որ մարդը կը զարնէ ։ Ու այն օ- 6
րերը մարդիկները մահը պիտի փնտռեն,
ու պիտի չգտնեն․ և պիտի ուզեն մեռ-
նիլ, ու մահը անոնցմէ պիտի փախչի ։
Ու այն մարախին նմանութիւնը՝ պատե- 7
րազմի պատրաստուած ձիին նմանութեանը
պէս, ու անոնց գլուխներուն վրայ թագի
պէս ոսկիի նման, և անոնց երեսները
մարդու երեսի պէս, Ու անոնց մազերը 8
կնկան մազերու պէս, ու անոնց ակռանե-
րը առիւծի ակռաներու պէս ։ Ու զրահ- 9
ներ ունէին՝ երկաթէ զրահներու պէս․ ու
անոնց թեւերուն ձայնը կառք քաշող շատ

Digitized by Google

ձիերու ձայնին պէս, որ պատերազմի կը
10 վազեն ։ Եւ կարիճներու նման պոչեր
ունէին, ու պոչերնուն վրայ խայթոց .
և իշխանութիւն ունէին մարդիկները չար-
11 չարելու հինգ ամիս ։ Եւ իրենց վրայ
թագաւոր ունէին դժոխքին հրեշտակը .
ու անոր անունը Եբրայեցերէն Աբադդոն,
12 որ Հայ լեզուով կ'ըսուի Կորուստ ։ Մէ-
հատ մէկ վայը անցաւ . ու երկու վայեր
ալ պիտի գան ։
13 Եւ վեցերորդ հրեշտակը փողը հնչեցուց .
ու ձայն մը լսեցի չորս կենդանիներէն՝ որ
14 Աստուծոյ սեղանին առջևն էին, Որ կ'ը-
սէր վեցերորդ հրեշտակին որ փող ունէր .
Արձկէ՛ ան Եփրատ մեծ գետին վրայ կա-
15 պուած չորս հրեշտակները ։ Եւ ան չորս
հրեշտակները քակուեցան, որ պատրաս-
տուած էին ժամի՝ ու օրուան՝ և ամիսի՝
ու տարիի, որ մարդոց երրորդ մասը
16 մեռցընեն ։ Եւ անոնց ձիաւոր զօրքե-
րուն համրանքը բիւրք բիւրուց ու հա-
զարք հազարաց էր, ու լսեցի անոնց
17 համրանքը ։ Եւ ան տեսիլքին մէջ ձիեր
տեսայ, ու անոնց վրայ հեծնողներ . որ
ունէին հրեղէն, ու յակինթի նման զրահ-
ներ ծծումբով վառուած . և ան ձիերուն
գլուխները առիւծներու գլուխներու պէս .
ու անոնց բերնէն կրակ կ'ելլէր, ու ծուխ
18 և ծծումբ ։ Եւ աս հարուածներէն մար-
դոց երրորդ մասը մեռաւ, ան կրակէն
ու ծուխէն ու ծծումբէն՝ որ անոնց բերնէն


Digitized by Google

կ'ելլէր։ Վասն զի իրենց զօրութիւնը բե- 19
րաններնուն մէջն է, ու՝ իրենց պոչերուն
վրայ. և անոնց պոչերը օձի նման էին,
ու գլուխներ ունէին որով անիրաւութերը
կը վնասէին։ Իսկ ուրիշ մարդիկնե- 20
րը, որ այս հարուածներէն չմեռան, չա-
պաշխարեցին՝ ու իրենց ձեռքի գործքերէն
ետ չկեցան, այսինքն՝ դեւերուն ու ոսկիէ
և արծաթէ ու պղինձէ և քարէ ու փայտէ
շինուած կուռքերուն երկրպագութիւն ը-
նելէն, որ ո՛չ կրնան տեսնել՝ ո՛չ ալ
լսել, ու ո՛չ քալել։ Իսկ չապաշխարե- 21
ցին իրենց ըրած մարդասպանութիւններէն ու
կախարդական դեղեր տալէն, և պոռնկու-
թիւնէն, ու գողութիւնէն։

## ԳԼ. Ժ.

Եւ տեսայ ուրիշ զօրաւոր հրեշտակ մը՝ 1
որ երկինքէն կ'իջնէր, ու ամպ հագած էր,
և իր գլուխը ծիածան ունէր. ու իր ե-
րեսը արեւի պէս, և իր ոտքերը կրակի
սիւնի պէս. Իր ձեռքը մէկ պզտիկ 2
գիրք մը ունէր բացուած. ու իր աջ ոտ-
քը ծովին վրայ դրաւ, և ձախը՝ երկրի
վրայ. Եւ մեծ ձայնով աղաղակեց, ա- 3
ռիւծի մը պէս պոռաց. ու երբոր աղա-
ղակեց՝ եօթը որոտմունքներն ալ իրենց ձայ-
նովը խօսեցան։ Եւ երբոր եօթը որոտ- 4
մունքները խօսեցան՝ կ'ուզէի գրել. ու
երկինքէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր. Կնքէ
ան բաները որ եօթը որոտմունքը խօսե-

Digitized by Google

5 ցան , ու մի՛ գրեր ։ Յետոյ ան Հրեշտակը
որ տեսայ՝ որ իր մէկ ոտքը ծովին վրայ
դրած , ու միւսը ցամաքին վրայ , իր
6 աջ ձեռքը երկինքը վերցուց , Ու երդում
ըրաւ Յաւիտենական Կենդանութեան վրայ ,
որ ստեղծեց երկինքը ու անոր մէջինները ,
ու երկիրը և անոր մէջինները , թէ ալ
7 ուրիշ ժամանակ չկայ ․ Հապա եօթնե-
րորդ հրեշտակին ձայնին օրերը՝ երբոր
փողը հնչեցնէ , Աստուծոյ խորհուրդը պի-
տի կատարուի , որ իր մարգարէ ծառա-
ներուն քարոզուեցաւ ։
8 Յետոյ ան ձայնը որ երկինքէն լսեցի , նո-
րէն խօսեցաւ ինծի՝ ու ըսաւ ․ Գնա՛ առ
այն պզտիկ բաց գիրքը՝ որ հրեշտակը իր
ձեռքը ունի , և կեցեր է ծովին ու ցամա-
9 քին վրայ ։ Ես ալ հրեշտակին գացի ․
ուզեցի անկից ․ ու ըսաւ ինծի ․ Ա՛ռ զա-
նիկայ ու կեր ․ և քու փորիդ մէջ դառ-
նութեան պիտի փոխուի , բայց բերնիդ
10 մէջ մեղրի պէս անոյշ պիտի ըլլայ ։ Ես
ալ պզտիկ բաց գիրքը հրեշտակէն առի՝ ու
կլլեցի անիկայ , և իմ բերնիս մէջը մեղ-
րի պէս էր ․ և երբոր կերայ՝ փորիս մէջը
11 դառնութիւն եղաւ ․ Ու ըսաւ ինծի ․ Պէտք է
որ դուն նորէն մարգարէութիւն ընես ժո-
ղովուրդներուն և հեթանոսներուն ու լե-
զուներուն և երկրի թագաւորներուն ։

Digitized by Google

## ԳԼ. ԺԱ

Եւ ինծի մէկ եղէգ մը տրուեցաւ գա- 1
ւազանի պէս, և հրեշտակը կեցեր էր՝ ու
կ'ըսէր ինծի. Ելի՛ր ու չափէ Աստուծոյ
տաճարը ու սեղանը՝ ու անոր մէջը՝ երկրպ-
ագութիւն ընողները։ Ու գաւիթը՝ որ 2
տաճարին դուրսն է, անիկայ ձգէ և մի՛
չափեր. ինչու որ անիկայ հեթանոսներուն
տրուած է. ու սուրբ քաղաքը պիտի
կոխկռտեն քառասունուերկու ամիս։ Եւ 3
իմ երկու վկաներուս զօրութիւն պիտի
տամ, և հազար երկու հարիւր ու վաթ-
սուն օր մարգարէութիւն պիտի ընեն՝
քուրձ հագած։ Ասոնք են երկու ձի- 4
թենիները ու երկու ճրագները են, որ
երկրի տիրոջ Աստուծոյ առջեւը կը կենան։
Եւ ո՛վ որ ուզէ անոնց վնաս ընել, ա- 5
նոնց բերաններէն կրակ պիտի ելլէ, ու
անոնց թշնամիները պիտի ուտէ. և ո՛վ
որ ուզէ անոնց դէշութիւն մը ընել, ա-
նանկ պիտի սատկի։ Ասոնք իշխանու- 6
թիւն ունին երկինքը գոցելու՝ որ իրենց
մարգարէութեան օրերը անձրեւ չգայ, ու
ջուրերուն վրայ իշխանութիւն ունին՝ ա-
նոնք արիւն դարձնելու, և ամէն կերպ
պատուհասներով երկիրը զարնելու՝ քանի
անգամ որ ուզեն։ Եւ երբոր իրենց 7
վկայութեան բոլոր օրերը կատարեն՝ ան
ատենը ան գազանը՝ որ անդունդէն կ'ել-
լէ, անոնց հետ պատերազմ պիտի ընէ,

Digitized by Google

և անոնց պիտի յաղթէ , ու պիտի սպան-
8 նէ անոնք ։ Եւ անոնց դիերը ինկած
պիտի կենան իրենց մեծ քաղաքին փո-
ղոցներուն մէջը , որ հոգևորապէս կ'ը-
սուի՝ Սոդոմ ու Եգիպտոս , ուր որ իրենց
9 Տէրն ալ խաչուեցաւ ։ Ու պիտի տեսնեն
զանոնք բոլոր ցեղերը ու ժողովուրդները՝
և բոլոր լեզուները ու հեթանոսները ,
մինչև որ անոնց դիերը երեք օր ու կէս
ինկած պիտի կենան , ու թող պիտի չը-
տան անոնց մարմինները գերեզմաններու
10 մէջ թաղելու ։ Եւ անոնք որ երկրի
վրայ կը բնակին , ուրախ պիտի ըլլան ու
ինդան անոնց վրայ , մինչև անգամ մէկ-
զմէկու ընծաներ ու պատարագներ պիտի
ղրկեն , ինչու որ այս երկու մարգարէ-
ները երկրի բնակիչները պիտի չարչարեն ։
11 Եւ երեք ու կէս օրէն ետև՝ Աստուծմէ
կենդանի հոգի պիտի մտնէ անոնց մէջ .
ու պիտի ելլեն կայնին իրենց ոտքին վը-
րայ . և մեծ ահ ու վախ ինկաւ ան տես-
12 նուն վրայ՝ որ զանոնք տեսան ։ Եւ մեծ
ձայն մը լսեցի , որ կ'ըսէր անոնց . Վե՛ր
ելէք՝ հո՛ս եկէք . ու վերցան ամպերով
երկինքը ելան . և անոնց թշնամիները զա-
13 նոնք տեսան ։ Եւ այն ժամանակը մեծ
շարժում մը եղաւ , ու քաղաքին տաս-
ներորդ մասը ընկղմեցաւ . և այն շարժու-
մէն եօթը հազար մարդիկ մեռան . ու
անկէց ետքը ամենուն վրայ մեծ վախ ին-
կաւ , ու փառք կու տային երկնաւորին Աստ-

Digitized by Google

Աստուծոյն։ Ահա երկրորդ վայը անցաւ, 14
ու երրորդ վայը շուտով պիտի գայ։
Ու եօթներորդ հրեշտակը իր փողը հնչե- 15
ցուց, երկինքէն ձայն մը եղաւ որ կ'ը-
սէր. Աշխարհիս թագաւորութիւնը
մեր Տէրոջը ու իր Յիսուս Քրիստոսինը եղ-
աւ։ Ու ինքը պիտի թագաւորէ յաւիտեանս յա-
ւիտենից։ Ու այն քսան- 16
նըչորս երէցները որ իրենց աթոռներուն
վրայ կը նստէին Աստուծոյ առջեւ, իրենց
երեսին վրայ ինկան, ու Տէր Աստուծոյ
երկրպագութիւն կ'ընէին ու կ'ըսէին։
Մենք գոհանանք քեզի Ամենակալ Տէր Աս- 17
տուած՝ որ էր, ու ես, և քու մեծ զօ-
րութիւնդ առիր, ու թագաւորեցիր։ Ու 18
հեթանոսները բարկացան. ու քու բարկու-
թիւնդ եկաւ, ու մեռելներուն ժամա-
նակը որ դատուին, ու վարձք տաս քու
ծառաներուն մարգարէներուն ու քու ա-
նունէդ վախցողներուն պզտիկներուն ու մեծե-
րուն, և երկիրը ապականողնե-
րը ապականես։
Ու երկինքին մէջ Աստուծոյ տաճարը 19
բացուեցաւ, ու Աստուծոյ տապանակը
իր տաճարին մէջ երեւցաւ. և եղան
փայլակներ ու ձայներ, և որոտումներ,
ու շարժում, և խոշոր կարկուտ։

ԳԼ. ԺԲ.

Ու երկինքը մեծ նշան մը երեւցաւ. կին 1
մը որ արեւը իր վրան զգեցած էր, ու ...

Digitized by Google

լուսինը իր ոտքերուն տակը , և իր գլխուն
2 վրայ տասներկու աստղէ պսակ մը . Ու
յղի էր , ու ցաւ քաշելով աղաղակ կը պո-
ռար , և չափ նեղութիւններով ծնանելու
մօտ էր :
3 Ու երկինքը ուրիշ նշան մը երևցաւ .
և ահա մեծ կրակէն վիշապ մը , որ
եօթը գլուխ ու տասը եղջիւր ունէր , և
4 անոնց գլուխներուն վրայ եօթը թագ : Ու
անոր պոչը երկնքին աստղերուն երրորդ
մասը կը քաշէր , ու անոնք երկրի վրայ
ձգեց : Եւ վիշապը կեցեր էր այն կնկանը
առջևը որ ծնանելու վրայ էր . որ երբ
ան կնիկը իր որդին ծնանի , վիշապը կլլե
5 զանիկայ : Ու կնիկը արու զաւակ մը
ծնաւ , որ երկաթէ գաւազանով պիտի
հովուէր բոլոր ազգերը . և անոր զաւակը
յափշտակուեցաւ Աստուծոյ քովը , ու ա-
6 նոր աթոռին քովը : Ու կնիկը անապա-
տը փախաւ , ուր որ անոր տեղ պատրաս-
տուած էր Աստուծմէ , որ հոն անոր կե-
րակրեն հազար երկու հարիւր ու վաթ-
սուն օր :
7 Ու երկինքը պատերազմ մը եղաւ .
Միքայէլը ու իր հրեշտակները անոր վիշա-
պին հետ կը պատերազմէին . վիշապն ալ իր
8 զօրքերովը կը պատերազմէր . Ու չկրցան
դէմ կենալ : և երկինքը տեղ չգտնուե-
9 ցաւ անոնց : Ու ինկաւ մեծ վիշապը՝ ան
առջի օձը որ Բանսարկու ու Սատանայ
կ'ըսուի , որ բոլոր աշխարհս մոլորեցնէ . ...

իր հրեշտակները իրեն հետ վար ինկան ։
Եւ մեծ ձայն մը լսեցի երկինքէն՝ որ կ՚ը- 10
սէր . Հիմա եղաւ մեր Աստուծոյ զօրու-
թիւնը ու փրկութիւնը և թագաւորու-
թիւնը , ու անոր Օծեալին իշխանութիւ-
նը . ինչու որ մեր եղբայրներուն դէմ
չար խօսողը ինկաւ , որ անոնց վրայ չա-
րախօսութիւն կ՚ընէր Աստուծոյ առջևը
ցորեկ ու գիշեր ։ Եւ անոնք անոր յաղ- 11
թեցին Գառնուկին արիւնովը , ու անոր
վկայութեանը խօսքովը . և ան կեանքնին
չհաճեցան մինչև 'ի մահ ։ Ասոր համար 12
թո՛ղ ուրախ ըլլայ երկինքը՝ ու անոր մէ-
ջը բնակողները . վա՜յ երկրին ու ծովուն՝
որ Բանսարկուն ձեզի ինկաւ , որ շատ
բարկութիւն ունի , և քիչ ժամանակ ալ-
ալի կենայ ։

Եւ երբոր վիշապը տեսաւ որ երկրի 13
վրայ ինկաւ , ան որու զաւակ ծնանող
կնկանը ետևէն ինկաւ ։ Եւ ան կնկանը 14
մեծ արծիւի երկու թևեր տրուեցաւ , որ
անապատ իր տեղը թռչի , ուր որ կը կե-
րակրուէր ժամանակ ու ժամանակներ ու
կէս ժամանակ՝ օձին երեսէն ։ Եւ օձը իր 15
բերնէն ջուր վազցուց կնկանը ետևէն , որ
անիկայ ընկղմէ ։ Եւ երկիրը ան կնկա- 16
նը օգնեց , ու երկիրը իր բերանը բացաւ՝
և կլլեց ան ջուրը , որ վիշապը իր բերնէն
վազցուց ։ Ու վիշապը խիստ բարկացաւ 17
կնկանը վրայ , և գնաց պատերազմելու
անոր ուրիշ զաւակներուն հետ , որոնք որ

Digitized by Google

Աստուծոյ պատուիրանքները կը պահեն,
ու Յիսուսի վկայութիւնը ունին ։
Եւ կայնեցայ ծովին աւազին վրայ ։

## ԳԼ. ԺԳ.

1 Ու տեսայ որ ծովէն գազան մը կ'ելլէր,
և ունէր եօթը գլուխ ու տասը եղջիւր ։
և անոր եղջիւրներուն վրայ տասը թագ,
ու անոր գլխուն վրայ հայհոյութեան ա-
2 նուն ։ Եւ այն գազանը որ տեսայ՝ ընձա-
ռիւծի նման էր, ու իր ոտքերը արջու պէս, և
իր բերանը առիւծի պէս ։ ու վիշապը իր
զօրութիւնը և իր աթոռը ու մեծ իշխա-
3 նութիւնը անոր տուաւ ։ Եւ անոր գլու-
խներուն մէկը մահու չափ վիրաւորուած
էր ։ ու անոր մահուան վէրքը առողջա-
ցաւ ։ և բոլոր երկիրը այն գազանին վրայ
զարմանալով, որ վիշապը իր թագաւորու-
4 թիւնը անոր տուաւ ։ Եւ երկրպագու-
թիւն ըրին վիշապին՝ որ գազանին իշխա-
նութիւն տուաւ, ու կ'ըսէին ։ Ո՞վ է այս
գազանին նման ։ կամ ո՞վ կրնայ անոր
5 հետը պատերազմ ընել ։ Եւ անոր բե-
րան տրուեցաւ մեծ բաներ ու հայհոյու-
թիւն խօսելու ։ և քառասուներկու ամիս
6 իշխանութիւն տրուեցաւ անոր ։ Ու իր
բերանը հայհոյութեամբ Աստուծոյ դէմ
բացաւ, և հայհոյեց անոր անունը ու ա-
նոր խորանը, և երկինքը բնակողները ։
7 Եւ իշխանութիւն տրուեցաւ անոր՝ սուր-
բերուն հետ պատերազմ ընելու, ու ա-

Digitized by Google

[illegible]
[illegible]
[illegible] 8
երկրպագութիւն, ընեն երկրի երեսը բոլոր
բնակողները. որոնց անունները աշխար-
[illegible]
[illegible] 9
[illegible]
[illegible] 10
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 11
[illegible]
[illegible]
[illegible] 12
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 13
[illegible]
[illegible] 14
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 15
[illegible]

Digitized by Google

գազանին պատկերին հոգի տայ, որ խօսի
պատկերը, ու երկրի բոլոր բնակիչները
անոր երկրպագութիւն ընեն. և ո՛վ որ
ան գազանին պատկերին երկրպագութիւն
16 չընէ՝ զանիկայ մեռցընէ: Եւ պիտի առի-
պէ ամէնը՝ այսինքն պզտիկները ու մեծերը
և հարուստները ու աղքատները և ազատ-
ները ու ծառաները, որ իրենց աջ ձեռքին
մէջ, ու իրենց ճակատին վրայ դրոշմ ըն-
17 դունին. Եւ որ մէկը չկրնայ գնել ու
ծախել՝ թէ որ չունենայ դիրին դրոշմը
ու գազանին անունը, և անոր անունին
18 թիւը: Աս տեղն է իմաստութիւնը. ո՛վ
որ միտք ունի՝ թո՛ղ համրէ ան գազանին
թիւը. մարդու մը թիւ է, ու անոր ա-
նունին թիւը ասիկայ է. Վեց հարիւր
վաթսուն ու վեց:

## ԳԼ. ԺԴ.

1 Եւ տեսայ՝ և ահա Գառնուկը կեցեր էր
Սիօն լեռանը վրայ. ու անոր հետը հա-
րիւր քառասուն ու չորս հազարը, որոնք
ունէին անոր անունը ու անոր Հօրը ա-
նունը իրենց ճակատներուն վրայ գրուած:
2 Եւ երկինքէն ձայն մը լսեցի՝ շատ ջուրե-
րու ձայնի պէս, ու մեծ որոտումի ձայնի
մը պէս. ու լսեցի քնարահարներու ձայնի
պէս՝ որ կը զարնէին իրենց քնարները.
3 Եւ նոր երգեր կ'երգէին աթոռին առջեւ՝
ու չորս կենդանիներուն առջեւ, և երէց-
ներուն առջեւ. ու մէկը չէր կրնար

Digitized by Google

անոնց երգերը գիտնալ, միայն թէ այն
հարիւր քառասունըչորս հազարը, որոնք
որ երկրէն գնուած են: Ասոնք ա- 4
նոնք են որ կիներու հետ չխառնակե-
ցան, ու կոյս են. ասոնք Գառնուկին
ետեւէն կ'երթան ուր որ ան երթայ. ա-
սոնք մարդոց մէջէն ընտրուեցան Աստու-
ծոյ ու Գառնուկին անդրանիկ ըլլալու. Ու ա- 5
նոնց բերանը սուտ չգտնուեցաւ, ինչու որ
անբիծ են:

Ու ուրիշ հրեշտակ մը տեսայ որ կը 6
թռչէր երկինքին մէջ, և ունէր յաւիտե-
նական աւետիսը՝ քարոզելու բոլոր ազգե-
րուն ու լեզուներուն՝ որ երկրի վրայ կը
բնակին. Ու մեծ ձայնով կ'ըսէր. Աս- 7
տուծմէ վախցէք՝ ու փառք տուէք անոր.
ինչու որ անոր դատաստանին ժամը ե-
կաւ. և երկրպագութիւն ըրէք անոր՝ որ
ստեղծեց երկինքը՝ ու երկիրը՝ և ծովը ու
ջուրերուն աղբիւրները:

Ու ուրիշ երկրորդ հրեշտակ մը կու գար 8
անոր ետեւէն՝ ու կ'ըսէր. Ինկաւ՝ ինկաւ
ան մեծ Բաբիլոնը՝ որ բոլոր հեթանոսնե-
րը արբեցուց իր կատաղի պոռնկութեա-
նը արբեցընող գինիէն: Ու ուրիշ եր- 9
րորդ հրեշտակ մը անոնց ետեւէն կու գար՝
ու մեծ ձայնով կ'ըսէր. Ով որ գազանին
ու անոր պատկերին երկրպագութիւն ը-
րաւ, կամ թէ անոր նշանին դրոշմը իր
ճակատին վրայ՝ կամ իր աջ ձեռքին վրայ
առաւ. Անիկայ Աստուծոյ բարկութեանը 10

Digitized by Google

գաւաթէն պիտի խմէ՝ որ անխառն լե-
ցուած է բարկութեան գաւաթին մէջը.
և կրակով ու ծծումբով պիտի տանջուի
11 Աստուծոյ ու Գառնուկին առջևը ։ Ու անոնց
ծուխը պիտի ելլէ յաւիտեանս յաւիտե-
նից. և ցորեկ ու գիշեր հանգստու-
թիւն չունին անոնք՝ որ գազանին երկրպա-
գութիւն ըրին, ու անոնք որ պատկերին
երկրպագութիւն ըրին, և անոր դրոշմը
12 ու անունը առին ։ Ու սուրբերուն համ-
բերութիւնը հոս է. աս անոնք են որ
Աստուծոյ պատուիրանքները ու Յիսուսի
13 հաւատքը կը պահեն ։ Ու երկինքէն ձայն
մը լսեցի՝ որ կ'ըսէր ինծի. Գրէ, Երանելի
են ան մեռելները՝ որոնք 'ի Տէր ննջեցին
հիմա շուտով, այո՛ կ'ըսէ Հոգին, ին-
չու որ իրենց աշխատութիւնէն հանգչե-
լան. բայց իրենց գործքերը իրենց ետևէն
գացին ։
14 Ու տեսայ՝ և ահա ճերմակ ամպ մը, ու
ան ամպին վրայ մէկը նստեր էր Որդւոյ
մարդոյ նման. և իր գլուխը ոսկիէ թագ
մը՝ ու իր ձեռքը մէկ սուր մանգաղ մը
ունէր ։
15 Ու ուրիշ հրեշտակ մը կ'ելլէր երկինքէն.
մեծ ձայնով կ'աղաղակէր ու կ'ըսէր. Դուն
որ աս ամպին վրայ կը նստիս՝ երկընցուր
քու մանգաղդ ու հնձէ. ինչու որ հունձ-
քերուն ժամանակը եկաւ, ու երկրի
16 հունձքերը հասած են ։ Ու ան որ ամպին
վրայ կը նստէր՝ իր մանգաղը գետինը եր-
կընցուց, ու երկիրը հնձուեցաւ ։

Ու երկինքին մէջի տաճարէն ուրիշ 17
հրեշտակ մը կ'ելլէր · ու անիկայ ալ սուր
մանգաղ մը ունէր ։ Ու ուրիշ հրեշտակ 18
մը կ'ելլէր սեղանէն որ կրակի վրայ իշ–
խանութիւն ունէր , ու մեծ ձայնով կանչ–
չեց անհ հրեշտակին' որ սուր մանգաղը ու–
նէր , ու ըսաւ · Երկրի այգիէն ողկոյզնե–
րը կթէ · ինչու որ անոր մէջի խաղողը
հասած է ։ Ու ան հրեշտակը իր ման– 19
գաղը գետինը երկընցուց , ու անոր խա–
ղողը կը կթէր , ու Աստուծոյ մեծ հնձանին
մէջ կը ձգէր ։ Ու ան հնձանը քաղաքին 20
դուրսը կոխուեցաւ · ու ան հնձանէն ա–
րիւն կ'ելլէր մինչև ձիերուն սանձերը · և
անոր երկայնութիւնը հազար վեց հարիւր
ասպարէզ էր ։

## Գլուխ ԺԵ

Ու ուրիշ մեծ ու զարմանալի նշան մը 1
տեսայ երկինքը · եօթը հրեշտակներ' ո–
րոնք եօթը վերջին պատուհասները ու–
նէին · որովհետև անոնցմով կը կատա–
րուէր Աստուծոյ բարկութիւնը ։ Ու տե– 2
սայ ապակեղէն ծովի պէս բան մը կրակով
խառնած · և անոնք որ յաղթեցին գա–
զանին' ու անոր անունին թիւին և անոր
պատկերին' ու անոր դրոշմին , ան ապա–
կեղէն ծովին վրայ կեցեր էին , ու Աս–
տուծոյ քնարները ունէին · Ու Մովսէսին' 3
Աստուծոյ ծառային երգը կ'երգէին , ու
ան Գառնուկին երգը' ըսելով · Տէր Աս–

Digitized by Google

տուած Ամենակալ՝ քու գործերդ շատ մեծ ու զարմանալի են, քու ճանապարհներդ արդար ու ճշմարիտ են, ո՛վ Թագա-
4 ւորը ազգերուն. Եւ ո՞վ չվախնար, ու քու անունը [illegible] չփառաւորեր. քանզի որ դուն միայն սուրբ ես, ու երկրպագութիւն ընդունելու արժանի. որ բոլոր ազգերը պիտի գան ու քու առջևդ երկրպագութիւն պիտի ընեն, ո՛վ Տէր, [illegible] քու արդարութիւնդ յայտնուեցաւ:
5 Եւ ասկէ ետքը տեսայ ու բացուեցաւ վկայութեան խորանին տաճարը, որ եր-
6 կինքն էր. Եւ ելան անկէ եօթը հրեշտակները, որ եօթը հարուածները ունէին, զգեստաւորուած մաքուր ու պայծառ կտաւներ հագեր էին, և իրենց կուրծքերնուն վրա-
7 յովը ոսկեղէն գօտի կապած էին: Եւ ան չորս կենդանիներէն եօթը հրեշտակներուն եօթը սկաւառակ տուաւ Աստուծոյ բարկութիւնովը լեցուն, որ կենդանի է
8 յաւիտեանս յաւիտենից: Եւ տաճարը Աստուծոյ փառքին ու անոր զօրութեանը ծուխովը լեցուեցաւ. ու մէկը չէր կրնար ան տաճարը մտնել՝ մինչև որ կատարուին ան եօթը հրեշտակներուն եօթը հարուածները:

## ԳԼ. ԺԶ.

1 Եւ տաճարէն մեծ ձայն մը լսեցի՝ որ ան եօթը հրեշտակներուն կ'ըսէր. Գացէք Աստուծոյ բարկութեանը եօթը սկաւառակները երկրի վրայ թափեցէք:

Ու առջի հրեշտակը գնաց, ու իր սկա- 2
ւառակը երկրին վրայ թափեց. ու մէ չա-
րաչար հարուածներ եղաւ այն մարդոցը
վրայ, որոնք գազանին դրոշմը ունէին
ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ը-
նէին :

Ու երկրորդ հրեշտակը իր սկաւառակը 3
ծովին վրայ թափեց, ու ջուրերը մեռած
մարդուն արիւն դարձաւ, ու ծովին մէջի
բոլոր շնչաւոր կենդանիները սատկեցան :
Ու երրորդ հրեշտակը իր սկաւառակը 4
գետերուն ու ջուրերու աղբիւրներուն
վրայ թափեց, և անոնք արիւն դարձան :
Ու ան հրեշտակէն լսեցի որ կ'ըսէր. Ար- 5
դար ես որ էիր ու ես, և սուրբ ես իր գործ-
քերուն մէջ, որ ասանկ դատաստան ը-
րիր. Ինչու որ ամբարիշտները սուրբե- 6
րուն արիւնը ու մարգարէներուն արիւնը
թափեցին. անոր համար ըստ արժանեացն
անոնց արիւն խմել տուիր : Ու ան սե- 7
ղանէն լսեցի որ կ'ըսէր. Այո՛ Ամենակալ
Տէր Աստուած, քու դատաստաններդ
արդար ու ճշմարիտ են :

Ու չորրորդ հրեշտակը իր սկաւառակն 8
արեւին վրայ թափեց : Ու անոր զօրու- 9
թիւն տրուեցաւ որ խորշակահար ընէ
մարդիկները կրակով, և սաստիկ տաքով
տաքցան մարդիկ, և հայհոյեցին զԱս-
տուած, որ այս հարուածներուն վրայ իշ-
խանութիւն ունի. ու չապաշխարեցին
Աստուծոյ փառքին համար :

Digitized by Google

10 Եւ հինգերորդ հրեշտակը իր սկաւառ-
ակին գազանին աթոռին վրայ թափեց.
ու անոր թագաւորութիւնը խաւարեցաւ.
և ցաւէն նեղութենէն լեզուներնին կը ծա-
11 մէին. Ու երկնից Աստուածը հայհոյեցին
իրենց ցաւէն՝ և դառն նեղութենէն. ու
իրենց գործքերէն չապաշխարեցին:
12 Եւ վեցերորդ հրեշտակը իր սկաւառա-
կէն մեծ Եփրատ գետին վրայ թափեց.
ու անոր ջուրերը ցամքեցան, որ արևել-
քին թագաւորին ճամբան պատրաստուի:
13 Եւ տեսայ որ վիշապին բերնէն ու գազա-
նին բերնէն՝ և սուտ մարգարէին բերնէն
իրեք պիղծ ոգիներ կ'ելլէին գորտերու
14 նման: Ինչու որ անոնք դիւական ոգի-
ներ էին՝ որ նշաններ կ'ընէին, ու բոլոր
երկրի թագաւորներուն կ'երթային՝ զանոնք
պատերազմի ժողվելու համար Ամենակալ
Տէրոջը մեծ օրը. վասն զի Տէրը ասանկ
15 ըսաւ. Ահա՛ գողի պէս կու գամ. երանի՛
անոնց որ արթուն են, ու իրենց հանդերձ-
ներն կը պահեն, որ մերկ չպտըտին, ու ի-
16 րենց ամօթը երևնայ: Եւ անոնք մէկ
տեղ մը պիտի ժողվեմ, որ Եբրայեցե-
րէն Արմագեդոն կ'ըսուի.
17 Ու եօթներորդ հրեշտակը իր սկաւառ-
ակէն օդին վրայ թափեց. և երկինքէն
ու աթոռէն մեծ ձայն մը ելաւ՝ ըսելով.
18 Եղաւ: Եւ փայլակներ ու ձայներ և որ-
ոտումներ եղան. ու մեծ շարժ մը եղաւ՝
ասանկ որ սկիզբէն հետե, քանի որ մարդը

Digitized by Google

երկրի վրայ եղած էր, անանկ մեծ շարժ
մը եղած չէր։ Եւ մեծ քաղաքը երեք 19
մաս եղաւ, ու ազգերուն քաղաքները
կործանեցան, եւ մեծ Բաբելոնը Աստու-
ծոյ առջեւը յիշուեցաւ, որ իր սաստիկ
բարկութեանը գինիին գաւաթը անոր
տայ։ Եւ բոլոր կղզիները փախան, ու 20
լեռները բնաջինջ եղան։ Եւ խոշոր կար- 21
կուտ, գրեթէ մէկ տաղանդի մը կշռովը,
երկինքէն կ'իջնէր մարդոց վրայ. ու մար-
դիկ հայհոյեցին զԱստուած այն կարկուտին
ան կարկուտին հարուածքին համար. քանզի
որ մեծ ու սաստիկ էր անոր հարուածքը։

## ԳԼ. ԺԷ.

Եւ եօթը սկաւառակներն ունեցող եօ- 1
թը հրեշտակներէն մէկը եկաւ ու խօսեցաւ
ինծի հետ ու ըսաւ. Հո՛ս եկուր, ու քեզ ցու-
ցնեմ այն մեծ պոռնիկին դատաստա-
նը, որ շատ ջուրերու վրայ կը նստի։
Անոր հետ երկրի թագաւորները պոռնկա- 2
ցան, ու երկրի բնակիչները անոր պոռ-
նկութեանը արբեցողութեան գինիէն խմեցին։
Եւ զիս անապատը տարաւ Հո- 3
գւով. ու տեսայ մէկ կնիկ մը որ կարմիր
գազանի մը վրայ նստեր էր. եւ ամբողջ
լեցուն էր հայհոյութեան անուններով. եւ
գազանին որ ունէր եօթը գլուխ ու
տասը եղջիւր։ Եւ այն կինը ծիրանե- 4
նի ու կարմիր հագեր էր, ու զարդա-
րուած էր ոսկիով ու մարգարիտով ու

Digitized by Google

պատերազմականին յաղթելով, ինչ մեղքին դէմ
ատեննի դիմացած չէք բռնաւոր ; Ու մոռցեր էք
5 այն մխիթարութիւնն լսածնին էր • Ինչ որ
Ճանկառնի մէջ մէկ կրկնած էր՝ Խորհուրդ՝
Որդի իմ, Տէրոջը պատուհասին ու խրատը
6 զարհուրութիւններուն մի՛ այրիր : Ինչ անոնց
որ կ'սիրէ հօր անուններուն սպիւնածը ու
խրատը պիտանեցուած սիրելովը զինավորած կը ։
ու երկնից անոնց ամէնկեան զզուանքը
7 զարհուրեցայ : Ինչ որ Տէրը հաստատէ խնամք
անոնց : Ինչո՞ւ զարհուրեցաք ; Աս քեզի լսածը
այն կենդանի խորհուրդը ; ու այն զգացմունք
որ զանիկայ վրան կը կրէ , որ հօրը որը
8 լսէին ու աստղը երկինքը ուծնի : Սա զանց
զանիկը որ անուածք նաև այն կամը , ու չէր ,
զմտնելէն ներկելու ու վերջանալը հօրթաւ
լոււ վըրայ է • և մէկին կրայ խնամ
կորսնցնելու բանը՝ որովհետեւ անուններին աչք
խառնէին ականջէն հետոյ կենաց գիրքը՝ կը
բռնած չէր ; կարծեցած այն զանազանին վրայ
որոյ որ դժուար կը առնականի թէ կար ; ու
9 չէր ; ու մտած է ․ ․ ․ է խնամատութիւնը
այն որ մարդ ունի : այն հօրը զլուխը
հօրը լինելը են , ուր որ կ'ինկը անոնց
վրայ նստեր էր • և անոնք հօրը թագաւ
որութեան են • և հօրը թագաւորներ ըլլա
10 լով , Հինգը խնկաւ՝ ու մեկը մնացի • և
մեկը եկած չէ • ու երբոր դայ՝ քիչ ա
11 տեն ունի : Ու այն գազանը որ կար ու
չէ ; ամենքեայ աղ վերթեցաւ է • և մէ
կոյթներէն է ; ու կործանումը պիտի եր

ժամը ։ Իսկ տասը եղջիւրը որ տեսար՝ 12
տասը թագաւորներն են ։ որոնք դեռ թա-
գաւորութիւն առած չեն ։ Հապա կ'առնեն՝
ու մէկ ժամի չափ իշխաններ կ'ըլլան ։ Եւ
տասնը գազանին հետը իշխանութիւն կ'առ-
նեն ։ Ասոնք մէկ կամք մը ունին, ու 13
իրենց զօրութիւնը և իշխանութիւնը գա-
զանին կու տան ։ Ասոնք Գառնուն հետ կը 14
պատերազմին ։ և Գառնը կը յաղթէ ա-
նոնց, ինչու որ անիկա Տէրն է ու թա-
գաւորներուն թագաւորը ։ և անոր հետ
եղողները կանչուած են՝ ընտրուած՝ ու
հաւատարիմ ։ Եւ ըսաւ ինծի ։ Այն 15
ջուրը որ տեսար՝ որուն վրայ պոռնիկը
նստեր էր, ժողովուրդներն են ու բազմու-
թիւններ, և ազգեր ու լեզուներ ։
Իսկ տասը եղջիւրները՝ որ տեսար, գազա- 16
նին վրայ, անոնք պիտի ատեն այն պոռ-
նիկը ու աւերակ ընեն զանիկայ, և անոր մարմինը
պիտի ուտեն՝ ու զանիկայ կրակով այրեն
այրեն ։ Ինչու որ Աստուած անոնց սրտ- 17
ին մէջը դրաւ՝ որ անոր մէկ կամքը կա-
տարեն, ու թագաւորութիւննին գազանին
տան, մինչև որ Աստուծոյ խօսքը կատար-
ուի ։ Իսկ այն կինը որ տեսար՝ մեծ քա- 18
ղաքն է, որ ինքը կը թագաւորէ երկրի
թագաւորներուն վրայ ։

ԳԼ. ԺԸ

Իսկ ասկէ ետքը ուրիշ հրեշտակ մը տես- 1
այ, երկինքէն իջած՝ որ մեծ իշխանութիւն

ւածներ, ու երկիրը անոր փառքէն լու-
2 սաւորուեցաւ : Եւ մեծ ձայնով աղաղա-
կեց ըսելով . Ինկաւ մեծ Բաբելոնը՝ որ
դևերուն բնակարան եղեր, ու ամէն
պիղծ դևերուն արգելարանոց, եւ ամէն
պիղծ ու ատելի հաւքերուն պահպանու-
3 թեան բանտ . Վասնզի որ անոր պոռնկու-
թեանը բարկութեան գինիէն խմեցին բո-
լոր ազգերը ու երկրի թագաւորները՝ որ
անոր հետ պոռնկեցան . եւ երկրի վաճա-
ռականները անոր ցանկութեան զօրու-
4 թեանը հարստացան : Ու երկինքէն ձայն
մը լսեցի որ կ'ըսէր . Ելէք անոր մէջէն իմ
ժողովուրդս, որ անոր մեղքերուն հաղորդ
չըլլաք, ու անոր հարուածները չընդու-
5 նիք . Վասնզի որ անոր մեղքերը մինչեւ եր-
կինքը հասան կցուեցան . ու Աստուած
6 անոր անիրաւութիւնները յիշեց . Ինչ-
պէս հատուցանէ անոր՝ ինչպէս որ անիկա հա-
տուց . ու ատիկայ իր գործքերուն փո-
խարէնը կրկնապատիկ տուէք . եւ
ան գաւաթը որ լեցուց՝ կրկնապատիկ լե-
7 ցուցէք իրեն : Ինչչափ որ փառաւո-
րեց զինքը ու ուրախացաւ, այնչափ տա-
ռապանք հատուցէք անոր . Վասնզի որ իր սր-
տին մէջը կ'ըսէր՝ Թէ Ամէն ատեն Ես թա-
գուհի պիտի նստիմ, ու բնաւ որբեւայրի
պիտի չըլլամ, ու սուգ պիտի չտեսնեմ :
8 Անոր համար մէկ օրուան մէջ պիտի գան
անոր վրայ հարուածները՝ մահ, ու սուգ,
ու սով, ու կրակով պիտի այրի . Վասնզի որ

Digitized by Google

հզօր է Տէր Աստուածը՝ որ զանիկա դա-
տեց ։ Եւ պիտի լան ու ծեծկուին անոր 9
վրայ երկրի թագաւորները՝ որոնք որ ա-
նոր հետ պոռնկեցան ու խաղացին , և
պիտի ողբան՝ երբոր անոր տանջանքով
այրելուն ծուխը տեսնեն ․ Անոր տանջան- 10
քին վախէն հեռուէն պիտի կայնին՝ ու ը-
սեն ․ Վայ, քեզի մեծ Բաբելոն քաղաք՝
հզօր քաղաք , որ մէկ ժամու մէջ եկաւ
հասաւ քու դատաստաններդ ։ Եւ երկրի 11
վաճառականները պիտի ողբան ու սուգ
ընեն քու վրադ ․ ինչու որ անոնց վա-
ճառքը ալ մէկը ծախու չառներ ․ Ու ալ 12
շահ մը պիտի չըլլայ քեզմէ , ոսկիի՝ ու
արծաթի՝ և պատուական քարերու՝ ու
մարգարիտի՝ և բեհեզի՝ ու ծիրանիի՝ և
մետաքսի՝ ու որդան կարմիրի՝ և ամէն
բուրնկի փայտերու՝ ու բոլոր փղոսկրեայ
ամաններու՝ և ամէն պատուական փայտէ՝
ու պղնձէ՝ և երկաթէ՝ ու մարմարիոնէ
ամանները ․ Եւ կինամոնը՝ ու բոլոր 13
խունկերը՝ ու եղը՝ ու կնդրուկը՝ և գինին՝
ու ձէթը՝ և բարակ ալիւրը՝ ու ցորենը՝ և
բոլոր ստացուածները՝ անասունը ու ոչխա-
րը՝ և ձիերը ու կառքերը , ու մարդոց
մարմիններուն ու հոգիներուն վաճառքն էր ։
Եւ քու անձիդ բոլոր ցանկութիւնը քեզմէ 14
գնաց , ու բոլոր ընտրեալ վայելչութիւ-
նը՝ պարարտը ու գեղը՝ ու ամենայնը քեզ-
մէ գնաց , և ալ պիտի չգտնեն զանոնք ։
Ու այս բաներով հարստացած բոլոր վաճ- 15

Digitized by Google

ատուր ընկողները, անոր հեռու պիտի
կենան, անոր տանջանքին վախէն լալով
16 ու սուգ ընելով, Ու պիտի ըսեն. Վա՛յ
վա՛յ մեծ քաղաքը՝ որ հագած էր բեհեզ-
ներ՝ ու ծիրանիներ և որդան կարմիր՝ ու
կեղծ ոսկիներ՝ ու ազնիւ քարեր՝ և մար-
17 գարիտներ. Ինչու որ քու այսչափ հա-
րըստութիւնդ մէկ ժամու մէջ փճացաւ.
Ու ամէն նաւավարները՝ և ամէն ամէնքը որ
տեղէ տեղ նաւով կ'երթան, ու նաւաստի-
ները, և անոնք որ ծովակալով կը բռ-
18 նին, հեռուն պիտի կենան լալով. Ու
տեսնելով անոր այրելուն ծուխը՝ պիտի
աղաղակեն ըսելով. Ո՞վ նման է աս մեծ
19 քաղաքիս. Ու իրենց գլխուն վրայ հող
պիտի ցանեն, ու մեծ ձայնով կոծելով
լալով և ողբալով պիտի ըսեն. Վա՛յ վա՛յ
մեծ քաղաք, որով ամէնքս կը հարըստա-
նայինք, որ նաւեր բռնած էինք ծովերու
մէջ քու պատուականութենէդ համար,
ինչու որ մէկ ժամին մէջը ապականած
20 կործանեցաւ: Ուրախացէք անոր վրայ
երկինք՝ ու սուրբ առաքեալներ և մար-
գարէներ, որ Աստուած ձեր վրէժը ան-
կէց հանեց:
21 Ու մէկ զօրաւոր հրեշտակ մը քար մը
առաւ ջաղացքի մեծ քարի նման, ու ծո-
վը ձգեց՝ ըսելով. Ասանկ սաստիկ պիտի
ձգուի Բաբելոն մեծ քաղաքը. ու ալ
22 պիտի չգտնուի: Ու քնարահարներուն
ու վարպետ երաժիշտներուն, և փողահար-

նուագողներուն ու թմբկահարներուն ձայնը \ ալ պիտի
չլսուի քու մէջդ. Ու ճրագին լոյսը ու 23
ջաղացքի քարին ձայնը ալ պիտի չերեւնայ
քու մէջդ. ու փեսային ձայնը և հարսին
ձայնը ալ պիտի չլսուի քու մէջդ. ո՛չ ալ
քու՝ վաճառականներդ՝ երկրի փառաւոր-
ները ու մեծամեծները, որ քեզմով կը
զուարճանային. ինչու որ քու դեղ տուող
կախարդութիւնովդ բոլոր ազգերը մոլորե-
ցան: Ու բոլոր մարգարէներուն ու սուր- 24
բերուն արիւնը քու մէջդ գտնուեցաւ, և
ան ամենուն՝ որ կենդանիներուն երկրին
մէջ զենուած են:

## ԳԼ. ԺԹ.

Ու անկէ ետքը բազմութեան մեծ ձայն 1
մը լսեցի երկինքը՝ ըսելով. Ալէլուիա.
փրկութիւն ու փառք և պատիւ ու զօրու-
թիւն մեր Աստուծոյն. Ինչու որ ճշմարիտ 2
ու արդար են անոր դատաստանները. որ
ան մեծ պոռնիկը իր պոռնկութեան մէջ
դատեց. ու իր ծառաներուն արիւնին
վրէժը անոր ձեռքէն պահանջեց: Ու 3
կրկին անգամ օրհնեցին ու ըսին. Ալէ-
լուիա. ու անոր ծուխը յաւիտեանս
յաւիտենից կ'ելլէ: Ու քսանըչորս ե- 4
րէցները ու չորս կենդանիները ինկան,
ու երկրպագութիւն ըրին Աստուծոյ՝ որ
փառաց աթոռը նստած էր, ըսելով. Ա-
մէն. Ալէլուիա: Ու աթոռէն ձայն մը 5
կ'ելլէր ըսելով. Մեր Աստուծոյն օրհնու-

Digitized by Google

թէին ատեն, իր բոլոր ծառաները, ու
դուք որ անկէ կը վախնաք՝ պզտիկներ ու
6 մեծեր։ Եւ մեծ բազմութեան ձայնի մը
նմանցի՝ շատ ջուրերու ձայնի պէս, ու
սաստիկ ձայնի պէս որոտներու ըսելով, Ալ-
լէլուիա, ինչու որ մեր Ամենակալ Տէր Աս-
7 տուածը թագաւորեց։ Ուրախանանք և
ցնծութիւններ ու փառք տանք անոր,
որ Գառնին հարսանիքը եկաւ, ու կինը՝
8 անոր հարսը ինքզինքը պատրաստեց։ Եւ
իրեն տրուեցաւ՝ որ բեհեզներ հագնի
ձերմակ մաքուր ու չողշողուն. (որ այն
բեհեզը սուրբերուն արդարութիւնն է։)
9 Եւ ան երեցներէն մէկը, կ'ըսէ ինծի.
Գրէ տանիլայ. երանելի են ան մարդը որ
Գառնին հարսանեացը ընթրիքին կանչ-
10 ուած են։ Եւ ալ անոր ոտքին առջևը
ինկայ, երկրպագութիւն ընել անոր. ու
ըսաւ ինծի. Մտիկ ըրէ՝ իմ դողջիս մի՛
ըներ. ինչու որ ես ալ քու ծառայա-
կիցդ եմ՝ ու քու եղբայրներուդ, որոնք
Յիսուս Քրիստոսի վկայութիւնը ունին.
միայն Տէր Աստուծոյ երկրպագութիւն ը-
րէ. ինչու որ Յիսուսին հաստատութիւ-
նովն է ատ տեսիլքը՝ ու մարգարէութեան
հոգին. պատճառն որ Յիսուսի վկայու-
թիւնն է հոգւով սրբով՝ որ մարգարէ-
ներուն վրայ էր։
11 Եւ տեսայ երկինքը բացուած, և ա-
հա մէկ ձերմակ ձի մը, ու ան որ անոր
վրայ հեծեր էր՝ հաւատարիմ ու ճշմարիտ

Digitized by Google

[illegible]
[illegible] 12
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 13
[illegible]
[illegible] 14
[illegible]
[illegible]
[illegible] 15
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 16
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 17
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 18
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 19
[illegible]

Digitized by Google

[illegible]
[illegible]
20 [illegible]
[illegible]
[illegible] կ'ընէր [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
21 [illegible] Եւ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

ԳԼ. Ի.

1 Եւ տեսի հրեշտակ մի [illegible]
[illegible]
2 Եւ [illegible]
[illegible]
[illegible] Սատանայ [illegible] եւ [illegible]
3 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
4 Եւ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] եւ [illegible]

Digitized by Google

զգլխատելոցն վասն վկայութեանն Յիսուսի, եւ վասն բա-
նին Աստուծոյ. որք ոչ երկիր պագին գազանին, եւ ոչ
պատկերի նորա. եւ ոչ առին զդրոշմն ի ճակատս եւ ի ձեռս
իւրեանց. եւ կեցին եւ թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար
ամ: Եւ այլ մեռեալքն ոչ կեցին մինչեւ կատարեսցի հա- 5
զար ամն: Այս է յարութիւնն առաջին: Երանելի եւ
սուրբ է որ ունի մասն ի յարութեանն առաջնում. ի վերայ 6
նոցա երկրորդ մահ ոչ իշխէ, այլ եղիցին քահանայք
Աստուծոյ եւ Քրիստոսի, եւ թագաւորեսցեն ընդ նմա
հազար ամ:

Եւ յորժամ կատարեսցին հազար ամքն, արձակեսցի 7
Սատանայ ի բանտէ իւրմէ. եւ ելցէ մոլորեցուցանել
զազգս որ ի չորս անկիւնս երկրի են, զԳոգ եւ
զՄագոգ, ժողովել զնոսա ի պատերազմ, որոց թիւ
իբրեւ զաւազ ծովու: Եւ ելին ընդ լայնութիւն երկրի, 8
եւ պատեցին զբանակս սրբոց եւ զքաղաքն սիրելի. եւ
էջ հուր յերկնից յԱստուծոյ եւ եկեր զնոսա: Եւ 9
Սատանայ որ մոլորեցուցանէր զնոսա, ընկեցաւ ի լիճն
հրոյ եւ ծծմբոյ, ուր գազանն եւ սուտ մարգարէն 10
տանջեսցին տիւ եւ գիշեր յաւիտեանս յաւիտենից:

11 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
12 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
13 [illegible]
[illegible]
[illegible]
14 [illegible]
[illegible]
15 [illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

## ԳԼ. ԻԱ.

1 [illegible]
մը տեսայ, ինչու որ առջի երկինքը ու [illegible]
2 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
3 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
4 [illegible]

Digitized by Google

[illegible]

Digitized by Google

[illegible]
[illegible]
12 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
13 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
14 [illegible]
[illegible]
[illegible]
15 [illegible]
[illegible]
[illegible]
16 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
17 [illegible]
[illegible]
[illegible]
18 [illegible]
[illegible]
[illegible]

[illegible] 19
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 20
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 21
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 22
[illegible]
[illegible]
[illegible] 23
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 24
[illegible]
[illegible]
[illegible] 25
[illegible]
[illegible]
[illegible] 26
[illegible] 27
[illegible]

[illegible]

## ԳԼ. ԻԲ

1 [illegible]
2 [illegible]
3 [illegible]
4 [illegible]
5 [illegible]
6 [illegible]
7 [illegible]

Digitized by Google

Ու ես Յովհաննէս լսեցի ու տեսայ 8
այս բաները ։ Եւ երբ լսեցի ու տեսայ՝ ին-
կայ ու երկրպագութիւն ըրի անոր հրեշ-
տակին՝ որ այս բաները ինծի կը ցուցը-
նէր ։ Ու ըսաւ ինծի ։ [illegible] 9
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 10
[illegible]
[illegible]
է ։ Ան որ անիրաւութիւն կ'ընէ, թող 11
[illegible]
[illegible] է,
թող [illegible] է,
թող [illegible] ։ Ահա ես շուտ 12
կու գամ ու իմ վարձքս ինծի հետ է,
[illegible]
համեմատ հատուցանեմ ։ Ես եմ Ալֆան ու 13
[illegible] ։
Երանի անոնց՝ որ [illegible] 14
[illegible]
[illegible]
[illegible] ։ Դուրսը 15
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] ։
Ես Յիսուս իմ հրեշտակս ղրկեցի ձե- 16
զի եկեղեցիներուն այս բաներուն վկայելու․



Digitized by Google

լոյս. Ես Դաւիթին արմատը ու ցեղն եմ,
17 ու առաւօտեան պայծառ աստղը։ Եւ
Հոգին ու փեսան՝ որ պիտի գամ. Եւ
ան որ կը լսէ թո՛ղ ըսէ՝ Թէ Եկո՛ւր. ու
ան որ ծարաւ է՝ ու ան որ կ'ուզէ կենաց
ջուրը ձրի առնել, թո՛ղ գայ։
18 Եւ ես կը վկայեմ ամենուն՝ որ այս
գրքին մարգարէական խօսքերը կը լսէ.
Թէ որ մէկը ասոր վրայ բան մը աւելցնէ,
Աստուած ալ անոր վրայ պիտի աւելցնէ
այն հարուածները որ այս գրքին
19 մէջը գրուած է։ Եւ թէ որ մէկը այս
գրքին մարգարէական խօսքերէն բան մը
պակսեցնէ, Աստուած ալ անոր բաժինը
պիտի պակսեցնէ ու կենաց ծա-
ռէն, ու սուրբ քաղաքէն՝ որ այս
20 գրքին մէջը գրուած է։ Ան որ այս բա-
ներուն վկայութիւն տուաւ՝ ըսաւ. Շու-
տով կու գամ ես։ Ամէն. եկո՛ւր Տէր
21 Յիսուս Քրիստոս։ Մեր Տէր Յիսուս
Քրիստոսի շնորհքը բոլոր սուրբերուն վը-
րայ ըլլայ. Ամէն։

29 NO 55

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google